ԼԵՈ ՏՈՓՍԻԼ

# ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱԶԱԿԱՈՐՋԸ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ— 1981

ՀՄԴ 86. 37
Տ 268

*Ռուսերենից թարգմանեց*
ԱՐՍԼ ՍԻՄՈՆՅԱՆԸ

Տաքսիլ Լ.
Տ 268 *Սրբազան ավազակաորջը.— Որ.: Հայաստան, 1981.— 608 էջ.*

*Ֆրանսիացի նշանավոր հրապարակախոս Տաքսիլի «Սրբազան ավազակաորջը» գիրքը նվիրված է քրիստոնեության, ավելի ստույգ նրա արևմտյան ճյուղի՝ կաթոլիկ եկեղեցու պատմությանը։ Գրքում հեղինակը համոզիչ փաստերով մերկացնում է պապերի, կարդինալների, եպիսկոպոսների կատաղի պայքարը առաջադիմության, ազատախոհության դեմ, վարպետորեն պատկերում եկեղեցու հայրերի բարդ կերպարը, բացահայտում նրանց դավերը, ստոր ու նենգ գործելակերպը ինչպես «հավատացյալ հոտին» կողոպտելու, այնպես էլ կաթոլիկ շրջաններում գերիշխանություն ձեռք բերելու համար։ «Սրբազան ավազակաորջը» հեղինակի հայերեն լույս ընծայված «Ջվարճալի ավետարան կամ Հիսուսի կյանքը» գրքի նման մեծարժեք մնայուն գործ է, որն այսօր էլ համահնչյուն է ժամանակի հետ։*

*«Սրբազան ավազակաորջը» ռուսերեն լույս է տեսել 1965 թվականին, հայերեն թարգմանվում է առաջին անգամ։*

Տ 0400000000 / 701 (01) 81 56ա. 81

ԳՄԴ 86. 37
29

© Политиздат, 1965
© *Թարգմանված է հայերեն, «Հայաստան» Հրատ., 1981*

## ՍՈՒՐԲ ԱՆԱՌԱԿՆԵՐԸ

*Կղերականները հայտարարում են, թե ամեն մի ազատախոհ մարդ սրիկա է։ Սակայն մենք, ավելի հանդուրժող մարդիկս, մեզ թույլ չենք տա պնդել, որ բոլոր եկեղեցականները սրիկաներ են։ Ընդհակառակը, մենք պատրաստ ենք նույնիսկ խոստովանել, որ նրանց մեջ էլ են պատահում շատ պատվարժան մարդիկ։*

*Բայց... բայց... և մի անգամ էլ բայց...*

*Թվել անխտիր բոլոր պակաս պատվարժան մարդկանց, ինչպես ինքներդ հասկանում եք, հազիվ թե հնարավոր լինի՝ ցուցակը չափից ավելի մեծ կստացվի։ Այդ իսկ պատճառով բերենք փորձենք. թող ինքը պատմությունը մեզ տանի այն եկեղեցականների հետքերով, որոնք հռչակվել են իրենց արատներով։ Այդ փորձը կլինի հետաքրքիր և ուսանելի։*

*Երբ կեղծ բարեպաշտի հետ ղրուցելիս նրան ասում ես, թե իր կատարյալ այսինչ ներկայացուցիչը երևելի անառակ է, նա երեսին խաչ հանելով սովորաբար պատասխանում է.*

*— Ավա՜ղ։ Բայց չէ որ տասներկու առաքյալների մեջ էլ գտնվեց մի Հուդա։*

*Հավանաբար, դա նշանակում է.*

*— Ես համաձայն եմ, մեր մեջ էլ սրիկաներ են լինում, բայց, արդարև, հազվադեպ, շատ հազվադեպ...*

*Դե եթե այդպես է, դիմենք պատմությանը և փորձենք ապացուցել, որ եկեղեցականների մեջ սրիկաներն այնքան էլ հազվադեպ չեն, իսկ ահա ազնիվ մարդիկ, ընդհակառակը, շողում են ինչպես մարգարիտն աղբակույտում։ Մարգարիտներին, իհարկե, փա՜ռք ու պատիվ, իսկ աղբը պետք է աղբանոց նետել։*

## ԿՂԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՐԸ

*Մի կողմ թողնենք սուրբ Պետրոսին և նրա առաջին հետևորդներին. նրանց մասին եղած տեղեկությունները հույժ անստույգ են։*

*Տեսնենք, թե ինչով են զբաղվել այն կրոնի հիմնադիրները, որն, ըստ էության, վերածվել է ինչպես քաղաքական, այնպես էլ առևտրական շահագործման համակարգի։*

*Դեռևս հնում, սուրբ Պետրոսի վեհապետության օրոք, կար քրիստոնյաների՝ Հերմային հետևորդ հովիվ-կնատյացների մի աղանդ։ Դա Նիկողոսյանների աղանդն էր։*

*Պատրվակելով, թե կինը դժոխքի ծնունդ է և դրա խորքերից լույս աշխարհ է եկել տգամարդուն դայթակղեցնելու համար, Նիկողոսյաններն ավելի բարոյական էին համարում նախապատվություն տալ սեփական սեռին։ Ինչպես տեսնում եք, մեր դարաշրջանի տգետ վանականները միայն բանագողեր են։*

*Ուշադրություն դարձրեք. Նիկողոսյանների աղանդը բաղկացած չէր ինչ-որ գռեհիկ տականքներից։ Բնավ ոչ. նրանց պարագլուխ Նիկողայոսը Երուսաղեմի յոթ սարկավագներից մեկն էր։*

*Անիկետոսի՝ տասներկուերորդ պապի օրոք առաջացել է գնոստիկների աղանդը։ Նրանք ընկել են մյուս ծայրահեղության մեջ՝ սկսելով, թե կինը կոչված է հանուրի սեփականություն լինելու։*

*Այնուհետև, տասնչորսերորդ պապի՝ Ելևթերոսի օրոք երևան են եկել վալենտինյանները։ Նրանք վեճի չեն բռնվել այդ երկու աղանդների հետ. իմաստուն կերպով համադրելով այդ երկու տեսակետները, նրանք պնդում էին, թե թույլատրելի են բոլոր տեսակի անառակությունները։*

*Տասնյոթերորդ պապի՝ Կալիստոս I-ի հրամանով հասարակաց տան է կից կառուցվել է եկեղեցի և նվիրվել սուրբ կույսին։ Ազոթքն ամեն ինչ մաքրագործում է։*

*Ուրբանոս I-ին հոգևորականությունը պիտոր է առանձնապես հիշի. հենց նրա օրոք եկեղեցին սկսեց եկամուտ բերել կղերականներին. բավական էր, որ որևէ մեկը քրիստոնեություն ընդուներ, որպեսզի նրան անհապաղ համոզեին, թե երկրային բարիքները խոչընդոտում են յրախտային երանությանը։ Եվ այդ ահաբեկված տխմարը հրաժարվում էր դրանից ու այն ամենից, ինչ որ ուներ։*

*Այն ժամանակվա հոգևորականությանը չէր կարելի կշտամբել դան-*

դալկոտության համար, երբ տխմարների հաշվին շահվելու առիթ էր ստեղծվում։ Տասնութերորդ պապի օրոք Հռոմեական կաթոլիկ եկեղեցին սկսեց համառորեն հարստություն դիզել։

Օգտվելով առիթից, կրճատում III դարին վերաբերող մի փոքրիկ անեկդոտ։

Գրիգորիս Հրաշագործը, Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, թերևս իրոք սուրբ այր է եղել, քանի որ նրան դասել են սրբերի շարքը։ Սակայն սույն պատվարժան պրելատը երկրային վայելքի հանդեպ էլ խորշանք չէր տածում։ Գիշերն իջնելուն պես, մեր ժամանակի շատ եկեղեցականների նման, նա դեն էր նետում իր փարաջան և իր թեմի գաղտնի որջերում սանձարձակ կերուխումեր սարքում։ Ասենք, «սարքել» բառը ես հենց այնպես գործածեցի. Գրիգորիս եպիսկոպոսը իրականում պատկանում էր մարդկանց այն դասին, որոնց ամիկ մարդիկ պարզապես ժլատ են անվանում։ Չնկուության սովոր այդ քահանայիկը դյուրահամոզ կանանց շրջանում քեֆ էր քաշում չորս մարդու չափ և ճարպկորեն ծլկում հենց այն րոպեին, երբ վրա էր հասնում քսակը բացելու պահը։ Դժբախտաբար, նրա զոհը դարձած կանանցից մեկը մի օր ճանաչել է եպիսկոպոսին, երբ վերջինս պատարագի է դուրս եկել, և լկտիաբար, ի լուր ամենքի, սկսել է պահանջել այն հաճելի դիշերվա գինը, որ նրանք անցկացրել են միասին։ Ավելորդ է նկարագրել պրելատի դեմքի արտահայտությունը։ Այս անգամ եպիսկոպոս Գրիգորիսը ստիպված է եղել բացել քսակը։ Այս ամենը չի խանգարել, սակայն, Գրիգորիս Ալեքսանդրացուն դասել սրբերի շարքը։

Նովատիանոս I-ը Հռոմի եպիսկոպոս էր ընտրվել գինարբուքի ժամանակ։ Զայների մեծամասնություն ապահովելու համար ապագա եպիսկոպոսը հնարամտել է նախապես խմեցնել իր ընտրողներին։

Թեբայիսի ճգնավորներից մեկին, որի անունը Պաղոս էր, բռնել են հանցագործության վայրում, երբ շնություն անելիս է եղել իր հարազատ քրոջ հետ։

Սուրբ Կոռնելիոսի՝ քսաներկուերորդ պապի ժամանակ մի խումբ քահանաներ դատապարտվել են վանքերից մեկում կույսերին բռնաբարելու համար։

Մարկեղինոսը՝ երեսուներորդ պապը, այն խմորից չէր, որից մարտիրոսներ են թխվում։ Երբ Հեթանոս կայսրերը նրան կանգնեցրին երկընտրանքի առաջ՝ կամ զոհ մատուցել Յուպիտերին կամ դիմանալ տանջանքներին, նա միանգամայն հանգիստ հրաժարվեց այն կրոնից, որի քահանայապետն էր, և խունկ ծխեց այն բոլոր աստվածներին, որ

նրան մատնացույց էին անում։ Իհարկե, դա Բոլջիայի և ամբողջ սինկղիտոսի արածների համեմատությամբ այնքան էլ մեծ հանցանք չէ, բայց այդ ուխտադրժությունը նշելն անպայման անհրաժեշտ է. չէ որ Մարկեղինոս պապին մտցրել են սրբերի մեջ։

Մենք դտնվում ենք IV դարի նախադռանը։ Ահա թե որտեղ է կարելի մի կուշտ ծիծաղել։

Այս դարի արշալույսին Կիրտայում, Նումիդիայի մայրաքաղաքում, աֆրիկյան պրովինցիաների եպիսկոպոս ընտրելու համար եկեղեցաժողով գումարվեց։ Եպիսկոպոսական դավադանը բաժին ընկավ հենց նրան, ով եկեղեցաժողովի բոլոր անդամների մեջ ամենավատ համբավն ուներ։

Ոմն Վոնիփակիոս, որը նույնպես դասված է սրբերի շարքը, իր պարապ ժամանակն անց էր կացնում Ագլայա անունով մի կուրտիզանուհու հետ. դրա մասին պերճախոս կերպով պատմում են բարեպաշտ տարեդիրները։

Երեսունչորսերորդ պապի՝ Սեղբեստրոս I-ի օրոք հոգևորականները այնպիսի շվայտության էին հասել, որ ստիպված հրավիրվեց Նեոկեսարիայի եկեղեցաժողովը, որը պետք է զսպեր չարաճճի եկեղեցականներին և նրանց դամաներին։ Այն ժամանակվա եպիսկոպոսներից մեկը նույնիսկ հրապարակավ պարծենում էր, որ իր թեմում տասնմեկ հազար տիրացուներից յուրաքանչյուրն ամեն տարի իրեն մի ոսկի է վճարում սիրուհիների հետ կենակցելու թույլտվության ստանալու համար։

Վալերյանները (այդ դարաշրջանի ևս մի կրոնական աղանդ) իրենց քահանաներին թույլատրում էին քնել կանանց և աղջիկների հետ. չէ որ նման պատվական մարդիկ, իհարկե, վեր են որևէ գայթակղությունից։ Այս ամենը գրի է առնված Նիկիայի ժողովի տարեգրության մեջ։

Մեծ սրբակյաց Աթանասը, Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, իր իշխանության տարիներին քիչ սպանություններ չի կատարել։ Անտիոքի եկեղեցաժողովին հավաքված ութսունյոթ պրելատները որոշեցին իր հոդևոր աստիճանն արատավորած Աթանասին վտարել եկեղեցուց, որը նա անարգել էր։ Բայց սուրբ այրն իրեն չկորցրեց և իր հերթին նզովեց իր դեմ ելած եպիսկոպոսներին։ Սրբերի շարքը դասված Լիբերիոսը, երեսունյոթերորդ պապը, երկու անգամ եկեղեցուց վտարել է Աթանասին։ Սակայն դա բնավ չի խանգարել, որ այդ նույն Աթանասը սրբերի շարքը դասվի։ Ինքներդ քննության առեք այդ գործերը, դա իմ ուժերից վեր է։

Միանգամից անցնենք երեսունիններորդ պապին՝ Դամասոսին, որը

այդ բարեպաշտին հոգևոր աստիճան շնորհվեց, նույնիսկ հավատացյալները հրաժարվեցին նրան ճանաչել. նա այնպիսի «սուրբ անհատականություն» էր, որ... Այնժամ Դամասոսը իր կողմնակիցների հետ ներխուժեց Հռոմի եկեղեցիներից մեկը և կոտորեց այնտեղ գտնվող բոլոր կանանց, երեխաներին ու ծերունիներին։

Հավատացյալները դաս առան ու հնազանդվեցին։

Ժամանակի տարեգիրներից մեկը խորհում է. «Երբ տեսնում եմ Հռոմի փայլը, հասկանում եմ այն մարդկանց, որ ձգտում են այդ քաղաքում եպիսկոպոսի աստիճան ձեռք բերել։ Քանզի դա նրանց տալիս է պատիվ, ճոխ ընծաներ, կանանց բարյացակամություն, շքեղ հագուստ ու այնպիսի սեղան, որն իր պաճուճագեղությամբ գերազանցում է թագավորների սեղանը»։

Ինչպես և բոլոր մեղսագործները, Դամասոսը եղել է հեշտասեր մարդ և, այսպես ասած, իր կրքերի գերին։ Այս սուրբ հայրը բռնվել է շնության մեջ։ Բայց նա, սատանան տանի, մնացել է իր տեղին ամուր կառչած։

Ջմոռանանք, որ այն ժամանակ պապը դեռևս Հռոմի լիիրավ տիրակալը չէր. նա ստիպված էր ենթարկվել Կոստանդինոսի հաջորդներին։ Ընդհանուր զարգացման և բարոյականության իմաստով այն ժամանակվա հոգևորականությունը չի տարբերվել այժմյանից։ Սակայն այն ժամանակի քահանայապետերը ստիպված էին հաշվի առնել Հռոմի կայսրերի ընդունած օրենքները։ Այսպես, Գրատիանոս կայսրը, որը գիտեր քրիստոնեական հոգևորականների բարեպաշտության անշահախնդրության արժեքը, 370 թվականին արձակեց մի հրաման, ըստ որի եկեղեցականներին արգելվում էր մտնել այրի կանանց և միայնակ ապրող աղջիկների տները։ Այդ նույն հրամանը եկեղեցականներին, նրանց ունեցվածքը բռնագրավելու սպառնալիքով, արգելում էր որպես նվեր կամ ժառանգություն ընդունել իրենց հոգևոր զավակների ունեցվածքը։ Յուրաքանչյուր կիրակի այդ հրամանը ի լուր ամենքի հրապարակվում էր Հռոմի եկեղեցիներում։

Ամենևին էլ հիմար չէր նա, այդ կայսր Գրատիանոսը։

Լսեցեք հապա Հերոնիմոսի ողբը այդ առթիվ։ «Ի՞նչ խայտառակություն,— բացականչում է նա,— խեղկատակները, ձեռնածուները, կառապաններն իրավունք ունեն անարգել ժառանգելու, մինչդեռ քահանաներին այդ իրավունքը մերժված է»։

Տեսա՞ր, ինչո՞ դիպել է նշանի՞ն։ Երբ ուզում եք, որ քահանան վայ-

*նասուն բարձրացնի, հարվածեցեք նրա գրպանին, դա նրա ամենազգայուն տեղն է։*

*Կարծում եք կայսր Գրատիանոսի հրամանները դադարեցրի՞ն եկեղեցականների գործունեությունը։ Ո՛չ։ Մարդկանց այդ տեսակը միշտ կարողացել է օրենքը հմտորեն շրջել դեպի իր կողմը։*

*Խորամանկությամբ և խաբեբայությամբ կղերականները, բարեգործության անվան տակ, կառուցում էին մատուռներ, հողեր գնում, գանձեր հավաքում։*

*Վաղենտինիանոսից, Գրատիանոսից ու Վաղենտիոսից հետո կայսրերն անսացին կղերականների խնդրանքները, և այդ հրամանագրերը կորցրին իրենց ազդեցությունը։*

*Սուրբ գահի վրա Դամասոսին փոխարինեց Սիրեկիոսը։ Այս պապը ինչ-որ բանով պարզապես դուր չի եկել մեծապատիվ Հերոնիմոսին։ Այդ հին քրիստոնեական գրողը, որ Հռոմի կայսրերից պաշտպանում էր Դամասոսին, ատիթը բաց չի թողնում նոր պապի հասցեին ասելու խայթիչ խոսքեր։*

*Ինչպես հայտնի է, եկեղեցականներն ամեն կերպ մեծարում էին պատվարժան ծերուկին։ Մինչդեռ այդ ծերուկն իր գրվածքներում կուսակրոնության մասին միանգամայն անհարմարորեն է խոսում։ Եվ նրա ասածները լիովին համընկնում են այն բանին, ինչ գրել է ձեր խոնարհ ծառան, և որի համար գազազած եկեղեցականները նրան սպառնում էին դատի տալ։*

*Իմ հոդվածը, որ լույս է տեսել «Կորչե՛ն փարաջավորները» ժողովածուում «Դե, ամորձատեցեք նրանց» խորագրով, զարգացնում է նույն թեման։ Իսկ չէ որ, վերջիվերջո, ես միայն կրկնել եմ հայտնի եկեղեցական տարեգիր գերապատիվ Հերոնիմոսին։*

*Եկեղեցու այդ հայրն իր երկերից մեկում քրիստոնյա հոգևորականներին հիշեցնում է Հին Եգիպտոսի քրմերի օրինակը։ «Հին կրոնի ծառաները,— ասում է նա,— կանանց հետ ոչ մի հարաբերություն չէին ունենում այն պահից ի վեր, երբ նվիրվում էին աստծուն ծառայելուն։ Արթնացող կիրքը հաղթահարելու համար նրանք հրաժարվում էին միս ու գինի գործածելուց, իսկ Կիբելայի բոլոր քրմերն էլ ներքինիներ էին»։ Այնուհետև նա ավելացնում է. «Քահանաները և վանականները, որ ուխտել են կուսակրոն մնալ, պետք է հետևեն հելիանոս քրմերին, երբ իրենց թվում է, թե իրենց հոգին անկարող է պայքարել ցանկասիրության դեմ»։*

*Հենց այդպես է գրել մեծապատիվ Հերոնիմոսը։ Հապա ինչո՞ւ դուք, պարոն քահանաներ, սկսում եք գազազել, երբ ձեզ առաջարկում են*

*ամորձատվել։ Ամենից առաջ ձեր սուրբ Հերոնիմոսի գլխից պոկեցեք լուսապսակը և նրան դժոխք ճամփեցեք։ Հիրավի, ես համոզված եմ, որ դղերականները խելոք վարված կլինեին, եթե ապականացնեին Հերոնիմոսին. այդ սրբազանը իր կյանքի վերջում ժամանակի պապերի դեմ այնպիսի պարսավագրեր է գրել, որ եթե դրանք դուրս գային ձեր խոնարհ ծառայի գրչի տակից, ապա նրան քարշ կտային դատարանից դատարան։*

*Այն պապը, որ Հերոնիմոսին դասել է երեք նշանաքուղ ունեցող սրբերի շարքը, անշուշտ սրբագրել է այդ բարեպաշտի պարսավագրերը, ցանկանալով հետագային թողնել միայն այն, ինչ ծերուկը գրել է Պրատիանոս կայսեր դեմ։*

*Ընթերցողին զվարճացնելու համար մեջ բերենք Հերոնիմոսի գրվածքներից որոշ տողեր։*

*Մի անգամ այդ ծերուկը ուղերձով դիմել էր մի ումն կույսի։ Նա նրան առաջարկում է պահպանել կուսությունը և այդ առթիվ իմաստուն խորհուրդներ է տալիս։*

*Լսենք Հերոնիմոսին. «Դուստր իմ, եթե ուզում ես պահպանել քո կուսության ծաղիկը, խուսափիր, ինչպես ժանտախտից, խուսափիր այդ կեղծավորներից, որոնք ձգտում են հոգևոր աստիճանի, որպեսզի ազատ մուտք ունենան կնոջ մոտ»։*

*Իր կլիենտուրային լա՜վ էր ճանաչում նա, այդ բարեպա՜շտը։*

*Շարունակում ենք. «Այդ գարշելի քահանաներն իրենց մատներին կրում են փայլուն մատանիներ...»։*

*Պարոն եպիսկոպոսներ, ձեր թելադրանքով հավատացյալները ծնկի են գալիս սուրբ Հերոնիմոսի պատկերների առաջ։ Թաքցրեք ձեր ձեռքերը, որոնց վրա թանկարժեք մատանիներ են շողշողում։*

*«Նրանց գլխավոր զբաղմունքն այն է, որ իմանում են գեղեցիկ կանանց անուններն ու տները և հարցուփորձով իրենց համար պարզում նրանց հակումները...»։*

*Օհո՛, հա՛յր Եիզվիտներ, այս տողերը հենց ձեր մասին է, այլ կերպ լի էլ կարող լինել։*

*«Որպեսզի ինքդ քեզ խաբած չլինես,— այնուհետև գրում է Հերոնիմոսը,— ես քեզ ցույց կտամ իրենց արհեստում մեծ հմտություններ հասած այդ քահանաներից որ մեկի պատկերն ուզենաս։ Նա արթնանում է արևը ծագելուն պես, իր այցելությունների կարգը խորհում է նախապես, ընտրում է ամենակարճ ուղիները. նա, այդ ծերուկը, աներես է և ուղիղ գնում է կանանց հարկաբաժինը. եթե նկատի իր ճաշակով մի*

բարձ, թանկարժեք ծածկոց կամ կահույքից որևէ բան, ուշադիր ամեն ինչ կգնահատի և կսկսի երկերեսանիորեն հոգոց քաշել ու խոսել իր աղքատության մասին, կնվնվա ու կվնգստա, մինչև հաջողվի որևէ բան պոկել։ Ընչաքաղցությունն է նրա բնավորության հիմնական գիծը»։

Թթե ձեզ վիճակվի օրինավոր տան մեջ ներկա լինել որևէ կնգուղակիր կաթոլիկ վանականի այցելությանը, դուք կհամոզվեք, որ հոգեվորականության բարքերը բնավ իսկ չեն փոխվել։

Ինչ վերաբերում է եպիսկոպոսներին, ապա սուրբ Հերոնիմոսը նրանց էլ չի խնայել. «... Օրհնելու պատրվակով եպիսկոպոսները մեկնում են իրենց ձեռքը, փոխարենը ստանում դրամ. նրանք դառնում են այն բոլոր մարդկանց ստրուկները, որ վճարում են, մատուցում են ամենաստոր, կեղտոտ ծառայություններ, որպեսզի հետագայում տիրեն նրանց ժառանգությանը»։

Իսկ ուզո՞ւմ եք իմանալ ի՛նչ է ասում սուրբ Հերոնիմոսը հենց պապի մասին։ Նա նորին սրբազնություն Սերթկիոսին պարզապես ծիրանազգեաց ծեր անառակ է անվանում։

Ահա այդ բարեպաշտի նամակը Մարկեղինոսին.

«Բացեցեք Հովհաննու հայտնությունը, և դուք կտեսնեք, որ առաքյալը նախագուշակել է այդ անառակ ծիրանազգեացի թագավորությունը, նրա, որի ճակատին դրոշմված է սրբապղծության կնիքը։ Դիտեցեք այս մեծաշուք քաղաքի վերջը, այնտեղ իսկապես կար առաքյալների ու մարտիրոսների մենաստանները պահպանող սուրբ եկեղեցի, որտեղ դավանել են Հիսուս Քրիստոսի և առաքյալների ուսմունքը, բայց նրա եկեղեցապետի անբարտավանությունը, գոռոզամտությունը հավատացյալներին ետ է վանել ճշմարիտ բարեպաշտությունից»։

«Երբ ես եկա այս Հռոմեական Բաբելոնը, ծիրանազգեաց հին պոնտիկի պալատականներից մեկը ինձ ստիպեց ընդունել նրա դավանանքը, որն ամբողջությամբ մոլորություն է։ Եվ այն ժամանակ ես գրեցի իմ աշխատությունը՝ այն նվիրելով հենց պապին։ Ես թողեցի այդ անիծյալ քաղաքը և վերադարձա Երուսաղեմ, լքեցի այդ նողկալի վայրերը, որ լցված են Ռոմուլոսի վարազներով, փախա այդ պիղծ մարդկանցից. ես նախընտրում եմ Մարիամի մենաստանը, մանուկ Հիսուսի քարայրը...»։

Մեր պոռնի՛կ։ Հռոմեական Բաբելո՛ն։ Թթե ես կնոն XIII պապին զարդարեի նման մականուններով, ինձ սրբերի շարքը չէին դասի։

Իհարկե, սուրբ Հերոնիմոսին նախանձելուց չէ, որ ես կատարում եմ այս մեջբերումները. ես ուզում եմ լոկ ընդգծել, որ եկեղեցական-

նեթը ոչ միայն գրեթե ոչինչ չարժեն, այլև դրա հետ միասին նրանք զուրկ են որևէ տրամաբանությունից։ Եվ այդ չէ՞ պատճառը, արդյոք, որ ես բավարարվածության որոշակի զգացում եմ ունենում, երբ կարդում եմ սուրբ Օգոստոսի սրբացման պատմությունը։

Նկեղեցու այդ հայրը լիովին արժանի է իր փարաջավոր զորքին։

Իր ամբողջ պատանեկության ընթացքում, ինչպես իրենք կղերականները են խոստովանում, երանելի Օգոստոսը մոլի խաղերից և զվարճալիքներից բացի ուրիշ բան չէր սիրում. նա հորից թոցնում էր այն ամենը, ինչ կարողանում էր, և ի վերջո մայրը ստիպված էր նրան տնից վռնդել։ Հետագայում, երբ Օգոստոսին եպիսկոպոս են ընտրել, նա դարձել է ամենափութաջան մոլեռանդը։ Կղերականները խորագույն հարգանք են տածում նրա նկատմամբ, մատների արանքով են նայում նրա բոլոր արարքներին ու անառակություններին և ի դեմս նրա համառորեն ուզում են տեսնել լուկ կրքոտ պրելատին, որն իր հեղինակությամբ ամբարշտել է կույր հավատի այս բանաձևը. «Հավատում եմ, քանզի անհեթեթ է»։

Քանի որ մենք արդեն մի քուրցիկ հայացք նետեցինք IV դարի պապուության պատմության վրա (Մարկեղինոս I-ից սկսած մինչև Սիրեգիոսը), ավելորդ չի լինի, անշուշտ, մի քանի խոսք ասել նաև կայսր Կոստանդինի՝ քրիստոնեական կրոնի պաշտպանի և իսկական փրկչի մասին, որին քահանայապետերը երախտագիտորեն գասել են սրբերի շարքը։ Հիրավի, եթե չլիներ Կոստանդինը, քրիստոնեությունը կխորտակվեր Դիոկղետիանոսի օրոք։

Կոստանդինը ժամանակին հասկացավ, որ այդ հալածվող աղանդը կարող է իրեն օգնել՝ հաղթելու իր հակառակորդ Մաքսենտիոսին, և այդ պատճառով էլ անցավ քրիստոնեական աստծու կողմն ու քրիստոնեություն ընդունեց։ Դրանով նա եկեղեցականներին դուրս բերեց այն գերեզմանից, ուր նրանց խոթել էր Դիոկղետիանոսը։ (Ի միջի այլոց, մենք այդ վայրենաբարո ու նենգ կայսեր մորն ենք պարտական մասունքների պաշտամունքը հայտնագործելու համար. սուրբ Հեղինեն Պաղեստինից վերադառնալիս այնտեղից իր հետ բերեց բազմաթիվ թանկարժեք «սրբություններ», որոնք սկսեցին արագորեն բազմանալ, ինչպես ձեռնածուի մոգական փայտիկի տակ բազմանում են գնդիկները։)

Կղերականները շատ են պարծենում Կոստանդին կայսրով, սակայն, ի միջի այլոց, պարծենալու ոչինչ չկա։

Համառոտակի թվենք այդ կայսեր որոշ սխրանքները։ Նա սրահարեց

Հարազատ որդուն՝ Կրիսպոսին. բաղնիքում խեղդեց կնոջը՝ Փաուստա յին. արձակեց իր տասներկուամյա զարմիկի՝ Լիկինիանոսի սպանութ յան հրամանը, քանի որ նա հետագայում կարող էր հաշիվ պահանջել, թե ինչպես է կայսրը ոչնչացրել իր հորը՝ Կոստանդինի հարազատ քրոջ ամուսնուն։ Ահա ինչպիսի գթառատ սեր է տածել այդ մեծ սուրբն իր ընտանիքի նկատմամբ այն ժամանակ, երբ գլխավորում էր տխրահռչակ Նիկիայի եկեղեցաժողովը, որը կոչված էր մշակելու քրիստոնեական հավատո հանգանակը։

Հասարակ մարդասիրութ յան տեսակետից այդ կայսրը հրեշ էր։ Պրուսացիները, որոնք 1870-ին, ինչպես հայտնի է, քիչ հանցագործութ յուններ չկատարեցին, իրենց դաժանութ յամբ բացահայտորեն զիջում են նրան։ Ֆրանկների (ֆրանսիացիների նախնիների) դեմ պատերազմելու ժամանակ Կոստանդինը անլուր վայրագութ յամբ հաշվեհարդար տեսավ գերիների հետ. նրանց հողոտելու տվեց այն վայրի գազաններին, որ իր հետ բերել էր նրա բանակը։ Կյանքի վերջին, արդեն հյուծված, նա փորձում էր իր ուժերը կազդուրել՝ ընդունելով տաք արյան վաննաներ այն մանուկների արյունից, որոնց մորթում էին հատկապես այդ նպատա կով։

Այսպիսին է այդ սուրբը, կղերականների փա՜ռքն ու հպարտութ յունը։

IV դարում չորս կայսրեր փորձեցին թեկուզ որևէ չափով խանգարել քրիստոնեական եկեղեցու ուժեղացմանը։ Դրանք էին՝ Հուլիանոս Փիլիսոփան, Վաղենտինիանոս I-ը, Գրատիանոսը և Վաղենտինիանոս II-ը։ Վաղենտինիանոս I-ին վառեցին իր վրանում, Գրատիանոսին սպանեցին, Վաղենտինիանոս II-ին խեղդամահ արին նրա ծախված սպասավորները։ Ինչ վերաբերում է Հուլիանոսին, այդ շատ չափավոր իշխանավորին, որը մյուսներից ավելի եռանդով էր փորձում վերջ դնել եկեղեցու նկրտումներին, ապա նրան սպանեց թունավոր նետը։ Եկեղեցական տարեգրութ յունը պնդում է, թե իբր այդ նետն երկնքից արձակել է ինքը Քրիստոսը։

Ո՞վ կարող է պնդել, թե դեռևս այդ դարում ճիզվիտներ չկային։

## ՍՈՒՐԲ ԱԹՈՌԸ ԵՎ ԿԱՆԱՅՔ

Մենք մոտեցանք V դարին։

Անաստաս I-ը փոխարինեց Սիրեկիոսին։ Նրա օրոք եկեղեցուն տի-

*բացան կանայք։ Պարզապես անհավատալի է, թե ինչեր էին անում սուրբ պառավները՝ օգտվելով Անաստասի թույլ բնավորությունից։*

*Այն ժամանակվա քրիստոնյաները բաժանվեցին երկու հակամարտ բանակների, որոնց գլուխ կանգնած էին երկու կուրտիզանուհիներ՝ տիրուհի Մարկելան և տիրուհի Մելանիան։ Տիրուհի Մարկելան խիստ ատում էր ոմն Ռուֆինիոսի, Մելանիայի սիրեկանին, որը աքվելիացի հոգևորական էր։ Ռուֆինիոսը մեծ գիտնական էր, և նրա աշխատությունները շատ բարձր էին գնահատվում ժամանակի աստվածաբանների կողմից։ Բնականաբար, տիրուհի Մարկելային տանջում էր խոցված ինքնասիրությունը, և թերևս շատ անգամ է նա ինքն իրեն կրկնել. «Ինչու պիտի Ռուֆինիոսին զիջեմ իմ մրցակցուհուն»։*

*Նախանձից տանջվելով, գեղեցկուհին գիտնականին դիմել է այլ ոպիսի առաջարկություններով, որոնք նույնքան ոչ կրոնական էին, որքան և անպատշաճ։ Նա խաղաքարտի վրա է դրել ամեն-ինչ, ոչ մի բանից առաջ կանգ չի առել, բայց... մնացել է ձեռնունայն։ Հավանաբար, այդ Ռուֆինիոսը ամուր կապված է եղել տիրուհի Մելանիայի հետ։ Հայտնի է, թե որքան վրիժառու է լինում մերժված կուրտիզանուհին։ Իր վիրավորված զգացմունքներով տիրուհի Մարկելան իրեն գցել է սուրբ հորմոտ և մերկացրել Մելանիայի սիրեկանին։*

*Սրբուհի անառակը (սրբուհի, որովհետև այդ կուրտիզանուհուն հետագայում դասել են սրբերի շարքը) հայտարարել է, թե Ռուֆինիոսը հերետիկոս է, քանի որ թարգմանել է Որիգենոսի երկը, որն արդեն ինքնին հերետիկոսություն է։*

*Պապը, եթե հավատանք տարեգիրներին, ընդունակ չէր որևէ բանում մերժել տիրուհի Մարկելային։ Լսելով նրան, նա եռանդագին թափահարեց իր թիթեղյա զարդարուն մականը, բարեխղճորեն նշան բռնեց և՝ թը՛խկ, հարվածեց անբախտ Ռուֆինիոսին։ Ի դեպ, Ռուֆինիոսը, վտարվելով եկեղեցուց, շարունակում էր ապրել ուրախ ու զվարթ։*

*Այդ իրադարձությունը վկայում է միայն այն, որ կղերականներն առաջին դարերում էլ չէին փայլում բարձր բարոյականությամբ։*

*Իննովկենտիոս I-ի օրոք հոգևորականությունը հարստանում էր արագորեն՝ կողոպտելով կանանց, որոնց գայթակղեցնում էին նրբակիրթ կղերականները։*

*Օրինակ, Վեստինա անունով ոմն տիկին, որը շատ քահանաների սիրուհին էր, իր ամբողջ ունեցվածքը մսխեց հանուն եկեղեցու։ Ի հաճույս պապի, Վեստինան Հռոմում կառուցեց շքեղ բազիլիկա (այժմ Հիվանդասքայի և Պրոտասիայի եկեղեցին), որը ճոխ զարդարված էր ոսկե*

և արծաթե սպասքով։ Այսպես, գլխավոր բեմում գտնվող սուրբ Հաղորդության նվերների գանձարանը, որը ծածկված էր թանկարժեք քարերով, պատրաստված էր վանգվածեղ ոսկուց. մկրտության ավազանի վերևում բարձրանում էր մի վիթխարի արծաթե եղնիկ, որի բերանից ջուր էր հոսում. այն արկղիկը, որում պահվում էր սատանաներին խափանելու համար օգտագործվող յուղը, կերտված էր ագաթի մի ամբողջական կաորից։ Բացի դրանցից, տաճարում կար երեսունվեց պղնձյա աշտանակ, որոնցից յուրաքանչյուրը կշռում էր հարյուր վաթսուն կիլոգրամ։

Այն շահույթը, որ բերում էին այդ եկեղեցուն պատկանող տներն ու հողերը, հասնում էր առասպելական թվերի։

Իսկ Վեստինան մեռավ աղքատության մեջ. նրա ամբողջ ունեցվածքը կլանեց եկեղեցին։

## ՍԵՔՍՏՈՍ III

Ըստ հերթականության քառասունվեցերորդ պապը, որը կառավարել է 432 թվականից մինչև 440 թվականը, միանգամայն կորիճ տղամարդ է եղել։ Սուրբ հայրը կարծում էր, թե վանքերն ու հարեմները միևնույն բանն են. թե՛ այստեղ և թե՛ այնտեղ պետք է իշխի նույն պապը։

Պատկերացրեք նրա վիճակը։

Դեռատի աղջիկը, որը սուրբ մենաստան էր մտնում որպես Քրիստոսի հարս, դառնում էր նրա կինը։

Ի՜նչ արած, քանի որ Հիսուս Քրիստոսը ի վիճակի չէ իջնել երկիր, թող ինքն իրեն մեղադրի։ Ո՞վ պետք է լինի աստծու տեղակալը, հարցնում եմ ձեզ։

Իհարկե, պապը։

Համենայն դեպս այդպես էին պնդում եպիսկոպոսները։

Եվ հիրավի, նորին սրբություն Սեքստոս III-ը, սրբազան իրավասություններ ստանալով հենց իրենից՝ Հիսուս Քրիստոսից, բնավ չամաչելով, իր ուղղադավան հավատացյալների նկատմամբ կատարում էր օրինավոր ամուսնու բոլոր պարտականությունները։

Մի անգամ նրա բախտը չբերեց. Խրիզոնոգիա անունով մի միանձնուհի նրան դիմադրություն ցույց տվեց... Բնականաբար, հարկ եղավ բռնության դիմել։ Վերջապես նա պա՞պ է, թե ոչ, սատանան տանի...

Բայց սա բոլորը չէ։ Վեհապետ Սեքստոս III-ին բռնել են նաև արյունապղծության մեջ։

Նրա բուռն գործունեությունը զայրույթ առաջացրեց հավատացյալների շրջանում։ Հրավիրվեց հատուկ եկեղեցաժողով՝ սրբազնագույնին դատելու համար։ Բայց կարո՞ղ էր եկեղեցաժողովը ոտք մեկնել պապի հետ։ Սեքստոս III-ը լավագույն հարաբերությունների մեջ էր իր կղերականների հետ։ Նրա ստորադրյալներն անառակություն էին անում ճիշտ այնպես, ինչպես նա ինքը։ Ուստի և վանահայրերը մեծ կաշառքով կարողացան ազդել ժողովականների վրա, որի շնորհիվ Սեքստոս III-ը անմեղ ճանաչվեց։

Եկեղեցաժողովից երեք ամիս հետո քահանա Բասին, սուրբ Հորը մեղադրողների պարագլխին, թունավորեցին։ Պապը մեծ շուքով թաղեց իր թշնամուն, ասելով, թե նա մեռել է թոքերի սովորական բորբոքումից։

Բասի մահվան դատնիքը բացահայտեց միայն Սեքստոս III-ի հաջորդը։

## ԼԵՎՈՆ I

Այս սուրբ հայրը հռչակվել է նրանով, որ հրապարակել է բարոյականությունից իսպառ զուրկ մի կոնդակ. քրիստոնեական քահանայապետը հորդ իրավունք էր վերապահում իր աղջկան որպես հարճ վաճառել ում որ ցանկանա։

Նրա օրոք Կելիդոնիոսը, Վիենի եպիսկոպոսը, մեղադրվել է բռնությունների ու սպանությունների, մասնավորապես իր կենակցուհու ամուսնու սպանության մեջ։ Մեղադրանքը հաստատվել է, և սուրբ Իլարիոս Արլեցու գլխավորությամբ պրովանսալյան եպիսկոպոսներից բաղկացած հատուկ դատարանը որոշել է նրան պաշտոնանկ անել։

Նշենք, որ եկեղեցական դատարանը Կելիդոնիոսին չի դատապարտել, այլ միայն պաշտոնանկ է արել։ Կելիդոնիոսը, որին մեր օրերում դատարանը աքսորի կդատապարտեր, ամենևին էլ իրեն մեղավոր չի համարել. ընդհակառակը, համառել և հրաժարվել է թողնել իր տեղը։ Եվ նույնիսկ սիրտ է արել դատարանի վճիռը բողոքարկել պապի առաջ։ Նախ գիտեր, որ սուրբ Հոր բարոյագիտությունը խիստ առաձգական է։

Եվ իսկապես, Լևոն I-ը վճռեց դատավճիռը։ Մի քանի բռնություն, մի քանի սպանություն՝ այնքան էլ մեծ բան չէ, դատում էր պապը։

Իսկ երբ եպիսկոպոս Իլարիոս Արլեցին հանդգնություն ունեցավ բողոքել, թե իբր պատշաճ չէ եպիսկոպոսի աթոռի վրա թողնել մի մարդու, որը դատապարտվել է քրեական հանցագործության համար, պապը եկեղեցուց վտարեց Իլարիոսին։ Տեղդ իմացիր, այսուհետև մի խառնվիր պապի գործերին։

Մի քանի տարի անց Եփեսոսի ընդհանուր եկեղեցաժողովը, իր հերթին, բանադրեց հենց այդ Լևոն պապին։

Սակայն այս բոլոր իրադարձությունները կաթոլիկներին չեն խանգարել միակերպ մեծարելու և՛ Լևոնին, և՛ Իլարիոսին։

Սուրբ Իլարիոս Արլեցու օրը, ըստ եկեղեցական տոնացույցի, մայիսի 5-ն է, իսկ սուրբ Լևոնինը՝ մայիսի 19-ը։

Ահա ձեզ կղերական տրամաբանություն։ Եվ զարմանալի չէ, որ այդպիսի տրամաբանությամբ ամեն ինչ թույլատրելի է։

Հիշեցնենք. Լևոնի վեհապետության օրոք առաջացել է Ադամյանների քրիստոնեական միաբանությունը։ Այդ աղանդի մեջ էին մտնում երկու սեռերի ներկայացուցիչներն էլ։ Բարեպաշտական ծեսերը (պատարագը, աղոթքը, մաղթանքը) նրանք կատարում էին բոլորովին մերկ, իսկ երբ անցնում էին սուրբ հաղորդությանը, անձնատուր էին լինում անպարկեշտ գրկախառնումների։

Չարժե ավելի հանգամանորեն կանգ առնել բոլոր խաբեբայական ձեռնածությունների վրա։ Նողկալի՞ է։

Բացի Իլարիոս Արլեցուց, Լևոն 1-ի ենթականերից մեկը ևս դժբախտություն է ունեցել վիճելու նրա հետ։ Բայց նա արդեն չի կարողացել գլուխը պրծացնել հասարակ պաշտոնազրկումով։ Խոսքը վերաբերում է Պրիսկիլիանոսին, մի ծերունի հոգևորականի, որը կրոնն այլ կերպ էր հասկանում, քան պապը։

Նորին սրբազնությունը հրամայեց բռնել Պրիսկիլիանոսին և ամոթալի տանջանքների ենթարկել։ Պրիսկիլիանոսին նետեցին զնդան, շղթայեցին, որից հետո վանականները սկսեցին պարզել. համաձա՞յն է նա հրաժարվել իր մոլորություններից, ճանաչո՞ւմ է պապին որպես աստծո տեղապահի երկրի վրա։

Քանի որ այդ թշվառը հրաժարվում էր պատասխանել, դահիճները նրա ոտքերն ու ձեռքերը դրեցին գելարանի մեջ և սկսեցին ճզմել, իսկ երբ կաշին պատռվեց, և ոսկորները դուրս եկան հոդերից, նրան քարշ տվեցին կրակի մոտ։

— Հրաժարվի՛ր քո սխալներից, Պրիսկիլիանոս, և փառաբանի՛ր Լևոնին, հավատացյալների հորը։

Սոսկալի տանջանքների մեջ Պրիսկիլիանոսը աղոթքներ էր հղում երկինք ու հրաժարվում փառաբանել պապին։

Այնժամ սկսեցին նրան խոշտանգել կրակով։ Այրեցին դժբախտի մազերն ու գլխի մաշկը, մարմինն այրեցին շիկացած երկաթով, բաց վերքերի վրա տաքացրած յուղ կաթեցրին և, վերջապես, դահիճը նրա վրա եռացող հեղուկ թափեց. երկժամյա անմարդկային տանջանքներից հետո նա հոգին ավանդեց։

Պրիսկիլիանոսին, որպես հերետիկոսի, չեն դասել սրբերի շարքը։ Իլարիոս Արլեցու բախտն ավելի է բերել, քան տանջամահ արված ծեռուկինը։ Բանադրանքից հետո նրան հաջողվել է թաքնվել, այլապես մենք վկա կլինեինք, թե ինչպես մի սուրբ նահատակվել է մի այլ սրբի օգնությամբ։

Լևոն I-ը իր անունը փառավորել է նաև նրանով, թե իբր մեն-մենակ ետ է մղել Աթիլայի լեգիոնները, մի նվաճողի, որը վայրենաբարո և արյունարբու հոների գլուխն անցած՝ հարձակվեց Եվրոպայի վրա։

Ահա թե ինչ է ասում ավանդությունը։

Երբ Աթիլան իր հորդաների հետ շարժվել է Հռոմի վրա, ճամփին այրելով ամեն ինչ, ահաբեկված բնակիչները, մոռանալով հին երկպառակությունները, համախմբվել են և միասնաբար դուրս եկել բարբարոսների դեմ։

Միանգամայն բնական է, որ պապն իր գործակիցների հետ գլխավորել է այդ թափորը։ Ամբոխը, ամբողջ կոկորդով հիմներ երգելով, մոտեցել է հոների թագավորի բանակատեղիին։ Ցնցված նման հանդիպումից, Աթիլան հետաքրքրվել է, թե ինչ է նշանակում այդ ամենը։ Լևոն պապը մի ոգեշունչ ճառ է արտասանել, որն ավելի համոզիչ է դարձել այն պատճառով, որ նախօրոք ամրապնդված է եղել մի զգալի գումարով։ Արժանվույնս գնահատելով փրկավճարը, Աթիլան վերցրել է հարուստ պարգևներ և թողել զնացել իր գործին։

Այդ իրադարձության երջանիկ ելքը շուտով սկսեցին վերագրել հրաշքի։ Նույնիսկ գտնվեցին մարդիկ, որոնք պնդում էին, որ իրենց աչքով տեսել են, թե ինչպես Լևոն I-ի ճառի ժամանակ երկնքում սավառնող մի սպիտակամորուք ծերուկ, որի գոտուց մի հսկայական սուր է կախված եղել, նվաճողին հրամայեց նահանջել։

Լևոն I-ի հրաշքը միայն մի անգամ է տպավորություն գործել։

Երբ որոշ ժամանակ անց Գեյզերիխի գլխավորությամբ, որ Աթիլայից ոչնչով պակաս չէր, երկիր են ներխուժել վանդալները, հռոմեական քրիստոնյաները փորձել են կրկնել նախկին հնարը։ Պապը նորից թա-

փոր է կազմակերպել՝ դրոշներով, խաչվառներով, երգերով։ Սակայն, պետք է կարծել, Աթիլան այնպես հիմնավոր էր մաքրազարդել քաղաքային գանձարկղը, որ Հռոմեացիները ոչինչ չէին կարող առաջարկել Գեյզերիխին։ Վանդալների թագավորը չի ցանկացել ականջ դնել սուրբ տիրակալի ողբին ու վայնասունին, և հրաշքը, որ խոստացել էր Լևոնը, աղետալի հետևանք է ունեցել։

Գեյզերիխը ամայացրել է Հռոմը։ Սուրբ քաղաքի կողոպուտը տևել է տասնչորս օր, վանդալները մոլեգնել են, իսկ սպիտակամորուք ծերունին, որ Աթիլայի ժամանակ սավառնում էր երկնքում, իսկի չի էլ մտածել երևալ։ Վանդալները քաղաքը լքել են միայն այն բանից հետո, երբ տներում արդեն չէր մնացել ոչ մի թաշկինակ, և ոչ մի գեղեցկուհի։

Թերթելով պատմության էջերը, հիշատակենք ևս մի քանի եկեղեցական գործիչների։ Սուրբ տիրակալ Անաստաս II-ին, որ Հոգին ավանդել է 498 թվականին, բարձրաստիճան եկեղեցականները բռնակալ են անվանել։ Հենց իրենք էլ նրան թունավորել են։ Դա միայն հաստատում է այն ճշմարտությունը, որ կղերականները գայլերից ավելի սարսափելի են, որովհետև գայլերը ինչքան էլ վայրագ լինեն, իրենց նմաններին չեն ոչնչացնում։

Անաստաս II-ի հաջորդը, Սիմմաքոս պապը, բռնվել է բռնաբրության մեջ։

Սուրբ Սաբաստոսը, Երուսաղեմի եպիսկոպոսը, եղել է ավազակախմբի պարագլուխ։

## ՊԱՊԵՐԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք մոտեցել ենք այն ժամանակին, երբ պապությունն իր գերիշխանությունը հաստատել է քրիստոնեական եկեղեցու վրա։

Ինչպե՞ս են բորբոքվում մրցակիցների կրքերը։ Ինչպիսի՞ ողբ ու վայնասուն։ Եպիսկոպոսները դեռևս կենդանի պապի օրոք դավեր են նյութում՝ փնտրելով հնարավոր հաջորդներ։

Վաթսուներորդ պապը, Սիլվերիոսը, որին գահընկեց արեց Վիգիլիոս եպիսկոպոսը, աքսորվեց Պալմարիա ամայի կղզին, որտեղ ինն օր մնաց

անոթի։ Վերջիվերջո մենակյացները, որ հսկում էին նրան, չսպասելով, որ Սիլվերիոսը հոգին ավանդի, նրան խեղդամահ արին։

Վիգիլիոսը, վաթսունմեկերորդ պապը, հայտնի էր որպես արվամոլ։ Այդ բոլորից բացի, նա գավազանով սպանել է մի դժբախտ մանչուկի, որ փորձել է նրան դիմադրել։ Այդ սպանությունը խռովության առիթ դարձավ։ Ապստամբ ժողովուրդը պապին, թոկից կապելով, դուրս քերեց պալատից և քարշ տվեց Հռոմի փողոցներով, նրան հրապարակավ խարազանելով։

Վիգիլիոսի կյանքը ծանրագույն հանցագործությունների մի շղթա է. այդ ընչաքաղց սրիկայի, բռնաբարողի, մարդասպանի օրոք հոգևորականությունը անձնատուր է եղել անվերջանալի ցոփ կերուխումի, վանքերը վերածվել են հասարակաց տների։

Վիգիլիոսը մահացավ, թունավորվելով իր հաջորդի՝ եպիսկոպոս Պելագիոսի կողմից։ Վերջինիս օրոք արևելյան մի եպիսկոպոս բռնվեց արյունապղծության մեջ։

Հովհաննես III-ի, վաթսուներեքերորդ պապի օրոք ֆրանսիացի երկու պրելատի դատեցին բռնության և սպանության համար։ Գազազածայն բանից, որ նրանց դատավճիռը կայացրել է աշխարհիկ դատարանը (չէ որ դա ոտնձգություն էր եկեղեցու իշխանության նկատմամբ), Հովհաննեսը հրամայեց դատապարտյալներին վերականգնել իրենց աստիճանում։

Պապի պահանջով ծանրագույն հանցագործությունների համար որպես պարգև նրանց տրվեց երկու թեմ։

Պելագիոս II-ի օրոք Գրիգորը, Անտիոքի եպիսկոպոսը, մեղադրվեց իր հարազատ քրոջ հետ արյունապղծության մեջ։ Պապը Գրիգորին կանչեց Հռոմ, արգելելով նրա գործը քննել աշխարհիկ դատարանում։ Փոխանակ լսելու վկաների ցուցումները, նորին սրբազնությունը Գրիգորից պահանջեց՝ թե թող երդվի, որ հանցանք չի գործել։ Դե իհարկե, եպիսկոպոսը երդվեց սուրբ գրքով, ամենակարող աստծով և սուրբ առաքյալներով, թե անմեղ է նորածին մանկան պես։

Այնժամ երկրի վրա աստծո տեղապահն ընդունեց հետևյալ հիանալի վճիռը.

«Աստծո ծառան, որին մենք ենք ընտրել, մեր հոտի ղեկավարներից մեկն է և արդեն հենց իր հոգևոր աստիճանի պատճառով չի կարող սուտ երդում տալ։ Նա երդվեց, որ անմեղ է։ Հետևաբար, մեղադրյալները նրան զրպարտել են։ Թող պատասխան տան իրենց արածի համար։ Մենք պետք է պատժե՞նք նրանց»։

Եվ՞ իսկապես, այդ դատավարության վկաներին, որոնց թույլ չտվին նույնիսկ բերանները բացել, աքսորի դատապարտեցին այն բանից հետո, երբ, հիպոտահարելով, քարշ տվեցին փողոցներով։

Պեղիագիոս II-ը հրապարակեց հռչակավոր մի կոնդակ, որով եպիսկոպոսներին առաջարկեց չսպանել իրենց կենակցուհիների երեխաներին, այլ հանձնել մենաստանների դաստիարակությանը, որպեսզի ապագայում քահանաներ դառնան։

Նա մեռավ վեներական հիվանդությունից, որով վարակվել էր Հռոմի պոռնկանոցներից մեկում։

## ՄԵԾՆ ԳՐԻԳՈՐԸ

Ո՜հ, սո՜ւրբ մարդ, առաքինի՜ հայր։ Ժողովուրդնե՛ր, ծնկի եկեք։ Գրիգոր անունը կրող վաթսունվեցերորդ պապին- կարելի է անվանել նույնիսկ ոչ թե կիսագազան, այլ միանգամայն կատարյալ գազան։ Դրա համար անհրաժեշտ բոլոր հատկությունները նա ուներ։

Հենց նա է հայտնագործել հռչակավոր քավարանը։ Եվ պետք է խոստովանել, որ դա շատ սրամիտ հայտնագործություն է։

Քավարան (ignis purgatorium —մաքրող կրակ) էին անվանում այն տեղը, որտեղ մաքրվում էին մարդկանց հոգիները, որպեսզի մաքրված ընկնեն դրախտ։

Դեռևս մինչև Գրիգորը, շատ աստվածաբաններ կարծում էին, թե այն կրակը, որի մասին խոսում է Պողոս առաքյալը, կարող է վառվել ոչ մի այն աշխարհի վերջը գալու պահին, այլև մահվան ու ահեղ դատաստանի միջև եղած ընդմիջումների ժամանակ։ Լաքտանցիուսը «Աստվածային կանոններում» (գիրք VII, գլ. 21) ասում է. «Թող չմտածեն, թե իբր հոգիները կանգնում են դատարանի առաջ մեռնելուց վայրկենապես հետո։ Բոլոր հոգիները բնակվում են մի ընդհանուր բնակավայրում, որտեղ և սպասում են այն փորձություններին, որոնց նրանք պետք է ենթարկվեն մեծ դատավորի առաջ։ Նրանք, որ արդար են ապրել, անմահություն են ստանում. իսկ նրանք, որ մեղք ունեն, հարություն չեն առնում, այլ նետվում են խավարի մեջ և դատապարտվում տառապանքների»։

Մեծն Գրիգորը գլուխ չցավացրեց այդ հարցի մասին դատողու-

թյուններ անելով, այլ պարզապես հայտարարեց. «Հոգիներին կարող են թեթևություն բերել աղոթքները, որոնք պետք է արտասանվեն, քանի դեռ նրանք գտնվում են քավարանում։ Իսկ քավարանից նրանց կարելի է ազատել պատարագների օգնությամբ, որոնք պետք է կատարվեն հատկապես տվյալ նպատակով»։ Եվ այնուհետև. «Հանգուցյալների հոգիները ներկայանում են կենդանի մարդկանց, պատմելով իրենց տառապանքների մասին, նրանք խնդրում են իրենց օգնել աղոթքներով, իսկ հետո հաստատում են, որ աղոթքներն իսկապես թեթևացրել են իրենց վիճակը»։

Քավարանը, լույս աշխարհ գալով, իր հետ բերեց վիթխարի թվով ինդուլգենցիաներ* և պատարագներ, յուրաքանչյուրը 3 ֆրանկ կամ 100 սու և 1 լուիդոր արժողությամբ։

Շնո՜րհ արեք, մոտեցեք եկեղեցական թասին, բարեպաշտ հավատացյալնե՛ր։ Ժլատություն մի՛ արեք, ավելի շատ դրամ գցեք, իսկ մենք էլ կաշխատենք թեթևացնել ձեր հայրերի և ձեր բոլոր մերձավորների տառապանքները։ Ամեն։

Սուրբ Գրիգորի խղճի վրա (եթե միայն նա խիղճ ուներ) ծանրացած է ևս մի սպանություն. նա խռովարարության համար թունավորել է եպիսկոպոս Մալխուսին և նրան վտարել եկեղեցուց։ Մալխուսը մեռավ իր բանադրման օրը, երբ գտնվում էր այն լեգատի մոտ, որին հանձնարարված էր նրան հանձնել պապի ահեղ կոնդակը։

Մալխուսի մահը, ըստ հենց նրան թունավորող Գրիգորի, եղել է «մեծ հրաշք», որովհետև նրա հանկարծակի վախճանի մեջ նկատվում է «աստվածային նախախնամություն»։

Գրիգորի վեհապետության օրոք տեղի ունեցավ ևս մի դեպք, որը նույնպես կարող էր այն ժամանակ դասվել հրաշքների շարքը և աստվածային արարք հայտարարվել։ Դա պատահեց եկեղեցու գլխավոր վանքի մեծ ավազանը նորոգելիս։

Երբ բաց թողին ջուրը, ջրամբարի հատակին գտան մահացած մանկիկների մի քանի հազար դիակ։

Հազիվ թե որևէ մեկը հավատա, որ այդ մանկիկները կանանց վանքում, որտեղ բազմիցս այցելում էին հոգևորականները, գոյացել են սուրբ ոգուց։

Գրիգոր պապն առաջիններից մեկն էր, որը հասկացավ, թե կղերականների իշխանությունը հիմնված է գլխավորապես տգիտության վրա, և իր ամբողջ գործունեությունն ուղղեց այն բանին, որ մթագնի Հռոմի

* Ինդուլգենցիա—թողության թուղթ։— Ս. Բ.

ժողովրդի միտքը։ Նրա հրամանով հավաքվում էին անտիկ գրքերը, ձեռագրերը, նկարները, քանդակները, հեթանոսական հարուստ ժառանգության հուշարձանները։ Սուրբ աթոռի վրա լուսավորության այդ թըշնամու մնալն այս առումով պակաս ճակատագրական չեղավ, քան գրքերի, հոների և վանդալների բոլոր արշավանքները։

Սաքինեանոսին կարելի է համարել Գրիգորի արժանավոր հաջորդը։ Բանագրանքի տպառնալիքով Սաքինեանոսը ժողովրդին արգելեց գրագիտություն սովորել. նրա կարծիքով լուսավորությունը վանականների ու տիրացուների մենաշնորհն է։

Արվեստի անտիկ հուշարձանները նրա հրամանով կործանվեցին հացկի հարվածների տակ, առավել թանկարժեք ձեռագրերը կրակի մատնվեցին և մարդկությանը, պատմաբան Մորիս Խաշատրի խոսքերով, մնաց միայն ողբալ բանականության այն գանձերը, որ ոչնչացրել է Սաքինեանոսը։

Սաքինեանոսը եղել է իր ժամանակի առավել ատելի քահանաներից մեկը։ Գրիգորի մահից հետո, երբ եկեղեցականները հավաքվեցին, որպեսզի նոր պապ ընտրեն, նրանց չէր հետաքրքրում, թե ով ավելի մեծ օգուտ կբերի իրենց հոտին։ Նրանց հետաքրքրում էր միայն, թե թեկնածուներից ո՞վ կկարողանա ավելի մեծ հաջողությամբ բաղմապատկել եկեղեցու հարստությունը։

Ահա թե ինչու սուրբ Պետրոսի գահը բաժին ընկավ Սաքինեանոսին։

Այդ պահը ագահ է եղել սպունգի պես։ Այդ անհագ ընչաքաղցն աշխատում էր եկամտի աղբյուր դարձնել նույնիսկ ժողովրդի պատուհասած ադետը։ Երբ Հռոմում բռնկվեց սով, Սաքինեանոսը, որի մոտ, առաքելական պալատի նկուղներում, պահվում էին հացի հսկայական պաշարներ, սկսեց դրանք վաճառել՝ փոխարինելով ոսկով։

Մարդիկ սովից հյուծված ընկնում էին փողոցներում, և պապի վարմունքը առաջացրեց քաղաքացիների դայրույթը։ Նրա մոտ պատվիրակություն ուղարկեցին՝ թախանձագին խնդրելով Հանուն Քրիստոսի մարդկանց փրկել կործանումից և անվճար հաց տալ նրանց, ովքեր ի վիճակի չէին վճարել դրա համար։

Հանո՞ւն Քրիստոսի... Սուրբ հայրը նույնիսկ չընդունեց քաղաքի ներկայացուցիչներին. թքել էր նա Հիսուսի գթասրտության վրա։

Դրանից հետո ժողովուրդն ապստամբեց, և նողկալի կորզիչը կյանքի գնով հատուցեց իր դաժանության համար։ Նա սպանվեց իր պալատում։

Սաբինիանոսի մահից հետո սուրբ աթոռը ավելի քան մեկ տարի մնաց թափուր։ Եպիսկոպոսները զենքը ձեռքներին ձգտում էին միմյանցից խլել սուրբ հոր գահը։ Վերջիվերջո բռնակալ Փոկասը, որ այն ժամանակ կայսրության տերն էր, հավատացյալների վզին փաթաթեց Վոնիփակիոս III-ին։ Հենց այդ պապն է, որ ստացել է տիեզերական եպիսկոպոս տիտղոսը։

* *

Վոնիփակիոս IV-ը եղել է կատարյալ ապուշ։ Նրա գլուխն էր մտել մի սևեռուն գաղափար՝ առանց բացառության բոլոր հավատացյալներին վանական դարձնել։ Թեև նույնիսկ ամբողջ աշխարհը դառնար քրիստոնեական հավատքին՝ դա էլ չէր բավականացնի նրան։ Նա երազում էր Քրիստոսի իսկական զորքի՝ վանականների հրոսակախմբերի մասին։ Ամենուր վանականնե՛ր, միայն և միայն վանականներ...

Վոնիփակիոս IV-ը նույնիսկ մի վանական հագուստ հնարեց, որը, ըստ նրա պատկերացման, պետք է նման լիներ հրեշտակների հագուստին։

Ահա թե ինչ է գրում այդ նվազամիտ սուրբը.

«Վանականներն իրենց արտաքին տեսքով նման են փառապանծ քերովբեներին։ Կնգուղը, որ ծածկում է նրանց գլուխը, երկու առկայծող թևեր են. փարաջայի երկար թևերը մյուս երկու թևերն են, իսկ ծածանվող փեշերը՝ թևերի երրորդ զույգը։ Չի՞ նշանակում սա արդյոք, որ վանականները վեցթևանի են, ինչպես սերովբեները, և, հետևաբար, պատկանում են հրեշտակների բարձրագույն դասին»։

Թող ընթերցողը չմտածի, թե ես զվարճանքի համար թեկուզ մեկ բառով մեղանչել եմ ճշմարտության դեմ։ Դա բառացի մեջբերում է Վոնիփակիոս IV-ի ուղերձից։

Նա այնքան էր տարված այդ գազափարով, որ իր ծնողներին ստիպեց կուսակրոն ձեռնադրվել, իսկ նրանց տունը դարձրեց վանք։

## ՆՈՂԿԱԼԻ ԲԱՐՔԵՐ

Հակաբնական սեռական սանձարձակությունը Մարտինոս I-ի օրոք ճկեղեցու ծառաների մեջ չարիք դարձավ։ Քահանաներն այլևս չէին բա-

վարարվում մանկահասակներին բռնաբարելով, նրանք սկսեցին անասնական պղծությամբ զբաղվել։

Նրանց նողկալի արարքները չի կարելի թվարկել առանց ամոթից կարմրելու։ Բավական է ասել, որ հենց ինքը՝ Մարտինոս պապն էր խոստովանում, որ այդ կեղտոտ անասունների վարքն անպարկեշտ է։ Նրանց արածն ամոթաբեր էր ամբողջ մարդկային ցեղի համար։

Մաստրիխտի եպիսկոպոս Ամոնոսին հասցեագրված ուղերձում կան հետևյալ տողերը.

«Մեծ ցավով ենք մենք տեսնում, որ գրեթե ամենուր քահանաները, սարկավագները և այլ կղերականներ ընկնում են անառակության, արվամոլության և անասնապղծության ամոթալի մեղքի մեջ։ Այդ զազրելի սրիկաներից նրանք, ովքեր թեկուզ մեկ անգամ կբռնվեն հանցանքի մեջ, պաշտոնազրկվելու են առանց երբևէ վերականգնվելու հույսի»։

Հոգևորականության դասը, որ հինգ վեցերորդով վարակված էր ամենասարսափելի արատներով, չէր կարող հանդուրժել այն պապին, որը փորձում էր կարգի բերել եկեղեցական բարքերը։ Կղերականները Մարտինոս I-ին մեղադրեցին հերետիկոսության մեջ և աքսորեցին մի անմարդաբնակ կղզի, որտեղ և նա շուտով կնքեց իր մահկանացուն։

Սուրբ աթոռը գրավեց Եվգինեոս I-ը՝ մի հովիվ, որը լիովին արժանի էր իր հոտին։ Ոմն Մաքսիմիոս, խրիզոպոլսցի աբբահայր, փորձեց Եվգինեոսին կշտամբել այն բանի համար, որ նա խույրը գլխին դրել է դեռևս իր նախորդի կենդանության ժամանակ։ Եվգինեոս պապը կարգադրեց՝ Մաքսիմիոսին հրապարակավ ճիպոտահարել քաղաքի բոլոր խաչմերուկներում. դրանից հետո կտրեցին աբբահոր լեզուն և աջ թևը։

Եվգինեոս պապը սուրբ է հռչակված։ Ամենից ծիծաղելին այն է, որ հետագա պապերը նրա հակառակորդին էլ են դասել սրբերի շարքը։ Եկեղեցին մեծարում է Մաքսիմիոսի հիշատակն օգոստոսի 13-ին, իսկ Եվգինեոսինը՝ 27-ին։

Ագաթոն պապը հռչակվել է նրանով, որ եկեղեցուց վտարել է Հոնորիոս պապին, որը սուրբ Պետրոսի աթոռը ղբաղեցրել է 625-ից մինչև 638 թվականը։

Ո՞վ է այդ երկու պապերից ավելի անսխալական։

Ագաթոնը մեռել է վեներական հիվանդությունից։ Դա, այնուամենայնիվ, չի խանգարել, որ նրա դիակը մեծ հրաշքներ գործի։

*687-ից մինչև 701 թվականը սուրբ Պետրոսի աթոռին բազմում է մի հազվագյուտ սրիկա։ Մեր առջև Սարգիս I պապն է։*

*Երբ նրա նախորդ Կոնոնը գտնվում էր մահվան մահճում, գլուխը կորցրած կղերականները, մի քանի խմբի բաժանված, միանգամից ընտրեցին նրա երեք հաջորդներին՝ Թեոդորոսին, Պասքալիոսին և Սարգսին։*

*Կարող եք պատկերացնել, թե ինչ տենդի մեջ ընկան գահի այդ հավակնորդները, ինչպիսի ծեծկռտոցներ ու տուրուդմփոցներ տեղի ունեցան։ Ասենք, զարմանալու ի՞նչ կա՝ սուրբ աթոռը հանաք բան չէ։*

*Այդ խառնակովի մեջ ներգրավվեցին նաև հավատացյալները. Թեոդորոսի կողմնակիցները Պասքալիոսի կողմնակիցներին ծեծեցին սուրբ Հուլիոսի բազիլիկայում։ Սարգիսը ճարպկորեն օգտվեց Թեոդորոսի և Պասքալիոսի կռվից. նա կաշառեց ու խմեցրեց մի ղինված չոկատի և գրավեց առաքելական խույրը։*

*Պասքալիոսին և Թեոդորոսին նետեցին ղնդան։ Շուտով այդ քաջակորով կտրիճների կրքերը մարեցին, և նրանք նույնիսկ երդվեցին, որ ենթարկվում են Սարգսին։*

*Սարգիսը նրանց ազատ արձակեց։ Սուրբ հայր Թեոդորոսը չկորցրեց թանկարժեք ժամանակը և տեղնուտեղը հրապարակավ Սարգսին մեղադրեց բռնատիրության մեջ, ապացուցելով, թե լոկ իրեն ընտրելն է օրինականը։ Նրան հաջողվեց իր կողմը գրավել հոգևորականության մեծ մասը, և Սարգսին դուրս վռնդեցին։*

*Սակայն Սարգիսն էլ չընկճվեց։ Նա տեղափոխվեց Ռավեննա։ Այդ ժամանակ Ռավեննայի էկզարքոսն էր ոմն Պղատինոս, մի կատաղած սրիկա, որն ամեն տեսակ ծեծկռտոցների ու կռիվների թունդ սիրահար էր։ Սարգիսը Պղատինոսին ոսկե սարեր խոստացավ, թե՛ն նա օգներ գահը վերադարձնելու իրեն։*

*Երկու սրիկաներ լեզու գտան, և Սարգիսը Պղատինոսի օգնությամբ շուտով նորից ձեռք գցեց խույրը, որը, ի դեպ, նրան շատ էր սազում։*

*Բաղմելով գահին, սուրբ հայրն ուզում էր Ռավեննայի էկզարքոսի հետ, սրա մատուցած ծառայությունների համար, հաշիվները մաքրել ճշմարիտ կաթոլիկի բոլոր կանոններով։ Բայց Հովհաննես Պղատինոսը խիստ դաժան մրցակից էր, նման սրիկայի հետ կատակել չէր կարելի՝ աղեուից փրկվել չէր լինի։ Բացի այդ, համար երկրորդ պապը, Պասքա-*

քիոսը, իր հերթին հայտարարեց, թե իրեն ևս հովանավորում է չարաշահատիկ էկզարքոսը։ Կամա-ակամա Սարգիսը ստիպված էր կատարել իր խոստումը։

Նա եկեղեցիներից դուրս հանեց բոլոր զարդարանքները, վաճառեց սրբազան անոթները, մոմակալները, աշտանակները, նվիրատվության տուփերը, վաշխառուներին տվեց նույնիսկ այն ոսկե թագերը, որ զարդարում էին սուրբ Պետրոսի զոհասեղանը։

Հովհաննես Պղատինոսը, ի վերջո լրիվ բավարարված, լքեց Հռոմը։ Նահանգում հոգատարություն ցուցաբերելով աթոռի գծով իր գործակից Թեոդորոսի նկատմամբ, Սարգիսը նրան փակեց վանքում։ Իսկ ինն օր անց, պատարագից անմիջապես հետո, Թեոդորոսը հոգոց հանգելուց եղավ։ Հաղորդության սպիտակ գինին ուղարկել էր հենց ինքը՝ Սարգիսը։ Մնացածը հասկանալու համար մեծ խելք չի պահանջվում։

Սարգիս պապն իր վեհապետության ժամանակ հրապարակել է ոչ սակավաթիվ հետաքրքրական կոնդակներ։ Այսպես, մի կոնդակով նա քահանաներին թույլատրեց ամուսնանալ հասարակաց կանանց հետ, ճիշտ է, մեկ անգամից ոչ ավելի։ Նա վանքերին թույլատրեց դաստիարակության համար երեխաներ վերցնել՝ սկսած տասը տարեկան հասակից։ Կարելի է պատկերացնել, թե ինչ ճակատագիր էր սպասում դժբախտ երեխաներին այն մարդկանց մեջ, որոնք դատապարտված էին կուսակրոնության. այդ դարաշրջանում կուսակրոնությունը պարտադիր էր միայն վանականների համար։ Դրա փոխարեն նրանք կորցրածը ետ էին բերում տղաների հաշվին։

Բացի դրանից, Սարգսի պահանջով տիեզերական եկեղեցաժողովը որոշում ընդունեց գողերին, մարդասպաններին և հանցագործներին, ինչպիսին էլ որ լինեն նրանց հանցագործությունները, վանք ընդունել։

Հիրավի տաքո՞ւկ կոմպանիա էր հավաքվել այդ խաղաղ մենաստանում։

Սուրբ հայրն իր ուրույն հայեցակետն ուներ մի շարք բաների վերաբերյալ. նա գտնում էր, որ թաքուն գործված մեղքը կիսով չափ ներված է. ամեն ինչ թույլատրելի է, եթե կատարվում է թաքուն։ Օրինակ, չի՛ կարելի շնություն անել սրբավայրերում, հատկապես երբ ամուսնությունը չի օրինականացված... Իհարկե, չի կարելի։ Ամուսնուն և կնոջը թույլատրվում է տաճարում իրենց պահել այնպես, ինչպես տանը, բայց սիրածի՞ն։ Աստված վկա, բարոյականությունը դրա հետ երբեք չի հաշտվի։ Եվ իսկապես, Սարգիսը կոնդակներից մեկում հայտարարեց. «Թանադրել այն տղամարդկանց ու կա՛նանց, որոնք հանցագործ գրկա-

*խառնությամբ ամուսնական անհավատարմությունը դուցադրում են սրբավայրերում»։*

*Երբ Կոստանդնուպոլսի, Աղեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքները մի քանի ազմկոտ խայտառակություններից հետո առաջարկեցին հոգևորականներին կտրականապես արգելել արյունապղծիչ ամուսնությունն օրհնել, եկեղեցու անսխալական տիրակալը հրաժարվեց հավանություն տալ այդ առաջարկին։*

## ԻՍԿ ՈՐՄՆ Է ԵՐԵԽԱՆ

*Իր վեհապետության տասնչորս տարվա ընթացքում գերաշնորհ Սարգիսը կատարել է բազմաթիվ հանցագործություններ, ընդ որում խիստ միատեսակ. բռնություններն ու սպանությունները փոխարինում էին միմյանց։ Սակայն մի պատմական դեպքի վրա արժե կանգ առնել, քանզի այն զուրկ չէ յուրօրինակությունից։*

*Մի անգամ պապին մեղադրեցին ժուժկալության ուխտը խախտելու մեջ։ Պապը չընդունեց այդ մեղադրանքը։ Մեղադրողները պնդում էին, թե քահանայապետը գայթակղեցրել է մի երիտասարդ միանձնուհու, իր հոգևոր դստերը։ Պապը շարունակեց ժխտել։ Նրա մոտ բերեցին իր զոհին։ Սարգիսը հանձն առավ, իսկապես խոստովանացրել է կույսին, բայց վճռականորեն պնդեց, թե մատով իսկ չի դիպել նրան։ Այն ժամանակ սուրբ Հոր մոտ բերեցին մանչուկին, որին ծնել էր նրա միանձնուհին մի քանի ամիս առաջ։ Մանչուկը շատ նման էր պապին։ Երբ պատին դեմ արին, սուրբ հայրը ծիծաղեց, այնուհետև ձեռքերի վրա առավ մանչուկին և, խաչակնքելով նրան, զարմացած ամբոխին ասաց. «Ինչ էլ որ լինի, ես սաղմնավորել եմ քրիստոնյայի, շնորհակալությամբ փոխհատուցենք աստծուն, որ մեր կրոնը ձեռք է բերել ևս մի հավատացյալ»։ Հոտը նման պատասխանը համարեց փայլուն և, հարգանքով խոնարհվելով պապի առաջ, թուլտվություն խնդրեց համբուրելու նրա աջը։*

*Սակայն չպետք է մոռանալ, որ Սարգիսն իր ձեռքի տակ ուներ պատկառելի ռազմական ուժ։ Թե նույնիսկ նրան բռնեին ծանր հանցագործության մեջ, նրան գահից գցելը հեշտ չէր լինի։*

*Հենց Սարգիսն է պատարագի մեջ մտցրել այս նշանավոր բառերը.*

«Աստծո անմեղ գառ, որ քավել ես աշխարհի մեղքերը, խղճա մեզ»։ Անվիճելի փաստ է, սուրբ հոր խիղճն ամեն օր կարիք էր զգում լավ օճառված խոզանակի։

Կոստանդինոս I-ին չէին հուզում հակասական մտքերն ու զգացմունքները. այդ անձնավորությունը շատ աներեսն էր։ Ընդհարվելով Ֆելիքսոսի՝ Ռավեննայի արքեպիսկոպոսի հետ, նա պարզապես հրաման արձակեց ձերբակալել նրան. իսկ մի քանի օր անց, դժբախտ Ֆելիքսոսին պապի հրահանգով դուրս բերեցին զնդանից և, աքսոր ճանապարհելուց առաջ, կտրեցին լեզուն ու շիկացած երկաթով այրեցին աչքերը։

Կոստանդինոս I-ը ձեռք բերեց Հուստինիանոս կայսեր թուլությունը՝ հաշվեհարդար տեսնելու իր հակառակորդ պատրիարք Կալինիկոսի հետ։ Երբ դժբախտ պատրիարքը եկավ Հռոմ, նրա աչքերը հանեցին, որից հետո սուրբ հայրը ողջ հնարամտությամբ, որին ընդունակ էր պապի երևակայությունը, ծաղրուծանակի ենթարկեց նրան։

Այդ նույն քահանայապետը հրապարակեց մի կոնդակ, ըստ որի նույնիսկ ամենամեծ մեղքերին թողություն էր տրվում, եթե մեղսագործն ուխտ էր գնացած լինում Հռոմ. դրանից հետո այն մարդիկ, որոնց խղճի վրա ծանրացած էին սարսափելի հանցագործություններ, կարող էին չհուզվել. բավական էր ուխտ գնալ Հռոմ և նվերներ տալ գահակալող խույրակիր ոճրագործին։

Զաքարիայի օրոք կաթոլիկ հոգևորականության շահատանությունը հասավ բացահայտ անամոթության։ Ոմն եպիսկոպոս Ագաթերտոսը հավատացյալներին հայտնեց հետևյալ հայտնագործությունը. նրա կյանքի ծանրագույն րոպեներից մեկում երկնքի հրեշտակը կանգնել է նրա առաջ և նրան հանձնել հրաշագործ մասունքներ՝ ի նշան այն բանի, որ նա աստծուց կստանա այն, ինչ ուզում է։ Ագաթերտոսը երդվեց սուրբ աստվածաշնչով, թե մեկ անգամ չէ, որ իրեն այցելել է Հիսուս Քրիստոսը։ Ամեն տեսակ մտացածին բաների օգնությամբ նա նվաճեց իր հոտի վստահությունը։ Ի պատիվ նրա մատուռներ էին շինում։ Սրիկան փափագում էր իր հոտի մեջ ստեղծել դեռատի գեղեցիկ աղջիկների հարեմ։ Եվ հասավ իր նպատակին։ Պատվարժան տիկնայք պարծենում էին միմյանց, որ սուրբ հայրը իրենց դստերին ուշադրության է արժանացրել։

Պրելատը եռանդով մասունքների առևտուր էր անում և, պետք է կարծել, մեծ կապիտալ դիզեց։ Բանը հասավ այնտեղ, որ նա սկսեց հիմարացած մարդկանց վաճառել իր եղունգների և մազերի կտրտանքը։ Գործը վերջացավ մեծ տուրուդմփոցով. քաղաքացիական իշխանությունները պահանջեցին, որ պապը պաշտոնանկ անի այդ շառլատանին։

Զաքարիա պապը քիչ չի հուշակվել նրանով, որ դաժանորեն հետապնդել է շոտլանդացի քահանա Վերգիլիոսին, այն խոշոր գիտնականին, որն ասել էր, թե երկիրը գունդ է և տիեզերքում գոյություն ունեն նաև ուրիշ՝ անծանոթ աշխարհներ։ Գաղիացի գահերեց արքեպիսկոպոսին սուրբ հայրը գրում է հետևյալը. «Ուշադրություն դարձրեք փիլիսոփա Վերգիլիոսի վրա, այն հոգևորականի, որը պարծենալով կեղծ ճշմարտություններով, որ նրան ներշնչում է սատանան, հանդգնում է պնդել, թե իբր աշխարհի վրա գոյություն ունեն անծանոթ երկրներ ու մարդիկ, իսկ տիեզերքում՝ լուսիններ և արևներ՝ եղածից բացի։ Նրան հարկավոր է վտարել եկեղեցուց, զրկել աստիճանից և գցել մութ խավար վնդան. իհարկե, նախապես պետք է ենթարկել բոլոր այն խոշտանգումներին, որ երբևէ հնարել են մարդիկ, քանի որ չկա արժանի պատիժ այն սրիկայի համար, որն իր սրբապիղծ ուսմունքով նեխում է մեր կրոնի սրբությունը»։

Սա գրել է մի մարդ, որն իրեն համարում էր նրա տեղապահը, ով իր ամբողջ կյանքում իբր թե վիրավորանքների ու մեղքերի թողություն է քարոզել։

Պողոս I պապի մահից հետո գահ է բարձրացել Տիբերիոս Կոստանդինոսը, մի սովորական աշխարհական։ Նրա վեհապետությունը երկար չի տևել։ Մի տարի էլ չի անցել, որ հոգևորականությունը զայրացել է նրա դեմ։ Կղերականները բաժանվել են երկու կուսակցության, և հանդես են եկել գահի երկու թեկնածուներ՝ վանական Փիլիպոսը և սարկավագ Ստեփանոսը։

Կոստանդինոս II-ը, իր հոգու խորքում հեզաբարո մարդ լինելով, իր վիճակը համարում էր առնվազն անիմաստ։ Նա հանգիստ կերպով հրաժարվեց պապի կոչումից և հեռացավ մենաստան, թույլ տալով, որ իր մրցակիցներն իրար ոչնչացնեն։

Հաղթեց Ստեփանոս IV-ը։ Նա հուշակվել է որպես անմրցելի ոճրագործ և դաժան հանցագործ։

Հայտնվելով աթոռի վրա, Ստեփանոս IV-ն անմիջապես հրաման տվեց ձերբակալել եպիսկոպոս Թեոդորոսին, իր նախորդի ընկերոջը։ Եպիսկոպոսի աչքերը հանեցին, լեզուն կտրեցին, որից հետո քարշ տվեցին ու նետեցին մի ձոր, որտեղ վանականները նրան դատապարտեցին սովամահության։

Կոստանդինոս II-ի եղբորը մոլեռանդ պապականները անողոքաբար ծեծեցին երկաթե ճիպոտներով, հանեցին աչքերը և արնաթաթախ նետեցին սուրբ Սիզբեստրոսի վանքի նկուղը։

Բայց այդ էլ չբավարարեց արյունարբու Ստեփանոսին։ Իր համախոհների հետ նա մուտք գործեց վանք, որտեղ ապաստան էր գտել Կոստանդինոսը, և երբ վերջինս փորձեց փրկվել փախուստով, հետապնդեց նրան մինչև տաճարը։ Պապի հրամանով նրան դուրս բերեցին տաճարից, ոտքերից հսկայական կշռաքարեր կախեցին, կապեցին ձիու պոչից և քարշ տվեցին Հռոմի փողոցներով։ Դրանից հետո դահիճը մարդաշատ հրապարակում շիկացած երկաթով այրեց նրա աչքերը։ Խոշտանգման և կախաղանի սպառնալիքի տակ Ստեփանոսը քաղաքացիներին արգելեց ոչ միայն թշվառին օգնել, այլև նույնիսկ նրան մոտենալ։ Անօգնական Կոստանդինոսը մնաց ցեխի մեջ ընկած, և միայն երկրորդ օրը ժողովրդի զայրույթը եկեղեցականներին ստիպեց վերցնել թշվառ պոհին և թաքցնել ինչ-որ վանքում։

Ոչ պակաս խայտառակ ու գազանային ձևով է տանջամահ արվել Փիլիպոս պապի համախոհը՝ Վատրիպերտոսը։ Նրան նստեցրել են էշի վրա, երեսը դեպի պոչը արած, և տարել Հռոմի փողոցներով, սանձի փոխարեն ձեռքը տալով էշի պոչը։ Բոլոր անարգանքներից հետո դահիճը պոկել է նրա ձեռքի մատների եղունգները և աչքերն այրել շիկացրած երկաթով։ Թշվառականը չի դիմացել տանջանքներին և մեռել է խոշտանգման ժամանակ։ Պապն այնուամենայնիվ հրամայել է շարունակել ծաղր ու ծանակը դիակի վրա, որն այնուհետև նետել են աղբանոց։

Հագեցնելով վրեժխնդրության իր ծարավը, աստծո տեղապահը հրավիրեց եկեղեցաժողով և նրան ստիպեց որոշում ընդունել, թե այսուհետև պապին ընտրելու համար հարկավոր է առնվազն սարկավագի աստիճան ունենալ։

Այդ նույն եկեղեցաժողովում մի անգամ էլ զբաղվեցին Կոստանդինոսով։ Ի վերջո Ստեփանոսը դահճին հրամայեց իր գոհի գլխին հասցնել գավաթանի տասներկու հարված և պոկել լեզուն. մահապատիժը, որ ինքը քահանայապետն էր ղեկավարում, տեղի ունեցավ եպիսկոպոսների ներկայությամբ։ Այս անգամ թշվառ Կոստանդինոսը հոգին ավանդեց հենց խոշտանգման պահին։

Որոշ ժամանակ անց Ստեփանոսը մահվան դատապարտեց Հռոմիացի երկու ազնվականների, հոր և որդու, որպեսզի իր ձեռքը գցի նրանց ունեցվածքը։ Ստեփանոսը հրամայեց իր ներկայությամբ հանել հոր աչքերը։ Դահիճը մեծ ջանադրություն հանդես բերեց, և երբ օր անց թշվառը մեռավ։ Որդին հորից տուկուն դուրս եկավ և զիմացավ խոշտանգումներին։ Այնժամ նրան նետեցին լաթերանի զնդանը և այնտեղ խեղդամահ արին։

*Ադրիանոս I-ը, որը փոխարինեց Ստեփանոս IV-ին, իր ետևում չուներ այնքան հանցագործություններ, ինչքան նրա նախորդները։*

*Սակայն ոգնով մարդու և կատարյալ սրբության միջև տարածությունը մեծ է. այդ տարածության մեջ կարելի է առանց դժվարության տեղավորել տարբեր չափերի բազմաթիվ խաբեբաներ։*

*Ադրիանոս I-ը, որով մենք հիմա կզբաղվենք, եղել է չափազանց շահասեր և անասելի ժլատ։*

*Իսկ ինչ վերաբերում է նրա խղճին, ապա դա նման է եղել ռետինի։ Բզուր չեն ասում, թե խիղճն առաձգական բան է...*

*Կաղլոս Մեծը, մի անգամ գալով Հռոմ, շատ է զարմացել, երբ իմացել է իտալացի եկեղեցականների բարքերի մասին։ Նա որոշել է պապին խորհուրդ տալ անձահարել նրանց կրքերը, ասելով, թե քահանաներն իրենց սանձարձակությամբ խայտառակում են քրիստոնեությունը. ղրաղվում են ստրկավաճառությամբ, տարացիններին աղջիկներ են ծախում, խաղատներ ու պոռնկանոցներ պահում, Սոդոմի երբեմնի քնակիչներից նման անզսպորեն անձնատուր լինում հրեշավոր արատների։*

*Ուշադրություն դարձրեք. նրանց արարքները կատարվում էին այնքան բացահայտ, որ չէր պահանջվում որևէ քննություն կամ, ասենք, հաքցուփորձ։ Գրանք երևում էին նույնիսկ անզեն աչքով, ինչպես ձեռքի ափի վրա։*

*Սուրբ Հայրը Կաղլոս Մեծին ամբարտավանորեն պատասխանել է.*

*— Այդ ամենը հերյուրանք է, դա տարածում են մեր եկեղեցու հակառակորդները։*

*Ֆրանկների թագավորը չի պնդել և վերադարձել է իր երկիրը։ Պապի նկատմամբ նա անհամեմատ հանդուրժող էր, քան իր եպիսկոպոսների։ Հավանաբար, նա շահագրգռված է եղել պապի հետ բարեկամանալու, ինչպես և պապը՝ նրա։ Հակառակն էլ, երբ պապը նրան խնդրեց առաքելական աթոռին «վերադարձնել» պապական կալվածքները, նկատի ունենալով Բենեվենտի դքսի տիրույթները, որ համարձակվել էր իր հողերը պաշտպանել սուրբ Պետրոսի կուսակալի ոտնձգություններից, Կաղլոս Մեծը շտապեց կատարել նրա ցանկությունը։ Թագավորը խեղճ դքսից խլեց նրա լավագույն քաղաքները և մատուցեց պապին որպես նվեր։*

Իր հերթին սուրբ Հայրն էլ ոչինչ չէր անում ձրիաբար և եթե ծառայություն էր մատուցում, ապա, առնվազն, փոխարենը սպասում էր մի մատնաչափ սուտակ։

Բավարիայի դուքս Տասիլիոնը նրան դիմել էր ֆրանկների թագավորի հետ իրեն հաշտեցնելու խնդրանքով։ Ադրիանոսը համաձայնվել է միջնորդ դառնալ համապատասխան գումարի գնով։ Երբ այդ գումարը պայմանավորված ժամկետին չեն տվել, պապը կատաղությունից ուղղակի շնչահեղձ է եղել և Տասիլիոնին վտարել եկեղեցուց, բացի դրանից, հայտարարել է, թե աստված իր փոխանորդի բերանով ֆրանկներին թույլատրում է հաշիվ տեսնել բավարացիների հետ, և ուստի նրանք կարող են բռնաբարել աղջիկներին, սպանել կանանց, երեխաներին ու ծերերին, այրել քաղաքները, գնդակահարել բնակիչներին։ Ինչպիսի՞ բարեհոգությամբ էին օժտված Քրիստոսի այդ կուսակալները։

Բարձրյալին ներկայանալուց փոքր-ինչ առաջ Ադրիանոսը գլուխ բերեց մի հույժ ձեռնտու գործ։ Անգլիացի արքայազն Օֆան ընկել էր սուրբ վհհապետի ոտքերը, աղաչելով թողություն տալ իր մեղքերին. այդ թշվառը սպանել էր անգլո-սաքսոնական մի իշխանի, նախապես նրան գայթակղելով և իր մոտ բերելով իր աղջիկա ձեռքը նրան տալու պատրվակով։

Ադրիանոս I-ը շատ էր սիրում նման գործեր. ո՞չ մի կապիտալ ներդրում, իսկ օգուտը՝ մեծ։

Նա խոստացավ արքայազնին հաշտեցնել երկնքի հետ, միայն թե պայման դրեց. արքայազնը պետք է՝ սահմանի հատուկ հարկ ի՝ հատուցումն սուրբ Պետրոսի, ինչպես նաև հավատացյալների համար ապաստաններ հիմնադրի. սուրբ Հայրը կանխավայելում էր այդպիսի աստվածահաճո հաստատությունների եկամուտները։

Օֆան, շնորհակալություններ շռայլելով, իհարկե, համաձայնեց։

Գո՛ղ, որը շնորհակալություն է հայտնում գողին... խոստովանեցեք, որ ավելին անկարելի է։

Ինչպիսի՛ սրտնեղություն, բոլոր խաբեբաների և սրիկաների համար. Ադրիանոս I-ը չհասցրեց նրանց համար բարձրագույն դպրոցներ հիմնել։

## ԻՆՉՊԻՍԻՆ ՏԵՐՆ ԵՒ ԱՅՆՊԻՍԻՆ ԷՒ ՍԱՌԱՆԵՐՔ

*Բնական է, որ մատների արանքով նայելով իր բարձրաստիճան պաշտոնյաների անառակություններին, պապը երբեմն ինքն է դառնում սեփական զիջողամտության, ավելի ճիշտ, սեփական մասնակցության զոհը...*

*Երկու քահանաներ մահափորձ կազմակերպեցին պապի դեմ։ Այնքան հրապուրիչ այդ ծրագիրն իրագործելու համար նրանք նախապես ապահովեցին որոշ վանականների պաշտպանությունը։*

*Մի անգամ, երբ աստծո կուսակալը վերադառնում էր Լաթերանյան պալատ, դավադիրները հարձակվեցին նրա շքախմբի վրա, տիրակալին ձիուց վայր գցեցին և, մորուքից բռնած քարշ տալով, քարով ջարդեցին գանգը, որից հետո նետեցին ճանապարհի վրա առանց կենդանության որևէ նշույլի։ Շուտով մարդասպանները վերադարձան և, համոզվելով, որ պապը դեռևս շնչում է, նրան տարան սուրբ Ստեփանոսի ու Սիլբեստրոսի վանքի եկեղեցին։ Այստեղ, հենց բուն տաճարում, գրքակալի կողքին, եկեղեցու հայրերը, գործի դնելով իրենց եղունգներն ու ատամները, փորձեցին հանել պապի աչքերը և կտրել լեզուն։ Ի վերջո նրանք պապին նետեցին նկուղը։*

*Բայց Լևոն III-ին վիճակված է եղել երկար ապրել։ Երբ երեք օր հետո դավադիրներից մեկը, Էրազմոս անունով, իջել է գետնափորը, որպեսզի այնտեղից պապի դիակը դուրս բերի և թաղի, նա դեռևս կենդանի է եղել։ Այն ժամանակ Լևոն III-ին փոխադրել են մի ուրիշ վանք, որտեղից և ավելի ուշ պապական պալատի մերձավորներից մեկին, Ալբինոսին, հաջողվել է նրան փրկել։*

*Այդ դեպքերը կատարվել են Լևոն III-ի վեհապետության սկզբում, իսկ վերջին տարիներին նրան հաջողվել է հաշվեհարդար տեսնել իր բոլոր թշնամիների հետ։*

*Ինչպես հայտնի է, համեստ ծառայություններն ամրապնդում են բարեկամությունը։ Կառլոս Մեծը, որին սուրբ հայրը կայսր էր օծել 800 թվականի դեկտեմբերի 25-ին, իր հերթին պապին պաշտպանում էր նրա բազմաթիվ հակառակորդներից։*

*Կառլոս Մեծի մահից հետո այդ հակառակորդները որոշեցին երկարատև ու ճարահատյալ համբերության համար իրենք իրենց հատուցել և վերստին մեծ դավադրություն կազմակերպեցին քահանայապետի կյանքի դեմ։*

Գայլ Լևոն III-ը կանխեց իրադարձությունները։ Նա բռնեց բոլոր դավադիրներին, համաձայն դեպո, բոլոր նրանց, որոնց կասկածում էր։ շատ հնարավոր է, որ նրանց մեջ կային նաև անմեղ մարդիկ, քանզի սուրբ հայրը շատ էր մտուհոգված նրանց դեմ մեղադրական ապացույցներ ձեռք բերելու համար։

Համձելի տեսարանից լիուլի բավականություն ստանալու համար պապը հրամայեց բոլորին մահապատժի ենթարկել Լաթերանյան պալատի պատուհանների տակ։ Սակայն մահապատիժն էլ չգոհացրեց նրա ուշացած վրեժխնդրությունը, և նա կարգադրեց՝ դավադիրների կանանց Հռոմից հեռացնել, իսկ երեխաներին հանձնել քաղաքի վանքերին։

Ծկեղեցին, իհարկե, չի հապաղել սրբերի դասը կարգել Լևոն III-ին։ Անկասկած, նա եզրակացրել է, թե պապն անպայման հրեշտակային բարություն է դրսևորել թեկուզ այն բանով, որ մահապատժի չի ենթարկել դավադիրների ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին։

Հիանալի՜ հասարակություն, սատանան տանի։

## ԳԱՍՔԱԼԻՍ I

Խաբեբա, չարագործ և անառակ—այդպիսին էր հարյուրերկուերորդ պապը։ Քամուն տված գանձերը փոխհատուցելու համար, շարունակ փողի կարիք ունենալով, նա դիմեց մի այսպիսի խորամանկության։

Հրամայեց վերականգնել սուրբ Ցեցիլիայի եկեղեցին և շքեղորեն զարդարել։ Միաժամանակ գլխավոր բեմում աճյունատուփ դրվեց սուրբ Ցեցիլիայի մասունքների համար, որոնք այդ ժամանակ գեռ չէին գտնվել։

Իր ճարպիկ արարքի համար պատրաստելով անհրաժեշտ բոլոր պիտույքները, Պասքալիսը առավոտյան ժամերգության պահին ձևացրեց, թե լեթարգիական քնի մեջ է։ Բացելով աչքերը, նա հայտարարեց, թե սուրբ Ցեցիլիան իրեն այցելել է այսպիսի խոսքեր ասելով. «Իրենց պղծած քահանաները և պապ-սրբապիղծներն արդեն փնտրել են իմ աճյունը, բայց ստոծուն հաճո է միայն քեզ վերապահել այն գտնելու իրավունքը»։ Այդ ասելուց հետո սուրբն իրեն ցույց է տվել մի տեղ Պրետեկստոսի գերեզմանոցում։

Պասքալիսը հոգևորականության ուղեկցությամբ մեկնեց այդտեղ,

ինքը վերցրեց բահը, փորեց գերեզմանը և, իսկապես, գտավ երածիշտների հովանավորի մասունքները. սրբի ոտքերին դեռևս երևում էին թարմ արյան հետքեր։

Հավատացյալներից ոչ ոք չի կասկածել, որ դա խաբեբայություն է, համենայն դեպս, ոչ մեկը սիրտ չէր անի կասկած հայտնել հրաշքի արժանահավատության մասին։ Պապը կարգադրել է սուրբ մասունքները տեղադրել սուրբ Ցեցիլիայի եկեղեցում։ Այդ հրաշալի հայտնագործությունից հետո հավատացյալների զոհաբերություններն ու ուխտավորների նվերները սկսեցին առատորեն հոսել և բազմապատկեցին սուրբ հոր հարստությունը։

## ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաջալերված առաջին հաջողությունից, պապը հասկացավ, որ դյուրահավատությունը հարստացման անհատնելի աղբյուր է և դրանից չօգտվելը առնվազն հիմարություն կլինի։

«Նա սկսեց,— ասում է մի հին գրող,— մոգոնել մեծ քանակությամբ սրբեր, որպեսզի վաճառի նրանց մասունքները, և այդ առևտուրը նրան հսկայական եկամուտ բերեց»։

Քահանայապետը հարկադրված էր այսպիսի ցուցանակով մի կրպակ բացել.

*Սրբեր արտահանման համար*
*Մեծածախ և մանրածախ վաճառք*

Պետք է կարծել, որ նա ունեցել է շատ հետևորդներ։ Գործը դրված է եղել ամուր հիմքերի վրա։ Հսկայական շահույթները ներգրավում էին ագահ վանականներին, և շուտով վանքերի մեծ մասը վերածվեց մասունքների ֆաբրիկաների։

Համենայն դեպս, այդ խանութպանները երբեք ապրանքատեսակների պակասություն չէին զգում։ Վաճառողներն առանց մեծ ջանքերի ապահովում էին ցանկացած պահանջարկը։ Հենց որ մեկը ցանկություն էր հայտնում ձեռք բերել սուրբ Բրիգիտայի ատամը, սուրբ Պողոսի եղունգը, ուզածդ առաքյալի կամ Մարտիրոսի ոսկորը, ամեն ինչ դրվում էր գնորդի տրամադրության տակ։ Հարցը հանգում էր միայն գնին։

Կրկնվել է հացի հետ կապված հրաշքը, միայն թե հիմա հրաշքի

առարկա են դարձել մասունքները. հացը փոխարինվել է դիակով։ Տիրոջ կենսատու խաչը ևս գնայուն ապրանք է եղել։ Եթե հավաքվեն այդ խաչի բոլոր տաշեղները, որ բաժանվել են հավատացյալներին ի հիշատակ Հիսուսի մահվան տառապանքների, նրանցով, ամենախիստ ձմռան ցրտերին, կարելի կլինի տաքացնել շատ ու շատ տներ։

Այսքան եկամտաբեր գործարքով եկեղեցին զբաղվել է շատ դարերի ընթացքում։ Հետագայում դրան մենք կանդրադառնանք ավելի հանգամանորեն։ Այժմ մենք կուզենայինք միայն ընդգծել, որ հենց Պասքալիս I-ն է հիմնադրել եկեղեցական արդյունաբերության այդ ճյուղը։ Հենց նրա օրոք են վանականները վաճառքի հանել սուրբ Հովսեփի, Հովհաննես Մկրտչի և կույս Մարիամի մարմնի որոշ մասերը. դրանց անունները տալ հույժ անհարմար է... Հիսուս Քրիստոսի թլիփը երևան է եկել ավելի ուշ, սուրբ Լյուդովիկոսի օրոք. կաշվի այդ կասկածելի պատառիկը գնել է Անժույայի դուքսը, թագավորի եղբայրը, և հավատացյալների երկրպագության համար դրվել է եկեղեցիներից մեկում։

## ԽՐԱԽՃԱՆՔՆԵՐ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնանք Պասքալիս I-ին։ Լոթարը, Ֆրանսիայի թագավոր, Լյուդովիկոս Բարեպաշտի ավագ որդին, գալով Հռոմ, հուզված էր այն բանից, ինչ տեսավ սուրբ քաղաքում, հատկապես պապական պալատում, որը հասարակաց տուն էր հիշեցնում։

Գահաժառանգը խստորեն զգուշացրեց Խուլրակրին, և պապը խոստացավ ուղղվել։ Բայց Լոթարը դեռևս չէր հեռացել Իտալիայից, երբ անմեղ գառնուկ Պասքալիսը վագր դարձավ։ Նա ձերբակալեց երկու պատվարժան քահանաների (թերևս միակներին, որոնք անպարկեշտություններ չէին անում այդ քաղաքում) և նրանց մեղադրեց զրպարտության մեջ։

Քահանաներին քարշ տվեցին Լաթերանյան պալատ. չնայած միանգամայն անմեղ լինելու վերաբերյալ երդմնավոր հավաստիացումներին, Պասքալիսի ներկայությամբ կտրեցին նրանց լեզուները և հանեցին աչքերը, ապա գլխատեցին։

Լյուդովիկոս Բարեպաշտը, որոշելով դաժան մարդասպանության համար պատժել պապին, Հռոմ ուղարկեց իր երկու դեսպաններին, որոնք

պետք է քննեին գործը։ Հայց խարդախ սրիկան չուզեց սպասել հարցաքննությանը։ Իր միաբանների հետ կանգնեց թագավորի պատվիրակների առաջ և պատրաստակամություն հայտնեց հրավիրել եկեղեցաժողով, որտեղ նա երդմամբ կտար իր ցուցումները։

Նման արարողությունը սուրբ հոր համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում։ Ի՞նչ է կեղծ երդումը մի այնպիսի կուփված սուտ ճգնավորի համար, ինչպիսին Պասքալիսն էր։ Հասարակ խա՞ղ։

Եվ իսկապես, հաջորդ օրը քահանայապետը հավաքեց բոլոր եպիսկոպոսներին, վանականներին ու քահանաներին (իսկ ծառաներն արժեին տերերին) և ամբողջ եկեղեցաժողովի ներկայությամբ երդմամբ հավաստեց իր անմեղ լինելը։

— Եթե այդպես է,— առարկեցին թագավորի դեսպանները,— տվեք մեզ մարդասպանների անունները։

Այդ խնդրանքը կշփոթեցներ ուզածդ մարդուն, բայց ոչ այնպիսի անուղղելի երկերեսանու, ինչպիսին Պասքալիսն էր։ Բնավ չտատանվելով, նա գոռոզամտորեն պատասխանեց, թե վրպարտիչներին պատժողները ենթակա չեն աշխարհիկ դատի և իր պարտքն է նրանց պաշտպանել ցանկացածդ իշխանավորի առաջ։

Տարեգիրն ավելացնում է, թե Լյուդովիկոս Բարեպաշտը հնարավոր չհամարեց խախտելու եկեղեցու հեղինակությունը, հասկանալով, որ գործի հետագա քննությունն իրեն կկանգնեցնի . պապ-մարդասպանին դահիճների ձեռքը հանձնելու անհրաժեշտության առաջ։

Կարիք կա՞ արդյոք ավելացնելու, որ եկեղեցին, իհարկե, Պասքալիսին մտցրել է սրբերի շարքը։ Անկեղծորեն ասած, նա միանգամայն արժանի է այդ պարգևին։

Ամեն տարի մայիսի 4-ին բարեպաշտ կաթոլիկները հարգում են այդ արդարակյաց մարդու հիշատակը։

## ՎԵՐԱԴԱՐՁՐԵ՛Ք ՓՈՂԵՐՔ

Երկու պապ են գահ բարձրացել Պասքալիս I-ից հետո։ Տիֆին ավելացրած ծաղիկ հիվանդությունը Տորքուս կոչված խոլերայից հետո։

Չափից ավելի շատ չէ՞։ Մեկը մյուսի ետևի՛ց։ Ինչ անհաջողություն... Այդ բարդ իրադրությունը երկար չի տևել։

Ջոսիմոսը, որին ընտրել էին հոգևորականությունը, ազնվականներն ու քաղաքային աստիճանավորները, ստիպված էր ազատել տեղը հօգուտ Եվգինեոս II-ի, որին առաջադրել էր ժողովուրդը։

Երբ վերջինս ամրապնդվեց գահի վրա, չարաբաստիկ մի միտք հղացավ. Լյուդովիկոս Բարեպաշտին հայտնել այն անկարգությունների մասին, որ Հռոմում ծագել էին նրա ընտրության ժամանակ, և խնդրել պատժել մեղավորներին։ Թագավորն անսաց պապի խնդրանքը և նրա մոտ ուղարկեց իր որդի Լոթարին Սեն-Դենիի վանքի մի աբբայի ուղեկցությամբ։

Սակայն երիտասարդ արքայազնը չարդարացրեց Եվգինեոս II-ի հույսերը. նա ամենևին մտադիր չէր կույր գործիք դառնալ նրա վրեժխնդրության համար։ Արքայորդուն հանձնարարված էր կատարել մանրազնին հետաքննություն և, ժամանելով Հռոմ, նա անմիջապես հայտարարեց, թե պատրաստ է լսել այն բոլոր քաղաքացիների բողոքները, որ տուժել են եկեղեցական իշխանություններից։

Անթիվ ու անհամար ընտանիքներ, որոնք զոհ էին դարձել նախկին եկեղեցապետերի շահամոլությանը, շտապեցին Լոթարի մոտ, թախանձելով իրենց պաշտպանել սուրբ աթոռի բռնություններից։ Այդ կերպ Ֆրանսիայի թագավորի որդին իմացավ այն բոլոր անօրինականությունները, որ եկեղեցին կատարում էր հանուն միակ նպատակի՝ իր ձեռքը դցել քաղաքացիների ունեցվածքը։

Լոթարը սուրբ հորը հրամայեց տուժածներին վերադարձնել ապօրինաբար բռնագրավված հողերն ու ունեցվածքը։

Որքան էլ որ Եվգինեոսը իրեն մեղադրեր իր սխալների համար, որքան էլ որ եղունգները կրծոտեր, ստիպված էր ենթարկվել, ինչպես ինքներդ էլ կռահում եք, միայն այն պատճառով, որ այլ ելք չուներ։

## ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՅՈՒՄԸ

Եվ այնուամենայնիվ Եվգինեոս II-ը բավականին բարեսիրտ մարդ է եղել. նրան կարելի է կշտամբել միայն այն բանի համար, որ, հետեվելով Պասքալիս I-ի օրինակին, ձգտելով կարգի բերել իր գործերը, ինքն ևս զբաղվել է չարաշահությամբ։ Միանգամայն հնարավոր է, որ նա եղել է աստվածավախ մարդ, որովհետև, եթե հավատանք այն

ժամանակվա լուսամիտ հեղինակներին, նա տգետ էր, ինչպես ապրխտած ծովատառեխը։

Սրբապատկերների պաշտամունքն այդ դարաշրջանում հասավ այնպիսի ծաղկման, որ Լյուդովիկոս Բարեպաշտը Ֆրանսիացի որոշ եպիսկոպոսների հետ պապից պահանջեց եկեղեցաժողով հրավիրել թեկուզ մի կերպ սրբապատկերապաշտությունը սահմանափակելու համար։

Շատ քահանաներ, ըստ իս, զարմանալի ձեռներեց դուրս եկան։ Այսպես, մի քանիսը սրբապատկերներից քերում էին ներկը և, փոշին խառնելով գինուն, ճաշակելու էին տալիս հաղորդության ժամանակ։ Մյուսները նշխարը դնում էին քարե արձանների ձևրքերի մեջ, որտեղից հավատացյալները կարող էին վերցնել հատուկ վճարով։

Ինքը Եվգինեոս II-ը եղել է սրբապատկերների պաշտամունքի ջերմեռանդ կողմնակից. սակայն նա չէր կարող վիճարկել Ֆրանսիայի կայսեր վճիռը, և եկեղեցաժողովը գումարվեց հաջորդ տարի Փարիզում։

Երկար քննարկումներից հետո եկեղեցաժողովը հանեց հետևյալ ծիծաղաշարժ որոշումը. «Ամեն մի սրբապատկեր, ըստ կանոնագրքի, պաշտամունքի առարկա է, բայց նրան երկրպագելը՝ կռապաշտություն»։

Փորձեցե՞ք գլուխ հանել այդ նրբամտությունից։ Ով գլուխ չի հանի, պետք է հերետիկո՞ս հայտարարվի և դատապարտվի հավիտենական տառապանքի։

Եվգինեոս II-ի գահակալության վերջում անառակությունը, որ թագավորում էր նրա եկեղեցու հոգևոր դասի շրջանում, հատկապես մենաստաններում, ընդունեց այնպիսի ահավոր չափեր, որ պապը ստիպված էր գումարել Իտալիայի բոլոր պրելատների համագումար։ Դրանից անմիջապես հետո հրապարակվեցին հրամանագրեր, որոնք բարձր բարոյականության կոչ էին անում։ Բայց բարոյապես փչացած կղերականությունն անպատկառորեն շարունակում էր մեղանչել։ Ո՛չ քահանաները, ո՛չ վանականները, ո՛չ հավատացյալները չէին ուզում փոխել իրենց սովորույթները։

Պատկերացում ունենալու համար, թե ինչքան տգետ է եղել այն ժամանակվա հոգևորականությունը, կնշենք միայն, որ այն եպիսկոպոսները, որ կարող էին ծեսին համապատասխան կատարել կնքելու արարողությունը կամ առանց աղավաղելու կարդալ «Հավատամքը», համարվում էին բարձրակիրթ մարդիկ։

*Այդ բոլոր, և դրանց նման շատ այլ մակդիրներ կարելի է համարձակորեն վերագրել Գրիգոր IV-ին։*

*Այդ պապը սուրբ աթոռը զբաղեցրել է տասնվեց տարի, և կատարել է ավելի շատ ստորություններ, քան կես դյուժին գերագույն սրիկաներ։*

*Մենք կթվենք նրա միայն ամենագլխավոր «սխրագործությունները»։*

*Ըստ Պապեբրոկի ասածի, Գրիգոր IV-ին կասկածել են իր նախորդի սպանության մեջ։ Հարկավոր է նշել, որ պատվարժան Պապեբրոկին ոչ մի կերպ չի կարելի դասել սուրբ աթոռի թշնամիների շարքը. այդ բելգիացի Ճիզվիտը, որ ծնվել է 1628-ին, ավարտել է «Actasanctorum»-ի («Վարք սրբոցի») մեծ մասը, որ սկսել էր Բոլանդը։ «Հռոմեացիները,— ասում է պատմաբանը,— վախենալով կարուցել Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Բարեպաշտի զայրույթը, չէին համաձայնում Գրիգորի ընտրությանը և նրա մոտ դեսպաններ ուղարկեցին՝ խնդրելով ներկայացուցիչներ նշանակել, որոնք պետք է ստուգեին նոր պապի ընտրության օրինականությունը։ Երբ Ֆրանսիայի դեսպանները ժամանեցին սուրբ քաղաք, Գրիգորը նրանց առատ նվերներ տվեց և ստացավ խույրի օրհնությունը։ Սակայն որոշ ժամանակ անց թագավորը, զայրացած քահանայապետի վարքից, նրան մի ցասկոտ նամակ գրեց, որի մեջ, սպառնալով Գրիգորին գահազրկել, ակնարկում էր նրա ընտրությունը, որը նա շահել էր բանսարկուչյան և բռնությունների միջոցով։*

*Բացի դրանից, թագավորը խստորեն նրան առաջարկեց անմիջապես դադարեցնել բոլոր սիրային արկածներն ու խրախճանքները և արմատապես փոխել ամբողջ կենսակերպը, որպեսզի կարողանա քավել իր անցյալը»։*

*Գրիգոր IV-ը չզլացավ խոստումներ տալ, բայց, վիրավորանքը մտքում պահելով, երդվեց վրեժխնդիր լինել Լյուդովիկոս Բարեպաշտից։*

*Մենք կտեսնենք, որ նրան հաջողվեց կատարել իր երդումը։*

*Շուտով թագավորն իր դեսպաններին կարգադրեց անաչառ կերպով ստուգել սուրբ Մարիամի վանքի աբբայի բողոքը։ Աբբան մեղադրում էր Գրիգոր IV-ի նախորդներին՝ Ադրիանոսին և Լևոնին, հինգ խոշոր հողակտոր յուրացնելու մեջ։ Պարզելով գործը, թագավորի ներկայացուցիչնե-*

րը որոշեցին, որ Հռոմի պալատը պետք է վերադարձնի անօրինական կարգով յուրացրած այդ հողակտորները։

Դատավճիռը, որի արդարացիությունը հնարավոր չէր հերքել, Գրիգորին կատաղեցրեց։ Նա սկսեց գործել, և շուտով հաջողվեց Լյուդովիկոս Բարեպաշտի որդիներին գրգռել հոր դեմ։ Իսկ երբ Լոթարը բացահայտորեն հայտարարեց, որ ինքը հանդես է գալիս Լյուդովիկոսի դեմ, պապն իսկույնևեթ ժամանեց Ֆրանսիա՝ աջակցելու արքայազնին։

Հետևելով ավետարանական պատգամներին, նա, որպես իսկական հաշտարար, Լյուդովիկոսի ճամբարն եկավ իբր թե ձեռք բերելու որդիների հետ հաշտվելու նրա համաձայնությունը։ Օգտվելով թագավորի չափից ավելի վստահությունից, նա ժամանակն իզուր չէր վատնում։ Ուսումնասիրում էր զորքերի տեղադրությունը, զորավարներին դրդում դավաճանության՝ խոստումներ ու սպառնալիքներ տալով։

Նույն այն գիշերը, երբ Գրիգորը մեկնեց ճամբարից, զինվորներն անցան Լոթարի կողմը, իսկ Լյուդովիկոսը, հուսահատության մատնված, զարմացած այդ հրեշավոր դավաճանությունից, անձնատուր եղավ։

Բայց Գրիգորը դրանով չբավարարվեց. նրա վրիժառության ծարավը է՛լ ավելի բորբոքվեց։ Երբ նա իմացավ, որ հորը հանդիպելու ժամանակ Լյուդովիկոսի որդիները նրան դեռ ինչ-որ պատիվ են մատուցում։

Պապը պնդեց, որ որդիները Լյուդովիկոսին գերի հայտարարեն և զրկեն թագավորական կոչումից։ Թագավորին զսպաշապիկ հագցնելով, նրանք ստիպեցին, որ նա հոծ ամբոխի ներկայությամբ բացեիբաց խոստովանի այն բոլոր հանցագործությունները, որ իբր կատարել է իր որդիների դեմ։ Դրանից հետո Լոթարը հորը մեկուսացրեց վանքում և ինքը գրավեց գահը։

Կազմակերպելով և օծելով իշխանության գրավումը, Գրիգորը հաղթանակած վերադարձավ Իտալիա։ Սակայն, որոշ ժամանակ անց, հպատակները, զայրացած Լոթարի վարքագծից, ապստամբեցին նրա դեմ և թագը վերադարձրին Լյուդովիկոսին։

Մեր թագավորն իր հերթին ցանկացավ վրեժ լուծել քահանայապետից։ Ի՞նչ կա որ, եկեք ընդունենք, որ այդ ցանկությունը բխել է այնպիսի զգացմունքներից, որոնք մեզ համար միանգամայն հասկանալի են։ Դժբախտաբար, փոխանակ ինքը մեկնելու Հռոմ՝ այդ վախկոտ խարդախի հետ հաշիվները մաքրելու, Լյուդովիկոսը միամտորեն այնտեղ ուղարկեց իր ներկայացուցիչներին, նրանց վստահելով իր որդիների դավադրությանը Գրիգորի մասնակցության հարցի քննությունը։

Սուրբ հայրը, իհարկե, սկսեց երդումներ տեղալ՝ ժխտելով իր մասնակցությունն այդ գործին։

Սատանա՞ն տանի։ Նրա երդումները պարզապես ոչ մի արժեք չունեին, ինչպես և նրա գործակիցների երդումները։

Գրիգորը սուրբ ավետարանի վրա երդվեց, որ ինքն առաջնորդվել է ամենաբարի ցանկություններով, Լյուդովիկոսին հավաստիացնում էր իր նվիրվածությունը, առաջարկում իր ծառայությունները նրա որդիների դեմ, նրանց անվանելով դավադիրներ, դեսպաններին առատ նվերներ պարգևում։

Ոչ մեծ՝ նվերներն ամրապնդո՞ւմ են բարեկամությունը։

Լյուդովիկոս Բարեպաշտը (ի դեպ, նա իսկապես արդարացնում է իր նվիրվածությունը, առաջարկում իր ծառայությունները նրա որդիների և՛ պապին։ Ավելի ուշ նա իր ողորմածությամբ այնքան հեռու գնաց, որ նույնիսկ խոստացավ օգնել սուրբ աթոռին ընդդեմ Լոթարի, երբ վերջինս, գաղտագած պապի նոր դավաճանությունից, իր սպաններին հրամայեց հաշվեհարդար տեսնել կաթոլիկ եկեղեցու սպասարկուների և նույնիսկ պապի հետ։

Գրիգորը շուտով մեռավ։ Այլապես նա, անշուշտ, Ֆրանսիայի թագավորի նկատմամբ կդրսևորեր իր չափից մեծ բարությունը՝ նրա գլխին խաղալով մի հերթական կեղտոտ խաղ։

Ահա թե ինչպիսի՞ խաբեբաների է առաջարկում մեծարել հոգևորականությունը իր հեզաբարո ոչխարներին, իսկ Պիոս IX պապը տարածո՞ւմ է պապի անսխալականության վերաբերյալ դեկրետը։

Այդ ցուցա՞կն իսկ բավական է, որպեսզի ստեղծվի արատի բոլոր տեսակների մի հիանալի թանգարան։

## ԽՈԶԻ ԴՈՒՆՉԸ

Os porci, որ նշանակում է խոզի դունչ— այդպես էին կոչում այն պապին, որ փոխարինեց Գրիգոր IV-ին։ Ընտրությունից հետո նա շտապեց իր անունը փոխել և դարձնել Սարգիս։

Այդ ժամանակվանից ի վեր սովորություն է դարձել սուրբ գահ բարձրանալիս անունը փոխել։

Սարգիս II-ը, ասում են, վատ մարդ չի եղել, բայց, դժբախտաբար,

ունեցել է մի եղբայր, անունը Բենեդիկտոս. այդ եղբայրը, որ օժտված էր վարչական իշխանությամբ, մարդկանց հոգին հանում էր իր կաշառակերությամբ։

Նա եղել է գերազանց խաբեբա և կարող էր գողանալ կամ կողոպտել այնպես խիղճը հանգիստ, ինչպես մի ուրիշը ողորմություն տալիս։

Բենեդիկտոսը հրապարակային աճուրդով վաճառում էր եպիսկոպոսական աստիճանները, և նա, ով շատ էր վճարում, հաղթանակ էր տանում։ Եթե պապերն իրենք սանձարձակություններ չեն անում, խայտառակություններ են անում նրանց մերձավորները։

Ծ՛վ այս, և՛ այն դեպքում բոլոր նրանք, ովքեր գտնվում են պապի հովանու տակ, ոչինչ չեն կորցնում։

## ՄԻԱՆՁՆՈՒԻՀԻՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԸ

*Լևոն IV-ի՝ Սարգիս II-ի հաջորդի մասին կան տարբեր կարծիքներ։ Կաթոլիկ հեղինակների մեծամասնությունը փառաբանում է նրա բարեմասնությունները, իսկ մյուսները, նրանցից ոչ պակաս լուսավորյալ գրողներ, պնդում են, թե սուրբ հայրն իր սեփական տունը կանանց վանք է դարձրել և ամբողջ ժամանակն անց է կացրել ամենագարշելի խրախճանքների մեջ։ Նրան մեղադրել են նողկալի ժլատության մեջ, վկայակոչելով նշանավոր աբբա Լուի դը Ֆերյեի ասածները։ Այդ աբբան պատմում է, թե. ինքը որպես դեսպան Հռոմ ուղևորվելուց առաջ պիտի կուտակեր շատ քանկարժեք նվերներ, «որովհետև առանց այդ անհրաժեշտ նախազգուշության նույնիսկ հնարավոր չէր մոտենալ Լևոն IV-ին»։*

*Այդ դարաշրջանում Հռոմում միանգամայն բնական բան էր համարվում, որ եկեղեցու բարձրաստիճանավորներն իրենց ձեռքերը մրոտ ջրնեն ստորադրյալների գրպաններու։ Լևոն IV-ը տգրուկի նման ժողովրդից ծծել է վերջին հյութեքը և հսկայական գումարներ է վատնել իր հրեշավոր կերուխումերի համար։*

*Հռոմի ժողովուրդը տառապում էր աղքատության մեջ, իսկ Լևոն պապն այդ ժամանակ վերականգնում էր սուրբ Պետրոսի եկեղեցին, որ կոթծանել էին արաբները։ Նա գնեց թանկարժեք գործվածքեղեն, ամպհովանիներ, գորգեր, գոբելեններ, ոսկեջրեց խաչերը, անոթներն ու մոմակալները, սուրբ Պետրոսի կարծեցյալ գամբարանի վրա դրեց ոսկե*

սալ՝ զարդարված թանկարժեք քարերով, հարթաքանդակի վրա հավերժացնելով իր և թագավորի պատկերները։ Դամբարանը շրջապատված էր հազվագյուտ փորագրությամբ զարդարված արծաթյա երիզապատով։ Սակայն այդ ամենին գերազանցում էր նվիրատվությունների արծաթյա վիթխարի գանձարանը, որի քաշը հազար վեց հարյուր ֆունտ էր։

Քրիստոնեական անշահախնդրության ինչպիսի՜ սրտառուչ օրինակ։

Ընդհանուր առմամբ սուրբ Պետրոսի եկեղեցին զարդարելու և նրա քահանաներին պարգևատրելու համար պապը ծախսեց երեք հազար ութ հարյուր վաթսուն լիվր արծաթ և մոտ երկու հազար ոսկե դրամ։

Թշվառներին, որոնք իրենց հացը վաստակում էին քրտինքով և անհամեմատ ավելի զրկանքներ կրում, քան մարդը պետք է կրեր մեր նախահայր Ադամի մեղքերի համար, քահանայապետը խոստանում էր երկնային թագավորություն, եթե միայն հլու-հնազանդ լինեին...

Ուստի և զինվեցեք համբերությամբ։

## ՊԱՊՈՒԻ ՀՈՎՀԱՆՆԱՆ

Ջնայած որոշ մոլեռանդների եռանդուն բողոքներին, պապուհի Հովհաննայի գոյությունը հաստատված է և անհերքելիորեն ապացուցված։ Փոխարինելով Լևոն IV-ին, այդ կինը սուրբ աթոռին բազմել է մոտ երկու տարի՝ Հովհաննես VIII անունով։

Իր սեռը թաքցնելու համար նա ստիպված է եղել խստագույնս գաղտնի պահել իր սիրային արկածները և դրա շնորհիվ բնակչության մեջ վաստակել է անբասիր համբավ. նրա բարձր առաքինության համբավը Հռոմում այնքան անսասան է եղել, որ նրան միաբանորեն պապ են ընտրել։

Ասենք, նա արժանի տեղ է գրավում դաժան ու փչացած պապերի շարքում, քանզի նրա առաքինությունն այլ բան չէր, քան մի դիմակ, որը նա կեղծավորաբար կրում էր ամենավաղ տարիներից ի վեր, որպեսզի հագուրդ տար իր անզուսպ փառասիրությանը։

Հովհաննայի մահը ողբերգական է եղել. հարության օրը, որը, ինչպես միշտ, նշանավորվում է եկեղեցական թափորով, պապուհին քահանայապետի տոնական հագուստով, ծիրանի զգեստ, ձիու վրա թափորի գլուխն անցած, ըստ սահմանված ծիսակարգի, շրջապատված

եպիսկոպոսներով և մեծավորներով, տոհմիկ ազնվականներով և բազմահազար ամբոխով, հանդիսավորությամբ դիմել է դեպի սուրբ Պետրոսի բազիլիկան։

Ճանապարհին երկունքի ցավը մի այնպիսի ուժով է բռնել, որ նա ձիուց վայր է ընկել։ Ցավերից տանջվելով, գալարվել է գետնին և անմարդկային ճիչեր արձակել։ Վերջապես, պատռելով սուրբ զգեստները, սոսկալի չղաձգություններից մեջ ծնել է երեխային։

Գազազած քահանաները ոչ միայն թույլ չեն տվել օգնություն ցույց տալ նրան, այլև, կազմելով խիտ շղթա, մի կերպ նրան թաքցրել են ամբոխի հետաքրքրասեր հայացքներից, նզովել են, կեղտոտ հայհոյանքներ տեղացել, մինչև որ նա ավանդել է հոգին։

Նրա հոգեվարքի պահին այդ ճիվաղները սպանել են երեխային, որին պապուհին լույս աշխարհ էր բերել։

Հովհաննայի գոյությունը ժխտող քրիստոնեական գրողների գլխավոր փաստարկն այն է, թե աստված երբեք թույլ չէր տա այդպիսի աղաղակող խայտառակություն և այդ պատճառով սուրբ Պետրոսի աթոռը, որ հաստատել է Հիսուս Քրիստոսը, չէր կարող գրաղեցնել անառակ կինը։

Փաստարկն, իհարկե, ծանրակշի՞ռ է։

— Մեզ մնում է միայն կրկնել այն նույն հարցը, ինչ ժամանակին առաջադրել է պատմաբան Մորիս Լաշատրը. «Ինչպե՞ս կարողացավ արարիչը հանդուրժել Հռոմի եպիսկոպոսների բոլոր հանցագործությունները, աստվածանարգությունները և նողկալիությունները... Ինչպե՞ս կարողացավ արարիչը թույլ տալ, որ սուրբ աթոռը ցեխի մեջ կոխկրտեն պապ-հերետիկոսները, հավատազանցները, վավաշոտներն ու մարդասպանները»։

Բարոնիոսը, պապության ամենաթունդ պաշտպաններից մեկը, ստիպված է խոստովանել, որ Վոնիփակիոս VI և Ստեփանոս VII պապերը զազրելի ճիվաղներ են, որոնք իրենց արարքներով խայտառակել են աստծո տունը. նա նրանց մեղադրում է այն բանում, որ գերազանցել են եկեղեցու ամենակատաղի հալածիչներին։

Եպիսկոպոս Ժենեբրարը պնդում է, թե «երկու դարերի ընթացքում սուրբ աթոռը ղրաղեցրել են հրեշավոր անառակ պապեր, հարկավոր է նրանց անվանել առաքելակործան, այլ ոչ թե առաքելական. եկեղեցական գործերը կառավարում էին կանայք, քահանայապետի աթոռը բոլոր այդ տարիներին գտնվում էր թեթևաբարո կանանց ննջասենյակներում»։ Եվ իսկապես, Թեոդորան և Մարոկիան, այդ հանդուգն պոռնիկ-

ները, փաստորեն Հռոմը տնօրինում էին իրենց ուզածի պես. նրանք սուրբ գահին նստեցնում էին իրենց սիրեկաններին կամ որդիներին, և տարեգրությունը այդ կանանց մասին հաղորդում է այնպիսի զայրացուցիչ մանրամասնություններ, որ ձեր խոնարհ ծառան հրաժարվում է դրանք մեջբերել այստեղ։

Այս ամենը պատմություն է, պարոն կղերականներ։ Սա ձե՞ր պատմությունն է։

## ՈՒՄՆ Է ԽՈՒՏՐՔ

Բենեդիկտոս III-ը գահ է բարձրացել պապուհի Հովհաննայի մահից հետո։ Նրա ընտրությունը զայրացրել է քահանա Անաստասին, որը շատ կողմնակիցներ ուներ բարձրաստիճան ազնվականության մեջ։ Փառամոլ մրցակիցը ներխուժել է Լաթերանյան պալատը, Բենեդիկտոսի գլխին լուտանք թափելով, պոկել նրա սրբազան զգեստները և նույնիսկ, ներեցեք խնդրեմ, իր կարդինալական խալով ծեծել նրան, որից հետո հանձնել է երկու քահանաների հսկողության։ Քահանաները, իրենց հերթին, նոր տիրոջը համոյանալու համար, թոկով կապկպել են թշվառ Բենեդիկտոսին և, ճիպոտներով քշելով, պալատից վռնդել։

Անաստասը երկար չի վայելել հաղթանակը. Հռոմում խռովություն է բռնկվել, փողոցներում պապականների և հակապապականների միջև տուրուդմփոց է սկսվել, և, ի վերջո, Անաստասին խայտառակ կերպով քշել են պալատից։

Խույրը նորից է անցել Բենեդիկտոսին, և նա այն պահել է մինչև իր մահը, որը վրա է հասել երեք տարի հետո։

## ՆՈՂԿԱԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գուցե միայն լատիներենն է ընդունակ պատշաճ կերպով վերարտադրելու խորությունն այն նողկալիության, որով լի է պապության պատմությունը, և այն հանցագործությունների, որոնց խառնված են եղել սուրբ Պետրոսի կուսակալներն անձամբ կամ անուղղակի կերպով։

Ռայմսի արքեպիսկոպոս Ֆինկմարոսի առաջարկությամբ Բենեդիկտոս III-ը հավաքեց եկեղեցականներին՝ դատելու համար սարկավագ Գուբերտոսին, թագավոր Լոթարի կնոջ՝ Տաուտբերգայի եղբորը։

Բարեպաշտ սարկավագ Գուբերտոսը կանանց վանքը դարձրել էր պոռնկանոց և հսկայական եկամուտներ էր ստանում այդ ամոթալի զբաղմունքից։

Այլ բաներից բացի, Ֆինկմարոսը Գուբերտոսին մեղադրում էր թագուհու՝ իր քրոջ հետ հանցավոր կապ ունենալու մեջ։

Այդ առիթով Ֆինկմարոսը քահանայապետին մի նամակ է ուղարկել, որում մանրամասն պատմում է եղբոր հետ գժղեցկուհի Տաուտբերգայի արյունապիղծ կապի մասին։ Ըստ արքեպիսկոպոսի ասածի, թագուհին իոստովանել է, որ ամենաքնքուշ զգացմունքների պոռթկման պահին Գուբերտոսը գայթակղեցրել է իրեն, որի հետևանքով ինքը հղիացել է, և եղբայրը, որպեսզի գաղտնի պահի ճակատագրական պատահարը, սպանել է նրանց սիրո պտուղը։

«Երբե՛ք,— ավելացնում է գիտնական պրելատը,— կինն ընդունակ չէ բեղմնավորվել, եթե նա սեռական հարաբերության մեջ չի գրտնըվել տղամարդու հետ... Սուրբ կույսը հղիացել է միայն տիրոջ առանձին թույլտվությամբ և, դառնալով մայր, պահպանել է անարատ աղջկա կուսությունը...»։

Այդ թեմայով շատ էջեր գրոտելով, պրելատը քահանայապետից ներողություն է խնդրում այն անպատշաճությունների համար, որոնցից, եթե նկատի առնվի իր աստիճանը, պետը է խուսափեր, բայց չի կարողացել։

Անշուշտ, ավելի խելացի կլիներ, եթե նա այդ մասին մտածեր նամակի սկզբում և չափավորեր իր ոճը. բայց այդ դեպքում հետագա սերունդները կզրկվեին այն գրական հոյակապ հուշարձանից, որը վկայում է եկեղեցականների ինչպես գործերի, այնպես էլ մտածելակերպի մասին։

Համաձենք, որ մեր բախտը բերել է։

## ԿԱՆԱՅԻ ԽԱՂԵՐ

Բենեդիկտոս III-ը մնում, չսպասելով սարկավագ Գուբերտոսի և նրա քրոջ դատին։ Սուրբ գահը թափուր մնաց մի ամբողջ ամիս. Հռոմե-

*ացիները պապ ընտրելու համար սպասում էին Լյուդովիկոս Գերմանացու ժամանելուն։*

*Երբ թագավորը եկավ, սկսեցին ընտրությունները։ Ձայների մեծամասնություն ստացավ Նիկողայոսը, ազնվատոհմիկ մի երիտասարդ քահանա, որ ծառայել էր Բենեդիկտոսին որպես քարտուղար։*

*Դեռևս ձեռնադրության ծեսի ժամանակ նոր պապը փութաջանորեն իրեն դրսևորեց որպես պապական իշխանության կրքոտ պաշտպան, ընդ որում ի հայտ բերեց ավելի շատ ամբարտավանություն և գոռոզամտություն, քան նրա բոլոր նախորդները։*

*Նա ցանկացավ, որ թագավորը գլխաբաց դիմավորի իրեն և ոտաբոբիկ ուղեկցի թափորին, բռնելով իր ձիու սանձը սուրբ Պետրոսի բազիլիկայից մինչև Լաթերանյան պալատը։ Ի լրումն այդ ամենի, հրաժեշտ տալով պապին, բարեպաշտ թագավորը նրա ոտքերն ընկավ և երեք անգամ ճակատը զարկելով գետնին, համբուրեց պապական կոշիկները։*

*Գրեթե մոռացվել էր այն մեղադրանքը, որ արքեպիսկոպոս Գինկմարոսը ներկայացրել էր ընդդեմ Տաուտբերգայի և Գուբերտոսի (նման կարգի խայտառակություններ հաճախ էին պատահում, և կղերականությունը դրանք շուտ մոռանում էր), բայց եղբորն ու քրոջը նորից բռնեցին։ Հանցանքի մեջ Տարաբախտ Լոթարի տիկնոջը փակեցին վանքում մինչև որ թագավորության եպիսկոպոսները դատավճիռ կհանեին։ Սակայն թագուհին, վախենալով ամուսնու վրեժից, եղբոր՝ Գուբերտոսի հետ վանքից փախավ, հույս ունենալով պաշտպանություն գտնել Կառլոս Ճաղատի մոտ։ Ըստ երևույթին, այդ միապետը, չնայած ճաղատ լինելուն, այնուամենայնիվ, ինչ-որ հմայք ուներ, որովհետև տիկին Տաուտբերգան շտապեց նրա սիրուհին դառնալ։*

*Սակայն թագուհու համար դժվար է եղել հաշտվել հասարակ սիրուհու վիճակի հետ և այդ պատճառով էլ իր աստիճանին արժանի անպատկառությամբ գնացել է պապի մոտ, որպեսզի բողոքարկի Ֆրանսիայի եպիսկոպոսների կողմից իր դեմ հարուցված մեղադրանքները։*

*Լոթարը, իր հերթին, երկյուղ կրելով, որ անհավատարիմ կողակիցը կարող է նրա դեմ հանել սուրբ հորը, շտապեց դեսպաններ ուղարկել Հռոմ, որպեսզի նրանք Նիկողայոս I-ին նախազգուշացնեն, թե թագուհին ինչպիսի նենգության է ընդունակ։*

*Բայց քահանայապետն արդեն ընկել էր Տաուտբերգայի ազդեցության տակ, ճիշտ այնպես, ինչպես Հռոմեական արքունիքի բոլոր պրելատները. նրանք այլ բան չէին էլ փափագում, քան այն, որ այդպիսի մի գեղեցկուհի գայթակղեցնի իրենց։*

Կարճ ասած, եկեղեցաժողովը թագուհուն անմեղ հռչակեց և, սպառնալով բանադրանքով, Լոթարին պարտավորեցրեց կնոջը վերադարձնել իր մոտ։

Եկեղեցական արդարությունը, վոդևիլային դերասանուհու նման, անչափ սիրում է ամեն տեսակի չարաճճիություն։

Մի միջադեպ ևս նույն այդ դարաշրջանից։ Լոթար թագավորին ցմահ երջյուրակրի տիտղոսով պսակելուց շատ չանցած պապը նոր եկեղեցաժողով հրավիրեց, որը պետք է քններ ամուսնական անհավատարմության այն մեղադրանքը, որ հարուցվել էր գեղեցկուհի Ինգելտրուդայի, դուքս Մատֆրիդի դստեր ու դուքս Բոսոն Լոմբարդացու տիկնոջ դեմ, որը, գողանալով ամուսնու թանկարժեք իրերը, փախել էր սիրեկանի հետ։

Այս անգամ դժբախտ ամուսինը ներեց իր իսկապես մեղավոր, բայց բոլորովին էլ չզղջացած կնոջը, և քանի որ դեռ շարունակում էր սիրել, ամեն կերպ փորձում էր նրան իր մոտ վերադարձնել։

Համոզվելով, սակայն, որ իր բոլոր աղաչանքներն ապարդյուն են, դուքսը որոշեց պապին խնդրել, որ նա օգտագործի իր ազդեցությունը և անհավատարիմ կնոջը ստիպի կատարել իր պարտքը թագավորի և... թագավորության առաջ։

Անսալով Բոսոնի խնդրանքը, Նիկողայոսը Միլանում եկեղեցաժողով գումարեց՝ հրավիրելով նաև Ինգելտրուդային, տիկնոջ ներկայությունը բարեպաշտ ժողովին որոշ չափով կխանգարեր նրան բանադրել։

Եթե «սսկվիր» բառ գոյություն ունենար այն ժամանակվա բառարանում, ապա, պետք է ենթադրել, որ անամոթ կինը կկարողանար ըստ արժանվույն պատասխանել քահանայապետին։ Բայց, ղուրկ լինելով այդպիսի զենքից, պարզապես հրաժարվեց պատասխանել և հնարավոր չհամարեց հրավերից օգտվել...

Նրան դատապարտեցին։ Սակայն ո՛չ բանադրանքը, ո՛չ հորդորները որևէ արդյունք չտվին։ Ստանալով բանադրման հրամանը, Ինգելտրուդան այն նետեց կրակի մեջ և դեսպաններին էլ ծաղրեց։

«Եթե ձեր սուրբ հորը հաճո է եկեղեցական ժողովներ հրավիրել, վերադաստիարակել կանանց, խառնվել ամուսնական անհավատարմությանը վերաբերող գործերին, ապա՝ հաղորդեցեք նրան, որ եկեղեցական հրամանագրեր հրապարակելով նա ղուր ժամանակ է վատնում։ Ավելի լավ կանի, եթե զբաղվի իր գարշելի կղերականության վերագաստիարակությամբ. թող միանձնուհիներին արգելի երեխա բերել և արվամոլներին վտարի իր տնից»։

*Լուր ստանալով, թե նա ինչպիսի ընդունելություն է ցույց տվիլ իր դեսպաններին, պապը խիստ կատաղեց։ Սուրբ Հայրը Լոթարինգիայի եպիսկոպոսներին հրամայեց այդ անառակին անհապաղ վտարել քաղաքից, սպառնալով երկրորդ անգամ բանադրել, եթե նա չվերադառնա ամուսնու մոտ։*

*Ինգելտրուդան, բացեիրաց հայտնելով իր վերաբերմունքը պապի սպառնալիքների և եկեղեցական նզովքների նկատմամբ, շատ հանդիստ թողեց ու հեռացավ Քյոլնի եպիսկոպոսի մոտ և, խոսք ու զրույցից չվախենալով, դարձավ այդ պրելատի սիրուհին։*

*Եթե նա շրջահայաց Տաուտբերգալի նման անձնապես ունկնդրություն գնար Հռոմի պապի մոտ, ապա նզովքների փոխարեն, անշուշտ, նրան կստանար սուրբ հոր օրհնությունը։ Պատրաստվելով արձակել երրորդ բանադրանքն ընդդեմ Ինգելտրուդայի, պապն ինքն էլ խոստացավ նրան ներել, եթե նա անձամբ ներկայանա իրեն և հետն էլ բերի արծաթին համապատասխան գումար։*

*Սուրբ հայրը տիկնոջ այցից բացի, վճար էլ էր պահանջում...*

*Մեկնություններն ավելորդ են։*

## ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՆԻԿՈՂԱՅՈՍ I-ԻՆ

*Եթե Նիկողայոս I պապը թույլ սեռի հետ գործ ունենալիս երբեմն անհաջողություն է ունեցել, ապա աշխարհիկ իշխանությունից և եկեղեցական մագնատներից նա պահանջում էր անվերապահորեն ընդունել իր հեղինակությունը։*

*Նրա անսահման գոռոզամտությունը, ինչպես և հրամանագրերը ուժեղ ընդդիմություն առաջ բերին կաթոլիկական եկեղեցու որոշ բարձրաստիճան պաշտոնյաների մեջ։*

*Եկեղեցաժողովը, որ հրավիրվել էր Մեցում և բաղկացած էր թագավոր Լոթարի եպիսկոպոսներից, հայտարարեց, թե, չնայած սուրբ հոր հրամանագրերին, ինքը լիովին արդարացնում է թագավորի վարմունքը՝ Տաուտբերգային ապահարզան տալը։*

*Քյոլնի արքեպիսկոպոս Գոտյեին և Տրիրի արքեպիսկոպոս Տեուտգոդին հանձնարարվեց սուրբ հորը հանձնել եկեղեցաժողովի որոշումը։ Նիկողայոս I-ը սրիկաների և գողերի հավաք անվանեց Մեցի վեհաժո-*

*պովը, չեղյալ հայտարարեց նրա որոշումները և Ֆրանսիայի պրելատներին զրկեց եպիսկոպոսական աստիճանից։*

*Տեուտգոդը և Գոտյեն չվախեցան սուրբ հոր սպառնալիքներից և թագավորին խոնարհաբար խնդրեցին, որ նա պատժի պապին, որը հանդգնել է անարգել նրա ներկայացուցիչներին։*

*Ահա որոշ մեջբերումներ սուրբ հորը արքեպիսկոպոս Գոտյեի հղած ուղերձից.*

*«Քահանայապե՛տ, դու վիրավորել ես մեզ, ինչպես և մեր եղբայրակիցներին, անարգել ես բոլոր իրավունքները, խախտել եկեղեցու կանոնները, դու քո արարքներով գերազանցել ես քո՛ բոլոր գոռոզամիտ նախորդներին։ Քո խորհուրդը բաղկացած է նույնպիսի ծախու, սանձարձակ և անազնիվ քահանաներից, ինչպիսին ինքդ ես... Ինչպես ագահ գող, դու զավթել ես բոլոր եկեղեցական գանձերը... դու քրիստոնյաներին խեղդողն ես... Վախկո՛տ բռնակալ, դու կրում ես ստրուկների ստրուկ անունը և դիմում դավաճանության, օգտագործում ոսկին ու պողպատը, որպեսզի տիրակալ դառնաս... դու հանդգնում ես մեզ անվանել սրբապիղծներ։ Բայց դու ի՞նչ անուն կտաս Հռոմի կղերականներին, որոնք քո հղորությանը խունկ են ծխում, գովաբանում քո իշխանությունը։ Ի՞նչ անուն կտաս քո պղնձագլուխ քահանաներին, դժոխքի այդ ծնունդներին, որոնց սիրտը մետաղից է, իսկ մեջքը՝ Սոդոմ-Գոմորի կեղտից։ Այդ սպասավորները ծնվել են, որպեսզի սողան քո առջև։ Ամբարտավան, նրանք նման են քեզ, նրանք միանգամայն արժանի են Հռոմին, այդ սոսկալի Բաբելոնին, որը դու անվանում ես հավերժական և անսխալական սուրբ քաղաք։ Այո՛, քահանաների այդ կոհորտան, որ պղծվել է շնություններով, արյունապղծությամբ, բռնություններով, թունավորումներով և մարդասպանությամբ, արժանի է լինելու քո շքախումբը, որովհետև Հռոմը, բոլոր արատների բույնը, դևի և քո կացարանն է, պա՛պ, քանզի անունը քո սատանա է»։*

*Այդ ուղերձը, որ այնքան վառ կերպով պատկերում է հռոմեական եկեղեցու բարքերը, ավելի ևս հետաքրքիր է նրանով, որ դրան հավանություն են տվել զգալի թվով եպիսկոպոսներ, որոնց դեռևս չէր կարողացել կպչել հռոմեական վարակը։*

## ԱՍՏՎԱ ՄԱՏԸ

*Ի պատասխան Քյոլնի և Տրիրի արքեպիսկոպոսների բողոքի, Լյուդովիկոս II-ը, պապի վարմունքից զայրացած, բանակի գլուխն անցած՝ շարժվեց Հռոմի վրա, որպեսզի պաշտպանի տապալված պրելատներին։*

*Սուրբ Հայրը հակահարվածի պատրաստվելով մեծամտացած թագավորի դեմ, հրամայեց ամենուր մաղթանքներ կատարել՝ գրգռելով հռոմեացիների մոլեռանդությունը։ Բայց պապի հրոսակները չդիմացան միապետի զորքերի հարձակմանը։*

*Այն ժամանակ պապը սկսեց սպասել, մինչդեռ նրա հավատարիմ զինակիցները գործում էին գաղտնաբար։ Սակայն պետք չեղավ երկար սպասել. շուտով լուր եկավ, թե հանկարծամահ է եղել թագավորի սպասներից մեկը, որն ընդհանուր խառնակության ժամանակ ջարդել էր թանկարժեք քարերով զարդարված խաչը։ Նրա դիակը ծածկվել էր սև բծերով, որոնք վորեղ թույնի բացահայտ նշաններ էին։ Իսկ թագավորն ինքը տանջալից տենդի նոպաներ ունեցավ։*

*Կղերականներն աղաղակ բարձրացրին, թե հրաշք է կատարվել, տերը պատժել է եկեղեցու թշնամիներին։ Եվ տգետ ժողովուրդը հավատաց հրաշքին։*

*Սարսափահար Լյուդովիկոսը նվաստաբար համաձայնվեց պապի բոլոր պահանջներին, և Նիկողայոս I-ը հաղթանակով պալատ վերադարձավ։ Իր հաղթանակը նա նշեց մի՛ահեղ հրամանով. տանջահարության սպառնալիքով Ֆրանսիայի պրելատներին հրամայվեց թողնել պալատը։*

## ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Մի անգամ Բուլղարիայի թագավոր Բոգորիսը, որը քրիստոնեություն էր ընդունել, հարուստ նվերներով սուրբ Հոր մոտ ուղարկեց իր ներկայացուցիչներին։ Նրանք պետք է պապից ցուցմունքներ ստանային կրոնին վերաբերող հարցերի առնչությամբ։*

*Ահա քահանայապետի պատասխանը.*

*«Դուք մեզ հայտնում եք, թե ձեր հպատակներին մկրտել եք հա-*

*կառակ նրանց կամքի, որի հետևանքով առաջացած խռովությունը սպառնում է ձեր կյանքին։ Փա՞ռք ձեզ, որովհետև դուք պաշտպանել եք ձեր հեղինակությունը, հրամայելով սպանել մոլորված ոչխարներին, որոնք հրաժարվում էին մտնել փարախ. դուք ոչ մի մեղք չեք գործել ցուցաբերելով սրբազան խստություն. ընդհակառակը, փա՞ռք ձեզ, որովհետև դուք ոչնչացրել եք թշնամիներին, որոնք չէին ուզում մտնել առաքելական եկեղեցու գիրկը, դրանով իսկ դուք ձեզ հպատակ ժողովուրդների համար բացել եք երկնային թագավորություն։ Թող թագավորը չվախենա մարդասպանություններ կատարել, եթե դրանք կարող են նրա հպատակներին հնազանդության մեջ պահել կամ նրանց ճնշարկել քրիստոնեական հավատքին։ Աստված նրան մեղքերի համար կփոխհատուցի այս աշխարհում և հավիտենական կյանքում»։*

*Ո՞վ չի ցնցվի այս տողերը կարդալիս։ Կարող է պատահել, որ որևէ մեկը նույնիսկ կասկածի նրանց արժանահավատությանը, բայց, որքան էլ որ ցավալի լինի, այստեղ բերված մեջբերումները վերցված են խոսկապես պատմական աղբյուրներից։ Դրա հետ մեկտեղ մի՞թե այդ նամակում արտահայտված մտքերը բացառություն են։ Ավա՞ղ, այդպես է եղել կաթոլիկության ամբողջ պատմության ընթացքում։*

*Եթե դրախտը իսկապես գոյություն ունի, ապա ազնիվ մարդու համար ավելի լավ չէ՞ գնդակ արձակել ճակատին, քան թե պատահական որևէն կամ սխալմամբ գտնվել այդ սուրբ ընկերակցության մեջ...*

## ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՂԲԱՑՐԱՍՊԱՆԸ

*Հովհաննես VIII-ի, հարյուր մեկերորդ պապի աթոռակալության ժամանակ, Նեապոլի դուքս Սարգիսը, չնայած սրբազան հոր արգելքին, սարացիններ հետ դաշինք կնքեց։*

*Ի պատիժ նրա կամայական գործողությունների զայրացած պապը եպիսկոպոս Աթանասին, չարաբաստիկ դքսի հարազատ եղբորը, հրամայեց գիշերով հարձակվել նրա վրա, հանել աչքերը և ուղարկել Հռոմ։ Պրելատը փութաջանությամբ կատարեց պապի հրամանը, որովհետև այդ պատեհ առիթը նրան հնարավորություն էր տալիս ժառանգելու Նեապոլի դքսությունը։*

*Հովհաննեսը ոչ միայն այդ պաշտոնում հաստատեց բռնատիրողին*

հետո էլ գովասանական ճառեր արտասանելով, այլև, ի հատուցումն ջանադրության, եղբայրասպանին ուղարկեց չորս հազար ունցիա արծաթ։

Պատժելով անհնազանդ դքսին, քահանայապետն ինքը անմիջապես համաձայնության եկավ անհավատների հետ։

Ճիշտ է, ըստ իր տեսակետի (մենք նկատի ունենք եկեղեցականի տեսակետը), նրան արդարացնում էր մի հանգամանք. նա նախապես գիտեր, որ խախտելու է այդ համաձայնագիրը։ Սուրբ Հորն անհրաժեշտ էր ժամանակ շահել, որովհետև հունաց զորքերը խոստացել էին նրան օգնության գալ։

Ահա եկեղեցական բարոյականությունը բնութագրող մի հատկանիշ ևս։

Եվ այսպես, պապն օգնական ուժերի էր սպասում, հույս ունենալով հաշիվ տեսնել սարացինների հետ. նա փափագում էր մի լավ կոտորած սարքել և դրանից կորզել բոլոր հնարավոր օգուտները։ Ըստ համաձայնագրի, սարացինները պետք է դադարեցնեին իրենց ասպատակությունները եկեղեցական տիրույթներում, իսկ փոխարենը պապը նրանց պիտի վճարեր տարեկան քսան հազար ունցիա։

Եվ ահա Հովհաննեսը, հավանաբար, եկավ այն եզրակացության, որ ինչ-որ մահմեդականների վճարելու փոխարեն ձեռնտու կլինի վերցնել և կտրել նրանց բոլորի գլուխը...

Ավա՜ղ, սուրբ Հոր ծրագրերը ձախողվեցին, որովհետև կային նաև ավելի լուրջ թշնամիներ, քան արաբները։

Սպոլետոյի դուքսը՝ Գյուի որդի Լամբերտը և մի քանի այլ մեծամեծներ, որ զայրացած էին Հովհաննես VIII-ի քաղաքականությունից, մեծաթիվ զորքի գլուխ անցած հարձակվեցին Հռոմի վրա, առանց որևէ դիմադրության տիրացան սուրբ քաղաքին, պաշարեցին Լաթերանյան պալատը և շուտով գրավեցին։ Լամբերտն անձամբ պապին դուրս բերեց վարագույրի ետևից, որտեղ նա թաքնվել էր, և փակեց սուրբ Պետրոսի տաճարի դահլիճներից մեկում։ Այնուհետև հաղթողները պապին ապաշխարության շապիկ հագցրին և հանձնեցին մի դաժան աբեղայի խնամքին, իսկ սա էլ կարողացավ պապին օգնել աստծուց թողություն ստանալու իր բոլոր մեղքերի համար։

Խառնակիչները Իտալիայի կայսր հռչակեցին Կառլոմանին, հույս

ընենալով հանձին նրա ձեռք բերել մի ազնիվ պաշտպանի, եթե Հովհաննես VIII-ը մտադրվեր որևէ բան անել։ Ասենք, այդ կերպ պապին դաս տալով, նրանք իրենց վտանգազերծված էին համարում սուրբ հոր ամեն տեսակ ցավերից։

Սակայն Հովհաննես VIII-ը ձեռքերը ծալած չէր նստել. ազատություն ստանալով, նա եկեղեցաժողով գումարեց և բանադրեց Լամբերտին և գործին խառնված մյուս դքսերին։ Ապա սուրբ հայրն ուղևորվեց Գաղիա, մտադրվելով այնտեղ բավականաչափ ուժեղ բանակ հավաքագրել և վրեժ լուծել այն ստորացումների համար, որ կրել էր։

Նա ժողով գումարեց Թրուայում, որտեղ և եպիսկոպոսներին ու սինյորներին խնդրեց զինել նավերը, թագավորին՝ վասալներին զենք բաժանել սուրբ աթոռը պաշտպանելու համար։ Իր ճառը սկսելով պաթոսով, նա ավարտեց սպառնալիքով.

«Սարսափեցե՛ք, որ չլինի թե ինքներդ ձեզ պատժի տակ դնեք, որովհետև դա է վիճակված այն բոլոր իշխանավորներին, որ հրաժարվում են պաշտպան կանգնել իրենց քահանայապետին... Սինյորնե՛ր և եպիսկոպոսնե՛ր, լսեցեք ինձ, ես աղերսում եմ ձեզ՝ առանց հապաղելու զոհաբերեցեք ձեր ունեցվածքը, ձեր կանանց ու ձեր երեխաներին և նահատակվեցեք ի փառս սուրբ աթոռի»։

Ի պատասխան դրա եկեղեցաժողովը բազմանշանակ լռություն է պահպանել։

Եվ պապը, որ մեծ հույսեր էր կապել Թրուայի եկեղեցաժողովի հետ, այնտեղից հեռացավ խիստ դժգոհ։ Մեկնելով, նա մի ինչ-որ անորոշ բան փնթփնթաց։ Շատ հավանական է, որ լատիներեն ասաց.

«Ինչ ասել կուզե, ծանր ես դու, պապի խույր»։

## ՊԱՊ ԿԵՂԾԱՐԱՐԸ

*Խոսքը վերաբերում է նույն այդ տխրահռչակ Հովհաննես VIII-ին։ Թրուայի եկեղեցաժողովում, վիճաբանություններից մեկի ժամանակ, եպիսկոպոսները պապին ներկայացրին Կառլոս Ճաղատի կտակը, որով թագավորն իր տղային հանձնում էր Ֆրանսիայի թագավորությունը, դրան միացնելով սուրբ Պետրոսի հոգևոր սուրը, որ կնշանակեր, թե խոսքը վերաբերվում է նաև Իտալիային և կայսերական կոչմանը։*

Պրելատները թագավորի անունից պապին առաջարկեցին հաստատել կտակը։

Հովհաննեսը սիրով համաձայնվեց, դնելով մի համեստ պայման։

Նա հայտարարեց, որ անկապտելի իրավունք ունի Սեն-Դենիի աբբայության նկատմամբ, որն իբր իրեն նվիրել էր Կառլոս Ճաղատը և, ներկայացնելով փաստաթուղթը, Լյուդովիկոս Կակազին առաջարկեց վավերացնել կայսրի տիտղոսով այն փոխարինելու ընծայագիրը։

Ամենամակերեսային քննությունները ցույց տվին, որ սուրբ հայրը սովորական կեղծագիր է թխել։ Սակայն այդ խուլրակիր սրիկայի քամակին ոտքով չխփեցին, ինչին նա լիովին արժանի էր. ի դեպ, աբբայությունը թագին մեծ եկամուտ էր բերում, և թագավորն այնքան խելք ունեցավ, որ այն չզիջեց փուչ ու անօգուտ տիտղոսի փոխարեն։

Ինչպես տեսնում եք, Հովհաննես VIII-ը բոլոր անհրաժեշտ բարեմասնություններն ուներ առաջին կարգի պապերի շարքը մտնելու համար։ Ավաղ, դժբախտաբար մենք չենք կարող ավելացնել, թե եկեղեցին նրան դասել է սրբերի շարքը։

Մոռացության թե անարդարության պատճառով՝ միևնույնն է. հավասարապես ցավալի է։

## ՀՌՈՄԵՑԻ ԿՆՈՋ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես VIII-ը մեռավ 882 թվականին։ Նշանավոր Ֆուլդյան աբբայության տարեգիրքը նրա վախճանի մասին շատ հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում։

Այդ չարաբաստիկ պապը հանկարծակի սիրահարվեց... ամուսնացած տղամարդու վրա. մի անգամ նա նույնիսկ համարձակվեց գողանալ իր սիրածին, որպեսզի առանց արգելքի նրա հետ անձնատուր լինի կործանիչ կրքին։

Այդ հետաքրքիր անձնավորության տիկինը խանդից դրդված, թե ուրիշ նկատառումներով՝ որոշեց վրեժ լուծել պապ-գայթակղիչից և նրան թունավորեց։

Տիկնոջ մեղսակիցները, տեսնելով, որ թույնը բավականաչափ արագ չի ներգործում, գիշերը մտան սուրբ Հոր ննջասենյակը և մուրճով հարվածեցին նրա գանգին։

*Կարդինալ Բարոնիուսը իր պատմածին դամբանականի ոճով ավելացնում է մի կարճ ծանոթագրություն.*

*«Նման մահը միանգամայն արժանի է այդ զազրելի պապին»։*

*Մենք ամբողջությամբ միանում ենք նրա կարծիքին։*

## ԿԵՆԴԱՆԻ ՔԱՅՔԱՅՎԵԼՈՎ...

*Արվամոլ Հովհաննես VIII-ի հաջորդը գահ բարձրացավ Մարտինոս II անունով։*

*Նոր պապը քաղաքականության մեջ իրեն դրսևորեց նույնպիսի խաբեբա, անառակ ու ամբարտավան, ինչպես նրա նախորդ Հովհաննես VIII-ը։*

*Նրա փուչ գոյությունը երկար չտևեց. գահի վրա նա մնաց ընդամենը մեկ տարի հինգ օր. ահա նրա ամբողջ առավելությունը Հովհաննես VIII-ի նկատմամբ։*

*Նա վախճանվեց 884 թվին, միայն թե նրա մահվան մեջ ոչ ոք որևէ մեղք չուներ։ Մարտինոս պապը մի կատարյալ ավերակ էր իր ապրելակերպի պատճառով և կենդանի-կենդանի նեխել էր նախքան հողին ավանդելը։*

*Բը՛ ռռռռռռ։*

## ՎԱՃԱՌՔ ԱՃՈՒՐԴՈՎ

*Մարտինոսին հաջորդած Ադրիանոս III-ը եղել է քահանայի որդի։ Նրա գահակալության ժամանակ Հռոմի կղերականությունը շարունակել է անձնատուր լինել ամենաանբնական հաճույքների։ Քահանաներն այլևս չէին բավարարվում կուրտիզանուհիներով, նրանք պահում էին հասարակաց տներ, որտեղ այլանդակությունների սիրահարները գըտնում էին ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, որոնք միշտ պատրաստ էին սպասարկել նրանց։*

*Սպանության կամ ոսկու օգնությամբ այդ դարաշրջանում ձեռք էին բերվում պետական ու եկեղեցական պաշտոններ։ Ամուսնական անհա-*

վատարմությունը և արյունապղծությունը եղել է սովորական բան, երբ խոսքը վերաբերվել է նպատակին հասնելուն։ Հայտնի է, որ Հռոմի պապական արքունիքում ամուսնով վաճառում էին եպիսկոպոսի աստիճան։

Բայց ի՞նչ տիտղոսի մասին կարող էր երազել աստծու և մարդկանց միջնորդը։ Մի՞թե երկնային հոր գահը նրան անսահմանափակ իշխանություն չէր տալիս։ Մի՞թե նա պապին չէր դարձնում իշխանաց իշխան, աշխարհիս ամենահզոր դեմքը։

Ադրիանոս III պապը իր նախորդների նման ջանում էր վերացնել պետության ազդեցությունը եկեղեցու գործերում և ինքնակամ տնօրինել ընդարձակ իշխանապետությունները։ Չէ՞ որ նրա հզորության աճին զուգընթաց բազմապատկվում էր հարստությունը։

Ադրիանոս III-ը նույնիսկ համարձակվեց մի հրամանագիր հրապարակել, որը քահանաներին թույլատրում էր ըստ իրենց հայեցողության Իտալիայի թագավոր հորջորջել առավել արժանավոր թագաժառանգին։

Հեշտ է կռահել, թե հոգևորականությունն ինչպիսի հատկանիշների համար էր ընտրում ամենից արժանավորին...

Ժողովուրդը, որ անասնական կյանք էր վարում, կարծրամտացել էր տգիտության մեջ, ուժ չուներ իր վրայից թոթափելու պապության լուծը։ Եվ գրեթե մի ամբողջ հարյուրամյակ Իտալիան եղել է խելապակաս ու դաժան բռնակալների կողոպուտի առարկա։

Ադրիանոս III-ը երկնային հոր գահը զբաղեցրեց 884 թվի մայիսին և մեռավ մի տարի անց, թողնելով գոռոզամիտ, ընչաքաղց և վավաշոտ պապի համբավ։

Իսկ եկեղեցին նրան դասեց սրբերի շարքը։

## ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ադրիանոս III-ի ժամանակներում սարացիններըհաճախ ասպատակություններ էին կատարում Հռոմի տարածքներում։

Նրանց առաջնորդ Սանգդամի աչքից չէր վրիպում վանքերի անհաչիվ հարստությունը։ Սարացինները գավթեցին սուրբ Վինչենցայի վանքը, այն կողոպտեցին և անմիջապես շարժվեցին դեպի նշանավոր Մոնտե-կասինո վանքը, սուրբ Բենեդիկտոսի միաբանության օրրանը։

Նախքան վանականները կկարողանային որևէ բան անել, Սանգդամը պաշարեց փոքրիկ աբբայությունը, բայց չգրավեց, որովհետև այդ հուշակավոր վանքի բարձր պարիսպները ու ամրությունները մի իսկական ամրոց էին։

Սարացիններն իրենց բավարարություն տվին՝ կողոպտելով վանքի եկեղեցին, որ գտնվում էր ներքևում՝ բլրի լանջին։ Նրանք այնտեղ գտան անհամար գանձեր, որ վանականները շորթողականության ու շանտաժի միջոցով թալանել էին հավատացյալներից։ Այնուհետև սարացինները հրդեհեցին եկեղեցին ու հեռացան, բավարարված ավարով, որ գերազանցել էր իրենց սպասելիքները։

Վնասները վերականգնելու համար վանականները շտապ սկսեցին նոր եկեղեցի կառուցել, խորին հավատ ունենալով մարդկային հիմարության նկատմամբ։ Նրանք, այդ շահագործողները, գիտե՞ն իրենց տաղանդի արժեքը...

Եվ իսկապես, որոշ ժամանակ անց, նրանք դարձան ավելի հարուստ քան առաջ։

## ՄՈՐԵԽԻ ՈՂՆՉԱՅՈՒՄԸ

Ալժիրում, որտեղ մորեխը սարսափելի ավերածություններ է գործում, շատ միջոցների էին դիմում բերքը փրկելու համար։ Ամենից հաճախ գետնի վրա փռում էին երկար պաստառներ և այդկերպ որսում ահեղ պորտաբույծներին։

Հռոմեացիները հայտնագործեցին ավելի լավ միջոց։

Մորնխը 885 թվին Ալժիրից թափանցեց Իտալիա և սկսեց խժռել քաղաքացիների արտերը, խաղողի այգիները, պարտեզները, բնակչությանը սով էր սպառնում։

Ադրիանոս III-ն այդ ժամանակ գտնվում էր մահվան մահճում։ Անհրաժեշտ էր նոր պապ ընտրել։

— Ընտրենք քահանա Ստեփանոսին,— միաձայն գոռում էին և՛ հղերակաները, և՛ անտիճանավորները, և՛ ժողովուրդը,— միայն նա կփրկի մեզ մորեխից։

Ստեփանոս VI-ն ընտրվեց իր կամքին հակառակ. թե նրա ճաշակը և խակապես համեստ էր, թե նա անվստահությամբ էր նայում ապագային. առաջ հայրերն այն ժամանակ աթոռի վրա երկար չէին մնում։ Նրանց

շրջապատող ավազակների ոհմակն այնքան էլ խղճի խայթ չէր զգում և թեկուզ մի փոքր օգուտ կորզելու համար պատրաստ էր հանգիստ կերպով շիկամկան թույն խառնել Քրիստոսի կուսակալի ապուրին։

Հայտնի չէ, թե ինչ շարժառիթներ էին առաջնորդում Ստեփանոսին, միայն թե նա վճռապես հրաժարվեց իր գլխին դնել այն ծանր գլխարկը, որ խույր էր կոչվում. նրան գրեթե դուրս բերին իր հարամարավետ կացարանից և հանդիսավորությամբ տարան Լաթերանյան պալատ։

Շքաթափորի ժամանակ երկնքի վիհերը հանկարծ բացվեցին, սկսվեց մի ուժեղ տեղատարափ, թրջվեցին բոլորը, այդ թվում և մորխը...

Էլ ինչպե՞ս կարելի է չաղաղակել հրաշքի մասին։ Սակայն հաջորդ օրերին վրա հասավ շոգը, նրան հետևեց երաշտը, և մորեխը նորից սկսեց մոլեգնել։

Հրաշքն ի չիք դարձավ։

Սուրբ Հայրը, տանջվելով այն բանից, որ չի կարողացել արդարացնել իր ընտրողների հույսերը, հրամայեց երկրագործներին սուրբ ջուր բաժանել՝ դաշտերի ու խաղողի այգիների վրա ցողելու համար. չէ որ հարկավոր էր որևէ կերպ պայքարել զարհուրելի պրոտաբույծների դեմ։

Որոշ տարեգիրներ պատմում են, թե սուրբ ջուրն իսկապես ազդեցություն է ունեցել... Շատ հնարավոր է, որ այդ շատակեր էակները մեռել են... ծիծաղից։

Հարևանցիորեն անդրադառնանք այն հուսախաբությանը, որ պատեց Ստեփանոս VI-ին նրա օծումից մի քանի օր հետո։

Նա եպիսկոպոսներին, թագավորների ներկայացուցիչներին և մեծամեծներին հրավիրեց իր հետ մտնել Լաթերանյան պալատը, որպեսզի տեսնեն, թե ինչ վիճակում է պապական բնակատեղին, որ անցնում էր նրա տնօրինությանը։

Ստեփանոս VI-ը, բնականաբար, հույս ուներ պալատում անհամար հարստություններ տեսնել, չէ որ նրա նախորդները հարուստ նվիրատվություններ էին պահանջում ամենաչնչին ծառայությունների դիմաց. ախր նրանք այդպիսի սովորություն ունեին, որի մասին մենք բաղմիցս հիշատակել ենք։

Ավա՜ղ։ Դատարկ պատրանքներ։ Լաթերանյան պալատի դանձարանը միանգամայն դատարկ էր։

Դատարկ էին մթերանոցները, մառանները, նկուղները։

Ինչ վերաբերում է կահույքին, ապա նրանից ընդհանրապես բան չէր մնացել։ Պապերը վճռականորեն ամեն ինչ ոսկու էին վերածել, լա-

*փել ամբողջ սուրբ կահ-կարասիքը։ Նույնիսկ անհրաժեշտ քանակությամբ ամանեղեն չկար խեղճ Ստեփանոսի համար։*

*Լա՜վ քեֆչիներ են եղել նրա նախորդները։ Ա՛յ թե ախորժակ։*

## ԳՈՂԸ, ՄԱՐԴԱՍՊԱՆԸ ԵՎ ԿՈՒՅՍ ՏՂԱՄԱՐԴԸ

*Այդպիսին էր Փորմոսոս I-ը՝ Ստեփանոս VI-ի հաջորդը, հարյուր տասնհինգերորդ պապը։ Իր եկեղեցական կարիերայի սկզբում, Նիկողայոս I-ի օրոք, որպես եպիսկոպոս նա Բուլղարիա էր ուղարկվել։ Այնտեղ նա վիթխարի հարստություն էր դիզել ի հաշիվ այն ժողովրդի սնապաշտության և տգիտության, որին ուսուցանում էր քրիստոնեության դոգմաները։ Փորմոսոսի սուրբ աթոռ բարձրանալն ուզեցին վիճարկել դուքս Տոսկանելլիի կողմնակիցները, նրան հակադրելով քահանա Սարգսին։ Սակայն, Գյուին, Իտալիայի թագավորը, մինչ այդ արդեն պապ էր հրաչակել Փորմոսոսին, և նրան տեղավորեցին Լաթերանյան պալատում։*

*Թշնամիները, սակայն, չէին հանգստանում։ Սուրբ Պետրոսի գահի համար պայքարը շարունակվեց նոր գահակալության ողջ ընթացքում, և Հռոմը արյունաքամ եղավ անհամար սպանություններից։ Այդ առիթով Փորմոսոսի ու թագավորի միջև տարաձայնություններ ծագեցին, և շուտով պապը, մոռանալով իր ստանձնած պարտավորությունները (երախտամոռություն բնորոշ է եկեղեցականների համար), Իտալիա կանչեց Գերմանիայի թագավոր Առնուլին, նրան խոստանալով կայսրություն։*

*Առնուլը չստիպեց, որ իրեն երկար խնդրեն. մեծաթիվ զորքի գլուխ անցած շարժվեց Հռոմի վրա, գրավեց քաղաքը և, ժամանակ չկորցնելով, մտավ սուրբ Պետրոսի բազիլիկան, որտեղ և թագադրվեց ժողովրդի կողմից։*

*Ահա թե երբ Փորմոսոսը ազատություն տվեց իր կատաղությանը։ Կրոնին հասցրած վիրավորանքների համար հեթանոսների հետ հաշիվները մաքրելու պատրվակով նա նոր թագավորի զինվորներին հնարավորություն տվեց ջախջախելու Հռոմի բոլոր երևելի քաղաքացիներին։*

*Առնուլն էլ պատժվեց այն բանի համար, որ օգնություն էր ցույց տվել ճիվաղին։ Քաղաքացիներից մեկը, ծառայի հագուստ հագնելով, նրա խմիչքի մեջ դանդաղորեն գործող թույն լցրեց, և Առնուլի մարմի-*

նը ծածկվեց խոցերով. թագավորը սոսկալի տանջանքների մեջ մեռավ երեք տարի հետո։

Փորմոսոսն ևս երկար չվայելեց իր հաղթանակը։ Նա մեռավ կրկնապատիկ պատժված նրանով, որ աստծո թագավորության շեմին ոտք դրեց որպես ճիշտ այնպիսի կույս տղամարդ, ինչպես որ դուրս էր եկել մոր արգանդից, և նրա համար, որ կոտորել էր Հռոմի բնակչության կեսը։

## ԵՐԿՇԱԲԱԹՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ

Ի հակադրություն Ստեփանոս VI-ի, որը, ինչպես մենք արդեն գիտենք, համառորեն հրաժարվում էր խուրմից, Վոնիփակիոս VI-ը չէր ուզում սպասել, մինչև որ Փորմոսոսին հողին հանձնեին, և սուրբ Պետրոսի գահը կատաղորեն խլում էր իր մրցակիցներից։

Նա բռներով աջ ու ձախ փող էր ցրում, հավատարմության երդումներ տալիս և՛ մեծամեծներին, և՛ կղերականներին. մի խոսքով իր ընտրությունը վաստակում էր ծանր աշխատանքով։

Սրա անցյալի վրա արժե խորհել. նա սարկավագի աստիճանից զրկվել էր ամուսնական անհավատարմության և մարդասպանության համար։

Բշվա՞ծ Վոնիփակիոս։ Կարո՞ղ էր նա կանխատեսել, թե իրեն ինչ է վիճակված։ Կսկսե՞ր նա այդքան կիրք ներդնել խուրմի համար ծավալված մրցավազքի մեջ։ Նրա մրցակիցներից մեկը՝ Ստեփանոսը, Անեժի եպիսկոպոսը, նրան թունավորեց ընտրությունից տասնչորս օր հետո։

Երկու շաբաթը, իհարկե, մեծ ժամկետ չէ, բայց, այնուամենայնիվ, նա մի կուշտ վայելեց իշխանությունը։ Օրգիաների մեծ սիրահար, որկրամոլ և հարբեցող, օրապակա՞ս այդ պապը, կոպիտ ասած, «լափեց տրաքվելու չափ»։

Վոնիփակիոսի խրախճանքները մի ամբողջ էպոպեա է առաքելական սիրոտի պատմության մեջ. չէ որ պապի սուրբ բարձերը կարճ ժամկետում ծանոթացան հույժ բազմատեսակ հարբեցողների, որկրամոլների ու անառակների մի հավաքածուի հետ։

Կարդինալ Բարոնիուսը հերքում է այն վարկածը, որին հետևում են գրեթե բոլոր տարեգիրները. նա պնդում է, թե Վոնիփակիոս VI-ը (նրան

ինքը, ի միջի այլոց, կեղտոտ անառակ է անվանում) մեռավ ոչ թե թունավորվելուց, այլ օրգիայի ժամանակ, սեղանի վրա, իր հրեշավոր անժուժկալության հետևանքով։

Մենք չենք վիճարկում այդ երկու վարկածներից և ոչ մեկը։ Տարբեր տեսակի արատներից հյուծված պատվարժան Վոնիփակիոսն արդեն երեք քառորդով քայքայվել էր, երբ գահ բարձրացավ։ Թունավորելով նրան, Ստեփանոսն արագացրեց հանգուցալուծումը, որն առանց այն էլ չէր ստիպի իրեն երկար սպասել։

## ՍՏԵՓԱՆՈՍ VII

Ահա մի սուրբ հայր ևս, որը չի փշացնում այդ հավաքածուն, բայց թանկարժեք մարգարիտի նման փայլում է այն սրիկաների ֆոնի վրա, որոնք միմյանց փոխարինել են սուրբ Հոր գահի վրա։

Հարկավոր է նրան արժանին հատուցել։ Նրա նախորդներից և ոչ մեկը աչքի չի ընկել այդպիսի սնափառությամբ, նա ինքն իրեն անվանում էր իշխանաց իշխան, վեհապետաց վեհապետ, եպիսկոպոսների թագավոր, մահկանացուների դատավոր։ Եվ ոչ միայն չէր բողոքում իր հովանավորյալների բացահայտորեն կոպիտ շողոքորթության դեմ, այլև ինքն էլ գտնում էր, թե օժտված է աստվածային շնորհով և այդ պատճառով էլ կարող է կատարել աստծու դերը։ Նա անկեղծորեն հավատում էր, որ իր ուզած քահանայքը վեր է ամեն տեսակ օրենքից։

Հենց նրա օրոք հռչակվեց պապական անսխալականության սկզբունքը։ Այդ ապուշ ուսմունքը պաշտոնական ճանաչում է գտել հետագայում, արդեն XIX դարում, այսինքն Վոլտերից և ֆրանսիական հեղափոխությունից հետո։ Պիոս IX-ի օրոք կաթոլիկ աշխարհը բավականաչափ հիմար էր և վախկոտ ընդունելու համար մի դոգմա, որը մարդուն թույլատրում է ինքն իրեն ամենագետ հռչակել և ինքն իրեն օժտել ամենահզոր իշխանությամբ, այն իշխանությամբ, որն առաջներում հավատացյալներն ակնածանքով վերագրում էին միայն աստծուն։

## ՍՏԵՓԱՆՈՍ VII-Ի ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽԵԼԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*IX դարում, ըստ պատմաբան Պղատինոսի, «սուրբ-աթոռը դարձել էր բոլոր փառամոլ բանսարկուների վերջնական նպատակը, բոլոր արատների որջը։ Այն ձեռք էին բերում ոսկու և արյան գնով»։*

*Ստեփանոս VII-ն այնքան տգետ էր, որ հազիվ էր ստորագրում իր անունը, չգիտեր նույնիսկ կրոնի տարրական հիմունքները. այլ բաներից բացի, նա եղել է նույնքան խորամանկ, որքան և անառակ։*

*Ինչ էլ որ ասվի նրա մասին՝ դեռ քիչ է. նրա փչացածությունը սահման չուներ, զզվելի օրգիաներով նա գերազանցեց նույնիսկ Հովհաննես VII-ին։*

*— Ստեփանոս VII-ը, քահանայի և կուրտիզանուհու որդին, իր ամբողջ կյանքի ընթացքում յուրաքանչյուր քայլափոխում հաստատում էր իր ազնիվ ծագումը։*

*Գահակալության սկզբում նրա գլուխը մի միտք էր մտել, որը միաժամանակ և՛ մռայլ էր, և՛ զվարճալի. գերեզմանից հանել սրբազան պապ Փորմոսոսի աճյունը, որ արդեն յոթ ամիս հողի տակ էր, և պատժել երբեմնի բռնապետին։*

*Հռոմի բարձրագույն եկեղեցականների ժողովի առաջ խաղացվեց այդ քստմնելի ներկայացումը. Փորմոսոսի դիակը ոտքերից բռնած քարշ տվեցին և նստեցրին աթոռին, նրան հագցրին տոնական զգեստ, գլխին դրեցին խույրը, ձեռքը տվին գավազանը։ Հանգուցյալին դատապաշտպան տվեցին՝ ճիշտ է, ոչ այնքան պաշտպանության, որքան հրապարակավ մեղադրելու համար։ Ելույթ ունենալով իր կլիենտի անունից, որը չէր կարող ո՛չ հաստատել, ո՛չ էլ ժխտել մեղագրանքները, այդ իսկապես արտասովոր դատապաշտպանն իր պաշտպանյալին մեղադրում էր բոլոր մահացու մեղքերի մեջ։ Ճառն ավարտվելուց հետո սուրբ Հայրը հրապարակեց դատավճիռը. Փորմոսոսը վտարվեց եկեղեցուց, և Ստեփանոսը ոտքի մի հարվածով նախկին պապին աթոռից ցած գցեց։*

*Բայց նույնիսկ վայրի գազանության այդ ակտն էլ չզսպեց կատաղած ապուշին. նրա կարգադրությամբ դիակի վրայից հանեցին սրբազան զգեստները, կտրեցին աջ ձեռքի երեք մատները, կուտրտեցին ձեռքերն ու ոտքերը, և միայն այն բանից հետո, երբ դահիճը կտրեց նաև գլուխը, այլանդակված աճյունը նետեցին Տիբրոս գետը։*

*Ստեփանոս VII-ը իր հանցագործությունների համար երկար չսպա-*

*ծեց փոխհատուցման։ Դավադիրները, որ վաղուց էին մտադրվել սպանել պապին, 897 թվի մայիսի 2-ին իրագործեցին իրենց մտադրությունը։ Պապին զնդան նետեցին և խեղդեցին այն թոկերով, որ հյուսված էին նրա քագավորական զգեստի կտորներից։*

## ԵԿԵՂԵՑԻՆ IX ԴԱՐՈՒՄ

*Եղերականները չեն կարող ժխտել կարդինալ Բարոնիուսի բավականաչափ հեղինակավորությունը։ Բայց ահա թե ինչ է գրում այդ միանգամայն ուղղափառ պատմաբանը.*

*«Երբեք ո՛չ երկպառակությունները, ո՛չ քաղաքացիական պատերազմները, ո՛չ էլ հերձանոսների հետապնդումները կամ հերետիկոսների ու հերձվածողների հալածանքները եկեղեցուն այնքան տառապանք չեն պատճառել, որքան այդ հրեշները, որոնք արվամոլության ու մարդասպանության միջոցով գրավում էին Քրիստոսի աթոռը... Հռոմեական եկեղեցին դարձել էր մի անամոթ աղջիկ, որը, ծածկված մետաքսով ու զարդարված թանկագին քարերով, հրապարակավ պոռնկություն էր անում ոսկու համար։ Լաթերանյան պալատը վերածվել էր մի գարշելի ավազակարոջի, որտեղ բոլոր ազգերի հոգևոր դեմքերը ծախու կանանց հետ վիճաբանում էին անառակության ու սանձարձակության առաջնությունը»։*

*Թվում է, պարզ է, այնպես չէ՞։ Ավելի ստույգ ձևակերպված իռստովանություն անկարելի է հնարել. այստեղ արդեն որևէ երկդիմության մասին խոսք իսկ չի կարող լինել։ Քահանաները պոռնկություն էին անում փողոցային կանանց պես։ Նրանք մարդկանց ստիպում էին վճարել իրենց կեղտոտ փաղաքշանքի և նողկալի բարեհաճության համար։*

*Առավոտները նրանք պատարագ էին կատարում և հացը վերափոխում Քրիստոսի մարմնի, իսկ երեկոները՝ իրենց վաճառում Հերմայի հետևորդներին։*

*«Երբեք,— ասում է Բարոնիուսը,— քահանաները, և հատկապես պապերը, չեն կատարել այդքան շնություններ, բռնություններ, կողոպուտներ ու սպանություններ»։*

*Մենք հետագայում կտեսնենք, որ վերը հիշատակված պապերի*

*հաջորդները ոչնչով չեն զիջել իրենց նախորդներին և որ սուրբ աթոռի պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հանցագործությունների ու խայտառակությունների մի պատմություն։*

## ՕԴ ՏՎԵՔ, ՕԴ

*Մենք ոտք ենք դնում էլ ավելի նողկալի մի ժամանակաշրջան, քան այն, որ նկարագրել ենք նախորդ գլուխներում։ Սկսվում է մի փուլ որ պատմության մեջ վատ համբավ ունի. այն կոչում են «երկու սեռի պոռնիկների հռոմեական թագավորություն»։ Քրիստոնեական եկեղեցին կառավարում էին ամենավատասեռ պոռնիկները, իսկ պապերը և եպիսկոպոսները մեկնվում էին նրանց ոտքերի տակ։*

*Պղատինոսը, Ծենեբրարը, Բարոնիուսն իրենց ստեղծագործություններում X գարի քահանայապետերին անվանում են սիմոնականության, մոգության, բռնության, գողության և մարդասպանության հայրեր։*

*Մենք հետագայում կհամոզվենք, որ դա բոլորովին էլ չափազանցություն չէ։*

*Շքահանդեսը բացում է Ռոմանոս I-ը, հարյուր տասնութերորդ պապը։*

*Իր ընտրության հաջորդ օրը նա չեղյալ հայտարարեց Ստեփանոս VII-ի հրամանագրերը, որոնք ուղղված էին Փորմոսոսի դեմ։ Հարկավոր է նշել, որ Քրիստոսի փոխանորդներից շատերը, իրենց անսխալական հայտարարելով, մի զարմանալի մոլուցքով մերկացնում էին իրենց նախորդների արարքները։ Այդ վայրագ փառամոլները չէին հասկանում, որ ժողովրդի առաջ բացելով տխրահռչակ անսխալականության իսկական դեմքը, իրենք իրենց համար դատավճիռ էին հրապարակում։*

*Պղատինոսի բառերով ասած՝ «նախանձ և վախով տոգորված քահանաները ժողովրդին նետեցին տգիտության և սնոտիապաշտության խավարի մեջ»։*

*Մենք առանձնապես կանգ չենք առնի այնպիսի պապերի վրա, ինչպիսիք են Ռոմանոս I-ը, Թեոդորոս II-ը, Հովհաննես IX-ը և այլք, որովհետև նրանց գործունեությունը ձանձրալիորեն միատեսակ է։*

*Ռոմանոս I-ը սուրբ աթոռը զբաղեցրել է միայն չորս ամիս։ Նվ այնուամենայնիվ, չնայած այդքան կարճ ժամկետին, այդ անառակների*

*Հավաքածուում նրան կարելի է համարձակորեն դասել առաջին կարգի պապերի շարքը։*

*Թեոդորոս II-ը, Ռոմանոս I-ի հաջորդը, մեռավ իր ընտրությունից քսան օր հետո։ Աթոռն անցավ Հովհաննես IX-ին՝ «պապերի ամբողջ համաստեղության մեջ ամենից անողորմ պապին», ինչպես նրան բնութագրում է Բարոնիուսը։ Հայտնի է, որ նա վարպետ կաշառակեր է եղել. հանցանք՝ գործած եպիսկոպոսները թողության գիր էին ստանում անձամբ նրանից, եթե չէին ջանում իրենց լուման մտցնել նուրբ Պետրոսի դրամարկղը։ Օրինակի համար վերցնենք երեք պրելատների՝ Պետրոսի, Պասքալոսի և Սիղբեստրոսի պատմությունը, որոնք մեղադրողներ էին այն եկեղեցաժողովում, որտեղ դատապարտվեց Փորմոսոսի դիակը։*

*Հովհաննես IX-ը, ցանկանալով վերականգնել այդ քահանայապետի պատիվը, հրավիրեց նոր եկեղեցաժողով, Փորմոսոսի մասին հանված դատավճիռը չեղյալ հայտարարվեց, իսկ մեղադրողները վտարվեցին եկեղեցուց։ Նրանք խոնարհաբար խնդրեցին իրենց հնարավորություն տալ վերընթերցելու իրենց սեփական անցյալ մեղադրանքները։ Հովհաննեսը համաձայնվեց և արդեն հաջորդ օրը հայտարարեց, թե մեղադրյալներին ներում է։ Պետրոսը, Պասքալոսը և Սիղբեստրոսը մեկ օրում կարողացել էին պապից իրենց համար մեղքերի թողություն գնել։ Դա նրանց վրա էժան չի նստել, բայց նրանք շատ լավ գիտեին, որ, մնալով եկեղեցու գրկում, հավատացյալների օգնությամբ կարճ ժամանակում տեղը կբերեն իրենց կրած վնասները։*

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Թող ընթերցողն ինձ ների մի փոքր ևս գնալու համար։*

*Եկեղեցականներն ամեն պատեհ առիթով անընդհատ պնդում են, որ քրիստոնեությունը ծառայել է մարդկության զարգացմանը։ Այդ պընդումը հակասում է ճշմարտությանը, և դա ապացուցելը դժվար չէ։*

*Շատ դարերի ընթացքում, ավելի վաղ, քան հնարվել է այդ կրոնը, մարդիկ ձեռք էին բերում նորանոր գիտելիքներ։ Գիտության զարգացումն առաջ էր գնում արագ քայլերով։ Քրիստոնեության ծագումից ինը դար անց մարդկությունն ընկղմվեց տգիտության, սնահավատության և բարբարոսության խավարի մեջ։*

Հովհաննես IX-ի հաջորդ Բենեդիկտոս IV-ի հարյուր քսանմեկերորդ պապի մահից հետո Անգլիայի թագավոր Էդգարը գրել է.

«Հռոմում կարելի է տեսնել միայն օրգիաներ, անառակություն, որկրամոլություն և շնություն։ Քահանաների տները վերածվել են խաչատառակ տների, պոռնիկների ու արվամոլների որջերի։ Ջոր ու գիշեր այնտեղ պարում ու խաղում են։ Բաքոսին փառաբանող երգերը, Մեսալինայի հեշտասեր պարերն ու օրգիաները դարձել են նրանց պատարագն ու աղոթքը»։

Քահանաների կաշառակերությունը կարճ ժամանակում ընդգրկեց հասարակության բոլոր խավերը. ժողովուրդն աղքատությունից ուժասպառ էր լինում, մինչդեռ բարձրագույն եկեղեցական աստիճանավորներն ավելի ու ավելի էին տարվում օրգիաներով, իրենց առաջ տեսնելով լոկ մի նպատակ՝ շահը։

Սուրբ Հովհաննես Ոսկեբարանն ասել է. «Այս աշխարհում ամբողջ չարիքը գալիս է եկեղեցու բեմից»։ Մենք կավելացնենք նաև սուրբ Հերոնիմոսի խոսքերը. «Ոչ մի տեղ չի կարելի գտնել այնպիսի անասուններ, փարիսեցիներ, ժողովրդին թունավորողներ, ինչպես քահանաների և թագավորների մեջ»։

## ՔՐԻՍՏԱՓՈՐ—ԴԱՀԻՃԸ

Ինչքան էլ տարօրինակ լինի, Բենեդիկտոս IV-ի մահից հետո հռոմեացիները պապ ընտրեցին մի շատ ազնիվ մարդու։ Այստեղ, երևի, ինչ-որ սխալ էր կատարվել և այն շտապ ուղղեցին։

Լևոն V-ին (այսպես էր կոչվում այդ հազվագյուտ անձը) գահազուրկ արեց փառամոլ Քրիստափորը, հենց նա, որին Լևոն պապը քիչ լավություն չէր արել։

Բարի գործը միշտ փոխհատուցվում է։ Քրիստափորը դա ապացուցեց գործով. նա խեղդամահ արեց Լևոնին։

Այդ կերպ դրսևորելով իր երախտագիտությունը, նա շտապ սկսեց իր կողմնակիցների գլխին տեղալ ամեն տեսակ ողորմածություն, իսկ նրանք էլ, առանց տատանվելու, քվեարկեցին նրան ընտրելու օգտին։

Քրիստափորը երկար չվայելեց իր արարքների արդյունքները։ Սարգիսը, ճիշտ նույնպիսի փորձված սրիկա (դրանում մենք շուտով

կհամոզվենք), արդեն փորձել էր զավթել սուրբ աթոռը, բայց ամեն անգամ այն խլվել էր նրա քթի տակից։

«Սատանան տանի՛,— ասել է նա, հավանաբար, ինքն իրեն,— հենց այսպես է շատ հեշտ սուրբ գահ բարձրանալը։ Ինչո՞ւ չհետևեմ Քրիստափորի օրինակին»։

Առանց երկար մտածելու, նա իրագործեց իր պլանը, և ամեն ինչ ընթացավ ընդունված կարգով։ Քրիստափորին իջեցրին սուրբ աթոռից և փակեցին վանքում։ Վախենալով, որ նա կարող է ճողոպրել, Սարգիսը նրան փոխադրեց զնդան, որտեղ և նա մեռավ պարզապես սովից։

## ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԵՎ ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՀԻՆԵՐԸ

Վերջապես Սարգիսը հասավ իր վսեմ նպատակին։ Այդքան երկար սպասելու համար նա ինքն իրեն սկզբում հատուցեց նրանով, որ չեղյալ հայտարարեց Հովհաննես IX-ի և իրեն նախորդած մյուս երեք պապերի բոլոր հրամանագրերը, հայտարարելով, թե բռնատիրողների այդ քաոյակը ոչ մի իրավունք չուներ զբաղեցնելու մի այդքան սուրբ պաշտոն։

Հռոմը այդ ժամանակ կառավարում էր Թեոդորան, մի երևելի կուրտիզանուհի, Տոսկանայի կոմս Ադալբերտի հարճը։

Թեոդորան երկու աղջիկ ուներ։ Անառակությամբ նրանք բավական գերազանցեցին իրենց մորը։ Ավագը, Մարոկիան, արտասովոր գեղեցկուհի էր, և Ադալբերտը, լինելով շատ վավաշոտ, չկարողացավ իրեն զսպել ու դարձավ նրա սիրեկանը։

Սուրբ հայր Սարգսին, որը նույնպես անտարբեր չէր կանացի հրապույրների հանդեպ, Մարոկիան շատ դուր եկավ... Հարկ է կարծել, որ Թեոդորայի ավագ դուստրն ու մտերմուհին շատ հպարտ էր քահանայապետի նկատմամբ իր տարած հաղթանակով և անսացել է նրա խընդրանքները։ Այդ ամենից բացի, դա ցույց է տալիս Մարոկիայի բարեպաշտությունը։

Պապից նա ունեցել է շատ երեխաներ (մենք դեռ նրանց մասին կլսենք, երբ նրանք կսկսեն միմյանց փոխարինել սուրբ աթոռի վրա)։ Մարոկիան լավ մոր համարում ուներ։ Դա հաստատվում է թեկուզ նրա-

նով, որ նա իր երեխաներին չէր մերժում այն փաղաքշանքները, որ պարգևում էր հորը։

Այդ դուրեկան պատանյակներն իրենց այնպես էին պահում, որ կարծես մանկուց նրանց հայտնի էին Ալֆրեդ դը Մյուսեյի հետևյալ նշանավոր տողերը.

*Որտեղով անցել է հայրը,*
*Կանցնի և որդին...*

Գեղեցկուհի Մարոկիան, անկասկած, ինչ-որ գաղտնիք գիտեր, քանի կարողացավ երկար ժամանակ պահպանել իր գեղեցկությունը։ Պատմությունը մեզ տեղեկացնում է (ուշադրություն դարձրեք՝ ոչ թե ավանդությունը, այլ ինքը պատմությունը), որ «այդ կուրտիզանուհու հրեշավոր արյունապղծական անառակությունը տևել է երեք սերունդ»։

## ՄԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿ

Այս գլուխը կարելի էր անվանել նաև «Կանանց օգնությամբ բարձր աստիճանների հասնելու արվեստը»։

Հովհաննեսը, Ռավեննա քաղաքի մի սաղմոսասաց, միանձնուհու և քահանայի որդին, գեղեցիկ, բարեգեղ պատանի էր և իր արտասովոր հատկությունների շնորհիվ իսկույնևեթ գերեց սիրո ախտով տառապող Թեոդորայի սիրտը։

Այդ կուրտիզանուհին խրախուսում էր իր դուստր Մարոկիայի սիրային կապերը քահանայապետ Սարգսի հետ, մինչդեռ ինքն էլ արդեն երկար ժամանակ այդ մարդու հետ կապի մեջ էր գտնվում։

Կյանքի հենց այդ շրջանում Թեոդորային հանդիպեց Հովհաննեսը, որը գերեց նրան առաջին իսկ հայացքով։ Ծնողներից չափազանց մակերեսային պատկերացում ստացած լինելով բարոյականության մասին և իմանալով նաև, թե ինչպիսի բարձր դիրք է գրավում պատվավոր տիկինը, պատանին անմիջապես գլխի ընկավ, որ իր ներշնչած կիրքը կարող է իրեն օգնել հասնելու գայթակղեցուցիչ կենսական բարիքների։

Հենց իր՝ պապի սերուհին։ Սատանան տանի, հիանալի՜ առիթ։ Եվ սաղմոսաց Հովհաննեսը չհապաղեց օգտվել այդ հնարավորություններից։

Այդ ժամանակ Թեոդորան դեռևս հզոր էր Հռոմում, և նրա համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում պատանուն Ռավեննայի արքեպիսկոպոսի աստիճան պարգևելը։ Սակայն սիրեկանի հետու գտնվելը նրան դրդում էր տխուր մտորումներ ունենալ հավատարմության մասին և այդ պատճառով, օգտվելով այն բանից, որ սուրբ աթոռը թափուր էր, Թեոդորան գործի դրեց բոլոր հնարները և մի օր էլ իր սիրեկանին մատուցեց... խույրը։

Իսկն ասած, Թեոդորան ստիպված էր կատարել այդ հապճեպ քայլը. հարկավոր էր պատանուն անհապաղ որևէ տեղ փոխադրել, որովհետև Ռավեննայի բնակչությունն այդ սրիկայի-հայտառակորեն վտարել էր քաղաքից իր տուրուդմփոցների և հանցագործությունների համար։

Իր սիրեկանի վերաբերյալ Թեոդորայի կասկածները շուտով հաստատվեցին։

Իր ընտրությունից անմիջապես հետո Հովհաննես X կոչվող նորաթուխ պապը հասկանալով, որ այլևս սպասելիք չունի նշանավոր կուրտիզանուհուց, շտապեց նրան մրցակցուհիներ պարգևել։ Սիրային արկածները և խրախճանքները կլանում էին նրա ամբողջ ժամանակը։ Ամենից քիչ նրան եկեղեցական գործերն էին հետաքրքրում։ Դեռ երբեք եկեղեցին այդպես ինքն իր կամքին չէր թողնված, ամեն մեկը գործում էր իր ուզածի պես։ Պապը վավերացնում էր բացահայտ անօրինականությունները. ասենք, գործերը դրանից բնավ չէին փոխվում։ Երբ ընկնում ես վիհը, ավելի խորը գլորվել դժվար է։ Հովհաննես X-ն իր կյանքը դարձրել էր անընդմեջ կերուխում, եկեղեցին, սակայն, մնում էր այն նույն տեղում, որտեղ նրան հասցրել էին նախորդ պապերը։ Թեոդորայի հովանավորյալն արագ մոտենում էր ողբերգական հանգուցալուծմանը։ Նրան դուր եկավ Մարոկիան, և նա դարձավ նրա սիրեկանը։ Այդ էր այն օրերի մոդան՝ սկզբում մայրը, հետո աղջի՛կը։

Ի դժբախտություն շարաբաստիկ Հովհաննեսի, վավաշոտ Մարոկիան, այդ հանրային սիրուհին, համակվեց Հովհաննեսին անբաժանորեն սիրելու տենչանքով։ Բայց, քանի որ սուրբ հայրն իր գուրգուրանքները հավասարապես բաժանել էր Մարոկիայի, նրա քրոջ՝ իր պաշտոնական սիրուհու, և նրանց մոր միջև, ապա, բնականաբար, միշտ չէր, որ կարողանում էր ծառայել Մարոկիային։ Այդ եռյակ դաշինքից բացի (որի մեջ պապը ոչ մի չարիք չէր տեսնում, քանզի ամեն ինչ մնում էր ընտանիքի ներսում), Հովհաննեսը դեռ ժամանակ էր գտնում դափնիներ ձեռք բերելու նաև ուրի՛շ սիրունիկ աղջիկների մոտ։ Այս ամենի վերջն այն

*եղավ, որ Մարոկիան Թունդ զայրացավ։ Չհաշված բազմաթիվ սիրեկաննե-րի, նա օրինական ամուսին էլ ուներ՝ մի ոմն Գյուի, Տոսկանայի մարկիզ։ Այս իսկապես զարմանահրաշ ամուսնյակը պատրաստակա-մությամբ համաձայնվեց պապ-կնամոլից վրեժ լուծել այն բանի հա-մար, որ նա հավատարիմ չէ իր կնոջը։*

*Նրա գլխավորությամբ և Մարոկիայի հսկողությամբ (որը ծարավի էր համոզվելու, որ իր կամքը ճշտորեն կատարված է) վարձու մարդա-սպանները ներխուժեցին լաթերանյան պալատը, կապկպեցին Հովհան-նես X-ին, նախապես խեղդելով նրա եղբորը և տարաբախտ անառակին նետեցին զնդան ու խեղդեցին փետրաներքնակներով։*

*Փետրաներքնակնե՞րով... Այն մարդուն, որն իր կյանքի մեծ մասն անց էր կացրել փետրաներքնակների՞ վրա։ Արդարև, բախտն երբեմն անգթաբա՞ր կուշտ ծիծաղում է մարդկանց վրա։*

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵՄՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ՍԻՐԵԼ ԿԱՅՍՐՈՒՀՈՒՆ...**

*Լևոն VI-ը, Հովհաննես X-ի հաջորդը, սուրբ Պետրոսի գահը զբա-ղեցրեց ընդամենը մի քանի ամիս։ Այդ ընթացքում ոչ մի արտառոց դեպք տեղի չունեցավ։*

*Բերենք միայն այն պատմական անեկդոտը, որ պատմում է պատ-մաբան Լիուտպրանդը, Կրեմոնի եպիսկոպոսը։*

*Լևոն VI-ի գահակալության ժամանակ Իտալիան կառավարում էր կայսր Բերենգարը, որը ջերմորեն սիրում էր իր կին Վիլլային։*

*Կայսրուհին սիրեկան ուներ՝ մի քահանա, որն անասելի այլանդակ էր. սև էր խլուրդի պես, արջի պես մազակալած, դեմքով և մարմնի կազմվածքով՝ մի իսկական հրեշ։ Ի լրումն դրա, բնությունը նրան պարգևել էր անասելի բթություն։ Այդ ամենից բացի, նա անհագ սեր ուներ գինու նկատմամբ և այն օգտագործում էր անչափ, որի պատճա-ռով էլ, ինչպես բոլոր մոլի հարբեցողները, հաճախ չափազանց բռի մարդ էր դառնում։ Մի խոսքով, դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսին էր այդ գայթակղիչը։*

*Այդ գրավիչ անձնավորությանը շարունակ իր կողքին ունենալու համար Վիլլան նրան էր հանձնարարել դուստրերի դաստիարակությու-նը։ Պատմությունը չի ասում, թե ինչ է նրանց սովորեցրել այդ այլանդա-*

կությունը։ Բայց առանց այդ էլ պարզ է, թե ինչպիսի դաստիարակություն են ստացել դուստրերը։

Մի գիշեր, երբ հավատարիմ սիրեկանը, երկյուղ կրելով, թե կարող է արթնացնել պալատական պահակներին, բոկոտն գաղտագողի մոտենում էր կայսրուհու ննջարանին, միջանցքում սայթաքեց և վայր ընկավ։ Ամենայն հավանականությամբ երեկոյան չափից ավելի էր կոնծել։

Ահաբեկված ծառաները, աղմուկը լսելով, կարծեցին թե գող է մտել ննջարանը և բռնեցին Թշվառ եկեղեցականին։

Վախենալով, որ հանցավոր կապը կմերկացվի, և ձգտելով փրկել իր պատիվը, Վիլլան առանց տատանվելու նրան մեղադրեց իր դստերից մեկին գայթակղեցնելու փորձի մեջ։

Քահանան անհրաժեշտ չհամարեց հերքել իր սիրուհու հայտարարությունը և նույնիսկ մտքով հավանություն տվեց նրա հնարամտությանը. նա հեզաբար հետևեց պահակներին, հաստատ համոզված, թե կայսրուհին կկարողանա շատ շուտով նրան ազատել զնդանից։

Սակայն Վիլլան արդեն վաղուց հագեցել էր իր սիրեկանից և միայն պատեհ առիթի էր սպասում, որպեսզի գլուխն ազատեր զազրելի կղերականից։ Այդ պատճառով էլ խնդրեց արագացնել նրա դատը և, պատրվակ բռնելով, թե այդ Թշվառ այլանդակը կարող է իրենից վրեժխնդիր լինել՝ վիրավորելով իր կայսրական արժանապատվությունը, հասավ այն բանին, որ դատավճիռն արձակելու օրը նրան զրկեցին խոսքից և կատարյալ անվտանգության համար բերանը խցոց մտցրին։

Դատարանը որոշեց հանցագործին գլխատել։

Հավանաբար այդ ձախորդ սիրեկանը, համոզվելով, որ գործը ողբերգական ընթացք է ստանում, ցասումով տառապել է, ցանկանալով դատավորներին պատմել կայսրուհու սիրային արկածների ամբողջ ճշմարտությունը։ Սակայն ուշ է եղել։ Կայսրուհու հրամանը կատարվել է. քահանան դիմելով դեպի կառափնարան, խոսելու հնարավորություն լի ունեցել։

Անեկդոտի բարոյախոսությունն այս է. թագավորները, որոնք իրենց համար նվաճել են ժողովուրդների բախտը տնօրինելու իրավունքը, իսկապես արժանի են այն բարեկամությանը, որ նրանց արժանացնում են քահանայապետերը։

## ԻՆՏԻՄ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

*Ստեփանոս VIII-ի մասին, որը խուլրը ժառանգել էր Լևոն VI-ի մահից հետո, տարեգրություններում ոչ մի էական բան չկա։*

*Որոշ աստվածավախ հեղինակներ պնդում են, թե հոգևորականության բարքերի մաքրության համար մղվող պայքարում նա իրեն դրսևորել է որպես շատ խստաբարո մարդ։ Ինչքան էլ որ ժլատ լինեն Ստեփանոս VIII-ի գահակալությանը վերաբերող մեր տեղեկությունները, մեզ թույլ կտանք կասկածել դրանց արժանահավատության վրա։*

*Հենց Ստեփանոս VIII-ի գահակալության օրոք էր, որ եկեղեցական օրենսդիրներն առաջադրեցին հետևյալ ծիծաղաշարժ դրույթը։*

*«Աշխարհականները երբեք իրավասու չեն մեղադրելու քահանաներին, նույնիսկ եթե նրանց հանցանքի մեջ բռնեն իրենց կանանց կամ դուստրերի հետ շնություն անելիս։ Հավատացյալները նման դեպքերում պետք է մտածեն, որ քահանան ցանկացել է նրանց մերձավորներին օրհնել ավելի ինտիմ իրադրության մեջ»։*

*Ինչպե՞ս է քեզ դուր գալիս այդ ինտիմ օրհնությունը։ Պատկերացրեք մի ամուսին, որը, հանկարծակի տուն վերադառնալով, իր կնոջը գտնում է մի քաջառողջ աբբայի գրկում։ Փոխանակ այդ արտասովոր տեսարանից գորովաշարժ լինելու, նա, անասելի կատաղած, գոչում է.*

*— Սատանան տանի, այս ի՞նչ է, տիկին։ Դուք կարծեմ, գլխիս եղջյուրներ եք դնում...*

*Իսկ աբբան, իր տխուր հայացքն ուղղելով եղջյուրակիր-ամուսնուն բնավ չշփոթվելով, պատասխանում է.*

*— Ինչպե՞ս կարող է ձեր գլուխը սողոսկել այդ պիղծ միտքը։ Ես օրհնո՞ւմ եմ ձեր կնոջը... Անցեք, որդյակս, կողքի սենյակը։ Երբ ես վերջացնեմ օրհնությունս, ձեզ կկանչեմ։*

*Ի՞նչ խոսք, դուրեկան ցուցում է, բայց ո՛չ ամուսնու համար։*

*Սակայն այս կոնդակն ապացուցում է, որ սուրբ հայր Ստեփանոս VIII-ը արդեն այնքան էլ եռանդուն չի պայքարել հանուն հոգևորական բարքերի անաղարտության, ինչպես մեզ ուզում են հավատացնել ուղղափառ գրողները։*

## ՀՈՎՀԱՆՆԵՍ XI-Ը, ԻՐ ՄՈՐ ՍԻՐԵԿԱՆԸ

*Ստեփանոս VIII-ի հաջորդ Հովհաննես XI-ի գահ բարձրանալու հետ մենք նորից ենք հանդիպում կուրտիզանուհի Մարոկիային։*

*Սարգիս պապից Մարոկիան ուներ Օկտավիանոս անունով մի որդի և անհամբերությամբ սպասում էր նրա չափահաս դառնալուն։ Ստեփանոս VIII պապի մահից հետո Մարոկիան, որ տիրում էր հսկայական հոգային տարածություններին և շատ վասալներ ուներ, գործադրեց Հռոմում իր ազդեցությունը, որպեսզի առանց դժվարության աթոռը նվաճի Օկտավիանոսի համար, որը կրկնակի թանկ էր նրա սրտին՝ որպես որդի և որպես սիրեկան։*

*Երբ Օկտավիանոսին սուրբ գահին բարձրացրին, նա տասնութ տարեկան էր։*

*Օկտավիանոսի թուլակամությունը և անվճռականությունն անհանգստացնում էր գեղեցկուհի Մարոկիային։ Ցանկանալով ուժեղ հովանավոր ձեռք բերել, նա որոշեց թունավորել իր ամուսնուն, որը հենց վերջերս այնպես վարպետորեն հաշվեհարդար էր տեսել Հովհաննես X-ի հետ։*

*Մի պապանություն ավելի կամ պակաս՝ ի՞նչ նշանակություն ուներ մի շարք պապերի սիրուհու համար։ Միանգամայն դատարկ բան։*

*Դյուրիչ որբևայրին իր ձեռքը և Հռոմում ունեցած իր ազդեցիկ դիրքը առաջարկեց տագրոջը՝ Լոմբարդիայի թագավոր Գուգոյին։ Թագավորին ամեննևին մտահոգություն չպատճառեց այն հանգամանքը, որ Մարոկիան թունավորել էր իր հորեղբոր տղային. նա լավ տեղյակ էր այդ հետերայի բոլոր արարքներին, որը լիովին հարություն էր տվել անտիկ Լեսբոսի և ոչ պակաս հնագույն Գոմորի բարքերին։*

*Միգուցե այդ թագավորն այնուամենայնիվ տատանվե՞լ է, երբ Մարոկիան հայտնել է նրա հետ ամուսնանալու ցանկությունը։ Ո՛չ, նա խանդավառությա՞մբ է ընդունել այդ առաջարկությունը։ Քարոյականության հարցերում ո՛չ պապերին, ո՛չ էլ քրիստոնեական թագավորներին ծանոթ չէ խղճի խայթը։*

Ամուսնանալով այրի կնոջ ու սեփական ամուսնուն թունավորողի հետ, Գուգոն, գործնական մարդկանց լեզվով ասած, շահաբեր գործ կատարեց։ Այդ դաշինքն ընդլայնեց թագավորի հողերը և ամրապնդեց նրա հզորությունը։ Բայց թագավորը գերագնահատեց իր հնարավորությունները և դա նրան կործանեց։

Մարոկիան ոմն մարկիզ Ադալբերտից (նրա առաջին սիրեկաններից մեկն էր) ուներ Ալբերիկ անունով մի որդի, որը հետագայում Հովհաննես XI-ի հետ եղբայրաբար բաժանում էր իր մոր հրեշավոր փտաբշանքները։

Թագավոր Գուգոն ոչ մի գեշ բան չէր տեսնում այն բանում, որ իր կինը եղել է պապի սիրուհին. հնարավոր է, որ այդ հավատարիմ կաթոլիկը դա իր համար մի հատուկ պատիվ էր համարում։ Բայց Ալբերիկի նկատմամբ նա խորագույն զզվանք էր տածում։

Երբ նրա դիրքն ամրապնդվեց, նա այլևս հարկ չհամարեց իրեն զսպել և Ալբերիկին մի ապտակ պարգևեց. կատաղած Ալբերիկը Հռոմում խռովություն բարձրացրեց և հարձակվեց սուրբ Հրեշտակի ամրոցի վրա։ Թագավոր Գուգոն, անակնկալից գլուխը կորցրած, դժվարությամբ փրկվեց, Հռոմը թողնելով իր հակառակորդին։

Հաղթողն ընդունեց պքսի տիտղոս և փաստորեն դարձավ Հռոմի դիկտատորը։ Հովհաննես XI-ին դարձնելով իր դերին, պապին նա ադատ էր արձակում լոկ ամենից հանդիսավոր տոներին՝ ժամասացություն կատարելու համար։ Ուստի և Հովհաննես XI-ի համար մահն իսկական փրկություն եղավ (նա մեռավ որկրամոլությունից և հարբեցողությունից 936 թվին)։

Ինչ վերաբերվում է Մարոկիային, ապա այդ ամբողջ արկածախնդրությունից հետո Ալբերիկը չէր թողնում, որ նա իր կողքից հեռանա։ Նրանց հանցավոր կենակցությունից ծնվեց արու զավակ, որին մենք շուտով կտեսնենք պապական գահի վրա՝ Հովհաննես XII անունով։ Նա կշարունակի այդ գարշելի ընտանիքի ավանդույթները երրորդ սերնդում։

Հովհաննես XII պապը, մոր գծով իր եղբոր որդին, որոշ իմաստով այդ վավաշոտ կնոջ կողմից բռնաբարվեց շատ ավելի վաղ, քա՛

*կեռական հասունության հասնելը։ Նա թաղվեց անառակության մեջ, և Մարոկիան շուտով մի խանդավառ սիրեկան ունեցավ։*

*Տարիներ անցնելով Հովհաննես XII-ը, եթե չդարձավ ամենից անառակը սուրբ Պետրոսի հետևորդների մեջ, ապա այնուամենայնիվ բոլորին գերազանցեց իր օրդիաններով։ Միանդամայն անհնարին է թվել այն բոլոր կանանց, որոնց այդ պապը գայթակղեցրել է կամ բռնաբարել, քանզի նա չի խուսափել ուժ գործադրելուց, եթե որևէ մեկը համարձակվել է չհնթարկվել նրան։*

*Իր սիրուհիներից ոմանց պապը շրջապատել է մեծագույն ճոխությամբ։ Ասենք, կանանց նկատմամբ Հովհաննես XII պապը եղել է հույժ առատաձեռն։ Ճիշտ է, պապերի և թագավորների առատաձեռնությունն ունի այն առանձնահատկությունը, որ դա անձամբ նրանց համար ոչինչ չարժե։*

*Իր վասալներից մեկի այրուն, որին նա հատկապես բուռն էր սիրում, սուրբ հայրը տվեց մի քանի քաղաքների և վանքերի անօրինությունը։*

*Մի այլ սիրուհու, որը հավանաբար, նույնպես շատ էր դուր եկել նրան, նա նվիրեց սուրբ Պետրոսի եկեղեցուց հանված ոսկե խաչեր և անոթներ։*

*Իտալիայի մեծամեծները, այլևս չցանկանալով սուրբ աթոռի վրա հանդուրժել անամոթ կնամոլին, ուղերձով դիմեցին Օթոնին, Գերմանիայի կայսրին։ Նրանք գրում էին, թե պապը խարդավանքներ է սարքում կայսեր դեմ, որովհետև ինչպես եկեղեցական, այնպես էլ պետական գործերը փաստորեն ղեկավարում է ոչ թե պապը, այլ հերթական սիրուհին կամ սիրեկանը։ Հովհաննես XII-ի ուխտադրուժության օրինակներից բացի, այդ ուղերձում բերվում էին նաև այսպիսի փաստեր.*

*«Հովհաննես XII-ի կենակցուհիներից մեկը՝ Ստեփանետտան, պապի հետ երկարատև կապերից հետո մեռավ՝ մեր աչքի առաջ Լաթերանյան պալատում, ծնելով արու զավակ, որի հայրը, ըստ մոր ասածի, եղել է պապը։ Քահանայապետի կացարանը դարձել է անառակության վայր, հասարակաց կանանց ապաստան։ Նրա հորաքույրն իր մայր Մարոկիայի հետ ընկղմվել է արյունապղծության մեղքի մեջ։ Հռոմի կանայք, ինչպես նաև օտարերկրուհիները, վախենում են մտնել սուրբ առաքյալի տաճարը, որովհետև, նույնիսկ բեմի աստիճանների վրա, այդ հրեշը կանանց, որբևայրիների ու աղջիկների մեջ իր համար զոհեր է գտնում։ Առաքյալների տաճարները խորտակվում են, երկինքը, զնցվելով արցունքներից, հավատացյալներին կործանում է սպառնում»։*

*Օթոնը, ստանալով հռոմեացիների ուղերձը, չնայած նրա մեջ պարունակված մեղադրանքների ողջ ծանրությանը, չուզեց ծայրահեղ միջոցների դիմել։ Կայսրը բավականացավ խիստ նախազգուշացմամբ, որին Հովհաննես XII-ը պատասխանեց նրանով, որ խոստացավ ուղղել իր սխալները (նա դրանք սխալներ անվանեց), որպես արդարացում վկայակոչելով իր երիտասարդ լինելը։*

*Հավատալով պապի կեղծավոր հավաստիացումներին, կայսրը, ի նշան այն բանի, թե մտադիր է նրա հետ լավ հարաբերություններ պահպանել, Հռոմ ուղարկեց Մյունստերի և Կրեմոնի եպիսկոպոսներին։*

*Հովհաննես XII-ը լաթերանում նրանց շատ սիրալիր ընդունելություն ցույց տվեց, բայց արդեն ութ օր անց նրանց ետ ուղարկելով, հրամայեց Հռոմի դարպասները բացել Օթոնի մրցակցի՝ Ադալբերտի (Բերենգարի որդու) առաջ. վերջինս քաղաք մտավ որպես հաղթող և հաստատվեց պատրիկների հինավուրց ամրոցում։*

*Հովհաննես XII-ի դավաճանությունից զայրացած, Օթոնը մի ամբողջ բանակի գլուխ անցած անմիջապես շարժվեց Հռոմի վրա։ Հովհաննեսը և Ադալբերտը խելացի համարեցին չսպասել Օթոնին ու փախան, զավթելով սուրբ Պետրոսի բոլոր գանձերը։*

*«Փրկե՜նք դանձարկղը»,— այդ է միշտ եղել քահանայապետերի նշանաբանը։*

*Կայսեր երևալու պահին Հռոմի բնակչությունը բաժանվեց երկու բանակի. մեկին հարեցին բոլոր աղնիվ քաղաքացիները, մյուսին՝ հլուզակներն ու գողերը։ Ավելորդ է ասել, որ վերջիններս պապի կողմնակիցներն էին։*

*Բազմահազար բանակի երևալը իսկույնևեթ սառեցրեց այդ հրոսակախմբի խանդավառությունը. դիմադրություն ցույց չտալով, նրանք հայտնեցին իրենց հնազանդությունը և երդվեցին անխախտորեն հավատարիմ լինել կայսրին։ Սակայն Օթոնը, որոշելով խստորեն պատժել պապին, շտապեց եկեղեցաժողով հրավիրել։ Ժողովին մասնակցում էին քառասուն եպիսկոպոս, երեսուն կարդինալ, երեք սարկավագ, շատ վանականներ ու աշխարհականներ։ Ինչ վերաբերում է Հովհաննես XII-ին, ապա նա չբարեհաճեց ներկայանալ։ Երբ կայսրն արտահայտեց իր ափսոսանքն այն բանի առթիվ, որ պապը հարկ չի համարել*

պաշտպանվել, եպիսկոպոսներից մեկը բացականչեց. «Նրա հանցագործությունները կատարվել են բոլորի աչքի առաջ, դրանց լուրը հասել է նույնիսկ հեռավոր Հնդկաստանում ապրող ժողովրդին։ Հովհաննես XII-ն իր անունը խայտառակել է»։

Օթոնը պահանջեց, որ մեղադրանքները ձևակերպվեն ավելի հստակ։ Այն ժամանակ եպիսկոպոսները և կարդինալները մեկը մյուսի ետևից սկսեցին թվարկել պապի փոքր ու մեծ մեղանչումները, սրբապղծությյան բոլոր դեպքերը, նրա կատարած բոլոր ծանրագույն հանցագործությունները։

Ըստ եպիսկոպոս Պետրոսի ասածի, Հովհաննես XII-ը ժամասացություն է կատարել հարբած վիճակում, իսկ եպիսկոպոս Նարնին իր աչքով տեսել է, թե ինչպես պապը մեկին սարկավագ է ձեռնադրել... զոմում։

Հովհաննեսը խմել է սատանայի կենացը և թուղթ խաղալիս օգնության կանչել Յուպիտերին, օրդիայի ժամանակ նա ինքն իրեն անվանել է Վեներայի քուրմ։

Նման մեղադրանքները,ժողովի զայրալից աղմուկի ներքո, թափվում էին այս ու այն կողմից։

Եթե մեզ համար եկեղեցաժողովը սովորական ֆարս է, ապա չըպետք է մոռանալ, որ այդ դարաշրջանում եկեղեցաժողովը շատ կարևոր իրադարձություն էր։ Բացի դրանից, մեղադրում էին ոչ թե մի հասարակ անձնավորության, այլ մի մարդու, որ կրում էր հոգևոր բարձրագույն կոչումը։

Պատկերացրեք, որ որևէ ծաղրածու փորձի ծիծաղ պատճառելու համար սիրային գրություններ գրել սուրբ հաղորդության նշխարի վրա։ Կամ հանկարծ որևէ զվարճախոսի մտքով անցնի ձկներին սուրբ ջրի անոթի մեջ կերակրել հնագույն նմուշի կլիղմայի խողովակի օգնությամբ։ Մենք այդ արարքների մեջ կտեսնենք կասկածելի ճաշակի կատակ, բայց այնուամենայնիվ կատակ, և հավանական է, անմեղ կատակ։ Բայց, եթե դրանք եկեղեցու ծառայի արարքներ են՝ ի՞նչ ասել այդ դեպքում։ Մի՞թե նրա մասնագիտությունը ինքնին չի պարտավորեցնում հավատալ նշխարի խորհրդին, ինչպես և հեղուկ պարունակող սրբազան անոթի խորհրդին։ Չէ, այն ժամանակ նման արարաքները դառնում են շատ նշանակալից փաստեր։ Դրանց հիման վրա կարելի է դատել եկեղեցու ծառաների երկերեսանության մասին։

Թվարկելով Հովհաննես XII-ի բոլոր, այսպես ասած, թեթև մեղքերը, եկեղեցաժողովում սկսեցին կարդալ նրա հույժ արտառոց մեղքե-

*րի ցուցակը։ Հովհաննես XII-ը փողով եպիսկոպոսություն է վաճառել, եպիսկոպոսի և քահանայի աստիճանում օծել է անչափահաս երեխաների, իր մոր Մարոկիայի և մորաքրոջ հետ հրապարակավ անձնատուր է եղել շնության. աղքատների տաճարային դրամը բաժանել է կուրտիզանուհիներին. պապական արքունիքը դարձրել է հասարակաց տուն. հանել է Բենեդիկտոսի՝ իր հոդևոր դաստիարակի աչքերը. հրամայել է իր ներկայությամբ կարդինալ Հովհաննեսին խեղդել՝ նախապես ամորձատելով։*

*Եկեղեցաժողովը վերջում հանդիսավոր երդմամբ հաստատեց այդ մեղադրանքների ճշտությունը։*

*Չնայած բոլոր անվիճելի ապացույցներին, կայսրը հրաժարվեց պապին հեռակա դատել և զինվորներին հրամայեց գնալ նրան բերելու։ Շուտով նրանք վերադարձան և զեկուցեցին, թե սուրբ հայրը՝ մարտական հանդերձանքով, թուրը կապած, գլխին սաղավարտ դրած, շրջապատված կուրտիզանուհիներով, գլխավորում է գումակը, որ լեփ-լեցուն է մոմակալներով, խաչերով, թասերով ու եկեղեցական այլ կահ-կարասիով։*

*Հովհաննես XII-ի մեղավորությունը վերջնականապես հաստատված էր։ Սակայն Օթոնը, որ ուզում էր, որ դատը միանգամայն անկողմնակալ լինի, Հովհաննես XII-ին մի նամակ ուղարկեց, առաջարկելով նրան արդարանալ։*

*Ի պատասխան Հովհաննեսը հայտնեց, որ ինքը նզովում է կայսրին։*

*Օթոնը կրկնեց հրավերը, բայց պապն այն առանց պատասխանի թողեց։ Այն ժամանակ կայսրը, հարցնելով եկեղեցաժողովի բոլոր անդամների կարծիքը, հայտարարեց, որ Հովհաննես XII-ը գահընկեց է արվում։*

*Քաջակորով քահանայապետը, սակայն, դեռ չէր ասել իր վերջին խոսքը։*

## ՆՊԱՏԱԿՆ ԱՐԴԱՐԱՑՆՈՒՄ Է ՄԻՋՈՑՆԵՐԸ

*Նպատակը, այսինքն՝ սուրբ գահը, խլեցին Հովհաննեսից։ Իսկ միջոցնե՞րը։ Այժմ մենք կծանոթանանք դրանց։*

*Հովհաննեսին գահընկեց անելուց հետո ժողովուրդը աննկարագրելի խանդավառությամբ ողջունեց Հռոմեացի բահանա Լևոնին։*

Երբ նոր պապ Լևոնը գահ բարձրացավ, կարգը վերականգնվեց, և Օթոնը հնարավոր համարեց իր բանակն ուղարկել ձմեռային կացարանները, իր մոտ թողնելով թիկնապահների մի ոչ մեծ ջոկատ։

Շատ շուտով կայսրը հասկացավ, որ մեծ սխալ է գործել։ Դեռ նոր էր նրա բանակը հեռացել Հռոմից, երբ քաղաքում հուզումներ բռնկվեցին։ Այն քահանաները, որ կայսրից օգնություն էին աղերսել, առաջինն ապստամբեցին Օթոնի դեմ։

Հովհաննես XII-ը, որը մինչ այժմ մունջ էր ձևացել, հանկարծ ասպարեզ դուրս եկավ և սկսեց գործել։ Նրա գործակալները քաղաքում թռուցիկներ տարածեցին, որոնցում գահաղրկված պապը Օթոնի գումարած եկեղեցաժողովը մեղադրվում էր աստվածային և մարդկային բոլոր օրենքները խախտելու մեջ, որովհետև միայն աստծուն է պատկանում պապին դատելու իրավունքը։ Իր հաջորդին անվանելով հակապապ, կայսրին՝ բռնակալ ու կռապաշտ, նա երկուսին էլ իր դեմ հանդես եկած բոլոր եպիսկոպոսների, կարդինալների, քահանաների և մեծամեծների հետ միասին բանադրեց։ Նա, «Հովհաննես XII-ը, ճշմարիտ քահանայապետը, որ գահ է բարձրացել եկեղեցու բոլոր կանոններին համապատասխան, մեղքերին թողություն է տալիս և, հանուն սուրբ Պետրոսի, այն իշխանությամբ, որ նրան տրված է ի վերուստ, հավատացյալներին կոչ է անում բոլոր միջոցներով, երկաթով կամ թույնով, պայքարել նրա թշնամիների դեմ»։ Եվ հռոմեացիներին հրամայում է պաշարել Օթոնի պալատն ու սպանել նրան, որովհետև աստված այդ է կամենում։

Դժվար չէ պատկերացնել, թե նրա կոչն ինչպես է աղդել սնապաշտ ու մոլեռանդ ժողովրդի վրա։ Խոստումների և կաշառքի միջոցով նա ի վերջո հավաքագրեց բավական մեծաթիվ կուսակցություն։

Քահանաները, որ դեռ վերջերս դատապարտում էին Հովհաննեսին, դարձան նրա խանդավառ դաշնակիցները։ 964 թվականի հունվարի 2-ին Հռոմի դանգերի ղողանջի ներքո եկեղեցականների և ամեն տեսակ խարդախների խառնիճաղանջ ամբոխը շարժվեց դեպի Օթոնի պալատը։

Արիւթյունը, հավանաբար, չի եղել այդ հանպատրաստից վայմաբտիկների ամենից գլխավոր արժանիքը։ Քայլելով, նրանք աղաղակում էին կոկորդով մեկ, ինչպես վախկոտներն են անում, երբ ուզում են զսպել իրենց վախը։

Թշնամուն դիմաթափ անելու պարզունակ միջոց։

Դեռևս հեռվից լսելով նրանց ոտաղաղակները, Օթոնն իր թիկնապահների գլուխն անցած շարժվեց նրանց ընդառաջ։

Առաջին իսկ կրակոցը խուճապային սարսափի մեջ նետեց քահանաներին, և, միմյանց վայր գցելով ու ընկնելով, ինչպես թղթե կընգղակորներ, նրանք ետ փախան, անպաշտպան թողնելով զայրույթից կատաղած ղինվորներին։

Մյուս օրը Օթոնը հայտարարեց, թե պատրաստ է ներել խռովարարներին այն պայմանով, որ նրանք հարյուր պատանդ տան և նորից երդվեն։

Պատանդներ տվին, երդում՝ նույնպես։ Ճիշտ է, նրանք միաժամանակ երդվեցին խախտել երդումը առաջին իսկ պատեհ դեպքում, հաստատելով այն հայտնի սկզբունքի արդարացիությունը, թե երդումը միշտ կարելի է դրժել։

## ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ջինակիցների փախուստը Հովհաննես XII-ին ստիպեց նահանջել, բայց նա վենքը ցած չդրեց։

Հռոմի կուրտիզանուհիներն անհամբերությամբ էին սպասում պապի նորից գահ բարձրացնելուն։ Նրանք լավ գիտեին, թե ինչ է նա իրենց համար, և հասկանում էին, որ հենց որ Հովհաննեսը խույրը ձեռք բերի, իշխանությունը նորից կգտնվի իրենց ձեռքում։ Ոգևորված, առանց դադարի նրանք վալում էին գինետները և գուլարջերը, աչ ու ձախ ոսկի էին սփռում, գողերի ու ելուզակների հետ մասնակցում էին զարշելի խրախճանքների և կարճ ժամկետում հավաքագրեցին սրիկաների մի բանակ, որը պատրաստ էր մարտի նետվել առաջին իսկ ազդանշանով։

Օթոնն ինքը նրանց գործելու հնարավորություն տվեց։

Այդ կայսրն բնավ չէր հասկանում հոգևորականության իսկական բնույթը. նա կարծում էր, թե կարելի է լիովին հավատալ նրա խոստումներին, և հավատում էր, որ վերջին երդումը վերջապես կբերի իր վաղուց փափագած հանգիստը։

Եկեղեցականներին երախտագիտության կապանքներով էլ ավելի կաշկանդելու համար նա որոշեց վերադարձնել պատանդներին։ Անելով այդ ողորմությունը և համոզված լինելով, որ իր նկատմամբ նրանք բարեսրտորեն են տրամադրված, նա թողեց Հռոմը և գնաց իր բանա-

ելը։ Հովհաննեսի կողմնակիցների ձեռքերն ազատ արձակվեցին։ Նրանք չհապաղեցին օգտվել Օթոնի հպճեպությունից, և ելուզակների ու հոգևորականների հանդիսավոր ուղեկցությամբ Հովհաննես XII-ը նորից մտավ Հռոմ։

Նա հաստատվեց Լաթարենյան պալատում, որտեղից Լևոն VIII պապին հաջողվեց դուրս պրծնել, և հրավիրեց նոր եկեղեցաժողով, որին հիմնականում մասնակցում էին այն նույն եպիսկոպոսները, որոնք դեռ վերջերս բարձրաձայն մեղադրում էին նրան։ Այս անգամ նրանք խանդավառությամբ ողջունեցին պապ-հաղթողին և, այն նույնպիսի վճռականությամբ քվեարկեցին հօգուտ նրա վերականգնման, ինչպիսի վրճռակամությամբ պատրաստվում էին նրան ոտնատակ տալ, երբ նա դահաղուրկ էր։

Այս անսպասելի շրջադարձը հրաշալի բնութագրում է հոգևորականության ստոր և սրիկական էությունը, ուժեղների առաջ նրա ամոթալի ծռնությունը և թույլերի նկատմամբ անգութ դաժանությունը։

Հովհաննես XII-ը եկեղեցաժողովի դահլիճում երևաց, խոնջացած հենվելով երկու կուրտիզանուհու ուսերին, թեթևաբարո աղջիկների և ամեն տեսակ բաշիբոզուկների մի ամբողջ թափորի ուղեկցությամբ։

Իր կեղտոտ կամակատարների առաջ (որոնց սվելի կսաղեր հարբած թավալ տալ իրենց խորդանոցում, քան մասնակցել նման պերճաշուք խառնաժողովի) սուրբ հայրը կրակոտ ճառ արտասանեց, նշավակելով եկեղեցաժողովը, որ համարձակվել էր նրան տապալել։

Վերջում նա Լևոն VIII-ին զրկեց քահանայական աստիճանից և բանադրանքի սպառնալիքի տակ նրան արգելեց մոտենալ սուրբ քաղաքին։ Որոշ պրելատների ուղեց աստիճանազրկել, բայց նրանք մեղա եկան և այնպես քծնեցին, որ հաջորդ օրը պապը նրանց վերահանգնեց նախկին իրավունքների մեջ։

Անճոռնի դիմակահանդեսն ավարտվեց մղձավանջով։

Սպառնալու համար, բանադրանքը, իհարկե, օգտակար է, բայց խոշտանգումն ավելի համոզիչ միջոց է։ Հովհաննես XII-ը դատապարտեց երկու պատվարժան քահանաների, որոնք նախկինում պահանջել էին գահազրկել նրան, իսկ հիմա, չվախենալով հետևանքներից, չհետեվեցին մնացածների օրինակին և չուզեցին նրան քծնել։ Կտրեցին նրանցից մեկի աջ ձեռքը, մյուսի՝ միայն երկու մատները, բայց փոխարենը, որպեսզի վերականգնվի ոտնահարված արդարությունը, հատեցին նաև քիթն ու լեզուն։

## ՍՐԲԵՐԻ ՇԱՐՔԸ ԴԱՍՎԱԾ ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՀԻՆ

*Մի որոշ ժամանակ Բերենգարն անընդհատ հետապնդում էր արքայադուստր Ադելհեյդային՝ Լոթարի, Փարիզի կոմսի, Ֆրանսիայի դուքսի այրուն, հորդորելով ամուսնանալ իր որդու հետ։*

*Արքայադուստրը գտնելով, որ գահազրկյալ թագավորի զարմը իր համար այնքան էլ փայլուն զույգ չի լինի, դիմեց Օթոնի պաշտպանությանը։ Վերջինս համաձայնվեց նրան ոչ միայն իր պաշտպանության տակ վերցնել, այլև ամուսնանալ նրա հետ։ Օթոնը գիտեր, որ նախքան Լոթարի կին դառնալը Ադելհեյդան սիրային կապերի մեջ է եղել իր հոր՝ Գյուիի հետ։ Բացի դրանից, Օթոնին հայտնի էր, որ, ամուսնանալով, Ադելհեյդան իրեն հատուկ առատաձեռնությամբ իր շնորհներից բաժին է հանել և՛ ամուսնուն, և՛ սկեսրայրին, և նույնիսկ այրիանալով, պահպանել էր հանցավոր կապը Գյուիի հետ, չնայած որ հանգուցյալ ամուսնու անկողինը հերթով տրամադրել է դուրեկան արտաքին ունեցող, և՛ խելքով, և՛ հարստությամբ աչքի ընկնող բազում ազնվազարմ երիտասարդների (պատմությունն ավելացնում է, թե Ադելհեյդան փութաջանորեն պահում էր հաշիվը. բոլոր երիտասարդները համարակալված էին, ինչպես ժամանակակից ավտոբուսները)։*

*Մի խոսքով, Օթոնը շատ լավ գիտեր, որ առաջարկելով նրան իր ձեռքն ու սիրտը, ինքը դառնալու է իր ժամանակի մեծ եղջյուրակիրը։ Բայց արժե՞ արդյոք ուշադրություն դարձնել նման մանրուքների վրա...*

*Տիրուհի Ադելհեյդան որպես օժիտ բերում էր ընդարձակ նահանգներ, իսկ երբ երիտասարդ կամ նույնիսկ տարեց կնոջ օժիտը բաղկացած է ընդարձակ տիրույթներից, տիտղոսավոր անձնավորություններից ո՞վ կհրաժարվի դառնալ այդ հողերի տերը, նույնիսկ եթե դրանք նրա թագին ավելացնեն մի քանի տխմար զարդարանքներ։*

*Ընթերցողը կարող է տարակուսանքի մեջ ընկնել, թե ինչ հարկ կա սուրբ անառակների կյանքին ու գործին նվիրված գրքում տեղ հատկացնել անեկդոտին։ Թույլ տվեք պարզաբանել. մենք օգտվեցինք առիթից՝ ընթերցողին ծանոթացնելու հիասքանչ Ադելհեյդային, որովհետև այդ ազնվաբարո տիկինը, անառակն ու արյունապիղծն ի վերջո կդառնա քահանայապետի սիրուհին և իր ուրույն տեղը կգրավի այն սրբակյացների ցուցակում, որոնք արժանացել են կանոնականացման։*

*Հասկանալով, որ դրախտի ոչ բոլոր բնակիչներն են երաժշտու-*

թյունից հաճույք զգում, հոգատար եկեղեցին ձգտում է իր ընտրյալներին շեփորի, կլարնետի և ուրիշ գործիքների վրա վարժություններ կատարելուց բացի, տրամադրել նաև ոչ պակաս արժանի զվարճալիքներ։

Դե ուրեմն, շնորհակալություն հայտնենք սուրբ եկեղեցուն նրա հոգատարության համար։

## ԾԵԾԿՈՏՈՑ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՎՐԱ

Վերադառնանք Հովհաննես XII-ին։ Ծտ նվաճելով աթոռը, նա երկար անձնատուր չեղավ հաճույքների։ Մի անգամ ինչ-որ հռոմեացի մեծատոհմիկ իր կնոջը բռնեց պապի հետ... ինտիմ օրհնության պահին։ Հովհաննեսը բավականին հաճախ էր զվարճանում նման եղանակով. սովորաբար բարեպաշտ ամուսինները շվարած փախչում էին դեպքի վայրից, գերադասելով աչքերը փակել ի վերուստ իրենց տրված բարեբախտության դիմաց։

Այս անգամ Հովհաննես XII-ը, հավանաբար, հանդիպել է երդվյալ անաստվածի։ Բայց զուցե և բախտավոր ամուսինը պարզապես չի ճանաչել Հովհաննեսին, հաշիվ թե պապն այդ պահին լրիվ տոնական զգեստների մեջ լիներ։ Ինչևիցե, այդ խանդոտ մարդն ամբողջ ուժով թրխկացրել է Հովհաննեսի գլխին, և նա կորցրել է գիտակցությունը։

Տուժածին տեղափոխեցին պատրիարքական պալատը, և ութ օր հետո նա աստծուն ավանդեց իր բարեպաշտ հոգին (964 թվականի մայիսի 20-ին)։

Քահանաները տարածեցին, թե իբր Հովհաննես XII-ը մարտնչել է դևի հետ և նրա գլխի վերքը առաջացել է սատանայի եղջյուրի հարվածից։

Ի՞նչ կա որ, այդ աննշան մանրուքը զուրկ չէ որոշ ճշմարտանմանությունից։

Հռոմեացիները շատ լավ էին հասկանում, որ հիմա իրենք չեն խուսափի Օթոնի պատժից (հաշիվ թե որևէ մեկը հավատա նրանց նոր երդումներին), և սկսեցին եռանդով պատրաստվել քաղաքի պաշտպանությանը։ Իսկ պապ հռչակեցին կարդինալ Բենեդիկտոսին։

Օթոնն իր բանակով իրեն երկար սպասել չտվեց և շուտով պաշարեց Հռոմը։

Քնակչությունը պաշտպանվում էր մեծ խիզախությամբ։ Նույնիսկ սուրբ հայրը, բարձրանալով բարիկադի վրա, շանթ ու որոտ էր արձակում, նզովելով ավազակներին... Ավա՜ղ, նրա նզովքը ոչ մեկին փոքր իսկ վնաս չհասցրեց։

Դիմադրությունը շարունակվեց այնքան ժամանակ, քանի դեռ սովը չէր հյուծել պաշարվածների ուժերը։ Հռոմեացիները դարպասները բացեցին Օթոնի և Լևոն VIII-ի առաջ։

Եպիսկոպոսները, որոնք արդեն կրկնակի դավաճանել էին և՛ Հովհաննեսին, և՛ Լևոնին, բոլորովին չշփոթվելով, այս անգամ էլ արտահայտեցին իրենց հնազանդությունն Օթոնին և նորից միաձնաբար պապ ճանաչեցին Լևոն VIII-ին։

Այդ եկեղեցականները, իսկապես, զարմանալի ճկո՜ւն ողնաշար ունեն....

Բենեդիկտոսի գլխին անծեքներ էին թափում այն մարդիկ, որոնք դեռ շատ վաղուց նրան գահ էին բարձրացրել։

Ամբողջ եկեղեցաժողովի ներկայությամբ, որ հրավիրվել էր Լևոն VIII-ին վերականգնելու համար, նոր պապի հրամանով Բենեդիկտոսը պետք է իր վրայից պոկոտեր եկեղեցական զգեստները և փուվեր գետնին։

Նրան աքսորի դատապարտեցին։ Եվ պապ Լևոն VIII-ը կարողացավ հանգիստ շունչ քաշել։

Այսպես վերջացավ խառնակությունը պապական աթոռի վրա։ Լևոն VIII-ը և Հովհաննես XII-ը հերթով հաղթում էին միմյանց։ Հակառակ Լաֆոնտենի առակի, երրորդ այծը, բանջարանոց ընկնելով կորցրեց ամեն ինչ։ Խե՜ղճ Բենեդիկտոս։

## ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԵՐԻ ՎՐԵԺԸ ԵՎ ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐԸ

Աստվածները, ինչպես հայտնի է, շատ վրիժառու են։ Մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ պապերը, լինելով լոկ աստծո տեղապահներ, նրանցից շատ հեռու են գնացել։ Նրանք կարողանում են իրենց վրիժառության այնպիսի նրբինություն հաղորդել, որոնց առաջ սովորական դահիճները ընկրկում են։ Այս բնագավառում պապերն իսկական արտիստներ են։

Լևոն VIII-ի մահից հետո, նրա վերականոնումից մեկ տարի անց, կայսր Օթոնի համաձայնությամբ պապ ընտրվեց Հովհաննես XIII-ը։

Գահ բարձրանալով նա բոլորովին մոռացավ իր նախորդների ճակատագիրը։ Սնափառությամբ համակված նա սկսեց տառապել վեհության մոլուցքով և այնպես էր ծաղրուծանակի ենթարկում բոլորին, փոքրից մինչև մեծը, որ շուտով իր դեմ հանեց Հռոմի ամբողջ բնակչությանը՝ աստիճանավոր աղնվականներից սկսած մինչև արհեստավորները։ Եվ նրան վռնդեցին հավերժական քաղաքից։

Շարժման գլուխ կանգնած էին Ռոմբերդոս դուքսը, քաղաքի ոստիկանապետ Պետրոսը և համքարությունների ավագները։

Տանմամեկ ամիս նստելով Կապուայում, Հովհաննես XIII-ը եկավ այն եզրակացության, որ Հաննիբալը պարզապես չափազանցրել է այդ քաղաքի հմայքը։ Իհարկե, Կապուայում ապրելն ավելի քիչ էր հաճելի, քան Լաթերանյան պալատում։

Վերջապես երջանկության մի շող լուսավորեց աքսորյալի ձանձրալի օրերը. Կալաբրիայի ելուզակները, որոնց նա կաշառել էր, գաղտագողի մտան Ռոմբրդոսի տունը, որին այդ ժամանակ Հռոմեացիները հյուպատոս էին ընտրել, և շուտով Հովհաննեսին հայտնեցին, թե իրենց պարտքը լիովին հատուցել են։

Սուրբ Հայրը նախատեսել էր, որ Ռոմբրդոսի մահը ճակատագրական հարված կհասցնի ամբողջ շարժմանը։ Առաջնորդից զրկվելով, Հռոմեացիները հուսահատությամբ և սարսափով էին սպասում Օթոնին։

Հարկ է նշել, որ կայսրին ձանձրացրել էին Հռոմի մշտական երկպառակությունները ու անկարգությունները. Հռոմեացիները չափազանց հաճախ էին նրան ստիպում կատարել հոգնեցուցիչ անցումներ, իսկ երկարատև ճանապարհորդությունները վատ էին ազդում նրա նյարդային համակարգի վրա։

Խուճապահար քաղաքացիները որոշեցին, որ իրենց ոչ մի այլ բան չի մնում անել, քան վերադարձնել Հովհաննես XIII-ին և նրան վերականգնել աթոռի վրա. ընդ որում նրանք տակավին հույս ունեին, թե կայսեր վարյությի սարսափը կղսպի նաև պապին։ Ինչպիսի՞ միամտություն։ Ոչխարներին պահպանելու համար վագրին մտցնե՞լ փարախ, վախենալով գայլից, որն ուր որ է պիտի հարձակվի։

Ննդյան օրերի նախօրյակին Օթոնը ժամանեց Հռոմ և ամբողջ օրը նվիրեց աղոթքների և բարեպաշտական գործերի։ Իսկ հաջորդ օրը կայսեր կարգադրությամբ տասներկու մեծապատիվ քաղաքացիներ և ոստիկանապետ Պետրոսը հանձնվեցին պապի ողորմածությանը։

Սուրբ Հայրը աղաւթքով տվեց իր քաւմին։ Հայտարարելով, թե հանցագործների համար կախաղանի վրա մեռնելը շատ մեղմ պատիժ է, նա այդ թշվառներին հրեշավոր խոշտանգումների ենթարկեց. առաջինը սարսափելի խոշտանգման ենթարկեցին ոստիկանապետ Պետրոսին. կտրեցին նրա քիթը, շրթունքները, այնուհետև կապեցին Կոստանդինի հեծյալ արձանին, և դահիճները նրա երեսին մարդկային կղկղանք քսեցին։ Ապա, մերկացնելով, նստեցրին էշի վրա, զանգակներ կապեցին գլխին ու ոտքերին։ Այդ վիճակում նրան պտտեցրին քաղաքի փողոցներով, ծեծելով ճիպոտներով և, ի վերջո, արնաթաթախ, զնդան նետեցին։

Իր անզուսպ կատաղության մեջ այդ նողկալի պապը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ Ռոփրիդոսը, սպանված լինելով նրա վարձկանների ձեռքով, խուսափել է խոշտանգումներից։ Ի վերջո, նա իրեն հաճույք պատճառեց, հրամայեց գերեզմանից հանել Ռոփրիդոսի դիակը և ցեխի մեջ կոլոլ տալ, որից հետո դիակը նետվեց քաղաքի աղբանոցը։

## ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՆԶ

Քանի դեռ Լեհաստանը հեթանոսական երկիր էր, շարունակում էր ծաղկել. Հովհաննես XIII-ի օրոք քրիստոնեություն ընդունելով, երկիրը աղքատության դատապարտվեց։

Ահա թե ինչ է պատմում տարեգրությունը այդ ողբալի կերպափոխության մասին։ Գահաժառանգ իշխան Մեշկոն, որ կուրացել էր յոթ տարեկան հասակում, հանկարծ նորից սկսեց տեսնել այն բանից հետո, երբ գլուխը սափրեցին։

Բնականաբար, առեղծվածային այդ դեպքը հրաշք հայտարարվեց։ Երկրի բոլոր ծայրերից կանչված գուշակները միաբերան ասացին, թե Մեշկոյի գահակալության օրոք Լեհաստանը կլուսավորվի մե՛ծ լույսով։

Լեհ ազնվականությունը հաստատ հավատում էր գուշակությանը, որովհետև դրա մեջ տեսնում էր Լեհաստանի երջանիկ ու փառավոր ապագան։ Սկզբում նրան ուժեղ հուսախաբություն համակեց. դեռ հաղիվ գահ բարձրացած, Մեշկոն հարևանների հետ ճակատամարտելիս

Մի շարք մեծ պարտություններ կրեց. բացի դրանից, կուրորեն հավատալով գուշակների կանխատեսություններին և իր երջանիկ բախտացույցին, նա անտեսում էր պետական գործերը և, պալատում հարճերի հետ փակվելով, ուրախանում էր ու խրախճանքներ սարքում՝ սպասելով մեծ լույսի։

Միաժամանակ անց նմանօրինակ զբաղմունքներից հյուծված իշխանը, համոզվելով իր անզորության մեջ, լեհաստանով մեկ սուրհանդակներ ուղարկեց, պարգև խոստանալով նրան, ով իրեն կբուժի և ժառանգ ունենալու հնարավորություն կտա։

Հռոմեացի մի քանի քահանաներ, որոնք այդ ժամանակ արդեն լեհաստան էին թափանցել, անմիջապես ներկայացան և, իբրև ճշմարիտ մարգարեներ, հավաստիացրին իշխանին, թե նրա ցանկությունը կկատարվի հենց որ նա հրաժարվի հեթանոսությունից, քշի հարճերին և ամուսնանա քրիստոնուհու հետ։

Տգետ ու սնահավատ Մեշկոն դյուրավ ենթարկվեց հորդորանքին, մանավանդ որ խոստացան նրան կնության տալ Բոհեմիայի Բոլեսլավ թագավորի աղջկան՝ անասելի գեղեցիկ մի կույսի։

Իշխանը դեսպաններ ուղարկեց Բոլեսլավի մոտ, նրանց հանձնարարելով ասել, թե պատրաստ է անմիջապես գիրկը բացել քրիստոնեության և քրիստոնեուհու առաջ։

Ցավալի հավատափոխության հետևանքներն իսկույնևեթ իրենց զգալ տվին, հենց որ Մեշկոն ամուսնացավ Բոհեմիայի թագավորի դստեր հետ... Երիտասարդ իշխանը, ինչպես խոստացել էր, հրաժարվեց իր նախնիների հավատից և դարձավ ջերմեռանդ քրիստոնյա։

Նա հրամայեց կործանել կուռքերը, որոնց այնպես ջերմեռանդորեն առաջ երկրպագում էր, բռնագրավեց այն հսպատակների ունեցվածքը, որոնք համառորեն շարունակում էին կառչել հին հավատին, և կարգադրեց նրանցից մի քանիսին այրել խարույկի վրա։

Այդ խարույկների բոցն արդյոք այն «մեծ լույսը» չէ՞ր, որ ըստ պատգամախոսների գուշակության, պետք է լուսավորեր լեհաստանը։

Իր հերթին պապն էլ իզուր ժամանակ չէր վատնում։ Նա իր պատվիրակներին հապշտապ ուղարկեց լեհաստան, որպեսզի երկիրը կցի իր աթոռին. նշանակեց երկու արքեպիսկոպոս, հիմնեց յոթ եպիսկոպոսություն, բազմաթիվ եկեղեցիներ, աբբայություններ։ Մի խոսքով, ամբողջ երկիրը լցրեց վանականներով ու քահանաներով։ Եկեղեցականների բանակը սփռվելով լեհաստանի ամբողջ տարածքում, սկսեց հօգուտ առաքելական գահի, փութաջանորեն հավաքել հարկերը։

*Մոլեռանդ Մեշկոն, որ կույր գործիք էր պապի ձեռքին, նոր եկեղեցիներ կառուցելու համար սուրբ աթոռին նվիրաբերեց խոշոր գումարներ։ Կարճ ասած, դժբախտ Լեհաստանը կողոպտեցին, թալանեցին, քայքայեցին հանուն Հռոմի արքունիքի շահերին։*

*Թա՞նկ վճարեց Լեհաստանն իր իշխանի մկրտության համար.*

## ԲԱՐԻ ՆՇԽԱՐՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ... ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

*Երբ Լեհաստանի ամբողջ հարստությունն անցավ քսենձների ձեռքը, իսկ հողերը զավթեցին վանքերն ու եպիսկոպոսությունները, նյութապես քայքայված գյուղացիները, աղքատացած ազնվականների առաջնորդությամբ, սկսեցին կողոպտել եկեղեցիները։ Հանցավոր բան է, կասեն ոմանք։ Բայց երբ դուք խարդախին ստիպում եք վերադարձնել իր հափշտակած քսակը, մի՞թե խղճի խայթ եք զգում։*

*— Օգնությո՜ւն, օգնությո՜ւն,— աղաղակեցին վախեցած քահանաները, գգալով, որ բռնել են իրենց կոկորդից։*

*— Գալի՞ս եմ,— պատասխանեց Բրժետիսլավը, Բոհեմիայի դուքսը, և չուշացավ երևալ։*

*Բայց երբ դուքսն իր աչքով տեսավ, թե ինչպիսի անհամար հարստություններ են կուտակվել եկեղեցիներում ու վանքերում և միաժամանակ տեսավ սոված, մոլեգնած ժողովրդին, սկսեց հաշվարկ կատարել։*

*«Ո՞ր կողմն է ներկայումս ավելի ուժեղ։ Գյուղացիները։ Բայց, մյուս կողմից, քահանաները հեքիաթային հարստություն ունեն։ Ես կրկնակի ապուշ կլինեի, եթե դուրս գայի վերջիններիս դեմ։ Գործել ընդդեմ քահանաների՝ մեծ մեղք է, բայց և նրանց օգնելը մեծ հիմարություն կլինի»։*

*Պրագայի արքեպիսկոպոսը համաձայնվեց Բրժետիսլավի հետ, և նրանք մշակեցին նոր, ինքնուրույն վարքագիծ։ Նրանք սկսեցին զավթել թագավորության խոշորագույն քաղաքները, և առաջին հերթին Գնեզնոն, Լեհաստանի մայրաքաղաքը։ Նստելով այդ քաղաքում, Բրժետիսլավի զորքերը սկսեցին թալանել տեղի եկեղեցիները։ Գնեզնոյի տաճարը համարվում էր Լեհաստանի ամենահարուստ տաճարներից մեկը։ տաճարի գլխավոր հպարտությունն էին կաղմում ոսկյա խաչը և երեք գրակալները, որոնք զարդարված էին թանկարժեք քարե-*

րով։ Բրժետիսլավը և նրա եպիսկոպոսներն անմիջապես դրանք իրենց ձեռքը գցեցին։

Այդ նույն տաճարում էին գտնվում նաև երանելի Ադալբերտի մասունքները, որոնք շատ դուր եկան երկու բոհեմացիներին։ Սակայն տեղական հոգևորականությունը, հոտ առնելով, որ Բրժետիսլավը սրբի վրա աչք ունի, որոշեց նրա հետ չար խաղ խաղալ։ Մի գիշեր, միանգամայն գաղտնի, քսենձները հանեցին Ադալբերտի մասունքները և տեղը դրին Գաուդենցիուսի եղբոր մարմինը։ Նա ևս սուրբ է եղել, բայց իր աստիճանով՝ ղգալիորեն ցածր։

Բրժետիսլավը և Պրագայի արքեպիսկոպոսը Հենգափոխությունը չնկատելով, երջանկացած, տարան կարծեցյալ Ադալբերտին։ Իսկ լեհ քսենձները ծիծաղում էին խաբված սրիկաների վրա։ Այդ հաջողակ գործողության պատճառած ուրախությունը որոշ չափով փարատեց այն վիշտը, որ նրանք ապրում էին մնացած հարստությունները կորցնելու պատճառով։ Քսենձները շատ լավ էին հասկանում, թե ինչ է պատահել բարեպաշտ հանգուցյալին. իմանալով նրա գինը, վնաս չէին կրել։

Մի խոսքով, ավազակների միջև կատարյալ համաձայնություն է եղել, և նրանք բաժանվել են որպես բարեկամներ... իսկ ո՞ւմ շնորհիվ։ Շնորհիվ Գաուդենցիուսի։

Կարելի է հաստատ ասել, որ բարի մասունքները ևս ամրապնդում են բարեկամությունը։

## ԵՐԿՈՒ ՀՐԱՇՔ

Առանց հրաշքի՞ կրոն չի լինի։ Տգետ ու թեթևամիտ մարդկանց երևակայությունը գերբնական թվացող փաստերով թունավորելու միջոցով են քահանաները կարողանում իրենց տիրապետությունը հաստատել նրանց բանականության վրա և, իբրև կասկած չհարուցող ճշմարտություններ, նրանց վզին փաթաթել անմտագույն դոգմաներ։

Հովհաննես XIII-ը շատ էր գնահատում այդ ղենքը։ Ժամանակակից տարեգիրները պատմում են մի շշմեցուցիչ հրաշքի մասին, որ նա ինքն է կատարել։ Օթոնի շքախմբին պատկանող մի աղնվազարմ պարոն կարծում էր, թե իր մեջ սատանա է մտել։ Այդ թշվառականը մոլուցքը բռնելիս չանգռտում էր իր դեմքը, կծոտում ձեռքերի և ոտքերի մատները։

Կայսրը, իր սիրեցյալի վիճակից անհանգստացած պապին խնդրեց հիվանդի պարանոցին հագցնել սուրբ Պետրոսի նշանավոր շղթան, որն իբր օժտված էր սատանա խափանելու ղորությամբ։ Սուրբ Հայրը համաձայնվեց, նախապես ամեն պատրաստություն տեսավ և հրավերներ ուղարկեց։

Հասարակության բազմաթիվ ընտրյալների ներկայությամբ սկսեցին հիվանդի պարանոցին մեկը մյուսի ետևից հագցնել մի քանի շղթաներ, որոնք նման էին սուրբ Պետրոսի շղթաներին, բայց ոչ մի արդյունք չեղավ։ Սակայն, հենց որ հիվանդին դիպան «իսկական» շղթայով՝ թանձր ծուխ պատեց այդ դիվոտին և նրա դլխավերևում սոսկալի ճիչեր լսվեցին։ Ոչ ոք չէր կասկածում, մանավանդ ցավագարը, թե այդ վայնասունը բարձրացնում է սատանան ինքը։

Ներկա գտնվողները միաբերան աղաղակեցին, թե հրաշք տեղի ունեցավ։ Հետաքրքիր է, թե նրանք ինչ կասեին, եթե ներկա լինեին որևէ ժամանակակից ձեռնածուի սեանսի։

Երկրորդ հրաշքը։ Հովհաննես XIII-ը մտցրեց զանգերը խաչակընքելու անհեթեթ սովորությունը։ Եթե խաչակնքելու նպատակը մեղքերը չավելն է, ապա հարց է ծագում, թե ի՞նչ մեղք կարող է ունենալ մետաղի կտորը։ Բայց եթե կրոնը ալատադրվի բոլոր այն անհեթեթություններից, որոնցով նա լցված է, ապա քահանաներն անելու բան չեն ունենա։

Ըստ որոշ առասպելների, սուրբ Հովհաննեսի եկեղեցու մեծ դանգը լաթերանում օժտված էր սատանաներին փախուստի մատնելու ղորությամբ։ Մի վանական պնդում է, թե ինքը նման բանի ականատես է եղել։

«Մի երիտասարդ աղջիկ,— պատմում է նա,— իր մոր ուղեկցությամբ եկեղեցի էր գնում։ Այն ժամանակ, երբ նրանք բարձրանում էին եկեղեցու դավթի աստիճաններով, հնչեցին զանգերը, որոնք հռոմեացիներին աղոթքի էին հրավիրում։ Խեղճ աղջիկը նույն պահին սարսափելի դալարումներով ընկավ գետնին, և ես նկատեցի, թե ինչպես խավարի ոդին, նորածին մանուկի տեսքով դուրս սողալով նրա դգեստի փեշի տակից, արագորեն անէացավ օդում»։

Մի՞թե ուսանելի չէ նման հրաշքը։ Անարատ երիտասարդ աղջիկը պատարագի է գնում։ Բարձրանալով աստիճաններով, ընկնում է հատակին, գալարումների մեջ կծկվում է այն պահին, երբ հնչում է զանգը։ Ամեն ինչ վկայում է, որ նա ընկնավոր է... կամ, ավելի ճիշտ, ընկնավոր է եղել... ինն ամիս առաջ։

Բայց ինչի՞ց է բարի վանականը կռահել, որ «նորածին մանուկը» որ դուրս է սողացել աղջկա փեշի տակից, խավարի ոգի է եղել։ Մենք ավելի շուտ հակված ենք մտածել, որ նա փոքրիկ հրեշտակ է եղել և փոխանակ դիմելու դեպի մյուս աշխարհը, դիմել է դեպի գիրկն իր մոր, որը սիրով նրան կուրծք է տվել։ Ճիշտ է, այս վարկածը որոշ ստվեր է գցում երիտասարդ աղջկա անմեղության վրա... Լա՛վ, եկեք չկատակենք։ Այդ պատմությունը միամիտ է, այնպես չէ՞։ Եվ այնուամենայնիվ, եթե դա ամենայն մանրամասնությամբ պատմի որևէ եկեղեցական, որ պարզ պատկերացում ունի իր հոտի մասին, հավատացյալ մարդիկ պարտքը կհամարեն այդ հրաշքին հավատալ։

## ԿՈՐԻ՛Ր ԻՄ ՏԵՂԻՑ

Երբ Բենեդիկտոս VI-ը սուրբ գահի վրա փոխարինեց Հովհաննես XIII-ին, շատ չանցած Հռոմի խիզախ քաղաքացի Կրեսչենտիուսը ժողովրդին կոչ արեց ապստամբել պապերի և թագավորների լծից հայրենիքն աղատագրելու համար։

Կրեսչենտիուսը երազում էր վերաստեղծել Հինհռոմեական հանրապետությունը, բայց նրա պլանները ի սկզբանե դատապարտված էին ձախողման։ Եկեղեցական տիրապետությունը, ժողովրդին մատնելով տգիտության, ճնշում էր ամեն մի խիզախ միտք, այն ամենը, որ թեկուզ փոքր-ինչ շեղվում էր եկեղեցական կանոններից։ Եվ Կրեսչենտիուսի աղնիվ գաղափարը չէր կարող իրականանալ։

Որպեսզի ժողովուրդը ղենք վերցներ, հարկավոր էր ամենից առաջ նրան ազատել Բենեդիկտոս VI-ին տված երդումից։ Կրեսչենտիուսը և շարժման մյուս ղեկավարներն առաջարկեցին սպանել պապին։ Բենեդիկտոսին, որ նույնպիսի մի ճիվաղ էր, ինչպես նրա վատթարագույն նախորդները, խեղդեցին իր պալատում։

Անվիճելի է, որ հենց արդարությունն ինքն էր թելադրում դիմել այդ միջոցին։ Բայց հենց այդ ժամանակ խանդավառ հայրենասեր Կրեսչենտիուսը վարանում էր սպանելու հրաման արձակել, թեև անկեղծորեն հավատում էր, որ այդ քայլից է կախված ապստամբության հաղթանակը։ Փրանկոնոս անունով մի քահանա շտապեց հրապարակել չարագուշակ հրամանը, բայց ամենևին էլ ոչ հանուն ժողովրդի հաղթանակի. այդ

*չարագործը փափագում էր գրավել Բենեդիկտոսի գահը։ Հրապարակում գնդակս լսվում էր հրացանակոթերի չրխկթրխկոցը, երբ մոլեգնոտ Փրանկոնոսը նախուժեց Լաթերանյան պալատը և խույրը դրեց գլխին։*

*Ամբարտավանությունը հաջողությամբ պսակվեց. ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց, և նա պապ հռչակվեց Վոնիփակիոս VII անունով։*

*Նոր քահանայապետը, կուրտիղանուհու և սարկավագի այդ որդին, որ ղազրելի բնաղդներ էր ժառանգել, իր կյանքը նշանավորեց գարշելի հանցագործություններով։*

*Ճիշտ է, նրան գրեթե չհաջողվեց օգտվել իր առաջին չարագործության պտուղներից։ Հզորագույն ֆեոդալական խմբավորման ներկայացուցիչները, Տուսկանելլի կոմսերը նրան մահու և կենաց պատերազմ հայտարարեցին, իսկ նշանավոր մագնատները ոչ մի բանի առաջ կանգ չառան իրենց նպատակին հասնելու համար։*

*Վոնիփակիոսն իր բազմաթիվ հակառակորդների դեմ մղած պայքարում ուժասպառ եղավ։ Ամեն րոպե վախենալով ծուղակից, մեջքին իջնելիք դանակի հարվածից կամ թույնից, նա որոշեց փախչել Հռոմից։ Իհարկե, ամենից առաջ նա հոգ տարավ, որ դատարկ ձեռքով ճանապարհ չընկնի։ Կողոպտելով սուրբ Պետրոսի եկեղեցին և դրանով իսկ իր համար շքեղ ու անկաշկանդ կյանք ապահովելով Վոնիփակիոսը ղաղտագողի նավ մտավ և գնաց Կոստանդնուպոլիս։*

*Ձավթած գանձերը՝ գանձանակները, խաչերը, մոմակալները, անոթները և եկեղեցական մյուս սպասքը հարկավոր էր դրամի վերածել։ Վոնիփակիոսը կարող էր իր ապրանքը վաճառել վերագնորդներին, բայց այդ կեղտոտ սրիկան հաշվել էր, որ ավելի եկամտաբեր կլինի, եթե ինքը զբաղվի վաճառքով, և ահա նրան տեսան Կոստանդնուպոլսի փողոցներում եկեղեցու կահ-կարասիքը անամոթաբար վաճառելիս։*

*Նա Արևելքում ապրեց մի քանի ամիս անընդհատ նվիրվելով խրախճանքների իր սիրեցյալների և սիրեցյալուհիների հետ, իսկ երբ «եկամուտները» ցամաքեցին, Իտալիա վերադարձավ։ Մենք նրան շուտով նորից կտեսնենք սուրբ աթոռի վրա, որը նա կնվաճի, սպանելով իր մրցակից Բենեդիկտոս VII-ին։ Եվ Հռոմը, որ ընտելացել էր ամեն տեսակ սարսափների, կսարսռի Վոնիփակիոս VII-ի չարագործություններից։*

## ՀՈՎԱՆԱՎՈՐԸ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐՅԱԼԸ

Տոսկանելլիների հզոր տոհմը մեծ դժվարությամբ կարողացավ Վոնիփակիոս VII-ի հաջորդացու գտնել։

Առաքելական գահի համար նկատի ունեին Կյուլնի աբբաներից մեկին, որն ազնիվ մարդ էր և, հետևաբար, միանգամայն ոչ պիտանի այդ պաշտոնի համար։ Ընդ որում, այդ եղակի անձնավորությունը, կայսր Օթոնի և կայսրուհի Ադելաիդայի հորդորանքին հակառակ, վճռականապես հրաժարվեց խույրից։ Դոմնոս անունով մի ուրիշ քահանա, պակաս փափկանկատ, շտապեց հայտնել իր համաձայնությունը, բաղմեց գահին և... անսպասելիորեն վախճանվեց։

Դոմնոսի մահից հետո Վոնիփակիոս VII-ը փորձեց դավթել աթոռը, բայց տեղի տվեց Բենեդիկտոսի առաջ, որին դարձյալ պաշտպանում էին հուն Տոսկանելլիները։ Նման բարձր հովանավորության շնորհիվ Բենեդիկտոս VII-ը դարձավ Հռոմի հարյուր երկուերորդ պապը։

Իր կաստայի ներկայացուցիչներին բնորոշ արատներն ունենալուց բացի, նա աչքի էր ընկնում անհավատալի երկերեսանությամբ։ Խստակյաց ճգնավոր ձևանալով, նա բոլորի աչքից թաքնվելով իր պալատի ննջարաններում, տրվում էր ղղվելի օրգիաների։ Սակայն պապական կացարանի պատերն այնքան խուլ չէին, որպեսզի պահեին պապ-անառակի գաղտնիքները։

*

*

Կարճատև և հաղթական պատերազմ մղելով հույների դեմ, որոնք փորձում էին Կալաբրիա ներխուժել, Օթոնը ծննդյան տոներին Հռոմ վերադարձավ՝ լոկ նրա համար, որ հանգստացնի վախից դողացող Բենեդիկտոսին։ Բանն այն է, որ նախկին քահանայապետ Վոնիփակիոսը, իր կողմնակիցների հետ, անխնա աւերակում էր խղճուկ պապին, ինչպես և Հռոմի ամբողջ բնակչությանը։

Վախը, ինչպես հայտնի է, վատ խորհրդական է։ Մշտական վախը, որ զգում էր Բենեդիկտոսը, նրան մղեց դեպի մի վայրենի արարք, որը նա կատարեց իր հովանավորի պաշտպանությամբ։

Իր սանի թախանձանքով նորին մեծություն կայսր Օթոնը որոշեց Քրիստոսի ծննդյան տոնին պերճաշուք խրախճանք սարքել։ Նա ընթ-

րիքի հրավիրեց Հռոմի երևելիներին, ինչպես նաև Հարևան քաղաքների մագիստրոսների և պատգամավորների։

Ամեն ինչ արված էր թագավորական հյուրերին ուրախացնելու համար։ Շքեղորեն սպասքավորված սեղանը լի էր նրբընտիր ուտեստներով, թանկագին համեղ ճաշերը փոխարինում էին մեկը մյուսին, ընտիր գինիները հոսում էին առատորեն։ Ընթրիքի թունդ պահին մարդատոյաց տիրակալը նշան տվեց։ Երաժիշտները սկսեցին ռազմաշունչ նվագը, կարծես դրոհի կոչվող քայլերգ նվագել, և կոշիկները թխկթխկացնելով դահլիճ մտավ զինվորների մի ջոկատ։ Երաժիշտները լռեցին, զինվորները թրերը մերկացնելով թիկնապահների պես տեղ գրավեցին ամեն մի հյուրի կողքին, և մեղյալ լռության մեջ սպան, հանելով մի երկար ցուցակ, սկսեց հականե հավանե թվել յուրաքանչյուրին, ով մահվան էր դատապարտված։

Հանդիսավոր խնջույքից դուրս բերված վաթսուն ղոհեր տեղնուտեղը մահապատժի ենթարկվեցին։

Ի միջի այլոց, այդ վայրենի ներկայացման ժամանակ կայսրն ու պապը շարունակում էին ղրուցել սեղանի շուրջը նստած, ասես ոչինչ չէր պատահել, ծիծաղելով հյուրասիրում էին մնացած հյուրերին։

## ՎՈՆԻՓԱԿԻՈՍԻ ՆՈՐ ՍԽՐԱՆՔՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ Օթոնը և Բենեդիկտոսը զվարճանում էին որքան ուժ ու կարողություն ունեին, Վոնիփակիոսը, որ ձգտում էր իշխանության ու հարստության, նվիրատվությունների ու խոստումների միջոցով կողմնակիցներ էր հավաքագրում և ջանադրաբար բանակ կազմում։

Այդ սրիկայի հիշատակի համար վիրավորական կլիներ մտածել, թե նա թեկուզ մեկ րոպե մտքով անց է կացրել կատարել իր խոստումները։ Վոնիփակիոսը նույնիսկ հատուկ տեսություն էր մշակել, թե ապագայում ինչ կերպ պետք է վերացնի իր պարտատերերին։

Օթոնը, համոզվելով, որ իր բարեկամ Բենեդիկտոսը ծննդյան օրերի վայրենաբար հաշվեհարդարից հետո միանգամայն հանգստացել է, սկսեց ղբաղվել իր բանակը համալրերով ինչպես Հռոմում, այնպես էլ նրա շրջակայքում։ Հույները, միավորվելով սարացիններին հետ, նորից

հարձակվեցին Կալաբրիայի վրա, և Օթոնը անհապաղ շարժվեց նրանց դեմ։ Բայց առաջին իսկ ընդհարման ժամանակ իտալացիները փախուստի դիմեցին։ Ճակատամարտը տեղի էր ունենում ծովափին։ Օթոնը պատահաբար ծովափի մոտ գտնվող նավակի վրա ցատկելու ժամանակ վիրավորվեց։ Նեռը թունավորված էր, և նա մի քանի ամիս անց մեռավ։

Նետն արձակել էր ոչ այլ ոք, քան... Վոնիփակիոսը, որն ամոթալի չէր համարում մարտնչել անհավատների շարքերում։

Բենեդիկտոսը երկար չապրեց իր հովանավորից հետո, նա նույն մարդու ձեռքից խոցված ընկավ 983 թվի հուլիսին։

«Իսկ այս անգամ արդեն տեղապահի աթոռը վերջապես կընկնի Փրանկոնոսի ձեռքը»,— ինքն իրեն ասում էր Վոնիփակիոսը։

Ավա՜ղ, այս անգամ էլ նա սխալվեց իր հաշիվներում։ Պապ դարձավ Պավիայի եպիսկոպոսը, որ գահ բարձրացավ Հովհաննես XIV անունով։

Բայց Վոնիփակիոսը թույլ չտվեց նրան աթոռին երկար նստել։ Ոլ մի բանի առաջ կանգ չառնելով, նա գործի դրեց իր մնացած գանձերը ամեն տեսակ խուժանի կաշառելու համար և շուտով մեծաքանակ զորք հավաքելով, գարձավ Լաթերանյան պալատի լիիշխան տերը, նախապես ձերբակալելով Հովհաննես XIV-ին։ Նետելով սուրբ հրեշտակի եկեղեցու ներքնատունը, Վոնիփակիոսը չորս ամիս հետո նրան սովամահության դատապարտեց։

Իսկ Հովհաննեսի կողմնակիցներին (եթե այդպիսիք գտնվեին) ահաբեկելու համար Վոնիփակիոսն իր գոհի դիակը, տոնական զգեստները հագին, կապեց պալատի ամրոցի վերամբարձ կամրջին։

Դա բոլորովին ավելորդ էր և կարող էր միայն վնասել Վոնիփակիոսին, որովհետև, ըստ պատմաբան Պղատինիոսի, պապը, որ սովամահ էր եղել, անմիջապես ժողովրդի մեջ խղճահարություն ու համակրանք առաջացրեց։

Հենց որ գահը թափուր մնաց, Վոնիփակիոսն առանց հապաղելու իրեն պապ հռչակեց։ Հաշվի առնելով հռոմեացիների վերաբերմունքը, նա ոչ մի պատրանք չէր տածում և հասկանում էր, որ միայն դաժան ճնշումների ու ահաբեկման միջոցով կկարողանա պահել իշխանությունը։

Մի ամբողջ տարի քաղաքի փողոցներն արյունով էին ներկված։ Վոնիփակիոսը չէր խղճում ո՛չ թշնամիներին, ո՛չ բարեկամներին. նրա աչքին բոլորը թշնամիներ էին։ Դեռ ավելին, նա հատկապես ատում էր

իր կողմնակիցներին, որովհետև չէր կարողանում մոռանալ այն գումարները, որ ծախսել էր նրանց վրա։

Հռոմին սարսափ ու հուսահատություն պատեց։ Բոլորին տագնապում էր նույն ճակատագիրը. բոլոր խավերի մարդիկ ամեն օր իրենք իրենց հարցնում էին, թե արդյոք չի՞ հնչել իրենց վերջին ժամը։ Սովորական դահիճներից, այսպես ասած, օրինական մարդասպաններից բացի, Վոնիփակիոսն ուներ վարձկանների մի հրոսակախումբ, որն առանց որևէ դատի հաշվեհարդար էր տեսնում նախատեսված զոհերի հետ։

Իսկ Վոնիփակիոսն ինքը՞, ինչո՞վ էր նա զբաղվում այդ անընդմեջ կոտորածների ժամանակ։ Զվարճանում էր։ Զոհերի ողբը խլացնում էին նրա կուրտիկանուհիների և հովանավորյալների անպարկեշտ ու անամոթ երգերը, որ լսվում էին նրա ննջասենյակներից։

Առաբելական գահ բարձրանալուց տասներեք ամիս անց Վոնիփակիոսը աստծուն ավանդեց իր բարեպաշտ հոգին, և հրեշտակների կառաքը շեփորեց անսխալական կուսակալի համբարձումն առ երկինք։

## ՀԵՏՄԱՀՈՒ ՎՐԵԺ

Ավելորդ է ասել, որ հռոմեացիները բնավ չէին ուզում սուգ հայտարարել Վոնիփակիոս VII-ի մահվան առթիվ։

Նա մեռավ հանկարծակի։ Արդյոք կաթվածահա՞ր է եղել, ինչպես պնդում են շատ տարեգիրներ։ Շատ հավանական է. նրա ապրելակերպը միանգամայն նպաստել էր այդպիսի մահվան համար։ Եթե հիշենք նրա որկրամոլությունը և անընդհատ խրախճանքները կանանց հետ. ասենք, տղամարդկանց հետ ունեցած կապերի մեջ էլ պակաս բավականություն չէր գտնում։ Իսկ ուրիշ հեղինակներ վճռականորեն հայտարարում են, թե Հռոմեացիները պապից աղատվել են արագ ներգործող թույնի օգնությամբ։

Ստույգ հայտնի է մի բան. համընդհանուր ցնծությունը սահման չուներ։ Իմանալով, որ այդ հանրահայտ չարագործը մաքրել է իր հաշիվները կյանքի հետ, հասարակ մարդիկ և երևելի անձինք հավաքվեցին սուրբ Պետրոսի եկեղեցու մոտ։ Քահանայապետի դիակը հանեցին դագաղից և մի լավ ծեծեցին, այնուհետև, այլանդակված հանգուցյալի

վրայից դեն նետելով սավանը, քարշ տվեցին փողոցներով մինչև Մարկոս Ավրելիոսի հրապարակը։ Այնտեղ նրան կախեցին գլխիվայր, դարձնելով թքելու թիրախ։

Հաջորդ օրը որոշվեց նրա համար արժանի թաղում կազմակերպել՝ հրեշին նետելով կեղտաջրերի հոսանքի մեջ, սակայն մի քանի քահանաներ, քրիստոնեական եկեղեցու պարագլխին այդ անօրինակ խայտառակությունից փրկելու համար, գիշերը դիակը քաշեքաշ տարան և թաղեցին քաղաքից դուրս։

## ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դառնանք XI դարին, որը բնութագրվում է իր գոհհիկ սնոտիապաշտություններով, վայրենի մոլեռանդությամբ և բարեպաշտության դիմակով քողարկված այլանդակությամբ։

Ամբողջ քրիստոնեական աշխարհում սարսափով էին սպասում X դարի վերջին։ Բազում մարգարեություններ այդ տարեթվի հետ կապում էին աշխարհի վերջը և «ահեղ դատաստանի» գալը։ Հոգևորականությունը, բնականաբար, փորձում էր դրանից ամեն տեսակ եկամուտներ կորզել։

Մոտիկ և անխուսափելի վախճանի նախօրեին մարդիկ բացառապես մտածում էին ապագա անդրշիրիմյան կյանքի, մեղքերի թողության մասին, որ կարող էր գթասրտել արդար դատավորին։ Ամենահայտնի ժլատները եկեղեցուն էին տալիս իրենց հարստությունները, իսկ քահանաները, իրենց հերթին, ամեն կերպ հոտին համոզում էին ձեռք քաշել երկրային բարիքների կործանարար բեռից, բարիքներ, որ, ինչպես ավետարանում ասված է, դրախտ տանող ճանապարհի գլխավոր արգելքներն են։

Երբ սարսափելի տարին անցավ, շատերն իրենց հիմարացած զգացին և դառնորեն ափսոսում էին, որ խելացնոր սարսափն իրենց դրրդել է եկեղեցիներին ու վանքերին տալ ամբողջ ունեցվածքը, բայց արդեն ուշ էր։ Կղերը երբեք չի վերադարձնում այն, ինչ, թեկուզ սխալմամբ, իր գրպանն է ընկել։ Ընդհակառակը, հոգևորականության գբաղմունքն հենց այն է, որ հիմարացնի անհեռատես մարդկանց, որոնք պատրաստ են հավատալ ամենաանհեթեթ մարգարեություններին։

Այդ ժամանակ մարդիկ հավատում էին մոգությանը, կախարդությանը, աստղագուշակությանը. ամեն մի անհավատություն ընկալվում էր որպես միանդամայն ռեալ բան։ Հարկ է ասել, որ քահանաները հետ չէին մնում իրենց հոտից։ Մոգությունն այնպիսի ժողովրդականություն էր վայելում, իսկ տգիտությունն էլ այնքան մեծ էր, որ շատ եկեղեցականներ իրենք էին լրջղվում ամեն տեսակ դիվայնություններով, եկեղեցական խորհուրդները փոխարինելով զուշակությամբ ու կախարդությամբ։

Անհաբեկված ժողովուրդը հավատում էր, որ դևը տապալել է ծուն և վրա է հասնում հակաքրիստոսի թագավորությունը։

Գրիգոր V-ին փոխարինած Սեղբեստրոս II-ի մասին համառորեն ասում էին, թե նա դաշինք է կնքել սատանայի հետ։ Սեղբեստրոս պապը ժամանակակիցներին զարմացնում էր իր մաթեմատիկական ու փիլիսոփայական գիտելիքներով, որոնց համար նա իբր պարտական էր դևին։ Որոշ տարեգիրներ լրջորեն պնդում են, թե Սեղբեստրոսը Սևիլիայում մի զաղրելի գիրք էր գտել, որը պարունակում էր կախարդական նշաններ, որոնց օգնությամբ նա լյուցիֆերին ստիպում էր իրեն ենթարկվել. թե դևը պապին խոստացել է փրկել մահից, եթե նա հրաժարվի պատարագ կատարել Երուսաղեմի տաճարում։

«Սեղբեստրոսը, շարունակում է տարեգիրը,— հույս ունենալով երկարացնել իր կյանքը, երբեք ուխտագնացություն չկատարեց դեպի սուրբ հողը և շարունակում էր ղբաղվել սրբապիղծ կախարդությամբ։ Սակայն նա զգում էր, թե ինչքան խաբուսիկ են դևի խոստումները։ Մի անգամ, երբ սուրբ Հայրը ժամերգություն էր կատարում Երուսաղեմի տաճարում, դևը հանկարծակի երևաց բեմում՝ նրա աչքի առաջ և, ճանկելով ոսկե խաչը, ժամատան նշանավոր զարդարանքը, նրանով պապին մի այնպիսի հարված հասցրեց, որ նա վախճանվեց մի քանի րոպե անց»։

Այս նաիվ առասպելը շատ ճիշտ բնութագրում է սնոտիապաշտության ուժը, որ սպառնում էր կրոնական ֆորմուլաներով ու ծեսերով արդեն հիմնավորապես խավարամած ժողովրդի մեջ մարելու բանականության վերջին կայծերը։

## ՔԱՐԵՐԸ ԼԱԼԻՍ ԵՆ ԵՎ... ՊԱՐՈՒՄ

*Սեղբեստրոս II-ի մահից հետո քահանաները չհապաղեցին իրենց շահի համար օգտագործել պապի և դևի միջև եղած համաձայնության առասպելը։*

*Նրանք լուր տարածեցին, թե իբր Սեղբեստրոս պապը մեռնելուց առաջ զղջացել է, որ այդպիսի պայմանագիր է կնքել, և միրձավորներին խնդրել է իր դիակը դնել չորս սպիտակ ձի լծած սղակաուքի վրա, ավելացնելով, որ ձիերն իրենք կանգ կառնեն այնտեղ, որտեղ պետք է իրեն թաղել։*

*Սեղբեստրոս պապի կամքը ճշտորեն կատարվել է. ձիերն իբր թե կանգ են առել Լաթերանյան տաճարի առաջ, որտեղ պապի մարմինը հողին է հանձնվել տվյալ ուիթին պատշաճ պատիվներով։*

*«Այդ ժամանակից սկսած,— գրում է տարեգիրը,— ավելի քան վեց դար շարունակ, ամեն անգամ քահանայապետի մահվան նախօրյակին, ասես կանխազգալով նրա վախճանը, Սեղբեստրոսի ոսկորները չխկչխկում են, և նրա տապանաքարը ծածկվում է արյունոտ արցունքներով»։*

*Իսկապես որ սոսկալի՜ է։ Քարերը լալիս են արյունոտ արցունքներով, և ոսկորները, ինչպես դոմինոյի քարեր, չխչխկում են շիրիմի մեջ, կարծես ասում են խաղացողներին. «Դե, ո՞ւմ է բաժին ընկել կրկնակի վեցնոցը։ Թող սկսի»։*

*Համաձայնվեցեք, որ նման բաներին պետք է ընտելանալ, քանզի ամեն օր չէ, որ դրանք տեղի են ունենում, իսկ եթե այն էլ պատկերացնենք, թե աշխատանքի ժամանակ ինչ է զգում գերեզմանային որդը, տեսնելով, թե ինչպես է համեղ պատառը ցնցվում, ապա սկսում է պարե՞լ։ Այնժամ նույնիսկ անխելք որդը սարսա՛փ կզգա։*

*Մյուս կողմից, ինչպիսի՜ երանելի հանգիստ է խոստանում այդ հրաշքը ուզածդ սուրբ հորը, նրան, որ տխուր հայացքն ուղղում է դեպի ապագան, դողդողալով սպասելով վերջին ժամին... Նրա համար բավական է, որ քնելուց առաջ ճմռելով գնա Սեղբեստրոս պապի գերեզմանը և, եթե այնտեղ խաղաղ է, վերադառնա տուն և իրեն հանգիստ նվիրի գիշերային հաճույքներին։*

*Ասենք, հայտնի չէ ոչ մի դեպք, որ սուրբ հայրերից որևէ մեկն*

*օգտվեր մարդարեությունից և ցանկանար իմանալ, թե Քահատապրի անողոք աստվածուհին երբ է կտրելու նրա փուչ կյանքի թելը։*

*XVII դարի կեսերին Լաթերանյան պալատի վերակառուցման ժամանակ բացվել է պապի մարմինն ամփոփած այդ սիրահռչակ գերեզմանը, որը, ըստ ավանդության, նենգավոր դևը ժամանակ առ ժամանակ վեր է ածել պարասենյակի։ Ինչպես առասպելն է պատմում, մարմինը կարծես դեռ կենդանի լիներ և անուշ հոտ էր արձակում («Օ-լյալյա,— կգոչեր մեր Դավրոշը,— քանի ուշ չէ, հարկավոր է այստեղից ծլկել»)... բայց հանկարծ լույսի շողն ընկավ մարմնի վրա, նրա միջից մի դժոխային բոց ժայթքեց՝ լուսավորելով շուրջը, և մարմինը մոխրացավ, մնաց լոկ արծաթե խաչը և թանկարժեք քարերով զարդարված քահանայական մատանին...*

*Դժվար չէ կռահել. բոցը սատանան ինքն է, որը հիմարի պես թույլ է տվել, որ իրեն փակեն Սեղբեստրոսի դագաղում, և ամբողջ դարեր պապյանս է խաղացել Սեղբեստրոսի ոսկորններով։ Հասկանալի է, որ երբ բացել են խավար ղնդանը, նա շտապել է դուրս սրծնել։ Սակայն ամեն մի բարեպաշտ քրիստոնյա պարտավոր է շնորհակալ լինել սատանայից. չէ որ, պահպանելով սուրբ հոր մասունքները, սատանան այնպես է արել, որ աստծո գործը հեշտ լինի, երբ նա ահեղ դատաստանի օրը սկսի մեռելներին հարություն տալ։*

*Այդ դեպքից հետո Սեղբեստրոսի գերեզմանի շուրջն այլևս ոչ մի արտասովոր բան տեղի չի ունեցել։ Քահանաներն այս անգամ էլ չհապաղեցին հրաշքների այդ դադարը բացատրել կամ հանգուցյալ պապի դյութանքով, կամ սատանայի անհետացմամբ։ Իսկ XVIII դարում, երբ Մոնտեսքյոն, Վոլտերը և Դիդրոն հրապարակեցին իրենց նշանավոր աշխատությունները, որոնք կանխանշեցին Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, եկեղեցական պատմաբան Մուրատորին հրապարակեց Սեղբեստրոսին նվիրված իր ներբողը։ Ամբողջ երկի ընդհանուր տոնը բնութագրում է հետևյալ թեզը. «Սեղբեստրոսի գերեզմանի հրաշքը, ինչպես և նրա հետագա դադարը ոչ-ոքի չպետք է զարմացնի։ Չէ որ սրբերի գերեզմանների քանի-քանի՜ սալեր, որոնք ժամանակին յուղ ու մանանա են արտաթորել, հիմա նման հրաշքներ չեն կատարում»։*

*Բայց ինչո՞ւ գնալ դեպի XVIII դարը։ Հենց վերջերս, Ֆրանսիայի դևպուտատների պալատում ուսուցման վերաբերյալ օրինագիծը քննարկելու ժամանակ, Պոլ Բերտը ամբիոնից կրոնական մի շարք գրքերից մեջբերումներ կատարեց, որոնք նվիրված են դաստիարակության հար-*

ցերին, կատարելով իրենց անբարոյականությամբ զայրացուցիչ այդ մեջբերումները, նա դիմելով աջերին, բացականչեց՝

— Կխիզախե՞ք արդյոք հավանություն տալ նման հրամաններին ու խրատներին՝

Կղերականներից մեկն անմիջապես պատասխանեց.

— Մենք իրավունք չունենք քննարկելու այն, ինչ գրել են եկեղեցու հայրերը՝

Այդ հայտարարությունը ծափահարություններո՛վ դիմավորեցին աջ ծայրահեղականները՝

Այսպիսով, եկեղեցականների դիրքորոշումը շատ հարյուրամյակների ընթացքում ամենևին էլ չի փոխվել. ամենամշակութային և հրեշավոր հավաստիացումները մեր լուսավոր դարում ընդունվում են անվերապահորեն, չեն վիճարկվում՝ Ավելի՛ վատ նրանց համար՝

Առաջադիմությունն ընթանում է վիթխարի քայլերով, և հեռու չէ այն ժամանակը, երբ ռազմատենչ եկեղեցին, որ քարացել է իր կոպիտ սնոտիապաշտության և մոլեռանդության մեջ, հաղիվ նշմարելի մի կետ կթվա անցյալ ժամանակների հորիզոնի վրա՝

## ՄԵՂՈՒՆԵՐԸ ԳՈՐՇԱԿՆԵՐ

Սեղբեստրոս II-ին փոխարինած Հովհաննես XVII պապի մասին քիչ բան է հայտնի՝ Մեզ հասած տեղեկությունները վերաբերում են միայն նրա վրեժխնդրությանն ու դաժանությանը. այս առումով նա ոչնչով չէր տարբերվում իր շատ նախորդներից՝ Սուրբ աթոռը նա զբաղեցրել է ընդամենը հինգ ամիս՝

Նրա օրոք մի զվարճալի միջադեպ է տեղի ունեցել. Շալոնում մի վանական, Լևտարդոս անունով, հույս ունենալով դյուրահավատ հիմարներից զրամ շորթել, իրեն ոգետես հռչակեց. հավաքելով ժողովրդին, նա ասաց, թե գիշերը, երբ քնած է եղել դաշտում, նրա հետ հրաշք է կատարվել. մեղուները, իբր թե խոցելով նրա մարմինը, մտել են հետանցքից, և թշշոցով ու ֆշշոցով դուրս թռչելով բերանից, հայտնել են, թե նրան սպասում են այնպիսի մեծ գործեր, որոնք վեր են հասարակ մարդկանց ուժերից. այդ պահից ի վեր նա իր մեջ աստվածային վերին օրինություն է զգացել՝

Նրան հավատացին։ Նա սկսեց մարգարեություններ անել և շատ չուտով մի ուժեղ կուսակցություն ստեղծեց, որն սկսեց պահանջել, որ նրան քաղաքում եպիսկոպոսական ամբիոն տրամադրեն։

Շալոնի եպիսկոպոս Ժեբուինը տհանելով, որ գործը լուրջ ընթացք է ստանում, հարկ համարեց միջամտել։ Նրան հաջողվեց փարատել այդ ոգեշնչի շուրջն ստեղծված լուսապսակը։ Հուսախաբ և վրդովված ժողովուրդն սկսեց այնպես հալածել վանականին, որ այդ ողորմելի սրիկան իրեն նեռեց չրհորը։

Մի այլ վանականի գլխում ցնդած միտք էր հղացել՝ Վերգիլիոսին, Հորացիոսին և Ցուվենալին մարգարևներ հռչակել։ Թափառելով Իտալիայում, այդ վանականն ամենուր հավատացյալներին խորհուրդ էր տալիս հետևել նրանց պատգամներին, որպեսզի արժանանան մշտնջենական կյանքի։

Սկզբում նրան ևս ուղեկցում էր հաջողությունը, նույնիսկ նրա հետևորդների մի ամբողջ աղանդ գոյացավ։

Երբ Հովհաննես XVII-ը լսեց նրանց մասին, հրամայեց անխնա ոչնչացնել ավազակախմբի բոլոր անդամներին, որտեղ էլ որ հայտնվելու լինեին այդ կրոնախաբերը։

Սպանությունը կաթոլիկների համար ultimo ratio (ծայրահեղ փաստարկ) էր, երբ պետք է լինում մարդկանց վզին փաթաթել իրենց դոգմանները։

## ՍՐԻ ՄԻ ՀԱՐՎԱԾՈՎ

Հովհաննես XVII-ին փոխարինեց Հովհաննես XVIII-ը, որը սուրբ աթոռի վրա մնաց հինգ տարի։ Շատ ձանձրալի կլիներ մեջբերել նրա բոլոր այլանդակությունների ցուցակը։

Անցնենք Բենեդիկտոս VIII-ին, որը խույրն ստացավ Տոսկանելլի կոմսերի դավադրության շնորհիվ։

Բենեդիկտոս VIII-ի գազանային դաժանությունը հենց սկզբից իր դեմ հանեց ժողովրդին։ Նա դեռ չէր հասցրել գահ բարձրանալ, երբ նրա շուրջը սկսվեց հյուսվել դավադրությունների խիտ ցանց։

Նույնիսկ հոգևորականության մեջ մի ուժեղ կուսակցություն ստեղծվեց, որին հաջողվեց նոր պապ հռչակել Գրիգորին։

Բենեդիկտոսը եռանդուն կերպով դիմադրում էր։ Մի որոշ ժամա-

նակ նա մնաց որպես Լաթերանյան պալատի տեր, բայց Գրիգորը նրանից ոչ պակաս վճռականությամբ էր պաշտպանում իր իրավունքները և ի վերջո վռնդեց մրցակցին, Բենեդիկտոսը փախավ Գերմանիա, հույս դնելով Հենրիխ II-ի օգնության վրա, որն ստացավ առանց մեծ դժվարության, Հենրիխ II-ը բանակ հանդերձեց, և Բենեդիկտոսը հասավ Լոմբարդիա։ Վախեցած հռոմեացիները նոր ներխուժումից խուսափելու համար, պատգամավորներ ուղարկեցին Բենեդիկտոսի մոտ, նրան աղերսելով վերադառնալ Լաթերանյան պալատ. Գրիգորին ոչինչ չէր մնում, քան շուտափույթ հեռանալ Հռոմից։

Մի քանի օր անց Հենրիխ II-ը մի ինքնակոչի դեմ խոշոր հաղթանակ տարավ և, որպեսզի իրեն միահեծան տիրակալ հռչակի, իր տիկին Կունիգունդայի հետ ժամանեց Հռոմ՝ հանդիսավոր օծության։

Պապն այդ հանդիսությունից օգուտ քաղեց. բացի նրանից, որ բարձրացավ նրա հեղինակությունը, նա ամրապնդեց այն արտոնությունները, որ քահանայապետերին տրվել էին դեռևս Կառլոս II-ի և Օթոն III-ի օրոք։

Հենրիխ II-ը դեռ նոր էր դուրս եկել Իտալիայից, երբ սարացիններն ներխուժեցին Տոսկանա։ Բենեդիկտոսը եպիսկոպոսներին հանձնարարեց հանդերձավորել զինվորներին և, անցնելով զորքի գլուխ, նետվեց մարտի։

Ճակատամարտը տևեց երեք օր։ Սկզբում քրիստոնյաներն անհաջողություն անհաջողության հետևից էին կրում, բայց ի վերջո դրավեցին հակառակորդի բոլոր դիրքերը։ Դե, իհարկե, նրանց շարքերում մարտնչում էր նաև ինքը՝ տեր աստվածը։

Մենք բնավ չենք ուզում նսեմացնել մեծն Սաբաովթի ծառայությունները, բայց, ճիշտն ասած, այն ժամանակից ի վեր, որ նա հայտնվել է երկրագնդի վրա, նրա դրոշի ներքո և հանուն նրա կատարված ռազմական արշավանքները երբեմն միանգամայն աղետավոր վախճան են ունեցել։ Հարկավոր չէ ողորմած աստծուց պահանջել ավելին, քան նա կարող է տալ։ Միանգամայն ակնհայտ է, որ տարաբախտ ծեր Սաբաովթը բոլորովին գլուխը կորցնում է, երբ ասենք, երկու թագավոր, երկուսն էլ ուղղափառ, միմյանց պատերազմ են հայտարարում սոսկ այն պատճառով, որ նորին մեծություն Իքսը, ընդունելով թագավոր Զետի դեսպանին, փոշտացել է յոթանասունհինգ անգամ, իսկ անտաշ դեսպանը հարբուխից տառապող արքային երկար կյանք է ցանկացել միայն յոթանասունչորս անգամ։

Բոլոր այս նրբություններից աստվա՞ծ էլ կարող է գլուխը կորցնել...

*Պատկերացրիք աստծո վիճակը, երբ մի գեղեցիկ առավոտ իր ստացած փոստառաքումների մեջ գտնում է երկու աղոթք հետևյալ բովանդակությամբ.*

## ԱՌԱՋԻՆ ԱՂՈԹՔ

*Ողորմած և սիրեցյալ տե՛ր իմ աստված,*

*Ես պատրաստվում եմ իմ քաջարի զորքերով զավթել իմ հորեղբորորդի Չեթի թագավորությունը, ապավինում եմ քո օգնությանը, ինձ ո՛ւժ պարգևիր՝ ոչնչացնելու նրա բոլոր զինվորներին...*

*Քո որդի և ստրուկ թագավոր Իքս և այլն, և այլն...*

## ԵՐԿՐՈՐԴ ԱՂՈԹՔ

*Արարի՛չ իմ,*

*Իմ սերը դեպի քեզ անեղր է, ուստի և լսիր աղոթքս. իմ հորեղբորորդի Իքսը, մի երիտասարդ տղա, ցանկացել է ուժերը չափել իմ զորքերի հետ. Իմ սիրտը կցնծա, եթե ճակատս զարդարվի դափնեպսակով. Եղիր գթասիրտ և ինձ հաղթանակ շնորհիր այդ պարծենկոտի նկատմամբ. Թող կատարվի իմ աղոթքը, բայց ոչ ավելի շուտ, քան երկու բանակները մենամարտում կոչնչացնեն միմյանց, որովհետև ինչքան շատ են սպանվածները, այնքան մեծ է հաղթանակը.*

*Միշտ քոնը... Քո ողորմածությանը ապավինող... Միշտ քո մասին մտածող... Թագավոր Չեթ և այլն և այլն...*

*«Սատանան տանի,— ասում է Սաքաովիրը,— ի՞նչ անեմ, որ երկու միապետներին գոհացնեմ. Այդ անասունները, բազմանալով երկրագնդի վրա, ինձ փակուղու մեջ են գցում, հույս դնելով ամենաողորմյանս վրա. Աստվա՜ծ վկա, Թող իրենք գլուխ հանեն. Չե՞մ խառնվելու նրանց գործերին».*

*Ինչ էլ որ լինի ելքը, պարտվածն իրավունք ունի՞ մեղադրելու աստծուն, որ նա չի անսացել իր աղոթքները.*

*Իհարկե, ո՛չ.*

Դուք տեսնում եք, թե մենք ինչպիսի անաչառությամբ ենք գնահատում Սաբաովթի դրությունը։ Բույլ տվեք ավելացնել նաև, որ ճակատամարտը տեղի ունեցավ, և, ըստ բոլոր նշանների, աստված չափով մեղավոր չէ սարացինների դեմ սուրբ հոր զինվորների տարած հաղթանակում։

Ասենք, քահանայապետն էլ, հավանաբար, իր ուղմի գործերում շատ էլ հույս չէր դրել աստծո օգնության վրա. նա նախապես իր զորքերը դասավորեց մարտական կարգով, ափն ամրացրեց հրաձիգներով, հակառակորդի նավերին խանգարելով լրացուցիչ ուժեր հասցնել։

Հեթանոսները սովորաբար իրենց թշնամիներին պարզապես գերի են վերցնում։ Իսկ քրիստոնյաները պրանով չեն գոհանում կրոնը պատվիրում է ի նշան անհավատների դեմ տարած հաղթանակի արյունալի մեծ խրախճանք սարքել։ Եվ, նույնիսկ երբ սարացիններն էին, քահանայապետի զորքերը հրի ու սրի մատնեցին ամբողջ երկրամասը։ Հսկայական ուղմավարի բաժանումը տեղի էր ունենում հենց մարտի դաշտում։ Իրեն պապին բաժին ընկավ, պատկերացրեք... սարացինների առաջնորդի կինը, որը մի զարմանահրաշ դեղեցկուհի էր։

Սուրբ Հայրը հայտնի էր որպես առաջնակարգ անառակ։ Հավանաբար նա նախապատվություն էր տալիս պատանիներին, բայց, այնուամենայնիվ, չէր հրաժարվում և գեղեցիկ սեռից։ Բայց նա ոչ մի համբույր չքաղեց չքնաղ սարացինուհու շուրթերից։ Այդ ճիլաղի մեջ դաժանությունն ավելի զորավոր էր, քան վավաշոտությունը։ Երկու ձեռքով բռնելով հսկայական սուրը, նա մի հարվածով գլխատեց գեղուհուն։

Դրանից հետո սուրբ Պետրոսի տեղապահը խուզարկեց դիակը, գոհին զարդարող չալմայի վրայից պոկեց ոսկե օղակապը և թանկարժեք իրերը...

## ԻՆՉՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Իհարկե, վերնագիրը հնչում է, մեղմ ասած, փոքր-ինչ նախիվ։ Բայց զարմանալու հարկ չկա. մենք պատմում ենք պատմական միջադեպեր, որ քաղել ենք եկեղեցական տարեգրություններից, և միանգամայն բնական է, որ մերթ հանդիպում ենք հրեշավոր հանցագործության, մերթ ապշած հիմարության օրինակի։ Դա անխուսափելի է։

Սարսուռներ դեմ Բենեդիկտոս VIII-ի տարած հաղթանակից անմիջապես հետո Հռոմում երկրաշարժ եղավ։ Դա պատահեց ավագ հինգշաբթի օրը, ընդ որում խիստ ուշագրավ է, որ հավատացյալներն առաջին հարվածներն ղգացին խաչին երկրպագելու պահին։

Ինչո՞ւ է երկիրը որոշել, բարեպաշտ հռոմեացիներին սարսափի մատնելով, շարժվել հենց այն պահին, երբ ժողովուրդը ծունկ էր չոքել խաչելության առաջ։

Այս հարցին սուրբ Հայրը, առանց տատանվելու, այսպիսի խելացի պատասխան տվեց. ի վերուստ այդպիսի ազդեր շնորհելով, տերը ցույց տվեց, թե ինքը զայրացած է այն մարդկանց վրա, որ նրան վիրավորանք են հասցրել այդքան տխրալի օրերին։

Մենում էր միայն գտնել մեղավորներին։ Իսկ դա դժվար բան չէր։ Բենեդիկտոսը հայտարարեց, որ, ըստ իր տեղեկությունների, հենց այն ժամին, երբ բարեպաշտ քրիստոնյաները երկրպագում էին խաչին, հրեաներն իրենց կրոնական արարողություններն են կատարել սինագոգում։ Երկնքի ցասումը կարող էին առաջացնել միայն այդ թշվառ անհավատները։ Հարկավոր է նրանց դատել ու պատժի՛լ։

Իսկ ինչո՞ւ նրանց դատել։ Մի՞թե այսպես անսխալական չէ... Եվ Բենեդիկտոսը մի դեկրետ հրապարակեց, որով Հռոմի բոլոր հրեաները գլխատման էին դատապարտվում։ Նրանց անմիջապես բերեցին կառափնարան և հանձնեցին դահիճների ձեռքը։

Սարսափելի է, չէ՞։

Նախորդ գլուխները, իհարկե, մեզ նախապատրաստել են շատ բաների վրա չլարմանալու, բայց և այնպես մարդկային բանականությունը չի կարող հաշտվել նման փաստերի հետ։ Մարդ սկսում է նույնիսկ մտածել, թե արդյո՞ք չափազանցված չեն այդ տեղեկությունները կամ, թերևս, ամենևին ճիշտ չեն։ Ավա՛ղ։ Մենք այս էջերում խոսում ենք միայն իրական դեպքերի մասին, որոնք մաքրված են առասպելականության որևէ երանգից։ Մենք, ճիշտ է, պայքարում ենք պապականության դեմ, բայց պայքարում ենք աղնիվ զենքով։ Մենք ասում ենք. ահա այն, ձեր եկեղեցին, ուզո՞ւմ եք իմանալ ինչ արժեք ունի նա։ Ծանոթացեք նրանց, ովքեր այն գլխավորում են (գողեր, մարդասպաններ, արվամոլներ՝ այդպիսիք են նրանք բոլորը կամ գրեթե բոլորը... Ներեցեք, նրանց մեջ կան նաև Պիոս IX պապի նման գործիչներ էլ, բայց նրա հետ դուք կծանոթանաք ավելի ուշ)։

Վերադառնանք երկրաշարժին։ Դա դադարեց հրեաների ջարդից հետո։ Դուք մտածում եք, թե եկեղեցական պատմիչները այդ դիպքը

պատմելով, մեղմացուցիչ հանգամանքներ են փնտրում, փորձելով բացատրել հիշյալ մղձավանջային միջոցառումը։ Ի՞նչ միամտություն։ Նրանք փառաբանում են քահանայապետին, եվ ցնցող սառնասրտությամբ ավելացնում են.

«Նրանց մահապատժից հետո քամին դադարեց և գետինն այլևս չէր զգում այն սարսափելի տատանումները, որ առաջ ցնցում էին սուրբ քաղաքը»։

Անկարելի է գտնել զազրելի ոճրագործության ավելի լպիրշ ներքող։

## ՔԱՎԱՐԱՆ ՍԻՅԼԻՍՅՈՒՄ

*Բենեդիկտոս VIII-ը, որին ամենևին էլ չի կարելի բարեպաշտության տիպար համարել, այնուամենայնիվ որոշեց մի կերպ դասել սանձարձակ կղերականության։ Պատվավոր առաքյալը, անկասկած, նախանձում էր իր հպատակներին և ուզում էր խլել նրանց բոլոր սիրուհիներին... այլապես ինչո՞վ բացատրել բարոյականության հանկարծակի զարթոնքը նորին սրբազնության մեջ։*

*1020 թվականին նա Պավիայում եկեղեցաժողով հրավիրեց և, չնայած շատ պրելատների ընդդիմությանը, կարողացավ պարտադրել մի որոշում, ըստ որի ամբողջ հոգևորականությունը, ինչպես սև, այնպես էլ սպիտակ, ըրկվում էր ամուսնանալու կամ կենակցուհի ունենալու իրավունքից։*

*Հենրիխ II-ը քահանայապետի խնդրանքով հաստատեց այդ դեկրետը. խախտողին հոգևոր և քրեական դատ էր սպառնում։*

*Անմիջապես նշենք, որ դեկրետից հետո հոդևորականության դեխությունն ամենևին էլ չպակասեց. ոչ մի սպառնալիք չօգնեց, և քահանաները հարկ էլ չէին համարում թաքցնել իրենց արկածները։ Ինչպես և մինչև հրամանագիրը, եկեղեցականները հրապարակավ անառակության էին տրվում, իրենց զգալով միանգամայն անվտանգ։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Չէ որ իրականում դեկրետը կիրառելու համար հարկ կլիներ դատել ամբողջ հոգևորականության։ Բոլոր եկեղեցական բեմերը անմիջապես կդատարկվեին։ Իսկ դա, անշուշտ, չափազանց ցավալի բան կլիներ։*

Բենեդիկտոս VIII-ը մահացավ 1024 թվականի սկզբին։ Կաթոլիկ պատմաբանները միանգամայն լրջորեն հաղորդում են, թե մեռնելուց հետո նա մի քանի անգամ այցելել է պանդան մարդկանց՝ խնդրելով, որ իրեն հիշեն իրենց աղոթքների մեջ։ Ի՞նչ համբավ ուներ բարեպաշտ պապը, եթե նույնիսկ եկեղեցականները նրան արժանի չէին համարում անմիջապես դրախտ ընկնելու։

Տարեգիր Պղատինոսը հավաստում է, թե մի ոմն պրևլատ տեսել է սուրբ հայր Բենեդիկտոսի կմախքը, որը, պապական զգեստով, սև հովտաոակ հնձած, ինչ-որ տեղ էր շտապում։ Եպիսկոպոսը նրան հարցրել է, թե ուր է շտապում, պատասխանելու փոխարեն ուրվականն ամուր դրկել է եպիսկոպոսին, բարձրացրել գետնից և տարել այն վայրը, ուր դանձեր կային թաղված։ Նա եպիսկոպոսին հրամայել է բոլոր գանձերը բաժանել թշվառներին, որպեսզի դրանով թեթևացնի այն տառապանքները, որ ինքը՝ Բենեդիկտոսը, անդրշիրիմյան աշխարհում կրում է իր հանցանքների համար։

Սիգիբերտոսը և Պետրոս Դամիանիոսը նույնպես պնդում են, թե մի անգամ մեռյալը եկել է իր հաջորդի մոտ և խնդրել աղոթել իր համար, որպեսզի դրանով մեղմացնի քավարանի կրակը, որին նա դատապարտված է իր չարագործությունների համար։ Հանցագործությունների չափի մասին կարելի է դատել ըստ այն բանի, որ պապի համար սահմանված էր քավարանում մնալու հազար տարվա ժամանակամիջոց։ Այդ բոլոր առասպելները իրենց վավերշտականությամբ մեծապես զիջում են բովեցի Վինցենտիոսի փլոցին։ Վինցենտիոսն ապրել է Բենեդիկտոս VIII-ի մահից երկու հարյուր տարի հետո և Սուրբ Լյուդովիկոս թագավորի մոտ կատարել է ընթերցողրդի պարտականություն։ Նա հանդիսավորությամբ հավաստում էր, թե Բենեդիկտոսի նկատմամբ աստվածային դատավճիռը այսմանակաև է եղել, և թե այդ Կլյունի վանքի վանականներից մեկին հայտնել է ինքը աստվածամայրը. ըստ այդ հայտնության՝ «Բենեդիկտոս պապին տառապանքներից կարող են ազատել Կլյունի վանքի վանականների աղոթքները և նրանց վանահոր՝ սուրբ Ոդիլլոնի ծառայությունները»։

Նշանակում է հայր-աստվածը, որին քահանաները ներկայացնում են որպես ահեղ դատավոր, այնքան էլ անդութ չէ։ Պատկերացրեք, որ նրա մոտ պատի է դալիս մեղքերով ծանրաբեռնված մի քրիստոնյա։

— Անունդ ի՞նչ է,— հարցնում է ամենաբարձրյալը։

— Բենեդիկտոս VIII, արդարամիտ դատավոր։

— Դու մեռյալ ես դողությունների, սպանությունների, գայ-

թակղությունների և բռնությունների մեջ, խախտել ես աստվածային ու մարդկային բոլոր օրենքները։ Ի՞նչ կասես քեզ արդարացնելու համար։

— Ոչինչ, արդարամի՛տ դատավոր։

— Շա՛տ լավ։ Ես քեզ դատապարտում եմ հավար տարվա քավության։ Կուզենայի՞ր որևէ առարկություն անել վճռի դեմ։ Պատասխանի՛ր։ Ի՞նչ ես մտածում այս առթիվ։

— Ես կխնդրեի թույլ տալ պատիժս կրելու Երկրի վրա, արդյունքի այս հովտում...

— Որը դու աղբանո՞ց ես դարձրել։

— Տե՛ր իմ, ամեն մարդ անում է այն, ինչ կարող է։

— Ուրեմն դու հո՞ւյս ունես, որ քեզ կվերապարձնեմ այնտեղ, ուր դու այդքան գարշելի գործեր ես կատարել։ Երբե՛ք։ Միակ բանը, որ կարող եմ անել, քեզ պայմանական կերպով դատապարտելն է։ Եթե կլյունի վանքի վանականներն ինձ աղոթեն քո հոգու փրկության համար, ես քեզ դրախտի անցաթուղթ կտամ։ Բայց հիշի՛ր. մի քանի տողանոց հապճեպ աղոթքը կամ քսան սուով կատարված խղճուկ պատարագը ինձ չեն գոհացնի։ Դու պատիժը կրելուց լիովին կազատվես, եթե վանականներն աղոթեն ինչպես հարկն է՝ օր ու գիշեր ժամերգություն կատարեն, հետևեն պահին և նորից աղոթեն։

— Մի խոսքով, նրանք պետք է ձեզ սիրաշահե՞ն։

— Հենց դա էի ուզում ասել։ Ահա իմ խորհուրդը. դիմիր սուրբ կույսին և խնդրիր դառնալ քո պահապանը։ Անարատ կույսը գթասիրտ է, և ես ուզում եմ մտածել, որ վանականները բավական նրբանկատ ու քաղաքավարի են և չեն մերժի չքնաղ տիկնոջը... ի՞նչ եմ ասում՝ երիտասարդ աղջկա խնդրանքը, քանզի մայրությունը որևէ չափով չի փշացրել նրա անմեղության ծաղիկը...

Այս գրոտեսկային երկխոսությունն իրականում Վինցենտիոսի հանդիսավոր հայտարարության սուտյգ վերապատումն է։ Սա նույնիսկ պարոդիա չէ, այլ միայն շարժ, որն ընդգծում է յուի մանրամասները, բայց չի աղճատում։ Սա ցույց է տալիս, որ եկեղեցական հերյուրանքները, որոնցով եկեղեցականները չափից ավելի ծանրաբեռնում են հավատացյալների գլուխը, ըստ էության, ոչ այլ ինչ են, եթե ոչ վեհատեսիլ խեղկատակություններ։

Ըստ Վինցենտիոսի, անարատ կույսի երևալուց հետո կլյունի վանականները կրկնապատկել են աղոթելու իրենց եռանդը և հասել Բենեդիկտոս VIII-ի ազատմանը։

«Եվ այն ժամանակ, — ավելացնում է Վինցենտիոսը,— հանդուգ-

յալ քահանայապետն ինքը եկավ արքայություն շնորհակալություն հայտնելու իր փրկության համար։ Մի գեղեցիկ օր, երբ վանականները տաճարում աղոթքի էին հավաքվել, Բենեդիկտոս VIII-ը, ներկայանալով նրանց, հայտնեց, թե ինքը դուրս է եկել Լատնայի բոցերի միջից, և նկարագրեց այն աստվածային ուրախությունները, որ նրան հաճույք են պատճառում երկնային Երուսաղեմում»։

Եվ այսպես, քավության դատապարտվածը դուրս է գալիս նույնիսկ խառնարանից և ընկնում ուղղակի դրա՞խտ։ Ի՞նչ երջանիկ են այդ Սիցիլիայի բնակիչները. նրանց կղզում է դտնվում քավարանն ինքը, իսկ նրանք, թերևս, իսկի գլխի էլ չեն ընկնում, թե ի վերուստ ի՞նչ բախտավորություն է նրանց տրված։

## ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱՄԱԿԸ

Բենեդիկտոս VIII-ին պապական գահի վրա փոխարինեց նրա եղբայր Հովհաննես XIX-ը։

Մոտավորապես այդ ժամանակ էլ մեռավ Հենրիխ II-ը, Արևմտյան Հռոմեական կայսրության թագը թողնելով իր որդի Կոնրադին։ 1027 թվականին Կոնրադն իր տիկնոջ՝ Ժիզելի հետ ժամանեց Հռոմ, որպեսզի ստանա պապի օծությունը։ Այդ արարողությանը ներկա էր Կանուտը՝ Անգլիայի ու Դանիայի թագավորը, որը եկել էր սուրբ Հորը բողոքելու այն չափազանց մեծ հարկերի դեմ, որ կորզում էր Հռոմի կուրիան իր թագավորության ուխտավորներից, նաև պահանջելու պապական գանձարանը մուծվող դումարը։

Դրամական հարցը եղել է Հովհաննես XIX-ի ամենախոցելի տեղը։ Անսահման ագահությամբ ու շահամոլությամբ նա գերազանցեց իր բոլոր նախորդներին, իսկ նրանք էլ, ինչպես հայտնի է, նույնպես անշահախնդրության տիպարներ չեն եղել։ Ի դեպ, Հռոմի շատ քահանայապետերի կարելի է վերագրել հետևյալ էպիգրամը. «Ընդունի՛ր, վերցրո՛ւ, դողացի՛ր՝ ահա պապի երեք նվիրական բառերը»։

Հովհաննես XIX-ի համար ոչ մի արգելք չկար, երբ խոսքը վերաբերում էր նրա գանձարանը հարստացնելուն։ Նորին սրբազնության մոտ ունկնդրություն ստանալու համար հավատացյալները պապին ոչ թե մանր նվերներ էին տալիս (ինչպես ժամանակակից հետերոհներին

ապահովելիս են նրանց հետ մի հարկի տակ նախաճաշելու համար), այլ իսկական ընծաներ։ Ինչքան խոշոր էր նվիրաբերությունը, այնքան չավ էր ընդունելությունը։ Սուրբ Հոր անսահման ագահությունից տառապել են ոչ միայն Կանուտի թագավորության ուխտավորները. մյուս երկրների ուխտավորների վիճակն էլ թեթև չի եղել։

Հովհաննես XIX-ը փող էր վաստակում պարզապես ամեն ինչից. թողությունից, օրհնությունից և նույնիսկ բանադրությունից։

Եպիսկոպոսներին շատ էր գրդռում պապի ընչաքաղցությունը։ Կոնրադի թագադրությունից որոշ ժամանակ անց Լիմոժում հավաքված Ֆրանսիայի եպիսկոպոսների համագումարը Հռոմի արքունիքին արգելեց առանց տնզի եպիսկոպոսների գիտության մեղքերի թողություն տալ եկեղեցուց վտարվածներին։

Այդ արգելման խմաստը մոտավորապես այս է եղել. զրաղվեք ձեր առևտրով ինչքան կուզեք, բայց նրբանկատ եղեք, նախազգուշացրեք մեզ, որպեսզի մենք էլ որոշ եկամուտ ունենանք այդ գործից։

Եկեղեցաժողովը նաև քննարկել է Ֆրանսիայի թագավորությունում կարգուկանոն հաստատելու միջոցառումները։ Բանն այն է, որ սուտ ճգնավոր Լյուդովիկոս Բարեպաշտի մահից հետո Կառլոս Մեծի կայսրությունում իսկական անիշխանություն էր սկսվել։ Ֆրանսիայում, Գերմանիայում և Իտալիայում մանր իշխանիկները կռվում էին միմյանց դեմ, կողոպտում էին քաղաքները, բնակիչներին անգթաբար սպանում, երկրագործներին, արհեստավորներին, վաճառականներին հալածում ինչպես վայրի գազանների։ Ժողովուրդն անլուր տառապանքների էր ենթարկվում, իսկ դա հոգևորականությանը բնավ չէր մտահոգում։ Եվ հանկարծ Ֆրանսիայի եպիսկոպոսները բնակչության նկատմամբ դարձան հոգատար։ Ամեն ինչ բացատրվում է շատ պարզ. ֆեոդալական անկարգությունները վնաս էին հասցնում գանձարանին։ Նախ և առաջ բնակչության աղքատացումը խիստ ներգործում էր եկեղեցու եկամուտների վրա, և հետո անկուշտ ֆեոդալ իշխանիկներն սկսել էին հարձակվել նույնիսկ վանքերի վրա, հրդեհել տաճարները, սպանել վանականներին, բռնաբարել միանձնուհիներին։

Ահա թե ինչու եպիսկոպոսները, հավաքվելով Լիմոժում, որոշեցին սահման դնել սանձարձակ ֆեոդալների սխրանքներին։

Համոզվելով, որ բանադրանքով շատ չեն վախեցնի գոռոզացած դուքսերին ու իշխաններին, եպիսկոպոսները որոշեցին հենց իրեն՝ աստծուն ստիպել խառնվել գործին։ Հայտարարվեց հանդիսավոր ժողով, որին հրավիրվեցին գավառի բոլոր հավատացյալները։ Սովորական աղոթք-

ներից ու երգասացություններից հետո եպիսկոպոսներից մեկը հոծ ամբոխին դիմեց հետևյալ խոսքերով.

— Եղբա՛յրք իմ, ձեզ հայտնում եմ մեծ նորություն. Հիսուս Քրիստոսն իր ուղերձով հրամայում է խաղաղություն հաստատել երկրի վրա։ Ես ձեզ առաջարկում եմ ներկայացուցիչներ ընտրել, որոնք կհամոզվեն նամակի իսկությանը, իսկ այնուհետև մենք ձեզ կծանոթացնենք աստծո կամքին։

Ժողովը ցնծությամբ դիմավորեց շառլատանական ելույթը։ Առանց հապաղելու ընտրեցին չորս եպիսկոպոսներից բաղկացած հանձնաժողով մնծարժեք նամակն ստուգելու համար։

Ասում են, թե հին Հռոմի հավաճարցուկները միմյանց չէին կարողանում նայել առանց ծիծաղելու, պետք է ենթադրել, որ քրիստոնեական բարձրաստիճան ծառաները, այդ հավաճարցուկների արժանի հետնորդները, նույնպես շատ ջանք են թափել, որպեսզի լրջագեմ երևան այնքա՜ն պատասխանատու փորձաքննության ժամանակ։

Արարողությունը երկար չի տևել։ Հիսուս Քրիստոսի ստորագրության իսկությունը ճանաչվել է անվիճելի, և հենց այդ նույն եկեղեցաժողովում էլ եպիսկոպոսները երդվել են, թե ուղերձն իրոք ընկել է երկնքից։

Ի վերջո լիմոժի եկեղեցաժողովը հրամայել է՝ նամակն ուղարկել քրիստոնեական բոլոր եկեղեցիներին, որպեսզի բոլոր հավատացյալները, անկախ յուրաքանչյուր դասից, պարտավորվեն հետևել այն խրատներին ու պատվիրաններին, որ ուղարկվել են ի վերուստ։

Դժվար է հնարել ավելի անմիտ և անպատշաճ մի բան, քան այդ խրատները։

Հիսուս Քրիստոսը, որին հետագայում պետք է նմանվի Բոկաչոյի «Դեկամերոնում» պատկերված ծեր ամուսինը, իր նամակում առաջարկում է մի յուրօրինակ «սիրո օրացույց»։

Ստուգն ասած, աստված ամուսիններին թույլատրում էր ամուսնական պարտականությունները կատարել միայն որոշ օրեր, որ Ճրշտորեն նշվում են իր կողմից։

Երկուշաբթին, օրինակ, հայտարարվում էր ամուսնական հարաբերությունների արգելված օր։

Բացի դրանից, սահմանվում էր. ուրբաթ օրը սնվել ջրով ու հացով, շաբաթ օրը ժուժկալել մսից։ Արգելվում էր զենքը ձեռքին վրեժ լուծել ինչուից, ինչպես նաև հափշտակել վանքապատկան գույքը։ Ի վերջո, ուղերձը խստիվ սահմանում էր սեռերի հարաբերությունները. տղամարդ-

կանց թույլատրվում էր աղոթել կանանց հետ, բայց չբռնաբարել նրանց։

Միայն թե չկարծեք, որ այդ ամենը թեկուզ փոքր-ինչ չափազանցված է։ Մի անգամ ևս ընդգծում եմ, ոչինչ չեմ հնարել։ Կարելի է վիճարկել իմ դնահատականները, բայց փաստերի նկատմամբ ես պահպանում եմ մեծագույն զգուշություն, ո՛չ աղավաղում եմ և ո՛չ էլ չափազանցնում։ Եվ ի՞նչ կարիք կա։ Եկեղեցու պատմությունը բավական լի է այնպիսի լսիրշությամբ, հիմարությամբ ու գարշելիությամբ, որ ջախջախիչ մեղադրական ակտ է ընդդեմ քրիստոնեության։

Յուրաքանչյուր թեմում հավատացյալներին ստիպել են ավետարանի վրա երդվել, թե հավատարիմ կլինեն Հիսուս Քրիստոսի ուղերձի պատվիրանին։ Չհնազանդվողներին սպասնացող պատիժները այնքան լուրջ էին, որ որևէ մեկի մեջ վիճելու կամ չհամաձայնվելու գայթակղություն չծագեր։ Խոսքը վերաբերում էր ոչ միայն եկեղեցուց վտարելուն, այլև ունեցվածքը բռնագրավելուն, ինչպես նաև քրիստոնեական թաղման իրավունքից զրկելուն։ Համենայն դեպս կարելի էր ռիսկ անել և պատրաստ լինել առաջին ու վերջին պատիժներին, բայց ունեցվածքի բռնագրավումը սարսափելի էր բոլորի՝ թե՛ բարեպաշտ քրիստոնյաների և թե՛ անհավատների համար։

Ջեմ թաքցնում, մեզ, իհարկե, հետաքրքրում է այն հարցը, թե հոգևորականներն ինչ կերպ կարող էին ստուգել, թե ամուսիններն ինչպե՞ս են հետևում «սիրո օրացույցին»։ Պատրաստվո՞ւմ էին արդյոք տիրացուներ ուղարկել իրենց հոգևոր սանների բոլոր ննջարաններըւ

Այդ մասին եկեղեցական հեղինակները ոչինչ չեն ասում, որի համար և մենք անկեղծորեն ափսոսում ենք։

## ԿՈՐՅԻՆ ԲՌՆԱԿԱԼԸ

Հռոմեացիներն անհամբերությամբ էին սպասում Հովհաննես XIX-ի տիրապետության վախճանին։ Նրանք դեմ չէին, որ նա ամեն գիշեր իրեն շրջապատում է հմայիչ աղջիկներով ու պատանիներով, որոնք նրան տրվում էին աստվածային նախախնամության ամբողջ շռայլությամբ. բայց քահանայապետի սանձարձակ բռնապետությունն այնքան անտանելի էր դարձել, որ նրա դեմ դավադրություն կազմակերպվեց։

Սուրբ Հայրը, հավանարար, առանձին պատրանքներ չուներ իր

ժողովրդականության վերաբերյալ և երբեք մենակ, առանց արժանահարգ շքախմբի չէր երևում։ Այնժամ դավադիրները որոշեցին զենքի դիմել և բացեիրաց ապստամբել։

Երբ հոծ ամբոխը շրջապատեց Լաթերանյան պալատը, Հովհաննես XIX-ը, հասկանալով, որ դիմադրելն ավելորդ է, փախավ Գերմանիա՝ Կոնրադ II-ի պաշտպանության ներքո։ Նա չսխալվեց իր հաշիվներում. Կոնրադը շուտով իր զինվորների օգնությամբ նորից նրան գահ նստեցրեց, և Հովհաննեսը մեռնելուց առաջ տակավին կարողացավ վայելել վրեժի բավականությունը և հաշվեհարդար տեսնել դավադիրների հետ։

## ՄԱՆՈՒԿ ՊԱՊԸ

Առանց չափազանցության կարելի է ասել, որ Բենեդիկտոս IX-ը, ծծմոր գրկից դեռ նոր ազատված, դարձավ Հովհաննես XIX-ի հաջորդը. համենայն դեպս, երբ պատանեկության անուշիկ ժամանակի հասավ, նրան օգնեցին մագլցելով բարձրանալ սուրբ աթոռը։ Կարճ ասած, այդ ժամանակ նա ընդամենը տասներկու տարեկան էր։

Տարիքը նրան չի խանգարել շատ շուտ դրսևորելու այն բոլոր արատները, որ բնորոշ էին նրա ամենաանառակ ու պաժան նախորդներին։

Սուրբ աթոռը Բենեդիկտոս IX-ի (նրա իսկական անունը եղել է Թեոփիլակտոս) ձեռքն է ընկել Տուսկանելլի կոմսերի խարդախությունների շնորհիվ. ալևվազարմ ավազակները հաջողեցրին նրա ընտրությունը խարդավանքների, կաշառքի և սպառնալիքների միջոցով։

Կայսր Կոնրադ II-ը քաղաքական նկատառումներով հովանավորում էր այդ հզոր ֆեոդալներին. այդպիսով նրա բարձրագույն ողորմածությունը տարածվում էր նաև նոր պապի վրա։

Երբ ժողովուրդը, Բենեդիկտոս IX-ի վայրագություններից կշտացած, նրան վռնդեց Հռոմից, Կոնրադ II-ը բարեհաճորեն օգնության հասավ երիտասարդ քահանայապետին և հանդիսավորությամբ նրան վերադարձրեց խուլրը։

Ուժը հաղթեց օրենքին. ավա՜ղ, ոչ վերջին անգամ։

## ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ IX-Ի ՄԱՍԻՆ

Այդ քահանայապետն առաքելական աթոռն արատավորել է այնպիսի հրեշավոր հանցագործություններով, որ քրիստոնեական գրողները նույնիսկ չեն փորձել լռել կամ սքողել սուրբ հոր խայտառակ արարքները։

Կարդինալ Բեննոն պապին մեղադրել է այն բանի մեջ, թե նա գիտակցարար օգտվել է դիվային միջոցներից, դիմել է մոգության ու կախարդանքի, իր հարճերին ստիպել է կախարդական դեղեր խմել, որպեսզի բուռն կիրք առաջացնի իր նկատմամբ։ Կարդինալը միաժամանակ պնդում է, թե պապը սատանային զոհեր է մատուցել, մասնակցել է վհուկների գիշերային ժողովներին և բազմիցս անտառում շփվել է խավարի ոգիների հետ։

Այդ պնդումները միամիտ են, ծիծաղ են հարուցում և, այնուամենայնիվ, որոշ պատկերացում են տալիս Բենեդիկտոս IX-ի մասին։ Նրա արատներն այնքան այլանդակ են, որ պատմաբանները, բացատրություններ որոնելով, ստիպված են եղել դիմել միստիկայի և վկայակոչել սատանային։

Ժողովուրդն ավելի ու ավելի է զգացել նրա իշխանության ծանրությունը և, ի վերջո, տասներկուամյա բռնություններից, կողոպուտներից ու սպանություններից հետո Բենեդիկտոս IX-ը երկրորդ անգամն է արտաքսվել Հռոմից։

Ժամանակից շուտ չուրախանանք. մենք դեռ կհանդիպենք նրան։ Խույրը սպասում էր նրան, և՝ նա չի հրաժարվել իր սլքազան գլուխը վերստին պսակել դյանով։

## ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ՊԱՊԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Այն բանից հետո, երբ Բենեդիկտոսին «պաշտոնից հեռացրին», Սարինի եպիսկոպոսը, որն արդեն փորձել էր ապացուցել իր իրավունքը աթոռի նկատմամբ, նորից մարտի նետվեց։ Հոգևորականության տված խոստումների, կաշառքի և առատ նվերների շնորհիվ նա

սուրբ աթոռ բարձրացավ 1044 թ. դեկտեմբերի 26-ին, Սեղբեստրոս III անունով։ Նրա գահակալությունը տևեց երեք ամիս։

Այդ ժամանակաընթացքում, Տուսկանելլիների հզորագույն տոհմի օգնությամբ, Բենեդիկտոս IX-ը կաշառեց Հռոմի շրջակայքում գործող ավազակախմբին և ամեն կերպ ահաբեկում էր բնակչությանը։

Հրդեհներին և խաղաղ բնակիչների սպանություններին վերջ տալու համար հռոմեացիները ստիպված եղան քաղաքի դարպասները նորից բացել այդ թրծված սրիկայի առաջ։ Ճիշտ է, այս անգամ Բենեդիկտոսը երկար չմնաց գահի վրա։ Նրա օրգիաները նոր խռովություն առաջացրին և այլևս չհամարձակվելով ռիսկի դիմել (ժողովրդի զայրույթը մեծ էր), Բենեդիկտոսը ինքը հրաժարվեց եկեղեցին կառավարելուց։

Սակայն նա կարծում էր, որ նման ինքնահրաժարումը, բնականաբար, պետք է համապատասխան ձևով հատուցվի։ Այն տեղը, որ նա զիջել էր, այնքան գայթակղիչ էր, որ ձրիաբար տալը աններելի հիմարություն կլիներ։ Երկարատև բանակցություններից և սակարկություններից հետո Բենեդիկտոսը սուրբ աթոռը տասնհինգ հազար լիվր ոսկով վաճառեց քահանա Հովհաննեսին։

## ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՔ ՔԱՀԱՆԱՅՊԵՏ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՎՐԱ

Խույրի համար փող ստանալով, Բենեդիկտոս IX-ը գտնում էր, որ միանգամայն ավնվորեն օրինականացրել է այդ գործողությունները՝ իր հաջորդ հայտարարելով Հովհաննես XX-ին։ Սակայն Սեղբեստրոս III-ը ևս թանկ էր վճարել իր ընտրության համար. գահի վրա երեք ամիս մնալը չէր կարող փոխհատուցել այն գումարները, որ նա ծախսել էր ընտրողներին կաշառելու համար։ Եվ այնժամ իր լավագույն զգացմունքներում վիրավորված Սեղբեստրոս III-ը, մի դինված ավազակախմբի գլուխ անցած, մտավ Հռոմ և հարձակվեց պապի պալատի վրա։ Հովհաննես XX-ը եռանդուն դիմադրություն ցույց տվեց, և կատաղի ճակատամարտ բորբոքվեց։

Միևնույն ժամանակ Բենեդիկտոս IX-ը, որ արդեն կարողացել էր իր կապիտալները ծախսել, եկավ այն եզրակացության, որ ինքն ևս պետք է փորձի տիրանալ խույրին, որպեսզի երկրորդ անգամ վաճառի։ Առանց երկար մտածելու, մի հրոսակախմբով նա ներխուժեց Լաթերանյան պալատը, դուրս վռնդեց այն պապին, որին հենց ինքն էր բնակեց-

րել այնտեղ։ Իր հերթին Հովհաննես XX-ն էլ չուզեց թողնել քաղաքը, չէ որ դրա համար փող էր ծախսել։ Մի խոսքով, Հռոմում միաժամանակ հաստատվեցին երեք պապ։ Մեկն ապրում էր սուրբ Հովհաննեսի եկեղեցում, մյուսը հյուրընկալվել էր սուրբ Պետրոսի մոտ, երրորդը տաքուկ տեղ էր գտել սուրբ Մարիամի տաճարում։

Ի՜նչ խոսք, Բենեդիկտոս IX-ը, Սեղբեստրոս III-ը և Հովհաննես XX-ը հիանալի՛ էին տեղավորվել։ Պատվարժան երրորդությունը դաշինք կնքեց, իհարկե՝ բաժանելով եկեղեցական եկամուտները և իրենց շորթողականության և հափշտակումների արդյունքները։ Յուրաքանչյուր գիշեր այդ ուրախ ավազակները վիթխարի խրախճանքներ էին սարքում իրենց էգ և արու հարճերի հետ։

Փո՞ղ ղժգույն են այդ խրախճանքների հանդեպ մեր ժամանակակից մանր խնջույքները։ Խուլրակիր քեֆչինները, արգելված նոր հաճույքներ որոնելով, ձգտում էին վերականգնել Սոդոմի բարքերը։

Հետևելով եկեղեցական ավանդույթներին, պատվարժան երրորդությունը աչքի է ընկել սիրուհիների նկատմամբ արտասովոր առատաձեռնությամբ և կարճ ժամանակում դատարկել Հռոմի եկեղեցիների գանձարանը։ Աստծո պաշտամունքի թանկարժեք առարկաները քահանայապետերը նվիրաբերում էին Վեներայի պաշտամունքին։ Հաճույքների գիշերի համար սրանք վճարում էին թանկարժեք անոթով, մասնատուփով, խաչելությամբ։

Առաքելական աթոռը նրանց համար այլևս ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում, և այդ պատճառով հարկավոր էր նրանից ձեռք քաշել։ Վերջնականապես սնանկացած, սուրբ երրորդությունը խորհրդի հավաքվեց. պապերն իսկապես հիանալի ելք գտան. նրանք սուրբ աթոռը հրապարակավ աճուրդի հանեցին։

Հովհաննես XIX-ի մահից հետո, Բենեդիկտոս IX-ի աթոռակալության տարիներին, սուրբ Պետրոսի աթոռն աճուրդով վաճառվեց չորրորդ անգամ՝ պառաված պչրուհու կահույքի պես։

## ՍՈՒՐԲ ՔԱՌՅԱԿԸ

Հենց որ հայտնի դարձավ պապական խույրի հրապարակային վաճառքի լուրը, գտնվեցին սիրողներ, որ իսկույնևեթ լավ գին առաջարկեցին։

Մենք պատկերացնում ենք, թե ինչպիսի՞ ազարտ է թագավորել այդ աճուրդում։ Վերջիվերջո խոյրը բաժին է ընկել Հռոմեացի քահանա Ջովաննի Գրատիանոյին, որն ի վիճակի է եղել առաջարկել ամենաշատ գումարը։ Նա էլ պապ է հռչակվել Գրիգոր VI անունով։

Ըստ եկեղեցու օրենքների, պապական աստիճանը ցմահ է։ Հետևաբար, այդ ժամանակ կաթոլիկ եկեղեցին միաժամանակ ուներ չորս սուրբ հայր, թեև պապի պարտականությունները կատարում էր միայն մեկը։

Իր գահակալության սկզբում երկերեսանի քահանայապետն իրեն հեզաբարո և բարեգութ էր ձևացնում, որպեսզի մարդիկ մոռանային իր պապ ընտրվելու խայտառակ պատմությունը։ Նա մի քանի բարենորոգումներ կատարեց և որոշ չափով գրավեց ժողովրդի համակրանքը։ Երբ նրա դիրքն ամրապնդվեց, նա այլևս հարկ չհամարեց իրեն զսպել և որոշեց կորցրածը ետ շահել։ Ջմտահոգվելով պատշաճությունը պահպանելու մասին, Գրիգոր VI-ը գործի դրեց ամենատարբեր տեսակ հնարներ, ընդհուպ մինչև ունևոր քաղաքացիների գույքի բռնագրավումը նրանց խոշտանգումների ենթարկելով և մահվան դատապարտելով, որպեսզի լեզուներին ազատություն չտային ու չբողոքեին։

Իր ձեռներեցության շնորհիվ Գրիգոր VI-ը հավելյալով ետ ստացավ այն հսկայական գումարը, որ ծախսել էր աթոռը գնելու համար։

## ԱՐՅՈՒՆՈՑ ԲԱՂՆԻՔ

Քահանայապետերի ձեռքով քայքայված, ըզկտված դժբախտ Իտալիան հասել էր կատարյալ աղքատության։ Ճանապարհներին ավազակախմբեր էին թափառում, այնպես որ ուխտավորները համարձակվում էին Հռոմ գնալ միայն մեծ բազմություններով։

Բուն Հռոմում ապրելը դարձավ վտանգավոր։ Բանն այնտեղ հասավ, որ ավազակները կողոպտում էին առաքյալների գերեզմանները, տանում այն նվերները, որ առատաձեռնորեն բերել էին հավատացյալները։

Քանի դեռ կողոպուտներից մասնավոր անձինք էին տուժում, Գրիգոր VI-ը ոչ մի միջոցի չէր դիմում։ Բայց երբ բանը հասավ եկեղեցիներն ու սուրբ գերեզմանները կողոպտելուն, երբ սկսեց վնաս կրել նրա սեփական գանձարանը, անհրաժեշտ համարեց միջամտել։ Նա հրապա-

րակեց մի ահեղ դեկրետ, որ վերաբերում է եկեղեցական ունեցվածքին. իսկ քաղաքացիների անձնական սեփականության մասին նա ոչ մի բառ չասաց։ Ի դեպ, դեկրետը ցանկացած ազդեցությունը չունեցավ։ Ընդհակառակը, կողոպուտները նույնիսկ սաստկացան։

Այնժամ Գրիգոր VI-ը գործի դրեց եկեղեցուց վտարելու սպառնալիքը։ Այդ միջոցառումն ավելի ազդեցիկ եղավ, բայց կատաղի բողոք առաջացրեց ոչ միայն ավազակների, այլև ամբողջ բնակչության մեջ. ժողովուրդը, որ պապի օրեցօր աճող ախորժակի պատճառով համբերությունից դուրս էր եկել, բռնակալից ազատվելու համար պատրաստ էր օգտագործել ամեն մի առիթ։

Մի գեղեցիկ օր պապի պալատի առաջ հավաքվեց հույժ պատկառելի բազմություն, որը սուրբ Հոր հասցեին վարկաբեկիչ հայհոյանքներ էր տեղում։

— Բոլորին ոչնչացնե՛լ,— բացականչեց սուրբ Հայրը։

Նրա հրամանը կատարեցին տառացիորեն։

Արյունահեղ կոտորածն այնքան սոսկալի էր, որ նույնիսկ հոգևորականությունը չդիմացավ և հրաժարվեց ենթարկվել պապին։ Կարդինալները և եպիսկոպոսները բողոքով դիմեցին կայսր Հենրիխ Սևին։ Նա անմիջապես եկավ և եկեղեցաժողով հրավիրեց՝ պապին դատելու համար։

Գրիգոր VI-ին գահընկեց արին, բայց ոչ թե նրա հրամանով կատարված հրեշավոր կոտորածի (եկեղեցական նվիրապետության համար ինչ մի մեծ բան է մի քանի հարյուր մարդկանց կյանքը), այլ առաքելական աթոռը գնելու համար։ Եթե Գրիգոր VI-ի ընտրությունը կատարված լիներ օրինական ձևով, նրան, անկասկած, կներեին, և նա նույնիսկ կարժանանար բարձրագույն հոգևորականության հովանավորությանը։

## ԿՂԵՄԵՍ II

Սուրբ գահի վրա այդքան մեծ թվով սրիկաներ տեսնելով, հռոմեացիները պետք է որ, ինչպես մեզ թվում է, ատելությամբ լցվեին պապության ինստիտուտի նկատմամբ։ Մինչդեռ այն մինչև հիմա էլ գոյություն ունի։

Տապալելով Գրիգորին, Հենրիխ Սևը սկսեց նրա համար հաջորդ

*փնտրել։ Նա սուրբ Պետրոսի եկեղեցում հավաքեց բարձրաստիճան կղերականներին, սենատի անդամներին ու կորպորացիաների ներկայացուցիչներին և առաջարկեց անհապաղ նոր պապ ընտրել։ Նա դիմեց եպիսկոպոսներին, որ առաքելական դահին արժանի թեկնածու առաջադրեն, ժողովը լուռ էր. կայսրը խնդրեց բացատրել, թե եկեղեցաժողովն ինչու է լռում։ Այն ժամանակ սրբելատներից մեկը կղերի անունից անկեղծորեն խոստովանեց, որ Հռոմի հոգևորականությունն անկում է ապրում և չի կարող իր շարքերում գտնել որևէ մեկին, որ արժանի լինի կրելու քահանայապետի կոչումը։*

*Կայսրին ոչինչ չէր մնում անել, քան առաջադրել իր հայրենակցի՝ բամբերգցի եպիսկոպոսի թեկնածությունը, որը և գահ բարձրացավ Կղեմես II անունով։ Այդ կղերականը հռչակվել է իր բանիմացությամբ ու խելքով։ Բացի դրանից, նա աչքի էր ընկնում իր արտասովոր համեստությամբ. հարկ եղավ նույնիսկ ուժի դիմել նրան պապական զգեստ հագցնելու համար։ Սակայն իր ընտրությունից հետո նա իսկույնևեթ դարձավ ճիշտ այնպիսին, ինչպիսին եղել են նրա բոլոր նախորդները՝ գթոտղ, ագահ և նյութական գործերում բնավ ոչ նրբանկատ։*

## ՈՎ ՊԵՏՔ Է ԴՈՏԻ ԱՓՈՒԻՆ

*Եվս մի քանի խոսք Կղեմես II-ի մասին։*

*Առաջին բանը, որ նա արեց, եկեղեցաժողով գումարելն էր, որը պետք է հաստատեր Իտալիայի եպիսկոպոսների արտոնությունները և դրանով իսկ վերջ տար անմիտ տեղայնությանը։*

*Եկեղեցաժողովի առաջին օրն Ակվիլայի եպիսկոպոսը և Ռավեննայի արքեպիսկոպոսը, օգտվելով Միլանի արքեպիսկոպոսի բացակայությունից, զրպարտեցին բացակայող կայսեր դատարկ գահի կողքի երկու աղատ տեղերը։ Միլանի արքեպիսկոպոսը, մտնելով սենատ և համոզվելով, որ երկու պատվավոր տեղերն էլ զբաղված են, հոնքերը կիտեց և... վճռականորեն բազմեց կայսեր աթոռին։ Պատվարժան կղերականները զարմանքից քարացան, իսկ հետո կատաղաբար նետվեցին հանդուգն զանցառուի վրա։ Ակվիլայի եպիսկոպոսն ասաց, թե Միլանի պարագլուխն ըստ կարգի ավելի մեծ իրավունք չունի, քան ինքը, և այդ պատճառով էլ նա պարտավոր է ազատել զբաղեցրած տեղը։*

Շրջապատելով արքեպիսկոպոսին, հարդարման մրցակիցները փորձում էին նրան տեղահան անել, դիմելով նույնիսկ ուժի։ Նրանք քաշքշում էին նրա փիլոներից, բայց արքեպիսկոպոսը եռանդուն կերպով ետ էր մղում հակառակորդների գրոհները, և այդպես էլ հնարավոր չեղավ նրան տեղահան անել. տղրուկի պես կպել էր պատվավոր աթոռին։ Քանի որ կարծիքները բաժանվեցին, սկսվեց վիճաբանություն. սկսեցին սուրբ բնագրերից ու կանոնադրքերից քաղված մեջբերումներ տեղալ։ Խոսում էին բոլորը միասին, փլփուրը բերաններին գոռում էին, անիծ..., ներեցեք՝ ընդհատում միմյանց։ Վերջապես հոգնածությունը հաղթեց վիրավորված ինքնասիրությանը, դերապատիվ կղերականները փոքր-ինչ սառելով, սկսեցին խոսել հերթով, արտասանելով երկար, համոզիչ ճառեր։ Ի վերջո, պատվավոր տեղը բաժին ընկավ Ռավեննայի արքեպիսկոպոսին։

Մի՞թե այս դեպքը չի պատկերում ևկեղեցու ներկայացուցիչների բուռն ամբարտավանությունը։

Հետևյալ օրը ժողովը զբաղվեց այն քահանաների իրավունքների քննարկմամբ, որոնք նախորդ պապի օրոք ձեռնադրվել էին փողով։

Որոշ եպիսկոպոսներ պահանջեցին այդպիսիներին պարզապես կարգալույծ անել, պապը, սակայն, ներողամտություն հանդես բերեց, նրանց թույլատրելով մնալ իրենց պաշտոնում՝ միան թե մի աննշան պայմանով...

Դուք կռահո՞ւմ եք։

Դե, իհարկե, կռահելը դժվա՞ր չէ, գլուղը տանի։ Նրանք պարտավոր են սուրբ աթոռին տուգանք վճարել։

Հռոմեացիները անմիջապես կայսեր կողմից ընտրված պապերին այնքան էլ երես չէին տալիս։ Եվ Կղեմես II-ն էլ չի խուսափել այդ վերաբերմունքից. ճիշտ է, Հռոմում Հենրիխ Սևի և նրա բանակի ներկայության պատճառով անբարյացակամությունը կրել է պասսիվ բնույթ։

Կայսեր մեկնելուց հետո պապի նկատմամբ թշնամական վերաբերմունքն ուժեղացավ։ Երբ դավադրության լուրերը հասան Կղեմես II-ին, նա որոշեց բախտի հետ խաղ չանել և ժամանակավորապես հայրենիք վերադառնալ։ Սակայն բախտը ծիծաղում է ամենից զգուշավոր մարդկանց վրա։ Ժամանելով հայրենիք, Կղեմեն II-ը մեռավ, գահի վրա մնալով ամբողջությամբ առած իննամիս։

## ՀԻՆ ԾԱՆՈԹԸ

*Պատրաստ եմ գրաղ գալ, որ դուք չէիք սպասում չորրորդ անգամ հանդիպել բարեպաշտ Բենեդիկտոս IX-ին, որից մենք բաժանվեցինք նրա կյանքի այն ճգնաժամային պահին, երբ իր երկու գործակիցների՝ Հովհաննես XX-ի և Սեղբեստրոս III-ի մասնակցությամբ վաճառեց սուրբ աթոռը։*

*Նվ այնուամենայնիվ հենց նրան, Բենեդիկտոս IX-ին, պատիվ ունենք ձեզ ներկայացնելու որպես Կղեմես II-ի հաջորդի։*

*Ջարմանալիորեն կպչուն պապ. կպել է աթոռին, պոկել չի լինի։ Նախքան Իտալիայից հեռանալը Հենրիխ Սևը այնտեղից արտաքսեց Գրիգոր VI-ին, որպեսզի «ձյաշտոնաթող» պապին թույլ չտա օգտվել Կղեմես II-ի ժամանակավոր բացակայությունից և գրավել նրա տեղը։ Հենց այդ հանգամանքն էլ Բենեդիկտոս IX-ին օգնեց նորից տիրանալ գահին։*

*Երբ հռոմեացիներն իմացան Կղեմես II-ի մահը, կայսեր մոտ դեսպաններ ուղարկեցին՝ խնդրելով պապ հաստատել Լիոնի արքեպիսկոպոսին։ Այն ժամանակ, երբ դեսպանները կատարում էին իրենց բարձր առաքելությունը, Բենեդիկտոսը՝ «երդմնազանցը, անառակը, արյունապիղծը», թողեց Պիզա քաղաքը, որտեղ թաքնվել էր, մի ավազակախմբի գլուխ անցած եկավ Հռոմ և, կարծես ոչինչ չէր պատահել, իրեն պապ հռչակեց։*

*Այս անգամ նա գահի վրա մնաց ութ ամսից ոչ ավելի։ Մի ողջ հատոր իսկ չէր բավականացնի թվելու համար այն բոլոր հանցագործությունները, որ նա կատարել է այդ կարճ ժամանակում։ Կողոպտուտները, սպանությունները, օրգիաները, ինչպես և նախկինում, նրա հիմնական զբաղմունքն էին։*

*Նա դեռ չէր բոլորել իր երեսուն տարին, բայց իր վարած անառակ կյանքից այնպես էր հյուծվել, որ արտաքուստ նման էր ութսունամյա զառամյալ ծերուկի։*

*Հռոմը այդպիսի հրեշից փրկելու համար կայսրը ստիպված էր գործի դնել հույժ սարսափելի սպառնալիքներ։ 1048 թ. հուլիսի 17-ին Բենեդիկտոսը հրաժարվեց հոգևոր աստիճանից, բայց նախապես սողանցք թողեց իր վերադարձի համար։ Նա խնդրեց աբբա Բուրթուղեմիոսին, որը ժողովրդի մեջ սրբի համբավ ուներ, գնել պապական պալատը,*

ցանկություն հայտնելով նրան խոստովանել իր բոլոր հանցագործությունները։ Ալնիվ աբբան, Գրոտա-Ֆերատա վանքի վերակացուն, թերևս իրոք արտասովոր հոտառություն ուներ, քանի որ իշխանները, երբ նրանց միջև վեճեր էին ծագում, նրան հրավիրում էին միջնորդ դատավորի դեր կատարելու։ Բայց այս անգամ նա հիմար վիճակի մեջ ընկավ, երբ խույրակիր երկերեսանին, հրապարակային խոստովանությունից հետո, նրան հայտնեց հասարակությունից հեռանալու և կյանքը կատարյալ մենակյացության մեջ անցկացնելու իր որոշումը։

Հաջորդ գլխում կտեսնենք, թե նա ինչպես է կատարել իր խոստումը։

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ IX-Ը «ԱՌՀԱՎԵՏ»

Սվ այսպես, Բենեդիկտոս IX-ը պեռևս ինչ-որ բանի հույս էր տածում, երբ խաղում էր խոստովանության հրաժարման տեսիլը։ Այդ դարշելի խեղկատակը, հանդես գալով մեղքերը խոստովանողի դերում, ճիշտ հաշիվ էր արել. հռոմեացիները չսկսեցին նրան հետապնդել, հավատալով, թե հրաժարվել է աշխարհի ունայնությունից և որոշել է կուսակրոնություն ընդունել։ Սակայն Բենեդիկտոսն անարգել կերպով նոր հնար էր ստեղծում իր վերադարձի համար։

Հռոմից Բենեդիկտոսի հեռանալուն պես Բրիկսենի եպիսկոպոսը, որ նշանակվել էր կայսեր կողմից, սուրբ գահ բարձրացավ Դամասոս II անունով։

Քսաներեք օր անց Բենեդիկտոս IX-ը, որ թաքնվել էր քաղաքի շրջակայքում, նոր պապի մոտ թունավորողներ ուղարկեց և լսպասելով նրա թաղմանը, Տոսկանելլի կոմսերի ղինվորների աջակցությամբ հարձակվեց Լաթերանյան պալատի վրա։

Խույրակիր հրեշի վերջին գահակալությունը տևեց վեց ամիս։ Իր ժամանակն ամբողջովին անցկացնելով օրգիաների մեջ, որ մենք հրաժարվում ենք նկարագրել, նա հասավ ծայրաստիճան հյուծմանն։

Հենրիխ Սևն այնժամ Հռոմ ուղարկեց իր հորեղբորորդի Բրունոյին, որը պապ հռչակվեց Լևոն IX անունով։

Բենեդիկտոսը, գինարբուքներից վերջնականապես քայքայված, իր մեջ ուժ չգտավ ընդդիմանալու կայսրին և Հռոմի բնակչությանը։ Նա

*հեռացավ Գրոտտա-Ֆերատա վանքը, որտեղ և շուտով կնքեց իր մահկանացուն՝ երեսուներեք տարեկան հասակում։*

*Մահը եղավ նրա կյանքի միակ խելացի քայլը։*

## ՓՈՂԸ ՅՆՅԱ՛

*«Փողը ցնծա՛» — խնդկատականոցի մուտքի մոտ կանգնած գոռում է ծաղրածուն. այդ կոչը հարկավոր է դրոշմել տաճար կոչվող ամեն մի խեղկատականոցի վերնաճակատին։ «Փողը ցնծա՛, քամ՛կդ բաց»— ահա բոլոր քահանաների նշանաբանը՝ անցյալում, ներկայումս և ապագայում։ Քահանաների դինաստիան միշտ էլ փող է պաշտել։*

*Բացառություն չեն հանդիսանում այն պապերը, որ բարի համբավ ևն թողել։ Դա վերաբերվում է Լևոն IX-ին։ Շատ հնարավոր է, որ նա բոլորովին էլ վատ մարդ չի եղել։ Պատմաբանների մեծ մասը նրան ներկայացնում է որպես միդմաբարո մարդ։ Սակայն սպիտակ ագռավ հանդիսացող այդ պապն ևս առիթը բաց չի թողել և, որտեղ կարողացել է, սրբազան եռանդով չարաշահել է հոտի տիմար դյուրահավատությունը։*

*1049 թվ. նա Իտալիայի ու Գաղիայի եպիսկոպոսների ժողով հրավիրեց, որպեսզի անվավեր դարձներ բոլոր այն պաշտոնները, որ երբևէ վաճառել էին նրա նախորդները։ Սակայն ուշադիր ստուգումից հետո պարզվեց, որ եթե կարգալույծ արվեն այն բոլոր կղերականները, որ դնել են իրենց կոչումները, հարկ կլինի բոլոր եկեղեցիները կողպեքով փակել։*

*Իսկ ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս վարվեց խստաբարո քահանա Լևոն IX-ը։ Օգտվելով այդ հանդամանքից, նա առանց տատանվելու գնաց Կղեմես II-ի հետքերով. պահպանեց այն կոչումները, որ կղերականները գնել էին պայմանով, որ տուգանք վճարեն սուրբ Հոր օգտին։*

*Այդ ժողովից մեկ տարի հետո Սան-Ռեմոյի վանքի աբբան նոր եկեղեցի կառուցեց, և պապը ժամանեց դրա օծմանը։ Կայանալիք արարողության մասին գիտեր ամբողջ Գաղիան. մարդկանց բազմություններ հոսում-գալիս էին ոչ միայն մոտակա քաղաքներից ու գյուղերից, այլև հեռավոր գավառներից։ Դյուրահավատ, սպարզամիտ մարդիկ շրջապատելով Սուրբ Ռեմիի գերեզմանը, սեղանի վրա շատ հարուստ նվերներ էին դնում։ Խանդավառություն մեծ էր, ով չէր կարողանում զե-*

թեզմանին մոտենալ, հավատացյալների գլխի վրայով իր նվերը նետում էր երանելի սրբի դամբարանի վրա։ Վանականները մեղուների պես աշխատելով հավաքում էին ուխտավորների լուման, նվիրները փոխադրելով վանքի նկուղները կամ իրենց խուցերը։ Ժամանակ առ ժամանակ քահանայապետը հայտնվում էր հավատացյալների առաջ, որպեսզի ավելի բորբոքի առանց այն էլ տաքացած հիմարների եռանդը։ «Նվիրաբերեցեք,— կարծես ասում էր նա իր ամրողջ տեսքով, —նվիրաբերեցեք հանուն Տիրոջ Յեմիուսի»։

Վերջապես իրիկնադեմին անընդհատ վաղվզելուց տանջահար եղած վանականները ստիպված եղան տաճարը փակել։

Մենք չգիտենք, թե վանքն, իսկապես, ինչ գումար է մատուցել Լևոն IX-ին՝ բարնպաշտ խաբեությանը մասնակցելու համար։ Պետք է կարծել, որ վանականները ժլատություն չեն արել, քանզի դրամամուտքը վիթխարի է եղել, միաժամանակ հայտնի է, որ քահանայապետերը սովորություն չունեն օրհնությունները ձրի տալու։

## ՍՈՒՐԲ ՀՈՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լևոն IX-ի գահակալության վերջում նշանավոր աստվածաբան Պետրոս Դամիանոսը նրան դիմել է մի ուղերձով, որն այնքան հետաքրքիր է, որպեսզի դրանից այստեղ մեջբերումներ արվենք։ Պետրոս Դամիանոսը սուրբ Հորը դիմել էր հոգևորականության խայտառակ կյանքի վերաբերյալ խորհուրդ ստանալու համար։

«Մեր պրելատները,— գրում էր աստվածաբանը,— բացեիբաց անառակության են տրվում, թափառաշրջիկությամբ զրաղվում, արշավում ձիերով, իրենց սիրուհիների հետ անամոթաբար կենակցում եպիսկոպոսական պալատներում։ Հավատի այդ անպիտան սպասավորները հավատացյալներին հրում են դեպի անդունդ, իսկ հասարակ հոգևորականությունը հասել է այլանդակության ծայր աստիճանին, և մեղ ոչինչ չի մնում անելու, քան քահանաներին զրկել սուրբ խորհուրդների ծեսերը կատարելուց։ Հոգևոր ծառայի և սպասավորի կոչումը մի այնպիսի արհամարհանքի է արժանացել, որ մենք ստիպված ենք աստծո սպասավորներ հավաքագրել ծախու մարդկանց, վավաշոտների ու մարդասպանների միջից։

Մի ժամանակ առաքյալը մահվան արժանի էր համարում ոչ միայն հանցագործություններ կատարողներին, այլև այն անձանց, ովքեր հանդուրժաղաբար են վերաբերվում նրանց, Ի՞նչ կասեր նա, եթե, վերադառնալով երկիր, տեսներ մեր օրերի հոգևորականությունը։ Վերջինիս առաքելությունը հիմա այնտեղ է հասել, որ քահանաները մեղք են գործում իրենց սեփական երեխաների հետ։ Սրիկաները վկայակոչում են Հռոմի պալատի ցուցասիրությունը, իսկ քանի որ նրանց բոլոր մեղքերին թողություն տալու սակագին ունեն, ապա հանցանքները կատարում են հանգիստ խղճով։

Պետրոս Դամիանոսը մեջ է բերում պապական մի քանի որոշումներ, որոնք աչքի են ընկնում զայրացուցիչ անպարկեշտությամբ։ Հարդելով մեր ընթերցողին, դրանց միջից ընտրում ենք տպագրության համար առավել պիտանիները։ Բայց նույնիսկ մանրաղնիորեն ընտրած այդ մեջբերումները բավական լրիվ պատկերացում են տալիս եկեղեցական օրենսգրքի մասին։

«Քահանան, որը վանական չէ, պատահմամբ կույսի հետ մեղք գործելու դեպքում պարտավոր է ապաշխարել երկու տարի և ծոմ պահել երեք մեծ պասերին, սնվելով միայն հացով ու ջրով՝ երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին։ Եթե երիտասարդ աղջիկը նվիրված է աստծուն և եթե մեղքը պարբերաբար է կատարվել, ապա ապաշխարանքը պետք է շարունակվի հինգ տարի։ Հասարակ կղերականը նման արարքի համար պետք է ապաշխարի վեց ամիս, իսկ կանոնիկոսը՝ երկու տարի»։

Բերելով մի շարք նման օրինակներ, Պետրոս Դամիանոսը պապին թախանձում է անհրաժեշտ միջոցների դիմել, որպեսզի վերջ տրվի հոգևորականության սանձարձակությանը։

Լևոն IX-ի պատասխանը հնչում է որպես ոչ այնքան անկողմնակալ խոստովանություն. արժե մեջբերումներ անել այդ պատասխանից։

«Այն մեղքերը, որ դուք հիշատակում եք,— գրում է նա Պետրոս Դամիանոսին,— արժանի են ամենախիստ պատժի։ Այդ մեղքերից թեկուզ մեկը կատարած հոգևորականը միանգամայն արժանի է կարգալույծ արվելու։ Սակայն նման մեղքեր գործած հոգևոր սպասավորների թիվը միանգամայն անընդունելի է դարձնում այդ միջոցը և ինձ ստիպում է եկեղեցում պահել նույնիսկ հանցագործների»։

Ինչքա՜ն շատ ժամանակակից եկեղեցականներ, հավանաբար, ափսոսում են, որ անցել են այն ժամանակները, երբ հոգևորականությունն օգտվում էր այդպիսի ազատություններից։ Մեր օրերում աշխարհիկ իշխա-

նությունը պատժում է այն փարաջավորներին, որոնք չեն կարողացել թաքցնել իրենց մեղքերը։ Եկեղեցականները դա անվանում են «կրոնի հետապնդում»։

Խորին մոլորություն կլիներ կարծել, թե կղերականների բարոյական մակարդակը բարձրացել է։ Պարզապես բանն այն է, որ այժմ նրանք ստիպված են երկերեսություն անել և թաքցնել իրենց գարշելիությունները. նրանք այնքան հզոր չեն, ինչպես առաջ, որպեսզի արհամարհեն հասարակական կարծիքը, քանզի նրանց իշխանությունն աշխարհի վրա այնուամենայնիվ սահմանափակ է։

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԵՐԿՈՒ ԿՐԱՊԱԿՆԵՐ ԻՐԱՐ ՀԵՏ ՄՐՑՈՒՄ

Լևոն IX-ի մահից հետո սուրբ աթոռը մի ամբողջ տարի մնացել է թափուր. հռոմեացիները չէին համարձակվում առանց կայսր Հենրիխ III-ի թույլտվության քահանայապետ ընտրել։ Այդ գահաթափուրության ընթացքում հռոմեական և հունական եկեղեցիների վեճերը, որ մի ժամանակ առաջացրել էր նշանավոր պատրիարք Փոտը, բորբոքվեցին նոր ուժով և միանգամայն անպարկեշտ բնույթ ընդունեցին։

Հունական եկեղեցին պնդում էր, թե արևմտյան եկեղեցու ոչ ուսմունքը, ոչ էլ կարգապահությունը չեն համապատասխանում սուրբ գրքին ու սուրբ ավանդություններին և, հետևաբար, հերետիկոսական են։ Հռոմեական կուրիան մեղադրում էր հունական եկեղեցին որպես հակաքրիստոնեական կազմակերպություն։

Նրանք վիճում էին հաղորդության, շաբաթ օրվա նշանակության և մի շարք այլ հարցերի առնչությամբ, որոնց երկու եկեղեցիներն էլ լուրջ կարևորություն էին տալիս. ըստ էության, նրանց բանավեճն ուներ զավեշտական բնույթ։

Դա մրցակից երկու կրպակների իսկական պայքար էր։

Եկեղեցիներից մեկը, օրինակ, մյուսին կշտամբում էր նրա համար, որ նա հաղորդության հացը գնում է քաղաքային բլիթանոցներից, իսկ այնուհետև այդ հացը բրդում է եկեղեցական գինու մեջ և հաղորդությունը բաժանում գդալով։

«Դեռ ավելին,— Միքայել Ցերուլարիին գրում էր Հռոմեացի եպիսկոպոս Գումբերտոսը, մեկն այն լեգատներից, որոնց Լևոն IX-ն ուղար-

կնել էր Կոստանդնուպոլիս հունական եկեղեցու հերետիկոսությունների դեմ պայքարելու համար,— դուք կարում եք ձեր հացը երկաթե դանակով, փոխանակ, ըստ սուրբ ավանդության, մատներով կտրելու, ինչպես անում է Երուսաղեմի եկեղեցին»։

«Հաղորդությունից հետո,— շարունակում է Գումբերտոսը,— երեք մի քանի փշուրներ են մնում, մենք չենք այրում, այլ ակնածանքով պնում ենք թանկարժեք տուփի մեջ և հետևյալ օրը ժամերգության ժամանակ բաժանում հավատացյալներին։ Իսկ ձեր հունական տիրոջ սուրբ մարմնի մասնիկները դեն են նետում ձեր խորաններից ադրի հետ»։

Լավ՞ծ բան է, աստվածային նշխարքը, որ խորհրդանշում է Քրիստոսի մարմինը և հոգին, նետում են աղբի մեջ, սուրբ հացակոտորը կտրտում են, ինչպես մի բոված հավ, բաժանում չորս մասի՝ երկու բուդ, երկու թև... Ներեցեք, խնդրեմ,— սուրբ Մարիամի որդու երկու ձեռքեր։ Դեռ քիչ է, որ այդ թշվառին խաչել են, նրան դեռ կտրտում էլ են, ճմռում, փշրում, որպեսզի հետո մարմնի այդ կտրված մասերը նետեն աղբակույտ։ Եվ մի սոված գամփռ, քրքրելով տականքները, չգիտենալով ի՛նչ է անում, կարող է կուլ տալ Քրիստոսի սուրբ սիրտը։

Ինչ ղարհուրելի է աստված լինել, միշտ սարսռելու մի պատճառ կլինի։

Մյուս կողմից, եթե հռոմեական եկեղեցին ավելի պատշաճ է վարվում, հացի փշրանքները պահելով թանկագին տուփիկում, հաղիվ թե այդ արարողությունը հավատացյալներին դուր գա. չէ որ նրանք ըստ սիսկված կլինեն ունել երեկվա մնացուկները... Մտածեցե՛ք հապա, ինչպիսի՞ հպարտության զգացում է համակում ամեն մի հավատացյալի, երբ նա, խնամքով իր խիղճը մաքրելով, ծունկի գալով, պատրաստվում է կուլ տալ հացի պատառը, այդպիսով կարծելով, թե աստված ապրում է իր փորոտիքում. ծնկները մրմռում են, իսկ նա, աչքերը ճակատը թրոջընելով խանդաղատված, ինչպես պատշաճում է նման դեպքերում, հանում է դողդողացող լեզուն՝ սպասելով մի ինչ-որ համեղ բանի, և մոտեցող քահանային տեսնելով՝ մոքում ասում, «Վերջապե՛ս, ոստրե ուտելուց հետո ես ոչ մի բան այնպես չեմ սիրում, ինչպես իմ աստծո առույգացնող արյունը... հիմա ինձ կհյուրասիրեն նրանով...»։ Եվ փոխարենը սառնում է քարթո՛ւ փշրանքներ։

Ջէ՛ դա արդեն չափից ավելի է, դա բոլորովին էլ ծիծաղելի չէ։

Գումբերտոսը, շարունակելով հռոմեական և հունական եկեղեցիների համեմատությունը, գրում է.

«Ինչ վերաբերվում է մեզ, ապա հետևելով Երուսաղեմի եկեղեցու

սովորույթներին, մենք սեղանի վրա դնում ենք բարակ, մաքուր և ամբողջական կտորներ։ Օծելուց հետո մենք դրանք կոտրտում ենք մատներով և տալիս ժողովրդին։ Այնուհետև, որպես Քրիստոսի արյան խորհրդանիշ, մեր շրթունքներին ենք մոտեցնում գինով լի թասը և ըմպում հաճույքով»։

Հաճույքո՞վ։ Ինչ քաղցրասե՞րն է։

Հունական պաշտամունքի մյուս սովորույթները քննադատելու հետ միասին, որ սուրբ աթոռը հերետիկոսական է համարում, Գումբերտոսը արևելյան եկեղեցուն կշտամբում է նրա համար, որ նա վանականներին ու միանձնուհիներին արգելում է փոխանակ հագնելու։

Ինչ խոսք, այդ արգելքն անմիտ է։ Եվ անհասկանալի... Բայց հնարավոր է, որ հանդերձանքի այդ մասի բացակայությունը թույլ է տալիս, ինչպես ասում են... մերկանալ մի ակնթարթում։ Սրտաուռ՞ւչ հոգատարություն այն մարդկանց նկատմամբ, որոնք շտապում են անկողին մտնել։

Մենք չենք անդրադառնում պատարագին և նվազ հետաքրքիր այլ բաներին վերաբերվող երկար ու կատաղի վեճին։ Այդ ցուցակում հետաքրքրական է միայն վերջին կետը, որ բերում է Հռոմի պատվիրակը. Գումբերտոսը հույն պատրիարքներին մեղադրում է այն բանում, որ նրանք եկեղեցու սեղանին դնում են բանջարեղեն և տապակած միս, որպեսզի միաժամանակ ճաշակեն Հիսուս Քրիստոսի մարմնի հետ։

Մեր կարծիքով դա այնքան էլ հիմար բան չէ։ Հացի կտորն ինքնին արդեն համով է, թթե դրան մարդ ավելացնի երկու կոտլետ, մի քանի կարտոֆիլ, անուշեղեն, վրայից էլ թաքուն լավ գինի խմի, ապա այդպիսի նախաճաշով կարելի է փառավորապես կշտանալ պատարագի ժամանակ։ Եվ եկեղեցական գինին էլ ավելի ախորժահամ ու դուրեկան կթվա։ Ի վերջո, այդ պլուկս տաքացնող վիճաբանություններն ավարտվել են փոխադարձ բանադրանքով։ Գումբերտոսը եկեղեցուց վտարեց Կոստանդնուպոլսի պատրիարքին, իսկ վերջինս իր հերթին՝ Հռոմի պատվիրակին։ Երկու կողմերն էլ միմյանց շատ կծու խոսքեր ասացին. պատվիրակն ու պատրիարքը իրար պատվում էին սատանայի դեսպան, բռնատիրող, սրբապիղծ, ոճրագործ, տաժանակրող, բարբարոս և այլ բարեհնչյուն մակդիրներով։

Երկու դար շարունակ, կարճ ընդհատումներով, արևելյան ու արևմտյան եկեղեցիները միմյանց հետ պատերազմի մեջ էին։ Կատաղի վիճաբանությունների հետևանքով մրցող երկու կրոպակների պատակոտումը դարձավ կատարյալ ու վերջնական։

## ՍԱՏԱՆԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ

*Եթե XX դարի շեմին, երբ գիտությունը քայլ առ քայլ պսակազերծում է հինավուրց կրոնական սնոտիապաշտությունները, եկեղեցին դեռ համարձակվում է չարաշահել ապուշների դյուրահավատությունը, եթե նա հանդգնում է հրապարակավ պնդել, թե իբր տասնութ հարյուրամյակ առաջ ապրող կինը գնացել է պիրենյան խաշնարածուհիների մոտ և իրեն հայտարարել աստվածամայր, և այս բոլոր անմտություններըը Ֆրանսիայում հոմերական ծիծաղ չեն հարուցում, ապա կարելի՞ է զարմանալ, որ տգիտության դարերում առավել անհեթեթ, գերբնական առասպելները հալած յուղի տեղ էին ընդունվում։*

*Ահա մի պատմություն, որ մենք վերցրել ենք XVII դարում ապրած ճիզվիտ պատմաբան Մեմբուրից։ Ոմն Գիլդեբրանդ ուղարկվել է Հենրիխ III-ի մոտ՝ խնդրելու Լևոն IX-ին հաջորդ նշանակել եպիսկոպոս Գեդեոդարդոսին, որին հռոմեացիները միահամուռ որոշել էին նստեցնել սուրբ աթոռի վրա։*

*Գորովալից զգացմունքներ տածելով այդ եպիսկոպոսի նկատմամբ, կայսրը, որ նրա հետ ազգակցական կապեր ուներ, վախենում էր, որ խուլրը եպիսկոպոսին, ինչպես հաճախ եղել էր, գերագույն սրիկա կդարձնի։ Նա կարծես կանխատեսում էր, որ գահին բազմելով Գեդեգարդոսը կփոխի իր վերաբերմունքը կայսեր նկատմամբ և կդառնա նրա թշնամին։ Գիլդեբրանդը համառորեն իրենն էր պնդում. կայսրը երկար ժամանակ տատանվում էր, բայց ի վերջո զիջեց։*

*Նոր քահանայապետը պապ հռչակվեց 1055 թ. ապրիլի 16-ին Վիկտոր II անունով։*

*«Որոշ ժամանակ անց,— ասում է Մեմբուրը,— սուրբ Պետրոսի տաճարի մի սարկավագ, որ հանցավոր կապի մեջ էր եղել իր քրոջ հետ և դրա համար էլ պատժվել, որոշեց վրեժ լուծել պապից. սուրբ հաղորդության անոթի մեջ մեծ դոզայով թույն խառնեց, հուսալով, թե պապն ինքը պետք է կատարի հանդիսավոր պատարագը»։*

*Նախքան պատմությունը շարունակելը ուշադրություն դարձնենք հետևյալ հանգամանքի վրա, եվ այդպես, Վիկտոր II-ը սարկավագին պատժել էր հենց այն զանցանքի համար, որ գրեթե ամեն օր կատարում էին հարգելի կղերականության ավելի բարձր աստիճանավորները։ Եվ այդ պատճառով էլ կրքով համակված սարկավագը կատաղության*

՝ մեջ որոշել է բարեպաշտ քահանայապետին հյուրասիրել չիկամկան թույնով։ Հոգևորականության բարքերի համար միանգամայն սովորական երևույթ։

Բայց ինչո՞ւ Քրիստոսն ինքը չպատժեց սարկավագին։ Եվ ինչո՞ւ, ատելած սարկավագին թույլ տվեց թույնը խառնել իր սեփական արյունը...

Բարեպաշտ պատմաբանը, նկարագրելով իր հերոսի հանցանքը, այս հարցի վրա չի խորհել։

Այն իսկ պահին, երբ Վիկտոր II-ը, հանդիսավոր աղոթքն ավարտելով, ձեռքը մեկնեց վերցնելու սուրբ հաղորդության թասը, նրան թվաց, թե թասը կպել է աթոռին, նա նորից փորձեց բարձրացնել, բայց թասը տեղից չշարժվեց... Եվ այնժամ սուրբ հայրը հասկացավ, որ գործ ունի հրաշքի հետ։

Երբ հրաշք է կատարվում, չի կարելի ղլանալ և ծունր չդնել։ Սա մեր սեփական մտորումների արդյունքն է, այլ ոչ թե պատմաբան Մեմբուրի։ Վերցնենք, օրինակ, Լուրդի փոքրիկ հովվուհուն. հենց որ նրա առաջ կանգնեց անարատ կույսը, որ հուզված էր սուրբ հոգու հետ տեղի ունեցած զրույցից, և ասաց, «Ես կուսական հղիացումն եմ», հովվուհին իսկույն նրա ոտքերն ընկավ և տեղնուտեղը նվաղեց։

Երբ գործ ունես հրաշքի հետ, միշտ պետք է ոտքերն ընկնես, փակելով աչքերդ, այլապես հրաշքը կարող է ցնդել։

Վիկտոր II-ը սովորության համաձայն թրխկալով ընկավ գետին, փովելով սեղանի առաջ (Մեմբուրը այս իրադարձությունը նկարագրում է այլ արտահայտություններով, մենք մի թեթև փոխում ենք նրա գրելաոճը, չդիպչելով բովանդակությանը)։ Սուրբ հայրն աստծուն դիմեց մի ջերմեռանդ աղոթքով, խնդրելով այն գաղտնիքը բացել, թե ինչու ինքը ժողովրդի առաջ չկարողացավ բարձրացնել թասը և դրանով իսկ զրկվեց հաղորդության ծեսը կատարելու հնարավորությունից։ Սուրբ հայրն այդ երևույթի մեջ չար ոգու մատն էր տեսնում և բնավ ոչ բարեկամական օգնություն։

Դեռևս բարձր ձայնով չէր արտասանել աղոթքի առաջին բառերը, երբ թունավորողին, որ ծունկ էր չոքել նրա կողքին, սատանան բռնեց ու գլորեց մեջքն ի վար»։

Սարկավագը մեջքն ի վար, սուրբ հայրը՝ փորն ի վար, քիթը հատակին քսած... Սքանչելի՜ տեսարան։

Հանցագործը խոստովանեց իր հանցանքը։ Վիկտոր II-ը, իրեն երջանիկ ղգալով, որ մահից փրկվել է հրաշքով, դիվահարի նկատմամբ

կարեկցությամբ համակվեց (ուրախությունը մարդկանց ներողամիտ է դարձնում). նա բոլոր հավատացյալներին առաջարկեց շնորհակալական աղոթք ուղղել աստծուն և իր հետ միասին աղոթել, որ նա հալածի խավարի ոգուն։

Երբ սատանան անհետացավ, սուրբ հայրը հեշտությամբ բարձրացրեց թասը և փակեց խորանում»։

Ինչո՞ւ, սատանան տանի, նա ցանկացավ պահել գինին, այսինքն Քրիստոսի թունավորված արյունը։ Որպեսզի այդ թասը միացնի, ինչպես Մեմբուրն է հավաստում, կաթոլիկ եկեղեցու մասունքներին։

Ի՞նչ կա որ, այդ հավաստումը նույնքան համոզիչ է, որքան անեկդոտն ինքը։ Սակայն կղերականները շատ հաճախ այլ կերպ են վարվել այդ տեսակ զովացուցիչ խմիչքների հետ։ Երբ Վիկտոր II-ը թասը թաքցներ նրա համար, որ վերջիվերջո խմիչքով հյուրասիրեր իր ընկերներից մեկին, ապա հավատարիմ կմնար եկեղեցու ավանդույթներին ու իր կուրիայի ոգուն։

## ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԸ

Վիկտոր II-ի գահակալության ժամանակ Ֆրանսիայում բազմիցս Եկեղեցաժողովներ են հրավիրել, որտեղ իսկապես ջանում էին հոգևորականության մեջ կարգուկանոն հաստատել։

Կղերականները շարունակում էին շվայտ կյանք վարել, միմյանց հետ մրցելով կաշառակերության մեջ, բոլոր միջոցներով կողոպտում էին դյուրահավատ ժողովրդին, որը չէր հասկանում, որ կրոնն առևտուր է, ավելի անբարոյական առևտուր, քան դրա որևէ տեսակը։

Եկեղեցին այլևս չէր բավականանում նրանով, որ հարկերով հյուծել և սովով ուժասպառ էր արել հասարակ ժողովրդին. նա ձգտում էր իր իշխանությունը տարածել ֆեոդալների վրա։ Երկրի կառավարումը նման էր մի բուրգի, որի գագաթին թագավորում էր կղերը, կենտրոնում՝ ազնվականությունը, իսկ ներքևում գտնվում էին աշխատավոր մարդիկ, որոնք տառապում էին հարստահարողների լծի տակ։

Եկեղեցաժողովներում իրենց դատավոր հոչակած պրելատները մեղավոր էին շատ անգամ ավելի մեծ չափով, նույն այն հանցանքների մեջ, որոնց համար մեղադրում էին մեղադրյալներին։

Առլի, Էվկի և Նարբոնի եպիսկոպոսները, որպես պապի լեգատներ,

Տուլուզում եկեղեցաժողով հրավիրեցին. Նարբոնի դուքս Բերանժերը բողոք էր ներկայացրել իր արքեպիսկոպոս Ժոֆրուայի դեմ։ Նարբոնում Ժոֆրուան ժամանակին եպիսկոպոսություն էր ստացել Բերանժերի առաջարկությամբ, երդվելով, թե ոչ դուքսը, ոչ նրա կողմնակիցները, ոչ եպիսկոպոսությունը իր կառավարչությունից վնաս չեն կրի։

Իհարկե, Ժոֆրուան շատ շուտով դրժել էր երդումը. նա սկսել էր վաճառել եկեղեցական գույքը և կանոնիկոսների հոդակտորները, ընծաներ տալով իր արու և էգ հարճերին։ Ամրոցներ կառուցելու համար նա հսկայական գումարներ էր ծախսել և ի վերջո հազարավոր մարդկանց մահվան դատապարտել արյունալի պատերազմ հայտարարելով դուքս Բերանժերին։

Բացի դրանից, նա իր եղբայր Վիլհելմի համար հարյուր հազար էկյու ոսկով ամբիոն էր գնել, այդ գումարը վճարելով խաչերով, թառերով, թանկարժեք մասունքներով, ոսկե և արծաթե անոթներով, որ վաճառել էր վաշխառուներին։

Դուքս Բերանժերը լեգատներին խնդրեց սպային համոզել, որ նա արքեպիսկոպոսին պատժի։ Բայց եկեղեցականները, գայլերի նման, առանց մեծ կարիքի իրար չեն խժռում։ Ժոֆրուան, որը պատարան էր ներկայացել, անմեղ ճանաչվեց։ Լեգատները շատ արագ իրար հետ լեզու էին գտել։ Բերանժերի հարցը մերժվեց, և շուտով նա ստիպված էր եպիսկոպոսի դեմ կռվելու համար նոր զորք հավաքել։

Ո՞վ պետք է վճարի ջարդված ամանեղենի համար։ Իհարկե՛, ժողովուրդը։ Միշտ ժողովուրդը, և միայն ու միայն ժողովուրդը։

## Ի՞ՆՉ ԱՐԺԵ ԱՄԵՆԱԼԱՎ ՊԱՊԸ

Ի՞նչ արժե ամենալավ պապը։ Կարելի է, առանց մտածելու, պատասխանել. ոչինչ էլ շարժե, գրող է նրա գինը։

Կաթոլիկ եկեղեցու պատմության մեջ Վիկտոր II-ը հռչակվել է որպես բոլոր պապերից ամենալավը։ Եկեղեցական տարեգիրները փառաբանել են նրա իմաստությունը, բարեմասնությունները, արդարամտությունը։

Թե ինչքան է նա արդարամիտ եղել, երևում է հետևյալ միջադեպից։ Հոգևորականությու՛ը և հողային մագնատները ավերում էին

Ֆրանսիայի նահանգները (նարբոնցի արքեպիսկոպոս Ժոֆրուան, որի մասին մենք պատմեցինք, շատ ընդօրինակողներ ուներ. ասպատակություններն պատերազմները չէին վերջանում)։ Հռոմի արքունիքին բողոք ներկայացնելն անիմաստ բան էր. շահում էր նա, ում հովանավորներն ավելի ուժեղ էին դուրս գալիս։

Վիկտոր II-ի գահակալության ժամանակ ամենակատաղի մարտերը տեղի էին ունենում Մոնտե-Կասինոյան աբբայության շուրջը, որը հայտնի էր իր լայնարձակ հողերով, շարժական ու անշարժ գույքով։

Աբբա Ռիշարի մահից հետո վանականները վանահայր ընտրեցին ազնվաբարո ծնունդ Պետրոսին, որն ամբողջ կյանքը նվիրաբերել էր Սուրբ գրքի ուսումնասիրությանը։

Նրա աշխատությունները մարդկությանը մեծ բարիքներ չբերեցին. նույն հաջողությամբ նա կարող էր լախտի խաղալով զբաղվել. բայց համենայն դեպս, քանի դեռ ազնվասիրտ այդ մարդը տքնում էր ավետարանի վրա, նա որևէ մեկին վնաս չէր տալիս. այն էլ ասենք, որ շատ ավելի լավ է զբաղվել որևէ անմիտ բանով, քան հասարակաց տներ պահել կամ անձնատուր լինել անառակության, կամ զբաղվել փող կատակելով։

Հիրավի, աբբա Պետրոսը ազնիվ մարդ էր. սակայն նրա թեկնածությունը կղերականությանը դուր չեկավ, գլխավորապես այն պատճառով, որ նրա ընտրությունը ոչ մի օգուտ չտվեց, եթե ընտրողները ցույց տային իրենց առատաձեռնությունը և սուրբ Պետրոսի գանձարանը համապատասխան գումար մուծեին, գործը դեռ կարելի էր շտկել, և սուրբ Հոր հետ հաշտվելու միջոց կգտնվեր։ Վանականները զանց էին առել այդ կարևոր ձեռնարկությունը, և տարաբախտ Պետրոսը կյանքից զրկվեց նրանց ոչ այն է ժլատության, ո՛չ այն է մոռացկոտության պատճառով։

Զայրացած Վիկտոր II-ը Մոնտե-Կասինո ուղարկեց կարդինալ Գուբերտոսին՝ նոր վանահոր ընտրությունը չեղյալ հայտարարելու հանձնարարությամբ։ Որպեսզի համակոր վանականները, ստիպված լինեն հարգել պապի կամքը, կարդինալը Մոնտե-Կասինոյի վանքը գինվորների մի ջոկատ մտցրեց, ուժով կալանեց Պետրոսին և ուղարկեց Հռոմ։

Սուրբ հայրը բարեպաշտ ծնունդին նետեց Լաթերանյան պալատի նեղքնահարկը, որտեղ և նա սովից մեռավ։

Ահա այս Վիկտոր II-ին է տարեգիրը համարում լավագույն պապերից մեկը։

Այդ սխրանքից հետո Վիկտոր II-ն ուղևորվեց Գերմանիա՝ իր աղ-

գական Հենրիխ III-ի հանկման մահիճի մոտ, թագավորի մեռնելուց առաջ Գերմանիայի եպիսկոպոսները և մեծամեծները հավատարմության երդում տվին Հենրիխի հինգ տարեկան որդուն, իսկ թագուհի Աղնեսային խնամակալ հռչակեցին։

Վիկտորը շուտով Իտալիա վերադարձավ, ժամանելով Տոսկանա, նա իրեն վատ զգաց և հանկարծամահ եղավ 1052 թվ. հուլիսի 28-ին։

Նրա անակնկալ վախճանի հանելուկային բնույթը թույլ է տալիս ենթադրել (թեև տարեգրությունն այդ մասին լռում է), որ Վիկտոր II-ը դող է դարձել ճիշտ նույնպիսի դավադրության, որից հրաշքով փրկվել էր իր գահակալության սկզբում։ Բարի ամուսածն այս անգամ զբաղված է եղել մի ուրիշ տեղ, կամ թերևս, հյուշքներ կատարելու տրամադրություն չի ունեցել։

Ստեփանոս X-ը, որ փոխարինեց Վիկտոր II-ին, իր նախորդի նման փորձում էր զրավել Մոնտե-Կասինյան աբբայության գանձերը։ Այդ նպատակով նա վանքի վանահայր Դիդիեին Կոստանդնուպոլիս ուղարկեց մի առաքելությամբ, որն ի սկզբանե դատապարտված էր ձախողման։ Պապը հույս ուներ, որ վանահոր բացակայությամբ հեշտ կլինի վանականների հետ հաշիվ տեսնել։ Սակայն, երբ վանականները կատարեցին նրա խստագույն հրամանը և բերին իրենց հեքիաթային հարստությունները, Ստեփանոս X-ը հանկարծ իր որոշումից ետ կանգնեց պահանջելով, որ վանականները տուն վերադառնան իրենց գանձերի հետ միասին։

Ստեփանոս X-ի անսպասելի արարքը տարեգիրը բացատրում է իր վերաստ տրված «աստվածային ներշնչմամբ»։ Բայց անմիջապես ավելացնում է, թե վանքի գանձերը սուրբ հորը հանձնող մոլեռնած վանականի ճառը լի էր սպառնալիքներով։

Դրանից քիչ հետո Ստեփանոս X-ը գնաց Տոսկանա՝ եղբոր հետ քննարկելու, թե ինչպես պետք է վարել հետագա պայքարն ընդդեմ կայսեր, որը բացեիբաց ջանում էր պապի հետ մրցել քրիստոնեական աշխարհի վրա ունենալիք իր ազդեցությամբ։ Ֆլորենցիա ժամանելով 1058 թվ. մարտի 29-ին, Ստեփանոս X-ը հանկարծամահ եղավ։

## ԴԺՎԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Նույն այն գիշերը, երբ Հռոմն իմացավ Ստեփանոս X-ի անսպասելի մահվան մասին, քաղաքի ավագները քահանայապետ ընտրեցին Վիլետրիի եպիսկոպոս Ջովանի Մինչիոյին։ Հարկավոր է նշել, որ դեռևս իր մեկնելուց առաջ Ստեփանոս X-ը կարդինալներին և հոգևորականության առավել ազդեցիկ ներկայացուցիչներին ստիպել էր երդվել, որ իր մահվան դեպքում նրանք հաջորդ չեն ընտրի մինչև Գիլդեբրանդի վերադարձը, որին նա Գերմանիա էր ուղարկել։

Պետրոս Դամիանոսը, ցանկանալով հավատարիմ մնալ Ստեփանոս X-ին տված երդմանը, փորձեց դիմադրել նոր պապի հռչակմանը, բայց ձախողվեց և ստիպված եղավ փախչել, ցանկանալով փրկվել Տոսկանելլի կոմսերի դինվորների հետապնդումից, որոնք սպառնում էին սպանել նորաթուխս սուրբ Հոր բոլոր հակառակորդներին։

Մի ոմն արքեպիսկոպոսի բռնությամբ բերին տաճար և գրեթե դաշույնի շեղբի տակ ստիպեցին սրբազան խույրը դնել Մինչիոյի գլխին, որն ընդունեց Բենեդիկտոս X անունը։

Այդ ժամանակ վերադարձավ Գիլդեբրանդը։ Իմանալով Բենեդիկտոսի ընտրության մասին, նա հարձակվեց հոգևորականության ու Հռոմի ազնվականության վրա, կշտամբելով թուլակամության համար, որը Տոսկանելլիներին թույլ էր տվել նրանց վրին փաթաթել մի պապ, որին նրանք չէին ցանկանում։ Գիլդեբրանդը համառորեն պահանջում էր Բենեդիկտոսին վտարել և նոր ընտրություններ նշանակել։

Պրելատների մեջ պառակտում առաջացավ. կայսեր կողմնակիցները միավորվեցին Գիլդեբրանդի շուրջը, ֆեոդալների դասակները պաշտպանեցին Բենեդիկտոս X-ին։ Գիլդեբրանդի կուսակցությունն ընտրեց նոր պապ, որը գահ բարձրացավ Նիկողայոս II անունով։ Այսպիսով, այս անգամ ևս պապական աթոռի վրա միաժամանակ հայտնվեցին երկու քահանայապետեր։

Առաջինը բութ էր և աչքի էր ընկնում անլուր տգիտությամբ։ Նա նույնիսկ կարդա՞լ չգիտեր։ Ինչ վերաբերում է երկրորդին, ապա նա փառասեր էր, ագահ և չափազանց կեղծավոր։

Դժվար է որոշել, թե ում դրածոն էր ավելի լավը։ Բենեդիկտոս X-ն իրեն երևելի անձ էր ձևացնում, բայց միևնույն ժամանակ ամեն մի

Հարց լուծելիս փակուղու մեջ էր ընկնում, որանով իսկ նվաստացնելով առաքելական աթոռը. անզոր ղգալով շարունակել պայքարը, այդ թշվառ ապուշը գերադասեց տեղը ւիջնել իր մրցակցին։

1059 թվին Նիկողայոս II-ը Գիլդերբրանդի հետ մի դեկրետ հրապարակեց, որի հիման վրա եկեղեցու միայն այն բարձրագույն աստիճանավորները, որ մտնում էին հատուկ կոլեգիայի՝ կոնկլավի մեջ, իրավունք էին ստանում քահանայապետ ընտրվելու։ Կայսրին (Գերմանիայի թագավորներն այն ժամանակ Սրբազան Հռոմեական կայսրության կայսրեր էին կոչվում) իրավունք էր տրվում միայն բացառել իր համար անընդունելի անձնավորություններին։ Այդ դեկրետը հարված էր հասցնում ոչ միայն ֆեոդալների իրավունքներին, այլև կայսերական իշխանության։

Նիկողայոս II-ը հազիվ թե որևէ բանով տարբերվում էր իր նախորդներից։ Նա ճարպկորեն վաճառում էր ամեն տեսակ պաշտոններ, հրովարտակներ ու տիտղոսներ։ Բացի դրանից, այդ խորամանկ սրիկան խիստ դաժան էլ էր։

Ոմն Բերանժեր, որ Սան-Մորիցում փոխսարկավագ էր, սուրբ Հաղորդության խորհրդի հարցերում համաձայն չէր տեսեական եկեղեցու հետ։ Սուրբ հայրը, իբր մի թեթև կշտամբելու համար, շատ սիրալիր կերպով նրան Հռոմ հրավիրեց։ Երբ Բերանժերն ընկավ քահանայապետի ձեռքը, առանց որևէ դատի կամ հարցաքննության նրան բանտ դրին և այնտեղից դուրս չթողին, մինչև որ սպառնալիքների ներքո չհրաժարվեց իր սխալներից։

Մնացած բոլոր բաներում Նիկողայոս II-ի գահակալությունն առանձին հետաքրքրություն չի ներկայացնում։ Հետաքրքրական է միայն մի փոքրիկ դրվագ. ինչպես պնդում են տարեգիրները, օր չէր լինի, որ Նիկողայոս II-ը տասներկու աղքատի ոտքեր չլվանար։ Եթե դա իսկապես ճիշտ է, ապա այդ արարքը ցույց է տալիս միայն նրա երևելոհանութիյունը։ Ավելի լավ չէ՞ր լինի պարզապես կերակրել թշվառներին, քան թե տխմարագույն ծիսակատարությամբ ծաղրաւատճենել Քրիստոսին վերագրված առասպելը։

Նիկողայոս II պապը մեռավ Ֆլորենցիայում 1061 թվ. հուլիսին։

## ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹՅՈՒՆ

*Հարևանցիորեն հիշատակենք մոլեռանդության մի դեպք, որը վառ կերպով պատկերում է մարդկային բանականության անկումն այն միստիկական անմտությունների ազդեցության ներքո, որ օրինականացրել էր եկեղեցին։*

*Նիկողայոս II-ից հետո պապական աթոռին բազմած Ալեքսանդր II-ի գահակալության ժամանակ Լուչնոլի վանքում, Ումբրիայում, ապրում էր մենակյաց սուրբ Դոմինիկոսը, որին օդապրահակիր էին անվանում, որովհետև ճգնավորական շղթաների փոխարեն երկաթի օդապրահ էր կրում։ Վանքում տասնութ մարդ էր ապրում. նրանք միայն ջուր էին խմում, իսպառ հրաժարվում մսից ու յուղից, ևփած բանջարեղենին ձեռք էին տալիս միայն կիրակի օրերին, մնացած օրերին միայն հաց էին ուտում, այն էլ շատ քիչ քանակությամբ։ Բացի դրանից, նրանք իրենց դատապարտել էին իսպառ լուության և միայն կիրակի օրերը երեկոյան ժամասացության ընթացքում մի քանի բառ էին փոխանակում։*

*Ս։ Դոմինիկոսը այդ ռեժիմը համարում էր ոչ բավականաչափ խիստ և ավելացրել էր իր պասի օրերի թիվը, ինքն իրեն ենթարկելով դաժան զրկանքների։ Ձմռանը նա քնում էր խուցի պռան առաջ, հագին երկաթալարից հյուսված մեն մի շապիկ, և ծածկվում էր զրահով. իր դեմքն ու ամբողջ մարմինը ձաղկում էր փշերով։ Մի անդամ, արյունլվա դեմքով հայտնվելով վանահոր առաջ, Դոմինիկոսը նրա ոտքերն ընկավ աղաղակելով.*

*— Հայր իմ, ծանր մեղք եմ գործել, ինձ վրա խիստ ապաշխարանք դիր։*

*Այդ սուրբ խնդարը իրեն թույլ էր տվել հացի հետ մի քանի տերև ծամել։*

*Դոմինիկոսը աղոթում էր ձեռքերը խաչած, տասներկու սաղմոսներից յուրաքանչյուրը կարդում էր ութսուն անդամ, դրանց վրա հիմներ և լիտանիներ ավելացնելով։*

*Գերազա՞նց վարժություն։*

*Մեռնելուց մի քանի տարի առաջ, համոզվելով, որ կաշե գոտիներն ավելի պինդ են, քան ճիպոտները, նա իրեն սկսեց տանջել գոտիներով։ Ի վերջո, մաշկը սպիներից սևացավ նեգրի մաշկի պես։ Օդապրահի տակ նա կրում էր նաև ութ երկաթե օղակ, որ խրվել էին մարմնի մեջ։*

Ասում են, թե այդ ցնորվածը երկար է ապրել։ Արդյոք պատճառն այն չէր, որ «երկաթե ռեժիմ» էր պահպանում։ Փոխանակ սպիտակուցներ, կիտրոնաթթու կամ այլ համեմունքներ կլանելու, նա աստիճանաբար իր մարմնի մեջ էր մտցրել երկաթաթել, նույն մետաղից պատրաստված օղակ։ Գուցե այդ պրոցեդուրան իսկապես օգտակար է, բայց մենք չենք համարձակվում առաջարկել մեր ընթերցողին։

«Անապատի հայրերի» մեջ շատ մենակյացներ սրբի բացառիկ համբավը նվաճել են մասամբ այն անլուր տառապանքների շնորհիվ, որոնց ենթարկում էին իրենք իրենց, մասամբ էլ նրանց վերագրված հրաշագործությունների շնորհիվ։ Ծանր խոշտանգումներից տուժում էր նաև նրանց միտքը, և այդ պատճառով զարմանալի չէ, որ այդ մարդիկ ունենում էին հալյուցինացիաներ ու պատրանքներ, որպիսիք ընկալում էին իբրև իրականություն։ Դա նպաստեց առանց այն էլ խանգարված բանականության առավել խանգարմանը։

## ՄԱՐՏԵՐ ՊԱՊԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՄԱՐ

Սովորաբար յուրաքանչյուր նոր պապի ընտրությունը կատարվում էր Գերմանիայի կայսեր համաձայնությամբ։ Չնայած որ հռոմեացիներն արդեն բազմիցս ստիպված էին եղել դառնորեն հատուցել Սրբազան Հռոմեական կայսրության թագավորներին չլսելու համար, այնուամենայնիվ Նիկողայոս II-ի մահից հետո նրանք փորձեցին անկախ ընտրություններ կատարել։ Վանական Գիլդերբրանդը, որին ընթերցողն արդեն ծանոթ է, որոշեց, որ Հենրիխ թագավորի պատանեկան տարիքը Հռոմի արքունիքին թույլ է տալիս պապ ընտրել ինքնուրույնաբար։ Կարդինալների ու Լատերանոսների մեծամասնությունը պաշտպանեց Գիլդերբրանդին, բայց Տուսկանելլիները և այլ ազնվազարմ ֆեոդալներ, որոնց շահերը հակադրվում էին հոգևորականության շահերին, այս անդամ հանդես եկան կայսրության հեղինակության պաշտպանի դերում, իսկ քանի որ նրանք ունեին ծանրակշիռ փաստարկ՝ ուժեղ բանակ, Գիլդերբրանդը չհամարձակվեց նյանց ընդդիմանալ։

Այնուամենայնիվ նա փորձեց օգտվել Նիկողայոս II-ի դեկրետից, ըստ որի քահանայապետերը պետք է ընտրվեին հռոմեական եկեղեցու բարձրագույն աստիճանավորների միջից. միայն այն դեպքում, երբ

Հռոմում չգտնվեր մի կղերական, որ արժանի լիներ դառնալու երկրի վրա Քրիստոսի տեղապահը, խուլլատրվում էր ընտրել կայսեր կողմից մատնանշված օտարերկրյա քահանայի։ Դիլդերբրանդը մի քանի դեսպանություններ ուղարկեց Գերմանիա՝ Հենրիհ թագավորի մայր և կայսրության ռեգենտ կայսրուհի Ագնեսայի մոտ, խնդրելով թույլ տալ կոնկլավ հրավիրել՝ Նիկողայ II-ի դիակրետի հիման վրա պապ ընտրելու համար։

Երեք ամիս անց պատվիրակները վերադարձան, չկարողանալով Ագնեսայից ունկնդրություն ստանալ։ Այնժամ Դիլդերբրանդը որոշեց գործել իր պատասխանատվությամբ. նա Հռոմ կանչեց նորմանական զոկատներ, ապա հավաքեց կարդինալներին ու հավատարիմ մեծամեծներին և նրանց առաջարկեց գահ բարձրացնել Լուքի եպիսկոպոս Անսելմոյին։ Անսելմոյին պապ հռչակեցին Աղեքսանդր II անունով։

Անզոր լինելով խանգարել այդ ընտրությունը, ֆեոդալական կուսակցությունը, Տուսկանելլիների գլխավորությամբ, կայսրուհու մոտ դեսպաններ ուղարկեց։ Զարլատանքն իզուր չանցավ. գումարվեց եկեղեցաժողով, որը տապալեց Աղեքսանդրին և պապ հռչակեց Պարմի պրելատ Կադալոս Գաղավիանոսին՝ Հոնորիոս II անունով։

Ավելի լավ թեկնածու չէր էլ կարելի գտնել. Կադալոս Պաղավիանոսը հայտնի էր իր հարճերի հսկայական անձնակազմով. նրա օկրուգում բոլոր գեղեցիկ կանանց ամուսիններն արժանացել էին եղջյուրակրի պատվավոր կոչումը կրելու պատվին։ Բայց ահա, Կադալոս Պաղավիանոսը յուրօրինակ պատրաստում ուներ սեփականության մասին. եկեղեցու սրամիտ, որ անցնում էր նրա ձեռքով, շատ հաճախ տեղ չէր հասնում և ընկնում էր նրա անհամար սիրուհիների անկողնախորշերը։ Սեղմ քահանաներն իզո՞ւր էին ոռնիկի սպասում։ Ճիշտ է, եպիսկոպոսների մեծ մասը մի ժամանակ ծառայում էր և՛ վեներային, և՛ Քրիստոսին։ Պարզ ասած, նրանք հասարակաց տներ էին պահում և այնքան հոգատար էին հաճախորդների նկատմամբ, որ գործերը ծաղկում էին։ Բայց այդ նկատառեր համատեղությունն էլ չէր կարողանում ծածկել նույնիսկ իր՝ Կադալոս Պաղավիանոսի անհերհակայելի ծախսերը։

Ինչպես տեսնում ենք, Կադալոսն ուներ քահանայապետի համար անհրաժեշտ բոլոր հատկություններըւ

Ընտրվելուն պես Կադալոսը, նույն ինքը Հոնորիոս II-ը մեծ բանակ հավաքելով, շարժվեց Հռոմի վրա, նախապես կաշառելով Աղեքսանդր II-ի կողմնակիցներին։ Ճանճանալով, որ իրեն դավաճանել են, Աղեքսանդրը շտապեց թողնել Լաթերանյան պալատը և հուսալով դուքս

Գոտֆրիդից օգնություն ստանալ, շտապեց Տոսկանո փախչել՝ Գայթակղվելով կայսերական թագով, Գոտֆրիդը սկսեց դինվորներ հավաքել, որպեսզի Հոնորիոսի դեմ դուրս գա։

Այդ ժամանակ Մոնտե-Կասինոյի վանահայր Դիդյեն, որը նույնպես Աղեքսանդրի կողմնակից էր, գործի դնելով իր ոսկին ու նվերները, հռոմեացիներին համոզեց ապստամբել Հոնորիոսի դեմ։ Բայց վարձկան զոհատները, որ կազմված էին անկարգ և միաժամանակ ոչ այնքան խիզախ ռազմիկներից, նահանջեցին, չդիմանալով առաջին իսկ զրոհին։ Հոնորիոսը հրամայեց անխնա ջարդել նահանջողներին, իսկ ինքը, սըրբազան զայրույթով տոգորված, սուսերամարտում էր շատ ավելի կատաղի, քան պահանջում էին հանգամանքները, որովհետև վինվորների քայքայված շարքերն այլևս ոչ մի վտանգ չէին ներկայացնում։

Սակայն ռազմական բախտն ևս փոփոխական է։ Այն պահին, երբ թվում էր, թե Հոնորիոսի հաղթանակը այլևս կասկած չի հարուցում, դուքս Գոտֆրիդը հարձակվեց նրա ավազակախմբերի վրա և գլխովին ջախջախեց. պապը կոտորածից հարրած, նույնիսկ չնկատեց իր հակառակորդի մոտենալը։

Հոնորիոս II-ը գերի վերցվեց, բայց նրա կողմնակիցները կաշառեցին պահապան սպաներին, և նա կարողացավ ազատվել։ Պարզ վերագառնալով, Հոնորիոսը, չնայած իր պարտությանը, շարունակում էր հանդես գալ պապի դերում։ Օգտվելով բոլոր արտոնություններից, նա պաշտոններ էր վաճառում, լցնում իր գրպանները։ Եթե Հոնորիոսը մի քիչ համեստ լիներ, կապրեր ուրախ ու զվարթ, սակայն նրա փառասիրական նկրտումները չէին թողնում հաշտվել կիսապապի դրության հետ։ Նույրը զավթելու երկրորդ փորձից հետո այդ իշխանասեր մարդն ստվարտեց իր երկրային գոյությունը։

## ԱԼԴՈԲՐԱՆԴԻՆԻՆ ԿԱՄ ԱՆԿԻՉԵԼԻ ՎԱՆԱՀԱՅՐ

Աղեքսանդր II-ի պահակալության սկզբում ալորենցիան, ևկեղեցական երկպառակություններով բռնված, ճակատամարտի դաշտ դարձավ։ Եպիսկոպոս Պետրոս Պավիացին և վալեմբրոզեի վանքի նոր վանահայր Հովհաննես Գվալբերտոսը միմյանց դեմ բացահայտ կռիվ սկսեցին։

Գվալբերտոսը հրապարակավ Պետրոսին մեղադրեց սիմոնական թյան մեջ և չեղյալ հայտարարեց ժամերգություն կատարելու և քահանաներ նշանակելու նրա իրավունքը։ Կրքոտ հռետոր Գվալբերտոսը իր պերճախոսությամբ կարողացավ արժանանալ առանց այն էլ մոլեռանդ ժողովրդի ուշադրությանը, որի հետևանքով երկու հակադիր բանակների միջև փողոցային արյունալի կռտոյածններ տեղի ունեցան։

Եպիսկոպոս Պետրոսը որոշեց սանձահարել կամակոր վանականներին ու հանդուգն հռետորին։ Հասկանալով, որ բանավոր փաստարկները ոչ մի արդյունք չեն տա (Պետրոսը լա՜վ գիտեր իր եղբայրակիցների բարքերը), զինված ջոկատի գլուխ անցած, նա հարձակվեց Վալոմբրոզեի վանքի վրա և բռնեց վանահոր առավել թնդ կողմնակիցներին, բոլորին հրամայելով տկլորանալ։ Երբ «ընտրյալները» նախահայր Ադամի հագուստով կանդնեցին եպիսկոպոսի առաջ, նա կարգադրեց խարազանել նրանց մարմնի փափուկ մասերը (այն մասերը, որոնցով հոգատար բնությունը օժտել է մարդուն, որպեսզի նա հնարավորություն ունենա նստելու...)։

Կասկածում եմ, որ այդ պատժի ժամանակ վանականները «Ալելույա» երգած լինեն։ Դասը դաժան էր, բայց օգտակար։ Գվալբերտոսն ու նրա վանականները դադարեցրին եպիսկոպոսի դեմ իրենց հրապարակային ելույթները և նույնիսկ չէին համարձակվում վանքի պատերից դուրս գալ։ Սակայն իրենց հոգու խորքում նրանք չէին կարող մոռանալ ստացած հարվածները և երազում էին վրեժխնդիր լինել։

(Հակառակ Քրիստոսի պատվիրանին, քահանաները երբեք մյուս այտը հարվածի տակ չեն դնում. ընդհակառակը, նրանք միշտ դանակը սրած են պահում, իհարկե, եթե դա վտանգի հետ չի կապված)։

Վանականներն իրենց ներկայացուցիչներին ծածուկ ուղարկեցին պապի մոտ, խնդրելով նկնդեցաժողով հրավիրել, որը Պետրոսին կդատապարտեր սիմոնականության, արյունապղծության և սպանությունների համար։ Իսկ իրենց մեղադրանքների արդարացիությունն ապացուցելու համար նրանք առաջարկեցին աստծո դատաստան, այսինքն՝ հրադատություն կատարել։

Պապն այդ առթիվ չլրսևորեց ոչ մի խանդավառություն. սովորաբար ձեռնածուին չի դրավում այն հնարը, որի դաղտնիքները նրան արդեն հայտնի են։ Բացի դրանից, Ալեքսանդր II-ը, հավանաբար, ձեռնըտու չի համարել հեղինակազրկել եպիսկոպոսին, մանավանդ որ վանականներն էլ մի առանձին համարում չունեին քաղաքում։ Եվ այդ պատճառով էլ, հրաժարվելով հկնդեցաժողով հրավիրել, նա վանա-

կաններին մի գրավոր կարգադրություն ուղարկեց, որը բանագրանքի սպառնալիքի տակ նրանց պարտավորեցնում էր նստել իրենց խցերում, դուրս չգալ ո՛չ քաղաք, ո՛չ էլ գնալ դղյակները, նույնիսկ եթե բնակիչներից որևէ մեկը նրանց հրավիրեր։ Այնուհետև պապը Պետրոս Դամիանոսին շտապ ուղարկեց Ֆլորենցիա, հանձնարարելով հանգստացնել այդ հրամանի պատճառով հուզված բնակչությանը։ Սակայն ո՛չ Պետրոս Դամիանոսի իմաստնությունը, ո՛չ նրա խնդրանքներն ու հորդորները արդյունք չտվին։ Գվալբերտոսն իր վանականների գլուխն անցած գնաց Դամիանոսի ապաստարանը, նրան ամեն տեսակ վիրավորանք հասցրեց և ժողովրդին կոչ արեց ղենքը ձեռքին վռնդել եպիսկոպոսին ու պապի պատվիրակին։

Գործը կարող էր ողբերգական ընթացք ստանալ, եթե չլիներ դուքս Գոտֆրիդի միջամտությունը։ Նա վանականներին սպառնաց, թե նրանց կկախի վանքի պարսպամոտ ծառերից, եթե այսուհետև համարձակվեն մարդամեջ դուրս գալ։

Սպառնալիքը որոշ չափով խաղաղեցրեց ռազմատենչ վանականներին։ Սակայն բնակչությունը չհանդարտվեց։ Հաջորդ օրն ամբոխը ներկայացավ Հովհան Գվալբերտոսին՝ խնդրելով սարքել այն աստծո դատաստանը, որ նա ժամանակին առաջարկել էր պապին։

Ափսոս որ այդ դատաստանին չեն դիմում մեր օրերում։ Իսկապես, մեղանչած նկեղեցականներին դատի տալու փոխարեն ավելի լավ չի՞ լինի մեկ կամ երկու ժամ նստեցնել մի կարգին խարույկի վրա։ Եթե մեղադրյալը կրակից անվնաս դուրս գա, կնշանակե անմեղ է, իսկ եթե, ընդհակառակը, ածխանա ինչպես սովորական մսի կտոր (անուշադիր խոհարարի մեղքով), ապա, հետևաբար, այդ է ամենազորի վճիռը, և դատարանը նրանով զբաղվելու հարկ չունի։ Այդ դատավարությունը լիովին համապատասխանում է աստծո ամենագիտության եկեղեցական ուսմունքին, այն աստծո, առանց որի կամքի հավատացյալի գլխից մի մազ իսկ չի պակասում։

Կարող եք պատկերացնել, թե ինչպիսի՜ աղաղակ կբարձացնեին կղերականները, եթե որևէ մեկը լուրջ վերաբերվեր այդ նախագծին։

Վալոմբրոզեի վանականները (որոնց հավատը հազիվ թե որևէ բանով տարբերվում էր ժամանակակից եկեղեցականների հավատից) համաձայնվեցին, ինչպես ավանդությունն է ասում, իրենց ենթարկել փորձարկման, որին սպասում էր ժողովուրդը։

Այդ անհավատալի տեսարանը նրանք սարքեցին պասի առաջին շաբաթվա չորեքշաբթի օրը, 1063 թվականին։

Սկզբում վանքի ամբողջ միաբանությունը խարույկ բարձրանալու ցանկություն հայտնեց, բայց երբ հնչեց ժամը, վանականները գերազանցին, որ հրաժարվեն փորձը կատարվի իրենցից միայն մեկի վրա։ Այն վանական, որ ընտրվեց որպես վանքի համայնքի ներկայացուցիչ աստծո դատաստանի առաջ, կոչվում էր Պետրոս Ալղոբրանդինի։

Նշանակված օրը վառեցին երկու մեծ խարույկ, որոնցից յուրաքանչյուրն ուներ երեսուն քայլ երկարություն և տասը քայլ բարձրություն։ Նրանց միջև մի նեղ շավիղ թողին (լայնությունը երեք քայլից ոչ ավելի), որը ծածկված էր մանր կտրատած և շատ չոր ցախով։

Հանդիսավոր եկեղեցական թափորից և պատարագից հետո վանականները կանգնեցին երկու շարքով. յուրաքանչյուրը ձեռքին մոմ ուներ, իսկ կրծքին՝ խաչ։ Ի՞նչ ասել կուզե, փորձված բեմադրող էր ղեկավարում այդ ներկայացումը։

Հիմներ երդելով, վանականները շրջապատեցին խարույկները, ապա սկսեցին պրանք վառել։ Քիչ հետո տոթն այնքան անտանելի դարձավ, որ ստիպված եղան ետ քաշվել։ Եվ հենց այդ պահին հուղված ամբոխը նկատեց, թե ինչպես Պետրոս Ալղոբրանդինին մոտենում է բոցկլտացող խարույկին. նա հանեց իր վեղարը, որով պատարագ էր մատուցել, և հանդիսավոր քայլերով մոտավ շավիղը։ Մի ձեռքում նա պահում էր խաչը, մյուսում՝ թաշկինակը, որով սրբում էր ճակատի քրտինքը։

Կարելի է, իհարկե, հարց տալ, թե ինչո՞ւ կրակը, որ այդ պահին չէր կպչում Ալղոբրանդինին, նրան բրանեցնում էր... Անկասկած, դա աստծո քմահաճությունն է եղել, եկեք չխորանանք այդ հոգեբանական նրբություններ մեջ...

Ալղոբրանդինին քայլում էր երկու բոցկլտացող խարույկների իրարից բաժանող շավիղով, մինչև ծնկները վառվող կրակի մեջ, ապա կանգ առավ ու ինքն իրեն խաչակնքեց։ Հանդիսավոր լռության մեջ (դրողը տանի, տեսարանը բավական հետաքրքիր է, որպեսզի ժողովուրդը քրանար։ Միևնույն ոչ ոք չէր հրաժարվի նայել մի քահանայի կամ վանականի, որ անհոգ զբոսնում է վառվող կրակի վրա)... և այսպես, հանդիսավոր լռության մեջ հնչեց վանականի ձայնը։ Դիմելով բազմությանը, նա քաղաքացիներից, կղերականներից ու աղնվականներից պահանջեց երդվել, թե կհրաժարվեն եպիսկոպոս Պետրոսից, եթե Ալղոբրանդինին անվնաս դուրս գա սարսափելի փորձությունից։

Բոլորն, իհարկե, երդվեցին։ Այնժամ Ալղոբրանդինին երգեց եկեղեցական հիմնը, աստծուն աղերսելով իրեն անվնաս պահել։ Ահա մի ստույգ մեջբերում կարդինալ Բարոնիուսից.

«Բոլորը տեսան, թե ինչպես նա մերկ ոտներով, վեհաշուք կեցվածքով քայլում է բոցերի վիթխարի լեզուների մեջ. նա քայլում էր այնպես հանգիստ, ինչպես կքայլեր մի ծառուղիով, որի երկու կողմերին տնկված են վարդի թփեր, որոնք իրենց ստվերով թարմացնում են արևի ճառագայթներից շիկացած օդը։ Բոցկլտացող կրակը, ենթարկվելով ինչ-որ հրաշագործ ուժի, պարուրել էր նրան, լուսավորել ճաճանչափայլ լույսով, որն ավելի կուրացուցիչ էր, քան ձյունը արևի տակ։ Բոցի լեզվակները, ոչ մի հետք չթողնելով, լիզում էին նրա հագուստի փեշերը, դիպչում գլխի ու մորուքի մազերին»։ «Ներկաները տեսան,— շարունակում է բարևպաշտ պատմաբանը,— որ այն պահին, երբ Ալդոբրանդինին մտավ բոցի մեջ, խարույկների կրակը կորցրեց իր ուժգը և պահեց միայն լույսը, որ պայծառացնում էր սուրբ վանականի հաղթանակը»։

Եվս մի ոչ պակաս մանրամասն, որ ընդգծում է Բարոնիուսը. «Երբ Ալդոբրանդինին հասավ խարույկների վերջը, նկատեց, որ շավղի մեջտեղում կորցրել է իր թաշկինակը։ Նա հանգիստ վերադարձավ, վերցրեց այն և, ճաճանչափայլ, դուրս եկավ կրակի միջից»։

Ինչո՞ւ «ճաճանչափայլ», կարդինա՞լ Բարոնիուս։ Արդյոք նրա՞ համար, որ փորձարկումը հաջողվել է, թե՞ նրա համար, որ թաշկինակի կորուստն անդառնալի կլիներ...

Կարդինալ Բարոնիուսը հետագա սերունդներին այդ մասին ոչ մի ստույգ տեղեկություն չի հաղորդում. նա մանրամասնորեն նկարագրում է ժողովրդական խանդավառության տեսարանը, որ հետևել է անկիղելի վանականի ուված ներկայացմանը։ Մենք մեջ չենք բերի Բարոնիուսի ներբողներք և միայն կնշենք, որ վալոմբրոզցի վանահայրը չհապաղեց հրաշքի մասին զեկուցագիր ուղարկել պապին, պահանջելով նոր եպիսկոպոս նշանակել այն մարդու փոխարեն, որին աստծո պատասխանը մերկացրել է աղանդավորության և շնության մեջ։

## ԱՄԵՆԱԲԱՐԶՐՅԱԼԻ ՉԵՌՆԱՑՈՒՆԵՐԸ

Կատարված ծիսակատարության մասին պապին զեկուցագիր ուղարկելով, Հովհան Գվալբերտոսը չէր տարակուսում, որ Պետրոս եպիսկոպոսը տանուլ է տվել։ Բայց, ըստ երևույթին, Ալեքսանդր II-ին հայտնի էր

խարույկների միջով անցնելու գաղտնիքը, որովհետև՝ այդ առթիվ նա խանդաղատանքի ոչ մի նշույլ չդրսևորեց։ Սակայն, բնավորությամբ լինելով խորամանկ դիվանագետ, նա, մի կողմից, չէր ուզում որևէ մեկի հետ փչացնել բարեկամական հարաբերությունները, մյուս կողմից, բնականաբար, չէր ուզում վիճարկել տեղի ունեցած «հրաշքը», որպեսզի հավատացյալների աչքում չհեղինակազրկեր կրոնը։ Եվ դրությունից դուրս գալու ելքը գտավ, Վալոմբրոզեի վանականներին ուղարկելով մի այսպիսի պատասխան.

«Ես ձեզ շնորհավորում եմ նրա համար, որ ձեր վանքում կա մի վանական, որն իր արբուքյամբ արժանացել է աստծո անկեղծ ու բացահայտ հովանավորությանը։ Նման բանից հետո ես, անտարակույս, կարչելույծ կանևի Ֆլորենցիայի եպիսկոպոսին, եթե նա չառաջարկեր իրեն Ենթարկել նույնպիսի հրաշագործության, և նույն այն տեղում, որտեղ փորձել է սուրբ Ալզոբրանդինին։ Ես նոր փորձ անելուն չհամաձայնեցի, վախենալով, որ տևրը, կատարելով երկրորդ հրաշքը, դրանով իսկ կզրկի ձեր վանքը նրա ձևոք բերած փառքից։ Պետրոս եպիսկոպոսը մի քանի ամիս լինելու է Ֆլորենցիայից դուրս. ես իրավասու չեմ նրան զրկելու եպիսկոպոսությունից, նրան մեծարած լինելով, որ իրեն հանձնի աստծո դատին։ Եվ այդ պատճառով ձեզ հորդորում եմ, ի շահ ձեր համայնքի, հանգստացնել ժողովրդին և ջատրաստվել արժանավայել կերպով դիմավորելու ձեր սրբատին, երբ նա վերադառնա»։

Մի՞թե այդ ուղերձը, որ մենք միայն մի փոքր կրճատել ենք՝ չհանդուրժելով նրա իմաստը, ուխտադրժության... մեղմացնենք բառը՝ դիվանագիտության գլուխգործոց չէ։

Վախենալով, որ երկրորդ փորձը կբացահայտի իրենց խարդախությունը, վանականներն այլևս չկնդեցին. նրանք շտապեցին հավատացյալներին ծանուցել, թե Պետրոս եպիսկոպոսը զղջացել է, իսկ Հիսուս Քրիստոսը, անսալով Ալզոբրանդինիի աղոթքները, ներել է նրան։

Ինչ վերաբերում է Ալզոբրանդինիին, նրան շուտով սկսեցին Պետրոս Իգնատիոս, կամ Պետրոս Անկիզելի կոչել։ «Հրաշքից» առաջ նա կատարում էր վանքի տավարածի պարտականությունը։ Բարեհոգի եղջերավոր անասուններդ, հավանաբար, այն ժամանակ նրան արժանին էին հատուցում... Իհարկե, նրան շուտով առաջ քաշեցին. նշանակեցին մի մենաստանի վանահայր, իսկ շատ չանցած արժանացրին Ալբանիայի եպիսկոպոսության կարդինալի պաշտոնին։

Սակայն ինչպե՞ս են փոխվել ժամանակները։ Հիմա մենք բոմի վրա ինչքա՞ն հաճախ ենք տեսնում շիկացած երկաթի վրա պրոսնող ձեռ-

քին կրակ բռնած մարդու։ Այդ տեսարանի համար վճարում են՝ քսան սու, և ոչ ոք առանձնապես չի խանդավառվում, ոչ ոք չի գոռում, թե հրաշք կատարվեց, ոչ ոք չի պատրաստվում ձեռնածուին հաղթականորեն դուրս բերել ձեռքերի վրա բարձրացրած։ Իսկ չէ որ վաղ ժամանակներում եկեղեցին, անշուշտ, նրան այդպիսի բարձրության կհասցներ։

Խավար տգիտության դարեր, հոգևորականության ոսկե դար, դուք անցել գնացե՞լ եք առմիշտ։

## «IN VINO VERITAS!»[1]

Պատահեց այնպես, որ մի անվանի գերդաստանի գլխավոր չափազանց տհաճ վիճակի մեջ ընկավ (մենք դրանով բնավ չենք ուզում ասել, թե այդպիսի դրության մեջ չի կարող ընկնել նաև հասարակ մահկանացուն)։ Այդ դեպքը տեղի է ունեցել Աղեքսանդր II-ի գահակալության օրոք, և պետք է ասել, որ բարեպաշտ քահանայապետը, ճարպիկ դիվանագետ լինելով, չի հապաղել օգտվելՈ այդ բարենպաստ դիպվածից, որպեսզի պապական ազդեցությունը տարածի արևմտաեվրոպական պետությունների աշխարհիկ գործերի վրա։

Կայսր Հենրիխն արդեն վաղուց էին տանջում իր տիկնոջ նկատմամբ ունեցած ազոտ կասկածները։ Իսկ մի գեղեցիկ օր նա համոզվեց, որ եղջյուրակիր է...

Մոլիերն է ասել այդ բառը, և մենք մեզ իրավունք ենք վերապահում այն կրկնել։

Սկզբում կայսրը տառապում էր լռելյայն, հույս ունենալով, թե նրա կողակից Բերտան, իր քմահաճույքին հագուրդ տալով, նորից կդառնա հավատարիմ կին։ Սակայն քմահաճույքի առաջին բռնկմանը հետևեցին բազմաթիվ ուրիշ բռնկումներ։ Երևի մեծապատիվ տիկինը համի էր ընկել և կտրականապես չէր ուզում իրեն զրկել այն բավականությունից, որ նրան պատճառում էին սիրային փոքրիկ խաղերը։ Ի վերջո, ինչպես երբեմն պատահում է, գործը բացահայտ սկանդալի հասավ։ Կայսրուհու սիրային կապերը ասելիք դարձան, շուտով թշվառ ամուսինն ի վիճակի չէր պալատականների մեջ գտնել որևէ մեկին,

[1] Ճշմարտությունը գինու մեջ է (լատ.)։

որը կայսրուհու մասին խոսելիս նրան չանվաներ «մեր անուշիկը»։ Բնականաբար դա շա՜տ տհաճ էր։

Ջգանկանալով ծաղրի առարկա լինել, վիրավորված Հենրիխը որոշից բաժանվել թևթևաբարո կայսրուհուց։ Նա իր մտադրության մասին ծանուցից Մայնցի արքեպիսկոպոսին։ Վերջինս հավանություն տվեց կայսեր որոշմանը և ապահարզանը հաստատելու խնդրանքով դիմեց պապին։

Գերմանիայում պապի ներկայացուցիչ Պետրոս Դամիանոսը, փոխանակ կայսրին բաժանության համաձայնություն տալու, պապի անունից արգելեց լուծանել անհավատարիմ կնոջ հետ կայացած ամուսնությունը և նույնիսկ կարգալույծ արեց արքեպիսկոպոսին (որը շտապել էր տալ իր համաձայնությունը), քանգի «ապահարզանի թույլտվություն կարող է տալ միայն պապը»։

Ֆրանկֆուրտում գումարված եկեղեցաժողովում Պետրոս Դամիանոսն Աղեքսանդր II-ի անունից արտասանեց հետևյալ ճառը.

«Ձեր վարմունքը, սենյոր, ձեր առաքինի տիկին Բեատայի նկատմամբ վայել չէ ոչ միայն գերագույն իշխանավորին, այլև քրիստոնյային։ Մարդկային և եկեղեցական օրենքները դատապարտում են ձեզ։ Ջգուշացե՛ք սրանք խախտելուց։ Հռոմը իր տրամադրության տակ ունի մի այնպիսի ղենք, որը ձեզ կզրկի կայսերական իշխանությունից։ Ես ձեզ հրամայում եմ հնազանդվել քահանայապետի գերագույն վճիռներին, հակառակ դեպքում դուք մեզ կստիպեք ձեր նկատմամբ կիրառել եկեղեցական կանոններն իրենց ամբողջ խստությամբ և ձեզնից խլել կայսերական թագը, որին դուք, ոտնահարելով կրոնը, արդեն անարժան եք...»։

Ի պատասխան այդ ճառի, որը խանդավառությամբ ողջունեցին եպիսկոպոսները, խեղճ կայսրը խոնարհաբար ասաց. «Ես կհանգուրժեմ իմ խայտառակությունը և կհնազանդվեմ սուրբ Հոր հրամանին ի խրատ իմ ժողովուրդների»։

Շատ ուսանելի՜ փաստ։ Եկեղեցին ամուսնական անհավատարմությո՜ւնն էլ բարձրացնում է աղջային սահմանակարգի աստիճանի։ Կանանցից խաբված քրիստոնյաներ, հանո՜ւն փրկչի խոնարհաբար կրեցեք աղջյուրակրի կոչումը. այդ է հրամայում պապը, Քրիստոսի տեղապահը։

Մի՞թե այս միջադեպը ցույց չի տալիս, որ Աղեքսանդր II-ը մեծ հաջողությամբ էր իր որոգայթները լարում ապնվականության, այնպես էլ թագավոր Հենրիխի դեմ։

Իհարկե, անարգված Հենրիխն իր վարմունքով ապացուցեց, թե

Հռոմի կուրիայի գործերից ու ավանդույթներից ինչքան քիչ բան էր հասկանում։ Նա կարող էր իր համար ավելի նպաստավոր ելք գտնել, քան հանդուրժել իր թեթևսոլիկ կնոջ՝ Բերտայի արկածները, և խուսափել պապի ծաղրուծանակից։ Նա պետք է իր մոտ կանչեր Պետրոս Դամիանոսին և ասեր. «Վաղը, երբ գաք պալատ, իմ գանձապահը ձեզ կտա ոսկու մի գումար, որը իմ խորհին շնորհակալությամբ հանդերձ կհանձնեք նորին սրբազնությանը»։

Եվ հարցը կլուծվեր ի գոհություն բոլորի։

Եպիսկոպոս Գերման Բամբերգցին, որին պապը բանադրել էր պաշտոններ վաճառելու և արյունապղծության համար, ավելի խելամիտ ու ճարպիկ գտնվեց։ Նա շարունակում էր կատարել եպիսկոպոսի պարտականությունները, չնայած պապական բանադրանքին։ Ալիքսանդրը, երբ իմացավ այդ բացահայտ անհնազանդության և ապստամբության մասին, Անտոն և Ջիգֆրիդ եպիսկոպոսներին կարգադրություն ուղարկեց՝ անհնազանդ Գերմանի հետ միասին ներկայանալ իրեն, որպեսզի հանցավորին բանադրանքի ենթարկի երկրորդ անգամ՝ ամբողջ եկեղեցաժողովի ներկայությամբ։ Պրելատները հնազանդվեցին։ Բայց հեռատես Գերման Բամբերգցին իր հետ Հռոմ տարավ մի գումար, որ համապատասխան էր նորին սրբազնության արժանապատվությանը։ Ալիքսանդրը անմիջապես ցասումը փոխարինեց ողորմածության և ոչ միայն վերականգնեց նրա կոչումը, այլև նրան արժանացրեց արքեպիսկոպոսի ամբոնի հետ կապված բոլոր արտոնություններին։

Գերմանացի վանական Համպերդ Գելսֆելդցին, XI դարին վերաբերող հաղվադեպորեն անաչառ ժամանակագրության հեղինակը, այդ պատմության մասին հետևյալն է գրում. «Սուրբ հայրը երեք պրելատներին՝ Գերմանին, Անտոնին ու Ջիգֆրիդին հրավիրեց հանդիսավոր խնջույքի։ Խրախճանքի վերջում, երբ գինին պապին տրամադրեց սիրալիր բացվել, նա խոստովանեց, որ արյունապղծությունն ըստ իր այնքան էլ մեծ հանցագործություն չէ. նա արյունապղծության ու շնության մեջ բռնված կղերականներին կարգալույծ է անում միայն նրա համար, որ նրանց մեղքերի թողություն վաճառի։ Ընդ որում պապն ընդգծեց, որ հարգում է այն եկեղեցականներին, որոնք, քահանա օծվելով, քար չեն պառնում և, չհրաժարվելով սիրային հաճույքներից, կարողանում են բազմապատկել իրենց հարստությունները»։

Հաղիվ թե «In vino veritas!» ասույթի արդարացիությունը երբևէ հաստատված լինի ավելի ակնառու կերպով։

## ԳՐԻԳՈՐ VII

*Նախքան գահ բարձրանալը, Գրիգորը կոչվում էր Գիլդեբրանդ։ Ընթերցողին արդեն ծանոթ է այդ վանականը, որն, ըստ էության, պապ է եղել ընտրվելուց շատ ավելի վաղ, որովհետև քսանհինգ տարի շարունակ փաստորեն կառավարում էր եկեղեցին։ Նա էր, որ սկզբում օգնեց Գրիգոր IV-ին գնել աթոռը (հույս ունենալով այն օգտագործել իր բարեփոխումների համար), իսկ հետագայում հանդես եկավ նրան գահընկեց անելու օգտին։ Նրա ազդեցության և բանսարկությունների շնորհիվ էր Նիկողայոս II-ը ստացել խույրը. նա էր ստիպել կարդինալներին Ալեքսանդր II-ին ընտրել առանց կայսեր թույլտվության։ Նրան էր Պետրոս Դամիանոսը գրել. «Ես պապին հարգում եմ, բայց քո առաջ խոնարհվում եմ ոտքերդ ընկած. դու նրան տեր ես դարձնում, իսկ նա քեզ՝ աստված»։ Եվ ապա, գանգատվելով նրա անսահման դեսպոտիզմից և անասելի փառասիրությունից, նա նրան անվանում է «սուրբ սատանա»։ Ավելի ուշ ժամանակների պատմաբանները Գրիգոր VII-ին նաև «դժոխքի խանձող» են անվանում։*

*Ալեքսանդր II-ի մահից հետո Գիլդեբրանդը մտածեց, որ վերջապես հասել է ժամանակը իր ձեռքը վերցնելու այն իշխանությունը, որ շատ տարիներ վարում էր ուրիշների անունից։*

*Երբ Ալեքսանդրի թաղման օրը եկեղեցական աստիճանավորները հավաքվեցին սուրբ Պետրոսի բազիլիկայում, որպեսզի քննության ենթարկեն պապական աթոռի երկու թեկնածուներին՝ Մոնտե-Կասինոյի աբբա Դիդյեին և կարդինալ Հիերոնիմոսին, փողոցից համառ բացականչություններ լսվեցին. «Թող Գիլդեբրանդը լինի մեր եպիսկոպոսը», «Սուրբ Պետրոսը նրան է ընտրել»։*

*Ինչպես պարզվեց, ժողովրդական կամքի այդ արտահայտման նախաձեռնիչներն եղել են երկու քահանա, որ խցկվել էին ամբոխի մեջ։ Ժողովուրդը ներխուժեց բազիլիկա, որտեղ հավաքվել էր կոլեգիան։ Լսելով ամբոխի անզիջում պահանջները, կարդինալները շուտափույթ մի դևկրետ հրապարակեցին՝ Գիլդեբրանդին հռչակելով քահանայապետ։*

*Երրորդ VII-ը, ծագումով իտալացի, ծնվել է Տոսկանայում, 1021 թվականին։ Նրա հայրը, Բոնիզիոն, արհեստավոր է եղել։ Տվյալ դեպքում հայր ասելով մենք, ճիշտն ասած, ելնում ենք լոկ ձևական հատկանիշներից, ճիշտ այնպես, ինչպես աստվածաբանները Հիսուսի հայր*

են անվանում Հովսեփին, Մարիամի ամուսնուն։ Ամենայն հավանականությամբ Գիլդերբրանդը եղել է իր հորեղբոր զավակը։ Այդպիսով Գրիգորի մոր նկատմամբ առասպելական աղավնու դերը խաղացել է Աբենտինի վանքի վանահայրը՝ Բոնիֆիոյի եղբայրը։

Սկզբնական կրթությունը Գրիգորը ստացել է հորեղբոր վանքում, որից հետո, տասնհինգ տարեկան հասակում, հայրը նրան ուղարկել է Ֆրանսիա, որտեղ և ստացել է եկեղեցական կրթություն։

Տեղավորվելով Հենրիխ Սևի արքունիքում, նա մեծ ազդեցություն ձեռք բերեց և շուտով հայտնի դարձավ եկեղեցական շրջաններում։ Պապ Լևոն IX-ի հետ վերադառնալով Հռոմ, նա դարձավ սուրբ Հոր խորհրդականներից մեկը։ Բացի այդ, Լևոն IX-ը նրա կառավարչությանը ենթարկեց սուրբ Պետրոսի վանքը, որտեղ նա խիստ կարգապահություն մացրեց, վանականներից պահանջելով, որ թեկուզ արտաքնապես պահպանեն բարեպաշտության ու ժուժկալության կանոնները։ Լևոն IX-ի մահից հետո Գիլդերբրանդը արքեպիսկոպոսի աստիճան ստացավ և բազմիցս լեգատի դեր է կատարել՝ այցելելով մի շարք իշխանների ու թագավորների արքունիքները։

Նա վաթսուն տարեկան էր, երբ պապական գահ բարձրացավ։ Սակայն տարիները չէին ազդել նրա վրա։ Նրա կամքը անհողդողդ էր։ Նա դաժան, խարդախ մարդ էր, երկերեսանի քաղաքագետ, որը հեղության դիմակի տակ կարող էր սարդի պես ճղմել մարդու։ Նա երազում էր եկեղեցին ենթարկել պապի բացարձակ իշխանությանը, իսպառ ազատել աշխարհիկ ազդեցությունից, կայսրերի ու թագավորների միջամտությունից։ Մի խոսքով, Գրիգորի VII-ը երազում էր բացարձակ եկեղեցական միապետություն։ Դրան հասնելու համար նա կանգ չէր առնում ոչ մի հանցագործության, ոչ մի դավաճանության առաջ, գործելով կղերի փորձված ցենքով, որին տիրապետում էր կատարելապես։

Նախքան նրա գահակալության գլխավոր դեպքերին անցնելը, մենք մեզ թույլ կտանք շարադրել նրա սկզբունքներից մի քանիսը որոնք նա ինքը ձևակերպել էր իր ընդարձակ դրագրության մեջ։

«Աստված ոգի է, նա իշխում է մատերիայի վրա։ Ճիշտ այսպես էլ հոգևոր իշխանությունը կանգնած է աշխարհիկ իշխանության գլխին»։

«Միայն Հռոմի քահանայապետը կարող է տիեզերական կոչվել»։

«Միակ անսխալականը նա է։ Միմիայն նա կարող է հրապարակել նոր որոշումներ, միացնել կամ բաժանել եպիսկոպոսություններ»։

«Առանց նրա կարդադրության ոչ մի եկեղեցաժողով չի կարող տիեզերական կոչվել»։

«Նա չի կարող դատվել որևէ մեկի կողմից»։

«Հռոմեական եկեղեցին երբեք չի սխալվել և երբեք չի սխալվի»։

«Հռոմի քահանայապետը իրավունք ունի գահազրկելու կայսրին»։

«Նա հպատակներին կարող է ազատել անիրավ թագավորին տված հավատարմության երդումից»։

«Պապը պետք է իր վրա կրի կայսերական իշխանության նշաններ. ժողովուրդները և թագավորները պարտավոր են համբուրել նրա ոտքերը Քրիստոնյաները պարտավոր են անտրտունջ ենթարկվել նրա հրամաններին։ Նրանք պարտավոր են սպանել նույնիսկ իրենց իշխանավորներին, իրենց հայրերին ու երեխաներին, երբ պապն է հրամայում։ Նրանք պետք է նրա ձեռքին մի այլ զորեղ լինեն»։

Իհարկե, Գրիգորը եղել է ոչ մի այլ բոլոր տեսությունների հեղինակ, այլ լոկ ավանդություններ կրող։ Այս ամենն արդեն եղել է պապերի հրովարտակներում, կանոնադրն իրավունքի գիտնականության, «Կեղծ իսիդորյան դեկրետների» ժողովածուում, այնպես որ նա միայն կառուցել է աստվածապետության միասնական տեսությունը, որի մասին երազել էին նրանից առաջ նշած պապերը։

*

*

Դիդյեն՝ Մոնտե-Կասինոյի աբբան, շատ էր ուզում Աղեքսանդր II-ի մահից հետո դրավել պապի աթոռը։ Եվ իսկապես, նա ձայների մեծամասնություն կշահեր, եթե չլիներ Դիլդեբրանդի ճարպիկ խաղը։ Տեսնելով, որ Դիդյեն խիստ վիրավորված է, Գրիգոր VII-ն իր ընտրվելու հետևյալ օրը նրան դիմեց մի նամակով, որի բովանդակությունն այս էր.

«Աղեքսանդր պապն այլևս մեզ հետ չէ, եղբայր իմ. նրա մահը փլվել է ինձ վրա, սասանել ամրողջ էությունս, կործանում է ինձ։ Այն պահին, երբ նրա մահկանացու մասունքների վրա հոգեհանգստի արարողություն էր կատարվում, ժողովրդի մեջ ուժեղ հուզում բարկությեց։ Ինչ-որ խելառ քահանաներ ինձ բռնեցին ու տարան Լաթերանյան պալատ, որտեղ և նստեցրին առաքյալի գահին։ Ես չեմ սկսի քեզ անհանգստացնել իմ ցավերով, ես միայն խնդրում եմ քո և քո եղբայրակիցների աղոթքները, որպեսզի Հիսուս Քրիստոսը ինձ, Քշվառիս մեկնի իր ձեռքը և փրկի այն տառապանքներից ու վտանգից, որոնցից կցանկանայի խուսափել։ Մենք սպասում ենք քեզ, եղբայր իմ, մեր պա-

լատում, որովհետև դու գիտես, թե ինչպես է հռոմեական եկեղեցին զգում քո նվիրվածության ու իմաստնության կարիքը»։

Դիդյեն արձագանքեց կեղծավոր Գիլդեբրանդի կոչին։ Իսկ պապը նրան դիմավորեց գրկաբաց. նա հաշվի էր առնում Մոնտե-Կասինոյի աբբայի ժողովրդականությունը, ինչպես նաև ուզում էր նրա աղդեցությունն օգտագործել սուրբ աթոռը կայսեր ինվեստիտուրայից ազատելու համար։ Այդ բանին ձգտելով դեռևս իր նախորդների օրոք, Գրիգոր VII-ը, պապ դառնալով, գտնում էր, որ իր առաջին խնդիրն է եկեղեցին ազատել այն բոլոր կապանքներից, որ նրան կախման մեջ են դնում թագավորների ու կայսրերի իշխանությունից։ Ընտրվելով առանց կայսեր մասնակցության, Գրիգոր VII-ն անմիջապես Դիդյեին որպես պատվիրակ ուղարկեց մի հապետի մոտ. հայտնելով իր ընտրվելու մասին, նա Հենրիխ IV-ին թախանձում էր իրեն չհաստատել, քանզի վանքի խուցի համեստ հարկը գերադասում է պապական պալատի շքեղությունից։ Արդյունքն անսպասելի էր։ Հենրիխ IV-ի հրավիրած եկեղեցաժողովը Գիլդեբրանդի ընտրությունն անօրինակ համարեց և հրաժարվեց հաստատել։ Մինչդեռ երկերեսանի վանականը, համոզված, որ ինքնահրաժարման խոնարհ խնդրանքն իր նկատմամբ համակրանք կառաջացնի, հանգիստ սպասում էր եկեղեցաժողովի վճռին։ Ստանալով գահընկեց անելու որոշումը, նա կատաղեց և կշտամբանքներով լի մի նամակ ուղարկեց Դիդյեին, պահանջելով հասնել այն բանին, որ կայսրը, հակառակ եկեղեցաժողովի որոշման, թուլյատրի իր գահակալությունը։

Մոնտե-Կասինոյի աբբան, որ սրտի խորքում ոխ էր պահել հենց վանականի դեմ, որն իրենից խլել էր աթոռը, նրան պատասխանեց. «Եթե ես չափից ավելի դանդաղկոտ եմ, ապա դու չափից ավելի շտապող ես, քանզի, չսպասելով Աղեքսանդրի թաղմանը, հակառակ բոլոր կանոնական օրենքների, բռնագրավել ես սուրբ աթոռը»։

Հենրիխ IV-ը, ցանկանալով ստուգել պապի դեմ հարուցված մեղադրանքները, Հռոմ ուղարկեց կոմս Էբերգարդին, հանձնարարելով կարդինալներից իմանալ, թե ի՞նչն է նրանց ստիպել պապ ընտրել առանց նայսեր համաձայնության։ Գիլդեբրանդը այդ ժամանակ դեռ չէր համարձակվում դիմելու պատակտման։ Հոգևորականության գլուխն անցած՝ դուրս գալով դիմավորելու էբերգարդին, նա ջերմագին ապացուցում էր իր անմեղությունը, երդվում, թե երբեք չի ձգտել պապական գահի։ «Աստված վկա,— ասաց նա,— հռոմեացիներն ինձ ընտրել են հակառակ իմ կամքի։ Ես հրաժարվում էի պապի աստիճանից, չնայած

*նրանց բոլոր հորդորներին։ Այսուհետև ես պետք է հրաժարվեմ, մինչև որ թագավորի հավատարմատար պատվիրակությունն ու Գերմանիայի սենյորները չհայտնեն իրենց կամքը»։*

*Կեղծ հավատարմությունից խաբված, Հենրիխ IV-ը հաստատեց իր հին թշնամու ընտրությունը։ Գրիգորն իսկույնևեթ դեն նետեց դիմակը և կատաղի պատերազմ սկսեց կայսեր դեմ։ Մենք մնչ կբերենք այդ պայքարի միայն որոշ միջադեպեր, մի պայքար, որ շարունակվեց նաև նրանց մահից հետո։ Այդ պայքարն ուղեկցվել է այնպիսի դավաճանություններով ու դաժանություններով, որ կարելի կլիներ կասկածել դրանց իսկությանը, եթե հաստատված չլիներն հավաստի վկայություններով։*

*Պապն անհամբեր ատրճի էր սպասում հարված հասցնելու համար։ Նա երկար չսպասեց։ Հենց որ Հենրիխի դեմ դուրս եկան ոաքսոնացիները, Գրիգորը, օգտվելով թագավորի դժվարին կացությունից, հրավիրեց Հռոմի կուրիային հավատարիմ եպիսկոպոսների ժողով և հանդիսավորապես բանադրեց կայսրին։*

## ԳՐԻԳՈՐԸ ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎ

*Նույն այդ ակեղեցաժողովում քննարկվում էր կուսակրոնության հարցը։ Գրիգորը վճռականորեն հանդես եկավ քահանաների ամուսնության դեմ, արյունապղծներին և արվամոլներին, ինչպես ինքն էր ասում, ավելի լավ համարելով այն մարդկանցից, ովքեր, միանալով օրինական ամուսնությամբ, իբր թե ուզում են հեռու մնալ ամոթալի արատներից։*

*Գրիգորն ինքը երեք սիրուհի ուներ, չհաշված կարճատև կապերը։ Բոլոր երեք սիրուհիներն էլ շատ բարձրաստիճան կայսեր մերձավոր ազդականներն էին։ Նրանցից մեկը Ագնեսան էր, Հենրիխ IV-ի մայրը։ Մյուսը Բեատրիսան էր, նույն այդ Հենրիխի մորաքույրը, իսկ երրորդն էր Մաթիլդան, Բեատրիսայի աղջիկն մտերմուհին և Լոթարինգիայի դուքսի Գոտֆրիդ Կուզիկի կինը։*

*Ինչպես ընթերցողը տեսնում է, բախտը Գրիգորին բնավ չի անտեսել, և նա կարող էր առանց օրինական կնոջ էլ շատ լավ յոլա գնալ։*

*Կուսակրոնության պաշտպանն ամենից քիչ հոգում էր քահանաների առաքինության մասին։ Արդելելով ամուսնությունը, իշխանատենչ*

պապը ուզում էր միայն քանդել այն կապանքները, որ հոգևորականությանը կապում էին հասարակության հետ, նրան դարձնել հատուկ, իշխող կաստա։

«Եկեղեցին չի կարող ազատվել աշխարհականների կողմից սարկացվելուց,— գրում էր նա,— քանի դեռ հոգևորականությունը չի ազատված ամուսնության կապանքներից»։

Նա բոլոր հավատացյալներին բանադրանքի սպառնալիքով արգելեց ներկա լինել այն ժամասացություններին, որ կատարում էին ամուսնացած քահանաները, և համապատասխան դեկրետներ ուղարկեց Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի, Գերմանիայի եկեղեցիներին։ Ֆրանսիայի հոգևորականությունը հրաժարվեց ենթարկվել այդ դեկրետին և քահանայապետին դիմեց մի շատ խիստ ուղերձով. «Դու հերետիկոս ես, սուրբ հայր, քանզի քարոզում ես անհեթեթ և Քրիստոսի ասածին հակառակ բարոյականություն»։

Փարիզում եպիսկոպոսները, վանահայրերը և քահանաները, համագումարի հավաքվելով, հրաժարվեցին ենթարկվել Գրիգոր VII-ի դեկրետին, որը կուսակրոնություն էր սահմանում։ «Այն, ինչ ուզում է պապը,— ասացին նրանք,— անիրագործելի է և բանականության հակառակ»։ Երբ մի վանահայր իր ճառում խորհուրդ տվեց ենթարկվել պապի պահանջներին, ժողովի մասնակիցները «թագավորական ծառաների օգնությամբ դուրս շպրտեցին նրան, ծնծեցին, թքեցին երեսին և ամեն ձևով անպատվեցին»։ Կամբրեում կանոնիկոսները հայտարարեցին, թե մտադիր են հետևել այն սովորույթներին, որ «իմաստուն կերպով սահմանել են նախորդները», և ժողովրդին իրենց կողմը քաշեցին։

Հարկավոր չէ, իհարկե, գերագնահատել Ֆրանսիայի եպիսկոպոսներին, նրանք բնավ էլ հրեշտակներ չեն։ Բայց արդարությունը պահանջում է ասել, որ Ֆրանսիայի հոգևորականությունը XI դարում էղել է շատ ավելի անկախ, քան ժամանակակից եկեղեցականները։ Մեր այսօրվա հոգևորականությունը մի բառ իսկ չասաց, երբ պատմախոտով տառապելով Պիոս IX պապը հռչակեց անսխալականության և անարատ հղիացման քարացած դոգմանները։ Իրենց նախորդների բոլոր արատներին այսօրվա եկեղեցականներն ավելացրել են մեծագույն սարկամտություն...

*Պրեֆեկտ Ստեփանոսի որդի Զենոն, որին Գրիգորը բանադրել էր բանադրված այլ սենյորների հետ միասին, պապի դեմ դավադրություն կազմակերպեց։ Գրիգորն այդ ժամանակ պայքար էր մղում Հենրիխ IV-ի դեմ։ Ցանկանալով իր համար ապահովել կայսեր պաշտպանությունը, Զենոն նրան մի նամակ գրեց, խոստանալով ուղարկել Գրիգորին՝ ձեռքերն ու ոտքերը կապած։*

*Ապստամբությունը նշանակված էր ծննդյան օրվա նախօրյակին։ Պապն ըստ սովորության օրհնությունը կատարում էր եկեղեցում։ Երբ հավատացյալները սկսեցին մոտենալ հաղորդությանը, դավադիրները, սրերը մերկացնելով, նետվեցին պապի վրա և բեմից ցած իջեցրին։ Կատաղի ընդհարում սկսվեց։ Գրիգորը սոխուվված եղավ բազում տհաճ րոպեներ վերապրել։ Դավադիրները քաշքշում էին նրա մազերից, հարվածում սրերի սափակ կողմերով, պապի ճակատին ցմահ մի սպի թողնելով։ Նրա վրայից պոկոտելով սուրբ զգեստները, դավադիրներն ուզում էին պապին քաղաքի սահմաններից դուրս տանել, բայց տաղնապի պատճառով քաղաքի դարպասները փակ էին։ Զենոյին մնում էր ոչ այլ ինչ, քան բավականին ծեծվոծ ու կոխկրտված պապին տանել իր ամրոցը։ Առավոտյան այն աշտարակի շուրջը, որտեղ գտնվում էր պապը, զինված ամբոխ հավաքվեց, որին գրգռում էր հոգևորականությունը, և սկսեց պաշարել ամրոցը։ Բայց երբ գործի դրվեցին պաշարման մեքենաները, և Գրիգորի կողմնակիցները գրավեցին բերդապարիսպը, Զենոն, ցանկանալով արյունահեղությանը վերջ դնել, սուրբ հոր հետ բանակցությունների մեջ մտավ։ Երկու կողմերը համաձայնվեցին, որ Գրիգորն անմիջապես ազատություն ստանա, իսկ Զենոն՝ լիակատար թողություն։*

*Գրիգորն իսկույնևէթ ցույց տվեց, թե ինչ արժեք ունի պապի տված խոսքը։ Դեռ նոր էր նա մտել Լաթերանյան պալատը, երբ իսկույն մի կոնդակ հրապարակեց, որով Զենոն դատապարտվում էր ցմահ աքսորի՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ և ամեն տեսակ տիրույթների վրկումով։*

*Սակայն շուտով հոգևորականությունն ևս, որ դժգոհ էր Գրիգորի բարենորոգումներից, մխալորվեց բարոնների ու կայսեր կողմնակից*

արքեպիսկոպոս Գիբերտի հետ։ Ջննչոյի ապստամբությունից քաջալերված արքեպիսկոպոս Գիբերտը, որ ձգտում էր տիրանալ առաքելական աթոռին, պապի դեմ նոր դավադրություն կազմակերպեց։ Բայց մինչդեռ Ջենչոն ու նրա կողմնակիցները տոգորված էին հանրապետական գաղափարներով, Գիբերտն ու նրա դաշնակիցները ղեկավարվում էին միայն անձնական շահերով։ Պայմանավորվելով ապստամբների հետ, 1076 թվականի հունվարի 24-ին կայսրը Վորմսում եկեղեցաժողով հրավիրեց, որտեղ կարդինալ Հուգո Ճերմակը շարադրեց Գրիգորի դեմ ուղղած իր մեղադրանքները։ Նա փաստաթղթեր ներկայացրեց, որոնք պապին մերկացնում էին մի շարք հանցագործությունների մեջ, մասնավորապես այն բանում, որ նա թունավորել է իր յոթ նախորդներին և մահափորձ է կազմակերպել մի քանի իշխանավորների դեմ։ Բացի դրանից, կարդինալը եկեղեցաժողովին ներկայացրեց կարդինալների, Հռոմի ազնվատոհմ անդամների, զանազան պրովինցիաների եպիսկոպոսությունների նամակները։

Ահա մի քանի մեջբերումներ այն դատավճռից, որ ընդունել է եկեղեցաժողովը.

«Գիլդերբրանդը, որ գոռոզաբար Գրիգոր անունն է ընդունել, ծաղրուծանակի է ենթարկում արդարադատությունը, հանդես գալով միաժամանակ մեղադրողի, վկայի ու դատավորի դերում։ Նա տղամարդկանց անջատում է իրենց կանանցից, ծախու կանանց վեր է դասում օրինական ամուսիններից, օրհնում է անառակությունը, բնակչությանը գրգռում է սենյորների դեմ, իշխաններին ու եպիսկոպոսներին ստիպում է վճարել հռոմեական կուրիայի ակնառու ապարոշների և ադամանդախույրերի արժեքը։ Նա վաճառքի առարկա է դարձնում քահանայի ասեղճանը, գնում է պրովինցիաներ, վաճառում եկեղեցական կոչումներ և ձգտում իր գանձարանում հավաքել քրիստոնեական աշխարհի ամբողջ ոսկին։ Այդ սլատճառով էլ մենք Գերմանիայի կայսեր անունից, սենյորների, պրելատների, սենատի և քրիստոնեական ժողովրդի անունից հայտարարում ենք, որ Գրիգորը զրկված է արվում առաքելական աթոռից, որը նա արատավորել է խայտառակ կերպով»։

Լսելով մեղադրանքները, կայսրը Հռոմի ժողովրդին ու հոգևորականությանը դիմեց մի ուղերձով, որը վերջանում էր հետևյալ բառերով. «Մենք վանական Գիլդերբրանդին տալիս ենք ձեր ձեռքը։ Դուրս եկեք նրա դեմ, և թող նա, ով մեզ ավելի է հավատարիմ, առաջինը տապարի ու սպատի նրան։ Մենք չենք սպահանջում նրա արյունը,

մենք ցանկանում ենք միայն, որ այդ զազրելի մարդը վռնդվի առաքյալի ամբիոնից, որովհետև գահից ընկնելուց հետո կյանքը նրա համար մեռնելուց ավելի դառն է լինելու»։

Սրան անմիջապես հետևեց կայսեր նամակը պապին. «Հենրիխը, որ թագավոր է դարձել ոչ թե իշխանությունը զավթելու միջոցով, այլ կամքն աստծո, Գիլդերբրանդին, որ արդեն պապ չէ, սուտ վանականին... Մեր եպիսկոպոսների դատավճռով բանադրվածդ, դատապարտվածդ՝ չքվիր։ Հեռացիր քո չլավթած տեղից, որպեսզի սուրբ Պետրոսի գահին նստի մի ուրիշը, որը հավատի քողի տակ չի թաքցնի բռնությունները...»։

Կայսր Հենրիխի փոխարեն, որին իր մոտ էր կանչել Գրիգոր VII-ը, այս ուղերձը Հռոմ տարավ Պարմի քահանա Ռոլանը։ Նա տեղ ժամանեց ժողովի ժամանակ և ուղղակի պիմից դեպի պապը, ասելով. «Իմ տիրակալ կայսրը, ինչպես նաև Գերմանիայի և Իտալիայի եպիսկոպոսները քեզ հրամայում են թողնել առաքելական գահը, որ դու արատավորել ես քո հանցագործություններով»։ Եվ հետո էլ ժողովրդին ու հոգևորականներին հայտնեց, որ հոգեգալստյան տոնին պետք է նոր պապ ընտրվի։ Ռոլանը դեռ չէր ավարտել խոսքը, երբ Հռոմի պրեֆեկտը ձերբակալեց նրան և, եթե սուրբ հայրը չմիջամտեր, զինվորները տեղնուտեղը նրան վերջ կտային։ Բայց Գրիգոր VII-ը, որպես հմուտ դիվանագետ, հասկանում էր, որ հրապարակային ինքնադատաստանը ձեռնտու չէ իր համար։ Խանդալից խոսքերով նա ներկաներին համոզում էր «հեզաբար հանդուրժել այն .խելառների վիրավորանքը, որ դավաճանում են աստծո օրենքներին»։

Իր դեմ պատերազմ հայտարարելուն Գրգիոր VII-ը պատասխանեց թագավորին և նրա կողմնակիցներին բանադրելով և, հենվելով թագադրելու և գահընկեց անելու իր իրավունքի վրա, կայսրին զրկեց գահից. «... աստծուց ստացած իշխանությամբ բոլոր քրիստոնյաներին ազատում եմ հավատարմության այն երդումից, որ նրանք տվել են կամ կտան նրան, և արգելում եմ բոլորին ծառայել նրան իբրև թագավորի»։

Գրիգորը, սակայն, մտադրություն չուներ սահմանափակվել միայն խոսքերով։

Պապի և կայսեր միջև պատերազմը երկար տևեց։ Հաղթանակը հերթով բաժին էր ընկնում մերթ մեկին, մերթ մյուսին։ Գրիգորը ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում. օգտագործում էր բանադրանքը, նզովքը, իսկ եթե դա չէր օգնում, ծածուկ մարդ էր ուղարկում՝ Հենրիխ IV-ին թունավորելու։

Հենրիխը, իր հերթին, պապի դեմ մղած պայքարում հույսը դրել էր Գերմանիայի իշխանների պաշտպանության վրա։ Սակայն նրանցից ամենահզորները, Սաքսոնիայի դեմ Հենրիխի տարած հաղթանակից անհանգստացած, միավորվեցին պապի և Մեցի եպիսկոպոս Գերմանոսի հետ։ Այսպիսով, երբ Սաքսոնիան նորից ապստամբեց, Հենրիխը մենակ մնաց։

1076 թվականի սեպտեմբերին Գերմանիայի եպիսկոպոսներին ու բոլոր հավատացյալներին հղած նամակում պապը շարադրեց գործողության պլանը. եթե Հենրիխն ուզում է հնազանդվել, պետք է ապացուցի իր անկեղծությունը և առաջիկայում ակեղեցուն վերաբերվի «ոչ թե ինչպես սպասավորի, այլ ինչպես իշխանի»։ Իսկ եթե նա կհամառի, թող հավատացյալներն ընտրեն նոր թագավոր, որին կհաստատի քահանայապետը։

Երբ պապի դեսպանները ներկայացան կայսրին, նա փորձեց նրանց հետ բանակցություններ մեջ մտնել, խոստանալով կառավարել իշխանների համաձայնությամբ։ Բայց նրանք հրաժարվեցին նրան լսել, ասելով, որ եթե մինչև փետրվարի 22-ը թագավորը պապից ներում չստանա, նրան համարելու են գահընկեց արված։ Իսկ մինչ այդ նա թող մնա Շպայերում և ժամակավորապես հրաժարվի իշխանությունից։

Հենրիխն իբր թե հնազանդվեց նրանց պահանջներին. նրան հարկավոր էր ժամանակ շահել, որպեսզի միջոցներ գտներ խռովարար իշխանների դեմ պայքարելու։ Սակայն թագավորի վիճակը ողբերգական էր։ Մի քանի ամիս անց Գրիգոր VII-ի նախաձեռնությամբ եկեղեցաժողով հրավիրվեց։ Հենրիխը հասկանում էր, որ եթե եկեղեցաժողովը գումարվի, ինքը կորած է։ Հարկավոր էր ամեն կերպ խանգարել պապի գալուն։ Իմանալով, որ Հյուսիսային Իտալիան տրամադրված է իր օգտին, Հենրիխը հանկարծակի թողեց Շպայերը և իր կին Բերտայի ու մանկահասակ որդու՝ Կոնրադի հետ ճանապարհվեց Բուրգոնդիա։ Ճնա-

յած արտասովոր խիստ ձմռանը, ձյանը և ճանապարհի դժվարություններին, նա անցավ Ալպերը և հասավ Պավիա։

Թագավորը Գերմանիայից հեռացել էր ոչ թե նրա համար, որ պայքար սկսեր, որի կասկածելի ելքը նրան սարսափեցնում էր. նախ և առաջ նա ուզում էր պատակտել Գերմանիայի իշխանների հետ պապի կնքած դաշինքը։ Հարկավոր էր շտապել, քանի դեռ Գրիգորը, որ Թողել էր Հռոմը, գտնվում էր Կանոսում, իր դաշնակից ու սիրուհի Մաթիլդա կոմսուհու ամրոցում։ Կայսրը, հավանաբար, հույս ուներ, որ Մաթիլդան, որն իրեն աղգականուհի էր դալիս, ամեն ջանք կգործադրի սրանց հաշտեցնելու համար։ Սակայն, երբ Հենրիխը հայտնվեց Կանոսում, Գրիգորը հրաժարվեց նրան ընդունել։

Իսկապե՞ս Հենրիխի գալն անսպասելի է եղել պապի համար։ Ի՞նչ պայմաններ էր նա ուզում առաջարկել Հենրիխին։ Երկու գլխավոր տարբերիներ՝ Բեռնոլդն ու Լամպերտը, տարակարծիք լինելով հանդերձ, մի կետում համաձայն են. երեք օր պնդնդհատ, հունվարի 25-ից սկսած, Թագավորն ստիպված է եղել ոտաբոբիկ ու քաղցած, ձյան մեջ կանգնած սպասել ցանկապատի առաջ, թե Գրիգորը երբ կգթա և կների նրան։ Վերջապես չորրորդ օրը պապը նրան ընդունեց և նրա վրայից վերացրեց բանադրանքը։ Թագավորը նախապես երդվեց հաշտվել Գերմանիայի եպիսկոպոսների ու իշխանների հետ և Գրիգորին չխոչընդոտել Գերմանիա գալ, երբ ցանկանա։

Նույն օրը Գրիգորը իր դաշնակիցներին տեղեկացրեց կատարվածի մասին։ Նկարագրելով Թագավորի ստորացումը, նա ավելացրել է. «Բոլորը, ովքեր շրջապատում էին մեզ, արցունքն աչքներին, միջնորդում էին, զարմանալով նույնիսկ, որ մենք դրսևորել ենք ոչ թե եկեղեցու ծառայի խստապահանջություն, այլ բռնակալի դաժանություն»։

Ինչպես պատմում են որոշ տարեգիրներ, Գրիգորը Հենրիխի ներկայությամբ պատարագ կատարեց։ Երբ հաղորդության դինին օրհնվեց, նա Թագավորին դիմեց հետևյալ խոսքերով. «Արդեն վաղուց է քեզնից և քո կողմնակիցներից նամակներ եմ ստանում, որոնցում դուք ինձ մեղադրում եք շատ հանցագործությունների մեջ, որոնք, ըստ եկեղեցու կանոնների, ինձ անարժան են դարձնում հոգևոր կոչմանը։ Ահա Քրիստոսի մարմինը, որին ես հաղորդվում եմ... Թող ամենսյնդր տերը, եթե ես անմեղ եմ, ինձ ազատի այն կասկածելի հանցանքներից, որոնց համար ինձ մեղադրում են։ Իսկ եթե մեղավոր եմ, թող նա ինձ սպանի ակնթարթային մահով»։

Նորին սրբազնությունը թագավորին առաջարկեց ենթարկվել նույն փորձությանը, բայց վերջինս վախից հրաժարվեց։

Ապացուցված չէ, թե իրո՞ք եղել է այդ դրամատիկ միջադեպը, բնեղեցական շատ հեղինակներ նրա մեջ տեսել են կայսեր «ինքնադատապարտումը»։ Այդ պարզամիտ հեղինակներին, երևի, մոռացել են, թե ինչպես հաճախ հաղորդության գինին անվրեպ վենք է եղել սուրբ Գետրոսի տեղապահների թշնամիների դեմ։

## ՊԱՊԻ ՍԱՏԱՆԱՅԱԿԱՆ ՀՆԱՐԸ

Հենրիխ IV-ը կանոսում պապի առաջ գլուխ խոնարհեց, բայց այդ ծանր ստորացումը նրան չտվեց իր ակնկալած օգուտներից և ոչ մեկը։ Հյուսիսային Իտալիայում պապի թշնամիները զայրացել էին թագավորի վարմունքից, այդ հաշտության մեջ դավաճանություն տեսնելով։

Ֆորխհայմի համագումարում (ուր թագավորը հրաժարվել էր ժամանել, չնայած պապի հրավերին) Գրիգոր VII-ի կողմնակիցները, սաքսոնացիները և շվաբները թագավոր ընտրեցին Ռուդոլֆ Շվարացուն։ Վերջինս հույս չուներ, թե կարող է հնազանդեցնել ամբողջ Գերմանիան. Գերմանիայի իշխանների մեծամասնությունը սրամադրված էր նրա դեմ, և նա ստիպված թողեց-գնաց Սաքսոնիան։ Սկզբում Գրիգորը ձևացնում էր, թե իբր տատանվում է և չգիտե ում կողմն անցնի։ Նույնիսկ ասաց, թե ուզում է Գերմանիա մեկնել, որպեսզի գլուխ հանի մրցակիցների վեճից, թեև միանգամայն ակներև էր, որ Ռուդոլֆի ընտրության գլխավոր նախաձեռնողն եղել է ինքը՝ մեծ դիվանագետ պապը։ Վերջապես երկարատև բանակցություններից հետո, ստանալով Մյուլհաուզենի մոտ Ռուդոլֆի տարած խոշոր հաղթանակի լուրը, որին վաղուց սպասում էր, պապը հապշտապ պաշտպանեց նրան և հայտարարեց, թե Հենրիխը զրկվում է իշխանությունից ու թագավորական կոչումից։ Սակայն էլստերի ափի մոտերքում Ռուդոլֆը ծանր վիրավորվեց և ճակատամարտից քիչ հետո մեռավ։ Պապը սկսեց երերալ հենց այն պահին, երբ նա արդեն պատրաստվում էր տոնել հաղթանակը։

Պապի դեմ Հենրիխը նորից հաղթանակ տարավ ինչպես Իտալիայում, այնպես էլ Գերմանիայում։ Գրիգորին վերադարձնելով այն բոլոր հարյածները, որ ստացել էր նրանից, կայսրը ձգտում էր պապին

հակապապ հակադրել, ինչպես որ իրեն հակադրել էին հակաթագավորները։ Նրան հաջողվեց մեծ բանակ հավաքել և պաշարել Հռոմը։ Վիթխարի գումարի օգնությամբ թագավորը հասավ այն բանին, որ հռոմեացիները նրա առաջ բացեցին քաղաքի դարպասները, և Հենրիխը արքեպիսկոպոս Գիբերտոսի ուղեկցությամբ հանդիսավոր կերպով մտավ Լաթերանյան պալատը։

Իսկ երբ Գիբերտոսը սուրբ գահ բարձրացավ Կղեմես III անունով, նա իր հերթին Հենրիխ IV-ի գլխին դրեց Արևմտյան Հռոմեական կայսրության թագը։

Պաշարված սուրբ Հրեշտակի ամրոցում նախկին պապը դևռես չէր ասել իր վերջին խոսքը։ Համոզվելով, որ իր կողմնակիցները չեն կարող հաղթել կայսեր բազմահազարանոց զորքին, նա լռելյայն Հենրիխ IV-ին սպանելու ծրագիր էր խորհում։

Իր լրտեսներից իմանալով, որ կայսրը ամեն երեկո աղոթում է միևնույն եկեղեցում, նա իր կողմը քաշեց այն կարդինալին, որի տընօրինության տակ էր այդ բազիլիկան։ Հոգևոր տիրակալի կարդադրությամբ եկեղեցու աղեղակամարի վրա, այն տեղի վերևում, ուր սովորաբար կանգնում էր կայսրը, անցք փորեցին և ծածկեցին մի մեծ քարով։ Թոկի օգնությամբ քարը շատ հեշտ կարկլի էր գցել անցքի տակ կանգնած մարդու գլխին։ Երբ նախապատրաստություններն ավարտվել էին, կարդինալը սկսեց սպասել հարմար պահի։ Մի անգամ, երբ Հենրիխը ծունկ էր չոքել, կարդինալը թոկը ձգեց, և քարը դղրդյունով ցած ընկավ։ Սակայն միգուցե քարի վայր ընկնելը ճիշտ չէր հաշվված, կամ միգուցե թագավորը մատուռում կանգնած էր իր ոչ սովորական տեղում, բայց, համենայն դեպս, Հենրիխը անվնաս մնաց։ Հսկայական քարակտորը փշրվեց նրա ոտքերի մոտ, միայն մի քանի բեկորներով թեթևակի վիրավորելով թագավորին։ Կարդինալը, տեսնելով, որ մահափորձը ձախողվել է, փորձեց փախչել, բայց կայսեր թիկնապահները նրան բռնեցին և սպանեցին հենց բեմի աստիճանների վրա։ Կարդինալի դիակը քարշ տվեցին Հռոմի փողոցներով, ապա աղբանոց նետեցին։

Ինչպես տեսնում ենք, մարդասպանը՝ Գրիգոր VII-ը, երբ պետք էր լինում, ֆոկուսների էլ էր դիմում։

Շատ լավ հասկանալով, որ պապը այն մարդկանցից է, որոնք իրենց նպատակներին հասնելու համար ոչ մի հանցագործության առաջ կանգ չեն առնում, և որ քարին կարող է հետևել թույնը կամ թիկունքից վարձու մարդասպանի հասցրած հարվածը, Հենրիխը խոհեմ համարեց հեռանալ Հռոմից։ Բացի այդ, Գրիգորի դրդմամբ ռադմատենչ կոմսուհի

մաթիլդան, պապի սիրուհին, Լոմբարդիայում անդադրում պայքար էր մղում իր ազգականի դեմ։ Եվ Հենրիխը վճռեց առժամանակ թողնել Հռոմը, իր հետ տանելով ահաբեկված Կղեմես III-ին։

Հաշվի առնելով, որ Հռոմում իր կողմնակիցների շարքերը նոսրացել են, Գրիգորը դիմեց Ռոբերտ Գյուիսկարի աջակցությանը։ Նորման ծովահենների առաջնորդը հետևակի ու հեծելազորի բազմահազարանոց բանակով, որի կազմում կային սարացինների մի քանի ջոկատներ, օգնության հասավ Հռոմեական եկեղեցուն։ Ինակչությունը փորձեց պաշտպանվել, բայց մի քանի օր հետո նորման դուքսին հաջողվեց մտնել քաղաք։ Նորման և սարացին հրոսակների կամայականությանը հանձնված Հռոմը վերապրեց կոտորածների, բռնությունների և հրդեհների բոլոր սարսափները։ Վերացան ամբողջ թաղամասեր, ավերվելով Գյուիսկարի զինվորների ձեռքով։ Հազարավոր հռոմեացիներ ստրկության վաճառվեցին։

Գրիգորը չէր կարող մնալ այն քաղաքում, որ ամայացել և բնակչությունից զրկվել էր նրա պատճառով։ Նա շտապով Ռոբերտ Գյուիսկարի հետ գնաց Սալերնո, որտեղ եկեղեցաժողով հրավիրեց և վերստին բանադրեց Հենրիխ III-ին, Կղեմես III-ին և նրանց կողմնակիցներին։

Մի քանի ամիս անց Հենրիխը իր բանակի գլուխն անցած վերադարձավ Հռոմ։ Նա ևս ստիպված էր ուժ գործադրել, որպեսզի պապ Կղեմես III-ին վերադարձներ Լաթերանյան պալատ։

Ինչ վերաբերում է Գրիգորին, ապա նա ի վիճակի չեղավ դիմանալու իր թշնամու ցնծությանը և շուտով անկողին ընկավ։ Մեռնելուց առաջ, երբ խոստովանահայրը նրան խնդրեց թողություն տալ և ներել իր թշնամիներին, ուղղափառ քրիստոնյան խոխոռալով ասաց, թե անիծում է Հենրիխին, հակապապ Գիբերտոսին և այն սրիկաներին, որոնք նրանց պաշտպանում են։

Նա մեռավ 1085 թվականի մայիսի 25-ին և թաղվեց Սալերնոյում։

Սուրբ առաքելական Հռոմեական-կաթոլիկական եկեղեցին որոշեց, որ Գրիգոր VII անունով մարդասպան-հանցագործն իր երկարամյա և բեղմնավոր կյանքի ընթացքում այնքան չարագործություններ է կատարել, որ կարող է արժանի լինել սրբի լուսապսակին։ Ի՞նչ կա որ, եկեղեցին իր գործը լավ գիտե։

## ՀՐԱՇԱԳՈՐԾ ԽՈՒՅՐԸ

*Եկեղեցական պատմաբանները, ըստ Լևուլյին, շատ են տքնել այդ պապին արդարացնելու համար, չանալով ինչ ու ինչ սխրագործություններ հայտնաբերել, բացի նրա գործած հանցանքներից։ Այսպես, նրանցից ոմանք պնդում են, թե Գրիգորն օժտված էր հրաշագործի ձիրքով և ոչ միայն հրաշքներ էր կատարում, այլև այդ ձիրքով օժտում էր անշունչ առարկաներին։ Այս առիթով կանոնիկոս Պողոսը, Գրիգոր VII-ի վարքագրություններից մեկի հեղինակը, բերում է մի շատ հետաքրքրական փաստ։ (Միանգամայն ավելորդ է ընդգծել, որ մենք ոչինչ չենք հորինել տվյալ պատմության մեջ. նման սյուժեներ ծնվում են միայն կղերականի բորբոքված ուղեղում։)*

*Եվ այսպես, ոմն Ուրսլդ, Մանթուանի եպիսկոպոսը, մարքրաբարո կյանք էր վարում՝ արվամոլության կանոններին համապատասխան։ Ի վերջո թշվառ պրելատը հիվանդացավ։ Նրա հիվանդությունն անսովոր էր ու տանջալից։ Փորձված բժիշկը, որոշելով նրա մարմնի վրա առաջացած թալախապալարի պատճառը, գտավ, որ ինքը անզոր է նրան բուժել։ Եպիսկոպոսը եղավ Իտալիայի բոլոր բժիշկների մոտ և նույնիսկ կոնսուլիումներ հրավիրեց, բայց, չնայած բժիշկների բոլոր ջանքերին, տառապանքն ավելի էր սաստկանում։ Նա աստվածավախ մարդ էր, ջերմեռանդորեն աղոթում էր աստծուն, և աստված վերջապես, խղճալով նրան, հայտնություն ուղարկեց, տառապյալին նոր հույս ներշնչելով։ Հնազանդվելով ի վերուստ տրված խորհրդին, պրելատը Գրիգոր VII-ից թախանձագին խնդրեց նրա խուրջը և դրեց ցավոտ տեղի վրա։ Իհարկե, կատարելով արարողությունը, նա սրբազան գլխարկին մատուցում էր բոլոր անհրաժեշտ պատիվները։ Հարկ կա՞ ավելացնելու, որ նա վայրկենապես ապաքինվեց։ Եվ մի՞թե հենց միայն այդ հրաշքը բավական չէ Գրիգորին սրբացնելու համար։*

## ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ԳԱՀԻ ԵՎ ՍՈՒՐԲ
## ԱԹՈՌԻ ՄԻՋԵՎ

*Գահի և եկեղեցու միջև վեճերը չդադարեցին Գրիգոր VII-ի մահով. նրա կողմնակիցները հրաժարվում էին ճանաչել Կղեմես III-ին։ Նրանք*

առաջադրում էին մեզ արդեն հայտնի Դիդյեի թեկնածությունը, որին Գրիգորը մահվան մահճում իրեն հաջորդ էր նշանակել։ Բայց հարգարժան աբբան հիվանդ էր և, վերադառնալով Մոնտե-Կասինո, մեռնելուց առաջ մատնացույց արեց Օստիայի պրելատ Օթոնին՝ նրան համարելով առաքելական գահի ամենաարժանավոր թեկնածուն։ Օթոնը հանգուցյալի կամքի համաձայն քահանայապետ հայտարարվեց Ուրբանոս II անունով։ Մի տարեգրի տեղեկությամբ համաձայն, դեռևս սարկավագ եղած ժամանակ Օթոնը մի քանի տարի անցկացրել էր Կլյունի աբբայությունում, քավելով իր երիտասարդ հասակի մեղքերը (նրան բռնել էին մի ջահել ու գեղեցիկ միանձնուհու խցում, որին նա չափից ավելի մտերմաբար էր խոստովանեցնում)։

Այդ Ուրբանոսը ժամանակին Գրիգորի մերձավորն է եղել։ Պապական աթոռի համար նրան ընտրելն, այսպիսով, թշնամական ակտ էր կայսեր նկատմամբ։ Նոր պապը Իտալիայի ու Գերմանիայի բոլոր եպիսկոպոսներին մի էնցիկլիկ ուղարկեց, որով հայտարարում էր, թե բոլոր ուժերը կգործադրի իր նախորդի սկսած գործերն ավարտելու համար։

Ընտրվելուց հետո նա առաջին աշխարհներն անցկացրեց Իտալիայի հարավում՝ հող նախապատրաստելով Հռոմ վերադառնալու համար։ Հասկանալով, որ բացահայտ պայքարն անխուսափելիորեն իրեն պարտության կհասցնի, Ուրբանոսը, որպես հմուտ քաղաքագետ, դիմեց բանսարկուությունների ու խարդավանքի և իր կողմը գրավեց կայսեր մտերիմներից շատերին։ Նրա օրհնությամբ կոմսուհի Մաթիլդան (որ հավատարիմ էր իր հանգուցյալ սիրեկանի հիշատակին) ամուսնացավ Վոլֆ Բավարացու տասնիննամյա որդու հետ (այդ ժամանակ Մաթիլդան քառասուններեքն անց էր)։ Այդ ամուսնության շնորհիվ Ուրբանոսի համախոհներին հաջողվեց իրենց կողմը քաշել հոգևորականությանը, և Կղեմես III-ին ոչինչ չէր մնում անել, քան փախչել։

Ուրբանոսը Հռոմ վերադարձավ։ Նա այնքան հզորացավ, որ կայսրն սկսեց անհանգստանալ։ Նա ղլիսի ընկավ, որ սուրբ հոր համախոհներին ջախջախելու համար հարկավոր է գործել որքան հնարավոր է արագ ու վճռականորեն։ Չնայած հոգևորականության մոլի բանսարկություններին, Հենրիխը հարձակվեց Լոմբարդիայի վրա և շատ արագ պարտության մատնեց պապական բանակը։ Լսելով, որ կայսեր բանակը մոտենում է, վախեցած հռոմեացիները շտապեցին ճանաչել Կղեմես III-ին, և նա գահ բարձրացավ երկամյա ընդմիջումից հետո։

Այն ժամանակ Ուրբանոսը Հենրիխի դեմ գործադրեց պապերի նախասիրած հնարը. նրա սադրանքով Հենրիխ IV-ի որդի Կոնրադը ապըս-

տամրեց հոր դեմ։ Պարզ չէ, թե ինչ միջոցներով էր Ուրբանոսը նրան իր կողմը դրավել, հայտնի է միայն, որ Կոնրադի փորձը հաջողությամբ պսակվեց։ Նա հռչակվեց Իտալիայի թագավոր և բազմահազարանոց զորքի գլուխ անցած, հնազավ Գերմանիայի սահմանները, նախապես կղեմես III-ին վռնդելով Հռոմից։ Ճիշտ է, կայսերական զոհատների մի մասը դեռևս շարունակում էր տիրություն անել Հռոմի մի քանի թաղամասերում։ Բայց այստեղ էլ Ուրբանոսին օգնեց փողը. հաղար լիվրի գնով Հռոմի կայսերական զորքերի պետը թողնց քաղաքը, և Ուրբանոսը, հաղթանակած, հաստատվեց Լաթերանյան պալատում։

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ըստ որոշ տարեգիրների, դեռևս 1074 թվականին Գրիգոր VII-ը ցանկություն հայտնեց՝ անձամբ «քրիստոնեական ասպետներին աստծո թշնամիների դեմ պայքարելու տանել մինչև փրկչի դերեզմանը»։ Բայց Գերմանիայի կայսեր դեմ մղվող պատերազմը ձգձգվեց, և նա ոչինչ չկարողացավ անել։ Ուրբանոս II-ը, իր դիրքերն ամրապնդելով ոչ միայն Հռոմում, այլև ամբողջ Իտալիայում, վերջապես կարող էր իրագործել Գրիգոր VII-ի նվիրական իղձերը։ Բացի այդ, Ալեքսիոս Կոմնենոսը, որն այդ ժամանակ թագավորում էր Բյուզանդիայում, պապին խոստացավ առաքելական աթոռին ենթարկել իր կայսրության բոլոր եկեղեցիները, եթե սուրբ Հայրը Արևմուտքի իշխանավորներին հորդորի պայքարի դուրս գալ։ Գայթակղվելով եկամտաբեր գործարքով, Ուրբանոս II-ը կրկնապատկված եռանդով ձեռնամուխ եղավ վաղուց մտածված ծրագրի իրագործմանը։

Մեկնելով Ֆրանկիա, Ուրբանոս II-ը գումարեց Կլերմոնի եկեղեցաժողովը, որտեղ և որոշում ընդունվեց այն խելահեղ ու հանցագործ արշավանքներից առաջինի մասին, որոնք հայտնի են խաչակրաց անունով։

Երբ եկեղեցաժողովն իր աշխատանքն ավարտեց, պապը, բաց երկնքի տակ ժողովելով բազմահազար ամբոխին, հանդես եկավ մի բոցաշունչ ու ռազմատենչ ճառով, որով ասպետներին հորդորում էր Քրիստոսին պաշտպանել անհավատներից։

— Ջմռռանա՛ք,— բացականչեց նա վերջում,— որ աստված իմ բև-

բանով ձեզ հաղթանակ է խոստանում և ձեր ձեռքն է տալիս անհավատների բաղում գանձերը։ Նա, ով կգնա ազատագրելու աստծո եկեղեցին, կարժանանա նահատակի պսակի ու մեղքերի լրիվ թողության։

Պապն արշավանքի վերաբերյալ նաև մի հրամանագիր հրապարակեց, ըստ որի ոչ ոք չպիտի համարձակվի օգտվել այն սենյորների կալվածքներից, որոնք արշավանքի են գնում, ոչ մի վաշխառու չի կարող հետապնդել նրանց. ով ձեռք բարձրացնի ասպետների ունեցվածքի վրա, կբանադրվի։

Հարկ կա՞ ավելացնելու, որ քահանայապետի ճառը խանդավառությամբ դիմավորեցին։ Չէ որ, բացի իր օրհնությունից, պապը նախօրոք թողություն էր տալիս այն բոլոր կողոպուտների ու սպանություննների համար, որ կարող էին տեղի ունենալ։ Ամբոխը սկսեց գոչել. «Ա՛յդ է ուզում տերը։ Ա՛յդ է ուզում տերը»։ Դա դարձավ խաչակիրների մարտակոչը։

Կա մի ավանդություն, որ ծագել է դրանից մի քանի տարի հետո, թե խաչակրաց արշավանքի իսկական նախաձեռնողը եղել է Պետրոս Անապատականը, որը և պապին համոզել է ձեռնարկել այդ գործը։ Երուսաղեմում իր ուխտագնացության ժամանակ նա Սուրբ գերեզմանի եկեղեցում քնով է ընկել ու երազում տեսել փրկչին, որն իբր ասել է. «Պետրոս, թանկագին որդյա՛կս, վեր կաց, գնա քո պատրիարքի մոտ և պատմիր քո հայրենիքում, որ քրիստոնյաներին հալածում են, և դրդիր հավատացյալներին ազատագրելու Երուսաղեմը հնթանոսներից»։ Պետրոս Անապատականը վերադարձել է Հռոմ և պապին ամեն ինչ պատմել։

Պատմաբան Ժյուրյեն պնդում է, թե Պետրոսը ճգնավոր չէր և երբեք էլ չի գնացել «սուրբ» վայրերը. այլ պարզապես եղել է պապի գործակալը, նկատի ունենալով նրա խիզախությունն ու պերճախոսությունը, պապը նրան ընտրել էր սրբազան պատերազմի գաղափարնեբի քարոզիչ։ «Պետրոսը,— ավելացնում է պատմաբանը,— բավականաչափ դրամական գումար ստացավ նրա համար, որ կարողացել էր ոգևորել հիմարացած մարդկանց, որպեսզի նրանք գնան զավթելու Քանանի հողը, որը 300 տարի ոտոգվում էր խաչակիր մոլեռանդների արյունով»։

Երբեք այնքան հրաշքներ չեն եղել, որքան այդ դարաշրջանում։ Պասերն ու աղոթքները սովից ու ծարավից ուժասպառ մարդկանց մեջ հաճախ պատրանքներ էին առաջացնում։ Այսպես, մի քահանայի քնի մեջ այցելել է Անդրեաս առաքյալը և, ցույց տալով եկեղեցու այն

տեղը, որտեղ թաղված է այն նիզակը, որով խոցել են Քրիստոսին, ասել է, թե այդ նիզակը քրիստոնյաներին հաղթանակ կբերի։ Երբ նիզակը գտան, շատ մարդիկ սկսեցին պնդել, թե քահանան ինքն է դա թաղել հողում։ Նա առաջարկեց իր խոսքերի ճշտությունն ստուգել կրակափորձով, երդվելով, թե նիզակը ձեռքին կանցնի բոցկլտացող խարույկի միջով։ Նա դիմացավ աստծո պատին, բայց դրանից նույն ժամին մահացավ։ Քահանաներն ասացին, թե նա մեռել է իբր այն պատճառով, որ ինչ-որ մի պահ տատանվել է իր դավանանքում։ Սակայն տիրապահ նիզակը դասվեց սուրբ մասունքների շարքը։

Մի ուրիշ տարեգիր պատմում է, որ անտանելի տոթի ժամանակ, երբ ծարավը հագեցնելու համար ոչինչ չէր կարելի գտնել, բացի գարշահոտ ջրափոսերից, քահանան, որպեսզի բարձրացնի խաչակիրների մարտական ոգին, նրանց համոզեց եկեղեցական թափորով պտտվել քաղաքի շուրջը. իբր այդպես էր կարգադրել սրբերից մեկը, որ նրան ներկայացել էր երազում։ Խաչակիրները ոտաբոբիկ, զինված, երեք անգամ պտտվեցին քաղաքի շուրջը, ապա զնացին գրոհելու այն մզկիթի վրա, որտեղ թաքնված էին մահմեդականները։ «Արյունը հասնում էր ձիու վրա նստած ասպետի ծնկներին։ Մի բոպե նրանք ընդհատեցին կոտորածը, որպեսզի ոտաբոբիկ գնան խոնարհվելու տիրոջ գերեզմանին, իսկ հետո նորից սկսեցին սպանել ու կողոպտել»։

Մոլեռանդությունից ու անոտիապաշտությունից բացի, որ հոգևորականությունը չարաշահում էր հրեշավոր կերպով, կային նաև այլ նախապայմաններ, որոնք հսկայական դեր էին խաղում այդ «սուրբ գործում»։ Բոլոր դեպքերում, ինչպես ասում է մի պատմաբան, «եթե նույնիսկ որոշ խաչակիրներ ձգտում էին ամենից առաջ հասնել սիրոջ գերեզմանին, որպեսզի կատարեն իրենց ուխտը, ապա նրանց առաջնորդները, ընդհակառակը, ուզում էին նրանց օգտագործել, որպեսզի Արևելքում իրենց համար իշխանություն նվաճեն։ Մարդկանց մեծ մասը Ասիա է գնացել միայն ի սեր կողոպուտի, ինչպես նաև այն պատճառով, որ հայրենիքում այլևս կողոպտելու բան չկար»։

Մի կաթոլիկ հեղինակ ասում է. «Խաչակրաց ղորքի այդ ավազակախմբերը կազմված էին բախտախնդիրներից, երդմնազանցներից, անառակներից, ավազակներից ու մարդասպաններից, կողոպուտը նրանց համար եղել է սուրբ արշավանքի իսկական նպատակը»։ Կանոնիկոս Գվիբերտը և Ճիզվիտ Մեմբուրը խոստովանում են, որ խաչակիրների բանակը նման էր կողոպտիչների վիթխարի ավազակախմբի։

Ռեֆորմացիայի կողմնակից Բեյլը, որի հանդուրժողականու-

*թյունն ու անաչառությունն այնքան մեծ էին, որ ոմիօրմատորները նրան մեղադրեցին հերետիկոսության մեջ, խաչակրաց արշավանքներին այսպիսի գնահատական է տալիս. «Ո՞վ կարող է համարձակվել այդ հրեշներին Քրիստոսի զինվորներ անվանել։ Այդ երկերեսանիները միայն կողոպտում ու սպանում էին, բռնաբարում էին կանանց ու աղջիկներին, որոնք իրենց հյուրասիրում էին։ Երբ մոտենում էին իբր նրանց օգնության եկող այդ քստմնելի բարբարոսները, Ասիայի քրիստոնյաներն ավելի ճնշող սարսափ էին ապրում, քան երբ երևում էին թուրքերը կամ սարացինները։ Խաչակրաց արշավանքները, անկասկած, մարդկության պատմության ամենագարշելի էջերն են»։*

*Խաչակիրների առաջին ավազակախումբը ճանապարհ ընկավ 1096 թվականի մարտի 8-ին։ Այդ խառնիճաղանջ, քրջազգեստ ամբոխը գրեթե ամբողջությամբ բաղկացած էր հետևակայիններից։ Նրանցից ոչ մեկը ձի գնելու միջոց չուներ։ Եթե որևէ մեկի ձեռքը ձի էր ընկնում, ապա կարիքը ստիպում էր վաճառել։ Նրանց պարագլուխն էր Վալտեր Տրկլորը, կամ Դրամազուրկը, որը բավական խոսուն մականուն է։ Կարելի է վկայածել, որ սուրբ գերեզմանի ազատագրումն ամենից քիչ էր զբաղեցնում այդ խարդախին։ Իրականում նա երազում էր հարստանալու, Արևելքում հող ունենալու և իր անհրապույր մսկանունը որևէ շքեղ տիտղոսով փոխարինելու մասին։*

*Մենք որոշ մանրամասների վրա կանգ կնք առնում միայն նրա համար, որ ավելի ճշտորեն բնութագրենք այն կարծեցյալ հերոսներին, որոնց սրբացրել է եկեղեցական ավանդաղրույցը։*

*Վալտերը իր ավազակախմբի հետ Հունոսի մարզերով հասավ Դանուբ, այնտեղից՝ Կոստանդնուպոլիս։ Նրա ջոկատի առջևից շարժվում էին այծն ու սագը, գերմանական հնագույն դիցաբանության սրբազան կենդանիները։ Մեկնելուց առաջ խաչակիրները Հունոսի քաղաքներում կոտորեցին հրեաներին, որպես Քրիստոսի թշնամիների, և կողոպտեցին նրանց տները։ Երբ Քյոլնի արքեպիսկոպոսը իր տան առաջին հարկում թաքցրեց իր քաղաքի հրեաներին, ամբոխը կացիններով ջարդեց դուռը և կոտորեց թշվառներին։ «Մայնցում և Քյոլնում,— ասում է վանական Գվիբերտը,— բնակիչներն իրենց տներում բարիկադներ էին սարքում, որպեսզի այդ հրեշներից փրկվեն։ Մայրերը, հուսահատությունից իրենց կորցրած, խեղդում էին իրենց երեխաներին, ամուսինները սրախողխող էին անում իրենց կանանց, աղջիկներն ինքնասպանություն էին գործում, որպեսզի չընկնեին խաչեր ուսած անխիղճ մոլեռանդների ձեռքը»։*

*Առաջին ավազակախմբին հետևեց քառասուն հազար շրջմոլիկներից*

բաղկացած ամբոխը Պետրոս Անապատականի գլխավորությամբ, հաշակիրների մի մասը, վանական Գոթշալկի առաջնորդությամբ, ընկավ այն մարտերում, որ մղում էր հունգարացիների և բուլղարացիների դեմ, որոնք, զայրույթով ու սարսափով համակված, որոշել էին նրանց թույլ չտալ անցնել իրենց երկրով։ Մի որոշ ժամանակ անց երկու հարյուր հազար կողոպտիչներ թափվեցին այդ երկու դժբախտ ժողովուրդների վրա, ավերելով քաղաքները, հրդեհելով գյուղերը, ոչնչացնելով բնակիչներին։

Հաշակիրները առանձին ջոկատներով հասան Կոստանդնուպոլիս։ Արևմտյան ասպետները զարմացած էին՝ տեսնելով մարմարյա պալատներով, ոսկեզօծ գմբեթներով մեծաժխոր յայն փողոցներով վիթխարի քաղաքը։ Հարստությունը գրգռում էր նրանց նախանձը, իսկ սքեմավոր հույները հարգանք չէին հարուցում։ Ալեքս Կոմնինոսը նախօրոք զորքի համար հսկայական պաշարներ էր կուտակել և նախազգուշական մի շարք միջոցների դիմել, որպեսզի կանխեր կողոպուտը։ Բայց ամեն ինչ ապարդյուն եղավ. հաշակիրներն եկեղեցիների տանիքներից պոկում էին արճճե թիթեղները, հրդեհում տները, սպանում հողագործներին; չէին խնայում նույնիսկ կանանց վանքերը։ Անհնար է նկարագրել հաշի այդ մոլեռանդ պաշտպանների սխրանքները։

Աննա Կոմնենոսը, կայսեր դուստրը (հոր կյանքը նա նկարագրել է «Ալեքսիադա» աշխատության մեջ), Պետրոս Անապատականի զինվորների մասին հետևյալն է պատմում. «Նրանք երեխաներին կտորկտոր էին անում, իրենց վոհերի մայրերին ստիպում էին խմել նրանց արյունը։ Նրանք բռնաբարում էին երեխաներին ու պատանիներին, իսկ այնուհետև, նրանց կախելով, դիակների վրա սրավարժություններ անում»։ Աննայի պատմելով, ինքը Պետրոս Անապատականը իր կողոպտիչներին ավազակության ու գազանության օրինակ էր տալիս։ Եվ այդ Պետրոս Անապատականին եկեղեցին մեզ ներկայացնում է որպես կրակոտ առաքյալ, մարգարեի պես մի բան։

Նույնիսկ այն սակավաթիվ մարդիկ, որ հայրենիքը թողել էին անկեղծ մոլեռանդությունից դրդված, ողջունված Ուրբանոս II-ի ու նրա գործակալների բուռն շուքից, եթե չէին էլ մասնակցում կողոպուտին, հույներին ատում էին որպես հերետիկոսների։

Ճիվվիտ Մեմբուրը, որի դրիչը միշտ գովերգել է կաթոլիկ եկեղեցու գործերը, խոստովանում է, որ խաչակրաց արշավանքներից սուրբ աթոռը վիթխարի օգուտներ է քաղել։

Որոշ պրելատներ չնչին դնով ձեռք էին բերում այն կալվածքները,

որ իրենց չոկատները հանդերձավորելու համար վաճառում էին փողի կարիք ունեցող ասպետները, քահանաները, որոնք սիրահոժար համաձայնվում էին պաշտպանել ասպետների ունեցվածքը, առիթը բաց չէին թողնում գրպանելու նրանց եկամուտները։

Հետագայում, երբ ժանտախտի, սովի, հիվանդությունների և մահմեդականների հերոսական դիմադրության շնորհիվ Քրիստոսի բանակը դչնչացավ, շատ կղերականներ չանում էին տիրանալ եկեղեցուն վստահված ունեցվածքին։

Եկեղեցու հարստության առասպելական բազմապատկում՝ ահա՛ առաջին խաչակրաց արշավանքի հիմնական արդյունքը։

## ՊԱՍՔԱԼԻՍ II-Ը՝ ԳՐԻԳՈՐ VII-Ի ՀԱՎԱՏԱՐԻՄ ՀԵՏԵՎՈՐԴԸ

1099 թվականի հուլիսին վախճանված Ուրբանոս II-ին փոխարինեց Պասքալիս II-ը։ Նոր պապը շտապեց ազատվել այն մարդուց, որ իր նախորդի հին մրցակիցն էր եղել և իրեն էլ էր ահ ներշնչում. նա թունավորեց Կղեմես III-ին։ Երբ վերջինիս կողմնակիցները նոր քահանայապետ ընտրեցին, Պասքալիսը նրանց նետեց սուրբ Լավրենտիոսի վանքի նկուղը։ Երրորդ պապին էլ նույն բախտը վիճակվեց, միայն այն տարբերությամբ, որ նքան գցեցին մի այլ վանքի նկուղ։ Չորրորդին Պաքսալիսն արտաքսեց, և նա մեռավ աքսորում։

Թվում էր, թե հիմա Պասքալիսը կարող է հանգիստ շունչ քաշել։ Բայց գործարար պապի հանգիստը շատ կարճ տևեց, որովհետև շուտով տեղ հասավ Իտալիայի թագավոր Կոնրադի (որին թագադրել էր Ուրբանոս II-ը) հանկարծակի մահվան լուրը, և Պասքալիսը, վախենալով, որ իշխանությունը կարող է նորից անցնել Հենրիխ IV-ի ձեռքը, նրան մեղադրեց որդուն թունավորելու մեջ և հավատացյալներին հրամայեց դինվել ընդդեմ կայսեր՝ «նահատակի» վրեժն առնելու համար։ Այս անգամ Հենրիխ IV-ին հաջողվեց խռովարարներին հաղթել, և Պասքալիսը հաշտություն խնդրեց։ Բայց երբ Հենրիխ IV-ը չներկայացավ Հռոմում հրավիրված եկեղեցաժողովին, կայսեր բացակայությունը համարվեց աններելի հանցանք, և պապը կրկին բանադրեց նրան։

Պարզապես զարմանալի է, թե որքան կենսունակ դուրս եկավ այդ չարաբաստիկ կայսրը։ Նա պետք է վաղուց մոխիր դառած լիներ, բայց

դիմացավ բոլոր բանադրանքներին, որ հերթով նրա գլխին թափում էին պապերը Գրիգոր VII-ից սկսած։

Հիշյալ եկեղեցաժողովին ներկա էր մեզ արդեն ծանոթ կոմսուհի Մաթիլդան։ Շարունակելով կայսրի նկատմամբ ստածել նույն այն ատելությունը, ինչ տասնութ տարի առաջ, վրեժխնդիր երկերեսանին Հենրիխ IV-ին մեղադրեց նրանում, թե նա իրենից գողացել է այն ակտը, որով ինքն իր ամբողջ ունեցվածքը հանձնել է սուրբ աթոռին։ Սակայն իր տոհմի գլխավորին ժառանգությունից զրկելը չբավարարեց նախկին քահանայապետի ոխակալ սիրուհուն։ Կայսեր երկրորդ որդուն նա դրդեց ապստամբել հոր դեմ։ Արքայազնի շուրջը, որն առանց որևէ դիմադրության ենթարկվեց իր հզոր մորաքրոջ թելադրանքին, մեծաթիվ բանակ կազմվեց։ Իր թագավորական այլ հատկություններով հանդերձ, պատանի սրիկան աչքի էր ընկնում նաև բավական մեծ կեղծավորությամբ։

Եթե նա դահաժառանգ չլիներ, որը շտապում էր ժամանակից շուտ թագը գլխին դնել, նրանից լավ քահանա դուրս կգար։

Կայսրի՝ իր հոր դեմ դուրս բերելով մի քանի պրովինցիաներ, արքայադնը միաժամանակ ամեն տեղ խոսում էր իր անշահախնդրության ու որդիական հարգանքի մասին։ Այնուհանդերձ իր դեկլարացիայում նա մի էական վերապահություն արեց. «Եթե թագավորը կորոշի ենթարկվել սուրբ Պետրոսի հաջորդներին, մենք մեր սուրը պատյան կդնենք և մեր հորը կենթարկվենք իբրև նրա հպատակներից ամենահնազանդը։ Բայց եթե թագավորը համառի սուրբ Պետրոսի մեծ տեղապահին չհնազանդվելու մեջ, ապա, քանի որ մենք նախ և առաջ պարտավոր ենք հաշվի առնել աստծո կամքը, սևիլական ձևերով կսպանենք նրան, եթե դա անհրաժեշտ լինի կրոնը պաշտպանելու համար, քանզի մեզ այդ է հրամայել քահանայապետ Պասքալիսը»։

Հենրիխ IV-ը, որին իր պինլորները լքել էին, մեղավոր գլուխը խոնարհեց պապի առաջ, անօրինական համարելով իր բոլոր հավակնություններն ու որոշումները։ Նույնիսկ սրբապղծություններ, հավատարիմ իր գործելակերպին, կաշառեց Հենրիխին շրջապատող սպաներին, և նրանք ծեր կայսրին հանձնեցին որդու ողորմածությանը։ Սակայն խոովարար գահաժառանգը չհրաժարվեց հոր հեղինակությունն ընդունելու իր խոստումը, նույնիսկ երբ կայսրը հնազանդություն հայտնեց սուրբ աթոռին։

Թունդ հարբեցողների երդումներն ավելի հուսալի են, քան թագավորների ու քահանաների խոստումները։

Հենրիխ IV-ին ստիպեցին գահից հրաժարվել հօգուտ որդու, որն իրեն կայսր հռչակեց Հենրիխ V անունով։ Կոբլենցում հայրը ծնկաչոք

գոսք էր հայցում որդուց։ Բայց, չնայած տրված խոստումներին, նրան շղթայեցին ու բանտ նետեցին։ Ներունի կայսեր դեմ ձեռնարկած դաժան միջոցները սպառնում էին հարված հասցնել Պասքալիսի իարդավանքներին։ Հռենոսի մարզերում բնակչությունը հրաժարվեց ճանաչել երիտասարդ Հենրիխին, իսկ Հենրիխ Լիմբուրգացուն նույնիսկ հաջողվեց կայսրին բանտից ազատել. դա կատարվեց իսկապես ժամանակին, որովհետև սուրբ հայրն արդեն հրամայել էր Հենրիխ IV-ին խեղդամահ անել։

Ընկնելով Լիեժ, ծերունի կայսրը, հասկանալով, որ իր ժառանգին պեկալարում է Պասքալիս II-ը, բոլոր քրիստոնյա իշխաններին դիմեց օգնություն ցույց տալու խնդրանքով, պապին մեղադրելով նորին մեծության դեմ նյութված հանցագործությունների մեջ։ Գազազած Պասքալիս II-ը էնցիկլիկ ուղարկեց Ֆրանսիայի, Գերմանիայի, Բուվարիայի, Շվաբիայի ու Սաքսոնիայի բոլոր եպիսկոպոսներին, սենյոր Լրին ու իշխաններին։

«Ամենուրեք հետապնդեցեք Հենրիխին,— գրում էր նա,— ազանդավորների պարագլխին և նրա ամբողջ ավազակախմբին։ Դուք երբեք չեք կարող աստծուն ավելի հաճելի զոհ բերել, քան Քրիստոսի այդ թշնամու կյանքը, այն մարդու, որ մտադրվել է քահանայապետից խլել գերագույն իշխանությունը։ Մենք ձեզ և ձեր վասալներին հրամայում ենք՝ նրան տանջամահ անել ամենադաժան խոշտանգումներով։ Մենք ձեզ թողություն կտանք ինչպես անցյալ, այնպես էլ ապագա մեղքերի համար, և դուք ձեր մահից հետո կմտնեք երկնային երուսաղեմ»։

Այդ ուղերձը, որը կարող է կղերական ոճի նմուշ հանդիսանալ, զայրացրեց նույնիսկ որոշ եկեղեցականների։ Լիեժի եպիսկոպոսը քահանայապետին մի նամակ ուղարկեց, որով մեծ արժանապատվությամբ և շատ եռանդագին արտահայտեց այն զգացմունքները, որ հարուցել էր պապի վայրագ կոնդակը։ Ահա քահանայապետին ուղղված նրա պատասխանի առավել ուշագրավ տողերը.

«Ո՞վ է սուրբ աթոռին իրավունք տվել սպանությունը համարել այնպիսի արժանավոր արարք, որ նրա սրբությունը կարող է մարդուն մաքրել ոչ միայն անցյալ, այլև ապագա մեղքերից։ Նույնիսկ այնպիսի մեղքերից, ինչպիսիք են արյունապղծությունը, գողությունն ու սպանությունը։ Նման հանցագործությունները հհանձնարարեցեք Հռոմի պիղծ վարձկաններին։ Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք հրաժարվում ենք ենթարկվել։ Նույնիսկ հին Բաբելոնում չեն եղել այնպիսի բարբարոսու-

թյուն, գոռոզամտություն, կռապաշտություն, որ հիմա թագավորում է սուրբ քաղաքում...»։

Լիեժի եպիսկոպոսի նամակը մնաց որպես փուչ կրակոց։ Պասքալիսը հաստատ որոշել էր սպանել Հենրիխ IV-ին։ Նրա երկրորդ փորձն ավելի հաջող դուրս եկավ։ Ներ կայսրը մեռավ, թունավորված սուրբ հոր ձեռքով, մինչդեռ նրա որդին պաշարել էր Լյուտիխը։ Քանի դեռ կայսրը ողջ էր, բնակչությունն աննկուն պաշտպանվում էր, իսկ երբ նա մեռավ, դիմայրությունն անօգուտ դարձավ։ Ջաղրելի պապի արժանի կամակատարը պահանջեց, որ հոր դիակը հանձնեն դահճին և ենթարկեն այն ծաղրուծանակին, որոնց մասին իր նամակում Պասքալիսը խոսել էր։ Միայն 1111-ին Հենրիխ IV-ի աճյունը, որը նզովված էր, թաղվեց եկեղեցական ծեսով (մինչ այդ ամփոփված էր տաճարի կողքին գտնվող մի փարե դամբարանում, որի վրա դրված էր. «Աստ հանգի Հռոմի թշնամին»)։

## ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՎ ՆՐԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԸ

Հանցագործ որդին, որն իր դավաճանությամբ թունավորել էր հոր վերջին օրերը, չէր կարող պապության հավատարիմ ծառա լինել։ Նա օգտագործում էր քահանայապետին, որպեսզի զավթի իշխանությունը, իսկ երբ դա նրան հաջողվեց, աշակերտն իր ուսուցչին միանգամայն արժանի դուրս եկավ։ Բրուայում Պասքալիս II-ի հրավիրած (1107-ին) եկեղեցաժողովի ժամանակ Հենրիխի ներկայացուցիչները պահանջեցին, որ կայսրն ունենա «եպիսկոպոսներին նշանակելու իրավունք, որ մի ժամանակ տրվել էր Կառլոս Մեծին», այսինքն՝ աշխարհիկ իշխանատերին օժտել եկեղեցական ինվեստիտուրայով (դավազանով ու մատանիով)։ Պապը հրաժարվեց, իսկ կայսեր դեսպանները պատասխանեցին. «Ոչ թե այստեղ, այլ Հռոմում սուրը կլուծի այս վեճը»։

Հենրիխ V-ի բախտը բերում էր։ Հունգարիայի, Լեհաստանի ու Բոհեմիայի հետ երկամյա պատերազմից հետո նա մեծաթիվ բանակով շարժվեց Իտալիայի վրա։ Լոմբարդիայի քաղաքները հեթարկվեցին նրան, նույնիսկ գերկոմսուհի Մաթիլդան չհամարձակվեց դիմադրել։ Սուտրիում Պասքալիսի դեսպանները Հենրիխ V-ին հայտնեցին, թե պապը հրաժարվում է եկեղեցու կողմից դարերի ընթացքում ձեռք բերած բոլոր ֆեոդալական կալվածքներից, դրամ կտրելու իրավունքից

ու մյուս արտոնություններից, փոխարենը պահանջելով եկեղեցական ընտրությունների ազատություն և աշխարհիկ ինվեստիտուրայի վերացում։ Պասքալիսը փորձում էր եկեղեցու անկախությունը փրկել նրա աշխարհիկ հարստությունների գնով։ Հենրիխ V-ը բարեհաճորեն ընդունեց պայմանները և փետրվարի 12-ին, թագադրության ծիսակատարության համար, ժամանեց Հռոմ։ Սուրբ Պետրոսի տաճարը, որտեղ կատարվում էր օծումը, պաշտպանում էին գերմանացի ասպետները։ Բայց հենց որ համաձայնագիրն ընթերցվեց, տաճարը թնդաց գոռոն-գոչյուններով։ Եկեղեցական աստիճանավորները կտրականապես հրաժարվեցին հանձնել իրենց կալվածքները։ Օծումը դադարեցվեց։ Եկեղեցում տուրուդմփոց սկսվեց։ Թագավորը ձերբակալեց պապին ու կարդինալներին և իր գերիներին ուղարկեց Ալբանո։ Ի վերջո Պասքալիսը զիջեց թագավորի պահանջներին, ընդունելով, որ նա ունի նախորդ տիրակալների բոլոր իրավունքները։

Ինչպիսի՞ վրեժխնդրություն կանոսի համար։ Ասես իր հաղթանակի ամբողջ վեհությունն ընդգծելու համար, Հենրիխ V-ը հանդիսավորապես թաղեց իր բանադրված հոր աճյունը։

Պապության դեմ տարած հաղթանակը երկարատև չեղավ։ Եկեղեցին մերժեց այն պայմանները, որոնց համաձայնվել էր պապը։ Հռոմի հոգևորականությունը նրան կշտամբում էր, թե նա, եկեղեցական կանոններին հակառակ, կայսերական թագը դրել է պետությունն ու եկեղեցին քայքայող Հենրիխի գլխին և նրան արտոնություններ տվել։ Լաթերանի 1112 թվականի եկեղեցաժողովում Պասքալիսն անվավեր հայտարարեց այն արտոնությունները, որ Հենրիխն իրենից պոկել էր ուժով. «... ընդունում եմ իմ ուսուցիչ Գրիգոր VII-ի և Ուրբանոսի դեկրետները... հաստատում եմ, ինչ նրանք հաստատել են, և նզովում եմ, ինչ նրանք նզովել են...»։

Հռոմի լեգատներն ամենուր հայտարարեցին Լաթերանի եկեղեցաժողովի որոշումը և Պասքալիսի նախկին աշակերտ Հենրիխ V-ի բանադրումը։

Մենք կանգ չենք առնի այն պայքարի վրա, որ XII դարում միմյանց դեմ մղում էին պապերն ու աշխարհիկ իշխանատերերը։ Այդ պայքարի մեջ սրիկաներն իրար արժեն։ Անդրադառնանք միայն սուրբ Պետրոսի տեղապահների գործունեության առավել բնորոշ միջադեպերին։

Պասքալիսի մահից հետո պապ ընտրվեց Մոնտե-Կասինիի վանական Ջովանի Կաետանին, որն ընդունեց Գելասիոս II անունը։ Թագավորի դրածոները, հզոր ֆեոդալ Ջենչո Ֆրանջիպանիի առաջնորդու-

թյամբ, հարձակվեցին նորաթուխ պապի վրա և զնդան նետեցին։ Գալով Հռոմ, Հենրիխ V-ը կարողացավ հաջողացնել ծեր արքեպիսկոպոս Մորիսի, որն ընդունեց Գրիգոր VIII անունը, աթոռակալումը։ Գելասիոս II-ին հաջողվեց փախչել Բուրգունդիա, որտեղ և մեռավ՝ սուրբ աթոռի վրա մնալով մեկ տարի։ Հոգևորականությունը Գելասիոս II-ի հաջորդ ընտրեց արքեպիսկոպոս Գվիդոյին, որը հորջորջվեց որպես Կալիստոս II։ Վերջինս վաղուց հայտնի էր որպես Հենրիխ V-ի ամենամոտերիմ հակառակորդներից մեկը։

Տիրանալով Լաթերանյան պալատին, Կալիստոս II-ը զորք հավաքեց։ Նա կարդինալներից մեկին հանձնարարեց այդ զորքով Սուտրիում պաշարել Գրիգորի աթոռանիստը։ Մրցակցին շուտ բռնելու անհամբերությամբ համակված, Կալիստոս II-ն ինքը միացավ զոկատին և անձամբ ղեկավարեց դրոհը։ Համառ դիմադրությունից հետո Սուտրիի կայազորը հարկադրված եղավ հանձնվել։ Հենց որ Գրիգորը իր ձեռքն ընկավ, Կալիստոս II-ը հրամայեց աչքերը հանել ու ամորձատել։ Շշվառ Մորիսին նստեցրին ուղտի վրա, պոչը տվին ձեռքը և խեղկատակի հագուստով բերեցին Հռոմ։ Ապա նրան կալանեցին վանքում, որտեղ նա մեռավ մի քանի տարի անց։

Կալիստոս II-ի աթոռակալությունը նշանավորվեց ֆեոդալ իշխանների դեմ մղված անընդմեջ պայքարով։ Խռովարար տոհմերը փողոցներում ամրություններ էին կառուցում, չլանալով նույնիսկ հնադույն հուշարձանները։ Պապն ատում էր Ջենչո Ֆրանջիպանիներին, որոնք պաշտպանել էին Մորիսին։ Կալիստոսը Ֆրանջիպանիների դեմ անդադար պայքար մղեց, մինչև որ նրանց ամրոցը, «բռնակալության ու բռնապետության օթևանը», հողին հավասարվեց։

Հոնորիոս II-ը, Կալիստոս II-ի հաջորդը, որին ընտրել էր Ֆրանջիպանիների տոհմը, իր դեմ հակառակորդ ուներ ի դեմս Պիերլոնիների ոչ պակաս անվանի տոհմի։ Իրեն սպառնացող բավական ուժեղ օպոզիցիային վերջ տալու համար Հոնորիոսը օգտագործեց իր նախորդների ավանդական զենքը։ Հսկայական գումարներ ծախսելով, նա ձեռք բերեց ժողովրդականություն, և թշնամաբար տրամադրված սինյորները ստիպված եղան հնազանդվել։ Հոնորիոսը նախ մի այսպիսի կատաղերգության խաղաց. հիշելով, որ ինչ-որ մարդիկ դեմ են եղել իր ընտրությանը, իրեն վիրավորված ձևացրեց և հայտարարեց, թե հրաժարվում է խուլսիրից որովհետև չի ուզում եկեղեցին կառավարել հակառակ հավատացյալների կամքի։ Իր կողմնակիցներին հավաքելով սուրբ Հովհաննես Լաթերանացու եկեղեցում, Հոնորիոսը նրանց ներկայությամբ

հանդիսավորապես ցած դրեց խույրը։ Այս հնարը ցանկալի արդյունք տվեց. ներկաներն, արցունքներն աչքներին, պապին խնդրեցին մնալ, հավաստելով իրենց նվիրվածությունը։

Հարմարավետ կերպով տեղավորվելով սուրբ աթոռի վրա, այդ խարդախը սկսեց խորհել, թե ինչպես փառավորի իր տիրապետությունը և գտավ, թե ժամանակն է քրիստոնեացնելու այն երկրները, որ դեռևս գտնվում են «հեթանոսության աղջամուղջում»։

Կոպիտ ասած, Հոնորիոսն ուզում էր դեպի իր խանութը քաշել այն կլինտներին, որոնց մինչ այդ ջանադրաբար գովում էին հեթանոսական պաշտամունքի քուրմերն ու սպասարկուները, Հիսուս Քրիստոսի մրցակիցները։

Շատ համեղ պատառ էր Պոմերանիան, և գործամոլ Հոնորիոսը եպիսկոպոս Օթոնին հանձնարարեց արագացնել-այդ տարածքի դարձը դեպի քրիստոնեություն։ Պոմերանցիներին կառավարում էր լեհ իշխան Բոլեսլավը, և Օթոնը գնաց նրա մոտ։

Բոլեսլավը ոգևորությամբ ընդունեց սուրբ հոր առաջարկը հեթանոսներին Քրիստոսին ենթարկելու մասին, իսկ նրանք հրաժարվում էին ընդունել նրա պատգամը։ Հավանաբար, նրանց կատաղի դիմադրությանը ուժ էր տալիս հայրենասիրական խռով զգացմունքը, նրանք հասկանում էին, որ իրենք կուռքերի հետ միասին կզրկվեն նաև իրենց գետաբերաններից։ Բոլեսլավը ստիպված էր ոչնչացնել հազարավոր պոմերանցիների, որպեսզի ապացուցի քրիստոնեության գերազանցությունը նրանց հինավուրց կրոնի նկատմամբ։ Նրա այդ փաստարկներն այնքան համոզիչ էին, որ կենդանի մնացածներն այլևս չդիմադրեցին։ Հոնորիոսը շտապով նորադարձների մոտ ուղարկեց սևազգեստ վանականներից կազմված իր ջոկատները, որոնք կոչված էին նրանց դաստիարակելու ի փառս սուրբ երրորդության։ Ինչ վերաբերում է Բոլեսլավին, ապա պապի երախտապարտական այլ հավաստումների հետ միասին նա ստացավ նաև հավիտենական երանություն վայելելու խոստում։

Իշխանը աղնվաբար էր վաստակել այդ պարգևը, քանզի քրիստոնեական աստծու համար չկա ավելի արժանավոր սխրանք, քան ոչնչացումը այն մարդկանց, որ հրաժարվում են իրեն երկրպագել։

Հոնորիոսը չափազանց ժլատ էր ու շահասեր։ Բերենք մի բնորոշ միջադեպ. 1128 թվականին Ֆրանսիայի կանցլեր և Փարիզի արքեպիսկոպոս Ստեփան դը Սանլիսը դեսպանների միջոցով պապին մի զեկուցագիր ուղարկեց թագավոր Լյուդովիկոս Հաստլիկի անվայել արարքների մասին։ Պրելատը միապետին մեղադրում էր, թե նա հովանավորում է

Ֆրանսիայի հոգևորականության անառակությունը, դրանից ամոթալի օգուտ քաղելով։ Երևի պատվարժան պրելատին դուր չէր եկել, որ դրա սերուցքը քաշում է թագավորը, այլ ոչ թե ինքը։ Եթե գործն այլ կերպ լիներ, նա հոգևորականության արտառոց արկածների դեմ ոչ մի առարկություն չէր ունենա։

Ստեփան դը Սանլիսը թագավորին մեղադրում էր եկեղեցու գույքը զավթելու, ինչպես նաև իր դեմ մահափորձ կազմակերպելու մեջ, որին մասնակցել էին միապետի զինվորները։ Հասկանալի է. Ստեփան դը Սանլիսը չէր մոռացել իր բողոքները հիմնավորել թանկարժեք նվերներով։

Երախտապարտ Հոնորիոսը օրհնեց արքեպիսկոպոսի դեսպաններին (նման ժեստերից պապերը երբեք չեն խորշել) և արքեպիսկոպոսին հրամայեց բանադրել թագավորին ու արգելք դնել Ֆրանսիայի թագավորության վրա։

Ստեփան դը Սանլիսը կատարեց պապի հրամանը և իր կողմը գրավեց շատ եկեղեցականների։

Լյուդովիկոս Հաստլիկը շատ լավ գիտեր, որ պապի երախտագիտությունը մի ապրանք է, որը կարելի է ձեռք բերել ըստ սահմանված սակագնի։ Ուստի նա, իր հերթին, Հռոմ ուղարկեց իր դեսպաններին, հանձնարարելով պատշաճ փոխհատուցմամբ պապից ստանալ բանադրանքի և այլ սպառնալիքների վերացումը։ Այդ ձեռնարկումը նրան Քանկ նստեց, բայց նա ավելի խելացի համարեց զոհաբերել փողը, քան ռիսկի ենթարկել պապի ողորմածությունը։

Իհարկե, սուրբ հայրը ընծաներից չհրաժարվեց և կատարեց միապետի խնդրանքը։ Այնինչ մտքովն իսկ չանցավ վերադարձնել արքեպիսկոպոսի փողը, ինչպես կվարվեր ամեն մի ազնիվ առևտրական, եթե նրա տեղը լիներ։

Շուտով երկու եպիսկոպոսներ, Ստեփան դը Սանլիսի համախոհները, Հռոմին դիմեցին մի զգայացունց ուղերձով, որով թագավորին մեղադրում էին արքեպիսկոպոսի դեմ նոր հալածանքներ նյութելու, ինչպես նաև եկեղեցու նկատմամբ անպատկառ արարքներ թույլ տալու մեջ։ Այդ ուղերձը մնաց անպատասխան. պարզամիտ հեղինակները չէին կռահել իրենց բողոքներին համապատասխան հավելվածներ կցել։

Ստեփան դը Սանլիսը հասկացավ լռության պատճառը։ Վաշխառուի մոտ գրավ դնելով եկեղեցու կահույքը, նա պարտք վերցրեց մի մեծ գումար և Հռոմ ուղարկեց չորս հազար դինար ոսկով... Արժե՞ արդյոք ավելացնել, որ պապը բարեհաճորեն ընդունեց այդ գումարը։

Սակայն պրելատի ու թագավորի միջև այդ թանկ մրցությունը չէր կարող անվերջ շարունակվել։

Լյուդովիկոս Հաստլիկը փորձեց կանգ առնել... Բայց այլ բան տատացրեց։ Վրդովված Հոնորիոսը Ստեփան դը Սանլիսին լիազորեց թագավորին դատելու համար Ռեյմսում եկեղեցաժողով հրավիրել և նրան բանադրել առաքյալի անունից, եթե... եթե Լյուդովիկոսը՝ հրաժարվի հատուցել իր հասցրած վիրավորանքի համար...

Ի վերջո Լյուդովիկոսը հնազանդվեց, և սուրբ հայրը ստիպված եղավ դիմելու նզովքներին։

## ԵՐԿՈՒ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Հոնորիոս II-ի մահից հետո պայքար բորբոքվեց երկու մրցակիցների միջև։ Մինչդեռ կարդինալների մի մասն ընտրեց Իննովկենտիոս II-ին, որին սատարում էր Ֆրանջիպանիների տոհմը, մյուս կուսակցությունը նրան հակադրեց կարդինալ Պետրոսին, որին տրվեց Անակլետոս II անունը։ Հետագա պաշտոնական ցուցակում նա ընկել է հակապապերի թվի մեջ։

Թե ինչու է եկեղեցին նախապատվություն տվել Իննովկենտիոսին, ձեզ համար անիմանալի է ճիշտ այնպես, ինչպես աստծո կամքը. անձնապես ինձ թվում է, թե Իննովկենտիոսը շատ ավելի մեծ սրիկա է եղել, քան նրա մրցակից Անակլետոսը։

Սկզբում հաղթանակը բաժին ընկավ Անակլետոսին։ Իննովկենտիոսին վռնդելով գահից, նա հաստատվեց Հռոմում, շարունակելով զայրանալ, որ մրցակիցն իր ձեռքից դուրս է պրծել ու ապաստան գտել Պիզայի անմատչելի ամրոցում։

Վռնդելով սուրբ Պետրոսի տաճարի քահանաներին, հափշտակելավ ինչպես այդ տաճարի, այնպես էլ մնացած մյուս հարուստ եկեղեցիների թանկարժեք գանձերը, Անակլետոսը որոշ չափով հագեցրեց իր զայրույթը և փութաջանորեն սկսեց զորք հավաքել Իննովկենտիոսի դեմ։ Շրջահայաց մրցակիցն այդ ժամանակ արդեն թողել էր Իտալիան և տեղափոխվել Ֆրանսիա։

Հասկանալով, որ ուժը չի պատի մեն-մենակ զինված պայքար մղել, Անակլետոսը փոխեց գործելակերպը և մի նամակով դիմեց Լոթար II-ին։ Բայց քանի որ երկու արժանավոր մրցակիցներն էլ միաժամա-

նակ իրենից օգնություն էին խնդրում, Լոթարը խոհեմ համարեց պատասխան տալուց խուսափել։

Այդ ժամանակ Իննովկենտիոսին, որին սատարում էր Կլյունի ազդեցիկ աբբայությունը, Ֆրանսիայում պապ ճանաչեցին։

Եվրոպայի իշխանավորների մոտ անհաջողություն կրելով, Անակլետոսը սկսեց իր դիրքն ամրապնդել Իտալիայում, որպեսզի պատրաստ լինի, եթե Իննովկենտիոսը փորձի Հռոմ վերադառնալ։ Նրան հաջողվեց դաշինք կնքել դուքս Ռոժերի հետ, որին ղիջից Կապուանի իշխանապետությունը, Նեապոլի կալվածքներն ու Սիկիլիայի թագավորի տիտղոսը։ Դրանից հետո, դաշինքն ամրապնդելու նպատակով, սուրբ Հայրը բարիս բուն իմաստով ինքնագոհողության դիմեց. նա ոքսին կնության ավեց իր քրոջը։ Այդ վերջին պարգևը առանձնապես արժեքավոր է, որովհետև Անակլետոսը, իբրև կրքոտ եղբայր, քրոջից չէր բաժանվում ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը։

Սակայն շուտով նրա հանգստի վերջը եկավ։ Իննովկենտիոսը և Լոթարը լեղու պատան։ Սկզբում նրանք դանդաղում էին, չհամարձակվելով փոքր ջոկատով հարձակվել Հռոմի վրա, բայց ի վերջո պապն ու միասլետը որոշեցին իրենց բախտը փորձել։ Նրանք արդեն շատ էին շտապում. մեկն ուղում էր ավելի շուտ գլխին դնել կայսերական թագը, մյուսը՝ գրավել առաքելական աթոռը։

Երբ Լոթարը ոչ մեծ բանակով իջավ Իտալիա, Անակլետոսը, լսելով իր մի քանի կողմնակիցների դավաճանության լուրերը, թողեց Լաթերանյան պալատը և ամրացավ սուրբ Հրեշտակի ամրոցում։ Նրան հասած լուրերն անհիմն չէին։ Մի քանի մեծամեծներ, որ հենց վերջերս էին նրան հավատարմության երդում տվել, ցնծությամբ էին դիմավորել նրա մրցակցին ու թագավորին։

Հաստատվելով Ավենտինայում, Իննովկենտիոսը հնարավորություն չուներ Լոթարին օծելու սուրբ Պետրոսի տաճարում, որտեղ սովորաբար կատարվում էր կայսրերի թագադրությունը. Հռոմի շատ թաղամասերի հետ միասին այդ եկեղեցին գտնվում էր մյուս պապի իշխանության ներքո։ Այդ պատճառով էլ նա ստիպված էր իր բարեկամին թագադրել Լաթերանում։

Ինչպես գրում է Օթոն Ֆրեյզինգենացին, Իննովկենտիոս II-ը հետագայում մի նկար է պատվիրել, որում ինքը նստած է գահի վրա, մինչդեռ ծնկաչոք Լոթարը նրա ձեռքից ընդունում է թագը։

Ընդամենը երկու հազար մարդուց բաղկացած Լոթարի բանակը մի քանի ամիս չարունակ ապարդյուն պաշարում էր անակլետոսականների

գրաված ամրոցները՝ քաղավորական զորքերը, որոնց վրա պաշարվածները քարերի ու նիզակների կարկուտ էին տեղում, զգալիորեն նոսրացան։ Մինչ Լոթարը տատանվում էր գրոհել Անակլետոսի համախոհների ամրոցների վրա, լուր ստացվեց, թե Բոժերը, մի մեծ չոկատի գլուխ անցած, օգնության է գալիս իր տապրին։

Լոթարը շտապեց վերադառնալ Գերմանիա, Իննովկենտիոսին հանձնելով աստծո ողորմածության։ Ավա՜ղ, Սաբաուվբը թույլ պաշտպան դուրս եկավ։ Իննովկենտիոսը ստիպված էր թողնել Հռոմը և ժամանակավորապես հաստատվել Պիզայում, որտեղից սկսեց հակառակորդին ոմբակոծել նոր բանադրանքներով։

Գրեթե մի տարի շատ թե քիչ խաղաղ անցավ. ահեղ նզովքներն անակլետոսականների մեջ ոչ մի հուզում չէին հարուցում. այնժամ Իննովկենտիոսը որոշեց ավելի ազդեցիկ միջոցի դիմել։ Նա կայսեր հետ համաձայնություն կնքեց կոմսուհի Մաթիլդայի կալվածքների վերաբերյալ և Լոթարին համոզեց երկրորդ անգամ անցնել Ալպերը։ Պահն հաջող էր ընտրված. Հռոմի կուրիան լրիվ քայքայման էր հասել։ Ծախսելով եկեղեցիների կողոպուտից ստացված գումարները, Անակլետոսն ի վիճակի չէր պահպանել իր կողմնակիցների հավատարմությունը։ Պալատում տաղտկալի օրեր էին սկսվել. օրգիաները վերջացել էին, դեսուդեն էին փախել ուրախ կանայք, պապը և նրա արբանյակներն ստիպված էին սպարտյան կյանք վարել։ Հետևանքը չհապաղեց երեվան գալ։ Անակլետոսի կուսակցությունն սկսեց օր-օրի նոսրանալ։ Քաջ տեղյակ լինելով, թե ինչ վիճակում է պապի արքունիքը, Իննովկենտիոսը, Լոթարի երեք հազար ձիավորների գլուխն անցած, դիմեց դեպի Հռոմ։ Լոթարն այդ ժամանակ Կալաբրիայից դուրս էր քշել Ռոժերին։ Սուրբ Հայրն ու Լոթարը միացան Բարրի քաղաքում։ Այստեղ տեղի ունեցավ մի միջադեպ, որ կարող էր ապահովել Անակլետոսի հաղթանակը, եթե նրա հակառակորդը նվազ ուշիմ լիներ։

Հովհաննես Կոմնենոսը, Արևելյան կայսրության տերը, Լոթարի մոտ ճամփեց իր դեսպաններին, որոնց մեջ և մի շատ ճարտարախոս վանականի։ Վերջինիս, հավանաբար, ինչ-որ մեկը հանձնարարել էր մերկացնել Իննովկենտիոսին. նա նրան մեղադրեց սրբապղծության, անհավատարմության, արվամոլության մեջ։ Վանականի բոցաշունչ ճառերը մեծ տպավորություն թողեցին կայսեր վրա, և նա որոշեց իր բարեկամին լքել ու անցնել Թշնամու կողմը։ Բայց մինչ Լոթարը կկատարեր իր մտադրությունը, ստամոքսի հանելուկային հիվանդությունը (երևի աստծու կամքն էր) երկու օրվա մեջ նրան գերեզ-

*Յան տարավ։ Իննովկենտիոսն արդեն մենակ ավարտեց Հռոմի արշավանքը։ Սակայն Սիկիլիայի թագավորը, օգտվելով Լոթարի մահից, կողոպտեց Կալաբրիան ու Ապուլիան և առաջ շարժվեց, որպեսզի Անակլետոսին աղատի Հռոմեական գերությունից։ Իննովկենտիոսի դրությունը ծանրացավ։ Փոքր Հնծալազորով հնարավոր չէր ջախջախել Ռոժերի բազմաքանակ բանակը։ Բայց ճարպիկ Իննովկենտիոսն իրեն չկորցրեց։ Ամենաբարձրյալը, որ մի անգամ արդեն սուրբ Հորը օգնել էր Լոթարից աղատվել, այս անգամ էլ օգնեց նրան։ Անակլետոսը հանկարծակի հիվանդացավ մի տարօրինակ ախտով և մի քանի օր անց սարսափելի տառապանքներով մեռավ։*

*Իննովկենտիոսի թշնամիները մեռած պապի հաջորդ ընտրեցին կարդինալ Գրիգորին։ Բայց սա շուտով մենակ մնաց։ Հիշելով Անակլետոսի ճակատագիրը, նրա արբանյակները ցրվեցին, մի քանիսին էլ կաշառեց անխոնջ պապը։ Երկար դեսուդեն ընկնելուց հետո Իննովկենտիոսը վերադարձավ Հռոմ։ Նրա ձախորդություններն, այնուամենայնիվ, չվհրջացան։ Ռոժերը վենքը ցած չէր դնում և շարունակում էր իր բանակով առաջ շարժվել։ Հավաքելով մի քանի ջոկատ, Իննովկենտիոսը դուրս եկավ թշնամուն ընդառաջ։ Սիկիլիայի թագավորին առանց դժվարության հաջողվեց ջախջախել պապի զորքը և նրան էլ գերի վերցնել։ Իննովկենտիոսն ստիպված էր ընդունել Ռոժերի պայմանները. թագավորը նրան ստորագրել տվեց մի պայմանագիր, որով բոլոր հողերն ու արտոնությունները, որ Ռոժերին տվել էր Անակլետոսը, իրեն էին մնում։*

*1139 թվականի հունվարի 6-ին Իննովկենտիոսը (նրա անունը լատիներենից թարգմանած կնշպնակե անմիղ) վերադարձավ Հռոմ և գահի վրա մնաց մինչև 1143 թվականը։*

*Պատերազմը, որ ծագել էր երկու պապերի մրցակցության հետևանքով, տևեց հինը տարի։*

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԹՈՒԹՅԱՆ ԿՐՈՆ

*Իննովկենտիոսի հաջորդ Կելեստինոս II-ը գահի վրա մնաց հինգ ամիս։ Այդ ժամանակ Արևելքում հալածվում էր աստվածահաճոների աղանդը. նրանց դեռևս Ալեքսիոս Կոմնենոսի օրոք հետապնդում էին և խարույկի վրա այրվելու դատապարտում։*

Այդ աքեմավորները պնդում էին, թե հայր աստվածն ունեցել է երկու որդի՝ Ավագը, անունը Սատանաիլ, ապստամբել է հոր դեմ և նրա հրամանով արտաքսվել երկիր։

Այսպիսով, աստվածահաճոները մեր երկիրը դարձրել էին դրախտաբնակների աքսորավայր։

Սատանաիլը, ինչպես երևում է այդ խելացնոր մոլեռանդների ուսմունքից, երկրի վրա իր ժամանակն անց էր կացնում նրանով, որ ըստեղծում էր ամբողջ տեսանելի աշխարհը։

Այնուհետև նրանք պնդում էին, թե Հիսուս Քրիստոսը, գթառատ հայր աստծո կրտսեր որդին, իր հոր հրամանով երկիր է եկել, որպեսզի կործանի Սատանաիլի հզորությունը և նրան տեղավորի դժոխքում, նրա անունից անջատելով հրեշտակային «իլ» վանկը։

Ըստ էության, այդ ավանդությունը նույնքան անհեթեթ է, ինչքան աշխարհի արարչության ու երկրային դրախտի մասին հորինված մյուս բոլոր հեքիաթները։ Սրա դժբախտությունն այն էր, որ մի քանի մանրամասներում հակասում էր կանոնական առասպելին։

Ինչևիցե, նրանց ուսմունքը հերետիկոսական էր համարվում, իսկ հերետիկոսների հետ եկեղեցին կատակ չէր անում։ Ըստ Մատթեոս Ծդեսացու ասածի, տասը հազար հերետիկոսների ծովը նետեցին, այդ թվում և Ալեքսոս Կոմնենոսի հարազատ տատին։

Աղանդի պարագլուխ վանական Նիփոնտոսը սարսափելի խոշտանգումների դատապարտվեց։ Նման բանի ընդունակ է միայն եկեղեցական մոլուցքը։ Նրա մորուքից մեկ-մեկ պոկեցին մազերը (իսկ մորուքը, ըստ տարեգիրների վկայության, խիտ էր ու երկար), ապա հարցաքննության ժամանակ դահիճը, իր գործին հմուտ մի մարդ, ճղմելով ականախոռոչներից դուրս մղեց աչքերը։ Վերջում թշվառ Նիփոնտոսին այրի՛ր խարույկի վրա։

Հիշեցե՛ք, քրիստոնեությունը գթության կրոն է։

Երբ Կելեստինոս II-ը մեռավ, կարդինալները և Հռոմի կուրիայի կոտաբլները, առանց ժողովրդին զգուշացնելու, հավաքվեցին Լաթերանյան պալատում և գաղտնաբար գահ բարձրացրին կարդինալ Ժիրարդոյին, որն ընդունեց Ղուկիոս II անունը։ Բարոյականության առումով Ղուկիոսը ոչնչով չէր զանազանվում XII դարի մնացած պապերից։ Նրա օրգիանները սուրբ աթոռի պատմության մեջ առանձնապես աչքի չէին ընկնում. Ղուկիոսը մեղանչում էր, այսպես ասած, չափավոր կերպով։ Միայն թե նրա իշխանատենչությունը չափ ու սահման չուներ։

Այդ ժամանակ արևմտյան կայսրության գլուխն էր Կոնրադ Բարեպաշտը, որի բնավորությունը լիովին արդարացնում էր նրա մականունը։

Ինչպիսի ոճիրներ էլ որ նյութեին պապերը, միշտ կարող էին հույս դնել այդպիսի կայսրի պաշտպանության վրա։

Ղուկիոս II-ի գահ բարձրանալուց շատ չանցած ամբողջ Իտալիայում ապստամբություններ բռնկեցին։ Կոպիտ ու ամբարտավան Ղուկիոսը չէր հանդուրժում որևէ առարկություն նույնիսկ իր ամենաանշան ցանկության դեմ և խստորեն կանխարգելում էր իր հոտի մեջ դրսևորվող ինքնուրույնության ամեն մի փորձ։ Անհամբեր ձգտելով որքան կարելի է շուտ ընկճել հռոմեացիներին, Ղուկիոսը չսպասեց, որ տեղ հասնեն Սիկիլիայի թագավորի՝ իրեն տրամադրած զինվորները, ընկավ ծայրահեղության մեջ, և պա հանդեցրեց ժողովրդական ապստամբության։

Ապստամբության առաջնորդն էր Առնոլդ Բրեշիանացին, ֆրանսիացի ականավոր գիտնական Աբելյարի աշակերտը։ Նա հռոմեացիներին դիմած պայքարի դուրս բերեց Հռոմեացիները ուժով նվաճեցին այն աղատությունները, որ մերժում էր պապը։ Ապստամբները կազմակերպեցին սենատ, Հռոմը կառավարելու համար ընտրեցին մի պատրիկ։ Սենատը լրիվ կազմով գնաց Լաթերանյան պալատ և ամբողջ պոգի առնությից հայտարարեց, թե Ղուկիոսը զրկվում է բոլոր իրավունքներից, որ ձեռք էին բերել պապերը։ Նա եկեղեցու ներկայացուցիչներից պահանջեց հրաժարվել աշխարհիկ տիրույթներից, աշխարհիկ հոգսերից գործերից և սահմանափակվել բացառապես հոգևոր գործունեությամբ։

Սուրբ Հայրը, բռնակալին հատուկ իր զոռոզամտությամբ, սպառնաց սոսկալի պատժով։ Բայց հեղափոխական ոգով համակված հռոմեացիները չվախեցան։ Զգտելով քաղաքին վերադարձնել նրա երբեմնի վեհությունը, նրանք Կապիտոլիումում նոր կոմունա հիմնեցին և ընտրեցին հիսունվեց սենատոր, յուրաքանչյուր վարշաշրջանից՝ չորս մարդ։

Ղուկիոսը դիմեց կայսր Կոնրադի օգնությանը։ Սենատը, իմանալով պապի բանսարկությունները, իր հերթին կայսեր մոտ ուղարկեց իր դեսպաններին, որպեսզի Կոնրադին իրազեկ դարձնեն գործերի իրական վիճակին։

Կոնրադ Բարեպաշտը հռոմեացիների դիմումին չպատասխանեց, նույնիսկ հարկ չհամարեց տեսակցել դեսպանների հետ։ Մինչդեռ պապի լեգատներն ընդունեց ընդգծված բարյացակամությամբ և հրաման

արձակեց սուրբ աթոռը պաշտպանելու համար իր տիրույթներում բանակ ստեղծել։

Ավելի վաղ, քան լեգատները կստանային կայսրի կարգադրությունը, Ղուկիոսը, ազնվականության աջակցությամբ, պատրաստվեց գրոհելու Կապիտոլիումը։ Կացնով զինված, սուրբ հայրն սկսեց կոտրատել այն հնագույն շենքի դարպասները, որտեղ մի ժամանակ գտնվում էին աշխարհը կառավարող սենատորներն ու կոնսուլները։ Բայց մի քար (իհարկե, ոչ այն քարը, որի վրա Հիսուս Քրիստոսը պատրաստվում էր կանգնեցնել իր տաճարը) դիպավ նրա գլխին։ Հաջորդ օրը Ղուկիոս II-ը կանգնեց Սաբաուի պատերազմի աստծո առաջ։ Նա առաքյալների գահի վրա մնաց մեկ տարուց էլ պակաս (1144 թվականի մարտի 10-ից մինչև 1145 թվականի փետրվարի 3-ը)։

## I ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԳՐՔՈՒՅԿԸ

Մի հեղինակ, որչն ոչ մի կերպ չի կարելի հակակղերական անվանել, քանի որ նա ինքը վանական էր, գալիք սերունդներին թողել է մի շատ զվարճալի գրքույկ՝ նվիրված այն բարքերին, որ XII դարի կեսերին թագավորում էին վանքերում։ Նրա աշխատությունը չի կարելի վերագրել ուրախ անեկդոտների, երգիծաբանության կամ պամֆլետի ժանրին։ Ավելի շուտ ժողովածուն կազմված է կարգապահությանը վերաբերող գրավոր կարգադրություններից։ Դա Կլյունի աբբա Պետրոսի օրենքների հավաքածուն էր։ Ժամանակին աբբան պաշտպանել է Իննովկենտիոս II-ին։ Արդեն իսկ այդ փաստը ցույց է տալիս, որ բարոյականության առումով նա շատ ճկուն մարդ է եղել։ Եվ եթե նրա նման մեկն անգամ չի կարողացել տանել վանական միաբանության խայտառակությունները և հարկ է համարել հրատարակել իր օրենսդրությունը, որը կոչված էր շտկելու հոգևորականության բարքերը, կարելի է պատկերացնել, թե եկեղեցականներն իրենց անառակության մեջ ո՛ւր էին հասել։

Այդ հետաքրքրաշարժ գրքույկի առաջին մասը նվիրված է Մահմեդի մոլորություններին վերաբերող խորհրդածություններին։ Մենք այդ մասի վրա չենք հրավիրի մեր ընթերցողի ուշադրությունը։ Ավելի հետաքրքիր է երկրորդ մասը։ Ահա մի քանի մեջբերումներ այն ուխտի

վանական կանոնադրությունից, որին պատկանում էր նաև Պետրոսը։

«Վանականներին արգելել շաբաթվա երրորդ՝ չորեքշաբթի օրը վայրի բաղ ու ջրահավ ուտել, որովհետև դրանք պատկանում են թըռչունների դասին, թևավոր լողում են...»։

Այս կարգադրությունը վկայում է, որ Ալեքսանդր Դյուման չի զրպարտել քահանա Գորանֆլոյին, որը, նրա ասելով, պաս օրերին տապակած բտահավ էր խժռում, նախապես նրան մկրտելով գետածածանով։

«Վանականներին արդելել ընթրիքից հետո մեղրից կամ պղպեղից պատրաստած ինքնաթոր օղի խմել...»։

Բարեպաշտ վանականի մտադրությունները լիովին հասկանալի են, այդ խմիչքը գրգռիչ ներգործություն է ունենում, և վանականների զուր չէին դա օգտագործում։

«Վանականներին արգելել օրական երեք անգամից ավելի անուն ընդունել»։

Իսկ օկրուգի հաշվին օրը քանի՞ անգամ էին խժռում այդ կեղծ բարեպաշտները։ Ամենայն հավանականությամբ, նրանք մորթում ու լափում էին ոչ միայն մի ոչխար...

«Վանականներին արգելել զարդարանքներ ու թանկարժեք գործվածքներ կրել..., ինչպես և երկուսից ավելի սպասավոր պահել...»։

Վաու չէին ապրում այդ պարոնները... Հարց է ծագում՝ ի՞նչ քանակությամբ սպասավորներ էին ծառայում այդ անբաններին։

«Արգելել գիշերային ժամերին ընդունարաններում մնալ դեռատի կանանց հետ...»

Սովորաբար ընդունարաններում այցելուների հետ զրուցում են։ Եվ իհարկե, ոչ գիշերները։ Կարելի է վստահ ասել, որ նրանք զբաղվում էին ինչ-որ այլ բանով։

«Վանականներին արգելել կապիկներ վերցնել կրթելու համար, ինչպես նաև մոնթևերի հետ խուցերում առանձնանալ աղոթքներ սովորեցնելու պատրվակով...»։

Աղոթքնե՞ր սովորեցնել։ Հոյակապ է։ Սակայն հարկ է խորհել, թե որքան անհամատեղելի են «կապիկներին կրթել» և «մոնթերի հետ առանձնանալ» արտահայտությունները։ Ինչո՞ւ է Պետրոսը դրանք իրար կողք դնում։ Մենք չենք համարձակվում որևէ բան ասնդել և միայն մի թեթև կասկածում ենք, որ վանականները նույնիսկ կապիկներին էին «աղոթքներ սովորեցնում»։

Ահավասիկ մի մեջբերում ևս.

«Արգելել առանց աբբայի հատուկ թույլտվության երիտասարդ վանականներ ընդունել, այլապես աբբայությունները կդառնան թափառաշրջիկների ու գարշելի անառակների հավաքատեղի...»։

Էլ ի՞նչ կասկած կարող է լինել։ Հեղինակն արդեն չի ակնարկում, այլ կտրականապես պնդում է, թե վանականները, չբավարարվելով իրենց ուխտով, միմյանցով, իրենց մոտ ապաստան էին տալիս թափառաշրջիկների ու անառակների։ Ընդ որում նկատի ունեցեք, թե բարեպաշտ աբբան ինչքան համախ է սիրում գործածել «երիտասարդ» ածականը. «երիտասարդ միանձնուհիներ», «երիտասարդ վանականներ»։ Պարզապես նա բերանից թռցնում է իր մտքերը... Ինչքա՜ն հեշտասեր են կլլունի այդ բարեպաշտ վանականները։

Իր խրատական աշխատության վերջաբանում հեղինակը ողբում է վանականների աճող այլասերությունը։ Անօգուտ չէ մեջ բերել այդ հեղինակավոր վկայի գնահատականը։

«Այդ վանքերը,— գրում է նա,— որ քրիստոնեական հասարակության բարոյական կատարելագործման համար կառուցել էր բարեպաշտ Բենեդիկտոսը, մոռացել են իրենց հիմնադրի սուրբ պատգամը և դարձել Սոդոմի անառականոցներ»։

## ԿԱԹՈԼԻԿ ԶՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԱԿԱՅԱՆԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ

Ղուկիոս II-ի ողբերգական մահից հետո ժողովուրդն ուզում էր ընտրել հեղափոխական գաղափարներին համակիր քահանայապետ։ Կարդինալներն այլ կերպ էին մտածում։ Նրանք թաքուն հավաքվեցին և միահամուռ կերպով պապ ընտրեցին մի կուսակրոնի՝ սուրբ Անաստասի վանքի աբբային։ Սենատը, իմանալով կոնկլավի գաղտնի խորհրդակցության մասին, կարդինալներին հայտնեց, թե նոր ընտրված պապը պարտավոր է ընդունել նոր սահմանադրություն և ենթարկվել նրա օրենքներին։ Կարդինալները խորհրդածության համար խնդրեցին մի օր, և սենատը համաձայնվեց։ Գիշերը նրանք իրենց Ավգինեոս III պապի հետ Հռոմից փախան և գրավեցին Մոնտիչելի ամրոցը։

Ֆարսի վանքում քահանայապետի աստիճան ընդունելով, Ավգինեոս III-ը Հռոմ եկավ՝ հաստատ որոշած լինելով ընկճել Հռոմեացիներին, որոնք համարձակվել էին քահանայապետի կամքից վեր դասել ինչ-որ օրենքներ։

Առնոլդ Բրեշիանացու կոչով Հռոմի քաղաքացիները զենք վերցրեցին և հարձակվեցին Լաթերանյան պալատի վրա։ Սուրբ Հայրը, ուխտավորի շորերով ծպտված, փախավ իր նստավայրից։ Ժողովուրդն իր զայրույթը թափեց պապի պաշտպանների վրա։ Պապի բացարձակ իշխանության գաղափարը պաշտպանող կարդինալների, եպիսկոպոսների և ազնվականների պալատները հրդեհվեցին կամ ավերվեցին։ Այնուհետև ամբոխը գնաց սուրբ Պետրոսի տաճարը, որտեղ ուխտավորները սովորաբար կիսում էին պապի համար բերած իրենց նվերները, և սկսեցին դրանք բաժանել Հռոմի աղքատ բնակչությանը։ Արյունահեղ ընդհարում տեղի ունեցավ, գործի դրվեցին նիզակներ ու ձեռնափայտեր. քահանաները փորձեցին դիմադրություն ցույց տալ, վկայակոչելով, անկասկած, քրիստոնեական գթասրտությունը։ Այդ դիմադրությունը նրանց վրա թանկ նստեց. նրանց անողոքաբար սպանեցին։ Եվգինեոս III-ն այլևս իր նստավայրը վերադառնալու ոչ մի հույս չուներ և ստիպված էր նորից փախչել Հռոմից։ Նա հավերժական քաղաքը վերադարձավ միայն երեք տարի հետո։ Նրա բացակայության ժամանակ Հռոմը կառավարում էր Առնոլդ Բրեշիանացին։

## ԷՐ ՈՐ ՍՈՒՐԲՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ԱՅԴՊԻՍԻ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՆ

Ամեն ապուշ չէ, որ անպայման մոլեռանդ է, բայց, համենայն դեպս, ամեն մի մոլեռանդ մարդ անպայման ապուշ է։

Եվգինեոս III-ի գլխավոր ուսուցիչն ու հովանավորը եղել է Բեռնարդոսը, կամ, ինչպես եկեղեցին է նրան անվանում, սուրբ Բեռնարդոսը։ Քրիստոնեական աշխարհի այն պարագլուխը, որի առաջ խոնարհվում էր ամբողջ Արևմուտքը, ուզում էր բոլոր քրիստոնյաներին միավորել մի վիթխարի բանակի մեջ, որի գլուխը կանգնած լիներ հոգևորականությունը։ Նա դյուրավ դեպի այդ գործը հակեց Եվգինեոս III-ին, որը, ի դեպ, իր թափառումների ժամանակ զբաղվելու բան չուներ։

Պատմության դասագրքերում հանգամանորեն շարադրված է, թե որքան ողբերգական է եղել երկրորդ խաչակրաց արշավանքը, ուստի և դրա մասին երկար չենք խոսի։ Բավական է ասել, որ Արևելք գնացած երկու վիթխարի բանակներից Պաղեստին հասան միայն մի քանի ջոկատներ։

Ըստ մի պատմաբանի, մոլեռանդ Բեռնարդոսը բարբառելով սուրբ արշավանքի օգտին, ստիպեց լաց լինել նույնիսկ թագավոր Լյուդովիկոս VII-ին, իսկ այդ բարեպաշտ թագավորը դրանից ոչ շատ առաջ վառել էր մի եկեղեցի, որի մեջ փակված էր եղել հազար մարդ։

Իր պերճախոս քարոզի մեջ Բեռնարդոսը խոսում էր եկեղեցուն սպառնացող վտանգների, փրկչի վրեժն առնելու երդում տված խաչակիրների ծառայությունների մասին. նա պապի անունից մեղքերի թողություն խոստացավ յուրաքանչյուրին, ով որ խաչ կվերցնի։ Վերջում Բեռնարդոսը նախաձուշակեց փայլուն հաղթանակներ և քրիստոնյաների հաղթական վերադարձ՝ անհավատներին լիովին ջախջախելուց հետո։ Ըստ այդ նույն պատմաբանի, «ամբոխը, ինչպես մի ժամանակ կլերմոնում, ցնծագին աղաղակներով էր պատասխանում Բեռնարդոսի քարոզին։ Երբ պատրաստի խաչերը հերիք չսրին, նա սկսեց պատռոտել հագի շորերը, որպեսզի դրանցից նորերը պատրաստի»։

Սակայն սուրբ լինելով, Բեռնարդոսը սխալվում էր սովորական մահկանացուի պես։ Դեռ երբեք աշքակապությամբ զբաղվողների կանխագուշակումներն այդքան խայտառակ կերպով չէին տապալվել։ Բայց նույնիսկ խաչակրաց արշավանքի կատարյալ տապալումից հետո էլ այդ սուրբ սրիկան փորձում էր դժվար կացությունից դուրս պրծնել։ Դիմելով ճարպիկ խուսահնարքների, նա ապշած քրիստոնյաներին բացատրում էր, թե իբր իր մարգարեությունը չի կատարվել այն պատճառով, որ նրանց խայտառակ մեղքերը դայլայլել են Քրիստոսին և ի պատիժ գործված հանցանքների նա խաչակիրներին խանգարել է կատարել իրենց ուխտը։

Այս հնարքները տանել չի կարողացել նույնիսկ ճիզվիտ Մեմբուրը, «Եման դատողություններով,— գրում է նա,— յուրաքանչյուր խաբեբա կարող է բացատրել իր կեղծ մարգարեությունները»։

Չնայած սուրբ Բեռնարդոսը մի խաբեությանը մի ուրիշն էր հակադրում, այնուամենայնիվ սրբի իր փառքից նա մի փշուր-անգամ չի կորցրել։ Այդ սուրբը վախճանվել է Եվգինեոս III-ի մահից մոտ մեկ ամիս անց, և նրա վախճանը այն ժամանակվա մոլեռանդ մարդկանց մեջ խիստ կրոնական խելահեղություն է առաջացրել։ Հսկայական ամբոխը լցվել է այն ժամատունը, որտեղ դրված էր նրա մարմինը՝ սրբազան հագուստներով զգեստած։ Շրջակա քաղաքներից ու նահանգներից հավատացյալները շարան-շարան հոսում են եկել, որպեսզի երկրպագեն նորահայտ սրբին։ Բեռնարդոսի մարմնի շուրջը վայրագ աղմուկ աղաղակը տևել է ամբողջ երկու օր։ Հավատացյալներն առաջին օրը սահմանա-

փակվել են նրանով, որ դիակին դիպցրել են դրամներ, գործվածքներ, հացի կտորներ և ուրիշ առարկաներ։ Դրամները մասունքներ էին դառնում, գործվածքները նախատեսվում էին բուժական վիրակապումների համար, իսկ հացից հաբեր էին պատրաստում հիվանդներին բուժելու համար, թեև այդ հաբերը կուլ տալուց հետո հիվանդը չէր ապաքինվում, բարի քրիստոնյաները կուրորեն հավատում էին, որ կամ հիվանդի մեջ սատանա է մտել, կամ նա անուղղելի հանցագործ է։ Հավատացյալներն երկրորդ օրը սկսեցին սրբի ղեմստից պատառիկներ պոկել, դրանք կախելով իրենց վզերից իբրև թալիսմաններ։ Այնուհետև անցան մազերին, իսկ երբ այլևս էլ մազ չմնաց, խելացնոր մոլեռանդները դիմեցին աճյունին, կտրեցին եղունգները, քիթը, ականջները և մաշկի զանազան մասեր։ Բեռնարդոսի մասունքների այդ բարեպաշտ հոշոտումը վերջացավ նրանով, որ հողին հանձնելուց առաջ սրբի մարմինը դարձավ մի զարհուրելի տձև զանգված։

## ԱԴՐԻԱՆՈՍ IV

Եվգինեոս III-ի մահից հետո սուրբ գահին մեկ տարի բազմեց Անաստաս IV-ը, որի գահակալությունը պատմության մեջ ոչ մի հետք չի թողել։ Այնուհետև պապ դարձավ մի անգլիացի, որը գահակալության ժամանակ ընդունեց Ադրիանոս IV անունը։

Վաղ պատանեկության տարիներին այդ պապը, որը հասարակ խավից էր ծագում, բառիս բուն իմաստով մուրացկանություն է արել։ Անհավատալի մի դեպք, կարծես կախարդանքով, փոխել է նրա ամբողջ կյանքը։ Անցնելով Լա-Մանշը, երիտասարդ անգլիացին հանդիպել է մի ֆրանսիական վանքի վերակացուի։ Բարեպաշտ աբբան, որն արդեն զառամյալ ծերունի էր, միանգամից համակրել է պատանուն, նրան դարձրել վանական, իսկ հետագայում, մահվան մահճում, միաբաններին պատվիրել՝ իր սիրեցյալին վանահայր ընտրել։ Երիտասարդ աբբան որոշեց զբաղվել իր տնօրինության ներքո գտնվող վանքի բարքերի բարելավմամբ և, բնականաբար, շուտով իր դեմ հանեց ամբողջ միաբանությունը, որը սովորել էր անհոգ ու ուրախ կյանք վարել։ Աբբային մեղադրելով հրեշավոր հանցագործությունների մեջ, միաբանները նրա դեմ բողոքելու համար պատգամավորներ են ուղարկել Հռոմ, սնմիջա-

քար Անաստաս IV-ի մոտ ներկայացել է նաև ինքը՝ աբբան. հավանաբար, նա հիրավի բախտավոր աստղի տակ էր ծնված եղել, որովհետև անմիջապես նվաճել է պապի համակրանքը. սուրբ հայրը ոչ միայն վռնդել է վանականներին, այլև աբբային թողել իր մոտ։ Անաստասի մահից հետո ժողովուրդը նրան առաջադրեց որպես պապական գահի թեկնածու, հույս ունենալով, որ նա ավելի ժողովրդական ու ազատասիրտ կլինի, քան նրա նախորդը։

Ադրիանոս IV-ը, սակայն, չարդարացրեց ժողովրդի սպասելիքները։ Բախտի այդ սիրեցյալը շատ շուտով մոռացավ իր ծագումը և դարձավ նույնքան ամբարտավան, որքան համեստ էր թվում իր կարիերայի սկզբում։

Գահակալությունից մի քանի օր անց սենատորները ներկայացան նորընծա պապին, խնդրելով Հռոմին նորից տալ նրա երբեմնի ազատությունները։ Ադրիանոս IV-ը որևէ առարկություն չհանդուրժող տոնով սենատորներին ասաց, թե պապի իշխանությունը, որ սահմանված է, աստծո կողմից, վեր է բոլոր օրենքներից, անսահմանափակ է, և ինքը մտադիր չէ այն զիջել որևէ մեկին։ Հենց որ փորձեցին նրան առարկել, ընդհատեց ունկնդրությունը, իսկ պարզ ասած՝ սենատորներին վռնդեց։ Շատ լավ հասկանալով, որ իր վարմունքը ժողովրդի մեջ դժգոհություն է առաջացնելու, Ադրիանոս IV-ը, վախենալով իր կյանքին սպառնացող վտանգից, իր պալատն ամրոցի վերածեց։

Պապի վախն իզուր չէր։ Առնոլդ Բրեշիանացին անմիջապես վերսկսեց պայքարն ընդդեմ պապական բռնակալության և ևթերանի դեմ համընդհանուր ապստամբություն բարձրացրեց։

Չնայած ծայրահեղ գրգռվածությանը, դավադիրները զգուշանալիորեն զուսպ էին պահում իրենց։ Հնազանդվելով խանդավառ քարոզչին, հռոմեացիները եկեղեցու դեմ ոչ մի բռնի միջոցի չէին դիմում։

Առնոլդ Բրեշիանացին տենչում էր արդարության ու ազատության հաղթանակին հասնել առանց արյուն թափելու։ Հետագա իրադարձությունները ցույց տվին, թե որքան սխալ էին այդ երազող մարդու գործողությունները. հոգևորականության հետ չէր կարելի այնպես վարվել, ինչպես հռոմեացիներին խորհուրդ էր տալիս այդ խանդավառ, բայց պարզամիտ բարեկործիչը։

Սկզբում հռոմեացիներին թվում էր, թե իրենք հաղթել են. հուզումները քաղաքում աստիճանաբար հանդարտվեցին։ Այնժամ հաշվենկատ պապը, որն սպասել կարողանում էր, իր իշխանությունը վերականգնելու համար գործի դրեց մի գերազանց միջոց. հռոմեացիներին

ենթարկեց համընդհանուր բանադրանքի. եկեղեցական ծեսերը դադարեցվեցին մինչև այն պահը, քանի դեռ պապը թողություն չի տա, եկեղեցիների դռներն ամուր փակվեցին, սրբապատկերները ծածկվեցին, զանգերը լռեցին։ Պապը գործում էր անվրեպ։ Վարպետորեն մտածված այդ հնարքը քաղաքի բնակչությանը հուսահատության մատնեց։ Այն օրերին սնոտիապաշտ ժողովրդի ծիսասիրությունը անհամեմատ ուժեղ էր նրա ազատասիրությունից։ Երկու օր էլ չէր անցել, երբ ժողովրդական պատվիրակությունը ներկայացավ Ադրիանոսին և սկսեց նրան թախանձել՝ վերացնել արգելքը։

Պատվիրակներն ավետարանի վրա երդվեցին, որ ամեն ջանք կգործադրեն, որպեսզի Հռոմից արտաքսեն Առնոլդ Բրեշիանացուն և նրա բոլոր կողմնակիցներին։ Պապը պատասխանեց, թե բանադրանքը կվերցնի միայն այն բանից հետո, երբ հռոմեացիները կատարեն իրենց խոստումը։

## ԱՌՆՈԼԴ ԲՐԵՇԻԱՆԱՑՈՒ ՄԱՀԸ

Մինչև տեղի էին ունենում այդ բոլոր դեպքերը, Ֆրիդրիխ Շիկամորուսը, որը 1152 թվականին, Եվգինեոս III-ի գահակալության օրոք, գրավել էր կայսերական գահը, պաշարեց Իտալիայի այն քաղաքները, որ հրաժարվել էին ճանաչել նրա իշխանությունը։ Ադրիանոսը իսկույնևեթ Տոսկանա ուղարկեց երեք կարդինալի, որպեսզի Ֆրիդրիխի հետ պայմանավորվեն նրա թագավորության վերաբերյալ։

Ֆրիդրիխ Շիկամորուսը, պապի բարեհաճությունից շոյված, չգտավ իր շնորհակալությունը հայտնելու ավելի լավ միջոց, քան Ադրիանոսի ձեռքն հանձնել Առնոլդ Բրեշիանացուն, որն անզգուշություն էր ունեցել դիմելու կայսեր պաշտպանությանը։ Կարդինալները մեծ ուրախությամբ ընդունեցին Ֆրիդրիխի պարգևը և Հռոմ վերադարձան՝ իրենց հետ բերելով շղթայակապ գերուն։

Ըստ որոշ պատմաբանների, հռոմեացիները, հուսալով ազատել իրենց առաջնորդին, նետվեցին դեպի Լևոնի քաղաքը. արյունահեղ մարտը, որ տևեց մի ամբողջ օր, ոչ մի արդյունք չտվեց։

Ինչքան Առնոլդը բարեհոգի էր իր հակառակորդների նկատմամբ, այնքան եկեղեցականները վայրագ եղան, երբ ձեռք գցեցին թշնամուն։

Առնոլդ Բրեշիանացուն մահապատժի դատապարտեցին, ազյունը շըպըրտեցին Տիբրոս գետը, վախենալով, որ «նրա մասունքները կարող են դառնալ խելացնոր ամբոխի երկրպագության առարկա»։

Պապերը գիտե՞ն վերժինդիր լինել իրենց թշնամիներից։

Երկու մեծ մրցակիցները՝ պապությունն ու կայսրությունը, հանձին երկու իշխանատենչ տիրակալների, նորից իրար կոկորդ բռնեցին։ Նրանցից ամեն մեկն իր իշխանությունն աստվածատուր էր համարում։ Ֆրիդրիխն առաջին իսկ հանդիպման ժամանակ, ինչպես գրում են պատմաբանները, հրաժարվեցին բռնել պապի ձիու սանձը, որը պահանջվում էր ավանդույթի համաձայն, և վիրավորված պապը թագավորին թույլ չտվեց, որ համբուրի իր կոշիկը։ Մի ամբողջ օր խլեցին բանակցությունները, որպեսզի գոռոզամիտ տիրակալները համոզվեին զիջումներ կատարել։

Պապի և կայսեր միջև համաձայնություն հնարավոր է այն ժամանակ, երբ նրանց հարկավոր է մեկմեկու պաշտպանել ընդդեմ իրենց ժողովուրդների։ Սովորաբար այդ համաձայնությունը հանգեցնում է անկայուն հաշտության։

Որոշ ժամանակ անց, Անդրիանոս IV-ն իր լեգատներին ուղարկեց Ֆրիդրիխի մոտ՝ խնդրելով առաքելական տիրույթներն ազատել տուրքերից ու մաքսերից, Իտալիայի եպիսկոպոսներին համարել հպատակներ, այլ ոչ թե վասալներ, պապական արքունիքին վերադարձնել կոմսուհի Մաթիլդայի տիրույթները։ Եվ, վերջապես, պապն իր համար պահանջում էր կատարյալ գերիշխանություն Հռոմում։ Համաձայնություն ձեռք չբերվեց. սկսվեց մի պատերազմ, որ տևեց ավելի քան երեսուն տարի և ավարտվեց կայսեր պարտությամբ (Աղեքսանդր III պապի օրոք)։

## ԱՂԵՔՍԱՆԴՐ III

Ադրիանոս IV-ի մահից հետո պապ ընտրվեց կարդինալ Ռոլանդո Բանդինելլին։ Նույն այն կարդինալը, որ պապի լեգատ եղած ժամանակ, սեյմերից մեկում հազիվ էր սպանվելուց փրկվել իր այն ամբարտավան խոսքերի համար, որ զայրացած ասել էր Ֆրիդրիխին. «Ո՞ւմ անունից է կայսրը վայելում իր իշխանությունը, եթե ո՛չ պապի»։

Նոր պապին, որն Աղեքսանդր III անունն ընդունեց, կայսեր կողմ-

նակիցները հակադրեցին Վիկտոր IV-ին, երկպառակություններին վերջ տալու համար Ֆրիդրիխը Պավիայում եկեղեցաժողով գումարեց։ Սակայն Աղեքսանդր III-ը, ժխտելով եկեղեցաժողով գումարելու նրա իրավունքը, Պավիա չգնաց։ «Ոչ ոք իրավունք չունի ինձ դատելու,— հայտարարեց նա,— միայն ես ունեմ այդ իրավունքը»։ Չնայած որ եկեղեցաժողովն արտահայտվեց հօգուտ Վիկտոր IV-ի, ամբողջ քրիստոնեական աշխարհը, բացառությամբ Գերմանիայից, պապ ճանաչեց Աղեքսանդր III-ին։ Նույնիսկ հունաց կայսրն առաջարկեց պապական իշխանությանը ենթարկել հույն եկեղեցին, պայմանով, որ Աղեքսանդրը Ֆրիդրիխի թագը կտա նրան։

Ֆրիդրիխի բանսարկությունների հետևանքով ստիպված հեռանալով Հռոմ, Աղեքսանդրը թողեց գնաց Ֆրանսիա։ Չնայաց փախուստի դիմած պապը մնում էր պապ։ Ֆրիդրիխն իզուր էր Վիկտոր IV-ի մահից հետո նրան հակադրում Պասքալիս III-ին։ Աղեքսանդր պապը Հռոմ վերադարձավ և կայսրին գահընկեց հայտարարեց, իսկ նրա հպատակներին՝ հավատարմության երդումից ազատված։ Իտալացիները, կայսերական պաշտոնյաների կաշառակերությունից դժգոհ, անցան սուրբ աթոռի կողմը։

Սակայն անխոնջ Ֆրիդրիխը նորից շարժվեց Հռոմի վրա, որպեսզի այնտեղ հաստատի իր պապին՝ Կալիստոս III-ին (այն բոլոր երեք պապերին, որոնց Ֆրիդրիխը երկարատև պայքարի ընթացքում փորձում էր հակադրել Աղեքսանդրին, եկեղեցին հակապապեր է անվանում)։ Ութօրյա պաշարումից հետո նա Հռոմ մտավ։ Աղեքսանդրին այլ բան չէր մնում անել, քան ուխտագնացի ղգեստ հագած փախչել իր նստավայրից։ Անսպասելիորեն գերմանական բանակում սոսկալի համաճարակ բռնկվեց, և Ֆրիդրիխն ստիպված եղավ հյուսիս վերադառնալ։

Նույն այդ ժամանակ գլուխ բարձրացրեց Հյուսիսային Իտալիան։ Ըստ երևույթին, Գերմանիայի բռնապետի նկատմամբ առաջացած ատելությունը երկրում համազգային գիտակցություն էր արթնացրել։ Զայրացած կայսեր բռնապետությունից, նրա աստիճանավորների ընչաքաղցությունից ու բռնություններից, քաղաքները մոռացան իրենց հին երկպառակությունները. նրանցից շատերը միավորվեցին մի դաշինքով և այդպիսով առաջացավ նշանավոր Լոմբարդյան լիգան, որը քիչ դեր չխաղաց Ֆրիդրիխին ջախջախելու մեջ։ Հինգերորդ, անհաջող իտալական արշավանքն ավարտվեց արյունահեղ ճակատամարտով. լոմբարդացիները խիզախորեն էին պաշտպանվում, իսկ Գերմանիայի իշխանները հրաժարվեցին կայսրին օգնել։ Ֆրիդրիխը ստիպված նահանջեց և, մո-

*ռանալով իր կայսերական արժանապատվությունը, պապի ոտքերն ընկավ։*

*Առաքելական գահից խլված բոլոր հողերը վերադարձվեցին. երկու մեծ բռնապետները պարտավորվեցին միմյանց օգնել։ Պապը խոստացավ կայսեր նկատմամբ վարվել ինչպես սիրեցյալ որդու հետ, իսկ կայսրը պապի նկատմամբ ինչպես սիրեցյալ հոր հետ։*

*Չնայած հաշտություն կնքելուն, Աղեքսանդրի հակառակորդները Գալիստոս II հակապապի մահից հետո չանում էին ընտրել պապի մի նորանոր մրցակից։ Նրանց ընտրությունը կանգ առավ Լանդոսիտինոսի վրա, որն և պապ հռչակվեց Իննովկենտիոս III անունով։*

*Շիկամորուսին հաղթողը մրցակցին մեջտեղից հանելու համար հայտնագործեց մի շատ սրամիտ ու զուտ կղերական միջոց։ Մի ոմն Հռոմեացի մագնատ, Իննովկենտիոսին հովանավորություն խոստանալով, նրան որպես նստավայր զիջել էր Հռոմի մոտ գտնվող իր ամրոցը։ Իմանալով այդ, Աղեքսանդրը հիշյալ մագնատին համոզեց այդ ամրոցը վաճառել իրեն, առաջարկելով դրա իրական արժեքից բարձր մի վիթխարի գումար, պայմանով, որ ամրոցն իրեն կտրվի իր ամբողջ պարունակությամբ։ Ագահիկ իշխանը «ասպետորեն» համաձայնվեց այդ անազնիվ գործարքին, շատ լավ հասկանալով, թե ինչ ճակատագիր է սպասում այն մարդուն, որին հյուրընկալություն էր ցույց տվել։ Եվ իսկապես, Լանդոսիտինոն, բռնվելով ամրոցում, զնդան նետվեց։ Սուրբ Հոր հրամանով գերյալին սոսկալի խոշտանգումների ենթարկեցին։ Ի վերջո, դահլիճը խեղդամահ արեց թշվառ հակապապին։*

*Այս միջադեպը լույս է սփռում Աղեքսանդր III-ին բնորոշ դծերից մեկի՝ նրա արյունարբու դաժանության վրա։ Աղեքսանդրը ամենից շատ ձռնակվել է ալբիգոյցիների հետ տեսած դատաստանով։ Դրա հուշը մինչև հիմա էլ կենդանի է Լանգեդոկում։ Իր մահից երկու տարի առաջ, 1179 թվին, Աղեքսանդր III-ը Վերոնայի արքա Հենրիխին ուղարկեց Լավորը և Ֆյուս քաղաքները հերետիկոսներից մաքրելու առաջադրանքով։ Ջաղրելի պատվի արժանավոր լծորդը սուրբ փութաջանությամբ կատարեց իր սիրուշ հրամանը։ Հարավային Ֆրանսիայով մեկ արյունը գետի պես էր հոսում։ Պատմելով հաջորդ սպանդերի մասին, մենք կանդրադառնանք այդ մռայլ ողբերգությանը։ Բայց նրա առաջին գործողությունը նպաստել է Աղեքսանդր III-ի ժամանակ։*

## ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ ՎԱԼԴԵՆՍՆԵՐԻ ՀԵՏ

*Ինչպես հայտնի է, կաթոլիկ եկեղեցին հերետիկոսներ է համարում բոլոր նրանց, ովքեր համարձակվում են կասկածի տակ առնել եկեղեցական անհեթեթ դոգմաները։ Վալդենսների աղանդն ևս հալածվել է Աղեքսանդր III-ի կողմից։*

*Ահա թե ինչ է գրում Պետենը իր «Վալդենսների պատմությունը» դրքում այդ ժամանակվա օրենքների մասին. «Ի հաճոյություն աստծո, մերո 1160 թվին մահապատիժ հայտարարվեց նրանց համար, ովքեր չեն հավատում այն սրբազան խոսքերին, թե Քրիստոսը նշխարում առկա է իբրև հաց։ Թող ոչ ոք չհամարձակվի կասկածել, որ նշխարը, հաց մնալով, իր մեջ ամփոփում է Քրիստոսի մարմինը։ Հրամայվեց՝ եկեղեցական քափորների օրերին, մահապատժի սարսափի տակ, փողոցները ծածկել գորգերով ու գործվածքներով, ինչպես նաև ծունկ չոքել սրբապատկերների առջև՝ աստված կանչելով և կուրծք ծեծելով»։*

*Հիմա մենք առանց վախենալու ծիծաղում ենք այդ անմտությունների վրա և միայն խղճահարություն զգում այն մարդկանց նկատմամբ, որոնք քահանաներին թույլ էին տալիս իրենց հիմարացնել։ Բայց միևնույն ժամանակ, մտածելով տգիտության հետևանքով դարերի, բարբարոս դարաշրջանների մասին, երբ եկեղեցին հղել է Եվրոպայի ժողովուրդների ամենահզոր տիրակալը, մենք ակամա հպարտանում ենք այն մարդկանցով, որոնք խիզախել են բացահայտորեն բողոքել նրա հրեշավոր իշխանության դեմ։*

*Վալդենսների աղանդի հիմնադիրը եղել է լիոնցի հարուստ վաճառական Պիեր Վալդը, որը, իր ունեցվածքը բաժանելով աղքատներին, շրջում էր երկրում, ժողովրդին կոչ անելով հրաժարվել ճշմարիտ հավատը պղծող սնոտիապաշտություններից։ Իր փաստարկներն ամրապնդելով անբասիր վարքով, Վալդն իր կողմը գրավեց շատ հետևորդներ, որոնք սկսեցին իրենց անվանել վալդենսներ։*

*Վալդենսների ուսմունքը մերժում էր բոլոր եկեղեցական ծեսերը, բացի քարոզից, բոլոր խորհուրդները. նա պնդում էր, որ հացը կարող է սնել լոկ մարմինը, իսկ հոգևոր սնունդ է հանդիսանում գթասրտությունը։ Վալդը գտնում էր, ամեն մի քրիստոնյա քահանա է. նա դատապարտում էր ինդուլգենցիան և հռոմակաթոլիկական եկեղեցու արտաքին ծիսականությունը։ Աղանդը բաժանվել էր «հավատացյալների», որոնք*

ջարունակում էին ապրիլ որպես աշխարհականներ, և «կատարելագործ-վածների», որոնք կուսության երդում էին տալիս և զբաղվում քարոզչությամբ։

Աղեքսանդրը այդ աղանդն հանցագործ համարեց, վալդենսների գլխին անեծքների հեղեղ թափեց և խաչակրաց արշավանք հայտարարեց նրա հետևորդների դեմ։ Նրա հրամանով հազարավոր մոլեռանդներ, զենք վերցնելով նետվեցին Հարավային Ֆրանսիայի վրա։ Տուլուզում, որը համարվում էր աղանդի պատվարը, կոնսուլ էր կարգված Դյուրանը, որ հայտնի էր իր բարեպաշտությամբ, ազնվությամբ ու գթասրտությամբ։

Ուշադրություն չդարձնելով Դյուրանի բարձր դիրքի և տարիքի վրա, պապի լեգատը բռնագրավեց պատվարժան ծերուկի ունեցվածքը և նրան վտարեց Ֆրանսիայից։ Նույն բախտին արժանացան Դյուրանի բոլոր բարեկամներն ու ընկերները և նույնիսկ այն քաղաքացիները, որ նրա հետ գործարար հարաբերություններով էին կապված։ Վալդենսյան հերձվածողության մեջ շատերին էին կասկածում, և պապի լեգատներն իրենց գերիներին դաժան խոշտանգումների էին ենթարկում, որպեսզի նրանց ստիպեն իրենց մեղքն ընդունել կամ զրպարտել ուրիշներին։

Աղեքսանդրը Տուլուզ ուղարկեց Հենրիխ Կղերվոսցուն, որը հայտնի էր ալբիգոյցիների հետ հաշվեհարդար տեսնելու ժամանակ իր կատարած սխրանքներով։ Նրան լայն լիազորություններ տրվեցին։ Սա դեռ Տուլուզ չէր հասել իր ավազակախմբով, երբ ամենուր խարույկները բոցկըլտացին։ Վալդի տարաբախտ հետևորդները ենթարկվում էին այնպիսի հնարամիտ խոշտանգումների, որ կարող էին հղանալ միայն կըղերի մոլեռանդ երևակայության մեջ։ Հազարավոր ծերունիներ, կանայք, երեխաներ կախաղան հանվեցին, խաչվեցին անիվի վրա, ողջ-ողջ այրվեցին, նրանց ունեցվածքը բռնագրավվեց հօգուտ թագավորի ու սուրբ աթոռի գանձարանի։

Ջախջախելով վալդենսներին, թագավորը և պապը ի հայտ բերեցին իրենց իսկական էությունը։

Միայն դաժանությունը չէր Աղեքսանդրի բնավորության բնորոշ գիծը։ Այդ հոգևոր անձին հատուկ էին այն բոլոր արատները, որ սկիզբ են առնում ագահությունից, որն և, իշխելով նրա բոլոր մտքերի վրա, նրան ստիպում են որոգայթներ լարել, դավեր նյութել, և ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, հարստացնել իր գանձարանը։

Քանի որ այդ մասին խոսք եղավ, բերեմ մի բնորոշ միջադեպ։

Սիցիլիայի թագավորի խոստովանահայր Գոտյեն արքեպիսկոպոսի ամբիոն էր ստացել առանց Պալերմայի հոգևորականության համաձայ-

նության, որը մերժեց այդ նշանակումը։ Թաղավորի նշանակման դեմ ուղղված բողոքը հասավ Հռոմ, Թագուհին ինքը պապին աղերսում էր անվավեր համարել Գոտյեի նշանակումը, Թագուհին բավական ծանրակշիռ պատճառներ ուներ. նա վաղուց էր երազում այդ տաքուկ տեղը պարգևել իր սիրեկաններից մեկին՝ կանցլեր Ստեփանին։ Պետք է ենթադրել, որ Թագուհին կարողացել էր նրա մեջ լավ արքեպիսկոպոսին անհրաժեշտ գծե՞ր հայտնաբերել։

Պապը, որ երբեմն կարողանում էր նրբանկատ լինել, իր լեգատի միջոցով հայտնեց, որ ինքն իրեն երջանիկ կզգա Թագուհու համար դուրեկան մի բան անել, բայց մի աննշան պայմանով՝ Ստեփանի նշանակումը գլուխ կգա ընդամենը հաղար ունցիայով։ Թագուհուն շփոթեցրեց այդ առաջարկը։ Միանգամայն հասկանալի է, որ նա սկսեց միտք անել. եթե ամեն մի սիրեկան իր վրա այդքան շատ փող նստի, ապա, ինչքան էլ քրտնաթոր աշխատի իր բարի ժողովուրդը, միևնույն է, ինքը կսնանկանա։ Թագուհին երկար տատանվեց, բայց Թագավորական շռայլ սիրտը հաղթեց խոհեմությանը, և նա վճարեց պահանջված դումարը։

Ի դժբախտություն Թագուհու, Գոտյեին չէր կարելի անփութաջան մարդ համարել։ Եվ նա իր հոգևոր հորը լավ էր ճանաչում։ Թագուհին վճարել էր հազար ունցիա, որպեսզի նրան պաշտոնանկ անեին, Գոտյեն պապին վճարեց երկու հազար ունցիա, որպեսզի իրեն հանգիստ թողնեն։ Հարկ եղած դեպքում Գոտյեն կկրկնապատկեր այդ դումարը։ Այդ երջանիկ ժամանակներում արքեպիսկոպոսական խույրն աննշան բան չէր...

Պապն ընդունեց Գոտյեի փոքրիկ նվերը, և հարցը լուծվեց հօդուտ նրա։ Իսկ Թագուհուն տեղեկացրեց, թե «Պալերմոյի հոգևորականությունը Թագուհու խնդրանքի դեմ ծանրակշիռ փաստարկներ է գտել, և ինքը ըստ պատսում է նրա առարկություններին»։

Դեռ բավական չէր, որ նենգ խույրակիրը մատների վրա խաղացնում էր կինարմատին, նա ցանկանում էր նաև ձեռք առնել Թագուհուն։

Գործը վերջացավ նրանով, որ խեղճ Ստեփանը չստացավ արքեպիսկոպոսի պաշտոնը։

Աղեքսանդր պապը իշխանատենչ էր ու մեծամիտ, իսկ թե որքան զոռոզ էր՝ երևում է հետևյալ փաստից։

Երբ Ֆրիդրիխ Շիկամորուսը ստիպված լինելով ավարտել պապի դեմ մղած պատերազմը, հաշտություն խնդրեց, Աղեքսանդր III-ը, ինչպես պատմաբան Ֆորտունատ Ուլմեցին է պատմում, նրա համար սահ-

Յանեց հետևյալ ծիսակարգը. «Երբ նրանից վերացվեց բանդրանը, Ֆրիդրիխը մեծ շուքով մտավ Վենետիկ. ներկայանալով Աղեքսանդր III-ին, որը կարդինալների ու եպիսկոպոսների հետ սպասում էր սուրբ Մարկոսի տաճարում, նա հանեց իր թագավորական պատմուճանը, զույգ ծնկներով չոքեց պապի առաջ և գլուխը խոնարհեց մինչև գետին։ Աղեքսանդրը առաջ եկավ և ոտքը դրեց թագավորի ծոծրակին, մինչդեռ կարդինալներն սկսեցին երգել սաղմոսագրքի այս բառերը. «Դու կկոխրտես օձի գլուխը և կխորտակես առյուծին ու դևին»։ Ֆրիդրիխը բացականչեց. «Քահանայապետ, այդ բառերը վերաբերում են սուրբ Պետրոսին, այլ ոչ թե քեզ»։ «Ստում ես,— պատասխանեց Աղեքսանդրը,— այդ բառերը գրված են առաքյալի և իմ մասին»։ Եվ ամբողջ ուժով սեղմելով կայսեր ծոծրակը, ստիպեց նրան լռել, ապա նրան թույլ տվեց ոտքի կանգնել, որից հետո էլ օրհնեց։ Այդ ժամանակ տաճարի բազմությունը սկսեց երգել. «Քեզ, աստծուն ենք փառաբանում»։

Եթե ուշադրության առնվի, որ աստված, որի տեղապահը Աղեքսանդրն էր, ծնվել է փարախում՝ ռամկուհու հետ աղավնու ունեցած սիրային արկածից, ապա փոքր նվաճում չէ որքանով կոխկրտել կայսրին, ասա բնավ կայսր չէ, այլ պարզապես՝ ուղեգորգ։

Գուցե, դուք կարծում եք, թե այդ ծիսակարգը հագեցրեց տեղապահի փառատենչ հոգին։ Ամենևին։

Նորին արբազնությունը հորինեց մի շարք նոր հնարքներ։ Վերհիշյալ ծեսի հաջորդ օրը Աղեքսանդր III-ը հանդիսավոր պատարագի գնաց սուրբ Մարկոսի տաճարը և Ֆրիդրիխը գավազանը ձեռքին կատարում էր արարողապետի պարտականությունը, ընթանալով սուրբ հոր առջևից և նրա համար ճամփա բացելով ամբոխի մեջ։

Ավելի արժանավայել կլիներ, ինձ թվում է, օգտվել գավազանից և՝ մի լա՜վ հասցնել սուրբ տեղապահին։

«Ամբողջ պատարագի ժամանակ, որը կարճ չտևեց, կայսրը կանգնած էր բազմության մեջ։ Տաճարից պապի դուրս գալու պահին կայսրը երեսն ի վայր ընկավ, համբուրեց նրա ոտքը, ապա նրա ձիու սանձից բռնած՝ ոտքով ուղեկցեց մինչև պալատ»։

Այս պատմական փաստը ցույց է տալիս, թե այն ժամանակ կրոնական նախապաշարումներն ինչպիսի իշխանություն ունեին մարդկանց վրա։ Աշխարհի ամենահզոր միապետներից մեկը համաձայնվել էր պապի համար դառնալ ուղեգորգ, ծառա և ձիապան։ Հարց է ծագում, թե ինչի՞ համար էր Ֆրիդրիխ Շիկամորուսն այդպես ստորանում, ի՞նչն էր այդ բռնապետին ստիպում խայտառակորեն ընկնել իր համար ատելի

պապի ոտները։ Նա այդպես վարվեց գլխավորապես նրա համար, որ իր վրայից վիրացներ պապի դրած բանադրանքը։

Օ, զառամյա՛լ կաթոլիկ եկեղեցի։ Դու դեռ հիմա էլ ինքդ քեզ շոյում ես, դիմելով քո հին զենքին, բայց քո բանադրանքները միայն ծիծաղ են պատճառում նրան, ում վրա հարձակվում ես։ Ես ինքս ենթարկվել եմ քո նզովքներին։ Անատամ հրեշ, դու ընդունակ չես խրտվիլակի դեր կատարելու նույնիսկ մանուկների համար։

## ՂՈՒԿԻՈՍ III

Աղեքսանդր III-ից հետո խույրը բաժին ընկավ մի կատարյալ ապուշի, որը շատ համողիչ կերպով ապացուցեց, որ հիմարությունը չի բացառում դաժանությունը։

Ուբալդո՝ այսպես էին անվանում այդ արյունարբու ապուշին մինչև որ նա գահ բարձրացավ, այսինքն ընտրվեց պապ՝ հենց այն պատճառով, որ հիմար էր ու հիվանդոտ։

Ոպեսզի պարզ դառնա նրա ընտրության շարժառիթը, մենք մի քանի տարի ետ կվերադառնանք։

1179 թվին Հռոմում տեղի ունեցավ եկեղեցաժողով, որը հրավիրել էր Աղեքսանդր III-ը, իբր բարքերը բարելավելու համար։ Այդտեղ ընդունվեց քսանյոթ կանոն։ Դրանցից վերջինը, որ ավելի մահաբեր էր, քան թնդանոթների մարտկոցը, պահանջում էր հալածել հերետիկոսներին, ինչպես և կատարել իրենց պարտքը այն մարդկանց նկատմամբ, որ կասկածվում են աղանդավորության մեջ։

Մյուս կանոնն ուղղված էր այն պրելատների դեմ, որոնք իրենց ենթակա հոգևորականությունից տուրքերը գանձում էին չափազանց մեծ եռանդով։ Պրելատները սովորություն ունեին մեծաթիվ շքախմբի ուղեկցությամբ տարնկան մի քանի անգամ շրջագայել իրենց թեմերը։ Գյուղական քահանաները և վանականները ստիպված էին իրենց հաշվին կերակրել մեծ թվով մարդկանց։ Պրելատները, այսպիսով, իրենց շքախմբի պահպանման հոգսը դնում էին ստորադրյալների վրա։

Այդ կանոնն արժանի է ոչ պակաս ուշադրության, քան Կլյունի աբբայի օրենսգիրքը. եկեղեցական բարոյագետները մի այնպիսի պերճա-

*խոսությամբ են մեր առջև բացահայտում բարձր հիերարխիայի առօրյան, որ արժե այստեղ որոշ հատվածներ մեջ բերել.*

*«Եթե առաքյալն իրեն և իր ընտանիքին կերակրում էր իր ձեռքերի աշխատանքով, ապա ինչո՞ւ, հարց ենք տալիս, մեր օրերի առաքյալներն այլ կերպ են վարվում, ինչո՞ւ նրանց իրավունք է վերապահված իրենց ծառաներին աղքատության մատնել, ստիպելով վաճառել եկեղեցու զարդարանքները, եպիսկոպոսների ծախսերը վճարելու համար գրավ դնել վանքապատական հողերը։ Միևնույն ժամանակ նրանք պահում են լաքեյների մի ամբողջ շքախումբ, որը լափում է այն պաշարները, որ համայնքին կբավականացնեին մի ամբողջ տարի։*

*Եվ այդ պատճառով մենք հայտարարում ենք. առաջիկայում արքեպիսկոպոսներին արգելվում է պահել ավելի քան քառասուն ձի, կարդինալներին՝ քսանհինգ, եպիսկոպոսներին՝ քսանից մինչև երեսուն, ավագ սարկավագներին՝ յոթից ոչ ավելի, ստորին ծառայողներին՝ երկուսից ոչ ավելի...*

*Արգելվում է. ճանապարհորդելիս որսի համար տանել շներ ու թռչուններ... պահանջել հյուրասիրել դժվարաստեղծ ճաշերով և օտարերկրյա գինիներով...»։*

*Ինչպե՞ս է ձեզ դուր գալիս այս հեղափոխությունը։ Եվ ի՞նչ չափավորություն, բարքերի ինչպիսի՞ պարզություն։*

*Իհարկե, ոչ ոք բանի տեղ չի դրել այդ կանոնը։ Եպիսկոպոսներն ավելի շուտ իրենց խույրերից բարիկադներ կսարքեին, քան կհամաձայնվեին նման ռեժիմի ենթարկվել։*

*«Հավասարապես նաև արգելվում է. փոխհատուցում պահանջել եպիսկոպոսների, ու աբբաների այցելության, սպասավորների նշանակման, թաղումների, հարսանիքների ու այլ արարողությունների համար, որը չարաշահումների ու սրբապղծության պատճառ է դարձել, քանզի սկսել են եկեղեցու խորհուրդները մերժել այն մարդկանց, որ դրանց համար վճարելու միջոցներ չունեն»։*

*Այդ կեղծավոր կանոնները սահմանող եկեղեցաժողովի գլխավոր նպատակն էր ամրապնդել եկեղեցու հզորությունը աշխարհիկ տարրին հեռու պահելով կոլեգիայից, որը պետք է քահանայապետ ընտրեր։ Առաջին կանոնը պապ ընտրելու բացարձակ իրավունքը վերապահում էր կարդինալներին. ըստ այդ կանոնի, խույրը տրվում էր նրան, ով ստանում էր կարդինալների կոլեգիայի ձայների երկու երրորդը։ Այսպիսով, և՛ ժողովրդի, և՛ հոգևորականության օպոզիցիան այլևս ոչ մի արժեք չուներ։*

Աղեքսանդր III-ի մահից հետո կարդինալները պայմանավորվեցին պապ ընտրել միայն կոլեգիայի անդամներից։ Նրանց համար դժվար չէր դա իրականացնել, քանի որ իրենք էին դարձել դրության տերը։ Թեկնածուները ճիշտ այնքան էին, որքան և քվեարկողները։ Իսկ քանի որ աշխարհում չկան ավելի փառասեր մարդիկ, քան հոգևորականները, առաքելական գահը մի առ ժամանակ թափուր մնաց, մինչև որ կարդինալները կանգ առան Ուբալդոյի թեկնածության վրա։ Նա, ինչպես ասվեց, ծեր էր ու հիմար։ Կոլեգիան հույս ուներ, որ նա պապական աթոռը երկար չի զբաղեցնի և այնքան էլ հոգս չի պատճառի. հեշտ կլիներ նրան ձեռքում պահել։ Կարդինալներն իրենց հաշիվների մեջ փոքր ինչ սխալվեցին. Ղուկիոս III-ը գահի վրա նստեց ամբողջ չորս տարի։

Այդ պապի բոլոր մտքերը մի բանի շուրջն էին պտտվում՝ մեծացնել պապական գանձարանի եկամուտները, և նա ոչ մի միջոցից չէր խորշում։

Նա վերացրեց խոշոր հանդիսությունների ժամանակ Հռոմի բնակչության աղքատ մասին հագուստ ու հաց բաժանելու սովորությունը, քահանաներին ստիպեց ավելացնել հոտից գանձվող հարկերը։ Նրա շորթումները հռոմեացիներին ստիպեցին ապստամբել։ Ղուկիոսն ստիպված եղավ քաղաքից հեռանալ։ Ջայրացած ժողովուրդը կործանեց պապի պալատը, խոշոր մագնատների որոշ տիրույթներ հիմնահատակ։ Քաղաքացիները երդվեցին ղենքը ձեռքներին մեռնել, բայց Ղուկիոսին չենթարկվել։

Շուտով սուրբ հորը հաջողվեց ապստամբներին սանձահարել։ Իր գործակալներին նա ուղարկեց Եվրոպայի բոլոր արքունիքները, հանձնարարելով որքան կարելի է շատ միջոցներ ձեռք բերել հռոմեացիներին ճնշելու համար։ Այդպիսի սուրբ գործի համար սենյորները ոչինչ չխնայեցին, և հունձն առատ եղավ։ Ղուկիոսը հավաքած ոսկով կարողացավ կաշառել ժողովրդական ապստամբության առաջնորդներին։ Վերջիններս, մոռանալով իրենց երդումը, պապին հանդիսավորապես տարան Լաթերանյան պալատը, և Ղուկիոսը կրկնապատիկ եռանդով սկսեց բաց թողածը լրացնել։ Նա հռոմեացիների վրա արտակարգ ծանր հարկ լրեց։ Վրդովված քաղաքացիները նորից ապստամբեցին, ընդ որում մի այնպիսի վճռականությամբ, որ այրունահեղ հաշվեհարդարից խուսափելու համար պապը նորից փախավ։

Քանի որ ճշմարտությունը մեզ համար ամեն ինչից թանկ է, չենք կարող չնշել, որ այս անգամ ժողովուրդը կատաղարար մարդիկ իր հա-

շիվը հոդևորականության հետ։ Սկսվեց մի համընդհանուր ջարդ։ Հռոմեացիները, որոնց դեռևս վերջերս օգտագործում էին հերետիկոսների դեմ, այժմ նույն չարությամբ դուրս եկան ընդդեմ եկեղեցականների։ Կողոպտում ու վառում էին եկեղեցիները, հրապարակներում բռնաբարում մխանձնուհիներին, ծաղրուծանակի ենթարկում քահանաներին, ճիպոտահարում ու խոշտանգում կարդինալներին ու եպիսկոպոսներին։ Որոշ տարեգիրներ հայտնում են, որ նրանք վանքերից մեկն ավերելուց հետո մխաբանների աչքերը հանեցին, ապա ստիպեցին եկեղեցական թափորը դուրս գալ այն վանականի առաջնորդությամբ, որի միայն մի աչքն էլ ն հանել։

Էլ ո՛վ կհամարձակվի կասկածել, թե կրոնը մեղմացնում է բարքերը։

Չէ՞ որ բոլոր այդ մարդիկ, որ այդպիսի դաժանությամբ հետապնդում էին եկեղեցու սպասավորներին, հավատացյալներ էին... Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հետագայում նրանք անկեղծորեն զղջացել են իրենց հանցագործության համար, որից հետո՝ դրախտ ընկել։ Բայց ահա այդ դժբախտը, որ չորեքշաբթի օրը համեստ ճաշից հետո հանկարծամահ է եղել, անշուշտ հավերժ պիտի տապակվի դժոխքի ընդերքում։

Ղուկիոս III-ը հաստատվեց Վերոնայում։ Այդտեղ եկավ նաև կայսր Ֆրիդրիխը, որպեսզի երկուսով քննարկեն, թե ինչպես ծնկի բերեն հռոմեացիներին։ Կայսերական բանակի համար դժվար չէր խռովարարներին զսպել, սակայն կայսրը մի շարք պայմաններ դրեց. ամենից առաջ նա պահանջեց վերադարձնել կոմսուհի Մաթիլդայի կալվածքները, որոնց շուրջը կայսրության ու պապական աթոռի միջև վեճերը շարունակվում էին մեկուկես դար։ Սուրբ Հայրը համաձայնվեց այդ զոհաբերությանը, բայց մտքում որոշեց կայսրին խաբել։

Եկեղեցական քաղաքագետները միշտ և ամեն բանում հավատարիմ են իրենց։ Իր գաղտի հրահանգներում Ղուկիոսը կարգադրեց ձգձգել Մաթիլդայի ժառանգության հարցի քննարկումը և հիմնականում զբաղվել հռոմեացիներին հնազանդեցնելու և պատժելու խնդիրներով։

Ըստ երևույթին, կայսրը գլխի էր ընկել, որ իրեն ուզում են խաբել, քանզի զորքերին հրամայեց սպասողական դիրք գրավել և չհարձակվել։

Բանը վերջացավ նրանով, որ սուրբ Հայրը, չսպասելով բանակցությունների ավարտմանը, մեռավ։

Այն եկեղեցաժողովը, որ Ղուկիոսը հրավիրել էր իր Հռոմ վերադառնալը նախապատրաստելու համար, զբաղվեց ոչ միայն այդ հարցով։

Այդտեղ ընդունեց մի հրամանագիր, որ ուղղված էր վալդենսների և այլ մերկացված կամ կասկածելի աղանդների դեմ, ավելի ճիշտ, նրանց դեմ, ովքեր դիմադրում էին ամենաանտանելի բռնապետությանը, այն բռնապետությանը, որ խեղդում է մարդկային միտքը։ Այդ հրամանագիրը ամենայն որոշակիությամբ բացահայտեց զառամյալ Ղուկիոսի դաժանությունը։ Մենք այն ամբողջությամբ մեջ չենք բերի, այլ ընթերցողի ուշադրությանը կներկայացնենք միայն մի քանի հատված։

«Չկան այնպիսի դաժան միջոցներ, որոնց առջև եկեղեցական արդարադատությունը ընկրկի, երբ հարկավոր է ոչնչացնել հերետիկոսությունը, որը մեր օրերում բազմացել է բազմաթիվ պրովինցիաներում։ Նույնիսկ Հռոմն հանդգնեց ընդդիմանալ սուրբ աթոռին, և նրա գարշելի ժողովուրդը համարձակվեց իր սրբապիղծ ձեռքը բարձրացնել մեր քահանաների վրա։ Մոտ է հատուցման օրը, և սպասելով մեզ պատճառած բոլոր փորձանքների համար հռոմեացիներին հատուցելու հնարավորությանը, մենք լանաղրում ենք բոլոր հերետիկոսներին, ինչպես էլ որ նրանք իրենց անվանեն...»։

Որքան ատելություն կա այդ բառերում, որքան վայրագություն։ Եվ այդ մարդը, որ վրիժառության կոչ է անում, այն եկեղեցու գլխավորն է, որը ներում է քարոզում և խորհուրդ տալիս, թե երբ մի այտիդ խփում են, դեմ արա և մյուսը։

«Մենք կոչնչացնենք այդ զազրելի աղանդավորներին հավիտենական նզովքով։ Մենք հավիտենական տառապանքի ենք դատապարտում նրանց, ովքեր այդ անհավատներին օթևան կամ օգնություն կցուցադրեն, ովքեր կհամարձակվեն այդ հերետիկոսներին անվանել «կատարյալ հավատացյալներ» կամ այլ հեթանոս անուններ կտան նրանց։ Մենք հրամայում ենք՝ բոլոր նրանց, ում կմերկացնեն հերետիկոսներին օգնելու մեջ, կղերականներ լինեն թե հոգևոր անձեր, զրկել եկեղեցական կոչումից և հանձնել աշխարհիկ արդարադատությանը։ Իսկ եթե դրանք աշխարհականներ լինեն, հրամայում ենք՝ դատապարտել ամենասոսկալի խոշտանգումների, փորձության ենթարկելով կրակի, երկաթի, մտրակահարության և ողջ-ողջ այրելու միջոցով»։

Հոյակապ է։ Խոշտանգում, մտրակ, երկաթ, կրակ այն միակ հանցանքի համար, որ մարդ «կատարյալ հավատացյալ» է անվանել մեկին, որը կասկածում էր, թե հացի կտորի մեջ առկա է Քրիստոսի մարմինը...

«Ամեն մի պրելատ պարտավոր է ուսումնասիրել իր թեմի քաղաքները, հատկապես այն վայրերը, որտեղ նրա կարծիքով կարող են հերետիկոսներ բնակվել։ Պրելատների պարտականությունն է

հարցաքննել ծերերին, կանանց ու երեխաներին, թե որտեղ են ապաստան գտնում վալդենսյանները կամ այն մարդիկ, որոնք գաղտնի ժողովներ են գումարում, ինչպես նաև նրանք, ում վարքը տարբերվում է մնացած հավատացյալների վարքից կամ նրանք, ովքեր փորձում են մեկնաբանել սուրբ գիրքը»։ «Այն քաղաքները, որ կհամարձակվեն ընդդիմանալ մեր հրամաններին կամ չեն կատարի հերետիկոսներին հալածելու իրենց պարտականությունը, կզրկվեն մյուս քաղաքների հետ հարաբերություններ պահպանելու իրավունքից և կկորցնեն իրենց տարածքները ու արտոնությունները. քաղաքացիները կբանադրվեն, հալածենապես սրբապիղծ կմնան, ընդմիշտ կզրկվեն ազնիվ արհեստով զբաղվելու իրավունքից։ Բոլոր հավատացյալներին իրավունք է տրվում նրանց սպանել, տիրանալ նրանց գույքին կամ ստրկացնել նրանց»։

Ահա թե ինչպիսի հրամանագիր էր ընդունել Լաթերանի եկեղեցաժողովը։

Այն մեկնաբանելն ավելորդ է։ Մենք մեզ թույլ կտանք անել միայն մի հետևություն. դիշատիչ կենդանիների մեջ առաջին տեղը հարկավոր է տալ կղերականին։

XII դարի վերջում պապության վիճակը, չնայած Գրիգորիս Շիկամորուսի դեմ մղած պայքարում ձեռք բերած հաջողություններին, չափազանց երերուն էր։ Դուկիոսը այդպես էլ չհամարձակվեց Հռոմ վերադառնալ։ Նրա մահից հետո պապ հռչակվեց արքեպիսկոպոս Ուբերտո Կրիվելին՝ Ուրբանոս III անունով։ Նա երկար չզբաղեցրեց սուրբ աթոռը և ամբողջ գահակալության ընթացքում ապրում էր Վերոնայում։ Նրա պառակտման վերջում լուր հասավ, թե Սալադինը գրավել է Երուսաղեմը։ Սուրբ հայրն այնպես ցնցվեց, որ անկողին ընկավ և երրորդ օրը մեռավ։

Տարեգիր Ռոժեր Գովեդենցին ասում է, թե մահմեդականների հաղթանակը վշտի մատնեց ամբողջ քրիստոնեական աշխարհը։ Սալադինը հրամայեց եկեղեցիներից պոկել խաչերը, ջարդել զանգերը և մզկիթները խունկով ախտահանել։ Սալադինը քրիստոնյաներին ողորմածաբար ազատ արձակեց, բայց առանց գույքի, ընդ որում նրանք պարտավոր էին ամեն մի տղամարդու համար վճարել տասը ոսկե դրամ, ամեն մի կնոջ համար հինգ ոսկե դրամ," և երեսուն հազար էլ՝ բոլոր աղքատների համար։ Տարագիրների մեծ մասը մեռավ կարիքից ու զրկանքներից։

Հռոմի կարդինալները գրավոր պարտականություն տվին՝ հրաժարվել կենակցուհիներից, ձի չհեծնել, որսի չգնալ աչքաբաց ժամանակ, քաշ-

նի դեռ սուրբ հողը կդառնվի անհավատների ձեռքում։ Ոմանք նույնիսկ երդվեցին խաչ վերցնել և գնալ Ասորիքում կռվելու։

Ավելորդ է ասել, որ այդ բոլոր խոստումները բացարձակ կեղծավորություն էր, որը կոչված էր բորբոքելու հավատացյալների մոլեռանդությունը։ Կարդինալները պահեցին իրենց սիրուհիներին, իրենց ձիերն ու շները և չհրաժարվեցին կյանքի ոչ մի հաճույքից։ Հռոմի արքունիքը շարունակում էր լինել մի հսկայական պոռնկանոց։

## ԳՐԻԳՈՐ VIII

Ուրբանոս III-ի հաջորդ Գրիգոր VIII-ը որևէ արժանահիշատակ բան չարեց, քանի որ մեռավ իր ընտրությունից երկու ամիս անց։ Սակայն մեռնելուց առաջ նա կարողացավ նոր խաչակրաց արշավանք հայտարարել։

Կղեմես III-ը, որ փոխարինեց Գրիգորին, վերադարձավ Հռոմ, բայց ստիպված եղավ ընդունել Հռոմի սենատի դրած պայմանները. թեև կոմունան պապին հավատարմության երդում տվեց, այնուամենայնիվ պահպանեց իր ինքնավարությունը։

Կղեմես III-ը շարունակում էր իրագործել իր նախորդի ձեռնարկումը։ Նրան հաջողվեց համոզել երեք թագավորների՝ Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի տերերին, շարժվել դեպի Պաղեստին։ Առաջինը ճանապարհ ընկավ Ֆրիդրիխ Շիկամորուսը, բայց փառքի փոխարեն մահ գտավ։ Սելևկիա գետի ափին ճաշելուց հետո նա ցանկացավ լողանալ և գետի արագ հոսանքը քշեց, տարավ նրան։ Կայսեր գահն անցավ նրա որդուն, որը ստիպված եղավ թողնել խաչակրաց զորքը և թաղադրվելու համար գնալ Հռոմ։

Այդ ժամանակ Կղեմես III-ը մեռավ, և նրա տեղը գրավեց մի պառավամյալ հիվանդ ծերուկ, որը եկեղեցու պատմության մեջ հայտնի է Կելեստինոս III անունով։

Մենք երկար չենք խոսի Հենրիխ VI-ի և բահանայապետի մյուս նշած պայքարի, այդ կայսրի չարաբաստիկ, երկրով լայնակրաց արշավանքի մանրամասնությունների մասին։ Անցնենք XIII դարին։

## XIII ԴԱՐԻ ՊԱՊԵՐԸ

*Կաթոլիկ եկեղեցու պատմության մեջ XIII դարը բացում է Իննովկենտիոս III-ը՝ Կելեստինոսի հաջորդը։ Սուրբ Պետրոսի՝ այդ հարյուր ութսունմեկերորդ տեղապահը սերում էր Սենյիների անվանի տոհմից և կարդինալի աստիճան ստացել էր իր քեռի Կղեմես III-ից։*

*Համոզված լինելով, որ պետք է ամբողջ աշխարհը պապի իշխանությանը ենթարկել, նոր քահանայապետը շատ բանով Գրիգոր VIII-ին էր հիշեցնում։ Նրա փառասիրությունը սահման չուներ։ «Թագավորների իշխանությունը տարածվում է միայն առանձին մարզերում, Պետրոսի իշխանությունն ընդգրկում է ամբողջ թագավորությունը»,— գրել է նա մի նամակում։ Հետագայում մենք կտեսնենք, որ դաժանության տեսակետից նա գերազանցեց իր մերձակա նախորդներին։*

*Ընտրվելուց անմիջապես հետո Իննովկենտիոսը վերակառուցեց քաղաքի ոստիկանությունը, պրեֆեկտին, որը կայսերական պաշտոնյա էր համարվում, դարձնելով պապական պաշտոնյա։ Քաղաքային վարչությունը ճիշտ է պահպանվեց, բայց ենթակա էր պապի գերագույն իշխանությանը։*

*Այդ ժամանակ Գերմանիայում՝ Հենրիխ VI-ի որդու խնամակալի և Օթոն Բրաունշվեյգացու միջև երկպառակտչական պատերազմներ էին մղվում։ Պապը որոշեց այդ վեճի մեջ հանդես գալ որպես դատավոր և գերմանացիներին հրամայեց Օթոնին ճանաչել, որի համար վերջինս երդվեց պահպանել եկեղեցու բոլոր իրավունքներն ու գույքը, այդ թվում և Մաթիլդայի ժառանգությունը։*

*Մի քանի տարի շարունակ պապը իր բոլոր ուժերով օգնում էր իր կողմնակցին։*

*Բայց հենց որ Օթոնը կայսր դարձավ և Հռոմում թագադրվեց (1209 թվականին), նա անհապաղ դրժեց իր խոստումներն ու երդումը. գրավեց կոմսուհի Մաթիլդայի հողերը, ապա հարձակվեց Հարավային Իտալիայում սիկիլական թագին պատկանող տիրույթների վրա։ Օթոնից խաբված Իննովկենտիոսը նրան դանդոդեց (1210 թվականի նոյեմբերին) և նրա հպատակներին ազատեց կայսրին տված հավատարմության երդումից։ Այդ ամբողջ ժամանակաընթացքում, եռանդուն կերպով պայքարելով Օթոնի դեմ, Իննովկենտիոսը պահեստում մի ուժեղ դաշնակից էր պահում։ Դեռևս 1198 թվականին Կոնստանցիան, Հենրիխ VI-ի այ-*

րին ու Սիկիլիայի թագավորության ժառանգորդուհին, համաձայնվել էր պապի գերիշխանությունն ընդունել է մեռնելուց առաջ Իննովկենտիոսին հանձնարարել էր իր որդու խնամատարությունը։

Օթոնի վարմունքից զայրացած, պապը եռանդով սկսեց նրա դեմ կոալիցիա կազմակերպել, և այդ ջանքերը հաջողությամբ պսակվեցին։ Հռոմ ժամանելուց և Իննովկենտիոսին հավատարմության երդում տալուց հետո տասնյոթամյա Ֆրիդրիխը ջախջախեց Օթոնին և շուտով թագադրվեց Մայնցում։ Զգալով իշխանության, Ֆրիդրիխը խոստումներ չէր զլանում. նա պարտավորվեց ամեն ինչում ենթարկվել սուրբ աթոռին և պապին օգնել հերետիկոսների դեմ նրա մղած պայքարում։ Իհարկե, Իննովկենտիոսի մտքով չէր անցնում, որ մի քանի տարի հետո իր սանը դառնալու է իր ամենավտանգավոր հակառակորդը։

Այնպես հնազանդորեն Իննովկենտիոսին զիջած թագավորները գեռևս թույլ էին և նրա օգնության կարիքն էին զգում։ Օրինակ, Շվեդիայի, Դանիայի, Պորտուգալիայի թույլ իշխանավորները վասալական երդում էին տվել և տուրք էին վճարում իրենց սյուզերենին՝ պապին։ Բայց երբ Իննովկենտիոս III-ը փորձեց խառնվել Փիլիպոս Օգոստոսի և Հովհան Անհողի երկպառակություններին, եռանդուն Փիլիպոսը հայտարարեց. «Պապի գործը չէ, թե ինչ է կատարվում թագավորների միջև»։ Դրա համար Իննովկենտիոսը նրա վրա ինտերդիկտ դրեց։

Իսկ Անգլիայում թագավորական իշխանությունը ստորանում էր նրա առաջ, բայց Իննովկենտիոսի խարդավանքները միայն երկպառակտչական պատերազմի հանգեցրին։ Խոովարար բարոնների ու ժողովրդի դեմ պայքարելու ընթացքում Հովհան Անհողը դիմեց պապի օգնությանը։ Իննովկենտիոսը անհապաղ նզովք դրեց Մեծ խարտիայի վրա, թագավորին արգելելով այն իրագործել, իսկ բարոններին՝ պահանջել նրա իրագործումը։ Պապը նզովեց նաև թագավորին ընդդիմացող բարոններին ու պրելատներին, բայց նրանք շարունակեցին համառել։ Արյունահեղ պատերազմները քայքայում էին Անգլիան, և ժողովուրդն իր դժբախտությունների պատճառ էր համարում պապին։

Իննովկենտիոսը երազում էր միավորել ամբողջ քրիստոնեական Եվրոպան, ցանկանալով կազմակերպել մի վիթխարի արշավանք՝ տիրոջ գերեզմանն ազատելու համար։ 1213 թվականին նա նորից պատգամավորներ ուղարկեց խաչակրաց արշավանք քարոզելու, հանձնարարելով խաչ տալ յուրաքանչյուրին, ով կուզենա, նույնիսկ քրեական հանցագործներին։ Բայց սուրբ վայրերն ազատելու փոխարեն, խաչակիրները նվաճեցին Բյուզանդական կայսրությունը, Հույների նկատ-

*Ժամբ կատարված բռնությունները է՛լ ավելի սաստկացրին նրանց ատելությունը արևմտյան ժողովուրդների նկատմամբ։ Իսկ կրոնական միասնության ու քաղաքական համաձայնության վերականգնումն այնժամ ավելի դժվարին դարձավ, քան երբևէ։*

*Մյուս խաչակրաց արշավանքը Ինոկենտիոս III-ը կազմակերպեց քրիստոնեական աշխարհի ներսում՝ ընդդեմ ալբիգոյցիների։*

*Պապը սկսեց նրանից, որ վանականներ ուղարկեց Հարավային Ֆրանսիա։ Նրանք պարտավոր էին հերետիկոսներին դարձի բերել, ընդ որում լիազորված էին դիմելու խոշտանգման բոլոր միջոցներին՝ երկաթին, կրակին, ջրին, նայած թե ալբիգոյցիներն ինչքան համառ էին։ «Բարի» լեգատներին գործելու կատարյալ ազատություն էր տրված միայն մի պայմանով՝ լինել անողոք։*

*Իրականում նրանք հենց այդպիսին էլ եղան։ «Ամբողջ քրիստոնեական աշխարհը,— գրում է Պեռենը «Ալբիգոյցիների պատմության» մեջ,— ցնցված էր զարհուրելի տեսարանից. կախաղան հանված, խարույկների վրա այրված, խոշտանգումների ենթարկված մարդիկ, և դա միայն այն պատճառով, որ նրանք իրենց խոհերը կապել էին միայն ամենաբարձրյալի հետ և հրաժարվում էին հավատալ մարդկանց հորինած հին ծեսերին»։*

*Պապը, սակայն, գտնում էր, որ իր գործակալներն անհրաժեշտ չափով եռանդ չեն գործադրում, բավականաչափ արագ չեն հասնում ցանկալի արդյունքներին։ Նա օգնության ուղարկեց երեք լեգատներ, նրանց հանձնարարելով ոչնչացնել բոլոր հերետիկոսներին, այլ կերպ ասած՝ Հարավային Ֆրանսիայի բնակչության մեծ մասին։ Շուտով Իննովկենտիոսի գործակալներին միացան զազրելի կուսակրոն Դոմինիկոսը՝ ինկվիզիցիայի հիմնադիրը։*

*Ալբիգոյցիների ջարդը սարսափելի չափեր ընդունեց։ Մեծաքանակ բանակի գլուխն անցած Սիմոն դը Մոնթորը պաշարեց Բեզեր քաղաքը։ Մի ամբողջ ամիս այդ բարգավաճ քաղաքի բնակիչները հերոսաբար պաշտպանվում էին, բայց, ի վերջո, սովից տանջահար, ստիպված եղան անձնատուր լինել։ Սակայն հաշտության առաջարկները մերժվեցին։ Մոլեռանդները երդվել էին կոտորել անխտիր բոլորին, նույնիսկ ծծկեր մանուկներին։*

*Չէ որ խոսքը վերաբերում էր հերետիկոսությունը ոչնչացնելուն. վերջինիս լայն տարածումը շատ էր անհանգստացնում պապին, քանզի ապահովում էր բուն պապության գոյությունը։ Ահա թե ինչու սուրբ աթոռը որոշել էր ամեն գնով հաստատել իր իշխանությունը, ահա թե ինչու*

պապերը ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, հրով ու սրով հնազանդեցնում էին այն երկրները, որոնք ձգտում էին անկախության ու ազատության։

Ինչ վերաբերում է Սիմոն դը Մոնթորին, ապա կրոնը նրա համար միայն մի վարագույր էր, որի ետևում թաքնված էին անձնական շահերը. նա հավակնում էր գրավել Թուլուզի կոմս Ռայմունդի՝ ալբիգոյցիների գլխավոր առաջնորդներից մեկի տիտղոսն ու կալվածքները։

Դը Մոնթորի բանակն իր հսկայական մեծամասնությամբ բաղկացած էր կախաղանի արժանի ելուզակներից կամ մոլեռանդ քրիստոնյաներից, որոնք հերետիկոսների դեմ մղվող խաչակրաց արշավանքի մեջ հիանալի առիթ էին տեսնում ջանալու հանուն եկեղեցու փառքի ու հոգու փրկության։

Իննովկենտիոս III-ի լեգատները հանձին Մոնթորի ավազակախմբի գտան այն ուժը, որ անհրաժեշտ էր իրենց հանցավոր դիտավորություններն իրականացնելու համար, երբ Բեզերի կոմսը և քաղաքի այլ պատվարժան մարդիկ անձնատուր լինելու պատրաստակամությամբ ներկայացան պապի լեգատներին, Դոմինիկոսը նրանց վոնդնգ. ասելով, թե սուրբ հոր հրամանով քաղաքը պետք է այրվի, իսկ ամբողջ բնակչությունը՝ տղամարդիկ, կանայք, երեխաներն ու ծերերը կախաղան պետք է հանվեն կամ սրի քաշվեն։

Պաշարվածներն իմանալով, որ հաղթողների գթության վրա հույս չեն կարող դնել, որոշեցին պաշտպանվել մինչև վերջին շունչը։ Ջնայած նրանց աննկուն արիությանը, հակառակորդը քաղաքը գրավեց։ Սոսկալի կոտորած սկսվեց։ Ջինվորները փողոցներում բռնաբարում էին կանանց, իսկ հետո՝ սպանում։ Դոմինիկոսը խաչը ձեռքին շրջագայում էր քաղաքի թաղամասերը, ավազակներին դրդելով կողոպտել ու հրդեհել տները։ Իզուր էին ոմանք փորձում պապի լեգատների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ Բեզերի բնակչության մեծ մասը հերետիկոս չէ. այդ հրեշներն ավելի շուտ պատրաստ էին ոչնչացնել հարյուրավոր անմեղների, քան գթալ թեկուզ մեկ մեղավորի։ «Սպանեցե՛ք,— գոչում էր Առնոլդ Ամալրիկը,— սպանեցե՛ք բոլորին։ Աստված յուրայիններին կճանաչի»։ Այդ կոչը կատարվեց տառացիորեն։ Բեզեր քաղաքը մոխիր դարձրին, վաթսուն հազար զոհ թաղվեց նրա ծխացող փլատակների տակ։

Բեզերի հետ հաշիվը մաքրելով, պապի գործակալները նետվեցին մյուս քաղաքների վրա։ Ավերվեցին Կարկասոնը, Թուլուզը, Ալբին և Հարավային Ֆրանսիայի այլ քաղաքներ, որ հարում էին ալբիգոյան շարժ-

*ժանը։ Նրանք ևս դարձան հրեշավոր ջարդերի թատերաբեմ։ Այդ խաչակրաց արշավանքի ժամանակ մոլեռանդորեն սպանում ու խոշտանգում էր հատկապես Դոմինիկոսը, որը միանգամայն արժանի է այն լուսապսակին, որ նրան պարգևել է եկեղեցին։*

*Ալբիգոյցիների հալածանքը փոքր-ինչ հանդարտվեց, երբ Ինովկենտիոս III-ը լաթերանում եկեղեցաժողով հրավիրեց Ֆրիդրիխ II-ին թագադրելու համար։ Քննարկվեցին նաև տիեզերական եկեղեցու վերափոխման հետ կապված կարևոր հարցեր։ Եվ հանկարծ հայտնվեցին Թուլուզի ու Պուայի կոմսերը, բողոքելով, թե Սիմոն դը Մոնթորը զավթել է իրենց կալվածքները։ Սուրբ Հայրը, լսելով, թե՛ ինչպիսի վայրագություններ են կատարել Սիմոնն ու Դոմինիկոսը, աննախադեպ լպիրշությամբ ասաց, թե չի կարող այդ նվիրված քրիստոնյաներին դատապարտել սուրբ առաքելության ժամանակ ցուցաբերած արտակարգ ջանադրության համար։ Բայց հետո, հանկարծ տոնը փոխելով, նա վիրավորված սենյորներին խոստացավ վերադարձնել նրանց կալվածքները։ Հարկ չկա ասելու, որ դա սուտ խոստում էր։ Սուրբ Հայրը ոչ միայն չկատարեց իր խոստումը, այլև շտապեց Դոմինիկոսին և Սիմոն դը Մոնթորին գաղտնի հրաման ուղարկել, պահանջելով ալբիգոյցիների նկատմամբ ավելի խիստ լինել, որպեսզի կարճատև դադարը չաշխուժացնի հերետիկոսներին։ Դրա հետ միասին նա Մոնթորի վրա հաստատեց զավթած հողերը։*

## ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՍԻԶԱՑԻՆ

*Այդ իսկ եկեղեցաժողովին ներկայացավ ֆրանցիսկյանների միաբանության հիմնադիր, նշանավոր Ֆրանցիսկոս Ասիզացին։ Նրան անհրաժեշտ էր իր վանքերի համար կանոնադրություն հաստատել։ Ինովկենտիոս III-ը, որը սովորաբար թանկարժեք նվերներ էր ստանում այն հավատացյալներից, որոնք արժանանում էին պապի կոշիկը համբուրելու պատվին, այս անգամ բացառություն արեց։ Նա Ֆրանցիսկոսից ոչ միայն ոչինչ չպահանջեց, այլ նույնիսկ ինքը նրան փող տվեց։ Պապի համար, իհարկե, դժվար չէր մի փոքրիկ զոհողություն անել՝ այն խղճուկ ապուշի սիրույն, որը խելացնոր հալյուցինացիաներով և մարգարեություններով անհավատալի կերպով ներգործում էր տգետ ու սնոտիապաշտ մարդկանց երևակայության վրա։*

Ֆրանցիսկոսի կենսագրությունը միանգամայն առասպելական է։ Ներկայումս այդ ստահոդություններից մեկն իսկ բավական կլիներ այդ հերոսին գժանոց գցելու համար։ Օրինակ, Ֆրանցիսկոսն, իբր, հասկանում էր կենդանիների լեզուն և լրջորեն զրուցում նրանց հետ; էկզալտացիայի նոպաների ժամանակ Ֆրանցիսկոսի մարմինը ցնցվում էր, ինչպես տենդի պահին, իսկ ոտքերը անդադար շարժվում էին։ Նրա ճառերը միանգամայն անկապ բաներ էին. ի դեպ, այն ժամանակնե-րում խոսքի անկապությունն ու անհեթեթությունը համարվում էին ի վե-րուստ տրված ներշնչանք։

Ֆրանցիսկոսը եկեղեցու համար իսկական գանձ էր. հավատացյալ-ներին էքստազի մեջ գցելու իր ընդունակությամբ նա արժանացավ պապի բարյացակամությանը, որը շատ լավ գիտեր, թե ինչպես պետք է օգ-տագործել այն կրոնախևհին, որը կարողանում է ժողովրդին հավատաց-նել, թե վերին շնորհ է վայելում։

Ֆրանցիսկոս Ասիզացու վերաբերմամբ արմատավորվել էր նաև այն կարծիքը, թե նա արտասովոր կերպով անարատ սուրբ է։ Դժվար է ասել, թե այդ կարծիքը որքանով է արդարացի։ Մի տարեգիր պատ-մում է, թե «ցանկանալով հաղթել ցանկասիրության դևին և կրքերի հրդեհից պաշտպանել իր անարատության սպիտակ շուրջառը», Ֆրան-ցիսկոսը ձմռանը գլխովին սուզվել է սառցանցքի մեջ։ Բայց սառցա-ջուրն էլ, հավանաբար, քիչ է օգնել, որովհետև, ըստ այդ նույն տարե-գրի, «երբ մի անգամ Ֆրանցիսկոսը սաստիկ գայթակղվեց, տեսնելով մի գեղեցիկ աղջկա, որ եկել էր նրա մոտ օրհնություն ստանալու, հա-նեց իր շորերը (աղջկա ներկայությամբ) և, ինքն իրեն մտրակահարե-լով արյունոտվելու աստիճան, դուրս վազեց բակ, որտեղ, թավալվելով ձյան մեջ, սկսեց գոռգոռալ, թե իբր սուրբ հոգին մտել է իր մեջ։ Շու-տով բոլորը տեսան յոթ ահագին գնդեր, որ նա շինել էր ձյունից, ներ-կելով իր իսկ արյունով։ Այդ նույն ժամանակ Ֆրանցիսկոսի հոգին նրան ասաց. «Ամենախոշոր ու գեղեցիկ ձյունե կինը քո կինն է, մյուս չորսը կենակցուհիներ են, իսկ վերջին երկուսը՝ սպասուհիներ։ Շտա-պիր բոլորին տանել քո օջախը, քանզի ցրտից մեռնում են»։

Տարեգրի եզրակացությունն ուղղակի աննման է. «Ձյունե կանայք հալվեցին, իսկ Ֆրանցիսկոսի հոգին նրան ասաց հետևյալը. «Ով, մար-մին իմ, ի գիտություն ընդունիր այս դասը և խմացիր, թե ինչպես պետք է հոգու առաջ գոլորշիանան ու անհետանան ցանկասիրության բոլոր ուրախությունները»։

Տարեգիրը, դժբախտաբար, չի նշում, թե ինչպիսի ձայն ուներ Ֆրանցիսկոսի հոգին և ի՛նչ լեզվով է խոսել նրա հետ։

Այս անեկդոտը նույնքան անհեթեթ է, որքան սրբերի կենսագրություններից քաղված բոլոր անեկդոտները։ Իսկ եթե այդ փաստը տեղի է ունեցել, ապա դա մի ավելորդ անգամ ապացուցում է Ֆրանցիսկոսի խելագարությունը։ Այլ բան ասել անհնար է։

Իրականում ֆրանցիսկյան ուխտի հիմնադիրը պատանեկության տարիներին եղել է անառակի մեկը, որը ձեռքից բաց չէր թողել ոչ մի կին։ Մի գեղեցիկ օր նա դարձել է կրոնական մոլեռանդ։ Դա կնշանակե՞, թե նա հանդարտվել էր։ Բնավ ոչ։ Նրա կրքերը միայն փոխել էին օբյեկտը, և նա նորադարձի փութաջանությամբ սկսեց գործադրել Սոդոմի բարքերը։ Ահա մի բնորոշ դիպված, որ մենք քաղել ենք Ագրիպա դ'Օբինյեից. «Եթե որևէ եպիսկոպոս կամ կարդինալ սիրահարվի իր մանկլավիկին, իրեն չպետք է մեղավոր համարի, ընդհակառակը, կարող է հույս ունենալ, որ երբևէ իրեն սրբերի շարքը կդասեն. չէ որ նա հետևում է սուրբ Ֆրանցիսկոս Ասիզացու օրինակին, որն իր եղբայր Մակեյուսի հետ ունեցած սեռական հարաբերությունները սուրբ սեր է անվանում։ Այդ վավաշոտ վանականը պատմում է, թե իր մեջ լափող կրակ է արթնացել, հենց որ տեսել է երիտասարդ միաբան Մակեյուսին։ Մի արարողության ժամանակ, երբ Մակեյուսը ծառայի պարտականություն էր կատարում, Ֆրանցիսկոսը գոչել է. «Ո՜հ, Մակեյուս, ավելի լավ է ինձ հանձնվես, քան աստծուն»։

«Ով մենք,— այնուհետև ասում է սուրբ Ֆրանցիսկոսը,— բեմի աստիճանների վրա համբույրներով հանգցրինք մեր մեջ բռնկված կրակը»։

Ահա թե ինչպե՞ս էր այդ պատվարժան այրը հասկանում անաղարտություն ասածը։ Դա նրան չխանգարեց սուրբ դառնալ։ Մեր օրերում նրա բարեպաշտ ընդօրինակողներն արժանանում են այլ պատվի. ուժիզ ընկնում են ոստիկանության ձեռքը։

Նույն այդ եկեղեցաժողովում ընդարձակ հրահանգ մշակվեց առաջիկա խաչակրաց արշավանքի համար։ Սահմանվեցին նույնիսկ առանձին ջոկատների հավաքավայրերը, և պապը խոստացավ այնտեղ գալ, որպեսզի անձամբ օրհնի նրանց։ Բայց նրան չէր վիճակված ապրել մինչև այդ օրը. նա հանկարծակի վախճանվեց, նրան կործանեց որկրամոլությունը։

## ՀՈՆՈՐԻՍ III

*Իննովկենտիոս III-ի հաջորդ Հոնորիս III-ը իր գահ բարձրանալը նշանավորեց ալբիգոյցիների հալածանքն ուժեղացնելու հրամանով։ Սուրբ Դոմինիկոսի և Սիմոն դը Մոնթորի պես մարդկանց մտրակելն ավելորդ էր։ Նրանք շարունակում էին Հարավային Ֆրանսիան ծածկել խարույկներով ու կախաղաններով։ Ի վերջո, Սիմոնը սպանվեց Թուլուզի պատերի տակ, շուտով մեռավ նաև Դոմինիկոսը, իրեն երջանիկ զգալով այն բանի համար, որ դրել է իր հաստատած ինկվիզիցիայի սուրբ տրիբունալի ամուր հիմքը։ Հոնորիսը խորապես վշտացած էր առաքելական գահի այդ երկու սյուների կորստյան առիթով, բայց, ժամանակ չկորցնելով, սկսեց նրանց փոխարինողներ փնտրել։ Դա այնքան էլ հեշտ չէր։ Միշտ չեն պատահում այնպիսի մարդիկ, որ ընդունակ են ոչնչացնելու մի ամբողջ քաղաքի բնակչություն։ Ի վերջո սուրբ Հորը հաջողվեց համոզել Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VIII-ին, և նա իր բանակն օգնության ուղարկեց Սիմոն դը Մոնթորի որդուն, որը շարունակում էր ալբիգոյցիների ջարդը։ Գործն ավարտվեց հերետիկոսների իսպառ ոչնչացմամբ։ Ում հաջողվել էր կործանումից փրկվել, փախավ Լոմբարդիա, բայց այնտեղ էլ նրանց հանգիստ չէին թողնում։ Փախստականներին ապաստան տվողներին պապը բանադրում էր։*

## ԳՐԻԳՈՐ IX

*Հոնորիսը մեռավ 1227 թվականի մարտի 22-ին, այն պահին, երբ եռանդուն ներպով նոր խաչակրաց արշավանքի էր պատրաստվում։ Նրա հաջորդը, ութսունամյա Գրիգոր IX-ը, շարունակեց սկսված գործը, չմոռանալով, սակայն, նաև Եվրոպայի հերետիկոսներին։ Բլանկա Կաստիլիացին, որը Լյուդովիկոս IX-ի անչափահաս որդու խնամակալուհին էր, ջանադրաբար օգնում էր պապին։ Շատ խարույկներ վառվեցին այն սուրբ բոցից, որ մոլեգնում էր այդ դաժան տիրակալուհու սրտում։ Իշխանատենչ Բլանկային շատ պատմաբաններ նույնիսկ մեղադրում էին, թե արագացրել է Լյուդովիկոս VIII-ի վախճանը։ Այս թագավորական*

անձնավորությունն ասում էր, թե հանգիստ կդպա միայն այն ժամանակ, երբ իմանա սուրբ եկեղեցու ուսմունքը չընդունող բոլոր անօրենների կործանման մասին։ Սակայն ամեն տեսակ հալածանքներին հակառակ, հերետիկոսների թիվն անընդհատ աճում էր. ինչքան շատ էին նրանց ջարդում, այնքան ավելի շատ հետևորդներ էին ունենում նրանք։

Օգտվելով Բլանկայի վրա ունեցած իր ազդեցությունից, պապն առանց դժվարության նրան համոզեց հերետիկոսների դեմ մեծաթիվ զորք հանել այն ժամանակ ամենադաժան մոլեռանդներից մեկի հրամանատարությամբ, որը Սիմոն դը Մոնֆորի պես ալբիգոյցիների հետ նոր արյունահեղ դատաստան տեսավ։ Նա իր գերինճրին առանց հապաղելու հանձնում էր դահիճների ձեռքը, որոնք սոսկալի խոշտանգումներից հետո բոլորին անխտիր սպանում էին։ Ոչ ոքի չէին խնայում. ո՛չ նրանց, որ փրկվելու հույսով իրենց հանձնում էին հաղթողների ձեռքը և դիմադրություն հայցում, ո՛չ էլ նրանց, որ հրաժարվում էին հերետիկոսությունից և եկեղեցուն հավատարմության երդում տալիս։

Բայց եթե ալբիգոյցիների դեմ ուղղված խաչակրաց արշավանքը սուրբ հորը հաջողություն բերեց, ապա թուրքերի դեմ սկսված արշավանքի էությունն այլ էր։

Կայսր Ֆրիդրիխ II-ը, որն իր գործունեությունն սկսել էր որպես «պապական թագավոր» (այդպես էին նրան անվանում ժամանակակիցները), դեռևս իր թագադրության ժամանակ երդվել էր խաչակրաց արշավանք կատարել։ Սակայն Իննովկենտիոս III-ի մահից հետո նա բացթեթևաց ծանակում էր իր նախկին ուսուցիչ Հոնորիս պապին և տարբեր պատրվակներով հետաձգում ճանապարհ ընկնելը։ Ի վերջո, ընդառաջելով Գրիգոր պապի պահանջներին, Ֆրիդրիխն իր բանակը նավ նստեցրեց, բայց երեք օր անց վերադարձավ, պապի առաջ արդարանալով, թե ծովաճոճումից տանջահար է եղել և չի կարողացել ճանապարհը շարունակել։ Բարեպաշտությունը ընկրկել էր ծովային հիվանդության առաջ։

Երբ Ֆրիդրիխը վերադարձավ, գալատած Գրիգորը չընդունեց նրա ինքնաարդացումը և նրան բանադրեց։ Ի պատասխան Ֆրիդրիխը մի նամակ գրեց, որի մեջ իրեն արդարացնում էր և հարձակվում հռոմեական եկեղեցու վրա։ Բացի դրանից, նա հեղյալ հայտարարեց այն հրամանագիրը, որոնք եկեղեցուն լայն լիազորություններ էին տալիս։

Իր նամակի մեջ, որ նա հրամայեց կարդալ Կապիտոլիումում, կայսրը սուրբ հոր մասին մի քանի ճշմարտություն էր ասել։ Օրինակ, ն «Իտալիայի ժողովուրդնե՛ր, Հռոմեական եկեղեցին ոչ միայն մյս-

խում է այն միջոցները, որ նա շորթում է, օգտվելով քրիստոնյաների սնոտիապաշտությունից, այլև համարձակվում է տապալել գերիշխաններին և նրանց դարձնել իր հարկատուները։ Մենք հիմա չենք խոսի շորթումների, սիմոնականության և եկեղեցական պաշտոնների վաճառքի մասին, այն ամենի մասին, որ պղծում է ամբողջ Արևմուտքը, որովհետև ամեն ոք գիտե, որ պապերը նման են անկուշտ տլորուկների։ Քահանաներն ասում են, թե եկեղեցին մեր մայրն է։ Ընդհակառակը, նա մեզ հետ վարվում է ինչպես անխիղճ խորթ մայր, կեղծավորաբար մեզ իր երեխաները համարելով. նա բոլոր վայրերը լեգատներ է ուղարկում, որոնք ջարդեր են սարքում, կողոպտում կառավարողների ու ժողովուրդների հարստությունները։ Քրիստոսի բարոյականությունը եկեղեցու ձեռքին հարստություն դիզելու զենք է հանդիսանում, որը եկեղեցականներին հնարավորություն է տալիս գործելու այնպես, ինչպես մեծ ճանապարհի ավազակները։ Ինդուլգենցիաների օգնությամբ եկեղեցին անամոթ կերպով առևտրի առարկա է դարձրել հանցագործություն կատարելու իրավունքը, նա անամոթաբար դրախտի լավագույն տեղերը բաժանում է նրանց, ովքեր իրեն ավելի շատ վճող են տալիս»։

Ի՞նչ կա որ, պատավճիռը դաժան է, բայց արդարացի։

Երբ սուրբ հայրն իմացավ այդ կոչի մասին, որն առաջ էլ տհաճ էր այն պատճառով, որ հրապարակվել էր, նրա ցասումը այլևս սահման չուներ։ Նա մի կոնդակով դիմեց եպիսկոպոսներին, հրամայելով արգելք դնել այն բոլոր քաղաքների ու գյուղերի վրա, որոնցով անցել էր կայսրը։ Իսկ Ֆրիդրիխը, չվախենալով պապի սպառնալիքներից, դիմեց դեպի Հռոմ և պապին թշնամի սենյորների աջակցությամբ մտավ քաղաք։ Ֆրիդրիխի դրդմամբ գիբելլինների կուսակցությունը Գրիգորի դեմ խռովություն բարձրացրեց։ Այն պահին, երբ պապը սուրբ Պետրոսի տաճարում պատարագ էր տալիս, մի զինված ջոկատ ներս խուժեց և նետվեց դեպի բեմ։ Պապը հազիվ կարողացավ փրկվել փախուստ տալով։ Թողնելով Հռոմը, նա հաստատվեց Պերուղայում՝ սպասելով ավելի լավ օրերի։

Մի որոշ ժամանակ անց Ֆրիդրիխ II-ը, որ ամուսնացած էր Սրուսաղեմի թագավորության գահաժառանգուհու հետ, իմացավ Դամասկոսի սուլթանի մահվան մասին և որոշեց ճանապարհ ընկնել Պաղեստինը նվաճելու. հիմա նա ծովային հիվանդությունից չէր վախենում և բարեհաջող կերպով ափ իջավ Ասորիքում։

Խարդախ Գրիգորը իսկույնևեթ օգտվեց կայսրի բացակայությունից։ Նա բանակն ուղարկեց այն դքսի դեմ, որի վրա Ֆրիդրիխը դրել էր Սի

ցիլիայի, Ապուլիայի ու Կալաբրիայի կառավարումը։ Ջարդաշահելով իր դրնվորների ստոր բնազդները, Գրիգորը նրանց արժանացրեց այնպիսի արտոնություններ, որոնք տրվում էին անհավատների դեմ մղվող պատերազմի մասնակիցներին։ Նախապես մեղքերի լրիվ թողություն ստանալով, այդ ավազակներն սկսեցին անխիղճ կերպով ոչնչացնել գրավված պրովինցիաների բնակչությանը։ Նրանց գլխավորում էր Ժան դը Բրիենը, Ֆրիդրիխի աները։ Ահա թե ինչ է գրում Ֆրիդրիխի մերձավորներից մեկն այն մասին, թե ինչպես էր կռվում պապի բանակը։

«Ձեզ ճանապարհելուց հետո Ժան դը Բրիենի օժանդակությամբ սուրբ հայրը մեծաքանակ բանակ կազմեց։ Նրա լեգատները հասան մեր հողերը, հայտարարելով, թե ձեզ կսպանեն սրով, քանի որ չեն հաջողել սպանել բանադրանքով։ Նրանց զորքերը հրդեհում էին գյուղերը, կողոպտում հողագործներին, բռնաբարում կանանց, ամայացնում դաշտերը։ Կանգ չառնելով ոչ մի բանի առաջ, չհարգելով ո՛չ տաճարները, ո՛չ գերեզմանոցները, նրանք թալանեցին սուրբ կահույքը, կողոպտեցին գերեզմանները։ Երբեք ոչ մի քահանայապետ իրեն թույլ չի տվել այդպիսի նողկալի բաներ անել։ Այժմ նրանք բոլոր նավահանգիստներում պահակներ են դրել, որպեսզի ձեզ բռնեն, եթե դուք ժամանեք փոքրաթիվ շքախմբով։ Մեզ հայտնի է նաև, որ նորին սրբազնությունը ձեր դեմ խարդավանքներ է սարքում նույնիսկ սուրբ հողում, ուր հիմա դուք գտնվում եք։ Թող աստված ձեզ պահպանի անհավատներից, բայց էլ ավելի՝ պապից ու նրա կողմնակիցներից»։

Նախազգուշացումը ճիշտ ժամանակին էր։ Գրիգորի կարգադրությամբ ասպետները եգիպտոսի սուլթան Մալեք-էլ-Քամալին հայտնեցին, թե Ֆրիդրիխը մտադրություն ունի ոտքով, գրեթե առանց շքախմբի, ուխտի գնալ Հորդանանի ափերը։ Նրանք հայտնեցին նույնիսկ ճիշտ օրը, որպեսզի սուլթանն առանց դժվարության կարողանա կայսրին բռնել կամ սպանել։ Ֆրիդրիխը դեռ չէր ստացել նախազգուշացումը և, ևևի, դավադրության զոհ կդառնար, եթե սուլթանը ցանկանար օգտվել ասպետների տված տեղեկություններից։ Սակայն եգիպտոսի սուլթանն իրերին նայում էր այլ կերպ, քան Քրիստոսի տեղապահը և ասպետների նամակը վերահասցեագրեց կայսրին։ Սուլթանի հետ անհապաղ համաձայնություն կնքելով, Ֆրիդրիխը մեկնեց Իտալիա։

Նրա ժամանումն անմիջապես փոխեց գործերի վիճակը։ Պապի զորքերը պարտություն կրեցին և, քանի որ զրկվեցին կողոպտելու հնարավորություն, սկսեցին դեսուդեն ցրվել։

Այնժամ պապը, չցանկանալով պայքարը դադարեցնել, հրամայեց

վաճառել դեռ չհնձած ամբողջ բերքը, աճուրդի հանել եկեղեցու կահ-կույքը և պաշտամունքի առարկաները։ Հավաքած փողով նա կարողացավ նոր բանակ հանդերձել, բայց սա էլ չախչախվեց։ Միակ զենքը մնաց բանադրանքը։

Բայց կայսրը, չվախենալով այդ տեսակ արկերից, շարունակեց իր հաղթարշավը դեպի Հռոմ։ Նա արդեն քաղաքի պարիսպների տակ էր, երբ անսպասելի դեպք պատահեց։ Ամպրոպից հետո Տիբրոսն այնպես վարարեց, որ նրա ջրերը ծածկեցին քաղաքը։ Իսկ երբ գնաց իր հունի մեջ մտավ, քաղաքում աղտեղություններից գարշահոտություն տիրեց։ Համաճարակ բռնկվեց։ Հռոմի հոգևորականությունն անմիջապես օգտվեց դրանից և սկսեց քարոզել, թե աստված հռոմեացիներին պատժել է նրա համար, որ սուրբ հորից երես են դարձրել։ Եկեղեցականների քարոզները պատշաճ ազդեցություն ունեցան, և հռոմեացիները Գրիգորի մոտ պատվիրակություն ուղարկեցին՝ խնդրելով, որ նա Հռոմ վերադառնա և մեղմացնի աստծո զայրույթը։

Ֆրիդրիխը չհամարձակվեց դուրս գալ թշնամաբար տրամադրված սնոտիապաշտ բնակչության դեմ և պապին հաշտություն առաջարկեց։

Փոքր-ինչ տատանվելուց հետո Գրիգորը որոշեց կայսրի հետ բանակցություններ սկսել։ Երկու նոր դաշնակիցները միասին Հռոմ եկան և, իրենց հաշտվելու պատվին բաղմաթիվ շքեր դատարկելով, երկվեցին հավիտենապես բարեկամ լինել։ Հավիտենականությունը, սակայն, շատ կարճատև եղավ։

Գրիգոր IX-ը, Ֆրիդրիխի հետ սերտորեն համբույր փոխանակելով, կամակոր կայսեր դեմ պայքարելու նոր պլան էր խորհում։ Վերսկսելով իր բանսարկությունները, նա կարողացավ Ֆրիդրիխի դեմ հանել նրա որդի Հենրիխին։ Նախազգուշացան բոլոր միջոցները ձեռնարկելով, որպեսզի Ֆրիդրիխը չլմանա իր ուխտադրժությունը, սուրբ Հայրը ըսկըսեց ձևացնել, թե խորապես վշտացած է Հենրիխի անարժան վարմունքի համար։

Ֆրիդրիխն այն մարդկանցից չէր, որոնց հարիւր է հեշտ խաբել։ Նա շատ լավ կռահել էր պապի նկրտումի ամբ և պատճառը նրանից վրեժ լուծելու։ Երբ մի որոշ ժամանակ անց Յոան դեմ խռովություններ բռնկվեցին և Գրիգորը պիտեց օգնության, Ֆրիդրիխը պատասխանեց. «Ես ոչ մի կերպ չեմ կարող։ Ձեզ օգնության գալ, այլև չեմ կարողանում թաքցնել, որ ինձ ինչպես ուրախություն պատճառեց ձեր նամակը»։

Սառնալով Ֆրիդրիխի պատասխանը, Գրիգորը երկվեց վրեժ առ-

նել միապետից, որը կարողացել էր նրա գաղտնիքները բանալ։ Ֆրիդրիխի ապստամբ որդուն նա մի խոշոր գումար ու զորք ուղարկեց։

Չհամարձակվելով շարունակել պայքարը գերակշիռ ուժերի դեմ, Ֆրիդրիխը Գրիգորին հաշտություն առաջարկեց։ Նրա պայմաններն այնքան օգտավետ էին, որ ծեր սրիկան, առանց խղճի խայթ զգալու բախտի քմահաճույքին թողնելով փառասեր արքայորդուն, որին հենց ինքն էր ապստամբության դրդել, ընդունեց կայսեր առաջարկը և իր զորքը ետ կանչեց։

Հենրիխը ստիպված էր զենքը ցած դնել։ Նա խիստ կալանքի տակ ապրեց մի քանի տարի և մեռավ 1242 թվականին Ապուլիայում։

Վրա հասավ համեմատաբար հանգիստ մի կարճ ժամանակաշրջան։ Ֆրիդրիխը, դառը փորձից դաս առած, միշտ զգաստ լինելով, հետևում էր պապի գաղտնի մեքենայություններին։ Շուտով նա իմաչում, որ Գրիգորը ձեռնարկել է անդրկուլիսյան մի շարք գործարքներ, որոնք պետք է հանգեցնեին կամ կայսրի տապալմանը, կամ սպանությանը։

Ֆրիդրիխն արագ կերպով կանխեց սպառնացող վտանգը։ Նա մի մեծ բանակ հավաքեց և ուղարկեց Սարդինիա։ Սուրբ Հայրն արդեն վաղուց էր հավակնություններ ներկայացնում այդ կղզու նկատմամբ, և Ֆրիդրիխը գիտեր, որ, վավճելով Սարդինիան, պապին շատ ուժեղ հարված կհասցնի։

Գազազած Գրիգորը կայսեր վրա հարձակվեց նոր, հանգամանորեն պատճառաբանված բանադրանքով, որի եզրափակիչ մասն անվիճելի հետաքրքրություն է ներկայացնում.

«Մենք բանադրում ենք Ֆրիդրիխին, որովհետև նա մեզ հակաքրիստոս ու խավարի իշխան է անվանում, որովհետև նա մեր լեգատներին խանգարել է հետապնդել ալբիգոյցիներին, որովհետև նա գրավել է եկեղեցու հողերը, մասնավորապես Սարդինիան, որովհետև նա հրաժարվել է սուրբ երկիր վերադառնալ։ Մենք նրա բոլոր հպատակներին աչալուրջ ենք հայտարարում նրան տված երդումից և մահվան սպառնալիքով արգելում ենք նրան ենթարկվել մինչև այն օրը, երբ նա կգա խնդրելու մեր գթությունը»։

Գրիգորն իրեն մխիթարում էր այն հույսով, որ բանադրանքը կվախեցնի Ֆրիդրիխին և նրան կստիպի զղջալ ու ներում խնդրել։ Հույսը չարդարացավ։ Կայսրը, նույնիսկ հարկ չհամարելով պատասխանել սուրբ Հորը, հրապարակեց մի մանիֆեստ, որը զարմացնում է իր հաֆարձակ տոնով ու անկախ ոգով.

«Իմացե՛ք ուրեմն, դյուրահավա՛տ ժողովուրդներ,— գրում էր

Ֆրիդրիխը,— որ եկել է ձեր աչքերը բացելու ժամանակն այն կրոնների նկատմամբ, որ ձեր վկին են փաթաթել երեք խաբեբաներ՝ Մովսեսը, Քրիստոսը և Մուհամմեդը։ Միթե՞ բանականությունը ձեզ չի հուշում, որ միայն խաբելու մեջ շահագրգռված անբանները կարող են պնդել, թե իբր աստծուն լույս աշխարհ է բերել կույսը։ Մինչև ե՞րբ եք դուք հավատալու պապերի, այդ արյունապիղծների, գողերի ու մարդասպանների ուժին։ Մի՛ վախեցեք նրանց խղճուկ ու ծիծաղելի սպառնալիքներից, որոնց ես կարող եմ զենքով պատասխանել»։

Դժբախտաբար, նման ձայներ այն ժամանակ հազվադեպ էին հընչում և արձագանք չէին գտնում. ամենաղոր եկեղեցին կարող էր շարունակել իր ղազրելի գործերը։

Ֆրիդրիխի մանիֆեստի հրապարակումից հետո պապը կարծում էր, թե կայսրը կշարժվի Հռոմի վրա, բայց նա այս անգամ էլ սխալվեց։

Կայսրը որոշել էր պապին հաղթել այլ կերպ։ Սիկիլիան այդ ժամանակ լցված էր ամեն տեսակ վանականներով, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկնում սուրբ Ֆրանցիսկոսի ռազմիկները։ Այդ ջանադիր սպասարկուները սրբազան պատերազմ էին քարոզում և ժողովրդին գրգռում կայսեր դեմ։ Ֆրիդրիխը ոչ միայն սկսեց Սիկիլիայից դուրս վռնդել վանականներին, այլև պահանջեց, որ եկեղեցականներն իրեն վճարեն մի յուրօրինակ տասանորդ։ Եկեղեցականները, որ սովոր էին իրենք տասանորդ ստանալ, մի առանձին բավականություն չզգացին կայսրի պահանջից։ Սակայն ստիպված էին վճարել։

Ինչ վերաբերում է պապին, ապա նրա ցասումն անսահման էր։ Բայց դրանով էլ չէին վերջանում նրան վիճակված ծանր փորձությունները։

Առաջներում Ֆրիդրիխի տիրույթներից մշտապես Հռոմ էին գալիս անհամար ուխտավորներ, որոնք ձգտում էին ընկնել պապի մոտ և համբուրել նրա կոշիկը։ Նրանք պապին հսկայական եկամուտ էին բերում։

Ֆրիդրիխը վճռականորեն վերջ դրեց իր հպատակների ուխտագնացությանը դեպի Հռոմ, բնակիչներին արգելելով առանց հատուկ թույլտվության գնալ հավերժական քաղաքը։

Գրիգորին անհրաժեշտ էր կայսեր հասցրած հարվածները դիմագրավելու միջոց գտնել։ Հարկավոր էր զորք, բայց գլխավորապես՝ փող։ Շուտով Գրիգորը ելքը գտավ. նա սկսեց իր մոտ պահել խաչակիրների ջոկատները, որոնք սովորաբար անցնում էին Հռոմով, որպեսզի նախքան անհավատների դեմ կռվելու գնալը պապից օրհնություն ու մեղքերի

թողություն ստանան։ Քրիստոսի տեղապահն առանց երկար ձևակերպությունների խլեց թաչակիրների դրամական միջոցները։

Եվ այնուամենայնիվ, դա էլ բավական չէր։ Պապին փրկեց սուրբ աթոռի սիրեցյալ դուստրը՝ Ֆրանսիան։

Այնտեղ այդ ժամանակ թագավորում էր Լյուդովիկոս IX-ը։ Այդ միապետը, որին շուտով եկեղեցին սուրբ հռչակեց, իհարկե, չէր կարող չպաշտպանել քրիստոնեական աշխարհի տիրակալին։ Գրիգորի լեգատները Լյուդովիկոս IX-ից թույլտվություն ստացան՝ տնօրինելու թագավորության եկամուտների մեկ քսաներորդ մասը։ Երբ նրանք, իրենց առաքելությունը կատարելով, Հռոմ վերադարձան, պապն այնպես խանդավառվեց, որ անհրաժեշտ համարեց սուրբ Լյուդովիկոսին հայտնել իր երախտագիտությունը։

Իսկ ի՞նչ արեց նա ինքը։ Նա թագավորի եղբայր Ռոբերտ Արտուային նվիրաբերեց... կայսերական թագը։ Թագավորը, սակայն, հեռարավոր չհամարեց ընդունել այդ պարգևը։ Լյուդովիկոսը չէր կարող հաշվի չառնել այն շահերը, որ Ֆրանսիային կապում էին բանագրված կայսեր հետ, միաժամանակ նա գիտեր Գրիգոր IX-ի իսկական արժեքը։

Սակայն Ֆրանսիայում հավաքած փողով Գրիգորը մի մեծ բանակ ստեղծեց, և շուտով Իտալիան զինված պայքարի թատերաբեմ դարձավ։ Բուն Հռոմում բնակիչները, որոնք բաժանվել էին երկու խմբի՝ գվելֆների՝ պապի կողմնակիցների, և գիբելլինների՝ կայսեր կողմնակիցների, իրար հետ կենաց ու մահու կռիվ էին մղում։ Երբ Ֆրիդրիխը, մի շարք հաղթանակներ տանելով, սկսեց պաշարել հավերժական քաղաքը, Գրիգորը հանկարծակի մեռավ։

Սույն երջանիկ իրադարձությունը տեղի ունեցավ 1241 թվականի օգոստոսի 20-ին։

## ԿԵԼԵՍՏԻՆՈՍ IV

Այդ ժամանակ Հռոմում միայն տասը կարդինալ կար։ Մնացածները կայսեր գերության մեջ էին։ Երկարատև պայքարից հետո սուրբ աթոռին բազմեց կարդինալ Ջոֆրեդոն՝ Կելեստինոս IV անունով։ Նոր պապը, թերևս, կարգին մարդ էր. նա հատուկ մտադրություն ուներ պրմատախիլ անել հոգևորականության արատները, և դա էլ նրան ֆոր-

ծանեց։ Պրելատները որոշեցին մեջտեղից վերացնել իրենց համար ոչ ցանկալի պապին։ Հանդես չգալով բացահայտորեն, նրանք գործի դրին եկեղեցականների փորձված միջոցը, և իր ընտրվելուց երկու շաբաթ անց Կելեստինոսը մեռավ թույնից։

Դրանից հետո պապական աթոռը մեկ տարուց ավելի թափուր մնաց։ Հռոմեացիները համառորեն պահանջում էին քննել Կելեստինոսի մահվան հանգամանքները։ Երբ պարզվեց, որ նրա մահվան մեջ մեղավոր են կարդինալներն ու արքեպիսկոպոսները, սարսափած իշխանությունները որոշեցին գործը կարճել։ Հանցագործության շատ մեղսակիցներ փախան Հռոմից, և Լաթերանում մնաց ընդամենը վեց կարդինալ։ Ինչպես հայտնի է, դեռևս Աղեքսանդր III-ի օրոք որոշվել էր, որ քահանայապետը պետք է ընտրվի միայն կարդինալների միջից, ընդ որում ձայների երկու երրորդով։ Տվյալ դեպքում վիճակը չափազանց ծանր էր. բոլոր վեց կարդինալներն էլ ուզում էին պապ դառնալ։ Այնժամ կայսրը սաստեց նրանց, թե բոլորին էլ կկախի, եթե իրար հետ համաձայնության չգան։

Բայց այդ ամենը արդյունք չտվեց, և Ֆրիդրիխը պաշարեց հավերժական քաղաքը։ Պաշարումը դժվարին էր, Հռոմում սով սկսվեց։ Հռոմեացիները կայսերական ճամբար ուղարկեցին իրենց պատվիրակներին, որոնք ասացին, թե անարդարացի կլինի սուրբ կոլեդիայի արարքների համար պատժել ամբողջ բնակչությանը, և խոստացան քաղաքից արտաքսել չարաբաստիկ վեցյակին, եթե միայն պաշարումն անմիջապես վերացվի։

Այն ժամանակ Ֆրիդրիխը հարձակվեց գվելֆների կուսակցության վրա, տակնուվրա արեց կարդինալների կալվածքները և չհանգստացավ, մինչև որ նրանք համաձայնության չեկան պապի թեկնածության հարցում։

## ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ IV

1243 թվականի հունիսին սուրբ կոլեդիան վերջապես պապ ընտրեց, որն Իննովկենտիոս IV անունն ընդունեց։

Կայսրը, որ Իննովկենտիոսին իր հին բարեկամն էր համարում, հրամայեց ամեն տեղ գոհաբանական մաղթանքներ կատարել և հույս հայտնեց, թե նոր պապն իրեն կօգնի վերականգնելու խաղաղությունը։

Սակայն նոր պապը սուրբ աթոռին բազմելուն պես սկսեց կայսրին ատել և մինչև կյանքի վերջը նրան թշնամի մնաց։

Պառակտումը տեղի ունեցավ գահակալեցումից անմիջապես հետո։ Իննովկենտիոսը Ֆրիդրիխին առաջարկեց բանակցություններ համար պատվիրակներ նշանակել, տալով այն մարդկանց թեկնածությունը, որ նվիրված էին Հռոմի կուրիային։ Բնական է, որ պատվիրակներն ընդունեցին պապի թելադրած բոլոր պայմանները։ Նրանց ստորագրած պայմանագիրը պարունակում էր, ի միջի այլոց, հետևյալ կետերը. «Կայսրը պարտավորվում է՝ վերադարձնել սուրբ աթոռից խլած հողերը, ինչպես նաև հրապարակային խոստովանությամբ ընդունել, որ սատանայի սադրանքով է հրաժարվել Գրիգոր IX-ի պահանջներին ենթարկվելու։ Բացի դրանից, կայսրը պարտավոր է հայտարարել, որ միայն քահանայապետը, եթե նույնիսկ մեծագույն հանցագործ լինի, գերագույն իշխանություն ունի բոլոր քրիստոնյաների վրա, անկախ նրանց դասից...»։

Ֆրիդրիխը կատաղեց, որ պապին հաջողվել է իրեն խաբել, և Իննովկենտիոսին նախազգուշացրեց, թե շուտով անձամբ կպատասխանի նրան։ Հասկանալով, որ Ֆրիդրիխը կկատարի իր սպառնալիքը, Իննովկենտիոսն ավելի խոհեմ համարեց այդ պահին չսպասել. նա Հռոմից գաղտնի փախավ և մի քանի միապետներից օգնություն խնդրեց։ Բայց ոչ մի տեղ նա չկարողացավ պաշտպանություն գտնել։ Ի վերջո Իննովկենտիոսին հաջողվեց ապաստան գտնել Լիոնում, որն անվանապես պատկանում էր կայսրությանը, իսկ փաստորեն միանգամայն անկախ էր։

Շուտով պապը Լիոնում եկեղեցաժողով գումարեց։ Առաջին իսկ նիստում Իննովկենտիոսը կարդաց կայսրին եկեղեցուց վտարելու դատավճիռը, նրան մեղադրելով երդմնազանցության, աղանդավորության ու սրբապղծության մեջ, և կայսերական գահը թափուր հայտարարեց։ Ֆրիդրիխի ներկայացուցիչը որոշումն անօրինական համարեց, քանի որ եկեղեցաժողովը չէր սպասել, որ Ֆրիդրիխը ներկայանար, և, բացի դրանից, Իննովկենտիոս IV-ը հանդես էր եկել դատավորի դերում, մինչդեռ նա շահագրգռված կողմ էր։ Սակայն մյուս օրը քահանայապետը Ֆերարայի եպիսկոպոսին ուղարկեց Գերմանիա՝ Թյուրինգիայի ու Հեսենի լանդգրաֆ Հենրիխին Հռոմի կայսր հաստատելու հրամանով։ Միաժամանակ նա Մայնցի արքեպիսկոպոսին լիազորեց Ֆրիդրիխի դեմ խաչակրաց արշավանք հայտարարել։

Գերմանիայի շատ իշխաններ ընդառաջեցին պապի հորդորներին։ Ռազմական գործատներն սկսեցին ուռնատակ տալ ու ավերել կայսրու-

թյունը։ Պատերազմը հատկապես կատաղի բնույթ ստացավ Իտալիայում. դավադրությունները, ապստամբությունները, պաշարումները, ճակատամարտերը, հրդեհները, բռնություններն ու սպանությունները քնակչությանը սոսկալի աղետներ պատճառեցին։

Մի ամբողջ տարի պապի մեղքով թափվում էր քրիստոնյաների արյունը...

Ռազմական միջոցներով ոչ մի արդյունքի չհասնելով, Իննովկենտիոս IV-ը Ֆրիդրիխի դեմ դավադրություն կազմակերպեց։

Նա Ֆրիդրիխի անձնական բժիշկ Պիեր դը Վինին համոզեց կայսրին հանձնարարել նոր իտալացի բժիշկ, որը համաձայնվել էր թունավորել իր պացիենտին։

Շուտով դավադիրներին պատեհ առիթ ներկայացավ։ Կայսրը, անդադար պատերազմներից հոգնած, իրեն տկար զգաց։ Պիեր դը Վինը առաջարկեց կոնսուլիումի հրավիրել մի բժշկի ևս։ Հիվանդը համաձայնվեց։ Սակայն հայտնի չէ՝ բժիշկը վստահություն չէր ներշնչում, ըե՞ կայսրին տեղեկացրել էին դավադրության մասին, համենայն դեպս, Ֆրիդրիխը պահանջեց, որ նախ բժիշկը ինքը փորձի միքստուրան։ Չհամարձակվելով հրաժարվել, թունավորողը, իբր պատահաբար, վայր դցեց թասը։ Վերջնականապես համոզվելով իր կասկածներում, Ֆրիդրիխը հրամայեց ամանի մեջ մնացած հեղուկը տալ երեք մահապարտ հանցագործների։ Ընդունելով դեղը, նրանք մի քանի վայրկյան անց մեռան։

Պիեր դը Վինը և իտալացի բժիշկը մահապատժի ենթարկվեցին։ Ինչ վերաբերում է գլխավոր հանցագործին, ապա նա անպատիժ մնաց։ Իր մահից (1250 թվականին) ոչ շատ առաջ Ֆրիդրիխը փորձեց հաշտվել Իննովկենտիոսի հետ, որպեսզի թագն ապահովի իր որդի Կոնրադի համար։ Բայց Իննովկենտիոսը ոչինչ չցանկացավ լսել «օձի ծնունդի» մասին և հրաժարվեց բանակցություններ վարել։

Ֆրիդրիխի մահվան լուրը Իննովկենտիոսին հասավ Լիոնում։ Պապը անմիջապես փորձեց կայսերական թագով պսակել Վիլհելմ Հոլանդացուն։ Սակայն Կոնրադը՝ վախճանված կայսրի որդին, գլխավորելով բանակը, ջախջախեց իր մրցակցին։ Պապը մի այլ թեկնածություն առաջարկեց, բայց արդյունքը նույնը եղավ։

Իննովկենտիոսի վիճակը դարձավ կրիտիկական։ Նա բոլոր փողերը ծախսել էր դեպի սուրբ երկիր արշավանք կազմակերպելու համար։ Նորից նույն գաղափարը մեջտեղ հանելը հարմար չէր, համենայն դեպս, մոտ ժամանակներում։ Եվ Իննովկենտիոսը նոր հնարք գտավ. նա

խաչակրաց արշավանքի կոչ արեց... ընդդեմ կայսրի՝ Նրա լեգատները բարձրաձայն հայտարարում էին, թե ով կմասնակցի արշավանքին կամ այն կպաշտպանի իր միջոցներով, մեղքերի թողություն կստանա, ընդ որում ավելի լայն չափով, քան դա տրվել էր անհավատների դեմ մղված արշավանքի մասնակիցներին. այն ժամանակ, երբ պաղեստինյան խաչակիրները թողություն էին ստանում միայն իրենց սեփական մեղքերի համար՝ կայսրի դեմ ուղղված խաչակրաց արշավանքի մասնակիցներին թողություն էր տրվում ոչ միայն նրանց, այլև նրանց որդիների ու ընտանիքի մյուս անդամների մեղքերի համար։

Սակայն քանի որ Անգլիան ու Ֆրանսիան մերժեցին պապի պլանը, ապա նա ստիպված բավարարվեց նրանով, ինչ տվեց Իտալիան։ Իննովկենտիոսը շատ փող չհավաքեց, բայց նրա կոչին արձագանքեցին շատ մոլեռանդներ, որը նրան հնարավորություն տվեց բանակ կազմակերպել։

Կոնրադը ընկավ դժվար վիճակի մեջ։ Իտալիայում նրան պաշտպանում էր միայն Ֆրիդրիխի ապօրինի որդի Մանֆրեդը՝ Թերակղզու հարավային մասի կայսրության կուսակալը։ Նրա հետ միանալով, Կոնրադը գրավեց Նեապոլը։ Այնժամ Իննովկենտիոսը կայսրի դեմ մահափորձ կազմակերպեց։ Նրան հաջողվեց գժտեցնել եղբայրներին, և Մանֆրեդը ներգրավվեց դավադրության մեջ։ Այս անգամ պապի ջանքերը հաջողությամբ պսակվեցին։ 1254 թվականի մայիսին Կոնրադը թույնից մահացավ։ Սուրբ Հայրը դափնիների վրա նիրհելու հնարավորություն ստացավ. Կոնրադի որդին, որ երեք տարեկան էր, չէր կարող լուրջ հակառակորդ լինել։

Այս սխաթագործությունից շատ չանցած, Իննովկենտիոս IV-ը իր վրեժխնդիր հոգին ավանդեց աստծուն, որին նա տասնմեկ տարի այնքան արժանավորապես ներկայացնում էր երկրի վրա։

## ԱՂԵՔՍԱՆԴՐ IV

Իննովկենտիոսի հաջորդ Աղեքսանդր IV-ը լիովին արժանի էր իր նախորդին։ Դեռևս 600 տարի առաջ, մինչև Պիոս IX-ը, որը հռչակեց պապերի անսխալականության սկզբունքը, քահանայապետերը մի րոպե իսկ չէին կասկածում, որ իրենք անսխալական են, ընդ որում այդ

*սկզբունքը տարածում էին անձնապես միայն իրենց վրա։ Աղեքսանդր IV-ը, իր մեծաթիվ նախորդների պես, առանց վարանելու չեղյալ հայտարարեց անսխալական Իննովկենտիոս IV-ի վճիռներից մի քանիսը։ Նրա կոնդակում ասված էր. «Ոչ մի անսովոր բան չկա, որ պապը չեղյալ է հայտարարում առաքելական սուրբ աթոռի վրա իրեն նախորդած պապերի որոշումները, մանավանդ եթե այդ որոշումները մոլորություններից են բխել կամ թելադրված են ստոր դիտավորություններով»։*

*Աղեքսանդր IV-ը հռչակվեց իր բռնակալությամբ և հակառակորդների հետ տեսած անխիղճ հաշվեհարդարով։ Բայց մի անգամ, երբ նա ուզում էր զնդան նետել Հռոմի համայնքի գլխավորին, որպեսզի նրա տեղը նստեցնի իր սիրեցյալին, հռոմեացիների համբերությունը հատավ, և նրանք ապստամբեցին բռնապետի դեմ։ Կալանավորն ազատ արձակվեց և հանդիսավորությամբ բերվեց Կապիտոլիում։ Երբ ժողովրդական խանդավառությունը փոքր-ինչ սառեց, Աղեքսանդրը սենատորին վտարեց եկեղեցուց։ Բայց վերջինս առանց վախենալու զգուշացրեց, թե սուրբ Հոր դատաստանը կտեսնի, եթե նա իր դավերը չդադարեցնի։ Աղեքսանդրը վախեցավ, լքեց Հռոմը և իր աթոռանիստը տեղափոխեց Վիտերբո, որտեղ և մեռավ 1261 թվականին։*

*Աղեքսանդր IV-ի աթոռակալության ժամանակ երևան եկավ մոլեռանդ մարդկանց մի արտասովոր աղանդ, որը հայտնի է ֆլագելանտներ (ինքնախարազանողներ) անունով։ Յուրատեսակ կրոնական հիստերիայով բռնված, տարբեր տարիքի տղամարդիկ ու կանայք (երբեմն նույնիսկ երեխաներ) մերկացած վազում էին քաղաքների ու գյուղերի փողոցներով և իրենք իրենց մտրակում այնքան ժամանակ, քանի դեռ մտրակը չէր ընկնում ձեռքներից։*

*Այս աղանդը շատ շուտ ժողովրդականություն ձեռք բերեց։ Որոշ պատմաբաններ պնդում են, թե հաճախ մոլեռանդների ամբոխը հասնում էր տասը հազար մարդու, որոնք բոլոր ազնիվ մարդկանց աչքի առաջ միահամուռ կատարում էին վերոհիշյալ բարեպաշտական վարժությունը։ Ֆլագելանտների թափորներ կարելի էր տեսնել և՛ գիշերը, և՛ ցերեկը. ճմռան ամենասաստիկ ցրտերն անգամ չէին սթափեցնում այդ խելառներին, որ Ադամի ու Եվայի զգեստներով վազվզում էին փողոցներում։*

Սկզբում հոգևորականությունը պաշտպանում էր աղանդը։ Այդ ծեսերին մասնակցող քահանաներն ու եկեղեցու բարձրաստիճանավորները քայլում էին թափորի առջևից. ճիշտ է (սակավ բացառությամբ), նրանք իրենց հագուստները չէին հանում և ինքնախարազանման այնքան էլ մեծ եռանդ չէին դրսևորում։ Շատ շուտով, սակայն, ֆլագելանտները զրկվեցին հոգևորականության հովանավորությունից, քանի որ շեղվեցին դավանաբանության հիմնական դրույթներից և փորձեցին որոշ հին դոգմաներ փոխարինել նորերով։ Նրանք, օրինակ, մտցրին փոխադարձ խոստովանության սովորությունը և, չնայած որ աշխարհականներ էին, միմյանց թողություն էին տալիս։

Եվ ահա հենց այդ ժամանակ նրանք համոզվեցին, որ եկեղեցին, որը հանդուրժում է հավատացյալների բոլոր արատներն ու հանցանքները, չի հանդուրժում ոչ մի ոտնձգություն իր դոգմաների նկատմամբ։

Երբ Աղեքսանդր IV-ը մեռավ, Վիտերբոյում կար ընդամենը ութ զառամյալ կարդինալ։ Շատ բարդ իրավիճակ ստեղծվեց։ Նրանցից ոչ մեկն ի վիճակի չէր կառավարելու Հռոմի կուրիան։ Եվ կարդինալները ստիպված եղան խախտել Աղեքսանդր III-ի օրենքը. նրանք պապ հրոչակեցին Երուսաղեմի պատրիարքին, որը գտնվում էր Վիտերբոյում։ Նոր պապն ստացավ Ուրբանոս IV անունը։ Սուրբ աթոռի վրա նա երկար չնստեց։ Նա հարկադրված էր անընդմեջ պայքար մղել թշնամիների դեմ, որոնք նրան ստիպեցին փախչել Վիտերբոյից։ Այդ պապը մեռավ 1264 թվականին։

Նրանից հետո մինչև 1268 թվականը գահակալեց Կղեմես IV-ը, իսկ այնուհետև երեք տարի Հռոմի գահը թափուր մնաց։ Սուրբ կոլեգիայի մեջ մտնող կարդինալներից յուրաքանչյուրը ուզում էր պապ լինել։ Ի վերջո երկարատև երկպառակություններից հետո պապ դարձավ կարդինալներից մեկը, որն ընդունեց Գրիգոր X անունը։

Նրա գումարած եկեղեցաժողովը զբաղվեց կուրիայի գործերով։ Այդ դարաշրջանի հոգևորականության բարքերի մասին գաղափար կազմելու համար բավական է կարդալ այն ուղերձը, որով սուրբ հայրը եկեղեցաժողովը բացվելուց քիչ առաջ դիմել էր Լիեժի եպիսկոպոսին։

«Մեզ հայտնել են,— գրում էր պապը,— որ դուք որպես կեսնակցուհի ձեզ մոտ պահել եք սուրբ Բենեդիկտոսի ուխտին պատկա-

նոյ մի միանձնուհու և պարծեցել եք, թե իբր տասնչորս ամսվա ընթացքում քառասուն տարբեր սիրուհիներից ունեցել եք քսաներկու երեխա։ Մեզ հայտնի է, որ ձեր եպիսկոպոսական կալվածքներից մեկում դուք միանձնուհիների հարեմ եք պահում և սատանայի այդ դուստրերի հետ անառակության տրվում։ Մեզ հայտնել են, որ մի միանձնուհու մահից հետո դուք խախտել եք ընտրության կանոնակարգը, որպեսզի վախճանվածի տեղը դնեք ձեր աղջիկներից մեկին, որը միաժամանակ ձեր սիրուհին է։ Վերջապես, լրբավարվելով եկեղեցիներն ու վանքերը կողոպտելով, դուք հանդգնել եք վաճառել եկեղեցական պաշտոնները։ Դուք հովանավորում եք գողերին, դուք երբեք բեմում չեք երևացել զինեսթափ վիճակում»։

Պետք է ասել, որ այն ժամանակվա եկեղեցականների մեծ մասը բնավ չէր զիջում Լիեժի եպիսկոպոսին։ Այդ պատճառով էլ պրելատները խիստ անհանգստացան, իմանալով Գրիգոր X-ի հայացքները։ Սակայն նրանք շուտով հանգստացան. ոչ մի բարեփոխում չկատարելով, սուրբ հայրը սահմանափակվեց միայն նրանով, որ եպիսկոպոսներից պահանջեց նրանց եկամտի մեկ տասներորդը։

Եկեղեցաժողովում հրապարակվեց Գրիգոր X-ի դեկրետը պապի ընտրության արարողության մասին։ Այդ դեկրետի մեջ ի միջի այլոց ասված է.

«Պապի մահից հետո առաքելական արքունիքում ներկա գտնվող կարդինալները պետք է տասն օր սպասեն իրենց բացակա կոլեգաներին։ Այդ ժամկետը լրանալուց հետո նրանք պարտավոր են հավաքվել պապական պալատում, իրենց մոտ թողնելով արական սեռի միայն մեկ սպասավոր։ Մենք նրանց բոլորին պարտավորեցնում ենք անբացակա կերպով գտնվել միջնորմ չունեցող մեծ դահլիճում, նույնիսկ բնական պահանջները բավարարելու ժամանակ։ Եթե երեք օրվա քննարկումից հետո ընտրություններն, այնուամենայնիվ, չավարտվեն, ապա կոնկլավի մասնակիցներին հարկավոր է տալ միայն մի տեսակ կերակուր, ընդ որում՝ մի ափսե ճաշին և մի ափսե ընթրիքին։ Եթե դրանից հետո էլ հինգ օրում պապական գահի թեկնածու չընտրվի, ապա նրանց պետք է տալ քիչ քանակությամբ հաց, մի քիչ գինի և ջուր, քանի դեռ, ի վերջո, նոր քահանայապետ չի ընտրվի։ Ընտրությունների ամբողջ ընթացքում կարդինալները կորցնում են այն եկամտի ու բենեֆիցիայի բոլոր իրավունքները, որ ստանում են եկեղեցուց կամ առաքելական գանձարանից»։

Հավանական է, որ Գրիգոր X-ի հաջորդ Ինոսենտիոս V-ը գահի

վրա հայտնվեց Գրիգոր X-ի դեկրետի հիման վրա կատարված ընտրությունների ժամանակ ցուցաբերված շտապողականության հետևանքով։ Իննովկենտիոսը հասարակ մարդ էր և պապ դարձավ պարզապես թյուրիմացաբար։ Նա ուզում էր լրջորեն փոխել հռոմեական եկեղեցու քաղաքականությունը։ Սուրբ կոլեգիայի անդամները շատ շուտ հասկացան, թե ինչն ինչից է, և նրանից ազատվեցին թույնի միջոցով։

Նրա մահից հետո կարդինալները որոշեցին շրջահայաց կերպով գործել։ Բայց երբ ութ օրն անցավ, և նրանք ստիպված էին հացով ու ջրով սնվել, շտապեցին և պապ ընտրեցին Ադրիանոս V-ին։ Սակայն այս անգամ էլ վրիպեցին։ Հարկ եղավ նորից դիմել փորձված միջոցին. կարդինալները պապի ճաշի մեջ արագ ազդող թույն լցրեցին, որից հետո հայտարարեցին, թե սուրբ հայրը վախճանվել է ստամոքսի անհասկանալի հիվանդությունից։

XIII դարի վերջը նշանավորվեց հերետիկոսների ու հրեաների դեմ ուղղված դաժան հալածանքներով։ Հրեաների վիճակը ծանր էր հատկապես Գերմանիայում ու Ֆրանսիայում։ Հրեաների դեմ հրահրելով ժողովրդին, եկեղեցականները նրանց մեղադրում էին ամենահրեշավոր հանցանքների մեջ, նրանց մասին մտացածին բաներ էին հորինում, ներկայացնում որպես սատանայի գործակալներ։ Այդ հերյուրանքները բորբոքում էին տգետ ու մոլեռանդ մարդկանց երևակայությունը։

Պապ Նիկողայոս IV-ի օրոք հերետիկոսների հալածանքն ավելի ուժեղացավ։ Սուրբ հայրն ընդլայնեց դոմինիկյանների արտոնությունները, նրանց հնարավորություն տալով իրենց ուզած ձևով մեկնաբանելու եկեղեցական օրենքները։ Դոմինիկյանները պարտավոր էին հրով ու շիկացած երկաթով արմատախիլ անել աղանդավորությունը, բռնագրավել ունեցվածքը, պատժել ամեն մեկին, ում կասկածում էին հերետիկոսներին համակրելու մեջ։ Պապը թույլ տվեց ավերել հերետիկոսների տները, մինչև անգամ դրանց մոտիկ գտնվող այն շենքերը, որ նույնպես պիղծ էին համարվում։ Սուրբ հայրը հատուկ կոնդակով սենյորներին և քաղաքային իշխանություններին պարտավորեցրեց պաշտպանել դոմինիկյաններին և ամեն ինչում նրանց ենթարկվել։ Պատահական չէ, որ պապն այդքան համակրում էր նրանց միաբանությանը։ Նա ինքը նույնքան վրիժառու էր և դաժան, որքան դոմինիկ-

յանները։ Թշնամիների մահն անգամ չէր հագեցնում նրա վրեժի ծարավը։ Օրինակ, նրան մերկացրած երկու վանականների մահից հետո սուրբ հայրը հրամայեց գերեզմանից հանել նրանց դիակները, այրել խարույկի վրա և մոխիրը քամուն տալ։

Ահա ինչ է գրում Նիկողայոս IV-ի ու նրա շրջապատի մասին Տիրոլի կոմսը. «Եթե դուք ուզենաք եպիսկոպոսներին տալ ձեր կապան, նրանք կխլեն ձեր վերարկուն էլ։ Մարդ ինչպե՞ս կարող է այնքան անխելք ու վախկոտ լինել, որ հնազանդորեն տանի պապական արքունիքի դոռոզամտությունը, ժլատությունը, ուխտադրժությունը, սանձարձակությունը և մյուս արատները։

Եկեղեցականների ամբողջ բան ու գործը ապօրինի զավակներ ունենալը, թափառելը և ժողովրդից փող շորթելու նոր եղանակներ հնարելն է։

Մի՞թե բավական չէ, որ հովիվները խուզում են իրենց ոչխարներին, Մի՞թե հարկավոր է, որ նաև խեղդեն նրանց։ Նրանք մեզ շատ են վախեցրել դժոխքով, որը գոյություն չունի։ Քահանաները շատ են մեզ ոտքի տակ տվել։ Ելնենք, վերջապես, և գոչենք. մա՛հ ու կործանո՛ւմ մարդկության բռնաբարիչներին»։

## ՎՈՆԻՖԱԿԻՈՍ VIII

Նիկողայոս IV-ի մահից հետո պապ ընտրեցին վանական Պեիտրոյին, որը կոչվեց Կելեստինոս V։

Ընտրությունների ժամանակ բոլորից ավելի փութաջանորեն խույրին տիրանալ էր ուզում դոռոզամիտ ու իշխանատենչ կարդինալ Բենեդետո Գաետանին։ Նույնիսկ Կելեստինոսի աթոռակալումից հետո նա զենքը վայր չդրեց և թաքուն շարունակում էր համառ պայքար մղել խույրի համար։

Հեզ մենակյաց Պիետրոն գրեթե իր ամբողջ կյանքն անց էր կացրել խցի մեջ, սաղմոսներ երգելով կամ բարեպաշտ խորհրդածությունների տրվելով. պապական արքունիքի շքեղությունն ու փայլը, ինչպես և Հռոմի կուրիայի գործիչների հետ վարած զրույցները նրան լոկ տաղտուկ էին պատճառում։ Քանի որ երանելի ծերուկն այլևս ժամանակ չուներ ո՛չ աղոթքների, ո՛չ էլ իր նոր պարտականությունների հետ կապ-

*ված բարեպաշտ մտորումների տրվելու համար, ապա իր համար ընտրել էր մի փոքրիկ մատուռ, ուր անց էր կացնում բոլոր դիշերները և ուր, բացի իրենից, ոչ ոք մուտք չուներ։*

*Մի անգամ, ամբողջ գիշերը, ծնկաչոք աղոթելով վիթխարի խաչելության առաջ, որ բոնում էր ամբողջ պատը, Կելեստինոսը պարզորոշ լսեց Քրիստոսի բերանից հնչող այս բառերը. «Կելեստինո՛ս, թոթափիր քո վրայից պապական իշխանության լուծը, այդ բեռը չափազանց ծանրը է քեզ համար»։*

*Սուրբ աթոռի վրա գտնվելու կարճ ժամանակամիջոցում Կելեստինոսը կարողացել էր համոզվել, որ իր հոտը անադակ կյանք է վարում, և շատ անգամ էր ինքն իրեն հարցրել, թե արդյոք պարտավո՞ր չէ իր տեղը դիշել մի ավելի՛ ուժեղ ու փութաջան հովվի, որն ընդունակ լինի վերադաստիարակել հոգևորականությանը։*

*Խորհրդավոր ձայնն ամրապնդեց նրա մեջ ծագած կասկածները։ Միևնույն ժամանակ այդ զուգադիպությունը նրան կասկածելի թվաց։ Արդյոք որևէ վատ բան չկա՞ իր մտադրություններուն մեջ։ Արդյոք դրբանք սատանայի նյութած դավերը չե՞ն։ Տառապալի կասկածները տանջում էին Կելեստինոսին, մատուռում լսած ձայնի հուշը ոչ մի րոպե նրան հանդիստ չէր տալիս, և ինչքան շատ էր մտածում տեղի ունեցածի մասին, այնքան դժվարանում էր վճիռ ընդունել։*

*Անցավ մի քանի շաբաթ, և մի անգամ մատուռում Կելեստինոսը նորից լսեց խորհրդավոր ձայնը. այս անգամ ձայնը սպառնաց նրան դատապարտել դժոխքի հավիտենական տառապանքների, եթե նա շարունակի ձգձգել իր հրաժարումը։ Խեղճ մենակյացն սկսեց հեկեկալ։ «Աստված իմ,— աղոթում էր նա,— մի՞թե դու չես լսում, որ քեզ եմ դիմում։ Ասա ինձ, դո՞ւ ես ինձ հետ խոսողը։ Ինչո՞ւ ինձ դրիր գահի վրա, որը ես չէի ուզում։ Լավ չի՞ լինի արդյոք, որ խուլրից հրաժարվեմ և փախչեմ այս պիղծ Բաբելոնից»։*

*Անողոք ձայնը պատասխանեց. «Հրաժարվի՛ր պապի կոչումից, ո՛վ Կելեստինոս»։*

*Հաջորդ օրն առավոտյան բարեպաշտ ծերունին իր մոտ կանչեց կարդինալներին, որոնց մեջ էր նաև Բենեդետո Գաետանին։ Կելեստինոսը նրանց ասաց, թե ինքը ունակ չէ կառավարելու և արժանի չէ իրեն տրված բարձր կոչումին։*

*«Ես համոզված եմ,— վերջացրեց նա,— որ չեմ փրկվի հավիտենական տառապանքից, եթե քահանայապետ մնամ։ Ուստի խնդրում եմ խուլրը տալ ավելի արժանավորի, քան ես եմ»։*

Պապի աչքերը սքողած արցունքները նրան խանդարեցին տեսնել Գաետանիի շուրթերին խաղացող ժպիտը։

Ընթերցողը, հավանաբար, արդեն գլխի է ընկել, որ այն երկնային ձայնը, որ Կելեստինոսին հրամայում էր հրաժարվել պապական աստիճանից, խարդախ կարդինալի ձայնն էր։ Գաետանին զբաղեցնում էր մի շենք, որ մի հարկ բարձր էր այն մատուռից, որտեղ առանձնանում էր սուրբ հայրը։ Նա օգտվել էր դրանից և անցք փորել ուղիղ խաչված Քրիստոսի գլխավերևում։

Կարդինալներն ափսոսանք հայտնեցին, բայց ի վերջո ասացին, թե չեն համարձակվում ընդդիմանալ պապի ցանկությանը։ Ճիշտ է, նրանք պահանջեցին, որ Կելեստինոսը մի օրենք հրապարակի, որը քահանայապետին թույլ կտա իր վրայից ցած դնել աստիճանը, իսկ կարդինալներին՝ ընդունել հրաժարականը։

Կելեստինոսի հրաժարվելու լուրը տարածվեց Հռոմում։ Ժողովուրդը, որ նրան սուրբ էր համարում, չափազանց հուզված էր։ Մեծ բազմություն սկսեց հավաքվել պապական պալատի առաջ, Կելեստինոսին աղերսելով հրաժարվել իր մտադրությունից։ Զգացված այդպիսի սիրուց ու վստահությունից, Կելեստինոսը տատանվեց և կարդինալներին ասաց, թե ինքն ուզում է մի լավ խորհել և սուրբ հոգու օգնությանը դիմել։

Երեկոյան, երբ պապն առանձնացավ մատուռում, նորից լսեց աստծո ահեղ ձայնը. «Ահա թե ինչպես ես դու ինձ ենթարկվում,— չարախնդորեն ֆշշաց այդ ձայնը,— ճշմարիտն եմ ասում քեզ, Կելեստինո՛ս, դու պետք է դատապարտվես, որովհետև չես լսել ինձ»։

«Ողորմածություն եմ հայցում, սուրբ հայր»,— աղաղակեց Կելեստինոսը և ամբողջ գիշեր մնաց խաչելության առաջ փռված։

Նույն օրն առավոտյան սքեմավորի հագուստ հագնելով, նա կանչեց կարդինալներին ու հայտնեց, թե երկնային ձայնը հաստատել է իր նախնական որոշումը և ինքն անհապաղ վերադառնում է իր խուցը։

Վերջապես Գաետանին կարող էր օգտվել իր դիշերային գործունեության արդյունքից։ Կելեստինոսի հեռանալուց տասն օր անց կարդինալները նրան Քրիստոսի տեղապահ ընտրեցին։

Նոր պապն ընդունեց Վոնիփակիոս VIII անունը։ Գահակալեցումից անմիջապես հետո նա սուրբ կոլեգիայից պահանջեց ձևակերպել Կելեստինոսի հրաժարականի որոշումը։

Սրբի մեծ ժողովրդականությունը չէր կարող չանհանգստացնել Գաետանիին։ Նոր պապը վախենում էր, որ Կելեստինոսը մի գեղեցիկ

օր պապական պալատ կվերադառնա, ենթարկվելով իր կողմնակիցներ-ի հորդորներին։

Մշտական տագնապը թունավորում էր Վոնիփակիոսի կյանքը, և նա հրամայեց Կելեստինոսին ձերբակալել։ Ահա թե ինչ է պատմվում այդ մասին «Վարք սրբոցում». «Ճգնավոր Կելեստինոսին պապական պահակները ձերբակալեցին իր խցում։ Ճանապարհին հավատացյալներ-ի ամբոխը խռնվել էր բարեպաշտ ծերուկի շուրջը, խնդրելով նրա օրհնությունը, համբուրում էին նրա ոտքերը, պատառներ էին կտրտում նրա փարաջայի փեշերից, պոկում նրա հեծած ավանակի մազերը, որպեսզի պահեին իբրև թանկարժեք մասունքներ։ Երբ Կելեստինոսին պալատ հասցրին, երկերեսանի Վոնիփակիոսը նրան ընդունեց սիրալիր։ Բայց հենց նույն օրը երեկոյան պահակախումբը նախկին պապին տարավ նրա ամրոցը, ուր շուտով հայտնվեց մի քահանա, ծերուկին առաջարկելով խոստովանվել և մահվան պատրաստվել։ Մինչ Կելեստինոսը կբացեր իր սրտի գաղտնիքները, Վոնիփակիոսը թաքնված էր վարագույրի ետևում, իսկ խոստովանությունն ավարտելուց հետո կանգնեց ծերունու առաջ և զայրալից կշտամբանքներով հարձակվեց նրա վրա, թե իբր հրաժարումից հետո նա սրբապիղծ արտահայտություններ էր թույլ տվել։ Վոնիփակիոսը կարգադրեց նրան զնդան նետել, իսկ ամրոցի արտաքին դարպասների մոտ, որտեղ գտնվում էր զնդանը, երեսուն զինվոր կարգել, որպեսզի խանգարեն այն մարդկանց, որ կփորձեն Կելեստինոսին ազատել։ Վախենալով ժողովրդական հուզումներից, Վոնիփակիոսը որոշեց ծերուկին սովամահ անել և մի քանի օր անց հայտարարեց, թե սուրբ մենակյացը մահացել է ծերությունից՝ օրհնելով քահանայապետին։ Հանցագործությունը, սակայն, բացվեց, և մարդասպանին սկսեցին ատել բոլոր քրիստոնյաները»։

Մենք ոչ մի բառ չենք ավելացրել բոլանդականների պատմածին։ Նշենք միայն, որ բարեպաշտ պատմաբանները չէին զլանա պաշտպանել Վոնիփակիոսին, եթե այդ անելու փոքր-ինչ հնարավորություն ունենային։

Անսահման ամբարտավանությամբ համակված, իշխանատենչ պապը անդուլ պայքար էր մղում Եվրոպայի շատ միապետների դեմ։ Մեծ փառք է վաստակել նա այն կռիվներում, որ մղում էր Փիլիպոս Գեղեցիկի դեմ, որը կտրականապես հրաժարվում էր նրան ենթարկվել, մերժում քահանայապետի հավակնությունները աշխարհիկ իշխանություն ունենալու հարցում։

Վոնիփակիոսի քաղաքական դերը պատմաբանները տարբեր կերպ

են գնահատում, բայց նրա անձնավորությունը ոչ մի տարաձայնություն չի հարուցում։ Բոլոր պատմաբանները, աշխարհիկ և եկեղեցական, համաձայն են, որ Կելեստինոսին սպանողը մեծ սրիկա է եղել։

Մենք ստիպված ենք հանդես գալ հօգուտ Վոնիֆակիոսի. նա ամենևին էլ բացառություն չի եղել պապերի մեջ։ Ջարագործությունների մեջ մյուս քահանայապետերի մեծ մասը ոչ մի բանով նրան չի զիջել։ Միայն թե նրանցից ոմանք Վոնիֆակիոսի պես այդքան բացահայտ չեն ցուցադրել իրենց ոճիրները։

Կարդինալ Բենեդետո Գաետանին, նախքան խույրին տիրանալը, եղել է գիբելլինների առաջնորդներից մեկը, հասնելով պապական աթոռին, նա դարձավ այդ կուսակցության կատաղի հակառակորդը։ Իսկ նրա հայացքները փոխվել էին այն պատճառով, որ Կոլոննաների տոհմից սերած (իսկ այդ տոհմը ամենազորեղն ու ամենահարուստն էր գիբելլինների մեջ) երկու կարդինալներ հանդես էին եկել Գաետանիի թեկնածության դեմ։ Հիշաչար Վոնիֆակիոսը, ձեռք դցելով քահանայապետի բանալիներն ու դավազանը, Կոլոննաների ամբողջ ընտանիքը եկեղեցուց վտարեց, նզովեց նրանց հետնորդներին, արգելք դրեց նրանց կալվածքների վրա, հրամայեց ավերել նրանց պալատները և, խռովարարներին հնազանդեցնելու համար, օգնության կանչեց բոլոր քրիստոնյաներին, կարծես թե բանը վերաբերում էր իսկական խաչակրաց արշավանքի։

Կոլոննաների դերդաստանի անդամները ստիպված եղան Հռոմից փախչել, բայց պայքարը չդադարեցրին։

Քահանայապետը նույնիսկ պատրաստ եղավ լանակցություններ սկսել Ֆրանսիայի թագավորի հետ, միայն թե փող հավաքեր Կոլոննաների դեմ պատերազմելու համար։ Ի հաճույս թագավորի Վոնիֆակիոսը Լյուդովիկոս IX-ին սրբերի դասը կարգեց։ Բացի դրանից, նա Փիլիպոսի եղբայր Կառլոս Վալուային նվիրեց Գերմանիայի թագը, որը նա ուզում էր խլել Ադոլֆ Նասաուացուց։ Վոնիֆակիոսի կեղծ հնազանդությունից խաբված, Փիլիպոսը պապի գործակալներին թույլ տվեց իրենց հետ Հռոմ տանել այն ամենը, ինչ նրանց հաջողվել էր շորթել հավատացյալներից։

Հունձքն առատ էր, այնպես որ արժեր չարշարվել։

Հենց որ Ֆրանսիայից դուրս բերված փողերն ընկան պապական գանձարանը, Վոնիֆակիոսը ոչ միայն չկատարեց իր խոստումները, այլև ջանաց Անգլիայի թագավոր Էդուարդին ու Ֆլանդրիայի դքսին դրդել, որ հարձակվեն Ֆրանսիայի վրա։

Նախքան ծայրահեղ միջոցներին դիմելը, Փիլիպոսը Հռոմ ուղարկեց իր դեսպանին, որը պապից բացատրություններ պահանջեց։

Վոնիփակիոսին նորից հաջողվեց Փիլիպոսին խաբել։ Դեռ ավելին, Ֆրանսիայի թագավորը, ենթարկվելով նրա հորդորներին, համաձայնվեց նոր խաչակրաց արշավանք սկսելուն։ Ճիշտ է, Փիլիպոսը խելք ունեցավ որոշ միջոցներ ձեռնարկելու, որպեսզի կանխի պապի միջամտությունը իր թագավորական գործերին։ Հասկանալով, որ թագավորը շուտ ճանապարհ չի ընկնի, Վոնիփակիոսը Ֆրանսիայի միապետի մոտ մի լեգատ ուղարկեց, որն իրեն այնքան ամբարտավան ու անպատվաբեր պահեց, որ Փիլիպոսը նրան վռնդեց, չդանկանալով մինչև վերջ լսել։

Կատաղած ու ստորացած լեգատը գնաց Հարավային Ֆրանսիա։ Այնտեղ նա սկսեց բնակչությանը ապստամբության դրդել, ինչպես նաև կազմակերպել Փիլիպոսի սպանությունը, խոստանալով բազմաթիվ մեղքերի թողությունից բացի, մեծ գումար տալ նրան, ով աշխարհը կազատի Փիլիպոսից։

Երբ այդ դավերը բացահայտվեցին, լեգատին ձերբակալեցին, մեղադրելով նորին մեծությանը վիրավորելու, դավադրության, աղանդավորության և աստվածանարգության մեջ։

Փիլիպոսն անհապաղ պապի մոտ դեսպան ուղարկեց, պահանջելով դատի տալ և զրկել հոգևոր աստիճանից։

Վոնիփակիոսի պատասխանը թագավորի համար բոլորովին անսպասելի էր։ «Իմացիր, որ դու ենթակա ես մեզ և՛ եկեղեցական, և՛ աշխարհիկ գործերում»,— գրում էր պապը՝ թագավորին մեղադրելով եկեղեցու իրավունքների նկատմամբ ոտնձգություն անելու մեջ, նա հայտարարեց, թե լեգատն արժանի է դրվատանքի այն արիության համար, որ ցուցաբերել էր Ասենք, ավելացրել է պապը, նա միայն կատարել է իմ հրամանները։ Նամակը գրելու հետ միասին Վոնիփակիոսը նաև մի կոնդակ հրապարակեց, որի մեջ իրեն Ֆրանսիայի տիրակալ էր հռչակում։

Փիլիպոսը, իհարկե, խիստ զայրացավ։ 1302 թվականի ապրիլի 10-ին Փարիզի Աստվածամոր տաճարում նա հավաքեց ազնվականության, հոգևորականության և երրորդ դասի ներկայացուցիչներին, որպեսզի քննարկի պապի վարմունքը։ Խորհրդակցության բոլոր մասնակիցները, ներառյալ հոգևորականները, արտահայտվեցին հօգուտ այն բանի, որ վերջ տրվի եկեղեցու գլխավորի հանցավոր մեքենայություններին։ Պապի կոնդակը տաճարի աստիճանների վրա այրելու հանդի-

*սավոր աշխարհությունից հետո թագավորը Վոնիփակիոսին դիմեց այս ուղերձով. «Իմացի՛ր, անպիտան քահանա, որ աշխարհիկ գործերում մենք ոչ ոքի ենթակա չենք, և քո անսահման փառասիրությունը պետք է ծնկի գա մեր առաջ»։ Պապն այդ ուղերձին պատասխանեց բանադրանքով. նա հայտարարեց, թե Փիլիպոսը գահընկեց է արված և թագը կսոանա նա, ով նրան կբերի կենդանի կամ մեռած։*

*Այնժամ թագավորը պրելատներին և բարոններին հավաքեց Լուվրում։ Այնտեղ Գիլյոմ Նոգարեն՝ թագավորի ներկայացուցիչը, Վոնիփակիոսի դեմ ուղղված մի իսկական մեղադրական ակտ կարդաց, նրան անվանելով սոսկալի ոճիրներով իրեն արատավորած հակապապ ու հերետիկոս։*

*Նշվում էր, որ պաս չպահելով, պապը չի հավատում հոգու անմահությանը, որ «գարշելի քահանայապետը եկեղեցու ծառաներին ստիպում է բացել խոստովանության դաղտնիքն այն պատրվակով, թե իրեն պետք է հայտնի լինեն իր թշնամիների մտադրությունները. հետապնդում է թափառաշրջիկ միարաններին ու միանձնուհիներին և խլում նրանց փողերը, պատճառաբանելով, թե կեղծավոր անքանները պլոկում են ժողովրդին»։*

*Ոչ ոք հանդես չեկավ ի պաշտպանություն Վոնիփակիոսի։ Գլխավոր շտաբները պահանջեցին տիեզերական եկեղեցաժողով հրավիրել։ Թագավորը գլխավոր շտաբների որոշման մասին հայտնեց Եվրոպայի բոլոր միապետներին, և այդ լուրն ամենուր խանդավառությամբ ընդունվեց։ Բուն Հռոմում շատ սենյորներ, աստիճանավորներ, քաղաքացիներ և քահանաներ, որ տուժել էին սուրբ Հոր բռնակալությունից, անցան Փիլիպոս Գեղեցիկի կողմը։ Վոնիփակիոսին բացահայտ վտանդ էր սպառնում։ Նա որոշեց հեռանալ քաղաքից, որտեղ հակառակորդների թիվն սաճում էր։ Հետը վերցնելով քեռազուստրերին, ֆավորիտներին ու երեխաներին, նա փախավ Անանյի։ Հաստատվելով նոր նստավայրում, պապը Ֆրանսիայի թագավորի վրա հարձակվեց նոր բանադրական կոնդակով, որն ավելի ուժեղ էր, քան առաջինը։ Նա նզովում էր Փիլիպոսին, նրա ընտանիքը, նրա բոլոր հաջորդներին, ինտերդիկտ դնում Ֆրանսիայի վրա։ Այդ նույն կոնդակում Վոնիփակիոսը գերմանացիներին, անգլիացիներին ու ֆլամանդացիներին կոչ էր անում հանդես գալ ընդդեմ Ֆրանսիայի, որ խոստանալով արշավի բոլոր մասնակիցներին։*

*Տիեզերական եկեղեցաժողովի դումարումը, ուր պետք է դատապարտեին Վոնիփակիոսին, հանձնարարվում էր Նոգարեին։ Կարդինալ Կո-*

լոննայի եղբորորդիներից մեկի օգնությամբ նա ութ հարյուր մարդուց բաղկացած մի ջոկատ հավաքեց։ Ֆրանսիայի թագավորի դրոշի ներքո զինվորները 1303 թվականի սեպտեմբերի 6-ին հանկարծակի ներխուժեցին Անանյի՝ գոչելով. «Մա՛հ Վոնիփակիոսին»։ Ճանապարհին գրավելով պապի եղբորորդու պալատը, նրանք սկսեցին պաշարել այն ամրոցը, որտեղ թաքնված էր սուրբ Հայրը։ Տեսնելով, որ դիմադրությունն անօգուտ է, նա բանակցությունների մեջ մտավ և խնդրեց իրեն մի քանի ժամ տալ մտածելու և կարդինալների հետ խորհրդակցելու համար։ Պապի խնդրանքը խորամանկություն էր։ Նա հույս ուներ, որ Անանյիի քնակիչները կարձագանքեն իր կոչին և նրանց՝ օգնությամբ պայքարից հաղթող դուրս կգա։ Բայց պապը սխալ հաշիվ էր արել։ Բնակչությունը հրաժարվեց նրան պաշտպանել։ Երբ լրացավ մտածելու համար տրված ժամկետը, Նոգարեն և Կոլոննան զինվորներին հրամայեցին գրոհել ամրոցի վրա։

Հույս ունենալով տպավորություն գործել և թշնամիներին վախեցնել, Վոնիփակիոսը, խույրը գլխին, պապական հագուստով, ձեռքին առաքելական բանալին ու խաչը, բազմեց գահին, սպասելով հաղթողներին։ Բայց այստեղ էլ նա սխալվեց։ Նոգարեն պահանջեց, որ նա ներկայանա եկեղեցաժողովին։ Տեսնելով, որ պապն արհամարհական լռություն է պահպանում, Կոլոննան նրան հարցրեց, թե արդյոք հրաժարվո՞ւմ է պապական աստիճանից։ Այդ հարցը Վոնիփակիոսին կատաղեցրեց. նա նզովեց Ֆրանսիայի թագավորին, նրա ամբողջ տոհմը և զավակներին, մի քանի վիրավորական խոսքեր ավելացնելով նաև Կոլոննայի հասցեին։ Վերջինս, չդիմանալով, պապին մի ապտակ հասցրեց։ Երկաթե ձեռնոց կրող նրա ձեռքն այնպես հարվածեց, որ պապը ուշաթափվեց։ Կիսակենդան վիճակում նրան դուրս տարան ու կալանեցին ամրոցի դահլիճներից մեկում։

Երեք օր պապը բանտարկված էր։ Չորրորդ գիշերը եկեղեցականներին հաջողվեց ոտքի հանել Անանյիի բնակիչներին. նրանք հարձակվեցին ամրոցի վրա և Վոնիփակիոսին ազատեցին։ Երբ պապը վերադարձավ Հռոմ, տեսավ, որ այնտեղ կատարյալ անիշխանություն է տիրում, և խիստ հուսալքվեց։ Նա կարգադրություններ չէր անում, այլ միայն նզովում էր ու բանադրում. այնուհետև սկսեց տանջվել տենդախտից, և կատաղության մոլուցքով բռնված կծոտում էր իր ձեռքերը։ Նա մեռավ ութսունվեց տարեկան հասակում, գահի վրա մնալով ինը տարի։

Քանի որ այդ դարաշրջանում աստվածն ու սատանան մարմնա-

վորում էին բարին ու չարը, ապա Վոնիփակիոսի ժամանակակիցները բնավ չէին կասկածում, որ սուրբ հոր հոգին գտնվում է սատանայի ձեռքին։ Իրենք եկեղեցականները հաճախ ասում էին, թե Բենեդիկտո Գաետանին դատապարտված է հավիտենական այրման։ Ձեռքից ձեռք էին անցնում այն նկարները, որոնցում Վոնիփակիոսը պատկերված էր այդ երկիմաստ դիրքերով։

Դանթեն, Վոնիփակիոսի ժամանակակիցը, նրան տեղավորել է իր «Դժոխքում»։ Իսկ մի միամիտ ժամանակագիր միանգամայն լուրջ հաղորդում է, թե Վոնիփակիոսի գերեզմանի վրա դրված կույսի արձանը, որ կերտված էր սպիտակ մարմարից, դրվելու հաջորդ օրը սևացավ և ոչ մի կերպ հնարավոր չեղավ վերականգնել նրա նախնական գույնը։

Վոնիփակիոսին սպառիչ կերպով բնութագրելու համար մեջ բերենք նրա ասույթներից մի քանիսը։ Դրանք քաղված են ինքնագիր փաստաթղթերից.

«Թող աստված ինձ բարեկեցություն տա ա՛յս աշխարհում, այլ կյանքի մասին ես չեմ անհանգստանում»։

«Մարդկանց հոգիներն ավելի անմահ չեն, քան կենդանիների հոգիները»։

«Ավետարանում ավելի շատ սուտ կա, քան ճշմարտություն։ Անառարատ հղիությունն անհեթեթություն է, աստծո որդու մարդեղությունը՝ ծիծաղաշարժ է, իսկ դոյափոխության դոգման՝ պարզապես հիմարություն»։

«Փողի այն գումարը, որ եկեղեցականներին տվել է Քրիստոսի մահին ստեղծված առասպելը, անհաշվելի է»։

«Կրոնը հնարել են փառամոլները մարդկանց խաբելու համար»։

«Կղերականները պետք է ասեն այն, ինչ ժողովուրդն է ասում, բայց դա չի նշանակում, թե նրանք պարտավոր են հավատալ նրան, ինչին ժողովուրդն է հավատում»։

«Հարկավոր է եկեղեցում վաճառել այն ամենը, ինչ ուզում են գնել պարզամիտ մարդիկ»։

## ՍՈՒՐԲ ՏԱՐԻՆ

Հիմա տեսնենք, թե ինչպես է Վոնիփակիոսին հաջողվել դիզել այն վիթխարի հարստությունը, որ Ֆրանսիայի վինվորները գտան պա-

լատը գրավելիս։ Ժամանակագիր Ուոլսինհեմը, անգլիացի վանական, ասում է, թե «բոլոր թագավորները միասին վերցրած չէին ունենա այնքան ոսկի ու թանկարժեք քարեր, որքան հայտնաբերվեց պապական գանձարանի սնդուկներում»։

Նախ և առաջ, Վոնիփակիոսը հսկայական եկամուտներ էր ստանում ամբողջ Եվրոպայում հավաքվող տուրքերից, ուխտավորներից նվերներ ստացող եկեղեցականների ամենամյա վճարումներից։ Սակայն պապին, որն անընդհատ պատերազմում էր զանազան միապետների հետ, այնուամենայնիվ, փողը հերիք չէր անում։ Եվ հարկ է ընդունել, որ Վոնիփակիոսը եկեղեցական կորզողականության տեսակետից իսկական հանճար էր։ Պապությունը հենց նրան է պարտական հոբելյաններ սահմանելու համար։ Հենց նա դեկրետավորեց, որ սուրբ տարին տոնվում է յուրաքանչյուր հարյուր տարին մեկ (հետագայում ժամկետը կրճատվեց մինչև հիսուն, իսկ Պողոս II-ի օրոք՝ մինչև քսանհինգ տարի)։

Իսկն ասած, հոբելյանը սովորական ուխտագնացություն էր դեպի սուրբ Պետրոսի գերեզմանը։ Ուխտավորը գերեզմանի մոտ թողնում էր իր նվերը և մի բոլ թանկարժեք թողություններ ստանում։ Մենք տեսնում ենք, որ Վոնիփակիոս VIII-ի հնարքը իր պարզությամբ հանճարեղ է։ Առաջին հոբելյանը տոնվեց տասներեքերորդ հարյուրամյակի (1300) վերջին տարում։ Իսկ հաջորդը կարող էր տեղի ունենալ միայն մեկ հարյուրամյակ հետո։ Եվ շատ մոլեռանդներ, հասկանալով, որ իրենց թախտ չի վիճակվի տոնել 1400 թվականի հոբելյանը, չէին կարող հրաժարվել տոնակատարությանը մասնակցելուց։ Դրանով է, հավանաբար, բացատրվում առաջին հոբելյանի վիթխարի հաջողությունը, որը գերազանցեց պապի սպասելիքները։ Ֆլորենցիայի ժամանակագիր Վիլանին հավաստում է, որ առաջին հոբելյանի տարում Հռոմ է եկել ավելի քան երկու հարյուր հազար ուխտավոր։ «Ես այդ քաղաքում էի ապրում,— պատմում է նա,— երբ հավատացյալներն սկսեցին վիթխարի բազմություններով Հռոմ գալ։ Նրանք գալիս էին աշխարհի չորս կողմերից, հին հռոմեական ճանապարհներով, դա ժողովուրդների գաղթի պես մի բան էր։ Երկու կղերական զոր ու գիշեր սուրբ Պետրոսի գերեզմանի վրայից բահերով հավաքում էին կամավոր զոհաբերությունները։ Հոբելյանը հեքիաթային հարստություն բերեց Վոնիփակիոսին, հռոմեացիներն էլ, ասենք, հաբստացան, թանկ գնով զանազան ապրանքներ վաճառելով պարզամիտներին, որոնք Հռոմ էին եկել մեղքերի թողություն ստանալու և իրենց դրամապանակները դատարկելու համար»։

## ԼՈՐԵՏՈՅԻ ՏՆԱԿԸ

*Այդ հոբելյանը Կելեստինոսին սպանողի միակ գյուտը չէր։ Շարունակ փողի կարիք զգալով, սուրբ հայրն անդադար խորհում էր, թե ինչ ճանապարհներ կան դեպի հավատացյալների դրամապանակները։ Մի անգամ նա հայտարարեց, թե հրեշտակներն իրեն խոստացել են Գալիլեայի Նազարեթից (մահմեդականների հողերից) տեղափոխել այն տնակը, որտեղ ծնվել է սուրբ կույսը, նշանվել սուրբ Հովսեփի հետ և սուրբ հոգուց հղիացել Քրիստոսով։ Եվ իսկապես, դրանից ութ օր էլ չէր անցել, որ Վոնիփակիոսը քրիստոնյաներին հրավիրեց այցելել Դալմաթիա՝ տեսնելու աստվածամոր տնակը, որը հրեշտակները դրել էին մի ամայի լեռան վրա։ Բայց շուտով սուրբ հայրը տեսավ, որ երկար և դժվարին ճանապարհը, որ պետք է հաղթահարեին դեպի աստվածամոր տնակը դիմող հավատացյալները, սաստիկ ազդում է իր եկամուտների վրա։ Եվ բարի հրեշտակները տնակը տեղափոխեցին այլ տեղ՝ Ռեկանտի։ Եկեղեցականներն սկսեցին պատմել, թե տնակի շուրջն ամեն օր ի՛նչ հրաշքներ են տեղի ունենում. քամիներն ախորժալուր մեղեդիներ են երգում, կաղնիները խոնարհում են իրենց կատարները, ողջունելով աստվածամորը, անտառը լուսավորվում է չտեսնված լույսով։ Արդյունքը չհապաղեց երևալ։ Ուխտավորների թափորներին վերջ չկար։ Ոչ մի նշանավոր կուրտիզանուհի այնպիսի եկամուտ չի ունեցել, ինչպես Ռիկանտիի մադոննան։ Ճիշտ է, նա ինքը չէր օգտվում այն նվերներից, որ տալիս էին իրեն։ Ժամանակ առ ժամանակ պապն ուղարկում էր իր գործակալներին, որոնք վերցնում էին տնակում կուտակված գանձերը։ Հարկ է նշել, որ հաճախ ավազակներն էլ, որ այդ վայրում քիչ չէին, մինչև գործակալների գալը կողոպտում էին խեղճ կույս Մարիամին։*

*Վոնիփակիոսին կտրակտնապես դուր չէր գալիս մեծ ճանապարհի իր կոլեգաների մրցակցությունը։ Նա հրեշտակներին խնդրեց երրորդ անգամ տեղափոխել անշարժ գույքը և դնել մի այնպիսի տեղ, որ անմատչելի լինի պիղծ մարդկանց համար։ Հրեշտակները տնակն իջեցրին մի ինչ-որ դաշտում։ Սակայն երկու հարևանները սկսեցին վիճել այն տեղամասի համար, որտեղ վայրէջք էր կատարել թռչող տնակը։*

*Եվ պապը նորից ստիպված էր դիմել հրեշտակների ծառայությանը։ Նրանք տնակը տեղափոխեցին Լորետո, և այդ օրվանից նա մնաց այն-*

*տեղ։ Կարելի է կարծել, թե հրեշտակներն ևս գոհ էին, որ վերջնական-ապես կարողացել էին Վոնիփակիոսի ուշածն անել. տնակը նորից տեղափոխելը դժվար կլիներ, որովհետև այն տեղավորել էին մի վիթ-խարի հոյակապ եկեղեցում, որ հատկապես կառուցվել էր սրբությունը պահպանելու համար։ Սա է Լորետոյի տնակի պատմությունը։*

*Վոնիփակիոս պապը շատ տաղանդավոր կերպով կարողանում էր չա-րաշահել մարդկային հիմարությունը, դրանից ահագին շահույթ ստա-նալով։*

## ՇԱՌԼԱՏԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ

*Եվ այսպես, մենք ուրբ ենք դնում XIV դարը։ Բայց նախքան այդ, մեզ թույլ կտանք պատմել մի քանի հետաքրքիր դեպքեր, որ վերաբեր-վում են Սուրբ Լյուդովիկոսի՝ Ֆրանսիայի թագավորներից ամենաչնչինի թագավորության օրերին։ Պաշտոնական պատմաբանները, որ հաճախ եղերականների դաշնակիցներն են, այդ քստմնելի միապետի ու նրա մոր անունները շրջապատել են մի ավանդությամբ, որը պետք է պատ-կազերծել։*

*Լյուդովիկոս IX-ը տասներկու տարեկան էր, երբ մեռավ նրա հայ-րը, որին թունավորել էր կոմս Տիբոն, բարեպաշտ թագուհի Բլանկայի սիրեկանը։*

*Այդ արժանապատիվ կնոջ որդին փայլուն կրթություն ստացավ. ոչ ոք չէր կարող նրա հետ մրցել հիմներ երգելու, «Վարք սրբոցը» կարդալու և աղոթքներ ասելու մեջ։ Դրանով, ճիշտ է, սահմանափակ-վում էին նրա բոլոր գիտելիքները, բայց արդյոք շա՞տ բան է պետք աստվածային առաքելությունը կատարելու, այսինքն՝ արյուն թափելու համար ի փառս Քրիստոսի և նրա եկեղեցու։ Լյուդովիկոսի որոշ սըխ-րանքների մասին մենք արդեն խոսել ենք, ավելացնենք մի քանի ման-րամասներ։*

*Ջափահաս դառնալով, Լյուդովիկոս IX-ը պետական գանձարանից ութ հազար ունցիա ոսկի վերցրեց, որպեսզի վենետիկցիներից գնի Հիսուս Քրիստոսի փշյա պսակը։ Լյուդովիկոս IX անսահման հիմարու-թյունն իր ամբողջ փայլով դրսևորվեց այդ գործարքի ժամանակ։ Սեն-Դենիի աբբայության վանականները պնդում էին, թե իսկական փշե պսակը գտնվում է ոչ թե վենետիկցիների, այլ իրենց մոտ. նրանք*

պատճառաբանում էին, թե այդ պսակի փշերը պահպանում են իրենց կանաչ գույնը։ Այդ պատճառաբանությունը շվարեցրեց թագավորին և, նախքան որոշում ընդունելը, նա փորձագետներ նշանակեց, որ պետք է ստուգեին մասունքի իսկությունը։

Կեղծիքը շատ շուտով բացվեց. պարզվեց, թե այն պսակը, որը հավատացյալների համար ցուցադրում էին վանականները և որը նրանց հսկայական եկամուտներ էր բերում, պատրաստված է ներկված փայտից։ Այնժամ Լյուդովիկոսը, պարծենալով իր հեռատեսությամբ, շտապ վենետիկ ուղարկեց իր պատվիրակներին, հրամայելով՝ կանգ չառնել գնի առաջ և ձեռք բերել փշե պսակը, քանզի, ինչպես նա իր մորն ու պալատականներին ասաց, այդ պսակն, իհարկե, իսկական է, քանի որ Սեն-Դենիի միաբաններինը կեղծ է։

Գործարքը ցնցող տպավորություն գործեց։ Մանր իշխանները որոնք, որպես կանոն, այնքան էլ հարուստ չէին, հետևեցին Վենետիկի հանրապետության օրինակին և սկսեցին օգտվել Լյուդովիկոսի չտեսնված անահավատությունից։ Միմյանց միշտ հրելով, նրանք մեջ ընկան և սկսեցին առաջարկել մեկը մյուսից զարմանահրաշ մասունքներ, և Լյուդովիկոսը բոլորն էլ շնորհակալությամբ էր ընդունում։ Նա իր պալատում հավաքեց այնպիսի սակավագյուտ իրեր, ինչպես կենսատու խաչի առանցքակալը, նիզակը, սպունգը, մուրճը, գամերը և խաչելության հետ առնչվող այլ բաներ։ Այդ ամենի համար նա ահագին փող էր վճարում, որն, իհարկե, վերցնում էր պետական գանձարանից։ Տեսնելով, որ սուրբ մասունքների առևտուրը շատ շահութաբեր գործ է, այդ արհեստով սկսեցին զբաղվել նաև ուրիշ եպիսկոպոսներ։ Ֆրանսիայում աշխույժ առևտուր ծավալեցին հույն միաբանները և իտալացի քահանաները։ Առասպելական գներով մարդիկ գնում էին մազեր, ոսկորների մնացորդներ, չորացած թլիփի կտորներ։ Բնականաբար, գնորդները հավատացած էին, որ այդ մնացորդները պատկանում են որևէ սրբի։ Այսպես, Ճենովան դնեց ավանակի պոչ, առանց սակարկելու վճարելով հազար էկյու ոսկով։ Պոչն իբր այն ավանակինն էր, որի վրա նստած Հիսուսը Երուսաղեմ է մտել։ Պոչի պատմությունը հատկապես ուշագրավ է, քանզի վաճառողը եղել է բարձրաստիճան եկեղեցական, որին չէր կարելի չհավատալ։ Մի ուրիշ սրբելատ վաճառել է այն ախոռի խոտը, որն իբր Քրիստոսի օրորոցն է եղել։ Կանգնած կըրպակների դռների առաջ, որտեղ վաճառվում էին այդ հազվագյուտ ապրանքները, օտարերկյա վանականները ոգին ի բուն գնորդներ էին կանչում։

«Այստե՛ղ եկեք, այստե՛ղ,— գոռում էին նրանք,— տեսեք, ահա այն թասը, որի մեջ փրկչի արյունն է, որը Մարիամը հավաքել է խաչելության տակից։ Ահա մի անոթ, որի մեջ Հիսուս Քրիստոսի արցունքներն են։ Իսկ ահա աստվածամոր կա՛թը»։

Եվ հավատացյալները դատարկում էին իրենց դրամապանակները։ Ֆրանսիայի կղերականներն սկզբում նախանձում էին օտարերկրացիներին, իսկ հետո իրենք էլ սկսեցին մասունքների արտադրությամբ զբաղվել։ Նրանք միանգամայն ճիշտ որոշեցին, որ մրցակցության մեջ կարելի է հաղթել միայն ավելի արտասովոր ապրանքներով, և կատարյալ ազատություն տվին իրենց առանց այն էլ անսահման երևակայությանը։ Շուկայում սկսեցին երևալ այնպիսի առարկաներ, որոնք կարող են միայն հոմերական քրքիջ հարուցել։ Փարաջավորներն առաջարկում էին դատարկ արկղներ, որոնց մեջ, ըստ իրենց ասածի, պահվում է... Հիսուս Քրիստոսի հառաչանքը, տուփիկներ՝ Հովսեփի անտեսանելի եղյուրներով։ Իսկ բարի թագավոր Սուրբ Լյուդովիկոսը հովանավորում էր այդ առևտուրը, հաստատ համոզված, որ բացի դրանից, ոչինչ չի կարող ավելի հաճելի լինել աստծուն, եթե, իհարկե, հաշվի չառնվի հերետիկոսների ջարդը։

## ՀՐՈՍԱԿԱԽՈՒՄԸ

XIV դարի շեմին կանգնած պապը եղել է պարզամիտ և համեմատաբար կարգին մարդ։ Այդ պատճառով էլ նրա գահակալությունն երկար չի տևել։ Նա գահ բարձրացավ 1303 թվականի հոկտեմբերի 27-ին՝ Բենեդիկտոս XI անունով։ Մի քանի ամիս անց ճաշի ժամանակ նրան ներկայանում է մի երիտասարդ միաբան՝ միանձնուհու հագուստով, և մատուցում թղով լցված արծաթե սկուտեղ, որն իբր ուղարկել էր մի ինչ-որ վանքի միանձնուհի։ Ոչ մի բանի չկասկածող պապը վերցնում է նվերը, երկու թուղթ դնում բերանը, մնացածն առաջարկելով սեղանակիցներին։ Սրանք հրաժարվում են, պատճառաբանելով, թե չեն ուզում պապին զրկել համեղ մրգից։ Հենց նույն երեկոյան էլ Բենեդիկտոս XI-ը սոսկալի ջղաձգության մեջ վախճանվում է։

Բենեդիկտոս XI-ի հաջորդ Կղեմես V-ը միանգամայն արժանի էր իր կարդինալներին։

Սկզբում նա իր համար նստավայր դարձրեց Լիոնը։ Միառժամա-

նակ պապին այցելում էին եպիսկոպոսներ և աբբաներ, բայց նա իր հյուրերին այնքան անամոթաբար էր պլոկում, որ շուտով այցելությունները դադարեցին։ Այնժամ Կղեմես V-ն ինքը սկսեց շրջել եպիսկոպոսությունններում։ Ամենուրեք նա դատարկում էր եկեղեցիների ու վանքերի գանձարկղները, այնպես որ եկեղեցականներն ստիպված էին ափսոսալ, որ անհագ սարդին ստիպել են իր բնից դուրս սողալ։ Ասում են, որ այդ անկուշտ պապին ամբողջ հինգ օր էր հարկավոր, որպեսզի դուրս տաներ Կլյունի միաբանության նկուղներից վերցրած ոսկին ու արծաթը։

Երբ պապը շորթեց այն ամենը, ինչ հնարավոր էր, դիմեց հին, փորձված միջոցին։ Նա հիշեց Լաթերանի IV եկեցաժողովի հետևյալ որոշումը. «Հերետիկոսների և նրանց համախոհների ունեցվածքը պատկանում է սուրբ աթոռին, ընդ որում դատապարտվածների ո՛չ երեխաները, ո՛չ բարեկամներն իրավասու չեն հավակնություն ունենալու այդ ունեցվածքի թեկուզ ամենափոքր մասի վրա»։ Վախենալով, որ Փիլիպոս Գեղեցիկը կարող է դիմադրել այդ դեկրետի կիրառմանը, Կղեմես V նրան առաջարկեց եկամուտները կիսել։ Նրանք շատ արագ լեզու գտան, և անհամար խարույկներ վառվեցին Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում, բայց հատկապես Ֆրանսիայում։ Երբ խարույկների բոցը լափեց զոհերին, երկու թագակիր ավազակները կիսեցին կողոպտված հարստությունները։

Կղեմեսը պապական գահը զբաղեցրեց տասը տարի։ Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ նա անառակությունից ազատ մնացած իր ամբողջ ժամանակը նվիրում էր գանձերի բազմացմանը, դիմելով ամենագարշելի միջոցների։ Նա ինկվիզիցիայի դատին էր հանձնում ոչ միայն հերետիկոս-աղանդավորներին, այլև սպետներին։ Նրա հանցավոր կյանքի վերջին գործը եղել է կայսր Հենրիխ VII-ին թունավորելը։

Դրանից շատ չանցած, անառակությունից ուժասպառ Կղեմես V-ը վախճանվեց։

## ՀՈՎՀԱՆՆԵՍ XXII

Կղեմես V-ի մահից հետո առաքելական գահը երկու տարի թափուր մնաց։

Այդ միջգահակալության միջոցին կղերականները կողոպտում էին քաղաքացիներին, իսկ ճիզվիտները՝ հալածում հերետիկոսներին։ Նրանք շատ դաժան դատաստան տեսան լոլարդների հետ, որոնք քարոզում էին, թե Լյուցիֆերը և խռովարար հրեշտակները երկնային թագավորությունից վռնդվել են այն պատճառով, որ բռնակալ աստծուց ազատություն ու հավասարություն են պահանջել։ Լոլարդները նաև պնդում էին, թե Միքայել հրեշտակապետն ու նրա շքախումբը (բռնակալության պաշտպանները) սապալվելու են, իսկ թագավորներին ենթարկվող մարդիկ հավիտենապես դատապարտված են։

Ֆրանսիայի թագավորը վերջապես որոշեց սուրբ կոլեգիայում կարգ հաստատել։ Միջգահակալությանը վերջ դնելու համար նա գտավ հետևյալ հնարքը։ Թագավորը յուրաքանչյուր կարդինալի առանձին լիոն էր հրավիրում և խոստանում խույրը, բայց միաժամանակ խնդրում ամեն ինչ գաղտնի պահել։ Ոչ ոք չէր կասկածում, թե դա ծուղակ է։ Նշված ժամկետին բոլորը հավաքվեցին վանքում, որտեղ նրանց սպասում էր թագավորը։ Եվ այն ժամանակ Փիլիպոս թագավորը հայտարարեց, որ նրանց ազատ չի արձակի, մինչև որ Կղեմես V-ի հաջորդ չընտրեն։ Այնուհետև նրանց փակի տակ դրեց ու հուսալի պահակություն կաթգեց։ Մի ամբողջ ամիս, համաձայն Գրիգոր IX պապի որոշման, տեվելով միայն հացով ու ջրով, կարդինալներն ի վերջո անձնատուր եղան և պապ ընտրեցին Հովհաննես XXII-ին։

Տգետ ու բութ մարդու վայրագությամբ Հովհաննես XXII-ը հետապնդում էր գիտնականներին,- ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության նոր հայտնագործությունները գնահատելով որպես սատանայական գյուտեր։ Շատ գիտնականներ, որ նրա օրոք գտնվում էին ինկվիզիցիայի զնդաններում, դաժան տառապանքների ենթարկվեցին և այրվեցին խարույկների վրա։ Բերենք Հովհաննես XXII-ի ուղերձից մի հատված, որը ցույց է տալիս, թե եկեղեցին ինչպիսի անհեթեթ մեղադրանքներ է առաջադրել այն խիղախ մարդկանց դեմ, որ առաջ էին մղում մարդկությունը։ «Մենք իմացանք, —գրել է պապը,— որ Ժան Դամանը, լիմոժցի բժիշկ ժանը, ժակ Բարբանսոնը և մի քանի ուրիշներ զբաղվում են մոգությամբ. նրանք օգտվում են կախարդական հայելիներից և հմայող առարկաներից, խորհրդավոր նշաններ են նկարում, շփվում խավարի հոգիների հետ, մարդկանց կործանում իրենց դյութանքի ուժով, դևերին խոթում են շշերի մեջ և եռացած ջրի մեջ նրանց ստիպում գուշակել ապագան։ Նրանք ասում են, թե ընդունակ են կարճացնել կամ երկարացնել կյանքի տևողությունը։ Միաժամանակ նրանք մեր

դեմ դավադրություններ են սարքում և փորձում կախարդանքների ու հմայության միջոցով մեզ ղրկել կյանքից ու խույրից։ Նրանց հանձնեցե՛ք ճիզվիտների ձեռքը. թո՛ղ խոշտանգումները բացեն նրանց լեզուն, որից հետո նրանց հրի մատնեցե՛ք»։

Իր դատարկ գանձարանը լցնելու համար Հովհաննես XXII-ը դատաստան տեսավ ֆրատիչելլյանների միաբանության հետ, որ հաստատել էր Կելեստինոս V-ը։ Պատճառաբանելով, թե Վոնիփակիոս VIII-ը լեղյալ է հայտարարել Կելեստինոսի կարդադրությունները, Հովհաննեսը միաբաններին հերետիկոսներ համարեց և ինկվիզիտորների հետ բաժանեց այդ միաբանության ունեցվածքը։

Երբ ֆրանցիսկյանները պառակտվեցին, պապը նրանց հետ էլ նույն կերպ վարվեց, պառակտիչներին ուղարկելով խարույկակիզման։ Այնժամ ուխտի պետագլուխը մի խիստ բողոք հրապարակեց, հայտարարելով, թե պապն ավելի է խարույկի արժանի, քան որևէ մեկը։ Անհնազանդ միաբանները բողոքեցին Գերմանիայի թագավոր Լյուդովիկոս Բավարացուն և խնդրեցին վերջ դնել սուրբ հոր դաժանություններին։ Ահա մի քանի հատվածներ այդ փաստաթղթից.

«Տե՛ր, ահա երկար տարիներ եկեղեցու գահին բազմում է մի հանցագործ, որը Քրիստոսի անունից համարձակվում է ապացուցել, թե իրավունք ունի ոճիրներ գործել, կողոպտել թագավորներին ու ժողովուրդներին, լլսված խոշտանգումներով մորթազերծ անել այն մարդկանց, որոնք չեն ընդունում նրա անսխալական լինելու անամոթ հավակնությունները։ Մեր եղբայրների անունից, տեր, ձեզ թախանձում ենք ամեն ջանք գործադրել խորտակելու համար այդ զարհուրելի աստվածապետական բռնակալությունը, որն անպատվություն է մարդկության համար։ Մի՛ սպասեք մինչ այն պահը, երբ արվամոլներն ու հանցագործները կկաշկանդեն ժողովուրդների ձեռքերը և իրենց անառակությամբ կոչնչացնեն աշխատասեր ժողովուրդների առողջ էությունը։ Տապալեցե՛ք պապին, տե՛ր, որպեսզի մենք ականատես լինենք այդ խայտառակության վախճանին»։

Լյուդովիկոս Բավարացու նամակին պապը պատասխանեց բանադրանքով։ Այնժամ թագավորն իր բանակով դիմեց դեպի հավերժական քաղաքի պարիսպները։ Կատաղի ճակատամարտից հետո, երբ երկու կողմերն էլ շատ զոհեր տվեցին, նա գրավեց Հռոմը։ Քաղաքի բնակչությունը Լյուդովիկոսին դիմավորեց որպես ազատարարի, պահանջելով Հովհաննեսին գահընկեց անել։ Թագավորը նորից փորձեց գործը խաղաղությամբ ավարտել, սակայն Հովհաննես XXII-ը հանդես

եկավ նոր բանադրանքով։ Այնժամ համոզվելով, որ պապն իսկապես առաջնում է զառամախտով, Լյուդովիկոս Բավարացին մեծ եկեղեցաժողով գումարեց, որտեղ վանականներից մեկը կարդաց սուրբ հոր բոլոր ոճիրների լրիվ ցանկը, և պապի պաշտպաններին առաջարկեց ելույթ ունենալ։ Քանի որ ոչ ոք չարձագանքեց այդ կոչին, Լյուդովիկոսն իրեն իրավունք վերապահեց գահազրկել նրան, «ով իրեն Հովհաննես էր անվանում, բայց իրականում ոչ այլ ոք էր, քան անհաղորդելի հարստանալու ծարավի սրբապիղծ ու հերետիկոս»։ Այնուհետև պատմաճանը, խույրը և հովվապետի մատանին Լյուդովիկոսի ձեռքից ստացավ մի հասարակ վանական, որն ընդունեց Նիկողայոս V անունը։

Այսպիսով, եկեղեցին նորից երկու պապ ունեցավ։ Մինչդեռ նրանցից մեկն ապարդյուն կերպով փորձում էր շտկել հոգևորականության բարքերը, մյուսը, նստած Ավինյոնի իր հոյակապ պալատում, արհամարհում էր եկեղեցաժողովի որոշումը և շարունակում բազմապատկել իր հարստությունը։ Նիկողայոս V-ը, ձգտելով կարդինալներին ու քահանաներին անձնական օրինակ ցույց տալ, սկզբում համեստ կյանք էր վարում։ Սակայն հանգամանքները նրան ստիպեցին շարունակել իր նախորդների ֆինանսական քաղաքականությունը. նա սկսեց վանական հողեր, եկեղեցական աստիճաններ վաճառել։ Բայց քանի որ Ավինյոնի պապն էլ էր նույնն անում, ապա ամեն մի թափուր եպիսկոպոսական աթոռ երկու հավակնորդ էր ունենում։ Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի ծեծեր ու տուրուդմփոցներ էին տեղի ունենում։

Հովհաննես XXII-ի գործակալները ոսկի չէին խնայում և Հռոմում ղինված վարձկանների մի ջոկատ կազմակերպեցին, որը խուճապի էր մատնել Նիկողայոս V-ի բոլոր կողմնակիցներին։ Այնուհետև Հովհաննես XXII-ը մի մանիֆեստ հրապարակեց, որով թագավորին մեղադրում էր աղանդավորության մեջ և ղրկում Գերմանիայի թագից։ Նիկողայոս V-ը ստիպված էր Հռոմից փախչել։

Ահա մի հատված նրա այն նամակից, որ գրել է Հովհաննես XXII-ին և որի մեջ հայտնում է, թե հրաժարվում է աթոռից. «Ես լսում էի, թե ինչպես էին ձեզ մեղադրում աղանդավորության, արվամոլության, մարդասպանության և այլ հանցագործությունների մեջ։ Նկատի ունենալով այդ ամենը, ես գտնում էի, որ պապերի մեջ դուք ամենից անարժանն եք։ Հետագայում ես իմացա, որ ձեզնից ավելի ոչ ոք արժանի չի պապի կոչմանը։ Ուստի ես հրաժարվում եմ խույրից և պատրաստ եմ հրապարակավ հրաժարվել ձեր ներկայությամբ, ցանկացած տեղում, որ կբարեհաճեք նշել»։

*Հովհաննես XXII-ը, Նիկողայոսին շնորհակալություն հայտնելով այդ զղջական նամակի համար, չարաբաստիկ հակապապին իր մոտ հրավիրեց։ Եվ միամիտ Նիկողայոսը հենց որ Ավինյոն հասավ, խույրակիր սրիկայի գործակալները նրան վնդան նետեցին, որտեղ նա մնաց ավելի քան երեք տարի։ Մի առավոտ բանտապանը կալանավորին հաց ու ջուր տանելիս, նրա բանտախցի դուռը բաց գտավ։ Նիկողայոս V-ը արդեն մեռած էր. Հովհաննես XXII կարգադրել էր գիշերը խեղդել նրան։*

## ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԳՆԱՅՈՒԹԱԿԻ

*Իր գահակալության վերջում Հովհաննես XXII-ը փորձեց ցնցել ողջ աշխարհը, մի քանի դատողություններ անելով այն մասին, թե առաքինի մարդն իրեն ինչպես պետք է պահի, որպեսզի ընկնի երկնային թագավորություն։ Սուրբ Հոր մտքերը, անկասկած, եկեղեցականների մեջ լուրջ տարաձայնություններ կհարուցեին, եթե Փիլիպոս V-ը պապից չպահանջեր հրապարակայնորեն հրաժարվել այդ դրույթներից, սպառնալով, թե նրան որպես հերետիկոսի կայրի Ավինյոնի պալատի առաջ։*

*Մենք հետաքրքրություններից զուրկ չենք համարում մեջ բերել մի քանի պարբերություններ այդ աշխատությունից, որը հավաստում է, թե սուրբ Հայրն իրոք եղել է իր գործի իսկական գիտակ։ Փաստաթուղթը, որին վերաբերվում է խոսքը, վերնագրված է «Առաքելական գրասենյակի սակագինը»։ Եվ այսպես.*

*«Այն կղերականը, որ մեղադրվում է միանձնուհու, քրոջ ու եղբոր աղջիկների և իր հոգևոր դստեր հետ կենակցելու մեջ, թողություն ստանում է 67 լիվր 12 սու գումարով»։*

*«Այն կղերականը, որ ցանկանում է թողություն ստանալ հակաբնական անառակության համար, վճարում է 219 լիվր 15 սու»։*

*«Այն քահանան, որ խախտել է աղջկա կուսությունը, մուծում է 2 լիվր 8 սու»։*

*«Այն միանձնուհին, որ բազմիցս անառակություն է արել իր մենաստանում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս, և ուզում է վանահայր դառնալ, մուծում է տուգանք՝ 131 լիվր 15 սու գումարի չափով»։*

«Այն քահանան, որ ուզում է թողություն ստանալ, իր ազգականու-
հու հետ կենակցելու համար, մուծում է 76 լիվր 1 սու»։

Ինչպես տեսնում ենք, ըստ սակագնի թողություն է տրաջարկվում
ինչպես կատարված, այնպես էլ այն մեղքերի համար, որոնք դեռ պետք
է կատարվեն։

«Աշխարհականների ամուսնական անհավատարմության համար
թողությունը արժե 27 լիվր։ Արյունապղծության դեպքում ավելացնել 4
լիվր»։

«Այն կինը, որ ուզում է թողություն ձեռք բերել և միաժամանակ շա-
րունակել մեղսական հարաբերությունները, վճարում է 87 լիվր 3 սու։ Եթե
նմանօրինակ հանցանքի մեջ մեղավորն ամուսինն է, ապա նրա վրա ևս
տարածվում է նույն սակագինը»։

Անցնենք մյուս հանցագործություններին.

«Թողությունը և չհետապնդելու երաշխիքը այնպիսի հանցանքների
համար, ինչպիսիք են կողոպուտը, գողությունը, հրդեհը, մեղավորի վրա
նստում է 15 լիվր 4 սու»։

«Կնոջը հաշմանդամ դարձնելու համար ամուսինը գրասենյակ է մու-
ծում 3 լիվր 4 սու։ Այն դեպքում, երբ ամուսինը սպանել է կնոջը, մուծում
է 17 լիվր 15 սու։ Իսկ եթե սպանությունը կատարված է երկրորդ անգամ
ամուսնանալու նպատակով՝ 32 լիվր 9 սու»։

«Ծղբոր, քրոջ, հոր կամ մոր սպանության համար՝ 17 լիվր 4 սու»։

«Եպիսկոպոսի կամ պրելատի սպանության համար՝ 131 լիվր 14
սու»։

Ինչպե՞ս այստեղ չխանդաղատել. եպիսկոպոսը գնահատվում է ո՛ւմ
անգամ ավելի, քան հայրը կամ մայրը։

«Եթե մարդասպանը տարբեր ժամանակներում մի քանի քահանա է
սպանում, ապա մուծում է 137 լիվր 6 սու առաջինի համար և դնի կեսը
յուրաքանչյուր հաջորդի համար»։

«Այն հերետիկոսը, որ վերստին վերադարձել է կաթոլիկ դավանանքի,
թողության համար վճարում է 269 լիվր։ Այրված կամ սպանված հերե-
տիկոսի որդին թողություն է ստանում, վճարելով 218 լիվր 16 սու»։

«Այն կղերականը, որ ի վիճակի չէ մարել իր պարտքը և ուզում է
ազատվել պարտատիրոջից, պետք է գրասենյակ մուծի 17 լիվր 3 սու, և
նրա պարտքը կներվի»։

Հետաքրքիր է իմանալ, թե կբավարարե՞ր այդ գործարքը պարտա-
տերերին։

«Նա, ով խախտել է աղդեցիկ անձի իրավունքը, ինչպես նաև նա, որ մաքսանենգություն է արել, պետք է վճարի 87 լիվր 3 սու»։

Միևնույն է մեղավորին կկախեն, եթե ընկնի այդ աղդեցիկ անձի ծործակալների ձեռքը. դրա փոխարեն հանցագործի մոտ կմնա մագազաթի մի կտոր, իսկ սուրբ հայրը կստանա 87 լիվր 3 սու, որը հույժ էական է։

«Եթե վանքը մտադիր է փոխել կարգապահությունը, որպեսզի ավելի խիստ ռեժիմ սահմանի, գլասենյակ է մուծում 146 լիվր 5 սու»։

Մի՞թե դա հանճարեղ բան չէ։ Եկեղեցու պարագլուխը ջնջում է ամեն մի սահման «անառակություն» և «առաքինություն» հասկացությունների միջև. ամեն ինչի համար սակագին կա, որը և ամեն ինչ դարձնում է եկամտի աղբյուր։

Հաղվագյուտ շնորհալի՜ պապ է այդ Հովհաննես XXII-ը։ Նրա օրենսգիրքը յուրատեսակ գլուխգործոց է։ Ամեն ինչ նախատեսված է, գիշատչի աչքը բաց չի թողել և ոչ մի մանրուք։

Մի՝ վերապահություն անենք։ Հովհաննես XXII-ի նախորդները ևս մեղքերի թողություն են վաճառել և նույնպես եկեղեցական պաշտոնների ու աստիճանների առևտուր արել։ Ըստ էության, Հովհաննես XXII-ը ոչ մի նորամուծություն չի կատարել, այլ միայն արտասովոր չափով ընդլայնել է այդ արհեստը։ Բայց Հովհաննեսի այդ սակագնի մեջ ամփոփված է եկեղեցու իսկական բարոյականությունը։

•

Հովհաննես XXII-ի մահից հետո, որը մեռավ իննսուն տարեկան հասակում, սուրբ կոլեգիայի անդամներն ի վերջո ընտրեցին մեռած պապի և նրա քրոջ որդուն. պապն իր քրոջը սիրում էր բնավ ոչ եղբայրաբար։ Ինչքան էլ տգետ լիներ նրանց ժառանգը, այնուամենայնիվ, շատ լավ հասկանում էր, որ իրենից պապ դուրս չի գա։ Համոզվելով, որ կարդինալները հաստատ որոշել են խույրն իր գլխին դնել, նա ասաց այս պատմական ֆրազը։ «Եղբարք իմ, դուք պատրաստվում եք ձեզ կառավարելու համար ընտրել մի ավանակի»։ Պետք է ընդունել, որ Բենեդիկտոս XII-ի գահակալության յոթ տարիների ընթացքում կարդինալները ոչ մի անգամ չեն ղղջացել իրենց ընտրության համար։

*Բենեդիկտոս XII-ի մահից հետո կարդինալները ճարպկորեն իրար մեջ բաժանեցին պապական գանձարանը և ձեռնամուխ եղան նոր պապի ընտրությանը։ Պապ դարձավ Կղեմես VI-ը, այն ժամանակի մեծագույն անառակը։ Ինչպես և իր նախորդները, նա ձգտում էր աշխատասեր հոտից ավելի շատ եկամուտներ հավաքել։*

*Հավերժական քաղաքը այդ ժամանակ տխուր պատկեր էր ներկայացնում։ Հզորագույն սենյորները, հյուսիսիտալական բռնակալների օրինակով, աշխատում էին տիրանալ քաղաքին, ժողովուրդը ուժաթափվում էր իշխանների ու մեծավորների բռնությունից ու խելացնոր արարքներից։ Կրակոտ հանրապետական Կոլա դը Ռիենտին ժողովրդին կոչ արեց դեն նետել կրկնակի բռնակալության՝ ազնվականության ու հոգևորականության լուծը։ Հռոմում հանրապետական կարգ հաստատվեց, և Ռիենտին հաղթահանդեսով մտավ Կապիտոլիում, որտեղ նրան շնորհվեց տրիբունի ու Հռոմի ազատարարի տիտղոս։*

*Կոլա դը Ռիենտին, պանդոկապանի որդին, իրեն թույլ չտվեց հաջողությունից արբենալ։ Չնայած հասարակ ծագմանը, նա շատ զարգացած մարդ էր և միաժամանակ անձնազոհ հայրենասեր։ Իրեն հաշիվ տալով, որ հնարավոր չէ միանգամից հաղթահարել դարավոր տգիտության մեջ արմատավորված նախապաշարումները, Ռիենտին իր մոտ կանչեց պապի լեգատին և նրան տեղավորեց Վատիկանում։ Այդ դիջումով նա հույս ուներ ի չիք դարձնել պապի խարդավանքները, որովհետև շատ լավ գիտեր, թե կայսրը, իշխաններն ու սուրբ աթոռը ինչպիսի ատելություն են տածում Հռոմի հանրապետական կարգի նկատմամբ։*

*Կղեմես VI-ը, շատ խորամանկ լինելով, բացահայտորեն դուրս չէր գալիս Ռիենտիի դեմ և միայն գաղտնաբար, իր գործակալների միջոցով, Հռոմում հակահեղափոխական հեղաշրջում էր պատրաստում։ Հենց որ վրա հասավ նպաստավոր պահը, նա բանադրանքով հարձակվեց տրիբունի վրա, նրան հերետիկոս հայտարարեց, չեղյալ համարեց նրա հետ կնքած բոլոր համաձայնագրերը և հավատացյալներին կարգադրեց պայքարել Ռիենտիի դեմ, սպառնալով բանադրել տրիբունին պաշտպանելու փորձ անողներին. Հռոմում խռովություն բռնկվեց, որը կազմակերպել էր պապի լեգատը։ Երբ տրիբունը կարդադրեց ահազանգ հնչեցնել ժողո-*

վըրդին զննքի կոչելով, ապստամբներն արդեն գրավել էին բոլոր եկեղեցիները։ Ռիենտիին հաջողվեց փախչել վանականի հագուստով ծըպտըված։ Կայսր Լյուդովիկոս Լյուքսեմբուրգցին ընդունեց Ռիենտիին և անմիջապես նրան հանձնեց պապին։ Նրան բերին Ավինյոն և ղնդան նետեցին, սպասելով դատավարությանը, որի ելքն արդեն կանխորոշված էր։ Բայց այդ ժամանակ Ռիենտիին օգնության հասավ ժանտախտը։ Ամբողջ Եվրոպայում սև մահը այդ տարիներին հարյուր հազարավոր զոհեր տարավ։ Բուն Ավինյոնում նրա ավերիչ գործողությունն այնքան սոսկալի էր, որ պապը սարսափից գերուն մոռացավ։ Ռիենտիին հաջողվեց զնդանից դուրս սրծնել, պապին ղրկելով մի հանցագործություն ևս կատարելու հնարավորությունից։ Սակայն Կղեմես VI-ը բավականաչափ ոճիրներ էր գործել և կարող էր պատվով կրել Քրիստոսի տեղապահի խույրը։

Դեռևս իր գահակալության սկզբում Կղեմես VI-ը սուրբ հայտարարեց 1350 թվականը, այդպիսով հոբելյանական տարիների միջև եղած ժամանակամիջոցը կրճատելով և հասցնելով հիսուն տարվա։

Մոլեռանդ ուխտավորների թիվը Հռոմում նույնիսկ ավելի շատ էր քան առաջին հոբելյանի ժամանակ։ Քաղաքում բոլոր տները վերածվեցին հյուրանոցների, ամենախղճուկ հյուղերը վարձով էին տրվում անասելի գներով. ժողովրդին համակեց ոսկի տենդը։

Տոնակատարություններն ավարտվելուց հետո Կղեմես VI-ի լեգատը Հռոմից Ավինյոն մեկնեց ոսկով ու արծաթով բեռնված հիսուն եղների մի քարավանով։

Կղեմես VI-ի մահից հետո քահանայապետ ընտրվեց Իննովկենտիոս VI-ը, մի զառամյալ ծերունի, բայց և թրծված սրիկա։ Ահա թե ինչ է գրել Պետրարկան Ավինյոնի և նրա տիրոջ մասին. «Այդ քաղաքում գոյություն չունի ո՛չ խիղճ, ո՛չ զութ, այնտեղ չկա որևէ սրբություն, որևէ մարդկայնություն... Օդը, հողը, պալատները, տները, փողոցները, շուկաները, տաճարները, դատարանները, պապական աթոռները և աստծուն նվիրված եկեղեցիները՝ բոլորը պղծված են մեքենայություններով։ Նրա քարակերտ գետնահարկերի լաբիրինթոսում իշխում է գիշատիչ Մինոսը... Միայն ոսկին է ունակ սանձահարելու այդ հրեշին, նրան ստիպելու ժպտալ... Ոսկին այդ քաղաքում իրավունք է տալիս պղծել հարազատ քույրերին, սպանել ծնողներին. ոսկով գնում են հրեշտակներին, սրբերին և հենց իրեն Քրիստոսին։ Պապը ձեզ ամեն ինչ կվաճառի, ամեն ինչ, բացի իր խույրից...»։

*Իննովկենտիոս VI-ի մահից հետո սրբազան կոլեգիան քահանայապետ ընտրեց Ուրբանոս V-ին, իսկ նրան հաջորդեց Կղեմես VI-ի եղբորորդի Գրիգոր IX-ը։*

## ՀԵՐԵՏԻԿՈՍՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՔ

*Գրիգոր XI-ը եղել է նույնպիսի բռնակալ ու կաշառակեր, ինչպես նրա նախորդները։ Հերետիկոսներին այրում էին խարույկների վրա, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավում հօգուտ պապի։*

*Առաջին աղանդը, որ հալածանքի ենթարկվեց, տյուրլեպենների աղանդն էր։ Այն հին ասացվածքը, թե՝ «Երբ ուզում են շանը սատկացնել, ասում են, թե նա կատաղած է», թերևս հնարվել է կրոնական հալածանքների առնչությամբ։ Ինչևիցե, եկեղեցականներին բնավ չի կարելի կըշտամբել երևակայության պակասի համար, երբ գործը վերաբերում է նրանց գանձերը բազմապատկելուն։*

*Ֆրանսիայով մեկ խարույկներ էին վառվում։ Պապի ագահության և թագավորի մոլեռանդության զոհերի թիվն այնքան մեծ էր, որ շատ քաղաքներում ստիպված եղան նոր բանտեր կառուցել։ Տյուրլեպենների աղանդը կոտորեցին մինչև վերջին մարդը, իսկ պապական գանձարանի սնդուկները ոսկուց պայթում էին։*

*Գրիգոր XI-ը բնավ չէր շտապում հեռանալ Ավինյոնից, որտեղ նրա կյանքը դարձել էր մի համընդհանուր տոն։ Պապի ու կարդինալների պալատները, որ կահավորված էին թագավորական շքեղությամբ, լի էին կուրտիզանուհիներով, երաժիշտներով, պարուհիներով և խեղկատակներով։ Եպիսկոպոսներից մեկը, որին պապը հրամայեց Հռոմ վերադառնալ, իրեն թույլ տվեց ասել. «Դու ուզո՞ւմ ես հովվին ստիպել ապրել իր հոտի մեջ։ Իսկ ինչո՞ւ դու չես ուզում Հռոմ վերադառնալ։ Արդյոք ո՞չ այն պատճառով, որ քո նոր պալատը պսպղում է ոսկուց ու ծիրանիից, իսկ այն քաղաքի բնակչությունը, ուր դու ապրում ես, ծափահարում է քո տանձարձակ շքախմբին։ Արդյո՞ք ոչ այն պատճառով, որ այստեղ դու ֆարող ես անպատիժ սրբապղծություններ, բռնություններ ու այլ հանցանքներ կատարել։ Ինչ արած, մենք էլ քեզ պես ուզում ենք զոհեր մատուցել այն աստվածներին, որ դու այստեղ կանգնեցրել ես»։*

*Սուրբ Հայրը, համբերությամբ լսելով այդ երկարաշունչ ճառը, ժըպ-*

տալով պատասխանեց. «Մեր թանկագին եպիսկոպոսը գիշերն անցկացրել է գինետանը, և գինու երկու տակառների գոլորշիները, թերևս, աղդել են նրա բանականության վրա»։

Ավինյոնի արքունիքի զեխ կյանքը պապի վրա շատ թանկ էր նստում։ Մշտապես փողի կարիք զգալով, նա Եվրոպայի երկրների իր լեգատներին առաջարկեց պապական գանձարանի համար նոր մուծումներ ապահովել։ Բայց այս անգամ լեգատները հանդիպեցին թագավորների ուժեղ դիմադրությանը և կատարյալ պարտություն կրեցին։

Գրիգոր XI-ը ունեցավ ևս մի անհաջողություն։ Անգլիացի գիտնական աստվածաբան Ուիկլիֆը, որը բրիտանական հոգևորականության քարոզում էր անկախ լինել Հռոմի կուրիայից, վաղուց էր պապին տհաճություն պատճառում։ Գրիգորը լոնդոնի արքեպիսկոպոսին մի ուղերձ ուղարկեց, որով հրամայեց ձերբակալել հերետիկոս Ջոն Ուիկլիֆին ու խոշտանգման ենթարկել։ Բայց Ուիկլիֆին պաշտպանեցին Օքսֆորդի համալսարանն ու թագավորն ինքը, և նա շարունակեց իր ճառերում ու աշխատություններում մերկացնել ինկվիզիտորների դաժանությունը, պապական արքունիքի հանցագործություններն ու խայտառակ գործերը։ Դա զգալի հարված էր Գրիգոր XI-ի համար և, հավանաբար, արագացրեց նրա մահը։

## ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ՈՒ ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ԾԵԾԿՈՏՈՑԸ

Հռոմի և Ավինյոնի միջև պայքար սկսվեց Գրիգոր XI-ի մահից անմիջապես հետո։ Այդ ժամանակից ի վեր ծայր առավ քրիստոնեական եկեղեցու «մեծ պառակտումը», որը շարունակվեց հինգ տասնամյակ։ Քրիստոնյաները տրոհվեցին երկու մասի, որոնցից յուրաքանչյուրը ճանաչում էր իր պապին։ Մրցակիցները իրար դեմ կատաղի պայքար էին մղում, որը Եվրոպայի ժողովուրդներից շատ զոհեր խլեց։

Ֆրանսիական ու իտալական պապերը միմյանց հետ մրցում էին իրենց վայրագություններով ու չարագործություններով։ Ճիզվիտ Մեմբուրը այդ առթիվ գրում է. «Տասներեք դարերի ընթացքում ոչ մի հերձված դրանից ավելի սոսկալի չի եղել։ Պառակտումը սարսափելի էր ոչ միայն այն պատճառով, որ հինուն տարի շարունակ եկեղեցին օրինական պապ չուներ, այլև այն դաժանություններով ու հանցանքներով, որ կատարում էին երկու կողմերը»։

Գրիգոր XI-ի հաջորդ ընտրվեց Ուրբանոս VI-ը։ Սրա գահ բարձրանալուց երկու ամիս անց հայտնի դարձավ, որ Ֆրանսիայի կարդինալները, հավաքվելով Անանյե քաղաքում, ուրիշ պապ են ընտրել։ Նրանց հաջողվեց կաշառել Ուրբանոս VI-ի մերձավորներից մեկին, որը Հռոմից գաղտնի դուրս բերեց խույրը, սուրբ Պետրոսի բանալին, հովվական մատանին և պապական արժանապատվության այլ նշանակներ։ Զայրույթով բռնված Ուրբանոսը արագորեն բանակ հավաքեց և դիմեց դեպի Անանյե, հույս ունենալով Ֆրանսիայի կարդինալներին հեշտությամբ զսպել։ Սակայն պապը սխալվեց. նա ստիպված էր գործ ունենալ զինվորների հետ, մինչդեռ կարծում էր, թե միայն կղերականների կհանդիպի։ Վերադառնալով Հռոմ, նա իմացավ, որ մրցակից է երևան եկել՝ Կղեմես անունով։ Մոլեգնած Ուրբանոսը հրամայեց կոտորել հավիժական քաղաքում ապրող բոլոր ֆրանսիացիներին, չխնայելով ո՛չ երեխաներին, ո՛չ կանանց, ո՛չ ծերերին։

Կղեմես VII-ը միանգամայն արժանի էր Ուրբանոսին։ Ահա թե նրա մասին ինչ է գրում Ճիզվիտ Մեմբուրը. «Ռոբերտ Ժնևացին (այդ էր պապի աշխարհիկ անունը) կյանքի երեսունվեցերորդ տարում պապ ընտրվեց։ Նա կայսրի հակումներ ու սովորություններ ուներ։ Ընդունելությունների համար նա ոչինչ չէր խնայում, դքսերին, դեսպաններին ու սենյորներին ընդունում էր թագավորավարի. նա միանգամայն անընդունակ էր լուրջ գործերով զբաղվելու։ Նրա գլխավոր արատը անհագ հեշտասիրությունն էր. սիրուհիներին ու ֆավորիտներին ընտրում էր ազգականների միջից, նրանց դիմին շնորհներ ու պարգևներ թափելով»։

Հենց որ Կղեմես VII-ը հաստատվեց Ավինյոնում, Հռոմի հոգևորականության բարձր խավերում ուժեղ հուզում առաջացավ։ Եպիսկոպոսներն ու կարդինալները սկսեցին անցնել երիտասարդ ու անառակ պապի կողմը, որն ուզում էր վերականգնել Կղեմես VII-ի դարաշրջանի պալատական բարքերը։ Շուտով Վատիկանը դատարկվեց։ Քրիստոսի տեղապահների միջև կատաղի պայքար ծավալվեց, որին մասնակցում էին Իտալիայի ու Ֆրանսիայի բոլոր ավազակները՝ կղեմեսականներն ու ուրբանոսականները։

Բայց գործերի վիճակը չբարելավվեց նաև Ուրբանոս VI-ի մահից հետո։ Հռոմի կարդինալները կարող էին վերջ դնել պառակտմանը, եթե պապ ճանաչեին Կղեմես VII-ին, բայց նրանք վախենում էին Ֆրանսիայի ազդեցությունից և իրենց միջից նոր պապ ընտրեցին, որն ընդունեց Վոնիփակիոս IX անունը։

Վոնիփակիոսը Ձլատ էր, Կղեմես VII-ը՝ շոայլ։ Առաջինը ոսկի էր կուտակում և հաճույք ստանում այն բանից, որ դա իրենն է։ Երկրորդը ոսկու մեջ տեսնում էր իր կրքերին հագուրդ տալու մի միջոց։ Բայց մի բանում պապերը իրար նման էին. երկուսն էլ, առանց վարանելու, հարըստանում էին ամեն միջոցի դիմելով։

Դեռևս 1380 թվականին Փարիզի համալսարանը պառակտմանը վերջ դնելու փորձեր էր անում։ Այդ փորձերը նա վերսկսեց Վոնիփակիոս IX-ի ընտրվելուց հետո, Կղեմես VII-ին ուղարկելով մի շատ ազդու նամակ, որը պապի վրա այնքան ուժեղ տպավորություն գործեց, որ նա մեռավ։

Ավինյոնի կարդինալները, հռոմեականների օրինակին հետևելով, շտապեցին մեռած պապի հաջորդ ընտրել, անտեսելով Փարիզի համալսարանի բողոքը։ Բայց նախքան ընտրություններին անցնելը յուրաքանչյուր կարդինալ երդվեց, որ եթե իրեն պապ դարձնեն, ապա անհրաժեշտության դեպքում՝ հանուն եկեղեցու միավորման իր վրայից ցած կդնի կոչումը։

Ֆրանսիայի կարդինալներն ի վերջո ընտրեցին խարդախ ու համառ Բենեդիկտոս XIII-ին։ Նա երդվել էր հրաժարվել իշխանությունից, եթե դա անհրաժեշտ համարվի, բայց ընտրվելուց հետո նրա մտքովն իսկ չանցավ իր խոստումը կատարել։ Երբ Ֆրանսիայի թագավորը նրա առջև կտրականապես դրեց հրաժարվելու հարցը, Բենեդիկտոսը միապետի դեսպանին ասաց. «Ես չեմ հրաժարվի։ Թող ձեր թագավորն իմանա, որ ես վսեմագույն քահանայապետ եմ ընտրվել կամքն աստծո և երբեք չեմ ենթարկվի մարդու կամքին»։ Կանխազգալով, որ պապի այդ պատասխանը բարդություններ կհարուցի, կարդինալները շտապ հեռացան Ավինյոնից։ Նրանց վախը անհիմն չէր։ Մի քանի օր անց թագափորի զորքերը շրջապատեցին քաղաքը, պահանջելով հանձնել պապին։ Ավինյոնի իշխանությունները և քաղաքացիները վճռականորեն հրաժարվեցին պաշտպանել Բենեդիկտոս XIII-ին և նրան ոչինչ չէր մնում անել, քան իր պալատից անձամբ կայազորին հրամաններ տալ։ Բենեդիկտոսի վիճակն անելանելի էր թվում, բայց թագավորական զորքերի մի հրամանատարի օժանդակությամբ նրան հաջողվեց փախչել Ավինյոնից ու թաքնվել մի ամրոցում, որն անմատչելի էր համարվում։ Այնտեղից նա թագավորին հայտնեց, որ «աստծո, հրեշտակների և հրեշտակապետերի ու երկնային ամբողջ զորականության օգնությամբ իշխաններին ու սենատորներին կհաղթի ի փառս սուրբ եկեղեցու»։

Թագավորը հրաժարվեց կռվել մի այնպիսի հակառակորդի հետ,

*ծրին սահմարում է ինքը երկինքը. Բենեդիկտոսի հետ նա հաշտություն կնքեց, երեկվա հակառակորդը հանդիսավորապես վերադարձավ Ավինյոնի պալատ։*

*Իմանալով Վոնիփակիոս IX-ի անսահման ագահությունը, Բենեդիկտոսը փորձեց փողի միջոցով այնպես անել, որ իր մրցակիցը հրաժարվի պապական աստիճանից, և բանակցությունների համար պատվիրակություն ուղարկեց Հռոմ։ Վոնիփակիոս IX-ը հանդիսավորությամբ լսեց իր մրցակցի ներկայացուցիչներին և խնդրեց, որ իրեն խորհելու ժամանակ տան։ Հաջորդ օրը նա գաղտնաբար իր մոտ կանչեց արտասահմանյան դեսպաններին, կարդինալներին, եպիսկոպոսներին, ինչպես նաև Հռոմի ռազմական ու քաղաքացիական ներկայացուցիչներին, ապա հրավիրեց Բենեդիկտոսի պատվիրակներին։ Երբ վերջիններս դահլիճ մտան, Վոնիփակիոսը, որ բազմած էր գահին հաղթողի կեցվածքով, ասաց. «Ես մեղադրում եմ հակապապին, որն իրեն Բենեդիկտոս է անվանում, մեղադրում եմ նրանում, որ համարձակվել է ինձ ամոթալի գործարք առաջարկել, խույրի համար խոստանալով 10 միլիոն ոսկե ֆլորին։ Ես նրա գործակիցներին առաջարկում եմ վկայել իմ մեղադրանքների ճշմարտացիությունը»։*

*Ավինյոնի պապի պատվիրակները, սակայն, հանկարծակիի չեկան, քանի որ, ըստ երևույթին, քահանայապետից ամեն տեսակ մեքենայություն սպասում էին։ Նրանք երդվեցին, որ ոչ թե Բենեդիկտոս XIII-ը, այլ Վոնիփակիոսն ինքն է նման զազրելի գործարք առաջարկել։ Գաղտած պապը հրամայեց Բենեդիկտոսի ներկայացուցիչներին ձերբակալել և նրանց հարցաքննության ենթարկել, որպեսզի ընդունեն, թե սուտ են ասում։ Բայց պատվիրակները չվախեցան և պատճառ բերին բանագնացների անձեռնմխելիության օրենքը։*

*Այդ ամենը ավելի թուլացրեց առանց այն էլ անառակ կյանքից հյուծված Վոնիփակիոսի ուժերը։ Նկարագրված դեպքերից մի քանի օր անց, երբ նորին սրբազնությունն ինքնամոռացության էր մատնված իր սիրուհիներից մեկի գրկում, շատ ուժեղ արյունահոսություն ունեցավ, որը չհաջողվեց կանգնեցնել։ Ավինյոնի պապի պատվիրակները Հռոմից դեռ չէին հեռացել, երբ վավաշոտ Վոնիփակիոս IX-ն իր հոգին ավանդեց... Վեներային։*

*Այս պապի մասին ավելի մեծ իրավունքով, քան շատ ուրիշ նահատակների մասին, որոնց այնպես մեծարում է եկեղեցին, կարելի է ասել, թե իրոք իր արյունը թափել է հանուն դավանանքի։*

*Իմանալով Վոնիփակիոսի մահվան լուրը, Բենեդիկտոսի պատվի-*

քահանները ոտքները կախ դցեցին և տխեցին աչ ու ձախ փող բաժանել, հուսալով կարդինալներին հակել Ճանաչելու Ավինյոնի պապին։ Շռայլ ընծաները գրպանները դնելով, կարդինալներն, այնուամենայնիվ, Վռնիփակիոսի հաջորդ ընտրեցին Իննովկենտիոս VIII-ին։

Իտալիայի հոգևորականության մեծ մասը Ճանաչեց նոր պապին, իսկ քաղաքացիական բնակչությունը նրա առաջ մի շարք պայմաններ դրեց։ Նախ և առաջ, հռոմեացիները պահանջեցին, որ քաղաքային գործերը լինեն ժողովրդի տնօրինության ներքո։ Պապը պատասխանեց կարճ ու արտահայտիչ կերպով՝ վռնդեց ժողովրդական պատվիրակությանը։ Հռոմեացիները զայրացան և զենքը ձեռքներին դուրս եկան քահանայապետի դեմ։ Վատիկանը գրավվեց, և պապը ստիպված եղավ Հռոմից փախչել։

Իմանալով այդ մասին, անխոնջ Բենեդիկտոս XIII-ն խստությանեթ զորք հավաքեց և Ճանապարհ ընկավ դեպի Իտալիա։ Նա ափ իջավ Ճենովայում, որտեղ կարողացավ հասնել իրեն օրինական պապ Ճանաչելուն։ Բայց մինչ Բենեդիկտոսը դեռ Ճանապարհին էր, Իննովկենտիոս VIII-ը խարդախության ու կաշառքի օգնությամբ հանդիսավոր վերադարձավ Հռոմ։ Այդ ժամանակ Բենեդիկտոսը հավերժական քաղաք ուղարկեց իր գործակալներին, որոնք, Հռոմի պապի մերձավորներին կաշառելով, Իննովկենտիոսին թունավորեցին։

Բայց դա էլ չօգնեց Բենեդիկտոս XIII-ին։ Հռոմի կարդինալները, հասկանալով, որ Ավինյոնի կուրիան ընտրությունների ժամանակ իրենց առաջ խոչընդոտներ է հարուցելու, չսպասելով Իննովկենտիոսի թաղմանը, նրա հաջորդ ընտրեցին Գրիգոր XII-ին։

Բայց ինչքան էլ համառեին Հռոմի ու Ավինյոնի պապերը, պառակտումը հավերժ շարունակվել չէր կարող։ Աշխարհիկ տիրակալներն սկսեցին բացահայտ անհամբերություն դրսևորել։ Մեկի փոխարեն երկու պապական արքունիք պահելը, դրան գումարած այդ պապերի պայքարի հետ կապված ծախսերը սկսեցին նրանց խիստ անհանգստացնել։ Գրիգոր XII-ը և Բենեդիկտոս XIII-ը, վտանգն զգալով, շտապ մի զավեշտախաղ սարքեցին. երկուսն էլ ցանկություն հայտնեցին հանդիպել փոխադարձ մրցակցությանը վերջ դնելու համար։

Ամբողջ Եվրոպան խաբվեց այդ խաղով։ Բայց շուտով պարզ դարձավ, որ պապերը պայմանավորվել են պահպանել նախկին վիճակը։

Վերադառնալով իր նստավայրը, Գրիգոր XII-ը, ի խրատ իր սիրասուն հոտի, բռնագրավեց այն եկեղեցականների ունեցվածքը, որոնց կառնածում էր պառակտմանը վերջ տալու ձգտման մեջ։ Բացի դրանից,

քարոզները վերահսկելու համար նա հիմնեց դրաքննչական կոմիտե։ Այս միջոցառումը բողոք առաջ բերեց նույնիսկ կարդինալների մեջ։ Նրանցից շատերը լքեցին Գրիգորի արքունիքը։ Եվ թեպետ Գրիգորը նրանց վրա հարձակվեց բանադրանքով և հրամայեց բռնել ու հրով տանջել, այնուամենայնիվ, մեծ մասին հաջողվեց փախչել Պիզա։ դուրս պրծնելով պապի ճանկերից, Գրիգորի կարդինալները հրապարակեցին նրա դեմ ուղղված մի խիստ մանիֆեստ։ Իտալիայի հոգևորականությանը միացան Ավինյոնի կարդինալները, որոնք պատրաստ էին հրաժարվել Բենեդիկտոսին հպատակվելուց։ Ֆրանսիայի թագավոր Կառլոս VI-ը զգուշացրեց Բենեդիկտոս XIII-ին, պառակտմանը վերջ չտալու դեպքում նրան արգելվելու է թագավորության սահմաններում երևալ։

Ի պատասխան Բենեդիկտոսը հանդես եկավ այս ուղերձով. «Հավատացյալների գերագույն հայրը, Բենեդիկտոս XIII-ը, հայտարարում է, եթե քսան օրվա ընթացքում Ֆրանսիան իր առաջ ծնկի չգա և Ֆրանսիայի բոլոր կալվածքների վրա ընդհանուր արգելք կդնի և հավատացյալներին կազատի թագավորին տված երդումից։ Բացի այդ, միապետի թագը կտա նրան, ով նվիրված կլինի տուրը եկեղեցու գործին»։

Այդ ուղերձը Կառլոս VI-ին գազազեցրեց։ Երկու պապերի վարմունքը լցրեց նաև աշխարհիկ իշխանների համբերության բաժակը։ Գործը վերջացավ նրանով, որ մինչ Բենեդիկտոսն ու Գրիգորը քաղաքից քաղաք էին նետվում, կողմնակիցներ հավաքագրելով, Պիզայում եկեղեցաժողով բացվեց, որը երկու քահանայապետերին գահազրկեց և պապ հռչակեց Աղեքսանդր V-ին։

Երկու ավազակներն էլ, Բենեդիկտոսը և Գրիգորը, հրաժարվեցին ենթարկվել եկեղեցաժողովի որոշմանը, և երկուսի փոխարեն մեջտեղ եկավ երեք պապ։ Այդպիսով, առաջացավ եռապապություն։

Աղեքսանդր V-ի գահակալությունը տևեց մի տարուց քիչ պակաս։ Այդ ժամանակամիջոցում եկեղեցու փաստական պարագլուխը Բալթազար Կոսան էր, պապի ֆավորիտներից մեկը։ Բալթազարը Աղեքսանդրի գահակալության առաջին իսկ օրերից ձգտում էր տիրանալ խույրին։ Երկարատև խարդավանքներից հետո նա պապի պալատական բժշկին համոզեց թունավորել սուրբ հորը, և շուտով սուրբ գահ բարձրացավ Բալթազար Կոսան՝ Հովհաննես XXIII անունով։

Նույնիսկ սրիկաների ու հանցագործների այգ հավաքածուում իր սխրանքներով աչքի է ընկնում Հովհաննես XXIII-ը։ Չկա մի հանցանք, որ կատարած չլինի Բալթազար Կոսան (ինչպես պատմում են, մինչև հոգևորական աստիճան ընդունելը նա սովորական ծովահեն է եղել)։

Ժողովուրդն անմիջապես ատելությամբ լցվեց Հովհաննես XXIII-ի նկատմամբ, և Նեապոլի թագավորին առանց դժվարության հաջողվեց նրա դեմ դավադրություն կազմակերպել։ Բայց ժամանակին զգուշացված Հովհաննեսը փրկվեց Բոլոնիա փախչելով և օգնություն խնդրեց կայսր Սիգիզմունդից։ Նորից Կոնստանցայում եկեղեցաժողով հրավիրվեց։ Հովհաննեսին անհանգստացնում էր, որ իբրև ժողովի վայր ընտրվել էր կայսերական քաղաքը, սակայն նա հույսը դրել էր բանսարկուի իր կաբողություննների և ժողովի մասնակիցների վաճառվածության վրա։

Ընդամենը հավաքվեց ավելի քան չորս հազար մարդ՝ հոգևորականության, ազնվականության, արհեստավորական կորպորացիաների ներկայացուցիչներ, և նրանց մեջ՝ ոսկերիչներ, կոշկակարներ, վարսավիրներ, որմնադիրներ, երաժիշտներ։

Պատմությունը մեզ չի ասում, թե արդյոք երաժիշտներն իրենց հետ վերցրել էին նվագարաններ, որպեսզի նիստերի ընդմիջումների ժամանակ սենյորներին ու պրելատներին պարելու հնարավորություն տրվեր։ Շատ հավանական է, որ այդպես էլ եղել է, որովհետև եկեղեցաժողովում սիկնանց պակասություն չէր զգացվում։ Հրավիրվել էին յոթ հարյուր պոռնիկներ, որպեսզի սպասարկեն հատկապես եկեղեցաժողովի մասնակիցներին։ Իսկ չէ որ եկեղեցական հոգևոր պետերն իրենց հետ տարել էին նաև իրենց սիրուհիներին և բացեիբաց նրանց հետ զբոսնում էին քաղաքում։

Առաջին նիստերը հուսադրում էին Հովհաննեսին. նա համոզված էր, որ գաղտնաբար պարգևներ, տիտղոսներ ու վանական հողեր բաժանելով կկարողանա իր կողմը գրավել եկեղեցաժողովի առավել ազդեցիկ անդամներին։ Բայց կայսրը, որ ուշիուշով հետևում էր Հովհաննեսի խորամանկ քայլերին, անսպասելիորեն քվեարկության դրեց Հովհաննեսին գահազուրկ անելու հարցը, և առաջարկությունն ընդունվեց ճնշող մեծամասնությամբ։ Հովհաննեսը, տեղից վեր թռչելով, նետվեց դեպի կայսրը և ասաց, թե կհեռանա քաղաքից, բայց նման ստորացում չի տանի։

Այնժամ Սիգիզմունդը սպաներին հրամայեց ուժեղացնել քաղաքի դարպասների պաշտպանությունը և պապից պահանջեց անհապաղ հրաժարում։ Ի պատասխան Հովհաննեսի վիրավորական սպառնալիքների, Սիգիզմունդը կարգադրեց քահանայապետին տանել նրա զբաղեցրած բնակարանը և ուշիուշով հսկել։ Բայց մի քանի օր անց Հովհաննեսը, հարթեցնելով պահակներին, վանականի շորեր հագած, փախավ։ Փորձելով Ավինյոն հասնել, նա թաքնվեց Շաֆհաուզենում, ապա Ֆրեյբուրգում։ Եկեղեցաժողովին ուղարկած իր ուղերձում նա շարադրեց այն պայմանները, որոնց կատարման դեպքում համաձայն էր հրաժարվել պապական աստիճանից։ Այդ պայմաններն էին. պահպանել իր՝ Իտալիայի մշտական լեգատի տիտղոսը, սահմանել թոշակ հիսուն հազար ֆլորինի չափով, ինչպես նաև իր ձեռքը հանձնել Բոլոնիան, Ավինյոնը և էլի մի քանի քաղաքներ։

Եկեղեցաժողովի մասնակիցները, տեսնելով, որ բոլոր բանակցություններն անիմաստ են, և որ Հովհաննեսը իր հոժար կամքով աստիճանից չի հրաժարվի, վերջապես վճռեցին հրապարակել նրան գահընկեց անելու որոշումը։

Այդ որոշման մեջ թվարկվում էին պապի գլխավոր հանցագործությունները։ Անվիճելի փաստերի հիման վրա նշվում էր, որ Հովհաննես XXIII-ը խույրը ձեռք է գցել գաղտնաբար իր նախորդի մոտ ուղարկելով թունավորող անձի, որին հետագայում թունավորել է հենց ինքը. բռնաբարել է երեք հարյուր միանձնուհու. հանցավոր կապի մեջ է եղել իր եղբոր կնոջ հետ. վանականների հետ արվամոլության է տրվել. ապականել է մի ամբողջ ընտանիքի, որ բաղկացած է եղել մորից, որդուց և երեք քույրերից, ընդ որում քույրերից ամենաավագը եղել է տասներկու տարեկան. անամոթաբար եպիսկոպոսական ամբիոնների և նույնիսկ քանդրանքների առևտուր է արել, հազարավոր անմեղ մարդկանց տանջել է Բոլոնիայում ու Հռոմում։

Այս բոլոր հանցագործությունների համար եկեղեցաժողովը Հովհաննես XXIII-ին գահընկեց արեց և աշխարհիկ դատի տվեց որպես սովոլի հանցագործի, անբարոյական սրիկայի, արվամոլի, բանսարկուի, գավաճանի, մարդասպանի ու բռնաբարողի»։ Դատավճիռը պարունակում էր ընդամենը յոթանասունչորս կետ, որից քսանը չհրապարակվեց, քանզի անասելի զարհուրելի էին Հովհաննեսի չարագործությունները։

Կոնստանցայի եկեղեցաժողովը, իր գործունեությունն սկսելով արդարացի ակտով՝ Հովհաննես XXIII-ին գահընկեց անելով, այնուհետև խայտառակվեց, մահապատժի դատապարտելով երկու գիտնականների՝ Ցան Հուսին և Հերոնիմուս Պրագացուն։

Ցան Հուսը կրթված մարդ էր, որն աչքի էր ընկնում բարոյական մաքրությամբ և պատրաստ էր ամեն ինչ զոհաբերել հանուն իր համոզմունքների։ Այդպիսին էր նաև նրա աշակերտ Հերոնիմուս Պրագացին։

Ցան Հուսը և Հերոնիմուս Պրագացին վաղուց էին պայքար մղում եկեղեցական մեքենայություններին, քահանաների շռայլատանության դեմ։ Նրանք մերժում էին նաև որոշ դոգմաներ, պնդելով, որ ոչ թե պապը, այլ աստված է ներում մեղքերը, չէին ընդունում պապերի անսխալականությունը։

Հուսը Կոնստանցա գնաց, ապավինելով կայսեր այն խոստմանը, թե իրեն թույլ կտրվի պաշտպանել իր համոզմունքները։ Սիգիզմունդը նրան պահպանագիր էլ տվեց։ Բայց հենց որ Հուսը Կոնստանցա հասավ, նրան ձերբակալեցին։ Շղթայակապ գիտնականը լսեց իր մահավճիռը և դրանից հետո նրան հանձնեցին աշխարհիկ իշխանությունների ձեռքը։ Նրան նույնիսկ զրկեցին վկաների ցուցմունքների իրավացիությունը վիճարկելու իրավունքից։

Հիերոնիմուս Պրագացին Կոնստանցա եկավ Հուսին օգնելու համար, բայց ճանապարհին նրան բանտարկեցին։ Պրագացուն ևս մեղադրեցին հերետիկոսության մեջ ու այրեցին։

Նրանց հիշատակն ընդմիշտ կմնա պատմության մեջ։

Առապապության վերջ տալու համար Կոնստանցայի եկեղեցաժողովը որոշեց գահընկեց անել մյուս երկու պապերին՝ Գրիգոր XII-ին և Բենեդիկտոս XIII-ին, որոնք շարունակում էին իրենց ներկայացնել իբրև Քրիստոսի տեղապահներ։ Գրիգոր XII-ը գահից հրաժարվեց իր հոժար կամքով և եպիսկոպոս նշանակվեց, բայց շուտով մեռավ։ Իսկ Բենեդիկտոսը անհողդողդ մնաց և ապարդյուն հորդորանքներից հետո եկեղեցաժողովը նրան գահընկեց արեց որպես պառակտիչի ու երդմնազանցի։

Քահանայապետի խուլրը բաժին ընկավ Մարտինոս V-ին։

Դեռ նոր էր նա պապ դարձել, երբ անմիջապես ուժեղ դիմադրության հանդիպեց։ Որոշ կարդինալներ նույնիսկ սկսեցին նրա դեմ ուղղված անստորագիր ծաղրագրեր հրապարակել։ Վրեժխնդիր չինելու համար Մարտինոս V-ն ավելի լավ բան չգտավ, քան Հուսի բազմաթիվ հետևորդներին, որ ոչ մի մեղք չունեին, խարույկի վրա այրել տալը։ Մարտինոսի կարծիքով նրանց մահապատիժը պետք է վախեցներ նրա բոլոր հակառակորդներին։

Երբ Բալթազար Կոսան ցանկություն հայտնեց հնազանդվել Քրիստոսի միակ օրինական ներկայացուցչին, սուրբ Հայրը նրան ցնծությամբ դիմավորեց, նվերներ տվեց և կարդինալ նշանակեց, բայց երկու ամիս անց թունավորեց։ Հաշիվները մաքրելով կայսրի հետ, որը նրան քիչ տհաճություններ չէր պատճառում, Մարտինոս V-ը որոշեց նույն եղանակով ազատվել նաև մյուս մրցակցից՝ Բենեդիկտոս XIII-ից։

Սպանությունը չտվեց ցանկացած արդյունքը. մեռնելուց առաջ Բենեդիկտոսը երկու կարդինալների հանձնարարեց իրեն հաջորդող ընտրել, և մի քանի տարի հակապապի դերում հանդես էր գալիս Կղեմես VIII-ը։ Սակայն Մարտինոս V-ի լեգատին հաջողվեց հասնել այն բանին, որ Արագոնիայի եպիսկոպոսներն ու ֆեոդալներն սկսեցին թագավոր Ալֆոնսին սպառնալ, թե նրան գահընկեց կանեն, եթե շարունակի Կղեմես VIII-ին հովանավորել։ Այն ժամանակ Ալֆոնսը որոշեց Կղեմեսից ձեռք քաշել, և վերջինս ստիպված խուլրը ցած դրեց։ Հրաժարման ակտը ստորագրվեց 1429 թվականի հուլիսին։ Սրանով ավարտվեց մեծ պառակտումը, որը գրեթե հիսուն տարի շարունակ տենդագին վիճակի մեջ էր պահում Եվրոպայի քրիստոնեական պետությունները։

Մարտինոսը, զոհ լինելով, որ վերջապես դարձել է եկեղեցու միակ տիրակալը, որոշեց նշել իր հաղթանակը։ Նա սկսեց Լեհաստանի թագավորին հորդորել, որ հուսականների դեմ պատերազմ հայտարարի։ Ինչքան էլ զորավոր էր քահանայապետի ուղերձը, Լեհաստանի թագավորն, այնուամենայնիվ, միանգամից սիրտ չարեց այդ արկածախնդրությանը դիմել, որի ելքը նրան կասկածելի էր թվում։ Պապը, սակայն, իրենը պընդեց, և թագավորն ի վերջո հնազանդվեց։ Հերետիկոսների դեմ խաչակրության արշավանք հայտարարեցին՝ նրա բոլոր մասնակիցներին մեղքերի թողություն խոստանալով։ Թագավորի ու պապի վարձկանները ներխուժեցին Բոհեմիա, սակայն այս անգամ էլ կաթոլիկական աստվածը, որ մարտնչում էր, թերևս, պապական զորքերի շարքերում, ընկրկեց հերետիկոսների առաջ։ Չեխերը հաղթանակ հաղթանակի հետևից էին տա-

նում։ Հուսահանների բանակն այնպիսի սարսափ էր ազդածել, որ նրա մոտենալու լուրն իսկ խուճապ էր առաջացնում հակառակորդի շարքերում։

Երբ պարտության լուրը հասավ Մարտինոս V-ին, որը հավատացած էր իր բազմահազար բանակի հաղթանակին, սուրբ Հայրը չկարողացավ դիմանալ այդպիսի հուսախաբության և կաթվածահար եղավ։

## ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ԽԱԲԵԲԱՆ ԵՎ ԱՆԱՌԱԿԸ

1458 թվականին առաքելական գահ բարձրացավ Պիոս II-ը՝ Էնեաս Սիլվիո Պիկոլոմինին։ Դաժանությամբ, հեշտասիրությամբ, ժլատությամբ ու գոռոզամտությամբ նա իր նախորդներին չէր զիջում։ Սակայն Պիոս II-ը բազմակողմանի կրթություն էր ստացել, նրան բնավ չի կարելի տգետ անվանել և թերևս հենց դրա համար արժանի է ամենաանողոք դատապարտման։ Այդ բոլորից բացի, Էնեաս Սիլվիոն իրեն գրող էր համարում։ Նրա աշխատություններում հեթանոսության ու քրիստոնեության արտասովոր խառնուրդը ցույց է տալիս, որ կրոնը նրա համար սոսկ եկամտաբեր գործ էր։ Մի՞թե նա կարող էր հավատալ այն անհեթեթություններին, որոնցով լի է քրիստոնեական դիցաբանությունը։

Համոզվելով, որ նախորդ պապի ժառանգներն իսպառ կողոպտել են առաքելական գանձարանը, Պիոս II-ը նախ և առաջ զբաղվեց իր ֆինանսական գործերը կարգի բերելով։ Մանուանի եկեղեցաժողովի նիստում նա թուրքերի դեմ արշավանք հայտարարեց և թագավորներից իրավունք ստացավ նոյ տուրքեր դնելու թշվառ հպատակների վրա, թեև ո՛չ պապը, ո՛չ էլ թագավորները բնավ մտադիր չէին Թուրքիա գնալ, առավել ևս՝ կռվի մեջ մտնել անհավատների հետ։ Վերջին նիստում Պիոս II-ը հրապարակեց մի դեկրետ, որը հաստատում էր պապի գերիշխանությունը ոչ միայն բոլոր թագավորների, այլև նույնիսկ եկեղեցաժողովի նկատմամբ։ Դրանից հետո սուրբ Հայրը շուտով վարձկան զոկատներ կազմակերպեց և շարժվեց Հռոմի վրա, որտեղ իր բացակայության ժամանակ բնակիչները հանրապետություն էին հռչակել։ Քաղաքը պաշարվեց, և նրա բնակչությունը, որ պատրաստ չէր պաշարմանը, անձնատուր եղավ։ Հաջորդ օրը պապը սկսեց խռովարարների հետ մասսայական դատաստան տեսնել։ Մի քանի օր շարունակ գահիճները նրա մոտ էին բերում

Հռոմի բնակիչներին, որոնց կախում էին և գլխատում։ Հռոմը երկար հիշեց այդ կոտորածը։

Մահից քիչ առաջ Պիոս II-ը զավեշտախաղ սարքեց. նա հրաժարվեց իր գրական գործունեությունից, որով զբաղվել էր մինչև աթոռ բարձրանալը։ Էնեոս Սիլվիոյի քերթվածներում պատմվում էր նրա համալիր արկածների մասին, նկարագրվում էին այն տիկնանց բարեմասնությունները, որ նրան ընծայել էին իրենց բարեհաճությունը, նրանց գաղտնի հրապույրները և այլն։ Նրա սանձարձակ էրոտիկ երևակայությունն անհնար է նկարագրել։

## ՏԱՆՋԱՐԱՆԸ

Պիոս II-ի հաջորդ ընտրվեց կարդինալ Պիեռարո Բարբոն։ Կանգնելով իր համար անուն ընտրելու անհրաժեշտության առաջ, նա հայտարարեց, թե գերադասում է Ֆորմոզոս (գեղեցիկ) անունը։ Երբ կարդինալները դա լսեցին, խլացուցիչ ծիծաղ հնչեց. նոր պապն այլանդակ էր։ Այնժամ նա համաձայնվեց իր վրա առնել Պողոս II անունը։

Կարդինալները Պողոս II-ի առաջ մի շարք պայմաններ դրեցին, և պապը երդվեց կատարել։ Պայմաններից մեկն այս էր. նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու պատրվակով արտակարգ հարկ հավաքել և կարդինալների հետ բաժանել այդ դրամական գործողությունից ստացված ամբողջ եկամուտը։

Պայմանի առաջին մասը Պողոսը բարեխղճորեն կատարեց, իսկ ինչ վերաբերում է երկրորդին, ապա նա իր համար ավելի շահեկան համարեց ամբողջ գումարը թողնել սեփական գանձարանում։ Իհարկե, կարդինալները խիստ բարկացան։ Այնժամ պապը համաձայնվեց երեք կարդինալից բաղկացած մի հանձնաժողով ստեղծել արտահերթ հարկի գանձմանը հետևելու և եկամուտը բաժանելու համար։ Պապի այդ մեծահոգի ժեստը կարդինալներին խաղաղեցրեց, և նրանք սուրբ հորը գործելու կատարյալ ազատություն տվին։ Ոսկին բոլոր երկրներից առատորեն հոսում էր Հռոմ։ Սակայն ախորժակը ուտելու ժամանակ է բացվում և Պողոս II-ը սկսեց իր եկամուտները բազմապատկելու այլ միջոցներ հնարել։ Օրինակ, նա շատ ճարպկորեն օգտվում էր բանադրանքից. դա կապի ձեռքին նման էր այն ատրճանակին, որ մեծ ճանապարհի ավազակը պեմ է անում սարսափահար ճանապարհորդի կրծքին։ Այնուհետև նա

պաշտոնից հեռացրեց կուրիայի մի շարք սպաների ու աստիճանավորների, որպեսզի վաճառի նրանց տրված կալվածքները։ Աստիճանավորներից ոմանք բողոքեցին այդ միջոցառման դեմ։ Հատկապես եռանդուն կերպով հանդես եկավ նշանավոր պատմաբան Պլատինան՝ պապի գրագիրը։

— Դու համարձակվում ես ինձ դատե՞լ,— զայրացած հարցրեց սուրբ Հայրը։— Մի՞թե չգիտես, որ բոլոր օրենքները ծնվում են իմ գլխում։ Իմ ի՞նչ գործն է, որ դու և քո կոլեգաները պետք է ողորմություն ապրեք։ Դա է իմ կամքը, որից ի վեր ոչինչ չկա երկրի վրա։

Մի քանի աստիճանավորներ, տեսնելով, որ հնարավոր չէ Պողոսին վերահամոզել, որոշեցին դիմել բոլոր թագավորներին, խնդրելով տիեզերական եկեղեցաժողով հրավիրել սուրբ Հոր հետ ունեցած վեճը լուծելու համար։ Պլատինան, որ նվիրված էր աթոռին, պապին համոզում էր իրեն այդքան ստորացման չենթարկել և հրամանը փոխել։ Նրա խորհուրդները լսելու փոխարեն Պողոս II-ը հրամայեց Պլատինային ձերբակալել։

Պետք է նշել, որ սուրբ Հայրը, ապխտած ծովատառեխի պես տգետ լինելով, ատում էր գիտնականներին ու գրողներին։ Նրա սիրած խոսքն էր. «Կրոնը պետք է ոչնչացնի գիտությունը, որովհետև գիտությունը կրոնի թշնամին է»։

Հռոմի իշխանությունները և համքարությունների ավագները, անհանգստացած իրենց քաղաքի ամենից ճանաչված անձնավորություններից մեկի ձերբակալմամբ, պահանջեցին Պլատինային ազատ արձակել։ Պողոս II-ը ստիպված տեղի տվեց, բայց չհրաժարվեց գրողի հետ հաշիվները մաքրելու մտադրությունից։ Շատ չանցած նա կաշառքով սուտ վկաներ գտավ, որոնք Պլատինայի և մի քանի ուրիշ գիտնականների մեղադրեցին պապի դեմ դավադրություն նյութելու մեջ։ Նրանց հանձնեցին ինկվիզիցիայի հարցաքննությանը։ Բայց ոչ Պլատինան, ոչ նրա դժբախտության ընկերները չհաստատեցին սուտ վկաների ցուցմունքները։ Այնժամ սուրբ Հայրը որոշեց նրանց խոշտանգումներով ստիպել ընդունել մեղադրանքը։

Առաջինը սկսեցին տանջել Պլատինային։ Նրան մերկացրին և բերին մի կամարակապ սենյակ, որն ապակե միջնորմով բաժանված էր երկու մասի։ Մի կեսում աթոռի վրա բազմած էր պապը, շրջապատված ֆավորիտներով, մյուսում տեղի էր ունենում խոշտանգումը։ Իսկ խոշտանգումն այն էր, որ դատապարտվածին նստեցնում էին երեք ոտնաչափ բարձրություն ունեցող մի ցցի վրա, որը վերջանում էր ալմաստե

նիզակով։ Դա ավելի սարսափելի էր, քան թուրքական նիզակը, որի ծայրին մահն ավելի արագ է վրա հասնում։ Իսկ այստեղ ամեն ինչ այնպես էր արված, որ տառապանքները շարունակվեին մի քանի ժամ։

Սակայն Պլատինան չընդունեց իր դեմ հարուցված մեղադրանքները։ Պապի բոլոր չանքերն ապարդյուն անցան, և Պլատինային բանտ ուղարկեցին։ Նրա տեղը զբաղեցրին մյուս մեղադրյալները։ Նրանց մարմնի մսերը պոկոտում էին շիկացած աքցանով, վերքերի վրա հալած արճիճ լցնում, բայց դահիճները չկարողացան նրանց ստիպել, որ Պլատինային դրպարտեն։

Այնժամ Պողոս II-ը, ի վիճակի չլինելով Պլատինային և նրա ընկերներին պետական հանցագործներ անվանել, նրանց մեղադրեց հերետիկոսության մեջ։ Սակայն այդ ժամանակ գործին խառնվեց կայսր Ֆրիդրիխը։ Գալով Հռոմ, որպեսզի ստանա հարկերի այն բաժինը, որ պապը հավաքել էր նրա հպատակներից, նա համառորեն պնդեց Պլատինային ազատ արձակել։

Վերջում նշենք, որ մեծապատիվ քահանայապետը հռոմեացիներին արգելեց իրենց երեխաներին դպրոց ուղարկել, քանզի գտնում էր, որ կարդալն ու գրելը հոգևորականների արտոնությունն է։

## ԽՈՒՅՐԱԿԻՐ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ

Ֆրանչեսկո Ալբեսկոլո դելլա Ռովերե՝ այդ էր այն կարդինալի անունը, որն առաքելական գահ բարձրացավ Պողոս II-ի մահից հետո։ Հարգարժան պրելատը աղքատ ձկնորսի որդի էր և մանկության օրերին ինքըն էլ էր զբաղվել այդ հաճելի գործով։ Իհարկե, նա ավելի շատ իր ականջները կտեսներ, քան հռոմեական արքունիքը, եթե չհանդիպեր սենյոր դելլա Ռովերեին։ Հզոր մեծատոհմիկ աստիճանավորը պատանուն առավ իր պալատը և այնուհետև համառորեն եկեղեցական կարիերա էր նվաճում իր սիրեցյալի համար։

Պապ դառնալով Սեքստոս IV անունով Ֆրանչեսկոն իր գահակալումը նշանավորեց մի կոնդակով, որն ազդարարում էր, թե ինչպես ներկա պապի, այնպես էլ նրա հաջորդների ապօրինի զավակներն այսուհետև փոխվելու էին հռոմեական իշխանների իրավունքներից։ Դեկրետի անպատկառությունը ոչ ոքի չզարմացրեց, որովհետև սուրբ հայրը ընտրվելուց առաջ էլ հոգ չէր տանում իր անառակությունը թաքցնելու մասին։

Սեքստոսն իր ապօրինի որդի Պիետրո Ռիարիոյին, բացի իշխանական կոչումից, շնորհեց կարդինալի թասակ և տարեկան մեկ միլիոն հինգ հարյուր հազար էկյու թոշակ, մի գումար, որն այսօր էլ վիթխարի է, իսկ այն ժամանակ պարզապես հեքիաթային էր թվում։ Սակայն կուրտիզանուհի Թերեզա Ֆուլգորի՝ Պիետրոյի սիրուհու հրեշավոր քմահաճույքներին գոհացում չէր տա ոչ այդ գումարը, ոչ էլ դրանից ավելին։ Պիետրոյին սաստիկ օգնում էին. սիրառատ Թերեզան իր սիրալիրությունները ոչ ոքի չէր մերժում, և սուրբ կոլեգիայի բոլոր անդամները հերթով հաճախում էին նրա ննջախուցը։ Բարեբախտաբար, գեղեցկուհի Թերեզան վարակվեց գեշ հիվանդությամբ, որը փոխանցեց իր սիրեկային և Պիետրո Ռիարիոն, հալից ընկած, մեռավ երկու տարի տառապելուց հետո։

Սեքստոս IV-ը անասելի առատաձեռն հայրիկ է եղել։ Նա իր ընտանիքի անդամներին կառավարական պաշտոններ էր շնորհում, պարգևներ ու վիթխարի թոշակներ բաժանում սիրեկաններին ու բարեկամներին, անհամար զավակների համար ամեն միջոցի դիմելով կալվածքներ ձեռք բերում. նա իր արարքներով Իտալիայում երկպառակտչական պատերազմ հարուցեց։ Վերջ ի վերջո կարդինալներն այդ անսքող նեպոտիզմի համար քահանայապետին բողոք հայտնեցին։ Սեքստոս IV-ն իր արժանապատվությունից ցածր համարեց ուշադրություն դարձնել նրանց դժգոհության վրա։ Ջահմանափակվելով պապական գանձարանով, առատաձեռն հայրիկն իր ագահ հայացքը հառել էր Ֆլորենցիայի և Հռոմին սահմանակից մյուս իշխանապետությունների սերուլյների վրա։ Նա ուզում էր այդ իշխանապետությունները հանձնել իր ապօրինի որդի Հերոնիմուսի տնօրինությանը. Պիետրո Ռիարիոյի մահից հետո նրան էր նվիրված սուրբ Հոր ողջ հոգատարությունը։ Հասկանալով, որ Ֆլորենցիայի կառավարիչներին՝ Հզոր Մեդիչիներին, քնալ չի ուրախացնի այդ մտադրությունը, և չհամարձակվելով Ֆլորենցիային պատերազմ հայտարարել, Սեքստոնն իր սիրելի որդու հետ դավադրություն նյութեց Կոզիմո Մեդիչիի երկու թոռների՝ Ջուլիանոյի և Լորենցոյի դեմ։

Արքեպիսկոպոս Ֆրանչեսկո Սալվիատին, գայթակղվելով կարդինալական թասակով, համաձայնվեց ղեկավարել դավադրությունը։ Սուրբ ընտանիքի մյուս հանցակիցը, Հերոնիմուսի «Աղբորորդին», գնաց Հռոմ՝ մահափորձի օրն ու վայրը որոշելու համար։ Որոշեցին եղբայրներին սպանել եկեղեցում, պատարագի ժամին։ Այդ պատարագը համաձայնվեց մատուցել արքեպիսկոպոս Սալվիատին, որը պետք է տար դավադրությունն սկսելու ազդանշանը։

Նշանակված օրվա նախօրյակին արքեպիսկոպոսը, հավաքելով դավադրության մասնակիցներին, տվեց հետևյալ հրահանգները, իրենց անկաշկանդ պահել, որպեսզի ոչ ոք չկռահի նրանց մտադրությունը. ժամանակին տեղ գրավել եղբայրներից յուրաքանչյուրի թիկունքին, և ծնկի գալու պահին, հենց որ նա կբարձրացնի սուրբ հաղորդության թասը (դա պայմանական նշանն էր)՝ հասցնել հարվածը։

Դավադիրները կատարեցին արքեպիսկոպոսի հրահանգը։ Սակայն թերևս վախից կամ գուցե այն պատճառով, որ շրջապատող մարդիկ նրանց խանգարել էին ճիշտ տեղեր գրավել, նրանք թոլորը նետվեցին Ջուլիանոյի վրա և նրան սպանեցին, իսկ Լորենցոն, թեպետև վիրավորվեց, կարողացավ փախչելով փրկվել։

Իմանալով, որ հրոսակախմբի գլուխ կանգնած է եղել Սալվիատին, զայրացած ֆլորենցիացիներն արքեպիսկոպոսին և նրա չորս մեղսակիցներին կախեցին սինիորայի պալատի պատուհանների առաջ։ Նրանք պահանջեցին դատաստան տեսնել նաև կարդինալ Ռաֆայել Ռիարիոյի հետ, որ բռնվել էր տաճարի որմնախորշերից մեկում։ Բայց երբ նա հրապարակորեն վկայեց, որ դավադիրները սուրբ հոր հրամանն են կատարել, Լորենցո Մեդիչին նրան ներում շնորհեց։ Գալով Հռոմ, Ռաֆայել Ռիարիոն պապին հայտնեց, թե ինչ հետևանք է ունեցել մահափորձը։ Սեքստոսը, ցասմամբ համակված, ֆլորենցիացիներից պահանջեց անհապաղ իրեն հանձնել Լորենցո Մեդիչիին, նրան մեղադրելով արքեպիսկոպոսին սպանելու մեջ։ Վճռական մերժում ստանալով, պապը Ֆլորենցիայի վրա ինտերդիկտ դրեց այն պատրվակով, թե հանրապետությունը խախտել է եկեղեցու անքակտելի իրավունքները՝ արքեպիսկոպոսին դատապարտելով մահվան ու կախաղան հանելով։ Սուրբ հայրն արդեն սկսել էր վրիժառության ծրագիր մշակել, սակայն, ի մեծ ուրախություն ֆլորենցիացիների, նոր հոյսեր մի առ ժամանակով շեղեցին նրա ուշադրությունը։

## ԹՈՓԵՔ ԳԼՈՒԽՆԵՐԸ, ԲԱՑԵ ՎՃԱՐԵՔ

Ցոփության ու անառակության տրվելով, թունդ մսխող Սեքստոս IV-ը հանկարծ տեսավ, որ առաքելական գանձարանը դատարկ է։ Արդեն մի քանի տարի էր անցել, ինչ դադարեցվել էր թուրքերի դեմ արշավանք կազմակերպելու համար քրիստոնյա ժողովուրդներից հարկեր

գանձելը։ Այդ հնարքը ոչ ոքի չէր ոգևորում. այն շատ էին չարաշահել պապերը և վանականների ջոկատները, որ շրջում էին Եվրոպայով մեկ։ Հանգամանքները պահանջում էին շտապ մի նոր բան հորինել։ Պապը կարգադրեց բոլոր քրիստոնյաներից գանձել մի յուրատեսակ տուրք. նրանք պարտավոր էին սուրբ հորը բաժին հանել իրենց եկամուտների երեսուներորդ մասը։ Հրեաների գործն ավելի ծանր էր. նրանցից գանձում էին քսաներորդ մասը։ Ասենք, հրեաների բախտը բերեց, որ նորին սրբազնություն գլխում չծագեց նրանց ամբողջ ունեցվածքը բռնագրավելու միտքը։

Վանականները իրենց հատուկ ջանադրությամբ եռանդագին կատարեցին պապի հրամանը, և շուտով Վատիկանի նկուղները պայթում էին ոսկուց, որ հավաքվել էր անամոթ շորթողականության միջոցով։ Սեքստոս IV-ը, համի ընկնելով, անհապաղ նոր հնարք գտավ։ Նա լեգատներին ուղարկեց բոլոր քրիստոնեական մայրաքաղաքները, պարտավորեցնելով ոսկի հավաքել, կանգ չառնելով խոշտանգումների, կախաղանների, խարույկների և մահապատժի բոլոր աստվածահաճո ձևերի առաջ։ Նա Իսպանիայում լեգատ նշանակեց Ռոդրիգո Բորջիային, որը հետագայում, պապ դառնալով, հռչակվեց որպես մարդկային պատմության մեծագույն ոճրագործներից մեկը։

Այդ զազրելի անձնավորությանը Մադրիդում հանդիսավոր ընդունելություն ցույց տվին։ Թագավորն ինքը նրան ընդառաջ դուրս եկավ և ուղեկցեց մինչև նրա համար առանձնացված պալատը։ Բորջիան փութաջանորեն ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը։ Հոգևորականությունն անգամ չփրկվեց կոնտրիբուցիայից։ Հարկ է նշել, որ Իսպանիայի հոգևորականությունը այդ ժամանակներում չափազանց բարոյազուրկ էր։ Իսպանիայի եկեղեցականները ոչ միայն իսպառ զուրկ էին պատվի ու խղճի ղգացումից, այլև չափազանց տգետ էին. դրանով նրանք գերազանցում էին նույնիսկ իրենց իտալացի եղբայրակիցներին։ Զբաղվում էին գլխավորապես վաշխառուությամբ։ Մի խոսքով, դա մի ղորք էր, որ միանգամայն արժանի էր այնպիսի նողկալի առաջնորդի, ինչպիսին Բորջիան էր։ Նրա փորձված ղեկավարությամբ ինկվիզիցիան էլ ավելի ամրապնդվեց Իսպանիայում։

Մոլեգնած կաթոլիկները թափով հարձակվեցին հատկապես հրեաների վրա, որոնց ձեռքին զգալի հարստություն էր կուտակված։ Անկուշտ հոգևորականությունը վաղուց էր երազում զավթել նրանց ունեցվածքը։ Վերջապես վրա հասավ երկար սպասված պահը։ Այդ ժամանակ Իսպանիայում ապրում էր շուրջ հարյուր հիսուն հազար հրեա ըն-

*տանիք։ Կեղծ բարեպաշտ թագավորը, որի մականունը Կաթոլիկ էր, նշանավոր դոմինիկյան Թոմաս Տորկվեմադայի՝ «մեծ ինկվիզիտորի» վրա դրեց պիղծերին քրիստոնեական հավատին դարձնելու առաքելությունը։ Տորկվեմադան անմիջապես արյունահեղ ջարդ սկսեց, բոլոր հրեաներին հայտարարելով օրենքից դուրս։ Այդ հրեշավոր հրամանից հետո թագավորական բանակի զինվորները և սենյորները մեկ շաբաթվա ընթացքում կոտորեցին ավելի քան տասը հազար հրեա։ Ինչպես արյան գույնը գազազեցնում է ցուլին, այնպես էլ այդ կոտորածը սաստկացրեց թագավորի կատաղությունը։ Ասենք, պետք չէր, որ նա Տորկվեմադային գըրգռեր, վերջինս առանց նրա հրահանգների էլ անողոք դաժանությամբ հետապնդում էր թշվառ իսրայելցիներին։ Նրանցից շատերը փախան ուրիշ քաղաքներ, բայց ինկվիզիցիայի ձեռքերը երկար էին, և նա փախստականների հետևից հասնում էր ամեն տեղ, ուր էլ որ նրանք թաքնըվեին. նույնիսկ այլ պետություններ նրա համար խոչընդոտ չէին։ Տորկվեմադայի սխրանքները բավական հայտնի են պատմության դասագրքերից։ Մենք կնշենք միայն, որ հրեաների մասսայական ոչնչացման հետևանքով ձեռք բերած ֆինանսական հաջողությունները Ֆերդինանդ Կաթոլիկին մի այնպիսի հիացմունք պատճառեցին, որ նա ինկվիզիցիան դարձրեց մշտական հաստատություն և նրան կից ստեղծեց հատուկ խորհուրդ, իհարկե Տորկվեմադայի գլխավորությամբ։ Վերջինս միանգամայն արժանի էր այդ բարձր կոչմանը։ Այդ պահից ի վեր ինկվիզիցիան ըսկըսեց գործել անընդմեջ։ Ամբողջ թագավորությունը ծածկվեց կախաղաններով, խարույկներ վառեցին, և կացնի հարվածների տակ բզքված մարմիններից արյունը հոսում էր ի փառս սիրառատ Քրիստոսի։*

*Ինչպես հայտնի է, ինկվիզիցիան իր գոյությունը պահպանեց ընդհուպ մինչև XVIII դարը։ Միայն Ֆրանսիական մեծ հեղափոխությունը վերացրեց այդ հաստատությունը։*

## ՈՍԿԵ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

*Իհարկե, ինկվիզիցիայի եկամուտներից Սեքստոս IV-ը քիչ տոկոսներ չէր ստանում։ Աչքի ընկնելով անսահման ժլատությամբ, այդ պապը առնասելի առատաձեռն էր իր ֆավորիտների ու սիրուհիների նկատմամբ, և այդ պատճառով փողը նրա համար անվերջանալի տառապանքների*

աղբյուր էր։ Ճիշտ է, Սեքստոսի հնարագույտ երևակայությունը շատ անգամ է նրան դուրս բերել դժվարին վիճակից։ Այսպիսի էլ հիմա. դրամական սուր ճգնաժամի պահին նա հանկարծ հիշեց, որ Պողոս II-ը երկու հոբելյանների միջև ընկած ժամանակամիջոցը հասցրել էր քսանհինգ տարվա, բայց հոբելյանը չէր տոնվել, քանի որ պապը մյուս աշխարհն էր գնացել։

Սեքստոս IV-ն օգտվեց Պողոսի դեկրետից և հրապարակեց մի նոր կոնդակ, որը վերականգնում էր բաց թողած հոբելյանը։ Կոնդակը հավատացյալներին կոչ էր անում Հռոմ գալ և ինդուլգենցիաների պաշար հավաքել։ Հոբելյանական հայտարարվեց 1475 թվականը։ Չնայած պատերազմներին, որ այդ ժամանակ ամայացնում էին Եվրոպան, մոլեռանդությունն այնքան ուժեղ էր, որ բազմաթիվ ուխտավորներ արձագանքեցին Սեքստոս IV-ի կոչին։

Երբ դժոխք ընկնելու սարսափը սկսում է մարդուն տանջել, ինչպե՞ս կարելի է հրաժարվել վերին օգնությունից, որը հնարավորություն է տալիս հրաժարվել բավականություն ստանալ ներկայից և ազատվել ապագայի նկատմամբ ունեցած վախից։

Պատահել է, որ ասպետները մարտի դաշտում լքել են իրենց զինվորներին, որպեսզի ուխտագնացություն կատարեն դեպի առաքյալների գերեզմանները։ Ջանասիրության պակասի կամ գուցե այլ նկատառումների պատճառով իրենց տեղում մնացող հավատացյալները ոչինչ չէին շահում. վանականների հրոսակախմբերը, որ սուրբ աթոռի հարկահավաքների տիտղոսն էին կրում, նրանցից այնքան փող էին շորթում, որ լիուլի կծածկեր ճանապարհորդության և ինդուլգենցիա գնելու ծախսերը։ Բոլոր քրիստոնյա թագավորները Սեքստոսին մեծ նվերներ էին ուղարկում, իսկ փոխարենը նրանց դեսպանները մեղքերի թողություն էին բերում։ Շատ միապետներ անձամբ Հռոմ էին գնում։ Ազնվատոհմ և գեղեցիկ շատ տիկիններ Հռոմ էին ժամանում, որպեսզի թողություն ստանային իրենց անցյալ հանցանքների կամ անհաշիվ սիրային արկածների համար։ Որոշ տարեգիրներ հաղորդում են, թե պապը շատ ներբանկատ է գտնվել թողության համար իր մոտ եկած գեղեցիկ մեղսագործների նկատմամբ։ Նա ոչ միայն ինդուլգենցիաներ էր բաժանում, այլև նրանցից ոմանց պատվում էր սուրբ հոգու պարգևներով։ Ի դեպ, սուրբ հայրը նրանց շատ լավ պլոկում էր ինչպես մեղքերի թողության մագաղաթյա վկայականի, այնպես էլ իր գուրգուրանքների համար։ Ամենից առաջ փող՝ դա է միշտ եղել եկեղեցու նշանաբանը։

## ԵՐԵՔ ԽԻԶԱԽ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՎՇՏԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Սեքստոս IV-ի գահակալության վերջում Իտալիայում ավելի ու ավելի հաճախ էին բռնկվում հոգևորականության բռնատիրության դեմ ուղղված խռովություններ։*

*Օլգիատի, Կամպանչիո և Վիսկոնտի՝ այդպես էին կոչվում այն երեք պատանի միլանցիները, որոնք, բռնակալ Սֆորցայի դաժանություններից զայրացած, որոշել էին ժողովրդին ազատել Նրանից։ Նրանք վըճռել էին Սֆորցային սպանել բոլորի աչքի առաջ, նույնիսկ եթե նրա պահակախումբը այդ ժամանակ նրանց պատառ-պատառ աներ։*

*«Սֆորցան, այդ անողորմ բռնակալը,— գրում է տարեգիրներից մեկը,— սիրում էր զվարճանալ նրանով, որ մարդկանց ողջ-ողջ թաղում էր հողի մեջ»։*

*Իհարկե, հոգևորականությունը համերաշխ էր ապրում այդ զազրելի ու արգահատյալ թագավորի հետ։*

*Մննդյան տոների երկրորդ օրը, 1478 թվին, Սֆորցան գնաց սուրբ Ամբրիոսիոսի տաճարը։ Այդ օրվա պատարագիչն էր մի եկեղեցական բարձր աստիճանավոր։ Հանդիսավոր պատարագի թեժ պահին Կամպանչիոն և նրա ընկերները, դես ու դեն հրելով բռնակալին շրջապատող պալատականներին, եկեղեցի ներխուժեցին իբր նրա համար, որ կարևոր բան ունեն հաղորդելու սրբազնությանը։*

*Կամպանչիոն, ծրարը ձեռքին, ծունկ չոքեց բռնապետի առաջ և... դաշույնը խրեց նրա փորը։ Օլգիատին և Վիսկոնտին նույն պահին հարվածեցին նրա կրծքին ու մեջքին։*

*Սպանությունը կատարվեց կայծակնային արագությամբ, և Սֆորցան անկենդան ընկավ Ֆերարայի և Մանտուի դեսպանների ձեռքերի վրա, նախքան նրանք կհասկանային, թե ինչ է կատարվել։ Օգտվելով իրարանցումից, պատանիները նետվեցին դեպի դուռը։ Աղոթողները նրանց լռելյայն ճանապարհ տվին։ Բայց Կամպանչիոն, որի կոշկախթանները խրվեցին ծնկաչոք կանանց շրջազգեստների մեջ, վայր ընկավ, և պալատականները տեղնուտեղը սրախողխող արին նրան։ Վիսկոնտիին բռնեցին հենց մուտքի մոտ, և նա էլ արժանացավ նույն բախտին։ Միայն Օլգիատիին հաջողվեց փախչել, սակայն նրան էլ շուտով գտան և սպանչի խոշտանգումների ենթարկեցին։*

*«Չինվորները,— պատմում է տարեգիրը,— բռնեցին խիզախ մարտի-*

կի մալերից և նրան քարշ տվին ինկվիզիտորի պալատը, գլխին հարվածներ ու լուտանքներ տեղալով։ Նրան հրեշավոր մահապատժի դատապարտեցին. հոշոտեցին շիկացրած աքցաններով։ Օլգիատին զարմանալի արիությամբ դիմացավ բոլոր խոշտանգումներին։ Երբ մահապատժից առաջ ինկվիզիտորը նրան հարցրեց, թե կցանկանա արդյոք գութ հայցել, տառապյալը պատասխանեց. «Ես միայն մի բան եմ խընդրում. խնդրում եմ, որ իմ մարմինը, որ գտնվում է դահիճների իշխանության ներքո, պահպանի իր ուժերը և դիմանա նախանշված տանջանքներին, որպեսզի կառափնարանի վրա ես ի վիճակի լինեմ բացականչելու. «Մա՛հ թագավորներին, մա՛հ քահանաներին։ Կե՛ցցե ազատություն։ Կեցցե՛ հանրապետությունը»։

Կամքի այդ ուժը, որ զինաթափ կաներ նույնիսկ մարդակերներին, ավելի սաստկացրեց ինկվիզիտորների կատաղությունը։ Օլգիատին կառափնարան չհասավ՝ շունչը փչեց խոշտանգման պահին։ Նա ընդամենը քսաներկու տարեկան էր։

Այսպիսի սոսկալի վախճան ունեցան այն երեք արիասիրտ պատանիները, որոնց պատմությունն արժանի է, որ սերունդներն իմանան։

## ՍՈՒՐԲ ՀՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

1475 թվի Հոբելյանի ժամանակ Սեքստոսի հավաքած վիթխարի գումարները շատ արագ սպառվեցին։ Այն ժամանակ խույրակիր անառակը միտք հղաց եկեղեցական նոր պաշտոններ ստեղծել և դրանք աճուրդի հանել։ Օրինակ, Արագոնի եկեղեցու կառավարչությունը նա վաճառեց մի վեցամյա մանչուկի՝ Նեապոլի թագավորի որդուն։ Սակայն այդ կոչումներով գայթակղվողների թիվը մեծ չեղավ, և պապի հնարքը սպասված արդյունքը չտվեց։ Սուրբ հայրը ստիպված եղավ բավարարվել միայն պատահմամբ իրեն բաժին ընկնող եկամտաբեր գործերով։

Այսպես, Հոբելյանից մեկ տարի անց Պորտուգալիայի թագավոր Ալֆոնս V-ը, արդեն զառամյալ ծերունի, սիրահարվեց արքայադուստր Հովհաննայի՝ իր մերձավոր ազգականուհու վրա։ Ջարշահելով թագավորի ծերունական կրքերը, պապը շատ մեծ գումարով նրան թույլ տվեց ամուսնանալ արքայադստեր հետ։ Սուրբ հայրը դեռ չէր հասցրել ուղարկել այն կոնդակը, որով ամուսնանալու թույլտվություն էր տրվում,

ջրբ Նեապոլի թագավոր Ֆերդինանդը նրան առաջարկեց կոնդակն անվավեր համարել, դրա համար խոստանալով երկու անգամ ավելի մեծ գումար։ Բնականաբար, նորին սրբազնությունը անվավեր համարեց թուլյուվության կոնդակը, բայց, իհարկե, չվերադարձրեց այն փողերը, որ Պորտուգալիայի թագավորը հիմարություն էր ունեցել վճարել։

Այստեղից երևում է, որ աստվածահաճո գործերի անվան տակ կատարյալ կեղտոտ գործարքներ կատարելով՝ Սեքստոսն իր ֆինանսական գործարքների մեջ ավելի քիչ էր ներքանկատ, քան Հռոմի կայսր Վեսպասիանուսը, որն ասում էր, թե փողից հոտ չի գալիս։

Նրա ամենաամոթալի գործերից մեկն այն պայմանագրի նախագիծն է, որ չիրականացվեց իր կամքից անկախ պատճառներով։ Բայց այդ նախագծի գոյությունը վկայում են մի շարք պատմաբաններ և ժամանակագիրներ։ Խոսքը վերաբերվում է դաշնակից վենետիկցիներին գավաճանելու նրա պլանին. վենետիկցիներն այդ ժամանակ արյունահեղ պատերազմ էին մղում Մահմուդ II-ի դեմ։

Դաշնակիցները Վենետիկի հանրապետությանը ոչ մի օգնություն ցույց չտվին, և նրան ոչինչ չէր մնում անել, քան հաշտություն կնքել, թուրքերին զիջելով մի շարք ամրոցներ և վճարելով վիթխարի ռազմատուգանք, միաժամանակ պարտավորվելով ամենամյա տուրք վճարել։

Ո՞վ գիտե, միանգամայն հնարավոր է, որ Հիսուսը, սուրբ աղավնին և նրա տիկինը ուրիշ հին աստվածների հետ միասին հիմա կհանգչեին դիցաբանության միևնույն թանգարանում... Իհարկե, այդ ենթադրությունը փոքր ինչ պարադոքսային է։ Պետք է ենթադրել, որ Սեքստոս IV-ը մտադիր չէր սուլթանին զիջել հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, որ գտնվում էր առաքյալի հաջորդների ձեռքում։ Խոսքը, հավանաբար, վերաբերվում էր միայն հողատարածքներին... Ինչևիցե, փորձը չհաջողվեց. պապը չափազանց մեծ պահանջներ էր առաջադրել։ Սուլթան Մահմուդն առևտուր սկսեց, և բանակցություններն ի վերջո ձախողվեցին։

## ՍԹԱՓ ՄՏՔԵՐ

Ստիպված լինելով հրաժարվել շահադիտական խոշոր գործարքից, պապը ջանում էր իրեն փոխհատուցել մի շարք փոքր գործարքներով, և դրանց շնորհիվ նրա գրպանը մի բավական կլոր գումար մտավ։

Ամենահաջող ձեռնարկումն այն հասարակաց տների կազմակերպումն էր, որ գտնվում էին քահանայապետի բարձր հովանավորության ներքո։ Այդ տները նախատեսված էին հատկապես բարձր դասի ու հոգևորականության համար, անձնակազմն ընտրվում էր մեծագույն խնամքով։ Հասարակաց տներից պապի ստացած տարեկան եկամուտը կազմում էր քսան հազար դուկատ։ Այս թվերի ստուգությունը հավաստում է պատմաբան Կոռնելիուս Ագրիպան, որն այդ առթիվ հետաքրքիր բաներ է հաղորդում։

«Առաքելական կուրիայի պրելատները ևս,— ասում է նա,— որոշ իրավունքներ ունեին այդ տներից ստացվող եկամտի մի մասի վրա։ Այդ գործն այնքան սովորական էր համարվում, որ ես հաճախ էի լսում, թե ինչպես եպիսկոպոսները, հաշվելով եկամուտները, ասում էին. «Երկու վանքապատկան հողերն ինձ տարեկան տալիս են երեք հազար դուկատ, մի համայնքը՝ հինգ հարյուր, վանքը՝ երեք հարյուր, իսկ պապի հասարակաց տների հինգ բոզերը՝ երկու հարյուր հիսուն»։

Չցանկանալով փաստերը փոխարինել ենթադրություններով, մենք չենք պնդի, թե ազնվականական հասարակաց տների կազմակերպումը Սեքստոս IV-ի համար եկամտաբեր հոդված է եղել։ Հնարավոր է, որ կարդինալ Սանտա Լյուչիային պոռնկատներ կազմակերպելու թույլտվությունը Սեքստոսը տվել է անվճար, իբրև հատուցում նրա ինչ-որ ծառայությունների համար։ Ինչևիցե, փաստն ինքն անվիճելի է և հիշատակության արժանի։ Նշենք նաև, որ Սեքստոս IV-ն ինչ-որ պատճառներով կարդինալ Լյուչիային և նրա ընտանիքի բոլոր անդամներին թույլ է տվել տարվա երեք ամենաշոգ ամիսներին անձնատուր լինել արվամոլության։

Մի քանի եկեղեցական հեղինակներ համարձակվել են ասել, թե Սեքստոս IV-ը հովանավորել է գիտությունն ու արվեստը։ Այդ պընդումը՝ միանգամայն անհիմն է։ Դրա համար առիթ է ծառայել այն հանգամանքը, որ նա գնել է մի քանի թանկարժեք ձեռագրեր, որոնք շատ էժան վաճառում էին հույն փախստականները։

Այդ ձեռագրերով հարստացնելով Վատիկանի գրադարանը, սուրբ Հայրը պարզապես, ինչպես ասում են, օգտվել է առիթից։ Իրականում նա գրողներին ու նկարիչներին վերաբերվում էր վիրավորիչ անտարբերությամբ և նույնիսկ դաժանությամբ։

Բեյլն այդ կապակցությամբ մի բնորոշ մանրամասնություն է հաղորդում.

«Հեղձ Թեոդորոս Գիզացին ամբողջ կյանքն անցկացրեց Արիստոտե-

չի «կենդանաբանության» թարգմանության վրա։ Նա գրքի մի օրինակը, որ զարդարված էր ոսկով ու թանկարժեք քարերով, ներկայացրեց պապին։ Սեքստոսը վերցրեց գիրքը և հետաքրքրվեց, թե ինչ արժե կազմը։ Երբ հեղինակը հայտնեց գինը, պապը հրամայեց վճարել կազմի համար, այդ գումարի վրա չավելացնելով և ոչ մի գրոշ։

Թեոդորոս Գիզացին տված փողը նետեց Տիբրոս գետը և իրեն սովամահ արեց»։

Եվ մի՞թե նորին սրբազանությունը կարող էր ժամանակ ունենալ հետաքրքրվելու գրողներով, Արիստոտելով և նրանից կատարված թարգմանություններով, երբ պետք էր շարունակ մտածել փողի մասին և, ինչպես հետագայում Դանթեն էր ասում, «հարստացնել իր արջուկներին», իր կարծեցյալ եղբորորդիներին կամ որդիներին ավատական կալվածքներ բաժանել, նրանց համար հարսնացուներ փնտրել, ընդլայնելով միաժամանակ իր տիրույթները։

Սեքստոսին փող էր հարկավոր, որպեսզի իրագործեր իր վաղուց հղացած ծրագիրը։ Բացի այդ, նա չէր մոռացել ինքնակամ ֆլորենտացիներին, որոնք համարձակվել էին Սալվիատիին կախել։

Իր առևտրական գործարքների միջոցով մի մեծ գումար դիզելով, որ անհրաժեշտ էր զորք հավաքելու համար և, զորքի գլուխ կարգելով իր որդիներին, պապը պատերազմ հայտարարեց ոչ միայն Ֆլորենցիային, որը որոշել էր տալ իր որդի Ջերոմո Ռիարիոյին, այլև Վենետիկի հանրապետությանը, փափագելով վերջինս վերածել դքսության իր բարեկամներից մեկի համար։

Ինչպիսի՞ պատվարժան քահանայապետ։

Սկզբում պապական զորքը մի քանի՞ հաղթանակներ տարավ, բայց ամենավերջին պահին, երբ Վենետիկն ու Ֆլորենցիան նվաճելու համար մնում էր անել ևս մի քանի ճիգեր, պատերազմի գլխավոր ջիղը կտրվեց։ Պապի գանձարանում այլևս փող չկար։ Իհարկե, զինվորները կովում էին ոչ աստծու և նրա ներկայացուցիչների սիրուն. նրանք հայտարարեցին, թե զենքը դեն կնետեն, եթե իրենց չվճարեն։ Անակնկալի եկած, սուրբ Հայրը չկարողացավ ավելի լավ միջոց գտնել, քան նոր հարկ սահմանել թուրքերի դեմ պատերազմելու համար։

Դա արդեն չափից ավելի էր. որքան էլ մարդիկ հիմարացած լինեին, այդ կոնդակը համընդհանուր զայրույթ առաջացրեց։ Պապի հարկահավաքները Հռոմ վերադարձան այնպիսի խղճուկ ավարով, որ Սեքստոսն ի վիճակի չեղավ զորքը պահել։ Երեք տարվա կողոպուտից, հրդեհներից ու սպանություններից հետո նա ստիպված եղավ հաշտություն խնդրել։

Օրը պապը վերջնականապես համոզվեց, որ իրեն չի հաջողվի իր սիրելի Ջերոմո Ռիարիոյին դքսություն նվիրել, վշտից հիվանդացավ ու ջունչը փչեց...

Սեքստոսի մահից հետո Հռոմի ժողովուրդը կրակի մատնեց նրա սիրելիներ Ռիարիոյի և դելա Ռովերեյի դղյակները. զայրույթն ու ատելությունն այնքան մեծ էին, որ մարդիկ չխնայեցին նույնիսկ այդ վսեմաշուք որդյակների մեծափարթամ այգիների ծառերը։

Ամբոխը հրդեհեց այն ամրոցը, որ իր համար քահանայապետը կառուցել էր ուխտավորների փողով, քարուքանդ արեց սուրբ հոր մթերապահեստները և մթերքը բաժանեց աղքատներին։

Իսկ երբ քաղաքում կարգը վերականգնվեց, կարդինալներն արդեն կարող էին հանդիստ անցնել ընտրություններին, որպեսզի հանգուցյալ սրիկայի տեղը դնեին մի նոր սրիկա։

## ԸՆՏՐԱԿԱՆ ՇԼԱՓԼԱՎ

Սեքստոս IV-ի հաջորդի ընտրությունը մի փայլուն նմուշ է այն կոռուպցիայի, որ թագավորում էր սուրբ կոլեգիայում։ Առաջին իսկ երեկոյին, երբ կոնկլավը հավաքվեց, սուրբ Մարկոսի կարդինալը տասնվեց ձայն ստացավ։ Երեք ձայն հերիք չէր անում, որպեսզի նա նվաճեր գավաթը, այսինքն խույրը։ Այնժամ նրա կոլեգան՝ սուրբ Պետրոսի կարդինալը, նրան առաջարկեց ձեռք բերել երեք ձայն, պայմանով, որ փոխարենը կստանա հիշյալ կարդինալի դղյակը, որ գտնվում էր սուրբ Հրեշտակի տաճարի մոտ։

Սուրբ Մարկոսի կարդինալը գտավ, որ կոլեգան չափն անցնում է, և նրան առաջարկեց իր տիրույթներից ընտրել պակաս արժեքավոր մի բան։ Բայց սուրբ Պետրոսի կարդինալը չզիջեց և պահանջեց միայն դղյակը։ Փորձարքը ձախողվեց, և վիրավորված կարդինալը փոխկանցլերի հետ սկսեց պլան մշակել, թե ինչպես պատժեն սուրբ Մարկոսի համառ կարդինալին։

Գիշերվա կեսին նրանք արթնացրին բոլոր պրելատներին և սկսեցին նրանց համոզել իրենց ձայները տալ Ջիբոյին՝ Մելֆի կարդինալին։ Կարդինալ Սավելլիին նրա ձայնի համար նրանք առաջարկեցին մի դղյակ և Բոլոնիայի լեգատի պաշտոնը, կարդինալ Կոլոնային՝ դղյակ և պապա-

կան Լևիղեցու լեգատի պաշտոնը, ինչպես նաև քսանհինգ հազար դուկատի ռենտա և այլ արտոնություններ, որոնք կբերեին ևս յոթ հազար դուկատ շահույթ։

Կարդինալ Օրսինիի հետ նրանք լեղու գտան, խոստանալով մի դղյակ և սուրբ աթոռի գանձարանապետի տիտղոսը։ Կարդինալ Մարտինուզինոյին խոստացան մի դղյակ և Ավինյոնի եպիսկոպոսությունը։ Արագոնի թագավորի որդուն, որպես լիակատար սեփականություն, տվեցին Պոնտեկորվո քաղաքը։ Պարմի կարդինալին յուղեցին՝ տրամադրելով սուրբ Լավրենտիոսի դղյակն իր բոլոր եկամուտներով։ Միլանի կարդինալին խոստացան Լաթերանի արքեպիսկոպոսի աստիճան շնորհել և տալ Ավինյոնի լեգատի պաշտոնը։ Վերջապես, սուրբ Պետրոսի կարդինալն ինքն իրեն փոխհատուցեց նրանով, որ ձեռք գցեց մի հսկայական դոմեն, դրան հարակից հինգ կալվածք և սուրբ աթոռի գեներալիսիմուսի աստիճանը։

Մելֆի կարդինալը ստացավ ձայների մեծ մասը և պապ դարձավ Իննովկենտիոս VIII անունով։ Սուրբ Մարկոսի տաճարի նրա կոլեգան հասկացավ իր դեմ նյութված դավերը և փորձեց վիճարկել ընտրությունների ճշտությունը։ Նա վիրավորական խոսքեր տեղաց սուրբ կոլեգիայի անդամների գլխին, ասելով, թե անթույլատրելի է այդպես արագ փոխել քվեարկության արդյունքները, չէ որ նախօրյակին ինքն էր ստացել ձայների մեծամասնությունը, մինչդեռ հաջորդ օրը նրա օգտին տրվել էր միայն մեկ ձայն, այն էլ իր սեփակա՞նը...

Կարդինալները միայն ժպտում էին։ Նրանք ասացին, թե գիշերը սուրբ հոգին կարողացել է իրենց լուսավորել, և ամբողջ բարեպաշտ ժողովի ծիծաղի ու կատակախոսությունների ներքո հաստատվեց Իննովկենտիոսի ընտրությունը։

## ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԻԱԶՈՐԱԳՐՈՎ

Իննովկենտիոս VIII-ը պապական գահ բարձրանալու պահին ուներ տասնվեց ապօրինի զավակ։ Վատիկանում տեղավորվելուն պես նա, իր նախորդների օրինակով սկսեց հոգալ, որ զավակներին ապահովի վանքապատկան հողերով, եպիսկոպոսություններով ու իշխանապետություններով։ Նա նույնիսկ փորձեց իր Ֆրանցիսկու որդու համար զավթել Նեապոլի թագավորության մի մասը, բայց Ֆերդինանդ թագավորը դրան

խանգարեց սկզբում դիվանագիտական միջոցներով, իսկ հետո՝ նաև պնդի գնությամբ։ Իսկ սուրբ հայրը դեսպաններին գոռոզաբար հայտարարեց, թե նրանց թագավորը ենթարկվում է երկնային իշխանապետին, որին ինքը, նորին սրբազնությունը, ներկայացնում է երկրի վրա։

Պատերազմը պապից խոշոր միջոցներ պահանջեց։ Նա գործի դրեց այն բոլոր միջոցները, որ օգտագործել էին իր նախորդները։ Պապն այնքան լկտի գտնվեց, որ կարողացավ թող փչել մարդկանց աչքերին, նորից հայտարարելով թուրքերի դեմ տխրահռչակ արշավանքը, որով պապերն արդեն բազմիցս քողարկել էին իրենց ագահությանը հագուրդ տալու տենչանքը։

Ձգտելով բոլոր ուժերը կենտրոնացնել Նեապոլի թագավորի՝ իր ահեղ թշնամու դեմ պայքար մղելու վրա, Իննովկենտիոսը որոշեց նախ հաշիվները մաքրել ոմն սենյոր Բուկոլինիի հետ, որը նստած լինելով Օզիմո քաղաքում, Անկոնայի մի կարևոր կետի մերձակայքում, հարձակումներ էր գործում, պապական տիրույթների վրա։ Լուրեր էին շրջում, թե Բուկոլինին կապված է սուլթան Բայազիդի հետ, որին խոստացել է նվաճել Իտալիան, եթե նա տասը հազար թուրք իջեցնի Հռոմանիայի ափը։

Իննովկենտիոսը փորձեց ուժ գործադրելով բռնել Բուկոլինիին։ Նա Օզիմո ուղարկեց տասներկու հազար հեծյալ և ութ հազար հետևակային զինվոր։ Սակայն քաղաքի կայազորը խիզախորեն ետ մղեց պապական բանակի բոլոր հարվածները։

Այնժամ սուրբ հայրը կարդինալ Ջուլիանիին՝ իր հեծելազորի հրամանատարին գրեց, որ եթե անհնար է թշնամուն հաղթել, ապա նրան պետք է գնել։

Բուկոլինին անզգուշություն ունեցավ համաձայնվելու այդ առաջարկությանը, և Օզիմոյին ծախելով յոթ հազար ոսկյա էկյուով, իր զինվորներին ցրեց։ Միլան ժամանելուց երկու օր անց Բուկոլինիին գտան ննջասենյակում խեղդամահ արված. գիշերը ինչ-որ պոռնիկ խեղդել էր սենյորին, որպեսզի նորին սրբազնությանը վերադարձնի նրա ծախսած յոթ հազար էկյուն։

## ՄԱՐԴԱՈՐՍ

Իննովկենտիոս VIII-ը խղճի խայթ չէր զգում իր ճանապարհին կանգնած մարդուն սպանելուց հետո։ Ի դեպ, ավելի ճիշտ կլինի ասել, որ

ես առհասարակ որևէ պատճառաբանություն չէր փնտրում իր ոճիրներն արդարացնելու համար։ Այն ուղերձները, որ Իննովկենտիոսն ուղարկում էր լեգատներին, որպեսզի նրանց խթաններ ավելի փութաջան կերպով հետապնդելու հերետիկոսներին, նրա սառնասիրտ դաժանության իսկական հուշարձաններ են։ Ահա թե ինչպես է նկարագրում պատմաբան Պետրենը վալդենսյանների դեմ ուղղված խաչակրաց արշավանքը.

«Ալբերտը, Կրեմանի արքեպարկավագը, որին Իննովկենտիոս VIII-ը Ֆրանսիա էր ուղարկել վալդենսյաններին կոտորելու համար, թագավորից թույլտվություն ստացավ առանց որևէ դատական քաշքշուկի գործել նրանց դեմ, օգտվելով թագավորական լեյտենանտ Ժակ Լապալի և խորհրդական Ժան Ռաբոյի օժանդակությունից։ Այդ երեք սրիկաները՝ լեգատը, թագավորական լեյտենանտը և խորհրդականը, կատաղի վարձկանների ավազակախմբի գլուխն անցած հարձակվեցին Լուարայի հովտի վրա, որպեսզի ոչնչացնեն նրա բնակիչներին։ Սակայն նրանք այնտեղ ոչ ոքի չգտան։ Իմանալով, որ ավազակները մոտենում են, թշվառ հերետիկոսները, վերցնելով իրենց երեխաներին, թաքնվեցին այն լեռներում, որ շրջապատում են բազմաթիվ քարանձավներով հարուստ բերքառատ հովիտը։ Այն ժամանակ արքեպարկավագը և իր օգնականներն խնդրեցին մարդասիրաբար կազմակերպեցին։ Մարդիկ նրանց համար ասես աղվեսներ լինեին։ Ամեն անգամ, երբ նրանք գնում էին որևէ քարանձավ, ուր մարդիկ էին թաքնված, մուտքը ծածկում էին ծղոտով կամ ցախով և կրակ տալիս։ Մարդիկ քարանձավներում խեղդվում էին ծխից, իսկ եթե փորձում էին դուրս գալ, ապա հանդիպում էին զինվորների նիզակներին, որոնք նրանց ետ էին մղում դեպի կրակը։

Այդ դատաստանն այնպիսի սարսափ էր առաջացրել, որ շատ մարդիկ, որոնք փորձել էին թաքնվել պապի դահիճներից, ինքնասպանություն էին գործում. այդ թշվառներն իրար սպանում էին կամ նետվում անդունդը, միայն թե ողջ-ողջ չայրվեին։

Եթե դահիճների ձեռքի տակ վառելիք չէր լինում, նրանք պատրաստ փակում էին քարանձավի մուտքը կամ ծածկում խոշոր քարերով։ Լեգատի մեկնելուց հետո լեռներում պեղումներ կատարվեցին, քարանձավներում հայտնաբերվեց ավելի քան ութ հարյուր մանկան դիակ. երեխաներն իրենց օրորոցներում կամ մայրերի գրկում ծխից խեղդվել էին ի՛նչ սոված մահ եղել։

Պապի դահիճները բարեխղճորեն կատարեցին իրենց առաքելությունը. վեց հազար վալդենսյաններից, որ բնակվում էին այդ քարեբեր հովտում, մնաց վեց հարյուր մարդ, որոնք ողջում էին իրենց եղբայրնե-

րի մահը։ Այդ թշվառների ամբողջ ունեցվածքն իրար մեջ բաժանեցին ժակ Լապալը, Կրեմոնի արքեպարկավագը և Ժան Ռաբոն։ Բացի դրանից, լեգատը իր եռանդի ու անգթության համար պապից եպիսկոպոսի աստիճան ստացավ»։

## ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ VIII-Ի ՎԵՐՋԻՆ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուլթան Մահմուդ II-ի մահից հետո նրա երկու որդիները, Բայազիդը և Ջիհիմը, գահի համար սկսեցին իրար հետ պայքարել, որի ընթացքում շատ արյուն թափվեց։ Պարտված Ջիհիմի եղբոր վրեժխնդրությունից փրկվելու համար փախավ Եգիպտոս, այնտեղից անցավ Ֆրանսիա և, վերջապես, սուրբ հոր հովանավորությունը ձեռք բերելու նպատակով գնաց Իտալիա, հույս ունենալով, թե այնտեղ ավելի անվտանգ կապրի, քան Կառլոս VIII-ի թագավորությունում։

Նա Հռոմ հկավ այն ժամանակ, երբ Իննովկենտիոսը, սպառելով իր պաշարները, ստիպված էր հրաժարվել Նեապոլի թագավորության նկատմամբ ունեցած նկրտումներից և Ֆրանսիայի հետ հաշտություն կնքել։

Թուրքիայի գահաժառանգի հայտնվելը թևավորեց պապին. նա իսկույն հասկացավ, թե իրեն ինչպիսի օգուտ կարող է տալ երկու եղբայրների երկպառակությունը։

Երբ հրապարակային ընդունելության ժամանակ արարողապետը Ջիհիմին առաջարկեց համբուրել պապի կոշիկը, մահմեդականը կատաղեց և Մահմեդի միրուքով երդվեց, թե երբեք չի դիպչի այդ այլանդակությանը։ Թարգմանիչը խոհեմաբար չթարգմանեց Ջիհիմի խոսքերը ասելով միայն, թե Ջիհիմը խնդրում է իրեն ապատել կոշիկը համբուրելուց։

Այլ պարագաներում Իննովկենտիոսը, իհարկե, դատապատան կտեսներ համառ գահաժառանգի հետ, բայց Ջիհիմը նրան պետք էր։ Այդ պատճառով սկսեց նրան հավաստիացնել, թե ինքը նրա բարեկամն է, և նույնիսկ հանդիսավոր կերպով երդվեց, թե նրա համար կնվաճի Կոստանդնուպոլսի գահը։

Պապը նախ և առաջ, որպես հյուրասեր տանտեր, շանտաժի դիմելով, Բայազիդից խոշոր գումար շորթեց, սպառնալով հօգուտ Ջիհիմի Արևելքում մեծ ապստամբություն բարձրացնել։ Բացի դրանից, նա Բայազիդին ստիպեց ստորագրել մի պայմանագիր, ըստ որի Բարձր դուռը

պարտավորվում էր պապին զինվորներ տրամադրել, երբ նա ցանկանար։ Դա նորին սրբազնությանը հնարավորություն տվեց վերսկսել Ֆերդինանդի դեմ մղած պայքարը։ Սակայն դրանով չէին ավարտվում Թուրքիայի գահաժառանգի պատմության հետ կապված բոլոր օգուտները։

Ինչպես մենք արդեն տեսանք, թուրքերի դեմ մղվելիք խաչակրաց արշավանքը շատ անգամ է Իննովկենտիոս VIII-ի նախորդներին առիթ տվել կողոպտելու Եվրոպայի ժողովուրդներին։ Շատ հավանական է, որ Հռոմի կուրիան պատրաստվում էր սուլթանի դեմ արշավանք կազմակերպել նրա եղբոր օժանդակությամբ, որը, որպես գահի հավակնորդ, սիրով կգլխավորեր այդ ձեռնարկումը և որը Թուրքիայում, հավանաբար, դեռևս շատ կողմնակիցներ ուներ։

Սուրբ հայրը չէր կարող չօգտվել նման իրադրությունից, բայց նա, իհարկե, չսահմանափակվեց թուրքերի դեմ մղվելիք պատերազմի համար տուրքեր հավաքելով. նրա գլխում հասունացել էր ավելի խորամանկ մի պլան։

Մի կողմից, նա Եվրոպայի բոլոր արքունիքները լեգատներ ուղարկեց, որպեսզի հայտնեն, թե եկեղեցաժողով է հրավիրվում, որտեղ նոր խաչակրաց արշավանք է հայտարարվելու։ Մյուս կողմից, եռանդագին բանակցություններ սկսեց սուլթանի հետ, սակարկելով հաշտության գնի շուրջը։

Իննովկենտիոսը, ինչպես տեսնում ենք, միանգամից երկու նապաստակի ետևից էր ընկել և, հակառակ ժողովրդական առածի, միանգամից երկուսն էլ բռնեց։

Սկեղեցաժողովում, որին պատվիրակներ էին ուղարկել բոլոր թագավորությունները, պրովինցիանները, ինչպես և շատ թե քիչ նշանավոր քաղաքներ, որոշվեց, որ բոլոր քրիստոնյաները պարտավոր են իրենց վրա վերցնել անհավատների դեմ պատերազմ մղելու ծախքերը, և պապը լիազորված է տուրքեր նշանակել, հանգանակություններ կատարել, ինդուլգենցիաներ, թուլլատրական թղթեր ու արտոնություններ վաճառել, որքան անհրաժեշտ կհամարի հանուն խաչակրաց արշավանքի։

Իննովկենտիոսը չհապաղեց առավելագույնս օգտագործել իրեն վերապահված իրավունքը։ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Հունգարիայում, Բոհեմիայում, Լեհաստանում ու Անգլիայում նա այնպիսի հարուստ բերք հավաքեց, որ ստիպված եղան առաքելական մի քանի նոր շենքեր կառուցել հարկահավաքների բերած ոսկին ու արծաթը տեղավորելու համար։

Միաժամանակ հաջողությամբ պսակվեցին նաև Արևելքում վար-

վող բանակցությունները։ Սուլթան Բայազիդը, վախենալով Իննովիկենտիոսի սպառնալիքներից, համաձայնվեց վճարել նրա պահանջած գումարը։ Դեռ ավելին, նա պապին ու նրա կարդինալներին ուղարկեց թանկարժեք քարից պատրաստած շատ հարուստ ընծաներ, ինչպես նաև երեսուն չքնաղ ջերքեզուհիներ։

Ընծաները պապի արքունիքում խանդավառություն առաջացրին, շատերը նույնիսկ ասում էին, թե մահմեդականություն կընդունեն։ Իհարկե, դա սոսկ կատակ էր. հարեմ պահելու համար բնավ կարիք չկար մահմեդականություն ընդունել։

Այդ շքեղ նվերներից բացի, Բայազիդն ուղարկեց նաև հարյուր վաթսուն հազար ոսկյա էկյու Զիզիմին և նրա շքախմբին պահելու համար. նորին սրբազնության պլանի հաջողությունը գերազանցեց բոլոր սպասելիքները։

Թուրք դեսպանների Հռոմ ժամանելուց մի քանի օր անց Իննովիկենտիոսին ներկայացավ մի նոր պատվիրակություն, որ ուղարկել էր Եգիպտոսի խալիֆը։ Խալիֆը պապին խոստանում էր տալ չորս հարյուր հազար դուկատ, որպես անվերապահ սեփականություն Երուսաղեմը հանձնել քրիստոնյաներին և նպաստել Արևելքում պապի բոլոր զավթողական ձեռնարկումներին, եթե նա փոխարենը ազատի Զիզիմին։

Դեսպաններն Իննովիկենտիոսից չէին թաքցնում իրենց մտադրությունները. Եգիպտոսի խալիֆն ուզում էր Զիզիմին իր զորքերի գլուխ կարգել և տապալել Բայազիդին, որին համարում էր երդվյալ թշնամի։

Իննովիկենտիոսն ընդունեց առաջարկությունը. պապը սովորություն չուներ փողից հրաժարվել, ինչի համար էլ դա առաջարկված լիներ։ Այդ որոշումը բացարձակ ուխտադրժություն էր Բայազիդի նկատմամբ, բայց պապը իր արժանապատվությունից ցածր էր համարում այդպիսի դատարկ բաները հաշվի առնել։

Բացի դրանից, չէ որ նա Զիզիմին օգնությո՞ւն էր խոստացել։ Ի՞նչ կա որ, նորին սրբազնությունը հիմա կկատարի իր խոստումը, կարևոր չէր, որ կկատարի ուրիշի միջոցով։ Եվ նա դեսպաններին խոստացավ առաջին իսկ հնարավորության դեպքում Զիզիմին Կահիրե ուղարկել։

Բանակցություններն ընթանում էին միանգամայն գաղտնի. սակայն խալիֆի դեսպանները դեռ չէին հասցրել Հռոմից գնալ, երբ թուրք դեսպանին հայտնի դարձավ, որ պապը պատրաստվում է Զիզիմին ազատել, չնայած սուլթանից ստացած բոլոր նվերներին։

Ի՞նչ կերպ թուրք դեսպանն իմացավ խալիֆայի հետ վարվող բանակցությունների մասի՛ն։ Տարեգրությունը դա չի հայտնում, բայց

Կարելի է ենթադրել, որ ճարպիկ գործամոլ պապն ինքն է դեսպանին հայտնել կահիրեից ստացած առաջարկության մասին։

Թուրք դեսպանը պապին առաջարկեց վեց հարյուր հազար ոսկյա էկյու այն բանի համար, որ թունավորի Զիզիմին։ Քահանայապետը համաձայնվեց։ Նա ստացավ վեց հազար էկյուն և տվեց իր վսեմագույն թույլտվությունը, բայց պահանջեց իրեն իրազեկ պահել, թե ինչպես է իրագործվելու այդ պլանը։

Դեսպանը, խարդավանք չենթադրելով, պապին տեղեկացրեց, թե հաջորդ օրը, նրա արքունիքի պահակախմբի սպա Քրիստափոր Մակրենը թույն կլցնի այն ջրամանի մեջ, որ դրված է թագաժառանգի սեղանի վրա։

Պատմաբան Ռայնալդը, որին մենք պարտական ենք այս տեղեկություններուն համար, հայտնում է. «Իննովկենտիոսը հավանություն տվեց այդ պլանին, և դեսպանը նույն օրը թույնը հանձնեց մարդասպանին։ Բայց սուրբ հայրը, որն այդ խաղի մեջ ահագին գումար էր ձեռք գցել, բնավ ցանկություն չուներ զրկվելու իր գերուց։ Նույն օրը երեկոյան պապական պահակախումբը Քրիստափոր Մակրենին ձերբակալեց և հանձնեց դատի։ Նա խոստովանեց և դատապարտվեց քահահատման՝ շիկացած աքցանների միջոցով։ Մահապատժից հետո նրա այլանդակված մարմնի մասերը գամեցին քաղաքի դարպասներին»։ «Այդ աղաղակող ուխտադրժությունն ու խարդախությունն անհնար դարձրեցին հետագա բանակցությունները, և հաջորդ օրը դեսպանը նավեց Կոստանդնուպոլիս, ամեն տեղ տարփողելով, թե սուրբ հայրը վկտի խարդախ է»։

Իննովկենտիոսը բնավ չէր անհանգստանում, թե իր մասին սուլթանն ինչ է մտածում կամ խոսում. պապը միայն քթի տակ ծիծաղում էր. նա վիթխարի գումարներ էր ձեռք գցել (միակ բանը, որ նրա համար նշանակություն ուներ), մնացածը նրան քիչ էր հետաքրքրում։

Պապը դեռ միառժամանակ շարունակեց իր շանտաժը։ Նա փող էր կորզում, լուրեր տարածելով, թե Բայազիդի ներկայացուցիչներն այն պատճառով են վայրացած մեկնել, որ ինքը հրաժարվել է նրանց հետ հաշտություն կնքել։ Այդ լուրերը, որոնց ձայնակցում էին նրա արբանյակները, հնարավորություն էին տալիս մեծացնել տուրքերը։ Քահանայապետի վերջին խարդախությունը ոչ միայն չի անվանարկել նրան, այլև օգուտ է բերել։

Պապի բուռն հաջողություններն իրենց գագաթնակետին հասան նրա կյանքի վերջալույսին։ Վախճանվելուց առաջ նա մի ավելի մեծ

բավարարություն ղադաֆ, վերջապես նեապոլի թագավորին ստիպելով հրաժարվել այն կալվածքներից, որ այնպես մոլեգնաբար ուզում էր իր որդուն հանձնել։

Այդ իրադարձությունից շատ չանցած նա մեռավ կաթվածից։

Ըստ որոշ պատմաբանների, Իննովկենտիոսի բժիշկը, չանալով արթնացնել նրա կենարար ուժերը, դիմել է ոճրալի միջոցի, մեռնողի երակների մեջ ներարկելով երեք մանչուկի արյուն։ Պապն իմացած է եղել այդ մանչուկների սպանությունը, և համաձայնվել է այդ բանն անել։

Ի՞նչ կա որ, մենք գտնում ենք, որ նա միանգամայն ընդունակ է եղել այդպիսի արարքի։

## ԱՂԵՔՍԱՆԴՐ VI

Բո՜րջիա... Ահա մի անուն, որ դարձել է բոլոր արատների համանիշ։ Իսկ մինչդեռ քչերին է հայտնի երկրի վրա ապրած այդ իսկական սատանայի բոլոր չարագործությունները։

Նրա մայրը, ծննդյամբ Բորջիա (որի տոհմաբանությունը որոշ պատմաբաններ սկսել են Արագոնի թագավորներից), ոմն Գոտֆրիդ Լենզոլոյի կինը, երկարատև կապի մեջ է եղել իր եղբար Ալֆոնսո Բորջիայի հետ, որն առաքելական գահ էր բարձրացել Կալիստոս III անունով։

Ռոդրիգոն եղել է նրանց հանցագործ կապի ծնունդը. այդ փաստն այնքան ակնհայտ էր, որ Գոտֆրիդ Լենզոլոն բաժանվեց կնոջից, հրաժարվեց ճանաչել երեխային, և, այդպիսով, Ռոդրիգոն ժառանգեց մոր և իր փաստական հոր անունը։

Դեռևս վաղ հասակում նա աչքի էր ընկնում արտասովոր ընդունակություններով և անլուսնյակ բնավորությամբ։ Իրավագիտություն սովորելով, նա կարճ ժամանակում արտակարգ պերճախոսությամբ օժտված, մութ ու կեղտոտ գործերի մեջ մասնագիտացած փաստաբանի անուն հանեց։ Շատ շուտով նա սկսեց նեղվել իր մասնագիտությունից, որը նրան պարտավորեցնում էր իրեն զսպել, և մի գեղեցիկ օր փաստաբանի պատմուճանը փոխարինեց զինվորականի համազգեստով։ Այժմ արդեն նրան ոչինչ չէր խանգարում կատարյալ ազատություն տալու իր ստոր բնազդներին։

Այդ ժամանակ նա կապված էր մի իսպանուհու հետ. այդ այրին, որն անասելի գեղեցիկ էր, ճիշտ է, տարիքով նրանից շատ մեծ էր և երկու աղջիկ ուներ։ Գայթակղեցնելով մորը, Ռոդրիգոն պղծեց նրա երեխաներին, նրանց վավաշական հաճույքների սեր պատվաստելով։ Երբ մայրը մեռավ, նա մեծ աղջկան փակեց վանքում, իր համար պահելով փոքրին, որն ավելի գեղեցիկ էր։ Սա Ռոդրիգոյից ծնեց հինգ երեխա, որոնցից կենդանի մնացին Ֆրանչեսկոն, Կեսարը, Լուկրեցիան և Ջիֆրիդը։

Յոթ տարի շարունակ Ռոդրիգոյի ուրախ ու անառակ կյանքի համբավը թնդում էր Իսպանիայով մեկ, և դա քիչ չնպաստեց, որ նրա հայր և քեռի Ալֆոնսո Բորջիան պապ ընտրվեր։

Բարեպաշտ քահանայապետը ջերմորեն սիրում էր պատանուն։ Հենց որ գլխին խույր դրին, նա անմիջապես իր մոտ կանչեց Ռոդրիգոյին։ Նրա պահանջով երիտասարդը հանեց վինվորական համազգեստը և փարաջա հագավ։ Բնական է, որ բարձր հովանավորի օժանդակությամբ Ռոդրիգո Բորջիան արագորեն եկեղեցական կարիերա արեց։ Արդեն մի քանի տարի անց նա ստացավ Վալենսիայի արքեպիսկոպոսի աստիճանը։ Ռոդրիգոյի Հռոմ գալուց հետո պապը նրան կալվածքներ նվիրեց, որոնք տասներկու հազար էկյու եկամուտ էին տալիս։ Տոհմական կալվածքներից ստացվող երեսուն հազար դուկատի հետ այդ գումարը Ռոդրիգոյին հնարավորություն տվեց մեծատոհմիկ աստիճանավորի կյանք վարել։

Գտնելով, որ արտաքին պատշաճություններ պահպանելն անհրաժեշտ է իր փառասիրական դիտավորությունները մինչև վերջ իրագործելու համար, Ռոդրիգոն սիրուհուն իր հետ Հռոմ չտարավ, այլ բնակեցրեց Վենետիկում, որտեղ ժամանակ առ ժամանակ այցելում էր նրան։

Ստանալով Վալենսիայի արքեպիսկոպոսությունը, Ռոդրիգոն ապատվեց իր թեմն անմիջականորեն կառավարելու հոգսից։ Կալիքստոս III-ը նրան անբաժան պահում էր իր մոտ, որովհետև այն սերը, որ տածում էր իր ապօրինի որդու նկատմամբ, միմիայն հայրական սեր չէր։ Այնուամենայնիվ արտաքնապես խստապահանջ գործելակերպը և բարեպաշտության կեղծ դիմակը շուտով Ռոդրիգոյի համար սուրբ մարդու համբավ ստեղծեցին։ Միայն քչերն էին կռահում սուրբ հոր հետ նրա ունեցած կապի իսկական բնույթը։ Շուտով պապը Ռոդրիգոյին եկեղեցու փոխկանցլեր և սուրբ Նիկողայոսի կարդինալ-սարկավագ նշանակեց՝ քսանութ հազար ոսկյա էկյու կենսաթոշակով։

Այդ պահից սկսած Ռոդրիգոյի բոլոր մտքերն ուղղված էին լոկ մի նպատակի՝ իր համար ուղի հարթել դեպի առաքելական գահը։ Նա սկսեց իսկական ճգնավորի կյանք վարել։ Ինչպես Մորիս Լաշատրն է հաղորդում, մարդկանց մեջ նա երևում էր միշտ ձեռքերը կրծքին խաչած, աչքերը գետին հառած, խոսում էր սրտառուչ ու վեհաձևորեն, ջերմեռանդորեն այցելում էր եկեղեցիները, հիվանդանոցները, բարեգործական հաստատությունները, առատորեն ողորմություն բաժանում, տարփողում, թե իր ունեցվածքը կտակում է աղքատներին։ Նա ցույց էր տալիս, թե խորապես արհամարհում է հարստությունը, ծայրահեղ սեր դրսևորում կրոնի ու բարոյականության նկատմամբ։ Եվ Հռոմի ժողովուրդը, չնայած որ եկեղեցականները հարյուրամյակներ շարունակ խարբել էին նրան, այս անգամ էլ թույլ տվեց իրեն հիմարացնել։ Ռոդրիգոյին Սողոմոն են՞ անվանել իմաստության, Եհովա՝ հանդուրժողականության և Մովսես՝ աստծո օրենքին հավատարիմ լինելու համար։

Շարունակելով անխոնջ աշխատել իր պաշտոնում, Ռոդրիգո Բորջիան երբեք բաց չէր թողնում սուրբ կոլեգիայի նիստերը, փութաջանորեն նվաճելով իր կոլեգանների համակրանքը և մարդկանց նկատմամբ ցուցաբերելով արտասովոր հանդուրժողականություն ու բարյացակամություն, այսինքն այնպիսի հատկություններ, որ բնավ չուներ։ Լինելով ծանրահոգ ու միևնույն ժամանակ հասարակ, լուրջ և կատակասեր, նա իր կողմը գրավեց շատ կարդինալների, դեսպանների և իտալացի սենյորների, որ խռնված էին սուրբ հոր աթոռի շուրջը։ Զարմանալի հարպկությամբ կարողանալով անկրքության դիմակի տակ թաքցնել իր կրքերը, նա համառորեն և մտածված կերպով ընթանում էր դեպի իր նվիրական նպատակը։

Այդ կերպ հիմարացնելով դյուրահավատ մարդկանց, նա միաժամանակ նամակագրություն ուներ իր սիրուհու հետ և նամակների մեջ հենց ինքն էլ բացահայտում էր այն չարժառիթները, որ նրան դրդում էին սարքել վերը նկարագրված զավեշտախաղը։

«Լոզա՛, սիրելիս, հետևիր իմ օրինակին, ապրիր ողջախոհ կյանքով, սպասելով այն օրվան, երբ ես հնարավորություն կունենամ անվերջանալի երանության մեջ նորից միաձուլվել քեզ հետ։ Թող ոչ մեկի շրթունքները չպղծեն քո հրապույրները և ոչ մի ձեռք չհամարձակվի հանել շորերն այն մարմնի վրայից, որը միայն ինձ է պատկանում։ Եվս մի քիչ համբերություն, և նա, որ իմ ձեռքին է համարվում, ինձ ժառանգություն կթողնի սուրբ Պետրոսի գահը։ Ամեն ինչ կգա ժամանակին և իր կարգով։ Իսկ առայժմ մեծապես հոգա մեր երեխաների

*դաստիարակության մասին, որովհետև նրանց վիճակված է ժողովուրդներ ու թագավորներ կառավարել»։*

*Սակայն Ռոդրիգոն սխալ հաշիվ էր արել։*

*Նա չափից ավելի փութաջան եղավ և կրոնական զգացմունքների կրքոտությամբ միայն վնասեց իրեն։ Այդ դարաշրջանում առաքինությունը առաքելական գահը նվաճելու լավագույն միջոցը չէր։ Նրա հաճար պարզ դարձավ, որ մոլորված է եղել, երբ խուլրը, որին այնպես ձգտում էր, բաժին ընկավ Պիոս II-ին, այնուհետև Պողոս II-ին, Սիքստոս IV-ին և Իննովկենտիոս VIII-ին, իսկ նրանց ոչ մի կերպ չէր կարելի ճգնավոր համարել։*

*Երբ պապ հռչակվեց Սիքստոս IV-ը, Ռոդրիգոն համոզվելով, որ իր ջանքերն իզուր են անցել, գնեց Արագոնիայի ու Կաստիլիայի լեգատի կոչումը և գնաց Իսպանիա, որտեղ նրա սանձարձակ խրախճանքներն այնպիսի չափերի հասան, որ Հենրիխ Սակավուժը ստիպված էր նրան արտաքսել։*

*Դրանից հետո Ռոդրիգոն վերադարձավ Հռոմ։ Նա այլևս կորցնելու բան չուներ և Ռոզային ու հինգ երեխաներին բնակեցրեց հեռավոր թաղամասում գտնվող մի պալատում։ Ռոզան ստացավ Կաստիլյան կոմսուհու տիտղոսը, քանի որ պալատի կոմս ինտենդանտը ֆիկտիվ կերպով ամուսնացավ նրա հետ։ Իր ընկերոջն այցելելու պատրվակով կարդինալ Բորջիան ամեն երեկո լինում էր սիրուհու մոտ, գիշերներն անընդհատ անցկացնում օրդիաների մեջ, որ սարքում էր Ռոզայի, իր դուստր Լուկրեցիայի և Ֆրանչեսկո ու Կեսար որդիների հետ։*

*Իննովկենտիոս VIII-ի մահից հետո նա այլևս չսկսեց կարդինալներին ապարդյուն սիրաշահել, այլ պարզապես գնեց նրանց քվեները։ Դա ամենից հուսալի միջոցն էր, որպեսզի սուրբ Պետրոսի բանալիները նորից դուրս չպրծնեին նրա ձեռքից։ Կարդինալ Օրսինին իր քվեն նրան վաճառեց, ստանալով Մոնտիչելիի և Սարիանի դղյակները։ Կարդինալ Սֆորցային նշանակեց Հռոմի եկեղեցու փոխկանցլեր։ Կարդինալ Կոլոնան իր քվեի համար պահանջեց սուրբ Բենեդիկտոսի միաբանությունը իր բոլոր կալվածքներով։ Սուրբ Հրեշտակի կարդինալը ստացավ Պորտոյի եպիսկոպոսությունը, ինչպես նաև մի դղյակ և գինով լի մի նկուղ։ Կարդինալի թասակ ստացած վենետիկցի մի վանական, որի գլուխը ումբումբում էր, իր քվեն տվեց հինգ հազար ոսկյա դուկատով, ինչպես և այն պայմանով, որ Լուկրեցիա Բորջիան խոստանա մի գիշեր նրա հետ լինել։ Գնելով ամբողջ սուրբ կոլեգիան, Ռոդրիգոն պապ հռչակվեց Աղեքսանդր VI անունով։*

«Եվ այսպես,— բացականչեց նա, երբ հռոմեական եկեղեցու փոխկանցլեր Բորջիայի անվանաթերթը հանեցին բվևաւոուփից,— և այսպես, ես պա՞պ եմ, սուրբ Պետրոսի տեղապահ»։

«Այո, ձերդ սրբազնություն,— պատասխանեց նրան Սֆորցան,— դուք քահանայապետ եք ընտրվել Եկեղեցական բոլոր կանոններով, և մենք հույս ունենք, որ ձեր ընտրությունը եկեղեցուն հանգիստ կպարգևի հուրախություն ամբողջ քրիստոնեական աշխարհի, քանզի դուք ընտրված եք սուրբ հոգու կողմից որպես մեր եղբայրներից ամենից արժանավորը»։

Սակայն, երբ նորաթուխ պապը վգեննեց սրբազան շուրջառը և, ուրախությունը չթաքցնելով, գլխին դրեց խույրը, որին այնքան երկար սպասել էր, կարդինալ Մեդիչին չկարողացավ իրեն զսպել և կողքին նստած կարդինալի ականջին փսփսաց. «Մենք ընկանք գայլի երախը, նա մեզ բոլորիս կլափի, եթե նրանից ազատվելու հնար չգտնենք»։

Աղեքսանդր VI-ի գահ բարձրանալն ախորժելի էր Եվրոպայի ոչ բոլոր թագավորների համար։ Իսպանիայի միապետներից ոմանք անվստահությամբ վերաբերվեցին նոր պապին, քանզի Բորջիան այնտեղ իր սխրանքներով բավականաչափ անուն էր հանել։

Վերջապես Բորջիան կատարյալ ազատություն տվեց իր բնատուր բնազդներին ու կրքերին և սկսեց համարձակորեն ցուցահանել իր ամոթալի կապերը։ Այդ ագահ մարդը ոչ մի հանցագործության առաջ կանգ չէր առնում, ջանալով հարստացնել իր զավակներին։ Բորջիային ժամանակակից բենեդիկտյան մի վանական գրում է, թե Աղեքսանդր VI-ի օրոք Հռոմը սպանդանոցի էր վերածվել։

Նրա բոլոր շահախնդրություններն ու նկրտումները հանգում էին այն բանին, որ իր զավակներին հզոր մարդիկ դարձնի։ Առաջնեկին, Ֆրանչեսկոյին, նա կանդիայի դուքս հռչակեց. երկրորդ որդուն, Կեսարին, նվիրեց Վալենսիայի արքեպիսկոպոսությունը։ Բայց այդ բոլոր նշանակումները միայն մի մասն էին այն ընդարձակ ծրագրի, որ մտմտում էր Աղեքսանդր VI-ը։ Նա ուզում էր, որ իր զավակները դառնան Նեապոլի, Վենետիկի, Ֆլորենցիայի տիրակալներ; իշխեն ամբողջ Իտալիային ու նրա պրովինցիաներում։ Նա հաղթանակներ, խոշոր նվաճումներ էր երազում։ Հենց դա էր դրդել նրան ընդունել Աղեքսանդր անունը՝ ի պատիվ հին ժամանակների մեծագույն նվաճողի։

Այն ժամանակ Իտալիան բաժանված էր բազմաթիվ մանր պետություններին։ Առանձին իշխանապետություններ իրար հետ մահացու կռիվ էին մղում։ Բորջիան որոշեց օգտագործել երկպառակտչական

գժտությունները և աստիճանաբար ձեռք գցել մանր ու խոշոր տիրակալներին, իսկ նրանց հողերից ու ամրոցներից իր զավակների համար իշխանապետություններ ստեղծել։

Ամենից առաջ պապին հաջողվեց հաղթել Վենետիկի հանրապետությանը, որին չպաշտպանեցին թերակղզու մանր բռնակալները, որ նրան նախանձում էին։ Այնուհետև նա արտասովոր, պարզապես մաքիավելական ճարպկությամբ, գաղտնի սպանությունների ու բացահայտ ռազմական գործողությունների դիմելով, խորտակեց ամենահարուստ պրովինցիաների տիրակալների հզորությունը։

Իր նվաճողական քաղաքականության համար պաշտպանություն գտնելու նպատակով, Աղեքսանդր VI-ը չանաց մի քանի համաձայնագրեր կնքել։ Օգտվելով նրանից, որ Ֆրանսիայի թագավոր Կառլոս VIII-ը պատրաստվում էր հարձակվել Նեապոլի թագավորության վրա, սուրբ Հայրը Ֆերդինանդին դաշինք առաջարկեց, զգայմանով, որ նա իր թոռնուհուն կնության կտա պապի կրտսեր որդուն՝ Նեապոլի թագավորության կալվածքների հետ։ Պապի առաջարկությունը մերժվեց նրա համար վիրավորական ձևով։ Այն ժամանակ Աղեքսանդրը սկսեց բանակցություններ վարել Միլանի դուքսի հետ, հուսալով Ֆրանսիայի հետ միավորվել ընդդեմ Նեապոլի թագավորի։ Բայց այդ ժամանակ ծերունի Ֆերդինանդը վախճանվեց, իսկ նրա որդի Ալֆոնս Կալաբրիացին, գերադասելով, որ պապն իր դաշնակիցը լինի, համաձայնվեց իր աղջկան կնության տալ երիտասարդ Ջիֆրիդ Բորջիային։

Պապի և երկու Սիցիլիաների թագավորի միջև կնքված պայմանագիրը հանդիսավորապես ստորագրվեց Հռոմում։ Հարսանիքը անասելի շքեղ էր։ Ալֆոնսը երիտասարդ ամուսիններին հանձնեց Սկվիլատիի իշխանապետությունն ու Կարիատիի կոմսությունը և պարտավորվեց Ջրանչեսկո Բորջիային ամիսը հինգ հազար դուկատ կենսաթոշակ վճարել։ Ինչ վերաբերում է նորին բարձրասրբազնությանը, ապա նա մանր ծախսերի համար նվեր ստացավ տասը հազար դուկատ, որի կարիքն այդ ժամանակ շատ էր զգում։ Բանն այն է, որ եկեղեցական գանձարանը դատարկ էր. սուրբ Հոր օրգիաները լափել էին ամբողջ ամբիոն։

Աղեքսանդր VI-ը դիմեց այն հին միջոցին, որ այնքան հաճախ օգտագործել էին նրա նախորդները. նա մուսուլմանների դեմ խաչակրաց պատերազմ հայտարարեց։ «Անհրաժեշտ է,— ասում էր նա,— վերջին ջանքերը գործադրել մուսուլմանների ձեռքից Հիսուս Քրիստոսի գերեզմանը խլելու համար»։ Վանականները քրիստոնեական աշ-

խարհով մեկ, կոչ անելով նվերներ տալ սուրբ գործի համար։ Նվերներն սկսեցին հոսել դեպի պապի գանձարանը։ Տակավին շատ ապուշներ կային, որ ցանկանում էին արշավանքին մասնակցել։ Շատ մարդիկ դեռևս հավատում էին, թե մեղքերից կարելի է ապատվել փողով։

Երբ պապը գտավ, որ կթան կովը տվել է ինչ որ կարող էր տալ, ջատ հանգիստ իր գրպանը դրեց, բարեպաշտ հավատացյալների ոսկին և խաչակրաց արշավանքի փոխարեն սուլթան Բայազիդի հետ դաշինք կնքեց։

Բայց այդ խարդախությունը իամրում է պապի նոր հանցագործության առաջ։

Դա այն ժամանակն էր, երբ Քրիստափոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան։ Իսպանացիները և պորտուգալացիները խուժեցին Նոր աշխարհը։ Հարստությունն այնքան դայթակղիչ էր թվում, որ երբեմնի բարեկամ երկու ժողովուրդները, չհապաղեցին նոր հողերի համար միմյանց դեմ կատաղի կռիվ սկսել։ Պորտուգալիայի ու Իսպանիայի թագավորները կաթոլիկներ էին, և նրանք դիմեցին պապին, խնդրելով իրենց վեճը լուծել։ Աղեքսանդր VI-ը, համապատասխան հատուցում ստանալու պայմանով, իհարկե, համաձայնվեց ստանձնել միջնորդի դերը։ Նա սահմանեց, թե թագավորներից ո՛րը Նոր աշխարհի ո՛ր մասին պետք է տիրանա, և մի կոնդակ հրապարակեց, որով պահանջեց կաթոլիկ դարձնել նորահայտ երկրների բոլոր բնակիչներին։ Այդ կոնդակի հիման վրա միսիոներները լցվեցին Ամերիկա և սկսեցին կողոպտել ու սպանել դժբախտ հնդկացիներին։ Հենց Բորջիայի կոնդակների ջնորհիվ էր, որ նոր աշխարհամասի հայտնագործումն ուղեկցվում էր միլիոնավոր բնիկների ջարդով։

Նույն այդ ժամանակ Բորջիան իր դուստր Լուկրեցիային ամուսնացրեց Հովհան Սֆորցայի հետ։ Իսկ քանի որ Լուկրեցիան ավելի վաղ նշանված էր մի արագոնցի ազնվականի հետ, ապա պապն իր աղջկան ազատեց նրան տված երդումից։

Այդ ամուսնության առթիվ, գրում է Ինֆեսուրան, կազմակերպվեցին Լուկրեցիային միանգամայն արժանի հանդիսավոր տոնակատարություններ։ Սրեկոյան նորին սրբազնություն կարդինալ Կեսարը, նրա հղբայր Ֆրանչեսկոն, կուրտիզանուհիները և ընտիր տիկնայք ներկա էին խնջույքին, որի ժամանակ, ի հաճույս ներկաների, դերասանները ներկայացրին անպատշաճ պատկերներ։ Առավոտյան երիտասարդ ամուսիններին Աղեքսանդր VI-ն անձամբ առաջնորդեց հարսանեկան սենյակը, որի կենտրոնում բարձրանում էր շքեղ մահիճը՝ առանց ամպ-

հովանու։ Այստեղ, ըստ տարեգրի ասածի, այնպիսի զայրացուցիչ բաներ էին տեղի ունենում, որ հնարավոր չէ պատմել։ Սուրբ Հայրն իր աղջկա անկողնու մոտ ընտանիքի մոր պարտականություններ էր կատարում։ Լուկրեցիան, այդ Մեսալինան, որ դեռ իր վաղ պատանեկության օրերին մասնակցել էր Հոր և եղբայրների շվայտանքներին, կույս աղջկա դեր էր խաղում, որն ավելի անպարկեշտ էր դարձնում այդ զավեշտախաղը, և վերջիվերջո ամուսնությունն ավարտվեց քահանայապետի ամբողջ ընտանիքի ներկայությամբ։

Պապը համաձայնվեց իր դստեր ամուսնությանը, քանզի այդ ժամանակ նրան նոր կիրք էր համակել։ Նա սիրահարվել էր մի աղջկա, անունը Ջուլիա Ֆարնեզե, որը կեղծարարության մեջ մեղադրվող ոմն Ալեքսանդրո Ֆարնեզեի քույրն էր։ Բորջիան ներեց Ալեքսանդրոյի հանցագործությունը. դեռ ավելին, Ջուլիա Ֆարնեզեն եղբոր համար կարդինալի աստիճան ձեռք բերեց և դրանով հող նախապատրաստեց, որ մոտ ապագայում նա բազմի պապական աթոռին։

Լուկրեցիայի մեղրամիսը միայն մի շաբաթ տևեց։ Նա արհամարհեց ամուսնուն, գերադասելով Հոր ընկերությունը և նրա շքեղ խրախճանքները, և մնաց Վատիկանում, կտրականապես հրաժարվելով սենյոր Սֆորցայի հետ գնալ նրա կալվածքը։ «Նա չէր հեռանում սուրբ Հոր սենյակից»,— հայտնում է Հովհան Բուրխարդը, Չիտա դի Կաստելոյի եպիսկոպոսը՝ Ալեքսանդր VI-ի մեծարժան կյանքի մշտական վկան։ Նա պապի արարողապետն էր և պարզունակ բարեխղճությամբ ժամ առ ժամ գրի է առել այն ամենը, ինչ տեղի է ունեցել պապական պալատում։ Հենց այդ եպիսկոպոս Բուրխարդին ենք մենք պարտական Ալեքսանդրի բազմաթիվ «սխրագործությունների» մերկացման համար։

Ալեքսանդրը ոչ միայն չէր բողոքում իր աղջկա Վատիկանում մնալու ցանկության դեմ, այլև նրան թուլլատրեց իրեն օգնել եկեղեցին կառավարելու գործում։ Լուկրեցիան բացում էր պապի ճեպագրերը, գումարում սուրբ կոլեգիաներ։ Շատ հաճախ անմիջապես խրախճանքից հետո, հետևյալ հագուստով, կուրծքը բաց, որ հազիվ ծածկված էր թափանցիկ մուսլինով, նա նախագահում էր սուրբ կոլեգիայի նիստերին։ Այդպիսի տեսքով, զվարճանալով, ամենաանպարկեշտ գործերը քննարկելու ժամանակ անամոթ հարցեր էր տալիս։ Կարդինալների ներկայությունը նրան չէր խանգարում փայփայել պապին կամ ընդունել նրա գուրգուրանքները, այնպես որ նույնիսկ շատ բանների սովոր

Բուրխարդը, նկարագրելով տեղի ունեցածը, բացականչում է. «Ո՛հ, խայտառակություն, ո՛հ, սարսա՛փ»։

Նրա օրագրում մենք գտնում ենք հետևյալ միջադեպը. «Այսօր նորին սրբազնությունը տիկին Լուկրեցիային զվարճացնելու համար հրամայեց պապական պալատի փոքր բակը բերել մի քանի զամբիկներ և ջահել, կրակոտ հովատակներ։ Կատաղի ճիչերով ու խրխնջյունով խենթ ձիերի երամակը ցրվեց բակով մեկ. կռնչալով և իրար կծոտելով հովատակները հետապնդում և ծածկում էին զամբիկներին՝ ննջարանի պատուհանից այդ տեսարանով հիացող տիկին Լուկրեցիայի և սուրբ Հոր ծափահարությունների ներքո։ Դրանից հետո հայր ու աղջիկ առանձնացան ննջարանի ներքին սենյակում, ուր և մնացին մի ամբողջ ժամ»։

Բուրխարդը չի մեկնաբանում այս միջադեպը, և մենք հետևում ենք նրա օրինակին։

Անցնենք այն պայմանագրին, որ կնքվել էր պապի ու սուլթանի՝ քրիստոնեական ու մահմեդական աշխարհի իշխանապետերի միջև։

Սուլթան Բայազիդը մշտական տագնապի մեջ էր, երբ իմացավ, որ Եգիպտոսի խալիֆը Իննովկենտիոս VIII պապին փրկագին է առաջարկել իր եղբայր Զիզիմի համար։ Բայազիդը վախենում էր, որ Զիզիմը օրերից մի օր կգլխավորի եգիպտացիներին և իրեն գահընկեց կանի։ Մի քանի տարի շարունակ նա Հռոմին խոշոր գումարներ էր վճարում Զիզիմին պահելու համար։ Բայց հետո նրա մեջ միտք հղացավ՝ վերսկսել թագաժառանգ Զիզիմին թունավորելուն վերաբերող բանակցությունները, որ տեղի էին ունենում Իննովկենտիոս VIII-ի օրոք և խղվել էին ընթերցողին հայտնի պատճառներով։

Պապին հղած իր ուղերձում նա գրում էր. «Մինչև օրս, մոնսինյո՛ր, ձերդ սրբազնությանը ես կանոնավոր կերպով վճարել եմ տարեկան քառասուն հազար դուկատ իմ եղբայր Զիզիմին պահելու համար։ Սակայն, երբ ինձ տեղեկություններ հասան, որ փառասեր գահաժառանգին պահպանելու նպատակով ձեր նախորդ Իննովկենտիոս VIII-ը ինձնից զգալի գումարներ ստանալով, միաժամանակ համաձայնության է եկել Եգիպտոսի խալիֆայի հետ և նրանից փող ստացել Զիզիմին ազատ արձակելու խոստումով, իմ մեջ կասկած ծագեց, թե ձեր հաջորդն իրեն թույլ կտա գայթակղվել՝ իմ եղբորը զորք տրամադրելով, և նրան կօգնի հանդես գալ իմ դեմ։ Ձեր դեսպանները շատ լավ հասկացան իմ տագնապների պատճառը և ինձ խորհուրդ տվեցին դիմել ձերդ սրբազնությանը և խնդրել, որ դուք հանգստացնեք իմ վրդովված հոգին և վերացնեք իմ անհանգստության պատճառը։ Նրանք ինձ հավաստիացրին

նաև, որ դուք բարյացակամ ուշադրությամբ կվերաբերվեք իմ առաջարկությանը։

Ես պարտավորվում եմ վճարել 300 հազար դուկատ, այդ գումարին ավելացնելով մի քանի քաղաքներ և, բացի դրանից, Հիսուս Քրիստոսի ներքնաշապիկը, եթե ձերդ սրբազնությունը կամենա այս աշխարհից սուլթան Զիզիմին վերացնել այն ձևով, որ կբարեհաճի ընտրել ձերդ սրբազնությունը։ Այն ժամանակ Զիզիմը կփրկվի երկրային կյանքի դառնություններից և նրա հոգին կտեղափոխվի ավելի երջանիկ աշխարհ։ Դա կլինի մի ծառայություն, որ կմատուցվի հենց իրեն՝ գերյալին, որովհետև, ըստ Մահմեդի օրենքի, նա պետք է մահը գերադասի ստրկությունից, իսկ դուք էլ, մեծապատիվ վեհապետ, ձեր կրոնի դեմ ոչ մի հանցագործություն կատարած չեք լինի, որովհետև քրիստոնյաներին հրամայված է ոչնչացնել հեթանոսներին ու անհավատներին...»։

Կարելի է պատկերացնել, թե ինչպես բարձրացավ սուրբ Հոր տրամադրությունը։ Հիսուս Քրիստոսի ներքնաշապիկը նրան փոքր ինչ զվարճացրեց, բայց դուկատները հաշվելու միտքը չտեսնված ուրախություն պատճառեց։ Իհարկե, նա չհրաժարվեց սուրբ քնաշապիկից. այդ մասունքը բազմիցս վաճառվել ու վերավաճառվել է, մինչև որ ի վերջո այն ձեռքն է գցել Արժանտելի եկեղեցին. եթե նույնիսկ ընդունենք, որ դա Հիսուսի իսկական վերնաշապիկն է, ապա, ինչպես տեսնում ենք, իր գինը լիովին ծածկել է։

Բայազիդի առաջարկությունը պապի համար չափազանց հաճելի էր։ Նա գիտեր, որ Ֆրանսիայի թագավոր Կառլոս VIII-ը, որ նրան նույնքան թշնամի էր, որքան և սուլթանը, չէր թաքցնում Զիզիմին Օսմանյան գահին նստեցնելու իր մտադրությունը։

Աղեքսանդրը պետք է շտապեր։ Կառլոս VIII-ը, հզոր զորքի գլուխ անցած, արդեն արշավանքի էր դուրս եկել Իտալիայի դեմ և կարճ ժամանակում նվաճել խոշոր քաղաքներ։ Պապը Քրիստոսի անունից նրան հանդիսավորապես արգելեց առաջ շարժվել։ Բայց Կառլոս VIII-ը, շատ լավ իմանալով պապական սրբության արժեքը, ուշադրություն չէր դարձնում բանադրանքներին և, գրավելով Լոմբարդիան, մոտենում էր պապական տիրույթներին։

Մենք գիտենք, թե ինչպես են իրենց պահում այն քաջերը, որ հեռվից են սպառնում։ Աղեքսանդրը սուրբ Հրեշտակի ամրոցին պահ տվեց իր ամանեղենն ու խույրը, հրամայեց ձիերը թամբել և փախուստի դիմեց։ Ֆրանսիական բանակն առանց կորուստների գրավեց Հռոմը։ Կառլոս VIII-ը պապին հայտարարեց, թե մտադիր է եկեղեցաժողով

հրավիրել և նրան, որպես շնացողի, արյունապղծի, գողի ու մարդասպանի, զահընկեց անել։ Պապն ավելի ղիջող դարձավ և Հիսուս Քրիստոսի անունից Ֆրանսիայի թագավորին թույլ տվեց տիրանալ երկու Սիցիլիաների թագավորություններ։

Կառլոսը կարող էր առանց պապի օրհնության էլ յոլա գնալ, բայց այդ դարաշրջանում առանց սուրբ Պետրոսի տեղապահի բարձրագույն հավանության հնարավոր չէր ձեռք բերել նվաճված երկրների թագավորի տիտղոսը։ Սակայն Կառլոսը միայն օրհնությամբ չբավականացավ և սուրբ Պետրոսի տեղապահին խիստ պայմաններ առաջադրեց. Աղեքսանդրը Ֆրանսիային զիջեց չորս քաղաք՝ Վիտերբոն, Զիվիտա-Վեկիան, Տերաչինոն և Սպոլետոն։ Կեսար Բորջիան ըստ պայմանագրի պետք է մնար Կառլոս VIII-ի մոտ որպես պատանդ, թագաժառանգ Զիզիմին պետք է հանձնեին թագավորին։ Աղեքսանդր VI-ը սուրբ ավետարանի վրա երդվեց կատարել այն ամենը, ինչ նրանից պահանջում էր Կառլոսը։ Կեսար Բորջիան ևս խաչելիության վրա երդվեց մնալ Կառլոս VIII-ի ճամբարում, քանի դեռ նա չի հաստատվել Նեապոլի գահի վրա։ Ինչ վերաբերում է Զիզիմին, ապա նրան ողջ և առողջ տարան Ֆրանսիա։

Կառլոս VIII-ը և նրա զորքերը թողնելով Հռոմը և սկսեցին շարժվել դեպի Նեապոլի թագավորությունը։ Սակայն, թագավորի բանակը դեռ չէր հասցրել դուրս գալ պապական տիրույթների սահմաններից, երբ Կեսար Բորջիան նորից դրժեց և փախավ։ Միաժամանակ սոսկալի չղաձգություններ մեջ գեռավ տարաբախտ Զիզիմը, ըստ Բուրխարդի ասածի. «Գեռավ «այնպիսի բաներից», որ պետքական չէին նրա ստամոքսի համար։ Նախքան Կառլոս VIII-ի ձեռքն հանձնելը, նրան այնպիսի թույն էին տվել, որ ներգործում էր միայն մի քանի օր հետո։ Այսպիսով, պապը միանգամից կատարեց իր երկու, միմյանց հակասող խոստումները. Զիզիմին հանձնեց թագավորին և դրա հետ միասին Բայազիդին ապատեց մղձակցից։

Շաս լանցած Կառլոս VIII-ը նվաճեց երկու Սիցիլիաները։ Սակայն նրա դեմ կոալիցիա կազմվեց, որի մեջ մտնում էին Վենետիկի հանրապետությունը, Միլանի դուքսը, Անգլիայի թագավորը և կուրֆյուրստ Մաքսիմիլիանը։ Եվ Կառլոսը շտապեց Ֆրանսիա, որպեսզի պահպանի իր տեփական տիրույթները։

Վերադարձի ճանապարհին անցնելով պապական տիրույթներով, թագավորը հույս ուներ Բորջիային պատժել, բայց վերջինս, իմարկե,

անմիջապես թաքնվեց և Հռոմ վերադարձավ միայն այն ժամանակ երբ կաղլոս VIII-ը վերջնականապես թողել էր Իտալիան։

Երբ Կաղլոսի վերադառնալու վտանգն անցավ, Աղեքսանդրը զգավ, որ ինքը կարող է իրագործել այն, ինչ փառասիրաբար փափագում էր իր հակառակորդը։ Պապը դավաճանության մեջ մեղադրեց այն իտալացի ազնվականներին, որոնց տիրույթները Կաղլոսը նվաճել էր։ Սուրբ Հայրը նրանց խորհրդակցության հրավիրեց, և քննարկումն ավարտվեց նրանով, որ նրանցից մի քանիսին տեղն ու տեղը դաշույնահար արին, իսկ մյուսներին, որ փրկվել էին փախուստի դիմելով, սպանեցին փոքր ինչ անց։ Նրանց ունեցվածքին տիրացավ Բորջիաների ճերդաստանը։

Միայն Օրսինիները խուսափեցին ծուղակից և արիաբար մարտնչում էին պապի դեմ։ Կեսար Բորջիան, այդ կիսագիվորն ու կիսակարդինալը, հարձակվեց Ռոմանիայի վրա, որպեսզի հնազանդեցնի Օրսինիների վասալներին, և այնտեղ այնպիսի բռնություններ գործեց, որ հուսահատության հասած բնակչությունը նրան խայտառակ կերպով դուրս վռնդեց։

Այնժամ Աղեքսանդրը փոխեց տակտիկան և դաշինք կնքեց Կաստիլիայի ու Պորտուգալիայի թագավորների հետ։ Սրանք իրենց զորքերի գլուխն անցած մտան Նեապոլ, որպեսզի այնտեղ վերականգնեն թագավոր Ֆերդինանդի (որին Կաղլոս III-ը թագից զրկել էր) իշխանությունը։ Պղտորելով ջուրը, Աղեքսանդրը սկսեց ձուկ որսալ և, որպես այդպիսի գործերի մեծահմուտ վարպետ, կարողացավ նյնպես անել, որ նրա որդի Ֆրանչեսկոյին տրվեց Բենևենտի իշխանապետությունը երեք հարյուր հազար ոսկյա էկյուով հանդերձ։

Ֆրանչեսկոն երկար չվայելեց իր տիտղոսներն ու արտոնությունները։ Սուրբ Հոր ձեռքից գավազանը ստանալու համար գալով Հռոմ, նա ճոխ տոնախմբություն սարքեց, իրեն շրջապատելով այնպիսի շքեղությամբ, որ գրգռեց իր եղբայր Կեսարի նախանձը։ Բացի այդ, Լուկրեցիան հապճեպորեն Ֆրանչեսկոյին արժանացրեց իր բարյացակամությանը, ուշադրություն չդարձնելով կրտսեր եղբոր վրա։ Կեսարը, գտնելով, որ բնությունը սխալվել է Ֆրանչեսկոյին իրենից շուտ ստեղծելով, որոշեց սխալն ուղղել և դառնալ Աղեքսանդր VI-ի առաջնեկն ու նրա ժառանգորդը։ Մի օր կեսգիշերին, մոր մոտ ընթրելուց հետո Ֆրանչեսկոն, Բենևենտի նոր իշխանը, հարձակման ենթարկվեց։ Դիմակավորված չորս անձնավորություններ նրան ինը վերք հասցրին և նրա դիակը կտրած դիակը նետեցին Տիբրոս գետը։

Դուքսի անհայտացման լուրն արագորեն տարածվեց Հռոմում։ Հա-

*ջուչ օրը Կեսար Բորջիան մեկնեց Նեապոլ։ Այդ անակնկալ մեկնումը բավական համոզիչ ապացույց էր, որ նա մասնակցել է հանցագործությանը։ «Այնուամենայնիվ,— պատմում է Բուրխարդը,— վրդովված պապը դեռ հույս հուներ տեսնել իր Ֆրանչեսկոյին և մեզ ուղարկեց նրան փնտրելու Հռոմի բոլոր հասարակաց տներում»։*

*Մի քանի օր անց Հռոմեացի նավավարները որսացին Բենևենտի դուքսի դիակը։ Աղեքսանդրը շարունակում էր հավատալ, որ իր առաջնեկին մորթել են Բորջիա տոհմի թշնամիները։ Ջիմանալով ում վրա կասկածել, նա խոշտանգման ենթարկեց Հռոմի անվանի մարդկանցից շատերին, որոնք ընտրվում էին բախտերովի, և չդադարեցրեց ձերբակալություններն ու խոշտանգումները, մինչև որ չհամոզվեց, որ ոճիրն իր սիրելի որդյակն է կատարել։*

*«Այն ժամանակ,— գրում է Բուրխարդը,— նա արցունքները սրբեց և, փակվելով իր ննջարանում, մխիթարվում էր Լուկրեցիայի գրկում, որը նույնպես մասնակից էր սպանությանը»։*

*Միաժամանակ անց Կեսարը, ենթադրելով, թե Հռոմն արդեն մոռացել է Ֆրանչեսկոյի սպանությունը, Նեապոլից վերադարձավ և հոր սրբազան տեսությանը ներկայացավ այնպես, որ կարծես ոչինչ չէր պատահել։ Պապը կոնսիստորիայի բոլոր անդամների ներկայությամբ համբուրեց ու գրկեց որդուն։ Անսալով որդու խնդրանքները, հայրը նրան ազատեց եկեղեցական ուխտից և թույլ տվեց ընտրել իր ճաշակին ու սրտին համընկնող գործ։ Դեռ ավելին, սուրբ հոր հրամանով Կեսար Բորջիան ժառանգեց ավագ եղբոր տիտղոսը, իշխանապետությունը և արտոնությունները։ Մի խոսքով, Կեսարը դեն նետեց իր համար զզվելի դարձած կարդինալական թասակը, այն փոխարինելով սրով, և դարձավ աշխարհական արքունիքի գոնֆալոներ։*

*Ի նշանավորումն հոր հետ կայացած հաշտության Կեսարը որս կազմակերպեց։ Պալատական ֆավորիտներից, աշխարհիկ տիկիններից, կուրտիզանուհիներից, ծաղրածուներից, պարողներից ու պարուհիներից բաղկացած ահագին շքախմբին ուղեկցում էին հինգ հարյուր հեծյալներ և վեց հարյուր հետևակայիններ։*

*«Ջորս օր,— գրում է Թոմազին,— նրանք անցկացրին Օստիի անտառներում, անկաշկանդ տրվելով ցանկասիրությանը պոռթկումներին, խրախճանքին հետևում էր խրախճանքը, և այնտեղ տիրում էր այնպիսի անառակություն, որը կարող է հորինել միայն ամենաայլասերված երևակայությունը։ Վերադառնալով Հռոմ, նրանք քաղաքը պարծրին ավազակարան, նողկալիությունների սրբավայր։ Հնարավոր չէ թվել*

այն բոլոր կողոպուտները, սպանություններն ու ոճիրները, որ ամեն օր կատարվում էին պապի արքունիքում։ Մարդուս կյանքը չէր բավի բոլոր մանրամասնությունները նկարագրելու համար»։

Կարդինալները միանգամայն հնազանդվում էին Աղեքսանդրին և ծափահարում սուրբ Հոր ու նրա զավակների բոլոր սխրագործություններին, կեսարի առաջ նրանք գետին էին փռվում, երբ նա երևում էր կոնսիստորիայում, որովհետև շատ լավ գիտեին, որ նա ոճիրներ է գործում ոչ միայն նրա համար, որ ազատվի իր տոհմի թշնամիներից, այլև որպեսզի տիրանա նրանց ժառանգությանը։

«Նա տենդագին ագահությամբ կողոպտում էր և՛ ողջերին, և՛ մեռածներին,— գրում է Բուրխարդը,— նրա մեծագույն հաճույքը մարդկային արյուն տեսնելն էր։ Ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ կայսր Կոմոդոսը, նա ծարավի էր նորանոր սպանությունների, ըրպեսզի գոհացում տար իր վագրային էությանը։ Մի անգամ նա հրամայեց ցանկապատել սուրբ Պետրոսի հրապարակը, այնտեղ քշել ռազմագերիներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին։ Ցեղական նժույգ հեծած, զենքը ձեռքին, նա դեսուդեն էր սլանում, հրապարակը ծածկելով դիակներով։ Իսկ սուրբ Հայրն ու Լուկրեցիան պատշգամբից զվարճանում էին այդ տեսարանով...»։ Բայց նույնիսկ այդ մանրամասնությունները ամենահրեշավորները չեն այն արարքների մեջ, որ մեզ պատմում է կաթոլիկ քահանան։

Մենք արդեն հիշատակել ենք, որ Աղեքսանդր VI-ը դաշինք կնքեց Կաստիլիայի ու Պորտուգալիայի թագավորների հետ։ Այդ երկու միապետների շահերը ամեն բանով համընկնում էին, եթե հաշվի չառնենք, որ Ֆերդինանդ Կաստիլացին, որպես ամենամերձավոր ազգական, ուզում էր գրավել Պորտուգալիայի գահը։ Պորտուգալիայի թագավորը մի դուստր ուներ, որին նա տեղավորել էր վանքում։ Երբ Պորտուգալիայի թագավորի ժառանգուհին մեծացավ, վանական կյանքը նրան այլևս այնքան էլ հաճելի չէր թվում։ Իր սխալը գիտակցելով, նա ցանկանում էր նորից աշխարհիկ կյանք մտնել և գաղտնաբար դիմեց Աղեքսանդրի օգնությանը։ Պապը ողորմածաբար ընդունեց նրա բացատրությունները, ինչպես և նվերները, ազատեց վանական ուխտից և թույլ տվեց ամուսնանալ թագավորական ծագում ունեցող իշխանի հետ։

Դա Ֆերդինանդ Կաստիլացու հաշիվների մեջ չէր մտնում. արքայադստեր ամուսնությունը նրան զրկում էր Պորտուգալիայի թագին տիրանալու հույսից, և նա պապին մի ուղերձ հղեց, սուրբ Հորը մեղադրելով ուխտադրժության մեջ։

Աղեքսանդրը, որ Ֆերդինանդի նկատմամբ հոգատար լինելու բավականաչափ հիմքեր ուներ, զարմացած ձևացավ։ Պորտուգալիայի թագավորի աղջկան թույլ են տվել հեռանալ վանքից և հրաժեշտ տալ վեղարի՞ն։ Կարո՞ղ է նման բան լինել։ Դա պարզապես անհավանական էր։ Իսկ եթե դա այդպես է, ապա դրա մեջ մեղավոր է կարդինալ-կանցլերը, որ վարում է նման գործերը։ Իսկ ինչ վերաբերում է իրեն՝ պապին, ապա նրան նույնիսկ տեղյակ չեն պահել։ Նա աստծանով երդվեց, թե այդ մասին ոչի՛նչ չի իմացել։

Իր ասածն ավելի համոզիչ դարձնելու համար, պապը կարդինալին, պապական գրասենյակի քարտուղարին բանտ նետեց, նրան մեղադրելով փաստաթղթերը կեղծելու մեջ, թե իբր նա թագավորի աղջկան թույլատրական թուղթն ուղարկել է՝ օգտագործելով իր՝ պապի անունը։ Խեղճ մարդուն զնդան նետեցին գրեթե տկլոր, մոտը թողնելով մի փայտյա խաչելություն, մի տակառիկ ջուր, ճրագ և ղգուշացնելով, թե սնունդ կստանա շաբաթական երկու անգամ։

Երկու ամիս անց, կարծելով, թե կարդինալն արդեն բավական ընկճված է, պապը նրա մոտ ուղարկեց իր մարդկանցից մեկին, որպեսզի սա թշվառականին համոզի իր վրա վերցնել սուրբ Հոր մեղքը։ Եթե նա հրաժարվի, ասել էր պապը, սպառնալ ցմահ բանտարկությամբ։ Իսկ եթե համաձայնվի, պապը նրան ոչ միայն ազատություն է խոստանում, այլև վերականգնում նրա բոլոր պաշտոնները։ Կարդինալը, որին փրկվելու ոչ մի ելք չէր մնում, վկաների ներկայությամբ ստորագրեց իր խոստովանական հայտարարությունը։ Ձեռքը գցելով ուղածր, սրբազան Հայրն անմիջապես կոնսիստորիա հրավիրեց և դժբախտ արքեպիսկոպոսին կեղծիքի համար կախաղանի դատապարտեց։ Վախենալով, որ մահապատժի օրը կարող է որևէ անակնկալ, տհաճ բան լինել, Աղեքսանդրը հրամայեց արքեպիսկոպոսին թունավորել, իսկ հետո լուր տարածեց, թե հանցագործն ինքն է իրեն թունավորել, որպեսզի խայտառակությունից խուսափի։ Ինչ վերաբերվում է կարդինալի ունեցվածքին, ապա բռնագրավվեց հօգուտ նորին սրբազնության։

Ավելացնենք, որ այս հրեշավոր խարդախությունը չհամոզեց Ֆերդինանդ Կաստելացուն, քանի որ Բորջիայի հանցագործություններն ամբողջ Եվրոպային հայտնի էին։ Հռոմի իր դեսպանին նա լիազորեց միանալ մյուս իշխանապետերին, որոնք նախազգուշացումներ էին ուղարկել դավաճան պապին։

Մի ունկնդրության ժամանակ կաթոլիկական զանազան երկրների

*դեսպաններ Աղեքսանդր VI-ին ասացին, թե նրա գործողությունները կրոնին մեծ վնաս են հասցնում, առաջարկեցին զուսպ լինել և վերջ դնել չարագործություններին։ Ինքնին հասկանալի է, որ Աղեքսանդրը գաղափեց այդպիսի խոսքեր լսելով, և նույնիսկ սպառնաց դեսպաններին, թե նրանց լուսամուտից դուրս կնետի։ Նա չքաշվեց ծանր խոսքեր ասել նաև թագավորների հասցեին. «Այդ բռնակալները համարձակվում են կշտամբել սուրբ Պետրոսի փոխանորդին և ինձ մեղադրում են ինչ-որ սպանությունների ու կողոպուտի համար, մինչդեռ իրենք ամբողջ թագավորություններ են բաժանում իրենց երեխաներին և միլիոնավոր մարդկանց սպանում իրենց արյունահեղ կռիվների մեջ։ Դո՛ւրս կորեք, թշվառ արբանյակներ, գնացեք ասացեք ձեզ ուղարկողներին, որ ես դեռ շատ բան պետք է անեմ, որպեսզի հացագործություններով հավասարվեմ նրանց»։ Ահա մի ցինիզմ, որից ավելին չի կարող լինել։*

*Պապի հումորից ոչ դուրկ այդ արտահայտության առթիվ Սավոնարոլան, որ քարոզիչ էր և ռեֆերմատոր, հեգնանքով ասաց. «Ժողովուրդներն ի՞նչ պետք է մտածեն իրենց բռնակալների մասին, եթե Աղեքսանդրը թագավորին համարում է ավելի նողկալի, քան ինքը»։ Այդ համարձակ խոսքը թանկ նստեց ապողի վրա։ Սավոնարոլային Ֆլորենցիայում ձերբակալեցին, տարան ինկվիզիցիայի տրիբունալ և այրեցին 1498 թվի մայիսի 23-ին։*

*Քաջարի քարոզչի մահապատժի օրը Աղեքսանդր VI-ը Հռոմում տոնահանդես սարքեց ի նշանավորումն այն բանի, որ Ջուլիա Ֆարնեզեն իրենից որդի է ծնել։ Այդ առթիվ պապը հրամայեց տաճարներից մեկում, ուր պիտի կայանար մկրտության ծեսը, տեղավորել Ռոզա Վանոցոյի հոյակապ դիմանկարը, որին մարդիկ պետք է երկրպագեին անարատ կույսի սրբապատկերի փոխարեն։ Այնուհետև նա լուծանեց Կաստրեցիայի ու Հովհան Սֆորցայի ամուսնությունը, ամուսնուն մեղադրելով ամլության մեջ, և իր աղշկան կնության տվեց պատանի Ալֆոնսին՝ Բիսալիայի դուքսին, երկու Սիցիլիաների թագավոր Ալֆոնս Արագոնացու ապօրինի որդուն։ Այդ կապն ամրապնդում էր պապի ազդեցությունը Իտալիայում։*

*Այդ միջոցին Կառլոս VIII մեռավ, և Ֆրանսիայի թագն անցավ Օռլեանի տոհմի ներկայացուցիչ Լյուդովիկոս XII-ին։ Նոր թագավորը փափագում էր բաժանվել իր կին Հովհաննայից, որ նրան արդեն ձանձրացրել էր, և կնության առնել Աննա Բրիտանացուն։ Աղեքսանդրը նրան ապահարզանի ու երկրորդ անգամ ամուսնանալու թույլտվություն վաճառեց։ Օգտվելով առիթից, կեսարը սուրբ Հոր կոնակներն առած*

մեկնեց Փարիզ, հույս ունենալով հանդիպել Ֆրիդրիխին՝ Նեապոլի թագավորին, որն այդ ժամանակ գտնվում էր Ֆրանսիայում։ Կեսարը մտադիր էր խնդրել Նեապոլի թագավորի դստեր ձեռքը։ Ֆրիդրիխը նրան բարյացակամորեն ընդունեց, բայց նրա դուստրը մեծամտաբար հրաժարվեց դառնալ քահանայի ապօրինի որդու կինը։ Կարելի է պատկերացնել, թե որքան մեծ եղավ բռնակալի ցասումը։ Լյուդովիկոս XII-ը, չցանկանալով փչացնել իր հարաբերությունները Վատիկանի հետ, ջանաց քավել այն վիրավորանքը, որ կեսարին հասցրել էր իր թագավորությունում. թագավորը նրան շնորհեց Վալենտյան դուքսի տիտղոսը, պսակեց Նավարայի թագավորի դստեր հետ և նրա տրամադրության տակ դրեց վեց հազար հետևակային ու երկու հազար ձի։

Վերադառնալով Իտալիա, Կեսար Բորջիան վերսկսեց Ռոմանիայի փոքր իշխանությունների դեմ մղած կործանարար պատերազմը։

Նվաճելով Ռոմանիան, կեսարը գնաց Հռոմ, որպեսզի կատարի այն նոր ոճիրները, որ ծրագրել էր իր հոր հետ։ Ֆրանսիայի թագավորի հետ դաշինք կնքելով Կեսարը ձգտում էր Լյուդովիկոս XII-ին ներքաշել Նեապոլի թագավորության դեմ մղվող պատերազմի մեջ։ Նա փափագում էր վրեժխնդիր լինել այն վիրավորանքի համար, որ նրան պատճառել էր Ֆրիդրիխի դուստրը և, օգտվելով երկպառակություններից, իրեն ենթարկել Իտալիայի մանր իշխանապետությունները։ Սակայն դրանք բոլորը կապված էին թերակղզու տարբեր միապետների, այդ թվում և Բիսալիայի դուքսի՝ Լուկրեցիայի երկրորդ ամուսնու հետ։ Ուրեմն ի՞նչ անել։ Պետք է ազատվել Բիսալիայի դուքսից, գրո՞ղը տանի։

Կեսարը և նրա հայր նորին սրբազնությունը որոշեցին Հոբելյանի առթիվ կայանալիք տոնակատարության ժամանակ, որին մասնակցելու պիտի գար Լուկրեցիան իր ամուսնու հետ, սպանել հերցոգին։

Նվ ահա ամառային մի դիշեր, երբ դուքսը բարձրանում էր Պապական պալատի աստիճաններով, վարձկան մարդասպանները նրան ծանր վիրավորեցին։ Նրանք դուքսին դաշույնով հինգ վերք պատճառեցին, ապա փախան, համոզված լինելով, թե նա մեռած է։ Բայց դուքսին հաջողվեց հասնել ներքին սենյակները և օգնություն կանչել։

Նորին սրբազնությունը, լսելով պատահարի լուրը, կարգադրեց բժիշկներ հրավիրել։ «Բժիշկները,— նշում է Բուրխարդը,— չկասկածելով, որ պապն իսկապես վշտացած է, ամեն ջանք գործադրեցին և վիրավորին փրկեցին։ Սակայն մի դիշեր, երբ նա արդեն ապաքինվում

էր, մի քանի դիմակավորված մարդիկ խեղդեցին անկողնում պառկած երիտասարդ դուքսին»։

Ամեն մի պատեհ առիթով պապը խառնվում էր տիրակալների ամուսնական գործերին։ Նրան հաջողվեց Հունգարիայի թագավորին, ինչպես նաև Պորտուգալիայի թագավորին բանկ գնով ամուսնալուծության թույլտվություն վաճառել։ Պորտուգալիայի թագավորը նույնիսկ կրկնապատիկ վճարեց, որպեսզի թույլ տրվեր ամուսնանալ մերձավոր ազգականուհու հետ (իսկ մեր օրերում հոգևորականությունը ապահարզանի դեմ աղմուկ է բարձրացնում, վկայակոչելով ամուսնության սրբությո՞ւնը)։

Բացի դրանից, սուրբ Հոր գլուխը մտավ խաչակրաց արշավանքի հետ կապված մի հերթական ղավեշտախառն սարքել։ Պարզամիտ հավատացյալները նորից պապական սնդուկները լցրին ոսկով ու արծաթով, որ նախատեսված էին Սրուսաղեմը և տիրոջ գերեզմանը կովով վերանվաճելու համար։ Տարեգիրները հայտնում են, որ միայն Վենեհիկի հանրապետությունը պապին տվեց յոթ հարյուր իննսունինը ոսկյա ֆունտ։

Այդ վիթխարի գումարները նորին սրբազնությունը օգտագործեց տոնախմբությունների ու Կեսարի նվաճողական արշավանքների համար։

Ջորս տարի էլ չանցած Լուկրեցիայի եղբայրն արդեն գրավել էր մի շարք մեծ ու փոքր տիրույթներ։ Նվաճված քաղաքների խոշոր մադնատներին Կեսար Բորջիայի հրամանով խեղդամահ էին անում կամ կախում։ Նույն այդ ժամանակ սուրբ Հայրը իր հուշակավոր թույնի միջոցով այն աշխարհն էր ուղարկում տանջամահ արված զոհերի ծնողներին կամ ազգականներին։ Դա ամենաապահով միջոցն էր, որպեսզի ոչ ոք չպահանջեր վերադարձնել զավթած կալվածքները։

Կեսարը երազում էր իրեն թագավոր հռչակել։ Նորին սրբազնությունն իր պալատականների, սիրեցյալների ու սիրուհիների հետ գնաց այցելելու Կեսարի գրաված հողերը։ Ճանապարհին նա ամենուրեք շռայլաբար պարգևներ էր բաժանում, տոնակատարություններ սարքում կրոնից թմրած ժողովրդի համար, ամեն կերպ ձգտելով խանդավառություն առաջ բերել։ Էլբա կղզում պապը ժողովրդական տոնահանդեսներ սարքեց, կարգադրելով գեղեցիկ գեղջկուհիներ ուղարկել, որպեսզի իր պալատում կատարեն տեղական պարերը։

Վերադառնալով Հռոմ և, ըստ մի պատմաբանի ասածի, «ստամոքսը մաքրելով մելամաղձությունից», Աղեքսանդրը Կեսարի հետ սկսեց ծրագրել նրան հանդիսավորապես Ումբրիայի ու Ռոմանիայի թագավոր

հռչակելու հարցը։ Դրամական խոշոր միջոցներ ու ռազմական ուժեր էին անհրաժեշտ, որպեսզի ուրիշ պետություններին ստիպեին ճանաչել այդ ակտը։ Բացի այդ, նորին սրբազնությունը ցանկանում էր տնօրինել իր մնացած երեխաների բախտը, և միայն հետո ամբողջովին զբաղվել իր սիրեցյալ որդու մեծ գործերով, որով նա հիացած էր։

Իր դուստր Լուկրեցիային նա տվեց Սպոլետոն, իսկ որդի Ռոդրիգոյին, որին ծնել էր իր դուստրը՝ Սերմոնան։ Նեպիի դքսությունը տվեց իր որդիներից մեկին՝ Հովհան Բորջիային։ Վերջապես, օրհնեց Լուկրեցիայի երրորդ ամուսնությունը Ֆերարայի դուքսի ժառանգ Ալֆոնս դը Էստեի հետ։

Լուկրեցիայի հարսանիքը կատարվեց 1501 թվին։ «Ընդամենը միայն ութ տարի էր անցել, ինչ Լուկրեցիան ամուսնացել էր Հովհան Սֆորցայի, իր առաջին ամուսնու հետ,— հանգիստ պատմում է Բուրխարդը։— Հարսանիքը կատարեցին այնպիսի շքեղությամբ, որ արտասովոր էր նույնիսկ հեթանոսական անցյալի հմամբ։ Ընթրիքին մասնակցում էին բոլոր կարդինալները և պալատական բարձր աստիճանավորները, ընդ որում նրանցից յուրաքանչյուրի աջ ու ձախ կողքերին կանգնած էին երկու ազնվազարմ պոռնիկներ, որոնց հագուստը բաղկացած էր միայն մուսլինե թափանցիկ թիկնոցներից և ծաղկաշղթաներից։ Ընթրիքից հետո հիսուն պոռնիկներ կատարեցին այնպիսի պարեր, որ պատշաճությունը թույլ չի տալիս նկարագրել։ Սկզբում պարում էին միայն իրենք, իսկ հետո՝ կարդինալների հետ։ Վերջապես, Լուկրեցիայի ազդանշանից հետո թիկնոցները դեն նետվեցին, և պարերը շարունակվեցին սուրբ հոր ծափերի ներքո։ Ապա անցան այլ զվարճանքների։ Խրախճասրահում սիմետրիկ կերպով դրված էին տասներկու շարք արծաթե վիթխարի մոմակալներ վառած մոմերով։ Լուկրեցիան, պապն ու հյուրերը տապակած շագանակներ էին նետում, իսկ պոռնիկները հավաքում էին, վազվզելով բոլորովին մերկ, թավալվում էին, ծիծաղում և ընկնում։ Ավելի ճարպիկները նորին սրբազնությունից մետաքսե զգեստներ և այլ թանկարժեք նվերներ էին ստանում։ Ի վերջո, պապի ազդանշանով սկսվեց մրցությունը՝ մի աներևակայելի զեխություն, որն անհնար է նկարագրել։ Հյուրերը կանանց հետ անում էին ինչ-որ սրտներն ուզում էր։ Լուկրեցիան պապի հետ բազմել էր բարձր բեմահարթակի վրա, ձեռքին բռնած ամենակրքոտ և ամենաանխոնջ սիրեկանի համար սահմանված պարգևը»։

Դրանից հետո ի՞նչ կարելի է ասել եկեղեցական բարոյականության մասին։

Հարկ է նկատի ունենալ, որ այդ բոլոր քստմնելի փաստերը մտածծին չեն. դա վեպ չէ, այլ անկողմնակալ պատմություն։

Մենք ստիպված ենք Աղեքսանդր VI-ի կենսագրությունից շատ բաներ բաց թողնել...

Միանգամայն պարզ էր, որ իր հրեշավոր կրքերին գոհացում տալու համար նրան միշտ փող էր հարկավոր, և այդ նպատակին հասնելու ճանապարհին նա բոլոր միջոցները լավ էր համարում։ Նա ոչ միայն խաչակրաց արշավանքներով ու հոբելյաններով հիմարացնում էր պարզամիտ քրիստոնյաներին, ոչ միայն ձեռքերը թաթախում իր կողոպտած հարուստների արյան մեջ, այլև դիմում այլ գարշելի միջոցների ևս։

Շատ ուսանելի է Աղեքսանդր VI-ի թուլլատրական թղթերի ցանկը։ Որպեսզի ցույց տանք, թե ինչ աստիճան կարող է ընկնել պապությունը, որը հավակնում է մարդկանց նկատմամբ բացարձակ իշխանություն ունենալ, և բացահայտենք իրեն անսխալական համարող այդ եկեղեցական բռնատիրության էությունը, մենք մի օրինակ կբերենք այդ թղթերից։

Բորջիա պապը, հռոմեական եկեղեցու պարագլուխը, իրեն թույլ տվեց աստվածային նախախնամության անունից հաստատել հոր արվամոլության ակտը հարազատ որդու հետ։ Այդ արգահատելի հայրը կարդինալ Մենդոզան էր, Վալենսիայի արքեպիսկոպոսը, որը նորին արքազնությանը խնդրել էր թույլ տալ սիրեկան դարձնել իր ապօրինի որդիներից մեկին՝ Զաննետին։ «Հարկավոր է բարի թագավոր լինել,— լկտիաբար ավելացրեց Աղեքսանդրը,— ուստի մենք չենք կարող մեր հպատակներին մերժել այն, որ բազմիցս թույլատրում ենք ինքներս մեզ»։

Հաստավ մի պահ, երբ միանգամայն սպառված հանդիսացավ նույնիսկ Բորջիայի հնարագետ երևակայությունը։ Այլևս չէին մնացել աստվածներ կամ բարոններ, որոնց կարելի լիներ սպանել, ոչ ոք թույլատրական թուղթ չէր խնդրում։ Պարզ էր նաև, որ ոչ ոք չի ընկնի երևակայական խաչակրաց արշավանքի ծուղակը։

Այնժամ Աղեքսանդր VI-ը որոշեց թունավորել իր կարդինալներին, որպեսզի ժառանգի նրանց հարստությունը և նրանց փոխարինի նոր, ամբողջովին իր դրածոներից կազմված սուրբ կոլեգիայով։

Մի քանի խոսք Բորջիայի հռչակավոր թույնի մասին։ Մեր պատմությունը չերկարացնելու համար մենք ոչինչ չասացինք Հռոմի բազմա-

թիվ հնասարակ քաղաքացիներին թունավորելու մասին, այն քաղաքացիներին, որոնց միակ հանցանքը հարուստ լինելն էր։

Հարկավոր է արժանին հատուցել Բորջիային. նա սպանելու արվեստը կատարելության հասցրեց։ Այդ ասպարեզում ունեցած մասնագիտական գիտելիքների և իրեն նվիրված քիմիկոսների օժանդակության շնորհիվ նրան հաջողվեց ստեղծել չափազանց նրբակատար թույների մի ամբողջ դինանոց։ Աղեքսանդրը, կեսարը, Լուկրեցիան գործում էին անձամբ կամ իրենց սրիրների միջոցով։ Բավական էր, որ ճողոցներում կամ հրապարակներում զրոսնելիս սրիրները ասեղով ծակեին մատնանշված անցորդներին, որպեսզի վերջիններս անշնչացած գետին ընկնեին։ Ասեղի ռեզերվուարում նույնպիսի թույն կար, որ մի կաթիլը բավական էր մի առողջ եզ սպանելու համար։

Այդ գերդաստանի սիրած թույնը հոտ ու դույն չուներ։ Այդ թույնից շաբաթական մեկ կաթիլ ստանալով, պացիենտը մեռնում էր աստիճանաբար, նախապես սահմանված ուզած ժամկետում։ Հենց դրա վրա էր հույս դնում թունավորողը իր հետքերը վերացնելու գործում։ Այդ թույնը սուրճի կամ շոկոլադի հետ խառնված լինելիս իր զորությունը պահպանում էր, սակայն գինու մեջ կորցնում էր ուժը, և այդ պատճառով էլ պապը դրանից հրաժարվեց։

Երբ հայտնագործվեց Նոր աշխարհը, Աղեքսանդր VI-ը միսիոներներին հրամայեց Ամերիկայից զանազան թունավոր բույսեր բերել, որոնցից նրա քիմիկոսները սարսափելի թույների բազմաթիվ տեսակներ պատրաստեցին։ Կեսար Բորջիան սովորել էր թունավորված դանակով դեղձն այնպես կիսել, որ մի էջքն ուտելով՝ ինքն անվնաս էր մնում, իսկ ճաշի հրավիրված հյուրը, որին բաժին էր ընկնում մյուս կեսը, մեռնում էր։

Բորջիայի նշանավոր գինին ուներ այն հատկությունը, որ նրա ներգործությունն արտահայտվում էր միայն մի քանի տարի հետո. թափվում էին մարդու ատամները, մազերը, պլոկվում էր մաշկը, և նա մեռնում էր երկարատև ու տանջալից հոգեվարքից հետո։

Լուկրեցիան մի բանալի ուներ, արտաքուստ շատ սովորական, որի օգնությամբ նա այն աշխարհն էր ուղարկում իր սիրեկաններին, երբ ուզում էր նրանցից ազատվել։ Բանալու բռնակը վերջանում էր աննըշմարելի սուր ծայրով, որին նա թույն էր քսում։ Սովորաբար նա որևէ հանձնարարություն էր տալիս և զոհին հանձնում այն կողպեքի բանալին, որ դժվար էր բացվում։ Քաղաքավարի սիրեկանը, բանալին

ամուր սեղմելով, մի թեթև քերծում էր իր ձեռքը և մի օր հետո մեռնում։

Կեսարն իր հերթին ուներ մի ոչ նվազ հետաքրքիր մատանի։ Արտաքուստ ողորկ այդ մատանին ուներ առյուծի երկու ճիրաններ՝ պատրաստված սուր պողպատից։ Ճիրանները գտնվում էին ներսի կողմում և ձեռք տալու ժամանակ, միջամատով հուպ տալիս, խրվում էին մարմնի մեջ։ Դրանք պատած էին խոր փողրակներով, որոնք հավանաբար թույն էին բաց թողնում։ Բազմության մեջ որևէ տեղ, ասենք պարահանդեսում, դիմակավորված Կեսարը բռնում էր այն մարդու ձեռքը, որին որոշել էր այն աշխարհն ուղարկել, խորը իրում «առյուծի ճիրանները» և անմիջապես վայր գցում ճակատագրական մատանին։ Քի՞թե հնարավոր էր դիմակների բազմության մեջ գտնել հանցագործին։ Եվ եթե նույնիսկ կռահեին, թե բանն ինչ է, ո՞վ կարող էր քահանայապետի որդուն մեղադրել։

Լուկրեցիայի բանալին ու Կեսարի մատանին երկար ժամանակ գործադրվում էին նաև նրանց մահից հետո. ոճրագործները շատ աշակերտներ ու հետևողներ ունեցան։

Բորջիաները այն դեպքերում, երբ անհրաժեշտ էր թշնամուց անհապաղ ազատվել, դիմում էին դաշույնի կամ արագ ներգործող թույների օգնությանը։

Հենց այդպիսի թույն էր որոշեց գործադրել Աղեքսանդր VI-ը, երբ մոտադրվեց հաշիվ տեսնել կարդինալների հետ։ Նրա ոճրական պլանը պետք է իրագործվեր հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ։

Եկեղեցական նվիրապետերին խաբելով իր մոտ ճաշի կանչելը հեշտ բան չէր։ Պրելատները, իհարկե, մեծ անվստահությամբ էին վերաբերվում ճաշկերույթին։ Եվ պապը հասկացավ, որ նրանց մեծ մասը հարմար պատրվակ կգտնի և կմերժի իր հրավերը, եթե նրանց հրավիրի իր պալատը։ Այնժամ նա կարդինալ Կորնետոյին խնդրեց մի օրով նրա պալատը տրամադրել իրեն խնջույք սարքելու համար։ Պապի ծրագիրը հաջողությամբ պսակվեց, կարդինալներն ընդունեցին հրավերը։

Նշանակված օրն առավոտյան Աղեքսանդրն իր ծառայապետին ուղարկեց Կորնետոյի պալատը՝ հետևելու սեղանի սպասքավորմանը, նրան հանձնելով երկու շիշ գինի։ Նա հրամայեց ձեռք առնել բոլոր նախազգուշական միջոցները, շշերը թաքցնել հուսալի տեղում և գինին անսխալ մատուցել միայն նրանց, ում ինքը կմատնանշի։

Կարդինալներից ոչ մեկը չհապաղեց խնջույքին ներկայանալ, և նորին սրբազնությունը, իր որդու հետ ժամանելով պալատ, կարող էր

իսկույն հաշվել, թե ինչ եկամուտ է ստանալու այդ ճաշկերույթից։ Ճաշկերույթը տեղի էր ունենում օգոստոսին, և տանջալից շոգը հոգնեցուցիչ էր։ Աղեքսանդրը և Կեսարը խնջույքի էին եկել ոտքով և, հոգնածությունից գանգատվելով, զովացուցիչ խմիչք խնդրեցին։ Ծառայապետը մի րոպեով դուրս էր եկել, և ծառաներից մեկը շտապեց կատարել նորին սրբազնության խնդրանքը։ Աղեքսանդրը, սովորականի պես իր գավաթը խմեց մի շնչով։ Կեսարը դինուն ջուր խառնեց։ Դատարկելով գավաթները, նրանք գրեթե նույն ակնթարթում ստամոքսի ուժեղ ցավ զգացին։ Ծառան, որին ոչինչ հայտնի չէր, նրանց մատուցել էր այն շշերը, որ թաքցրել էր ծառայապետը։ Սուրբ Հայրն սկսեց սոսկալի չղաձգվել։ Ստիպված նրան անմիջապես տեղափոխեցին իր պալատը, որտեղ և գիշերը վախճանվեց. բժիշկները չկարողացան նույնիսկ թեթևացնել նրա տառապանքները։ Դա տեղի ունեցավ 1503 թվի օգոստոսի 18-ին։

Կեսարը գտնվում էր կյանքի ու մահվան միջև, բայց թույնը, որին ջուր էր խառնված, կորցրել էր իր զորությունը, և ամուր օրգանիզմը կարողացավ դիմանալ։ Չնայած սաստիկ տանջանքներին, նա այնուամենայնիվ իրեն չէր կորցնում. իր հրամանով սուրհանդակներն անընդհատ տեղեկություններ էին հաղորդում հոգեվարքի մեջ գտնվող Աղեքսանդր VI-ի վիճակի մասին։ Իմանալով նրա մահը, նա իր պահակախմբի պետին հրամայեց փակել Վատիկանի դարպասները և դուշյունը ձեռքին կարդինալ-գանձապահին ստիպեց առաքելական դանձարանի բանալիները հանձնել իրեն։

Հաջորդ օրը, հենց որ պապի մահվան լուրը տարածվեց քաղաքում, Հռոմն սկսեց ցնծալ։ Մարդկանց բազմություններ շարժվում էին դեպի սուրբ Պետրոսի տաճարը։ Հռոմեացիներն ուզում էին տեսնել այն մարդու աճյունը, որը տասնմեկ տարի շարունակ հնազանդության ու սարսափի մեջ էր պահում հզոր սենյորներին։ Սուրբ Պետրոսի տաճարը, որտեղ հանգչում էր Աղեքսանդրը, լեփ լեցուն էր։ «Սոսկալի տեսք ուներ սևացած, ճլլանդակված, ուռած դիակը, որը չորս դին զզվելի գարշահոտություն էր տարածում,— հայտնում է Ռաֆայել Վոլատերանը,— գորշ լորձունքը պատել էր նրա շրթունքներն ու քթանցքները, բերանը լայն բացված էր, և լեզուն, որ թույնից ուռել էր, կախ էր ընկել գրեթե մինչև կզակը։ Գտնվեց և ոչ մի մոլեռանդ մարդ, որ համարձակվեր շրթունքները հպել հանգուցյալի ձեռքին կամ ոտքին, ինչպես սովորաբար արվում է»։

Երեկոյան մոտ ժամը վեցին եկեղեցում այնպիսի գարշահոտու-

թյուն էր տիրում, որ կարդինալներն ստիպված-էին կարգադրել թաղել պապին, թեև, ըստ այն ժամանակվա սովորույթի, թաղումից առաջ հարկավոր էր տասն օր շարունակ հոգեհանգստի պատարագ կատարել։ Ո՛չ մի քահանա, ո՛չ մի կարդինալ, պահակախմբի սպաներից և ոչ մեկը չհամաձայնվեց ներկա լինել թաղման արարողությանը։ Դիակը հանձնվեց դագաղագործների ու գերեզմանափորների տնօրինությանը։ Դեն նետելով պապական խույրը, նրանք թույնից փքված դիակը ոտնահարելով մի կերպ խոթեցին դագաղի մեջ, որը շատ կարճ էր ու շատ նեղ։ Հետո Աղեքսանդր VI-ին իջեցրին դամբարան, որ գտնվում էր պվխավոր բեմի տակ, դրա ձախ կողմում։

Հոր մահից հետո Կեսար Բորջիան կարգադրեց իրեն փոխադրել սուրբ Հրեշտակի ամրոցը։ Նա հրամայեց թնդանոթներով գնդակոծել Միներվայի վանքը, որտեղ սուրբ կոլեգիայի անդամները, իրենց շրջապատելով բարիկադներով հավաքվել էին խորհրդակցության։ Կողոպըտված իշխանների ազգականներն ապստամբեցին Կեսարի դեմ և զենքի ուժով ետ խլեցին իրենց կալվածքները։ Վերջ ի վերջո կարդինալների երկար հորդորներից հետո Կեսարը համաձայնվեց քաշվել գնալ իրեն պատկանող Ռոմանիայի դքսությունը, ուր արդեն վերադարձրել էին նախկին ֆեոդալական տիրակալների ազգականները։ Այնտեղ նա բավական խղճուկ կյանք էր վարում։ Հետագայում Կեսարը ծառայության մտավ Նավարայի թագավորի մոտ և սպանվեց 1513 թվին։

Իսկ Լուկրեցիան երբեք Հռոմ չվերադարձավ։ Նա ապրեց մինչև խոր ծերություն, հովանավորելով եկեղեցիներին և նկարիչներին խրախուսելով ստեղծել կրոնական թեմաներով պատկերներ։ Կյանքի վերջին շրջանում Լուկրեցիայի սիրեկանն էր մի կարդինալ, որ ապրում էր նրա ամուսնի Ալֆոնս դ՝ Էստեի պալատում։ Կարող է պատահել, որ երբևէ Լուկրեցիային էլ սրբերի կարգը դասեն։

Ահա թե ինչպես է Կեսար Բորջիային բնութագրել Պոլ Մեն-Վիկտորը. «Պատմաբանը պետք է ըստ հնարավորին սառնասրտորեն մոտենա նրան։ Մի՞թե բնագետը սարսափ է ղգում, երբ ուսումնասիրում է վայրի գաղանին։ Հենց այդպիսի գազան էր Կեսար Բորջիան, Վալենտի դուքսը, մի էակ, որ ծնվել էր չարության համար, որ մարդկային քաղցրությունների գաղափարներին նույնքան օտար էր, որքան ուրիշ մոլորակի բնակիչն օտար է մեր երկրի ֆիզիկական օրենքներին։ Մեծ հանցագործները, որոնք իրենց չարագործությունների դաժանությամբ սարսափեցրել են աշխարհը, թեկուզ կարճ ժամանակով, բայց այնուամենայնիվ երբեմն խղճի խայթ են զգացել։ Վերջիններիս կյանքում

*րոպեներ են եղել, երբ նրանց համակել է հոգեկան տագնապը, և նրանք ապրսպափով են դեպի ետ նայել։*

*Իր երիտասարդության օրերին Ներոնը տակավին պահպանում է իր մարդկային կերպարանքը. Իվան Ահեղը, սպանելով որդուն, փակվում է Կրեմլում և ինքնախարազանման տրվում։ Աղեքսանդր VI-ի որդուն անհայտ է որևէ տարակուսանք, նա անկեղծորեն գտնում է, որ ինքն օրենքներից վեր է կանգնած։ Նրա կրքերը չահմաններ չէին ճանաչում, անսահման էր և դաժանությունը։ Նա ապրում էր ինչպես վագրը ջունգլիներում։ Նրա մեջ, ամեն ինչ գալիս էր վագրից՝ սրընթաց հարձակումը, ուժը, ճկունությունը, սոսկալի նրբագեղությունը, թռիչքների ու շարժումների կայծակնայնությունը. վագրի նման նա իր գիշատիչ բնազդների ստրուկն էր։ Արյունը եղել է նրա տարերքը, արյան մեջ նա իրեն այնպես էր զգում, ինչպես ձուկը ջրում»։*

*Հիշենք նաև, որ Մաքիավելին, Բորջիայի ժամանակակիցը, իր «Իշխանի մասին» գրքում մտորելով բռնապետության մասին, դավերգում է բռնապետ-վիրտուոզին, որպես օրինակ վերցնելով կեսար Բորջիային։*

*Այս է Աղեքսանդր VI-ի պատմությունը։ Եկեղեցականները երբեք չեն հրաժարվել նրանից, քանի որ իրենք էլ, որպես նրա ոճիրների հանցակիցներ, ծանր պատասխանատվություն են կրում։ Ի դեպ, նրանք ոչ միայն չեն հրաժարվում, այլև կատաղությունից փրփրում են, երբ որևէ մեկը հիշատակում է այդ բռնակալի չարագործությունները։*

*Ես համոզված եմ որ ամեն մի խավարամիտ այսպես կպատասխանի պատմաբանին, որ համարձակվել է պատկերել Աղեքսանդր Բորջիայի և նրա որդու սխրագործությունները. «Ընդունենք, թե ճիշտ է, որ նրանցից յուրաքանչյուրը կոտորել ու կողոպտել է Իտալիայի բազմաթիվ հզոր եպեսկոպոսների։ Սակայն Բորջիան ծառայել է սուրբ աթոռի շահերին, ձգտելով ընդլայնել առաքյալ Պետրոսի տիրույթները, և մենք չնորհակալ ենք նրանից։ Նա ապրում էր այն դարաշրջանում, երբ քաղաքակրթության չատագովներն ստիպված էին ծայրահեղ միջոցների դիմել։ Եվ այդ պատճառով, եթե Բորջիան նույնիսկ հանցագործություններ կատարեր, այնուամենայնիվ նրան դասում ենք առաջին շարքը։ Եվ ի՞նչ նշանակություն ունեն նրա արարքները, քանի որ մեռնելուց առաջ նա կարողացել է խոստովանել իր մեղքերն ու լրիվ թողություն ստանալ, որպեսզի երկինք համբարձվի և բազմի երկնային հոր աջ կողմում։ Հավատի խորհուրդը քննության ենթակա չէ. կրոնը սովորեցնում է, որ ամեն ոք, ով աստծուց ներում է խնդրում, թողություն է*

*պատանում։ Հաղորդությունից հետո նա նույնքան անարատ է, որքան նոր մկրտված մանուկը։ Այդպիսի՞ն է մեր հավատը։ Ներվք նրան, ով այդ ուսմունքը հանցավոր է համարում։ Վատ չէր լինի, եթե երկրի վրա հանդես գար մի այնպիսի Բորջիա, որն իր օրհնյալ թույներով կարողանար ոչնչացնել ապատախտհների ամբողջ ցեղը. մեղք չունի նա, ով տքնում է հանուն եկեղեցու հաղթանակի, իսկ նսլատակը արդարացնում է միջոցները»։*

*Եկեք երջանիկ լինենք, որ մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ եկեղեցականներն ի վիճակի չեն իրագործելու իրենց սպառնալիքները, Ճիզվիտները, ինկվիզիցիայի դահիճները և աշխարհի բոլոր բորջիաներն ներվված են ազնիվ մարդկանց կողմից։*

## ՀՈՒԼԻՈՍ II

*Առաքյալների թափուր մնացած գահի շուրջը մրցակիցների դրսևորած անզուսպ կրքերի հետևանքն այն եղավ, որ քահանայապետի գավազանը բաժին ընկավ կարդինալ Պիկոլոմինիին, անբասրորեն ազնիվ մի մարդու։ Հաստատվելով Վատիկանում, նա մեկեն հայտարարեց, թե մտադիր է փոխել եկեղեցու, գլխավորապես Հռոմի կուրիայի բարքերը։*

*Այնժամ կարդինալները որոշեցին ըստ հնարավորին շուտ ուղղել իրենց սխալը։ Այն օրը, երբ Պիոս III պապը (այդպես էին անվանում այդ արտասովոր մարդուն) բացեիբաց հայտարարեց իր մտադրությունը, նրան հյուրասիրեցին դեղաթույնով, որն անմիջապես կատարեց իր գործը։ Ճաշից հետո սուրբ Հայրը ստամոքսի խիստ ցավեր զգաց և, չնայած բժիշկների օգնությանը, Պիոս III-ը, որ ընդամենը երեք շաբաթ էր բազմել առաքյալների գահին, վախճանվեց սոսկալի տառապանքներով։*

*Թաղումից անմիջապես հետո կարդինալները կոնկլավի հավաքվեցին։ Հինգ մրցակից երկար ժամանակ ու անդիջում չանում էին միմյանցից խլել խույրը, մինչև որ մեջ ընկավ վեցերորդ ավազակը՝ Ջուլիանո դելա Ռովերեն, սուրբ Պետրոսի կարդինալը։ Խույրը դնելով գլխին, նա բարձրաձայն ասաց, թե ոչ ոքի իրավունք չի տա այն վիճարկել, քանզի գնել է բոլոր ձայները։*

Նրա փաստարկը պրելատների վրա ազդեց, և նոր պապ հռչակեցին Ջուլիանոյին՝ Հուլիոս II անունով։

Նոր պապի պատանեկությունը շատ բուռն է եղել։ Ջուլիանոն ինքը պարծենում էր իր սխրագործություններով։ Նա երկար ժամանակ նավարկել է ծովերում, բայց ոչ թե ձուկ որոնել, այլ, որպես սովորական ծովահեն, առևտրական նավեր է կողոպտել, աղջիկներ առևանգել և վաճառել իբրև սերկուհիներ։

Դաժան, վրիժառու, գոռոզամիտ Ջուլիանոն հռոմեացիների մեջ համբնդհանուր ատելություն առաջացրեց։ Մարդիկ նրա ընտրությունն ընկալեցին որպես համաժողովրդական աղետ։

Նա շատ լավ գիտեր, թե ինչ զգացումներ է հարուցում չրջապատողների մեջ, բայց նրա համար միևնույն էր՝ համակրանք է հարուցում, թե նողկանք։ Իշխանությունն իր ձեռքին էր, ահա այն ամենը, ինչ պետք էր նրան։

Սկզբում նա Աղեքսանդր VI-ի մեթոդներին չէր դիմում, չէր սպասում աղնվականության ներկայացուցիչներին, այլ փորձում էր դիվանագիտական միջոցներով նրանց իր կողմը քաշել։ Այդ նպատակով նա իր դուստր Ֆելիցիային կնության տվեց Օրսինիներից մեկին, իսկ մյուս աղջկան, որ իրենից ծնել էր իր քույրը, պսակեց Անտոնիոս Կոլոննայի հետ։

Իտալական մանր իշխանությունների նկատմամբ նա այլ կերպ էր վարվում։ Նա բենտեվիոլիներից պահանջեց իրեն հանձնել Բոլոնիան, և երբ նրանք հրաժարվեցին, նրանց բանադրեց և հպատակներին թույլ տվեց ոչ միայն տիրանալ նրանց ունեցվածքին ու հողերին, այլև մեղքերի լրիվ թողություն խոստացավ այն անձանց, որ կկոտորեին այդ տոհմի անդամներից շատերին։

Բացի այդ, Հուլիոսը պահանջեց քաղաքներն ու ամրոցները վերադարձնել այն սենյորներին, որ ավազակ Աղեքսանդր VI-ի մահից հետո նորից էին տիրացել իրենց նախկինում բռնագրավված հողերին։ Հզոր իշխաններն ու սենյորները հրաժարվեցին կատարել նրա պահանջները։ Ամենից վճռականորեն առարկում էր Վենետիկի հանրապետությունը, որը հայտարարեց, թե իր հողերից պապին ոչ մի թիզ չի տա, ոչ մի գրոշ տուրք կամ հարկ չի վճարի, ինչ անվան տակ էլ որ գրանք գանձվենն։ Ամբարտավան պապն սպառնաց, թե Վենետիկը ձկնորսական գյուղակի օրը կգցի։ Հասկանալով, որ իր բանակը բավական ուժ չունի, որպեսզի առանց կողմնակի օգնության կարողանա սանձահարել վենետիկցիներին փառասիրությունը, նա օգնություն խնդրեց Եվրոպայի միա-

պետներից։ Նա բանադրեց դոժ Լորեդանոյին, Տասի խորհրդին և Վենետիկի ամբողջ ժողովրդին, թույլ տվեց գրավել վենետիկցիների նավերը, գույքը և սեփականել կամ վաճառել, ով ինչպես կամենա, կանանց ու երեխաներին։

Բանադրանքի կոնդակով Վենետիկից պահանջեց նշանակված օրն իրեն հանձնել մի քանի քաղաքների բանալիները։

Ենթարկվելու փոխարեն, Տասի խորհուրդը Վենետիկի տարածքում պապական կոնդակը հրապարակելու դեմ եռանդուն միջոցներ ձեռք առավ։ Գաղաղած պապն իր դաշնակիցների մոտ լեգատներ ուղարկեց, պահանջելով արագացնել ռազմական գործողությունները, և սկսեց պատերազմի պատրաստվել։

Չնայած իր վառամյալ տարիքին, սաղավարտ ու զրահ զգենելով, նա ինքը գլխավորեց զորքը։ Մի շարք հեշտ հաղթանակներ տանելով, նա նվաճեց Փերուջան ու Բոլոնիան, հաղթականորեն մտավ այդ քաղաքները, բնակիչներին հրի ու սրի մատնելով։ Հիանալի՛ մեթոդ էր այն կրոնի ներկայացուցչի համար, որ կոչված է խաղաղություն քարոզելու։

«Նվաճած հաղթանակներից հետո,— պատմում է Լյուդովիկոս XII-ի պատմագիրը,— սուրբ Հայրը, նիզակ ճոճելով և իրեն առնվազն Թամերլան համարելով, որոշեց հարձակվել նաև եվրոպայի մնացած տիրակալների վրա։ Յոթանասնամյա պարծենկոտը, որին ռազմական գործողությունները պնդպես էին սազում, ինչպես պարերը վանականներին, Ֆրանսիային պատերազմ հայտարարեց»։

Թուլամիտ Լյուդովիկոս XII-ի դեմ մղվող պայքարում նա, հետևելով եկեղեցական ավանդույթներին, առանց քաշվելու դավաճանության դիմեց։ Նա իր գործակալներին ուղարկեց Ճենովա (ուր ինքը ծնվել էր), որպեսզի Ճենովացիներին ապստամբության դրդեն, պապի անունից նրանց պաշտպանություն խոստանալով։ Հավատալով նրա խոսքին, Ճենովացիները խռովություն բարձրացրին և Ֆրանսիացի սպաներին քշեցին։ Սակայն Լյուդովիկոս XII-ն առանց դժվարության ճնշեց ապստամբությունը։ Այնժամ Հուլիոս II-ը, հակառակ իր խոստման, ոչ միայն օգնության չեկավ Ճենովացիներին, այլև, ընդհակառակը, ամեներայն եռանդով թագավորին օգնեց խռովարարների հետ դատաստան տեսնել։

Այդպես էլ քահանայապետերը կատարում իրենց խոստումը, երբեք չեն պահում իրենց շահույթը չի բերում։

Մենք կանգ չենք առնի ռազմատենչ պապի այն խարդավանքների

վրա, որոնք Վենետիկի հանրապետությանն ստիպեցին իր մի քանի քաղաքները հանձնել առաքելական եկեղեցուն։ Նա կայսր Մաքսիմելիանին դուրս բերեց Ֆրանսիայի թագավորի դեմ, նրան համոզելով, թե Լյուդովիկոս XII-ը ձգտում է Իտալիան ստրկացնել, իսկ այնուհետև առաջարկեց իր միջնորդությունը նրանց վեճի մեջ։ Նրա խարդավանքների պատճառով ստորագրվեց Վենետիկի հանրապետության դեմ ուղղված լիգա ստեղծելու պայմանագիրը, ընդ որում նրան հաջողվեց իր կողմը գրավել մի շարք իշխանապետությունների, որոնց օգնությամբ հույս ուներ ջախջախել Վենետիկը։

Դրա հետևանքով Վենետիկը երեք կողմից շրջապատեցին Ֆրանսիան, Գերմանիան, իսպանական ու պապական զորքերը, որոնց առջևից առաջվա պես իր ձին հեծած սիգարշավում էր Հուլիոս II-ը։

Իբագործելով Վենետիկին նրա տիրույթների մեկայն մի չնչին մասը թողնելու իր դիտավորությունը, Հուլիոս II-ը հանկարծ փոխեց իր քաղաքականությունը. իր դաշնակիցներին նա սկսեց մեղադրել Վենետիկի հետ հաշվեհարդար տեսնելու մեջ, խզեց այն բոլոր կապերը, որոնցով միացած էր լիգայի հետ, և Լյուդովիկոս XII-ին հրամայեց Ֆրանսիա վերադառնալ։ Հիմար միապետը շտապեց ենթարկվել նրա հրամանին։

Մինչև իր մահը Հուլիոս II-ն անվերջանալի պատերազմներ էր մղում։ Դաշինք կնքելով Ֆերդինանդ Կաթոլիկի հետ, նա երկար ժամանակ պայքարում էր Լյուդովիկոս XII-ի դեմ, որը վերջ ի վերջո հրաժարվեց հռոմեական կուրիայի ձեռքին մարիոնետի դեր կատարել։ Այնուհետև, երբ ֆրանսիացիներին Իտալիայից դուրս քշեցին, նա Իսպանիայի դեմ արշավանք հայտարարեց, դաշինք կնքելով շվեյցարացիների հետ, որոնք երեսուն հազարանոց բանակ հավաքեցին։ Պայմանագիրը ստորագրվեց, բայց, ի բարեբախտություն ժողովուրդների, ռազմատենչ փառամոլ Հուլիոսը մեռավ։

Նրան սպանեց գեշ հիվանդությունը, որն արդեն մի քանի տարի նրան պահում էր գերեզմանի եզրին։ Նրա մարմինը, վաղուց ծածկված էր սարսափելի վերքերով, որոնք, սակայն, նրան չէին խանգարում սիրուհիներ և սիրեկաններ ունենալ։

Վերջիններիս պայքարը պապի ֆավորիտը լինելու բախտին արժանալու համար հաճախ մահացու ելք է ունեցել։ Օրինակ, Պավիայի կարդինալը, որը պապի գլխավոր ֆավորիտը դառնալու հույսն էր փայփայում, մի գեղեցիկ օր դուրս Ուրբանոյի՝ նորին սրբազնության մերձավոր աղգականի կողմից հրապարակայնորեն մեղադրվեց այն բա-

նում՝ թե փորձել է Բոլոնիան վաճառել Ֆրանսիային։ «Սուտ է,— պատասխանեց Պավիայի կարդինալը,— զրպարտիչն ուզում է ինձ զրկել աուրբ Հոր ողորմածությունից»։

Պավիայի կարդինալը Հուլիոս II-ի հարեմում իսկապես գլխավոր ֆավորիտի դերն էր զբավում և դրանով պարծենում։ Դուքս Ուրբանոն, աստիկ գաղափած, որ իր դիտավորությունները մերկացվել են, երդվեց Պավիայի կարդինալից վրեժ լուծել։ Հաջորդ օրը, հանդիպելով ձիով ընթացող կարդինալին, նա շքախմբի աչքի առաջ սրով չախչախեց նրա գլուխը։ Ազատվելով մրցակցից, դուքսը հույս ուներ սուրբ Հոր սրտում նրա տեղը գրավել։ Վշտից խենթացած Հուլիոս II-ը չէր դադարում ողբալ իր սիրեցյալի կորուստը, և դուքս Ուրբանոն ստիպված եղավ միառժամանակ թաքնվել։

Մենք կարող էինք Հուլիոս II-ի գործած հանցանքների անհամար օրինակներ բերել ժամանակի շատ գրողներ, պատմաբաններ, բանաստեղծ-երգիծաբաններ իրենց երկերում արիաբար մերկացրել են այդ վայրագ մարդու հանցագործ արարքները։ Նա հայտնի էր իր անողոք դաժանությամբ և գերմարդկային սանձարձակությամբ։

Ամենայն քրիստոնեից այդ հայրն իր զավակների հետ վարվում էր իսկական դահճի պես. զավթելով որևէ քաղաք, նա մեծագույն բավականությամբ ոչնչացնում էր ոչ միայն նրա պաշտպաններին, այլև ընդհանրապես զույգ սեռերին պատկանող բոլոր բնակիչներին, որոնք կռվին չէին մասնակցել։ Նրան անբացատրելի հաճույք էին պատճառում հրդեհների, բռնությունների ու ջարդերի տեսարանները։

Լյուդովիկոս XII-ի դեմ Հուլիոս II-ի մղած պատերազմի ժամանակ հռոմեացիները համարձակվեցին ազատություն նվաճելու փորձ անել, նրանք սկսեցին քաղաքից քշել իրենց հարստահարողներին՝ եկեղեցականներին։ Իմանալով այդ մասին, Հուլիոսը, իսպանացիներից կազմված մի վիթխարի չոկատի գլուխ անցած, շտապեց զսպել խռովարարներին։ Նա ոչնչացրեց շուրջ տասնհինգ հազար քաղաքացիների և, հավանաբար, կոչնչացներ ավելին, եթե պատերազմական գործողությունները նրան չստիպեին դադարեցնել այդ զբաղմունքը։

Ինչպես հայտնի է, Լյուդովիկոսի դեմ մղվող պատերազմն ավարտվեց ֆրանսիացիների պարտությամբ, թագավորի բանակն ստիպված էր անձնատուր լինել։ Բայց, հակառակ Կապիտուլյացիայի համաձայնագրի, զինվորների մեծ մասը Հուլիոսի հրամանով սրախողխող արվեց կամ կախաղան հանվեց։

Նրա գոռոզամտությունը սահման չուներ։ Նույնիսկ ամենամեծ

անհաջողությունների ժամանակ նա ամենից շատ իր փառքի մասին էր մտածում։ Միքելանջելոյին նա պատվիրեց պատրաստելու իր արձանը Բոլոնիայում դնելու համար և հանձնարարեց Հռոմում իր համար դամբարան կառուցել։

Պապի մահից շատ չանցած մի ծաղրագիր հրապարակվեց, որի մեջ բերվում էր Հուլիոսի խոսակցությունն առաքյալ Պետրոսի հետ։ Երկնային դռնապահը նախքան պապին դրախտ թողնելը, թվում էր նրա հանցագործություններ, ծուցակը շատ մեծ էր։ Սուրբ Պետրոսը նրան մեղադրում էր քրոջ ու աղջկա հետ արյունապղծական կապեր ունենալու, ապօրինի որդիների, բարեկամների ու կարդինալների հետ արվամոլություն անելու մեջ։ Պապին նա անվանում էր երդմնազանց, դավաճան, հարբեցող, գող, մարդասպան, թունավորիչ և, վերջապես, հայտարարում, որ դրախտի դռները փակ են նրանց համար, ովքեր վեներական հիվանդություններ ունեն, որն այն ժամանակ նեապոլական հիվանդություն էր կոչվում։

## ՆԱԽԱՆՆԱՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիոս II-ի մահը հռոմեացիներին նվազ խանդավառություն չպատճառեց, քան Աղեքսանդր VI-ի մահը։ Նրանք շատ երկար էին տառապել պապական բռնակալություններից և այժմ փորձեցին ազատվել եկեղեցական լծից։

Նախքան կարդինալները կկարողանային կոնկլավի հավաքվել, Հռոմում ապստամբություն բռնկեց։ Ապստամբներն իրենց զայրույթն ուղղեցին եկեղեցիների, վանքերի դեմ և սկսեցին կողոպտել դրանք, չխնայելով ոչ միաբաններին, ոչ քահանաներին։ Բայց ո՞վ կարող է կշտամբել ժողովրդին, որն ապստամբում է իր բռնակալների դեմ։

Դժբախտաբար, քաղաքացիները շարժման ղեկավարությունը հանձնեցին ազնվականների ձեռքը։ Բարձր աստիճանավորներն ու իշխաններն անմիջապես օգտվեցին խռովությունից և զավթեցին իշխանությունը։ Երկու կուսակցությունների՝ դուքս Ուրբանոյի տոհմի կուսակցության և Կոլոննաների կուսակցության միջև ծավալված պայքարի հետևանքով Հռոմը դարձավ քաղաքացիական դաժան պատերազմի թատերաբեմ։ Արյունը հոսում էր գետի պես, դիակները պատել էին

փողոցները, բազմաթիվ գեղեցիկ պալատներ կործանվեցին բոցերի մեջ։ Բայց շուտով խանդավառությունն իր տեղը զիջեց տագնապին. ապստամբները հասկացան, որ իրենք սոսկ գործիք են փառասեր սենյորների ձեռքին, որոնք կործանիչ պատերազմ են մղում հանուն իրենց շահախնդրական նպատակների։ Իզուր էին սենյորները ջանում խանդավառել մարդկանց, ժողովուրդը չէր արձագանքում նրանց կոչերին, որովհետև հասկանում էր, որ խելագար պիտի լինել ազնվականների և հոգևորականության խոստումներին հավատալու համար։

Երբ անդորրը վերականգնվեց, կարդինալները դուրս եկան իրենց ամրոցներից և կոնկլավի հավաքվեցին։

Ամենից ավելի ձեռներեց գտնվեց կարդինալ Ջովաննի Մեդիչին՝ Լորենցո Հրաշալու որդին։ Թեև նրա հավանականությունները նվազ էին, քան մնացածներինը, մի շատ հիմար դեպք (որը հավատացյալները, երևի, աստվածային շնորհ համարեցին) փոխեց կոլեգիայի տրամադրությունը և Մեդիչիին հնարավորություն տվեց ձայների մեծամասնություն ստանալու։

Ահա թե ինչ է ասում պատմաբան Վարիլասը պատահածի մասին. «Երեք ամիս էլ չէր անցել, ինչ կարդինալ Մեդիչին հաստատվել էր Ֆլորենցիայի իր պալատում, երբ տեղ հասավ Հուլիոս II-ի հանկարծակի մահվան լուրը։ Կարդինալն անհապաղ որոշեց պայքարել խույրի համար և ճանապարհ ընկավ։ Այն ժամանակ նրան շատ էր տանջում գեշ հիվանդությունը, որը ժառանգել էր պապից, որի սիրելին էր։ Թափառապալարները նրան խանգարում էին քայլել, ձի հեծնել, և նա ստիպված էր ճանապարհորդել պատգարակներով, որոնք ամրացված էին կողք կողքի քայլող երկու չորիների վրա։ Այդ կերպ նա հասավ սուրբ քաղաքը, երբ Հուլիոս II-ի աճյունն արդեն հողին էր հանձնվել և կոնկլավն սկսել էր ընտրություններ։ Ջովաննի Մեդիչին հրամայեց բացել Վատիկանի դարպասները և տեղ գրավեց մյուս կարդինալների մեջ։

Սուրբ կոլեգիայի անդամները, երիտասարդ ու ծեր, եռանդագին պաշտպանում էին իրենց թեկնածուներին։ Բոլորը հասկանում էին, որ պայքարը կատաղի է լինելու և ընտրությունները երկար են տևելու։ Անսպասելի մի միջադեպ փոխեց մտքերի ընթացքը և վերջ դրեց տարակարծություններին։

Չնայած այն ծանր տառապանքներին, որ զգում էր հիվանդությունից հյուծված Մեդիչին, նա բուռն գործունեություն ծավալեց, իր համար ձայներ հավաքելով։ Կարուկ շարժումներից նրա թարախապալար-

ները պայթեցին, և շենքով մեկ մի անասելի գարշահոտություն տարածվեց, անհնար դարձնելով կոնկլավում մնալը։

Ծեր կարդինալները, վախենալով, որ օդը կարող է կործանիչ ազդեցություն ունենալ իրենց առողջության վրա, դիմեցին բժիշկների խորհրդին։ Բժիշկները պատասխանեցին, թե կարդինալը մի ամսից ավելի չի ապրի, նրա վերջը մոտ է, այնպես որ՝ մի քիչ դիմացե՛ք։

Բժիշկների դատավճիռը ցնցեց ամբողջ կոնկլավը. վեճերն իսկույն ընդհատվեցին, և կարդինալները միահամուռ կերպով խույրը դրին Ջովաննի Մեդիչիի գլխին, նրան քահանայապետ հռչակելով Լևոն X անունով»։

Շատ ժամանակ չանցավ, և պրելատները, որ հավատացած էին, թե քվեարկում են հօգուտ մահամերձի, համոզվեցին, որ բժիշկները նույնքան անսխալական են, որքան և պապերը։ Օրեցօր հիվանդի վիճակը բարելավվում էր, և սուրբ Հայրը, կանխավայելելով ապագան, կարող էր միայն ուրախանալ հիվանդության համար, որի շնորհիվ բազմել էր առաքյալների աթոռին։ Հուսախաբ կարդինալները պապին դավաճան էին համարում, բայց կամաց-կամաց նրանց վրդովմունքը փարատվեց, քանզի նրանք շատ լավ գիտեին, որ քահանայապետի կյանքը կախված է շատ պատահականություններից, որ հաճախ են տեղի ունեցել սուրբ աթոռի պատմության մեջ։

## ԼԵՎՈՆ X-Ը ԾԱԿ ԱԹՈՌԻ ՎՐԱ

Հենց որ Լևոն X-ի ուժերը կազդուրվեցին, նա մեծ շուքով ու շքեղությամբ տոնեց իր ընտրության արարողությունը։

Ապրիլի 11-ին սուրբ Հայրը, գոհարներով ու սուտակներով զարդարված զգեստը հագին և թանկարժեք քարերից շողշողացող խույրը գլխին, դիմեց դեպի լաթերանի տաճարը։

Նրան ուղեկցում էր բազմանդամ ու շքեղ մի շքախումբ։ Ըստ ժամանակի պատմաբանների, նույնիսկ հզորագույն կայսրերի թագադրումը երբևէ չի ուղեկցվել այդպիսի պատիվներով։

Հռոմի հոգևորականությունը, աղնվականները, մագիստրոսները, բոլոր միաբանությունները, արհեստավորների ջոկատները, զորքն իր զենք ու զրահի ամբողջ փայլով կազմում էին պաշտոնական շքերթը։

որ շրջապատված էր նման տեսարանների ծարավի ահռելի ամբոխով։

Ամբողջ Ճանապարհին սպիտակազգեստ դեռատի աղջիկներն ու երեխաները շքերթի վրա ծաղիկներ ու դափնու տերևներ էին տեղում։

Լևոն X-ը բազմած էր շքեղ տապճակով ծածկված զտարյուն արաբական նժույգի վրա, շրջապատված կարդինալներով և մերձավոր ազգականներով, որոնց մեջ առանձնապես աչքի էր ընկնում գլխին ոսկեզօծ սաղավարտ դրած և զրահավորված կոմանդոր Մեդիչին։

Շքերթը դեռ բպղիլիկային չէր հասել, երբ ստացվեց Ֆլորենցիայի արքեպիսկոպոսի մահվան լուրը։ Պապը, կարդալով նամակը, ինքնագոհ տեսքով դիմեց կոմանդորին.

«Սիրելի՛ հորեղբորորդի, ուրախ եմ ձեզ հայտնելու,— ասաց նա դիտմամբ ձայնը բարձրացնելով, որպեսզի ամբողջ շքերթին լսելի լինի,— որ վաղն առավոտյան դուք թողնելու եք կոմանդորի ձեր պաշտոնը և զբաղեցնելու եք հենց նոր վախճանված պրելատի տեղը»։

Զարմանքի բացականչություններ հնչեցին պապական շքերթի շարքերում։

Այն բոնի զինվորականը, որին պապն ուղում էր պարգևել (և մի քանի օր հետո պարգևեց) արքեպիսկոպոսի աստիճան, ոչ մի անգամ քիթը չէր խոթել ավետարանի մեջ, ամբողջ կյանքում զբաղվել էր կոդոպուտով, բռնաբարությամբ ու սպանությամբ։ Դա, իհարկե, նրան օժտել էր փորձով, որպեսզի նոր ասպարեզում իրեն հաջող դրսևորեր։

Պապի ձեռնադրումը կատարվում էր ըստ սովորության սահմանված ծիսակարգով, բայց երբ վրա հասավ ժողովրդի առաջ պապի արարքյան սերը ստուգելու պահը՝ coram populo-ն մի չնախատեսված միջադեպ տեղի ունեցավ։

Նորին սրբազնությունը կիսամերկ բազմել էր մի ծակ աթոռի վրա, մեջքը դեպի ներկաներն արած։ Մի երիտասարդ սարկավագ, որի վրա դրված էր ստուգման արարողությունը, հանդիսավոր, դանդաղ քայլերով դիմեց դեպի պապը։ Այդ անփորձ դեռահասը չէր պատկերացնում, թե վեներան որքան դաժան է վարվում իր անզգույշ երկրպագուների հետ։ Իր վրա դրված առաքելության կարևորությունից հուզված, ձեռքերը կրծքին խաչած և ակնածանքով գլուխը խոնարհած, պատանյակը հեզաբար մոտենում էր այդ սուրբ անձնավորությանը։ Եվ հանկարծ, աչքերը դեպի վեր ուղղելով, նա տեղում քարացավ, ինչպես Մովսեսը, երբ աստված հայտնվեց նրա առաջ։ Սակայն սրբազան երկյուղը չէր այդպես կաշկանդել պատանուն։ Սարսափի մի ճիչ դուրս թռավ նրա կրծքից, և նա, որքան որ փարաջան թույլ կտար, նետվեց դեպի դահլի-

ճի մյուս ծայրը, ղժվանքով կրկնելով. «Ո՛չ, չե՛մ կարող, չե՛մ կարող»։

Այդ միջոցին Լևոն X-ը, որ քաղմած էր աթոռի վրա, չափազանց հիմար վիճակի մեջ ընկավ։ Վերջապես նա չդիմացավ և ոտքի կանգնեց։ Միջադեպը հաջողվեց կոծկել. մի ուրիշ սարկավագ պապին հագցրեց սրբազան շուրջառը, մի կարդինալ նրա գլխին դրեց խույրը, և սուրբ Հայրը՝ օրհնելով ժողովրդին, վերադարձավ Վատիկան, որտեղ նրան սպասում էր լուկուլլոսյան մի խնջույք, որի վրա ծախսվեց ավելի քան հարյուր հազար ոսկյա էկյու։ Խնջույքին մասնակցում էին նաև իրենց գեղեցկությամբ և ոչ այնքան խստաբարո վարքով հռչակված հռոմեացի կանայք։

Մյուս օրը քահանայապետը, հիշելով այն ստորացումը, որին ենթարկվել էր ծակ աթոռի վրա և, հավանաբար, չցանկանալով իր հաջորդին այդպիսի փորձության ենթարկել, դեկրետով չեղյալ հայտարարեց ստուգման այդ արարողությունը։ Իսկն ասած, այդ արարողությունն ավելորդ էր. գրեթե բոլորը, ով զբաղեցրել էր առաքելական գահը, իրենց սեռական պատկանելության անհերքելի ապացույցներ են տվել։

## ՄԵԾ ԵՐԿԵՐԵՍԱՆԻՆ

Լևոն X-ի գահակալումից հետո հռոմեական կուրիայում բավական էական փոփոխություններ կատարվեցին։ Իհարկե Լևոն X-ը պակաս անառակ չէր, քան իր նախորդները, բայց նրա անառակությունը նրբենի քնույթ ուներ և պարուրված էր էսթետիկական ձևերի մեջ։ Նրա տիբարակությունը աչքի է ընկել շքեղությամբ ու փայլով և ուղեկցվել այն բոլոր խելահեղություններով, որ զվարճանքների ծարավը կարող է ներշնչել միայն իր հաճույքներին անձնատուր եղած տիրակալին։ Նա իրեն շրջապատել էր գեղեցկագույն կանանցով, գիտնականներով, նկարիչներով։ Ինչ վերաբերում է կրոնին, ապա պապը բաղդեբաց ծաղրում էր այն, հրապարակավ հայտարարելով, թե կրոնը մի ինստիտուտ է, որ կոչված է հնազանդության մեջ պահելու ժողովրդին, բայց բնավ չպետք է կաշկանդի հարուստներին ու իշխանավորներին։

Ծաղրելու հակում ունենալով, նա ոգևորությամբ ծանակում էր այն պարզամիտ մարդկանց, որ հարգանքով էին վերաբերվում ժամերգությանն ծեսերին։

Լյութերը իր երկերում հավաստում է, որ Լևոն X-ը ժխտում էր հոգու անմահությունը և նույնիսկ մի անգամ, լսելով քրիստոնեության այդ արմատական հարցը քննարկող երկու հմուտ աստվածաբանների վեճը, արել է հետևյալ դիտողությունը. «Դրական պատասխանի օգտին ձեր բերած փաստարկներն ինձ թվում են խորապես մտածված, բայց ես գերադասում եմ բացասական պատասխանը, որովհետև դա մեզ դրդում է ավելի մեծ ուշադրությամբ վերաբերվել մեր մարմնին և ավելի թանկ գնահատել այսօրվա օրը»։

Այդ նույն ժամանակ, լինելով երկերեսանի, ինչպես բոլոր քահանաները, և հասկանալով, թե ինչպիսի եկամուտ է բերում եկեղեցական դոգմաները պաշտպանող սուտպատիր բարբաջանքը, Լևոն X-ը հրապարակեց մի դեկրետ, որը համալսարաններում դասավանդող բոլոր փիլիսոփաներին պարտավորեցնում էր «պայքար մղել այն չսմունքների դեմ, որոնք շեղվում են եկեղեցու դավանաբանությունից և պնդում, թե հոգին նույնպես մահկանացու է, ինչպես և մարմինը, և աշխարհը հավերժական է»։

Այդ պապի օրոք արտասովոր ծաղկում ապրեցին գիտությունը, արվեստը և գրականությունը։ Ռաֆայելը, Միքելանջելոն, Կորրեջոն, Արիոստոն և ուրիշներ դարաշրջանին չտեսնված փայլ հաղորդեցին։ Պետք չէ, իհարկե, գերագնահատել Լևոն X-ի դերը։ Այդ բոլոր նշանավոր անձինք հռչակվել էին դեռևս նրա գահ բարձրանալուց առաջ, իսկ նրան բաժին ընկավ մեծ մարդկանց ժամանակակիցը լինելու երջանկությունը։ Նա կարողացավ նրանց բազմաբնույթ տաղանդն օգտագործել իր սեփական փառքի համար. դա է նրա միակ վաստակը։

Միաժամանակ շատ փաստեր վկայում են, որ Լևոն X-ը եղել է կարճամիտ ու սահմանափակ մարդ։ Վերցնենք թեկուզ նրա այն դեկրետը, որ ուղղված է մամուլի աղատության դեմ։

Դեկրետը նշում էր կրոնին սպառնացող այն ծանր հետևանքները, որ իրենց հետ բերեցին գրքի տպագրությունը և լուսավորության ծաղումը, որ հանկարծ համակեց մարդկային միտքը։

Այնուհետև պապը գրողների աղատությունը սահմանափակում էր հետևյալ կետերով։ Հրատարակության տրվող բոլոր աշխատությունները ենթակա են նախնական գրաքննության. ոչ մի դիրք չի կարող տպագրվել առանց պապի տեղապահի կամ «սուրբ պալատի տիրոջ» հավանության։

Այդպիսով, մարդկային մտքի արգասիքները՝ փիլիսոփայական, գրական աշխատությունները հանձնվում էին այն տգետների դատին,

որոնք ծանոթ էին միայն սուրբ գրքերին։ Այդ պարոնների տգիտությունը ոչնչի հետ չէր կարելի համեմատել, և հենց նրանց էր վերապահված արգելել և նզովել այն ամենը, որ որևէ կերպ հակասում էին կրոնի հիմքը կազմող հերյուրանքներին։

Անհնազանդ նկարչին կամ գրողին սպառնում էր բանադրանքը։ «Բանադրա՞նքը։ Ի՞նչ հիմարություն,— կառարկի ընթերցողը։— Դա այնքան էլ սարսափելի բան չէ»։ Սակայն արհամարհաբար մի ժպտացեք։ «Մեղավորները,— ասում է դեկրետը,— բանադրվելու են որպես հերետիկոսներ»։ Իսկ մենք գիտենք, որ հերետիկոսներին բանադրելը նշանակում էր նրանց ողջ-ողջ այրել։

Ահա թե ինչպես էր Լևոն X-ը հովանավորում գիտությունն ու արվեստը։

Պապը, որին փառաբանում էին նկարիչների նկատմամբ ցուցաբերած առատաձեռնության համար, միաժամանակ վիթխարի գումարներ էր ծախսում զվարճությունների վրա։ Նրա վրա շատ թանկ էին նստում կանայք. սովորական ընծաներից բացի, նա նրանց պատվին շքեղ հանդեսներ էր կազմակերպում։ Նա Վատիկանի արքունիքում ծաղրածուներ, խեղկատակներ, պարուհիներ, երաժիշտներ էր պահում, նրանց վրա շնորհներ տեղալով։ Պապին զվարճացնելու համար, ամեն տեսակ ներկայացումներից բացի, ձիերի կամ գոմեշների մրցարշավներ էին սարքվում։ Մոլի որսորդ լինելով, նա որսը զարդարում էր եկեղեցականին հատուկ շքեղասիրությամբ ու պաճուճապատությամբ։ Եվ որսը հաջող էր լինում, նա պարգևներ էր տալիս բոլոր նրանց, ով գտնվում էր իր կողքին։ Անհաջողության դեպքում այն դժբախտը, որը նրա ձեռքն էր ընկնում բարկացած ժամանակ, վտանգի էր ենթարկում ոչ միայն իր ազատությունը, այլև կյանքը։ Այդ ուրախ ժամանցը կործանարար ազդեցություն ունեցավ հռոմեական եկեղեցու դործերի վրա։ Արդեն այն ժամանակ, երբ գումարվեց Լաթերանի Եկեղեցաժողովը. պապական գանձարանը դատարկվել էր։ Իր դաժան կոնդակով Հարձակվելով գրքի տպագրության վրա, Լևոն X-ը այդ նույն եկեղեցաժողովում մի կոնդակ հրապարակեց հօգուտ վաշխառության։ Իհարկե, այդ արհեստի հանդեպ նրա բարյացակամությունն անշահախնդիր չէր։ Այդ գարշելշրջանում եկեղեցին խոշորագույն վաշխառուներից մեկն էր, և կոնդակը հեշտացնում էր նրա ֆինանսական գործարքները։ Վաշխառուների օգտին ավելացնելով վաշխի տոկոսները, այդ հրամանագիրը պահանջում էր տոկոսների կեսը մուծել պապի գանձարանը։

Լևոն X-ը չարաշահության առարկա էր դառնում իր հայուհականե-

*րի ազդատությունն ու կարիքը։ Նա աղքատներին ստիպում էր վճարել իր պերճասիրության համար, նրանց ստիպելով դիմել վաշխառուների ծառայությանը։*

## ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՉԱՎԵՇՏԱՆԱՂԻՑ ՀԵՏՈ

*Լաթերանի եկեղեցաժողովի վերջին նիստում Լևոն X-ը պահանջեց, որ կարդինալները քվեարկեն այն արտակարգ տասանորդի օգտին, որ նախատեսված էր թուրքերի դեմ պատերազմելու համար։ Ուղղակի անհնար է հասկանալ, թե ինչպես հին, արդեն վաղուց օգտագործված միջոցը կարող էր հաջողություն ունենալ։ Արդեն քանի՞ անգամ հավատացյալներն իրենց փողը զոհաբերել էին երևակայական արշավանքների համար, և նրանց նույնիսկ իրազեկ չէին դարձնում, թե ինչի վրա էր ծախսվել այդ փողը։ Ուղարկելով իր հարկահավաքներին, Լևոն X-ը հիշատ էր հաշվի առել, որ քրիստոնյաների հիմարությունն ու թեթևսոլիկությունը անսպառ են։*

*Դա տեղի էր ունենում այն ժամանակ, երբ Ֆրանցիսկ I-ը շվեյցարացիների՝ սուրբ աթոռի դաշնակիցների դեմ խոշոր հաղթանակ տանելով, ժամանեց Բոլոնիա պապի հետ հաշտության պայմանների մասին բանակցելու համար։ Փառամոլ Լևոն X-ը, ցանկանալով Ֆրանսիայի թագավորին զարմացնել, շռայլորեն մսխում էր իր գործակալների հավաքած փողերը։*

*Թագավորի շքախմբում բազմաթիվ հմայիչ կանայք կային, որոնք կազմում էին, այսպես ասած, նրա ռաղմարշավային հարեմը։ Լևոն X-ը, որպես գեղեցիկ սեռի դիտակ, բացեիբաց քարշ էին գալիս գեղեցիկ ֆրանսուհիների եռանից, և միապետի սիրուհիները չէին համարձակվում մերժել հարուստ, առատաձեռն ու հյուրասեր տանտիրոջը։*

*Միաժամանակ, որպես բարի քրիստոնեուհիներ, նրանք բարեխղճորեն կատարում էին իրենց պարտքը կրոնի նկատմամբ. մի՞թե աստծո տեղապահին տրվելը նույնը չէ, ինչ իրեն՝ աստծուն տրվելը։*

*Անհոգ քահանայապետը չէր թաքցնում իր սիրային արկածները։ Ֆրանցիսկ I-ը տեղյակ էր դրանց, բայց ոչ մի տհաճություն չէր զգում, այլ, ընդհակառակը, իրեն շոյված էր համարում, և քրիստոնեական աշխարհի պարագլխի նկատմամբ նրա հարգանքն ավելի էր աճում։*

*Շուտով, սակայն, Լևոն X-ին ձանձրացրին իր թեթև հաղթանակ-*

ները, ավելի ճիշտ նրա սերը կենտրոնացավ մեկի վրա, և այդ զգացումնքն իսկական մոլության բնույթ ստացավ։

Մարիա Գոդենը, որ նվաճել էր թեթևսոլիկ քահանայապետի սիրտը, օժտված էր չտեսնված գեղեցկությամբ։ Նրա հրապույրներին դժվար էր դիմանալ։ Նա փայլուն կերպով օգտագործեց քահանայապետի սերը և պապական գանձարանի վրա չափազանց թանկ նստեց։ Ֆրանցիսկի հետ վերադառնալով Ֆրանսիա, այդ քրիստոնեուհին իր հետ ավելի շատ փող տարավ, քան անհավատների ջոկատները։ Իսկ Մարիայի մեկնելուց առաջ քահանայապետը նրան իբրև հիշատակ մատուցեց առաստպելական գին ունեցող մի մատանի, այսպես կոչված «Մարիա Գոդենի գոհարը»։

Ինչպես տեսնում եք, պապն ամբողջ Եվրոպայից հավաքած փողը տնօրինում էր ճիշտ այնպես, ինչպես իր նախորդները։

Թագավորի մեկնելուց հետո Լևոն X-ի մոտ գրեթե ոչինչ չէր մնացել այն ամենից, ինչ նրան տվել էր իր արկածախնդրությունը։ Վախենալով նորից դատարկ տեսնել իր գանձարանը, նա առանց տատանվելու որոշեց իր կարդինալներից վերցնել ոչ միայն թանկարժեք իրեր, այլև պալատներ ու կալվածքներ։

Կարդինալներն ստիպված եղան ենթարկվել՝ ուժին դեմ գնալ չի լինի։ Բայց նրանք խորապես վիրավորված էին. ով ինքը սովորել է կողոպտել, նրա համար առանձնապես վիրավորական է կողոպտվածի օրն ընկնել։

Նրանցից երեքը՝ Ալֆոնսո Պետրուչին ու իր երկու եղբայրները, որոնցից պապը խլել էր Սիենան, Լևոն X-ի դեմ մահափոր կազմակերպեցին, մնացած կարդինալները սիրով հարեցին դավադրությանը։ Որոշեցին կաշառել պապի վիրաբույժին, որպեսզի նա Լևոն X-ին թունավորի։

Հայտնի չէ, թե ինչ պատճառներից դրդված, բայց պապը փոխեց իր բժշկին։ Վախեցած կարդինալները հրաժարվեցին մասնակցել դավադրությանը, իսկ նրանցից մի քանիսը ավելի ապահով լինելու համար Հռոմից հեռացան։ Միաժամանակ անց Պետրուչին, համոզվելով, որ պապը իրեն չի կասկածում, որոշեց անձամբ վերջ տալ սուրբ հորը և նրան դաշունահար անել։ Սակայն նա անզգուշություն ունեցավ իր պլանների մասին հայտնել մի քանի կոլեգաների։ Ինչ-որ ձևով պապին այս անգամ էլ ժամանակին նախազգուշացրին։ Պետրուչիի նամակները, որոնց մեջ շարադրված էին դաժան վրեժխնդրության պլանները, ընկան նրա ձեռքը։

Չնայած որ մնացած կարդինալներն այս անգամ դավադրության չէին մասնակցում և վախից վաղուց էին Հռոմից հեռացել, Լևոն X-ը որոշեց նրանց հետ էլ դատաստան տեսնել։ Նա բարեկամական նամակ գրեց և մի թուղթ ուղարկեց, որով երաշխավորում էր կարդինալների անձեռնմխելիությունը, եթե նրանք Հռոմ վերադառնային։

Նրանց մեծ մասը եղավ այնքան հիմար, որ հավատաց նրա խոսքերին։

Վերադառնալուն պես նրանք ձերբակալվեցին։ Նրանցից ոմանց խեղդամահ արին Պետրուչիի հետ, մյուսներին թունավորեցին։

## ԻՆԴՈՒԼԳԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԸ

Լևոն X-ի դաժանությունը, բռնակալությունն ու անառակությունը շատ շուտով խիստ դժգոհություն առաջացրին։ Դա սկսեց դրսևորվել ոչ միայն Իտալիայում, այլև ամբողջ Ֆրանսիայում, Իսպանիայում, Անգլիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում։

Տեսնելով օպոզիցիայի աճը, պապին այլ բան չէր մնում անել, քան դիմել էլ ավելի մեծ շվայտության, ձգտելով գերազանցել Եվրոպայի բոլոր տիրակալներին։

«Ախ, ահա թե ի՞նչ,— ասում էր նա,— նրանք իմ մասին խոսում են, թե ես գոռող բռնակալ եմ, բռնապետ, արվեստն ինձ համար լոկ փառասիրությունս դրսևորելու գործիք է։ Շա՜տ լավ։ Ուրեմն ես խոստանում եմ ձեզ, որ եթե տերը կյանքս երկարացնի, մենք աշխարհով մեկ կհռչակվենք մեր տոնախմբություններով, խրախճանքներով, որոնք լիառատությամբ ու շքեղությամբ կգերազանցեն այն ամենը, ինչ մինչև հիմա եղել է»։

Բայց դրա համար փող էր պետք, շա՜տ փող։ Նա հո չէր կարող ամեն օր կարմիր թասակներ բաժանել և նոր կարդինալներ սպանել. գործը կվերջանար նրանով, որ ոչ ոք չէր ցանկանա մտնել այդ ապարեզը։

Այնժամ Լևոնը լույս աշխարհ հանեց հանցագործությունների այն հին գնացուցակը, որը կազմել էր Հովհաննես XXII-ը և որը պապական դիվաններում արդեն վաղուց ծածկվել էր փոշով։ Նա փոփոխեց նրա կետերից մի քանիսը, նոր կետեր ավելացրեց և հրամայելով տպագրել

բաղում օրինակներով, տարածեց ամբողջ Եվրոպայում։ Պապը քրիստոնյաներին ծանուցեց, թե փողով մեղքերի թողություն է տալիս, նույնիսկ այնպիսի մեղքերի, ինչպիսիք են բռնաբարությունը, անասնապղծությունը, արյունապղծությունը, արվամոլությունը, մարդասպանությունը։

Այնուհետև նորին սրբազնությունը թուրքերի դեմ ուղղված նոր արշավանք հայտարարեց։ Բայց դա արդեն չափից ավելի էր։ Եվ պապի հարկահավաքները բոլոր երկրներից վերադարձան ձեռնունայն։

Միջոցներ հայթայթելու նպատակով Լևոն X-ը արտակարգ քայլերի դիմեց, մանավանդ որ պարտատերերն արդեն իրեն նեղում էին։ Ըստ ընդունված սովորության նա սկսեց ինդուլգենցիաներ վաճառել։ Գործն առևտրական տեսակետից շատ վարպետորեն էր կազմակերպված։ Յուրաքանչյուր պրովինցիայի եկեղեցիներում ու վանքերում Քրիստոսի շնորհով առևտուր անելու համար առանձին գործակալներ նշանակվեցին։ Այնտեղ ցանկացած քանակով ինդուլգենցիաներ էին վաճառվում ողջերի ու մեռածների համար։ Բացի դրանից, Լևոն X-ը հավաքագրեց դոմինիկյանների ամբողջ հրոսակախմբեր, որոնք շրջում էին քաղաքներն ու գյուղերը և բնակչության վզին թողության թղթեր փաթաթում։

Ահա դրանցից մեկը, որ մենք մեջ ենք բերում ըստ բնօրինակի.

«Թող ձեզ ների մեր տեր Հիսուս Քրիստոսը, որ խաչի վրա մահ ընդունեց ձեր մեղքերի համար։ Ես Հիսուս Քրիստոսի, երանելի առաքյալների, սուրբ Պետրոսի և սուրբ Պողոսի իշխանությամբ և մեր սուրբ հոր իշխանությամբ ձեզ ազատում եմ եկեղեցական բոլոր զանցանքներից, որ դուք կատարել եք. ազատում եմ ինչպես նախկին, այնպես էլ գալիք բոլոր մեղքերից, արարքներից, շռայլություններից, որքան էլ դրանք մեծ լինեն։ Թող հաղորդակից լինեք մեր մարտնչող եկեղեցու սուրբ սխրանքներին։ Ես ձեզ հաղորդակից եմ դարձնում սուրբ խորհուրդներին, անմեղության անարատությանը, որ հավասար է մկրտված նորածնի անարատությանը։ Եվ թող ձեր մահից հետո դժոխքի դռները ձեր դեմ փակ լինեն և ձեր առաջ բացվեն դրախտային երանելության դռները։ Ամե՛ն»։

Այդ բանաձևը կարելի է պարզապես ապուշական համարել, բայց դա այնքան անպարկեշտ չէ, որքան ինդուլգենցիաներ վաճառող այն մարդու բանաձևը, որ առևտուր էր անում Սաքսոնիայում։ Մենք նկատի ունենք Հռչակավոր Հովհան Տեցելին։ Գնորդներին գրավելու համար այդ խարդախը, մեղքերի մի երկար ցուցակ մեջբերելով, իր խոսքն ավարտում էր հետևյալ բառերով.

«Այո, Տէրս՛ իմ, նորին սրբազնութիւնն ինձ մեծ իշխանութեամբ է օժտել, իմ ձայնը լսելուն պես երկնքի դռները բացվում են նույնիսկ այնպիսի մեղսագործի առաջ, որ սուրբ կույսի նկատմամբ սեռական բուռն կիրք՝ նրան բեղմնավորելու ցանկութիւն է ունեցել»։

Գնորդները բոլոր կողմերից խռնվում էին Հովհան Տեցելի շուրջը։ Նա մեղքերի թողութիւն էր վաճառում տարբեր գներով, նայած թե դրանք ինչ կարգի էին։ Թողութեան որոշ գրեր, որ «անձնական» էին կոչվում, իրենց տիրոջն իրավունք էին վերապահում մեկ տարվա ընթացքում, ըստ իր հայեցողութեան, իննսունինն անգամ թողութեան տալ տասը մարդու գործած հանցանքներին։

Նա վաճառում էր նաև քավարանից հոգիներ ազատելու իրավունք, ազատվող հոգիների թիվը հավասար էր օգոստոսի մեկի ու երկուսի միջև ընկած ժամանակամիջոցում, այսինքն՝ քսանչորս ժամվա ընթացքում եկեղեցի հաճախելու թվին։

Ամենամատչելի գներով Հովհան Տեցելը քառասունութ հազար տարով կրճատում էր քավարանում մնալու ժամկետն այն մարդկանց համար, որոնք աղոթում էին սուրբ Սեբաստիոսի եկեղեցում, և չորս հազար տարով՝ նրանց համար, որ տարվա որոշակի օրերին ուխտ էին գնում աստվածամոր տաճարները։

Վերջապես (և սա իսկապես հանճարե՞ղ հնարամտութիւն է) քավական մեծ գնով Տեցելը վաճառում էր իր խոստումը. նա խոստանում էր աստվածամորը համոզել բարի քրիստոնյայի մեռնելուց առաջ անձամբ ներկայանալ նրան և հենց որ նա շունչը փչի, առնի հոգին և տանի երանութեան օթևանը։

Կարճ ժամանակում Լևոն X-ը նորից առատապեշական գումարներ դիզեց. նրա գործակալներն էլ քիչ չվաստակեցին, ինդուլգենցիաներ վաճառելով։

Ամենից շատ եկամուտ բերեց այն կոնպակը, որով ավազակներին թույլտրվեց անպատիժ կերպով զբաղվել իրենց հարկարժան գործով՝ կողոպուտի մի մասը պապին տալու պայմանով։ Իսկ եթե մեծ ճանապարհի ասպետները պարբերաբար մուծում էին իրենց ավանդը, նրանց թույլատրում էին ավելի մեծ հանցանքներ գործել և մեղքերի լրիվ թողութիւն էին տալիս։ Բացի դրանից, ինդուլգենցիան նրանց համար ապահովում էր անպատժելիութիւն այս աշխարհում և հավիտենական երանութիւն այն աշխարհում։

Հավատացնում են, որ ավազակները ճշտորեն էին կատարում իրենց պարտավորութիւնները Լևոն X-ի հանդեպ։ Պապի ու կողոպտիչների

միջև կնքված համաձայնագրերը թուլատրում էին կողոպտել այրինեերին անապատականներին, անպաշտպան մարդկանցից փող շորթել, խլել ուրիշի ժառանգությունը, կեղծել փաստաթղթերն ու կտակները և նույնիսկ կողոպտել եկեղեցիներն ու վանքերը։

Դոմինիկյանները շրջում էին Եվրոպայում, փութաջանորեն կատարելով իրենց առաքելությունը։ Նրանք քրիստոնյաներին համոզում էին, թե ավելի լավ է այս աշխարհում սովից մեռնել, քան անդրշիրիմյան երանություն գնելու առիթը ձեռքից բաց թողնել։ Վանականներն իրենք ուրախ կյանք էին վարում, ցերեկը զառ էին գցում կամ թուղթ խաղում, իսկ գիշերը մոլեգնում գինետներում ու հասարակաց տներում։ Ահա թե ինչ է պատմում այդ դարաշրջանի մի աստվածավախ պատմաբան ինդուլգենցիաներ վաճառող վանականների մասին։

«Նայեցեք պապի ուղարկած այս գողերին, տեսեք, թե ինչպես են նրանք ծծում աղքատ ժողովրդի արյունը։ Նրանք շրջում են ամբերում ու հովիտներում, կորզելով հասարակ մարդկանց վերջին գրոշը։ Ավելի հանգիստ լինելու համար նրանք քահանաների հետ խոսքը մեկ են անում։ «Կանչիր քո սագերին,— ասում են նրանք,— միասին փետրենք և փետուրները հավասար բաժանենք»։ Եվ այդ զարշելի քահանաները՝ անառակները, հարբեցողներն ու չարչիները, վանականների հետ համաձայնության են գալիս ու կողոպտում ապուշների, որոնք իրենց գյուղանները դատարկում են հոդիները քավարանից փրկելու համար... Օ՜, աստված, ո՞վ կարող է նկարագրել այն բոլոր ստորությունները, որ կատարում են դոմինիկյանները և ինդուլգենցիաների այդ անամոթ առևտուրը»։

Հաջողությունը թևավորեց վանականներին ու քահանաներին՝ «Լևոն X և Ինք...» առևտրական տան գործակալներին (Ընկերությունը կազմված էր նորին սրբազնության սիրեկաններից, կուրտիզանուհիներից և ապօրինի որդիներից)։ Նրանք օրեցօր ավելի ու ավելի ամբարտավան, անամոթ ու աներես էին դառնում։ Պապը բնավ հարկ չուներ նրանց խթանելու։ Եկամուտներն ուղիղ համեմատական էին վաճառված մագաղաթյա գրությունների քանակին։ Եվրոպան դարձել էր ինդուլգենցիաների մի վիթխարի տոնավաճառ։

Չպետք է կարծել, թե առևտրի հաջողությունը պայմանավորված էր հավատացյալների բարեպաշտությամբ։ Ընդհակառակը, գնորդների մեծ մասն ինդուլգենցիաների մեջ տեսնում էր անպատիժ կերպով հանցանքներ գործելու հնարավորություն։ Չէ որ Լևոն X-ի հրամանագրում ասված էր, թե «քահանայապետին իբրև սուրբ Պետրոսի և Հիսուս

Քրիստոսի կուսակալի անվիճելի իրավունք է վերապահված... Ներել ցանկացած մեղադրանքն ու ցանկացած մեղքը. նա մեղքին թողություն է տալիս ապաշխարության խորհրդով, իսկ երկրի վրա՝ պատիժը փոխարինում ինդուլգենցիաներով»։

Անպատժելիության հեռանկարը, գրեր վաճառող վանականների սանձարձակ վարքը՝ այդ ամենը ազդում էր քրիստոնյանների բարոյական մակարդակի վրա։

## ԼՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԼԵՎՈՆ X-Ը

Ջնայած մտքերի ընդհանուր ճնշվածությանն ու բթացմանը, դրսևորվեցին մարդիկ, որոնք խիզախաբար մարտնչում էին պապության դեմ, փորձելով ժողովրդին ազատագրել եկեղեցու իշխանությունից, որ թաղվել էր անառակության, կեղծ բարեպաշտության ու մեղքերի մեջ։ Որքան էլ ապարդյուն լինեին ռեֆորմատորների ջանքերը, որոնց մեջ այն ժամանակ աչքի էր ընկնում Լյութերը, մենք, այնուամենայնիվ, պետք է արժանին հատուցենք նրանց արիությանը, որովհետև, պայքարի դուրս գալով հռոմեական եկեղեցու դեմ, նրանք վտանգի էին ենթարկում իրենց կյանքը։

1510 թվականին, Հուլիոս II-ի գահակալության օրոք, Օգոստոսյան միաբանության վանական Լյութերին մի հանձնարարությամբ Հռոմ ուղարկեցին։

«Ես վկա եղա այնպիսի խայտառակությունների,— ասում է նա իր գրվածքներից մեկում,— որ այդ ժամանակից ի վեր որոշեցի իմ կյանքը նվիրել պապության ոչնչացմանը, նրա կեղծիքի վերացմանը, որը քահանաների շահամոլության ու պապերի անբարոյականության պատճառով պղծել է կրոնը»։

Առաքյալների քաղաքից վերադառնալով, Լյութերը խիզախորեն հանդես եկավ պապական անսխալականության դեմ։

«Ժողովուրդնե՛ր, լսեցեք ինձ, ես ուզում եմ ձեզ ցույց տալ ձեզ հաբստահարողի իսկական դեմքը՝ պապին։ Ես եկել եմ հանուն Հիսուս Քրիստոսի և ձեզ կոչ եմ անում՝ մի՛ ենթարկվեք պապին, դանակի խրեցեք նրա սիրտը, իմացեք, որ նրա բոլոր կոմնակիցները, թագավորներ լինեն, թե կայսրեր, ավազակներ են։ Եթե ես կայսրության գլուխ

լինեի, մի կապոց կանեի և՛ պապին, և՛ նրա կարդինալներին ու կնոտեի Տիբրոս գետը։ Ջուրը կբուժի այդ խոզերին, օգուտ կբերի խայտառակ հիվանդություններից խոշտանգված նրանց մարմիններին։ Ես երդվում եմ ձեզ, որ այդպես կանեմ, և թող փրկիչը վկա լինի դրան»։

Արդեն այս ելույթը նախագուշակում էր դաժան, արյունոտ, անողոք պատերազմ, որ հետագայում չտեսնված համառությամբ մղում էին երկու հակադիր ճամբարները՝ կաթոլիկներն ու ռեֆորմատորները։ Առաջիններն ունեին զենք, բանտեր, կարող էին խոշտանգել իրենց զոհին, նրանց ձեռքին էր ինկվիզիցիան, նրանք հենվում էին ժողովրդի տգիտության վրա, որ սովորել էր ի դեմս պապի տեսնել աստծո կուսակալին։ Հռոմեական եկեղեցու հակառակորդներն այլ զենք չունեին, բացի խոսքից։ Նրանք ստիպված էին գործի դնել իրենց ամբողջ պերճախոսությունը, որպեսզի ժողովրդին հասկանալի լիներ իրենց քարոզը, խոսել բոլորի համար մատչելի լեզվով, չվախենալով գռեհիկ, երբեմն էլ ցինիկ արտահայտություններից, որպեսզի տգետ, սնոտիապաշտությունից բթացած ուղեղների մեջ կյանքի բարոյական պատկերացումներ մուծեին։

Այդպիսին էր այն դարաշրջանի քարոզիչների հռետորական մեթոդը, որի համար հետաքրքիր օրինակի դեր են կատարում ուղղափառ կղերականներ Թովմասի և Օլիվյե Մայարի ելույթները, ընդ որում այդ քարոզիչներին ոչ մի կերպ չի կարելի կասկածել եկեղեցու ու կրոնի նկատմամբ թշնամական վերաբերմունք ունենալու մեջ։

«Իսկ մինչև ե՞րբ դուք, թշվա՛ռ քահանաներ, պետք է մեզ խայտառակեք ձեր անառակությամբ ու մեղքերով,— բացականչում էր Բորդոյի եկեղեցու բեմից վանական Թովմասը։— Ե՞րբ դուք կդադարեք ձեր փորն ամեն տեսակ ուտելիք ու ոգելից խմիչքներ լցնելուց։ Դեռ երկա՞ր եք կողոպտելու աղքատներին, փողոցային կանանց պաուկեցնելու ձեր անկողիններում... Ես գիտեմ, դուք թքած ունեք, որ մարդիկ սովամահ են լինում ձեր դռների մոտ, մինչդեռ դուք անամոթաբար առևտուր եք անում սուրբ հաղորդությամբ, քավարանից հոգիները փրկելու պատրվակով կլանում այրի կանանց ու որբերի ունեցվածքը։ Նզովյալ լինեք դուք, սատանանե՛ր, գայթակղիչներ դեռահաս աղջիկների ու կանանց, որոնց դուք խոստովանության եք կանչում, որպեսզի մեղքերի մեջ գցեք։ Նզովյալ լինեք դուք, քահանանե՛ր, լյուցիֆերներ, որ համարձակվում եք մթագնել մարդկային միտքը և ձեր կեղտոտ վավաշոտությամբ գայթակղեցնել անչափահասներին։ Ամո՛թ ձեզ, որ ձեր անները պոռնկանոցներ եք դարձրել»։

*Օլիվյե Մայյարը, Լյուդովիկոս XI-ի նախկին քարոզիչը, ավելի խիստ էր մերկացնում եկեղեցականներին.*

«Ես երկար եմ դիտել, թե ինչպես աբբաները, քահանաները, վանականներն ու պրելատները լցնում են իրենց սնդուկները, կողոպտում եկեղեցական գույքը, գիշերային ջարդարարների նման կողոպտում բարի քրիստոնյաներին։ Ես տեսել եմ, թե ինչպես փարաջավորները, վեղարավորներն ու պարեգոտավորները, անառակության տրվելով, օրեր ու գիշերներ են անցկացնում հասարակաց տներում։

Կանոնիկոսներն ու բարեպաշտ կղերականները պոռնկանոցներ են պահում, գինի վաճառում, վճարում բոզարածներին ու պոռնիկներին։ Կղերականներին հաճախ եմ տեսել զինվորի զգեստով, մոդայիկ մորուքով՝ ուրախ աղջիկների հետ թրև գալիս։ Ես ճանաչում էի մի եպիսկոպոսի, որն իր ախորժակը գրգռելու համար ամեն օր մերկ աղջիկներին ստիպում էր մատուցել իր ընթրիքը։ Ես գիտեի նաև այնպիսի մեկին, որն իր տանը պատանիներից բաղկացած մի ամբողջ հարեմ էր պահում... Գարշելի անառակության տրվելուց առաջ այդ փչացածը դրամապանակից դուրս էր թափում արծաթե դրամները, երեխաներին ստիպելով կոխկրտել միմյանց։

Որքան էլ դա զզրելի լինի, գոյություն ունեն է՛լ ավելի նողկալի բաներ։ Որոշ եպիսկոպոսներ թեմերը տալիս են միայն այն տերտերներին, որոնց մայրը, քույրը, կամ բարեկամուհին դրա համար վճարել է իր պատվով։

Դե՛հ պատասխանեցեք, գարշելի՛ եպիսկոպոսներ ու քահանաներ, մի՞թե ավետարանը ձեզ քարոզում է, թե երանելի են ծախվածները, երանելի են հարբեցողներն ու բոզարածները, երանելի է նա, ով բարձր պաշտոնի է հասնում, ստորաբար հաճոյակատարություն անելով։ Գրողի ծոցը գնացեք, սրիկանե՛ր, ինչպես եք հանդգնելու ձեր մահվան ժամին կանգնել Քրիստոսի առաջ՝ գինուց հարբա՞ծ, ձեր թալանած ոսկով, շրջապատված պոռնիկներով, ձեր կենակցուհիներով, բարեկամուհիներով և ձեր կեղտոտ հաճույքների այլ զոհերո՞վ։ Նզովյալ լինի խարդախների, խաբեբաների, կաշառակերների ձեր ամբողջ ոհմակը։

Ես գիտեմ, որ խարանելով ձեր հանցագործությունները, ես ինձ վտանգի եմ ենթարկում. դուք կարող եք ինձ գաղտնաբար սպանել, ինչպես հաճախ դա պատահել է այն մարդկանց, որ փորձել են վերակառուցել եկեղեցիներն ու վանքերը։ Բայց ձեր դաշույնի ահը չի փակի իմ բերանը, չի մեղմի իմ գայրույթը։ Ես չեմ լռի և ձեզ կասեմ ամբողջ ճշմարտությունը։

Հապա դուրս եկեք, կանա՛չք, որ ձեր մարմինը վաճառում եք ազնվական ներին ու վանականներին, դուրս եկեք, հարբեցողնե՛ր ու գողեր...

Այսուհետ եկեք, միանձնուհինե՛ր, որ վանքերի մառաններն ու նկուղները լցնում եք նորածինների դիակներով։ Ի՞նչ դատավճիռ կլսեք, երբ երեխաները հայտնեն իրենց հայրերի ու դահիճների անունները։ Մի՞թե հրեղեն անձրևը չպետք է մոխրացնի այս վանքերը, ինչպես իր ժամանակին մոխրացրել է Սոդոմն ու Գոմորը։ Մի՞թե քահանաներին ու եպիսկոպոսներին կուլ չի տա հողը...

Ալո՛, եղբարք իմ, մոտենում է ժամը, երբ տերը խիստ ու արդար կդատի պորտաբույծներին, անբաններին, պոռնիկներին, կողոպտիչներին, գողերին ու մարդասպաններին»։

Բարքերի անկումն աչքի էր զարնում աղաղակող ակնհայտությամբ։ Լյութերը խիզախաբար հարձակվեց Հռոմեական կուրիայի անառակության վրա։ Նրա թեզերը, որոնցով նա հարձակվում էր խոստովանության, քավարանի և ինդուլգենցիաների վրա, կախված էին հկեղեցու մուտքի մոտ։

Դոմինիկյանները մի քանի անգամ փորձեցին սպանել օգոստոսյան վանականին, բայց նրան խնամքով պահպանում էին Պասը ստիպված էր վանդավոր հակառակորդին մեջտեղից հանելու այլ միջոց փնտրել։ Պահանջելով, որ Լյութերը Հռոմ ներկայանա և այնտեղ շարադրի իր ուսմունքը, պապը կուրֆյուրստ Սաքսոնացուն գրեց, որ նա Լյութերին հանձնի Գերմանիայի հռոմեական լեգատի ձեռքը։

Բարեբախտաբար, Ֆրիդրիխ Իմաստունը չհաւատաց սուրբ Հոր կեղծավոր հեզությամբ և կտահեց նրա հանցավոր մտադրությունը։ Նա պապին պատասխանեց, թե ռեֆորմատորը կարող է հարցաքննության ենթարկվել իր հայրենիքում ճիշտ այնպես, ինչպես և Հռոմում։ Լևոն X-ին այլ բան չէր մնում անել, քան իր նշանավոր աստվածաբաններին ուղարկել Լյութերի դատավարությանը։

Լյութերն անհապաղ օգտվեց իր հայացքները հանդիսավոր կերպով պաշտպանելու պատեհ առիթից։ Աուսբուրգի դասարան գնալուց առաջ (քաղաքն ընտրել էր պապը) նա հոգ տարավ կայսերական պահպանագիր ստանալու մասին։

Հռոմեական կուրիայի ներկայացուցիչներն սկզբում ջանում էին Լյութերին հակել քահանայապետի կողմը, նրան գայթակղելով ամեն տեսակ պատիվներով, հարստությամբ, միայն թե նա հրապարակավ ազնար նորին սրբաչնության առաջ։ Համոզվելով նրա անկաշառելիու-

թյանը, Լևոն X-ի հանձնակատարները գիմեցին սպառնալիքների։ Բայց ռեֆորմատորը մնաց անհողդողդ, հայտարարելով, թե ոչ մի նկատառում չի կարող իրեն ստիպել իր գրածից թեկուզ մի տող փոխել։

Կարդինալ-լեգատը, տեսնելով նրա համառ դիմադրությունը և հասկանալով, որ անհրաժեշտ է ըստ հնարավորին շուտ վերջ տալ պառակտմանը, որոշեց Լյութերին ձերբակալել։ Կռահելով նրա մտադրությունը, օգոստոսյան վանականը (հիշելով Հուսին, որին այրել էին) ճիշտ գործեց. հույս չդնելով կայսեր պահպանագրի վրա, նա Աուսբուրգից փախավ և դրանով իսկ խուսափեց Ռեֆորմացիայի առաջին առաքյալների ողբերգական ճակատագրից։

Այն ժամանակ, երբ Լյութերի ուսմունքը, ժողովուրդների խիղճն արթնացնելով, արագորեն տարածվում էր Եվրոպայում, պապը, չհասկանալով տեղի ունեցող իրադարձությունների կարևորությունը, զբաղված էր զվարճություններով։ Նա բաց թողեց այն պահը, երբ քահանայապետի բախտը խաղաթղթի վրա էր դրված։ Լյութերի կողմնակիցների թիվն օրեցօր աճում էր։ Բազմաթիվ սենյորներ, որոնց հողերը խլել էր պապը, կանգնեցին ռեֆորմատորի դրոշի տակ, չցանկանալով այնպիսի հովիվ ունենալ, որը միայն հարկեր գանձելու մասին է մտածում։

Նոր գաղափարները տարածվում էին լայնորեն և արագ։ Եվ վերջապես Լևոն X-ը, չնայած իր անհոգությանը, լրջորեն վախեցավ։ Նա վերստին կարդաց այն գրվածքները, որոնց մեջ նա խիստ հարձակումներ էր հնթարկվում, սակայն չցանկացավ հանձն առնել դրանց պատասխանելու նեղությունը։ Դա խոշոր սխալ էր, որովհետև նրա դեկլամացիան դեռևս կարող էր հավատացյալների մեջ որոշ արձագանք գտնել։ Աստիճանաբար պապի հեղինակությունն ավելի ու ավելի էր թնկնում, և համապատասխանաբար աճում էր նրա հակառակորդի հեղինակությունը։ Վերջապես վտանգը տեսնելով, Լևոն X-ը որոշեց գործել ավելի եռանդուն կերպով, բայց ժամանակն արդեն բաց էր թողնված։

Նա Կառլոս V-ին մի ուղերձ հղեց խնդրելով Լյութերին ձերբակալել և հանձնել ինկվիզիցիայի դատին։ Այդպիսի վճռական քայլ կատարելով, պապը նորից խորասուզվեց վայելքների մեջ և հանգիստ սպասում էր կայսեր պատասխանին, կարծելով, թե չկա ավելի հեշտ բան, քան ձերբակալել եկեղեցու դեմ ըմբոստացած վանականին։ Ուստի պարզ է, թե որքան մեծ եղավ նրա զայրույթը, երբ պատասխան-ուղերձում Կառլոսը հայտնեց, թե որքան էլ ցանկանա նորին սրբազնություն օգտակար լինել, չի կարող ձեռք բարձրացնել վանականի ազա-

*տությանն վրա, նկատի ունենալով Գերմանիայում ստեղծված վիճակը, որտեղ ռեֆորմատորի քարոզները շատ համախոհներ ունեին։*

*Կառլոսը վախենում էր երկպառակտչական պատերազմ կամ, համենայն դեպս, դժգոհություն հարուցել ազդեցիկ իշխանների մեջ, որոնց պաշտպանության կարիքն զգում էր։ Միաժամանակ, ինչպես ամեն մի իսկական կայսր, նա չէր կարող ծառայություն չմատուցել քահանայապետին, երբ խոսքը վերաբերում էր ազատ միտքը ճնշելուն, թեկուզև նրա սաղմնային վիճակում։ Եվ հզոր կայսրը խոստացավ սեյմ գումարել, որտեղ, ինչպես նա հույս ուներ, Լյութերին կդատապարտեին։ Սպասելով սեյմի գումարմանը, նա պապին խնդրում էր մի անգամ էլ բանադրել Ռեֆորմացիայի առաջնորդին, որպեսզի վախեցնի սենյորներին և դատապարտումն ապահովի։*

*Սուրբ Հայրն անզգուշություն ունեցավ անսալու կայսեր խորհուրդը։*

*Լյութերն օգտվեց այդ բանադրանքի տեքստից և հանդես եկավ մի հույժ ցասումնալից ճառով, որն ավարտեց հետևյալ խոսքերով.*

*«Ձ՛շտ այնպես, ինչպես Հռոմում այրում են իմ աշխատությունները, ես հրին եմ հանձնում այդ խավարի իշխանի կոնդակներն ու դեկրետները և բոլոր մարդկանց թախանձում եմ օգնության գալ ինձ՝ նույն այդ խարույկի մեջ նետելու Լևոն X-ին ու նրա առաքելական գահը և սուրբ կոլեգիայի բոլոր կարդինալներին»։*

*Խնդրելով մի կրակարան բերել, նա մոլեգնող բազմության ներկայությամբ այրեց իր բանադրման պապական կոնդակը։*

*Այդպիսով, սուրբ Հոր նզովքը հիացմունք հարուցեց նրա հակառակորդների մեջ, որովհետև հասարակ վանականը, որ համարձակվել էր հրապարակավ ոչնչացնել քահանայապետի կոնդակը, մի հանգգնություն, որն իրեն թույլ չէր տա ո՛չ թագավորը, ո՛չ էլ կայսրը, հիացմունքի էր արժանի։*

*Կառլոս V-ը ներկա եղավ սեյմի նիստին, որպեսզի կատարի Լևոն X-ին տված իր խոստումը։ Հռոմեական լեգատին, մեղադրող կողմի ներկայացուցչին հանձնարարված էր հետևել, որ պապության ահեղ թշնամին իրենց ձեռքից դուրս չպրծնի, եթե նույնիսկ հրապարակայնորեն զղջա։*

*Լյութերի բարեկամները խիստ անհանգստացած էին և նրան թախանձում էին չփորձարկել պապի հանձնակատարների երկերեսանությունը։*

*«Ես գիտեմ,— պատասխանեց նրանց Լյութերը,— թե ինչքիսի*

վտանգի եմ ենթարկվում, բայց ես ձեռքս կխրեմ այդ գևերի երախը, կջարդեմ նրանց ժանիքները և կքարոզեմ աստծո դավանանքը»։

Նրան ուղեկցում էր հարյուր լավ զինված մարդուց բաղկացած մի պահակախումբ։ Վորմսի մոտ Լյութերին դիմավորեց խանդավառ ամբոխը, և նրա ժամանումը Վորմս, որտեղ արդեն հավաքվել էին դատավորները, հաղթական շքերթի բնույթ էր կրում։ Այդ խանդավառությունը, որով դիմավորում էին Լյութերին, նրա թշնամիներին վհատության մեջ գցեց, որքան էլ որ նրանք ջանում էին դա թաքցնել։ Իսկ նրանց աստելությունը բացահայտորեն երևում էր այն կողմնապահությունից, որով նրան հարցաքննում էին։

Լյութերականության, կալվինականության և բողոքականության բաղմաթիվ այլ տեսակների նկատմամբ մեր համակրանքն ավելի մեծ չէ, քան, ասենք, կաթոլիկության նկատմամբ։ Բոլոր կրոնները, ինչ աստվածներ էլ որ նրանք դավանեն՝ Եհովա, Քրիստոս, Հուդա, Վիշնա, Ինդրա կամ մի այլ աստված, ընդհուպ մինչև կուռքերը, որոնց երկրպագում են վայրենիները, ձգտում են ստրկացնել մարդուն։ Նրանք բոլորը միանման են։ Բայց մենք պետք է ընդունենք, որ Ռեֆորմացիայի սոսկ առաջին տարիների նոր շարժումը գրեթե բացառապես ժողովրդական էր և կրոցանիչ հարված հասցրեց աստվածապետական բռնակալությանը։ Ճիշտ է, հետագայում բողոքականները կանգ առան, ոչ մի քայլ առաջ չգնացին և ընկղմվեցին այն նախապաշարումների մեջ, որոնք նրանց կրոնի հիմնադիրը, լինելով երկչոտ ռեֆորմատոր, բայց և խիզախ մարտիկ, անհրաժեշտ համարեց պահպանել։

Լյութերն ինքը, ըստ էության, հետադիմական էր։ Նրա կրակոտ ճառերի հետևում թաքնված էին շատ չափավոր ձգտումներ, բայց, այնուամենայնիվ, նա, հակառակ իր ցանկության, տապալելով պապական բացարձակապետությունը, վերականգնում էր մարդկային մտքի ազատությունը։

Հռոմեական լեգատի բոլոր հարցերին Լյութերը անհողդողդ պատասխանում էր, թե ոչ միայն չի հրաժարվում իր հայացքներից, այլև պատրաստ է դրանք պաշտպանել հրապարակավ։ Նրա առաջարկությունը մերժվեց։ Սեյմի ներկայացուցիչներն այնքան պարզամիտ չէին, որ ռեֆորմատորին վերստին թույլ տային հաղթանակ տանել։ Լեգատն ասաց, թե Լյութերի վարմունքը նեղեցու համար վիրավորական է և մտքերի փոխանակության հրապարակումը ավելի կաստկացնի նրա պատճառած անարգանքը. մեղադրյալը պարտավոր է արդարանալ միայն իր դատավորների առաջ։ Նրբ Լյութերին համոզելու փորձերն

ապարդյուն եղան, քանզի ռեֆորմատորը Հաստատակամորեն իրենն էր պնդում, մեղադրողները կրկին գործի դրեցին իրենց հին միջոցները. նրանք լյութերին կալվածքներ ու կարդինալական թասակ առաջարկեցին։

Ուժ չունենալով ձեռք բարձրացնել հռչակավոր վանականի ազատության ու կյանքի վրա, վախենալով բացահայտ խռովություն առաջ բերելուց, դատավորները որոշեցին նրան վտարել կայսրության սահմաններից։

Լյութերին մահափորձից պաշտպանելու համար բարեկամները դիմավորեցին նրան, երբ վերադառնում էր ռեյմից, և թաքուն տարան մի ամրոց, որտեղ նա ապրեց գրեթե չորս տարի։ Նրա ձայնը լռեց, բայց աշխատությունները շարունակում էին սկսած գործը։ Թագավորները, ազնվականները, կարդինալները, եպիսկոպոսները, վանականները միավորվեցին մի սուրբ դաշինքի մեջ և երկաթով, հրով, թույնով պայքարում էին ջնջամու դեմ, որն սպառնում էր ընդմիշտ կործանել նրանց իշխանությունը։

Իրադարձությունների այդ բուռն շրջանում Լևոն X-ը առաջվա պես խուսափում էր այն ամենից, որ նրան կարող է խանգարել կյանքը վայելել։ Պապի այդ անտարբերությունը բարդ իրավիճակում, երբ հարկավոր էր լարել կաթոլիկ եկեղեցու բոլոր ուժերը, նրա կողմնակիցների մեջ, բնականաբար, զայրույթ առաջացրեց։ Պապին մեղադրում էին թուլության, վախկոտության, անհեռատեսության մեջ, կշտամբում անխոհեմ աշխարհիկ կյանքի, ոսկի, համերգների, ներկայացումների, ճաշկերույթների և այլ զվարճալիքների համար։

Լևոն X-ը ոչ մի բանի վրա ուշադրություն չէր դարձնում։ Երբ ազնվականների պատվիրակությունը եկավ նրա մոտ, համառորեն խնդրելով իրենից թոթափել այդ անտարբերությունը, նա կատակի տվեց և բոլորին հրավիրեց մասնակցել խնջույքների։ Լյութերին Վորմսի եկեղեցաժողովում դատապարտելուց ոչ շատ առաջ Ֆլորենցիայում մեռավ Լևոն X-ի եղբայր Ջուլիանո Մեդիչին, իր հսկայական հարստությունների միակ ժառանգորդ թողնելով իր ապօրինի որդուն։ Հենց այդ ժամանակ էլ պապն իր եղբորորդի Լորենցո Մեդիչիին ամուսնացրեց Ֆրանսիայի երիտասարդ արքայադստեր հետ։ Հարսանիքը մեծ շքեղությամբ կատարվեց Փարիզում։ Խեղճ ժողովուրդն այս անգամ էլ հոգաց ծաղքերը։ Արքայադուստրը շուտով մեռավ ծննդաբերության ժամանակ, թողնելով մի աղջիկ, հետագայում այնքան տխուր հռչակ վաստակած

Եկատերինա Մեդիչիին։ Լորենցոն իր կնոջ մահից հետո երկար չապրեց և մեռավ 1511 թվականի ապրիլի 29-ին։

Պապը մնաց որպես Մեդիչիների ավագ ճյուղի միակ ներկայացուցիչն արական գծով։ Դա ծանր հարված էր Լևոն X-ի համար։ Իր տոհմի համար մեծ հարստություններ դիզելու նրա բոլոր ջանքերն անօգուտ եղան։ Փառասիրական նկրտումները լքեցին նրան։ Գուցե, նաև այդ պատճառով Լևոն X-ը կրկնապատիկ եռանդով անձնատուր եղավ հաճույքների։

Նրա որսասիրությունը, որի մասին մենք արդեն խոսել ենք, դրդևորվեց էլ ավելի մոլեգնաբար։ Կարելի է վստահ ասել, որ իր հոգու խորքում նա եղնիկի կամ վարազի որսը գերադասում էր բարձրարվեստ ստեղծագործությունները դիտելու հաճույքից։ Երբ գազանը փախչում էր, նա հենց տեղնուտեղը, զայրույթից կատաղած, սկսում էր ճիպոտահարել խեղճ եգերին, մինչև որ վերջինս, արյունոտված, չէր ընկնում գետին։ Հաջողության դեպքում նա եգերին առատ նվերներ էր տալիս։ Նա պակաս չէր սիրում նաև Վատիկանի նրբաճաշակ ընթրիքը։ Ընթրիք պատրաստելու նոր եղանակ գտնելու համար նրբենի ճաշերի այդ գնահատողը մարդկանց պարգևատրում էր բարձր աստիճաններով։ Լևոն X-ի ճաշասեղանը սպասարկում էին չորս մասնագետ, որոնք զբաղված էին նոր ուտեստներ հնարելով։ Նրանց ջանքերի շնորհիվ մարդկությունը ծանոթացավ սիրամարգի մսով լցված նրբերշիկի հատուկ տեսակի պատրաստման եղանակին։ Պապի միայն ճաշասեղանը քրիստոնյաների վրա տարեկան յոթ միլիոն էր նստում։

Պապական տոնահանդեսներին մասնակցում էին հարյուրավոր ծաղրածուներ, դերասաններ ու բանաստեղծներ, որոնք նորին սրբազնությանը զվարճացնում էին բանաստեղծություններով ու անպարկեշտ կատակերգություններով։ Անառակության մեջ հմտացած գեղեցիկ աղջիկներն ու պատանիները հաճույք էին պատճառում պատվարժան հյուրերին։ Պապը նրանց ընտրում էր յուրաքանչյուրի հատկություններն ու կարողությունները մանրազնին ուսումնասիրելուց հետո։

Մի խոսքով, Լևոն X-ի օրգիաները ոչնչով չէին զիջում Բորջիայի օրգիաներին։ Անհոգ քահանայապետը զվարճանում էր ընդհուպ մինչև իր մահը։ Մեռավ նա հանկարծակի (1521 թվականի դեկտեմբերի 1-ին), առանց որևէ ակնհայտ պատճառի։ Բժիշկները թունավորում էին կասկածում։

Նախքան հաջորդ պապին անցնելը, մենք կանգ կառնենք Լևոն X-ի գահակալության օրոք տեղի ունեցած մի արյունահեղ միջադեպի վրա։

Դանիայի թագավոր Քրիստիանը երկար ժամանակ, բայց ապարդյուն ջանում էր գրավել Շվեդիան։ Կայսր Կառլոս V-ի թագադրումից հետո Տրոլեն, Ուփսալայի արքեպիսկոպոսը, մերկացվեց որպես դավաճան, և նրան Շվեդիայից արտաքսեցին, մի բան, որ բնավ խիստ պատիժ չէր նման հանցագործության համար։

Արքեպիսկոպոսն անմիջապես սկսեց բացեիբաց ինտրիգներ սարքել հօգուտ Քրիստիան թագավորի։ Դանիայի թագավորից մեծ վարձատրություն ստանալով, սուրբ հայրը, որ իրեն նեղություն չէր տալիս երկար խորհել, շվեդների դեմ ուղղված մի բանադրական կոնդակ հրապարակեց և կայսրին առաջարկեց Քրիստիանին օգնելու համար բանակ ուղարկել։ Կառլոս V-ը շտապ արձագանքից այդ առաջարկությանը. ժողովրդին ճնշելը նրա հարազատ գործն էր, և նա չէր կարող հրաժարվել։ Թագը պարտադրո՞ւմ էր։

Պապի ու Կայսրոս V-ի օգնությամբ Քրիստիանը զորք հավաքեց և պաշարեց Ստոկհոլմը։ Բայց շվեդները երկրի կառավարիչ Ստեն Ստուրեի գլխավորությամբ քաջարի դիմադրություն ցույց տվին և հակառակորդին փախուստի մատնեցին։ Բանն այն է, որ Քրիստիանը, անհամբերությունից այրվելով, չսպասեց այն զորքերին, որ սուրբ Հոր խնդրանքով նրան խոստացել էր Կառլոս V-ը, և բավականացավ իր զորեղ դաշնակիցների միայն բարոյական աջակցությամբ։ Բայց հենց որ կայսերական զորքերը ժամանեցին նրա ճամբարը, նա վերսկսեց ռազմական գործողությունները։ Սակայն հակառակորդի հաջող գրոհից հետո, այլևս սիրտ չանելով բախտը փորձել, իրեն ուղեկցող պապական սրբելատների խորհրդով որոշեց ուխտադրժության դիմել։ Նա սկսեց Ստեն Ստուրեի հետ հանդիպելու հնար գտնել և համաձայնվեց բանակցություններ վարելու համար մի փոքր պահակախմբի ուղեկցությամբ գնալ Ստոկհոլմ, եթե, որպես իր անվտանգության երաշխիք, իրեն հանձնեն իր կողմից ընտրված մի քանի պատանդներ։

Առաջարկությունն ընդունվեց։ Դեռ նոր էին պատանդները՝ շվեդ ազնվատոհմներն ու իշխանության ներկայացուցիչները ժամանել թագավորի մոտ, երբ նա հրամայեց նրանց կտրատել և ասաց, թե պատանդ-

ներին քաղաքի պարիսպների մոտ կկախեն, եթե Ստոկհոլմը չհանձնվի։

Իր սպառնալիքը գործացնելու համար նա զորքը շարժեց քաղաքի վրա և այն պաշարեց։

Ուխտադրժությունից զայրացած, շվեդները հերոսաբար էին մարտընչում, դիմանալով Քրիստիանի բազմաթիվ վարձկանների պաշարմանը։ Բայց մարտերից մեկի ժամանակ Ստեն Ստուրեն սպանվեց։ Քաջարի առաջնորդի մահից հետո շվեդներն ընկճվեցին ու անձնատուր եղան։

Քրիստիանը հաղթականորեն մտավ քաղաքը, ընդ որում նրա շքախմբի մեջ էին այն դժբախտ գերիները, որոնց նա ձեռք էր գցել դավաճանությամբ։ Հաջորդ օրը նա թագադրական հանդեսների համար հրավիրեց թագավորության բոլոր ազնվականներին, սենատորներին, եպիսկոպոսներին ու պրելատներին։ Այդ պարոնները միշտ պատրաստ են փառաբանական հիմներ երգել ամեն մի հաղթանակած ավազակի համար։ Թագադրման ծեսից հետո նա իր ամբոցում բանակի հրամանատարների համար խրախճանքներ սարքեց, որոնք տևեցին մի ամբողջ ամիս։ Այդ ամբողջ ժամանակաընթացքում զինվորներին թույլ էր արված բռնաբարել կանանց ու աղջիկներին։

Միանգամայն հասկանալի է, որ բնակչությունը չէր կարող հանգիստ մնալ։ Պապական նունցիաները և զազրելի Տրոլեն թագավորին խորհուրդ տվին ապստամբությունը կանխելու համար եռանդուն միջոցների դիմել։ Միջոցները պարզ էին՝ դատի տալ ու մահապատժի ենթարկել բազմաթիվ քաղաքացիների՝ մնացածներին ահաբեկելու համար։

Քրիստիանը դա փայլուն գաղափար համարեց։ Քանի որ Լևոն X-ը իր կոնդակում բոլոր շվեդներին հերետիկոսներ էր անվանել, իսկ հերետիկոսությունը մահացու մեղք էր, թագավորը կազմեց այն քաղաքացիների ցուցակը, որոնց ազդեցությունից ավելի էր վախենում։ Սուրբ Հոր անունից նա հրամայեց նրանց ձերբակալել և հանձնել ինկվիզիտոր քահանաներից կազմված հանձնաժողովի դատին։

Մահապատժի համար նշանակված օրը Ստոկհոլմի բոլոր փողոցները լի էին զինվորներով, որոնց հրամայված էր տեղնուտեղը սպանել բոլոր նրանց, ով կփորձեր երևալ դարպասների մոտ կամ իր տան լուսամուտներում։

Դատապարտվածներին մահապատժի ենթարկեցին հրապարակում։ Նրանք, ըստ մի ականատեսի պատմածի, իննսունչորս հոգի էին։ Բոլորին գլխատեցին։

Հաջորդ օրը կացնին փոխարինեց կախաղանը։ Մահապատժի են-թարկվածների մեջ էին երկրի ամենաերևելի քաղաքացիները, ոչ տոհ-միկ կալվածատերերը, բուրգմիստրները,. քաղաքային բնակիչներ և նույնիսկ հասարակ ականատեսներ, որ համարձակորեն արտահայտել էին իրենց զայրույթը։ Այդ օրը զոհերի թիվը հասավ երկու հարյուրի։

Բայց այս ամենը միայն նախերգանքն էր։ Մի ամբողջ շաբաթ մահապատիժներն անընդհատ շարունակվում էին։ Միօրինակությունից խուսափելու համար ամեն օր փոխում էին մահապատժի ձևը։ Քահանա-ները, Մտոկհոլմի արյունահեղ ջարդի այդ գլխավոր կազմակերպիչնե-րը, միայն այն ժամանակ Քրիստիանին առաջարկեցին դատաստանը դադարեցնել, երբ բնակչության մեկ քառորդն արդեն ոչնչացված էր։ Բայց դրանից հետո էլ նրանք Քրիստիանի ուշադրությունը հրավիրեցին այն բանի վրա, որ սուրբ Հայրը բանադրել է ոչ միայն մայրաքաղաքի, այլև Շվեդիայի ամբողջ բնակչության և, հետևաբար, մնացած քա-ղաքների բնակիչները ևս պետք է պատժվեին հերետիկոսության հա-մար։

Դա նոր սպանդությունների առիթ տվեց։ Թագավորության մյուս մասերում ևս մարդիկ մեռնում էին կախաղանի կամ կառափնարանի վրա։

Եվ այնուամենայնիվ Քրիստիանը բնավ չէր կարող մրցել այն իս-պանացի քահանաների հետ, որ մոլեգնում էին Մեքսիկայում և ղե-կավարվում նույն այդ լևոն X-ի կոնդակով։

Եթե Շվեդիայում ոչնչացվեց մի քանի հազար մարդ, ապա Մեք-սիկայում կրոնի սպասավորների խեղդամահ աչքին մի քանի միլիոն հնդկացիների. եկեղեցական ժարգոնով դա կոչվում էր բնիկների ավե-տաբանականացում։

## ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Կարդինալ Ադրիանոսը, որ քահանայապետ ընտրվեց լևոն X-ի մահից հետո, իր նախորդի կատարյալ հակապատկերն էր։ Այդ հա-մեստ, հասարակ, նույնիսկ փոքր-ինչ պարզամիտ մարդը անկեղծորեն փորձեց ուղղել պապական արքունիքի բարքերը։

Այդպիսի հատկություններ ունեցող մարդու համար խույր բնու-

*Նեյը նույնքան վտանգավոր է, որքան գառան համար՝ վագրերի վանդակ մտնելը։*

*Սահմանված սովորույթներին հակառակ, Ադրիանոսը բավարարվեց նրանով, որ իր անունին ավելացրեց «VI» թվանշանը։*

*Վատիկանում հաստատվելուց առաջ նա ապրում էր Իսպանիայում և այնտեղ շատ թշնամիներ էր վաստակել։ Երբ նա ափ իջավ Ճենովայում (իսկ այդ քաղաքը Կառլոս V-ի պատերազմներից հետո ավերակների կույտ էր դարձել), պրելատները, որ ներկայացել էին պապական կոշիկը համբուրելու արարողությանը, մեղքերի թողություն խնդրեցին այն երկպառակություններին մասնակցած լինելու համար, որոնց պատճառով քաղաքը կործանվել էր։ Պապը մերժեց նրանց խնդրանքը, ասելով. «Ես դա չեմ անի, քանզի չեմ կարող ու չեմ էլ ուզում»։*

*Ճենովայից հետո Ադրիանոսը կանգ առավ Լիվոռնոյում, որտեղ նրան դիմավորեցին հույժ անպարկեշտ հագնված եպիսկոպոսները։ Սուրբ Հայրը կշտամբանքով մատնացույց արեց նոանց իսպանավարի հարդարած մոդայիկ մորուքներն ու բեղերը և առաջարկեց հրաժարվել աշխարհիկ զարդարանքներից, սարահանգեսներում և թատրոններում չերևալ սուր կապած կամ դաշույնը գոտու արանքը խրած։*

*Այդ քննադատությունը պրելատներին դուր չեկավ և նորընտիր քահանայապետի դեմ ուժեղ դժգոհություն առաջացրեց։*

*Ժամանելով Հռոմ, որտեղ կատարվում էին նրա թագադրության օրվա նախապատրաստությունները, Ադրիանոսն անմիջապես դադարեցրեց աշխատանքները, արգելեց իր պատվին կամարներ կառուցելը և նույնիսկ կարգադրեց քանդել դրանցից մեկը, որ դեռ չէր ավարտվել, բայց որի վրա արդեն ավելի քան հինգ հարյուր ոսկյա դուկատ էր ծախսվել։*

*«Ժողովրդի փողին հարկավոր է խնայողաբար վերաբերվել»,— պատասխանեց նա պրելատներին, որոնք սովոր չէին նման ժլատությանը։*

*Գահակալման արարողությունից անմիջապես հետո նա սուրբ կոլեգիայի անդամներին հրավիրեց քննարկելու աճող չարիքի դեմ շտապ միջոցների դիմելու հարցը։*

*Վիճակն, իսկապես, ավելի քան կրիտիկական էր. եկեղեցական-ների արարքները հայտնի են բոլորին. եկեղեցու ֆինանսները սպառվել են. Գերմանիան ու Շվեյցարիան լիովին անջատվել են Հռոմից. օրեցօր Ռեֆորմացիային հարում են նորանոր կողմնակիցներ. պապական մարզերին սպառնում է Ֆեռարայի դուքսի ներխուժումը, և, վերջապես,*

*Ֆրանցիսկ I-ի դեմ կայսր Կառլոսի մղած պատերազմներից հետո ամբողջ Ապենինյան թերակղզին գտնվում է աղետալի դրության մեջ։*

*Դեռ երբեք եկեղեցուն այդպիսի մեծ վտանգ չէր սպառնացել։ Նա գտնվում էր վիհի եզրին, և հարկավոր էր ծայրահեղ միջոցների դիմել կաթոլիկ եկեղեցու դեմ ժողովրդական ապստամբությունը կանխելու համար։ Ադրիանոսն սկսեց նրանից, որ վանականներին արգելեց ինդուլգենցիաներ վաճառել, վերացրեց ու կրճատեց տարբեր տեսակի տուրքերն ու հարկերը, արգելեց արտոնությունները ժառանգներին հանձնելը, ջանաց վերջ տալ պաշտոնների վաճառքին և արգելեց դրանց համատեղությունը։ Մի խոսքով, ամեն ինչ արեց, որպեսզի եկեղեցականները նրան ատեին։*

*Խնդիրը նրա ուժերից վեր էր։ Պապի արքունիքի կարդինալներն ու սպանները կատաղի կերպով դիմադրում էին նրա բոլոր հրամանագրերին։ Իրենց անհնազանդությունն արդարացնելու համար նրանք վկայակոչում էին կղերականների շարքերում արմատացած սովորույթները և ավելացնում, թե քահանայապետի պարտքն է պայքարել ամեն տեսակ վնասակար ոտմունքների դեմ, որ լի են անհավատությամբ ու ազատախոհությամբ, քանզի դրանք անկարգություն են սերմանում և հանդիսանում կրոնի մահացու թշնամիներ, պապը պարտավոր է իր իշխանությունը գործադրել միայն հանուն խաչի հաղթանակի։*

*Ադրիանոսը եռանդագին առարկում էր այդ փաստարկների դեմ, բայց համոզվելով, որ եկեղեցին միանգամայն քայքայվել է, նա ընկրճվեց և մի ազնիվ որոշում ընդունեց։ Նա հավաքեց իր կարդինալներին և նրանց դիմեց հետևյալ խոսքերով. «Դուք բոլորդ հանցագործներ եք։ Քրիստոնեական ամբողջ աշխարհում չկա մի քահանա, որ անառակ, գող կամ մարդասպան չլինի։ Եկեղեցին դարձել է ավազակարջ, այն անհնար է կառավարել՝ առանց անզգայացնելու սեփական պատիվն ու խիղճը։ Ինձ մնում է միայն հեռանալ։ Ես որոշել եմ ոչ միայն լքել առաքյալների գահը, այլև մեկընդմիշտ բաժանվել այն գարշահոտ ջրափոսից, որ կոչվում է հռոմեական կաթոլիկություն։ Ես ձեզ հրավիրել եմ, որպեսզի հրաժեշտ տամ ձեզ և առաջարկեմ ընտրել նոր հաջորդ, որն ավելի արժանի կլինի կառավարելու սրիկաների այն հրոսակախումբը, որ կազմված է ձեզնից»։*

*Այդ ճառը (մենք հաղորդեցինք դրա էությունը, միայն փոքր-ինչ փոխելով ձևը), որ լսվեց մեռելային լռության մեջ, կարդինալների վրա շշմեցուցիչ տպավորություն գործեց։ Նրանք չէին ուզում իրենց ականջներին հավատալ։ Ահա մի քահանայապետ, որ իր հոժար կամքով հրա-*

*Ժարվում է ամենազոր իշխանությունից. դա անհավատալի է, անհնթեթ, անհնարին, հրեշավոր։ Կարելի էր ենթադրել, թե քահանայապետը խելքը թոցրել է, բայց նա խոսում էր սառնասրտորեն, տրամաբանված և եկեղեցու վիճակը բնութագրեց անթերի կերպով։*

*Ուշքի գալով, կարդինալները հասկացան, որ հիշյալ շարժառիթներով պապի հրապարակային հրաժարումը խայտառակություն կլիներ, որից անխուսափելիորեն կօգտվեն կաթոլիկների թշնամիները։ Նրանք սկսեցին Ադրիանոսին թախանձել՝ մնալ գահի վրա, նրան խոստանալով ուղղվել։*

*Պապը պատասխանեց, թե եկեղեցու պատմության մեջ այնքան խայտառակություններ են եղել, որ իր վարմունքը նրա ամոթալի փառքի վրա ոչինչ չի ավելացնի։ Ի դեպ, ինքը դրա նկատմամբ անտարբեր է, որովհետև ուզում է հրաժարվելուց հետո գնալ Գերմանիա, որպեսզի այնտեղ ուսումնասիրի Լյութերի ուսմունքը և նրա հետ միասին աշխատի ոչնչացնել կաթոլիկ եկեղեցու աստվածապետական կառուցվածքը։*

*Կարդինալները համոզվեցին, որ հետագա բանակցություններն անիմաստ են, և խորհրդակցությունն ավարտվեց։ Բայց եթե պապը համառեց իր մտադրության մեջ, ապա սուրբ կոլեգիայի անդամներն էլ, իրենց հերթին, հաստատապես որոշեցին Ադրիանոսին մեջտեղից վերացնել։*

*Նրանք շտապով սուրբ Հոր մտադրությունները հայտնեցին Հռոմեական հոգևորականությանը, ի վերջ։ Հռոմեական կղերականների մեջ շատ մարդասպաններ գտնվեցին, որոնք պատրաստակամություն էին հայտնում ոչնչացնելու Լևոն X-ի ձախորդ հաջորդին։*

*Առաջին փորձը ձախողվեց Մարդասպան քահանան վատիկանում ձերբակալվեց այն պահին, երբ հանում էր փարաջայի տակ թաքցրած դաշույնը և պատրաստվում էր խոցել սուրբ Հորը։*

*Այնժամ կարդինալները, ամենայն զգուշավորության դիմելով, նոր մահափորձ կազմակերպեցին։ Նրանց հրամանով բաղիլիկայի կամարի տակ գետնախարիսխը սղոցվեց մոտավորապես այն տեղում, ուր սովորաբար կանգնում էր քահանայապետը։ Բայց այդ հանգամանորեն կատարված պլանն ևս անհաջողությամբ ավարտվեց. չարագործները մահացու զենքը գործի դրին ավելի վաղ, և քարի մեծ բեկորը, որ ընկնելիս փշուր-փշուր եղավ, սպանեց կես դյուժին շվեյցարացիների։*

*Նոր մահափորձ ծրագրելու հետ միասին կարդինալները, առանց ժամանակ կորցնելու, սկսեցին Հռոմի բնակչությանը լարել Անդրիանոսի դեմ. նրանք պապին ներկայացնում էին ծիծաղելի տեսքով, ծաղ-*

րում նրա ծայրահեղ ճլատությունն ու ժուժկալությունը, քանդի նա օրական ծախսում էր ընդամենը տասներկու էկյու, գինու փոխարեն գարեջուր խմում, ճաշի սեղանի մոտ նստում կես ժամից ոչ ավելի։ Բավականանալով ձկներից ամենաէժանով, նա ապացուցել է, որ վատ է գլուխ հանում ինչպես «ուտելիքների ընտրության, այնպես էլ եկեղեցու կառավարման գործից։ Վերջապես, նրան մեղադրեցին, որ մոգությամբ է զբաղվում, թե իբր ամբողջ գիշերը ալքիմիկոսների հետ տքնում է փիլիսոփայական քարը գտնելու վրա։

Այդ ժամանակ Ադրիանոս VI-ը իր լեգատին ուղարկեց Նյուրնբերգ՝ սեյմին հասցեագրված ուղերձով։ Սեյմը հրավիրել էր Ֆերդինանդ Ավստրիացին, որը որոշել էր զբաղվել Ռեֆորմացիայի հարցերով։

«Ձեզ հետ, եղբա՛րք իմ, ես վշտացած եմ այն ծանր վիճակի համար, որին մեզ հասցրել են հոգևորականության հանցագործությունները և հռոմեական քահանայապետերի սանձարձակությունները։ Ես ընդունում եմ, որ եկեղեցում թագավորող խառնակչության համար մենք պարտական ենք լոկ կղերականների փչացածությանը. ահա արդեն շատ տարիներ է, ինչ քահանաների մեջ մենք ոչինչ չենք տեսնում, բացի չարաշահումներից, շռայլություններից և այլ խայտառակ արարքներից։ Վարակը գլխից անցել է մարմնի անդամներին, պապից՝ պրելատներին, պրելատներից՝ հասարակ կղերականներին ու վանականներին։ Դժվար է գտնել թեկուզ մի կղերական, որ ներգրավված չլինի սիմոնականության, գողության, շնության և արվագիտության մեջ։ Սակայն, ես հույս ունեմ աստծո օգնությամբ եկեղեցին դուրս բերել այդ ողբալի վիճակից և վերականգնել հռոմեական կուրիան։ Բայց չարիքն այնքան մեծ է, որ ես առաքինության ճանապարհով կարող եմ ընթանալ միայն քայլ առ քայլ»։

Այդ ուղերձը տանող լեգատը, բոլոր պրելատների պես, թշնամաբար էր տրամադրված Ադրիանոսի ու նրա ռեֆորմատորական նկրտումների դեմ։ Ուղերձի բովանդակությունը հայտնի դարձավ մյուս կարդինալներին և միայն յոթ լցրեց կրակի վրա։ Նրանք վերստին սկսեցին Ադրիանոս VI-ին ոչնչացնելու ծրագիր մշակել։ Շուտով նրանց ջանքերը հաջողությամբ պսակվեցին։ 1523 թվականի սեպտեմբերի 14-ին Ադրիանոսը հանկարծակի վախճանվեց։ Թշնամիները նույնիսկ չէին ջանացել հետքերը թաքցնել։ Ցինիզմն այնտեղ հասավ, որ հաջորդ օրը նրանց հանձնարարությամբ Ադրիանոս VI-ին թունավորած բժշկի դուռը զարդարեցին ծաղկաշղթաներով, որոնց տակ գրված էր. «Հայրենիքի ազատարարին»։

Քիչ՝ցինիզմ չկար նաև կարդինալ Պալավիչինիի հոդեհանգստյան ճառի մեջ, որը նա արտասանեց Ադրիանոս VI-ի թաղման ժամանակ. «Ադրիանոս VI-ը,— ասաց նա,— բարեպաշտ, գիտուն ու անշահախնդիր մարդ էր, որը կրոնին բարիք էր ցանկանում։ Այնուամենայնիվ նա միջակ պապ էր, որովհետև չգիտեր կառավարման արվեստի բոլոր նրբություններըը, չկարողացավ հարմարվել հռոմեական արքունիքի բարքերին։ Այն քահանայապետը, որը նրա պես մոռանում է, որ մարդը ձարմնից ու արյունից է կազմված, կարող է միայն վատ ղեկավարել եկեղեցին»։

## ԿԼԵՄԵՍ VII, ՀԵՆՐԻՍ VIII ԵՎ ԿԱՌԼՈՍ V

Ադրիանոս VI-ի օրոք գործերի կառավարումն իր ձեռքն էր առել կարդինալ Ջուլիո Մեդիչին, նույն այն կոմանդորը, որին թագադրության արարողության ժամանակ Լևոն X-ը արքեպիսկոպոսի աստիճան էր շնորհել։ Կարդինալական թասակ ստանալով, Ջուլիո Մեդիչին փափագում էր ստանալ նաև խույրը։ Լևոն X-ի մահից հետո գումարված կոնկլավում նրա գլխավոր հակառակորդը Պոմպեո Կոլոննան էր։ Երկու մրցակիցների պայքարը, որ բավական երկար տևեց, ձանձրացրեց կարդինալներին, և նրանք իրենց ձայնը տվին անծանոթ Ադրիանոսին։

Ջուլիո Մեդիչին դարձավ Վատիկանի լիիրավ տերը. կարելի է համարձակ ասել, որ նա եղել է սուրբ Հոր սպանության գլխավոր ոգեշնչողը։

Երբ Ադրիանոսի մահից հետո կարդինալները նիստի հավաքվեցին, Ջուլիո Մեդիչին այնտեղ նորից հանդիպեց իր մրցակից Պոմպեո Կոլոննային։ Վեց շաբաթ շարունակ նրանց միջև կատաղի պայքար էր տեղի ունենում. սուրբ կոլեգիայի ձայները կիսվել էին։ Իր փորձված մրցակցին ետ պահելու համար հրաժարվել աթոռի նկատմամբ ունեցած հավակնություններից, Մեդիչին նրան առաջարկեց եկեղեցու փոխ-կանցլերի պաշտոնը, ընդունեց մի հոյակապ ապարանք՝ Հռոմի լավագույն կեցավայրերից մեկը, և մի խոշոր գումար։

Նա ընդունեց Կղեմես VII անունը, հակապահ հորջորջելով մյուս Կղեմես VII-ին, որն Արևմուտքի մեծ պառակտման ժամանակ գտնվում էր Ավինյոնում։

Իր նպատակին հասնելով, Կղեմեսը դեն նետեց հեզության դիմակը, քանի որ դրա կարիքն այլևս չէր զգում, և դարձավ այն, ինչ միշտ եղել էր՝ բռի զինվորական։ Նրա գահակալության տասնմեկ տարիներն անընդհատ պատերազմների տարիներ էին մերթ Կառլոս V-ի, մերթ Ֆրանցիսկ I-ի դեմ։ 1527 թվականին կայսերական զորքերը գավթեցին Հռոմը և հրի ու սրի մատնեցին։ Երկու ամիս շարունակ նրանք չէին խնայում ո՛չ բազիլիկաները, ո՛չ հին վանքերը. կայսերական զինվորները տանջում ու սպանում էին հռոմեացիներին, բռնաբարում կանանց, աղջիկներին, նույնիսկ դեռահաս տղաներին։ Մայրերը սրախողխող էին անում իրենց երեխաներին, որպեսզի փրկեին բռնաբարության խայտառակությունից։ Կանանց մենաստանները պղծվեցին։ Բնակիչներին աներևակայելի խոշտանգումների էին ենթարկում. նրանց նետում էին խարույկների մեջ, վառում էին նրանց ոտքերը, ծխացող կրակի վրա տանջում շիկացած աքցաններով, կտրում մարդկանց ականջները, քթերը, հանում աչքերը։ Փողոցները լցված էին կացնահար հռոմեացիների դիակներով։ Իսկ սուրբ Հայրը, որ կարողացել էր փախչելով փրկվել սուրբ Անգելոսի ամրոցում, աշտարակի բարձրությունից անվրդով դիտում էր այդ կոտորածը։

Չպետք է մոռանալ, որ այդ վայրենի պատերազմում, որն ավազակների մենամարտ էր հիշեցնում, երկու կողմերն էլ կռվում էին հանուն կրոնի։ Կառլոս V-ի բանակը բաղկացած էր իսպանացիներից, խանդավառ կաթոլիկներից ու գերմանացիներից, որոնք մոլի լյութերականներ էին, ե՛վ սրանք, և՛ նրանք պապին ու կարդինալներին համարում էին սրբապիղծներ ու դժոխքից դուրս պրծած սատանաներ։ Պապական զորքերը, մյուս կողմից, հավատացած էին, թե իրենք հերետիկոսներից պաշտպանում են աստծո օրինական կուսակալին։

Եվ դեռ համարձակվում են ասել, թե կրոնը մեղմացնում է բարքերը։

Կղեմես VII-ի և կայսեր միջև մղվող պատերազմի վերջը եկավ։ Հենրիխ VIII-ը, Անգլիայի թագավորը, որոշեց լուծանել իր ամուսնությունը Կատրին Արագոնացու՝ Կառլոս V-ի մորաքրոջ հետ։ Թագավորը խելագարի պես սիրահարվել էր գեղեցկուհի Աննա Բոլեյնին և պատրաստվում էր նրա հետ ամուսնանալ։ Ապահարզանի պաշտոնական առիթը թագուհու չբերությունն էր, նրա հետ Հենրիխն ապրել էր քսան տարի և ժառանգ չէր ունեցել. թագավորը գիտեր, որ Հիվանդ թագուհին ի վիճակի չէ երեխա ծնելու։

Պապը չէր կարող կատարել Հենրիխի քմահաճույքը. կախվածության

մեջ լինելով կայսրից, որը Կատրին Արագոնացու քրոջ որդին էր, հույս ուներ Անգլիան կառավարել իր մորաքրոջ անունից, եթե Հենրիխ VIII-ը իրենից շուտ մեռներ։ Տարբեր միջոցների դիմելով, ձգտելով հետաձգել գործը, կայսրն սկսեց Կղեմես VII-ի հետ բանակցություններ վարել։ Վերջինս չէր պատասխանում ո՛չ նրա հաշտության առաջարկներին, ո՛չ էլ Անգլիայի թագավորի խնդրանքին։ Սուրբ Հայրը խուսափում էր, ձգձգում, կտուրն էր գցում պատասխանը, կատարելության հասցնելով իր խարդավանքը, փորձելով երկուսին էլ խաբել։ Նա ձգտում էր հաշտվել առաջինի հետ, առանց երկրորդի հետ գժտվելու, և վճռական պատասխան չէր տալիս։

Նրա այդ խաղը ոչինչ չտվեց։ Կառլոսը, պատասխանի սպասելով, նրան գերության մեջ էր պահում սուրբ Անգելոսի ամրոցում, և պապը կանգնեց բացահայտորեն Կառլոսի կողմն անցնելու անհրաժեշտության առաջ։ Սպառնալով բանադրանքով, պապը թագավորին արգելեց Կատրին Արագոնացուց բաժանվել։ Սակայն Հենրիխը արհամարհեց պապի կոնդակի ահեղ նետերը. նա անվարան ընթացավ դեպի իր նպատակը և ամուսնացավ Աննա Բոլեյնի հետ։ Այնժամ սուրբ Հայրը պոռթկաց մի է՛լ ավելի կատաղի կոնդակով, որը Հենրիխ VIII-ը պատառոտեց պառլամենտի առաջ։

Այդպիսով, պապի և կայսեր միջև մղված պատերազմի արդյունքն այն եղավ, որ Անգլիան անջատվեց Հռոմից։ Հենրիխը մի հրամանագիր հրապարակեց՝ իր հպատակներին արգելելով ճանաչել հռոմեական կուրիայի հեղինակությունը։ Սակայն անգլիկան եկեղեցին մի քանի տարի հետո միայն (Պողոս III-ի, Կղեմեսի հաջորդի գահակալության օրոք) խզեց իր հարաբերությունները պապերի հետ։

Կղեմես VII-ին ստիպելով բանադրել Հենրիխին, Կառլոսը խաղաղվեց և իր գերուն առաջարկեց հաշտության պայմանագիր կնքել։ Պապն անհապաղ ստորագրեց պայմանագիրը, շտապելով վերականգնել իր աղատությունը։ Այնուհետև սուրբ Հայրը կայսրի հետ հանդիպելու համար մեկնեց Բոլոնիա։ Նա կայսրին մեղքերի թողություն տվեց Հռոմը գրավելու ժամանակ կատարած բոլոր հանցագործությունների համար։ Ի՞նչ նշանակություն ուներ, որ կայսերական բանակը ոչնչացրել էր նրա տասնյակ հազարավոր հպատակներին։ Նա կդիմեր ավելի մեծ զոհողություններ, եթե դրանով կարողանար կրճատել իր դերության տխուր օրերը։

Իրար արժանի երկու բարեկամներն իրենց համաձայնությունն ամրապնդեցին նվերներով։ Կառլոսը Կղեմեսին մատուցեց ոսկի մեդալ-

ներով զարդարուն արծաթե տուփիկներ, իսկ պապն իր բարեկամին նվիրեց մի ոսկեձույլ արծիվ։ Արդյոք դա արված չէ՞ր ի նշան այն բանի, որ կայսերական արծիվն իր սուր ճանկերը խրել էր արյունաքամ Իտալիայի մարմնի մեջ։

Ավարտելով նախնական բանակցությունները, երկու խեղկատակները թողեցին բեմը և թաքնվեցին կուլիսների ետևում։ Հետագա զրույցները տեղի էին ունենում փակ դռների ետևում, մտերմական պայմաններում։ Քննարկվում էին կարևոր հարցեր, որոնք գլխավորապես վերաբերում էին նրանց հպատակներին։ Վերջիններս, իհարկե, գաղափար չունեին դրանց մասին. խոհարարը հավից չի հարցնում, թե ինչ սոուսով ավելի համեղ կլինի նրան տապակել ու դնել սեղանին։

Կայսրը տագնապով էր հետևում Ռեֆորմացիայի աճող ազդեցությանը։ «Աշխարհում կար միայն երկու հզորագույն իշխանություն,— ասում էր նա,— աստված ինքն է նրանց հանձնարարել պահպանել կարգուկանոնը։ Պապությունն ու կայսրությունը անքակտելիորեն կապված են միմյանց, նրանք ծառայում են միևնույն գործին։ Պապությանը հասցված հարվածը դիպչում է նաև կայսրությանը, ինչպես և թագին տրված հարվածից ընկճվում է պապությունը»։ Պապ ու կայսրը կարող են իրար հետ կռվել մինչև այն ժամանակ, քանի դեռ պայքարի զոհերը նրանց հպատակներն են։ Բայց երբ հարվածը ժողովրդից է գալիս, դրությունը դառնում է վտանգավոր։ Կշռադատելով իրավիճակը, Կառլոս V-ը կղեմես VII-ին առաջարկեց Գերմանիայում եկեղեցաժողով հրավիրել՝ գերմանական եկեղեցիների ու սուրբ աթոռի հարաբերությունները վերականգնելու համար, ինչպես նաև քննարկել եկեղեցական բարքերը բարելավելու հարցերը և դրանով իսկ խանգարել հերետիկոսական քարոզչության տարածմանը։

«Այս ի՞նչ եմ լսում,— բացականչեց կղեմեսը,— հզորագույն թագավորը, խոշորագույն քաղաքագետը մտադիր է եկեղեցաժողով հրավիրել, որտեղ ազատամիտները, իրենց անկախ զգալով, կցանկանան պաշտպանել իրենց դոգմանները և մերժել մերը։ Եկեղեցաժողովի գումարումը վտանգավոր հետևանքներ կունենա, նա կարող է խորտակել պապությունը և կործանել գահը։ Մենք երկուսս, կայսրն ու քահանայապետը, աստծո օծյալներ ենք, երկրի վրա մարմնավորում ենք նրա աստվածային իշխանությունը։ Մենք պետք է ոչնչացնենք ամեն տեսակ ազատախոհություն, քանզի, եթե անհավատները պահանջեն, որ ներկայացնենք մեր լիազորությունները, անելանելի վիճակի մեջ կընկնենք»։

Իր սիրած թեման շոշափելով, պապը երկար խոսեց և իր ճառն ավարտեց պատմոսով.

«Մեր ի՞նչ գործն է, թե ինչի են հավատում լյութերականներն ու նրանց կողմնակիցները։ Մենք կարիք չունենք խորամուխ լինելու նրանց դոգմաների մեջ։ Մեզ կատարյալ հնազանդություն է պետք։ Ժողովուրդները պարտավոր են հավիտյանս հնազանդ լինել քահանաների ու թագավորների իշխանությանը։ Մեր նպատակին հասնելու համար, որպեսզի կանխենք ապստամբությունը, պետք է վերջ տալ ազատամտությանը, որ սասանում է մեր գահը։ Հարկավոր է ուժ ցուցաբերել, զինվորներին դահիճներ դարձնել, վառել խարույկները, սպանել ու այրել, որպեսզի կրոնը մաքրապարզվի աղտեղությունից։ Առաջին հերթին ոչնչացնել դիտնականներին, օրենքից դո՛ւրս հայտարարել գրքի տպագրությունը։ Այն ժամանակ ձեր հպատակները կվերադառնան ճշմարիտ հավատքի գիրկը, կդադարեցնեն խառնակչությունները և երեսնիվար կփռվեն ձեր կայսերական վսեմության առաջ»։

Տգիտություն ու ահաբեկում— ահա այն ուժը, որի վրա հենվել է և պետք է հենվի ամեն մի ինքնակալություն։

Կաղլոսը չէր կարող չընդունել Կղեմես VII-ի փաստարկների արդարացիությունը և համաձայնվեց, որ եկեղեցաժողով հրավիրելու միտքն անհեթեթ է։ Ուրախանալով, քահանայապետը կայսրին առաջարկեց թափառվել, և հաջորդ օրը ծեսը կատարվեց ամենայն հանդիսավորությամբ։

## ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՆՍԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐ

Պապի ձեռքից ընդունելով գահը, Կաղլոս V-ը, որն Ապենինյան թերակղզում տիրություն էր անում ինչպես մի նվաճված երկրում, իր հերթին հատուցեց քահանայապետին, խոստանալով Ֆլորենցիայում վերահաստատել Մեդիչիների ընտանիքի իշխանությունը։

Եվ ահա Կղեմես VII-ը կայսերական զորքերի հետ, որոնց դաժանությանը կարող էր համոզվել դեռևս Հռոմում գտնված ժամանակ, շարժվեց իր հայրենի քաղաքի վրա։

Դեռ մի պատերազմը չավարտած, ռազմատենչ պապն արդեն նոր պատերազմ էր փափագում։

Բայց միայն ռազմատենչ բնավորությունը չէր, որ նրան դրդում էր նվաճել Ֆլորենցիան։ Այդ մոլադարը պատրաստվում էր ոչնչացնել հանրապետական կարգը և քաղաքը հանձնել իր Ալեքսանդր Մեդիչի կոչվող ապօրինի որդուն, որ նրան պարգևել էր ինչ-որ իշխանատոհմ մի սպասուհի։ Ինչպես տեսնում եք, սուրբ հայրն այնքան էլ նուրբ ճաշակի տեր չէր։

Ֆլորենցիացիները, հանկարծակիի եկած, որոշեցին պաշտպանվել, թեև հասկանում էին, որ Սաբաուդիի դրոշով արշավող թշնամու հսկայական բանակի առաջ միայն արիությունը քիչ է։ Նրանք տասը հազար մարդ հավաքեցին և օգնելու խնդրանքով որպես ականավոր ինժեների դիմեցին Միքելանջելոյին։ Չնայած ողբերգական դատապարտվածությանը, հասարակ ժողովուրդը չերմ հայրենասիրություն էր դրսևորում։

Հանրապետության անկումն արագացավ նրանով, որ պապը իր հայրենակիցներին հանդիսավորապես խոստացավ ներել այն բոլոր վիրավորանքներն ու կորուստները, որ կրել էր գրոհի ժամանակ, և պահպանել քաղաքի անկախությունը։

Բայց հենց որ կապիտուլյացիան ստորագրվեց և պապական զորքերը մտան Ֆլորենցիա, սկսվեցին սպանությունները, ջարդերն ու կողոպուտը։

Իր խոստման հակառակ, Կլեմես VII-ը, հավատարիմ մնալով եկեղեցական ավանդույթներին, անմիջապես ոչնչացրեց քաղաքային ինքնավարության վերջին հետքերը, ձերբակալեց իր բոլոր հակառակորդներին, բռնագրավեց նրանց ունեցվածքը, ապա, դաժան խոշտանգումների ենթարկելով, կարգադրեց սպանել։

Վրեժխնդրությունից հագենալով, Կղեմեսը թագադրեց Ալեքսանդր Մեդիչիին, նրան շնորհելով Ֆլորենցիայի դուքսի տիտղոսը։

Այդ անառակ ու դաժան դուքսը, որ իրեն շրջապատել էր վարձու մարդասպաններով լուծոնկուսվ, ամբողջ Իտալիայում ահ ու սարսափ էր տարածել։

Կարլոս V-ը դեռ մի որոշ ժամանակ մնաց Իտալիայում, իր բարեկամին օգնելով հնազանդեցնել նոր տիրոջ վասալներին, սակայն շուտով ստիպված եղավ անցնել Ալպերը, որովհետև Գերմանիայում նոր իրադարձություններ էին հասունանում։

Այդ ժամանակ Արևմուտքում ուժեղացել էին ռեֆորմատորների տարբեր հոսանքների միջև ծագած երկպառակությունները։ Կարլոս V-ը գրտավ, որ գժտությունները կդյուրացնեն կրոնական միասնության վերա-

կանգնումը, և Աուգսբուրգում համագումար հրավիրեց բողոքականներին, Լյութերի պահանջով, գլխավորում էր Մելանխթոնը։ Լյութերն ինքը, իբրև կայսեր կոզմից դատապարտված հերետիկոս, իրավունք չուներ համագումարին մասնակցելու։ Երբ համագումարն իր աշխատանքն ավարտեց, կայսրը եկավ այն եզրակացության, թե խորհրդակցությունն ապացուցել է երկու քրիստոնեական դավանանքների անհամատեղելիությունը։ Հիշելով քահանայապետի հետ երես առ երես ունեցած իր զրույցները, կայսրը մի հրամանագիր հրապարակեց, որով հրամայեց ամենուր եպիսկոպոսների դատական իշխանություն սահմանել, կիրառել սուրբ հաղորդությունը, խոստովանությունը, կնունքը, օծման խորհուրդը, մեղքերի թողությունը, սրբերին երկրպագելը, մի խոսքով՝ վերականգնել կաթոլիկական ժամասացության ամբողջ ծիսակարգը։ Նա պահանջեց եկեղեցիներին ու վանքերին վերադարձնել նրանց նախկին կալվածքները։ Բացի դրանից, վերականգնեց կուսակրոնությունը, քահանաներին հրամայելով անհապաղ լքել իրենց կանանց ու երեխաներին. նրանք, ովքեր կփորձեին դիմադրել կամ չհնազանդվել, դատապարտվում էին աքսորի՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ։

Բռնակալի այդ ակտն իսկական պատերազմ էր ռեֆորմատորների դեմ և կատարյալ խելագարություն։ Կայսեր հրամանները Կղեմես VII-ի աջակցությամբ կատարվում էին անողոք կերպով և կարճ ժամանակում բազմաթիվ զոհեր խլեցին։

Կայսերական հրովարտակը, որ կոչ էր անում վրեժ լուծել, պատժել ու կողոպտել ռեֆորմատորներին, մոլեգնության հասցրեց Նրանք համախմբվեցին մեկ դրոշի ներքո, որպեսզի պայքարեն դաժան թշնամու դեմ և աննահանջ պաշտպանեն իրենց հավատը։

Շուտով Կառլոս V-ը հասկացավ, որ գերմանացի բողոքական իշխանների դիմադրությունը վնասում է թագավորական հեղինակությանը։ Ակներև դարձավ, որ նա կուրորեն վստահելով սուրբ հորը, վրիպում է թույլ տվել։ Կրոնական հարցերի համեմատ քաղաքական հարցերը հեռին պլան էին մղվում, ավելի ու ավելի բացահայտորեն էր դրսևորվում ֆեոդալական իշխանների ազդեցությունը, որոնք հրաժարվում էին կայսրին պաշտպանել։

Հանդիպելով մի այնպիսի ուժի, որը չէր կարելի հաշվի չառնել, կայսրն սկսեց ամեն բանի համար մեղադրել պապին։ Իսկ սուրբ հայրն, իր հերթին, իրեն հատուկ մեծամտությամբ կայսրին կշտամբում էր կարճամտության ու թուլության համար։ Վերջիվերջո փոխադարձ հարձակումները պատակտման հասցրին։

Այդ ժամանակ Ֆրանցիսկ I-ը, որ ուշադիր հետևում էր այդ պատերակտման բոլոր փուլերին և դանազան նկատառումներով ձգտում մերձենալ Հռոմեական կուրիային, իր որդու, Օռլեանի դուքս Հենրիխի համար պապից խնդրեց նրա եղբոր աղջկա ձեռքը։

Ֆրանսիայի թագավորի առաջարկը գերազանցեց սուրբ Հոր բոլոր փառասիրական ակնկալությունները. այդ ամուսնությունն ամրապնդում էր Ֆրանսիայի հետ պապի կնքած դաշինքը և կարող էր Կառլոս V-ի դեմ պայքարում նեցուկ դառնալ։

Դժգոհելով, որ պապը մերձենում է իր հին ախոյան Ֆրանցիսկ I-ի հետ և պիտակցելով իր իսկ դժվարին վիճակը, կայսրը մի կողմ դրեց վրեժինդրական նկրտումների իրագործումը և շտապեց լավացնել իր հարաբերությունները գերմանացի բողոքական իշխանների հետ։ Նա մի դեկրետ հրապարակեց, որով դադարեցրեց բոլոր կրոնական դատավարությունները և բողոքականներին դավանումի ազատություն տվեց մինչև համընդհանուր եկեղեցաժողովի գումարումը։

Այդ ծանր հարվածը մոռացնել փառասեր պապի ուրախությունը։ Նա հասկանում էր, որ Կառլոսի դեկրետն իրեն կանգնեցնում է երկընտրանքի առաջ, կամ ինքը պետք է ստիպված լինի ճանաչել գերմանական եկեղեցու անկախությունը, կամ, Ֆրանսիայի հետ դաշինք կնքելուց հրաժարվելու դեպքում, հնթարկվի եկեղեցաժողովի կամքին, ժողով, որը բացառապես ինքը կարող էր բարենորոգումներ մտցնել և պահանջել, որ դրանք կատարվեն։

Բայց պապի համար խորհրդածելու շատ ժամանակ չէր մնացել։ Եկատերինա Մեդիչիի և Ֆրանսիայի թագաժառանգի հարսանիքի օրն արդեն հայտնի էր։ Եվ պապը, տխուր մտքերը վանելով, սկսեց ուրախ ճանապարհորդության պատրաստվել։

Հարսնացուն ընդամենը տասնչորս տարեկան էր, սակայն նրա անբարոյականությունն ու այլասերվածությունը Հռոմում լավ հայտնի էր։ Իր անառակությամբ նա կարող էր մրցել փորձված պոռնիկի հետ։

Ֆրանցիսկ I-ը և Հենրիխը ամբողջ արքունիքի ուղեկցությամբ մեկնեցին Մարսել՝ պապին ու Եկատերինա Մեդիչիին դիմավորելու։ Պատճառ բռնելով շտապ գործերը, որ իրեն թույլ չէին տալիս Ֆրանսիայում երկար մնալ, պապը պահանջեց ամուսնությունն արագացնել։ Իրականում, իր եղբոր աղջկա բնավորությունն իմանալով, Կղեմես VII-ը չէր կարող երաշխավորել, որ Եկատերինան իր վարքով անառակությամբ երիտասարդ թագաժառանգին չի վանի իրենից։

Պատմաբան և անեկդոտահավաք Բրանտոմը մեջ է բերում մի քանի շատ հետաքրքրաշարժ միջադեպեր, որ տեղի են ունեցել Կղեմես VII-ի Ֆրանսիայում գտնվելու ժամանակ։ Դրանցից մեկը, որ պատկերում է ժամանակի բարքերը, մենք կբերենք այստեղ։

Մի քանի դամաներ դիմել էին Ալբանի դուքսին, պապական կուրիայի այդ բարձրաստիճան անդամին, որ նա թույլ տա պասի ժամանակ մսեղենի ծոմ չպահել։ Զևացնելով, թե նրանց խնդրանքը լավ չի հասկացել, դուքսը սիրունիկ դամաներին առաջնորդեց պապի մոտ և ասաց. «Սո՛ւրբ հայր, թույլ տվեք ձեզ ներկայացնել երեք դեռատի դամաների, որոնք ձեզ խնդրում են մեծ պասի օրերին իրենց չզրկել սեռական հարաբերություններից»։

Կղեմես VII-ը իսկույն տեղից վեր կացավ, համբուրեց գեղեցկուհիների այտերը և ծիծաղելով պատասխանեց. «Ձեր խնդրանքը հոգու համար քիչ է փրկարար, բայց և այնպես ձեզ թույլատրում եմ ձեր մարմնին գոհացում տալ շաբաթը երեք անգամ. դա միանգամայն բավական է մի այնպիսի մեղքի համար, ինչպիսին է ցանկասիրությունը»։

Դամաները կարմրեցին և նորին սրբազնությանն ասացին, թե իրենք ցանկություն ունեին լոկ մսեղեն ճաշակել և ուրիշ ոչինչ։ Պապը երկար ծիծաղեց, իսկ այնուհետև գուրգուրեց նրանց և բարի ճանապարհ մաղթեց։

Մարսելում զվարճանալով, Կղեմեսը Իտալիա չվերադարձավ, մինչև որ Ֆրանցիսկի հետ չավարտեց իր բանակցությունները Ռեֆորմացիայի դեմ պայքարելու միջոցառումների մասին։ Նա Ֆրանսիայի թագավորին ստիպեց հրաման արձակել լյութերականների դեմ ինկվիզիտորական դատը վերսկսելու վերաբերյալ։ Դաշնակիցները պայմանավորվեցին նաև, թե ինչ քայլերի պիտի դիմեն Կառլոս V-ի աղդեցությունը թուլացնելու համար։ Վերջապես բալմաթիվ շքեղ նվերներ ու ճանապարհի ծախքերը հոգալու համար մի մեծ գումար ստանալով, պապը մեկնեց տուն, համոզված լինելով, որ Ֆրանսիայի թագավորն իր երկրում հերետիկոսներին կհետապնդի։

Հռոմ ժամանելով, նա ստամոքսի սոսկալի ցավեր զգաց և շուտով մեռավ։ Որոշ պատմաբաններ պնդում են, թե նրան թունավորել են կարդինալները։ Այդ վերսիան միանգամայն ճշմարտանման է։

## ԽՈՂՃԸ ԱՃՈՒՐԴԻ Է ՀԱՆՎԱԾ

Կարդինալ Ալեքսանդր Ֆարնեզեն, Կղեմես VII-ի մեռնելուն չսպասելով, ժամանակին հոգ էր տարել գահը գրավելու մասին։ Իր վիթխարի կարողության շնորհիվ նա առանց դժվարության գնեց սուրբ կոլեգիայի բոլոր ձայները, և, երբ կոնկլավը հավաքվեց, համոզված էր, որ իր թեկնածությունը ոչ մի առարկության չի հարուցի։ Բայց սխալվում էր։ Հինգ կարդինալներ, որոնք հույս ունեին, թե Կառլոս V-ը իրենց ավելի կվճարի, քան Ֆարնեզեն, սկսեցին վերջինիս դեմ ինտրիգներ նյութել։ Պետք է ընդունել, որ առաքելական գահի թեկնածուի դեմ ուղղված մեղադրանքն այս անգամ միանդամայն համապատասխանում էր իրականությանը։ Ֆարնեզեին մեղադրում էին իր որդու հետ միասին կատարած հանցանքների, անառակ խրախճանքների և այն բանի համար, թե մորթությամբ է զբաղվում, չի թաքցնում, որ տարված է աստղագուշակությամբ ու մեռելահարցուկով, չի հավատում ո՛չ աստծուն, ո՛չ էլ սրբերին և դեռ պարծենում է իր անհավատությամբ։

Չէին մոռացել նաև նրա որովայնամոլությունը. հիրավի, խրախճանքների ժամանակ, հագենալով բազմաթիվ ճաշերից ու գինիներից, նա, հետևելով հին հռոմեական սովորությանը, արհեստական փսխում էր առաջացնում, որպեսզի հնարավորություն ունենա վերստին ուտելու։

Կարդինալները միաժամանակ տարածեցին իրենց ձեռքով գրած բազմաթիվ պարսավագրեր, որոնց մեջ մերկացնում էին Ֆարնեզեի կապերն իր աղջկա ու քրոջ հետ և նրան մեղադրում, թե սպանել է հինգ ազնվականների, որոնց մեղքը միայն այն է եղել, որ նրա հետ բաժանել են այդ երկու անառակ կանանց փաղաքշանքները։

Եվ այնուամենայնիվ Ալեքսանդր Ֆարնեզեին պապ ընտրեցին. նա կարողացավ իր կողմը քաշել սուրբ կոլեգիայի անդամներին, նրանց շատ մեծ շնորհներ խոստանալով։ Կարդինալի գործակալներն անհերևակայելի հնարքների էին դիմում։ Նրանք պատճառ էին բերում, թե Ֆարնեզեն վաթսունվեց տարեկան է ու վատառողջ և թեկուզ այդ պատճառով արժե նրան ընտրել, քանզի նրա հաջորդի ընտրության ժամանակն այնքան էլ հեռու չէ։

Այդ նկատառումն իր դերը խաղաց, և հակառակորդներն սկսեցին տատանվել։ Բայց դա դեռ վերջնական հաղթանակ չէր։ Այնժամ կարդինալի գործակալները հասցրին վճռական հարված։ Նրանք դիմեցին

Երկու սլրելատների ասելով. «Կարդինալ Ֆարնեզեն հոյակապ ապարանքներ ունի։ Նա կարող է ձեզ զիջել դրանցից չորսը, և ձեզանից ամեն մեկը երկու ապարանք կունենա։ Նկատի ունեցեք, շքեղ կահույքը, ոսկեզօծ սպասքը և մյուս բանները մնում են իրենց տեղում»։

Այդ առաջարկը կոտրեց պրելատների համառությունը, թեև նրանք դեռ շարունակում էին տատանվել։ Ի վերջո, հիսուն հազար ոսկե դուկատը կատարելապես հաղթահարեց դիմադրությունը։ Այդ ծանրակշիռ փաստարկը Ֆարնեզեի կատաղի հակառակորդներին, որ նրան մեղադրում էին անասուվածության, արվամոլության, արյունապղծության և սպանությունների մեջ, դարձրեց թունդ կողմնակիցներ։

Անհոգդողդ պրելատները մյուսներին էլ համոզեցին քվեարկել հօգուտ Ալեքսանդր Ֆարնեզեի։ Նա ընտրվեց միաձայն և ընդունեց Պողոս III անունը։

## ՊՈՂՈՍ III-Ը ԵՎ ՆՐԱ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Պողոս III-ը եղել է առաքելական գահին բազմած ամենաանառակ պապերից մեկը։

Նա վարձու մարդասպանների մի ավազակախումբ էր պահում, որ կատարում էր նրա արյունռուշտ կարգադրությունները։ Հատուկ մատակարարները պալլի և նրա պոռնկոցի Պիեր-Լուիջի Ֆարնեզեի համար բռնությամբ կամ խարդախությամբ Վատիկան էին բերում գեղեցիկ աղջիկներ ու պատանիներ, որոնց այնուհետև սպանում ու նետում էին Տիբրոս գետը։

Մտերիմների շրջանում Պողոս III-ը պարծենում էր իր անասուվածությամբ։ Սովորական մարդը կարող է հպարտանալ, որ այդպիսի հեռուհյան է հանգել։ Իսկ քրիստոնեական աշխարհի գլուխը դրանով սոսկ իր երկևեսանիությունն էր ապացուցում։ Աստծո գոյությունը բացասելով, պապը միաժամանակ կուրորեն հավատում էր աստղագուշակներին։ Նույնիսկ իր ոչ կարևոր որոշումները նա ընդունում էր այն ժամանակ, երբ պարզում էր աստղերի դիրքը։

Լևոն X-ի, Աղեքսանդր VI-ի, Սեքստոս IV-ի և շատ ուրիշ պապերի նման, Պողոս III-ը չանադրաբար հոգ էր տանում իր գերդաստանի շահերի մասին, ազգականներին, իր ապօրինի զավակներին նա վիթխարի դրամական նվերներ էր բաժանում, նրանց վրա շնորհներ տեղում։ Նա

առանձնապես առատաձեռն էր (անշուշտ, ժողովրդի հաշվին) Պիեր-Լուիջիի՝ իր սիրեցյալ որդու և ֆավորիտի նկատմամբ։

Նրա մյուս որդին, տասնվեցամյա Գվիդոն, որ միաժամանակ նրան թոռ էր դալիս (Գվիդոյին ծնել էր պապի հարաչատ աղջիկը՝ Կոնստանցիան), կարդինալական թասակ ստացավ։ Այնուհետև նա դարձավ իր մոր (որը միաժամանակ իր քույրն էր) սիրեկանը։

Պապը գորովալից սեր էր տածում Պիեր-Լուիջիի որդի Ալեքսանդր Ֆարնեզեի նկատմամբ. հազիվ էր լրացել նրա աստղաբաշխ տարին, երբ նրան տիտղոսներ ու եկեղեցական կոչումներ շնորհելիցին։

Պապի արտառոց նշանակումները դժգոհություն հարուցեցին նույնիսկ սուրբ կոլեգիայի անդամների մեջ։ Բայց այն կարդինալներին, որ ապացուցում էին, թե իր տարիքի պատճառով պատանին ի վիճակի չէ կատարելու իր վրա դրված բարձր պարտականությունները, պապը ցինիկորեն պատասխանեց. «Ես բավականաչափ փորձ ունեմ, որպեսզի նրան սովորեցնեմ այն ամենը, ինչ դեռ չգիտե»։

Նշանակումների մեծ մասը կատարվում էր Կոնստանցիայի ցուցումներով, որը շռայլորեն պարգևատրում էր իր սիրեկաններին։

Մի անգամ սուրբ Հայրը, առանց Կոնստանցիայի հետ խորհրդակցելու, յոթ կարդինալներ նշանակեց, որոնցից կրտսերն արդեն հիսունն անց էր։ Կոնստանցիան սկսեց դառնացած տրտնջալ ու պապին կըշտամբել, բայց վերջինս պատասխանեց. «Այս անգամ ես գործի շահերը գերադասեցի քո հաճույքներից։ Ինձ համար կարևոր է ջախջախել Ռեֆորմացիան, իսկ դրա համար անհրաժեշտ է ընդունակ ու կրթված մարդկանց աջակցությունը»։

Հիրավի, եկեղեցու վիճակը պահանջում էր դիմելու եռանդուն միջոցների։ Լյութերականների կրոնական ազդեցությունը վերածվել էր քաղաքական ազդեցության։ Նույնիսկ Ֆրանցիսկ I-ը ձգտում էր նրանց հետ դաշինք կնքել, որը, սակայն, նրան չէր խանգարում դաժանորեն հետապնդել ռեֆորմատորներին բուն Ֆրանսիայում։

Բողոքականների դեմ մղվող պայքարում պապը դիմում էր միանգամայն այլ մեթոդների, քան նրա նախորդը։ Նա ուժը գերադասում էր խորամանկությունից։ Ձևացնելով, թե ջերմորեն ցանկանում է բոլոր եկեղեցական հարցերը հանձնել տիեզերական ժողովի քննարկմանը, պապը Եվրոպայի դանազան երկրների դեսպանների ներկայությամբ սուրբ կոլեգիայի նիստ հրավիրեց, որտեղ ասաց, թե քրիստոնեական աշխարհում տեղի ունեցող անկարգություններն իրեն սաստիկ անհանգստացնում են և այդ պատճառով մտադիր է մոտ ապագայում եկեղեցաժողով գու-

մարել։ Որոշվեց ժողովի բացումը կատարել 1534 թվականի հոկտեմբերի 16-ին։ Պողոս III-ը նույնիսկ թվեց այն կարդինալների անունները, որոնց հանձնարարվում էր նախապես մշակել եկեղեցաժողովին ներկայացվելիք հարցերը։ Վերջապես պապը պրելատներին դիմեց մի խիստ նախազգուշացումով, պահանջելով, որ փոխեն իրենց գործելակերպը և դադարեն իրենց անառակությամբ ժողովրդին դրդռելը։

Այդ ամենը մի անամոթ կոմեդիա էր։ Սուրբ հայրը հույս ուներ այդ խարդախ հնարքով իր կողմը քաշել կայանալիք եկեղեցաժողովը։

Նախապատրաստվելով եկեղեցաժողովի բացմանը, պապը բուռն դործունեություն ծավալեց. նա փորձեց Լյութերին հռոմեական կուրիայի կողմը քաշել։ Ռեֆորմատորին փայլուն պաշտոններ առաջարկեցին, բայց նա մնաց անհողդողդ։ Պապը հիասթափվեց նաև կարդինալական հանձնաժողովից, որը կազմված էր իր կուսակցության հետ սերտորեն կապված մարդկանցից։

Պողոս III-ը լիահույս էր, որ հանձնաժողովի զեկուցումը ջարդուփշուր կանի հակառակորդների փաստարկները։ Բայց երբ ընդարձակ զեկուցումը կազմվեց, կարդինալները, փորձանակ քահանայապետին նեղիլայացնելու, բաղմացրին այն և ջանում էին տարածել ոչ միայն հոգևորականության, այլև բողոքական կուսակցության առաջնորդների մեջ։ Նրանք գիտեին, որ եթե զեկուցման ձեռագիրը նախապես ընկնի սուրբ հոր ձեռքը, ապա երբեք լույս աշխարհ չի գա։

Կարդինալների եղրակացությունները հիրավի ուղղված էին հոռմեական եկեղեցու դեմ։ Դատողությունների խստությունը համընդհանուր զարմանք հարուցեց. ոչ ոք չէր սպասում, որ կարդինալները կարող են նյոտամբել իշխանիկ եկեղեցու բարքերը։ Պրելատները համարձակ հանդես եկան հոգևորականության չարաշահումների, մարդկային խղճի վրա պապերի ունեցած բացարձակ իշխանապետության դեմ, քահանայապետերին մեղադրում էին քրիստոնեության հիմնական դոգմաները կամայականորեն մեկնաբանելու, ավետարանի հինավուրց ավանդույթները խախտելու մեջ։ Նրանք հարձակվում էին Հռոմի հոգևորականության տգիտության ու փչացածության, ինդուլգենցիաների վաճառքի, պապի հիսուն հազար մարդուց կազմված արքունական հաստիքի աներևակայելի ուռճացածության վրա, այն բանի վրա, որ պրելատներն իրենց համար ջահել միանձնուհիների հարեմներ են ստեղծում, որ պապերը զազրելի սովորություն են դարձրել իրենց պալատներում իբրև մանկլավիկներ սիրունիկ տղաներ պահել և այլն, և այլն։

Զեկուցման հրապարակումը Պողոս III-ին կաւ ստության հասցրեց։

Նա կարդինալների գլխին վիրավորանքներ ու սպառնալիքներ տեղաց և հրամայեց հանձնաժողովի նիստերն անմիջապես դադարեցնել։

Այդ սխալի համար նա հատուցեց։ Ռեֆորմատորները, տեսնելով պապի ուխտադրժությունը, հրաժարվեցին մասնակցել եկեղեցաժողովին։

Նորին սրբազնությունն այնուամենայնիվ որոշեց եկեղեցաժողովը դումարել։ Եկեղեցաժողովի դումարման վայր ընտրվեց Մանտուանը, բայց բացումը 1534 թվականի հոկտեմբերի 16-ից փոխադրվեց 1535 թվականի մայիսի 23-ր։

Այդ ժամանակամիջոցում Եվրոպայում ի դեմս Կալվինի հանդես եկավ մի նոր ռեֆորմատոր։ Հռոմեականթոլիկական եկեղեցին, բացի Լյութերից, ձեռք բերեց ևս մի ահեղ թշնամի։

Երբ վրա հասավ եկեղեցաժողովի օրը, Մանտուանի դուքսը, Ֆրանսիսկ I-ի դրդմամբ, պապին հայտնեց, թե թույլ չի տալիս եկեղեցաժողով բացել իր քաղաքում։ Ոչ մի հորդորանք չաղդեց, և Պողոս III-ն ըստիպված եղավ եկեղեցաժողովի բացումը փոխադրել 1538 թվականի մայիսի 31-ը, այս անգամ՝ Վիչենցայում։

Պողոս III-ի ձախորդություններն հաջորդում էին մեկը մյուսին։ Անգլիայի թագավորը, միանալով դերմանական լյութերականների որոշմանը, իր հպատակներին արգելեց մասնակցել եկեղեցաժողովին։ Եվ Պողոս III-ը հարկադրված էր եկեղեցաժողովը հետաձգել անորոշ ժամանակով։ Այդ բոլոր հարվածները կջլատեին հոգեպես ընկճված պապի եռանդը, եթե տեղի չունենար մի իրադարձություն, որի շնորհիվ նորը հայրն սկսեց անվախ նայել հռոմեականթոլիկական եկեղեցու ապագային։

Տխրահիշատակ 1534 թվականին Իգնատիոս Լոյոլան հիմնադրեց մի ընկերություն, որը հետագայում այնքան ահեղ ուժ ձեռք բերեց և մարդկությանն այնքան արհավիրքներ պատճառեց հանուն այն աստծո, որի անունը կրում էր։

## ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իգնատիոս Լոյոլայի հետ Պողոս III-ի ունեցած գաղտնի խորհրդակցությունից հետո հրավիրվեց Տրիդենտի եկեղեցաժողովը։ Այդ ժամանակ ճիզվիտները, տարածվելով ամբողջ Եվրոպայով մեկ, հող էին

նախապատրաստում պապի կողմնակիցների ուժեղ կուսակցություն ստեղծելու համար։

Որքան էլ ճարպիկ լինեին նոր միաբանության անդամները, նրանք գեռևս չունեին այն ահեղ զենքը, որ երևան եկավ հետագայում, և նրանց բոլոր ջանքերը խորտակվում էին, բախվելով բողոքականների տոկունությանն ու կաթոլիկների անտարբերությանը։

Նշանակված օրը եկեղեցաժողովի բացմանը ոչ ոք չներկայացավ։ Մեկ ամսվա ընթացքում պապի կոչին արձագանքել էին միայն չորս եպիսկոպոս, բայց նրանք, իհարկե, չէին կարող ներկայացնել տիեզերական հոգևորականությունը։

Այդ անհաջողությունը Պողոս III-ին չվհատեցրեց։ Նա շարունակում էր ներազդել իր գործին նվիրված պրելատների վրա և դրա շնորհիվ կարողացավ Տրիդենտ հրավիրել չորս մետրոպոլիտ, մեկ կարդինալ, վեց եպիսկոպոս և զանազան միաբանությունների հինգ գեներալ։

Դա քիչ էր, բայց բանն որ ժամանած եկեղեցականները կուրորեն նվիրված էին հռոմեական կուրիային, պապը պահը պատեհ համարեց և եկեղեցաժողովը բացված հայտարարեց, նրա վարումը հանձնարարելով իր լեգատներին, որոնց ավելց մի քանի ճիզվիտ օդնականներ։

Առաջին իսկ նիստում մի նուրբ հարց ծագեց. հարկավոր էր որոշել, թե ինչպես պետք է կատարել քվեարկությունը. ըստ երկրների՞, թե անվանական կարգով։ Բավականաչափ պարզ չէր նաև եկեղեցաժողովի օրակարգը։

Եկեղեցաժողովը, հրահանգներ ստանալու համար, պատվիրակներ ուղարկեց սուրբ հոր մոտ, որ մնացել էր Հռոմում։ Երբ պատվիրակները Վատիկան հասան, պապը խորհրդակցում էր Եզովպիայի թագավորի դեսպանի հետ։ Այդ թագավորը, կաթոլիկություն ընդունելով, պապին խնդրում էր միսիոներներ ուղարկել։

Լսելով դեսպանին, պապը երջանկությունից փայլում էր։ Հնարավորություն ստանալ մոլորյալ հոգիներն աղատելու սատանայի իշխանությունից և նրանց հանձնելու ողորմած աստծուն— ի՞նչ կարող է ավելի հաճելի լինել Քրիստոսի տեղապահի համար։ Պողոսը մտովին յանխավայելում էր այդ գործողությունից սպասվելիք բոլոր օգուտները։ Նրան քիչ էին զբաղեցնում Հիսուսն ու սուրբ աղավնին, Լյուցիֆերն էլ իր սատանաների ամբողջ ոհմակով նրան չէր մտահոգում։ Բայց թագավորի խնդրանքը վիթխարի շահույթ էր խոստանում, էլ ինչպես չուրախանալ։

Հետագա բարիքների ակնկալումով սուրբ հայրը տեղնուտեղը թայֆա

բացրած դնով վաճառեց հին ոսկորների մի բավական պատկառելի կոմպլեկտ, դրանք ներկայացնելով որպես մի հռչակավոր սրբի մասունքներ (շատ հավանական է, որ ոսկորները բերվել էին մոտակա սպանդանոցից)։ Այնուհետև նա դեսպանին խոսաացավ կատարել թագավորի խնդրանքը և մի քանի ճիզվիտներ ուղարկել ժողովրդին և սուրբ արքունիքին օգնելու համար։

Հաճելի բանակցություններն ավարտելուց հետո պապն ընդունեց Նիդեյսաժողովի պատվիրակներին։ Պատասխանելով նրանց հարցին, նա ցանկություն հայտնեց, որ քվեարկությունը կատարվի անվանական կարգով։ Պողոս III-ը, իհարկե, հասկանում էր, որ ավելի հեշտ կլինի Նիդեյսաժողովի մասնակիցներին մշակել մեկիկ-մեկիկ։ Բացի դրանից, պապը պահանջեց բոլոր հարցերը նախապես քննարկել կոնգրեգացիայի փակ նիստերում և նոր միայն ներկայացնել բաց նիստերին։ Պապը շատ լավ էր հիշում իր գահակալության սկզբում կարդինալների հանձնաժողովի կազմած զեկուցումը և չէր ուզում երկրորդ անգամ ռիսկի դիմել։

Նա կտրականապես արգելեց բարձրացնել պապական անսխալականության վտանգավոր հարցը, որևէ որոշում ընդունել սահմանադրությունը վերափոխելու, հոգևորականության բարքերի ու սովորույթների մասին, առանց նախապես իրեն հանգամանորեն տեղեկացնելու։

Բայց դրա փոխարեն Պողոս III-ը եկեղեցաժողովին կատարյալ ազատություն տվեց ուսումնական հարցեր քննարկելու գործում, որոնք իրեն քիչ էին անհանգստացնում։ Նա բազմիցս ասել էր, որ եթե ռեֆորմատորները, անաբապտիստները, լյութերականները և մյուս հերձվածողները համաձայնվեին իրեն եկեղեցապետ ճանաչել, նրանց կատարյալ ազատություն կտար քարոզելու ինչ նախապաշարում էլ որ կամենային։ Նա, անշուշտ, բացարձակ սրիկա էր, բայց բնավ ոչ հիմար մարդ։

Պողոս III-ը, այդ ամենից բացի, եկեղեցաժողովի անդամներին դիմեց մի ուղերձով, որի մեջ նրանց համառորեն համոզում էր եկեղեցաժողովի ժամանակ արժանավայել կյանք վարել և բաժանվել իրենց հետ Տրիդենտ բերած սիրուհիներից։ «Ծայրահեղ դեպքում,— գրում էր պապը,— նկատի ունենալով մարդուն հատուկ թուլությունները, մենք ձեզ թույլ ենք տալիս օգտվել ձեր ֆավորիտների ծառայություններից»։

Ինչպես տեսնում եք, եկեղեցական բարոյականությանը միշտ կարելի է հարմարվել։

Մի քանի օր հետո Պողոս III-ը եկեղեցաժողովին հղեց մի ուղերձ ևս, որով խորհուրդ էր տալիս ըստ հնարավորին խորհրդակցությունները

ձգձգել։ Նա հույս ուներ, թե ուր որ է տեղի կունենա եկեղեցու համար նպաստավոր ինչ-որ իրադարձություն։ Եվ իսկապես, Լյութերի մահվան հանկարծակի լուրն ապացուցեց պապի կանխատեսությունը։

Այդ զուգադիպությունը տարօրինակ էր թվում մանավանդ այն պատճառով, որ ռեֆորմատորի առողջական վիճակը արագ վախճան չէր սպառնում։ Բողոքականները ճիվիտներին մեղադրեցին նրան թունավորելու մեջ, և քանի որ Լյութերի ուժերը ջլատող պատճառները անում էին անհայտ, մեղադրանքը թվում էր ճշմարտանման։

Լոյոլայի աշակերտները, իրենց հերթին, սկսեցին պապության մոլի հակառակորդի մասին անհեթեթ լուրեր տարածել։ Նույնիսկ ասում էին, թե նա կախվել է, թե նրան խեղդել է դևը, թե թաղման երկրորդ օրը գերեզմանի շուրջը ծծմբի ու խեժի հոտ է տարածվել և այնտեղից մի սև ագռավ է դուրս թռել։ Նրա ամբողջ ուսմունքը, կյանքի իրադարձությունները անմիտ հերյուրանքների առարկա դարձան։ Պարսավագրեր երևացին, որոնց մեջ ասվում էր, թե Լյութերը դևի սրդի է եղել, թե երկրի վրա անցկացրած անխռով կյանքի հիսուն տարիներից հետո վաճառել է իր հոգին, թե նա ժխտում էր աստծո գոյությունը և հոգու անմահությունը։

Պապը ոգի առավ և որոշեց Ռեֆորմացիային մահացու հարված հասցնել։ Նա անմիջապես բանակցություններ սկսեց Կառլոս V-ի հետ, նրան համոզելով դուրս գալ բողոքականների դեմ։ Վերջիվերջո երկու բռնակալները համաձայնության եկան. պապը պարտավորվեց կայսրին վճարել քսան հազար ոսկե էկյու և իր հաշվին հանդերձավորել տասներկու հազար հետևակային ու վեց հարյուր հածելազորային։ Կառլոս V-ը խոստացավ ուղարկել իր բանակը, որը պապական զորքերին պիտի օգներ հետապնդելու և ոչնչացնելու հռոմեական եկեղեցու թշնամիներին։

Դաշնակիցներն անմիջապես գործի անցան։ Պողոս III-ը մի կոնսակ հրապարակեց, կաթոլիկներին կոչ անելով հրի ու սրի մատնել բողոքականների քաղաքները, գյուղերը և անգամ գյուղակները։ Սակայն այդ արյունոտ մտադրությանը վիճակված չէր իրականանալ։ Սաքսոնիայի սահմանների մոտ տեղի ունեցած առաջին իսկ ընդհարման ժամանակ պապի և կայսեր զինվորները փախուստի դիմեցին։

Սուրբ Հայրը շտապեց իր գործերը եւս կանչել Թողնելով, որ կայսրն անձամբ դուրս գա այն վիճակից որի մեջ ինքը նրան գցել էր։ Կայսրը գազազեց, տեսնելով, որ սուրբ Հայրն իրեն նորից է խաբել։ Նա է՛լ ավելի զայրացավ, երբ իմացավ, որ Պողոսը, օգտվելով այն

քանիցե, որ կայսրը հավատում է Գերմանիայում, պատրաստվում է Ակեղեցաժողովի նիստերը Տրիդենտից փոխադրել պապական մարզի քաղաքներից մեկը։ Ռեֆորմատորների դեմ արշավանքի ելնելով, Կառլոս V-ը այդ նույն ժամանակ ցանկանում էր թեկուզ առերևույթ համաձայնություն պահպանել բողոքական իշխանների հետ, հասկանալով, որ ռեֆորմատորների պարտության դեպքում իրեն կմեղադրեն օրինականությունը խախտելու մեջ, որի հետևանքով եկեղեցաժողովի անդամները կդանվեն պապի իշխանության տակ։ Նա կտրականապես պահանջեց, որ Պողոս III-ը հրաժարվի Ակեղեցաժողովը Բոլոնիա տեղափոխելու մտադրությունից։ Նորին սրբազնությունը դա չլսելու տվեց։ Այնժամ կայսրը իր ներկայացուցիչներին ուղարկեց Տրիդենտ, նրանց հրամայելով գետը նետել եկեղեցաժողովում քահանայապետի անունից հանդես եկող կարդինալին, եթե այնտեղ համարձակվեն եկեղեցաժողովը տեղափոխել կամ փակել։

Սպառնալիքն ազդեց։ Բայց պապը ձենքը ցած չդրեց, այլ պարզապես տակտիկան փոխեց։ Նա շատ քաղաքներում անկարգություններ հրահրեց, իսկ հետո հայտարարեց, թե խորհրդակցությունը մոտենում է իր ավարտին, և եկեղեցաժողովի մասնակիցներին շտապեցրեց քննարկումները վերջացնել։

Պապի ոխտադրժությունից զայրացած, Կառլոս V-ը որոշեց վրեժխնդիր լինել և Պիեր-Լուիջի Ֆարնեզեի դեմ դավադրություն կազմակերպեց։

Սիրելի որդու մահվան լուրն իմանալով, Պողոս III-ը մոլեգնեց, խենթացած պապը մի քանի ժամ շարունակ գոռգոռում էր, հայհոյում, լուտանքներ տեղում աստծո, աստվածամոր, առաքյալների ու բոլոր սրբերի վրա։ Ուժասպառվելով, նա ասաց, թե կդիմի անդրշխարհյան աշխարհի ուժերին, միայն թե կայսրին ոչնչացնի։ Իր աշխատանոցում փակվելով, նա շատ գիշերներ լուսացրեց քիմիկոսների ու մոգերի հետ, ուսումնասիրելով աստղերի շարժումը և լսելով նրանց համայխոսքերը։ Բայց այդ ամենը Կառլոս V-ին նույնիսկ մի աննշան ծակծկոց չպատճառեց։

Համոզվելով, որ սատանան նրան պաշտպանելու ցանկություն չի արտահայտում, սուրբ հայրը որոշեց Կառլոս V-ի հետ հաշիվը անձամբ մաքրել։ Նա նրան մենամարտի հրավիրեց առաջարկելով կռվել ձիեր հեծած կամ ոտքի վրա, սրերով կամ սուսերներով, ձենքի ընտրությունը թողնելով թշնամուն։ Բայց կայսրը մերժեց խելացնոր քահանայապետի հրավերը։

Երբ կորստյան կսկիծն սկսեց փարատվել, սուրբ հայրը իր ամբողջ սերը փոխանցեց իր թոռ Օկտավիո Ֆարնեզեին։ Բայց այսուհդ էլ նա ծանր հիասթափություն ապրեց։ Օկտավիոյին նվիրելով Պարմի դքսությունը, նա նրան նշանակեց սպապական զորքերի հրամանատար, որոնք այդ ժամանակ կռվում էին Ֆերդինանդ Գոնզագոյի դեմ, որը կառլոս V-ի հետ դավթել էր Պյաչենցան։ Համոզվելով, որ Օկտավիոն ամենևին էլ պիտանի զորավար չէ, և վախենալով, որ կայսերական զորքերը կարող են իր թոռից խլել ժառանգությունը, սուրբ հայրն Օկտավիոյին ետ կանչեց Հռոմ և իր զորքերի գլուխ կարգեց Կամիլա Օրսինիին՝ պապական կուրիայի զորքերի գոնֆոլերին։

Օկտավիոն, սակայն, խիստ վիրավորվեց, թևև պապը նրան ամեն տեսակ պատիվներ էր խոստացել։ Իրեն Հռոմ ետ կանչելը նա գնահատեց որպես շնորհազրկություն և բանակցություններ վարելով Ֆերդինանդ Գոնզագոյի հետ, դուրս եկավ պապի դեմ։

Երբ Օկտավիոյի դավաճանությունը հայտնի դարձավ, պապը կաթվածահար եղավ։ Մեկ ժամ անց ուշքը տեղը եկավ, բայց վրա հասավ երկրորդ հարվածը։ Հասկանալով, որ հասել է իր վերջին ժամը, սուրբ հայրը, սակայն, հոգին ավանդելուց առաջ ապացուցեց իր անսահման սերը թոռան նկատմամբ և մի կոնդակ ստորագրեց, որով նրան էր թողնում Պարմի թագը։

## ԵՐԿՈՒՍԻՆ ՄԻ ՍԻՐՈՒՀԻ

Իր որդիներին ու թոռներին մտցնելով սուրբ կոլեգիայի մեջ, Պողոս III-ը զեկավարվում էր ոչ միայն իր կողմնակիցների թիվը մեծացնելու ցանկությամբ։ Պապի փառասիրական նկրտումները շատ ավելի հեռուն էին գնում։ Նա փափագում էր Ֆարնեզեների դինաստիայի համար ապահովել առաքելական աթոռը։

Նրա ենթադրանքներն իրականացան միայն մասամբ։ Երբ կարդինալները կոնկլավի հավաքվեցին, անմիջապես երևան եկավ երեք խմբավորում՝ կայսեր, Ֆրանսիայի ու Ֆարնեզեների գերդաստանի կողմնակիցները։ Վերջին խմբավորումը գլխավորում էր կարդինալ Այնքսանդրը։ Պրելատը գուշակել էր, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ իր ազգականները ձայների մեծամասնությունը չեն ստանա, քանզի սուրբ կոլեգիան շատ լավ

գիտեր կայսեր անբարյացակամությունը նրա գերդաստանի նկատմամբ և երբեք կայսրին չէր ընդդիմանար։

Այնժամ Ալեքսանդրը մի ճարպիկ քայլ կատարեց. սկզբում կարդինալ դնել Մոնտեի թեկնածությունը, որի վրա ուժեղ ազդեցություն ուներ։

Թեկնածուներից մեկին մերժեցին, կասկածելով լյութերականներին համակրելու մեջ։ Մյուսին նույնպես մերժեցին, բայց ավելի ծանրակշիռ պատճառներով. մարդը ո՛չ ֆավորիտ ուներ, ո՛չ էլ սիրուհիներ։ Նա աչքի էր ընկնում առաքինությամբ (համենայն դեպս այդպիսի անխրախուսական համբավ ուներ), և ոչ մի ձայն չստացավ։

Կարդինալ դնել Մոնտեին ընտրեցին ձայների մեծամասնությամբ։ Հարկ չկար վախենալու, թե նրա խելքին կփչեր զրաղվել եկեղեցական բարքերի բարեփոխությամբ։ Նա առհասարակ լուրջ գործերով զբաղվելու հակում չուներ, մտածում էր միայն հաճույքների մասին, մնացած ամեն ինչի նկատմամբ խորապես անտարբեր էր։

Այսպիսով, Պողոս III-ի սիրելի ֆավորիտներից մեկն իր վրա առավ Հուլիոս III անունը։ Հռոմում ծնված, արհեստավորական աղքատ ընտանիքի այդ զավակը քայլ առ քայլ վեր էր բարձրացել բարձր հիերարխիայի աստիճաններով և իր կարիերայի համար, ինչպես ԲԷյլն է ասում, պարտական էր այն բանին, որ «երիտասարդ ժամանակ շատ գեղեցիկ էր. դժվար չէ կռահել, թե Հռոմի արքունիքում նա ինչ ճանապարհով էր բարձր աստիճանների հասել»։

Նա նույնքան ցինիկ էր, որքան և անառակ, չէր թաքցնում իր հակումը իրեն սպասարկող պատանիների նկատմամբ. շատ անգամ էին նրան բռնել հանցանքի վայրում, թեև դա բոլորովին դադտնի չէր անում, որովհետև շատ լավ գիտեր, որ հենց այդպիսի բարոյական հատկություններն են իրեն մոտեցնում նպատակին։ Եվ չէր սխալվում։

ԲԷյլը հավաքել է Հուլիոս III-ի շատ հետաքրքրական նամակները՝ հասցեագրված մի հռոմեացի կուրտիզանուհու, սուրբ հոր ու նաև մի կարդինալի սիրուհուն։ Երկու սիրեկանները երբեք ախոյաններ չեն եղել, այլ, ընդհակառակը, միշտ էլ շատ մտերմիկ բարեկամներ էին։ Նրանք միասին դաստիարակում էին կուրտիզանուհու երեխաներին, ինչպես և հետագայում միասին նրանց հրավիրում էին իրենց օրդիանեերին։ Այդ նայակ դաշինքի ներսում ոչ մի տարաձայնություն չէր մոայլում նրանց սրտառուչ բարեկամությունը։

Հուլիոս III-ի նամակները, որ հրապարակել է ԲԷյլը, ցուցահանում են այնպիսի անառակություն, որի համեմատությամբ այն ամենը,

*ինչ վերը պատմել ենք, միանգամայն անմեղ բան է։ Մենք բնավ ի վիճակի չենք դրանք այստեղ շարադրել։ Եվ ի՞նչ կարիք կա։ Այն ամենը, ինչ արդեն ասել ենք, պարզ պատկերացում է տալիս սուրբ հայր Հուլիոս III-ի բարոյական նկարագրի մասին։*

## ՎԱՏԻԿԱՆԻ ԽՐԱԽՃԱՆՔՆԵՐԸ

*Ցանկանալով շահել Կառլոս V-ի սիրտը, Հուլիոսը խոստացավ այս անգամ Տրիենտում բացել եկեղեցաժողովը, որն իր նախորդը փակել էր ժամանակից շուտ, մինչև վերջ չհասցնելով։ Պապը գիտեր, թե միապետի համար որքան կարևոր էր բողոքականների ու կաթոլիկների միջև հավասարակշռություն պահպանել։*

*Այդ լուրով բավարարված, կայսրը մի դեսպան ուղարկեց նոր պապին շնորհավորելու և եկեղեցաժողովի բացման ժամանակը ճշտելու համար։ Հուլիոս III-ը դեսպանին խանդավառությամբ ընդունեց, բայց երբ մեջտեղ եկավ եկեղեցաժողովը բացելու հարցը, լեզուն փաթ ընկավ և սկսեց անկասկած փնթփնթալ։ Խոստումը շատ հապճեպ էր տրված, համենայն դեպս նա մտադիր չէր դա այդքան շուտ կատարել։ Դեսպանի հետ ունեցած զրույցը նրան վհատություն պատճառեց, մինչդեռ այդ պատվարժան մարդը այնքա՞ն էր սիրում հանգիստ ու անվրդով ապրել։*

*Նա վախվխելով փորձեց առարկել, պատճառ բռնելով, թե հարկավոր է սառանալ Ֆրանսիայի արքունիքի ու Իտալիայի գլխավոր մարզերի միապետների համաձայնությունը, և նենգ քմծիծաղով ավելացրեց. «Ընդամենը մի քանի օր է, որ մենք առաքելական գահ ենք բարձրացել։ Համաձայնվեցեք, որ նախ և առաջ հարկավոր է նշել այդ իրադարձությունը,՝ իրախճանքներով զբաղվել, և հետո միայն անցնել գործերին...»։*

*Ունկնդրությունից հետո դեսպանը կայսրին հետևյալը գրեց պապի հետ զրույցից ստացած իր տպավորության մասին. «... Նա պատրաստ է դիմելու ամեն տեսակ զիջումների, միայն թե ոչինչ չխանգարի Վատիկանում վարած իր անառակ ու անհոգ կյանքին»։*

*«Հուլիոս III-ի արքունիքում,— պատմում է վստահության արժանի մի տարեգիր,— օր ու գիշեր անց էին կացնում խրախճանք-*

ների ու շվայտության մեջ։ Շատ հաճախ խրախճանքի ժամանակ պապը, որ շրջապատված էր լինում կարդինալներով ու կուրտիզանուհիներով, հանում էր զգեստը, հյուրերին առաջարկելով հետևել իր օրինակին։ Ապա գլխին դիմակահանդեսային սրածայր գդակ դնելով, այդ զվարճահնար շուրջպարի գլուխն անցած, սկսում էր վազվզել վատիկանի պարահեղներում, շուրջպարելով ու անպարկեշտ երգեր երգելով։

Այդ նույն հեղինակը բերում է պապի հետևյալ դիտողությունը, որ նա արել էր մի ամենօրյա գիշերային պարի ժամանակ. «Լսեցեք,— դիմեց նա իր կարդինալներին,— ինչպե՞ս կվարվեր ժողովուրդը, եթե մենք ցիրկով մոմերը ձեռքներիս թափորի դուրս դայինք, հիմնների փոխարեն անպարկեշտ խոսքեր ու զավեշտախոսություններ երգելով»։

«Նա մեզ կբարկոծեր»,— առանց հապաղելու պատասխանեց կարդինալներից մեկը։

«Ուր այդպես է,— ասաց պապը,— արժանի պատժից ազատված լինելու համար մենք պարտական ենք մեր զգեստին»։

Տարիգիրը նշում է, թե պապի այդ վերջին խոսքերին ոչ ոք չառարկեց։ «Ոչ մի բան,— այնուհետև գրում է նա,— ճիշտ պատկերացում չի տա այն ամենի մասին, ինչ կատարվում էր Հուլիոս III-ի արքունիքում։ Նորին սրբազնությունը գրեթե միշտ հարբած էր և իր գիշերների մեծ մասը կուրտիզանուհիների, պատանիների ու կարդինալների հետ անց էր կացնում օրգիաներում»։

Պետք է կարծել, որ սուրբ կոլեգիան էլ հիացած էր իր կատարած ընտրությամբ։

## ԿԱՊԻԿՆԵՐԻ ՊԱՀԱԿԻ ՈՒ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ՊԱՊԻ ՄԱՍԻՆ

Այն ժամանակ, երբ Հուլիոս III-ը եպիսկոպոս էր Բոլոնիայում, իր պալատում տեղ էր տվել մի պատանու, որին կատակով Իննովիկենտիոս (որ կնշանակե անմեղ) էր անվանում։ Պատանին իր պապի ֆավորիտն էր ու միաժամանակ կապիկների պահակն էր, որոնց հետ ընդհանուր շատ բան ուներ։ Իր ջանասիրությամբ և սիրանվեր կապվածությամբ պատանին նվաճեց պապի սիրտը և շուտով իրավունք ստացավ պալատում կարգադրություններ անել, ինչպես իր տանը։ Չարաճճի պատանին երբեմն իրեն ավելորդություններ էր թույլ տալիս, բայց երբ

կապիկներն իր դրդումով խմբովին թափվում էին դել Մոնտեի պատվելի նախնիների վրա, ուրախությունից շունչը կտրվում էր։

Ըստ որոշ տարեգիրների, Իննովկենտիոսը (նրան նաև Բերտուչինո, այսինքն փոքրիկ կապիկ էին անվանում) ապագա պապի ապօրինի որդին էր։

Հուլիոսի դահ բարձրանալուց հետո էլ այդ ֆավորիտը շարունակում էր ապրել Բոլոնիայում։ Հռոմ տեղափոխվելու վերաբերյալ պապի բոլոր խնդրանքներին նա համառորեն պատասխանում էր. «Կգամ, երբ ինձ կարդինալ նշանակեք։ Կարմիր թասակ ուղարկեցեք, ապա թե ոչ մնում եմ Բոլոնիայում»։

Սկզբում Հուլիոս III-ը չէր համարձակվում հարցը քննարկման դնել, վախենալով սուրբ կոլեգիայի դժգոհությունից։ Նա սպասում էր, մինչև որ իր վիճակն ամրանա։ Բայց մի անդամ, բուռն զիշերից հետո, չերմ զգացմունքներով համակված, նա որոշեց ստուգել, թե կարդինալներն. ինչպես կվերաբերեն այդ գաղափարին։ Արևն արդեն դեպի մայրամուտ էր թեքվում, նախորդ օրը երեկոյան սկսված խնջույքը, ինչպես միշտ, շարունակվում էր։ Պապը թունդ հարբած էր, ասենք հյուրերն էլ նրանից ավելի զգաստ չէին։ Հարբած եկեղեցապետը կարդինալներին խնդրեց չցրվել, մրթմրթալով, թե մտադիր է խորհրդակցություն անցկացնել։

Ենթադրելով, թե պապի այդ դործառիրության պատճառը նրա հարբած լինելն է, զարմացած կարդինալները փորձում էին նրան տարհամոզել, հիրավի, ժամը հարմար չէր խորհրդակցության համար։ Բայց իր սիրեցյալին կարոտած Հուլիոս III-ը անդրդվելի մնաց։ Տեսնելով, որ անհնար է պապին համոզել, կարդինալները նրա հետևից օրորվելով շարժվեցին դեպի նիստերի դահլիճը։

Բազմելով գահին, պատվական կոլեգաներով շրջապատված Բերտուչինոյի հովանավորը, առանց հապաղելու բացատրեց այդքան անհետաձգելի նիստի պատճառը։ «Ես խնդրում եմ,— ասաց նա,— իմ Բերտուչինոյին պարգևել կարդինալության թասակ և եպիսկոպոսական ամբիոն»։

Պատվարժան ժողովի շարքերով զայրույթի մի շշուկ անցավ։ Սակայն դինին ամրապնդել էր պապի ոգին, կարևոր չէ, որ լեզուն փաթի էր ընկնում, և նա չէր շփոթվում։ Նա սկսեց չերմորեն գովաբանել իր սիրեցյալի բարեմասնությունները և բուռն զգացումներ պատճառելու նրա զարմանալի ընդունակությունները, որոնց մասին չենք համարձակվում այստեղ խոսել։ Որպես վերջին փաստարկ պապը հաղորդեց, թե

դեռ մանկության տարիներին աստղագուշակները Բերտուչինոյին հարցաուրյուն և մեծագույն պատիվներ են գուշակել և, անշուշտ, գտնելով ըստ բախտացույցի, ճակատագիրը նրա համար նախատեսել է սուրբ Պետրոսի տեղապահի գահը։

Պապի հայտարարությունը կատաղի բողոք առաջացրեց։ Որոշ կարդինալներ, մոռանալով, որ ընդամենը մի ժամ առաջ տրված էին որովայնամոլության ու շնության, առաքինի զայրույթ զգացին։

Նրանցից մեկը, պարկեշտ զգացմունքներով համակված, հայտարարեց, թե կարդինալները խայտառակություն կհամարեն իրենց շարքերում տեսնել կապիկների պահակապետին։ Եվ մի՞թե նորին սրբազնությունն իսկապես կարծում է, թե նրա սիրեցյալի հիշյալ արատները վերջինիս իրավունք են տալիս կարդինալի աստիճան ստանալու։

Բերտուչինոյի դեմ ուղղված այդ հարձակումը պապին զգաստացրեց, և նա, ասես իսկական տրիբուն, պոռթկաց մի մերկացուցիչ ճառով.

«Երդվում եմ սուրբ կույսի արգանդով, որ Բերտուչինոն կարդինալ կդառնա,— որոտաձայն բացականչեց պապը։— Ո՞ր արատներն են շվարեցնում ձեզ, որ դուք հրաժարվում եք նրան սուրբ կոլեգիայի մեջ ընդունել, երբ ինքներդ քայքայված եք խայտառակ հիվանդություններից, ընկղմվել եք հրեշավոր այլասերվածության մեջ։

Թող նա քար նետի նրա վրա, ով շնություն չի արել։ Լռո՞ւմ եք։ Ուրեմն ընդունում եք, որ մենք բոլորս մարդկության խայտառակությունն ենք։ Սկսենք ինձանից... Իմ ո՞ր բարեմասնությունները, ո՞ր աչքի ընկնող գիտելիքները ձեզ ստիպեցին ինձ այդպես ընտրել։ Կամ իմ սանձարձակությունը ձեզ հայտնի՞ չէր։ Ես բազում անգամ ավելի փչացած եմ իմ սիրեցյալից, կապիկների պահակապետից, որին ես ինքս եմ փչացրել։ Նա շատ ավելի մաքուր է, քան ես, քրիստոնյանեղի բարձրադուն հայրս, որին դուք եք ընտրել։ Ուրեմն ինչպե՞ս կարող եք նրան մերժել կարդինալական թասակը և եպիսկոպոսական ամբիոնը»։

Առարկել, իհարկե, դժվար է, երբ փաստարկներն այսքան անվիճելի են։ Շշմած կարդինալները կախարդվածի պես պապանձվեցին և Բերտուչինոյին միաձայն կարդինալ ընտրեցին։ Հենց այդ նույն օրը Հուլիոս III-ը Բոլոնիա իր սիրեցյալին ուղարկեց կարդինալական թասակը և առաքելական գանձարանից վերցրած տասներկու հազար էկյու։ Նորընտիր պրելատն անմիջապես ճանապարհ ընկավ։

Ավելորդ է նկարագրել քահանայապետի ուրախությունը, երբ սէ-

բասուն բարեկամին իր գիրկն առավ։ Վերջապես նրանք միասին են։ Պապը չքեղորեն տոնեց Բերտուչչինոյի նշանակումը. նրան հանձնեց Վատիկանի լավագույն շենքերից մեկը, որ գտնվում էր իր հարկաբաժնի կողքին, տվեց պապական կուրիայի առաջին մինիստրի պաշտոնը, հանձնարարելով զբաղվել եկեղեցու գործերի կառավարմամբ։ Բերտուչինոն արտոնություններ ու աստիճաններ էր բաշխում, տնօրինում եկեղեցու եկամուտները։ Իր ամբողջ ազատ ժամանակը նա անց էր կացնում պապի սենյակներում, փափուկ բարձերի վրա, շրջապատված չորքոտանի բարեկամներով, մինչդեռ կուրտիզանուհիները անուշահոտ բուրելիքներ էին այրում և նրան գինի մատուցում։

Մենք կարող էինք այս պատմությունն ավարտել բարի հեքիաթի խոսքերով. «Նվ սկսեցին ապրել հաշտ ու երջանիկ...», միայն թե երեխաներ չունեին։

## ԵՎԱՅԻ ԽՆՁՈՐՔ ԵՎ ՍԻՐԲ ՀՈՐ ՍԻՐԱՄԱՐԳԸ

Հաճույքներով տարված Հուլիոս III-ը քաղաքական գործերին հապշտապեպ էր խառնվում։ Նա առաքելական գահը ղեկավարեց 1550 թվի փետրվարի 8-ից մինչև 1555 թվի մարտի 23-ը և մեռավ աղեղորքից։

Նա ոչ պակաս որովայնամոլ ու հարբեցող էր, քան անառակ։

Ճաշերի ընտրությանը պապն արտակարգ նշանակություն էր տալիս։ Պատմաբանն այդ առթիվ մի բնութագրիչ անեկդոտ է պատմում. նորին սրբազնությունը բոլոր ճաշերից գերադասում էր խոզի ապրխոտած ազդրը և տապակած սիրամարգը։ Բայց բժիշկներն արգելել էին նրա սեղանին ամեն տեսակ ուտելիքներ մատուցել, քանի որ ավելորդություններն պապի առողջությունը քայքայել էին։ Մի անգամ Հուլիոս III-ը, իր սիրած ճաշերը չտեսնելով, կանչեց արքունի սեղանապետին ու հրամայեց անմիջապես սիրամարդ տապակել, ասլառնալով, թե նրան կախել կտա, եթե իր ցանկությունն անհապաղ չկատարվի։

Նրբ սեղանապետը հեռացավ, կարդինալ Իննովկենտիոսը, որը նրա կողքին էր գտնվում, մոլեգնած պապին հանդստացնելով, ասաց, թե կարիք չկա ամեն մի դատարկ բանի համար ղայրանալ։

«Ո՛չ, դա դատարկ բան չէ,— առարկեց պապը,— եթե ինքն աստ-

*ված դայրացել է խնձորի համար, ապա ինձ, որ նրա կուսակալն եմ, միանգամայն կպատշաճի զայրանալ սիրամարդի համար։ Մի՞թե կարելի է սիրամարդը համեմատել հասարակ խնձորի հետ»։*

## ՊՈՂՈՍ IV-Ը, ՀԻՋՎԻՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄԸ

*Մարցելոս II-ը, որն առաքելական գահի վրա փոխարինեց Հուլիոս III-ին, իր ընտրության հաջորդ օրը հոգևորականության բարքերը շտկելու հաստատակամություն ցուցաբերեց։ Նա հռոմեական կուրիայի սպասներին ու աստիճանավորներին հրամայեց արմատապես փոխել իրենց ապրելակերպը, զգուշացնելով, թե ոչ մի սկանդալ ու անառակություն չի հանդուրժի։ Օրինակ տալու համար նա կրճատեց Վատիկանի արքունականների հաստիքը, ֆավորիտներին վռնդեց, սահմանափակեց իր ճաշերի թիվը, ինչպես նաև ճաշի ժամանակ սեղանի շուրջը նստելու տևողությունը, կարգադրեց վաճառել ոսկե ու արծաթե սպասքը, որպեսզի մարի սուրբ աթոռի պարտքերը, և ընդհանրապես իրեն ցուցաբերեց որպես չափազանց առաքինի և համեստ մարդ։*

*Բնականաբար, նման արտասովոր պապը չէր կարող երկար մնալ։ Կարդինալները շտապեցին ուղղել կատարված սխալը։ Մարցելոսը մեռավ 1555 թվի ապրիլի 30-ին, իր ընտրությունից երեք շաբաթ հետո։ Հատուկ ձևով պատրաստված ըմպելիքը եկեղեցականներին օգնեց ազատվել այդ նեղիչ մարդուց։*

*Մարցելոսի թաղումից մի քանի օր հետո պապ ընտրվեց կարդինալ Ջան Պիետրո Կարաֆան, որն ընդունեց Պողոս IV անունը։*

*Նրա օրոք վերսկսվեցին հետապնդումները, մահապատիժները, խոշտանգումները։*

*Մի ժամանակ նրան Լևոն X-ը ուղարկել էր Իսպանիա, որտեղ նա արժանացել էր Ֆերդինանդ Թագավորի շնորհակալությանը, անխոնջ կերպով հալածելով հերետիկոսներին և դրանով իսկ նպաստելով բարեպաշտ միապետի եկամուտների բազմապատկմանը. ինչպես հայտնի է, ինկվիզիցիայի գոհերի ունեցվածքի մի մասը մտնում էր Թագավորի գանձարանը։ Պապ դառնալուց առաջ Կարաֆայի վերջին պաշտոնը Հռոմի մեծ ինկվիզիտորի պաշտոնն էր. ղեկավարելով հրեշավոր տրիբունալը, նա այն անվանում էր սուրբ աթոռի ղորեղ ջիղ։*

Հենց որ պահակալումի արարողությունն ավարտվեց, Պողոս IV-ը դարձնց, թե իր վրա դրված է ամբողջ կաթոլիկական աշխարհի մեծ ինկվիզիտորի առաքելությունը։ Նա ընդլայնեց ինկվիզիտորների իրավունքները, նրանց թույլ տվեց հանցագործությունների մասնակիցներին հայտնաբերելու համար դիմել խոշտանգումների և մի կոնդակ հրապարակեց, որով կարգադրվում էր պաժանադույն միջոցներ կիրառել ոչ միայն հերետիկոսների, այլև աղանդավորության մեջ կասկածվողների դեմ։ Նա հայտարարեց, թե իշխանները, թագավորները, կայսրերը, եպիսկոպոսները, արքեպիսկոպոսները և նույնիսկ կարդինալներն անողոքաբար խոշտանգումների այրման կենթարկվեն, եթե սուրբ ինկվիզիցիան նրանց մեղավոր ճանաչի։

Պապի նորամուծությունները փոթորկալի ղայրույթ հարուցեցին։

Միայն ճիզվիտներն էին փառաբանում սուրբ Հորը, որը նրանց վրա շնորհներ ու փող էր տեղում։ Ճիզվիտական կոլեջներ կառուցելու համար նա հսկայական գումարներ էր ծախսում, ճիզվիտներին Հռոմի շրջակայքում շքեղ վիլլաներ նվիրում։ Իր ամբողջ գահակալության ընթացքում նա այդ զաղրելի ընկերության նկատմամբ արտակարգ բարյացակամություն էր ցուցաբերում։

Պողոս IV-ը ոչ միայն դաժան էր, այլև, չնայած զառամյալ տարիքին, աչքի էր ընկնում իր խստությամբ, կոպտությամբ, սանձարձակությամբ։

Երբ ժամանել էր Անգլիայի դեսպանը, որին Մարիա Թյուդորն ուղարկել էր նորընտիր քահանայապետին շնորհավորելու և իր նվիրվածությունը հայտնելու, պապը հյուրից պահանջեց մի ստորացուցիչ արարողություն կատարել, նրան ստիպելով իր կոշիկը համբուրելուց հետո ծնկի գալ և պապական գահի առաջ խոստովանել Մեծ Բրիտանիայի մեղքերը։ Ապա իմանալով, որ Անգլիայի թագուհին իրեն կոչում է նաև Իռլանդիայի թագուհի, պապը փրփուրը բերնին սկսեց դոռգոռալ, թե թագուհին լկտի է, քանի որ համարձակվել է գահին սխրանալ առանց իր օրհնության։ Եվ մինչ շշմած դեսպանը կկարողանար որևէ բան ասել, պապը նրան վռնդեց Վատիկանից։

Ընտելանալով այն մտքին, թե կրոնը հիմնականում հարստանալու միջոց է, քահանայապետերը երբեմն այնքան էին պատշաճության սահմանն անցնում, որ դա խոստովանում էին հրապարակայնորեն։

Երբ Անգլիայի թուլակամ թագուհին դեսպաններին հրամայեց ոչ մի ստորացման առաջ կանգ չառնելով ճանաչել տալ Իռլանդիայի միացումը, սուրբ Հայրը չամաչեց մի կոնդակ հրապարակել, որով

թագավորական տիտղոսը վաճառում էր երկու հարյուր հազար էկյու գումարով...

Պապի կամայականության ու դաժանության պատճառով նրա հակառակորդների թիվը օրեցօր ավելանում էր։ Նրա ոխակալությունը հրեշավոր էր. բոլոր այն քաղաքացիներին, որոնց նա կասկածում էր իր նկատմամբ թշնամական վերաբերմունք ունենալու մեջ, բանտ և ինկվիզիցիա էր սպառնում։ Ինկվիզիցիայի տրիբունալի արարողակարգը բարդ չէր, և դատավորները գործում էին առանց քաշքշուկի։ Երեսպաշտական հարցաքննությունից հետո (քանզի այդ սարսափելի տրիբունալները ստեղծված էին արդեն նախորոշված սպանություններին փոքր ինչ օրինականության տեսք հաղորդելու համար) մեղադրյալներին տեղնուտեղը զանազան խոշտանգումների էին ենթարկում և ուղարկում խարույկի վրա այրելու...

Ծիր նորին սրբազնությունը հոգին աստծուն բաշխեց, Հռոմի ժողովուրդն ապստամբեց այն քահանաների դեմ, որոնք Պողոս IV-ին ջանադրաբար օգնում էին կատարել իր ինկվիզիտորական պարտականությունները։

Բռնակալը մեռա՜վ։ Մա՛հ նրա ղինակիցներին։

Հռոմեացիները աղատեցին բանտարկյալներին, հրդեհեցին այն պալատը, որտեղ ինկվիզիտորներն իրենց ղոհերի հետ հաշիվ էին տեսնում։ Նրանք ոչ մեկի կյանքին չէին սպառնում, բռնություններ ու հանցանքներ չէին կատարում։ Հռոմի բնակիչները վառված ջահերով ցույց արին, ապա դոմինիկյան վանքի մոտ ջարդուխուրդ արին մեռած պապի արձաններն ու գերբակիր վահանները։ Նրանք նույնիսկ չկատարեցին Պողոս IV դիակը Հռոմի փողոցներով քարշ տալու և աղբանոց նետելու իրենց մտադրությունը։

— Ափսոս, այդ ավազակի աճյունն այդպիսի թաղման էր արժանի։

## ՊԻՈՍ IV-Ը

Ծրբ Հռոմում հուզումները հանդարտվեցին, կարդինալները ձեռնամուխ եղան նոր պապի ընտրությանը։ Կոնկլավը շատ տղմկալից էր և տևեց ավելի քան չորս ամիս։ Սուրբ կոլեգիան շատ չանք թափեց համաձայնության գալու համար։ Սովորականի պես առատուր էր տեղի

ունենում, խույրի համար պայքարող մրցակիցները զբաղվում էին ամենաամոթալի մեքենայություններով։ Վերջապես Պողոս IV-ի ազգականներ Կառլոս և Ալֆոնսո Կարաֆաների աջակցությամբ ձայների մեծամասնություն ստացավ Ջովաննի Մկրիչին, որը պապ հռչակվեց Պիոս IV-ի անունով։

Պիոս IV-ը կարգին պապին անհրաժեշտ բոլոր բարոյական հատկություններն ուներ. ալարկոտ էր, ագահ ու ժլատ, վրիժառու և արյունարբու, դաժան ու խարդախ։ Նրա գլխավոր մոլորությունը որովայնապաշտությունն էր։ Իր ուտելիքի վրա նա անասելի դումարներ էր ծախսում, զանազան երկրներից նրա համար ընտրագույն մրգեր ու գինիներ էին բերել տալիս։ Ինչպես շատ ուրիշ պապերի օրոք, հատուկ մատակարարներ նրա համար գեղեցիկ կանայք էին հայթայթում։ Ճիշտ է, ի տարբերություն իր նախորդների, Պիոս IV-ը պահանջում էր, որ իր զործակալները բռնությունների չդիմեն, այլ գործեն խաբեբայությամբ ու խարդախությամբ։ Իր պոհերին Պիոս IV-ը թանկարժեք քարեր, ոսկյա զարդեր էր նվիրում, իսկ հետո նրա կարգադրությամբ ծառաները խլում էին այդ նվերները։ Ժամանակագրությունը հայտնում է, որ պապի սիրային արկածները նրա վրա ոչ մի ծախս չէին նստում։

## ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԵՏԱԲԵՐ Է

*Մի անգամ կոնսիստորիայի նիստի գնալիս կարդինալներ Կառլոս Ալֆոնսո Կարաֆա եղբայրներին շրջապատեց պարեկախումբը։*

Պահակախմբի սպան, նրանց ձեռքերը կապելով, ասաց. «Նորին սրբազնության հրամանով»։ Կարդինալները սոսկալած էին ենթարկվել։ Նրանք իրենց ոչ մի բանում մեղավոր չէին զգում, քահանայապետի դեմ սարքված դավադրությանը չէին մասնակցել. ընդհակառակը, սուրբ Հայրը հենց նրանց էր պարտական պապական գահի համար և նրանք միշտ էլ նրա հավատարիմ կողմնակիցներն էին եղել։ Կարաֆաների տոհմին պատկանում էին անհաշվելի հարստություններ, վիթխարի դալվածքներ, պալատներ, պերճանքի առարկաներ, որոնց կարող էին նախանձել նույնիսկ թագավորները, ոչ ոք այնպիսի ձիեր, այնպիսի շնանոցներ, այնպիսի գեղեցիկ կանայք ու փափկասուն պատանիներ չուներ։

*Եղբայրներին, անշուշտ, նախանձում էին, և նրանք շատ թշնամիներ ունեին։ Նրանք, իհարկե, լսիրշ դրպարտության զոհեր են, բայց ամեն ինչ կպարզվի առաջին հարցաքննությունից հետո։ Նրանք կապացուցեն իրենց անմեղությունը, ուստի անհանգստանալու կարիք չկա։*

*Այդպես էին խորհում կարդինալները, որոնք ընկան Վատիկանի բանտը։*

*Եվ մի բանում չէին սխալվում. նրանց, անկասկած, նախանձում էին, նրանց կործանեց իրենց հարստությունը, բայց պժբախտության պատճառը պապն ինքն էր, որը ցանկանում էր տիրանալ Կարաֆաների գանձերին և հարստացնել իր ազգականներին։*

*Ունեցվածքը բռնագրավելը դժվար գործ չէ, միայն թե հարկավոր է համոզված լինել, որ ոչ ոք այն ետ չի պահանջի։ Դրա միակ երաշխիքը մահապատիժն է։ Այդպես էր որոշել պապը։*

*Բայց նմանօրինակ դատավճիռը զոնե մի որոշ հիմնավորում էր պահանջում։ Եվ պապն ասաց, թե իր գերիների ունեցվածքը գողացված է, որ նրանք դա ձեռք են բերել Պողոս IV-ի՝ իրենց ազգականի աջակցությամբ։*

*«Հարկավոր է վերջ դնել խնամիականության վնասակար ձևին,— վերջացրեց նա,— ես ուզում եմ իմ հաջորդներին համոզիչ դաս տալ, որպեսզի նրանք չզբաղվեն իրենց ազգականների՛ն հարստացնելով»։*

*Լսիրշ սրիկան խնամիականության մասին էր խոսում։ Մինչդեռ Կարաֆաների ունեցվածքը նրա ազգականների ձեռքն անցավ ավելի վաղ, քան դատավճիռը ուժի մեջ կմտներ։*

*Կարդինալ Կաոլոսին, հենց նրան, ով ամենից շատ էր Ջուլիանի Մեդիչիին օդնել, նրա համար ապահովելով սուրբ կոլեգիայի ձայների մեծամասնությունը, խեղդեցին, մյուսներին գլխատեցին և դիակները նետեցին Տիբրոս գետը։*

*Միայն Ալֆոնսո Կարաֆային հաջողվեց փրկագին (հարյուր հազար էկյու) տալով ազատվել, որից հետո նա Հռոմից անհայտացավ։*

*Սակայն այդ ժամանակ ճիզվիտներն արդեն տարածվել էին աշխարհով մեկ, և ոչ ոք չէր կարող պապի ձեռքից պրծնել, որտեղ էլ որ նրա զոհը ապաստան գտներ։ Երեք ամիս անց, Նեապոլում գանվելու ժամանակ, Ալֆոնսո Կարաֆան հանկարծ տկարացավ և ծանր տառապանքներից հետո մեռավ։ Մի ոմն ճիզվիտ, որ կարողացել էր նրա ճոճ ընկնել, նրան թունավորել էր։*

Կարաֆաների տոհմի հետ դատաստան տեսնելը ցնցեց կարդինալներին։ Դա չարագուշակ նախազգուշացում էր։ Իհարկե, բանն իրենց կոլեգաների մահը չէր, կարդինալներն այնքան էլ զգայուն չէին։ «Մենք բոլորս շատ թե քիչ հարուստ ենք,— դատում էին նրանք,— մեզնից ամեն մեկը կարող է սուրբ Հոր անկուշտ ագահության զոհը դառնալ»։

Պապի նկատմամբ վախն այնքան ուժեղ էր, որ նրանք անկարող էին այդ դեպքը հիշել առանց սարսռալու։ Պապի հայտնվելուն պես նրանք իրենց կորցնում ու դունատվում էին չարության արած երեխաների նման։

Պիոս IV-ը չէր կարող չնկատել կարդինալների վիճակը։ Հասկանալով, որ այլևս ոչ ոք չի համարձակվի դուրս գալ իր դեմ, նա, ժամանակ չկորցնելով, քաղաքագիտական ու դինվորական պաշտոններում նշանակեց իր եղբորորդիներին ու քրոջորդիներին, էլ չխոսելով, որ հռոմեական կուրիայի գործերը տնօրինում էին պապի բազմաթիվ աղգականները։ Այսպիսով, պապն իր շուրջը հավաքեց մի միաանական, ուժեղ խումբ։

Սակայն շուտով եկեղեցական գործերը Պիոս IV-ին ստիպեցին սուրբ կոլեգիայի հետ ավելի սերտ բարեկամական հարաբերություններ հաստատել։ Արևմտյան Եվրոպայում այլևս եկեղեցու միասնություն գոյություն չուներ, պառակտումը լայն չափեր էր ընդունել։ Շոտլանդիայում հաղթել էին բողոքականները։ Բոհեմիայում Մաքսիմիլիան թագավորն անցել էր լյութերականների կողմը։ Գերմանիայում Ֆերդինանդը բացեիբաց պաշտպանում էր կրոնը։ Ֆրանսիայում թագավորն ու սենյորները հրապարակել էին «Հանդուրժողականության էդիկտը»։ Այս ամենը Պիոս IV-ին և կարդինալներին ստիպում էին իրենց ջանքերը միավորել ընդհանուր թշնամու՝ հերետիկոսների դեմ պայքարելու համար։ Սակայն անառակ ապրելակերպը Պիոս IV-ին այնպիսի մտավոր վիճակի էր հասցրել, որ եկեղեցական գործերի ղեկավարությունը նրա ձեռքից անցել էր նրա դրացիների ձեռքը։ Եկեղեցական ամբողջ քաղաքականությունը սկսել էր ղեկավարել կարդինալ Մարկոսը, Պիոս IV-ի նախկին ֆավորիտը։ Նրան էր ենթարկվում նաև պապական բանակը։ Պիոս IV-ը, կարդինալ Մարկոսին իրավունք տալով պետական գործունեությամբ զբաղվել, անձնատուր էր

*Եղել շվայտությանն ձգտելիքը նա լինում էր ինկվիզիցիայի գնդաններում, երբ խոշտանգում էին մեղադրյալներին, իսկ դիշերներն անցկացնում ֆավորիտների ու սիրուհիների հետ։*

*Գերմանիայում բողոքականության աճը մի կարճ ժամանակ քահանայապետին դուրս բերեց ապուշության ու զառամախտի այն վիճակից, որի մեջ գտնվում էր։ Իսպանիայի թագավորը համառորեն նրան հորդորում էր ուշադրություն դարձնել կաթոլիկ եկեղեցու գործերի սխուր վիճակի վրա։ Պիոս IV-ը դիմում է կայսր Մաքսիմիլիանին ու Բավարիայի դուքս Ալբերտ III-ին, խնդրելով կենսագործել Տրիդենտի եկեղեցաժողովի որոշումները։*

*Ի դեմս Բավարիայի դուքսի պապը հավատարիմ դաշնակից գտավ։ Ալբերտն արդեն վաղուց գտնվում էր ճիզվիտների ազդեցության տակ և ջերմորեն արձագանքեց սուրբ Հոր կոչին, ասելով, թե պատրաստ է իր հպատակների երեք քառորդը ոչնչացնել, միայն թե մնացած քառորդը վերադարձնի կաթոլիկ եկեղեցու գիրկը։*

*Էլ ուրիշ ի՞նչ կերպ կարելի է ապացուցել մի կրոնի դևրազանցությունը մյուսի նկատմամբ։ Հավանաբար, ամենալավ ապացույցը նա է, որի համար ավելի շատ արյուն է թափվում։ Ինչ կա որ, թափված արյան քանակությամբ մեր աստվածը համաշխարհային պանթեոնում առաջին տեղն է գրավում։*

*Սկզբում դուքսը արգելեց բողոքական ուսմունքի մուտքն իր կալվածքները, հրամայելով այրել հերետիկոսական բովանդակություն ունեցող գրվածքները։ Նա Ինգոլշտատտի համալսարանի պրոֆեսորներին ու ներկայացուցիչներին ինկվիզիցիայի տրիբունալի ահի տակ սպեց հրդումնավոր խոստում տալ դավանելու կաթոլիկ հավատը։*

*Մաքսիմիլիանը ավելի քիչ հնազանդ դուրս եկավ, քան Ալբերտ III-ը։ Նա ոչ միայն հրաժարվեց բռնությամբ իր հպատակների վզին փաթաթել կաթոլիկական դոգմաները, այլև Պիոս IV-ին առաջարկեց իր առաքելական հեղինակությամբ հաստատել այն նորամուծությունների մի քանիսը, որ գերմանացիների մեծ մասն արդեն ընդունել էր, որ եթե նա չբարեհաճի դիջումների դիմել, ապա պառակտումն ավելի կխորանա։*

*Զգալով այն վտանգը, որ թաքնված էր Մաքսիմիլիանի հայտարարության մեջ, Պիոս IV-ն իր խոսելու տոնը չափավորեց։ Կայսեր պահանջները պարունակում էին երկու կետ. նախ կաթոլիկների նշխարը փոխարինել հաղորդության երկու ձևերով և ապա քահանաներին ամուսնանալու իրավունք տալ։ Պիոս IV-ը Մաքսիմիլիանին պատասխանեց, թե համաձայն է, որ Գերմանիայի քրիստոնյաները հաղորդվեն երկու ձևով*

էլ, բայց մյուս կետը այնքան կարևոր է, որ չի կարող բավարարել։

Սուրբ Հայրը, երևի, կարծում էր, թե ավելի հեշտ է փոխել սուրբ հաղորդության խորհրդի ծեսը, քան քահանաներին թույլ տալ հարճերին փոխարինել օրինական կանանցով... Ձեր աստծո նկատմամբ նրա փոխանորդը կարող է ձևականություններ չպահպանել։

Մաքսիմիլիանը, սակայն, չէր ուզում բավականանալ մասնակի զիջումով, ձգտելով հաճոյանալ բողոքական քահանաներին, որոնք պահանջում էին կուսակրոնությունը վերացնել։ Նա գտնում էր, որ ամուսնությունն արգելելը եկեղեցականներին սոխոսում է հարճեր պահել, և որ խայտառակություններին վերջ տալու համար հարկավոր է վերացնել դրանց պատճառը։

Պիոս IV-ը շարունակում էր իրենը պնդել։ Բայց ոչքան էլ որ միտքը պղտորված լիներ, նա, այնուամենայնիվ, հասկանում էր, որ կայսրը չափազանց զայրացած է իրեն դիմադրելու համար։ Մինպետի զայրույթից վախենալով, Պիոս IV-ը սկսեց նոր զաշնակիցներ որոնել։ Նրան հաջողվեց Կառլոս IX-ին և Փիլիպոս II-ին համոզել, թե իբր կայսրը վճռել է զաշնակցել Ֆրանսիայի հուգենոտների հետ, որպեսզի գրավի նրանց գահերը և ոչնչացնի կաթոլիկությունը։ Երկու միապետները Մաքսիմիլիանի դեմ զաշինք կնքեցին։ Իսկ հեգեմոնիոսներին մի հարվածով վերացնելու համար որոշվեց, որ Նկատներինա Մեդիչին հուգենոտների ջարդ կկազմակերպի Ֆրանսիայում, այն ժամանակ, երբ Իսպանիայի թագավորը զատաստան կտեսնի Նավարայի և Նիդեռլանդների հետ։

Այդ հանցավոր պլանն իրականացնելու համար պապը որոշեց նախ բթացնել թշնամու զգոնությունը։ Սուրբ Հայրն ինկվիզիցիային հրամայեց մեղմացնել ռեֆորմատորների հալածանքը և նույնիսկ որոշ ձերբակալվածների ազատել. միևնույն է, կրելով բոլոր խոշտանգումները, նրանք դատապարտված էին մեռնելու։

Բողոքականների զգոնությունը վերջնականապես բթացնելու համար նա ավելի մեծ զոհողություն արեց. սկսեց նրանց հետ բարեկամասիրություն խաղալ, Գերմանիայի դեսպանին և մյուս հուգենոտներին հրավիրել իրիկնային խնջույքներին, ուր թունդ հարբելով, հրավիրվածների հասցեին անվերջ բաժակաճառեր էր արտասանում։

Անչափավորությունը կործանեց նրան։ Մի անդամ երկարատև խրախճանքից հետո, որի ժամանակ տասներկու գավաթ էր դատարկել (իր սովորական բաժինը), նա կաթվածահար եղավ և մեռավ 1569 թվականի դեկտեմբերի 9-ին։

## ՊԱՊԻ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԱՀԱՊԱՏԻԺՆԵՐԸ

*Հռոմի ժողովուրդը ցնծում էր, իմանալով Պիոս IV-ի մահը. վերջապես մնռել էր դաժան բռնապետը։ Բայց երկու ամիս էլ չանցած, ուրախությանը հաջորդեց հուսախաբությունը։ Նորընտիր պապը կարճ ժամանակում այնքան չարագործություններ կատարեց, որ մարդիկ ափսոսանքով էին հիշում նրա հրեշավոր նախորդին։ Դեռ երբեք աստքելական աթոռի վրա այդպիսի արյունարբու գազան չէր բազմել։*

*Կոնկլավի բուն վնճերից հետո, որոնք տևեցին մեկ ամիս, մեծ ինկվիզիտորի պատվավոր պարտականությունները կատարող Անտոնիո Գիսլիերին հաղթեց մյուս մրցակիցներին և եկեղեցու գլուխ հռչակվեց Պիոս V անունով։*

*Սկզբում էր նա շատ աղքատ ընտանիքից, և նրան դոմինիկյան վանք էին ուղարկել, որտեղ ծառայում էր որպես խոհարարի աշակերտ։*

*Պատանյակն այնտեղ իսկույնևեթ իր վրա գրավեց վանահոր ուշադրությունը. նա վայելչակազմ էր, գեղեցիկ և միաժամանակ արտասովոր խելքի տեր։ Ամեն ինչից երևում էր, որ ապագայում նա նվաճելու է բարձր աստիճանավորների սրտերը։*

*Աղատ ժամերին վանահայրը պատանուն աստվածաբանություն էր սովորեցնում, և շատ շուտով աշակերտը հատուցեց ուսուցչի ջանասիրությունը. նա կարող էր դյուրավ հաղթել ուղածդ լավագույն աշակերտին։*

*Իր սիրեցյալի գլուխը լցնելով եկեղեցական խորհրմաստություններով ու իմանալով նրա ջանասիրությունն ու մյուս հատկությունները, վանահայրը պատանուն Կոմոյի ինկվիզիտոր կարգեց, որտեղ նա, հալածելով հերետիկոսներին, այնպիսի փութաջանություն ցուցաբերեց, որ շուտով հռչակվեց Իտալիայում մեկ։ Հավանաբար, սուրբ Դոմինիկոսն ինքը գորովանքով էր նայում իր երիտասարդ հետևորդին և ինքն իրեն ասում. «Եթե այս սուտլիկը կանգ չառնի, ապա իր սխրալի գործերով ինձ կգերազանցի»։ Կոմոյում տեռորի ռեժիմ հաստատվեց։ Մահը ժանտախտի պես հնձում էր մարդկանց, բայց, վերջիվերջո, համբերությունը վերջ ունեցավ. քաղաքի ազդեցիկ մարդիկ կարողացան արյունարբու ինկվիզիտորին վռնդել տալ։*

*Նրան սկզբում ուղարկեցին Բերգամո, որտեղ կարճ ժամանակում նրա անողորմ վայրագությունը իսկական ապստամբություն հառուցեց,*

ժողովուրդը պաշարեց ինկվիզիտորների պալատը, և նա ստիպված եղավ փախչել։

Այդ հրեշի արյունարբուքյան մասին բավական լրիվ պատկերացում կարելի է կազմել այն հրահանգներից, որ նա, ինկվիզիցիայում տրիբունալների գլխավոր հրահանգիչ նշանակվելուց հետո, տվել է Վենետիկի ինկվիզիտորին։

«Իմ թանկագին եղբայր,— գրում էր նա,— ձեզ դարեկրոնություն, ես հավատացած եմ, թե դուք միշտ կհիշեք, որ այն իշխանությունը, որին ծառայում եք, տարածվելու է ամբողջ աշխարհում։ Թող ձեր կամքը լինի անվրդով, անհողդողդ ու անոզոք, ինչպես առաքյալին արդարացուցանելու երկրի վրա։ Ձեր բարձր կոչումը միշտ մտաբերելու համար ձեր տրիբունալի վրա երկաթե խաչելությունը կախեցեք սուրբ գրքի հետևյալ բառերով. «Վայրն այս սոսկալի է, դա դուռն է դժոխքի կամ երկնքի...»։ Թող հոգու գթասրտության վերաբերյալ որևէ խորհրդածության ձեզ չշեղի այն ճանապարհից, որ ուզ եք գրել։ Հիշեցնեք, որ մեր աստվածային ուսուցիչն ասել է. «Ջմտածեք, որ ես եկել եմ երկրին խաղաղություն բերելու. ոչ թե խաղաղություն բերելու եմ ես եկել, այլ՝ սուր։

Որովհետև ես եկել եմ մարդուն բաժանելու իր հորից և դստերը՝ իր մորից, հարսին՝ իր սկեսուրից։

Եվ մարդու թշնամիները նրա տնեցիներն են։

Ով սիրում է հորը կամ մորն ավելի, քան ինձ, արժանի չէ ինձ. և ով սիրում է որդուն կամ դստերն ավելի, քան ինձ, արժանի չէ ինձ։

Եվ ով չի վերցնում խաչը և հետևում ինձ, արժանի չէ ինձ»։

Թող այս բարեպաշտ բառերը ղեկավարեն այն հիմնական կանոնը, որ որոշում է ձեր վարքը։

Խոշտանգեցե՛ք առանց գթալու, տանջեցե՛ք առանց խղճալու, սպանեցե՛ք, այրեցե՛ք, ոչնչացրե՛ք ձեր հայրերին, մայրերին, եղբայրներին, քույրերին, եթե պարզվի, որ նրանք կուրորեն նվիրված չեն կաթոլիկական, առաքելական ու հռոմեական եկեղեցուն»։

Այնուհետև գլխավոր հրահանգիչը ճշտիվ նշում էր այն անձնակազմը, որ անհրաժեշտ էր գերագույն տրիբունալին (այդ մարդիկ վարձատրվում էին ձերբակալվածներից բռնագրաված ունեցվածքի հաշվին). պահակախմբի սպաներից ու գործակալներից բացի, տրիբունալը հաջող գործունեության համար կարիք ուներ վեց փորձված աստվածաբանների, որոնք սկզբում է ունակ լինեին կողմնորոշվելու կրոնական բոլոր հարցերում, վեց սբերների ու քսանչորս դահիճների։ Քսանչորս դա-

հիճ մի՛ քաղաքում։ Եվ նրանք բոլորն աշխատում էին անդադրում։

«Նախքան որևէ մեկին ընդունելը,— այնուհետև գրում էր նա,— և մեր սարսափելի գաղտնիքներին ծանոթացնելը, նորադարձը պետք է տա հետևյալ երդումը. «Երդվում եմ ամենազոր աստծուն, նրա որդի Հիսուս Քրիստոսին, առաքյալներ սուրբ Պետրոսին ու սուրբ Պողոսին, սուրբ առաքելական եկեղեցուն, գերագույն քահանայապետին, Հռոմի սուրբ ինկվիզիցիային և այստեղ ներկա դտնվող ձերդ բարեկրոնությանը, որ հավերժ հնազանդ կլինեմ եկեղեցուն և սուրբ տիրությանը։ Պարտավորվում եմ զործադրել բոլոր ջանքերը, մերկացնել և բռնել ամեն մեկին, ով կասկածվում է հերետիկոսության մեջ։ Պարտավորվում եմ մինչև արյանս վերջին կաթիլը պաշտպանել գերագույն քահանայապետին և սուրբ ինկվիզիցիայի զործը»։

Բայց ահա թե ինչով է ավարտվում դլխավոր հրահանգչի այն շրջաբերականը, որն ուղղված էր ինկվիզիցիայի տրիբունալներին. «Հավաքագրեցեք այնքան լրտեսների, ինչքան ի վիճակի եք վարձատրելու։ Նրանց պարտավորեցրեք հետևել աշխարհականներին, հավասարապես նաև եկեղեցականներին, և ձեզ իրազեկ դարձնել բոլոր հասարակական ու մասնավոր անկարգությունների մասին։ Երբեք կասկածի տակ մի առեք նրանց ցուցմունքները, սպանեցեք բոլորին, ում նրանք ձեզ ցույց կտան, լինեն մեղավոր թե անմեղ, որովհետև ավելի լավ է ոչնչացնել հարյուր անմեղ, քան կենդանի թողնել թեկուզ մեկ մեղավոր։

Մենք իրազեկ ենք, որ տասի խորհուրդը մեր սուրբ ինկվիզիցիայի թշնամին է, քանդի մենք չենք ընդունում այն իշխանությունը, որ նա հավակնում է ունենալ եկեղեցական գործերի վրա։ Բայց նկատի ունեցեք նաև այն դիվանագիտական հարաբերությունները, որոնք ձեզ կապում են Վենետիկի որոշ հզորազույն տոհմերի հետ. դուք պետք է մեծագույն զգուշություն ցուցաբերեք, որպեսզի չուժեղացնեք մտքերի գրգռումը։

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդին կամ բուրժուազիային, ապա հղեք անողոք։ Թեև աստված ինքն է իրեն պաշտպան, հիշեցնեք, մեր ձեռքը սուր է տրված, որպեսզի ուղղենք չարամիտ մարդկանց դեմ։ Առանց տատանվելու կրկնապատկեցնեք ձեր խստությունը, եթե նկատում եք, որ եկեղեցու նկատմամբ որևէ դիմադրություն է աճում։ Մենք ստիպված ենք աղնվականության անկարգություններ առաջ ւլքել միայն այնքան ժամանակ, քանի դեռ նախախնամությունը մեզ չի տրամադրի չարն արմատախիլ անելու անհրաժեշտ միջոցներ։ Իսկ ժողովրդի ու բուրժուազիայի նկատմամբ եղեք անողոք»։

Այս ազդու հրահանգի հեղինակը մեծ ինկվիզիտոր նշանակվեց Պողոս IV-ի օրոք։ Այդ պահից ի վեր տրիբունալներն ու դահիճները դադար չունեին։ Պապ դառնալով, այդ բռնապետը շարունակեց իր արյունալի սխրագործությունները։ Նախ և առաջ, նա որոշեց վրեժխնդիր լինել կարաֆաների տոհմի անդամներին սպանելու համար. ոչ թե այն պատճառով, որ նրանց նկատմամբ բարեկամական զգացմունքներ էր տածում, այլ որովհետև նրանք մերձավոր ազդակցություն ունեին դոմինիկյան վանքի այն վանահոր հետ, որը ժամանակին նրան մարդամեջ էր դուրս բերել։

Պիոս V-ը հրամայեց ձերբակալել Կարաֆային մահապատժի դատապարտած դատավորներին, Պիոս IV-ի վարձած վկաներին, դիվորներին, դատավճիռն ի կատար ածած դահիճներին և բոլորին հանձնեց ինկվիզիցիայի տրիբունալին։ Պատժից ազատվեց միայն Ալֆոնսո Կարաֆային թունավորած ճիզվիտը. Իզնատիոս Լոյոլայի ընկերությունն այդ ժամանակ արդեն այնքան էր հզորացել, որ խանգարից վանականին գտնել։ Մնացած բոլորին սոսկալի խոշտանգումներից հետո ազջողջ այրեցին։

Դրանով Պիոս V-ը չգոհացավ։ Հռոմում թագավորում էր տեռորը։ Հավարավոր մարդիկ ոչնչացան կախաղանների վրա, մոխրացան խարույկների մեջ։ Մարդկանց սպանում էին տասը տարի առաջ կատարած հանցանքների համար, որոնց մասին նրանք գաղափար չունեին։ Քաղաքները լի էին մատնիչներով, որոնք սպասում էին գոհի ուշացվածքից իրենց բաժինը ստանալուն կամ պարզապես ծարավի էին վրիժառությյան։ Պիոս V պապի լրտեսին դուր չեկած մարդը վնդան էր ընկնում, որտեղից կար միայն մի ճանապարհ՝ դեպի խարույկ։ Իսկ հերետիկոսների մասին, ինչքան էլ մեղադրանքներն անհեթեթ էին, խոսելն իսկ ավելորդ է։

## ՄՈՐ ՄԱՀԱՊԱՏԻԺԸ

Պիոս V-ը իր գահակալության վեց տարիների ընթացքում զբաղվել է միայն մահապատիժներով ու տանջաքննությունները։ Արյուն տեսնելը նրան նույնքան անհրաժեշտ էր, որքան օդը մահկանացուի համար։

Այդ հրեշի անօրինակ դաժանությունը վկայող շատ պատմություն-

Ների մեջ հատկապես աչքի է ընկնում XV դարի վերջում և XVI դարի սկզբում ապրած մի պատմաբանի պատմածը։

Մի շատ գեղեցիկ երիտասարդ կնոջ ինկվիզիցիայի լրտեսները մեղադրում էին, թե իր քույրերից մեկին, որ հարել էր կալվինականներին, օգնել է փախչել։

Երբ տարաբախտ կնոջը ձերբակալեցին, նա հղիության վերջին ամսում էր։ Նրան նետեցին մի սոսկալի քարակուտ նկուղ, որտեղ ժամանակից շուտ ծննդաբերեց։ Դժբախտ մայրը, վախ ու տառապանք մոռացած, միայն իր ծնած երեխայի մասին էր մտածում։ Ամբողջ գիշերը երեխային գրկից ցած չդրեց։ Առավոտյան Պիոս V-ը հրամայեց նրան տրիբունալ բերել, թեև անբախտը հազիվ էր ոտքի վրա կանգնում։ Դաղանը չգթաց նրան։ Իզուր էր երիտասարդ կինը թավալվում նրա ոտքերի տակ ու երդվում, թե քրոջ մոտգրության մասին իմացել է միայն դատավճիռը հրապարակելուց հետո։ Ո՛չ երդումները, ո՛չ էլ աղաչանքները չշարժեցին քարացած սիրտը։

«Կատարեցե՛ք ձեր պարտքը»,— հրամայեց նա վանական-դահիճներին։

Երեք դոմինիկյաններ անմիջապես հարձակվեցին երիտասարդ կնոջ վրա, ոտքից գլուխ մերկացրին ու կապեցին պրկարանին։ Ձեռքերն ու ոտքերը երկաթե օղակներով այնպես պրկեցին ու կպցրին պատին, որ երկաթը խրվեց մսի մեջ գրեթե մինչև ոսկորները։ Ապա սկսեցին ջրախոշտանգումը։ Բայց դեռ չէին հասցրել ութերորդ ամանը դատարկել, երբ կնոջ բերանից սկսեց արյուն ժայթքել, և նա ուշաթաթվեց։

Պապը այդ տեսարանով հիացած, հրամայեց զոհին ուշքի բերել և ամենազգայուն տեղերի վրա եռացրած մեղր լցնել, իսկ ոտքերը մուեցնել կրակին։ Դժբախտն այնպիսի ճիչեր էր արձակում, որ կշարժեին նույնիսկ վագրի սիրտը. չէ որ վագրը կրոն չունի։

Ջահել ու գեղեցիկ կնոջ խոշտանգումը ոգեւորեց բավականությունն էր պատճառում։ Հոգ տանելով, որ զոհը միանգամից չմեռնի, սուրբ հայրը կարգադրեց մեղադրյալին իջեցնել նկուղը։ Նա կենդանության ոչ մի նշան չէր ցուցաբերում, միայն երբեմն թույլ տնքում էր։ Բայց հենց որ նրա առջև բացվեց ծանր դուռը, նա ուշքի եկավ, հիշելով իր երեխային։

Նա փորձեց բարձրանալ ու կանգնել արյունլվա, վերքերով ծածկված ոտքերի վրա, բայց անմիջապես ընկավ։ Երկար ճչաց նա, մինչև որ բանտապետը ներս մտավ։ «Տվեք երեխային»,— հառաչելով ասաց կինը, ցույց տալով այն անկյունը, որտեղ հարցաքննության գնալուց

առաջ դրել էր խնամքով բարուրված նորածնին։ Բանտապետը երեխային նետեց մոր գիրկը։ Երբ բացեց բարուրը, տեսավ, որ նորածինը մեռած է. երեխան ցրտից սառել էր։ Փոքրիկի դիակը կրծքին սեղմելով, կինն անմիջապես մեռավ։

Հաջորդ օրն առավոտյան Պիոսը հրամայեց հարցաքննությունը շարունակել և շատ դառնացավ, երբ իմացավ, որ կնոջ տանջանքներն ավարտվել են։

Այդ նույն օրը պապի գործակալները պարզեցին, որ մեղադրյալին դրպարտել են։ Բայց սուրբ հայրը զրպարտիչներին չպատժեց, այլ գովեց փութաջանության համար, թեպետև բարեհաճ վերաբերվեց զոհին, թույլ տալով դիակը հանձնել նրա ընտանիքին։

## ՄԻ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՐ ԿԱԽԱՂԱՆ...

Պիոս V պապի գազանություններին մասին կարելի կլիներ մի ամբողջ հատոր գրել։ Կառավարման սանձերը նրա ձեռքն անցնելուց կես տարի հետո շատ հռոմեացիներ սարսափահար հեռացան քաղաքից։ Հռոմը գերեզմանոցի վերածվեց։ Վախեցած կարդինալները փորձեցին պապին համոզել, թե խիստ միջոցները կարող են եկեղեցու հեղինակությունը գցել։ Կատաղած քահանայապետը գոռաց նրանց վրա, և նրանք պապանձվեցին։ Նրա մոլեգնությունը գնալով սաստկանում էր. նա ավելացրեց խուզարկուների թիվը, պահանջեց առանց ստուգման սպասելու ձերբակալել յուրաքանչյուրին, ով կասկածի տակ էր։ Մատնեցեք, հրամայեց նա, խոշտանգումը մեղադրյալին կստիպի իր հանցանքն ընդունել։

Սուրբ հոր զավրելի խուզարկուները ճշտորեն կատարում էին նրա հրահանգները։ Նրանք դարձել էին քաղաքի տերերը, ահեղ կառավարողներ, քանզի նույնիսկ ամենահարգված մարդու կյանքը կամ մահը նրանցից էր կախված։ Նրանց մի խոսքն իսկ բավական էր, որպեսզի սրան կամ նրան ուղարկեին կառափնարան կամ խարույկի վրա այրելու։

Հայտնի գրող Առինուս Պալեարիուսը նրանց զոհը դարձավ, երբ ասաց, թե ինկվիզիցիան մի դաշույն է, որի շեղբն ուղղված է բոլոր գիտուն մարդկանց սրտին։ Պիոս V-ը սբերներին ուղարկեց Միլան, որտեղ ապրում էր Պալեարիուսը, որպեսզի նրան ձերբակալեն։ Գրողի

մասնագիտությունը հարգած լինելով, պապը նրան նստեցրեց Վատիկանի ամենակեղտոտ նկուղներից մեկում։

Ինչպես սովորաբար ընդունված էր, նրան հարցաքննության ենթարկեցին՝ հուսալով, որ եթե իր մեղքը ժխտի՝ կարող է կյանքը փրկել, Պալեարիուսը, չնայած ծանր խոշտանգումներին, արիաբար ժխտում էր, թե այդ չարաբաստիկ խոսքն ասել է։ Այնժամ պապը մի հրեշավոր հնարքի դիմեց։ Խոշտանգումների ընդմիջման ժամանակ նա դժբախտ գրողին խոստացավ անմիջապես ազատ արձակել, եթե նա ստորագրի արդեն պատրաստ հայտարարությունը և դրանով իսկ ընդունի, որ «պապն իրավունք ունի սպանելու հերետիկոսներին, ինչպես և եկեղեցին իրավասու է պաշտոնյաներ նշանակել ինկվիզիցիայի դատավճիռներն ի կատար ածելու համար, իսկ գերագույն քահանայապետն իրավասու է իր ձեռքով, օրինակ տալու համար, սրախողխող անել իր թշնամիներին»։

Պալեարիուսը միամտություն ունեցավ հավատալու Պիոս V-ի խոստմանը և ստորագրելու այդ թուղթը։ Բայց հազիվ էր նա ստորագրել, երբ Պիոս V-ը, տոնը փոխելով, գրողին հայտնեց, թե նա ստորագրել է իր դատավճիռը, քանզի ընդունել է, որ պապն իրավունք ունի հերետիկոսներին սպանելու։

Պապի ուխտադրժությունից ցնցված և հասկանալով, որ խնդրելն ավելորդ է, գրողն արհամարհանքով նորին սրբազնությանն ասաց այն ամենը, ինչ մտածում էր նրա խարդախության, ստորության ու դաժանության մասին։

«Ինչի՞ եք գանգատվում, եղբա՛յր իմ,— երկիբեսանհորեն նրան հարցրեց պապին շրջապատող վանականներից մեկն այն ժամանակ, երբ սուրբ հայրը, զայրույթից շնչահեղձ լինելով, սպանիչ հայացքով շամփրում էր իր զոհին։— Մի՞թե՝ դուք ինքներդ չընդունեցիք, որ նորին սրբազնությունն իրավասու է հերետիկոսներին սպանելու»։

Դատապարտյալը չհասցրեց պատասխանել։ Պապի ազդանշանով դահիճները գրողի վիզն անցկացրին թոկը, որ ճախարակով ամրացված էր կամարին. դժբախտի մարմինը սկսեց ջղաձգվել և շուռտուռ անշարժացավ։

Բայց հանգստանալու համար ժամանակ չկար։ Պալեարիուսի դիակն արձակեցին և անմիջապես մարդ ուղարկեցին նոր դատապարտյալ բերելու, որը կախվելուց առաջ ցցի ու իշտունուկի վրա գրավեց գրողի տեղը։ Սուրբ հայրը պարապություն չէր հանդուրժում։ Ավելին, ձերբակալվածների առատությունը ստիպում էր արագ գործել, որպեսզի բանտերը բերնեբերան լցվեին։

## ՔՐԻՍՏՈՆՅԱ ՔԱՀԱՆԱՆԵՐՔ ԵՎ ՍԻՐՈ ՔՐՄՈՒՀԻՆԵՐՔ

*Պիոս V-ը հաստատ հպմոզված էր, որ երկրի վրա իր կամքը պետք է իշխի աստծո կամքի պես։ Նա ոչ մի առարկություն չէր հանդուրժում, վայն եկել էր ու տարել, եթե մեկը փորձեր չհնազանդվել նրան։*

*Եվ այնուամենայնիվ գահակալության առաջին ամիսներին նա ստիպված եղավ նահանջել իր իսկ հրապարակած դեկրետից, որը Հռոմի ամբողջ հոգևորականության մեջ զայրույթ էր առաջացրել։ Եվ եթե չլիներ սուրբ կոլեգիայի հմուտ քաղաքականությունը, թերևս զոռով տիրակալը գահից վրկվեր։*

*Բանն այս էր։ Պապը տեղեկություններ էր ստացել, թե մի քանի կալվինականուհիներ ինկվիզիցիայից խուսափելու համար գրանցվել են իբրև պոռնիկներ, թեև ամենևին մտադիր չէին այդ գործով զբաղվելու։ Պապին ոչ մի ապացույց չէին ներկայացրել, լրտեսները չէին կարողանում որոշակի որևէ օրինակ բերել, բայց, ինչպես մենք արդեն գիտենք, կասկածն էլ բավական էր։ Եվ Պիոս V-ը մի դեկրետ հրապարակից, որը Հռոմի բոլոր հասարակաց կանանց, հրապարակային գանահարման սպառնալիքով, պարտադրում էր մեկ ամսվա ընթացքում ամուսնանալ կամ քաղաքից հեռանալ։*

*Հռոմի հոգևորականությունը՝ Հռոմի պոռնիկների գլխավոր այցելուն, սկսեց տրտնջալ։ Համոզվելով, որ սուրբ հայրը շարունակում է համառել, քահանաներն սկսեցին իրենց դժգոհությունը բացեիբաց արտահայտել։ Կարդինալները, հաշվի առնելով իրադրությունը և հասկանալով, որ գործը կարող է խռովությամբ վերջանալ, պապին ասացին, թե մի քանի կալվինականուհիների պատճառով չարժե խուլրը վտանգի ենթարկել։*

*Նրանք պապի ուշադրությունը հրավիրեցին այն բանի վրա, որ Հռոմի քառասունհինգ հազար պոռնիկները հավիտենական քաղաքի համար այնքան էլ մեծ թիվ չեն կազմում և միշտ չէ, որ նրանք հասցընում են կղերականներին սպասարկել. իսկ այդ կանացի բանակի վերացումը կարող է կատարյալ հեղաշրջում առաջացնել հոգևորականության կենցաղում և բոլորովին չնախատեսված հետևանքներ ունենալ։*

*Ի պատասխան այդ նույնքան ծանրակշիռ, որքան և անբարոյական դատողություններիի, Պիոս V-ն ասաց, թե ոչ ոքի թույլ չի տա իր*

գործողությունները քննարկել և պահանջում է, որ իր ընդունած որոշումն անհապաղ կատարվի։ Անկարելի կլիներ կոտրել պապի գոռոզությունը, եթե կարդինալները չորոշեին դիմել վերջին փաստարկին. նրանք սուրբ հորը հիշեցրին, որ պոռնիկների վերացումը մեծապես կազդի Հռոմի մանուկների բախտի վրա։ Եվ նկատելով, որ այդ փաստարկը մեղմացրեց պապին, ավելացրին, թե հասարակաց տների փակումը առաքելական գանձարանին մեծ վնաս կհասցնի։

Ծկամտի այդպիսի մեծ հոդվածից զրկվելը բնավ ցանկալի չէր, և պապը տեղի տվեց ու չեղյալ հայտարարեց իր էդիկտը, բավականանալով այն կարգադրությամբ, որի համաձայն պոռնիկները պարտավոր էին բնակվել մի հատուկ թաղամասում, իրավունք չունենալով այնտեղից դուրս գալու ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը։

## ԵՐԵՔ ՀՐԵՇՆԵՐ

Րոտալիան գերեզմանոց դարձնելը քիչ էր պապի համար. այդ մոլագարը ցանկանում էր ահաբեկել ամբողջ քրիստոնեական աշխարհը։ Իսպանիայում նրա համար մի արժանավոր դաշնակից գտնվեց, դա կաթոլիկության ջատագով Փիլիպոս II-ն էր։ Իսպանական ինկվիզիտորները, որոնք երկիրն արյամբ էին ողողել, իրենց մոլեռանդ ջանադրությամբ պապական ինկվիզիտորներից ետ չէին մնում։ Սակայն դովք մատուցելով դաժան միապետին, սուրբ Հայրը չափազանց զայրացած էր այն անտարբերությունից, որ, նրա կարծիքով, հերետիկոսների նկատմամբ ցուցաբերում էր դքսուհի Մարգարիտա Պարմացին՝ Նիդեռլանդների խնամակալուհին, Փիլիպոս II-ի քույրը։

Մարգարիտա Պարմացին ամեն կերպ ջանում էր քահանայապետին գոհացնել։ Ամեն օր ռեֆորմատորներին ձերբակալելու հրամաններ էին արձակվում։ Բայց դատավորները, թերևս Ռեֆորմացիան թաքուն համակրելու կամ գուցե ժողովրդական խառնակությունից վախենալով, ձերբակալվածներին ազատում էին։

Հուսախաբված Մարգարիտան հաճախ էր հարձակվում դատավորների վրա, որոնք հանդգնում էին անկախություն ցուցաբերել։ Շարունակելով հերետիկոսներին հալածել, նա փորձեց արգելել հրապարակային հավաքները, փակել այն տները, որտեղ մարդիկ ժողովվում էին քա-

*բողներ լսելու։ Բայց ժողովուրդը չէր վախենում ու զինված դիմադրություն էր ցույց տալիս, կախում նրա գործակալներին, վռնդում դինվորներին։ Համոզվելով, որ իր փորձերն ապարդյուն են, Փիլիպոս II-ի քույրը հալածանքը դադարեցրեց։*

*Պապի դրդմամբ Իսպանիայի թագավորը հրապարակեց Նիդեռլանդների բողոքականների դեմ ուղղված մի նոր էդիկտ, որով իշխաններին ու սենյորներին հրամայում էր վասալներին ստիպել, որ ընդունեն Տրիդենտի եկեղեցաժողովի որոշումները, սպառնալով հակառակ դեպքում նրանց զրկել պաշտոններից ու աստիճաններից և բոլորի ունեցվածքը բռնագրավել։*

*Հակառակ թագավորի սպասածի, նրա սպառնալիքները ոչ միայն ազդեցություն չունեցան, այլև, ընդհակառակը, Նիդեռլանդիայի աղնվականներին չափազանց զայրացրին։ Նրանց կոչով ավելի քան երեսուն հազար քաղաքացիներ ու գյուղացիներ հավաքվելով Բրյուսելի դարպասների առաջ տարածված հովտում, երդվեցին պաշտպանել իրենց անկախությունը։*

*Այնուհետև հինգ հարյուր պատգամավորներ ամբոխի հավանության բացականչությունների ներքո, դրոշներ պարզած, անցան քաղաքի փողոցներով և կանգ առան խնամակալուհու պալատի մոտ։ Ամբոխի տեսքը անդրդվելի վճռականություն էր արտահայտում։*

*Գլուխը բոլորովին կորցրած, Մարգարիտան մոռացավ եղբոր հրահանգները և հանդիսավորապես խոստացավ դեկրետով կրոնական հանդուրժողականության աղատություն սահմանել։ Պատգամավորներն անխոս ցրվեցին։ Բայց դեռ նոր էին նրանք հեռացել, երբ խնամակալուհին, զղջալով իր ցուցաբերած թուլության համար, որոշեց խոստումը դրժել։*

*Ցույցի կազմակերպիչները նախքան նոր գործողություններ ըսկըսելը, համբերությամբ սպասում էին հերետիկոսության մասին հրապարակված էդիկտի վերացմանը։ Վերջապես նրանք սիրտ արին պատվիրակություն ուղարկել անմիջապես թագավորի մոտ, խնդրելով ոչ թե խոսքով, այլ գործով մեղմացնել կրոնական օրենքների խստությունները։*

*Սուրբ Հայրը, որ լրտեսների ցանցով պատել էր Եվրոպայի բոլոր արքունիքները, իր գործակալներից իսկույնևէ տեղեկություն ստացավ և իր հերթին Մադրիդի նունցիային անհապաղ հանձնարարից հեռևել պատվիրակների գալուն և միաժամանակ Փիլիպոս II-ին ինչ-*

պես հարկն է սադրել, որպեսզի պատվիրակների հետ արժանի դաժ տաստան տեսնի։

Պապի գործակալի համար դժվար չէր կատարել այդ հանձնարարությունը։ Պապը և թագավորը ապերեսանության տեսակետից իրարից ոչնչով չէին տարբերվում։ Միապետն առանց պապի խորհրդի էլ ճիշտ այդպես կվարվեր։

Ժամանելու օրը ֆլամանդացիներին ձերբակալեցին, հանձնեցին ինկվիզիցիայի դատին ու այրեցին։

Երբ այդ անարգ դատաստանի զարհուրելի լուրը տարածվեց Նիդեռլանդներում, զայրացած ժողովուրդն ապստամբեց Իսպանիայի թագավորի դեմ։ Հինդ հարյուր հազար քաղաքացիներ, զենք վերցնելով, երդվեցին երկիրն ազատագրել քահանաների լծից։

Դա էր քաջարի գեղերի ապստամբության իսկական պատճառը։ Ի պատասխան թագավորի ոճրալի ակտի, զայրացած հայրենասերները հրդեհում էին եկեղեցիները, վանքերը, սպանում քահանաներին։ Բայց որքան էլ դաժան լինեին նրանց գործողությունները, այդ ամենը լոկ թույլ արտացոլումն էր այն բանի, ինչ անում էր կաթոլիկների կուսակցությունը։

Կաթոլիկների դիմադրությունը հաղթահարվեց, ապստամբ հայրենասերները հաղթանակ տարան։ Խնամակալուհին կանգնեց ինկվիզիցիայի ծառայություններից հրաժարվելու և խղճի ազատության էդիկտ հրապարակելու անհրաժեշտության առաջ։

Դա անօրինակ ապավորություն գործեց։ Գեվերը հանդարտվեցին։ Եվ չնայած որ, ի դևպս պաշտպանության, դեռ զենքը ցած չէին դրել, այնուամենայնիվ խաղաղասիրաբար էին տրամադրված և ապստամբությունը կարող էր ավարտվել, եթե պապն իր կամքը չպարտադրեր Փիլիպոսի քրոջը և սա էլ երկրորդ անգամ իր խոսքը չդրժեր։

Իմանալով Ֆլանդրիայում տիրող ունեցած դեպքերի մասին, Պիոս V-ն անմիջապես Մարգարիտային հրամայեց ոչնչացնել էդիկտը և մի ընտիր բանակ շարժել խռովարարների դեմ, այս անգամ սպառնալով, թե չհնազանդվելու դեպքում կբանադրի հենց իրեն՝ Պարմի դքսուհուն։

Միաժամանակ պապը մի նամակ ուղարկեց Իսպանիայի թագավորին, որի մեջ խնամակալուհուն կշտամբում էր հանդուրժողականության համար։ Շարունակ հրաման հրամանի հետևից ուղարկելով, նա խորհուրդ էր տալիս, համառորեն պնդում ու պահանջում ռեֆորմատորների դեմ վճռական միջոցների դիմել։

«Հարկավոր է բոլորին ծովում խեղդել,— այդպես է նա ավար-

տում իր ուղերձներից մեկը,— թող սուրն ու հուրը նրանց բերքառատ դաշտերն անապատ դարձնեն և հողին հավասարեցնեն մեծամտացած քաղաքը, որպեսզի ճշմարիտ քրիստոնյաները ցնծան, ուրախանալով մեր դավանանքի հաղթանակով»։

Փիլիպոս II-ը շտապեց իր հնազանդությունն արտահայտել և անողորմ դուքսի հրամանատարությամբ մի ահեղ բանակ ուղարկեց Ֆլանդրիա, որտեղ դուքսը լիովին արդարացրեց թագավորի ու սուրբ հոր վստահությունը։

Լայն լիազորություններ ստանալով, կաթոլիկության այդ պաշտպանը անխտիր բոլոր քաղաքացիներին ձերբակալելու հրաման արձակեց, սենյորներին մահվան դատապարտելու և նրանց ունեցվածքը բռնագրավելու վճիռներ ընդունեց (մահապատժի ենթարկվածների կարողությունը մտնում էր կուսակալի գանձարանը, և կուսակալը քաղաքների շուրջը բերդեր էր կառուցում)։ Դրանից անմիջապես հետո լիիշխան տիրակալը հապշտապ սկսեց սպանել բանտերում լցված դրժբախտներին։ Դեռ երբեք մահապատիժներն այդպես արագ չէին կատարվել։

Դուքս Ալբան հիմնեց «Մահվան տրիբունալ», որի նպատակն էր ոչնչացնել բոլոր մեղադրյալներին՝ անկախ սեռից, տարիքից և նույնիսկ կրոնից։ «Բոլոր բելգիացիներն արժանի են մահվան, ավելի շատ արյունով, քան թանաքով,— գրում էր Փիլիպոս II-ը կուսակալին,— բողոքականները նրա համար, որ կործանել են եկեղեցիները, իսկ կաթոլիկներն այն պատճառով, որ արժանի դիմադրություն ցույց չեն տրվել»։

Կառավարման ղեկը իր ձեռքը առնելով, Ալբան ճշտորեն հետևում էր թագավորի հրահանգին։

Քաղաքներում ու գյուղերում կախաղաններ, խարույկներ, կառափնարաններ հայտնվեցին, նույնիսկ ճանապարհներին փտում էին ծառերին կապված դիակներ։ Մահապատիժները շարունակվեցին մի քանի ամիս։ Մի անգամ, ընդամենը մի օրում, արևածագից մինչև մայրամուտ, այրեցին, գլխատեցին, քառահատեցին ավելի քան վեց հարյուր քաղաքացիների։ Դեկրետին չհնազանդվող ազնվազարմ աստիճանավորները նույն բախտին էին արժանանում։ Ավելի քան երեսուն հազար կալվինականներ մահից փրկվելու համար փախան Գերմանիա ու Ֆրանսիա։

Վտանգից փրկվելով, փախստականները ոգի առան և սկսեցին պատրաստվել զենքը ձեռքներին հայրենիքն ազատելու Ալբայի բռնա-

կալությունից։ Ֆրանսիայի հուգենոտների մեծ մասը միացավ նրանց։ Թագաժառանգ Վիլհելմն Օրանացին ու նրա եղբայր Լյուդովիկոսը գլխավորեցին բանակը։

Դժբախտաբար, Ալբայի զորքերն ավելի շատ էին ու կարգապահ։ Դեռևս Բրյուսելի մատուցներում բողոքականները պարտություն կրեցին և ստիպված եղան փախչել Ֆրանսիա։

Դուքս Ալբան որոշեց իր հաղթանակը նշել նոր մահապատիժներով։ Իսպանական բանակի հաղթանակը պապին մեծ ուրախություն պատճառեց։ Նա շնորհավորագրեր ուղարկեց Ֆլանդրիայի բոլոր դահիճներին, գովաբանելով նրանց փութաջանությունը։ Գեղերին անողորմ ոչնչացնելու համար պապը դուքս Ալբային պարգևատրեց թանկարժեք քարերով զարդարված գլխարկով և պատվո ոսկե սրով, որի վրա գրված էր. «Հերետիկոսության քաջարի հաղթանակչին»։ Երախտապարտ դուքսը, Անտվերպենում իր համար հուշարձան կանգնեցնելով, հրամայեց այդ բառերը փորագրել պատվանդանի վրա։

Այդ ոճրագործների փոխադարձ մտերմությունը միանգամայն օրինաչափ է։

## Ո՛Չ ՄԻ ԳՈՐԾ

Նորին սրբազնություն Պիոս V-ը կարող էր հաճույքից ձեռքերն իրար շփել ու նախախնամությունից շնորհակալ լինել, որովհետև այն ժամանակ, երբ դուքս Ալբան Ֆլանդրիայում ոչնչացնում էր հերետիկոսներին, օրհնյալ թագավոր Կառլոս IX-ը իր մայր եկատերինա Մեդիչիի՝ Ֆրանսիայի փաստական կառավարչուհու աջակցությամբ աստվածահաճո գործեր էր կատարում։

Պիոս V-ը ոչ միայն աչալուրջ հետևում էր Ֆրանսիայի թագավորի քաղաքականությանը, այլև նրան իր սեփական դանձարանից փող էր տալիս։ Այդ ժամանակ Ֆրանսիայում հուգենոտների դեմ պատերազմ էր մղվում և այդպիսի սուրբ գործի համար ադահությունը նահանջում էր ատելության առաջ։

Երբ թագավորը, որ ներգրավվել էր հզոր ուժերի խաղի մեջ, անվճռականություն հանդես բերեց, Պիոս V-ը անմիջապես նրան խթանեց այսպիսի բառերով. «Քրիստոսի անունից մենք ձեզ հրամայում ենք կախել կամ գլխատել ձեր վերցրած գերիներին, անկախ նրանց

աստիճանից, սեռից ու տարիքից, չեղարկվելով խղճահարության զգացումին։ Որովհետև ինչպես հնարավոր չէ, որ խաղաղություն լինի սատանայի որդիների ու լույսի զավակների միջև, այնպես էլ հնարավոր չէ թույլ տալ, որ պիղծերի սերունդն այսուհետև բազմանա։ Ո՛չ մի դեթություն հերետիկոսներին. հանուն մեր աստծո կատարելիք ամենաարդարացի գործը կաթոլիկական կրոնի թշնամիների արյունը թափելն է, Թող արյունը հեղեղի պես թափվի ամենաբարձրյալի սեղանին Թո՞ղ սարսափ պատի նրա սիրտը, ով չի հնազանդվում»։

Հուգենոտների ղորքերը մեծ պարտություն կրեցին։ Բայց դահիճների բանակը գլխավորող մարշալի իր սպասած շնորհավորանքների փոխարեն արժանացավ պապի զայրալից կշտամբանքներին. ինչքան էլ որ նա հերետիկոսների կոտորած լիներ, սպանվել էին ոչ բոլորը, մի քանիսը փախել ու փրկվել էին։

Պիոս V-ը մարշալին օգնելու համար մի ճիղվիտ ուղարկեց։ Լոյոլայի այդ հավատարիմ աշակերտը հետևողական մարդ էր։ Սկզբում, ինչպես ընդունված էր, բոցկլտացին խարույկները, բայց նա գտավ, որ այդ հնացած պատիժը չափից ավելի պարզ է ու կարճատև։ Տղամարդկանց նա դատապարտեց մի նոր պատժի, հրամայելով ողջ-ողջ մաշկել նրան։ Ինչ վերաբերում է կանանց ու երեխաներին, ապա նրանց խոշտանգումը նա անձամբ ինքն էր ղեկավարում։

Մենք չենք ուզում պատմել այդ ռազիստի բոլոր գազանությունները։

Սուրբ Հայրն իմանալով, որ իր հրահանգը կատարված է, վերջապես բավարարություն ստացավ։

## ՍՐԲԻ ՎԵՐՋԻՆ ՈՃԻՐՆԵՐԸ

Պապը ցնծում էր։ Բոլոր եկեղեցիներում հանդիսավոր ժամասացություն էր կատարվում։ Կարծելով, թե Ֆրանսիայի հուգենոտները վերջնականապես ջախջախված են, պապը պատրաստվում էր իր գվարդիան ետ կանչել։ Սակայն շուտով ուրախությանը փոխարինեց կատաղությունը։ Վատ լուրեր հասան Հռոմ։ Հարավում հուգենոտների բանակն արագ երթով հասել էր Ֆրանսիայի արևմտյան սահմանները, սպառնալով Փարիզին։ Եկատերինա Մեդիչին, վախենալով մայ-

քաքաղաքի պաշարումից, առաջարկեց դադարեցնել ռազմական գործողությունները։ Կառավարությունը, ընդհանուր ներումից բացի, պատրաստ էր վերադարձնել բռնագրաված հողերը և բողոքականներին թույլ տալ ազատ կերպով ժամերգություն կատարել, ինչպես նաև պառլամենտում վեց պաշտոն զրավել։ Բացի այդ, նրանց ձեռքին էր մնում վեց ամրոց։

Հուգենոտներին արված զիջումները կաթոլիկներին չափազանց շատ էին թվում։ Բայց եկատերինա Մեդիչին սուրբ հորը դրեց, թե հաշտության պայմանագիրը միայն տակտիկական քայլ է, և թե ինքն ու իր որդին միջոցառումներ են ձեռնարկում հուգենոտներին վերջին, խորտակի հարված հասցնելու համար։

Պիոս V-ը այդ պատասխանով չբավարարվեց։ Ճիզվիտների հետ միասին որոնց ազդեցությունը Եվրոպայի բոլոր արքունիքներում չափազանց աճել էր, նա սկսեց հերետիկոսների դեմ արշավանք կազմակերպել և բոլոր քրիստոնեական թագավորների մոտ ուղարկեց իր լեգատներին հայտնելով իր արյունալի դիտավորությունը։

Միլանի արքեպիսկոպոսը, որի վրա դրված էր Պիեմոնտում և Շվեյցարիայում ավազակախմբեր կազմակերպելու առաքելությունը, սիրով արձագանքեց Պիոս V-ի առաջարկությանը։ Պապական կարդինալը, որ ներկայացավ Սիգիզմունդ Ավգուստին՝ Լեհաստանի թագավորին, նույնպես բարեհաճ ընդունելության արժանացավ։ Կառլոս IX-ը և նրա մայրը հայտնեցին, թե լիովին պաշտպանում են նորին սրբազնության քաղաքականությունը։ Միայն Գերմանիան (չհաշված Անգլիան, որին ոչ մի փաստարկով հնարավոր չէր գայթակղել) էր դիմադրում Պիոսն ապարդյուն զանազան դիվանագիտական հնարքների էր դիմում, փորձելով ազդել կայսեր վրա, բայց Մաքսիմիլիանը, ոչ այնքան մարդասիրությունից, որքան ընդարձակ կայսրության բողոքականներին իր դեմ հանելու վախից դրդված, հրաժարվեց այդ արկածախնդրությունից, որը նրան վտանգավոր էր թվում։

Մաքսիմիլիանի մերժումը սուրբ հորն այնպես զայրացրեց, որ նա հիվանդացավ և մի քանի օր անց մեռավ վաթսունութ տարեկան հասակում։

Քահանայապետի մահը փրկեց շատ ու շատ բողոքականների կյանքը։ Միայն Ֆրանսիայի հուգենոտներին էր վիճակված այն ճակատագիրը, որ Պիոս պապը պատրաստել էր Եվրոպայի բոլոր բողոքականների համար։

Ջմոռանանք նաև ավելացնել, որ եկեղեցին Պիոս V-ին սրբերի կարգն է դասել։

Ասենք, որ իսկապես նա արժանի է դառնվելու յուսապսակավոր ավազակների պատկերասրահում։

## ԳՐԻԳՈՐ XIII

Հենց որ Պիոս V կոչված դաժան հրեշը ավարտից իր փուչ գոյությունը, արքունականները, հաշվի առնելով հանգուցյալի նկատմամբ ժողովրդի տածած ատելությունը, փողոց դուրս բերին կայազորի զինվորներին, փակելով պալատ տանող ճանապարհները։ Նրանք անհանգստանում էին, որ ժողովուրդը կսլդծի նորին սրբազնության աճյունը և խայտառակորեն քարշ կտա Հռոմի փողոցներով։

Երբ Պիոս V-ի թաղման արարողությունն ավարտվեց, կարդինալները փակվեցին՝ նոր պապ ընտրելու։ Համառ պայքարից հետո ձայների մեծամասնություն ստացավ կարդինալ Բոնկոմպանին, որն ընդունեց Գրիգոր XIII անունը։

Հռոմեակաթոլիկական եկեղեցու նոր պարագլուխը ծնվել Բոլոնիայում 1502 թվականին։ Սկզբում նա իրավագիտություն էր սովորում և քանյոթ տարեկան հասակում դոկտորի աստիճան էր ստացել։ Այնուհետև դասավանդում էր համալսարանում, որտեղ դասախոսություններ էր կարդում մինչև 1539 թվականը, բայց խորհելով, որ պրոֆեսորի կարիերան այնքան էլ եկամտաբեր չէ և չի խոստանում ո՛չ մեծարանքներ, ո՛չ էլ իշխանություն, այն փոխարինել էր ավելի փայլուն զբաղմունքով։ Պողոս III-ի շնորհիվ նա սկսել էր առաջ գնալ։ Հուլիոս III-ը նրան տվեց առաքելական գրասենյակի քարտուղարի պաշտոնը։ Պողոս IV-ի օրոք նա եպիսկոպոսություն ձեռք բերեց և արդեն Պիոս IV-ի օրոք աստվածավախ հիմարների փողերը նրան օգնեցին գլխին կարդինալական թասակ դնել։

Գրիգոր XIII-ը նախ և առաջ ձգտում էր ամրապնդել իր հարաբերությունները Ֆրանսիայի թագավորի հետ։ Երբ Կառլոս IX-ը նրան էլի մեց իր քույր Մարգարիտա Վալուային Հենրիխ Նավարացու հետ ամուսնացնելու թույլտվություն ստանալու համար, Գրիգոր XIII-ը շտապեց տալ իր վսեմագույն համաձայնությունը։

«Ես չեմ դնում հերետիկոսներին վիրջ տալու ավելի լավ միջոց, քան այդ միությունը»։ Թագավորի այս խոսքերը, որ հասցեագրված էին Պիոս V-ի քրոջ որդուն, լիովին բացատրում են նորընտիր կևեղեցապետի գործողությունները։

Վրիժառու եկատերինա Մեդիչին և նրա արժանի զավակն անհամբերությամբ սպասում էին երկվյալ թշնամիներից մշտապես աղատվելու հնարավորության։

## ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍՅԱՆ ԳԻՇԵՐԸ

Պապի չորս պատվիրակները մշակեցին պլանը և դիմեցին դեպի Կառլոս IX-ի առանձնասենյակը։ Հասավ ճակատագրական ժամը։ Կառլոս IX-ը պարտավոր էր ընտրել երկուսից մեկը. կա՛մ ծովակալ Կոլինյիի հետ կիսել փառքը, կա՛մ Եկատերինայի հետ հավիտենական խայտառակության դատապարտվել. կա՛մ քավել երիտասարդ տարիների եղբերը, կա՛մ իր վրա վերցնել ժամանակակիցների նրանց զավակների նղովքները։ Այդ անհավասարակշիռ, գրեթե կիսախելագար մարդու մի բառից էր կախված Ֆրանսիայի ճակատագիրը. մի բառը կարող էր կանխել անհամար աղետները, բաղում հազարների չարդը։

Ըստ լուրերի, թագավորը մի որոշ ժամանակ պայքարում էր մոր և նրա չարագուշակ խորհրդականների հետ, բայց ի վերջո, երբ նրան մեղադրեցին վախկոտության մեջ, բղավեց. «Դուք ուզում եք ծովակալին սպանե՞լ։ Աստված վկա, ես էլ եմ ուզում։ Բայց այդ դեպքում սպանեցեք Ֆրանսիայի մնացած հուգենոտներին ևս։ Բոլորի՛ն միևնույն վերջին մարդը։ Ապա թե ոչ նրանք կգան ինձ կշտամբելու։ Աստծով եմ երդվում հրամա՛ն տվեք։ Միայն թե շուտ, շո՛ւտ»։

Իսկն ասած, չարդի համար արդեն վաղուց ամեն ինչ արված էր. թագավորության բոլոր ճանապարհներով սուրհանդակներ էին սլանում նահանգապետերին ուղղված գաղտնի հրամաններով։ Սուրբ Բարդուղիմեոսի տոնի նախօրեին, 1572 թվականի օգոստոսի 24-ի հիշարժան գիշերը, լուսերից տրված ազդանշանով, Սեն-Ժերմեն Լ'Աերեցու զանգակատնից հնչեց զանգի մի ղողանջ, իսկ այնուհետև մարդկանց ճիչերը, լացուկոծը, սուսերի շառաչը, հրացանների կրակոցը՝ ծանուցեցին Փարիզի չարդը։ Ավազակախմբերը ներխուժում էին բողոքականների տները, և միայն երկու օրվա ընթացքում հազարավոր ֆրանսիացիներ՝

տղամարդիկ, կանայք, երեխաներ, ոչնչացվեցին բարեպաշտ կոթոլիկների ձեռքով։

Այդպես ավարտվեց այն սուրբ գործը, որի համար Պիոս V-ը, մեծագույթ աստծո փոխանորդը, աշխատում էր մեծ փութաջանությամբ։

Օգոստոսի 28-ին, սոսկալի ողբերգությունից չորս օր հետո, հոգևորականությունը, որ հպարտանում էր իր սիրանքներով, ստանց արյունոտ հաղթանակը։ Կառլոս IX-ը և նրա արքունիքը չամաչեցին մասնակցել գոհաբանական մաղթանքին և եկեղեցական այլևայլ զավեշտախաղերին։

Հուգենոտների մասսայական ջարդը, որ անմիջապես հետևեց Գրիգոր XIII-ի գահ բարձրանալուն, գրեթե համընկավ նոր պապի պահակալման արարողությանը։ Հռոմի արքունիքը սպանդի լուրն ընդունեց չտեսնված խանդավառությամբ։ Սուրբ Հրեշտակի ամրոցում որոտում էին հրետանային սալյուտի համազարկերը, Նորին սրբազնությունը հրամայեց Բարդուղիմեոսյան գիշերվա բարեհաջող ելքը նշել ժողովրդական տոնախմբություններով, իսկ այնուհետև, կարդինալներով շրջապատված, հանդիսավորապես այցելեց Հռոմի տաճարներից երեքը, որպեսզի գոհություն ամբարձի ուրախ լուրի համար։

Բացի դրանից, Գրիգորը հրամայեց հուշամեդալ կտրել, ինչպես նաև իտալացի հայտնի նկարիչ Վազարիին պատվիրեց մի նկար, որը պատկերում էր հերետիկոսների ջարդը. նկարի տակ գրված էր. «Պապը հավանություն է տալիս Կոլինյիի սպանությանը»։ Այդ նկարն այսօր էլ գտնվում է Սիքստինյան կապելլայում։

Կարդինալ Լորենը (գիշերից մեկը) իր հերթին հրամայեց սուրբ Լյուդովիկոսի տաճարում մի շնորհակալական արձանագրություն անզավորել այդ խայտառակ հաղթանակի առթիվ, որ եկատերինա Մեդիչիի որդին ձեռք էր բերել սուրբ հոր խորհուրդների ու աղոթքների շնորհիվ։

Իտալիայի բոլոր եկեղեցիներում, նույնիսկ Վենետիկում, եկեղեցական բարոզիչները, գլխավորապես ճիզվիտները, կրակոտ ճառեր էին արտասանում, դովաբանելով Կառլոս IX-ին և նրա մորը։

Փիլիսոս II Խսպանացին ցնծում էր պապից ոչ պակաս։ Իսկ Եվրոպայի մնացած մասն այդ լուրն ընդունեց սարսուռով ու զզվանքով։

Բոլորին հայտնի է, որ Բարդուղիմոսյան գիշերն հարուցեց չորրորդ կրոնական պատերազմը, որովհետև, չնայած մասսայական ջարդին, ոչ բոլոր հուգենոտներն էին ոչնչացվել. շուտով նրանք ավելի ուժեղացան և ավելի անկախ դարձան, քան առաջ էին։

Բացի դրանից, տեղի ունեցավ մի անհավատալի դան ևս. արյու-

նահեղ չարդը ոչնչացրեց հին, միջնադարյան եկեղեցին։ Չարդի ոգեշնչողները կարծում էին, թե ճիշտ ճանապարհի վրա են կանգնած, սակայն նրանց հաղթանակն ըստ էության ինքնասպանություն դարձավ։ Հենց այդ ժամանակից ի վեր բազմաթիվ ազնիվ, ուղղամիտ հավատացյալներ սկսեցին կաթոլիկությունից երես թեքել։ Բարդուղոմեոսյան գիշերը հարուցեց նաև սրտասահմանյան շատ կառավարությունների զայրույթը, իսկ Ֆրանսիայում թագավորական իշխանությունն ու եկեղեցին դարձան հարձակումների ու սարսավանքի առարկա։

Այն ժամանակ, երբ բարեպաշտ Գրիգոր XIII-ը և նրա հավատարիմ ճիզվիտները փառաբանում էին Կաղոսի և նրա հանցագործ մայրիկի սիրագործությունները, իսպանացիներն ամայացրին Ֆլանդրիան և այնտեղ նույնպիսի գարշելի ոճիրներ կատարեցին։ Դուքս Ալբան, ասես, ուզում էր գերազանցել եկատերինա Մեդիչիին և նրա որդուն։

Նախքան Նիդեռլանդներից հեռանալը, դուքսն արյան մեջ խեղդեց մի քանի քաղաք։ Նա պարծենում էր, որ զինվորները ոչնչացրել են ավելի քան հարյուր հիսուն հազար բելգիացի, իսկ քսան հազար մարդու էլ ինքն է տանջամահ արել զնդաններում։

Բայց Գրիգոր XIII-ը չգոհացավ հերետիկոսների հետ հաշվեհարդար տեսնելով, նա ձգտում էր նաև զավթել նրանց ունեցվածքը։ Պապը պահանջեց, որ Կաղոս IX-ը Ֆրանսիայում իննվիդիցիայի դատարան սահմանի և կենսագործի Տրիդենտի եկեղեցաժողովի նշանավոր որոշումները, որոնք ժամանակին մերժել էր պառլամենտը։ Բնականաբար, պապի հավակնությունները համընդհանուր դժգոհություն առաջացրին։ Եվ ահա այն ժամանակ, երբ կարծում էին, թե ռեֆորմատորներին վերջ են տվել, նրանք գլուխ բարձրացրին, ամրացան մի շարք քաղաքներում և հայտարարեցին, թե կշարժվեն դեպի Լուվր՝ իրենց դավանակիցների սոսկալի չարդի համար թագավորից հաշիվ պահանջելու։

## ԿՐՈՆԻ ՆՈՐ ԶՈՀԵՐԸ

Կաղոս IX-ը հուգենոտների սպառնալիքներից վախեցած, սկսեց խոնարհաբար շողոքորթել այն մարդկանց, որոնց եղբայրներին ինքն անողոքաբար ոչնչացրել էր։ Թագավորը ջանում էր իր վրայից վերց-

նել Բարդուղոմեոսյան դիշերվա մեղքը և պատասխանատվությունը դնել գեղերի ու հռոմեական կուրիայի վրա։ Նա հասավ մինչև այնտեղ, որ, ընդդիմանալով պապական լեգատին, հրամայեց հուգենոտներին վերադարձնել նրանց բռնագրավված ունեցվածքը, իսկ, ի վերջո, իրեն ռեֆորմատորական եկեղեցու հովանավոր հայտարարեց։

Կառլոս IX-ի մահից հետո թագավորական գայիսոնը բաժին ընկավ նրա եղբայր Հենրիխ III-ին՝ կաթոլիկական եկեղեցու միանգամայն արժանավոր ղավակին։ Նրա օրոք Ֆրանսիայի արքունիքն իսկապես ավազակատրջի վերածվեց։ «Թագավորական արքունիքի կյանքը,— պատմում է ժամանակագիրը,— անցնում էր պարահանդեսների, խնջույքների ու խրախճանքների մեջ, որոնցից հետո Հենրիխ III-ը իր ֆավորիտների հետ թրև էր գալիս շուկաներում, տոնավաճառանոցներում, հրապարակներում, անարգում կանանց ու աղջիկների պատիվը, բռնաբարելով մանչուկներին, ծեծելով նրանց հայրերին ու մայրերին, որ փորձում էին իրենց զավակներին պաշտպանել։ Զվարճանալով, անառակները խոստովանության կատակախաղեր էին սարքում, իրենց վրա կարմիր, սև, կապույտ, կանաչ կամ սպիտակ կնգուղով փարաջաներ էին գցում և գնում եկեղեցի, իսկ հետո էլ՝ աստղադուշակների ու դուշակների մոտ։ Ներսունիները պառավական սիրագեղեր էին գնում, հրիտասարդները՝ թույն, որպեսզի ոչնչացնեն իրենց սիրուհիների ամուսիններին։ Բարոյական անկման այդ դարաշրջանում տղամարդիկ ու կանայք իրենց մրցակիցներից ազատվելու համար առանց խղճի խայթ ղգալու դաշույն կամ թույն էին օգտագործում»։

Այդպիսի բարքեր էին տիրում արվամոլ Հենրիխ III-ի՝ Գրիգոր XIII-ի հավատարիմ բարեկամի ու դաշնակցի բարեպաշտ արքունիքում։

## ՃԻՉՎԻՏՆԵՐԸ ԳՈՐԾԻ ՎՐԱ

Այդ միջոցին մոտեցել էր տիեզերական հոթելյանի ժամանակը։ Գրիգորը անհամբերությամբ սպասում էր դրան, հուսալով լցնել պապական դատարկված դանձարանը։

Ինչպես և անցած տարիներին, ամեն տեղից բարեպաշտ հիմարները լցվում էին Հռոմ, որպեսզի թանկարժեք նվերներ դնեն Հիսուս Քրիստոսի փոխանորդի ոտքերի տակ։ Ոսկին պապին հնարավորություն

տվեց վարձկան մարդասպանների հրոսակախումբ ստեղծել և դարձյալ սրբազան պատերազմի կոչ անել։

Այն ժամանակ, երբ Գրիգորը կարգավորում էր իր ֆինանսական գործերը, Հենրիխ III-ը շատ դժվարություններ էր կրում։ Նա նոր հարկեր էր պահանջում, իսկ դա Փարիզի բնակչության մեջ շատ ուժեղ հուզում առաջացրեց։

«Սրբազան լիգան» գլուխ բարձրացրեց. նրա անդամները ժողովրդին ապստամբության էին դրդում, մերկացնելով թագավորին, որի անառակությունն անցել էր բոլոր սահմանները։ Նրանք թագավորին ուզուրպատոր էին անվանում և պահանջում իշխանությունը տալ Կարլոս Մեծի իսկական ժառանգ Հենրիխ Գիզին՝ Լիգայի պարագլխին։ Ճիզվիտները բոլոր ամբիոններից կոչ էին անում միանալ Լիգային։

Զգալով իր անզորությունը, Հենրիխ III-ը գլխավոր շտաբների նիստ գումարեց։ Ճիզվիտների ազդեցության տակ գտնվող պատգամավորներն արտահայտվեցին կալվինականների դեմ արշավանք սկսելու օգտին։ Բայց թագավորին պակասում էր գլխավորը՝ արգահատելի մետաղը։ Գիղի հանդուգն արարքները, Լիգայի ատելությունը նրան ստիպեցին ռեֆորմատորների հետ համաձայնություն կնքել։ Թագավորը նրանց դավանանքի ազատություն տվեց, վերադարձրեց նրանցից խլած հողերը և վերականգնեց այն մարդկանց բարի անունները, որ ընկել էին Բարդուղոմեոսյան գիշերվա ջարդի ժամանակ։ Ի լրումն ամենի, թագավորը համաձայնվեց վերացնել քահանաների կուսակրոնությունը։

«Էդիկտը,— ըստ մի պատմաբանի,— կարող էր երկրին բարօրություն բերել, բայց ոչ ոք չէր հավատում Հենրիխ III-ի հրապուրիչ խոստումներին։ Իսկ պապն ու Գիզը շահագրգռված էին, որ Ֆրանսիայում արյունալի քաղաքացիական պատերազմ բռնկվի։ Այդ նպատակով պապն անմիջապես Լիգային օգնության ուղարկեց ժամանակի ամենաճարպիկ դիվանագետներից մեկին՝ ճիզվիտ Հենրիխ Սոմյեին, որը կարողանում էր հմտորեն ազդել մարդկանց մտքերի վրա և խռովություններ ու երկպառակություններ առաջացնել։ Իր հերթին, Հենրիխ Գիղն իր համար կողմնակիցներ էր հավաքագրում. փողի միջոցով նա բանակ կազմեց, իր պալատում զենքի պաշարներ էր պահում և բացահայտորեն հանդես էր գալիս վալուաների դինաստիան խորտակելու կոչերով։

Գտնելով, որ նրա օրերը հաշվված են, Հենրիխ III-ը կրկնապատկեց Լուվրը պաշտպանող կայազորի զինվորների թիվը և, իր հերթին, թագավորին և կրոնը պաշտպանելու համար գվարդիականներից ու վարձկան շվեյցարացիներից բանակ ստեղծեց»։

Գրիգոր XIII-ը սկսեց նոր դաշնակիցներ որոնել։ Նա վերականգնեց սուրբ Բարսեղի միաբանությունը, որը հենց միայն Նեապոլի թագավորությունում միավորում էր հինգ հարյուր եկեղեցի։

Հռոմում պապը հիմնադրեց մոտ քսան կոլեջ, որոնց կառավարում էր սև բանակը։ Նա ձգտում էր ճիզվիտական վարակը տարածել աշխարհով մեկ, ընդհուպ մինչև Ճապոնիա։

Դրա հետ միասին խուլրակիր հաշտարարը չէր դադարում Եվրոպայի տիրակալների միջև գաղտնաբար երկպառակություն սերմանել, որպեսզի նրանց գժտություններն օգտագործի ի շահ Հռոմեական կուրիայի։ Խուան Ավստրիացուն նա համոզում էր ամուսնանալ Մարիա Ստյուարտի հետ և տապալել հերետիկոս Եղիսաբեթ թագուհուն, բայց ամենից առաջ Հոլանդիային պատերազմ հայտարարել և դրանով իսկ Օրանի թագաժառանգին ղրկել Մեծ Բրիտանիային օգնություն ցույց տալու հնարավորությունից։

Խուանը, որը մինչ այդ դժվարին կացության մեջ էր, ցանկանում էր բելգիացիների հետ բանակցություններ սկսել, բայց հենց որ ստացավ պապի աջակցությունը, որին երկար սպասում էր, խախտեց բողոքականների հետ կնքած համաձայնագիրը։ Ոխատարժությունը, սակայն, օգուտ չբերեց։ Բրյուսելցիները կենքի դիմեցին, վռնդեցին Փիլիպոս II-ի կուսակալին և Նիդեռլանդների տիրակալ հռչակեցին թագաժառանգ Օրանացուն։

Բայց ձեռներեց Գրիգոր XIII-ին վհատեցնելն այնքան էլ հեշտ չէր։ Նրա հրամանով ճիզվիտների բալմությունները ներխուժեցին Իռլանդիա՝ Եղիսաբեթի դեմ ապստամբություն բարձրացնելու։

«Նորին սրբազնություն,— պատմում է Լաշատրը,— հիմնեց Հատո կ միսիոներների միաբանություն, այդ միսիոներները կոչված էին Անգլիայում ապստամբություն նախապատրաստելու։ Նա կազմակերպեց մի ամբողջ չոկատ, որի մեջ մտան վաթսունչորս անգլիացի, շոտլանդացի ու իռլանդացի ճիզվիտներ։ Նրանք երդվեցին ամեն ջանք գործադրել հերետիկոս Եղիսաբեթ թագուհուն ղրկելու թագից ու կյանքից։ Այդ մոլեռանդները գնացին Լոնդոն՝ նահատակի լուսապսակ վաստակելու։ Նրանցից երեքը, որ բռնվեցին թագուհու դեմ մահափորձ կազմակերպելու մեջ, խեղդամահ արվեցին, գլխատվեցին ու քառատվե-

*ցին։ Պապը հրահանգեց նրանց սրբերի կարգը դասել, իսկ կենդանի մնացածներին հրամայեց կազմակերպել նոր դավադրություն՝ գործելով ավելի զգույշ»։*

## ՓԻԼԻՊՈՍ II-Ը ՇՐՋԱՆՑՈՒՄ Է ՊԱՊԻՆ

*Պորտուգալիայում ճիզվիտների բախտն ավելի բերեց, քան Անգլիայում. նրանք ազդեցություն ձեռք բերեցին և ահեղ ուժ դարձան։ Լոյոլայի այդ ժառանգներին հաջողվեց թագավոր Սեբաստյանին՝ Փիլիպոս II-ի քեռորդուն համոզել, որ արշավի Աֆրիկա։ Ավա՛ղ, քրիստոնեություն ընդունած մարոկացիներն անհուսալի կաթոլիկներ դուրս եկան և հիմար Սեբաստյանին սպանեցին։*

*Տկարամիտ, անժառանգ թագավորի թագը, ոչ առանց սև բանակի աջակցության, անցավ նրա քեռուն՝ կարդինալ Հենրիխին։ Դեռ նոր էր այդ ծեր խելառը բազմել գահին, երբ ցանկացավ ժառանգ ունենալ։ Նա Գրիգոր պապից թույլտվություն խնդրեց ամուսնանալու մի երիտասարդ գեղեցկուհու հետ, որ նրա համար ճարել էին ճիզվիտները։ Խորամանկ պապը, որ վաղուց աչք ուներ Պորտուգալիայի թագավորության վրա, կրոնական փաստարկումներով ամուսնությունն արգելեց։ Իսկ Փիլիպոս II-ը, թագավորի մերձավոր ժառանգորդը, որ նույնպես փափագում էր Պորտուգալիան իր ձեռքը գցել, կարդինիլ-թագավորին սպառնաց, թե նրա տիրույթները կգրավի, եթե նա փորձի պապին լսել։ Հիվանդ ծերուկը երկար տառապեց և մեկուկես տարի հետո համբարձվեց այն աշխարհը։*

*Իսպանիայի թագավորն անմիջապես իր զորքերը մտցրեց Պորտուգալիա, ուշադրություն չդարձնելով ճիզվիտների ու զայրացած Գրիգոր XIII-ի բողոքների վրա. վերջինս պատրաստվում էր այդ գահը տալ իր ապօրինի որդուն։ Պապը, սակայն, չհամարձակվեց Փիլիպոս II-ին բանադրել, քանի որ նրա կարիքը շատ էր զգում և ստիպված եղավ հաղթողին շնորհավորել։*

## ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

Պապական տիրույթներում դրությունն օրեցօր վատթարանում էր։ Միլանին միանգամից պատուհասեց երկու աղետ՝ ժանտախտը և արքեպիսկոպոս Շառլ Բարոմեի քրոջորդին։ Սուրբ Հոր և նրա սիրեցյալ որդու խարդախությունների պատճառով Հռոմը հյուծվել էր. հայր ու որդի զբաղվում էին հացի սպեկուլյացիայով։

Բոլոր կողմերից Գրիգոր XIII-ի վրա անեծքներ էին թափվում։ «Շուտով,— պատմում է ժամանակագիրը,— ավազակախմբեր երևացին, որ թափառում էին ճանապարհներին, կողոպտում ճանապարհորդներին և վաճառականներին, հարձակումներ գործում նույնիսկ սուրբ քաղաքի վրա։

Սովից ու հուսահատությունից կողոպուտի դիմած այդ թշվառներին երբեմն պաշտպանում էին որոշ հզոր սենյորներ, որոնք պապի բռնակալությունն ատելով, ավազակներին ապաստան էին տալիս իրենց պալատներում։

Պապը կարգադրեց Հռոմի շրջակայքի բոլոր տներում խուզարկություն կատարել, և հատկապես ուշիուշով խուզարկել Ռայմոնդո Ուրսինոյի պալատը։

Կատարելով պապի հրամանը, սբիրները Ուրսինոյի պալատում ձերբակալեցին մի քանի անմեղ մարդկանց։ Բայց երբ նրանք արդեն պատրաստվում էին ձերբակալվածներին նետելու սուրբ Հրեշտակի ամրոցի նկուղները, իր շքախմբով հայտնվեց տանտերը։ Նա պահանջեց գերիներին ազատել, բայց հռոմեական կուրիայի սպան հրաժարվեց։ Տեղի ունեցավ ընդհարում, որի ժամանկ Ուրսինոն սպանվեց։

Սպանությունը ժողովրդի մեջ հուզում առաջացրեց, հռոմեացիները նետվեցին դեպի Վատիկան, և Գրիգորը ամբոխին միայն նրանով կարողացավ հանգստացնել, որ հրամայեց անմիջապես գլխատել Ուրսինոյին սպանող սպային ու վինվորներին։

Խոր ատելությունը, որ հասարակության բոլոր դասակարգերը տածում էին պապական բռնապետության նկատմամբ, Ռայմոնդո Ուրսինոյի եղբորն օգնեց խռովություն բարձրացնել և հարձակվել Գրիգորի թոռան ամրոցի վրա։ Իր ձեռքով սպանելով նրան, Ուրսինոն, դժգոհների բազմության գլուխն անցած, փախավ Հռոմից, որտեղ սարսափելի տեռորն էր սկսվել»։

Որքան էլ ավաղակախմբերը գրավեին Գրիգոր XIII-ի ուշադրությունը, նա, այնուամենայնիվ, չէր մոռանում իր փայփայած մյուս պլանները։ Պաշտպանելով Իսպանիայի շահերը, նա սատարում էր դուքս Անժուացուն, շարունակելով դավեր նյութել Նիդեռլանդների դեմ։ Իսկ երբ նրա դանձարանը նորից սկսեց դատարկվել, պապը որոշեց վերջնական հարված հասցնել և ասպարեզից հանել Օրանի թագաժառանգին՝ հռոմեական կուրիայի առավել ահեղ թշնամիներից մեկին։ Սակայն այն ճիզվիտը, որին հանձնարարված էր կատարել սուրբ առաքելությունը, վրիպեց (աստծո աջը ժամանակին գործին չէր խառնվել). նրան բռնեցին հանցանքի վայրում, և ժողովուրդը նրա հաշիվը տեսավ։

Դավադրության ձախողումը անխոնջ Գրիգոր XIII-ին կատաղեցրեց։ Լոյոլայի աշակերտների աջակցությամբ նա մի մոլեռանդ մարդ գտավ, որն ավելի հաջողակ դուրս եկավ, քան իր նախորդը, և սրախողխող արեց Հռոմի առաքելական եկեղեցու ամենաուժեղ թշնամուն։

Մարդասպան պապը փորձեց այդ նույն ձևով և ըստ հնարավորին արագ վերջ տալ նաև Եղիսաբեթ Անգլիացուն։ Զինելով մի ուրիշ մոլեռանդ մարդու, պապը նրան ուղարկեց Անգլիա։ Բայց այնտեղ դավադրությունը ձախողվեց, անհաջողակ գործակալին մերկացրին ու գլխատեցին։

Թանկ է նստում նահատակի լուսապսակը։

Եղիսաբեթ թագուհին, համբերությունը հատած, հանդես եկավ կաթոլիկների ու ճիզվիտների դեմ ուղղված մի ահեղ էդիկտով, մահապատժի սպառնալիքով նրանց արգելելով երևալ Բրիտանական կղզիներում։

## ԳՅՈՒՂԻՐ XIII-Ի ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ճիզվիտների գործերը որոշ երկրներում լավ չէին։ Գրիգոր XIII-ն անհրաժեշտ համարեց նրանց հեղինակությունը բարձրացնել Եվրոպայի աչքում։ Խորամանկ քահանայապետը Վատիկանում ճապոնական կարծեցյալ պատվիրակների սուտ ընդունելություն սարքեց։ Պատվիրակների դերը կատարում էին չորս ձկնորսներ, որոնց ճիզվիտները բերել էին Ճապոնիայից։ Հռոմ ժամանած կարծեցյալ պատվիրակներին դիմավորեց սուրբ կոլեգիայի պատվիրակությունը, և հյուրերին մեծ շուքով տարան պապի մոտ, որ նրանց ունկնդրության տվեց։

Ձկնորսները ծեր խեղկատակ Գրիգորին հանձնեցին Ճապոնական արքայորդիների հղած երևք ուղերձները։ Պայծառափայլ արքայորդիները խորագույն նվիրվածություն ու սեր արտահայտելով երկնային արքայի նկատմամբ, խորապես ափսոսում էին, որ հնարավորություն չունեն անձամբ հավաստելու իրենց երախտագիտությունը և թախանձագին խնդրում էին պարգևատրել խիղախ ճիղվիտներին՝ ճշմարիտ դավանանքի փութաջան պաշտպաններին։

Լսելով ուղերձը, Պետրոս առաքյալի տեղապահը գոչեց. «Փա՜ռք, փառք Հիսուսի քաջակորով զավակներին։ Փա՜ռք Իգնատիոս Լոյոլայի աշակերտներին։ Ես տեսա՜ ճիղվիտների հաղթանակը, հիմա տերը կարող է իր սուրուկին իր մոտ կանչել»։

Ջնայած վարպետորեն սարքված ներկայացմանը, Գրիգոր XIII-ի խաղացած կատակերգությունը ոչ ոքի չկարողացավ խաբել։

Մինչև կյանքի վերջը Գրիգորը շարունակում էր Եվրոպայում դավիր նյութել, որովհետև նրա ամբողջ քաղաքականությունը հիմնված էր խարդավանքների և երկպառակություններ սերմանելու վրա։ Բայց հանկարծակի նա կաթվածահար եղավ և մեռավ 1585 թվականի ապրիլի 10-ին։

Այդպես ավարտեց իր կյանքն այն գարշելի պապը, որ հանդգնել էր ջովաբանել Բարդուղիմեոսյան ջարդը ոդնշնչողներին։

## ԳՐԻԳՈՐ XIII-Ի ՀԱՋՈՐԴԸ

Ինչպես մեզ հաղորդում է տարեգրությունը, Ֆելիչե Պերետին ծնվել է աղքատ խաղողագործի ընտանիքում։ Երբ սբիրները մի փոքրիկ որսագողության համար անխղճորեն դատաստան են տեսել նրա հոր հետ, նրևխային տվել են հարևան ֆերմերի մոտ ծառայելու։ Մի երեկո ֆրանցիսկյան վանական Մալերին, ճանապարհը կորցնելով, հանդիպում է պատանի խոզարածին։ Տղան վանականին ճանապարհ է դուրս բերում և հետո էլ պատմում իր ընտանքի գլխին հկածը։ Կարեկցելով Ֆելիչեին, Մալերին նրան իր հետ տանում է վանք։ Պատանի մոնթն սկսում է սովորել մի աստվածաբան վանականի մոտ։ Իր տարիքին համեմատ շատ ալարդացած լինելով, Ֆելիչեն միանգամից արտակարգ ընդունակություններ և գիտությամբ զբաղվելու մեծ ջանասիրություն է դուցաբերում։ Նա դյուրագրգռության կարճատև նոպաներ էր

ունենում, որի համար ուսումնակիցները նրան «բռնկվող կրակ» էին անվանում։

Այլ պակասություն պատանի Ֆելիչեն չուներ։

Քսանվեց տարեկան հասակում նա աստվածաբանության դոկտորի աստիճան և պրոֆեսորի ամբիոն ստացավ։ Ութ տարի անց նա աչքի ընկավ որպես քարոզիչ, և վանական Պերետիի՝ երբեմնի խոզապահի կարիերան փոխվեց։ Իր քարոզներում նա մոլեռանդորեն կոչ էր անում ՛Էրկացնել հերետիկոսներին և իր վրա գրավեց ճիզվիտների ուշադրությունը։ Նրան Վենետիկի ինկվիզիտոր նշանակեցին։ Նրա անողորմ բնավորությունը և այն դաժան միջոցառումները, որ երկրում կիրառվում էին սուրբ ինկվիզիցիայի տրիբունալի այդ ժամանակվա հրահանգիչ Պիոս V-ի պահանջով, մեծ վայրույթ առաջացրին, և Պերետին, ժողովրդի դատաստանից փրկվելու համար, ստիպված եղավ փախչել։

Պատմում են, թե երբ կոլեգանները դրա համար նրան կշտամբել են, նա պատասխանել է. «ես երդվել եմ Հռոմի պապ դառնալ և չէի կարող թույլ տալ, որ Վենետիկում ինձ կախեին կամ սպանեին»։ Այդ երեբեսանի վանականը՝ ապագա Սիքստոս V-ը նահատակ դառնալու ցանկություն չուներ։

Ջազբելի Պիոս V-ի հովանավորության շնորհիվ Պերետին սկսեց արագորեն վեր բարձրանալ հիերարխիական աստիճաններով. նա եղել է Ֆրանցիսկյան միաբանության գեներալ, այնուհետև՝ եպիսկոպոս և, վերջապես, կարդինալ։ Նախքան Ծիրանի զգեներլը ու կարդինալական թասակ դնելը, Պերետին սուրբ Հոր հավատարիմ զինակիցն էր, իր հզոր ու արյունարբու խնամատարի ստույգ պատճենը։ Բայց, մտնելով սուրբ կոլեգիայի ավազակախմբի շարքերը, նա թերևս մտածեց, թե պապից ստացել է այն ամենը, ինչ հնարավոր է, և վարմունքը խիստ փոխեց. գայլը գառան մորթի հագավ։

## ԱՊԱԳԱ ՊԱՊԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պիոս V-ի մահից հետո կարդինալ Մոնտալտոն (այդ էր հիմա նրա անունը) թողեց իր շքեղ կեցավայրը և բնակություն հաստատեց Սանտա Մարիա Մաջորե եկեղեցուց ոչ հեռու գտնվող մի համեստ տնակում։ Մինչև Գրիգոր XIII-ի գահակալության վերջը կարդինալը մենության

էր տրված, շրջապատողներին ասելով, թե այսուհետև հոգ է տանելու իր հոգու փրկության մասին։ Արտաքուստ էլ նա շատ էր փոխվել. կորացել էր, զառամել, խոսում էր ցածր, կերկերուն ձայնով. իր կերպարանքով նա նման էր այնպիսի մարդու, որն ուր որ է պիտի մեռնի։ Գրիգորի գահակալության վերջերին նա առհասարակ դադարեց մարդամեջ դուրս գալ։

Երբ Գրիգոր XIII-ի թաղումից հետո կարդինալները կոնկլավի հավաքվեցին, Մոնտալտոն ավելի անօգնական ու զառամյալ մարդու տեսք ուներ։ Քանի որ սուրբ կոլեգիայի բոլոր անդամներն էլ ձգտում էին խույրին տիրանալ, նրանք իրենց ձայնը տվին կարդինալ Մոնտալտոյին, կարծելով, թե նոր պապը երկար չի ապրի, իսկ դրանից հետո իրենք որևէ այլ որոշման կհանգեն։ Նենգամիտ Մոնտալտոյի ընտրությունը տեղի ունեցավ 1585 թվականի փետրվարի 24-ին։

«Հենց որ Մոնտալտոն հաշվեց քսանվեց ձայն,— գրում է Մորիս Լաշատրը,— տեղի ունեցավ մի բոլորովին անսպասելի բան, որը կոնկլավին շվարեցրեց. կարդինալ Մոնտալտոն հպարտորեն ուղղվեց, դեն նետեց ձեռնափայտը և շնչեց կրծքով մեկ, ինչպես մի երեսնամյա առողջ մարդ։ Կարդինալները սարսափած իրար էին նայում։ Ավագը հասկանալով, որ իր կոլեգաները շտապել են և դրա համար զղջում են, գոչեց. «Սպասեցե՛ք, եղբայրք իմ, գուցե հաշվելիս սխալ է թույլ տրվել»։

«Ո՛չ,— կտրուկ առարկեց Մոնտալտոն,— ընտրությունը կատարվել է ըստ օրենքի»։ Եվ այն մարդը, որ մի ժամ առաջ հազից խեղդվելով չէր կարողանում մի բառ արտասանել, ղիլ ձայնով, ղղրդացնելով կապելլայի կամարները, սկսեց երգել. «Քնե՛ք ենք փառաբանում, տեր»։ Այնուհետև նա աղոթելու համար չոքեց գահի առաջ։ Սակայն կողքին կանգնած կարդինալ Մեդիչին նկատեց, որ նրա շրթունքները չեն շարժվում և նա, բնավ իսկ չհուզված, հանգիստ դիտում է փրկչի դեմքը։ Երբ նոր պապը տեղից բարձրացավ, կոնկլավի անդամներից մեկը նրան շնորհավորեց կատարված փոփոխության համար։ «Ես կորացել էի,— պատասխանեց Մոնտալտոն,— հուսալով երկրի վրա գտնել կաթոլիկական դրախտի բանալիները. այժմ, երբ դրանք իմ ձեռքումն են, ես կարող եմ աստծու դեմքին ուղիղ նայել»։ Երբ արարողապետը, նրան մոտենալով, ըստ ընդունված սովորության հարցրեց, թե համաձա՞յն է ընդունել քահանայապետի աստիճանը, Մոնտալտոն պատասխանեց. «Ես չեմ կարող ստանալ ավելին, քան ստացել եմ, բայց ես չէի հրաժարվի ավելիից, որովհետև իմ մեջ այնպիսի ուժ եմ զգում, որ կարող եմ կառավարել ոչ միայն եկեղեցին, այլև ամբողջ տիեզերքը»։ Դրանից

*Հետո նա վերցրեց քահանայապետի զգեստը և, առանց սենեկապետի օգնությանը դիմելու, հագավ։ Այս ամենն այնքան արտասովոր էր, որ կարդինալ Ռուստիկուչին չկարողացավ իրեն զսպել և ասաց. «Ես տեսնում եմ, սրբազնագույն Հայր, որ գայիսոնը բուժում է հիվանդ կարդինալներին և վերականգնում նրանց երիտասարդությունը»։*

*«Ես դրան համոզվեցի սեփական փորձով»,— անվրդով պատասխանեց Մոնտալտոն և խույրը դրեց գլխին։ Նա գահ բարձրացավ Սիքստոս V անունով։*

## ՏՈՒՐ ԴԵԲՅՈՒՏ

*Նոր պապի թագադրության օրը, փոխանակ ըստ սահմանված ավանդույթների համընդհանուր ներում հայտարարելու, նա, իխրատ այլոց, կառափնարան ուղարկեց առանձնապես հնամառող վաթսուն հերետիկոսների։*

*Տարեգիրները պատմում են, թե Սիքստոս V-ը չողորմաց նաև կարծեցյալ ճապոնական պատվիրակներին։ Շատ լավ իմանալով, որ այդ ողորմելի զավեշտախաղը մեռած պապն էր սարքել, նա, պապության վրա ստվեր չգցելու համար, գերադասեց անմիտ մեքենայության հետքերը թաքցնել։ Սուրբ Հայրը չզլացավ նրանց պատիվներ տալ. թույլ տվեց կատարել իր կոշիկները համբուրելու ծեսը, «ոսկե խթանների կավալերի»՝ հռոմեական պատրիկների կոչում շնորհեց, հանդիսավոր ժամերգության ժամանակ նրանց ինքը մատուցեց սուրբ հաղորդությունը և, որ ավելի էական էր, հրավիրեց ճոխ ճաշկերույթի, որից հետո, հանձնելով ճապոնական արքայորդիներին ուղղված նամակները, ճամփու դրեց։*

*Այդ սուտ պատվիրակների մասին, ծով դուրս գալու օրից ի վեր, ոչ ոք այլևս ոչինչ չի լսել։ Ժամանակագրության չարալեզու հեղինակները հանդգնություն ունեն պնդելու, թե այն ճիվաղիտը, «որին հանձնարարված էր պատվիրակներին ուղեկցել, իր գեներալին հայտնել էր, թե նորին սրբազնության հետ ունեցած գաղտնի զրույցի ժամանակ նա իրեն ասել է. «Կատակերգությունը վերջացավ, կատարեցեք մեր կամքը, և թող ծովը նրանց համար գերեզման դառնա»։*

*Գահ բարձրանալուն պես Սիքստոսն իր մոտ կանչեց իր քույր Քամիլլային ու նրա երեխաներին, նրան պալատ ու կալվածքներ նվի-*

եց և շատ մեծ կենսաթոշակ նշանակեց։ Հետևյալ օրը Հռոմում բերա-
յից բերան էր անցնում մի անեկդոտ, թե ինչպես է լվացարարուհին
արքայադուստր դարձել։ Լսելով այդ անեկդոտը, Սիքստոսը գալարվեց և
ոռմայեց, ինչ գնով էլ որ լինի գտնել հեղինակին, գտնողին քառասուն
ազար էկյու պարգև խոստանալով։

Թեև Սիքստոսի դաժանությունը բոլորին հայտնի էր, հեղինակը
իամտաբար ինքը ներկայացավ սուրբ Հորը։ Նա թանկ հատուցեց իր
նզգուշության համար։ Պապը գանձապահին կարգադրեց նրան քառա-
ուն հազար էկյու վճարել, իսկ այնուհետև դահճին հրամայեց կտրել
ր լեզուն և աջ ձեռքը։ Երկու կարգադրություններն էլ անհապաղ ի
ատար ածվեցին։

Բարբարոսակա՞ն միջոց՝ համոզելու համար, թե ավելի լավ է
զուն իրեն քաշել։

Ինչպես երևում է, նախկին խոզարածը դյուրազդայուն չի եղել։
ա պաշտոնանկ արեց բոլոր այն դատավորներին, որ Գրիգոր պապի
ոք ներողամիտ էին եղել հերետիկոսների նկատմամբ, պապական
արզերում ընդլայնեց ներքին ոստիկանության իրավասությունները,
ան թույլ տալով գործել ըստ իր հայեցողության։ Բացի դրանից, նա
ի էդիկտ հրապարակեց, որը մահապատժի էր դատապարտում բոլոր
անց, ովքեր կբռնվեին ամուսնական անհավատարմության մեջ (դա
ատելիորեն ազդեց հավիտենական քաղաքի բնակչության թվի վրա)։

Տարեգիրները պատմում են Սիքստոսի դաժանությունը վկայող
յսպիսի մի դեպք. Սալերնոյում ապրող ոմն սենյոր, որ քահանայա-
ետի հպատակ չէր, կարծում էր, թե այդ սոսկալի էդիկտն իրեն չի
րաբերվում։ Սիքստոս V-ը գաղաղեց, երբ իմացավ, որ օտարներկ-
ացին համարձակվել է հրամանին չենթարկվել, և պահանջեց, որ նա-
սնգապետը խստագույնս հետևի օրենքին։ Վերջինս ասաց, թե օրի-
ազանցները Նեապոլի թագավորության հպատակներ են, ուստի նրանց
կարելի դատել այլ երկրի օրենքով։ «Դա՞ է, ինչը ձեզ հետ է պա-
ում,— հարցրեց պապը,— եթե դուք այդքան բարեխիղճ եք, սիրեկան-
րին ու ամուսնուն կախեցեք այն նույն պարանով, որ գնված է նեա-
ոլում»։ Բարեպաշտ հայրը ճանաչում էր միայն այն օրենքները, որ
ք էր հորինում։ Եղջ ամուսինը ներողամտության համար շատ թանկ
տուցեց. նրան կախաղան հանեցին այն բանի համար, որ ևղջյուրա-
ր էր։ Արդյոք չափազանց շա՞տ չէին մի գլխի վրա թափված այդ
րձանքները։

Վճռելով հանցագործությունները արմատախիլ անել, պապը մի

տարօրինակ միտք հղացավ՝ սանձահարել լկտիացած կղերականներին։ Դա վերաբերվում էր, մասնավորապես, սուրբ կոլեգիայի անդամ կարդինալներին, որոնք, չարաշահելով անձեռնմխելիության իրավունքը, երբեք իրենց պարտքերը չէին վճարում։ Այդ բարեպաշտներին օրինակ տալու համար պապը վճարեց բոլոր հին պարտքերը (ի դեպ ասենք, որ դա նրա համար դժվար չէր, քանզի մի ձեռքով վճարում էր, մյուսով՝ վերցնում)։ Նա իր մայրաքաղաքի բնակչության վրա արտահերթ հարկեր դրեց և ամենայն խստությամբ հետևում էր տուրքերի հավաքմանը, մի բան, որ համաժողովրդական խռովություն հարուցեց։

Բռնապետներից շատերի պես վախկոտ լինելով, Սիքստոս V-ը իր կյանքի վրա դողում էր և այդ պատճառով բոլոր քաղաքացիներին արգելեց քաղաքում գենք կրել։ Բոլոր նրանց, ով կհամարձակվեր հրամանը խախտել, մահապատիժ էր սպասում։ Նա չհնազանդեց նույնիսկ մի պատանու, որը իրեն վիրավորող սբիրների վրա դաշույն էր բարձրացրել, և տասնվեցամյա տղային մահապատժի դատապարտեց։ Երբ դատապաշտպանը վկայակոչեց այն օրենքը, որ արգելում էր տնչափահասներին մահապատժի ենթարկել, սուրբ հայրը բացականչեց. «Աստծուց ինձ վստահված իշխանությամբ ես նրան տալիս եմ իմ տեփական տասը սույիները, օրենքն ի կատա՛ր ածեցեք»։

## ՍԻՔՍՏՈՍ V-Ը ՓՈՐՁՈՒՄ Է ՍՊԱՌՆԱԼ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ

Թշնամիների հետ դաժան դատաստան տեսնելով, Սիքստոսը որոշեց պայքարի դուրս գալ եվրոպական միապետների, և նույնիսկ մի այնպիսի մոլեռանդ կաթոլիկի դեմ, որ Փիլիպոս II-ն էր։

Նախ և առաջ նա սկսեց դավեր նյութել Ֆրանսիայի դեմ, շարունակելով Գրիգոր XIII-ի քաղաքականությունը։ Նա կաթոլիկներին գրգռեց ընդդեմ Բուրբոնների, մի ահեղ կոնդակով հարձակվեց Հերետիկոս ու պառակտիչ Հենրիխ Նավարացու և բոլոր բողոքականների վրա։ Հենրիխը, իր հերթին, դավաճան պապի ու հակաքրիստոնյայի վրա լուտանք էր տեղում այն կոչերի մեջ, որ փակցվում էին տների պատերին, և պապին մնում էր միայն զարմանալ նրա արիության վրա, որով ամբողջ քրիստոնեական աշխարհը հիացած էր։

Սիքստոսի գահ բարձրանալը Անգլիայում սենսացիա առաջացրեց։

Եղիսաբեթ թագուհին դեսպան ուղարկեց Հռոմ, որպեսզի պարզի պապի մտադրությունները նոր, անգլիկան հակեզեցու նկատմամբ։ Եղիսաբեթը դիվանագետին հանձնեց իր դիմանկարը, որ զարդարված էր բանկարժեք քարերով (դա նախատեսված էր պապի քրոջորդի կարդինալ Ալեքսանդրի համար), և հրամայեց ամեն կերպ նվաճել պապի բարեհաճությունը։

Սիքստոսը երիտասարդ դեսպանին շատ սիրալիր ընդունեց, մեծ հետաքրքրությամբ հարցուփորձ անելով Անգլիայի տիրուհու մասին։ Երբ երիտասարդ դիվանագետը, առիթից օգտվելով, հանձնեց կայսրուհու դիմանկարը, նորին սրբազնությունը, ուշադիր զննելուց հետո, տրխրորեն բացականչեց. «Աղնվակա՜ն դեմք, Հիանալի՜ կին։ Հաճախ եմ ափսոսում, որ իմ աստիճանը ինձ զրկում է ամուսնանալու հնարավորությունից։ Երդվում եմ Քրիստոսի մորուքով, որ ես միայն Եղիսաբեթին կընտրեի, և մեր երեխաները մեզ արժանի՜ կլինեին»։

Ունկնդրությունը ավարտելուց հետո նորին սրբազնությունը, իր քրոջորդուն հանձնարարեց դեսպանին արժանի ուշադրություն ցույց տալ։ Ալեքսանդրի հետ վարած զրույցից դեսպանը կարողացավ նպաստավոր շատ տեղեկություններ քաղել, թե նորին սրբազնությունն ինչպես է վերաբերվում Իսպանիայի նկատմամբ Եղիսաբեթի ունեցած նկրտումներին։ Ի նշան թագուհու նկատմամբ տածած իր խորին հարգանքի, պապը քրոջորդուն լիազորեց նրան նվիրել իր դիմանկարը։ Ուրախացած դեսպանն անմիջապես Եղիսաբեթին գրեց, թե իր առաքելությունը հաջողությամբ է պսակվել, և թագուհուն առաջարկեց անհապաղ նիդեռլանդների հետ հաշտաձայնություն կնքել և զորքերը շարժել իսպանացիների դեմ։

Ինչպես կարելի է ենթադրել, ուխտադրուժ պապը պարզապես հիմարացրել էր պարզամիտ դեսպանին։ Իրականում Սիքստոս V-ը հետապնդում էր միայն մեկ նպատակ. իրար դեմ հանել երկու միապետներին և ի շահ Հռոմի թուլացնել թե՛ մեկին և թե՛ մյուսին։ Իսկ հանրապետությունների նկատմամբ խորամանկ Սիքստոսը խաղաղասիրական քաղաքականություն էր վարում։

Մի անգամ նա խիստ նկատողություն արեց իր նունցիային, որը հրամայել էր Շվեյցարիայի հողում ձերբակալել մի բողոքական քահանայի։ Ահա թե ինչ է գրել պապը իր չափից ավելի փութաջան ծառային. «Մի՞թե դուք մոռացել եք, որ մենք ձեզ Շվեյցարիա ենք ուղարկել նրա համար, որ կանտոնների միջև խաղաղություն հաստատեք, այլ ոչ թե խառնակությունը սաստկացնեք։ Մենք ձեզ հանձնարարել ենք

*հերետիկոսների ու կաթոլիկների միջև հաշտություն հաստատել, այլ ոչ թե նրանց իրար դեմ հանել։ Ժամանակն է հասկանալու, որ մեզ համար օգտակար չէ ալլատ ժողովուրդների հետ վարվել այնպես, ինչպես մենք վարվում ենք իշխանավորների հետ։ Անկախ ժողովուրդների ամեն տեսակ հուզումներն ու հեղափոխությունները քրիստոնյաների համար միշտ վտանգավոր են և, ընդհակառակը, միշտ նպաստավոր՝ հերետիկոսների համար։ Ես կտրականապես ձեզ առաջարկում եմ զգույշ գործել և զուսպ լինել այն շվեյցարացիների նկատմամբ, որ հրա֊ժարվում են մտնել մեր եկեղեցու գիրկը։ Մի՛ ընդօրինակեք այն ճիզվիտների անշնորհք փութաջանությունը, որ, ցանկանալով մեր գահը պաշտպանել, երբեմն նրան շատ ծանր հարվածներ են հասցնում»։*

## ՊԱՊԸ ԵՎ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՅՐԵՐԸ

*Եվ հիրավի, ճիզվիտները, որ ի փառս սուրբ գործի ոչ մի հանցագործության առաջ կանգ չէին առնում, շատ անգամ են պապությունը վարկաբեկել։ Սիքստոս V֊ի դիվանագիտական խաղը Լոյոլայի որդիների սրտովը չէր։ Նրանք փորձեցին իրենց կողմը քաշել Սիքստոսի քրոջորդուն, և նա սուրբ Հորն առաջարկեց խոստովանահայր վերցնել մի ճիզվիտի։ Քևին ի պատասխան խստիվ խրատեց նրան, արգելեց մտերմանալ այդ կեղտոտ խաբեբաների հետ և ավելացրեց. «Ներանց համար օգտակար կլիներ, որ իրենք խոստովանեին ինձ, այլ ոչ թե լսեին իմ խոստովանությունը»։ Իսկ երբ զայրույթն իջավ, խորհեց ու տեսավ, որ սուրբ աթոռի համար ավելի օգտակար կլինի խորամանկության մեջ ճիզվիտներին գերազանցել և, անսալով քրոջորդու խընդրանքներըր, նույնիսկ համաձայնվեց ներկա լինել ճիզվիտների ժամերգությանը։*

*Պատմում են, թե պապի ներկայությամբ հանդիսավորապես նվիրագործված պատարագից հետո բարեպաշտ հայրերը նրան խնդրեցին շնորհ անել այցելելու իրենց համայնքը։ Սակայն երբ պապը ցանկություն հայտնեց տեսնել նաև այն նկուղները, որտեղ պահվում էին նրանց գանձերը, համայնքի ղեկավարը տխրորեն պատասխանեց. «Ավա՛ղ, նկուղները դատարկ են։ Դեռ երբեք համայնքը այնքան աղքատ չի եղել, ինչպես հիմա, ձերո սրբազնության իշխանության ներ-*

քո»։ «Իսկ ի՞նչ են եղել այն հարստությունները, որ դուք դիզել եք Ամերիկայում ու Ճապոնիայում,— իրեն չկարողացավ չսպել Սիքստոս V-ը— Ձեր կատարած սպանությունների համար ձեզ քիչ չեն վճարում։ Հիմա ես տեսնում եմ, որ ձեր դեմ ուղղված բոլոր մեղադրանքները բնավ զրպարտություն չեն։ Դուք երկերեսանիորեն ձեր հանցագործությունները թաքցնում եք ճիշտ այնպես, ինչպես ձեր գանձերը։ Շուտով ես կզբաղվեմ ձեր վարքով ու գանձարանով։ Ես լա՜վ կհոգամ ձեզ լավագույն քրիստոնյաներ դարձնելու մասին»։

Բայց, չնայած սև բանակը սանձահարելու մեծ ցանկությանը, սուրբ հայրն ի վիճակի չէր իր մտադրությունը կատարել։ Նա կարգինալ Ալդոբրանդինիին հանձնարարեց ուսումնասիրել ճիզվիտների դեմ հարուցված բոլոր բողոքները։ Արդյունքը շատ հետաքրքիր էր։ Ալդոբրանդինիի գլխավորած հանձնաժողովի անդամներն ասացին, թե «Իտալիայում չեն գտել մի վանք, որտեղ վանականները չտրվեին հարբեցողության, պատարկապորտության, արվամոլության և այլ գարշանքների։ Ավստրիայում այցելելով տղամարդկանց և կանանց հարյուր քսանհրկու վանք, հանձնաժողովի անդամները տղամարդկանց վանքերում հաշվել են հարյուր իննսունինը պոռնիկ, տասներկու տարեկանից վոքր հիսունհինգ տղա ու աղջիկ, կանանց վանքերում՝ չորս հարյուր քառասունհինգ տղամարդ, որ ծառանների ու սիրեկանների դեր էին կատարում»։

Ինչ վերաբերում է Ֆրանսիայում գտնվող վանքերին, ապա դրանց վիճակը նրանք ավելի խայտառակ էին համարում։

Բարոյախոս Սիքստոսը մեծ թափով հարձակվեց նաև հագուստի և կենցաղավարության ավելորդ շքեղությունների վրա, որը նրա նկատմամբ բացառիկ ատելություն առաջացրեց վաճառականների ու իգական սեռի շրջաններում։

## ԵՐԿԵՐԵՍԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիքստոս V-ը, այդ հույժ ճարպիկ բանսարկուն, շատ արտասովոր դեր է խաղացել այն պատերազմում, որ հայտնի է երեք Հենրիխների պատերազմ անունով։ Կուսակցություններին իրար դեմ գրգռելով, նա Լիգային չէր պաշտպանում, բայց այդ նույն ժամանակ խստորեն դա-

տապարտում էր Ֆրանսիայի թագավորների ոտնձգությունները և բա-
նադրում Հենրիխ Նավարացուն։ Դաժան ու նենգ պապն ուզում էր, որ
երեք կուսակցություններն էլ պարտվեն, և երկպառակության մեջ
սուրբ աթոռի համար օգուտ էր ակնկալում։

Եկեղեցու պարագլուխը նույնպիսի քաղաքականություն էր վա-
րում նաև Եղիսաբեթի նկատմամբ։ Թագուհուն ցույց տված նրա հար-
դանքն առերես էր, ձևական, և նրան բնավ չէր խանգարում Իսպանիայի
դեսպանին ու ճիզվիտներին օգնել Անգլիայի թագուհու դեմ դավադրու-
թյուն կազմակերպելուն, որի հետևանքով արյունոտված թագը կանցներ
Մարիա Ստյուարտին։

Բայց այդ «ազնիվ» մարդիկ, որ գործում էին ի փառս ողորմած
պատծո, անհաջողության մատնվեցին. դավադրությունը բացահայտ-
վեց, նրա բոլոր մասնակիցները ձերբակալվեցին և մահապատժի են-
թարկվեցին՝ մեղադրվելով պետական հանցագործության մեջ։ Իսկ
Մարիա Ստյուարտը Եղիսաբեթի դատավճռով գլխատվեց։

«Բնավ իսկ չհուզվելով Շոտլանդիայի թագուհու ողբերգական
մահվան առթիվ,— գրում է պատմաբան Լեսլին,— պապն իր դեսպանին
լսելուց հետո ասաց. «Նախանձում եմ քեզ, Եղիսաբեթ, քանզի ասա-
ված քեզ բախտ է տվել, քո ոտքերի տակ թագակիր գլուխ ընկավ, մինչ-
դեռ ես սիրտ սենյորների, մուտ արկածախնդիրների ու թշվառ թուղթ
մրոտողների արյունն եմ թափում»։ Եվ նա անմիջապես իր բարեկամ
Փիլիպոս II-ին առաջարկեց Մարիա Ստյուարտի մահապատժից օգուտ
քաղել»։

Իսպանիայի թագավորը հավանություն տվեց Սիքստոսի մտահղաց-
մանը, առաջադրելով մի շարք պայմաններ, այդ թվում՝ կարդինալական
թասակ շնորհել անգլիացի Ալանին՝ Իսպանիային վաճառված դավաճա-
նին։ Պապը պայմաններն ընդունեց և սրբ Ալանին իբրև լեգատ ուղար-
կեց Իսպանիա, որպեսզի թագավորին շտապեցնի բանակը պատ-
րաստելու Անգլիայի դեմ կռվելու համար։

Գաղտնի համաձայնագրի մեջ պապը պարտավորվեց մեկ միլիոն
էկյու վճարել հենց որ իսպանական զորքերը գրավեն Թեկուզ մի անգ-
լիական քաղաք։ Դեռ ավելին, պապը խոստացավ Փիլիպոս II-ի տի-
րույթներում արտակարգ տուրքերը չեղյալ համարել։ Սակայն Փիլիպո-
սը շատ էլ չվստահելով պապին, ռազմական գործողություններ չէր
սկսում և, վախենալով, որ Վատիկանը կարող է խաբել, պահանջեց
Անգլիայի թագուհուն հանդիսավորապես բանակցել։ Պապը շտապեց
բավարարել իր արժանավոր զինակցի պահանջը և կարդինալների ու

արտասահմանյան դեսպանների ժողովում հանդես եկավ մի երկարաշունչ կոնդակով.

«Մենք, Սիքստոս V-ը, Քրիստոսի հոտի տիեզերական հովիվը, երկրիս վրա գերագույն տիրակալը, տեսանք, որ Անգլիայի ու Իռլանդիայի ժողովուրդները պիղծ ու արյունարբու եղիսաբեթի իշխանությանը ենթարկվելու պատճառով թաղվել են հերետիկոսության մեջ, որն սպառնում է հեղեղել ամբողջ քրիստոնեական աշխարհը, և նրա նման հրաժարվում են ճանաչել հռոմեական եկեղեցու իշխանությունը։ Մոլորյալ հոգիները տառապանքից ու տանջանքից փրկելու համար, հանուն քրիստոնեական աշխարհի հանգստության ու միասնության, մենք զահընկեց ենք անում հերետիկոսուհի եղիսաբեթին, որն անօրինաբար հավակնում է կրել Բրիտանական կղզիների թագուհու տիտղոսը։ Սուրբ հոգու ներշնչմամբ, հանուն եկեղեցու համընդհանուր քարօրության, մենք հաստատում ենք մեր նախորդներ Պիոս V-ի և Գրիգոր XIII-ի վճիռը այդ նոր ուրացողի նկատմամբ։ Մենք նրան զրկում ենք թագավորական կոչումից, իրավունքներից ու արտոնություններից։ Մենք բոլոր հպատակներին ազատում ենք հավատարմության երդումից և արգելում որևէ ծառայություն մատուցել արգահատելի հերետիկոսուհուն։ Թող ո՛չ մի ձեռք նրան օգնության չհասնի։ Թող նա մենակ լինի և հալածվի որպես դիվահար։ Խարանեցեք և հալածեցեք նրա բոլոր կողմնակիցներին, ողջ թե մեռած, և թող նրանց դատի ինկվիզիցիայի տրիբունալը։ Մենք խոստանում ենք ոչ միայն հավիտյան կյանքում, այլև այս աշխարհում վարձահատույց լինել բոլոր նրանց, ովքեր սուրբ եկեղեցու առաջ կկատարեն իրենց պարտքը։ Մենք մեղքերի թողություն ենք տալիս բոլոր նրանց, ովքեր զենք վերցնելով, մեր թանկագին որդյակ Փիլիպոս II-ի առաջնորդությամբ կգնան մարտնչելու պիղծ եղիսաբեթի դեմ։ Մենք Բրիտանական կղզիները լրիվ հանձնում ենք միապետի լիիրավ իշխանությանը ի հատուցումն սուրբ գահին մատուցած նրա փութաջան ծառայության և Նիդեռլանդների բարեպաշտ կաթոլիկների նկատմամբ ցուցաբերած սիրո»։

Ջանգերի ղողանջների ներքո, բանադրանքը հրապարակվեց հազարավոր մոմերի լույսով լուսավորված բոլոր քրիստոնեական եկեղեցիներում։ Մադրիդում, էսկուրիալի սևով պատած մատուռում, Իսպանիայի թագավորը, ոտից գլուխ սև հագած, շրջապատված բարձր աստիճանավորներով, նունցիային հրամայեց հրապարակել «արգահատելի եղիսաբեթի» ահեղ բանադրանքը։

## ԶԱԶՐԵԼԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

*Թվում էր, թե Սիքստոս V-ն իսկապես մտադրվել է Փիլիպոս II-ի կողմն անցնել և նրա համար ապահովել Անգլիայի թագը։ Անգլիայի դեսպանը, համոզվելով, որ հռոմեական կուրիան իրեն խաբել է, արդեն պատրաստվում էր հավերժական քաղաքից մեկնել, երբ քահանայապետը նրան իր մոտ հրավիրեց։ Սիքստոսը նրա հետ երկար խոսեց «իշխանավորների ծանր կացության մասին, թե ինչպես նրանք հարկադրված են իրենց մտքերը թաքցնել և գործել հակառակ իրենց զգացումների»։ Նա դեսպանին վերստին հավաստեց եղիսաբեթի նկատմամբ տածած իր խորին հարգանքը և բարեկամական ազնիվ զգացումները և նույնիսկ խնդրեց անհապաղ թագուհուն գրել և նախազգուշացնել, որ Փիլիպոս II-ը նրա դեմ դավեր է նյութում, և նշել, որ «անառակ շռայլանդուհու սպանությամբ իր դեմ հարուցելով իսպանացու զայրույթը, եղիսաբեթը իրեն վտանգի տակ է դրել, քանի Փիլիպոսի գործակալները կարող են նրան սպանել»։ Նա ասաց, թե «պապի տիտղոսն իրեն ստիպում է հանդես գալ ատելի Փիլիպոսի կողմում, որին ինքն այնպես կպատժեր, ինչպես եղիսաբեթը Մարիա Ստյուարտին»։ Վերջապես, պապը երդվեց, թե Փիլիպոսին իր կողմից խոստացված օգնությունը խաբեական է, քանի որ բանը հանգում է սոսկ ապուշ Ալանին կարմիր թասակ տալուն և եղիսաբեթի ծիծաղելի բանադրմանը, թե Փիլիպոսին խոստացած մեկ միլիոն էկյուն ինքը պարտավորվել է վճարել վեց ամիս հետո միայն, երբ իսպանական զորքերը կգրավեն Անգլիայի մի մասը, մի բան, որ, անշուշտ, թագուհին թույլ չի տա։ Սիքստոսը եղիսաբեթի դեսպանին հանձնեց Իսպանիայի թագավորի հանգամանալից նամակն իր բանակի վիճակի, զորավարների և արշավանքի պլանի մասին։ Մի խոսքով, Սիքստոս V-ը դավաճանեց Փիլիպոսին։*

*Ստանալով այդ տեղեկությունները և լսելով դեսպանի մեկնաբանությունները, եղիսաբեթը, վատիկանի Յուպիտերի նման, խաղաց նույն կատակերգությունը. որպես անգլիկան եկեղեցու պարագլուխ, թագուհին բանադրեց սուրբ Հորը և նրա սրբազան կլիկը, բոլոր նրանց, ով կոնդակի տակ դրել էր իր ստորագրությունը։*

*Անգլիայի և Իսպանիայի պայքարն ավարտվեց Փիլիպոս II-ի պարտությամբ։ Դրա լուրը բուռն ուրախություն պատճառեց Սիքստոս V-ին, երբ անգլիական դեսպանը Սիքստոսին կարդում էր եղիսաբեթի*

*Հաղթական ճեպագիրը, ներս մտավ պապի եղբորորդի կարդինալ Մոնտալտոն, և Սիքստոս V-ը չկարողացավ չբացականչել. «Ուրախացի՛ր, սիրելիս, Փիլիպոս II-ը պարտվեց, Նեապոլի թագավորությունը հիմա մեր ձեռքումն է»։*

## ՊԱՊԻ ՈՒ ԿԱՅՍԵՐ ՎԵՃԸ

*Անգլիային ու Իսպանիային իրար դեմ հանելով, Սիքստոս V-ը հայացքն ուղղեց դեպի Գերմանիա և եպիսկոպոսներին ու կաթոլիկական միաբանություններին առաջարկեց չենթարկվել Ռուդոլֆ II կայսրին։*

*Հռոմեական արքունիքում գերմանական դեսպան կայսեր անունից խիստ բողոք հայտնեց։ Դեսպանին, սակայն, պատասխանեցին, թե նրա բողոքները չեն կարող ընդունվել, թե նրան, որպես կայսեր պաշտոնական ներկայացուցչի, պետք է հայտնի լինի, թե Գերմանիայի կայսրերը որքան շատ են պարտական պապերին, թե պապերը կայսրերին թագը հանձնել են սուրբ աթոռի շահերը պաշտպանելու համար, թե Քրիստոսի կուսակալները միայն աստծուն են ենթարկվում և աշխարհիկ իշխանատերերին թույլ չեն տա, որ եկեղեցու ծառաներին նրբանք նշանակեն։*

*Կայսեր դեսպանը ճարպկորեն ժխտեց պապի փաստարկները, ասելով, որ «եթե եկեղեցու գործերին աշխարհիկ տիրակալների խառնվելն անարդարացի է, ապա ոչ պակաս անարդարացի է նորին սրբազնության խառնվելը աշխարհիկ գործերին»։ Եվ դեսպանը պնդեց, որ Հռոմի պրեֆեկտ նշանակելու իրավունքը պատկանում է կայսրին։*

*Նրան պատասխանելով, Սիքստոս V-ը զայրացած ասաց. «Ձեր տերը Հռոմեացիների թագավոր է Գերմանիայում, դա ճիշտ է, սակայն Հռոմի վրա նա ոչ մի իշխանություն չունի, որովհետև այստեղ ես եմ միակ օրինական տերը։ Մի ժամանակ պապերը Հռոմի պրեֆեկտ նշանակելիս խնդրում էին կայսրերի թույլտվությունը։ Այլևս այդպես չի լինի։ Ես եմ Հռոմի կայսրը, քաղաքն իմն է, և ես որոշել եմ իմ իրավունքը պաշտպանել նրանցից, ովքեր կփորձեն խառնվել իմ պետության գործերին։ Ավետարանն անհրաժեշտ է համարում կեսարին տալ կեսարինը և աստծուն՝ աստծունը, բայց աշխարհը պատկանում է աստծուն և նրա կուսակալներին, նշանակում է, թագավորն իրավունք ունի լոկ այն*

բանի վրա, ինչը հաճելի է պապին։ Թագավորներն ու կայսրերը մեր հպատակներն են»։

Եվ այսպես բարբաջում էր կուսակալը այն Քրիստոսի, որն ասել է. «Իմ թագավորությունն այս երկրում չէ»։

## ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈԼԱՑԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՎՐԵԺԸ

Անգլո-իսպանական պատերազմից հետո Սիքստոս V-ի և Փիլիպոս II-ի հարաբերությունները վերջնականապես փչացան։ Պապը չստացավ Նեապոլի թագավորությունը և շարունակում էր ինտրիգներ նյութել Իսպանիայի թագավորի դեմ, հիմա էլ եղիսաբեթին դրդելով հարձակվել Փիլիպոս II-ի վրա և նրա դատաստանը տեսնել։

Եղիսաբեթն անսաց Սիքստոսի խորհուրդները և փորձեց Պորտուգալիան զավթել։ Փորձը ձախողվեց, և սուրբ Հայրը գազազեց։ Պապը եղիսաբեթին գրեց, թե «Պորտուգալիայում նա իրեն պահել է որպես կին, այլ ոչ թե որպես թագուհի», և թե «Փիլիպոս II-ը կհաղթի, եթե նա այդպես հապաղի նաև Ֆրանսիայում»։

Համոզվելով, որ Լիգան վերջին շնչի վրա է, իսկ ճիզվիտները վաճառվել են Իսպանիային, Սիքստոս V-ը սկսեց բացահայտորեն սատարել Հենրիխ IV-ին, որը պաշարել էր Փարիզը։

Երբ Ֆրանսիայի մայրաքաղաքում սով սկսվեց, սև այրերը, ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու նպատակով, շքեղ թափոր կազմակերպեցին։

Մի ժամանակագրության հեղինակ պատմում է. «Պապական լեգատը և եպիսկոպոս Սանլիսը ներկա էին արաբողությանը. աջ ձեռքով խաչը և ձախով սակրատեզը բռնած, նրանք գլխավորում էին թափորը։ Նրանց ետևից շարժվում էին հազար երկու հարյուր վանականներ, որոնք փարաջանների վրայից լանջապանակներ էին զգեստել, իսկ կնգուղների վրա՝ սաղավարտներ դրել։ Հին մուշկետներով ու սրերով զինված հինգ հարյուր ճիզվիտներ ու երկու հարյուր քահանաներ գտնվում էին թափորի կենտրոնում։ Բայց ամենից շատ իր վրա ուշադրություն էր գրավում մի շաղատան կաղ վանական, որին հայր Բեռնարդ էին անվանում։ Ժամանակ առ ժամանակ մերթ ոտքերի, մերթ ձեռքերի վրա արտասովոր թեթևությամբ վազելով թափորի գլխամասից դեպի պոչը,

նա կարճ կանգառներ էր կատարում, վերցնում մի վիթխարի թուր և իսկական ձեռնածուի ճարպկությամբ կուլ տալիս»։

Այդ տոնակատարությունը կազմակերպողների դեմ սաստիկ զայրացած պապը որոշեց խիստ միջոցների դիմել։ Սիքստոսը միաբանության գեներալին հրամայեց, որ նա իր ընկերության անդամներին արգելի արքայորդիների և իշխանների պալատներում խոստովանահայրերի դեր կատարելը։ Նա միաժամանակ պահանջեց Շոտլանդիայից, Նիդեռլանդներից, Իռլանդիայից ու Անգլիայից եւս կանչել բոլոր հիզվիտ միսիոներներին՝ իբրև բոլոր երկպառակությունների ու անկարգությունների կազմակերպիչների։ Ի վերջո, սուրբ հայրն ասաց, թե հիզվիտների միաբանությունը վանականների ուխտ համարելը սրբապղծություն է և թե այդուհետև Իգնատիոս Լոյոլայի աշակերտները պետք է կոչվեն ոչ թե հիզվիտներ, այլ իգնատականներ։ Բացի դրանից, պապն ասաց, թե իր համբերությունը հատել է և այդ ընկերության անդամների հանցագործությունները, դավաճանությունները և անհագ փառամոլությունն իրեն ստիպում են խորհել արմատական ռեֆորմի և չարիքն արմատախիլ անելու մասին։

Այդ ելույթի հաջորդ օրը Հռոմի արձաններից մեկի պատվանդանի վրա փակցված էր հետևյալ հայտարարությունը. «Սիքստոս պապը կյանքից հոգնել է»։

Եվ իսկապես, մի քանի օր հետո նորին սրբազնությունը մեռավ թույնից։

Ինչպես տեսնում ենք, Սիքստոսը մեծ սխալ գործեց, հանդես գալով նրանց դեմ, ովքեր իրենից ուժեղ էին։

Շատ պատմաբաններ պնդում են, թե Սիքստոսին թունավորել է մի ինչ-որ դեղագործ, Իսպանիայի թագավորի սադրանքով։ Ասում են, թե իբր դեղագործը պապի հաբերին թույն է խառնել։ Կա նաև իմ այլ վարկած, թե սպանությունը կատարել են իգնատականները։

Սուրբ հայրն ինքը, ըստ երևույթին, հնարավոր է համարել, թե մեկը և թե մյուսը։ Մեռնելիս, նա իր եղբորորդի Մոնտալտոյին խոստովանել է. «Աստծուն հաճո չէր, որ Նեապոլի թագավորությունը միանա եկեղեցուն, քանզի Փիլիպոս թագավորը կուահեց մեր մտադրությունը, իսկ հիզվիտներն էլ ինձ պատժեցին»։

Հռոմի բնակչությունը Սիքստոս V-ին այնքան էր ատում, որ նրա մահվան օրը քաղաքում ապստամբություն բռնկվեց. քաղաքացիները ջենքի դիմեցին, ջարդուփշուր արեցին նորին սրբազնության բոլոր ար-

ձանները և պաշարեցին պապական պալատը, որպեսզի խլեն պապի աճյունը և նետեն Տիբրոս գետը։

Լետին այսպես է գնահատում Սիքստոս V-ին. «Գերագույն տիրակալի դերում նա անընդհատ դիմում էր կեղծիքի ու խաբեության, բանսարկությունների ու դավաճանության և իր նպատակներին հասնելու համար հանցագործությունների առաջ կանգ չէր առնում։ Բայց, կատարելով իր սրբազան պարտականությունները, նա սրբերի մեջ շարունակ մնում էր սուրբ, ուղղափառների մեջ՝ ուղղափառ...»։

Նաև անգերազանցելի՜ սրիկա, կավելացնենք մենք։

## ՈՒՐԲԱՆՈՍ VII

Սիքստոս V-ի բազմաթիվ թշնամիներն ուրախությամբ ողջունեցին նրա վախճանը։ Ամենից շատ ցնծում էին հիվվիտները։

Ասում են, թե Իգնատիոս Լոյոլայի հետևորդներից մեկն ամբիոնից արտասանել է հույժ արտասովոր մի դամբանական.

«Տերն ապատել է մեզ, եղբայրք իմ, զազրելի պապից։ Եթե նա երկար ապրեր, մենք ստիպված կլինեինք նրան բանադրել, քանզի անառակ էր, մոգ, արվամոլ ու հերետիկոս։ Տերն ինքը ոչնչացրեց խուլրով պսակված սատանային»։

«Սատանայի» թաղումից անմիջապես հետո բարեպաշտ կարդինալները հավաքվեցին նոր պապ ընտրելու։

Ինչպես միշտ, ծայր առան խարդավանքները, և արդեն յոթերորդ օրը մի քանի հոգի իրենց թեկնածուությունից հրաժարվեցին՝ հօգուտ կարդինալ Կոստանիայի, որն ստացավ ձայների երկու երրորդը և քրիստոնյաների պարագլուխ դարձավ Ուրբանոս VII անունով։

Ջովաննի Բատիստա Կոստանիան ծնվել է Հռոմում 1521 թվին։ «Հասուն տարիքի հասնելով,— ասում է վաշատրը,— նա ջանասիրաբար ուսումնասիրում էր քաղաքացիական իրավունքը և եկեղեցական կանոնագիրքը, մի բան, որ այն ժամանակ ավելի օգտավետ բան էր համարվում, քան սուրբ գրքի ուսումնասիրությունը»։

Գրիգոր XIII-ի օրոք նա Քյոլնում մի կարևոր հանձնարարություն էր կատարում, հետևելով Փիլիպոս II-ի և Միացյալ պրովինցիաների միջև տեղի ունեցող բանակցություններին։ Այդ առաքելության ընթաց-

քում ցուցաբերած ճարպկության համար նա ստացավ մի խոշոր գումար և կարդինալական թասակ։

Սիքստոս V-ը ևս Կոստանիայի վրա շնորհներ էր տեղում, պետական կարևոր հարցեր լուծելիս դիմում նրան։ Նրա մասին խոսելիս նորին սրբազնությունը միշտ կրկնում էր, թե հույս ունի Կոստանիայի օգնությամբ ճիզվիտներին սանձահարել և աստծուց միայն այն է խնդրում, որ նա լինի իր հաջորդը։

Սիքստոս V-ի ցանկությունը, ինչպես տեսնում ենք, կատարվեց։

Հռոմի բնակչությունը ցնծությամբ ընդունեց նոր պապի ընտրության լուրը, քանի որ նա իր ազնվությամբ ու արդարամտությամբ, կարդինալների մեջ այնքան հազվադեպ այդ հատկություններով, վաստակել էր ժողովրդի համակրանքը։

## ՍՈՒՐԲ ԳԱՀԻ ՎՐԱ ԱԶՆԻՎ ՄԱՐԴ

Ուրբանոս VII-ը պապական գահ բարձրանալուց հետո էլ պահպանեց իր արժանիքները։ Թագադրության օրը նա իր սեփական փողով մարեց բոլոր պարտքերը, հրամայեց հաց ու միս բաժանել Հռոմի ու նրա ծովածանների աղքատներին։ Բացի դրանից, սուրբ Հայրն իր վրա առավ հաշմանդամների հոգսը։ Վերջապես, նա հրապարակեց մի անհավատալի հրաման, հացթուխներին պարտադրելով «բարելավել հացի որակը, իջեցնել գինը, որպեսզի ժողովուրդը լիարժեք մթերք ստանա և գնելիս նրան չխաբեն»։

Նեպոտիզմի թշնամի լինելով, Ուրբանոս VII-ը այն կարդինալներին, որ նրան համոզում էին իրենց ազգականներին հռոմեական արքունիքի բարձր աստիճաններ շնորհել, պատասխանեց. «Ես չեմ ուզում ինձ կաշկանդել ազգակցական կապերով, որովհետև եթե նրանք դավաճան դուրս գան՝ ես պետք է ստիպված լինեմ նրանց պատժել»։

Ազնիվ քահանայապետը չէր վախենում բացեիբաց դատապարտել Սիքստոս V-ի ռազմատենչ և ուխտադրուժ քաղաքականությունը։ Իշխանությունների ներկայացուցիչներին նա ասաց, թե «իր տիրապետության օրոք ժողովուրդները պետք է խաղաղություն վայելեն, թագավորները պետք է ձգտեն քրիստոնյաներին վերամիավորել և խաղաղության համար պայքարել ոչ թե ահաբեկման միջոցով, այլ համոզելով, հանդուրժողականություն ցուցաբերելով»։

Հիրավի, Ուրբանոս VII-ը շա՜տ ագնիվ էր պապ լինելու համար։ Անհասկանալի է, թե կարդինալների կոլեգիան ինչ նկատառումներով էր ղեկավարվել նրան հռոմեական եկեղեցու ղեկավար ընտրելիս։ Կոնկլավի քմայքներն էլ անիմանալի են։

## ԲԱՐԻ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՏԱԿԵԼԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Նորին սրբազնությունն անհապաղ ձեռնամուխ եղավ իր խաղաղասիրական պլանների իրականացմանը և մի հանձնաժողով նշանակեց կրոնական միաբանությունները վերակառուցելու, իսկ գլխավորապես Հիսուսի չափազանց հզոր ընկերությունը սանձահարելու համար։ Արդյոք դա չէր նշանակում պայքարի դուրս գալ հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ։ Շատ շուտով Ուրբանոս VII-ը, իր նախորդի պես, ստացավ այդ հարցի սպառիչ պատասխանը։

1590 թվի սեպտեմբերի 26-ին, առաքելական գահ բարձրանալուց ընդամենը տասներկու օր հետո, նա վախճանվեց։ Նրան թունավորել էին բարի հայրերը։

Սև այրերը աստվածային նախորոշմանը չեն ապավինում, երբ ուզում են իրենց թշնամիներից ազատվել։ Նրանք դեպատասում են անձամբ գործել, շատ լավ իմանալով, որ իրենց միջոցներն ավելի օպերատիվ են և, որ գլխավորն է, ավելի անվրեպ։

## ԳՐԻԳՈՐ XIV

Խիզախ և ողորմած Ուրբանոս VII-ի թաղումից անմիջապես հետո հիսուներկու կարդինալները հավաքվեցին նրա համար հաջորդ ընտրելու։ Մոնտալտոյի նախաձեռնությամբ նրանք պապ հռչակեցին կարդինալ Նիկողայոսին, որը կոչվեց Գրիգոր XIV։

Նոր պապը իրեն ընտրող կարդինալներից յուրաքանչյուրին վճարեց հազար էկյու։ Նա, անշուշտ, լավ գիտեր այն հին առածը, թե «փոքրիկ նվերները մեծ բարեկամություն են ստեղծում»։

Ժամանակագիրներն ասում են, թե դա հրամայելու անընդունակ,

ալարկոտ, ինքնասեր մի մարդ էր, որ զուրկ էր նույնիսկ հասարակ եպիսկոպոսին անհրաժեշտ գիտելիքներից. մի խոսքով, սերամարդի պես փառասեր էր, սագի պես հիմար։

Ճիզվիտների թույնից վախենալով, Գրիգոր XIV-ը գահ բարձրանալուց հետո իրեն Լոյոլայի որդիների կողմնակից հայտարարեց և բարի հարաբերություններ հաստատեց Իսպանիայի ու կաթոլիկական լիգայի ղեկավարների հետ։

«Նա ավելին արեց,— ասում է Մեզերեյը,— Վատիկանում Սիքստոս V-ի թողած գանձերը տվեց սուրբ լիգային օգնելու ուղարկված տասնչորս հազարանոց բանակը հանդերձավորելու համար։ Բանակի հրամանատարությունը նա հանձնեց իր աղգականին։ Ապա մի հրաման արձակեց, որով բոլոր հոգևորականներին, սենյորներին, մագիստրոսներին բանադրման սպառնալիքով կարգադրեց 15 օրվա ընթացքում հեռանալ գուքս Բուրբոնի հողերից։ Նա նոր կոնդակներ հրապարակեց, որոնցով բանադրեց աղանդավոր թագավորին, նրան զրկելով բոլոր կալվածքներից ու թագավորական իշխանությունից»։

## ՓՈՐՁԱՆՔ ՓՈՐՁԱՆՔԻ ԵՏԵՎԻՑ

«Նորին գերհիմարություն» Գրիգոր XIV-ի սպառնալիքները պատշաճ ազդեցություն չունեցան։ Պառլամենտը որոշեց կոնդակները այրել և ձերբակալել այն նունցիային, որը դրանք բերել էր։ Ֆրանսիայի բարձրագույն հոգևորականությունը հայտարարեց, թե պապի կոնդակները «հակասում են կանոնին, տաճարային օրենքներին, ավետարանական ուսմունքի ոգուն, որովհետև անօրեն են ըստ բովանդակության և ըստ ձևի»։

Դրա հետևանքով Հենրիխ IV-ն ավելի ուժեղացավ և, ի պատասխան Գրիգորի անհեթեթ կոնդակների, չեղյալ հայտարարեց բողոքականների դեմ ուղղված բոլոր նախկին հրամանները։

Անհաջողությունը պապին չզսպեց։ Նա աշխույժ գրագրություն սկսեց Իսպանիայի թագավորի հետ, մտադրվելով նրան հանձնել Ֆրանսիայի թագը։ Ավա՜ղ, խեղճ Գրիգորին բախտ չվիճակվեց տեսնելու այդ երջանկությունը։ 1591 թվականի հոկտեմբերի 16-ին նա ընդմիշտ բաժանվեց առաքելական գահի բարձերից։

## ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ IX

*Նոր պապն ընդունեց Իննովկենտիոս IX անունը։*

*Իսպանացիներն հաստատ համոզված էին, թե Քրիստոսի նոր կուսակալն իրենց կայաշտպանի, քանզի իրենք քիչ դավեր չէին նյութել և Յանկ էին հատուցել նրա ընտրության համար։ Բայց չարաչար սխալվեցին։ Ինչպես իր նախորդը, Իննովկենտիոսն էլ գտնում էր, որ պապի առաջնահերթ պարտականությունն է իր իշխանությունն օգտագործել ի բարօրություն մարդկության։ Նա թեթևացրեց այն հարկերը, որ Հռոմի վրա դրել էր դաժան Սիքստոս V-ը, նվազեցրեց գինվորների թիվը, կրճատեց պալատական սպասավորների մեծ մասը, որի շնորհիվ կարողացավ օգնել հավիտենական քաղաքի աղքատ խավին, առանց առաքելական զանձարանին դիմելու։ Ի լրումն այդ ամենի, նա հայտարարեց, որ ինքը մտադիր է եվրոպայում հաշտարարական քաղաքականություն վարել, վերացնել տարաձայնությունների պատճառները և հերետիկոսներին թույլ տալ հերետիկոսներին դարձի բերել միայն համոզելու միջոցով և առաքինության օրինակ տալով։*

*Այդ դեկլարացիան կանխորոշեց նրա ճակատագիրը։ Իսպանիան պարզ հասկացավ, որ իմաստ չունի հույս դնել մի պապի վրա, որ խաղաղ սիրությամբ է տոգորված, ուստի և նրա վախճանը կանխորոշվեց։ 1591-ի սեպտեմբերի 30-ին, ընտրություններից երկու ամիս հետո, նրանք, ովքեր Իննովկենտիոս IX-ին բարձրադույն աստիճանի էին արժանացրել, նրան մեռցրին թույնով՝ բարի կաթոլիկների այդ շատ սիրած միջոցով։*

## ԿԼԵՄԵՍ VIII

*Դժբախտ Իննովկենտիոս IX-ի թաղման արարողություններից ինն օր անց հիսուներկու կարդինալները կոնկլավի հավաքվեցին։ Ջնայած այն ճաբպիկ մանևրներին, որոնց դիմում էր իսպանական դեսպանը իր հովանավորողի օգտին, պապ ընտրեցին կարդինալ Իպոլիտ Ալդոբրանդինիին, որն ընդունեց Կղեմես VIII անունը։*

*Նոր պապն այդ ժամանակ հիսունվեց տարեկան էր։ Մի իտալացի*

Ժամանակագրի վկայությամբ, Կղեմես VIII-ը «ավելի ամբարտավան էր, քան Վոնիփակիոս VIII-ը և Հովհաննես XXIII-ը, ավելի գուռզա-միտ ու փառասեր, քան Գրիգոր VII-ը և Սիքստոս V-ը, ավելի ուխտա-դրուժ, քան Աղեքսանդր VI-ը։

Նա իր գործունեությունն սկսեց վճռակաև միջոցառումներով։ Փա-րիզի արքեպիսկոպոսին, որը պատրաստվում էր Հռոմ բերել Հենրիխ IV-ի հաշտության առաջարկները, պապը հայտնեց, թե հերետիկոս թագավորի հետ որևէ բանակցություն վարելու մասին լսել չի ուզում և, աստիճանից ու պապական օրհնությունից զրկելու սպառնալիքով, արք-եպիսկոպոսին արգելեց Փարիզից հեռանալ։

Հենրիխ IV-ի դեմ Կղեմեսը եռանդուն պայքար սկսեց և մի կոնդակ հրապարակեց, որով Ֆրանսիայի բոլոր կաթոլիկներին պարտադրում էր «իրենց համար ընտրել իրենց դավանանքին հարող թագավոր»։

## ՊԱՂՄ ՀԵՆՐԻԽԻ ԴԱՐՁԸ

Իսպանացիները, որ անհամբերությամբ էին սպասում Կղեմես VIII-ի գումարած եկեղեցաժողովի հրաշագործ արդյունքներին, խիստ հիասթափվեցին։ Երևան եկավ նշանավոր «Մենիպյան երգիծանքը»։ Այդ երգիծանքը նպաստեց կաթոլիկական Լիգայի և նրա արտասահմանյան համախոհների պարտությանը։ Բացի դրանից, Լիգային վերջնական հարված հասցրեց թագավորի բողոքականությունից հրաժարվելը։ Հեն-րիխ IV-ը, որը գտնում էր, թե «Փարիզը մի պատարագ կարժենա», «մահացու թռիչք կատարեց» (ինչպես գրում էր իր սիրուհուն) և 1593 թվականի հուլիսի 25-ին Սեն-Դենիի աբբայության հինավուրց եկեղե-ցում հանդիսավորապես հրաժարվեց բողոքականությունից և դրանով իրեն ազատեց իր վրա սուրբ աթոռի դրած բանադրանքից։

Առաքելական նունցիան, Իսպանիայի կառավարության այդ հավա-տարիմ կամակատարը, վճռականապես բողոքեց այն բանի դեմ, որ «կեղծ դարձ» էր անվանում, և պնդեց, թե «միայն պապը կարող է թ կատար ածել հերետիկոս աղանդավորի դարձը»։ Հենրիխ IV-ը անհա-պաղ դեսպան ուղարկեց պապի մոտ, խնդրելով հանել իր թագավո-րական անձի վրա դրված բանադրանքը։ Բայց եկեղեցու պարագլուխը ֆորմալապես մերժեց և նույնիսկ ասաց, թե մտադիր է Հենրիխին զրկել Ֆրանսիայի գահից։

## ԱՐՔԱՅԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ

*Կղեմես VIII-ը մեծ թափով էր գործում։ Սև բանակի «գեներալը» Փարիզում գտնվող իր զինվորներին մի գաղտնի հրաման ուղարկեց, պահանջելով ըստ հնարավորին շուտ մի մարդասպան գտնել նախկին հուգենոտ Հենրիխ IV-ի հախից գալու համար։ Բարի հայրերը, գրում է մի պատմաբան, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ պրովինցիաներում սկսեցին մի այնպիսի մոլեռանդ մարդ որոնել, որ պատրաստ լիներ կյանքը վտանգել հանուն կրոնի։ Նրանց ջանքերը հաջողությամբ պսակվեցին, և տարաբախտ խելացնոր Բարերը, որ խելքը թռցրել էր այն բանից հետո, երբ սիրուհին լքել էր նրան, ճիզվիտներին խոստացավ թագավորին սպանել։ Թագավորի մոտ թափանցելու համար մարդասպանը, որին թունավորած դաշույն էին տվել, Փարիզից դուրս եկավ, սակայն ձերբակալվեց։ Անմիջապես հարցաքննության ենթարկելով, նրան մեղավոր ճանաչեցին միապետի դեմ մահափորձ կատարելու մեջ և դատապարտեցին մահապատժի, որն անհապաղ ի կատար ածվեց։*

*Դժբախտաբար, ոչնչացվեց հանցագործության գործիքը միայն, և ոչ թե այն ոգեշնչողները, որոնք միշտ աննկատելի են մնում։*

*Հենրիխ IV-ը չհապաղեց ճարպկորեն օգտվել այդ մահափորձից։ Իր կողմը քաշելով հիմնական քաղաքների ու պրովինցիաների կառավարիչներին, նա 1594 թվականի մարտի 22-ին հանդիսավորապես մուտք գործեց Փարիզ։*

## ՀԱՌԱՋ, ՃԻԶՎԻՏՆԵՐԻ ԴԵՄ

*Սուրբ աթոռի ազդեցության տակ գտնվող կրոնական միաբանությունները և հատկապես Լոյոլայի ամենասիրելի որդիները, չցանկացան հետևել թագավորի իշխանությանը ենթարկված տեղական իշխանություններ։ Օրինակին և հրաժարվեցին Հենրիխին թույլ տալ մասնակցելու հրապարակային աղոթքներին։ Իրենց քարոզներում նրանք թագավորին այնպես խիստ էին անարգում, որ նա որոշեց վերսկսել Հիսուսի ընկերության ու համալսարանի միջև ծագած հին վեճը։*

Պայքարի պատրաստվելով, համալսարանական այրերը և ճիզվիտները միմյանց վրա հարձակվում էին պարսավագրերով։ Առաջինները լոյոլայի ագռավներին անվանում էին «թունավորիչներ, անկարգություններ սարքողներ, սպանության դրդողներ»։ «Սև այրերը» համալսարանի դեմ հանեցին կեղծ բարեպաշտների ու մոլեռանդ մարդկանց մի ամբողջ բանակ։ Երբ երկու կուսակցություններն էլ կանգնեցին Ֆրանսիայի վառամենտի առաջ, հայտնի աստվածաբան Անտուան Առնոն, որին հանձնարարված էր համալսարանի պաշտպանությունը, մի նշանավոր ճառ արտասանեց, որի մեջ պերճախոս կերպով բնութագրեց լոյոլայի գարշելի որդիներին. «Եկել է ժամանակը, որ ժողովուրդներն իմանան, թե ովքեր են ճիզվիտները, ժամանակն է դատապարտելու արյունարբու ուրուրներին, որոնք, մեր գլխին պատվելով, ջանում են մեզ լափել։ Այդ արգահատելի դավադիրները պատրաստվում են Ֆրանսիայում կրկնել Ամերիկայում կատարած իրենց սխրանքները։ Այնտեղ քսան միլիոն տղամարդ, կին ու երեխա են այրվել կամ խեղդամահ եղել ի փառս ճշմարիտ կրոնի։ Թող բոլորն իմանան, որ ճիզվիտների ոսկիմոլությունը անհագ է, որքան նրանց արնածարավությունը։

Նրանք ոչնչացրել են շատ կղզիների ամբողջ բնակչությունը, որպեսզի հագուրդ տան իրենց ագահությանը։ Նրանք տղամարդկանց ստիպել են ողջ-ողջ թաղվել հանքահորերում, իսկ կանանց՝ մշակել այն հողը, որ կարմրել է նրանց երեխաների արյունով։ Ճիզվիտները նոր, մասսայական խոշտանգումներ են հնարել, միաժամանակ խոշտանգել են չորս հազար մարդ, ոտից գլուխ մերկացնելով նրանց, եղկաթյա շղթաներով իրար կապելով։ Մի քանի ամիս շարունակ օրը երեք անգամ ծեծել են նրանց, պահանջելով, որ այդ դժբախտներին ասեն, թե որտեղ են թաքցրել գանձերը։ Իսկ քանի որ ոչինչ ասելու բան չեն ունեցել, նրանց գանահարել են մինչև ի մահ, բոլորին սպանել են ծեծելով։ Բարբարոս ճիզվիտներից փրկվելու համար խեղճ հնդկացիները փախչում են լեռները, որտեղ հուսահատությունից կախվում են ծառերից իրենց կանանց ու երեխաների հետ։

Լոյոլայի հետևորդները փախստականներին որսում են, ինչպես վարազների ու եղնիկների, և նրանց դիակները նետում ի կեր շներին։ Կենդանի մնացածներին ստիպում են անտառներում մեղր ու մեղրամոմ հավաքել, որտեղ նրանց խեղդում են օձերը և խժռում վագրերը։

Ճիզվիտների ագահությունը և մարդկային ցեղի նկատմամբ ունեցած ատելությունն այնքան մեծ է, որ ստրուկներին մի կղզուց մյուսը տեղափոխելիս նրանք հոգ չեն տանում նավերի տարողության մասին,

ամենափոքր ալեկոծության ժամանակ մարդկանց նետում են բաց ծով, Կղզիների միջև նավելու համար ո՛չ կողմնացույց է պետք, ո՛չ էլ ծովային քարտեզ. կարելի է կողմնորոշվել ծովում հնդկացիների լողացող դիակներով...»։

Համալսարանի խիզախ պաշտպանը պահանջեց բոլոր ճիզվիտներին դատապարտել և անհապաղ վտարել Ֆրանսիայի թագավորությունից։

Սկզբում «սև այրերը» գլուխները կորցրին, բայց շատ չանցած սրտապնդվեցին։ Կղեմես VIII-ը, որը Հենրիխ IV-ին դեռ չէր տվել նրա այնքան փափագած թողությունը, առանց դժվարության կարողացավ նրան համոզել, որ վիճաբանություններն ու դատավարությունը հետաձգվեն։

## ԺԱՆ ՇԱՏԵԼԸ ՀՆԱԶԱՆԴՎՈՒՄ Է ԲԱՐԻ ՀԱՅՐԵՐԻՆ

Ճիզվիտները, որոնք նախազգում էին, որ Ֆրանսիայի թագավորի վրայից բանադրանքը բառնալուն պես պայքարը կվերսկսվի, որոշեցին մրցակցից առաջ ընկնել և նրա դեմ զինեցին մի նոր մոլեռանդ՝ Ժան Շատելին, որը 1594 թվականի դեկտեմբերի 27-ին փորձեց Հենրիխ IV-ին սպանել։

Տասնիննամյա այդ երիտասարդը, գրում է Լաշատրը, որ սովորում էր ճիզվիտական կոլեջներից մեկում, կարողացավ լուվր մտնել այն պահին, երբ Հենրիխ IV-ն ընդունում էր իր պալատականներին։ Երբ թագավորը, պալատականների ողջույններին պատասխանելով, թեքվեց դեպի լիգայի երկու անդամները, մարդասպանը նրան դանակի երկու հարված հասցրեց, վիրավորելով վերին շրթունքը և կոտրելով մի ատամը։ Նորին մեծությունը, նկատի առնելով նրա տարիքը, ցանկանում էր մարդասպանին բաց թողնել, բայց երբ իմացավ, որ Շատելը ճիզվիտական կոլեջի սան է, հրամայեց ձերբակալել և հարցաքննել։

Դատավորի այն հարցին, թե նա ինչու էր ուզում թագավորին սպանել, Շատելը պատասխանեց. «Ես շատ տեղերում լսել եմ, որ պապի հավանությանը չարժանացած թագավորին սպանելը արդար գործ է»։

Հարցաքննությունը պարզեց, որ Շատելին ոգեշնչել են ճիզվիտները, որոնք մի քանի տարի շարունակ ամենուրեք ասում էին, թե ինքը պապը սպանությունը քրիստոնեական սխրագործություն է համարում։

Խելառ երիտասարդին խոշտանգման ենթարկեցին, որին նա դի-

մացավ, ինչպես ասում են, մեծ արիությամբ, մինչև վերջ պնդելով, թե գործել է միայն սեփական մղումով։

Մահափորձից երկու օր հետո նա մահապատժի ենթարկվեց։ Դահիճը կտրեց երիտասարդի աջ ձեռքը, իսկ հետո նրան քառատեցին, աճյունն այրեցին ու մոխիրը քամուն տվեցին։

## ՍԵՎ ՀՐՈՍԱԿԱԽՄԲԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Հանցավոր գործողությունները Հիսուսի ընկերության բախտը վճռեցին, և Իգնատիոսի ազդավները Ֆրանսիայից վտարվեցին։ Պառլամենտն այդ առթիվ ընդունեց հետևյալ որոշումը.

«Մենք հրամայում ենք, որ ճիզվիտների ընկերության քահանաներն ու աշակերտները, հանգստությունը վրդովողները, պետության թշնամիները և երիտասարդության այլասերողները, նորին մեծությանը վիրավորելու մեղադրանքի սպառնալիքի տակ տասնհինգ օրվա ընթացքում հեռանան թագավորությունից, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվի հօգուտ թագավորի»։

Արդարացի դատավճիռը ջերմ արձագանք գտավ Եվրոպայում և, գլխավորապես, Հռոմում։ «Արտակարգ միջոցառումները», իհարկե, քահանայապետին զայրացրին։ Հավաքելով կարդինալներին, նա նրանց ասաց, թե ճիզվիտները եկեղեցուն շատ ծառայություններ են մատուցել, նրանք արժանի են հավանության, որովհետև մարդասպաններին զինել են ընդդիմ թագավորների։ Պապը գովաբանեց այն բարեպաշտ այրերին, որ իրենց կյանքը զոհաբերել են ի պաշտպանություն և ի սեր սուրբ գործի։

## ՎԱԽԿՈՏԻ ԴԱՐՁԸ

Համոզվելով, որ ֆրանսիացիները Հենրիխ IV-ին ճանաչել են չնայած նրա բանադրված լինելուն, Կղեմես VIII-ը սկսեց անհանգստանալ, որ չլինի, թե նրանք իրենք սկսեն զբաղվել եկեղեցական կառավարչության կազմակերպմամբ, և պապության համար շատ վտանգա-

վոր այդ հարվածը կանխելու համար նա Հենրիխ IV-ին ծանուցեց, թե պատրաստ է «լսել և բավարարել նորին մեծության խնդրանքներն ու բարեպաշտական ցանկությունները»։

Ֆրանսիայի թագավորն իր ներկայացուցիչներին հանձնարարեց պապի հետ քննարկել սուրբ աթոռի հետ հաշտվելու պայմանները։ Բայց հենց այդ ժամանակ Փիլիպոս II Իսպանացու զորքերը ֆրանսիացիների դեմ մղած մարտերում որոշ հաջողության հասան, և խորամանկ Կղեմես VIII-ը օգտվեց դրանից, համաձայնվելով Հենրիխին թողություն տալ միայն հետևյալ պայմաններով.

1. Պատվիրակները թագավորի անունից հանդիսավորապես կհրաժարվեն հերետիկոսությունից և կենթարկվեն նման դեպքերի համար եկեղեցու սահմանած սովորացուցիչ արարողակարգին։

2. Ֆրանսիայի թագավորը Բեառնայում կվերահաստատի կաթոլիկությունը, իր հովանավորության տակ կառնի բոլոր ուղղափառ քահանաներին և քանի դեռ նրանց չի ապահովի լավ ծխերով՝ ոռճիկը կվճարի իր միջոցներից։

3. Պաշտոններ ու եկեղեցական աստիճաններ կունենան միայն այն եկեղեցականները, որ նվիրված են հռոմեական արքունիքին։

4. Նորին մեծությունը կհրապարակի Տրիդենտի եկեղեցաժողովի որոշումները, որոնք նրա նախորդները համարել են ոտնձգություն ազգի իրավունքների ու ազատության դեմ։

5 Թագավորն ինն ամիս պետք է խիստ ծոմ պահի, ամեն առավոտ ու երեկո կարդա «Հայր մերը», ամեն օր պատարագ լսի, խոստովանի առնվազն տարին չորս անգամ և սուրբ հաղորդություն ընդունի։ Բացի դրանից, կկառուցի մեծ թվով վանքեր, դրանք իր հաշվին կպահի բարվոք վիճակում և ճիզվիտներին ետ կկանչի Ֆրանսիա։

Եվ նախկին հուգենոտ Հենրիխ IV-ը համաձայնվեց այդ խայտառակ պայմաններին։

Մի գրող մեզ թողել է ծիսակարգի հետաքրքրաշարժ մանրամասնությունները. «Սուրբ Պետրոսի տաճարի գավթում ընդարձակ տախտակամած շինվեց, և 1595 թվականի սեպտեմբերի 17-ին իր բոլոր կարդինալների, արքեպիսկոպոսների, հոգևորականության բարձր աստիճանավորների ուղեկցությամբ պապը դուրս եկավ Վատիկանից և բազմեց տախտակամածի վրա դրված պերճ, թանկարժեք քարերից շողշողացող գահին, որ ծածկված էր շքեղաշուք գորգերով։

Բուրբոնի պատվիրակները գլուխները բաց մոտեցան գահին և հնազանդորեն համբուրեցին պապի ոտքերը. ապա. ոտքից տեղից վեր

*ի նևս լու, նրանք ի լուր ամենքի հրաժարվեցին կալվինականությունից։ Կղեմեսը նրանց համար կարդաց այն պայմանները, որոնց համաձայն Հենրիխ IV-ը կարող էր թողություն ստանալ։ Երբ նրանք ավետարանի վրա երդվեցին, թե թագավորը կենթարկվի հռոմեական արքունիքի պահանջին, պապը նրանց նշան արեց երեսնիվայր գետին ընկնել և, ինչելով գավազանով, հարվածեց յուրաքանչյուրին երեք անգամ, այնուհետև, թքելով նրանց վրա, ոտքը դրեց նրանց ծոծրակներին, և եկեղեցականների երգչախումբը ձլեց «Miserere»։*

*Ստորացուցիչ արարողակարգն ավարտվելուց հետո Հենրիխի պատվիրակները տեղներից վեր կացան, և սուրբ Հայրը բարձրաձայն արտասանեց թողության բանաձևը. «Ամենակարող աստծո և երանելի առաքյալներ սուրբ Պետրոսի ու սուրբ Պողոսի և իմ անունից, որ կարգված եմ երկրի վրա բոլոր իշխանություններից վեր, ես թողություն եմ տալիս Հենրիխ Բուրբոնին, Ֆրանսիայի թագավորին»։ Ցաճարի դռներն անմիջապես բացվեցին, և Կղեմես VIII-ը, դառնալով պատվիրակներին, ավելացրեց. «Այժմ, երբ ձեր թագավորի առաջ ես բացել եմ եկեղեցու դռները, թող նա հիշի, որ կարող եմ դրանք նորից փակել»։ Լսվեց թնդանոթի կրակոցը, փողերի հնչյունները միախառնվեցին հրետանու որոտին և աշխարհին ազդարարեցին, թե «Ֆրանսիայի թագավորը պառկել է պապի ոտքերի տակ՝ փոշու մեջ, լիզել նրա սանդալները և պղծվել նրա թքով»։*

## ԿՂԵՄԵՍԻՑ ՊԱՐՏՎԱԾ ԿԵՍԱՐԸ

*Դրանից հետո նորին սրբազնությունը հայացքն ուղղեց Իտալիային։ Նա բանագրանքով հարձակվեց Ֆերարայի դուքս Կեսար դ'Էստեի, ազնվականության ու ժողովրդի կողմից սիրված այդ մարդու վրա, որն ատում էր Իգնատիոս Լոյոլայի հետևորդներին։*

*Քրիստոսի ռազմատենչ փոխանորդի զորքերը ներխուժեցին դ'Էստեի տիրույթները, և դուքսն ստիպված անձնատուր եղավ։*

*«Այն ժամանակ,— հայտնում է Մորիս Լաշատրը,— Կղեմեսը գրավեց Ֆերարան, կառուցեց մի անմատչելի ամրոց, որտեղ թաքցրեց ավելի քան երկու միլիոն ոսկյա էկյու, որ խլել էր դքսության բնակիչներից։ Նա քաղաքացիներին ստիպեց իրենց միջոցներով պապին բրոն-*

զաձույլ արձան կանգնեցնել, որից հետո մի շարք դեկրետներ հռապատակեց, որոնց նպատակն էր ավելացնել նրա եկամուտները։ Իր նախորդի օրինակին հետևելով, Կղեմեսն սկսեց զբաղվել սուրբ գրքի շրջմամբ, հրատարակեց Աստվածաշնչի թարգմանությունը, որը երկու հազար սխալ էր պարունակում, սակայն նրա կողմից հայտարարվեց միակ կանոնական թարգմանություն։ Գրքում կանխապես բանադրվում էին բոլոր նրանք, ովքեր երբևէ կհամաձայնվեին այդ հրատարակության մեջ նոր ուղղումներ մտցնել»։

Այնուհետև ահեղ սուրբ հայրը, ասես արբեցատենդով բռնված, հրապարակեց մի նոր կոնդակ, որը «իտալացիներին, անկախ նրանց դասային պատկանելիությունից ու աստիճանից, արգելում էր ապրել այն երկրներում, որտեղ կաթոլիկ քահանաներ չկան, ինչպես և այնտեղ, ուր կաթոլիկ ժամասացությունն արգելված է։ Բացի դրանից, ողորմած պապն արգելեց ամուսնանալ հերետիկոս կանանց հետ, բուժվել բողոքական բժիշկների մոտ։ Իսկ կաթոլիկ բժիշկներին թույլ չէր տալիս բուժել Ռեֆորմացիայի կողմնակիցներին, որովհետև «իսկական քրիստոնյաների համար ավելի լավ է անէանալ, քան երկրային կյանքը պահպանել հերետիկոսի օժանդակությամբ, իսկ հիվանդ բողոքականի մասին պետք է հոգալ ոչ ավելի, քան քոսոտ շան մասին»։

Ի՞նչ պարզ է երևում այստեղ քրիստոնեական գթասրտությունը։

Եվ այնուամենայնիվ, չնայած պապի բոլոր ջանքերին, եկեղեցական գործերը այնքան էլ լավ չէին, մանավանդ Ֆրանսիայում։

Չնայած պապական լեգատի վճռական բողոքներին, Նորադարձ Հենրիխ IV-ը բողոքականների օգտին հրապարակեց նշանավոր Նանտյան էդիկտը։

## ԿԱԹՈԼԻԿ ԲՌՆԱԿԱԼԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Այդ էդիկտով վերստին մտքի ազատություն սահմանելով, թագավորն իր ջանքերն ուղղեց իսպանական բանակի և Փիլիպոս II-ի հետ կապված Սավոյայի դուքսի հրոսակախմբերի դեմ։ Ֆրանսիայի թշնամիները պարտվեցին։ Իսպանիայի թագավորն ստիպված եղավ Հենրիխ II-ի հետ հաշտություն կնքել։ Պապը համաձայնվեց միջնորդի դեր խաղալ այն պայմանով, որ հաշտության պայմանագիր կնքելուց հետո Փիլիպոսն իր ամբողջ ազդեցությունը օգտագործի թուրքերի դեմ լիգա

ստեղծելու համար, քանզի թուրքերն արդեն ներխուժել էին Հունգարիա և սպառնում էին Իտալիային։

1598 թվականի մայիսի 2-ին կռվող կողմերի միջև կնքվեց Ֆրանսիայի համար շատ ձեռնտու մի պայմանագիր։ Արյունարբու Փիլիպոս II-ն առժամապես թաղեց Ֆրանսիայի թագով գլուխ պսակելու իր այնքան փայփայած մտադրությունը։ Փառասեր թագավորի բախտը չբերեց նաև Նիդեռլանդներում, որովհետև բարի կաթոլիկների դաժանություններից մոլեգնած բնակիչները վերջապես իրենց երկրից վռնդեցին իսպանական բանակին և կազմեցին անկախ շտատներ՝ Միացյալ պրովինցիաներ։

Վերջապես, Նիդեռլանդները նորից ձեռք գցելու ապարդյուն փորձերից հետո Փիլիպոս II կոչված հրեշավոր սարդը մեռավ հոդատապի նոպայից։

Մինչև իր վերջին ժամը Իսպանիայի թագավորն արյունոտ ծրագրեր էր կազմում, որոնք բարեբախտաբար չիրականացան։ Պատմում են, թե երբ բժիշկները վարանել են նրանից արյուն առնել, նա նրանց ասել էր. «Ձլինի կարծում եք, թե այն թագավորը, որ արյան գետեր է թափել, վախենում է մի քանի կաթիլ կորցնել։ Վերադարձրեք իմ առողջությունը, և ես կավարտեմ իմ գործը՝ կչնչացնեմ հերետիկոսներին մինչև վերջին մարդը»։

## ՁԻՋՎԻՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1599 թվականը եկեղեցու գերագույն տիրակալի համար շատ ավելի եկամտաբեր տարի դարձավ, որովհետև XVI դարի սահմանագլխին կատարվեց հերթական հոբելյանը։ Ավելի քան երեք միլիոն աստվածավախ պարոզամիտներ և այլ հետաքրքրասերներ լցվեցին հավիտենական քաղաքը։ Վատիկանի եկամուտները վիթխարի էին։ Ոսկին ու արծաթը տոննաներով էին հոսում պապական պալատի ընդարձակ նկուղները։ Վատիկանում այլևս նվերներ պահելու տեղ չկար, և պապը դիմեց ճիզվիտների գեներալին, խնդրելով իր տնօրինությանը հանձնել նրան վստահված կոլեջի նկուղները։ «Սև ընկերության» գլխավորը ոչ միայն շենքը զիջեց, այլև շատ ճիզվիտների ներգրավեց ինդուլգենցիաները, թուլլատրական թղթերը և կաթոլիկական մեծ շուկայի այլ ապրանքներ սաղացնելու գործում։

Գեներալը հույս ուներ, որ իր ջանադրությունը կհատուցվի և քս. հանայապետին կստիպի ճիզվիտներին պաշտպանել Լոյոլայի աշակերտների և դոմինիկյանների միջև։

Կղեմես VIII-ը, հիրավի, խառնվեց այդ երկպառակությանը, բայց չցանկացավ բացեիբաց արտահայտվել կողմերից որևէ մեկի օգտին։ Ջայրացած հայրերը պապի դեմ հանեցին իրենց միաբանության բոլոր կոլեջները, սկսեցին կասկածներ հայտնել նրա ընտրության օրինականության մասին, համարձակվելով նույնիսկ ասել, թե «դավանանքի հարցերում բնավ պարտադիր չէ հաշվի առնել պապի կարծիքը»։

Կղեմեսը կատաղությունից անշուշտ կցրեր ճիզվիտների ընկերությունը, եթե չլիներ Իսպանիայի թագավորի վճռական միջամտությունը։ «Սակայն,— ավելացնում է ժամանակագիրը,— Անգլիայում սուրբ հորը ճիզվիտների մատուցած ծառայությունները, ապա Ֆրանսիայում նրանց ցուցաբերած ջերմեռանդությունը պապին հակեցին դեպի այդ միաբանությունը»։

Անգլիական ճիզվիտները, որ Մեծ Բրիտանիայից վտարվել էին, չվախեցան Եղիսաբեթ թագուհու մահից հետո վերադառնալ այնտեղ և վերսկսել իրենց դավերը։ Իսկ ֆրանսիական ճիզվիտներին հաջողվեց իրենց կողմը քաշել բազմաթիվ ազդեցիկ սենյորների, այդ թվում Մարիա Մեդիչի թագուհուն։

Նրանք Փարիզում թագավորի ու պառլամենտի դեմ ուղղված պարսավագրեր էին տարածում և սկսել էին Հենրիխ IV-ի դեմ դավադրություն կազմակերպել։

Ճիզվիտների բացահայտ ելույթները թագավորին վախեցրին, և նա որոշեց նրանց ետ կանչել։ Բայց նախքան իր արժանապատվության համար անպատվաբեր այդ քայլը կատարելը, նա հավաքեց իր կողմնակիցներին և, հաշվի առնելով ճիզվիտների նկատմամբ նրանց անբարյացակամությունը, ասաց հետևյալը. «Պարոննե՛ր, մենք երկընտրանքի առաջ ենք կանգնած. կամ ճիզվիտներին ետ բերել մեր թագավորությունը, նրանց վրայից հանելով նզովքն ու խայտառակությունը, որոնց նրանք լիովին արժանի են, կամ ամենայն դժանությամբ հալածել նրանց, արգելելով նույնիսկ մոտենալ մեր տիրույթներին։ Այդպիսի որոշում կայացնելը հղի է վտանգավոր հետևանքներով։ Մենք ստիպված կլինենք միշտ զգույշ և արթուն լինել, զրահ կրել նույնիսկ մեր սեփական տներում, սնունդ չընդունել առանց բժիշկների նախնական ստուգման, դողալ, երբ մեզ մոտենան մեր հավատարիմ հպատակ-

ները, որովհետև ճիզվիտներն ամենուրեք գործակալներ ունեն և ճարպկորեն կարողանում են իրենց ուզածի պես ազդել մարդկանց մտքերի վրա»։

Հասկանալով, որ թագավորի հետ վիճելն անիմաստ է, սենյորները և մի-իստր Սյուլլին պատասխանեցին, թե իրենք լիովին վստահում են նրա ողջամտությանը։

Հենրիխն անմիջապես ստորագրեց այն հրամանը, որը Հիսուսի միաբանությանը թույլատրում էր վերադառնալ Ֆրանսիա։ Սակայն պառլամենտի անդամները, որ քիչ համակերպվող էին, քան թագավորի պալատականները, հրաժարվեցին հաստատել կարգադրությունը, մինչև որ ճիզվիտները չփոխեն իրենց միաբանության անունն ու կանոնադրությունը։

Համոզված լինելով, որ առանց որևէ պայման կատարելու էլ իրենք կարող են Ֆրանսիա վերադառնալ, սև այրերը վճռականապես հրաժարվեցին հաշվի առնել պառլամենտի պահանջները։ Ի վերջո, սրիկաները հաղթող հանդիսացան, որովհետև Հենրիխ IV-ը պառլամենտի անդամներին հրաման տվեց «պարզապես և առանց քաշքշուկի» հաստատել ճիզվիտների վերադարձը։

Բոլորին հայտնի է, թե Լոյոլայի հետևորդները թագավորին ինչպես հաուցեցին. նրանց վերադարձից մի քանի տարի անց, 1610 թվականի մայիսի 14-ին, Հենրիխ IV-ը ընկավ մոլեռանդ Ֆրանսուա Ռավալյակի դաշույնի հարվածից։

## ՍՈՒՐԲ ՀՈՐ ՎԱԽՃԱՆԸ

Ճիզվիտները պապին խոստացան օգնել, որ Ֆրանսիան ենթարկվի նրա իշխանությանը։ Բայց թագավորությունում իրենց տեր ու տիրական համարելով, նրանք, ըստ սովորության, իրենց խոստումները մոռացան և նորից սկսեցին դոմինիկյանների հետ գժտվել։ Նրանք կղեմեսին հայտնեցին, թե նրան կհնազանդվեն, եթե նա պաշտպանի ճիզվիտներին և Իգնատիոս Լոյոլային սրբերի կարգը դասի։

Նորին սրբազնությունը համաձեց և ոչ միայն հաշվի չառավ ճիզվիտների պահանջները, այլև բացահայտորեն անցավ Դոմինիկոսի հետևորդների կողմը և նույնիսկ սրբերի կարգը դասեց Շառլ Բարոմեին՝

*դոմինիկյան միաբանության ղեկավարներից մեկին, սրբազան ինկվիզիցիայի այդ զազրելի դատավորին։*

*Ինչ վերաբերում է մեզ, ապա գտնում ենք, որ Լոյոլան ու Բարոմեն իրար արժեն, և չենք առարկում այդ երկու սրիկաներին սրբերի կարգը դասելու դեմ։*

*Ճիզվիտները, հայտնում է պատմաբանը, չցանկացան հաշտվել այդ վիրավորանքի հետ և սկսեցին հարձակումներ գործել ապստի խորհրդական կարդինալ Ալդոբրանդինիի վրա։ Նրանցից մեկը որոշեց կարդինալին թունավորել և մի քանի անգամ փորձեց մտնել նրա խոհանոցը։ Ճիզվիտի համառությունը կասկած հարուցեց։ Երկու սբիրներ նրան բռնեցին, բայց ճիզվիտը ուժեղ մարդ էր, կարողացավ նրանց ձեռքից դուրս պրծնել և թաքնվել կարդինալ Ֆարնեզեի՝ Իգնատիոսի աշակերտների հովանավորի դղյակում։*

*Հռոմի պրեֆեկտը գնաց Ֆարնեզեի դղյակը և պահանջեց ճիզվիտին հանձնել։ Սակայն կարդինալը զինված դիմադրություն ցույց տվեց և պրեֆեկտին ստիպեց ետ դառնալ։ Դիմադրությունը տևեց մի քանի օր։*

*Երբ նորին սրբազնությունը որոշեց օգնության ուղարկել իր զորքերը, Ֆարնեզեն ու նրա կողմնակիցները ետնամուտքով դուրս եկան դղյակից և թաքնվեցին Հռոմի մոտ գտնվող նրա հոյաշեն ամրոցում։*

*Սուրբ Հայրը զայրացած սպառնաց միաբանությունը ցրել և կարդինալ Ֆարնեզեին հայտնեց, թե «նրան զրկում է նախնիների կալվածքը կառավարելու իրավունքից, քանի որ նա անարժան է նրանց»։*

*Բայց կարդինալը բնավ մտադրություն չուներ հաշվի առնել այդ որոշումը և շարունակում էր նստած մնալ իր ամրոցում։ Այդ ժամանակ նրա եղբայրը Կղեմես VIII-ի ոտքերն ընկավ, խնդրելով Ֆարնեզեին ներել։ Կղեմեսը ձևացրեց, թե համաձայն է ներել խռովարարներին, և նրան թույլ տվեց Հռոմ վերադառնալ։ Ֆարնեզեն անզգուշություն ունեցավ այդ թույլտվությունից օգտվելու. դեռ Հռոմ չհասած, նրան բռնեցին ու հուսալի պահակախմբի հսկողությամբ տարան սուրբ Հրեշտակի ամրոցը։*

*Ըստ երևույթին, Ֆարնեզեն չափազանց միամիտ է եղել, եթե հավատացել է պապի ազնիվ, իսկ ավելի ճիշտ, անազնիվ խոսքին։*

*Սակայն Լոյոլայի որդիները շուտով վրեժ առան իրենց խիզախ հովանավորյալի համար և պապին թունավորեցին։*

*Այդպես իր կյանքն ավարտեց ուխտադրուժ ու հանցագործ Կղեմես VIII-ը, XVI դարի վերջին պապը։*

## ԼԵՎՈՆ XI

*Կղեմես VIII-ի թաղումից հետո տեղի ունեցավ սուրբ կոնկլավի նիստը։*

*Կաշառված կարդինալների աջակցության շնորհիվ պապ դարձավ Լևոն XI-ը։*

*Այդ ընտրությունը շատ ուրախացրեց Ֆրանսիային և խորապես վշտացրեց Փիլիպոս III-ի արքունիքին։*

*Մի որոշ ժամանակ, գրում է մի տարեգիր, ժողովուրդները հավատում էին, թե բարի պապի տիրապետություն է սկսվելու։ Լևոն XI-ը սկսեց նրանից, որ Վատիկանից վռնդեց պալատականների մեծ մասին, հայտարարեց, թե պատրաստվում է եկեղեցու կառավարման գործում մի շարք բարեփոխություններ կատարել և ոչնչացնել երկու արդահատելի միաբանությունները՝ դոմինիկյաններին ու ճիզվիտներին։ Նա վերացրեց այն հարկերի մի մասը, որ պրովինցիաների վրա դրել էին նրա նախորդները։ Ամեն ինչից երևում էր, որ բարգավաճման ու հանդուրժողականության ժամանակաշրջան է սկսվում։ Բայց Սեքստոս V-ին ու Կղեմես VIII-ին սպանողները զգոն հետևում էին քահանայապետին։*

*Եվ իսկապես, այդպիսի մարդասիրական գաղափարներ ունենալու պատճառով Լևոն XI-ին բախտ չէր վիճակված երկար մնալու պապական գահի վրա։ Ճիզվիտները չէին կարող հանդուրժել մի պապի, որ թույլ էր տվել նրանց ճնշել։ Նրանք սուրբ հորը հյուրասիրեցին շատ արագ ներգործող թույներից մեկով, և 1605 թվականի ապրիլի 27-ին Լևոնը վախճանվեց, գահակալելով ընդամենը քսանվեց օր։*

*Ահա թե ինչպե՞ս է հատուցվում առաքինությունը։*

## ՊՈՂՈՍ V

*Լևոն XI-ի թաղումից հետո կարդինալները նորից ընտրական կատակերգություն խաղացին։ Այս անգամ կոնկլավի անդամները չորս բանակի բաժանվեցին։*

*Կարդինալ Բարոնիուսը, որին նախորդ ընտրության ժամանակ սև քվե էին տվել, նորից առաջադրեց իր թեկնածությունը։ Շատ չանք թա-*

փ֊ֆով, նա շատ կողմնակիցներ գտավ և արդեն հույս ուներ մրցակիցների նկատմամբ հաղթանակ տանել։ Սակայն վերջին պահին նրա կողմնակիցներից տասնհինգն անցան շատ հարուստ կարդինալ Տոսկոյի բանակը, որը ստացավ հիսունհինգ ձայնից քառասունչորսը։

«Արդեն պատրաստվում էին անցնել խոնարհվելու ծիսակարգին,— գրում է պատմաբանը,— երբ Բարոնիուսը, զայրացած լինելով, որ խույրը ձեռքից թռել էր, խռպոտ ձայնով բղավեց. «Դուք պատրաստվում եք ձեզ համար գլուխ ընտրել սրիկայի, որը ոչ մի խոսք չի ասում առանց քստմնելի հայհոյանքի։ Դուք ուզում եք քահանայապետ ընտրել անբարոյական մարդու և հռոմեական գահի հանդեպ հարուցել Իսպանիայի, Իտալիայի ու Ֆրանսիայի ժողովուրդների զայրույթը, էլ ավելի սաստկացնելով այն վշվանքը, որ մենք առանց այն էլ պատճառում ենք նրանց»։ Նրա արարքը կոնկլավի անդամների մեջ անասելի իրարանցում առաջացրեց և խանգարեց Տոսկոյի ընտրությանը։ Բայց դա Բարոնիուսին չվերադարձրեց կորցրած ձայները։ Առավոտյան պապ հռչակվեց կարդինալ Կամիլլո Բորգեզեն, որն ընտրեց Պողոս V անունը։

Նոր քահանայապետը ծնվել էր Հռոմում։ Սկզբում դատապաշտպան էր եղել, իսկ հետո ընտրել էր հոգևոր ասպարեզը, որտեղ հերթով զբաղեցրել էր փոխլեգատի, դատարանի անդամի, պապական փոխերեցի և մեծ ինկվիզիտորի պաշտոնները։ Վերջապես Կղեմես VIII-ի օրոք նա կարդինալի տիտղոս էր գնել։

## ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՎՈՐՈՒՄ Է ԻՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻՆ

Իշխանության կատարը հասնելուց առաջ Պողոս V-ը միշտ էլ իրեն քաղաքականությունից հեռու էր պահում, և բոլորին թվում էր, թե մինչև իր կյանքի վերջը նա անձնատուր է լինելու խաղաղ կյանքի հաճույքներին։ Այդ պատճառով էլ, հենց որ նա պապ դարձավ, տարբեր խմբակցությունների ղեկավարներ նրան առաջարկեցին իրենց ծառայությունները, կարծելով, թե նրա փոխարեն իրենք են կառավարելու։ Զախորդ քաղաքագետները շուտով հուսախաբ եղան, որովհետև նորին սրբազնությունը միանգամայն աներկմիտ հայտարարեց, թե մտադիր չէ կառավարման սանձերը ձեռքից բաց թողնել։ Եվ նա գործով ցույց տվեց,

որ իր որոշումը չի փոխի։ Իր եղբորորդիներից մեկին նա կարդինալի աստիճան շնորհեց, եղբայրներին տվեց ամենաբարձր պաշտոնները, նրանց հանձնարարելով նաև Վատիկանի ու սուրբ Հրեշտակի ամրոցի կառավարումը, մնացած ազգականներին արժանացրեց մեծ շնորհների և բնակեցրեց իր բարձր անձին մոտիկ։

Ի՞նչ կա որ, ըստ երևույթին այդ պապը իր գերդաստանին ջերմորեն էր կապված։ Համենայն դեպս, նախքան սուրբ գահի գործերով զբաղվելը, նա իր ազգականներին լավ տեղավորեց։

Վերականգնելով հռոմեական եկեղեցու նախկին ավանդույթները, նա հարուցանեց նաև իտալական հողերի անվերապահ ենթարկվածության հին գաղափարը։ Սկզբում սուրբ հայրը խառնվեց Նեապոլի թագավորության գործերին, այնուհետև իրեն հատուկ պապական հանդգնությամբ, Լուկեյի, Ճենովայի ու Վենետիկի հանրապետություններին արգելեց առանց իր համաձայնության որևէ պայմանագիր կնքել միմյանց միջև և արտասահմանյան թագավորների հետ։ Յանկանալով կանխել դուքսերի բողոքները, նա հանդես եկավ մի կոնդակով, որը բանաղրանք էր սպառնում օտարերկրացիների հետ որևէ փոխհարաբերություն հաստատելու դեպքում։ Արդարև, խեղճ կառավարիչներին մնում էր միայն գլուխ պահել։

## ՊՈՂՈՍ V-Ը ԵՎ ՎԵՆԵՏԻԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ երևույթին ահեղ պապի զայրույթից վախենալով Իտալիայի թագավորները ենթարկվեցին նրա պահանջներին։ Ճենովան նույնիսկ չեղյալ հայտարարեց սև այրերի դեմ ուղղված հրամանները, նրանց թուլյատրելով զբաղեցնել ինչպես քաղաքացիական, այնպես էլ դինվորական պաշտոններ։

Այլ էր վենետիկցիների բանը։ Միայն նրանք չցանկացան ենթարկվել Պողոս V-ի խելահեղ պահանջներին։ Եվ պայքար սկսվեց։

«Տասի խորհուրդը,— գրում է պատմաբանը,— մահվան դատապարտեց մի օգոստոսական վանականի, որը կուսություն էր խախտել և բռնություն գործադրել մի տասնամյա աղջկա վրա, որին հետո խեղդել էր։ Միաժամանակ դատվում էր մի կանոնիկոս, որը մեղադրվում էր այն բանի մեջ, որ բռնաբարել էր իր ազգականուհուն՝ գիշերը դիմակավորված մարդկանց հետ ներխուժելով նրա տունը։ Դեռ ավելին, վե-

Նեստիկի դուժը համարձակվեց իր իշխանությամբ բանտարկել մի աբբայի, որը թունավորել էր հորը, եղբորն ու մի քանի սպասավորների և արյունապղծական կապ ունեցել հարազատ քրոջ հետ (բացի դրանից, պատվարժան աբբան մեծ ճանապարհի վրա զբաղվել էր կողոպուտով և սպանել իր պղծած մի քանի պատանիների)։

Նորին սրբազնությունը հայտարարեց, թե իրենց հոգևոր կոչման բերումով հանցագործները դտնվում են օրենքի պաշտպանության տակ և հանրապետությունը խախտել է հոգևոր անձանց անձեռնմխելիությունը, նրանց հանձնելով աշխարհիկ դատաստանի։ Եկեղեցուց վտարելու սպառնալիքով նա դուժին հրամայեց աստվածավախ օգոստոսականին, կանոնիկոսին ու աբբային անհապաղ հանձնել առաքելական նունցիայի ձեռքը։ Օգտվելով պատեհ առիթից, Պողոս V-ը պահանջեց չեղյալ հայտարարել այն օրենքը, որը քահանաներին արգելում էր առանց սենատի թույլտվության անշարժ գույք ձեռք բերել, ինչպես նաև վաճառել այն հողերն ու տները, որ ժառանգել էին ազգականներից։

Սակայն սենատը սպառնալիքներից բնավ չվախեցավ և պատասխանեց, թե «ըստ նախորդ պապերի սահմանած ինստիտուտների ու արտոնությունների, հանրապետությանը թույլատրվել է օրենքներ հրապարակել՝ պետության և հոգևոր անձանց քաղաքացիական փոխհարաբերությունների մասին, և որ սուրբ աթոռն իրավունք չունի ոչ չեղյալ հայտարարելու իր օրենքները, ո՛չ էլ իր իրավասությանը ենթարկելու հանցագործներին»։ Ի պատասխան Պողոս V-ը հայտարարեց. «Այն բոլոր իրավունքները, որ նրա նախորդները տվել են վենետիկցիներին, համարվում են անվավեր»։

Համոզվելով, որ իր սպառնալիքները խիզախ հանրապետության վրա տպավորություն չեն գործում, քահանայապետը դիմեց նաև այլ միջոցների, աշխատելով քայքայել իր թշնամիների արդյունաբերությունն ու առևտուրը։ Վերջիվերջո, նա բանադրեց դուժին ու սենատին և ինտերդիկտ դրեց, ինչպես Վենետիկ քաղաքի, այնպես էլ ցամաքում ու Ադրիատիկ ծովի կղզիներում գտնվող նրա տիրույթների վրա։

Բայց հանրապետությունը պապին բանի տեղ չդրեց և հռոմեական արքունիքին արժանավորապես պատասխանեց մի դեկրետով, որի մեջ ասված էր. «Ամենախիստ պատժի սպառնալիքով հոգևոր անձանց արգելվում է տարածել սուրբ հոր կոնդակը և որևէ եկեղեցում դադարեցնել ժամերգությունը»։ Վենետիկի հոգևորականությունը միաձնաբար հնազանդվեց հրամանագրին, և միայն Լոյոլայի հետևորդները հայտարարեցին, թե «իրենց խիղճը թույլ չի տալիս չհնազանդվել պապի

հրամաններին և խնդրում են իրենց դուրս թողնել հանրապետության սահմաններից»։

Իհարկե, խնդրանքը բավարարվեց։ Միաժամանակ սենատոր Կիրինոն ու գրող Պաոլո Սարպին ամենուրեք տարածում էին իրենց գրվածքները, որոնցով դատապարտում էին պապերի աշխարհիկ իշխանությունը և կոչ անում հռոմեական աթոռը հանձնել ազգերի մեծ տրիբունալի դատին։

Հետևանքներից վախենալով, պապն իր կարդինալներին հանձնարարեց հակառակորդներին պատասխանել։

Բայց ճարպիկ կարդինալները, վեճից խուսափելով, սահմանափակվեցին սկզբունքային այն դրույթով, թե «բռնապետությունն աստծուց է գալիս, և որ մարդկությունը պարտավոր է անառարկելիորեն ենթարկվել նրանց, ովքեր օժտված են բարձրագույն իշխանությամբ»։ Հայտարարելով «մատերիայի նկատմամբ հոգու գերազանցության մասին, նրանք դրանից հետևյալ եզրակացությունն էին անում.

«Հոգին ղեկավարում ու զսպում է մարմինը, այդ պատճառով աշխարհիկ իշխանությանն իրավունք չի տրված հոգևորից բարձր լինելու, ինչպես և նրան կարգադրելու կամ ճնշելու. դա հավնարազոր կլիներ խռովության և հեթանոսական բռնակալության։ Քահանայապետը պետք է դատի կայսրին, այլ ոչ թե կայսրը քահանայապետին, քանզի անհեթեթություն կլինի պնդել, թե ոչխարն է ղեկավարում հովվին»։

Կիրինոն ու Պաոլո Սարպին իրենց հերթին հայտարարեցին, թե «ամեն մի իշխանություն աստծուց է», ապա, հենվելով Ֆրանսիայի թագավորական իշխանության վարդապետությունների վրա, եզրակացրին.

«Թագավորական իշխանությունը նույն ակունքն ունի, ինչ պապականը, և պապն իրավունք չունի պետական գործերին խառնվելու»։

«Պապը,— ավելացնում էին նրանք,— նույնպես ժողովուրդների վրա իշխանություն ունի, բայց այդ իշխանությունը զուտ հոգևոր է, ինչպես այն իշխանությունը, որ Քրիստոսն ինքն է հաստատել։ Աստվածորդին իր ամբողջ կյանքում երբեք երկրային դատ չի կորել և չէր կարող ոչ սուրբ Պետրոսին, ոչ էլ նրա հաջորդներին այնպիսի իրավունք ավանդել, որին ինքը երբեք չի ձգտել»։

Սակայն փառասեր Պողոսն այլ կարծիքի էր և, հակառակ Հիսուսի պատվիրանների, պնդում էր, թե իր տիրակալությունը տարածվում է երկրային բոլոր գործերի վրա։

Երբ պապը համոզվեց, որ հնարավոր չէ ստիպել թշնամիներին

լռել, դիմեց ռազմական գործողություններին, հուսալով, որ զենքն իրեն ավելի հաջողություն կբերի, քան գրիչը, և սպառնաց Վենետիկի հանրապետությունը ոչնչացնել։

Ի՞նչ կտրիճ մարտիկ էր այդ սուրբ հայրը։

«Բայց,— շարունակում է Լաշատրը,— նրա ռազմական ավյունը շուտ սպառվեց. միգուցե վախենում էր իր բանակի ջախջախումից, որն էապես կթուլացներ իր իշխանությունը Իտալիայում, կամ գուցե զորքը պահելու անհրաժեշտ միջոցներ չուներ, գուցե և կասկածում էր, թե Փիլիպոս II-ը և Հենրիխ IV-ը իր դեմ գաղտնի դաշինք են կնքել։ Վերջիվերջո, նա անսաց Ֆրանսիայի դեսպաններին, ընդունեց նրանց միջնորդությունը Վենետիկի հանրապետության հետ ունեցած կոնֆլիկտը կարգավորելու գործում»։

Նորին սրբազնությունն ուզում էր պահանջել ճիզվիտներին ետ բերել, բայց դուժ Լյուդովիկո Դոնատոն հայտարարեց, թե ավելի շուտ կգերադասի պատերազմը շարունակել, քան հանրապետության տերիտորիայում հանդուրժել Իգնատիոս Լոյոլայի հետևորդներից մեկն ու մեկին, որոնց նա սատանայի գործակիցներ էր անվանում։

Հաշտություն կնքվեց և ճիզվիտները մնացին տարագրության մեջ։

Հռոմը չկարողացավ Վենետիկին հաղթել։

## ՃԻԶՎԻՏՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Վենետիկում ազդեցությունը կորցրած քաջակորով հայրերը Մեծ Բրիտանիայում մասամբ վերականգնեցին իրենց երբեմնի հզորությունը։ Ջնայած եղիսաբեթի խիստ հրամաններին, նրանք նորից երևացին թագավորության սահմաններում, հուսալով արժանանալ Անգլիայի նոր թագավորի՝ Հակոբ I-ի հովանավորությանը։ Ճիզվիտները մի քանի կոլեջներ բացեցին։ Շուտով սև այրերն այնպան համարձակ դարձան, որ թագավորն ստիպված եղավ նրանց ամանց խստորեն պատժել։ Լոյոլայի զավակները երդվեցին իրենց եղբայրակիցների վրեժը լուծել։ Մի քանի կաթոլիկ ազնվականների օգնությամբ, որոնց հոգևոր դաստիարակները հենց իրենք էին եղել, ճիզվիտները կազմակերպեցին այն հռչակավոր դավադրությունը, որ հայտնի է «վառոդային» անունով։ Նրանք որոշեցին պայթեցնել պառլամենտի շենքը, երբ նստաշրջանի

*րությանը ներկա լինի թագավորական ընտանիքը. այդ գործը հանձնարարեցին իր քրիստոնեական մոլեռանդությամբ հայտնի Գայոս Ֆոքսին։ Սկզբում նա հրաժարվեց մասնակցել դավադրությանը, պատճառաբանելով, թե «պառլամենտի բացմանը ներկա են լինում նույնքան կաթոլիկներ, որքան և ճիզվիտներ, և մենք ստիպված կլինենք մեր եղբայրակիցների մահվան համար աստծու առաջ պատասխան տալ»։ Պատվարժան հայրերն առարկեցին նրան. «եթե բարեպաշտ հավատացյալները նույնիսկ մեկով պակաս լինեն, քան հերետիկոսները, ապա դրան էլ պետք է կարևորություն չտալ և ոչնչացնել նրանց բոլորին միասին. աստված մեզ կների հանուն այն մեծ փառքի, որ կվաստակի»։*

*Համակերպվող մարդ լինելով, Գայոս Ֆոքսն առանց երկար տատանվելու համաձայնվեց ճիզվիտների փաստարկներին և գործի անցավ։ Բայց դավադրությունը բացահայտվեց։ Ֆոքսին բռնեցին հենց այն պահին, երբ նա պայթանյութ էր դնում նիստերի դահլիճի տակ գտնվող նկուղում։ Տեղնուտեղը Ֆոքսին հարցաքննության ենթարկեցին, և նա մատնեց իր համախոհներին։*

*Լոյոլայի մի քանի հետևորդներ, որոնց թվում և դավադրության երկու ղեկավարները, կանգնեցին գերագույն դատարանի առաջ, և նրանց բոլորին դատապարտեցին կախաղանի։*

*Սուրբ ավաղակներին միանգամա՛յն արժանի վախճան։*

## ԹԱԳԱՎՈՐԻ ՈՒ ՊԱՊԻ ԲԱՆԱԿՌԻՎԸ

*Այդ դավադրությունը Հակոբ I-ին դրդեց ժողովրդին ստիպել «հպատակության» երդում տալ, որը պարտադիր էր բոլոր անդլիացիների համար, անկախ նրանց կրոնական համոզմունքներից։ Ըստ այդ երդման «ո՛չ պապը, ո՛չ արքեպիսկոպոսը, ո՛չ եպիսկոպոսը իրավունք չունեն վրդովելու կամ ոտքի հանելու ժողովրդին, դրժելով թագավորին տված հավատարմության երդումը։ Ոչ ոք իրավունք չունի յուրացնելու նրա հողերը, չարամիտ փորձ կատարելու նրա կյանքի դեմ, որովհետև կաթոլիկների քարոզած վարդապետությունը, ըստ որի հպատակները պապի հրամանով կարող են իրենց թագավորին սպանել, զազրելի է և անօրինական»։*

Ջայրացած քահանայապետը անգլիացի բարեպաշտներին անհապաղ մի քանի թղթեր ուղարկեց, կոչ անելով Հակոբ I-ին չենթարկվել։

Սկզբում թագավորը պատժեց անուղղելի կամակորներին և դրանցից մի քանիսին գլխատեց։ Այնուհետև ձեռքը գրիչ առավ և պարսավագրեր գրեց, որոնց մեջ վճռականապես դատապարտեց նորին սրբազնությունն կարդինալ Բելարմինի գործունեությունը։ Բարեպաշտ ծերուկը, Լոյոլայի որդիներից մեկը, թագավորի պարսավագրին պատասխանեց նույնքան կցկտուր, որքան և անսովոր ոճով գրված մի գրքով։ «Քահանայապետը,— ասում էր նա,— լիակատար իրավունք ունի դեկավարելու թագավորներին, կարող է նրանց ստիպել իր կարգադրություններին հնազանդվել և անհնազանդներին պատժել, որովհետև իր ձեռքում հրկիզայր սուր ունի»։ Դա ապացուցված է նրանով, որ եկեղեցու պարագլուխները միշտ բանադրել են թագավորներին ու կայսրերին, նրանց գահընկեց անելով, հպատակներին երդումից ազատելով և հողերը կաթոլիկ թագավորների հանձնելով։

Թագավորի ու պապի մեծ վեճին խառնվեցին սուրբ համագործակցության երկու անդամներ։ Նրանցից մեկը պնդում էր, թե թագավորի դեմ հոգևոր անձի ընդվզումը նորին մեծությանը չի վարկաբեկում, որովհետև քահանաներին չի կարելի համարել թագավորի հպատակներ, ճիշտ այնպես, ինչպես չի կարելի քաղաքացիներին հանցագործներ համարել, եթե թագավորը բանադրվում է։ Նման դեպքերում բոլոր հավատացյալները պարտավոր են միավորվել, որպեսզի բռնակալին խորտակեն և նպաստեն կրոնի հաղթանակին։

«Ինչո՞ւ ես չեմ կարող,— բացականչել է մյուսը,— ասածուն ձոն մատուցել թագավորի արյունով։ Երբեք դրանից ավելի լավ գինիով չի կատարել Հիսուս Քրիստոսի սեղանը, երբեք նրան այդքան բարեբեր զոհ չի մատուցվել...»։

Պողոս V-ն իր հերթին խրախուսում էր իսպանացի նշանավոր պատմաբան Մարիանին, որը գտնում էր, որ ամեն մարդ պարտավոր է սպանել թագավորին, եթե նա հրաժարվում է պապին հնազանդվել։

Հետևելով իսպանացի ճիզվիտի օրինակին, ֆրանսիացի կաթոլիկները ամեն կերպ ջանում էին նսեմացնել թագավորական իշխանությունը, պաշտպանելով քահանայապետի ամենազորությունը։ Խանդավառ քարոզիչը գոչում էր. «Լսեցե՛ք, Քրիստոսի զավակներ, կուրորեն հնազանդվեցեք այն ամենակարող կամքին, որը Հենրիխ IV-ին բերեց բարեպաշտների բանակը։ Մի՛ հավատացեք նրանց, ովքեր պնդում են, թե պապը չի համարձակվի Ֆրանսիայի թագավորին բանադրել։ Սուրբ

*հայրը համարձակվեց, և թագավորն ընդունեց նրա ամենազորությունը, ինքն իրեն ստորացնելով և երեսն ի վայր ընկած, նրանից թողություն խնդրելով։ Հանուն Ֆրանսիայի փրկության պապը պարտավոր է կացին վերցնել և կտրտել այն ծառաբները, որ սպառնում են խնդրել թարմ ընձյուղները»։*

*Ահա հենց այդ ժամանակ հայտնվեց մոլեռանդ Ռավալյակը, որը 1610 թվ. մայիսի 14-ին սպանեց Հենրիխ IV-ին։*

## ՃԻԶՎԻՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

*«Արքայասպանին դատելուց հետո,— վկայում է տարեգիրը,— լրջմտությունը հաղթանակեց, և սկսեցին որոնել սպանության իսկական մեղսարարներին, որոնց ձեռքին Ռավալյակը գործիք էր եղել։ Ամբողջ հասարակական կարծիքն ապստամբեց ճիզվիտների դեմ, ամենուրեք հայտնվում էին բարեպաշտ հայրերի դեմ ուղղված պաշտպանվածքներ, և դրանց թվում «Հակա-Կոտոն» վերնագիրը կրող մի ծանակագիր, որի մեջ ապացուցվում էր, որ Ռավալյակի ձեռքը զենք են դրել ճիզվիտներն ու թագուհին։*

*Պառլամենտը չհամարձակվեց հանդես գալ այդպիսի հզոր հանցագործների դեմ և սահմանափակվեց նրանով, որ աստվածաբանության ֆակուլտետին ցուցում տվեց, թե անհրաժեշտ է դրաքննության ենթարկել ճիզվիտների այն աշխատությունները, որոնց մեջ շոշափվում է արքայասպանության հարցը։ Գիտնականների որոշմամբ այդպիսի մի քանի գրքեր տրվեցին դահճի ձեռքը և այրվեցին Փարիզի Գրևյան հրապարակում։ Սակայն այդ դատապարտումը չխանգարեց, որ Մարիա Մեդիչին առաջվա պես հովանավորի ճիզվիտներին։ Նա երիտասարդ Լյուդովիկոս XIII-ի համար խոստովանահայր ընտրեց հայր Կոտոնին, իսկ իր ամուսնու սիրտը հանձնեց ճիզվիտական կոլեջին։ Թագուհին ճիզվիտներին նույնիսկ հատուկ թղթեր շնորհեց, որոնք նրանց ավելի լայն իրավունքներ էին տալիս, քան առաջ։ Նա նրանց թույլ տվեց աստվածաբանություն և այլ գիտություններ դասավանդել, օգտակար համարելով, որ երեխաները սովորեն հենց ճիզվիտների մոտ։*

*Ճիզվիտներն անմիջապես իրենց փաստաթղթերը գրանցեցին համալսարանում և սկսեցին զբաղվել դրանք պառլամենտի կողմից վավերացնելու գործով։*

Համալսարանի դատապաշտպաններից մեկը հիշեցրեց, որ այդ փառապանծ հաստատությունն արդեն երրորդ անգամ է դիմում պառլամենտի օգնությանը, խնդրելով սանձահարել փարաջավոր հանցագործներին և վերջապես նորից հանգստություն ստեղծել երկրում, որտեղ ճիզվիտները, ամբողջ Եվրոպայում նրանց տարածվելու ժամանակից ի վեր, չէին դադարում քաղաքական իշխանությունը տապալելու կոչ անել։ Ճիզվիտներին նա մեղադրեց այն հանցագործություններում, որ ժամանակին Ֆրանսիայում կատարել էին ժակ Կլեմանը, Բարերը, Ժան Շատելը և Ռավալյակը, հիշեցրեց Անգլիայում տեղի ունեցած «վառոդային դավադրությունը», ճիզվիտների մասնակցությունը տարբեր պետություններում խռովություններ կազմակերպելուն և, ավարտելով իր մեղադրանքը, պառլամենտին աղերսեց «չխաբվել սուրբ հայրերի նենգ, մեղրածոր խոսքերով ու սուտ խոստումներով, հիշեցնելով, որ ճիզվիտական սահմանադրությունը թույլատրում է երդումը խախտել, եթե դա պահանջում են միաբանության կամ պապի շահերը»։

Դատապաշտպանն այնուհետև առաջարկեց «ճիզվիտներին արդելել Փարիզի սահմաններում դասեր տալ և որևէ պարտականություն կատարել ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների ուսուցման գործում»։ Ի վերջո, պառլամենտն անսաց այդ լրջմիտ փաստարկները և հայտարարեց, թե համալսարանն իրավացի է իր պնդումների մեջ և հանդիսանում է գործը շահած կողմ։

Իգնատիոս Լոյոլայի թունկագին հետևորդներին ատում էին ոչ միայն Ֆրանսիայում, այլև Եվրոպայի բոլոր պետություններում։

Գրեթե ամեն տեղից վռնդված, իրենց նկատմամբ արհամարհանք ու ատելություն հարուցած, խորամանկ վանականները դրոշն իջեցրին։ Ձգտելով վերականգնել իրենց կազմակերպությունը, նրանք այնտեղ հասան, որ հրաժարվեցին թագավորասպանության վարդապետությունից և նույնիսկ ճանաչեցին թագավորական անձերի անձեռնմխելիությունը։

## ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱՅՐԵՐԸ ԳԼՈՒԽ ԵՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ

Թեև նրանց հնազանդությունը նույնքան ուշացած էր, որքան և հարկադրական, այնուամենայնիվ, դա սուրբ համագործակցության անդամների համար օգտակար եղավ, որովհետև փարատեց հակառա-

կորդների զայրույթը և հանգեցրեց այն բանին, որ Ֆրանսիայում սկսեցին նրանց հանդուրժել։ Նրանք վերականգնեցին իրենց խառնաժողովները, որտեղ վիճարկում էին տարբեր կրոնական հարցեր։ Ճիզվիտները դատապարտեցին փարիզցի աստվածաբան Էդմոնդ Ռիշեի «Հոգևոր իշխանության մասին» տրակտատը և կարողացան հեղինակին պաշտոնից հեռացնել տալ։ Այդ աղաղակող անարդարությունը ճիզվիտների դեմ զայրույթ առաջացրեց, և այդ սրիկաների ու գալլիկան եկեղեցու պաշտպանների միջև մղված պատերազմը նորից բորբոքվեց։

Իր գրքում, որը մեծ հաջողություն ունեցավ, Էդմոնդ Ռիշեն ապացուցում է, որ ո՛չ թագավորները, ո՛չ պապերը չունեն անսահմանականության և անձեռնմխելիության իրավունք, նրանց բոլորին իշխանությամբ օժտում են ժողովուրդները, և նրանք ոչ մի պատրվակով չեն կարող խուսափել ժողովուրդների բարձրագույն արդարադատությունից։

Ահա շիտա՜կ և ազնիվ խոսք։

Ժամանակի ամենանշանավոր գրողները պատիվ էին համարում աստվածաբանի կողմն անցնել և, գրիչ վերցնելով, պաշտպանում էին արդարացի վարդապետություններ։ Նրանցից մեկը, Պլեսի-Մորնեյը, հրապարակեց իր նշանավոր «Անօրինականության գաղտնիքները» երկը, որտեղ չվախեցավ հարձակվել սուրբ գահի վրա և մերկացնել սպարոնայք քահանայապետերի անհամար հանցագործություններն ու ստորությունները։ Եզրափակելով իր խոսքը, նա գրում է. «Սուրբ Պետրոսի հետևորդները հակաքրիստոսի լիազորներն են»։ Իր գրքի ճակատազարդի վրա Բաբելոնի աշտարակի՝ Վատիկանի էմբլեմայի կողքին խիզախ գրողն առաջին պլանում տեղավորել էր Պողոս V-ին, որը սատանայի կերպարանքով, ամեն տեսակ վանականների ոլության անցած, գնում էր աշխարհը նվաճելու։

Հնարավոր չէ նկարագրել, թե ինչպես կատաղեց պապը, երբ իմացավ այդ սպանիչ գրվածքի երևան գալը։ Նա շանթ ու որոտ տեղաց հանդուգն Պլեսի-Մորնեյի գլխին, պահանջեց Ֆրանսիական թագավորությունում արգելել նրա գիրքը։

Պապի արժանավոր սպասարկուները, ճիզվիտները, իհարկե, իրենց վրա վերցրին պիղծ գիրքը հալածելու հոգսը։ Նրանց գործողությունները հաջողությամբ պսակվեցին, որովհետև դատավորները չամաչեցին արգելքի վճիռ հանել, որի մասին միջնորդել էր Հռոմեական արքունիքը։

Խաբեությունը մի անգամ էլ հաղթեց ճշմարտությանը։

Հաջողությունից սրտապնդված,— գրում է մի գրող,— Լոյոլայի

զավակներն սկսեցին ամեն ինչ անել, որ պապը Վենետիկում հաղթանակ տանի։ Նրանք աշխատում էին սուրբ հորն ազատելու մի շատ վտանգավոր հակառակորդից, նշանավոր Պիեր Սարպիից, կամ, ինչպես նրան անվանում էին դոմինիկյանները, Ֆրա Պաոլոյից։ Նրանք ձգտում էին Պաոլոյի հետ այնպես վարվել, ինչպես վարվել էին Պլեսի-Մորնեյի հետ, բայց, հույս չունենալով Տասի խորհրդում էլ հանդիպել այնպիսի հնազանդ դատավորների, ինչպես Ֆրանսիայում, նորից դիմեցին սպանելու փորձ կատարելուն։ Մի անստորագիր նամակից իմանալով, թե իրեն ինչ վտանգ է սպառնում, Ֆրա Պաոլոն նախազգուշական միջոցներ ձեռք առավ, խնդրելով իրեն թույլ տալ զգեստի տակ օղազրահ կրել և տնից դուրս գալ մուշկետով զինված թիկնապահի ուղեկցությամբ։ Նրան թույլատրեցին, մի բան, որ ինքնըստինքյան անհավատալի էր մի քաղաքում, որտեղ հրազեն կրողը մահապատժի էր ենթարկվում։ Մի անգամ, երբ Ֆրա Պաոլոն դուրս էր գալիս վանքից, հինգ դիմակավոր անհայտ անձնավորություններ հարձակվելով նրա վրա, մի քանի անգամ դաշունահարեցին և փախան, նախքան նրան ուղեկցող եղբայրը կկարողանար զենք գործադրել։ Պիեր Սարպիին տարան գրեթե մահամերձ վիճակում, եռակող դաշույնով խոցված, որի վրա փորագրված էին խույր, խաչ, գանգ և հետևյալ բառերը. «Հանուն պապի. Հիսուսի միաբանություն»։

«Սենատում նիստ անող սենատորները, լսելով զազրելի հանցագործության լուրը, նիստն ընդհատեցին և գնացին դոմինիկյանների վանքը վիրավորվածի վիճակի մասին տեղեկանալու։ Տասի խորհուրդը հրամայեց եռանդուն որոնումներ կատարել հանցագործներին գտնելու համար, բայց, դժբախտաբար, նրանց բռնել չհաջողվեց։ Ֆրա Պաոլոյին բուժելու համար դոժը հրավիրեց ամենալավ վիրահատին, կառավարությունն իր վրա վերցրեց բուժման ծախքերը, իսկ երբ նա ապաքինվեց, սրբազնագույն հանրապետությունը կրկնապատկեց նրա եկամուտները և նրան մի պալատ նվիրեց։

Այդ համընդհանուր ուշադրությունից զգացված, Պիեր Սարպին պալատից ու եկամուտներից հրաժարվեց, բայց առաջվա պես վանքից դուրս էլ գալիս միայն զինված պահակախմբի ուղեկցությամբ, որպեսզի պաշտպանված լիներ հարձակման նոր փորձերից»։

## ՅԻԶՎԻՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՄԲԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Չկարողանալով Վենետիկը ենթարկել սուրբ աթոռին, Իդնատիոսի ագռավները թափվեցին Ֆրանսիայի վրա, որտեղ Հենրիխ IV-ի այրու և նրա խոստովանահայր Կոտոնի աջակցությամբ երկրով մեկ բազմաթիվ կրոնական կոնգրեգացիաներ կազմակերպվեցին սուրբ տգիտությունը քաղաքներում և գյուղերում արմատավորելու համար։*

*Շուտով ամբողջ թագավորությունը հեղեղվեց ամեն տեսակ փարաշավորների մեծաթիվ լեգիոններով, և դժբախտ պրովինցիահերն ընկան անիծյալ վիժվածքի իշխանության տակ։*

*Երբ սև այրերն իրենց մեջ ուժ զգացին բացեիբաց դուրս գալու հասարակական կարծիքի դեմ, բարեպաշտ Մարիա Մեդիչիին խնդրեցին Գլխավոր շտաբներին հորդորել, որ ընդունեն Տրիդենտի եկեղեցաժողովի կանոնադրությունը։*

*Շտաբների ամբողջ ավագանին, ինչպես նաև հոգևորականության շատ ներկայացուցիչներ չափազանց բարյացակամորեն վերաբերվեցին Յիզվիտների այդ հղացմանը։ Սակայն միջին դասի ներկայացուցիչներն այլ կարծիքի էին։ Նրանք վճռականորեն առարկում էին խնամակալությունն, ասելով, թե չարժե զբաղվել Տրիդենտի եկեղեցաժողովի հարցով, քանի որ այդ հարցը արդեն վաթսուն տարի մի կողմ է դրվել և, բացի դրանից, եկեղեցաժողովի որոշումները, որ օրթոդոքսալ էին համարվում, դեռ առաջ էլ ճանաչվել էին որպես թագավորական իշխանության և հասարակական անդորրի դեմ ուղղված ոտնձգություն և պառլամենտն արդեն բազմիցս մերժել էր դրանք։*

*Հասկանալով, որ երբեք չեն արժանանա միջին դասի հավանությանը, լոյոլայի որդիները դիմեցին երիտասարդ Լյուդովիկոս XIII-ին (որը հենց նոր էր չափահասության հասել), որից առանց դժվարության «գործելու թույլտվություն» ստացան։*

*Հոգևորականության ու ազնվականության ներկայացուցիչները մի գաղտնի խորհրդակցություն գումարեցին, որտեղ իրենց պարտքը համարեցին «ապահովել պապական գործի հաղթանակը, ազդին ստիպելով հպատակվել աստվածապետական իշխանությանը»։ Սակայն այդ մոլեռանդների ամբարտավան վարմունքը համընդհանուր զայրույթ առաջացրեց, և Փարիզի դատարանը «ունեցվածքի բռնագրավման և իրավունքից զրկելու սպառնալիքի տակ հոգևոր բոլոր անձանց արգելեց*

*Տրիդենտի եկեղեցաժողովին վերաբերվող որևէ բան հրատարակել, ինչպես նաև որևէ թեկուզ աննշան փոփոխություն առաջարկել գալլիկան եկեղեցու գործակալության մեջ»։*

*Այն ժամանակ, երբ պառլամենտը և Գլխավոր շտաբներն ամեն կերպ դիմադրում էին հռոմեական արքունիքի անլուր հավակնություններին, հուգենոտներն իրենց հերթին հանդես եկան մի մանիֆեստով, որի մեջ ի լուր ամենքի հայտարարեցին, թե «նորից զենքի կդիմեն, եթե թագավորը ցանկանա Ֆրանսիան հպատակեցնել սուրբ աթոռին»։ Ջանալան քաղաքներում այդ որոշումն ի կատար ածվեց։ Այնժամ գործին խառնվեց մարշալ դը Անկրը, որը մայր թագուհուն համոզեց «հրաժարվել Տրիդենտի եկեղեցաժողովի որոշումները գործադրելուց և հուդենոտներին խոստանալ, որ, չնայած սուրբ աթոռի և հոգևորականության պահանջներին, ամեն ինչ կմնա նախկին վիճակում»։ Ֆրանսիայի հոգևորականության բարձրագույն աստիճանավորները անտեսելով Մարիա Մեդիչիի հանդիսավոր խոստումը և Փարիզի դատարանի վճիռը, հավաքեցին իրենց ստորադրյալներին և հայտարարեցին, թե «ուղղափառները պարտավոր են խղճի մտոք կատարել Տրիդենտի սուրբ եկեղեցաժողովի որոշումները»։*

*Իրենց հաղթանակով պարծենալով, բարի հայրերը կրկնապատկեցին իրենց անպատկառությունը, հայտարարելով, թե «Ֆրանսիան ընդունել է Տրիդենտի եկեղեցաժողովի որոշումները և հպատակվել պապի ամենազորությանը»։*

*Այս անգամ նրանք չ՚փն անցան։*

*Հենց այդ ժամանակ հայտնի աստվածաբան Մարկոս Անտուան դը Դոմինիսը հրապարակեց իր «Հոգևոր Հանրապետություն» գիտական աշխատությունը, որն ուղղված էր սուրբ աթոռի ամենազորության դեմ։ Այդ գրքից մեջ կբերենք մի քանի համարձակ դրույթներ, որոնք հռոմեական ուղղափառությանը ծանր հարվածներ հասցրին։*

*«Պապի տիրապետության ներքո եկեղեցին այլևս եկեղեցի չէ, այլ պապի զուտ երկրային միապետական իշխանության տակ գտնվող աշխարհիկ պետություն»։*

*«Եկեղեցին չի կարող հարկադիր իշխանություն ունենալ և չի կարող հարակադրանքի դիմել»։*

*«Քահանաները պատարագ կատարելիս գոհյալ Քրիստոսի զոհաբերմանը հարություն չեն տալիս, այլ միայն ծառայում են նրա հիշատակին»։*

«Սուրբ հոգին երկրի վրա Քրիստոսի իսկական փոխանորդն է և օժտված է միայն հոգևոր զորությամբ»։

«Յան Հուսին և Կոստանցյային քրիստոնեական եկեղեցաժողովը դատապարտել է անարդարացիորեն և քրիստոնեական հանրապետության սկզբունքներին հակառակ»։

«Հիսուս Քրիստոսը սուրբ հոգին կտակել է ամբողջ եկեղեցուն, այն չնախատեսհմանելով հատկապես քահանաների ու եպիսկոպոսների համար»։

«Հրամանը սուրբ խորհուրդ չէ»։

«Հռոմեական եկեղեցին առաջինն է ըստ այն քաղաքի արժանիքի, որի անունը կրում է, բայց ոչ ըստ իրավասության»։

«Եկեղեցու այրերի կուսակրոնությունը պարտադիր չէ»։

«Հանդիսավոր վանական ուխտը նույնպիսի զորություն ունի, ինչպես հասարակ ուխտը»։

«Պապությունը մարդիկ են հնարել»։

Այդ աշխատությունը Ֆրանսիայում ու Իտալիայում այնպիսի աղմուկ հանեց, որ վախեցած Պողոս V-ն անմիջապես պահանջեց, որ աստվածաբանության ֆակուլտետն այն դատապարտի։ Այնուհետև պապը հեղինակին կարդինալական թասակ առաջարկեց աշխատության այն հատվածներից հրաժարվելու, որ իրենք կնշեն։ Հրապուրվելով փայլուն, բայց ուխտադրուժ խոստումներով, նորին սրբակրոնություն դը Դոմինիսը վախկոտություն ցուցաբերեց և ընդունեց այդ առաջարկությունը, հրաժարվելով այն հատվածներից, որոնց մեջ քննադատվում էր պապի սրբազան անձը։ Այնուհետև նա ճակատագրական անզգուշություն թույլ տվեց, ներկայանալով հռոմեական արքունիքին, հույս ունենալով արժանի հաստուցում ստանալ իր խայտառակ հնազանդության համար։ Ավա՜ղ, խղճմարտը հաշվի չէր առել իր տիրոջ իրավունքները։ Պապը չէր էլ մտածում փառաբանել նրան, հրամայեց փակել սուրբ Հրեշտակի ամրոցում։

Սրբազան ինկվիզիցիան Դոմինիսի և նրա գրքի դեմ դատ հարուցեց, որի հետևանքով հեղինակն ինքը և նրա աշխատությունը դատապարտվեցին խարույկի վրա այրվելու։ «Սակայն,— ավելացնում է ժամանակագիրը,— մարդկային խիղճն արդեն ընդդիմանում էր եկեղեցական հարցերում այլախոհություն ցուցաբերելու համար մարդկանց այդպես գազանաբար ոչնչացնելուն, ուստի և որոշեցին նրանից այլ կերպ ազատվել, հայտարարելով, թե մեռել է բանտում։ Նա իսկապես մեռել էր բանտում, որպես հատուկ շնորհ նրան բարեպաշտորեն թունավորել

էին։ Թույնը նրան փրկել էր խարույկից։ Այն ժամանակ նա բոլորում էր իր կյանքի վաթսուներորդ տարին։ Դոմինիսի աճյունը հողին հանձնեցին, բայց ինկվիզիցիան անհրաժեշտ համարեց այդ պիղծին այրել թեկուզ և մահից հետո։ Պապի հաստատած կարգադրության համաձայն Դոմինիսի աճյունը գերեզմանից հանեցին և, Ֆլորայի պաշտոնական հանդիսավոր արարողություն սարքելով, խարույկի վրա այրեցին անհաճելի գրքի հետ միասին»։

Այդպես ավարտեց իր կյանքը Մարկոս Անտուան դը Դոմինիսը, Սպալատրոյի արքեպիսկոպոսը, որի մեղքը միայն այն էր, որ համարձակվել էր դիպչել կաթոլիկական, առաքելական և հռոմեական եկեղեցու գլխավորին։

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՐՈՆԻ ՇԻԼԱՓԼԱՎ

Այդ ժամանակ ֆրանցիսկյանները և դոմինիկյանները ամբողջ Եվրոպայում և հատկապես Իսպանիայում խիստ զայրույթ էին առաջացրել անարատ հղիության հարցը շոշափող ծիծաղաշարժ բանավեճերով։ Պայքարն սկսել էր ողբերգական երանգ ստանալ, որովհետև բարի միաբանները, մի կողմ նետելով գրիչը, գործի էին դրել դաշույնը, որը հակառակորդին հաղթելու ավելի հուսալի զենք է։

Ֆրանսիայում այդ երկպառակություններին քիչ ուշադրություն էին դարձնում։ Հասարակությանն ավելի լուրջ բաներ էին հուզում։ Մայր թագուհու և նրա ֆավորիտների դեմ խիստ միջոցների դիմեցին։ Լյուդովիկոս XIII-ի կարգադրությամբ սպանվեց սպալատական Կոնչինին, սպառլամենտի որոշմամբ Մարիա Մեդիչին դրկվեց խնամակալուհու իրավունքներից։ Թագավորի խոստովանահորը, հայր Կոտոնին, պաշտոնազրկեցին։ Ռիշելյեն ինքը, որն այն ժամանակ Լյուսոնի եպիսկոպոս և Պետական խորհրդի անդամ էր, աքսորվեց։ Խորամանկ պրելատը գնաց Ավինյոն, որտեղ սերտ կապ հաստատեց նորին սրբազնության լեգատի հետ, որպեսզի այդ կերպ Փարիզ վերադառնալու հնարավորություն ստանա։ Լեգատն իսկապես սկսեց Պողոս V-ի առաջ միջնորդել, որ Ռիշելյեն վերադառնա Ֆրանսիայի արքունիք՝ իր վարած պաշտոնին։ Բայց Ֆրանսիայի իսկական տերը, դուքս Լյուինը, վախենում էր Լյուսոնի փառասեր եպիսկոպոսի ազդեցությունից և այդ առաջարկությունը մերժեց։

Այնժամ Ռիշելյեն այլ միջոցի դիմեց։ Նա Մարիա Մեդիչիին, որը

*Նրա խորհրդով այրուձիից հեռացել և դոնվում էր Հարավային պրովինցիաներում, երբ, թե հարկավոր է այնտեղ քաղաքացիական պատերազմ բորբոքել։ Դուքս Լյուինը գիտեր, թե Ռիշելյեն ինչպիսի ազդեցություն ուներ մայր թագուհու վրա, և ստիպված եղավ նրա հետ բանակցություններ սկսել։ Դուքսը առաջարկեց Ռիշելյեին վերականգնել Պետական խորհրդի անդամի պաշտոնում և նրան կարդինալական թասակ խոստացավ, այն պայմանով, որ նա Մարիա Մեդիչիին կհամոզի ստորագրել հաշտության պայմանագիրը։*

*Սակայն դուքս Լյուինը Ռիշելյեին խաբում էր։ Հենց որ պայմանագիրն ստորագրվեց, դուքսը ոչ միայն չկատարեց իր խոստումները, այլև պապին խնդրեց «ուշադրություն չդարձնել Ֆրանսիայի դեսպանի միջամտությանը Լյուսոնի եպիսկոպոսին կարդինալական թասակ տալու մասին»։ Պողոս V-ը անսաց այդ խնդրանքը, և ութ կարդինալների որոշմամբ Ռիշելյեն աստիճանի բարձրացման չարժանացավ։ Փառամոլ ալրեվատը որոշեց վրեժ լուծել։ Նա մայր թագուհուն դրդեց պայքարը շարունակել, ապա սուրբ աթոռին հայտնեց, թե մեկընդմիշտ խզում է իր կապերը նրա քաղաքականության հետ և հռոմեական արքունիքին դեռ կստիպի դրա համար զղջալ։*

*Նրա սպառնալիքները սուրբ հորը շատ էլ չվախեցրին, պապը նույնիսկ անհրաժեշտ չհամարեց Լյուսոնի եպիսկոպոսին պատասխանել։ Սուրբ հոր ուշադրությունն ամբողջապես գրավել էր Գերմանիայի նոր կայսրը՝ Ֆերդինանդ II-ը, որն ի հաճույս պապի սկսել էր բողոքականներին հալածել, իր ջանադրությունը ղորացնելով սուրբ աթոռին աված նվերներով։ Այդ ծանրակշիռ փաստարկների համար պապը Ֆերդինանդի վրայից բանադրանքը հանեց և հաստատեց նրա դահակալումը, կաթոլիկական եպիսկոպոսներին հանձնարարելով նրան թագավոր օծել։*

*Նորին սրբազնությունը շռայլաբար շնորհներ էր բաժանում հնչուն մետաղի փոխարեն։*

## ԲՈՐԳԵԶԵՆԵՐԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՌՈՄԻ ԱՐՔՈՒՆԻՔԸ

*Մենք ցանկանում ենք մի շատ հետաքրքիր հատված մեջբերել այն գրքից, որի հեղինակը պատմում է հռոմեական արքունիքի անիրավությունների մասին։*

«Պողոս V-ը այնպիսի ջանադրությամբ էր կողոպտում հավատացյալներին, որ ի վիճակի եղավ չորս միլիոն էկյու ծախսելու իր քրոջորդի կարդինալ Բորգեզեի համար հողեր գնելու վրա։ Նա երեք հարյուր հիսուն հազար էկյուով գնեց Հռոմի մոտ գտնվող մի կալվածք, ութ հարյուր հազար էկյու ծախսեց իր զղյակում կառուցումներ կատարելու և պարտեզներ գցելու համար։ Նրա առանձնասեռյակը լի էր արվեստի հազվագյուտ գործերով։

Ի՞նչ աղբյուրներից էր նա միջոցներ քաղում։ Չէ որ ամբողջ աշխարհին հայտնի էր, որ պապի ընտրությունից առաջ բորգեզենների գերդաստանը միանգամայն աղքատացել էր։ Իսկ հիմա ամեն ինչ փոխվել է. հափշտակումներն ու գողությունը բորգեզեներին դարձրել են Իտալիայի ամենահարուստ տեղյորները։

Մենք խիստ կզարմանանք, եթե կոնդակները թերթելիս շատ էջերում չգտնենք պապական շնորհներին արժանացած մարդկանց անունները։ Պողոս V-ը շատ լավ գիտեր, որ շնորհները տրվում են միևնույն մարդուն՝ իր պաշտելի կարդինալ Բորգեզեին։ Այդ անունը դիտմամբ թաքցված է, որպեսզի չշվարեցնի այն մարդկանց, որոնք դեռ այնքան հիմար են, որ հավատում են քահանայապետի արդարամտությանը։

Վախենալով իր տգիտությունը ի հայտ բերել, նորին սրբազնությունը չի ձգտում իրեն շրջապատել կրթված ու փորձված մարդկանցով։ Այդ իսկ պատճառով նա կարդինալական թաղակներ տալիս է անխելք կամակատարների, դմբոնների, խարդախների, խիզախությունից ու առողջ բանականությունից զուրկ մարդկանց, որոնք կատարում են միայն այն, ինչ նրանց ականջին փսփսում է պապի քրոջորդին, թաղակները տալիս է ավանակների, որոնք արածում են իրենց ծխերի հողերում, իսկ դրանցից ստացվող եկամուտը հանձնում կարդինալ Բորգեզեին։

Կարդինալներ Կապոնի, Բարբերինիի, Լոտրեկի և Սալինոլեի համար շատ դժվար կլիներ պատասխանել, թե նրանք որ քաղաքներում են դրականություն ուսումնասիրել, քանզի մատենագրական բոլոր գործերից նրանց հայտնի էին միայն այն մուրհակները, որ տվել էին պապի քրոջորդուն։

Ինչ վերաբերում է կարդինալական կոլեգիայի մյուս անդամներին, ապա ավելի լավ է չհարցնել, թե նրանք ինչով են զբաղվել նախքան այդ աստիճանն ստանալը։ Մեկը երգեհոնահար է եղել և չնչին աշխատավարձ ստացել, երկրորդը ծաղկախտ ունեցողների է խնամել, երրոր-

*դը սպարդապես բողարած է եղել, իսկ չորրորդը գողերի խումբ է գլխավորել և գյուրաւ կարող էր կախաղան վաստակել իր դիշերային կողոպուտների համար։*

*Մխրանի զգենելուց առաջ նրանք բոլորը Հռոմի՝ աշխարհիս այդ ամենափչացած քաղաքի տականքների ընկերներն են եղել։*

*Բոլորին հայտնի է, որ Վատիկանում ո՛չ արդարութիւն կա, ո՛չ մաքրութիւն, այնտեղ նույնիսկ հոգ չեն տանում իրենց զազրելի վարքը թաքցնելու մասին։ Օրը ցերեկով սրբեալտները, եպիսկոպոսական քղամիդներ ղգեցած, այցելում են հասարակաց աղջիկներին, առանց քաշվելու սպանում իրենց առևանգած կանանց ու աղջիկների ամուսիններին ու հայրերին։*

*Ինչ վերաբերում է իրեն՝ Պողոս V-ին, ապա նա միայն անառակության է տրված և խոզի պես թավալվում է շնութեան, արյունապղծութեան, արվամոլութեան գարշահոտ կոյաջրի մեջ։ Էլ ուրիշ ի՞նչ կարող էր լինել, եթե նա ինքը թունավորել է իր եղբայրներից մեկի կնոջը, երբ վերջինս հրաժարվել է կատարել նրա ցանկութիւնը։ Ինչպե՞ս չհովանավորի արյունապղծութիւնը, եթե ինքն իր հարազատ քրոջից ապօրինի երեխաներ ունի և հանդիսանում է իր քրոջորդի կարդինալի հայրը։*

*Ո՞վ կհամարձակվի պատմել այն սոսկութիւնների մասին, որոնց շնորհիվ նորին սրբազնութեան երկրորդ եղբոր կինը պապուհի անունն է վաստակել։ Ի՞նչ անամոթ միջոցների օգնութեամբ է այդ կինը զարձել եպարքուհիների, կարդինալական թաղակների, ծիսերի լիիրավ տէր։ Ինչպե՞ս է պատահել, որ այդ նոր Հովհաննան կառավարում է եկեղեցին, առաքելական աթոռին բազմելով խույրը պլխին և երկնային բանալիները քնքուշ ձեռքերի մեջ առած։ Ո՞վ կարող է բարձրաձայն ասել, թե պապը, քրիստոնեութեան բարձրագույն պարագլուխը, աստծո երկրային վոհ անորդը, ի դեմս կարդինալ Բորգեզեի, միաժամանակ ունի քրոջորդի, որդի և սիրեկան։ Մի՞թե երկնային տերը որոշել է, որ այդպիսի հրեշները պիտի ղեկավարեն աշխարհը։*

*Մի՞թե մարդիկ հավիտենապես գլուխ են խոնարհելու բռնակալների առաջ։ Կգա այն օրը, երբ ժողովուրդները արդար դատաստան կտեսնեն պապերի ու թագավորների հետ և երկրի երեսից կջնջեն բոլոր բռնապետներին և նրանց մեղսակիցներին՝ քահանաներին ու ազնվականներին»։*

*Խո՜սք չկա, շատ պատվարժան ընտանիք ունի այդ պապը, այդ արյունապղծիչը, արվամոլը, կողոպտիչն ու մարդասպանը։*

*1621 թվ. հունվարի 28-ին աշխարհը վերջապես ազատվեց Պողոս V-ից, որը տասնվեց տարի գահակալելուց հետո իր վայրենի հոգին ավանդեց սատանային։*

## ԳՐԻԳՈՐ XV

*Պողոս V-ին հաջորդեց Ալեքսանդրո Լյուդովիզին, որն իր վրա առավ Գրիգոր XV անունը։ Նոր պապը սերում էր մի արիստոկրատական նշանավոր տոհմից։*

*Գահ բարձրանալով, Գրիգոր XV-ը փորձեց վերականգնել պապական իշխանության երբեմնի վեհությունը։ Իր զառամյալ տարիքի պատճառով նա չէր կարողանում բավականաչափ եռանդով զբաղվել պետական գործերով և դիմեց Իգնատիոս Լոյոլայի միաբանության օգնությանը։ Նա Վատիկանին կից ստեղծեց բացառապես ճիզվիտներից կազմված մի հատուկ խորհուրդ, որի նախագահ նշանակեց իր սիրելի եղբորորդի Լյուդովիկո Լյուդովիզիին։*

*Պաշտելի եղբորորդին, չնայած բոլորել էր իր կյանքի միայն քսանհինգերորդ գարունը, արդեն աչքի էր ընկնում այն բոլոր արատներով, որ բնորոշ են հռոմեական հոգևորականությանը։ Մի խոսքով, երիտասարդ Լյուդովիկոն սուրբ միաբանության արժանավոր աշակերտ էր։*

*Սկզբում սուրբ հայրը ջանում էր իր հզորությունը վերականգնել Եվրոպայում, վախենալով արտասահմանյան հյուպատոսների աղդեցությունից, Գրիգորը մի դեկրետ հրապարակեց, որը կարդինալներին պարտավորեցնում էր կոնկլավի նիստերում քվե տալ ոչ թե բաց, այլ փակ քվեարկությամբ։*

*Խորհուրդն իր ամբողջ ուշադրությունը նվիրում էր այն միջոցառումներին, որոնք ծառայում էին Եվրոպայի բնակչության մեջ մոլեռանդություն հրահրելուն, քանի որ եվրոպացիների կրոնական ավյունը սկսել էր զգալիորեն սառչել։ Այդ նպատակով Գրիգոր XV-ը սրբերի կարգը դասեց մի քանի նոր երանելիների, և այդ թվում ճիզվիտների միաբանության հիմնադիր Իգնատիոս Լոյոլային, որն, իհարկե, սրբի լուսապսակին արժանի է ավելի, քան որևէ մեկը։*

## ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԴ

*Քանի որ այդ ժամանակ սուրբ աթոռի ֆինանսները գտնվում էին բավական ողբալի վիճակում, խորամանկ Գրիգորը հանդիսավոր հռքելյան հայտարարեց, որպեսզի, նախ, լցնի իր գանձարանը և, երկրորդ, շոշափի Եվրոպայի տարբեր երկրների կրոնական զարկերակը։*

*Քաղաքական-ֆինանսական այդ հնարքի հսկայական հաջողությունը նրան ցույց տվեց, որ կաթոլիկ եկեղեցու գործերը միանգամայն լավ վիճակում են։ Գերմանիայի իշխանները ոչ միայն չէին ընդդիմանում ինդուլգենցիաների առևտրին, այլև ջերմորեն պաշտպանում էին պապությանը։ Ավստրիայի կայսրը մեծ ջանադրությամբ՝ ձեռնամուխ եղավ լյութերականության վերացմանը։*

*«Նույնիսկ Ֆրանսիայում,— վկայում է պատմաբանը,— պապի հեղինակությունն այլևս չէր վիճարկվում։ Ճիզվիտները նորից սկսեցին իրենց գործը, հրդեհելով բողոքական տաճարները, հրով ու սրով հալածելով հուգենոտներին»։*

*Ճիզվիտների սանը Շվեյցարիայում հանցագործ խմբեր էր ստեղծում՝ տարաբախտ կալվինականներին կոտորելու համար։ Նա կալվինականներին հետապնդում էր ամեն տեղ՝ Ալպերի գագաթներին ու հովիտներում։ Մոլեռանդները ռեֆորմատորների շուրջկալներ էին կազմակերպում նաև Տիրոլում։ Քաղաքները, գյուղերը, աղքատիկ հյուզակները կրակի էին մատնվում։ Ճանապարհները, վայրի կիրճերը՝ ամեն ինչ ներկվեց բողոքականների արյունով։*

*Ռեակցիան բոլոր կաթոլիկ երկրներում հսկայական հաջողությունների հասավ։ Ունենալով այնպիսի պապ, ինչպիսին Գրիգոր XV-ն էր, կարիք չկար անհանգստանալու, թե հռոմեական արքունիքը ձեռքից բաց կթողնի իր հեղինակությունը վերականգնելու հնարավորությունը։*

*Նորին սրբազնությունը կազմակերպեց պրոպագանդայի կոնգրեգացիա, որը ներկայացուցչություններ ստեղծեց աշխարհի բոլոր մասերում։ Այնուհետև Գրիգոր XV-ը պաշինք կնքեց կաթոլիկ թագավորների, և մասնավորապես Ֆերդինանդ II-ի հետ, որին իր նունցիա Կառլո Կարաֆայի միջոցով դրամական օժանդակություն առաջարկեց։ Տվեց հարուստ պարգև՝ երկու հարյուր հազար էկյու, բազմաթիվ ինդուլգենցիաներ, ինչպես նաև դրախտային երանություն խոստացավ։ Իսկ Ֆեր-*

*դինանդը պարտավորվեց պապին օգնել ուեֆորմատորներին պատժելուջ գործում։*

*Քրիստոսի բարեգութ փոխանորդի նվերը ծայր աստիճան դայթակղիչ էր. ոսկի, ինդուլգենցիաներ, հուսալի տեղ այն աշխարհում և, բացի դրանից, սուրբ հոր օրհնությո՞ւնը։ Ո՞վ կարող էր ընդդիմանալ դրան։ Ուստի մի վայրկյան իսկ չտատանվելով, Ավստրիայի միապետը Գրիգոր XV-ի հետ գործարք կնքեց։*

*«Հենց որ դաշնագիրը կնքվեց,— ավելացնում է պատմաբանը,— դոմինիկյանների, օգոստոսականների, ֆրանցիսկյանների, կարմելյականների ու ճիզվիտների ամբողջ հրոսակախմբեր շտապեցին համախմբվել կարդինալ Կարաֆայի դրոշի ներքո և թափվեցին Բոհեմիայի վրա, որպեսզի այնտեղ վերականգնեն հռոմեական եկեղեցու ծեսերը՝ միաձև հաղորդությունը, լատիներեն ժամասացությունը, սուրբ ջրով ցողելը և դաղտնի խոստովանությունը։ Երկձև հաղորդություն պահանջողներին զնդան էին նետում կամ ուղարկում խարույկակիզման, իսկ նրանց դույքը բռնագրավում հօգուտ եկեղեցու։*

*Բողոքականների տները պաշարում էին։ Զինվորներն ու վանականները դյուղերում համընդհանուր ջարդ էին սարքում, հրդեհում ագարակները, խեղդում հողագործներին, բռնաբարում աղջիկներին, անարդում երեխաներին, խնայելով միայն նրանց ով իրեն կաթոլիկ էր հայտարարում։ Այդպիսի միջոցների շնորհիվ կարդինալ Կարաֆան շուտով կարող էր Գրիգորին զեկուցել, թե ամբողջ Բոհեմիան հպատակվել է սուրբ աթոռին»։*

*Մորավիայում Ավստրիայում, Հունգարիայում, Բավարիայում, Սաքսոնիայում Պֆալցում և Բադենում մի խոսքով Սրբազան Հռոմեական կայսրության բոլոր մասերում կաթոլիկական ռեակցիայի արմատավորումն ուղեկցվում էր անհամար արյունալի չարագործություններով։ Եվ իհարկե այդ բոլոր սխրանքները կատարվում էին հանո՞ւն աստծո, խաղաղության ու բարեգթության։*

## ՊԱՊԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆՆԵՐ

*Կաթոլիկ հրոսակների մեծ ջարդագործը, Գրիգոր XV-ը Գերմանիայի դուքսերին պարգևատրեց կաթոլիկ եկեղեցուն մատուցած բարի ծառայությունների համար։*

Այնուհետև Գրիգորը դիմեց Յոհաննիտյան ասպետներին՝ խնդրելով ծառայել սուրբ Աթոռի շահերին։ Այդ ընթացքում ու մոլեռանդ պարոնը, Լյուդովիկոս XIII-ը, անմիջապես արձագանքեց պապի առաջարկին և իրենից կախված ամեն ինչ արեց նորին սրբազնության սիրտը շահելու համար։

Թագավորությունում կալվինականների դեմ համառ պատերազմ սկսվեց. մեկը մյուսի ետևից վերացվեցին այն բոլոր արտոնությունները, որ նրանք նվաճել էին այնքան թանկ գնով։ Կալվինականներն այլևս իրավունք չունեին ո՛չ հավաքվել, ո՛չ պաշտպանվել և ստիպված եղան հոժարակամ կամ հարկադրաբար հրաժարվել իրենց դավանանքից։ Բողոքական-ավետարանականներն իրենք թագավորին առաջարկեցին իրենց աջակցությունը և կաթոլիկություն ընդունեցին, որպեսզի աստիճաններ ու պաշտոններ ստանան և պահպանեն իրենց կասկածի արտոնությունները, որոնք երրորդ դասը կտրականապես ժխտում էր։

Պապը խորապես դրգռված էր բուն Լյուդովիկոս XIII-ի նվիրվածությունից և նրան շնորհակալություն հայտնեց հետևյալ խոսքերով. «Թանկագին որդյակ իմ, տիեզերքի ջարդ, մեր դարի փառք, ընթացեք միշտ սուրբ ճամփով։ Ցույց տվեք ձեր բազկի ուժը նրանց, ովքեր աստծուն չեն ճանաչում։ Գթացող մի եղեք հերետիկոսների նկատմամբ և չանացեք արժանանալ երբևէ Հիսուս Քրիստոսի աջ կողմում տեղ գրավելու իրավունքին, նրան զոհաբերելով ձեր թագավորությունը վտանգող բոլոր հակաքրիստոսականներին»։

Ռեֆորմացիայի գործին դավաճանեց ոչ միայն ֆրանսիական ազնվականությունը, այլև բողոքական պետությունների ամբողջ բարձր հասարակայնությունը, որը հրաժարվել էր իր կրոնից և մահու չափ վախենում էր անկախության գաղափարներից, որոնք սպառնում էին ազնվականական իրավունքների ու արտոնությունների գոյությանը։

Պապությանը մնում էր միայն ծնկի բերել Անգլիային։ Բայց այս դժվար գործը գլուխ բերելու համար խորամանկ Գրիգորը անհրաժեշտ համարեց բռնի միջոցներից հրաժարվել և դիմել խաղաղ քաղաքականության։ Նա բանակցություններ էր վարում Անգլիայի թագավորի հետ, հաշվի առնելով, որ միապետը փափագում է իր որդուն ամուսնացնել իսպանական արքայադստեր հետ, մի բան, որին շարունակ դիմադրել էր Պողոս V-ը։ Անգլիայի թագավորին այդ ամուսնությունը թույլատրող կոնդակ հանձնելով, նա ոչ մի պայման չդրեց, այլ սահմանափակվեց միայն նրանով, որ երիտասարդ արքայազնին ասաց, որ «հույս ունի տեսնել, թե ինչպես քրիստոնեական դավանանքի հին սերմերը, որոն-

ցից Անգլիայի թագավորների մեջ այդքան գեղեցիկ ծաղիկներ են աճել, նորից աճում են նրա սրտում, և կաթոլիկուհու հետ նրա ամուսնանալը երջանիկ նախանշան է համարում հռոմեական եկեղեցու համար»։

Հակոբ I-ը չցանկացավ այդքան սիրալիր սուրբ Հոր առաջ պարտքի տակ մնալ և մի հատուկ հրամանով Անգլիայի կաթոլիկներին ժամասացության կատարյալ ազատություն տվեց։

Այդպիսով, Գրիգոր XV-ին հաջողվեց իր իշխանությունը տարածել ամբողջ Եվրոպայում։ Բայց նրա անհագ փառասիրության համար դա քիչ էր. նա ցանկացավ նվաճել ամբողջ աշխարհը և այդ նպատակով սև բանակի բազմաթիվ գնդեր ուղարկեց զույդ Ամերիկաները, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա, Ասիա ու Աֆրիկա։

Բոլորին հայտնի է, թե Իգնատիոս Լոյոլայի գիտաիրտ որդիները ինչպիսի բարբարոսական եղանակով էին «աշխատում» ի փառս աստծու։

## ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ՎԵՐՋԻՆ ՊԼԱՆԸ

Իտալիայի հանրապետությունները լրջորեն անհանգստացած էին Ավստրիայի միապետության աճող հզորությամբ և, վախենալով իրենց անկախությանն սպառնացող վտանգից, դիմեցին Ֆրանսիայի թագավորի օգնությանը։

Քահանայապետն արդեն տենչում էր այդ իրավիճակից օգուտ քաղել, բայց մահը կասեցրեց նրա պլանների իրագործումը և եկեղեցուց խլեց երբևէ սուրբ Պետրոսի գահին բազմած ամենաճարպիկ քաղաքագետներից մեկին։

Դա տեղի ունեցավ 1623 թվ. հուլիսի 8-ին։

## ՈՒՐԲԱՆՈՍ VIII

Դեռ նոր էին հանգուցյալ Գրիգորի մարմինը գերեզման իջեցրել, երբ բուռն կրքեր բորբոքվեցին. յուրաքանչյուր կլիկ ձգտում էր ապահովել գահի համար պայքարող իր թեկնածուի հաղթանակը։

Այլևայլ հավակնորդների մեջ մի առանձին ամբարտավանությամբ

Ն մարտաշունչ ավյունով աչքի էր ընկնում կարդինալ Բարբերինոն, որին, սակայն, դեմ էին կոնկլավի գրեթե բոլոր անդամները։ Չգնելով ամեն գնով խույրին տիրանալ, Բարբերինոն հաստատ որոշեց կարդինալներին ահաբեկել։

«Նրա հրամանով,— հայտնում է Լաշատրը,— նրա եղբայրներն նրանց որդիները ավազակներից մի ջոկատ հավաքագրեցին, գործի մեջ ներգրավեցին արվարձանների բնակչությանը և խռովություն բարձրացրեցին, որը կարդինալներին ստիպեց մուշկետների ու թնդանոթների պաշտպանությամբ թաքնվել Վատիկանում։ Երբ կարդինալները կոնկլավի հավաքվեցին, Բարբերինոն կոլեգաների մեջ գրավեց իր տեղը, ասես ոչինչ չէր պատահել։ Սկզբում նա մեծ համբերությամբ լսեց պապական գահի տարբեր թեկնածուներին, ապա ձայն վերցրեց և սկսեց կոլեգաներին համոզել քահանայապետ ընտրել եռանդուն մարդու, որն ընդունակ լինի վերջ տալու Հռոմեական բնակչության մեջ առաջացած անկարգություններին։ Նա նույնիսկ չթաքցրեց, որ ինքը խառնակչության նախաձեռնողների վրա որոշակի ազդեցություն ունի, և լիսխաբար հայտարարեց, թե հավիտենական քաղաքում անդորր կթագավորի, հենց որ կարդինալները իր դեմին դնեն սուրբ խույրը։

Այդ դեկլարացիան ոչ միայն չավելացրեց նրա օգտին տրվող ձայները, այլև մի-հահամուռ դժգոհություն առաջացրեց։ Դրանից բնավ չանհանգստանալով, Բարբերինոն չլքեց մարտի պաշտը, այլ սկսեց գործել ավելի մեծ եռանդով, ամբոխակներին գաղտնի հրահանգներ տալով՝ բորբոքել կրակը և արյուն թափել։ Նրա հրամանները կետառկետ կատարվեցին և Հռոմը դարձավ սարսափելի դավանությունների թատերաբեմ։

Կարդինալի վարձկանները խեղդում էին ծերունիներին ու երեխաներին, բռնաբարում աղջիկներին ու կանանց, գաղրիլի կերպով անարգում նրանց դիակները։ Զարդից հագենալով, նրանք քաղաքի փողոցներով ջահերի կաղմակերպեցին, կանգ առան սուրբ Հրեշտակի ամրոցի ցանկապատի մոտ և սկսեցին ապստամբից բացականչել. «Կամ մա՛հ, ու հրդե՛հ, կամ Բարբերինոն պապ»։

Այդ բացականչությունները կարդինալների ականջներին հասան ու նրանց սարսափի մատնեցին։ Ընտրությունները շարունակվում էին, բայց Բարբերինոյի անունը քվեատուփից գեռևս դուրս չէր գալիս։ Այն ժամանակ կարդինալները սոսկումով նկատեցին, որ օրեցօր կոնկլավի անդամների թիվը կրճատվում է։ Դրա պատճառը մահը կամ հիվանդությունն էր, որի հետևանքով անհայտանում էին չարագործ Բարբերինոյի

*Թեկնածուության առավել ակտիվ հակառակորդները։ Բոլորին պարզ դարձավ, որ նա իր թշնամիներից ազատվում է թույնի միջոցով։ Այդ պահից սկսած ամեն մի դիմադրություն դադարեց, և կարդինալ Բարբերինոն պապ հռչակվեց Ուրբանոս VIII անունով»։*

*Այդ հնարամիտ քայլով Բարբերինոն ապացուցեց, որ իսկապես արժանի է պապ լինելու։*

*Հռոմեական եկեղեցու նոր գլուխը սերում էր Ֆլորենցիայի մի հնադույն աղնվականական տոհմից, սկզբում նա եղել էր առաքելական պալատի սաղմոսասաց, ապա սուրբ աթոռի նունցիա ֆրանսիական արքունիքում։ Առաքելական գահ բարձրանալու պահին Ուրբանոսը հիսունհինգ տարեկան էր, քաջառողջ էր և պնդակազմ։ Մի խոսքով, հաղթակազմ մարդ էր։*

*Հետևելով Պողոս V-ի օրինակին, նոր պապը գահի վրա ամրապնդվելուն պես իր եղբայրներին, եղբորորդիներին ու քրոջորդիներին նշանակեց պետական և եկեղեցական բարձրադուլն պաշտոններ։*

*Այնուհետև շատ ղգուշաբար կարգավորեց սրբերի պաշտամունքին վերաբերվող մի քանի հարցեր։ Դրանից հետո պատրաստվում էր շարունակել իր փառամոլ նախորդի ծավալած կրոնական պրոպագանդան։ Սակայն Ուրբանոս VIII-ը, որը նույնքան կասկածամիտ էր, որքան և դաժան, որոշեց նախ իրեն ապահովել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամու բոլոր ոտնձգություններից և սուրբ քաղաքը ռազմական համբարի վերածեց։*

*Մեծացնորությամբ տարված, պապը չէր հանդուրժում ո՛չ խորհուրդ, ո՛չ դիտողություն։ Սրբազան կոլեգիան հավաքվում էր հազվադեպ։ Կարդինալները իրար հետ մյացելով ծափահարում էին պապի ճառերը և անառարկելիորեն կատարում նրա հրամանները։ Ճիշտ այդպես էր նա վարվում նաև օտարերկրյա դեսպանների հետ։ Մի անգամ, երբ մի օտարերկրյա միապետի դեսպան վկայակոչեց հնադույն պապական սահմանադրությունների հոդվածները, սուրբ Հայրը կտրուկ առարկեց. «Իմ վճիռն ավելի կշիռ ունի, քան երկու հարյուր մեռյալ պապերի օրենքը»։*

*Իսկապես ուշագրավ անձնավորություն։*

*Սակայն այդ սանձարձակ ու անողոք պապը հանձին Ռիշելյեի հանդիպեց մի գործչի, որը, կարդինալ ու ամենաշուր մինիստր դառնալով, վարում էր սուրբ աթոռի քաղաքականությանը միանգամայն հակադիր քաղաքականություն։*

*Նրանք երկուսն էլ, մերթին հաշվով, ճարպիկ իաբեբաններ էին։*

Եվրոպայի տարբեր պետությունների միջև մղվող պատերազմի ընթացքում նորին սրբազնությունը նմանվում էր Լյուդովիկոս XIII-ի մինիստրին, դառնալով մերթ բողոքականների դաշնակից, մե՛րթ թշնամի։

Եվ Ֆերդինանդ II-ը, որ մինչ այդ հնազանդ էր հռոմեական արքունիքին, համարձակվեց ձեռք բարձրացնել Լեռնային Իտալիայի վրա. պապը դիմեց բողոքականության պաշտպան Գուստավ-Ադոլֆի օգնությանը։

Բարկացած Ֆերդինանդ II-ը քահանայապետին զգուշացրեց, թե «հենց որ Գուստավ-Ադոլֆին և նրա երեսուն հազար հերետիկոսներին Գերմանիայից վռնդի, սուրբ աթոռի հաշիվն էլ կմաքրի»։ Ուրբանոս VIII-ը սահմանափակվեց լակոնիկ պատասխանով. «Երեսուն հազար հույներով Ալեքսանդրը նվաճել է աշխարհը»։

Բայց Շվեդիայի թագավորի հետ պաշինքը երկար չտևեց, որովհետև նորին սրբազնությունը ձգտում էր թուլացնել, այլ ոչ թե ջախջախել ավստրիական գահը, քանի որ դա անխուսափելիորեն կհանգեցներ և կաթոլիկության ջախջախմանը։ Գիտակցելով իր սխալը, պապն սկսեց Գուստավ-Ադոլֆի դեմ դավեր լարել, կապ հաստատեց Ֆերդինանդի հետ և նրան հանձնեց շվեդական բանակի ռազմական պլանները։ Նա կայսրին հաղորդեց բանակի գլխավոր հրամանատարությունը հանձնել վալհենշտայնին, իր կարծիքով մյուս հրամանատարին, որ ընդունակ էր իր ուժերը չափել Շվեդիայի հետ։ Դժբախտաբար, բողոքականության մոլեռանդ պաշտպան Գուստավ-Ադոլֆն ընկավ Ավգսբուրգի կայսեր զորքերի դեմ ճակատամարտելիս։

Շատ լավ հասկանալով, որ Ռեֆորմացիան կորցրել է իր հիմնական հենարանը, Ուրբանոս VIII-ը այլևս այնքան էլ չէր անհանդստանում շվեդների ու Ֆերդինանդ II-ի միջև մղվող պայքարի ելքից էլ չատած, որ պատերազմը նրան ձեռնտու էր, որովհետև հնարավորություն էր տալիս, առանց ավստրիական գահից վախենալու, իշխել իտալական մրցություններում։

Ակնդեցական գործերով զբաղվելու հետ միասին քահանայապետը չէր մոռանում նաև իր զարմանասանի շահերը։ Նրա եղբորորդիների ու քրոջորդիների մոտ կուտակված գումարները հասնում էին հինգ հարյուր միլիոն էկյուի, չհաշված այն, որ ծախսվել էին պալատներ, հողեր, ոս-

կե ու արծաթե սպասքներ, թանկարժեք քարեր և արվեստի գործեր ձեռք բերելու համար։

Սուրբ Հոր սիրառատ սրտի շնորհիվ նեպոտիզմը չտեսնված չափերի հասավ։

## ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱԼԱԾՈՒՄ Է ՀԱՆՃԱՐԻՆ

Իր ազգականների նկատմամբ չափազանց հոգատար Ուրբանոսը չէր մոռանում նաև իր դրածոներին ու մերձավորներին, ջանասիրության համար նրանց պարգևատրելով հիանալի ծխերով։ Իր հովանավորության տակ առնելով զաղրելի շողոքորթներին, քահանայապետը միաժամանակ հետապնդում էր մեծ գիտնականներին։ Հռչակավոր Գալիլեյը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնց նա հետապնդում էր շատ մեծ ավյունով։ Վախենալով հզոր հանճարի բացահայտած մեծ ճշմարտություններից, գարշելի պապն ինքը նրա աշխատությունն ուղարկեց ինկվիզիցիայի տրիբունալին, և յոթանասունամյա Գալիլեյը, որի առողջությունը քայքայված էր, կանգնեց դատավորների առաջ։

«Ես Հռոմ ժամանեցի,— գրում էր նա մի նամակում,— 1633 թվ. փետրվարի 10-ին և հույսս դրել էի ինկվիզիցիայի ու սուրբ Հոր ողորմածության վրա։ Սուրբ Հոր համար ես ոչ մի հետաքրքրություն չպետք է ներկայացնեի, որովհետև չէի կարող հրդեհել ոչ էպիդրամներ, ո՛չ էլ սիրային սոնետներ։ Սկզբում ինձ փակեցին լեռան վրա գտնվող Ծրրորդության ամրոցում, իսկ հաջորդ օրն ինձ այցելեց ինկվիզիցիայի կոմիսարը և տարավ իր կառեթով։

Ճանապարհին նա ինձ տարբեր հարցեր էր տալիս և ցանկություն հայտնեց, որ ես վերջ տամ այն սկանդալին, որ Իտալիայում առաջացրել էր Երկրի շարժմանը վերաբերվող իմ հայտնագործությունը։ Այն բոլոր մաթեմատիկական ապացույցներին, որ ես կարող էի նրա դեմ բերել, նա պատասխանում էր սուրբ գրքի բառերով. «Երկիրն անշարժ է եղել և անշարժ կլինի հավիտյանս հավիտենից»։

Այսպես զրուցելով, մենք հասանք ինկվիզիցիայի պալատը։ Ես կանգնեցի կոնգրեգացիայի առաջ, որը նշանակված էր ոչ թե նրա համար, որ ինձ դատեր, այլ դատապարտեր։ Սկսեցի շարադրել իմ փաստարկները, բայց որքան էլ ջանացի՝ չկարողացա ստիպել, որ ինձ հաս-

*Լյուենան։ Իմ բոլոր փաստարկներին պատասխանում էին սուրբ գրքից քաղած այն խոսքով, որ վերաբերվում է Հիսուս Նավինի հրաշքին։ Ես իմ հերթին մեջ էի բերում սուրբ գրքի այդ անհասկանալի խոսքը, թե «Երկինքը պինդ է, բրոնզե հայելու պես հարթ», աշխատելով ապացուցել սուրբ գրքի տառացի մեկնաբանության անիմաստությունը. այդպիսի մեկնաբանությունը ժողովուրդներին ընկղմում է խոր տգիտության մեջ։*

*Ի պատասխան դրա, ինձ վրա վիրավորանքներ թափեցին»։*

*Ապրիլի 30-ին քննարկումն ավարտվեց։ Գալիլեյին զնդան նետեցին, և, բարոյապես ու ֆիզիկապես ընկճված, նա ընդունեց, որ իր գրվածքը «լի է զազրելի կեղծիքով»։*

*Հունիսի 30-ին դժբախտ ծերունին կանգնեց դարշելի տրիբունալի առաջ, որտեղ հանդիսավորությամբ հրաժարվեց իր ուսմունքից։ Հռչակավոր գիտնականը դատավորների առաջ ծունկ չոքեց և, ձեռքերը դնելով ավետարանի վրա, խոնարհելով գլուխը, արտասանեց հետևյալ բառերը. «Ես, Գալիլեյո Գալիլեյս, ֆլորենցիացի, յոթանասուն տարեկան, ծնկի գալով ձերդ բարձրություններին, պատվարժան կարդինալների, տիեզերական քրիստոնեական հանրաւելտությունում հերետիկոսական չարիքի դեմ պայքարող գլխավոր ինկվիզիտորների առաջ, հայացքս ուղղած սուրբ ավետարանին, որին ես դիպչում եմ ձեռքերովս, երդվում եմ, որ միշտ հավատացել եմ ու այսօր էլ հավատում եմ և աստծո օգնությամբ առաջիկայում էլ կհավատամ այն ամենին, ինչ ճշմարիտ է համարում, քարոզում և սովորեցնում է սուրբ՝ կաթոլիկական ու առաքելական եկեղեցին... Ինձ դատել են կասկածելով հերետիկոսության մեջ, դատել են նրա համար, որ պնդում էի ու հավատում, թե իբր արեգակը տիեզերքի անշարժ կենտրոնն է, թե իբր Երկիրն աշխարհի կենտրոնը չէ և շարժվում է։ Ահա թե ինչու, ցանկանալով ձերդ սրբություննների մտքից ու ամեն մի կաթոլիկ քրիստոնյայի գիտակցությունից վանել այդ ծանր կասկածանքը, որի ճիշտ լինելը ընդունում եմ, ես մաքուր սրտով և անկեղծ հավատով հրաժարվում եմ և նզովում հիշյալ մոլորություններն ու հերետիկոսություններըը...»։*

*Ավանդությունն ասում է, թե հրաժարման բանաձևն արտասանելուց հետո Գալիլեյը բարձրացել է և, ոտքը գետնին խփելով, բացականչել. «Բայց և այնպես՝ այն պտտվում է»։*

*Հոգևորականությունը լիովին բավարարվեց հրաժարումով, որ կորզվել էր բռնի ուժով, և որը, սակայն, չխանգարեց հետագայում էլ վրեժ լուծել Գալիլեյից։ Մեծ գիտնականին բանտում պահեցին մինչև դեկ-*

տեմբերը, իսկ ընդհուպ մինչև մահը (1642-ին) նա դանվում էր ուրբ ինկվիզիցիայի հսկողության տակ։

Ահա թե ինչպես նողկալի Ուրբանոս VIII-ը և նրա արժանավոր գինակիցները պարգևատրեցին անմահ գիտնականին։

## ՍՆՈՏԻՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՁՈՀԵՐԸ

Այն ժամանակ, երբ Իտալիայում սուրբ աթոռը մեծ դիտնականներին հետապնդում էր նրանց մեծ հայտնագործությունների և տգիտության դեմ պայքարելու համար, Ֆրանսիայի թագավորական իշխանությունը խարույկի վրա այրելու էր ուղարկում հերետիկոսության մեջ մեղադրվող մարդկանց։ Կախարդությամբ զբաղվելու անհեթեթ մեղադրանքով խարույկների վրա այրում էին նրանց, ում քաղաքական հակառակորդներ էին համարում և ում հարստությունն ուզում էին գավթել։

Կարդինալ Ռիշելյեն, Լյուդովիկոս XIII-ի մինիստրը, այդ մեթոդից լայնորեն օգտվում էր անցանկալի մարդկանց ոչնչացնելու և նրանց դույքը իր օգտին բռնագրավելու համար։ Նրա դրդմամբ Բռնատիրոս Լոյոլայի հետևորդները ժողովրդի մեջ կախարդների ու վհուկների մասին անհեթեթ հերյուրանքներ էին տարածում, և շատ չանցած ժողովուրդը, որ սիրահար էր ամեն մի գերբնական բանի, միայն մոգության, կախարդության և նման բաների մասին էր խոսում։ Ֆրանսիայում վհուկության դեմ սարքված դատավարությունների հետևանքով հազարավոր մարդիկ ոչնչացան։

Նորին ապուշություն Լյուդովիկոս XIII-ը, որը մահու չափ վախենում էր իր պիղծ ոգուց, մի առանձին հրամանագրով իր թագավորությունը հանձնեց աստվածամոր պաշտպանության։ Հրամանագրում ասված էր. «Մենք առանձնապես մեր անձը, մեր գահն ու, ազգամանրն թագը և մեր բոլոր հպատակներին հանձնում ենք երանելի, հեզաբարո աստվածամորը, որին ընտրում ենք Ֆրանսիայի թագավորության հատուկ հովանավոր։

## ԲԱՐԻ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*XVII դարի սկզբին ճիզվիտներն իրենց կանոնադրության մեջ բավական զգալի փոփոխություններ մտցրեցին։ Նրանք երկրորդական պլանի վրա մղեցին կրոնի և աշխարհը նվաճելու պրոպագանդան, սկսեցին կաթոլիկական կրոնի վարդապետությունները հարմարեցնել իրենց կարիքներին։ Ոչ միայն փոփոխվեց միաբանության կանոնադրությունը, այլև էականորեն խեղաթյուրվեցին որոշ վարդապետություններ։ Մեղքի բնույթին նվիրված աշխատություններում ճիզվիտ աստվածաբանները հայտարարում էին, թե «դոյություն ունի միայն դիտակցական շեղում աստծո պատվիրաններից, ուստի մեղք է հանդիսանում՝ միայն գիտակցված և դիտավորյալ մոլորությունը»։*

*Բերենք ճիզվիտական բարոյականության մի քանի նմուշներ։*

*«Մեծ բարիք ու մեծ շնորհ է աստծուն բոլորովին չճանաչելը, որովհետև մեղքը աստծուն անարգելն է, բայց քանի որ մարդ աստծուն չի ճանաչել, ապա նրա համար չկա ո՛չ մեղք, ո՛չ հավիտենական դատապարտություն։ Այսպիսով, անաստվածը, թեպետև չի հավատում աստծու գոյությանը, հենց այդ պատճառով էլ ի վիճակի չէ, եթե նույնիսկ ցանկանա, եկեղեցու կողմից դատապարտվող որևէ արարք կատարելու։ Ամենայն իրավամբ կարելի է երկրպագել նաև անշունչ առարկաներին, կենդանիներին կամ իր մարմնի տարբեր մասերին, ընդհուպ մինչև երեխա ծնելու օրգանները, այն հիման վրա, որ եկեղեցին թույլատրում է աստծուն մեծարել նրա բոլոր արարչությունների մեջ։*

*Սակայն, քանի որ անշունչ առարկայի առաջ երեսն ի վայր ընկնելով և նրան համբուրելով կարելի է սնոտիապաշտի անուն վաստակել, ապա պետք չէ դա կատարել հրապարակավ։ Գաղտնի մեղքը ներված մեղք է»։*

*«Քանի որ հնթե՛նոսները, երկրպագելով իրենց աստվածություններին, հաստատ հավատում են, որ իրենց կուռքերն աստվածություն են մարմնավորում, ապա նրանք մեղք չեն գործում։ Կարելի է առանց մեղք գործելու երկրպագել Պրիապին կամ Վեներային»։*

*«Հոգու փրկության համար բնավ պարտադիր չէ միշտ հավատալ կրոնական դոգմաներին կամ խորհուրդներին։ Բավական է թեկուզ մի անգամ, մի վայրկյան հավատալ, որպեսզի այդ հավատը մնա ամբողջ կյանքի ընթացքում»։*

«Պատարագը լսելու համար բավական է ներկա լինել ժամերգությանը։

Ձրվածությունը, թեթևսոլիկ տրամադրությունը, ցանկասիրությունը կամ գեղեցիկ կանանցով զմայլվելը բոլորովին էլ չեն արժեքազրկում պատարագը»։

«Որոշ հանգամանքներում աղջիկը մեծ մեղք չի գործում, եթե սիրույն անձնատուր է լինում մինչև ամուսնությունը, ճիշտ այնպես, ինչպես կինը մեղք չի գործում, եթե նրան գրկում են ուրիշ տղամարդիկ կամ ինքը դավաճանում է ամուսնուն։ Իրավացի չէ սուրբ գրքի կույս Շուշանը, երբ բացականչում է. «Եթե ես ընդառաջ գնամ ծերունիների անպարկեշտ ցանկությանը, կորած եմ»։ Քանի որ նրան մի կողմից խայտառակություն էր սպառնում, իսկ մյուս կողմից՝ մահ, ապա իրավացի կլիներ, եթե ասեր. «Ես չեմ համաձայնվի շնություն անել, բայց դրան կդիմանամ, և այդ մասին ոչ ոքի ոչինչ չեմ ասի, որպեսզի պահպանեմ կյանքս ու պատիվս»։

«Անփորձ երիտասարդ աղջիկները կարծում են, թե կուսությունը պահպանելու համար հարկավոր է ճչալով օգնություն կանչել և գայթակղողին դիմադրել։ Բնավ ոչ, նրանք կշարունակեն նախկինի պես անարատ մնալ, եթե լռեն և չդիմադրեն։ Մեղք է միայն կանխամտածված արարքը։ Եթե Շուշանը կատարեր ծերունիների ցանկությունը, ներքուստ դրան չմասնակցելով, նրա վրա ոչ մի մեղք չէր ընկնի»։

«Երիտասարդ կինը կարող է մեղք չգործելով դարդարանք կրել, որպեսզի գրգռի տղամարդկանց մարմնական ցանկություններ, կարող է շպարվել, անուշահոտությամբ օծվել, թանկարժեք իրեր կրել, հագնել բարակ նուրբ հագուստներ, որոնց միջով թափանցում է կուրծքը, շրջագծվում են մարմնի ձևերը և նույնիսկ կռահվում է ամոթի օթևանը, եթե դա պայմանավորված է մոդայով»։

«Տղամարդը, եթե նույնիսկ վանական է կամ քահանա, մեղք չի գործում, երբ մտնում է աւետարանոց, որպեսզի մոլորյալ հոգիներին բարոյականություն քարոզի, թեև շատ հավանական է, որ ինքն էլ կարող է գայթակղվել և սիրո քրմուհիներին թույլ տալ իրեն հրապուրել։ Այն դիտավորությունը, որ նրան բերում է անառակության տաճարը, նրան պահպանում է մեղքից։ Այն ծառան, որ հանապազօրյա հացի համար ծառայում է անբարոյական տիրոջ, կարող է շատ քաղմնելի պարտականություններ կատարել, չզրկվելով աստծո ողորմածությունից։ Ճիշտ այդպես էլ սպասուհին կարող է առանց իր համար վատ հետևանքներ սպասելու, նպաստել իր տիրուհու խաղդավանքներին,

*առանց հոր կամ ամուսնու գիտության ներս թողնել սիրեկաններին, սիրային նամակներ հանձնել կամ կատարել այդպիսի այլ հանձնարարություններ»։*

*«Հասարակաց աղջիկը կարող է օրինական կարգով իր աշխատանքի համար վճար պահանջել պայմանով, որ գները չեն բարձրացվի։ Նույնը վերաբերվում է ամեն մի աղջկա, որ գաղտնի ըբազվում է պոռնկությամբ»։*

*«Որոշ դեպքերում գողությունը մեղք չէ։ Կինը կարող է ամուսնուց ծածուկ ընդհանուր գումարից վերցնել այնքան, ինչքան հարկավոր կհամարի աստվածահաճո գործերի համար։ Նա կարող է ամուսնուն կողոպտել, փողն օգտագործելով խաղերի, արդուզարդի և նույնիսկ սիրեկաններին վարձատրելու համար, միայն թե այն պայմանով, որ կեսը տա եկեղեցուն։ Երեխաները կարող են նույն պայմաններով կողոպտել ծնողներին, գողանալով ու իրենց փոքրիկ բավականությունների համար ծախսելով այնքան, որքան նրանց թույլ կտան հանգամանքները։ Սպասավորները կարող են կողոպտել տերերին կոմպլեսացնելով իրենց անբավարար ռոճիկը, սակայն այն կիսելով քահանաների հետ։ Յուրաքանչյուր մարդ, որ կողոպտում է հարուստին, նրան մեծ վնաս չպատճառելով, օրինական սեփականության իրավունք է ձեռք բերում։*

*Եթե յուրաքրած միջոցների մի մասը նա ծախսում է սուրբ գործերի վրա, համարձակորեն կարող է արդարադատությանն ասել, թե ոչինչ չի գողացել»։*

*«Եթե մարդու խիղճն ընդդիմանում է սուտ երդում տալուն, նա կարող է բառերն արտասանելիս, աննկատելիորեն խեղաթյուրել բանաձևը և անմեղ մնալ։ Օրինակ, «juzo»-ի փոխարեն, որ նշանակում է «երդվում եմ», կարելի է ասել «izo»՝ «վառվում եմ»։ Սվ երդվողի մեղքը կնվազի։ Թույլատրվում է նաև երդում տալ առանց դրան հավատարիմ մնալու որևէ մտադրության։ Եթե դատավորը հիշեցնի տված երդումը, կարելի է հրաժարվել, ասելով. «Ես ոչինչ չեմ խոստացել»։ Առանց այս հնարքին դիմելու մենք ստիպված կլինեինք վճարել, երբ չենք ուզում ծախսի տակ ընկնել, կամ ամուսնանալ այն աղջկա հետ, որին չենք ուզում կնության առնել»։*

*«Եթե դուք, օրինականորեն պաշտպանվելով, մարդ եք սպանել, իրավունք ունեք երդմամբ պնդել, թե ոչ ոքի չեք սպանել, ձեր մտքում անելով հետևյալ վերապահությունը. «Եթե նա ինձ վրա չհարձակվեր»։ Եթե հայրը ձեզ բռնել է իր աղջկա սենյակում և սպիտում է նրա հետ ամուսնանալ, դուք կարող եք համարձակ երդվել, ձեր մտքում ասելով.*

«Եթե ինձ կասիպեն կամ եթե նա հետագայում ինձ դուր կգա», Վաճառականը, որի ապրանքի համար շատ էժան են վճարում, կարող է օգտվել կեղծ կշռաքարերից և դատավորի առաջ կա ժխտել, իր մտքում ասելով. «Գնորդը չի տուժել»։ Կարելի է նույնիսկ մոդոնել և առանց խղճի խայթ զգալու կեղծ վկայության համար փող ստանալ այն պայմանով, որ մի մասը տրվի եկեղեցուն»։

«Վանականը, որ գիտե, թե իրեն ինչ վտանգ է սպառնում, եթե բռնվի շնության անելիս, բայց զինված մտնում է իր սիրուհու սենյակը և ինքնապաշտպանության ժամանակ ամուսնուն սպանում, կարող է շարունակել իր եկեղեցական պարտականությունների կատարումը։ Եթե քահանան զոհասեղանի առաջ խանդոտ ամուսնու հարձակմանն է ենթարկվում, իրավունք ունի պատարագն ընդհատել հարձակվողին սպանելու համար, ապա առանց ընդմիջման, արնաթաթախ ձեռքերով, վերադառնալ զոհասեղանի մոտ ու շարունակել պատարագը»։

«Ամուսնուն չի թույլատրվում դատավորի վճռից առաջ սպանել շնության մեջ բռնված իր կնոջը, իսկ հորը՝ իր աղջկան։ Հակառակ դեպքում նրանք մահացու մեղք կգործեն, եթե նույնիսկ մեղավորներն իրենց ղվարճությունը շարունակեն նրանց ներկայությամբ։ Դատավճիռն ընդունելուց հետո հայրը և ամուսինը կարող են սպանել աղջկան կամ կնոջը, որովհետև նրանք արդեն դառնում են դատավճիռը կամավոր կերպով է կատար ածողներ։

Այդ դեպքում նրանք դահիճներ են, այլ ոչ թե վրիժառուներ»։

«Որդին կարող է ցանկանալ հոր մահը, որպեսզի օգտվի ժառանգությունից, մայրը կարող է ցանկանալ աղջկա մահը, որպեսզի նրան չկերակրի և օժիտ չտա։ Քահանան կարող է ցանկանալ իր Եպիսկոպոսի մահը հուսալով փոխարինել նրան, քանզի մենք ավելի շատ ենք մեզ բարիք ցանկանում քան մերձավորին՝ չարիք... Որդին, որ հարբած վիճակում սպանել է հորը, կարող է ուրախանալ այն հարստության համար, որ իրեն ժառանգ է ընկնում, և նրա ուրախությունը դատապարտելի չի լինի։ Որդին կարող է սպանել հորը, եթե վերջինս նզովված է և կամ պետության, կամ կրոնի դավաճան է հայտարարված»։

«Կաթոլիկ երեխաները պարտավոր են մատնել իրենց հերետիկոս ծնողներին, թեպետ և գիտեն, որ հերետիկոսությունը պատժվում է որպես մահացու մեղք։ Իսկ եթե նրանք ապրում են բողոքական երկրում, ապա կարող են առանց վախի ու կշտամբանքի իրենց ծնողներին խեղդել»։

Այդպիսին էին Հյուսիսի ընկերության վարդապետությունները։ Բա-

չբավարարեր, մարդկային միտքն արդեն սկսել էր ազատագրվել, և այլևս բավական չէր, որ մարդ փարաջա հագներ, որպեսզի նրա ասածն համարվեր անվիճելի ճշմարտություն։

Քննադատական ազատասեր միտքն այլևս մի քանի գիտությունների մենաշնորհը չէր, նա կամաց-կամաց մարդկային զանգվածներ էր նվաճում, և այդ պատճառով էլ ճիզվիտական դոկտրինաները գնահատվեցին ըստ արժանվույն։

Բուլենբաումը, «Տրակտատներ բարոյականության մասին» գրքի հեղինակներից մեկը, այն գրքի, որից մենք վերցրել ենք վերոհիշյալ մեջբերումները, շարունակում էր երկու կոլեջ ղեկավարել, չնայած որ անձնատուր էր լինում անսանձ անառակության։ Նա հարբեցող էր և, ըստ երևույթին, այդ պատճառով իր գրվածքներից մեկում ասում է. «Կարելի է առանց մեղք գործելու խմել չափից ավելի, միայն թե պետք է կարողանաս կանգ առնել, քանի դեռ մարդուն զանազանում ես խոտի դեզից»։

Նշանավոր էսկոբարը ավելի հեռու էր գնում, իր երկերում ու ճառերում պնդելով, թե արվագիտության մեջ դատապարտելի բան չկա։

Հայր Հիմենիուսը գրում էր, թե հոգու փրկության համար պարտադիր չէ հավատալ սուրբ Երրորդության խորհուրդներին, և ավելացնում. «Քրիստոնեական կրոնը դավանանքի առարկա է, որովհետև երեքուն է ու անորոշ։ Դեռ ավելին, նրանք, ովքեր ընդունում են, որ այդ կրոնն անվիճելիորեն ճշմարիտ է, դրանով իսկ ստիպված են ընդունել, որ նաև անվիճելիորեն կեղծ է։ Ինչպե՞ս կարելի է իմանալ, որ երկրի վրա գոյություն ունեցած կամ գոյություն ունեցող կրոններից Քրիստոսի կրոնը ճշմարտանմանն է։ Արդյոք մարդարեների նախազուշակումները նեղշնչված են եղել աստծո ոգո՞ւ կողմից։ Ճշմարի՞տ են Հիսուս Քրիստոսին վերագրվող հրաշքները։ Ես հակառակն եմ պնդում։ Բայց ոչ մի դատապարտելի բան չկա այն բանում, որ հասարակ աստվածավախ մարդկանց ստիպում են հավատալ ինչ-որ կեղծիքի։ Ահա թե ինչու ես ընդունում եմ ավետարանը և բոլոր սուրբ գրքերը»։

Գրեթե նույն միտքն էր արտահայտում նաև հայր Տամբուրինին. «Կրոնի, ինչպես և ամեն մի այլ բանի մեջ թույլատրվում է հետևել մե՛րթ այս, մե՛րթ այն հավանական դատողությանը. հավանական է, որ Քրիստոսը մարդ է դարձել, իսկ Յուպիտերը՝ եզ։ Պե՞տք է, որ ես դրան հավատամ։ Այո՛։ Հակառակը նույնպես հավանական է, և ես հավասարապես կարող եմ հաստատել և՛ այս, և՛ այն»։

Այս տեսությունների հեղինակները չէին ուզում խարխլել «հասա-

*բակ աստվածավախ մարդկանց» հավատը, որոնց մասին անսքող ատելությամբ է խոսում հայր Հիմենիուսը։ Սակայն, կրոնի էությունը հասկանալու համար չկա ավելի համոզիչ բան, քան լսել հենց նրանց՝ հոգևոր անձերի խոստովանությունները, որոնք կրոնը կեղծիք են համարում և ակնարկում, որ քահանաները հասարակ խաբեբաներ են։ Այդ իսկ պատճառով մենք այնպես ջանադրաբար մեջբերումներ կատարեցինք ճիզվիտների գրվածքներից։*

## ՅԵՐ ԱՔԼՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԿՈՒ ՀԱՎԵՐԸ

*Ուրբանոս VIII-ը մեռավ 1664 թվ. հուլիսի 29-ին։ Նրան հաջորդեց Իննովկենտիոս X-ը։ Նոր պապը զզվանք պատճառելու աստիճան այլանդակ էր և միաժամանակ՝ սադից էլ հիմար։ Դիմապատկերը լրացնելու համար ավելացնենք, որ ստախոս էր, խարդախ, երկերեսանի, վախկոտ, վրիժառու, դաժան ու շատ հեշտասեր։ Իր ամբողջ գահակալության ընթացքում նա եղել է իր սիրուհիների և ընտրյալների հլու կամակատարը։*

*Երբ նա առաքելական գահ բարձրացավ, նրա սիրուհին Օլիմպիան էր, զարմանալի գեղեցիկ և միաժամանակ շատ խելացի մի կին։ Օլիմպիան անմիջապես իր ձեռքը վերցրեց կառավարման սանձերը իսկ Իննովկենտիոսն ուրախ էր ազատվել բոլոր հոգսերից, որպեսզի կարողանար անարգել ճաշակել անառակ կյանքի բոլոր հրապույրները։*

*Օլիմպիան քահանայապետի եղբայրներից մեկի այրին էր, այսինքն՝ նրա հարսը։ Պապի և հարսի հարաբերությունները ոչ մեկի համար գաղտնիք չէին. բոլորը գիտեին, որ Իննովկենտիոսը նրա քմահաճույքների հլու ստրուկն է. իզուր չէին Օլիմպիային պապուհի անվանում։ Պապը բնավ չէր նեղանում և չէր առարկում այն բազմաթիվ ծաղրանկարների, քառյակների և ծաղրախոսությունների դեմ, որ բացեիբաց տարածվում էին Հռոմում։ Ճիշտ է, դրանց մեջ սուրբ Հորը ծաղրում էին ավելի թունդ, քան նրա գեղեցիկ սիրուհուն։*

*Հռոմ ժամանելիս օտարերկրյա դեսպաններն ամենից առաջ Օլիմպիայից էին ունկնդրություն խնդրում։ Ի նշան խորին հարգանքի կարդինալներն իրենց շքասենյակներում պապի պատկերի կողքին կախում էին հզոր կուրտիզանուհու դիմանկարը։ Արտասահմանյան արքունիք-*

նները բացեիբաց գնում էին նրա հովանավորությունը, բոլոր խնդրատուները մեկ էլ նրան էին դիմում, նա նվերներ ու պրամական դումարներ էր ընդունում, ապա գործում ըստ իր բնականության, ավելի ճիշտ, ըստ իր անձնական շահի։ Շուտով նա մեծ կարողության տեր դարձավ։

Որոշ ժամանակ ոչինչ չէր խանգարում պապական ընտանիքի անդորրը։ Պետության գործերով զբաղվելով, պապուհին ժամանակ էր գտնում նաև նորին սրբազնության զվարճանքները գլուխ բերելու համար։ Օլիմպիան նրա համար սիրունիկ աղջիկներ ու թմբլիկ պատանիներ էր հայթայթում, միաժամանակ ինքն էլ շարունակում էր նրան ջերմագին փաղաքշանքներ ընծայել։

Զանազանակերպելով պառավ յալ չարաճճիի (նա մոտ յոթանասուն տարեկան էր) հաճույքները, Օլիմպիան կարողանում էր այնպես անել, որ նա միշտ իր կարիքն զգա։ Այդ կինը լավ էր հասկանում, որ թուլացիկ կապերը չեն կարող սպառնալ իր աղդեցությանը։ Դա հենց այդպես էլ էր մի որոշ ժամանակ։ Եվ հանկարծ պապն զգաց սեր ասածը, որը սասանեց ամենակարող Օլիմպիայի հզորությունը։

Ահա թե դա ինչպես կատարվեց։

Իննովկենտիոս X-ն իր սիրուհուց մի քանի երեխաներ ուներ։ Խուլրը գլխին դնելով, նա, իր նախորդների օրինակով, սկսել էր հոգ տանել իր ընտանիքի բարեկեցության մասին. աղջիկներին ամուսնացրեց հարուստ սենյորների հետ, իսկ իր որդի Կամիլին ավելի վաղ նշանակել էր հոգևոր պաշտոնի։ Այդ երիտասարդը, որն խելքը նույնիսկ հոր խելքին չէր հասնում, հակառակ իր հիմարության, բայց գուցե և դրա շնորհիվ շատ արագ հասավ կարդինալական աստիճանի։ Դա, անշուշտ, հիանալի պաշտոն էր, բայց հայրը, այնուամենայնիվ, քիչ էր համարում։ Հենց սր եկամտաբեր ամուսնության հնարավորությունն ստեղծվեց, նորին սրբազնությունը Կամիլին աղատեց կուսակրոնության ուխտից և ամուսնացրեց մի չահել այրու հետ, որի ունեցվածքը հռոմում ամենահարուստներից մեկն էր։

Օլիմպիա Ռոսանո՝ ահա այն կնոջ անունը, որ պապի հարեմը դարձավ. նա շատ լավիկն էր, չափազանց սրամիտ և ոչ պակաս իշխանատենչ։ Նա ուներ այն բոլոր հատկությունները, որոնցով կարող էր նսեմացնել ավագ Օլիմպիային։ Տեղափոխվելով պապական պալատ, հարսն օգտագործեց կանացի կոկետության բոլոր միջոցները և համակեց հեշտասեր ծերունուն։

Նրա հաջողություններ կայծակնային էր, բայց ոչ կատարյալ։ Դառ-

Նալով նրա հյուծ սորուկը, Ինոովկենտիոսը շարունակում էր հնազանդվել նաև իր սիրուհու բոլոր քմահաճույքներին։ Այդ կանանցից յուրաքանչյուրը (նրանց շանսերը մոտավորապես հավասար էին) օգտագործում էր բոլոր ուժերը մրցակցուհուն հաղթելու համար։ Նրանց փոխադարձ ատելությունը շուտով սկսեց արտահայտվել այնպիսի բուռն ձևերով, որ քահանայապետն ստիպված եղավ նրանցից մեկին ճանապարհ դնել։ Ոչ առանց դառն ափսոսանքի նա որդուն խնդրեց վերադարձնել բնակության վայրը և կնոջը հետը տանել։

№ 1 Օլիմպիան ցնծության մեջ էր։

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ԿՈՂՄՆ Է ՔԱՇՈՒՄ

Ինոովկենտիոսը դեռ նոր էր բաժանվել չափազանց հանդուրժող Կամիլի չքնաղ կնոջից, երբ սկսեց դառնորեն զղջալ իր որոշման համար։ Այդ կնոջ նկատմամբ տածած բուռն սերը նրան խելքահան էր արել։ Հույս ունենալով, որ պապը վերջիվերջո կմոռանա № 2 Օլիմպիային, ավագ սիրուհին (ավագ՝ ստաժով, տարիքով նա դեռ այնքան էլ մեծ չէր) ամեն ինչ անում էր սուրբ հոր ուշադրությունը գրավելու համար, նրան ապահովելով բաղմապիսի բավականություններով։ Ասենք ինքն էլ իր երիտասարդական գրավիչ հրապույրներից գրեթե ոչինչ չէր կորցրել, և եթե գարնանային ծաղիկը փոքր ինչ թոշնել էր, ապա այդ թերևակի պակասությունը լիուլի փոխհատուցվում էր կենսափորձով։

Նա պապի համար շատ անպարկեշտ զվարճալիքներ էր սարքում։ Գիշերները Վատիկանի պարտեզներում հայտնվում էին երկու սեռի ևռատի ներկայացուցիչներ այնպիսի հագուստներով, որ, ըստ ավետարանի, կրում էին մեր նախահայրերը, քանի դեռ տեղի չէր ունեցել խնձորի հայտնի պատմությունը։ Ինոովկենտիոսը չէր արհամարհում այդ դեղչկական ուրախությունները, սիրով մասնակցություն ունենալով վավաշոտ զվարճանքներին։ Սակայն նրա մտքերը սավառնում էին հեռուներում, նա չէր կարողանում չհիշել թերևս պակաս փորձառու և ճարպիկ, բայց դրա փոխարեն այնքան ցանկալի երիտասարդ Օլիմպիային։

Վախենալով բարկացնել քմահաճ մատրոնային, պապը համբերեց

որքան կարող էր, բայց ի վերջո չդիմացավ, արհամարհեց մեծ հարստ բուռն զայրույթը, աղմկալից սկանդալները և տևական ընդհարումները, որ անխուսափելի են երկու կանանց միատեղ գտնվելու ժամանակ, և Կամիլին ու նրա կնոջը նորից իր մոտ բերեց։

Այն մասին, թե ինչեր եղան № 2 Օլիմպիայի վերադարձից հետո, նարեկն է էպիկական պոեմ հյուսել։ Որ չէր լինում, որ սկեսուրն ու հարսը փողոց չհանեին իրենց խուճապովը։ Բնավ չամաչելով, նրանք հրապարակավ այնպիսի վեճեր էին սարքում, որոնց մասին դրողները պատ են ածում «Ծնծկուտուց» նրբագիծ բառը։ Այդպիսի մի քանի հանդիպումներից հետո դրպասկան բնակարանի անպատկառ սկանդալները հաչտնի դարձան ամբողջ քաղաքին։

Մի որոշ ժամանակ ծեր պապն ամբողջովին երկու դևդուհիների իշխանության տակ էր, կուրորեն ենթարկվելով մե՛րթ մեկին, մե՛րթ մյուսին։ Նա նույնիսկ ինքն իրեն դավում էր այն հանգստանալու համար, որ իբր ցույցաբերում էր ստիպ Օլիմպիաններին իր մոտ պահելու նպատակով։

Այսօր հարսը պապին դրդում էր մի որոշում ընդունել, իսկ մյուս օրը կեսուրի պնդմամբ նա բոլորովին հակառակ որոշում էր ընդունում։

Մենք հանդամանորեն չենք պատմի Հռոմի արքունիքում տեղի ունեցած ամենօրյա ճակատամարտերի մասին, նախ այն պատճառով, որ քահանայապետի բանականության մնացորդներն ընկճելիս մրցակցուհիների մեթոդները շատ թե քիչ միատեսակ էին, և, երկրորդ, որ դրանց նկարագրությունը հավասար է պոռնկագրության։

Պապական պալատում թագավորող բարքերի մասին կարելի է դատել ինկուզ այն բանով, որ պապն իր սիրուհիների վարքի մասին տեղեկություններ էր ստանում հենց նրանց բերանից. նրանք իրենք էին պապին պատմում իրենց սիրային արկածները, և այդ պատմությունները չափազանց զվարճացնում էին սուրբ Հորը։ Երբ պետք էր լինում այս կամ այն հովանավորյալի համար շնորհ ձեռք բերել, երկուսն էլ դիմում էին այս նույն անվրեպ փաստարկին. «Դուք չեք կարող նրան մերժել, չէ որ նա իմ սիրեկանն է»։ Հենց այդպես է № 2 Օլիմպիան եկամտաբեր պաշտոն նվաճել մի երիտասարդ կարդինալի համար։

Շուտով քահանայապետը բոլորովին նմանվեց այն ձիուն, որին վարում են երկու հնձյալ. մեկը դեպի աջ է քաշում, մյուսը՝ դեպի ձախ։

№ 1 Օլիմպիայի ցլում մխոք ծագեց իր դիրքերն ամրապնդել՝ կարդինալների կոլեգիայի մեջ մտցնելով իր սիրեկան Աստալիին։

Սկզբում սուրբ Հայրը դիմադրում էր, բայց Աստալիին տեսնելուն պես ակնթարթորեն մտքերը փոխեց. վերջինիս ջահելությունն ու դեղեցկությունը ձեռաց բորբոքեցին ծեր սատիրի վավաշոտ երևակայությունը։

Իր հաջողությունից խանդավառված Օլիմպիան մի գլուխ շնորհակալություն էր հայտնում, չկասկածելով, որ հեշտ հաղթանակը շուտով դառն պարտություն է դառնալու։ Իր սիրեկանին կարդինալական աստիճանի հասցնելով, նա հույս ուներ ի դեմս նրա նեցուկ ունենալ մրցակցուհու դեմ մղած պայքարում։ Նա դեռ չգիտեր, որ իր ձեռքով իր համար շատ վտանգավոր թշնամի է ստեղծում։ Նույն այն երեկոյից հետո, երբ Աստալիին ներկայացրին Իննովկենտիոսին, պապը կարգադրեց պատանուն տեղավորել Վատիկանում, իր անձնական շքասենյակների հարևանությամբ։ Հիսուս Քրիստոսի կուսակալի սիրեկաններ թիվը մյուս օրն առավոտյան ավելացավ ևս մեկով։ Նոր կարգինալի նշանակման առիթով տեղի ունեցան ճոխ հանդիսություններ, ընդաց հրանոթը, ժողովրդին ողորմություն բաժանեցին։ Այդ օրվանից Աստալին սկսեց տնօրինել բոլոր գործերը, և բազմաթիվ պալատական սոորաքարշներ երես թեքեցին դույդ Օլիմպիաններից։ Պապի հարսը մխիթարվում էր նրանով, որ կարող էր տեսնել իր մրցակցուհու անկումը։ Ինչ վերաբերում է ավագ Օլիմպիային, ապա նա, չթաքցնելով իր զայրույթն ու բարկությունը, դործի դրեց բոլոր միջոցները՝ աղաչանքը, արցունքները, հորդորանքը, որոնք, սակայն, ոչ մի արդյունք չունեցան։ Աստալին պապի վրա անսահմանափակ ազդեցություն ձեռք բերեց։

Սակայն Օլիմպիան չէր կարող լքել մարտի ասպարեզը։ Հուսալով, որ գաղտնիքի հրապարակման վախը կկոտրի սուրբ Հոր դիմադրությունը, նա որոշեց նավերն ուղարկել և սպառնալիքների դիմեց։ Նախկին սիրահարների միջև տեղի ունեցավ չափազանց բուռն և երկարատև մի պրույց, որը մենք շարադրում ենք համառոտակի.

ՕԼԻՄՊԻԱ.— Եվ այսպես, դուք որոշե՞լ եք։ Դուք եկեղեցու դեկավարությունը հանձնում եք ձեր նոր ֆավորիտի՞ն։ Լավ մտածեցեք, կանգ առեք այն վտանգավոր ճանապարհին, ուր ոտք եք դրել այդ երիտասարդի նկատմամբ տածած ձեր կործանիչ սիրո պատճառով։

ՊԱՊ.— Ես նրան սի՛րում եմ։ Պաշտում եմ։ Ինձ հանգի՛ստ թողեք։

ՕԼԻՄՊԻԱ— Դա ձեր վերջի՞ն խոսքն է։

ՊԱՊ.— Այո՛, վերջին խոսքը։

ՕԼԻՄՊԻԱ.— Որ այդպես է, ես ձեզ կստիպեմ նրան իշխանությունից զրկել։

*ՊԱՊ.— Իսկապե՞ս, հետաքրքիր է, թե ինչի՞ վրա եք հույս դնում։*

*ՕԼԻՄՊԻԱ.— Շատ պարզ. ես կմերկացնեմ ձեր ամոթալի կապերը։*

*ՊԱՊ.— Դա ինձ բոլորովին չի անհանգստացնում։*

*ՕԼԻՄՊԻԱ.— Ամբողջ քրիստոնեությանը հայտնի կդառնան ձեր նողկալիությունները։*

*ՊԱՊ.— Քրիստոնեությունը դրանց մասին արդեն գիտե։*

*ՕԼԻՄՊԻԱ.— Ինձ հետ և ձեր որդու կնոջ հետ ունեցած ձեր արյունապիղծ կապի մասին։*

*ՊԱՊ.— Դա ևս արդեն ոչ մեկի համար գաղտնիք չէ։*

*ՕԼԻՄՊԻԱ.— Իսկ ձեր հրեշավոր օրգիաները, որոնց մեջ ընկղմվել եք ձեր նողկալի կուրտիզանուհիների և էլ ավելի նողկալի պատանյակների հետ։*

*ՊԱՊ.— Դուք վերջացրի՞ք։*

*ՕԼԻՄՊԻԱ.— Ձեզնից երես կթեքեն բոլոր կաթոլիկները։ Ի՞նչ բարոյական հեղինակություն կունենաք դուք այդ մերկացումներից հետո։*

*ՊԱՊ.— Սիրելի հարսնյակս, դուք խենթ եք։ Մի՞թե ձեզ չասացի, որ դուք նրանց ոչ մի նոր բան չեք հայտնի։ Ո՞րն է իմ մեղքը, բացի նրանից, որ հետևել եմ իմ նախորդների օրինակին։ Հասկացեք, ես ձեզանից չեմ վախենում, բայց ուզում եմ իմ տանը խաղաղություն պահպանել, ուստի բարի եղեք անմիջապես հեռանալ։ Բարի՛ ճանապարհ։*

*Օլիմպիան կատաղեց. վերջին փորձն էլ ձախողվեց։ Այսքան տարիներ լինել գերագույն տիրակալուհի և հիմա հեռանալ պապական արքունիքից։*

*Տեղը ելիջե՞լ դավաճանին, որն ի պատասխան իր գուրգուրանքի իրենից խլել է պապի սիրտը։ Ի՞նչ ստորացում, ինչպիսի՞ աղետ։*

*Օլիմպիան չցանկացավ իր պարտությունը ցուցադրելով թշնամիներին հաճույք պատճառել և գաղտնի հեռացավ պալատից ու սկսեց վիրժառության պլաններ մշակել։*

## ՕԼԻՄՊԻԱՅԻ ՎՐԵԺԸ

*Ավելի վաստպ, իսկ որ գլխավորն է, ավելի զգույշ լինելով հանդերձ, երիտասարդ Օլիմպիան կարդինալ Աստալիին տեսնելով՝ իրեն հորդրեց։*

Բարեբախտաբար, նրա սիմար ամուսինը այդպիսի շրջահայացություն չուներ։ Փառամոլ եղջյուրակիրը շատ էր հպարտանում իր հնոջ հետ հոր ունեցած մտերմիկ հարաբերություններով։ Այդ էր պատճառը, որ Կամիլը չափազանց խիստ զայրացել էր և Աստալիի հետ խանդի իսկական տեսարաններ էր սարքում, Հույս դնելով ծնողական զգացմունքների վրա, նա նույնիսկ համարձակվեց Ինոզվկենտիոսին կշտամբել։ Բայց վերջինիս մեջ հայրական զգացմունքն այնքան էլ ուժեղ չէր։ Միակ բանը, որ նրան կարող էր ստիպել որդու հանդեպ ներողամիտ լինել, դա գեղեցկուհի Օլիմպիայի հետ լրիվ չպատակտվելու ցանկությունն էր, որովհետև ժամանակ առ ժամանակ սուրբ հայրը ուշադրության էր արժանացնում նաև նրան։ Սկզբում Ինոզվկենտիոսը համբերությամբ լսում էր որդու կշտամբանքները, և այդ պատճառով վերջինս ենթադրեց, թե կարողացել է հորը համոզել։ Կարծելով, թե ինքը հաղթել է, Կամիլն սկսեց հորը լրջորեն կոպտել, ինքն իրեն հաշիվ չտալով իր արարքի համար։ Պապական պալատը նորից ադմկոտ սկանդալների ասպարեզ դարձավ։ Այս անգամ գործող անձինք այլևս կանայք չէին, այլ տղամարդիկ։ Ի վերջո պապի համբերությունը հատավ, և նա վերջնական ընտրություն կատարեց սիրուհու ու սիրեցյալի միջև, որոշելով բաժանվել Օլիմպիայից և նրա կովարար ամուսնուց։

Իսկ ավադ Օլիմպիան, որ արթուն հետևում էր պապական արքունիքի անցուդարձին, որոշեց վերադառնալ։ Հիմա նա նույնքան հեզ էր, որքան առաջ՝ գոռոզամիտ։ Վերստին իր վրա վերցնելով պապին հաճույքներ պատճառելու բավականությունը, նա այնպիսի ճարպկություն ու փութաջանություն ցուցաբերեց, որ շուտով նորից որոշակի աղդեցություն ձեռք բերեց։

Սովորական բանսարկուհին կշտապեր ճաշակել իր հաղթանակի պտուղները։ Մինչդեռ Օլիմպիան վախենում էր, որ նման շտապողականությունը կարող է իրեն վարկաբեկել։ Նրա պլանը կառուցված էր ճշգրիտ հաշիվների վրա, այդ պատճառով էլ նա կրկնապատկեց իր հմտեստությունն ու քնքշությունը և իրեն այնպես էր պահում, որ կարծես այլ մտադրություն չուներ, քան պապին ծառայություն մատուցելն էր։ Վստահ ու հաստատուն նա ընթանում էր դեպի նախընտրած նպատակը՝ ատելի Աստալիի տապալումը։

Մի անգամ նա պապին ներկայացրեց մի պատանյակի, որ ավելի դեղնցիկ էր, քան Աստալին։ Պապն անմիջապես հրապուրվեց այդ տղայով։ Թաքուն ուրախությամբ էր Օլիմպիան դիտում, թե ինչպես է աճում պապի համակրանքը նոր սիրեցյալի նկատմամբ և թե ինչպես

է նա անտարբեր դառնում նախկինի հանդեպ։ Չնայած Աստալիի դիմադրությանը, պատանին շուտով ստացավ պապական գլասենյակի քարտուղարի կարևոր պաշտոնը։ Ամեն բանում հետևելով իր հովանավորուհու խորհուրդներին, նա օրեցօր ամրապնդում էր իր դիրքերը։

Հասկանալով, որ պայքարը շարունակելն անօգուտ է և կանխազգալով, որ ինքը պապի աչքից ընկնում է, Աստալին սկսեց դաշնակիցներ հավաքագրել նրա դեմ գործելու համար։ Նա սուրբ աթոռի գաղտնիքներին ծանոթացրեց ֆլորենցիացիներին ու իսպանացիներին, բայց ա՛յլ բան դուրս եկավ։ Օլիմպիան զգոն հետևում էր իր նախկին սիրեկանին և նրան բռնեց հանցագործության մեջ։ Աստալին անհապաղ ղրկվեց փարաջայից և Վատիկանից վտղվեց։ Նրանից խլեցին ամեն ինչ՝ փողերը, պաշտոնները, եկամուտները։ Անողոք Օլիմպիան կարգադրեց բռնագրավել նույնիսկ այն վեց հազար էկյուն, որ նա պալատից հեռանալիս տարել էր իր հետ։

Աստալիին հեռացնելուց հետո պապը եկեղեցական գործերի կառավարումը նորից հանձնեց իր հարսին։ Նա կրկին դարձավ պապուհի, սուրբ աթոռի ֆինանսների գերագույն տնօրեն։ Իսկ Իննովկենտիոսը, որ ամբողջովին հափշտակված էր նոր սիրեկանով, նույնիսկ հոգ չէր տանում իշխանության առևրևութականությունը պահպանելու մասին։ Բոլորին, ով նրանից ունկնդրություն էր խնդրում, նա տալիս էր միևնույն պատասխանը. «Ես գործերով չեմ զբաղվում, դիմեցեք իմ սիրելի Օլիմպիային»։

Փառասեր կուրտիշանուհին երբեք չէր կարող երազել այդքան փայլուն ռևանշ։ Անսահմանափակ կերպով տնօրինելով առաքելական գանձարանը, նա սիրեկաններին առատ ընծաներ էր տալիս, իր շուրջը հավաքելով մի ամբողջ արքունիք։ Այսպես շարունակվեց մինչև Իննովկենտիոսի մահը։

Եվ ահա անառակ ծերունին անկողին ընկավ։ Ֆիզիկական ցավերից բացի նրան տանջում էր մի սևեռուն միտք. նրան թվում էր, թե իրեն անպայման կթունավորեն Աստալիի կողմից կաշառված սպասավորները։ Մի քանի ամիս շարունակ նա այլ սնունդ չէր ընդունում, բացի նրանից, որ նրա աչքի առաջ պատրաստում էր հարսը։ Վերջինիս, հավանաբար, խոհարարուհու դերն այնքան էլ դուրս չէր գալիս, բայց նա հնազանդվում էր մահամերձի բոլոր քմահաճույքներին, հաղթե, ոչ թե նվիրվածության, այլ անհոգ ընչաքաղցության պատճառով։ Նա շարունակ վախենում էր շնորհազրկվել և մեկ օրում կորցնել սյնքան երկարատև ու լարդախ մանևրների արդյունքները։ Նա շատ

գորովալից էր ցնդած ծերուկի նկատմամբ և նույնիսկ տեղափոխվել էր նրա ննջարանը։ Մի ամբողջ ամիս Օլիմպիան, առանց դադարի ու հանդըստի, անցկացրեց նրա սնարի մոտ։

Վերջապես հասավ այն պահը, երբ Օլիմպիան չկարողացավ զըսպել իր ուրախության ճիչը, երբ 1655 թվ. հունվարի 5-ին Իննովկենտիոս X-ը շունչը փչեց։ Օլիմպիան շատ լավ գիտեր, որ հիմա ստիպված կլինի հրաժարվել արբեցուցիչ իշխանությունից, բայց հույս ուներ, որ իր գեղեցկության ու կողոպտած հարստության շնորհիվ անխռով կյանք կունենա։

Պապուհին այնպես էր մաքրազարդել առաքելական գանձարանը, որ Վատիկանի անդունդներում նույնիսկ քահանայապետի թաղման համար անհրաժեշտ գումար չգտնվեց։

Քրիստոնեության պարագլխի մարմինը երեք օր մնում էր մահվան մահճում, և ոչ ոք հոգ չէր տանում հողին հանձնել։ Օլիմպիային խնդրեցին թաղման ծախսերն իր վրա վերցնել, բայց նա կտրականապես հրաժարվեց։ Հետևելով պապի սիրուհու օրինակին, Իննովիկենտիոս X-ի շքախմբի տիտղոսավոր խարպախներից ոչ մեկը ոչ մի գրոշ չզոհաբերեց։ Այնպես պատահեց, որ բոլոր ծախսերն իր վրա առավ մի ծեր կանոնիկոս։

Այդ գծիկը չափազանց լավ է բնութագրում հռոմեական արքունիքը։

## ԱՊՇԵՑՈՒԹՅՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սովորականի պես Իննովկենտիոս X-ի հաջորդի ընտրությունն ուղեկցվում էր երկարատև գժտություններով և ամոթալի չարչրությամբ։ Վերջիվերջո, աստվածային աղավնին, որը, ինչպես հայտնի է, անտեսանելի ներկա է լինում կարդինալների կոլեգիայի նիստերին, կոնկլավին ներշնչեց ընտրել ոմն կարդինալի, որն ընդունեց Աղեքսանդր VII անունը։ Հնարավոր է, որ այդ անունը նա ընտրել է ի պատիվ հարգելի Աղեքսանդր VI Բորջիայի, որի սխրանքների մասին մենք հանգամանորեն պատմել ենք։ Եթե այդպես է, ապա նա վարպետորեն քողարկել է իր դիտավորությունները, որովհետև բոլոր ժամանակակիցները միաբերան վկայում են, թե գահ բարձրանալուց առաջ նա

իրեն ցույց էր տալիս որպես քրիստոնեական բոլոր առաքինությունների մարմնացում։

Իսկ իրականում նա հետևում էր դրանցից միայն ամենազլխավորին՝ եկեղեցանվիրությանը։ Հավատացյալների պարզամիտ հոտին մոլորության մեջ է ձգել նրա կարծեցյալ համեստությունը։ Ինչ վերաբերում է սրբլատ կղեգաներին, ապա նրանք, բնականաբար, նվազ դյուրահավատ էին և ստույգ գիտեին, թե ինչ արժեք ունի շինծու դիմակը, որ այնքան անհրաժեշտ էր իրենց պրոֆեսիայիին։ Ընտրությունների ժամանակ տնղի ունեցած մի միջադեպ ցույց է տալիս, թե ինչպես էին կարդինալները դնահատում Աղեքսանդր VII-ի կարծեցյալ հեզությունը։

Ահա ինչ է պատմում կոնկլավի մասնակիցներից մեկն իր դրառումներում։

Աղեքսանդր VII-ը ոչնչից չէր խորշում, միայն թե կարողանար իր մրցակիցներին հաղթել։ Բայց երբ նրան ղեկուցեցին իր ընտրվելու մասին, նա այնպես հեկեկաց, որ կարծես լսել էր իր բոլոր մերձավորների մահվան բոթը (հավանաբար, կանխատեսելով հաղթանակը, նա թաշկինակի մեջ հում սոխ էր դրել)։

Միասկարդը ընտրյալից պահանջում է ընտրությունների արդյունքները հայտնելուց հետո անմիջապես բազմել սուրբ Պետրոսի գահին։ Շվարած Աղեքսանդր VII-ը նստեց գահի եզրին։ «Բարեհաճեցեք ղբաղեցնել կենտրոնը,— գոչեց արարողապետը,— ա՛յդ է պահանջում սովորությո՛ւնը»։ Երկար հորդորանքներից հետո նորին սրբազնությունն ի վերջո հնազանդվեց, բայց գահի վրա նստեց բացառիկ համեստությամբ։ Ըստ ավանդության կարդինալները մոտենում են քահանայապետին շնորհավորելու, իսկ նա շնորհակալություն է հայտնում իրեն ընտրողներին։ Բայց խիստ հուզված պապը (հավանաբար, սոխն իր դերը կատարել էր...) շնորհակալության խոսք ասելու փոխարեն սկսեց այնպես ծիծաղելի հեծկլտալ, որ ներկաները, չկարողանալով իրենց ծիծաղը զսպել, գոչեցին. «Բավակա՞ն է, սուրբ հա՛յր, վե՛րջ տվեք»։ Հրաշալի՜ պատկեր. պապը ճիչեր է արձակում, իսկ կարդինալները ձեռքները կանթած, ծիծաղից շնչակտուր, գոռում են. «Վե՛րջ տվեք, խնայեցեք պարկեշտը»։

Ամբողջովին զվարճությունների տրվելու համար Աղեքսանդր VII-ը թողեց Հռոմը և աթոռանիստ ստեղծեց մի գեղեցիկ հովտում, որտեղ դտնվում է Ալբանո լիճը։

Այստեղ փայլուն այլասերված արքունիքի շրջապատում,

սուրբ Հայրն անհոգ օրեր էր անցկացնում։ Ընտիր ճաշերը, նրբին գինիները բարձր էին պահում պապի ու նրա շքախմբի ուրախ տրամադրությունը։

Միայն երբեմն, ընդամենը մի քանի ժամով, նա հայտնվում էր Վատիկանում, հիմնականում բոլոր գործերը (որոնք համարում էր ձանձրալիորեն տխուր) թողնելով դեռևս Ուրբանոս VIII-ի սահմանած պետական կոնգրեգացիայի վրա։ Աղեքսանդր VII-ը իր տնօրինության տակ թողել էր միայն առաքելական գանձարանը, որը չանադրաբար դատարկում էր։ Բոլոր տեսակ հարկերն ի վիճակի չէին կարգի բերելու եկեղեցու ֆինանսական գործերը. եկամուտներն ակնթարթորեն անէանում էին պապի ու նրա սիրեկանների չանքերով։ Չնորհիվ Իննովիկենտիոս X-ի հաջորդը մեկ տարվա ընթացքում երեք անգամ հարկադրեց եկեղեցական մարզը, որպեսզի հանդիսություններ սարքի Շվեդիայի թագուհի Քրիստինայի պատվին, որը Հռոմ էր գալիս բռնապետականությունից հրաժարվելու համար։

Ահա այն գնահատականը, որ Աղեքսանդր VII-ին տվել է Հռոմի կուրիայի պրելատներից մեկը. «Ես այդ պապի մոտ ծառայել եմ բառասուներկու ամիս և կարող եմ վկայել. նա հոգ էր տանում միայն այն մասին, որ ավելի խորն ընկղմվեր հեշտասիրության ճահճի մեջ։ Պապությունից նա ժառանգել էր միայն անունն ու արատները»։

Աղեքսանդր VII-ը հսկայական գումարներ էր ծախսում նաև պալատներ կառուցելու վրա։ Բացի ապգականների համար կառուցած շքեղ շենքերից, նա սարքում էր շենքեր ու հուշարձաններ, որ ոչ ոքի պետք չէին։ Սուրբ Պետրոսի հրապարակում, օրինակ, նրա հրամանով կառուցվեց մի վիթխարի հուշարձան, որն ուներ երկու հարյուր ութսունմեկ սյուն ու ութսունութ կամար։

Հավատացյալների զրպանները դատարկելու գործում Աղեքսանդր VII-ի գլխավոր օգնականները ճիզվիտներն էին։ Քրիստոնյաների կողոպուտն արդարացնելու նպատակով ճիզվիտների գեներալ Հայր Օլիվան ամբիոնից հայտարարեց. «Իմացե՛ք, եղբարք իմ, պապի արարքները կարող են միայն սուրբ ու արժանավայել լինել։ Աղեքսանդր VII-ը և նրա կարդինալները հարստության են ձգտում հավատացյալների բարօրության համար»։

Սուրբ Հոր ագահությունը հանրահայտ էր։ Միանգամայն բացեիբաց տարածվում էր մի փորագրանկար, որի վրա պապը իր սիրուհիների, սիրեկանների ու կարդինալների հետ պատկերված էր Քրիստոսի ոտքերի մոտ, որի մարմնից արյունի փոխարեն ոսկի էր հոսում։ Պա-

պը հավաքում էր ոսկին և ասում. «Նա խաչվել է միայն մեզ համար»։

Եթե Աղեքսանդր VII-ն անձամբ արհամարհում էր քաղաքական ու պետական գործերը, ապա պետական կոնգրեգացիան ղեկավարում էր Եվրոպայի շատ երկրներում բորբոքված աստվածաբանական վեճերով։ Երկու կոնդակներ հրապարակվեցին ճիզվիտների հետ պայքարող յանսենականների դեմ։ Հենց այդ ժամանակ Պասքալը հրատարակեց իր «Նամակներ գավառացուն» երկը, որը ճիզվիտների բարոյականության և դոգմաների դեմ ուղղված մի անողոք երդիծանք էր։ Միակ բանը, որ հետաքրքրում էր պապին, աշխարհիկ իշխանության պահպանումը և իր անսխալականության հաստատումն էր, մնացած ամեն ինչը նա ծաղրում էր և կարդինալների հետ մտերմիկ զրույցներ ունենալիս հաճախ ծանակում կաթոլիկության հիմնական դոգմաները։ Նրա սիրած թեմաներից մեկը Քրիստոսի ծնունդն էր։ Այդ հենքի վրա նա ղվարճալի վարիացիաներ էր հյուսում, կարեկցում պարզամիտ Հովսեփին, որ հավատացել էր իր կնոջը, որը Գաբրիել հրեշտակապետի հետ հնարել է այն հեքիաթը, որ ընկած է քրիստոնեական վարդապետության հիմքում։

Եվ այդ անաստվածը իրեն աստվածային Քրիստոսի անսխալական ներկայացուցիչ էր համարում, թանկ գնահատելով ինչպես այդ արտոնությունը, այնպես էլ իր աշխարհիկ իշխանությունը։

Երբ մյմյանց դեմ պատերազմող Ֆրանսիան ու Իսպանիան առանց պապի հետ համաձայնեցնելու հաշտություն կնքեցին, նա այնքան վիրավորվեց, որ կատաղի ատելությամբ լցվեց ֆրանսիացիների ու իսպանացիների, ինչպես նաև նրանց լիազոր ներկայացուցիչների նկատմամբ։ Հատկապես տուժեց կարդինալ Մազարինին։ Պապը երդվեց վրեժ լուծել Ֆրանսիայի թագավորությունից և միայն պատեհ առիթի էր սպասում։ Իր համար ապահովելով Գերմանիայի կայսեր պաշտպանությունը, նա իր անձնական պահակախմբի մեջ ծառայող կորսիկացիներին հրամայեց հրապարակով անարգել Լյուդովիկոս XIV-ի դեսպանությանը, որին գլխավորում էր դուքս Կրեկին։ Ֆրանսիացիները պարտքի տակ չմնացին, և արյունոտ գոտեմարտ սկսվեց։

Չորս հարյուր կորսիկացիները հարձակվեցին դեսպանական պալատի վրա։ Երբ Կրեկին պատշգամբ դուրս եկավ, որպեսզի հարձակվող-

ներին խելքի բերի, կրակոցներ լսվեցին։ Նա ստիպված հեռացավ։ Հենց այդ ժամանակ էլ կրակ բացեցին դուքսի կառքի վրա, և կառքի դռնակի մոտ կանգնած մանկլավիկը սպանվեց։

Եթե մյուս երկրների ներկայացուցիչները չմիջամտեին, զինվորները պապի հրամանով կսպաններին դեսպանին, նրա ընտանիքի անդամներին և դեսպանության ամբողջ անձնակազմին։ Կրեկին պահանջեց մեղավորներին պատժել, մերժում ստանալով, նա այլևս չպնդեց, սակայն տեղի ունեցածի մասին հայտնեց իր կառավարությանը։ Կարելի է պատկերացնել, թե այդ լուրն ինչպիսի զայրույթ առաջացրեց Լյուդովիկոս XIV-ի արքունիքում։

Թագավորն սկսեց այն բանից, որ վռնդեց Աղեքսանդր VII-ի նունցիային։ Ապա իր դեսպանի միջոցով նա պապին վերջնագիր ներկայացրեց, ահաբեկելով, թե ֆրանսիական բանակին կհրամայի դրավել պապական հողերը, եթե չկատարվեն հետևյալ պայմանները.

1. Պաշտոնից հեռացնել Հռոմի նահանգապետին՝ պապի եղբորը, այն բանի համար, որ դեսպանին օգնություն ցույց չի տվել։

2. Աստիճանից զրկել կարդինալ Իմպերիալիին, որը անկարգությունների գլխավոր հրահրիչն է եղել։

3. Հռոմից առժամյա վռնդել կորսիկական զոկատները։

4. Ֆարնեզեի հրապարակում կանգնեցնել հուշակոթող՝ այնպիսի մակագրությամբ, որը պետք է անարգանքի սյունին դամի Ֆրանսիան ներկայացնող անձի դեմ մահափորձ կատարողներին։

Սուրբ Հայրը կտրականապես հրաժարվեց բավարարել այդ պահանջները, դեռ ավելին, նա միանգամայն հակառակն արեց. Իմպերիալիին Ռոմանիայի լեգատ նշանակեց, իր եղբորը նոր ծխեր տրամադրեց և, ի նշան երախտագիտության, ավելացրեց կորսիկական պահակախմբի ռոճիկը։ Այն ուղերձը, որով նա Լյուդովիկոս XIV-ին տեղեկացնում էր իր այս որոշումների մասին, ավարտվում էր հետևյալ բառերով. «Մեր գահի սրբազան իրավունքները պաշտպանելու համար մենք պատրաստ ենք հոգևորականությանը և նույնիսկ մեր սեփական անձը թագավորների արյունոտ հարձակման վտանգին ենթարկել։ Բայց մենք անձնատուր չենք լինի, այլ օգնության կկանչենք հավատացյալներին։ Եթե նրանց օգնությունը բավական չլինի, կդիմենք աստծուն, որպեսզի նա երկնքից հրեշտակների լեգիոններ առաքի մեր փոխարեն կռվելու համար»։

Եթե Աղեքսանդր VII-ը հույս դներ միայն երկնային ուժերի վրա, ապա թերևս զսպեր իր ռազմասեր բնավորությունը։ Ճշմարտությունն

այն է, որ նա ասպավինում էր Գերմանիայի կայսր Լեոպոլդ I-ին, որը խոստացել էր անհրաժեշտության դեպքում օգնության հասնել։

Ի դեպ, անհրաժեշտությունն ոչ միայն ակնհայտ էր, այլև խիստ անհետաձգելի։ Սուրբ Հայրը կռվել չիմացող մարդու համարձակությամբ միայն գրգռեց վտանգավոր հակառակորդին։ Պապը պատրաստվում էր ըստ հնարավորին շուտ վերադառնալ իր սիրուհիների ու սիրեկանների մոտ, մինչդեռ կայսրը պետք է իր վրա ընդուներ այն հարվածները, որ նախատեսված էին պապի համար։

Ծանրութեթև անելով, թե արդյոք արժե՞ իրեն վտանգի ենթարկել, քանի որ Լյուդովիկոս XIV-ի զորքերը հենց այդ ժամանակ փայլուն հաղթանակներ էին տարել, Գերմանիայի կայսրը որոշեց իր դիտավորությունը կատարելուց խուսափել։ Նա Ալեքսանդր VII-ին պատասխանեց, թե իսկապես օգնության է խոստացել, բայց բնավ մտադիր չի նրան զորք տրամադրել։ Եվ ավելացրեց, թե թույլ է տալիս իր երկրում ռազմական գանձարանի միջոցներով զինվորներ հավաքագրել, որով և կատարմանափակվի իր օգնությունը։

Պապը սաստիկ հիասթափվեց և անմիջապես հաշտություն խնդրեց։ Լյուդովիկոսի զորքերը, որ Միլան էին հասել, անհապաղ ետ կանչվեցին։

Պիզայում ստորագրված հաշտագրի համաձայն քահանայապետը պարտավորվեց «քավիչ» հուշարձան կառուցել և եկեղեցական մարզից կորսիկացիներին առմիշտ վտարել։

Առաջին բանը, որ արեց Ալեքսանդր VII-ը Հռոմ վերադառնալով, այն էր, որ հայտարարեց, թե մտադիր չէ կատարել իրենից ուժով կորզված խոստումները և պաշտոնապես հրաժարվում է Պիզայի հաշտագրի պայմանները կատարելուց։

Միաժամանակ նա շարունակեց Ֆրանսիայի արքունիքի առաջ հեղաձարտ հնազանդություն խաղալ և նույնիսկ իր քրոջորդուն հանձնարարեց Լյուդովիկոս XIV-ից ներողություն խնդրել։ Այդ պրելատը լրացուցիչ հանձնարարություն էլ ուներ, այն է՝ սեղմել բոլոր զսպանակները և Ֆրանսիայում անկարգություններ հարուցել։ Կարդինալն անմիջապես կապ հաստատեց ճիզվիտների հետ, իր քեռու անունից նրանց կարգադրելով թագավորի դեմ գաղտնի պատերազմ հայտարարել։ Սուրբ Հոր անառակ կյանքին սովորած երիտասարդ կարդինալը Փարիզում ևս գլխովին ընկղմվեց զվարճանքների մեջ։ Պալատական տիկնանց մեջ շատ գեղեցկուհիներ գտնվեցին, որ ցանկացան վերին օգնությանը հասու լինել Քրիստոսի փոխանորդի պատվիրակի հետ մտեր-

միկ կապեր հաստատելով։ Աղեքսանդր VII-ի արժանավոր քրոջորդին աչքաթող չէր անում նաև երիտասարդ աստիճանավորներին. շուտով նրան պարգևեցին Սոդոմի զավակ մականունը։

Պապի քրոջորդու Փարիզում վարած անառակ կյանքը Լյուդովիկոս XIV-ին մոլորության մեջ գցեց այդ մարդու Ֆրանսիայում գանվելու իսկական նպատակների հարցում։ Սակայն թագավորական իշխանության հեղինակությունը քննպատող մի քանի աշխատությունների հրապարակ գալը Լյուդովիկոսին որոշ կասկածներ ներշնչեց։ Ցանկանալով այդ հարցում պարզություն մտցնել և գտնել գլխավոր խառնակչին, նա հրամայեց արգելք դնել Ճիզվիտական ծագում ունեցող երկու գրքերի վրա։ Թագավորը հասավ այն բանին, որ Սորբոնը դատապարտեց այդ գրքերը, իսկ ինքը սկսեց սպասել սուրբ Հոր պատասխանին։

Պապի վարմունքը լիովին հաստատեց թագավորի կասկածները։ Աղեքսանդր VII-ը մի ահաբեկիչ կոնդակ արձակեց, որով Սորբոնի որոշումը համարեց ամոթալի, գոռոզամիտ ու ամբարտավան և բանադրման սպառնալիքով հոգևոր անձանց արգելեց հաշվի առնել այդ որոշումը։

Հիմա Լյուդովիկոս XIV-ը հասկացավ պապի իսկական դիտավորությունները, սակայն գտնելով, որ ավելի ձեռնտու է նրա հետ սերտ կապեր պահպանել, Աղեքսանդրի բռնությունը շահելու նպատակով դիմեց մի փորձված միջոցի. մի մեծ գումար ուղարկեց Հռոմ՝ մասունքներ գնելու, որոնք նա մտադիր էր բաժանել Փարիզի եկեղեցիներին։

Այդ նվերից խանդավառված, Աղեքսանդր VII-ը շտապեց ուղարկել պահանջված մասունքները, որոնք ամփոփված էին երեք արկղների մեջ և կնքված այն կարդինալի կնիքով, որին հանձնարարվում էր մասկարների պահպանումը և վաճառքը (դա պապական առևտրի ամենանկատաբեր ճյուղերից մեկն էր)։

Այնպես պատահեց, որ այն եպիսկոպոսը, որին վստահված էր բանկային ծառայողների բացումը, թաքուն համակրում էր պապի նկատմամբ օպոզիցիոն տրամադրություն ունեցող յանսենականներին, ուստի և իր հոգու խորքում բոլորովին դեմ չէր Ճիզվիտներին ու սուրբ Հորը ձեռք առնել։

Հռոմից ստացված արկղների պարունակությունը պարզելու նպատակով այդ եպիսկոպոսը շատ անմեղ տոնով առաջարկեց գործին մասնակից դարձնել կազմախոսների, որոնք կոտաւկարղեն և կարգի

կբերևին ոսկորները։ Մի լավ զվարճանալու համար եպիսկոպոսը փորձաքննությանը հրավիրեց նաև կարդինալին՝ պապի քրոջորդուն։

Առաջին արկղի վրա արված գրությունը հայտնում էր, թե դրա մեջ ամփոփված են երկու նշանավոր նահատակների աճյուններ։ Սակայն, երբ ոսկորները հանեցին, պարզվեց, որ դրանցից կարելի է երկուսի փոխարեն երեք կմախք հավաքել։

Կարդինալը դա բացատրեց նրանով, թե իբր դրագիրը սխալ է թույլ տվել «երեքի» փոխարեն դրելով «երկու»։

Երբ անցան երկրորդ արկղին, ի հայտ եկավ մի նոր անակնկալ. այնտեղ մարդկային ոսկորներից բացի կային ավանակի երեք ազդրոսկր, շան երկու ծունկ և ընտանի կենդանիների այլ ոսկորներ։

Կարդինալը, որ տեղյակ էր Վատիկանի գաղտնիքներին, իհարկե, լավ գիտեր մասունքների արժեքը և դժվարությամբ էր զսպում իրեն խեղդող ծիծաղը։ Բայց դերությունը փրիկելու համար նա հնարինից հետևյալ բացատրությունը. «Ըստ երեւույթին, սատանան է այդ ոսկորները խոթել պատվարժան սրբերի աճյունների մեջ։ Սատանայի դավերը բնավ չի կարելի կանխատեսել։ Եղբարք իմ, նա ցանկացել է փորձել ձեր հավատը։ Մենք ի դերևս կդարձնենք նրա հույսերը և կմոռանանք միջադեպը։ Անցնենք երրորդ արկղին»։

Վերջին արկղի վրա գրված էր. «Սուրբ Ֆորտունատոսի գլուխը»։ Արկղը բացեցին և իսկապես գտան հանգուցյալի շատ լավ պահպանված գլուխը։

Կարդինալը փայլում էր. փա՜ռք աստծո, դործն ավարտվեց առանց նոր անակնկալների, որոնք հազիվ թե հնարավոր լիներ բացատրել սատանայի միջամտությամբ։ Ո՛չ, սա իսկական գլուխ է, և ոչ ոք չի կարող ապացուցել, որ սուրբ Ֆորտունատոսինը չէ։ Այդ պահին, հակառակի պես, բժիշկներից մեկը, ինչ-որ կասկածելի բան նկատելով, գլուխը գցեց եռացրած ջրի մեջ։ Գրեթե նույն պահին գանգն սկսեց կաղմալուծվել և ձեն մի բան դարձավ. գլուխը պատրաստված էր ստվարաթղթից։

Ամոթահար կարդինալը շտապեց ծլկիլ, ինչ-որ անկապ բան թոնթորալով։ Իրենց պրոֆեսիոնալ արժանապատվությունը մոռանալով, բժիշկները և յանսենյան եպիսկոպոսը նրա հետևից բարձրաձայն հրոհրդում էին։

Լյուդովիկոս XIV-ին հանգամանալից հաշվետվություն ներկայացրին այն հայտնագործությունների մասին, որ արվել էին պապի ուղարկած ոսկորների մասին։ Այդ արձանա-

գրության մեջ հավաստվում էր, ի միջի այլոց, որ իբր թե մեր թվարկության առաջին դարերին պատկանող մարդկային ոսկորները իրականում պատկանում էին միայն վերջերս մեռած մարդկանց։

Կարելի էր կարծել, թե միապետը, որ խաբեության ղոհ էր դարձել, դեն կնետի բոլոր նրանք արկղների պարունակությունը։ Բնա՞վ ոչ։ Թագավորը կրակի մեջ նետեց բժիշկների կազմած արձանագրությունը, փորձագիտության վկաներին Բաստիլիայում բանտարկելու սպառնալիքով խստագույնս արգելելով հրապարակ հանել դրա արդյունքները։ Իսկ ոսկորները, բացառությամբ փշացած սուվարաթղթե գլխի, ուղարկվեցին Փարիզի եկեղեցիներին։ Եվ եթե մեղ ասեն, թե սվանակի ու շան ոսկորները հրաշքներ են գործել, ապա մենք չենք զարմանա։ Քահանաների ամբարտավանությանը, խարպախությանն ու նենգությանը միացրեք բարեպաշտ հավատացյալների տդրությունը, և կստանաք այնքան հրաշք, որքան կցանկանաք։

Լյուդովիկոս XIV-ին Աղեքսանդր VII-ի ուղարկած մասունքները մինչև հիմա էլ կզարդարեին Փարիզի կաթոլիկական տաճարները, եթե Ֆրանսիական մեծ հեղափոխությունը դրանք չայրեր այլ աղբերի հետ միասին։

Սակայն պաշտպանելով իր եկամուտները, հոգևորականությունը ոչնչացված սրբազան մասունքների փոխարեն մեծ հոգածությամբ նորերն է դրել։

## ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1667 թվին Աղեքսանդր VII-ը մեռավ։ Մեկ ամիս անց հռոմեական քահանայապետ հռչակվեց Կղեմես IX-ը, թուլակամ, անհրապույր և ալարկոտ մի մարդ։ Երկուսուկես տարի ղբաղեցնելով առաքելական գահը, նա իր դահակալությունը չնշանավորեց որևէ բանով, որ արժանի լիներ առանձին հիշատակության։

Կղեմես IX-ի ամենամեծ թուլությունը հարբեցողությունն էր։ Դրա հետ միասին նա նաև առաջնակարգ որկրամոլ էր։ Նրա խժռած ուտելիքի քանակը զարմացնում էր նույնիսկ նրանց, որ շարունակ նրան տեսնում էին ուտելիս։

Նա մեռավ 1669 թվին ստամոքսի խանգարումից։

Արժե կանգ առնել այդ քահանայապետի տիրակալության ժամա-

նակին վերաբերող մի միջադեպի վրա, քանզի դա բնութագրում է այդ դարաշրջանի եկեղեցական ծեսերից մի քանիսը։

Սուրբ աթոռի հետ ունեցած մի շարք անախորժություններից հետո Լյուդովիկոս XIV-ը, ցանկանալով Կղեմես IX-ին հավաստել իր հարգանքը, նրան խնդրեց թագաժառանգի կնքահայրը դառնալ։ Պապը, իհարկե, ուրախությամբ համաձայնվեց։ Եվ Վանդոմի կարդինալն արտակարգ լիազորություններ ստացավ՝ ներկայացնել նորին սրբազնությանը որպես կնքահոր։

Այդ արարողության հետ միասին ավարտվեցին Վանդոմի կարդինալի լիազորությունները, բայց այն կարճ պահերին, երբ կարդինալն իրեն պապական արժանավորությամբ օժտված էր զգում, նա համի ընկավ և շարունակում էր այդպի դեր կատարել։ Նա չեղյալ համարեց իր եղբոր աղջկա՝ Պորտուգալիայի թագավորի կնոջ ամոլանությունը, վերջինիս թույլ տալով ամուսնանալ դոն Պեդրոյի՝ թագավորի եղբոր և միաժամանակ իր նախկին սիրեկանի հետ։

Քանի որ դա բացահայտ պղծտոնապանցություն էր, վճիռը չեղյալ հայտարարվեց։ Պապը պետք է վերականգներ նախկին վճռակը. թագավորի կնոջը բաժաներ նրա սիրեկանից և վերադարձներ օրինական ամուսնուն։

Բնականաբար, նման ելքը սիրահարներին ձեռնտու չէր։ Իրենց վրա կախված վտանգը խափանելու համար նախկին թագուհին հայտարարեց, թե հղի է և չի կարող հայր համարել թագավորին, քանի որ երեխան սերում է երկրորդ ամուսնուց, իսկ միանալուց իր բաժանվելու պատճառը եղել է հենց նրա անկարողությունը։

Բավական ծանրակշի՞ռ փաստարկ։ Սակայն դոն Պեդրոն գտավ մի ուրիշ, ավելի համոզիչ փաստարկ։ Լավ իմանալով հոգևոր անձանց ծախվածությունը, նա Կղեմես IX-ին ճոխ նվերներ ուղարկեց, և պապն անմիջապես հաստատեց Վանդոմի կարդինալի որոշումը։

Իսկ քանի որ կոնդակի մեջ հնարավոր չէր շարադրել այն իսկական պատճառը, որ իրեն դրդել էր այդպես վարվել, պապը խիստ նկատողություն հայտարարեց պորտուգալական եպիսկոպոսներին, որոնք ամուսիններին նախապես չէին ստուգել։

Այդ ստուգումը հինավուրց եկեղեցական սովորույթ էր։ Հոգևոր դաստավորները փորձաքննություն էին անձնարարում բժշկին, վիրահատին և մատրոնային։

Նախնական քննումներից հետո ամուսինները պարտավոր էին փորձագետների ներկայությամբ պառկել անկողնում, ընդ որում, չնա-

յած կնոջ կամ ամուսնու բողոքներին, առագաստը բաց էր մնում Այնուհետև, նրբ երկուսն էլ մահճախորշից դուրս էին գալիս, փորձագետները կատարում էին նոր ստուգում։ Դրանից հետո կազմվում էր հանդամանալից արձանագրություն և եկեղեցական արքունիքը կայացնում էր իր վճիռը։

Երբ Ֆրանսիայի քաղաքացիական իշխանությունները որոշեցին վերջ տալ այդ քաոմննելի սովորությին, կատաղի դիմադրության հանդիպեցին. բոլոր եպիսկոպոսները միավորվեցին, որպեսզի պաշտպանեն այն, ինչ կոչվում էր «սուրբ մայր եկեղեցու սրբազան իրավունք»։ Նրանց դիմադրությունը հաղթահարելու համար անասելի ջանքեր պահանջվեցին։ Ըստ երևույթին, անպարկեշտ արարողությունը այդ կեղտոտ վիժվածքներին մեծ հաճույք էր պատճառում։

## ԳՈՒՇԱԿՈՒՀՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կղեմես IX-ի մահից հետո պապ ընտրելու համար կարդինալներին անհրաժեշտ եղավ մի քանի ամիս։ Ի վերջո նրանք որոշեցին նախապատվություն տալ մի ութսունամյա ծերուկի, որն իր վրա առավ Կղեմես X անունը։

Այդ քահանայապետն էլ իր նախորդի պես աչքի էր ընկնում ոգելից խմիչքներ գործածելու անդիմադրելի հակումով։ Դինին նրան ջուր էր թվում, և նա բաժակներով ավելի թունդ խմիչքներ էր խմում։ Նա արական սեռի ազգականներ չուներ։ Բայց չցանկանալով խախտել նեպոտիզմի սրբազան ավանդությունները, նա իբրև հղբորորդու օրինականացրեց Անտոնիո Պաուլուցիին՝ իր քրոջ աղջիկներից մեկի փեսային։ Նրան կարդինալի աստիճան շնորհելով, պապը աստիճաններ ու նվերներ էր տեղում իր ընտանիքի բոլոր անդամների վրա։ Անտոնելլին նա հանձնարարեց պրեսիներ մինիստրի կամ կարդինալ-պատրոնների պարտականությունները՝ տարեկան հարյուր հազար էկյու ոսճիկով։

Մի իսկական երկտասարդական ավյունով սուրբ Հայրն ընդամենը մի քանի օրում հարստացրեց Պաուլուցիին և նրա ազգականներին։ Պապի առատաձեռնությունը բոլորովին անծանոթ մարդկանց ստիպեց հանկարծ հիշել, որ նրա հետ ազգակցական կապեր ունեն։ Ազգականները բազմանում էին, ինչպես անձրևաորդերը անձրևից հետո։

Այդ կերպ գոհացնելով իր բոլոր նորելուկ ազգականներին, սուրբ հայրը որոշեց, որ ինքն էլ իր վեցօրյա աշխատանքն ավարտած, աստ-ծո պես իրավունք ունի արժանավորապես հանգչելու դափնիների վրա։

Եկեղեցու կառավարումը պապը վստահեց պրեմֆեր-մինիստրին, իսկ ինքն անձնատուր եղավ անդուլ հարբեցողության։ Ոգելից խմիչքները նրան գրեթե ապուշ դարձրին։

Մինչդեռ կրոնական աղանդները բազմանում էին և ամեն առիթով իրար հետ գժտվում։ Բավական էր, որ խարդախի մեկը կամ որևէ կիսախելագար ասեր, թե իրեն աստված է ներշնչում, որպեսզի նրան անմիջապես շրջապատեր մոլեռանդների մի ամբողջ ոհմակ։ Այսպես առաջացան շատ աղանդներ, որոնցից քչերն են պատմության մեջ հետք թողել։ Այսպիսի մի խումբ ստեղծեց բնիկ լիլեցի Անտուանետան։ Վաղ մանկության տարիներից մայրն սկսել էր Անտուանետային ատել և նրան տեղավորել է ձեղնահարկում, որտեղ նա մի քանի տարի անց էր կացրել մեն-մենակ, չտեսնելով մարդկային ոչ մի էակ, բացի այն կնոջից, որ ամեն առավոտ նրան ուտելիք էր բերում, բայց երբեք չէր խոսում բանտարկյալուհու հետ։

Խեղճ աղջկա երևակայության վրա խիստ ներգործեցին միստիկական բովանդակություն ունեցող այն մի քանի գրքերը, որ պատահաբար ընկած էին ձեղնահարկում։ Ի վերջո նրա կրոնական ցնորվածությունը այն աստիճանի հասավ, որ աչքին տեսիլներ էին երևում և նրան սկսեց թվալ, թե իբր աստված ինքն այցելում է իրեն։ Նա արդեն պատրաստվում էր վանք փախչել, երբ հանկարծ Տրիստոսը ներկայացավ նրան և ասաց, թե «վանականներն ու միանձնուհիները նույնքան գարշելի են, որքան և քահանաները, նրանց գաղտնիությունը հատուցում է պահանջում։ Կգա ժամանակ, երբ այդ սատանայի ծնունդները կստահակեն իրենք իրենց լափելով»։ Այնժամ Անտուանետան որոշեց մնալ իր բանտում։

Ծնողները, որոնք Անտուանետայից ձանձրացել էին, որոշեցին նրան ամուսնացնել։ Քանի որ նրանք բավական ունևոր էին, ապա փեսացուներ շատ կային։ Սակայն երիտասարդ գուշակուհին ամուսնության նկատմամբ այնպիսի զարշանք էր զգում, որ գերադասեց տնից փախչել, թեև ապրելու գրեթե ոչ մի միջոց չուներ։

Ճանապարհին նրան զինվորների մի ջոկատ հանդիպեց։ Չնայած ճգնավորի հագուստին, նրա վայելուչ կազմվածքը, նուրբ դիմագծերը և ամոթխածությունը կասկած հարուցեցին։ Ջոկատի պետը շտապեց

այդ կասկածն անհապաղ փարատել, հրամայելով երիտասարդ ճգնավորին մերկացնել։

Խեղճ Անտուանետային, որ ցանկանում էր մի տղամարդուց փրկվել, չնայած նրա լացին ու աղաչանքին, բռնաբարեց ամբողջ ջոկատը, եթե հավատանք նրա կենսագրին, ոչ մի զինվոր չխնայեց աղջկան, իսկ այդ ջոկատում կար չորս հարյուր մարդ...

Սովորական կինը այդպիսի փորձաքննությունից կմեռներ, բայց չէ որ Անտուանետան սուրբ էր, որին տերը մի առանձին շնորհ էր պարգևել։ Ջոկատը դեռ չէր հեռացել, երբ Անտուանետան փութով տեղից վեր թռավ և շարունակեց իր ճանապարհը, ասես ոչինչ չէր պատահել։ Նրա կենսագիրը հավաստում է, թե նա նույնիսկ կուսությունից չէր զրկվել։

Այնուհետև Անտուանետան ընկնում է հարևան գյուղի քահանայի մոտ, որը նրան տեղավորում է վանքում։ Օրինակելի բարեպաշտություն ցուցաբերելով, Անտուանետան չհրաժարվեց իր միստիկական զաղափարներից և նույնիսկ միանձնուհիների մեջ մի քանի համախոհներ հավաքագրեց, որոնք նրա նման կրոնական էքստազի մեջ էին ընկնում։

Այդ վանքում խոստովանահայրերը ճիզվիտ վանականներն էին։ Զայրանալով նրանց անպարկեշտ վարքից, Անտուանետան որոշեց վանքից փախչել և իր հետ տանել այն մի քանի միանձնուհիներին, որոնց իր ազդեցության տակ էր գցել։ Նրան մատնեցին, նա վանքից վտարվեց։ Իր ճանապարհը շարունակելով մեն-մենակ, նա ապաստան գտավ մի ուրիշ քահանայի մոտ։ Քահանան նրան լավ ընդունեց և տեղավորեց իր մոտ։ Անտուանետան արդեն սկսել էր մտածել, թե ձեղնահարկում իրեն այցելած Հիսուսը կրոնի ծառաներին ղրկարտում էր՝ նրանց սատանայի գարշելի ծնունդներ անվանելով։

Սակայն երիտասարդ գեղեցիկ աղջիկը ապաստանած քահանան ցանկացավ իր հյուրասիրության համար ինքն իրեն վարձահատույց լինել և դիշերը փորձեց ներխուժել Անտուանետայի սենյակը։ Տարաբախտ աղջիկը կատաղաբար դիմադրեց և կարողացավ փախչել սիրատոչ քահանայից։

Անհամար փորձություններից հետո Անտուանետան տուն վերադարձավ։ Շուտով մեռավ մայրը, ապա հայրը, և Անտուանետան կարգին ունեցվածքի տեր դարձավ։ Նա սուրբ օգոստոսի միաբանության անդամի զգեստ հագավ և սկսեց վանքի հիվանդանոցում հիվանդներ,

*խնամել։ Վանական կյանքը սաստկացրեց նրա հիստերիան, վերսկսվե-ցին տեսիլքներն ու հալյուցինացիաները։*

*Կրոնական խելահեղությունը շատ վարակիչ է, և շուտով հիվան-դանոցում գտնվող բոլոր միանձնուհիներն սկսեցին խելագարների նմանվել։ Նույնիսկ հաստ պատերի ետևից լսվում էին նրանց գոռոց-ներն ու ոռնոցները։ Շատ չանցած քաղաքում լուր տարածվեց, թե Ան-տուանետան դիվահար վհուկ է, կախարդել է սուրբ մենաստանի մյուս միանձնուհիներին։*

*Անտուանետան ստիպված եղավ Լիլից հեռանալ, որտեղ նրա կյանքին վտանգ էր սպառնում։*

*Հայրենի քաղաքից մեկնելուց հետո նրա ուղևորը փոքր ինչ հան-գըստացավ։ Տեսիլքները, ճիշտ է, չվերացան, բայց այլ բնույթ ստա-ցան, դարձան դրախտային։*

*«Տերը,— գրում է նա իր հիշողություններում,— ինձ արժանացրեց իր հետ մշտական կապ ունենալու բախտին և ինձ հրամայեց երեխա ցանկանալ, որը և արեցի։ Ես անմիջապես զգացի, որ երկնային հովիվն ինձ գրկեց և ծածկեց համբույրներով։ Այնուհետև կորցրի գիտակցու-թյունս, արբեցած մի անմեկնելի երանությամբ... Իմ կուսությունն անէացավ, և ես հղիացա։ Ինն ամիս անց ես ազատվեցի ոչ առանց մարմնական ցավերի, որը կրկնվում էր ամեն անգամ, երբ երեխա էի ծնում»։*

*Անտուանետան գտնվում էր Ամստերդամում, երբ աստված նրան արժանացրեց առաջին երեխան ունենալուն։ Մենք կցանկանայինք մեր կասկածն արտահայտել այն անձնավորության աստվածային ծագման վերաբերյալ, որից Անտուանետան սրտի էր ունեցել։ Բայց այդ աստ-վածավախ հիստերիկ կնոջ պատմածները բառացիորեն հաստատում է հայր Բորդը։*

*Կարելի՞ է, արդյոք, կասկածել այդ վկայության ճշտությանը։ Իհարկե, ոչ։ Պետք է կարծել, որ Բորդը Անտուանետային շատ լավ էր ճանաչում և ավելի լավ գիտեր, քան որևէ մեկը, թե նրա երեխաներն ինչպես էին ստեղծվում։ Նրանց թիվը փոքր չէր, և, ինքնին հասկանալի է, նրանք աշխարհ էին գալիս անարատ հղիության հետևանքով։ Դա կարող է հավաստել հայր Բորդն ինքը, որն Անտուանետային ոչ մի օր մենակ չէր թողնում։ Հայր Բորդը նրան ուղեկցում էր բոլոր թափա-ռումների ժամանակ, նրա հետևորդն էր, իսկ Անտուանետան այդ մարդու կինն էր, իհարկե՝ հավատարիմ կինը։ Նույնիսկ գիշերը հայր Բորդը նրանից չէր բաժանվում, նրա հետ պառկում էր մի անկողնում,*

այդ ժամանակ անարատ մնալով և, այդպիսով, ներկա լինելով աստվածային օրհնության բոլոր դրսևորումներին...

Մեծ դոզաններով միստիցիզմը հասցնում է խելագարության, փոքր դոզաններով՝ վայրենացմանն

## Ի ՓԱՌԱՍ ԱՍՏՑՈ

Վեցամյա կառավարումից հետո, երբ փաստորեն եկեղեցին ղեկավարում էր Անտոնիո Պաուլուցին, Կղեմես X-ը վախճանվեց։

Հարբեցող պապին փոխարինեց Իննովկենտիոս XI-ը, այդ դաժան, արյունարբու պապը, որն ի փառս աստծո արյան ամբողջ դետեր թափեց։ Կարելի էր միայն ափսոսալ նախորդին. ավելի լավ է, որ դաստիարակ լինի անառակ ծերուկը, քան վայրի գազանը։

Բանսարկությունների միջոցով, ճիզվիտների վրա հենվելով, պապը Անգլիայում դավադրություն կազմակերպեց, նպատակ ունենալով կաթոլիկությունը վերականգնել որպես պետական կրոն։

Անգլիայում այդ ժամանակ գահը զբաղեցնում էր Կառլոս II-ը, որին գահընկեց արեց Կրոմվելը։

Իր առաջ խնդիր դնելով վերականգնել անսահմանափակ միապետությունը, նա միանգամայն սառնասրտորեն էր գնահատում պրեսբիտերների և սահմանադրական կառավարության կողմնակիցների համընդհանուր ջարդի հեռանկարը։ Միապետի պլանն էր՝ կաթոլիկներին օգտագործել պառլամենտը տապալելու համար, իսկ այնուհետև անցնել պրեսբիտերների կողմը, ընդդեմ կաթոլիկների։

Կառլոս II-ը չէր կասկածում, որ գործ ունի իրենից ավելի ուժեղ ու նենգ մարդկանց հետ։ Հռոմի գործակալները, կռահելով նրա մտադրությունները, միայն ձևացնում էին, թե հնազանդվում են թագավորի կամքին։ Իրականում նրանք պատրաստվում էին թագավորին սպանել, իսկ թագը հանձնել նրա եղբայր Հակոբին, Յորքի դքսին։

Ամեն ինչ պատրաստ էր, երբ կոնսպիրատորներից մեկը դավադրությունը ձախողեց, Լոնդոնի հաշտարար դատավորին հայտնելով, թե Քրիստոսի փոխանորդը պատրաստվում է արմատախիլ անել Անգլիայի թագավորությունում տարածված հերետիկոսությունը և, ճիզվիտներին հանձնարարելով վերականգնել պապական իշխանությունը, նը-

*բանց կատարյալ ազատություն է տվել ամեն տեսակ միջոցների դիմելու։*

*Արդին կազմվել էր կաթոլիկ կառավարություն, որի փաստական գլուխը պետք է լիներ պապական լեգատը։ Պետական գլխավոր պաշտոնները բաժանվել էին հռոմեական եկեղեցու մոլեռանդ կողմնակիցների միջև։ Յորքի դքսին հատկացված էր Իննովկենտիոս IX-ի և Ճիզվիտների ձեռքին գործող՝ թագադրված մարիոնետի դերը։*

*Ճիզվիտների գազանի սրիբունալը թագավորին մահապատժի էր դատապարտել։*

*Լյուդովիկոս XIV-ի խոստովանահայր Լաշեզը թագուհու անձնական բժշկին տասը հազար ֆունտ էր առաջարկել թագավորին թունավորելու համար։ Նրանից բժիշկը հրաժարվել էր չարաշահել իր միապետի վստահությունը..., եթե բարեպաշտ հայրը չավելացներ ևս հինգ հազար ֆունտ։ Հայր Լաշեզն անմիջապես համաձայնվել էր։*

*Այդ բոլոր մանրամասնությունները պատավորին հայտնել էր մի դրշմանած դավադիր։ Նա ասել էր նաև, թե ի նկատի առնելով, որ բժիշկը կարող է իր խոստումը չկատարել, Ճիզվիտները վարձել են ևս չորս մարդասպան, որոնք պետք է կառլոս II-ին սրախողխող անեն, երբ նա երևա պառլամենտում։ Սպանության այդ ձևը իրեն արդարացրել էր Հենրիխ IV-ի հետ հաշիվ մաքրելիս և մխանգամայն հարմար էր թվում։ Եթե այդ ևնամքով նախապատրաստված մահափորձն էլ ձախողվեր, Ճիզվիտներն իրենց տրամադրության տակ ունեին ևս երկու գործակալ, որոնք պետք է կրակեին թագավորի վրա։*

*Դավադիրը նաև հայտնել էր, թե Ճիզվիտները վարձանալով դրած են նկել Կառլոս II-ի սպանության ժամկետների վրա։ Ոմանք պնդել են, թե նա կմեռնի մինչև ծննդյան տոները, մյուսները պնդել են, թե սպանությունը տեղի կունենա ավելի ուշ։*

*Հետաքննություն վարող դատավորի փութաջանության շնորհիվ բացահայտվեցին կաթոլիկների սոսկալի դավադրությունները։*

*Հայտնաբերվեց թագուհու դաշտանի գրպրություն։ Յորքի դուքսի հետ, կաթոլիկ լորդերի նամակագրությունը պապական նունցիայի ու Լյուդովիկոս XIV-ի խոստովանահոր հետ։ Այդ նամակները վարկաբեկում էին այնպիսի բարձրաստիճան անձանց, որ անկաշառ դատավորը չէր կարող կյանքով չհատուցել իր մերկացումների համար։*

*Մի առավոտ նրան գտան իր իսկ սրով խոցված։ Ճիզվիտները սուտ ինքնասպանություն էին սարքել, հայտարարելով, թե դժբախտ դատավորը սուրը կաթոլիկական եկեղեցու մինիստրների դրպար-*

տած լինելու պատճառով խղճի խայթից տանջվել է և ինքնասպան եղել։ Մինչդեռ պարանոցի վրա երևացող կարմիր հետքը վկայում էր, որ նրան խեղդամահ են արել։ Սուրը ծակել էր նրա մարմինը, երբ նա արդեն կենդանի չէր եղել։ Պարզ էր, որ հանցագործությունը կատարվել էր թագավորական արքունիքի և ճիզվիտների սադրանքով։

Շուտով այդ ենթադրությունը հաստատվեց. հարցաքննված կաթոլիկների մեջ գտնվեց դժգոհ մեկը, որը մերկացրեց մեղավորներին։ Նրա վկայությունը մեծ կշիռ ուներ, մանավանդ այն պատճառով, որ ինքն էլ էր գործին խառնված։

Քանի որ հարկավոր էր ամեն կերպ հանգստացնել վրդովված հասարակական կարծիքը, Կառլոս II-ը զոհաբերեց մի քանի ճիզվիտների, հանցագործության երկրորդական մասնակիցների։ Նրանք կանգնեցին դատարանի առաջ, մահվան դատապարտվեցին և կախաղան հանվեցին։

Այնուամենայնիվ կաթոլիկները հաղթանակներ էին տանում։ Նրանք խլեցին շատ ծխեր, ամեն կերպ կեղեքում էին բողոքականներին, դարձան Անգլիայի իսկական տերերը, իրենց դաժան և անառակ թագավորի հավատարիմ գինակիցները։

Հակոբ II-ը, որ Կառլոս II-ի մահից հետո թագավոր հռչակվեց, լիովին արդարացրեց կաթոլիկների հույսերը։ Ամենայն եռանդով դավանելով հռոմեական կրոնը, նա սկսեց պրեսբիտերականներին հալածել այնպիսի վայրագությամբ, որի համեմատությամբ նրա նախորդների դաժանությունները դատարկ բաներ էին։

Ցանկանալով պապին հավատալ Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի հնազանդությունը, Հակոբը նրա մոտ հատուկ դեսպան ուղարկեց։ Իննովկենտիոս XI-ը նորից ձեռք գցեց (ճիշտ է, ոչ երկար ժամանակով) մեկ գայիսոնի ներքո միավորված այդ երեք երկրները։ Նա հույս ուներ, որ բողոքականությունը, որը ոչնչացվում էր անասելի կատաղությամբ, այլևս այդ հողում չի աճի։ Հաղթանակը ոչ միայն շոյում էր պապի ինքնասիրությունը, այլև զգալի եկամուտներ էր բերում։ Եվ պապը ցնծության մեջ էր։

Թվում էր, թե հռոմեական կրոնը Անգլիայում անսասան դիրքեր է նվաճել։ Երկիրը լցված էր քահանաներով ու վանականներով։ Ամբարտավան ու սանձարձակ, նրանք ամենուրեք իրենց այնպես էին պահում, որ կարծես պարտված երկիր էին կառավարում։ Իրապես հենց այդպես էր։ Բայց վերջիվերջո համբերության բաժակը լցվեց, և բոլոր

ոչ կաթոլիկական կուսակցությունները միավորվեցին ընդհանուր թշնամու դեմ։

Հակոբ II-ին վռնդեցին Անգլիայի թագավորությունից, նրա հետ միասին վռնդվեց նաև պահպանող կուսակցության հոգևոր անձանց ազդեցիկ հորդան։ Թագը հանձնեցին Օրանի դուքսին, որը դարձավ թագավոր Վիլհելմ III։ Անգլիայի պատմության հաղթանակը կարճատև եղավ։

Ճիշտ է, պատմին մխիթարում էր Ֆրանսիան, որտեղ Լյուդովիկոս XIV-ը հոգատարությամբ պաշտպանում էր կաթոլիկությունը, կոտորելով հուգենոտներին։

Հալածանքները մասսայական կոտորածների վերածվեցին, որոնք իրենց դաժանությամբ գերազանցեցին Բարդուղիմեոսյան գիշերինը։ Հերետիկոսներին վտանգելու համար ուղարկված դրագունները գործում էին մխիթարների դեկավարությամբ, քանզի կաթոլիկ վկուզակները հոդ էին տանում իրենց գոհերի հոգիների մասին։ Հուգենոտներից հավատուրացություն կորզելու համար նրանց ենթարկում էին սոսկալի խոշտանգումների։

Վարձկաններն ու վանականները քաղաքներում ու գյուղերում դեսուդեն էին ընկնում, ներխուժում բողոքականների տները, կողոպտում նրանց ունեցվածքը, բռնաբարում կանանց ու աղջիկներին։ Նրանց սիրած զվարճանքն էր մարդկանց վրա եռացրած յուղ ածելն ու ապա ողջ-ողջ այրելը։

Իր խոստովանահոր պնդումով, Լյուդովիկոս XIV-ը որոշեց վերջնականապես ոչնչացնել բողոքական կրոնը և վերացրեց Նանտի էդիկտը, որը Ֆրանսիայի համար կործանարար հետևանքներ ունեցավ։ Բանն այն է, որ արտադրության հիմնական ճյուղերի հետ կապված էին գլխավորապես հուգենոտները։ Նրանք վտարանդում էին հոծ խմբերով, արտասահման տեղափոխելով իրենց ձեռնարկություններն ու կապիտալը։ Աստվածավախ թագավորի ապուշության պատճառով Ֆրանսիան աղքատացավ։

Ավելի քան ութ հարյուր հազար հուգենոտներ վտարանդեցին և իրենց հարստությունները տարան արտասահման։ Առևտրի ոլորտից զգալի չափով կապիտալ հանվեց, և թագավորության հողերը մնացին անմշակ։

Իհարկե, պատը Լյուդովիկոս XIV-ին դիմեց ջերմ շնորհավորանքներով, նրան համոզելով առաջ ընթանալ նույն ճանապարհով։ Թագավորն իր կրոնական նկրտումները տարածեց հարևան երկրների վրա։ Նա Սավոյայի դուքսին առաջարկեց օգնել ոչնչացնելու խաղաղ աշխատա-

սեր բնակչությանը, որի միակ մեղքն այն էր, սպասին չէր հնազանդվել։

Միանալով Պիեմոնտի ջոկատներին, Լյուդովիկոս XIV-ի դրագունները լեռներում կոտորեցին ավելի քան քսան հազար հուգենոտ։

Ֆրանսիայի թագավորի դաժանությունները նրան արժանացրին Իննովկենտիոս XI-ի երախտագիտությանն ու բարյացակամությանը։ Սակայն շուտով նրանք պետք է գժտվեին։ Պապը ցանկացավ վերացնել այն արտոնությունները, որոնցից Հռոմում օգտվում էին արտասահմանյան դեսպանները։ Թագավորների մեծ մասն ընդունեց քահանայապետի դեկրետը, իսկ գոռոզ Լյուդովիկոսը դրա մեջ տեսավ իր արժանապատվության ոտնահարում և պահանջեց իր ներկայացուցիչների համար պահպանել նախկին արտոնությունները։

Երբ սուրբ հայրը հրաժարվեց, թագավորը Հռոմ ուղարկեց ութ հարյուր մարդուց բաղկացած մի ջոկատ, հրամայելով դրավել առաքելական պալատը և ուժի միջոցով պահպանել նախկին արտոնությունները։ Բացի դրանից, թագավորը խորհուրդ հրավիրեց Իննովկենտիոս XI-ին պատելու համար։

Սակայն պապը շուտով վախճանվեց։ Նա այնքան շատ հերետիկոսներ էր կոտորել, որ կարող էր տաքուկ տեղ գրավել տեղ ասածուն շրջապատող ամենահռչակավոր մարդասպանների կողքին։

## ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՒԽՏԱԳՐԺՈՒԹՅՈՒՆ. ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմանալով Իննովկենտիոս IX մահվան մասին, Լյուդովիկոս XIV-ը Հռոմի իր դեսպանին անհապաղ կարգադրեց պատկառելի գումարներ բաժանել սուրբ կոլեգիայի անպամներին, որպեսզի նրանք պապ ընտրեն իր ցանկացած մարդուն։

Դա ամենաճիշտ միջոցն էր։ Ֆրանսիայի դեսպանի ցուցումով ձայների մեծամասնությունը տրվեց Աղեքսանդր VIII-ին։

Նոր պապն իր մեջ հիանալի զուգակցում էր Կղեմես IX-ի և Կղեմես X-ի ամենաբնորոշ արատները. հարբեցող էր և որկրամոլ։ Ծոխ ընթրիքներից հետո նորին սրբազնությունը գիշերները լուսացնում էր խնջույքների մեջ, քառյակներ երգելով, որոնք սովորաբար ինքն էր հորինում։

Նրա ապօրինի որդին ու ֆավորիտը կարդինալի աստիճան ստացավ, միաժամանակ սուրբ հայրը նրան նշանակեց եկեղեցու գործերի գլխավոր կառավարիչ, մեծ կանցլեր և Ավինյոնի պատվիրակ, ապահովելով նաև հարուստ ծխերով, որոնց ընդհանուր եկամուտը կազմում էր տարեկան ավելի քան հիսուն հազար էկյու։ Պապն առատաձեռն եղավ իր ընտանիքի մյուս անդամների նկատմամբ ևս, նրանց բաժանելով ամենաբարձր և ամենաեկամտաբեր պաշտոնները։

Իննոկենտիոս XI-ը գանձարանը թողել էր ֆինանսական փայլուն վիճակում, քանզի հերետիկոսներին ոչնչացնելն ավելի քիչ գող էր պահանջում, քան օրգիաները, խաղերն ու սիրուհիները։ Նրա հաջորդն արագորեն դատարկեց առաքելական սնդուկները։ Իր եղբորորդիների և քրոջորդիների նկատմամբ նրա ցուցաբերած բացառիկ հոգատարությունը երեք շաբաթվա մեջ դատարկեց գանձարանը և պարբ աթոռը ծանրաբեռնեց վիթխարի չարաքերով։

Ուստի, լամիլ և ագգականներին պարգևներ բաժանել, ահա՛ պապի գլխավոր զբաղմունքն իր գահակալության ժամանակ։

Նրա մահից հետո Ֆրանսիայի թագավորը նորից հոգ տարավ, որ իրեն նվիրված պապ ընտրվի։ Այս անգամ ավելի շատ հավակնորդներ կային և գործն ավելի թանկ նստեց. կարդինալներին տասնհինգ միլիոն բաժանեցին։ Եվ դա այն ժամանակ, երբ Լյուդովիկոս XIV-ի հպատակները մեռնում էին սովից։ Չնայած պատկառելի գումարին, վեճերը երկար շարունակվեցին և մինչև վերջին րոպեն պարզ չէր, թե ով կընտրվի։ Վեցամսյա պայքարից հետո Իննոկենտիոս XII անունով պապ դարձավ Լյուդովիկոս XIV-ի դրածոն։ Շատ ճարպիկ լինելով, այդ պապը կարողացավ օգտագործել հայր Լաշեզի աղեցությունը և նրան ստիպեց չեղյալ հայտարարել Հռոմի կուրիայի շահերին հակասող բոլոր էդիկտները և օրդոնանսները։

Իննոկենտիոս XII-ը մեռավ իր դարի հետ միասին՝ 1700 թվին։ Մեռնելուց քիչ առաջ նա չկարացավ հիշել մեղքերի համաշխարհային թողությունը։ 1700 թվ. հոբելյանը, ինչպես և նախորդները, հիանալի բերք տվեց։ Քրիստոնեական բոլոր երկրներից ոսկին վիթխարի քանակությամբ հոսում էր դեպի Վատիկանի գանձարանը։ Սակայն իրեն՝ սուրբ հորը վիճակված չէր օգտվել այն եկամտաբեր միջոցառման արդյունքներից։

Նրա մահից երկու ամիս հետո նոր պապը, Կղեմես XI-ը, տեսավ, որ առաքելական սնդուկները լեփ-լեցուն են, մի փաստ, որի նմանը սակավ է հանդիպում Վատիկանի պատմության էջերում։

## ՆԿԵՂԵՑՈՒ ՓԱՇԱՆԵՐԸ

*Կղեմես XI-ի գահ բարձրանալուց շատ չանցած Հռոմին ու առաքելական գահին պատուհասեց մի ահավոր աղետ։ Հորդ անձրևների հետևանքով Տիբրոսն ափերից դուրս եկավ, ծածկեց դաշտերը և ոչնչացրեց ցանքսերը։ Սով սկսվեց. բնակչությունն այն օրն ընկավ, որ ստիպված էր խոտով կերակրվել։*

*Մահացությունը մեծ չափերի հասավ։ Համաճարակները մարդկանց հնձում էին։ Բոլոր դժբախտություններին գումարվեց նաև երկրաշարժը, որը տասնհինգ րոպեում կործանեց ամբողջ փողոցներ և տների ավերակների տակ թողեց բազմաթիվ մարդկանց։*

*Սարսափ ու հուսահատություն էր տիրում քաղաքում։ Սովից ու տևողից տառապող բնակչությունը դիմեց սուրբ աթոռին։ Սակայն Կղեմես XI-ը ինչպես և առաջ, ճաշի նստելիս, բնավ չէր մտածում թեկուզ փոքր ինչ կրճատել իր մենյուն։*

*Հռոմեացիները ցայրացած էին նաև այն պատճառով, որ գիտեին, թե պապական գանձարանում ինչպիսի վիթխարի հարստություններ էին կուտակվել վերջին հոբելյանի շնորհիվ, և չէին կարող պատկերացնել, որ այդ վիթխարի գումարներն արդեն մսխված են։ Այնուամենայնիվ պապը մի էկյու իսկ չկտրեց ժողովրդի աղետալի վիճակը թեթևացնելու համար։ Նա սահմանափակվեց մի քանի դեկրետներով, որոնք որոշ պատմաբաններ համարել են շատ իմաստուն։ Ջցանկանալով հերքել այդ լավատեսական գնահատականը, մենք այնուամենայնիվ կարծում ենք, որ սովից մեռնող մարդկանց համար նույնիսկ ամենահրաշալի դեկրետը մի պարկ ցորեն չարժե։*

*Պապի դեկրետները հարկից ազատեցին այն քաղաքացիներին, որոնց տները երկրաշարժից քանդվել էին։ Ողորմած Հայրը ժամանակավորապես հրաժարվո՞ւմ էր խլել ոչ մի գրոշ չունեցող չքավորների բարիքը։ Նա նաև որոշեց ևկեղեցուց վտարել այն հոգևոր անձանց, որ հարբեցողությամբ էին զբաղվում և խրախճանքների տրվում, երբ Հռոմն աղետի էր մատնված։*

*Պապական կոնդակն ըստ արժանվույն գնահատելու համար մենք պետք է նշենք, որ բոլոր հոգևորականները, և հատկապես կարդինալներն ու եպիսկոպոսները, այդ ժամանակ հսկայական միջոցներ ունեին. նրանք այն եզակի մարդիկ էին, որոնց աղետը չէր դիպել։*

Ավելի առատաձեռն լինելով, քան պապը, նրանք բնակչության մի մասին օգնություն էին ցույց տալիս, ըստ որում բավական յուրատեսակ օգնություն։ Բարեգործության անվան տակ նրանք սովյալներին խղճուկ կերակրաբաժիններ էին նետում, շատ էժան գնում Հռոմի գեղեցիկ աղջիկներին ու կանանց։ Վավաշոտ կղերականները չարաշահում էին ժողովրդի դժբախտությունը։ Նրանցից ամեն մեկն իր համար իսկական հարեմ էր սարքում։ Աղջիկները և նույնիսկ երեխաներն իրենց վաճառում էին մի կտոր հացի համար։

Առաջարկը մեծապես գերազանցում էր պահանջարկը, և դժբախտները սարսափից դողում էին, որ չլինի թե իրենց մերժեն։ Մայրերը բերում էին դուստրերին, տղամարդիկ՝ իրենց կանանց, և վա՜յ էր նրան, ով դժբախտություն ուներ դուրեկան չլինելու. եկեղեցական ճիզվիտները ձրի ոչինչ չէին տալիս։

Կղեմես XI-ը հարկ չհամարեց այդ խայտառակություններին վերջ տալ։ Քաղաքացիների դայրույթը, սակայն, այնպիսի չափերի հասավ, որ պապն սկսեց վախենալ ապստամբությունից. չէ որ այդ դեպքում զայրացած ժողովուրդը կպատժեր քահանաներին, եպիսկոպոսներին, կարդինալներին և, թերևս, նաև իրեն՝ սուրբ Հորը։ Եվ Կղեմեսը մի կոնդակ հրապարակեց, որը Հռոմեական հոգևորականության բոլոր ներկայացուցիչներին պարտադրում է ընտանիքներին վերադարձնել այն կանանց աղջիկներին, որ նրանք պահում էին իրենց պալատներում։

Սուրբ Հայրը պարզապես ուղում էր իր վրայից պատասխանատվությունը թոթափել։ Չէ որ նա չէր կարող չիմանալ, որ դեկրետները չեն փոխի ստեղծված վիճակը, մինչև որ չվերանա այն պատճառը, որը գեղեցիկ հռոմեուհիներին կանգնեցրել էր երկընտրանքի առաջ՝ կամ պոռնկություն, կամ մահ։

Հոգևորականությունն ավելի շրջահայաց դարձավ և հնազանդ էր ձևանում։ Հաջողվեց խուսափել հրապարակային խայտառակությունից, իսկ քահանայապետի ուղածն էլ հենց դա էր։

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽԵՂԿԱՏԱԿՆԵՐԸ

Պնդելով, թե տուժածներին օգնելու փող չունի, Կղեմես XI-ը Բնրևս Շիշտ էր ասում։ Իր նախորդներից շատերի պես պապն իր ազգական-

ների վրա վիթխարի գումարներ էր ծախսում և, բացի դրանից, իրեն էլ չէր զրկում որևէ բավականությունից։

Եվ այնուամենայնիվ չափազանց տարօրինակ է թվում, որ համաշխարհային հոբելյանի շնորհիվ Վատիկանի նկուղներում կուտակված անհամար հարստությունները կարող էին ակնթարթորեն մսխվել։ Թեև Կղեմես XI-ը մի առանձին ողջախոհությամբ աչքի չէր ընկնում, այնուհանդերձ չէր էլ պատկանում այն մարդկանց թվին, որ սնանկանում են կնոջ պատճառով։

Այն բանին, որ առաքելական գանձարանն արագորեն դատարկվել էր, ստիպում է հավատալ մի հանգամանք. հեղինակավոր պատմաբանների վկայությամբ, ընտրությունների ժամանակ կարդինալները, բարենպաստ իրադրությունից օգտվելով, իրենց ձայների համար հսկայական գումարներ պահանջեցին։ Եվ ի վերջո նրանք իրար մեջ բաժանեցին բարեպաշտ քրիստոնյաների նվիրատվությունները։ Այդ իսկ պատճառով շատ հավանական է, որ իր ընտրության հաջորդ օրը Կղեմես XI-ը շատ համեստ միջոցներ ուներ, ասես բոլորովին էլ հոբելյանական տոնակատարություններ չէին եղել։

Կարդինալների վարքը հաստատում է մեր ենթադրությունը։ Այն ժամանակ, երբ կենսականորեն անհրաժեշտ ամեն մի մթերք նույնիսկ միջին եկամտի տեր մարդկանց համար պերճանքի առարկա էր, կարդինալներն իրենց համար ոչինչ չէին խնայում։ Եթե այն փողերը, որ ծախսվում էին օրգիաների վրա, բաժաններին բնակչությանը, չոլոքն էլ ուտելու հաց կունենային։ Կաշառքները ևս մեծացնում էին կարդինալների եկամուտները։ Սակայն միանգամայն հնարավոր է որ նրանք առավել չափավոր կյանք կվարեին, եթե ի հայտ չգար Հարստանալու մի նոր, արտակարգ աղբյուր։

Միանգամայն հավաստի է այն փաստը, որ Կղեմես XI-ի գահ բարձրանալուց վեց տարի էլ չէր անցել, երբ փողի պակասը նրան ստիպեց հայտարարել նոր հոբելյան, որը նախորդների պես հիանալի արդյունքներ ունեցավ։

Մարդկային հիմարությունը նույնքան անիմանալի է, որքան և աստծո կամքը։

Պապ ընտրելիս կարդինալները սովորաբար երկո. նպատակ էին հետապնդում. ավելի թանկ վաճառել իրենց ձայները և ընտրել ամենից ծեր, հիվանդոտ ու զառամյալ թեկնածուին, մի բան, որ հնարավորություն էր տալիս շուտով վերսկսել այն նույն արարողությունը,

որը նրանցից շատերին նոր եկամուտներ էր խոստանում, իսկ ոմանց էլ իսկույն տիրանալու հույս ներշնչում։

Կղեմես XI-ն ընդամենը հիսուն տարեկան էր, բայց կոնկլավի անդամները, նրանից առաջ, նրա հարցում բացառություն էին արել, քանի որ նա որոշել էր նրանց համար պատարկել առաքելական գանձարանը։

Կղեմես XII-ը, ըստ երևույթին, ընտրվեց միայն այն պատճառով, որ արդեն ութսունն անց էր, այնպես որ կարելի էր սպասել նրա մոտալուտ վախճանին։ Եվ չնայած որ ծերուկի միտքը խիստ նվազել էր, նա ցուցաբերեց զուտ եկեղեցական հնարամտություն, թաքցնելով մի պակասություն, որն, ըստ ընդունված կանոնների, բացառում է առաքելական գահը զբաղեցնելու հնարավորությունը։ Նա կույր էր, իսկ նրա կուրդանները, կարդինալները, նույնիսկ չէին ենթադրում, թե այդպիսի բան կա։ Ինչքան զգուշություն պետք է բանացներ այդ փառասեր ծերուկը, որպեսզի ոք չնկատեր, որ նա տեսողությունից զուրկ է։

Կղեմես XII-ն ընտրվեց չորսամյա անդրկուլիսյան կոմբինացիաներից, անամոթ ինտրիգներից ու գործարքներից հետո։ Որպեսզի կարդինալները վերջապես համաձայնվեին, պահանջվեց ևս մի չնախատեսված հանգամանք։ Նրանց խորհրդարանը հանկարծ ենթարկվեց... փայտոջիլների գրոհին։ Փայտոջիլներն այնքան շատ էին, որ նորին սրբազնություններն չկարողացան նրանց հախից գալ։ Եվ այդ պատճառով որոշեցին վիճաբանություններն անհապաղ դադարեցնել։

Հիրավի, կարելի է հաստատ ասել, որ Կղեմես XII-ն իր վեհացման համար պարտական է փայտոջիլներին։

Բայց քիչ էր մնում, որ ընտրությունը չեղյալ հայտարարեին։ Երբ սրտին առաջարկեցին ստորագրել ընտրության ակտը, նա իր ստորագրությունը դրեց տեքստի վրա, այլ ոչ թե դրա տակ։ Բարեբախտաբար, բանին տեղյակ միակ կղերականը ժամանակին գլխի ընկավ և թանաքամանը շուռ տվեց։ Նրա հնարամտության շնորհիվ Կղեմես XII-ի կուրությունը չնկատվեց։ Ակտն արտագրվեց, սակայն այս անգամ կույրը հոգ տարավ, որ ստորագրելիս կղերականը շարժի նրա ձեռքը։

Կղեմես XII-ի գահակալության օրոք Փարիզում կրոնական խելահեղության մի իսկական համաճարակ բռնկվեց։

Օգտվելով մասսաների տգիտությունից, մի քանի քահանաներ լուր տարածեցին, թե իբր որոշ կղերականների գերեզմանների վրա

հրաշքներ են կատարվում։ Այդ սուրբ հանգուցյալների մեջ կար մի սարկավագ։

Քանի որ սարկավագը ժողովրդականություն էր վայելում, քահանաները նրա համար հոյակապ դամբարան կառուցեցին։ Նրանք սլքնդում էին, թե այդտեղ աղոթող և նվերներ թողնող (շա՜տ կարևոր հանգամանք) հիվանդներն ապաքինվում են։ Սարսափելի վերքերը վերանում էին ասես կախարդանքով (հավատացյալներից և ոչ մեկը, իհարկե, չէր ենթադրում, որ այդ վերքերը շինծու են)։ Սուրբ ապաքինողի հեղինակությունն անասելի բարձրացավ։

Ուխտավորների թիվն այնքան մեծացավ, որ հրմշտուքից խուսափելու համար հարկ եղավ գերեզմանատան պարսպի մեջ տասներկու մուտք բացել։ Սրբի գերեզմանին հասնելու համար հարկավոր էր մի քանի ժամ հերթ կանգնել։ Ճիշտ է, ներկայացումը, որն առանց ընդմիջման փիշերն էլ էր շարունակվում, լիուլի հատուցում էր բոլոր չարչարանքները։

«Մի հատուկ ցանկապատի հետևում, որտեղ այցելուներին միայն փողով էին ներս թողնում,— ասում է Լաշատրը,— վազվզում, թռչկոտում, պարում էին կիսամերկ տղամարդիկ ու կանայք։ Ջղաձգությամբ բռնված, նրանք ընկնում էին երեսն ի վայր, շարունակելով ցնցվել մի այնպիսի ուժով, որ անհասկանալի էր, թե ինչպես էին դիմանում դրան։ Հարյուրավոր մարդիկ թավալվում էին գետնի վրա, գալարվելով ամենաանպարկեշտ ձևով։ Այն ժամանակ քահանաներն այնպիսի մեծ հեղինակություն ունեին, որ չնայած գերեզմանատնային դամբարանի շուրջը կատարվող կատաղի մոլեգնապարին, իշխանությունները երկար ժամանակ դրա վրա մատների արանքով էին նայում»։

Ի վերջո կրոնական խելացնորության տեսարաններն այնքան անպարկեշտ բնույթ ընդունեցին, որ քաղաքացիական իշխանություններն ստիպված եղան գերեզմանատունը փակել։

Մյուս օրն առավոտյան դարպասի վրա մի էպիգրամ լրևաց, որ գրել էր ինչ-որ աստվածավախ կատակասեր.

Խիստ արգելել է մեր արքան արի,
Որ աստված այստեղ հրաշք կատարի։

Սակայն քահանաները չհանդարտվեցին։ Նրանք իրենց ներկայացումները տեղափոխեցին այլ վայրեր, որոնց թիվը մեծանում էր նոր դողոգարների թվի համեմատ։

Շատ չանցած, գրում է Լաշատրը, կային շուրջ ութ հարյուր հրաշագործներ կամ մոլագարներ, որոնք ամեն անպարկեշտ ներկայացում-

ներ էին սարքում։ Այդ եկեղեցական սատուրնալիաներում գլխավոր դերերը կատարում էին կանայք ու աղջիկները։ Նրանք հմտացել էին հատկապես ակրոբատիկ վարժությունների մեջ։ Ոմանք էլ, արևելյան ձեռնածուների նման, ոտքերի վրա պտտվում էին այնպիսի արագությամբ, որ հանդիսատեսի գլուխը սկսում էր պտտվել։ Մյուսները գալարվում էին ամբողջ մարմնով, իրենց շարժումներն ուղեկցելով չըխկչխկոցների շաչյունով։ Երրորդները մոտ էին կանչում ներկաներին, հրամայելով ոտից գլուխ մերկանալ, ապա պահանջում էին ծունկ չոքել և օգնություն ցույց տալ։ Ընդ որում այդ օգնությունը հաճախ շատ տարօրինակ բնույթ էր կրում։

Կատարելապես մոլեգնելով, դողագարներն այնուհետև պառկում էին գետնին, մոնթերին հրամայելով թռչկոտել իրենց փորերի վրա, ոտքերով ճզմել, ինչպես խաղողի հյութը քամելիս։ Երբեմն նրանք ստիպում էին քաշքշել իրենց ոտքերն ու ձեռքերը, պահանջելով գրեթե քառահատել. այլ դեպքերում խնդրում էին իրենց տանջել գելոցով, աքցաններով ոլորել կուրծքը, դաշույնով ծակել լեզուն։

Կային այնպիսիները, որոնց քահանաները զամում էին խաչերի վրա և փայտով հարվածում գլխներին, կրծքներին, փորներին։ Ոմանք մեկ օրում վեցից մինչև ութ հազար հարված էին ստանում։ Երիտասարդ աղջիկները քայլում էին գլխիվայր՝ ձեռքերի վրա հենված՝ երգելով և բոլորովին չհոգալով պարկեշտության մասին։ Այնուհետև նրանք ոտքի էին կանգնում, թռչում քահանաների ուսերին, քարշ տալիս դիպի անկողին, գրկում, իսկ հետո հրում, գցում գետին։

Այն ժամանակ, երբ քահանաները պաշտպանում էին կրոնական խելացնորությունը, էնցիկլոպեդիստների փառապանծ աստղաբույլը եկեղեցուն պատերազմ հայտարարեց և նրան այնպիսի հարված հասցրեց, որից նա այլևս երբեք ուշքի չեկավ։

Անմահ Վոլտերն աստվածապետական աշխարհի երեսին նետեց. «Ճղմեցեք օձի գլուխը» մարտաշունչ կոչը։ Նրա հետ միասին մարդկային բանականությունն ազատագրելու համար պայքարում էին Ռուսոն, Մոնտեսքյոն, Դալամբերը։ Հռչակավոր շատ գիտնականներ, մերժելով աստվածաշնչի հեքիաթները, գնում էին Դալիլեյի ուղիով։ Ճակատամարտ բռնկվեց գիտության և կրոնական նախապաշարումների, ապրդարության և քահանաների բռնապետության միջև։

Պապերը ղանապան հնարքների էին դիմում, որպեսզի հավատացյալներին ստիպեին իրենց դրամապանակները դատարկել։ Այդ հնարքներից մեկը նրանց երբեք հուսախաբ չէր անում։ Մենք նկատի ունենք այս կամ այն հանդուցյալի սրբացումը։ Այդ արարողությունը միշտ էլ անամոթ կողոպուտի առիթ էր դառնում, և ամեն անգամ պապերին մի զգալի գումար էր բերում, որի միայն մի մասն էր ծախսվում եկեղեցական կարիքները հոգալու համար։

Իր վանքի միաբանին սուրբ հայտարարելը շատ նկամտաբեր էր. յուրաքանչյուր ոսկորը հրաշք էր գործում, և սրբացվածի կմախքը դառնում էր առատ և մշտական եկամուտների աղբյուր։

Բնականաբար, այն վանքերը, որ ցանկանում էին իրենց սեփական սրբերն ունենալ, պետք է սրբացման համար պապին լավ վճարեին։

Սակայն ինչքան էլ մեծ լինեին գումարները, վանքերը երբեք չէին սակարկում, որովհետև գիտեին, որ իրենց միջոցները գործի դնելու ավելի լավ ձև դժվար է նույնիսկ երազել։ Սուրբ Հայրը մեզ հետ վարվում է ժուլիկի պես. մտածում էին վանականները, բայց հավատացյալները մեզ հարյուրապատիկ չափով կվերադարձնեն այն, ինչ նա մեզնից խլում է։

Կղեմես XII-ր կես դյուժին սրբեր ստեղծեց։

Վինցենտ դը Պոլի սրբացումը Ֆրանսիայում բացահայտ դիմադրության հանդիպեց։ Սովորաբար երկրներն իրենց համար պատվաբեր էին համարում, երբ հայրենակիցը սրբապսակի էր արժանանում։ Սակայն միսիոներների միաբանության հիմնադրին (որի համար Եսագայում քահանաները բարեբարի համբավ ստեղծեցին) ժամանակակիցներն ատում էին նրա դաժանության համար։ Իր հոտահոտ փառքի համար Վինցենտ դը Պոլը պարտական է պապության թշնամիների նկատմամբ ցուցաբերած իր արյունոտ չանդրության։ Կղեմես XII-ը զայրացուցիչ ցինիզմով դա խոստովանում է իր մի կոնդակի մեջ. «Հենց նրա համար, որ Վինցենտ դը Պոլը երբեք չէր դադարում թագավորին, թագուհուն և մինիստրներին հորդորել, որ նրանք հալածեն Հռոմեական եկեղեցուն հակառակվող հերետիկներին, մենք նրան սրբերի կարգն ենք դասում, որպեսզի նրան հաստուցենք այն մարդկանց

«նշանցնելու համար, որոնք յանսենականների նման համառում էին իրենց մոլորությունների մեջ... Մենք նրան մտցնում ենք երկնային դռրաց շարքերը, քանզի թեև ճիշտ է, որ եկեղեցին ինքը հրաժարվում է արյուն թափելուց, բայց այնուամենայնիվ պետք է ասել, որ հենվում է աշխարհիկ իշխանության օժանդակության վրա և երբեք չի դադարի դիմել թագավորների օգնությանը, որպեսզի հերետիկոսներին ստիպի մահապատժի ու խոշտանգումների սպառնալիքի տակ հողևոր դեղեր ընդունել»։

Մահվան մահճում, 1659 թվին, Վինցենտ դը Պոլն իր ընկերներից մեկին, դը Արժենսոնների տան գլխավորին, մի կնքված ծրար էր պահ տվել, որը պետք է բացվեր նրա մահից հարյուր տարի հետո։ Սահմանված ժամկետը լրանալուց հետո կտակակատարի թոռնորդի Մ. Պոլնին, Լյուդովիկոս XV-ի և մի քանի այլ անձանց ներկայությամբ, ծրարը բացեց։ Ծրարի մեջ գտնվեց խոստովանության նման մի բան, որտեղ հեղինակը հայտարարում էր, թե ինքը միայն արտաքուստ է պատկանել կաթոլիկ եկեղեցուն, իսկ իրականում իր ամբողջ կյանքի ընթացքում կիսել է սոսենական վարդապետությունները։ Նրա ասելով, ինքն ուզեցել է իր խղկական հավատը թաքցնել հարյուր տարի, քանի որ համոզված է եղել, որ դրանից հետո ճշմարիտ սոսենականությունը արդեն պետք է արտամղած լինի քրիստոնեական մոլորություններից։

Այդ դարաշրջանի բոլոր հերետիկոսական մոլորություններից մեկը, որ կապված է Սոսենի անվան հետ, ամենաօպոզիցիոնն էր կաթոլիկական կրոնի նկատմամբ։ Նա մերժում էր Քրիստոսի աստվածայնությունը, ինչպես և սուրբ հոգու գոյությունը։ Սոսենականները չէին հավատում աշխարհի լեցօրյա ստեղծման առասպելին, նրա ծագումը բացատրում էին մատերիայի ձևափոխությամբ, որը ենթարկվում է միայն այն ամենակարող կամքին, որ նրանք աստված էին կոչում։ Նրանք մերժում էին մեղքերի թողության դոգման, հավատին երկրորդական նշանակություն էին տալիս, գտնելով, որ մարդու մասին պետք է դատել միայն ըստ նրա գործերի։ Ըստ նրանց ուսմունքի վերջին զղջումը քավիչ նշանակություն չունի։ Նրանք չէին հավատում առաջին մեղքին, չէին ընդունում, թե մահը Ադամի և Եվայի անհնազանդության հետևանքն է, պնդելով, թե դա մի պարտադիր տուրք է, որ ամեն մի կենդանի էակ վաղ թե ուշ պետք է տա բնությանը։

Քրիստոնյաների պես ընդունելով, որ հոգին անմահ է, նրանք մերժում էին հավիտենական տառապանքի դոգման։ Նրանք ասում էին, թե

աստված բացարձակ արդարություն է, և թե նա կարող է տալ միայն այնպիսի պատիժ, որը համապատասխանում է գործած մեղքին։

Նույնիսկ այս ոչ լրիվ ակնարկը պատկերացում է տալիս կաթոլիկական կրոնի և սոսենականների խորին տարաձայնությունների մասին։ Այսպիսով, Վինցենտ դը Պոլը կատաղաբար հալածում էր պապության թշնամիներին, իսկ հոգու խորքում արհամարհում այն հավատն ու ծեսերը, որոնց համար մարտնչում էր ամենայն դաժանությամբ։ Ժխտելով Հիսուս Քրիստոսի աստվածայնությունը, նա ոչնչացնում էր այն մարդկանց, որ չէին ընդունում նույն այդ Քրիստոսի ներկայացուցիչների անսխալականության հավակնությունները։ Հիրավի, Վինցենտ դը Պոլը լիովին արժանի է գտնվելու նկեղեցու սրբացրած պատվավոր ավազակների հասարակայնության մեջ։

Դեռևս Կղեմես XII-ի նախորդը փորձել էր սրբացնել այդ արյունարբու սրիկային, սակայն, Ֆրանսիայում ուժեղ դիմադրության հանդիպելով, չէր համարձակվել իրագործել իր նախագիծը։ Այն՝ կոնդակը, որից մեջբերումներ կատարեցինք, Վինցենտ դը Պոլի հայրենակիցներն ընդունեցին ոչ ավելի լավ։ Բայց վերջիվերջո Լյուդովիկոս XV-ը հալածանքների ենթարկեց Վինցենտ դը Պոլի հակառակորդներին, և նա առմիշտ դասվեց սրբերի կարգը։

## ՓԱՐԱՋԱՆԵՐԻ ԽՌՎՈՒԹՅՈՒՆԸ

Կղեմես XII-ից հետո պապական գահին բարվեց կարդինալ Համբերտինին, որը սրամիտ գրուցարարի համբավ ուներ։ Համենայն դեպս, նա խելամիտ մարդ էր, որը լավ գիտեր, թե ինչ արժեք ունի կրոնը, որը նրա համար շահութաբեր արհեստ էր։ Այլ խոսքով ասած, նրա համար սատանայի ու սովորական խորվիլակի միջև էական տարբերություն չկար։ Նա հիմնավոր ու բազմակողմանի կրթություն էր ստացել, սակայն բանաստեղծներին գիտնականներից և գրողներից անհամեմատ բարձր էր դասում։ Բայց նրան պա չէր խանգարում լքաղվել տաղտկալի աստվածաբանական ուսումնասիրություններով։ Հանուն փառասիրության, այլ ոչ թե բավականություն ստանալու համար, նա հեղինակել էր տասնվեց հատոր, որոնք նվիրված էին կրոնական ձանձրալի թեմաներին։ Նա արդեն վաղուց էր մտածում բարձրանալ հո-

գևոր աստիճան ձեռք բերելու մասին և, զղվանքը ղսպելով, իրեն նետեց եկեղեցական իրավագիտության հորձանուտները։

«Ինձ կշտամբում են,— ասում էր նա,— որ ես շատ հաճախ եմ դիմում Տասսոյին, Դանթեին և Արիոստոյին։ Բայց մի՞թե հայտնի չէ, որ այդ հեղինակներին կարդալն ինձ համար քաղցր խմիչք է, որն ինձ օգնում է մարսել բութ եկեղեցական խոհարարների կոպիտ սնունդը։ Այդ բանաստեղծներն ինձ հիացնում են իրենց փայլուն արվեստով, և միայն նրանց օգնությամբ ես կարող եմ հաղթահարել կրոնական անմտությունները»։

Լամբերտինին սիրում էր աշխարհիկ կյանքը։ Նրա ուրախ բնավորությունը, սրամիտ զրույցները, որոնք հաճախ համեմված էին անպարկեշտ կատակներով, իր կողմը դրավեց փայլուն ու ֆենեաբարո հռոմեական ազնվականությանը։ Նա աչքի չէր ընկնում շատ խիստ բարոյականությամբ, և աշխարհիկ հաղթանակները նրան հնարավորություն էին տալիս այցելել գեղեցիկ պատրիկուհիների բուդուարները։

Կղեմես XII-ի օրոք Լամբերտինին անհրաժեշտ համարեց նախապատրաստվել իր թեկնածությունը առաջադրելուն և կտրուկ փոխեց իր ապրելակերպը։ Սիրային արկածներից չհրաժարվելով, նա սկսեց ամեն կերպ խուսափել աղմուկից, իր արկածները պարուրում էր գաղտնիքով, այլևս չէր երևում հին բարեկամների ուրախ շրջապատում։ Ինչում էր, թե նա ղսպել է իր անդադրում բնավորությունը։ Սակայն իրականում ամեն ինչ մնացել էր առաջվանը, պահպանվում էին միայն արտաքին պատշաճությունները։ Եկեղեցական աստիճանավորները իրենց նույնիսկ ամենաանառակ սուբրաղրյալների նկատմամբ բարեհաճ են լինում, եթե նրանք կարողանում են իրենց մեղքերը թաքցնել։ Սկանդալը հայտնի դարձնելը այն մեղքն է, որ պատժվում է ամենայն խստությամբ։

Լամբերտինիի տակտիկան, իհարկե, չէր կարող խաբել կարդինալներին, որոնք նման բաների մեծ փորձ ունեին։ Իսկ եթե նրան նույնիսկ հաջողվեր կարդինալներին թյուրիմացության մեջ գցել, ապա դա ամենևին չէր մեծացնի հաջողության շանսերը։ Կարդինալների կոլեգիան չէր էլ ձգտում եկեղեցու գլուխ դնել խիստ մարդու. չէ որ նա անխուսափելիորեն կհարձակվեր բարձր հոգևորականության բարքերի վրա։

Մի քանի ամիս անց, տեսնելով, որ կարդինալները հոգնել են անվերջ վիճաբանություններից, Լամբերտինին նրանց դիմեց մի ճառով, որն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Եթե դուք ուզում եք քահա-

նայասլետ դարձնել սրբի՝ վերցրեք Գոտիին, եթե ուզում եք դարձնել ճարպիկ քաղաքագետի՝ ընտրեցեք Ալդոբրանդինիին, իսկ եթե նախապատվություն եք տալիս լավ մարդուն՝ վերցրեք ինձ»։

Կարդինալները ծիծաղեցին և քվեարկեցին հօգուտ վարձախոսի, որը պապ հռչակվեց Բենեդիկտոս XIV անունով։

Իր գահակալության առաջին տարիներին նա կրոնի հարցերում շատ հանդուրժող էր։ Դա միանգամայն բնական էր. չէ որ նա գտնում էր, որ կաթոլիկության դոգմաներն անհեթեթ են և դրանց հավատալն ամեն մի խելացի ու կրթված մարդու ստիպում է կարմրել։

Սակայն նրա լիբերալիզմն ու խաղաղությունը երկար չտևեցին, և նա շուտով դարձավ ճիզվիտների հզու-հնազանդ գործիք։ Մոլեռանդների համազորակցության դխավոր անդամներից մեկը՝ Փարիզի արքեպիսկոպոս Քրիստոֆ դը Բոմոնը, որոշեց ինչ գնով էլ որ լինի, հռչակավոր սուրբ Դոմինիկոսի հետքերով ընթանալով, իր անունը փառավորել այլահավատների վիթխարի ջարդ կազմակերպելով։ Նրան չէր բավարարում մի քանի հերետիկոսների ոչնչացումը, նա երազում էր հսկայական կոտորածների, անհամար խարույկների, արյան գետերի մասին։

Պայմանավորվելով իր մի քանի ամենաաղբեցիկ կոլեգաների հետ, Բոմոնը որոշեց Ֆրանսիայում վերականգնել ինկվիզիցիայի տրիբունալները։ Բայց շատ զգուշավոր մարդ լինելով, նա չէր աճապարում և առայժմ սահմանափակվեց նրանով, որ պապին ներկայացրեց յանսենականների դեմ ուղղված մի նոր օրենք, պատճառաբանելով, թե աղանդի հաջողություններն պահանջում են նրա դեմ ավելի խիստ միջոցներ գործադրել։

Բենեդիկտոս XIV-ը հավանություն տվեց արքեպիսկոպոսի առաջարկությանը, բայց պառլամենտը հրաժարվեց վավերացնել այն ճնշամիջոցները, որ պահանջում էր դաժան պրելատը։ Ճիզվիտներն սկսեցին պառլամենտի անդամներին մեղադրել, թե նրանք քաջալերում են աղանդը։ Լյուդովիկոս XIV-ը, որն ավելի շատ զբաղված էր իր սիրուհիներով, քան պետության գործերով, ժամանակին չկասեցրեց բորբոքվող կոնֆլիկտը։ Քրիստոֆ դը Բոմոնը, տեսնելով, որ թագավորը անդործության է մատնվել, քաջալերեց և սկսեց հալածել նաև մյուս աղանդները։

Աշխարհիկ իշխանությունն այլևս չէր կարողանում ճիզվիտներից պաշտպանել այն քաղաքացիներին, որոնք հրաժարվում էին ենթարկվել եկեղեցու պահանջներին։ Բռնապետությանը խիղճ դիմադրու-

*թյուն ցույց տալու համար շատերը հատուցեցին իրենց ունեցվածքով և նույնիսկ կյանքով։ Անխիղճ քահանաները նրանց հետապնդում էին մինչև գերեզման։*

*Թագավորի սիրուհին, գեղեցիկ մարկիզուհի Պոմպադուրը, որն սկզբում հավանություն էր տալիս էնցիկլոպեդիստների գաղափարներին, միանդամից անցավ ճիզվիտների կողմը։ Ֆրանսիայի այդ փաստացի կառավարչուհու պաշտպանության շնորհիվ լոյոլայի հետևորդներն անպատիժ խախտում էին աշխարհիկ իշխանության հեղինակությունը։ Վերջապես պառլամենտին ձանձրացրեց քահանաների դեմ ապարդյուն հրամանագրեր արձակելը, և նա որոշեց գործել գլխավոր ղրդիչի՝ Փարիզի արքեպիսկոպոսի դեմ։*

*Դա տեղի ունեցավ հետևյալ հանգամանքների բերումով։*

*«Մի մոլեռանդ քահանա հրաժարվեց հաղորդություն տալ ստրբ Ագաթայի վանքի մի միանձնուհու՝ քույր Պերեպետիային,— գրում է Լաշատրը։— Այն ժամանակ պառլամենտը պատասխանատվության կանչեց մոլեռանդին։ Նա իր փոխարեն ուղարկեց իր փոխերեցին, որն ասաց, թե քահանան գործել է Քրիստոֆ դը Բոմոնի՝ Փարիզի արքեպիսկոպոսի հատուկ հրամանով։ Անմիջապես պատգամավորություն ուղարկվեց եպիսկոպոսի պալատը, որպեսզի նա պրելատին ստիպի հիվանդին հաղորդություն տալ։ Նորին սրբությունն ամբարտավանորեն պատասխանեց, թե ինքը պատասխանատու է միայն պապի առաջ, իր վարմունքի շարժառիթները կարող է հայտնել միայն թագավորին և այնքան չի ստորանա, որ այսպատասխանի իբրև թե ժողովրդին ներկայացնող ինչ-որ սրիկաների։*

*Պառլամենտն արքեպիսկոպոսին դատի տվեց, գործը քննելու համար հավաքեց պերերին և նրա եկամուտների վրա արգելք դրեց։ Մարկիզուհի Պոմպադուրը թագավորական խորհրդի աջակցությամբ փոխեց այդ որոշումը և չթույլատրեց, որ պերերը հավաքվեն։ Պառլամենտի անդամները պնդեցին պերերին ժողովի հրավիրելու իրենց որոշումը։ Բայց Լյուդովիկոս XIV-ը արգելեց հավաքը, խորհրդականներին սպառնալով, թե հակառակ դեպքում նրանց ձերբակալելու հրաման կտա, և կարգադրեց վանքից վտարել միանձնուհուն, որի պատճառով ծագել էր վեճը։*

*Մնում է ավելացնել, որ խեղճ մահամերձ կնոջը բանտ ուղարկեցին»։*

*Այդ բարբարոսական արարքը զայրացրեց պառլամենտի բոլոր անդամներին։ Հարդալլոյ ժողովի պատվարժան հռետորներից մեկը*

քաջութիւն ունեցաւ համապատասխան արտահայտութիւններով նշանավակել ձերբակալութեան կարգադրութիւնը և բոլոր խորհրդականներին համոզեց վճռական քողոքով հանդես գալ Պոմպադուրի և Ճիզվիտների նկատմամբ թագավորի ցուցաբերած հանցաւոր բարյացակամութեան դեմ։ Լյուդովիկոս XV-ը հրաժարվեց ընդունել այն պատվիրակներին, որոնց լիազորված էր նրան հանձնել պառլամենտի ուղերձը։ Պառլամենտն անձնատուր չեղավ և որոշեց նիստերը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ մխոցետն ուշադրություն չդարձնի իր պահանջների վրա։ Ճիզվիտները հմտորեն դրգռեցին թագավորի ինքնասիրությունը, և Լյուդովիկոսը հրամայեց դատավորներին ձերբակալել։ Մի քանիսին նա բանտարկեց, մյուսներին աքսորեց հեռավոր քաղաքներ։ Հաջողությունից արբեցած քահանաներն սկսեցին Փարիզը պիտել որպես իրենց կողմից նվաճված մի տարածք։ Նրանց չարաշահումները զայրացրին բնակչության բոլոր խավերին, և Լյուդովիկոս XV-ը, դրա հետևանքներից վախենալով, աքսորյալներին վերադարձրեց և բանտարկյալներին ազատ արձակեց։

Դարձի այդ ընթացքից կատաղած Ճիզվիտները կաշվից դուրս էին գալիս իրենց երբեմնի ազդեցությունը վերականդնելու համար։

Նրանց նախաձեռնությամբ մի քանի եպիսկոպոսներ Լյուդովիկոս XV-ին մի գնկուցագիր ուղարկեցին, որով ապացուցում էին, թե թագավորն իր հղինակությունը մեծ վտանգի է ենթարկում անցնելով փիլիսոփաների կողմը՝ ընդդեմ Լոյոլայի աշակերտների։ Հոգևորականության բռնակալությունը, դաժանությունն ու անհանդուրժողականությունն ի հայտ են գալիս այն գլուխդործոցի մեջ, որը մենք վերարտադրում ենք գրեթե բառացի.

«Թագավո՛ր։ Անհետաձգելի պարտքը մեղ ստիպում է խոնարհվել գահի առաջ, որպեսզի Ձեզ նախազգուշացնենք, որ անհունից բարձրացնող և արևը մթագնող այն թանձր ծուխը, որի մասին խոսվում է սուրբ գրքերում, սպառնում է տարածվել ամբողջ թագավորությունում։ Իմացեք, որ թագավորական իշխանությունն անհամատեղելի է այն ազատության հետ, որ պահանջում են ֆրանսիացիները, անհամատեղելի է խոսքի և մամուլի ազատության հետ։ Իմացեք, որ թագավորների շահերից է բխում պաշտպանել օբսկուրանտիզմը և հանդուգն մարդկանց արգելել պատժություններ անել պաշտամունքների ու իշխանության ծագման մասին։ Մի մոռացե՛ք, որ գահն ու եկեղեցին անբաժանելի են, որ թագավորներն ի վիճակի չեն իրենց իշխանությունից խելացիորեն օգտվելու առանց հոգևորականության աջակցության, և մեծագույն

անշրջահայացություն կլինի հանդես գալ նրա դեմ, անցնելով ժողովրդի կողմը։ Զգուշացնք, որ փիլիսոփաների կողմից գրգռված մարդիկ չսովորեն իրենց կառավարողներին բռնատիրողներ համարել, որովհետև այդ դեպքում միապետությունը կխորտակվի։ Գոռոզամիտ հեղինակներն ապստամբում են աստծո դեմ, փիլիսոփաներն սկզբում տապալում են Քրիստոսի տաճարը, որպեսզի այնուհետև կործանեն Կեսարի գահը։ Կանխեցեք այդ զարհուրելի գործողությունները, զնդան նետեցեք վտանգավոր գրողներին, փակեցեք հրատարակիչների և այն մարդկանց բերանները, որ մամուլում նպաստում են հասարակության բոլոր խավերը թափանցող և ժողովրդին այլասերող կործանիչ գաղափարների տարածմանը։

Ոչնչացրեք, թագավո՛ր, ազատության զազրելի առաքյալներին, անտանելի տառապանքների ու սոսկալի մահապատիժների սպառնալիքով ստիպեցե՛ք նրանց լռել»։

Այս նամակին Լյուդովիկոս XV-ը շատ անորոշ պատասխան տվեց, որը եպիսկոպոսներին բոլորովին չբավարարեց։ Այն ժամանակ նրանք գրեցին պապին, որը առանց տատանվելու նրանց իրավացի համարելով, հրապարակեց առաջադեմ գաղափարների ու նրանց պրոպագանդիստների դեմ ուղղված մի շատ ահեղ կոնդակ։

Կոնդակը բացարձակապես հակասում էր Բենեդիկտոս XIV-ի սկզբունքներին։ Սույն անաստվածն հիրավի դարձել էր կրոնական անհանդուրժողականության ռեկորդսմեն։ Բայց մի՞թե ուխտադրժությունը հատուկ չէ նրա պրոֆեսիային։

Թագավորը հակամետ էր չեներկվել պապի կարգադրություններին, և ոչ թե արդարասիրության, այլ այն վախի պատճառով, թե իր բարի Փարիզում կարող է խռովություն ծագել։ Միայն փողի ծայրահեղ կարիքը նրան ստիպեց քահանաներին տրամադրել այն բոլոր արտոնություններն ու առանձնաշնորհումները, որ նրանք պահանջում էին։

Թագավորի վրա թանկ էին նստում իր սիրուհիները և արքունական շռայլությունը։ Պառլամենտը վճռականապես հրաժարվեց նոր հարկեր մտցնել, միապետին բացատրելով, որ ժողովուրդը ծանր կարիքի մեջ է։ Բայց «սիրեցյալ» Լյուդովիկոսը չցանկացավ ուշադրություն դարձնել այդքան չնչին նկատառումների վրա, նա ոսկու կարիք ուներ, և թող իր հպատակները խեղդվեն սովից։

Այնժամ հոգևորականությունը նրան առաջարկեց փող, իհարկե, որոշ պայմաններով։ Թագավորը փողը վերցրեց առանց որևէ առարկության։ Եվ Ճիզվիտները Ֆրանսիայում նորից հզորացան։

Դա նրանց չխանգարեց «սիրեցյալ» Լյուդովիկոսի դեմ մահափորձ կազմակերպել։ Ահա ձեզ բարի հայրերի երախտագիտությո՞ւնը։ Այդ հիմարագույն թագավորի ղիջումներից անմիջապես հետո տեղի ունեցավ Դամիենի՝ ճիզվիտների չարագուշակ պլանների մոլեռանդ կատարածուի մահափորձը։ Ճիզվիտներն ուզում էին գահի վրա դնել թագաժառանգին, որն անվերապահորեն նվիրված էր նրանց միաբանությանը։ Հարցաքննությունների ժամանակ Դամիենը ամեն կերպ ձգտում էր կասկած հարուցել պառլամենտի ամենաազդեցիկ անդամների նկատմամբ։ Ճիզվիտներն ուզում էին մի գնդակով երկու նապաստակ որսալ, այն է՝ մոլորեցնել դատավորներին ու հասարակական կարծիքը և հանցագործության բարոյական պատասխանատվությունը գցել փիլիսոփաների վրա։ Սակայն մեղադրանքի անհերքելիությունն այնքան պարզ էր, որ նրանք չկարողացան որևէ մեկին խաբել։

Ճիզվիտների պլանը վերջնականապես ձախողվեց, և թագավորը, հասկանալով, թե ում հետ գործ ունի, սկսեց պառլամենտի հետ մերձենալու փորձեր անել, վերականգնելով նախկինում նրանից խլված բոլոր իրավունքները։

Նույնիսկ պապը, որին ճիզվիտները խնդրեցին միջնորդել, միջամտությունից ձեռնպահ մնաց, չցանկանալով իրեն վարկաբեկել։ Դեռ ավելին, նա մի կոնդակ հրապարակեց, որով Պորտուգալիայի թագավորին թույլատրվեց ըստ իր հայեցողության վերանայել այդ թագավորությունում ճիզվիտներին տրված արտոնությունները։

Այդ կոնդակը Բենեդիկտոս XIV-ի վերջին գործն էր։ Նա վախճանվեց 1758 թվին, ութսուներեք տարեկան հասակում։

## ԴՈՄԻՆԻԿՅԱՆՆԵՐԻ ԱՅՐԱՑ ՁԻԶՎԻՏԸ

Բենեդիկտոս XIV-ին հաջորդեց կարդինալ Կարլո Ռոցոնիկոն, որն ընտրեց Կղեմես XIII անունը։ Ընտրությունների արդյունքներին սպասելիս նա անհրաժեշտ համարեց մի զավեշտախաղ սարքել։ Դեն նետելով պապական զգեստը, որ պետք է հագներ, և ձեռքերը դեպի երկինք պարզելով, նա սկսեց այնպես հնծկլտալ ու լալ, որ կարող էր միայն ծիծաղ շարժել։

«Ոչ,— գոչեց նա,— ես արժանի չեմ այս պատվին։ Ինչո՞ւ եք ձեր ձայներն ինձ տվել։ Աստված վկա, ես դա չէի ուզում»։

Այսպես նա ողբաց, մինչև որ մի զայրացած կարդինալ իր կոլեգաներին չառաջարկեց հրաժարվել Ռոցոնիկոյի թեկնածությունից։

«Թողնենք այս ճղճղանին,— ասաց նա,— քանի որ նա հրաժարվում է պապ դառնալ, մեզ միայն մնում է ուրիշին ընտրել»։

Այս բառերը լսելով, Ռոցոնիկոն վեր թռավ և անմիջապես տոնը փոխեց.

«Ո՛չ, ի սեր աստծո, ես համաձայն եմ»։ Եվ ճարպկորեն իր վրա առավ այն թանկարժեք զարդարանքները, որ խորհրդանշում էին նրա նոր աստիճանը։

Գահ բարձրանալուն պես, նա անսքող համակրանք ցուցաբերեց ճիզվիտների նկատմամբ և բացահայտորեն հայտարարեց, որ նրանց պաշտպանելու է ընդդեմ բոլոր թշնամիների, որովհետև տատում է առաջադեմ գաղափարները։

Պորտուգալական ճիզվիտները, պապի բարյացակամությունից օգտվելով, սկսեցին պայքարել Բենեդիկտոս XIV-ի կոնդակը վերացնելու համար։ Ճիզվիտներն առաջ էլ փորձել էին նրան դիմադրել, բայց երկրի տարբեր մասերում նրանց հրահրած անկարգությունները արագորեն ճնշվել էին և պատճառ դարձել, որ նրանք իրենց կոլեջները փակեն։ Այն ժամանակ նրանք որոշել էին թագավորին սպանել և ազատվել իրենց համար ատելի կառավարությունից։

Նրանց ընկերության անդամներից էր տգետ մոլեռանդ Գաբրիել Մալագրիդան, որը պնդում էր, թե ինքն անմիջական կապի մեջ է Հիսուս Քրիստոսի և սուրբ կույսի հետ։ Իսկ ինչպիսին էր թագավորների ու նրանց պալատականների մտավոր զարգացումը, եթե նրանք լրջորեն հավատում էին այդ անհեթեթ ցնդաբանություններին։ Ճիզվիտին ընդունում էին ամենաազնվական ընտանիքներում։ Նրան մեծարում էր, մասնավորապես, մի մարկիզուհի, որի ամուսինը, որ նախկինում շատ բարձր դիրք էր գրավում, շնորհազրկվել էր։ Այդ պատճառով մարկիզուհին ատում էր թագավոր Խոսե I-ին։ Ճիզվիտներն օգտվեցին ստեղծված իրավիճակից և համապատասխան հրահանգներ տվեցին մարկիզուհու խոստովանահորը։ Բարի Մալագրիդան ճշտությամբ կատարեց իր պետերի հանձնարարությունը, մարկիզուհուն ներշնչելով, թե թագավորի սպանությունը սուրբ գործ է, և խոստացավ բոլոր մեղքերի լրիվ թողություն։

Մեղքերը քավելու և դրա հետ մեկտեղ թագավորից վրեժ լուծելու

հնարավորությունից ոգևորված մարկիզուհին հանցակիցներ գտավ։ Մի քանի ազնվականներ, այդ թվում նրա ամուսինը, պրոֆեսիոնալ ավազակներ վարձեցին և սկսեցին պատեհ առիթի սպասել, որը չուշացավ։

Մի անգամ, երբ թագավորը սիրային տեսակցության էր գնում, դավադիրները դարան սարքեցին։ Պլանը շատ լավ էր մշակված և ձախողվեց չնախատեսված հանգամանքների բերումով։ Առաջին գնդակը նպատակին չհասավ, հաջորդ երկուսը դիպան թագավորական կառքին, միայն թեթևակի վնասելով այնտեղ նստած թագավորին։ Եվ այն ժամանակ, ճանապարհը շարունակելու փոխարեն, ինչպես ենթադրում էին մարդասպանները, թագավորը կառապանին հրամայեց վերադառնալ։

Մյուս օրը դավադրության մասնակիցները ձերբակալվեցին։ Նրանց մահապատժի դատապարտեցին և գլխատեցին (բացառությամբ մարկիզուհու, որին կալանեցին մի մենաստանում)։ Ինչ վերաբերում է ճիզվիտներին, ապա դատավորները կտրականապես հրաժարվեցին դատը վարել։ Չնայած ճիզվիտների ակներև մեղապարտությանը, ա տվածավախ դատավորները հայտարարեցին, թե քահանաների կատարած հանցագործություններն իրենց իրավասությանը չեն վերաբերվում։

Մեղադրյալներն իրենց հերթին դիմեցին պապին։ Նրա որոշմանն սպասելով, Խոսե I-ը շարունակում էր երեք ճիզվիտների պահել բանտում, իսկ մնացածներից գլուխն ազատեց՝ նավ նստեցնելով և Իտալիա ուղարկելով։ Արտաքսման դեկրետը նրանց դատապարտում էր որպես թագավորի անձի, պետական իշխանության և հասարակական անդորրի դեմ ընդվզած դավադիրների և դավաճանների։

Տեղեկանալով, որ իր երեք սրտամոտ ընկերները բանտարկված են, իսկ ընկերության մնացած անդամներն արտաքսվել են Պորտուգալիայից, Կղեմես XIII-ը շտապեց թագավորին մի ամբարտավան ու կոպիտ նամակ գրել, հրամայելով ազատ արձակել կալանավորներին, աքսորից ետ վերադարձնել մնացած ճիզվիտներին ու վերականգնել նրանց բոլոր իրավունքներն ու արտոնությունները։ Հայտարարելով, որ ինքը չի կարող հասկանալ, թե միապետն ինչպես է համարձակվել ձեռք բարձրացնել բարեպաշտ հայրերի վրա, պապն սպառնաց ամենասարսափելի պատժով, եթե նրա հրամանն անմիջապես չկատարվի։

Սուրբ Հոր ամբարտավանությունը Խոսե I-ին ստիպեց խզել իր կապը Հռոմի հետ։ Նա, ճիշտ է, չհանդգնեց հոգևորականության արտոնություններին դիպչել և դավադիր ճիզվիտներին դատի տալ, բայց

այնուամենայնիվ հնար գտավ ազատվելու Մալագրիդայից, որին առաջվել մեղավոր էր համարում մահափորձի մեջ։ Նա այդ մոլեռանդին հանձնեց ճիզվիտների երդվյալ թշնամիներին՝ դոմինիկյաններին։ Դոմինիկյանները վաղուց ի վեր ճիզվիտներին ատում էին որպես իրենց ամենաուժեղ մրցակիցների, և թագավորը կարող էր համոզված լինել, որ Մալագրիդայի հետ նրանք կվարվեն ճիշտ այնպես, ինչպես եթե նա գտնվեր պրոֆեսիոնալ դահիճների ձեռքում։ Թշվառն իսկապես ողջ-ողջ այրվեց իբրև հերետիկոս և սուտ մարգարե։

Ահա եկեղեցու սպասավորների հզորության մի սրտաշարժ օրինակ ևս։

## ՃԻԶՎԻՏՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանելով ճիզվիտներին, Կղեմես XIII-ը իր վրա ծանր բեռ էր վերցրել։ Հետագայում նա դրա համար ափսոսաց, բայց արդեն ուշ էր։

Լոյոլայի աշակերտներին Պորտուգալիայից արտաքսելուց հետո նրանց ֆրանսիական եղբայրակիցները շարունակում էին իրենց հանցավոր գործունեությունը, հենց դրանով պատրամենտին բոլոր հիմքերը տալով նրանց նկատմամբ կիրառելու այն խիստ միջոցները, որ պահանջում էր հասարակական կարծիքը...

Ճիզվիտները Մարտինիկա կղզին ուղարկեցին հայր Լավալետին, որը խելոք մարդ ու գործարար առևտրական էր համարվում։ Գաղութներում միսիոներական գործունեությունը և կրոնական պրոպագանդան միայն պատրվակներ էին հանդիսանում, իսկական նպատակը էկզոտիկ ապրանքների վաճառքից ստացվող եկամուտներն էին, որոնք մեծ էին մանավանդ այն պատճառով, որ ճիզվիտները բնավ խղճի խայթ չզգալով բնիկներին ստիպում էին անվճար աշխատել միայն այն բանի համար, որ նրանց դրախտային երանություն էին խոստանում... Իրականում միսիոների անվան տակ ամենուր առևտրական ձեռնարկություններ էին ստեղծվում։ Այսպես կոչված առաքյալները պարզապես առևտրականներ էին։ Նրանք իրենց հետ բերում էին կաթոլիկական դոգմաներ, իսկ փոխարենն արտահանում շաքար, սուրճ և այլն։

Մարտինիկայի ճիզվիտական կազմակերպության պետ նշանակվելով, Լավալետը կարողացավ Լիոնի ամենաազդեցիկ բանկերից մեկում

անսահմանափակ վարկ բացել։ Ֆրանսիացի քահանա հայր Ժորեստեն Լավալետի բոլոր մուրհակները վճարելու հարցը բանկիրների հետ համաձայնեցրեց Հիսուսի ընկերության բանավոր երաշխիքով հանդերձ։ Իհարկե, ավելի ճիշտ կլիներ կնքել գրավոր պայմանագիր, բայց եկեղեցու սպասավորները չէին կարող իրենց արատավորել, բացահայտորեն ֆինանսական գործարքներով զբաղվելով։ Դա խայտառակություն կլիներ։ Սակայն բանկիրները նրանց վստահում էին։ Մի որոշ ժամանակ նրանք բավական մեծ գումարներ էին տրամադրում, որոնք ճշգրտորեն փոխհատուցվում էին կամ կանխիկ դրամով, կամ այն ապրանքներով, որ ուղարկում էր հայր Լավալետը։ Բանն այնտեղ հասավ, որ բանկիրները ավելի քան երկու միլիոն ֆրանկ վարկ տվին։ Մարտինիկայից ծանուցում ստանալով, որ իրենց են ուղարկվել արժեքավոր ապրանքներով բարձված մի քանի նավեր, որոնց բեռների արժեքը գերազանցում է պարտքը, բանկիրները բոլորովին չանհանգստացան։ Նրանք բնավ չանհանդստացան և այն ժամանակ, երբ նամակ ստացան, որով ծանուցվում էր, թե անգլիացիները գավթել են նավերը։ Նրանք վտանգի ենթարկվելու պատճառ չունեին, չէ որ ապահովված էին ամենահարուստ ընկերության երաշխիքով։

Իրենց հասանելիքն ըստ մուրհակների ստանալու համար բանկիրները դիմեցին ճիզվիտների գեներալին։ Եվ ի պատասխան լսեցին, թե միաբանության ստատուսի համաձայն բարձրաստիճան պետերն իրենց ստորադրյալներին պարտավորություններից՝ ազատում են, եթե դրանց կատարումը կարող է ընկերությանը վնաս պատճառել։

Ի պատասխան տարաբախտ բանկիրների բոլոր փաստարկների հիզվիտները շարունակում էին պաշտպանել իրենց խոսքին հավատացող միամիտ մարդկանց խաբելու իրավունքը։

Բանկիրներից մեկը որոշեց մեկնել Փարիզ և դիմել ճիզվիտական բարձրագույն աստիճանավորների օգնությանը։ Բայց նրանք խուլ մնացին նրա կոչերի հանդեպ։ Այնժամ նա փորձեց նրանց գութը շարժել, նկարագրելով այն աղքատությունը և անպատվությունը, որ սպառնում են իրեն և իր ընկերակիցներին, քանի ւր բանկիրական տունը չի կարող դիմանալ երկու միլիոնի կորստին։

«Մենք չենք դիմանա աղետին, — ասաց նա,— և դուք կլինեք մեր ինքնասպանության պատճառը»։

Աստվածավախ ճիզվիտները սառնասրտորեն պատասխանեցին, թե «նրանց հոգիների հանգստության համար պատարագ կանեն»։

Ի վերջո բանկիրներն իրենց սնանկ հայտարարեցին, իրենց ամ-

քողչ ունեցվածքը տրամադրելով պարտատերերին։ Բայց, իրազեկ դառնալով սնանկացման պատճառներին, պարտատերերը որոշեցին միասնաբար պատասխանատվության կանչել հայր Լավալետին։

Ճիզվիտը, իր հերթին, իր պետերից անմիջապես ցուցում ստացավ իրեն սնանկ հայտարարել։ Բայց այդ հնարքը հաջողություն չունեցավ։ Դատական գործ հարուցվեց ամբողջ ընկերության դեմ և հանձնվեց Փարիզի պառլամենտին։

Ճիզվիտները շատ լավ գիտեին իրենց դատավորների անկաշառելիությունը։ Բայց նրանք կարծում էին, թե բավական է թաքնվել ընկերության կանոնադրության ետևում, որպեսզի հնարավոր լինի հերքել ամեն մի համագործակցություն Մարտինիկայի իրենց գործակալի հետ։

Նրանց մեղադրանք ներկայացվեց, թե պարտատերերին սնանկացնելու նպատակով կեղծ անվճարունակություն են հայտարարել և հայր Լավալետը կանխամտածված խարդախության է դիմել։ Մարտինիկայի ճիզվիտական կազմակերպությունը ուներ վիթխարի հողատարածություններ, շարժական գույք և դրամական միջոցներ, որոնց արժեքը մի քանի անգամ ավելի էր, քան այն գումարը, որ պետք էր վերադարձնել բանկիրներին՝ նրանց մուրհակների դիմաց։ Այդ իրավիճակում Լավալետի սնանկացումը ակներև սիմուլյացիա էր, որը չէին ցանկանում խոստովանել դատի տրված ճիզվիտները։

Իրենց պաշտպանելու համար նրանք վկայակոչում էին կանոնադրության այն հոդվածները, որոնց համաձայն միաբանության անդամի անձնական վաստակած փողը պատկանում է ընկերությանը, իսկ ընկերությունը միշտ էլ իրավունք ունի անդամի անձնական հաշվին ծախսագրելու այն գործարքները, որ նյութական վնաս են պատճառում։

Այս հրեշավոր փաստարկի վրա հիմնվելով, Լոյոլայի աշակերտներն ենթգուշություն ունեցան դատավորներին հանձնելու իրենց գաղտնի կանոնադրությունները։

Քանի որ դրանք քննելու համար երկար ժամանակ էր պահանջվում, պառլամենտն սկսեց այն բանից, որ ընկերությունը համարեց մեկ գեներալի ենթարկվող միասնական կազմակերպություն և որոշեց, թե ընկերությունը պետք է վճարի հայր Լավալետի տված մուրհակները։

Ճիզվիտական պարագլուխները շատ ուշ հասկացան, թե ինչքան են բարդացրել իրենց վիճակը։ Ճակատագրական սխալի հետևանքները թեկուզ փոքր ինչ թեթևացնելու համար նրանք շտապեցին բավարարել դատարանի վճիռը, ապա պահանջեցին վերադարձնել իրենց վարկաթեկող փաստաթղթերը։

Սակայն հրնշավոր կանոնադրությունների պատճառով այնպիսի աղմուկ բարձրացավ և հասարակական կարծիքն այնքան էր գրգռված, որ պառլամենտն այլևս չէր կարող գործը կոծկել։ Նա կտրականապես մերժեց բավարարել Լոյոլայի հավակնոտ հետևորդներին, որոնց դեմ աճում էր ժողովրդի զայրույթը։

Հասարակության բոլոր դասակարգերը պահանջում էին նրանց արտաքսել։ Ճիզվիտներն ստիպված էին ընդունել, որ գերագնահատել են իրենց հզորությունը, կարծելով, թե կարող են բացեիբաց և անպատիժ զբաղվել զազրելի գործերով։ Այն ժամանակ նրանք դիմեցին Կղեմես XIII-ի նունցիային։

Նրանց պահանջով ստեղծվեց երեսուն եպիսկոպոսներից բաղկացած մի խորհուրդ, որին հանձնարարվեց պառլամենտի հետ զուգընթացաբար քննություն կատարել։ Ինքնին հասկանալի է, որ պրելատները ճիզվիտների սահմանադրությունն անբասիր համարեցին և որոշեցին գործը կարճել։

Բայց ի վերջո Փարիզի պառլամենտը մի շատ լավ հիմնավորված որոշում ընդունեց, որն իրավամբ կարելի է յուրատեսակ գլուխգործոց համարել։

Որոշումը մեջ էր բերում ճիզվիտների ընկերության համառոտ պատմությունը՝ սկսած նրա հիմնադրման ժամանակներից, և պարունակում էր այն դեկրետների ցուցակը, որ Ֆրանսիայում հրապարակվել էին ինչպես ի պաշտպանություն, այնպես էլ ընդդեմ ճիզվիտների։ Նրանց օգտին հրապարակված դեկրետները բերված էին նրա համար, որպեսզի ցույց տրվի, որ ճիզվիտներն իրենց պարտավորությունները երբեք չեն կատարել և բոլոր ժամանակներում արդարացի և լուրջ պարսավանքների տեղիք են տվել։

Որոշման մեջ հատկապես քննարկվում էին բարեպաշտ հայրերի հիմնական երկերը, որոնք խրախուսում էին ընչաքաղցությունը, աստվածանարգությունը, մոգությունը, աստղագուշակությունը, սուտ վկայությունը, շնությունը, արվամոլությունը, գողությունը, մարդասպանությունը, այդ թվում միապետի սպանությունը։

Բերվում էր այն թագավորների, իշխանությունների, եպիսկոպոսների ու պապերի ցուցակը, որոնց սպանել էին Լոյոլայի հետևորդները։

Վերջում ճիզվիտների տեսությունն ու գործելակերպը գնահատվում էին որպես «կրոնի և պատվի բոլոր սկզբունքները խախտող, քրիստոնեական բարոյականությունն անարգող ոտնձգություն ժողովուրդների

*իրավունքների, թագավորական անձնավորությունների անձեռնմխելիության նկատմամբ»։*

*«Սրա հետևանքով ճիզվիտների ինստիտուտը պետք է անվերապահորեն արգելվի թագավորության ամբողջ տերիտորիայում, թագավորական հպատակներին ընդմիշտ արգելվում է ընկերությանն աջակցել կամ խնդրել նրա վերականգնումը, ինչպես նաև համաձայնել գարշելի հոգևորականների կոլեջները, գիշերօթիկ դպրոցները, սեմինարները և կոնգրեգացիաները։ Իգնատիոս Լոյոլայի հետևորդներին առաջարկվում է թողնել բոլոր դպրոցները, վանքերը, հիմնարկությունները, ում ղեկավարության տակ էլ որ դրանք լինեն, առանձնանալ երկրի ցանկացած վայրում, որտեղ պարտավոր են ապրել սովորական պայմաններում, իրավունք չունենալով համատեղ բնակություն հաստատել, ենթարկվել իրենց գեներալի իշխանությանը և հոգևորականի զգեստ կրել»։*

*Պառլամենտի որոշումը պապին հնարավորություն տվեց նորից ցուցադրելու իր համակրանքը ճիզվիտների նկատմամբ։ Նա շատ խիստ բողոքեց նրանց դատապարտման դեմ, հայտարարելով, թե «Ֆրանսիայի թագավորության աշխարհիկ իշխանությունների այն բոլոր արգելքները, հրամանագրերը, կարգադրություններն ու հայտարարությունները, որոնց նպատակն է ոչնչացնել Հիսուսի ընկերությունը, պետք է համարվեն անվավեր, ուժը կորցրած և անօրինական, և ոչ ոք պարտավոր չէ դրանց հետևել, նույնիսկ նրանք, որ համապատասխան երդում են տվել»։*

*Լյուդովիկոս XV-ը դժկամությամբ, բայց այնուամենայնիվ հաստատեց պառլամենտի որոշումը։ Ճիշտ է, այնուհետև նա սուրբ Հորն առաջարկեց Ֆրանսիայում վերականգնել ճիզվիտական կոնգրեգացիան այն միակ պայմանով, որ միաբանության կանոնադրության մեջ փոխվեն թագավորասպանությանը վերաբերվող հոդվածները։ Նա համաձայն էր պաշտպանել ճիզվիտական նողկալիությունները, միայն թե ինքը Լոյոլայի որդիների ղոհը չդառնար։*

*Կղեմես XIII-ը կտրուկ ետ վանեց իրեն մեկնված ձեռքը։ «Թող նրանք լինեն այնպես, ինչպես որ են կամ բնավ չլինեն»,— պատասխանեց նա։*

*Ֆրանսիայի թագավորի ու հռոմեական արքունիքի հարաբերությունները սրվեցին։ Թագավորի սիրուհի մարկիզուհի դը Պոմպադուրի հանկարծակի մահից հետո ճիզվիտները վերստին սկսեցին դավեր նյութել։ Նրանց հաջողվեց եպիսկոպոսների ժողով գումարել, որը պետք է որոշում ընդուներ աշխարհիկ իշխանության և եկեղեցու հե-*

ղինակավոր անձանց միջև ծագած գժտությունները դադարեցնելու մասին։

Նրանք նզովքներ տեղացին փիլիսոփայական հիմնական աշխատությունների վրա, որոնց մեջ էին «Հանրագիտարանը», Բեյլի «Վերլուծությունը», Հելվեցիուսի «Բանականության գիրքը», Ժան Ժակ Ռուսոյի «Էմիլը», «Հասարակական դաշնագիրը», «Նամակներ լեռներից», Վոլտերի «Բարքերի տեսության փորձ», «Փիլիսոփայական բառարան», «Փիլիսոփայական պատմություն» և «Արևելյան բռնապետություն» երկերը։

Համի ընկնելով, եպիսկոպոսները հայտարարեցին, թե միայն եկեղեցին իրավունք ունի երեխաներին սովորեցնելու։ Այն ժամանակներում նրանք դեռևս լուռ էին ընտանիքների հայրերի հռչակավոր իրավունքների մասին, որոնցով բարի կղերականներն այսօր այնքան պարծենում են։ Այնուհետև նրանք ընդունեցին մի քանի որոշումներ ևս, որոնք հիմնված էին նույն սկզբունքի՝ կաթոլիկ եկեղեցու առաջնության վրա։

Պառլամենտը վերացրեց ալրելատների ընդհանուր ժողովի որոշումները։ Այնժամ կղերականները դիմեցին թագավորին, որը չեղյալ հայտարարեց դատական հրամանը։ Դյուրավ խանդավառվող Լյուդովիկոս XV-ը մի պահ սկսեց զղջալ և այդ տրամադրության մեջ պատրաստ էր եկեղեցուն ամեն տեսակ զիջումներ անել։ Բայց հոգևորականության տարած հաղթանակը շուտով պարտության վերածվեց։ Թագավորը հանկարծ հրապուրվեց ոմն մաղմուաղել դը Ռոմանով. սրա գեղեցիկ աչիկները ցրեցին միապետի տխուր մտքերը և ստիպեցին մոռանալ ճիզվիտներին, եպիսկոպոսներին, պապին, մի խոսքով՝ այն ամենը, ինչ չէր հետաքրքրում իր նոր սիրուհուն։

Պառլամենտը կարողացավ օգտվել այդ իրավիճակից և ի վերջո հաջողացրեց միաբանությունն արգելել։ Մինչ այդ Փարիզից արդեն վտարված ճիզվիտները հիմա առհասարակ արտաքսվեցին Ֆրանսիայից։ Նրանք ապաստան գտան սուրբ Հոր տիրույթներում։

Ահա այդ ժամանակ էլ կղեմես XIII-ը ստիպված եղավ ափսոսալ ճիզվիտների նկատմամբ ցուցաբերած ծայրահեղ բարության և այն բանի համար, որ այնքան փութաջանորեն նրանց սլաշտպանել էր հարձակումներից։

Պորտուգալիան, Իսպանիան և Ֆրանսիան աղատվեցին բարեպաշտ հայրերից, որոնք, բնականաբար, վազեցին իրենց բարձր հովանավորողի մոտ։

Ճիզվիտների հորդան հեղեղեց Իտալիան, և դա պապին քիչ անհանգստություն չպատճառեց։ Նա կսկիծով էր դիտում, թե ինչպես իր հողերից ստացվող եկամուտները հոսում են Լոյոլայի որդիների գրպանները։

Լրիվ սնանկացումից վախենալով, նա ստիպված էր դիմել արմատական միջոցի՝ Ճիզվիտներին արտաքսել իր տիրույթներից։ Բայց պապը բավական խորաթանփանց քաղաքագետ էր և շատ լավ գիտեր, թե ինչքան վտանգավոր է գազազացնել հզորագույն համագործակցության անդամներին։ Այդ պատճառով էլ դուրս գալու վերաբերյալ կարդադրությունն անելով, նա Ճիզվիտներին խոստացավ նրանց հովանավորել այն երկրներում, որտեղ կցանկանան հիմնավորվել։

Նա մի կոնդակ հրապարակեց, կանխապես եկեղեցուց վտարելով այն միապետներին, որոնք բարեպաշտ հայրերին ապաստան չէին տա և կզրկեին նախկին արտոնություններից։ Սակայն պապական շանթն ու որոտը այլևս ոչ ոքի չէին վախեցնում և Ճիզվիտներին չօգնեցին։

## ԿԼԵՄԵՍ XIV

Կղեմես XIII-ի մահից հետո պապ դարձավ Անտոնիո Գանգանելին, որն ընտրեց Կղեմես XIV անունը։ Նա բժշկի որդի էր, կրթությունը ստացել էր Ճիզվիտների մոտ, բայց պատկանում էր Ֆրանցիսկյանների միաբանությանը։

Նա չէր մասնակցել Կղեմես XIII-ի օրոք տեղի ունեցած եկեղեցական գժտություններին, քանի որ չէր համակրում Ճիզվիտներին, որոնց պապը հովանավորում էր։ Գահ բարձրանալով և ծանոթանալով այն կառավարությունների դրոշումներին, որոնք Ճիզվիտներին արտաքսել էին, նա 1773 թվ. հրապարակեց ատելի միաբանությունը ոչնչացնող մի հրամանագիր։ Դրա շնորհիվ Հռոմը հաշտվեց Եվրոպայի բոլոր կաթոլիկ պետությունների հետ։

Կղեմես XIV-ը համոզված էր, որ Ճիզվիտներն իր հետ դատաստան կտեսնեն։ Այդպես էլ եղավ. այդ նշանավոր հրամանագրից հետո նա շուտով վախճանվեց։ Ժամանակակիցները չէին կասկածում, որ պապին թունավորել են։

## ՊԻՈՍ VI-Ը ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ

Բավական երկար վեճերից հետո պապ ընտրվեց Պիոս VI-ը։ Նա ներում էր կոմսական տոհմից և, ի տարբերություն իր նախորդի, շատ ջերմ համակրանք էր տածում ճիզվիտների նկատմամբ (այդ պատճառով էլ Կղեմես XIII-ի օրոք զբաղեցնում էր արքունական մինիստրի բարձր պաշտոնը)։

Խավարամոլ լինելով հանդերձ նա չէր կարող հաշվի չառնել ժամանակի պահանջները։ Նրա գահակալության համար բնորոշ են մշտական տատանումներն ու կիսամիջոցներն ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական քաղաքականության մեջ։

Իսկ ինչ վերաբերվում է նրա մասնավոր կյանքին, ապա այստեղ նա լրիվ վերականգնեց իր նախորդներից շատերի փառասիրած ավանդույթները։ Նրա ապօրինի երկու որդիներն էլ շատ շնորհների արժանացան։

Լյուդովիկոսի որդուն նա կոմսի տիտղոս շնորհեց և տվեց առաքելական գանձարանից դրամ շորթելու անսահմանափակ իրավունք։ Դա Լյուդովիկոսին, որ հակում ուներ առևտրական գործունեությամբ զբաղվելու, հնարավորություն ընձեռեց վիթխարի սպեկուլյացիաների դիմելու։

Սուրբ Հոր որդու համար հիանալի՜ գործունեություն։

Ասենք, դեռ հայտնի չէ, թե ում պետք է նախապատվություն տալ այդ հրաշալի ընտանիքում։ Ընտանեկան զվարճություններին մասնակցում էին պապը, նրա քույրը, որ միաժամանակ նրա սիրուհին էր, նրանց որդիները (միաժամանակ և սիրեկանները) և մի չքնաղ աղջիկ, ում Պիոսին դուստր էր գալիս։ Վերջինիս մայրը նրա հետ սիրային կապի մեջ էր եղել, երբ նա տակավին կարդինալ էր։

Առանց խանդ զգալու, նրանք բոլորը կենակցում էին, փոխելով պարտնյորներին, կարծես վալս պարելիս լինեին։ Պիոս VI-ը նույնիսկ մի երջանիկ միտք հղացավ՝ օրինական ամուսնությամբ իր սիրեկանին ու իր սիրուհուն կապել իրար հետ, այսինքն՝ եղբորը՝ քրոջ հետ, քանզի ինքը երկուսի էլ հայրն էր։

Նորապսակների վրա տեղացին պապի շնորհներն ու նվերները։ Դրանից մի փոքր վաղ պապը նորափեսային շնորհել էր ոը Բրազիի կոմս տիտղոսը։

Սուրբ Հայրը որպես հարսանքանվեր մատուցեց մի թանկարժեք

զարդատուփ, որը պարունակում էր տասը հազար ոսկե դուբլոն, մի տեր-ողորմյա, անասելի թանկարժեք մի գոհար, թանկագին քարերով զար-դարված մեդալների մի հավաքածու։ Բացի այդ, նվիրեց հողեր, պա-լատներ, մի հրաշալի արծաթյա սպասք, որ բռնագրավվել էր շնորհա-զրկված սենյորներից ու պրելատներից։

Ի նշան քահանայապետին իրենց նվիրվածության, բազմաթիվ կար-դինալներ, եպիսկոպոսներ, աղնվականներ և առաքելական աստիճանա-վորներ իրենց պարտքը համարեցին դը Բրազիի կոմսին ու կոմսու-հուն հայտնել իրենց խորին հարգանքի զգացումները և շատ թան-կարժեք նվերներ մատուցել։ Վատիկանի դահլիճներից մի քանիսը լցվեցին այդ նվերներով։

Միաժամանակ Պիոս VI-ը որոշեց հարուցյուն տալ պապական հին ավանդույթին և այդքան նշանակալից իրադարձությանը մասնա-կից դարձնել արտասահմանյան թագավորություններին։

Հենց այդ ժամանակ Աստուրիայի թագաժառանգուհին և Ֆրանսիա-յի թագուհին ծննդաբերեցին։ Երկու թագավորական զարմերին էլ պապը իր և քրոջ դստեր անունից սուրբ բարուրներ ուղարկեց։ Չնայած այդ սուրբ նվերին, մանչուկներից մեկին վիճակված էր ղրկվել գահից, որին պետք է բազմեր ծննդյան իրավունքով։

Շահամոլ պապը հույս ուներ իր ոչ այնքան թանկարժեք ծանոթի փոխարեն հարուստ նվերներ ստանալ իր պաշտելի զավակների հա-մար։ Նվ իսկապես, Մադրիդի ու Վերսալի արքունիքները շտապեցին իրենց երախտագիտությունը հայտնել քահանայապետի սիրալիրու-թյան համար, և երիտասարդ ամուսինների ընտանիքը հնղեղվեց ոսկու ու թանկարժեք իրերի մեջ։

Ինչպես և անցյալ ժամանակներում, Վատիկանն ամեն գիշեր որջի էր վերածվում։ Քահանայապետից, նրա աղջիկներից և ղույդ որդինե-րից բացի օրգիաների մասնակցում էին սիրունատես մանկլավիկներ, դամաներ, կուրտիզանուհիներ, պրելատներ, բարձր պաշտոնյաներ և... պատանի խոհարարները։ Պիոս VI-ի մտերմական կապերը բազմատե-սակ էին՝ սկսած հնդեցական ու աշխարհիկ արիստոկրատիայից մինչև պատանի խոհարարները, որոնց նկատմամբ նա հատկապես բարե-հաճ էր։

Ամեն օրը պապը մի քանի ժամ նվիրում էր իր հարդարանքին, ներկում էր շրթունքները, կարմրացնում այտերը, ամենակոկետ կուր-տիզանուհու պես իր գեր մարմինը օծում էր բուրավետ յուղերով և զարդարվում բանկագին ժանյակներով։ Նա սոսկալի զայրույթ

թի նոպաներ էր ունենում, եթե ծառային չէր հաջողվում նրան ճաշաշ կով հագցնել։ Այն ժամանակ նա կոպիտ հայհոյանքներ էր տեղում, ապտակներ հասցնում և գործի դնում բռունցքները։ Մի անգամ քիչ էր մնում, որ վատ կարած զգեստի համար սպաներ դերձակին։

Հռոմում նրան այնպես էին ատում, որ նրա յուրաքանչյուր երևալը, նույնիսկ կրոնական հանդիսությունների ժամանակ, ուղեկցվում էր ամբոխի սուլոցներով և ծաղրուծանակով։

## ՊԻՈՍ VI-Ը
## ԳՈՂՆ ՈՒ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ

Սուրբ հայրն առանց հոգնելու ամեն կերպ բազմապատկում էր իր ապօրինի զավակների հարստությունը։ Նա հատկապես հոգատար էր դուքս ու դքսուհի դը Բրաչիների նկատմամբ։

Նրա նախկին սիրեկանը, Ռոմուալդը, երկար ժամանակ ադաջին տեղը գրավելուց հետո, սկսեց երկրորդական դեր կատարել։ Սա առաջնությունը զիջեց ավագ եղբորը, սքանչելի Կոնստանցիայի պաշտոնական ամուսնուն։ Ռոմուալդը հեշտությամբ տարավ դյուրափոխ պապի նոր քմահաճույքը։ Նրա ունեցվածքը բավական մեծ էր, և նա այնքան էլ դժգոհ չէր իր վիճակից, այդ պատճառով էլ շատ սերտ հարաբերություններ էր պահպանում հոր, եղբոր և քրոջ հետ, որը հարս էր դարձել։

Իր սիրելի ընտանիքը հարստացնելու համար պապը կանգ չէր առնում նաև հանցագործությունների առաջ ու թեև շատ զգույշ էր, այնուամենայնիվ միշտ չէր, որ հաջողվում էր հետքերը թաքցնել։ Այդ մասին կարող եք դատել հետևյալ իրական պատմությունից։

Միլանցի մի հարուստ, անունը Ամանցիո Լերպի, որոշեց Հռոմ տեղափոխվել, կարծելով, թե սուրբ հորը մոտիկ գտնվելը կսրբագործի նաև իրեն։ Լերպիի աստվածավախությունը ծայրահեղության էր հասնում, որի հետևանքով նա իր եկամուտների մեծ մասը ծախսում էր այնպիսի բաների վրա, որ հոգևորականներն անվանում են բարեպաշտական գործեր։ Վախենալով, որ այդ պատկառելի հարստությունը կրիվ կգա վանքերում և եկեղեցական այլ հաստատություններում, սուրբ հայրը մի ճիզվիտ հանձնարարեց Ամանցիոյին համոզել, որ իր հոգու փրկության համար ամբողջ կաթողությունը հանձնի դուքս ա

դքսուհի դը Բրաչիներին։ Երբ ընծայագիրն ստորագրվեց, պապը երկեբնանիորեն խիստ զարմացած ձևացավ և սկսեց աստվածավախ ապուշին հավատացնել, թե ինքը թույլ չի տա, որ դը Բրաչին ընդունի այդ նվիրատվությունը։ Իսկ իրականում նա պարզապես ուզում էր Ամանցիոյին ստիպել, որ իր նվիրատվության մասին հայտարարի վկաների ներկայությամբ և այդպիսով ցրի այն կասկածները, որ առաջացել էին այդ անբացատրելի առատաձեռնության պատճառով։

Պապը ճիշտ էր կռահել այդ տարօրինակ մարդու բնավորությունը, որն անմիջապես սկսեց սուրբ հորը թախանձել իրեն չզրկել իր ունեցվածքը տնօրինելու երջանկությունից, քանզի դա անում է հոգին փրկելու և այն աշխարհում կայուն տեղ ապահովելու համար։ Վերջապես Պիոս VI-ը թույլ տվեց իրեն համոզել և նվիրատվությունը կայացավ։ Իր դերի մեջ մնալով մինչև վերջ, պապը Լերպիին նույնիսկ համոզեց, որ նա իր համար գոնե հինգ հարյուր էկյուի ռենտա թողնի։

Այդ աներևակայելի ապուշը մի եղբոր աղջիկ ուներ, անունը Մարիաննա, և ինքը նրա խնամակալն էր։ Այդ երիտասարդ աղջկա մայր մարկիզուհի Վիկտորյա Լերպին, զայրացած, որ իր դուստրը զրկվում է ժառանգությունից, որը ստանալու օրինական իրավունք ուներ, բողոքեց պալատի նախագահի տրիբունալին։ Պապին կուրորեն նվիրված նախագահը բողոքը մերժեց։ Արժանավոր դատավորն անմիջապես պարգևատրվեց կարդինալական թասակով։

Սակայն մարկիզուհին չվհատվեց։ Նա բողոքարկեց Հռոմեական դատարանի տրիբունալին, որը բաղկացած էր տասներկու դատավորներից և ատենակալներից, որոնցից միայն երեքն էին հռոմեացի, մնացածները ներկայացնում էին Իտալիայի տարբեր քաղաքներ և եվրոպական երկրներ։ Այդ դատական մարմինը դեռևս լիովին չէր անբարոյականացել, քանզի պապը նրա անդամներից միայն հինգին էր կեբակրում և ընդհանուր առմամբ բավական անկողմնակալ էր։

Վախենալով տրիբունալի աննպաստ որոշումից, Պիոս VI-ը վիկտորյա Լերպիին առաջարկեց մի գործարք, խոստանալով տալ երկու հարյուր հազար էկյու զիջադրամ, եթե նա հրաժարվի իր պահանջից։ Մարկիզուհին չհամաձայնվեց։

Այնժամ պապը մարկիզուհուն շարադրեց նոր նախագիծ, հրաժարվելով նախորդ առաջարկությունից, նա պարտավորվում էր հաջողացնել Ռոմուալդի և Մարիաննայի ամուսնությունը։

Այդ կերպ աղջիկը դառնում էր ավելի խոշոր կարողության տեր, քան այն, որ Ամանցիոն նվիրել էր դուքս դը Բրաչիին։

«Ձեր տիրոջն ասացեք,— պապի դեսպանին պատասխանեց մարկիզուհին,— որ ես արվարություն եմ փնտրում և ամեն միջոցի կդիմեմ»։

Հռոմի դատարանի տրիբունալը վերացրեց առաջին ատյանի վճիռը և ընծայագիրը չեղյալ հայտարարեց, պատճառաբանելով, թե խելապակաս մարդու վրա ճնշում է գործադրվել։

Պիոս VI-ը պարտություն կրեց։ Նա ձևացրեց, թե ենթարկվում է որոշմանը, բայց հենց այն նույն ճիզվիտին հանձնարարեց տկարամիտ Ամանցիոյին ստիպել, որ ստորագրի նոր կտակ, ըստ որի դուքս պը Բրաչին դառնում է ամբողջ ունեցվածքի ժառանգորդը։

Նույն այն օրը, երբ տարաբախտ ապուշը ստորագրեց կտակը, նա սոսկալի ծակծկոցներ զգաց, սկսեց ցնցվել ու փսխել։ Ամեն ինչ պարզ էր. վախենալով, որ չլինի թե Ամանցիոն հանկարծ փոխի իր որոշումը, սուրբ հայրը կարգադրել էր նրան թունավորել։ Բժիշկներն իսկույն իմացան հիվանդության պատճառը, բայց նրանց հաջողվեց միայն մի քանի ժամ երկարացնել Ամանցիոյի կյանքը։

Հենց որ նա շունչը փչեց, պապը ժողովեց Հռոմեական դատարանը և ներկայացրեց հանգուցյալի կտակը։ Դատավորները քննեցին փաստաթուղթը և, ամեն ինչ ճիշտ գտնելով պատրաստվում էին որոշում կայացնել, թե քահանայապետի ապօրինի որդին և սիրեցյալը ժառանգորդի լրումունք է ստանձնում։ Բայց այդ ժամանակ հանկարծ իր մոր հետ հայտնվեց Մարիաննան։ Աղջիկը բացեց մագաղաթի մի փաթեթ և հանձնեց տրիբունալին։ Դա մի այլ կտակ էր, որ կազմվել էր ավելի ուշ, քան այն, որ գտնվում էր Պիոս VI-ի ձեռքին։

Ամանցիոն նոր կտակի մեջ հրաժարվում էր առաջին կտակից, ինչպես նաև այն ընծայագրից, որ նրան պարտադրել էին, և իր ամբողջ ունեցվածքը թողնում էր մարկիզուհի Վիկտորյա Լևրպիի աղջկան, հայտնելով, թե հանցագործ քահանայի և իր դյուրահավատության զոհն է դարձել։

## ՊԻՈՍ VI-Ը ԵՎ ԲՈՆԱՊԱՐՏԸ

Այն ժամանակ, երբ հեղափոխական Ֆրանսիայի զորքերը ցնցում էին գահերը, Պիոս VI-ը հույս ուներ, որ ռեակցիան այնուամենայնիվ կհաղթի և իրեն կհաջողվի խուսափել ֆրանսիացիների վրեժխնդրու-

թյունից։ Որքան մեծ եղավ նրա հուսախաբությունը, երբ Իտալիայի սահմանների մոտ երևացին հանրապետական գնդերը գեներալ Բոնապարտի գլխավորությամբ։

Սուրբ հայրը փորձեց զորք հավաքել և այդ նպատակով թղթադրամ բաց թողեց, որի արժեքը ոչ մի բանով չէր երաշխավորված։ Այդ ամենը նրան քիչ օգնեց, և երբ ֆրանսիական բանակը մոտեցավ Հռոմին, նա Բոնապարտին հաշտություն առաջարկեց, համաձայնվելով վճարել տասնհինգ միլիոն ռազմատուգանք և հանձնել վատիկանի պատկերասրահը զարդարող արվեստի գլուխգործոցները։ Այդ առաջարկությունների հիման վրա մի պայմանագիր ստորագրվեց, բայց Պիոսը դրանով միայն ձգտում էր ժամանակ շահել։ Պայմանագիրը ստորագրելուց հետո պապը կոնդակ հրապարակեց, որի մեջ ասվում էր.

«Կաթոլիկական եկեղեցու բոլոր սիրեցյալ զավակներին, Քրիստոսի եղբայրներին։ Հանուն քրիստոնեության բարօրության մենք ձեզ կոչ ենք անում զենքի դիմել։ Որպեսզի դուք, առանց տատանվելու, կատարեք մեր կամքը, մենք հայտնում ենք, որ մեր գերագույն իշխանության անունից մենք ինդուլգենցիաներ ենք ընծայում նրանց, ովքեր մեր դրոշի տակ կկանգնեն, և հավիտենական երանություն խոստանում նրան, ով կսպանի մեր թշնամիներից թեկուզ մեկին...»։

Տեսնելով, թե քահանայապետը ինչ տարօրինակ եղանակով է կատարում համաձայնագրի պայմանները, Բոնապարտը սպառնաց ռազմական նոր գործողություններով։ Եվ այնուամենայնիվ պատին դեմ արված Պիոս VI-ը մի անգամ էլ ֆրանսիական գեներալին խաբելու հնար գտավ։

Զևացնելով, թե ենթարկվում է Բոնապարտի կամքին, նա վանքերին, տաճարներին ու միաբանություններին ստիպեց Վատիկանին հանձնել այն բոլոր ոսկյա և արծաթյա թանկարժեք առարկաները, որ խիստ անհրաժեշտ չէին կաթոլիկական ծեսերը կատարելու համար։ Այնուհետև բռնագրավեց իր հպատակների արծաթյա սպասքները, խուզարկել տվեց մասնավոր տները, զավթելով թանկարժեք իրերը, մարգարիտները, գոհարները, չգարշելով նույնիսկ կանանց մատանիներից։ Կատարելով այդ իրոք առաքելական գործերը և հավաքելով պահանջված գումարը, նա այդ մասին ծանուցեց Բոնապարտին։

Դիրեկտորիան իսկույնևեթ հռոմ ուղարկեց իր կոմիսարներին, որպեսզի վավերացվեն պապի ու Նապոլեոնի միջև կնքված համաձայնագրերը։ Հանրապետությունը պահանջեց ի լրումն պայմանագրի վերացնել այն կոնյակները, որ, հեղափոխության սկզբից ի վեր, ուղղված

էին ֆրանսիական ժողովրդի դեմ, ինչպես նաև բոլոր կաթոլիկական երկրներում ոչնչացնել ինկվիզիցիան և դադարեցնել եկեղեցական երգչախմբերում երեխաներին ամորձատելու բարբարոսական սովորությունը։ Ոչ մի մտադրություն չունենալով իր խոստումները կատարել, պապը միայն ձևացնում էր, թե ենթարկվում է, և ձգձգում էր ժամանակը, հույս դնելով ավստրիական զորքերի օգնության վրա։

Միաժամանակ հոգևորականությունը նրա հրամանով ամեն ինչ անում էր կրոնական մոլեռանդություն բորբոքելու համար։ Բոլոր վանքերում աստվածամոր արձանները սկսեցին ձեռքերն ու ոտքերը շարժել, աչքերը բացուխուփ անել։ Խաչելությունից արյուն էր ծորում, սուրբ Պետրոսի և սուրբ Պողոսի գանգերը սաղմոսներ էին երգում։ Բայց այդ ժամանակ տեղի ունեցած անհամար հրաշքներից ամենազարմանալին կատարվեց մեծ տոնի օրը՝ պապի, կարդինալների և ավելի քան ութսուն հազար հանդիսատեսների ներկայությամբ։ Մադոննան իշավ իր տեղից, երեք անգամ շարժեց գլուխը և խորը հառաչեց։

Ոչ մի պաթետիկ ճառ չէր կարող անել այն, ինչ ձեռք բերվեց գռեհիկ ֆոկուսների միջոցով։ Ի պատասխան քահանաների կոչերի եկեղեցական մարզում ամենուրեք կամավորների լեգիոններ էին ստեղծվում։

Հավիտենական քաղաքում ապրող ֆրանսիացիների վիճակը վտանգավոր դարձավ։ Մի անգամ մի ավազակախումբ ներխուժեց այն շենքը, ուր ապրում էին ֆրանսիացի կոմիսարները, և սպառնաց նրանց սպանել։ Եթե չլիներ Իսպանիայի դեսպանի եռանդուն միջնորդությունը, ավազակները, անշուշտ, իրենց սպառնալիքը ի կատար կածեին։ Սակայն նրանք չհազաղվեցին և քաղաքում ֆրանսիացիների մի իսկական որս սարքեցին, բացականչելով. «Կեցցե՛ Մարիամը», «Կեցցե՛ Պիոս VI-ը»։ Մարդասպանների մեջ շատ հոգևորականներ կային, որոնք իրենց անվանում էին խաղաղատար աստծո ծառաներ։

Սակայն ավստրիացիների դեմ Բոնապարտի տարած հաղթանակները պապին ստիպեցին ջարդերը դադարեցնել։ Նա նույնիսկ նամակ գրեց Նապոլեոնին, որով հավատացնում էր, թե ինքը հանրապետության դեմ ոչ մի հակառակություն չունի և բոլորից շատ է վշտացած Հռոմում կատարված արյունահեղությունների համար։

Մի գուցե Բոնապարտը հավատար սուրբ Հոր հավաստիացումներին, եթե նրա ձեռքը չընկներ Պիոս VI-ի նամակը՝ ուղղված Ավստրիայի կայսրին, որին պապը համոզում էր ըստ հնարավորին շուտ զորքեր ուղարկել, միաժամանակ հայտնելով, թե ինքը կաշխատի պարոն կո-

Միսարներին «զբաղեցնել», մինչև որ դաշնակիցները միանան իրեն. այն ժամանակ խույրը սաղավարտով կփոխարինի, կայսրզի կայսր Կոստանդինոսի նշանավոր խաչվառը և Քրիստոսի զինվորների գլուխն անցած դուրս կգա կաթոլիկ դավանանքի թշնամիների դեմ։

Քիչ էր մնում, որ այդ նամակը պապության վերջնական կործանման պատճառ դառնար։ Տասնհինգ օրվա ընթացքում ֆրանսիական բանակը գրավեց եկեղեցական մարզի կեսը։ Դժբախտաբար Բոնապարտը դրանով էլ սահմանափակվեց, թեև Դիրեկտորիան հրամայել էր Հռոմը գրավել։ Մի գուցե հենց այդ ժամանակ է նրա գլխում ծագել Եվրոպան նվաճելու պլանը, իսկ դա, իհարկե, անհնար էր իրագործել առանց հոգևորականության օժանդակության։ Ուստի և նա Պիոսին հաշտության նոր պայմանագիր առաջարկեց, որից պապն ուրախությամբ կառչեց։ Վիթխարի գումար վճարելով և կորցնելով մի քանի պրովինցիաներ, նա այնուամենայնիվ պահպանեց ամբողջ իշխանությունը, իսկ չէ որ մազ էր մնում, որ այն առմիշտ կորցներ։

## ՀՌՈՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պիոս VI-ն արդեն երիտասարդ չէր, երբ ծանր հիվանդությունը նրան անկողին գցեց։ Մի քանի օրվա մեջ քահանայապետի վիճակն այնքան վատացավ, որ սկսեցին լրջորեն մտածել նոր պապի թեկնածություն առաջադրելու մասին։

Նրա մահվանն սպասում էին օր օրի, և կարդինալները լավ էին հասկանում, որ եթե այդ անկայուն պահին գահը թափուր մնա, ապա դա կսպառնա հենց պապության ինստիտուտի գոյությանը։ Հռոմի փրկադինը վճարելու համար քահանայապետի հավաքած արժեքները տակավին գտնվում էին Վատիկանում։ Չկասկածելով, որ սուրբ Հայրը մահամերձ է, նրա որդիներն այն եզրակացության եկան, թե ավելի լավ է միլիոնները թաքցնել իրենց սնդուկներում, քան հանձնել ֆրանսիական հանրապետությանը։ Եվ խարդախները յուրացրին գանձերը։ Սակայն Պիոսն անսպասելիորեն ապաքինվեց։ Երևի նրան շատ է վրդովվել փողերի անհայտանալը, բայց, իմանալով, որ կողոպտիչները իր որդիներն են նա իսկույն հանգստացել է։

Բայց ինչպե՞ս վերականգնել հեղհեղական գումարը։ Պիոս VI-ը

շատ երկար էր չարաշահել ֆրանսիական կառավարության համբերությունը և արդեն չէր կարող հույս դնել ներողամտության կամ այն բանի վրա, որ իրեն կհաջողվի նորից նրան խաբել։

Իսկ որտեղի՞ց կարելի էր միջոցներ ճարել քայքայված երկրում։ Պիոսը հասկանում էր, որ բոլոր ծանր տուրքերից հետո հարկերը նորից բարձրացնելն անմտություն կլինի։

Միայն մի բան էր մնում՝ դիմել հոգևորականությանը։ Վանքերում, տաճարներում, կարդինալների ու եպիսկոպոսների շքեղ պալատներում անհաշիվ հարստություններ էին կուտակված։ Այն գումարը, որի կարիքը նա զգում էր, վիճխարի ունեցվածքի միայն մի չնչին մասն էր, մի կաթիլ անեզր օվկիանոսում։ Բայց եկեղեցական գիշատիչներից փշուր խլ ստանալը շատ դժվարին գործ է։ Նրանք սովորել են իրենց փողերը ծախսել միայն հաճույքների վրա։ Եվ այնուամենայնիվ սուրբ Հայրը դիմեց հոգևորականությանը։ Փարաջավորները խռովություն բարձրացրին։ Նրանք սկսեցին բղավել նրա բռնատիրության մասին, իրենց քարողներում պապին նզովում էին, նրան գող, արյունապիղծ, արվամոլ անվանում, ժողովրդին ապստամբության դրդում։ Այդ խլ ժամանակ հայտնվեց Ժոզեֆ Բոնապարտը, որը պահանջեց կատարել պայմանագիրը և աղատել իրենց քաղաքական հայացքների համար բանտարկված իտալացիներին։ Հռոմեացիները պաշտպանեցին ֆրանսիացիներին, ի դեմս նրանց տեսնելով իրենց փրկիչներին։ Հրճվալից բազմությունը, հայրենասիրական հիմներ երգելով, շարժվեց դեպի հանրապետության ներկայացուցիչների նստավայրը և նրանց ողջունեց բուռն խանդավառությամբ։

Տեսնելով այդ ցույցը, քահանայապետը հասկացավ, որ կղերականների հետ գժտվել չի կարելի։ Եկեղեցականների և նրանց արժանավոր գլխավորի միջև հաշտություն կայացավ։

Գործը կարգավորելով, Պիոսը կարգադրեց ժողովրդական հուզումներին վերջ տալ։ Սահման չուներ քահանայապետի զայրույթն անիծյալ ֆրանսիացիների դեմ, որոնք իր հպատակների մեջ ազատության ձգտում էին արթնացրել, և նա որոշեց օգտվել փողոցային անկարգություններից։

Հռոմի փողոցներում ու հրապարակներում անզեն քաղաքացիները գոռում էին. «Կեցցե՛ աղատությունը»։ Դաժան Պիոսը նրանց դեմ զինվորներ դուրս բերեց, որոնք անողոքարար գնդակահարում էին քաղաքացիներին, չխնայելով ոչ ոքի, նույնիսկ՝ կանանց ու երեխաներին։ Դրանից անմիջապես հետո պապական կամակատարները ներխուժե-

ցին ֆրանսիական դեսպանության շենքը և պահանջեցին իտալացիներին հանձնել, ժոզեֆ Բոնապարտը և մի քանի սպաներ փորձեցին դիմադրել, բայց ի՞նչ կարող էր անել մարդկանց փոքրիկ խումբը մի քանի հարյուր վարձկանների դեմ։

Իտալացիները, որոնք հույսը դրել էին դեսպանության անձեռնմխելիության վրա, անգթորեն ոչնչացվեցին, նույն բախտին արժանացան նաև մի քանի ֆրանսիացիներ, այդ թվում և գեներալ Դյուֆոն, որին գնդակահարեցին, երբ նա փորձում էր պաշտպանել իտալացիներին։

Նման անկարգություններ եղան նաև Պապական մարզի մյուս քաղաքներում։

Վերոնայում հաղարավոր քաղաքացիներ ոչնչացվեցին։ Բռնակալների ավազակախմբերը ներխուժում էին հիվանդանոցները, տեղնուտեղը խոշտանգում վիրավոր ու հիվանդ ֆրանսիացիներին կամ նրանց նետում գետը։ Այդ կերպ ոչնչացվեց չորս հարյուր մարդ։

Դիվանագիտական կորպուսի անունից վճռական բողոքով հանդես եկավ Իսպանիայի դեսպանը։

«Ես վհատված եմ,— շփոթված պատասխանեց քահանայապետը, իմ մարդիկ իրենց նախաձեռնությամբ են գործել։ Այն ընդհարման ժամանակ, որը խլեց խիզախ գեներալ Դյուֆոյի կյանքը, ես իմ մատուռում աղոթում էի ֆրանսիական հանրապետության բարգավաճման համար»։

Այդ անամոթ ստից զայրացած, ժոզեֆ Բոնապարտը պահանջեց, որ պապն անհապաղ պատժի մեղավորներին, սպառնալով Հռոմից հեռանալ։ Պատասխան չստանալով, նա դեսպանության ամբողջ անձնակազմի հետ քաղաքից մեկնեց։

Շուտով ֆրանսիական զորքերը գեներալ Բերտյեի գլխավորությամբ հաղթականորեն մտան Հռոմ։ Իզուր էր սուրբ Հայրը նորից դիմում մադոննաներին ու սրբերին, ոչինչ չօգնեց. իտալացիներն ամենուր եղբայրանում էին ֆրանսիացի զինվորների հետ։

Քաղաքի դարպասների մոտ քաղաքացիների պատվիրակությունը գեներալ Բերտյեին ողջունեց որպես ազատարարի և նրան հայտնեց, որ Հռոմում ազատություն է հռչակված։ Բերտյեն քաղաք մտավ Հռոմեացիների բուռն ծափահարությունների ներքո, ամբոխը գոչում էր. «Կեցցե՛ հանրապետությունը»։

Մոտենալով Կապիտոլիումին, գեներալը կանգ առավ և բարձրաձայն գոչեց. «Կատո՛ն, Պոմպեո՛ս, Կիկերո՛ն, Բրուտո՛ս, ազատ ֆրան-

*սիացիները ձեզ ողջունում են Կապիտոլիումում, որտեղ դուք այնքան հաճախ պաշտպանել եք ժողովուրդների իրավունքները և փառավորել Հռոմեական հանրապետությունը։ Գալլերի զավակները խաղաղության ձիթենու ճյուղով հռչակավոր բլուրն են եկել նրա համար, որ այստեղ պանգնեցնեն աղատության կոթողը։ Իսկ դուք, հռոմեացինե՛ր, որ նվաճել եք ձեր օրինական իրավունքները, հիշեցեք փառապանծ նախնիներին, նայեցեք ձեր շուրջը գտնվող սրբազան հուշարձաններին և վեթաղարձրեք ձեր հայրերի երբեմնի վեհությունը»։*

*Ցնծությամբ ընդունված ճառից հետո, Բերտյեն վերադարձավ իր ճամբարը։*

*Սան-սափհար Պիոս VI-ը պատսպարվեց Վատիկանի պալատում։ Նա խաղաղ բանակցությունների համար գեներալ Բերտյեի մոտ ուղարկեց իր ամենաընտրյալ պալատականներին։ Բերտյեն հրաժարվեց դեսպաններին ընդունել և կարգադրեց հայտնել, թե չի ճանաչում պապի հեղինակությունը և սպասում է Հռոմեական հանրապետության պատվիրակներին։*

*Հռոմի քաղաքացիները, հույս դնելով Ֆրանսիայի պաշտպանության վրա, դեմոկրատական կառավարություն ստեղծեցին։ Նրանք կնքեցին թանգարանները, հասարակական վայրերը և այն բոլոր թանկարժեք առարկաները, որ զարդարում էին եկեղեցիները, որպեսզի դրանք փրկեն ագահ սուրբ հորից։ Շատ կարդինալների վռնդեցին Հռոմից, առավել մեղավորներին՝ բանտ նստեցրին։*

*Ինչ վերաբերում է իրեն՝ քահանայապետին և նրա երկու որդիներին, ապա ժողովուրդը, բռնակալների նկատմամբ մեծահոգություն ցուցաբերելով, նրանց կյանքի դեմ ձեռք չբարձրացրեց, այլ խլեց միայն նրանց մնացած հարստությունը։*

*Պապի աղջկա նկատմամբ ավելի ներողամիտ եղան. կառավարությունը ձեռք չտվեց նրա՝ հորից սաացած նվերների մեծ մասին։ Պապի աղջկան ուղարկեցին Տիվոլի, որտեղ նրան սփոփում էին նրա բազմաթիվ երկրպագուները, փոխարինելով Հռոմում մնացած սիրեկաններին։ Նրանցից մեկը միաժամանակ և՛ եղբայր էր, և՛ ամուսին, իսկ մյուսը՝ և՛ հայր, և՛ քրիստոնեական աշխարհի մեծ ղեկավար։*

## ՍԵՐ ԵՎ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ նոր կառավարությունը Պիոս VI-ին հայտնեց, թե նա զրկվում է աշխարհիկ իշխանությունից, ծերուկը լրիվ հուսահատության մեջ ընկավ։

Հանրապետության ներկայացուցիչները լուռ սպասում էին, թե քահանայապետը երբ ուշքի կգա։ Վերջապես սուրբ Հայրը կարծես իրեն գտավ և սկսեց ինչ-որ անկապ բաներ մրմնջալ։ Ըստ երևույթին, նրա տկար մարմնի համար հարվածը շատ ուժեղ էր, և Պիոս VI-ը խելքը կորցրեց։

Բայց պատվիրակներն իրենց պարտքը համարեցին մինչև վերջ կատարել հանձնարարությունը։ Նրանք պապին հայտնեցին, թե նա մնում է որպես եկեղեցու գերագույն տեր, նրան կտրվեն իր դիրքին համապատասխան ապրուստի միջոցներ, և կառավարությունը նրա պահպանության համար առանձնացնում է հարյուր քսան մարդուց բաղկացած պահակախումբ, թեև նրա անձին ոչ մի վտանգ չէր սպառնում։

Այս բառերը լսելով Պիոս VI-ը նկատելիորեն աշխուժացավ և բացականչեց, տարօրինակորեն ժպտալով. «Ուրեմն ես դեռևս պա՞պ եմ»։

Այն մտքից, թե ամեն ինչ կործանված չէ և նա դեռ կարող է վերականգնել իր անսահմանափակ իշխանությունը, քահանայապետի խելքը որոշ չափով պայծառացավ։

Ոչ մի րոպե չկորցնելով, նա ձեռնամուխ եղավ մի նոր հրեշավոր դավադրության, նպատակ ունենալով ոչնչացնել բոլոր ֆրանսիացիներին և Հռոմեական հանրապետության կողմնակիցներին։

Բարեբախտաբար, այդ պլանը բացահայտվեց, և սուրբ Հորը կառք նստեցրին և ուղարկեցին Սիենայի սուրբ Օգոստոսի վանքը, այնուհետև՝ Ֆլորենցիա, որտեղ նա մնաց գրեթե մեկ տարի։

Սակայն ո՛չ զառամյալ հասակը, ո՛չ դավադրության ձախողումը չխանգարեցին Պիոս VI-ին վերսկսել իր հանցագործ արարքները։ Նրան նորից հաջողվեց Հռոմում անկարգություններ հրահրել։ Քաղաքում նորից սկսեցին հանցագործների հրոսակախմբեր շրջել, որոնց ղեկավարում էին քահանաները։ Հանցագործները «սրբազան» դաշույններով խոցում էին ճանապարհին հանդիպած ֆրանսիացիներին։ Հռոմեացի հանրապետականներից շատերին կապկպում էին և նետում Տիբրոս գետը։ Դեռ հայտնի չէ, թե ուր կհասնեին սուրբ ավազակները, եթե գըլ-

խավոր խառնակիչները չբռնվեին։ Ավազակները ցրվեցին Հռոմի շրջակայքում և վեց հազար մարդուց բաղկացած չոկատ կազմակերպեցին։ Ֆրանսիացիների հետ առաջին իսկ ընդհարման ժամանակ չոկատը չախչախվեց, և ավազակները դես ու դեն փախան։

Պապն օգտագործեց Նեապոլի թագավոր Ֆերդինանդ IV-ի ու նրա կնոջ վրա ունեցած իր ազդեցությունը և նրանց ստիպեց ֆրանսիացիներին պատերազմ հայտարարել։ Հռոմը, որտեղ արդեն զորքեր չկային, չդիմացավ նեապոլցիների հարձակմանը։ Երջանիկ պապը երազում էր հաղթականորեն վերադառնալ իր մայրաքաղաքը, երբ ֆրանսիական բանակը եռանդուն հարձակում սկսեց և թագավորական զորքերին ետ շպրտեց մինչև Նեապոլ։

Ֆերդինանդ IV-ը զահընկեց արվեց։ Նեապոլում հանրապետություն հռչակվեց, որ գոյություն ունեցավ մի քանի շաբաթ։ Բայց Կալաբրիայի գյուղական ծեծկված, տգետ բնակչությունը, որին գրգռում էին պապի գործակալները, անցավ Ֆերդինանդի կողմը։ Ֆրանսիացիները և նեապոլցի հայրենասերներն ստիպված էին անձնատուր լինել։ Ճիշտ է, նրանք զենքը վայր դրին միայն այն բանից հետո, երբ Ֆերդինանդը հաստատ խոստացավ պահպանել նրանց կյանքն ու կայքը։ Բայց հենց որ թագավորական բանակը քաղաք մտավ, սուրբ Հոր գլխավոր գործակալներից մեկը, կարդինալ Ռուֆոն կարգադրեց ձերբակալել այն բոլոր քաղաքացիներին, որ կասկածվում էին հանրապետությանը համակրելու մեջ։

Ջտեքնված դավաճանության դժբախտ զոհերը կանգնեցին հատուկ տրիբունալի առաջ և բոլորն անխտիր մահվան դատապարտվեցին։ Դատավճիռներն ի կատար էին ածվում շտապ կարգով, ամեն օր սպանում էին հանրապետության հարյուրավոր կողմնակիցների։ Հանուն կրոնի և հոգու փրկության, չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, կալաբրիացիները հրդեհեցին ու կողոպտեցին բազմաթիվ նեապոլցիների տներ։

Պիոս VI-ը կարծում էր, որ պապության թշնամիները վերջնականորեն և անվերադարձ ջախջախված են, և բոլոր կաթոլիկ եպիսկոպոսներին հայտնեց, թե ինքը վերստին օժտված է աշխարհիկ լիիշխանությամբ և հաղթականորեն վերադառնում է Հռոմ։

Իր ուրախությունը նա ցանկացավ կիսել իր սիրելի որդու հետ։ Իմանալով, որ հայրը տակավին մեծ հարստության տեր է, սիրեցյալ երիտասարդը հայտնվեց ճիշտ ժամանակին, որպեսզի զավթի ունեց-

վածքը և փախչի այն իսկ պահին, երբ Դիրեկտորիան որոշում ընդունեց կամակոր ծերուկին Ֆրանսիա տեղափոխել։

Պիոս VI-ին տարան Վալանս, որտեղ նրա հետ վարվում էին մեծ, թեև բոլորովին անտեղի, հարգանքով։ Ոչինչ չէր կարող սփոփել պապին, որը վերապրում էր իր երկրպագած սիրեկանի դավաճանությունը և խոր մելամաղձոտության էր մատնվել։ Միաժամանակ իրենց զգալ տվին անառակ և ցոփ կյանքի տարիները. ամեն ինչից երևում էր, որ վախճանը մոտ է։ Կաթվածահար լինելով, նա մեռավ 1799 թվ. օգոստոսի 29-ին։

## ԲՈՆԱՊԱՐՏԸ ԵՎ ՊԻՈՍ VII-Ը

Բոնապարտը, կատարելով բյումերի 18-ի հեղաշրջումը, շտապեց վերականգնել պապական իշխանությունը, քանի որ շահագրգռված էր եկեղեցու օգնության մեջ։ Հեղաշրջումից քսան օր անց երեսունհինգ կարդինալներ հավաքվեցին Վենետիկում, երեքուկես ամիս տևած բուռն վիճաբանություններից հետո 1800 թվի մարտին պապ դարձավ Պիոս VII-ը։

Ընտրությունից անմիջապես հետո սուրբ Հոր և առաջին կոնսուլի միջև գժտություն ծագեց այն պատճառով, որ Պրովանսի կոմսին հայտնելով իր ընտրության մասին, Պիոս VII-ը այդ կոմսին Ֆրանսիայի թագավորի տիտղոս էր պարգևել։ Այն ժամանակ Բոնապարտն իր բանակով անցավ Ալպերը։

Մահու չափ սարսափած Պիոս VII-ը մի խոնարհ նամակ ուղարկեց, որի մեջ ձևակերպված էին այն համաձայնագրի մի շարք պայմաններ, որ ստորագրվեց 1801 թվի հուլիսի 15-ին։

Այդ համաձայնագիրը կաթոլիկական ռեակցիայի նոր ալիք առաջացրեց։

Մենք մտադիր չենք հանգամանորեն պատմել Պիոս VII-ի և Բոնապարտի միջև եղած բոլոր ընդհարումների մասին։ Նշենք միայն, որ ի պատասխան կայսեր այն դեկրետի, ըստ որի պապական հողերը միացվում էին Ֆրանսիային, գաղազած քահանայապետը փորձեց հակառակորդի վրա տեղալ ավանդական առաքելական շանթ ու որոտ։ Նա հանդես եկավ մի կոնդակով, որով Նապոլեոնը վտարվում էր եկեղեցուց։ Սակայն այդ սպառնալիքներն այլևս ոչ ոքի վրա տպավորու-

թյուն չէին գործում։ Բայց բանը դրանով չվերջացավ, Պիոս VII-ին բռնությամբ դուրս բերին Հռոմի պալատից և աքսորեցին Սավոյա։

Ռուսաստանում ֆրանսիացիների կրած պարտությունից հետո Նապոլեոնը պապին առաջարկեց նոր համաձայնագիր, որը հանդիսավորապես ստորագրվեց 1813 թվի հունվարի 13-ին։ Այդ առթիվ վիթխարի տոնախմբություններ սարքվեցին, և, չնայած որ բանադրանքը տակավին չէր վերացված, Պիոս VII-ը համբուրեց Նապոլեոնին, ժողովրդին և բարձրաստիճան պաշտոնյաներին ցուցադրելով իր ջերմ բարեկամությունը նրա հետ։ Բայց հենց որ տոնական ներկայացումն ավարտվեց, գժտությունները վերսկսվեցին։

Քահանայապետը ղջաց, որ զիջել է Բոնապարտին, և համաձայնագիրը չեղյալ հայտարարեց։

Ահա մի հատված այն նամակից, որ նա ուղարկել է Նապոլեոնին, համաձայնագիրը ստորագրելուց երկու ամիս հետո.

«Խավարի ոգին, սատանան է իմ ականջին փսփսացել այդ համաձայնագրի հոդվածները... Ամենադառն ղջումը, ամենասարսափելի խղճի խայթը քրքրում են իմ հոգին, որն այն օրից սկսած ո՛չ դադար ունի՛, ո՛չ հանգիստ։

Ես հրաժարվում եմ իմ խոստումներից, ինչպես Պասքալիս II-ը հրաժարվել է Գերմանիայի կայսր Հենրիխ V-ին տված խոստումներից, և հայտարարում եմ, որ ոչ մի պայման չեմ ընդունի, մինչև որ նորից չեն վերականգնվի իմ բոլոր հոգևոր ու աշխարհիկ իրավունքները...»։

Սակայն ոչ մի առարկություն չհանդուրժող Բոնապարտը հաստատեց համաձայնագիրը։ Նա սուրբ հոր դեմ ավելի վճռական միջոցների կդիմեր, եթե ավելի լուրջ հոգսեր չունենար. կայսրը ստիպված էր պաշտպանվել մի քանի միապետներից, որ նորից էին միավորվել նրա դեմ։

Վերջապես հսկան ընկավ։ Պրուսական կառեթները Բուրբոններին ետ բերին Ֆրանսիա, և Լյուդովիկոս XVIII-ը օրինական թագավոր դարձավ։ Այնժամ Պիոս VII-ը սկսեց վրեժ լուծել տապալված կայսեր պատճառած բոլոր վիրավորանքների համար։ Նա վրեժ էր լուծում որպես իսկական պապ՝ ամենագազանային, դավաճանական ու վախկոտ ձևով։

Այն հռոմեացիներին, որոնց կասկածում էին պապական բացարձակապետությանը հավանություն չտալու մեջ, տաժանակրության, թիապարտության կամ մահապատժի դատապարտեցին։ Քահանաները կրոնական ֆանատիկոսներին «սրբազան» դաշույններ էին բաժանում, սո-

վորեցնում դրանցով խոցել հերետիկոսներին, նկատի ունենալով հանրապետականներին, ազատամիտներին և նույնիսկ՝ հրեաներին։ Այդ ճիվաղների գազանային կատաղությունն այնտեղ հասավ, որ պապին խնդրեցին թույլ տալ «տապակած հրեա ճաշակել»։ Եվ նրանք, իհարկե, ոչնչի առաջ կանգ չէին առնի, եթե չմիջամտեին արտասահմանյան դեսպանները։

Հրեաներին, ճիշտ է, չկերան, բայց դրա փոխարեն սուրբ հայրը բռնագրավեց նրանց ամբողջ ունեցվածքը, դրամը, արժեքավոր իրերը, անշարժ գույքը և, բացի դրանցից, սկսեց նրանց խեղդել հարկերով։

Դրանից անմիջապես հետո Պիոս VII-ը վերականգնեց Հիսուսի ընկերությունը։ Այդ ժամանակ Լյուդովիկոսը խայտառակորեն ծլկեց Բոնապարտից, որը հեռացել էր էլբայից և ափ իջել Ֆրանսիայում։ Նապոլեոնը հաղթականորեն մտավ Փարիզ, որտեղ նրան մնում էր միայն դրավել վախկոտ Բուրբոնի լքած գահը։

Իմանալով այդ մասին, սաստիկ վախեցած Պիոս VII-ը հապշտապ թողեց Հռոմը և թաքնվեց Ճենովայում։ Նա մայրաքաղաք վերադարձավ միայն այն ժամանակ, երբ անգլիացիները վերջնականորեն ջախջախեցին կայսրին։ Վերադառնալով Հռոմ, պապն անմիջապես ողջունեց Լյուդովիկոս XVIII-ին և նրան խնդրեց ճիզվիտներին թույլատրել Ֆրանսիա վերադառնալ։ Թագավորը թույլ տվեց, և Լոյոլայի որդիներն այնտեղ նորից բացեցին իրենց բազմաթիվ կոլեջները։

Քահանայապետը կարողացավ նաև ետ ստանալ Ֆրանսիայում Նապոլեոնի գրաված պապական պրովինցիաները և արվեստի շատ գործեր, որ տարվել էին Հռոմի թանգարաններից։ Նա Լյուդովիկոսին ստիպեց ստորագրել նոր համաձայնագիր՝ Լևոն X-ի և Ֆրանցիսկ I-ի միջև կնքված պայմանագրի ձևով։

Ուրախացած եկեղեցու ավագ որդու հնազանդությամբ, Պիոս VII-ը մտադրվեց ամբողջ Եվրոպայում վերականգնել չարագուշակ ռևակցիան։

Նա նղովում էր բոլոր երկրների ազատամիտներին, հալածում անկախ գրողներին։

1828 թվին պապն անսպասելիորեն վայր ընկավ իր սենյակում և աղդրը կոտրեց։ Եթե այդպիսի փորձանք պատահեր մի որևէ ազատամիտի, կաթոլիկները չէին հապաղի դա աստծո պատիժ համարել։

Պիոս VII-ը հրավիրեց ամենից հմուտ բժիշկներին, հրաժարվելով այն հրաշագործ միջոցներից, որ եկեղեցականներն այնքան եռանդով հանձնարարում են իրենց պարզամիտ հոտին։ Բայց տվյալ դեպ-

քում գիտությունը նույնքան անզոր էր, որքան և հրաշագործ մասունքները, և Հիսուս Քրիստոսի տեղապահը վախճանվեց կյանքի ութսունմեկերորդ տարում։ Տարիքը հարգարժան էր, մի բան, որ չէր կարելի ասել իր՝ պապի մասին...

## ԵՐԲ ՍԱՏԱՆԱՆ ԾԵՐԱՆՈՒՄ Է

Կարդինալ Անիբալե դելա Ջենգան վաթսուներեք տարեկան էր, երբ հաջորդեց Պիոս VII-ին։ Նա այնպիսի մարդու տեսք ուներ, որ այլևս երկար չի ապրելու։ Հավանաբար, Վեննայինն, ինչպես և Մարսին ծառայելու տարիները կրկնակի են ծերացնում։ Բայց այսպես թե այնպես, նա առաքելական գահը զբաղեցրեց հինգ տարի, չարդարացնելով կարդինալների վարդագույն հույսերը։

Հոգևոր ասպարեզ մտնելով շատ վաղ, նա արագորեն բարձր աստիճանների էր հասել, որին քիչ չէին նպաստել աղդեցիկ պրելատների սիրուհիների, և հատկապես Պիոս VI-ի աղջիկների հետ ունեցած սիրային արկածները։

Պիոս VII-ի օրոք նա Ֆրանսիայում հավատարմագրվել էր որպես նունցիա նախ Նապոլեոնի, ապա Լյուդովիկոս XVIII-ի աչքունիքում։ Իտալիա վերադառնալով, նա սկսել էր ջանասիրաբար վերականգնել բարբարոսական սովորությունները, օրինակ, նորից գործի դրեց կատարելագործված խոշտանգումները։

Այսպիսին էր այն մարդը, որը 1823 թվին պապ դարձավ Լևոն XII անունով։

Ընտրությունից շատ չանցած նա ծանր հիվանդացավ հուրախություն այն կարդինալների, որ նրա տեղի վրա աչք ունեին։ Սակայն նրանց հույսերը չարդարացան. պապն ապաքինվեց։

Իր ապաքինումը նշանավորելու համար պապը դեկրետով մեղքերի համընդհանուր թողություն տվեց և հրապարակեց աղատամիտ գաղափարների դեմ ուղղված մի էնցիկլիկա։

Այդ պարզամիտ ծերունին նման էր այն խխունջին, որն ուզում է կանգնեցնել շոգեկառքը։ Սուրբ Հայրը չսահմանափակվեց փիլիսոփաներով, կատաղորեն հարձակվեց աստվածաշնչի ընկերությունների վրա, որ ստեղծվել էին Աստվածաշունչը պրոպագանդելու և նրա գոհհկացման դեմ պայքարելու համար։

Ձգտելով վերականգնել եկեղեցու երբեմնի իշխանությունը, Լևոն XII-ը ղգաց, որ իրեն հավատարիմ օգնականներ են պետք։ Միանգամայն բնական է, որ նա դիմեց Ճիզվիտներին, նրանց վրա շնորհներ տեղաց, վանքեր, հողեր, կոլեջներ պարգևեց, մենաշնորհյալ իրավունք վերապահեց լուսավորության գործերում։

Վարչական եռանդով համակված, նա մի շարք դեկրետներ հրապարակեց հագուստի, տների կահավորման, կառքերի, դիմակահանդեսների և ներկայացումների վերաբերյալ։ Այդ ծերուկը, որի երիտասարդությունը բնավ աչքի չէր ընկել առաքինությամբ, ծառս եղավ ամեն տեսակ աշխարհիկ զվարճությունների դեմ, որոնք տարիքի բերումով նրա համար արդեն անմատչելի էին։

Հռոմն անճանաչելի դարձավ։ Կրոնական թափորներ ու հանդիսություններ, եկեղեցական զանգերի ղողանջներ ու պատարագի երգասացություն՝ ահա հիմա ինչպիսին էր քաղաքի կյանքը։ Դամաներին արգելվեց պճնագեղորեն հագնվել, թափանցիկ կտորներ գործածել և կիսշորեր կրել։

Ջարիքը բնում խեղդելու համար սուրբ Հայրը բանադրման սպառնալիքով դերձակուհիներին արգելեց լանջաբացվածք ունեցող շորեր կարել։

Դրա հետ միասին պապը հույժ տարօրինակ ներողամտություն ցուցաբերեց գողության, սպանությունների նկատմամբ։ Նա լկտիություն ունեցավ առաքելական գանձարանը լցնելու նպատակով վերականգնել այն հատուկ գնացուցակը, ըստ որի հարուստ սրիկաները կարող էին անպատիժ կերպով զավթելագույն հանցանքներ կատարել։

Երբ որոշ կարդինալներ դիտողություն արին, թե հանցագործությունների այդ ցինիկ օրինականացումը պապության հշնամիների ձեռքը զենք է տալիս, Լևոն XII-ը պատասխանեց. «Մի՛ անհանգստացեք, մենք գրողներին խելք կսովորեցնենք։ Այսօր կրոնի օգնությամբ փող կհավաքեմ, որպեսզի վաղը փողով կառուցեմ կրոնը»։

Ճիզվիտները սաստիկ սատարում էին կաթոլիկական ռեակցիան։ Ֆրանսիայում որոշ չափով կաշկանդված լինելով սահմանադրական օրենքներով, նրանք բարգավաճում էին Իսպանիայում, որտեղ Ֆերդինանդ VII-ի վերադարձից հետո իննկիզիցիան վերականգնվել էր։ 1826 թվի սկզբին Ճիզվիտները խարույկի վրա այրեցին մի դժբախտ հրեայի, մահապատժին տալով ճիշտ այնպիսի հանդիսավորություն, ինչպես Տորկվեմադայի օրոք։ Լևոն XII-ն ինդուլգենցիա շնորհեց բոլոր նրանց, ով մասնակցել կամ նույնիսկ ներկա էր եղել այդ գազանությանը։

Այդ առթիվ հրապարակված կոնդակը պարունակում էր հետևյալ միանգամայն անհավատալի դեկլարացիան. «Հրադատության ժամանակ կաթոլիկների ներկա լինելը հավասարեցվում է հարյուր եկեղեցում հարյուր պատարագի ներկա լինելուն»։

Ֆրանսիայում, որտեղ ճիզվիտները տեռորի դիմելու հնարավորություն չունեին, նրանք իրենց ամբողջ ուշադրությունը նվիրեցին կրթությանը։

Նրանք նույնիսկ փորձեցին այդ գործն ամբողջովին իրենց ձեռքն առնել, բայց դրան դիմադրեց պատգամավորների պալատը։ Ընդունվեց մի որոշում, որի համաձայն բարեպաշտ հայրերի բոլոր կոլեջները ենթարկվում էին համալսարանական կանոններին։ Ոչ ոք չէր կարող ուսումնական հաստատություններում դասավանդելու իրավունք ստանալ, եթե իր պետը չհավաստեր, որ նա որևէ կրոնական կոնգրեգացիայի հետ կապ չունի։

Լոյոլայի որդիներին մխիթարելու նպատակով Լևոն XII-ը դիմեց Կառլոս X-ին, նրան խստիվ սաստելով թուլության համար և պահանջելով կառավարական միջոցառումների դիմել ի պաշտպանություն եկեղեցու։ Դա միանգամայն համապատասխանում էր կեղծ բարեպաշտ միապետի ձգտումների ու ակնկալությունների ոգուն։ Բայց սուրբ հայրն այլևս չտեսավ, թե ինչպես էին կենսագործվում իր կարգադրությունները. կարճատև հիվանդությունից հետո նա վախճանվեց 1829 թվի փետրվարի 10-ին։

## ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՄԻՋՆԱԴԱՐ

Պիոս VIII-ը շարունակում էր իր նախորդի քաղաքականությունը. նա բոլոր եպիսկոպոսներին դիմեց մի շրջաբերական նամակով, որի մեջ խրախուսում էր հանրապետական, հատկապես եկեղեցու նկատմամբ թշնամաբար տրամադրված գրողների դեմ մղվող ամեն մի պայքար։ «Պատվելի եղբայրք իմ,— դրում էր քահանայապետը,— հարկավոր է ի հայտ բերել վտանգավոր սոփեստներին, նրանց մասին հայտնել տրիբունալներին, նրանց հանձնել ինկվիզիտորների ձեռքը, որպեսզի նրանք խոշտանգումների շնորհիվ վերհիշեն ճշմարիտ դավանանքը»։

Պիոս VIII-ը բավականությամբ էր հետևում այն հալածանքներին, որոնց ենթարկվում էին աղատամիտները Իտալիայում. Պորտուգա-

լիայում, Իսպանիայում, Գերմանիայում, ընդհակառակը, նրա պահանջների նկատմամբ խուլ մնացին. գերմանացի իշխաններն ու միապետները բացեիբաց հայտարարեցին, թե հոգևոր իշխանությունն ամբողջապես ենթարկվում է աշխարհիկ իշխանությանը։

Եվ սուրբ Հայրը չհամարձակվեց Գերմանիայի բնակչությանը գրգռել նրա տերերի դեմ։

Ֆրանսիայում Կառլոս X-ը, որ գտնվում էր դաղտնի խորհրդի աղդեցության տակ, ձգտում էր ամեն ինչով նմանվել դաժան Ֆերդինանդ VII Իսպանացուն, որը հարուցյուն էր տվել ազատվածասպանցների ու սրբապիղծների դեմ ուղղված հինավուրց հրամաններին։ Եվ չնայած որ Ֆրանսիայի թագավորի իշխանությունը սահմանափակ էր, նա իր զավրելի խորհրդականների հետ հրապարակեց 1830 թվի հայտնի Հուլիսյան օրդոնանսները։

Բռնկվեց հեղափոխություն, բայց, ինչպես հայտնի է, նվաճված աղատությունը օդտակար եղավ բուրժուազիային։ Նրա կողմից դահի վրա դրված Լուի-Ֆիլիպը շտապեց պապին հավաստել իր հնազանդությունն ու հարգանքը։ Նախքան «բարիկադների թագավորին» ճանաչելը, Պիոս VIII-ը ստիպեց իրեն երկար խնդրել։ Վերջապես իր վրա ուժ գործ դնելով համաձայնվեց, բայց շուտով հոգին ավանդեց և նրան փոխարինեց Գրիգոր XVI-ը։ Դեռևս կարդինալ եղած ժամանակ նոր պապը մի սափրիչի հետ ամուսնացրել էր իր սիրուհուն, որից յոթ երեխա ուներ։ Սափրիչին վարձահատույց լինելու և սիրուհու հետ հանդիպելու հնարավորություն ունենալու համար պապը նրա ամուսնուն պալատում կարդինալական ռոճիկով պաշտոն տվեց։

Ընտրվելուց առաջ Գրիգոր XVI-ը, որ մարմնական հաճույքների նկատմամբ մեծ սեր ուներ, ասես իր ողջ էությամբ նվիրվել էր աստծուն։ Սակայն, գահ բարձրանալով, նա նորից սկսեց իր սովորական կյանքը։ Ճիշտ է, զառամյալ տարիքի պատճառով գաստրոնոմիական ուղեխուճյունները նրա կյանքում ավելի շատ տեղ էին գրավում, քան սիրային հաճույքները։

Լափում էր այն աստիճան, որ հաճախ նրան ճաշասարահից դուրս էին բերում ձեռքերի վրա։

Անհավատության ու անաստվածության ոգին օրեցօր ավելի էր տարածվում Իտալիայում։ Այդ ժամանակ Գրիգորը ճիզվիտներին հանձնարարեց հանուն կաթոլիկության եկեղեցական խաղաղ արշավ կազմակերպել։ Լոյոլայի որդիները վազվզում էին գյուղից գյուղ, խաչէր կանգնեցնում, քարողներ կարդում, մի խոսքով ամեն կերպ ջանում էին

կրոնական մոլեռանդություն բորբոքել։ Նրանք լկտիություն ունեցան մադոննաներին ու սրբերին նորից ստիպելու, որ հրաշքներ գործեն։ Շուտով պասկական հողերում ոչ մի գյուղական եկեղեցի չմնաց, ուր որևէ մեքենայացված հրաշք չլիներ։ Մի մատուռում աստվածամայրն արցունքներ էր թափում, մյուսում Քրիստոսը արյունաքամ էր լինում, երրորդում առաքյալը բարձրացնում էր ձեռքերը և շարժում գլուխը։ Երբ սպառվեց երկնային թագավորության բնակիչների խաղացանկը, ճիզվիտներն անցան կենդանիների շնչավորմանը։

Սուրբ Հոգուն կարելի էր տեսնել աղավնու, սուրբ Պետրոսի աքլորի կերպարանքով, որը կանչում էր այնքան բնական ձայնով, որ կարելի էր գյուղական աքլորի տեղ դնել։ Կարելի էր տեսնել Բեթլեհեմի էշ և այլ կենդանիներ, որոնք զռում էին, բառաչում, մռնչում ու հաչում։

Սկզբում ամեն ինչ լավ էր ընթանում։ Ճիզվիտները հաջողությամբ էին կատարում կրոնական պրոպագանդան. սարքում էին հրաշագործ առարկաներ, բարձր գնով ծախում քահանաներին, իսկ սրանք էլ իրենց հնրթին վնաս չէին կրում, վիթխարի եկամուտ ստանալով այդ մեքենայացված բուտաֆորիայից։ Սակայն շուտով մրցակցությունը մահացու հարված հասցրեց արդյունաբերության այդ ճյուղին, որ ծաղկում էր մի կողմից տգիտության ու սնոտիապաշտության, մյուս կողմից խարդախության. շնորհիվ։

Ահա թե ինչ կատարվեց։

Յուրաքանչյուր ծուխ ուներ Հիսուսի ընկերությունից ստացած իր հրաշքը։ Եվ հավատացյալները ցանկացան տեսնել հարևան եկեղեցիներին պատկանող մադոննաներին, սրբերին, գազաններին։ Քահանաները, բնականաբար խոչընդոտում էին, չցանկանալով, որ ծխականների նվերներն անցնեն մրցակիցների ձեռքը։ Եկեղեցու յուրաքանչյուր սպասավոր ջանում էր վարկաբեկել մրցակցի հրաշքները, և կատաղի պատերազմ բռնկվեց։ Ծխականները, իհարկե, պաշտպանում էին իրենց հովիվներին, և Պապական մարզի բոլոր գյուղերում մոլեռանդների իսկական ջոկատներ կազմակերպվեցին։ Նրանց կրոնական մոլագարությունը չէր կարող արյունահեղ ընդհարումների պատճառ չդառնալ։

Երբ եկեղեցական թափորները հանդիպում էին ծխերի սահմանագլխին, քահանաները բարձրաձայն հայհոյում էին իրար։ Յուրաքանչյուրը գովաբանում էր իր հրաշագործներին, չափազանցնելով նրանց կախարդական ընդունակությունները և հակառակորդներին անարգելով կոպիտ հայհոյանքներով։ Կռիվը բորբոքվում էր։ Քահանաները, եկեղե-

ցական պահակները, երգասացները, երգչախմբերի երեխաները, մոնթե-րը և հավատացյալները գազազած միմյանց վրա էին նետվում և կռվում այնքան, մինչև որ կհաղթեր կողմերից մեկը։ Այդ ճակատա-մարտերում խաչելությունները, մոմակալներն ու բուրվառները հա-ճախ մահացու զենքեր էին դառնում։

Սրտի խորին ցավով պապը ստիպված եղավ արդելել հրաշագործ կուռքերի ցուցադրումը։

Ճիզվիտները սաստիկ սրտնեղեցին այդ եկամտաբեր ձեռնարկու-թյան վերացման համար։ Իտալիայում ապատամտության դրսևորում-ներին վերջ տալու նպատակով նրանք որոշեցին դիմել ամենադաժան միջոցների։ Կոնֆերանս գումարվեց, որտեղ Հիսուսի ընկերության գե-ներալը ճառ արտասանեց, ժամանակակից հասարակությանը իսկա-կան պատերազմ հայտարարելով։

«Մեր դարը, իսկապես, աչքի է ընկնում շատ տարօրինակ փափ-կությամբ,— բացականչեց նա։— Մի՞թե մարդիկ կարծում են, թե խարույկների մոխիրը վերջնականապես հանգել է և այնտեղ չի դոնվի ոչ մի ածխիկ, որից կբոցավառվի ջահը։ Խելառնե՜ր։ Մեզ ճիզվիտներ անվանելով, նրանք ուղում են մեզ խայտառակել։ Իմացե՛ք, ճիզվիտ-ները ձեզ համար նոր պատիժներ ու տանջանքներ են նյութում... Կգա օրը և մե՛նք կլինենք ժողովուրդների տերն ու տիրակալը»։

Իտալացիները պապի ռեակցիոն քաղաքականության նոր ապա-ցույցների կարիք չունեին։ Նա ձգտում էր պատմությունը դեպի ետ դարձնել և վերակենդանացնել միջնադարյան բարբարոսության նախները։

Պապությունը, այդ արգահատելի համընդհանուր թշնամուն, բո-լոր աղետների սկզբնապատճառին տապալելու համար հասարակու-թյան բոլոր դասակարգերը՝ բուրժուազիան, բանվորները և նույնիսկ արիստոկրատիան միավորվեցին։ Շատ քաղաքներում ապստամբու-թյուններ բռնկվեցին, և եթե չլիներ Ֆրանսիայի ու Ավստրիայի միջա-մտությունը, պապությանը վերջ կտրվեր։

Ճակատամարտը երկարատև էր և կատաղի։ Հոգևորականությունը անխնայ ֆանատիկոսներից և պատվազուրկ, անխիղճ ավազակներից միլիցիայի ջոկատներ էր կազմակերպում։ Միլիցիայի ջոկատ ընդուն-վելիս տրվում էր հետևյալ երդումը.

«Ես երդվում եմ չխնայել լիբերալների զազրելի կուսակցության անդամներից ոչ մեկին, կարեկցանք չցուցաբերել նրանց կանանց ու երեխաների լացի, ծերունիների հեծեծանքների նկատմամբ և թափել

նրանց սրյունը մինչև վերջին կաթիլը, չնայելով սեռին, տարիքին և հասարակական դիրքին»։

Այսպիսի երդում տալու ընդունակ մարդիկ կանգ չէին առնում ամենավայրագ գազանությունների առաջ։ Նրանք ավելի շուտ նման էին դահիճների ու լրտեսների, քան մարտիկների, բայց այնուամենայնիվ մեծ աջակցություն ցույց տվին Գրիգոր XVI-ին, երբ նա, ճնշելով շարժումը, դիմեց դաժան ռեպրեսիաների։ Ճիշտ է, ստեղծված հանգստությունը շատ անհուսալի էր և հենվում էր միայն վախի վրա։ Վերջապես մահն Իտալիան ազատեց բռնապետից, որը նրան ճզմում էր տասնհինգ տարի շարունակ։ Սուրբ Հայրը մեռավ 1846 թվի հունիսի 1-ին, մի ամբողջ ամիս տանջվելուց հետո։

Քահանայապետի մահից մի քանի օր առաջ սափրիչն իր կնոջ հետ փախավ Հռոմից։ Այդ արժանավոր զույգը շատ լավ գիտեր, թե ժողովուրդն ինչ վերաբերմունք ունի իր նկատմամբ, և հեռատեսորեն ջանաց թույլ չտալ, որ դա ի հայտ գա։ Բացի այն արժեքավոր իրերից, որ Գրիգորը նվիրել էր իր սիրուհուն, ամուսիններն հատուկ ֆուրգոնների վրա բարձեցին իրենց բնակարանը զարդարող եզակի կահույքը։ Ազատ ու երջանիկ նրանք ճանապարհ ընկան դեպի անծանոթ ափեր, որպեսզի այնտեղ վայելեն այն քաղցր հանգիստը, որը խարեխղճորեն վաստակել էին Քրիստոսի փոխանորդին ծառայելով։

## ՎԵՐՋԻՆ ՊԱՊԸ ՈՐՊԵՍ ԱՆՍՈՒՀՄԱՆԱՓԱԿ ՄԻԱՊԵՏ

Մենք մոտենում ենք ավարտին։ Եթե ցանկանայինք պատմել այն բոլոր գարշելիությունների մասին, որ վերագրվում են Պիոս IX-ին, ապա մի հաստափոր հատորն անգամ հերիք չէր անի։ Ուստի, մի կողմ թողնելով այն փաստերը, որ կարող են ստույգ չթվալ, կսահմանափակվենք նրանցով, որոնց անվիճելիությունը կասկած չի հարուցում։

Պիոսը գահ բարձրացավ 1846 թվի հունիսի 16-ին։ Թագադրության արարողությունն աչքի էր ընկնում մի առանձին շքեղությամբ։ Այն բանից հետո, երբ քահանայապետը կատարեց պատարագը, Սիքստինյան կապելլայի կրտսեր երգեցիկ հավորներն սկսեցին երգել հիմները, իսկ երկրորդ կարդինալ սարկավագը մոտեցավ Պիոս IX-ին և եռակի ծնրադրությունից հետո նրա գլխից վերցրեց խույրը։ Այնուհետև նույն արարո-

ղութեամբ նա պապի գլխին դրեց Նապոլեոնի նվիրած՝ թանկագին քարերից ճաճանչող խույրը, որը կես միլիոն ֆրանկ արժեր։

Քրիստոնեական հեզության այդ խորհրդանիշը սարքված է ոսկուց թավշից, իսկ նրան գոտևորող երեք պսակները շինված են շողակներից, զմրուխտից, շափյուղից և մարգարտից։ Խույրն ավարտվում է մի մեծարժեք խոշոր զմրուխտով և գոհարակուռ խաչով։ Արդարև, այդ գլխարկը շատ քիչ է նման քրիստոնեության հիմնադրի փշե պսակին։

Երեկոյան Հռոմի պալատները շողշողում էին հրավառության կրակներից, սուրբ Պետրոսի տաճարը լուսավորում էին քսան հազար ջահեր։

Ժողովուրդը ցնծության մեջ էր, քանզի հավատում էր, թե Պիոս IX-ին օսար չեն ալլատամիտ գաղափարները։ Հիասթափությունը վրա հասավ շատ շուտ։ Պիոս IX-ը ծնվել է 1790-ի մայիսի 13-ին Պապական մարզում։ Նրա երիտասարդությունը շատ անհանգիստ է եղել։ Նա մասոնական ժողովարանի անդամ էր և շատ առաջադեմ հայացքներ ուներ։ Ոչնչից չէր երևում, որ մի գեղեցիկ օր նա զենք կդառնա ճիզվիտների՝ ազատության ոխերիմ թշնամիների ձեռքին։

Պիոս IX-ը հռչակված էր նաև իր սիրային արկածներով, կանանց մեջ մշտապես հաջողություն ուներ։ Նույնիսկ պապական գվարդիայի համազգեստը փարաջայով փոխարինելուց հետո էլ նա չէր հրաժարվում աշխարհիկ հաճույքից։

1832 թվին Գրիգոր XVI-ը նրան եպիսկոպոս նշանակեց, իսկ 1840-ին՝ կարդինալ։ Աշխարհիկ հաջողությունները բնավ չէին խանգարում նրա հոգևոր կարիերային։

Անհոգ և այնքան էլ խելոք չլինելով, Պիոս IX-ը դյուրավ էր ազդեցության տակ ընկնում։ Նա դարձավ հլու խամաճիկ, որին քաշում էր՝ ի շահ ճիզվիտների և իր իսկ սեփական շահերի, կարդինալ Անտոնելին՝ «կարմիր պապը»։ Անտոնելին բացարձակապես ճնշում էր «սպիտակ պապ» Պիոսին։ Ի դեպ, Պիոս IX-ը սկզբում իրեն այնպես էր ներկայացնում, որ կարելի էր կարծել, թե գրեթե ազատամիտ մեկն է։ Դա բացատրվում էր նրանով, որ ճիզվիտները վտանգավոր էին համարում բացեիբաց շարունակել Գրիգոր XVI-ի ռեակցիոն քաղաքականությունը։

Սակայն մի քանի երկրորդական հրամանագրեր հրապարակելուց հետո լոյոլայի որդիները կարծեցին, թե դա արդեն բավական է, որ կարողանան նվաճել ժողովուրդների վստահությունը և, դիմակը դեն նետելով, ընթացան կղերական բռնապետության փորձված ճանապարհով։ Դա խուլ դժգոհություն առաջացրեց, նորից գաղտնի ընկերու-

*թյուններ կազմակերպվեցին, որոնց մեջ մտան իտալացի խիզախ հայրենասերները, որոնք երազում էին դեն նետել Ավստրիայի ու պապի կրկնակի լուծը։*

*Մենք չենք պատմի բռնակալների դեմ ճնշված ժողովրդի մղած հերոսական պայքարի մանրամասնությունները։ Այդ պայքարը, անկասկած, արդարության հաղթանակով կավարտվեր, եթե Ֆրանսիայի ռեակցիոն ուժերը 1849 թվին չսատարեին պապին, Հռոմ ուղարկելով մի ամբողջ բանակային կորպուս։ Ապրիլի 24-ին դիվիզիայի ավանդարդը գեներալ Ուդինոյի հրամանատարությամբ մոտեցավ Չիվիտա-Վեկիային։*

*Դրանից մի քանի ամիս առաջ Պիոս IX-ը գաղտնի հեռացել էր Հռոմից, որպեսզի չիատարի այն բարելավումները, որ իրենից պահանջում էին։ Նա քաղաքից փախավ աշխարհիկ մարդու հագուստով և կլոր գլխարկով, ավստրիական արքունիքի գործակալի հետ, որի կինը պապի սիրուհին էր։ Պապի հետ էր նաև ծառայապետը, որը Հռոմից տանում էր կնիքը, ծիսարանը, սրբազան մաշիկները և այն ոսկե մեդալների տուփիկը, որոնց վրա փորագրված էր պապի պատկերը։ Չէին մոռացել նաև ոսկի վերցնել։*

*Երեք ուղևորներն առանց որևէ դժվարության դուրս եկան հավիտենական քաղաքից։ Չիվիտա-Վեկիայի ճանապարհին, նախապես պայմանավորված վայրում, նրանց պետք է սպասեր մի այլ կառեթ։ Երբ նրանք մոտեցան այդ վայրին, կառեթը դեռ չէր եկել։ Հենց այդ ժամանակ ճանապարհով անցնում էր կարաբինակիրների մի ջոկատ, և Պիոս IX-ը մտածեց, թե ամեն ինչ կորած է։ Մեջքը դեպի ջոկատն արած, նա սկսեց աղոթք մրմնջալ, օգնության կանչելով բարեգութ աստվածամորը, որի նկատմամբ թերևս դեռ այն ժամանակ սրտահույզ հարգանք էր տածում (պատահական չէ, որ մի քանի տարի հետո նա հռչակեց անարատ հղիության նո՞ր դոգմա)։ Աղոթքը լսելի եղավ, և կառեթը, որին այնքան անհամբեր սպասում էին, վերջապես երևաց։*

*Կառեթից իջնող կոմսուհին բարձրաձայն դիմեց իր սիրեկանին. «Սինյոր դոկտոր, շուտ արեք մտեք»։ Սաստիկ վախեցած պապը չստիպեց հրավերը կրկնել։ Նա նստեց կառեթի խորքում, տիկնոջ կողքին, իսկ սրա ամուսինը տեղավորվեց առաջին նստարանի վրա։ Կոմսուհին հրամայեց ձիերը քշել, և փախստականները ճանապարհ ընկան։*

*Պապի փախուստից հետո Հռոմում հանրապետություն հռչակվեց և հրապարակվեց հետևյալ դեկրետը.*

«Պապը փաստորեն և իրավաբանորեն ղրկվում է Հռոմի պետության վրա ունեցած աշխարհիկ իշխանությունից։

Հռոմի քահանայապետին կերաշխավորվի ազատորեն հոգևոր իշխանություն իրականացնելու հնարավորություն։

Հռոմի պետության կառավարման ձևը կլինի դեմոկրատիան՝ Հռոմեական Հանրապետություն փառապանծ անունով»։

Այսպիսին էր քաղաքական իրադրությունը, երբ ֆրանսիացիները սփ իջան Չիվիտա-Վեկիայում, որպեսզի վերականգնեն պապական տիրապետությունը...

Իմանալով ֆրանսիական զորքերի ան իջնելու մասին, Հռոմի սահմանադիր ժողովը հայտարարեց, թե շարունակում է իր գործունեությունը, և որոշեց ինտերվենտներին եռանդագին դիմադրություն ցույց տալ։ Այդ ժամանակ էլ ասպարեզ իջավ Գարիբալդին՝ ազատության ու արդարության փառապանծ մարտիկը։

Բայց, չնայած գրեթե մեկ ամիս տևած իր բոլոր պայքարին, Հռոմը ֆրանսիացիների բուռն գրոհին չդիմացավ...

Գեներալ Ուդինոն կարողացավ քաղաքի դարպասների բանալին հանձնել պապին։

Ոճիրը տեղի ունեցավ, Ֆրանսիայի կառավարությունը նորից Հռոմեական հողերը հանձնեց փարաջավորների իշխանությանը։

Պիոս IX-ի նոր տիրակալության սկիզբը նշանավորվեց մի դեկրետով, որը պարունակում էր հետևյալ հոդվածները.

«Փակվում են բոլոր խմբակները, արձակվում են բոլոր քաղաքական միավորումները։ Արգելվում է հավաքվել հինդ հոգուց ավելի, հատկապես երեկոները։

Եթե որևէ մեկն առանց հարգելի պատճառի ևրևա երեկոյան ժամը տասնմեկից հետո, կձերբակալվի և կենթարկվի հնգօրյա բանտարկության, կրկնվելու դեպքում՝ միամսյա բանտարկության։

Մամուլի ազատությունը վերացվում է։ Ամեն ինչ, որ ևնթակա է հրատարակման, պետք է հավանության արժանանա հոգևոր իշխանության կամ ոստիկանության կողմից, նայած գրվածքի բովանդակությանը։ Ջենթարկվելու դեպքում հրատարակիչը և հեղինակը, բացի տպագրվածի բռնագրավումից, պետք է վճարեն 25 էկյու տուգանք առաջին անգամ, 50 էկյու՝ երկրորդ և 100 էկյու՝ երրորդ անգամ։ Վերջին դեպքում տպարանը կփակվի, իսկ հրատարակիչն ընդմիշտ կզրկվի իր գործով զբաղվելու իրավունքից։

Տպագրված գրքերը, օտարերկրյա թե հայրենական, չպետք է տարածվեն առանց եկեղեցական իշխանությունների կամ ոստիկանության թույլտվության։ Դրանք, գրավոր թույլտվության դեպքում, կարող են վաճառվել միայն խանութներում, փողոցներում վաճառքն արգելվում է։ Նույն կանոնները պարտադիր են նաև փորագրությունների ու վիմագրությունների վերաբերմամբ»։

Այս պերճախոս դեկրետը սոսկ աղոտ պատկերացում է տալիս, թե ինչպես էր պապական կառավարությունը ճնշում հռոմեացիներին։ Իսկ, ընդհակառակը, քահանաների ու ժանդարմների համար իսկապես երանելի ժամանակներ էին սկսվել։

Վայ այն քաղաքացուն, որին ամբաստանությամբ, մի անզգույշ խոսքի համար կամ սարզապես որևէ եկեղեցականի անբարյացակամության պատճառով մեղադրում էին ազատամիտ գաղափարներ ունենալու մեջ։ Դժբախտին բաժանում էին ընտանիքից, զնդան նետում, ամենաանմարդկային խոշտանգման ենթարկում։ Հաճախ սուրբ հոր «արդարամտությունը» էլ ավելի օպերատիվ բնույթ էր կրում. սբիրները գիշերով բռնում էին մատնանշված մարդկանց, դաշույններով սպանում և դիակները նետում Տիբրոս գետը...

Ավստրիական լծի տակ գտնվող պրովինցիաներում կաթոլիկական ռեակցիան ավելի վայրագ էր, քան Հռոմում, և սուրբ Հայրը հավանություն էր տալիս գազանային դատաստաններին։

Իսկ ինչ վերաբերվում է մարդասպաններին ու կողոպտիչներին, ապա նրանց ձերբակալում էին միայն այն ժամանակ, երբ բռնում էին հանցանքի վայրում։ Բայց այդ բացառիկ դեպքերում էլ նրանց նկատմամբ արտակարգ փափկանկատություն ու ներողամտություն էր ցուցաբերվում։ Իսկ եթե հանցագործը պատկանում էր հոգևոր դասին, ապա նրա բախտի համար անհանգստանալու հարկ չկար։

Օրինակ, մի դուքս, որ իր ծառային սպանել էր նվազ հարգալից վերաբերմունքի համար, պապի կողմից դատապարտվեց մեկ ամսվա բանտարկության, իսկ մեկ ուրիշի, որը հոգևորական էր սպանել, դատապարտեցին քառահատման։ Կարդինալ Անտոլնեին հրամայեց գլխատել մի թշվառ խելագարի, որ նրան սպառնացել էր... պատառաքաղով։

Մահապատժի դատապարտվածները մի քանի տարի սպասում էին դատավճռի կատարմանը։ Քաղաքական բանտարկյալներին անմարդկայնորեն խոշտանգում էին։ Բանտերում նորից մտցվեցին ինկվիզիցիայի ժամանակների պատիժները։

Դժբախտներին ծնկի էին բերում մի մեծ քարի առաջ, ապա կուրծքն ի վար պատկեցնում դրա վրա։ Այնուհետև քարի մի կողմից հատակին դամում էին ձեռքերը, մյուս կողմից՝ ոտքերը։ Այդ դիրքում նրանց ծեծում էին եզան ջիղերից պատրաստած երկար մտրակով։

Օգտագործվում էին նաև երկաթե աքցաններ, որոնցով բերանից ձգում՝ հանում և ճզմում էին լեզուն։ Բորբոքված լեզուն ուռչում էր այն աստիճան, որ երկար ժամանակ բերանի մեջ չէր տեղավորվում։

Այդ չարագործությունները հիշեցնում էին միջնադարի մռայլ օրերը, այնինչ տեղի էին ունենում XIX դարի կեսերին։

Եվ այնուամենայնիվ իտալացի հայրենասերներն արիությունը չէին կորցնում։ Մածինին արտասահմանում ստեղծեց Ազգային կոմիտեն և ապստամբություն էր նախապատրաստում։ Մի քանի անհաջող փորձերից հետո ուժեղացան ռեպրեսիաները։ Եվ ահա նորից հայտնվեց Գարիբալդին։ Ազատագրելով երկու Սիցիլիանները, նա կատարեց Միլանի նշանավոր արշավանքը և թագավորությունը նվիրաբերեց Վիկտոր-Էմանուելին, որը նրան հատուցեց իսկը թագավորական ապերախտությամբ։ Սակայն Գարիբալդիին դա չէր անհանգստացնում։ Նա վերջ տվեց Բուրբոնների բռնապետությանը, նրա հաղթանակը սասանեց նաև պապական գահը։

Գարիբալդիի այն հերոսական փորձը, որ նա ձեռնարկեց 1867 թվին, հաջողությամբ կպսակվեր, եթե չլինեին ֆրանսիական օկուպանտները։ Իտալական նավատորմի հսկողության տակ գտնվելով Կապրերա կղզում, Գարիբալդին խաբեց իր պահակների զգոնությունը։ Նավաստու զգեստ հագնելով և աննկատելիորեն անցնելով նավահանգստում կանգնող նավերի մոտով, նա հասավ հռոմեական հողերի սահմանները, որտեղ փոքրիկ խմբերով արդեն հավաքվում էին նրա լեգիոնները։

Գարիբալդին շարժվեց դեպի Մոնտե-Ռոտոնդո, դեպի Հռոմի ճանապարհի վրա գտնվող այն քաղաքը, որտեղ քահանայապետն իր միջոցներով պահում էր մի ֆրանսիական լեգիոն։ Կատաղի ճակատամարտից հետո Գարիբալդին կայազորին ստիպեց անձնատուր լինել և գրավեց քաղաքը։ Այստեղից նա դիմեց դեպի Տիվոլի։ Մենտանոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա արդեն հաղթում էր պապի զորքերին, բայց սուրբ Հորը փրկեցին ֆրանսիական լինելորները։ Ազատության մարտիկները հերոսաբար դիմացան հակառակորդի գրոհներին, սակայն ուժերն այնքան անհավասար էին, որ մարտի ելքը կասկած չէր հարուցում։

Գարիբալդիականների պարտությունը Պիոս IX-ին վերջնականապես հանգստացրեց։ Անխելք քահանայապետը կարծում էր, թե այլևս վախենալու պատճառ չունի։ Նա չէր ենթադրում, որ շատ շուտով Նապոլեոն III-ը ետ կկանչի իր պատժիչ կորպուսը և դրանից հետո պապի իշխանությունը փուլ կգա հենարանից զուրկ խարխուլ տնակի պես։

Պիոս IX-ը հավատացած էր, որ ինքն իր իշխանությունը կամրապնդի անաղարտ հղիության և պապական անսխալականության դոգմաները հաստատելով։ Իսկ իրականում այդ դոգմաներն անկեղծ կաթոլիկների մեջ էլ ավելի գզգեցին պապի հեղինակությունը։ Նրա էնցիկլիկան և «Սիլլաբուսը», բացարձակ պատերազմի կոչ էին ընդդեմ բոլոր առաջադիմական գաղափարների և միանգամայն հակառակ հետևանք ունեցան, ցույց տալով, թե որքան խորն է ընկել կաթոլիկ եկեղեցին։

Սակայն սուրբ Հայրը շատ հանգիստ էր քնում, իսկ քահանաները, որոնք լցվել էին Հռոմ, ուրախ, անհոգ կյանք էին վարում, բնավ չմտածելով վաղվա օրվա մասին։

Պոռնկությունը դարձավ սուրբ քաղաքի ամենից բարգավաճող զբաղմունքը։ Պապական ոստիկանությունը խստություն էր ցուցաբերում միայն արտաոռց խայտառակ դեպքերում։ Չէ որ նա չէր կարող մարմնական բավականություններից զրկել աստծո այն հինգ կամ վեց հազար ծառաներին, որ լցվել էին Պապական մարզը։

Բայց Հորիզոնն այնուամենայնիվ մռայլվում էր։ Ֆրանսիայի կայսրն զգում էր, որ իր դահը երերում է, և Պրուսիային պատերազմ հայտարարեց, հուսալով, թե հալթիական արշավանքը կամրապնդի իր իշխանությունը։

Վճռական մարտերի համար Նապոլեոն III-ին անհրաժեշտ էին իր բոլոր զինվորները և նա ետ կանչեց Հռոմում գտնվող զորքերը։ Բայց հենց որ պրուսացիների առաջին հաղթանակներն իտալացիներին ցույց տվին, որ Ֆրանսիայից վախենալու հարկ չկա, Վիկտոր-Էմանուելի զորքերը, որ կենտրոնացված էին Պապական մարզի սահմանագլխին, սրընթաց շարժվեցին դեպի Հռոմ։

Իր կառավարման վերջը Պիոս IX-ը նշանավորեց նոր հանցագործությամբ։ Թեև պարզ էր, որ դիմադրությունն անիմաստ է և ոչ մի հետևանք չի ունենա, բացի ավարտյուն արյունահեղությունից, նա որոշեց պաշտպանվել մինչև վերջ։

Նրա բանակը բաղկացած էր գլխավորապես արտասահմանյան վարձականներից, իսկ իտալացիներ շատ քիչ կային։ Տեղյակ լինելով բնակչության թշնամական վերաբերմունքին, նա բոլոր փողոցներում,

խաչմերուկներում և հասարակական վայրերում թնդանոթներ դրեց, որպեսզի կանխի ժողովրդական ապստամբությունը։

Ճակատամարտը տեղի ունեցավ 1870 թվի սեպտեմբերի 20-ին։ Ջորաժամյա թնդանոթաձգությունից հետո քաղաքի պարիսպներից մեկում ճեղք գոյացավ, և գեներալ Կաոորնան իր դիվիզիայով մտավ քաղաք։

Գրեթե միաժամանակ գրավվեցին քաղաքային երկու դարպասները։ Այդ պահից դիմադրությունը դադարեց։

Պապի զինվորները զենքը վայր դրեցին, իսկ փողոցներում ժողովուրդն սկսեց եղբայրանալ հաղթողների հետ։

Այսպես ավարտվեց պապերի աշխարհիկ իշխանությունը։ Այժմ պապությունն արդեն չունի ո՛չ իր երբեմնի ազդեցությունը, ո՛չ էլ առաջվա հեղինակությունը։ Ինչպես խորտակված նավի վերջին բեկոր, նա շուտով ծովի հատակը կիջնի։ Եվ այն ժամանակ մարդկությունը վերջնականապես դեն կնետի պապական բռնակալության դարավոր շղթաները։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Լեո Տաքսիլի անունը սովետական մարդկանց լավ է հայտնի։ Նրա «Չվարճալի Աստվածաշունչը» և «Չվարճալի ավետարան կամ Հիսուսի կյանքը» գրքերը ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել ավելի քան մեկ միլիոն տպաքանակով և ջերմ ընդունելություն գտել ընթերցողների կողմից։

Փայլուն էրուդիցիան, թեթև ոճը, սրամտությունը նպաստել են նրա գրքերի ժողովրդականությանը։

Լեո Տաքսիլը (իսկական անունը՝ Գաբրիել-Անտուան Ժոգան-Պաժես, 1854—1907 թթ.) ուրույն դեմք է հակակրոնական գրողների շարքում։

Մանկության և պատանեկության տարիներին նա դաստիարակվել է կաթոլիկական կոլեջում։ Սակայն կրոնական գործունեությամբ զբաղվելու փոխարեն նա ընտրել է կրոնի դեմ պայքարող մարտիկի ուղին։ «Սուրբ» գրքի հակասություններն ու անհեթեթությունները, եկեղեցականների սուտը, երկերեսանիությունը, կեղծավորությունը, բթամտությունը և շահախրությունը նրան ցույց տվին կրոնի իսկական

էությունը։ 1879 թվից սկսած նա հինգ տարում լույս է ընծայում մոտ երկու տասնյակ հակակրոնական դրվածքներ՝ սուր երգիծական ւյամֆլետներ, այդ թվում՝ «Պիոս IX պապի սիրային արկածները», «Ճիզվիտի որդին», «Բորջիայի ընտանիքը», «Լևոն XIII-ին թունավորողը և հինգ միլիոն կանոնիկոսներ», «Սրբազան ավազակաորջը» և այլն։ 1882 թվին Տաքսիլը գրում է «Զվարճալի Աստվածաշունչը», իսկ 1884 թվին լույս է տեսնում նրա «Հիսուսի կյանքը»։

1884 թվի ապրիլին Լևոն XIII պապը հրապարակեց «Մարդկային ցեղը» էնցիկլիկան։ Այդ ուղերձում նա աթեիզմի, անհավատության դեմ վճռական պայքար մղելու կոչ էր անում և աղատամտությունը համարում սատանայի ձեռքի գործ։ Մեծ եղավ կրոնի ջատագովների խանդավառությունը, երբ նրանք իմացան, որ ուղերձն ազդել է նույնիսկ մի այնպիսի աղատամիտի վրա, ինչպիսին Տաքսիլն է. արցունքն աչքերին, ծնկաչոք, նա խնդրում էր իրեն վերընդունել «մայր եկեղեցու» գիրկը։

Այդ պահից ի վեր 12 տարի շարունակ Տաքսիլը հանդես է գալիս սատանայական դավերի մերկացմամբ։ Նրան ընդունեց Հռոմի պապն ինքը և գուրգուրեց անձնական ունկնդրության ժամանակ։

Բայց ահա 1897 թվին Տաքսիլը հանդես եկավ մի հրապարակային հայտարարությամբ, թե 12 տարի շարունակ նա մոլորեցրել է եկեղեցուն. նա ցանկացել է իմանալ, թե հոգևորականների մեջ մինչև ուր է հասնում ամեն տեսակ սատանայական բանների հավատը։ Պարզվում է, որ դրան վերջ չկա։ Տաքսիլի ամեն մի ֆանտաստիկ հերյուրանքը վհուկների գիշերաժողովների, սատանաների արարքների և այլ բաների մասին երևելի եպիսկոպոսները, կարդինալները և պապն ինքը հաւլած յուղի տեղ էին ընդունում, համեհնայնդեպս օգտագործում էին դյուրահավատ մարդկանց հիմարացնելու համար։ Մոլորեցումը հաջողությամբ պսակվեց։

Լեո Տաքսիլը վերստին սկսեց բացեիբաց պայքարել կրոնական հաշիշի դեմ։

Հենց նոր ընթերցողը շրջեց Տաքսիլի «Սրբազան ավազակաորջը» գրքի վերջին էջը[1]։

— Մի՞թե այդ ամենը ճիշտ է,— կարող է հարցնել ընթերցողը։— Ստախոսություն, դավաճանություններ, սպանություններ, անառակություն, ընչաքաղցություն, միթե՞ հենց դա է հիմնական բարձրաս-

1 Ներկա հրատարակությունը բերվում է որոշ կրճատումներով։

տիճան հոգևորականների գործերի մեջ չէ՞ որ նրանք համարվել են աստծո երկրային փոխանորդներ, չէ՞ որ նրանք իրենց քարոզներում ու գրվածքներում կոչ են անում լինել հեզ, խոնարհ, հանդուրժող

Դժվար է ասել, թե Տաքսիլը որքան է ճշմարիտ բոլոր մանրամասնությունների մեջ։ Գիրքը նա գրել է այն փաստաթղթերի, աղբյուրների հիման վրա, որ պատմագիտության տրամադրության տակ գտնվում էին XIX դարի վերջին։ Այդ ժամանակից անցած 80—90 տարիների ընթացքում հայտնաբերվել են պապությունը բնութագրող մի քանի նոր նյութեր։ Սակայն եթե Տաքսիլի «Սրբազան ավազակատորը» գիրքը չի կարելի դիտել որպես լիովին արժանահավատ պատմական աշխատություն, ապա ամենայն իրավամբ այն կարելի է համարել մարտական փայլուն հակակրոնական պամֆլետ, որն ընդհանուր առմամբ ճշտորեն և սուր երգիծանքով մեզ տալիս է կաթոլիկ եկեղեցու հայրերի արատների և չարագործությունների ընդարձակ և իսկական պատկերը։ Հենց սրա մեջ է ֆրանսիացի գրողի տաղանդավոր գրքի իմաստն ու նշանակությունը։

Իսկ ինչպե՞ս է պատահել, որ այնպիսի մի հզորագույն, ազդեցիկ եկեղեցական կազմակերպության գլխին, որ կոչված էր տարածելու և ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ ամրապնդելու բարեպաշտության ու հեզության գաղափարները, կանգնած են եղել, մեղմ ասած, բարոյազուրկ մարդիկ։ Դրա պատճառը հարկավոր է փնտրել իր իսկ քրիստոնեության մեջ։

Քրիստոնեությունը ծագեց I դարի երկրորդ կեսին Հռոմեական կայսրության արևելյան պրովինցիաներում, մի այնպիսի իրադրության մեջ, երբ Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի վիթխարի տարածություններում Հռոմեական մի խումբ ստրկատերերի ծանր լծի տակ հնծում էին միլիոնավոր ստրուկներ, գյուղացիներ, արհեստավորներ։

Ստրուկների և չքավորության մասսայական ապստամբությունները պարտվեցին, և այդ ժամանակ ամենաընչազուրկ խավերի մեջ աստիճանաբար ծնունդ են առնում հրաշապատումներ նոր աստծո մասին, որը պետք է երկիր գա մարդու կերպարանքով, լինի մարդկանց մեջ, մինչև վերջ ըմպի մարդկային տառապանքների բաժակը, մեռնի հանուն մարդկանց, իսկ այնուհետև հարություն առնի։ Հիսուս Քրիստոս աստծո կերպարում արտացոլվեցին այն բազում միլիոնների ձգտումներն ու հույսերը, որ այլևս հույս չունեին կյանքում երջանիկ լինելու, երկրի վրա ելք չտեսնելով, մարդիկ սկսեցին այն որոնել հանդերձյալ աշխարհում։

Այդպիսի իրադրության մեջ ծնվեց աստվածամարդու՝ մարդկության փրկչի կերպարը, որն իր մեջ ներընկալեց զանազան ժողովուրդների շատ կրոնների աստվածների հատկանիշները և այդ պատճառով հարազատ էր տարբեր երկրների ժողովուրդներին։ Նոր աստվածը դիմում էր բոլորին, առանց ազգային, ռասայական, հասարակական խորականության։ Դրանով է բացատրվում քրիստոնեության լայն տարածումը, որը հնդեղի նման իր հորձանուտի մեջ առավ հին աշխարհը։

Եթե քրիստոնեությունը, Ֆ. Էնգելսի արտահայտությամբ, «սկզբում հանդես էր գալիս որպես ստրուկների և ազատ արձակվածների կրոն», եթե սկզբնապես պատապարտում էր երկրային կարգերը և զայրույթով հանդես գալիս աշխարհի ղորեղների դեմ, եթե գուշակում էր այլասերված ու հավատը կորցրած հռոմեական հասարակության կործանումը, ապա շուտով նա կոմպրոմիսի դիմեց և այդ աշխարհի, կեղեքիչների աշխարհի հետ։ Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու քրիստոնեության առաջացման ժամանակ նրա մեջ արտացոլվեցին մասսաների հեղափոխական ձգտումները։ Սակայն ստրկատիրական պետության դեմ պայքարելու անզորությունը, այն երկրային աշխարհում հաղթելու անհնարինության գիտակցումը հետզհետե ի չիք դարձրին քրիստոնեության ապստամբական կոչերը. նրան, որպես կրոն, մնում էր միայն կատարել իր հիմնական ֆունկցիաները, այն է՝ սփոփել, հուսադրել, աստծո առաջ հավասար լինելու կոչ անել, շեղել իրական խընդիրներից։ Շուտով տիրապետող դասակարգերը հասկացան այդօրինակ քարոզի օգուտը։

Անարդար սոցիալական կարգի հավերժացում. ահա՛ քրիստոնեական կրոնի բնորոշ գծերից մեկը։ Չէ որ դա բխում է իր իսկ քրիստոնեական դավանաբանությունից, ըստ որի մասնավոր սեփականությունը մշտնջենական, աստծո կողմից հաստատված բան է, ուստի և պետք է համարվի բնական իրավունք։

«Քրիստոնեության սոցիալական սկզբունքները,— գրել է Կ. Մարքսը,— քարոզում են դասակարգերի՝ տիրապետող ու ճնշված դասակարգերի գոյության անհրաժեշտությունը և վերջինիս համար դրանց մեջ միայն այն բարեպաշտական ցանկությունը կա, որ առաջինը նրա նկատմամբ բարեսեր լինի...»։

Եթե մի հայացք նետենք պատմության խորքերը, ապա կարող ենք տեսնել, որ քրիստոնեական կրոնը եղել է շահագործող դասակարգերի շահերի պաշտպանը։ Իսկ այդ դասակարգերն էլ իրենց հերթին ի դեմս կրոնի տեսնում էին իրենց հավատարիմ դաշնակցին և պաշտպանին։

«Բոլոր և ամեն տեսակ ճնշող դասակարգերը,— նշել է Վ. Ի. Լենինը,— իրենց տիրապետությունը պահպանելու համար երկու սոցիալական ֆունկցիաների՝ դահճի ֆունկցիայի և տերտերի ֆունկցիայի կարիք ունեն։ Դահիճը պետք է ճնշի ճնշվածների բողոքն ու զայրույթը։ Տերտերը պետք է սփոփի ճնշվածներին, նրանց համար դասակարգային տիրապետության պայմաններում աղետներն ու զոհողությունները մեղմացնելու հեռանկարներ գծի (դա առանձնապես հարմար է անել առանց այդ հեռանկարների «իրականալիությունը» երաշխավորելու...) և դրանով իսկ նրանց հաշտեցնի այդ տիրապետության հետ, նրանց եւս պահի հեղափոխական գործողություններից, խաթարի նրանց հեղափոխական տրամադրությունը, խախտի նրանց հեղափոխական վճռականությունը»։ Հենց այդ դատապարտելի ու դաժան դերն է հաջողությամբ կատարել քրիստոնեական կրոնը։

Պետք է ասել, որ երբեմն եկեղեցականներն անգամ դա չեն թաքցրել։ Ականավոր շատ աստվածաբանների երկերում կարելի է գտնել այնպիսի արտահայտություններ, որ պերճախոս կերպով բնութագրում են կրոնի դերը։ Քրիստոնեական եկեղեցու խոշոր գործիչներից մեկը, «երանելի» Ավգուստինոսը, ընդունում էր, թե «հարուստները չեհնոցված շատ բանով են պարտական Քրիստոսին, որովհետև նա լավ կարգուկանոն է հաստատում նրանց տներում ու տնտեսության մեջ։ Քրիստոսը վատ սորուկներին դարձնում է լավ սորուկներ»։

Քրիստոսի անունից քրիստոնեական կրոնը հաստատվում էր «հեթանոսական» երկրներում։ Հանուն նրա միսիոներները, Աստվածաշունչը ձեռքներին, հասան մեր մոլորակի բոլոր անկյուններն, քրիստոնեությունը ներկայացնելով իբրև մի կրոն, որը երջանկություն է բերում յուրաքանչյուրին։ Քրիստոնեական հոգևորականները չէին զլանում խոստումներ տալ, նրանք ամեն մեկին, ով կդառնար նոր կրոնի հետևորդ, խոստանում էին անմահություն, հավիտենական երանություն, բայց ոչ թե երկրի վրա, այլ անդրշիրիմյան աշխարհում։ Չէ որ ըստ քրիստոնեական դավանաբանության Քրիստոսը, որին աստված երկիր էր ուղարկել մարտիրոսական մահով մարդկանց մեղքերը քավելու, պետք է վերադառնա երկրային աշխարհը, որպեսզի դատի ողջերին և մեռյալներին, խստիվ պատժի մեղավորներին և վարձատրի երանություն պարգևի բարեպաշտներին։

Քարոզելով իրենց դավանաբանությունը, աստվածաբաններն օրինակ են բերում Քրիստոսի երկրային կյանքը։ Խոսելով նրա հեզության, հնազանդության, համբերության մասին, նրանք հավատացյալներին

խրատում են լինել ճիշտ այդպես հեզ, հնազանդ, համբերող։ Միայն այդ կերպ կարելի է վաստակել անդրշիրիմյան աշխարհի երջանկությունը, քրիստոնեական տաճարներում սովորեցնում են քահանաները։ Այդպիսի քարոզներ քրիստոնեական հոգևորականությունը կարդացել է շատ հարյուրամյակներ առաջ։ Այդպիսի քարոզներ եկեղեցական տաճարներում լսվում են և մեր օրերում։

Այդ քարոզները երկրային կյանքում իսկական երջանկության համար պայքարելու ուղուց մարդուն շեղում են դեպի անիրականալի երազանքների աշխարհը։ Քարոզելով, թե ամեն ինչ աստծուց է կախված, թե մարդն անզոր է այս աշխարհում իր ուժերով որևէ բան փոխել, քրիստոնեական կրոնը նրան դատապարտում է պասսիվորեն սպասելու երկնային շնորհներին։ Փոխանակ երկրի վրա լավագույն կյանք ստեղծելու, մարդիկ պետք է համբերությամբ սպասեն Քրիստոսի երկրորդ գալստյանը, որը նրանց փրկելու է կյանքի հոգսերից։

Քրիստոնեությունը ստրուկներին դատապարտել է ցմահ ստրկության, կապիտալիստական ձեռնարկություններում աշխատող աշխատավորներին՝ իրենց տերերի համար ցմահ աշխատելու, հողազուրկ գյուղացիներին՝ կալվածատերերից ցմահ կախված մնալու։ Եվ հենց այդ մարդկանց էլ, որոնց համար ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը սոցիալական անարդար կարգը կործանելու համար մղվող պայքարն էր, կրոնի քարոզիչները խրատում էին, թե անհրաժեշտ է համբերել և հնազանդ լինել։ Նրանք նորից ու նորից օրինակ էին բերում Քրիստոսին։ «Քրիստոսը համբերել է և մեզ էլ նույնը պատվիրել»,— սովորեցնում էին եկեղեցականները։

Օրինակ բերելով Հիսուս Քրիստոսի կյանքը, եկեղեցականները հավատացյալներին քարոզում են համընդհանուր սիրո, դասակարգային հաշտության սկզբունքները։ «Քրիստոսի առաջ բոլորը հավասար են»,— ասում են պաշտամունքի սպասավորները։ Ավետարանական տեքստերը լցված են մերձավորներին սիրելու, թշնամիներին ներելու, շրջապատում եղած բոլոր մարդկանց հետ հաշտ ու խաղաղ ապրելու խրատներով։ «Աստված ինքը սեր է» բառերը հաճախ են հնչում քրիստոնեական աստվածաբանների քարոզներում։ Հավատացյալներին նրանք խրատում են, թե անհրաժեշտ է կատարել Հիսուսի հետևյալ պատգամը, որ նա իբր մարդկանց տվել է իր լեռան քարոզում. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարին արեք ձեզ ատողներին և աղոթեցեք ձեզ անարգողների և հալածողների համար» (Մատթեոս, գլ. 5)։

Իրականում ո՞ւմ է ծառայում Քրիստոսի այդ պատգամը։ Դժվար չէ նկատել, որ քրիստոնեական սիրո այս սկզբունքն ամենից առաջ ձեռնտու է նրանց, ովքեր ճնշում են հասարակ մարդկանց, ձեռնտու է առաջին հերթին շահագործող դասակարգերի ներկայացուցիչներին։ Որպես օրինակ կարելի է դիմել այն իրադարձություններին, որ տեղի ունեցան մեր երկրում Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ժամանակ։ Այն օրերին, երբ իր շղթաները փշրող ժողովուրդը կեղեքիչների դեմ պայքարի էր ելել, որպեսզի մեկընդմիշտ մեր երկրում վերջ տա կապիտալիստական սարկույթյանը, քրիստոնյա եկեղեցականները, ինչպես և քրիստոնյա աղանդավորները հանդես եկան հին կարգերի պաշտպանների բանակում։ Այն ահեղ օրերին, երբ որոշվում էր Ռուսաստանի ճակատագիրը՝ դառնալ ազատ երկիր, թե նորից ընկնել ինքնակալության իշխանության տակ, քրիստոնյա հոգևորականությունը հանդես եկավ ապստամբած ժողովրդի դեմ։ Փորձելով չարաշահել մարդկանց զգացմունքները, եկեղեցու ծառանները բանվորներին ու գյուղացիներին դիմում էին երկերեսանի կոչերով՝ չմոռանալ քրիստոնեական սիրո սկզբունքները, հաշտվել նրանց հետ, ում վրա ձեռք են բարձրացրել։ «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին...»,— նորից ու նորից էր հնչում այդ կեղծավոր կոչը։

Բայց ժողովրդին այլևս չէին կարող կաշկանդել Քրիստոսի պատգամները։ Եվ այն ժամանակ եկեղեցականները դեն նետեցին «ժողովրդի բարեկամների» դիմակը։ Ռուս հոգևորականության ամենահետադեմ ներկայացուցիչները հանդես եկան հեղափոխական ուժերի դեմ։ Սպիտակ գվարդիականների բանակում շտապով ջոկատներ էին ստեղծվում, որոնց մեջ մտնում էին կրոնի սպասավորները։ Դենիկինի, Կոլչակի զորքերի մեջ կարմիր բանակի դեմ մարտնչում էին «Հիսուսի գնդերը», «Սուրբ խաչի դրուժինաները»։ Նրանց դրոշի վրա նկարված էր Քրիստոսը։

Համընդհանուր եղբայրության, համընդհանուր սիրո քարոզներն ուղղված են աշխատավորների շահերի դեմ։ Այդպիսի քարոզներով քրիստոնյա եկեղեցականները փորձում են ջլատել մասսաների կամքը, նրանց զինաթափ անել կեղեքիչների առաջ։ Մի՞թե կարելի է ներել դասակարգային թշնամիներին, մի՞թե կարելի է հաշտվել շահագործողների բռնության հետ։

Ըստ աստվածաբանների և հոգևորականների, քրիստոնեությունը հանդիսանում է համընդհանուր խաղաղության նախագուշակ։ Չէ՞ որ ավետարաններում ասվում է, թե Քրիստոսը երկրին խաղաղություն է

բերել։ «Երանելի են խաղաղարարները»,— հռչակել է նա իր լեռան քարոզում։

Դրանք խոսքերն էին, իսկ գործերով քրիստոնեության ամբողջ պատմությունն անխղելիորեն կապված է արյունահեղ սպանդների, վատի համար մղված կրոնական պատերազմների հետ։ Կրոնը այդ պատերազմները նվիրագործել է որպես «սրբազան պատերազմներ»։ Հիշենք թեկուզ խաչակրաց արշավանքները, որոնք բազմահազար անմեղ մարդկանց կյանք խլեցին։ Այն ժամանակ մոռանում էին խաղաղասերներին վերաբերող պատգամը և նվաճողներին օրհնող եկեղեցականների քարոզներում լսվում էին այլ խոսքեր, որ քաղված էին ավետարանից և իբր պատկանում էին Քրիստոսին. «Չկարծեք, որ ես երկրին խաղաղություն բերելու համար եմ եկել, ես եկել եմ ոչ թե խաղաղություն, այլ սուր բերելու համար»։

Երբ օտարերկրյա նվաճողները նավերից ափ էին իջնում Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի հարուստ հողերում, երբ նրանք զավթում էին ուրիշների տերիտորիաները, այնտեղից դուրս վռնդելով բնիկներին, մինչև ատամները զինված զինվորների հետ ափ էին իջնում նաև քրիստոնյա միսիոներները՝ զինված Աստվածաշնչով։ Զինվորները կողոպտում էին բնիկներին, անգթորեն սպանում անմեղ մարդկանց, ստրկության քշում սևամորթներին, հրդեհում նրանց բնակավայրերը։ Իսկ վայելչատես քահանաները նվաճված ժողովուրդներին քարոզում էին հնազանդության, համբերության, համընդհանուր քրիստոնեական գաղափարները։

Կրոնն արդարացնում էր գաղութատիրությունը, արդարացնում էր նվաճողների գործողությունները զավթած երկրներում։ Գաղութարարների գործողություններն նվիրագործվում էին Քրիստոսի անունով։ Հոգևորականությունը դրանք ներկայացնում էր համարյա որպես բարի գործեր, որ կեղեքիչները կատարում էին իբր ստրկացված ժողովուրդների համար։ Պիոս XII պապն ուղղակի հայտարարում էր, թե առանց «քաղաքակիրթ Եվրոպայի ազդեցության թույլ զարգացած երկրները կույր նացիոնալիզմով կարող էին քաոսի ու ստրկության մատնվել»։

Եկեղեցականները սիրում են կրկնել, թե իբր դեռևս նախնական քրիստոնեությունը սահմանել է մարդկանց հավասարության և եղբայրության սկզբունքները։

— Կարդացեք ավետարանը,— ասում ենք նրանց։— Այնտեղ հաճախ ասվում է, թե աստծո համար «չկա ո՛չ հույն, ո՛չ հրեա, ո՛չ ստրուկ, ո՛չ ազատ»։

Այո, սակայն խոսքը վերաբերվում է միայն մարդկանց հավասարությանը աստծո առաջ, մի բան, որ ըստ եկեղեցու ուսմունքի ոչ մի առնչություն չունի մարդկանց իրական անհավասարության հետ։ Ըստ որում աստծո առաջ մարդիկ հավասար են որպես մեղավորներ։ «Հավասարության» այդօրինակ քարոզը բնավ չի խանգարել, որ արդարացվի անհավասարության ու ճնշման ամենաղազրելի, ամենաբացահայտ ձևը՝ ստրկատիրությունը։ Ավետարանական ուսմունքի համաձայն, ստրուկը պետք է իրեն մխիթարի նրանով, որ աստծո համար ինքը ոչնչով վատ չէ իր տիրոջից և նույնիսկ, մի գուցե նրանից ավելի բարեպաշտ է։ Իսկ քանի որ այդպես է, ապա պարզապես ավելորդ է ստրկությունից ազատագրվելու ամեն մի պայքար։

Հավասարության քրիստոնեական սկզբունքներն իրականում շարունակ անհավասարությունը պաշտպանելու փաստարկ են հանդիսացել և ի վերջո հանգում էին հետևյալ դրույթին. «Ամեն ոք թող հնազանդ լինի ենթարկվի բարձրագույն իշխանություններին, որովհետև բոլոր իշխանություններն աստծուց են...» (Հռոմ. գլ. 13, հ. 1)։

«Ստրուկնե՛ր, ամեն բանում հպատակվեցեք ձեր մարմնական տերերին նրանց ծառայելով ոչ թե ձևականորեն ու քծնելով, այլ սրտանց աստծուց վախենալով» (Կողոս., գլ. 3),— ահա՛ թե ինչ կոչ է անում քրիստոնեությունը հանուն աստծու Հավասարության տարօրինակ ըմբռնում։

Իհարկե, այսօր քրիստոնեական եկեղեցին այն չէ, ինչ երեկ։ Ձգտելով պահպանել հավատացյալներին, հոտը, նա իր դիրքերը վերակառուցում է ժամանակի ոգուն համապատասխան, ավելի նուրբ քաղաքականություն վարում, նույնիսկ հրաժարվում իր սկզբունքներից։ Փոփոխություններ կարելի է նկատել նաև Վատիկանում, կաթոլիկության միջնաբերդում։ Վերջին պապերը, Հովհաննես XXIII-ը և Պողոս VI-ը, խաղաղ գոյակցության քաղաքականության կուրս են վերցրել, հանդուրժողականություն հռչակել այլահավատների և նույնիսկ նրանց միավորման նկատմամբ և այլն։

Սակայն քրիստոնեության էությունը մնացել է նույնը։ Եվ Լեո Տաքսիլն իր գրքում շատ լավ է ցույց տվել, որ նրանք, ովքեր քարոզում են հավասարամտություն և այն սկզբունքները, որոնք խեղաթյուրում են իրականությունը ի հաճույս իշխանատերերի, իրենք էլ այլ կերպ լինել չեն կարող։ Այսպիսին են փաստերը և դրանցից թաքնվել չի լինի։

ՍՏ. ՆԻԿՈՆՆԻՈ

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**էջ 3**

Առաքյալ— *Սկզբնապես՝ թափառաշրջիկ քարոզիչ, հետագայում սկսեցին այդպես կոչել Քրիստոսի 12 առաջնակարգ աշակերտներին։*

**էջ 4**

Սուրբ Պետրոս— *ըստ ավետարանի՝ 12 առաքյալներից մեկը, Քրիստոսի մերձավոր աշակերտը։ Եղնիկցին նրան համարում է Հռոմի առաջին եպիսկոպոս։*

Վեհապետություն, պոնտիֆիկատ, գահակալություն— *Հռոմի պապի իշխանությունը (կամ տիրապետության ժամանակաշրջանը)։ Այստեղից էլ պապի տիտղոսներից մեկը՝ «պոնտիֆիկոս», այսինքն քահանայապետ։*

Հերմա— *մ. թ. II դարի կեսի քրիստոնեական գրող, «Հովիվ» երկի հեղինակը։ «Հովիվը» համահնչյուն է Նոր կտակարանին։ Կոչ էր անում հրաժարվել հարստությունից, նվիրվել ճգնավորության, դատապարտում էր մարդկանց երկրային վայելքները։ Տաքսիլը սխալվում է նիկոդեմոսյաններին Հերմայի հետնորդներ համարելով. այդ աղանդը Մերձավոր արևելքում գոյություն ուներ դեռևս մ. թ. I դարում։*

Սարկավագ— *սկզբնապես քրիստոնեական համայնքի տնտեսական գործերով զբաղվող անձնավորություն, հետագայում՝ քահանայի օգնական, հոգևորական աստիճանավոր։*

Գնոստիկներ— *գնոստիցիզմի (հուն. «գնոսիս»— իմացություն)՝ I—III դդ. կրոնա-փիլիսոփայական ուսմունքի ներկայացուցիչներ. այդ ուսմունքը քրիստոնեական դոգմաները զուգակցում էր հունահռոմեական իդեալիստական և արևելյան միստիկական փիլիսոփայության պատկերացումների հետ։ Գնոստիկները աշխարհի բոլոր չարիքները համարում էին հոգու և մատերիայի միջև եղած հակասության արդասիք, ընդունում էին, որ գոյություն ունի կատարյալ աստվածություն, մեղսական նյութական աշխարհ և նրանց միջև գտնվող՝ միջնակա աստիճաններ, որ անհրաժեշտ է ճանաչել։ Ժխտում էին Հին կտակարանը, Քրիստոսի մարդեղությունը, փաստորեն մերժում էին Քրիստոսի աստվածամարդ լինելու առասպելը։*

Վալենտինյաններ— *գնոստիկների աղանդի ներկայացուցիչներ (կոչվում են դպրոցի պարագլուխ Վալենտինիոսի՝ II դարի եգիպտական քարոզչի անունով)։*

**էջ 5**

Երիգորիս Հրաշագործ— *Նեոկեսարիայի (Փոքր Ասիայում) եպիսկոպոս (մահ. 270)։*

Ալեքսանդրիա— այն ժամանակ Եգիպտոսի մայրաքաղաքը։ Մինչև IV դարը համարվում էր կայսրության երկրորդ (Հռոմից հետո) քաղաքը։

Եպիսկոպոս— հուն. վերակացու։ Սկզբնապես քրիստոնեական համայնքի ունեցվածքի վարիչ, հետագայում՝ եկեղեցական բարձր աստիճան։

էջ 6

Նովատիանոս I— պապ (251—258)։ Ընտրվել էր մի խումբ եպիսկոպոսների կողմից այն ժամանակ, երբ 251 թվին Հռոմի ընտրություններում պաշտոնապես հռոմեական եպիսկոպոս էր հայտարարվել Կոռնելիուսը (251—253 թթ.)։

Թեբայիս— Վերին Եգիպտոսի (Թեբե մայրաքաղաքով) հնադույն մարզ, նրա անապատային մասում բնակություն հաստատեցին քրիստոնեական ճգնավորները և մենակյացները։

Հերաճոս կայսեր— 293—305 թթ. Հռոմեական կայսրությունը համատեղ կառավարում էին չորս կայսրեր՝ Դիոկղետիանոսը (284—305 թթ.), Մաքսիմիլիանոսը (286—305 թթ.), Գալերիոսը (293—311 թթ.) և Կոնստանցիոս I-ը (293—306 թթ.)։ Նրանց օրոք ուժեղացան քրիստոնյաների հալածանքները։

Բորջիա— Իտալացի ազնվական ընտանիք (ծագումով Իսպանիայից), որն ակտիվ դեր է խաղացել երկրի քաղաքական կյանքում XV—XVI դդ.։ Այդ ընտանիքի անդամները հռչակվել են նրանով, որ իրենց նպատակներին հասնելու համար միջոցների մեջ խտրություն չէին դնում, դիմում էին շանտաժի, կաշառքի, դավաճանության, գաղտնի սպանությունների։ Նրա՛նց անունը դարձել է ուխտադրժության, արկածախնդրության, անձնաշահախնդրության խորհրդանիշ։

Սինկղիտոս— բարձրագույն աստիճանավորների ժողով։

Նումիդիա— Հռոմի պրովինցիա Հյուսիսային Աֆրիկայում (ժամանակակից Ալժիրի տերիտորիայում)։ 305 թ. նրա մայրաքաղաք Սիրտայում տեղի ունեցավ եկեղեցաժողով։

Եպիսկոպոսական գավազանը բաժին ընկավ հենց նրան, ով եկեղեցաժողովի բոլոր անդամների մեջ ուներ ամենամեծ հմտությունը— ընտրվեց Սիլվանոսը, որը հռչակված էր որպես կաշառակեր ու գավաճան (կայսերական հրամանագրին համապատասխան, 303 թ. նա այրելու համար իշխանություններին մատնեց «սրբազան» գրքերը)։

Նեոկեսարիայի եկեղեցաժողով— 341 թ. կալվածային եկեղեցաժողով. հաստատել է 15 կանոն՝ եկեղեցական կառավարչության հարցերի և հոգևորականության բարոյականության վերաբերյալ։

Նիկիայի եկեղեցաժողով— I տիեզերական եկեղեցաժողովը (325 թ.) Նիկիայում (Փոքր Ասիա)։ Գլխավորում էր կայսր Կոստանդին I-ը։ Եկեղեցաժողովը դատապարտեց արիանների ազանդը, որը ժխտում էր եկեղեցական մի շարք դոգմաներ, և ընդունեց հավատո հանգանակը։ Այդ եկեղեցաժողովն ավարտեց քրիստոնեության ղարգացման վաղ շրջանը։

Պրեյատ— բարձրաստիճան հոգևորական։

Աբաճաս Ալեքսանդրացի— կրոնական դրվածքների և հերետիկոսների դեմ ուղղված բանավիճական երկերի հեղինակ (295—373 թթ.), Ալեքսանդրիայի եպիսկոպոս (328-ից)։ Հռչակվել է իր անհանդուրժողականությամբ և դաժանությամբ։ Հենվելով կալվածքային տաճարների հեղինակության վրա, կայսրերը նրան հինգ անգամ ստիպել են լքել եպիսկոպոսությունը և թաքնվել։

էջ 7

Կոստանդին Մեծ— *Հռոմի կայսր (306—337 ԹԹ.)։ Նրա օրոք հրապարակվել է Միլանի էդիկտը (313 Թ.), որով թույլատրվեց քրիստոնեության ազատ դավանանքը։ Հաջորդների օրոք ուժեղացավ կայսերական իշխանության ակտիվ միջամտությունը եկեղեցու գործերին։*

Թեոդոսիոս— *Հռոմի կայսր (367—383 ԹԹ.)։*

Հերոնիմոս— *եկեղեցու հայր (348—420 ԹԹ.), հունարենից կատարված բազմաթիվ լատիներեն թարգմանությունների և պատմական երկերի հեղինակ։ Թարգմանել է Աստվածաշունչը, կազմել 135 քրիստոնեական գրողների ցանկը, գրել հռոմեական դրականությանը վերաբերվող հոդվածներ։ Ըստ ավանդության, որոշ ժամանակ որպես հնդհավոր ապրել է անապատում, իսկ կյանքի վերջին 40 տարին անցկացրել մեկուսի խցում։*

էջ 8

Վաղենտիոս— *Հռոմի կայսր (364—378 ԹԹ.)։*

Եկեղեցու հայրեր կամ եկեղեցու ուսուցիչներ *(լատ.* doctor ecclesiae*)*— *պատվավոր անուն, որ կաթոլիկական եկեղեցին տվել է ավելի ականավոր աստվածաբաններին, որոնք II—VIII դդ. մշակել են եկեղեցական դավանաբանությունը և քրիստոնեական փիլիսոփայությունը։*

Կիբելա— *Մեծ մայր, աստվածների և երկրի վրա բոլոր ապրողների մայրը, որը վերածնում է բնությունը, բեղունություն պարգևում, պաշտամունքը ծագել է Փոքր Ասիայում։*

էջ 10

Հովհաննու հայտնություն *(հուն. ապոկալիպսիս)*— *Նոր կտակարանի մի մասը, որտեղ կան միստիկական մարգարեություններ աշխարհի վերջի և ահեղ դատաստանի մասին։ Վերագրվում է առաքյալ Հովհաննեսին։*

Մեծաշուք քաղաք— *Հավիտենական քաղաք, Հավերժ քաղաք, Հռոմը։*

Բաբելոն— *Բաբելոնի թագավորության մայրաքաղաքը։ Քրիստոնյաների պատկերացմամբ՝ սանձարձակության և արատների օրրանը։ Հովհաննու հայտնության մեջ Հռոմը նմանեցվում է ապականված հրեշին՝ Բաբելոնին։*

Ռոմուլոս— *Հռոմի առասպելական հիմնադիրը։*

«... Մարիամի մենաստանը, մանուկ Հիսուսի ծաղայրը»— *ըստ ավետարանի, կույս Ննջեհեմ, Հովսեփը և Մարիամը, գիշերելու տեղ չգտնելով, կանգ առան քաղաքից դուրս գտնվող մի քարայրում, որը ոչխարների փարախ էր։ Այստեղ և իրը ծնվել է Հիսուսը։*

էջ 11

Սուրբ Օգոստոս, Օգոստինոս *(ուղղափառության մեջ՝ Աւրանելի)*— *«Եկեղեցու հայրերից» խոշորագույնը (354—430 ԹԹ.), 395-ից եպիսկոպոս Հյուսիսային Աֆրիկայում։ Բազմաթիվ գրվածքների («Աստծո քաղաքի մասին», «Խոստովանություն»), նամակների, քարոզների հեղինակ։ Միջին դարերում բարձրագույն հեղինակություն էր։ Մշակել է քրիստոնեական դավանաբանության համակարգ, աշխարհիկ իշխանության բոլոր ներկայացուցիչներին՝ եկեղեցուն ենթարկվելու վարդապետությունը, համաշխարհային պատմության աստվածային կանխորոշման պաղափարը։*

«Հավատում եմ, ֆանզի անհեթեթ է» (credo, quia absurdum)— հայտնի քրիստոնեական աստվածաբան Տերտուլիանի (մոտ 160—մոտ 220 թթ.) ասույթը. նա ապացուցում էր, թե կրոնական ճշմարտություններըդ մարդկային բանականությանը անհասանելի են։

Մա. ւևնտիոս— հռոմեական կայսր (307—312 թթ.)։

էջ 12

Քրիստոնեական հավատո հանգանակ— կրոնի հիմնական վարդապետությունների համառոտ շարադրանքը՝ «երրորդության» (աշխարհի արարիչ հայր աստծո. կույս Մարիամից ծնված, աշխարհ եկած որդի աստծո, որ խաչվել է և հարություն առել. սուրբ հոգի աստծո, որ բխում է հայ. աստծուց և որդի աստծուց), հավիտյան անդրշիրիմյան կյանքի ընդունումը։ Ընդունվել է 325-ին Նիկիայի եկեղեցաժողովում և լրացվել 381 թվականին II տիեզերական (Կոստանդնուպոլիսի) եկեղեցաժողովում։

«Պրուսացիները, որոնք 1870-ին իր հանցագործություններ չկատարեցին»— 1870—1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ պրուսացիները դաժանորեն էին վերաբերվում Ֆրանսիայի օկուպացրած մասի բնակչությանը։

Հուլիանոս Փիլիսոփա— Հուլիանոս Ուրացող, հռոմեական կայսր (361—363 թթ.), որը փորձում էր վերականգնել հին կրոնը։

Անաստաս պապ (399—401 թթ.)։

էջ 13

Որիգենոս— եկեղեցու հայր (185—254 թթ.), III դ. ամենաարգասավոր քրիստոնեական գրողը, Հին և Նոր կտակարանի մեկնաբանությունների և վիճաբանական գրվածքների («Ընդդեմ Ցելսի» և ուրիշներ) հեղինակը։ Զգալում էր քրիստոնեությունը մերձեցնել հունական փիլիսոփայությանը։ Մեղադրվել է հերետիկոսության մեջ և հալածվել։

Բազիլիկա— քրիստոնեական տաճարի շինք՝ ձգված քառանկյան ձևի, ներսից սյունաշարով բաժանված մի քանի մասերի (նեֆերի)։

Հերվասիա և Պրոտասիա— քրիստոնեական նահատակներ, երկվորյակ եղբայրներ, մահապատժի են ենթարկվել Հռոմի կայսր Ներոնի (54—68 թթ.) օրոք։

էջ 15

Կոնդակ— պապի հրովարտակը, որ պարունակում է նրա դիմումը, որոշումը կամ կարգադրությունը (լատիներենով)։ Վավերացվում է քուղից կախված արճճե ոսկի կնիքով։

Վիեն— քաղաք Ռոնա գետի ափին (Ֆրանսիայում)։

Պրովանս— հնագույն մարզ Ֆրանսիայի հարավ-արևելքում (մայրաքաղաքը՝ էքս)։ Սկզբնապես մտնում էր Ներքին բուրգունդյան թագավորության կազմի մեջ, հետագայում դարձել է կոմսություն։

էջ 16

Սփնսոս— քաղաք Բյուզանդիայում, էգեյան ծովի արևմտյան ափին։

էջ 17

Աթիլլա— հոների ցեղային միության գլխավորը (433—454 թթ.), ժամանակի հզոր քաղաքական տիրակալը։ 452-ին հոներն անցան Ալպերը և մոտեցան Հռոմին, բայց կայսեր դեսպանությունը նրանց համոզեց հետառնալ, պարտավորվելով վճարել ամենամյա հարկ

**Վանդալներ**— արևելագերմանական ցեղ, ապրում էր Օդերի ափերին 406-ին նրանք մտան Իսպանիա, իսկ 429-ին թագավոր Գեյզերիխի ղեկավարությամբ շարժվեցին դեպի Հյուսիսային Աֆրիկա, որտեղ ստեղծեցին իրենց թագավորությունը 455-ին վանդալները գրոհով առան և կողոպտեցին Հռոմը։

**էջ 18**

**Պապությունն իր գերիշխանությունը** հաստատել է Բիսատևեական եկեղեցու վրա— V—VI դդ. տեղի է ունենում հռոմեական եպիսկոպոսության խիստ ուժեղացում, որը հավակնում է դառնալ առաջինը բոլորի մեջ։ V դ. «պապ» անունը տրվում էր Հռոմի եպիսկոպոսներին։

**Պալմարիա**— կղզի Լիգուրյան ծովում։

**էջ 20**

**Լաֆտանցիուս, Ցիցելիոս Ֆիրմիան**— IV դ. քրիստոնեական գրող, «Աստվածային հաստատումներին» հեղինակ. այդտեղ նա քարոզում էր քրիստոնեական ուսմունքը։ «Հալածողների մահվան մասին» տրակտատում ապացուցում էր, որ բոլոր նրանք, ովքեր հալածել են քրիստոնյաներին, մեռել են տառապալից մահով։

**էջ 21**

**Սու**— ֆրանսիական մանրադրամ, հավասար է 5 սանտիմի (1/20 ֆրանկի)։

**Լուիդոր**— ֆրանսիական մանրադրամ («Ոսկե լյուդովիկոս»), հավասար է 20 ֆրանկի։ Առաջին անգամ երևան է եկել XVII դ., լյուդովիկոս XIII-ի օրոք։

**Կեզար**— պապի ներկայացուցիչ (դեսպանորդ), որ ուղարկվում է որևէ երկիր հատուկ հանձնարարականով։

**Մորիս Լաշատր**— ֆրանսիացի պատմաբան և հրատարակիչ (1814—1900 թթ.) հայածվել է Նապոլեոն III-ի օրոք։ 1871-ին գործակցել է «Վրնժատու» թերթին և Փարիզի կոմունայի պարտությունից հետո փախել արտասահման։ Նրա երկերից են՝ «Պապերի պատմությունը» (1842—1843 թթ.) և «Ինկվիզիցիայի պատմությունը» (1880 թ.)։

**էջ 23**

**Փոկաս**— Բյուզանդիայի կայսր (602—610 թթ.)։ Լինելով զինապետ, գլխավորեց ապստամբ զորքը և երկրում զավթեց իշխանությունը, դաժանաբար սպանելով գահընկեց արված կայսր Մավրիկիոսին։

**էջ 24**

**Մատերիխք**— քաղաք Մաաս գետի վրա, Լիեժից հյուսիս։

**Երիզպոլ**— քաղաք Բյուզանդիայում՝ Մարմարա ծովի ափին։

**Նուբ**— Հռոմի պապերի եռապատիկ թագը, զարդարված թանկարժեք քարերով, գագաթին՝ խաչ։ Խորհրդանշում է պապի «եռակի» իշխանությունը՝ որպես երկրի վրա Քրիստոսի տեղապահի կամ կուսակալի, կաթոլիկական քահանայապետի և միապետի։

**էջ 25**

**Թեոդորոս**—Հակապապ (687 թ.)։ Հակապապ սկսեցին անվանել այն պապերին, որոնց քննությունը կաթոլիկական եկեղեցին անվավեր էր հայտարարում։ Այդ պապերը գոյություն ունեին այսպես կոչված երկպապության կամ եռապապության ժամանակաշրջաններում։ Նրանց առաջադրում էին կարդինալները, հակադրվելով կոնկլավին, որ քննել էր «օրինական» պապին։

Ս. Հուլիոս— *քրիստոնեական նահատակ V դ., խաչվել է։ Նրա մասունքները տեղափոխվել են Իտալիա, և եկեղեցին նրան սրբերի կարգն է դասել։*

էջ 26

Ելեվնեհա— *քաղաք Հյուսիսային Իտալիայում, Ադրիատիկ ծովի արևմտյան ափին։ VII դ. նրա շրջակայքը հանդիսանում էր բյուզանդական տիրույթ և կոչվում էր էկզարքություն (կուսակալություն)։ Ավելի ուշ մտել է պապական պետության կազմի մեջ։*

էջ 28

Հռոմանիանոս II— *Բյուզանդիայի կայսր (685—695 և 705—711 ԹԹ.)։*

էջ 29

Վերգիլիոս— *զալցբուրգցի եպիսկոպոս, իռլանդացի (մահ. 784-ին կամ 785-ին), քրիստոնեության քարոզիչ։ Պաշտոնից հեռացվել է որպես հերետիկոս։*

էջ 30

Լաթերան— *պալատ Հռոմում, կառուցվել է կայսր Ներոնի օրոք, մինչև XIV դ. եղել է պապերի նստավայրը։*

էջ 31

Կարլոս Մեծ— *ֆրանկյան թագավոր (768—814 ԹԹ.), 800-ին Հռոմում թագադրվել է որպես կայսր։*

Սարացիններ— *միջնադարում սկզբնապես արաբների, հետագայում՝ ընդհանրապես բոլոր մահմեդականների անվանումը։*

էջ 34

Սուրբ Ցեցիլիա— *ազնվատոհմիկ հռոմուհի (III դ. առաջին կեսում), որը գաղտնի կերպով քրիստոնեություն է ընդունել և ուխտել կույս մնալ։ 230-ին եռօրյա տանապանքներից հետո վախճանվել է նահատակի մահով։ Պասքալիս I-ը 821-ին նրա մասունքները տեղավորեց Հռոմում ս. Ցեցիլիայի եկեղեցում։ Համարվում է հոգևոր նրաժշտության հովանավորուհի։*

էջ 35

Սուրբ Բրիգիտա— *Իռլանդիայի հովանավորուհին (VI դ.)։ Միանձնուհի դառնալով մինչև կյանքի վերջը ապրել է խցում։ Անգլիայում և Իռլանդիայում պաշտվող սրբերից մեկը։*

Սուրբ Պողոս— *քրիստոնեության առաջին քարոզիչներից մեկը (I դ.), նրան են վերագրվում 14 ուղերձներ, որ մտել են Նոր կտակարանի մեջ։*

էջ 36

Սուրբ Հովսեփ— *ըստ ավետարանի, Մարիամի՝ Քրիստոսի մոր ամուսինը։*

Հովհաննես Մկրտիչ (կամ Կարապետ)— *ըստ ավետարանի, մարդարե, որը կանխատեսեց Քրիստոսի հայտնությունը և կնքեց շատ երեխաների, այդ թվում և՝ իրեն Հիսուսին։*

Լյուդովիկոս IX Սուրբ— *Ֆրանսիացի թագավոր (1226—1270 ԹԹ.)։*

Լյուդովիկոս Բարեպաշտ— *ֆրանկյան կայսր (814—840 ԹԹ.), Կարլոս Մեծի որդին։ Իր մականունը ստացել է եկեղեցուն հովանավորելու համար։*

Լոթար— *ֆրանկյան կայսր (840—855 ԹԹ.), Լյուդովիկոս Բարեպաշտի որդին։*

էջ 38

Սան-Դենի— *բենեդիկտյան միաբանություն* **Սան-Դենի** *գյուղաքաղաքում (Փարիզի հյուսիսային արվարձանում), հիմնադրվել է 630-ին։*

էջ 40

Պապեբրոկ Դանիել— *բելգիացի պատմաբան, ճիզվիտ (1628—1714 թթ.), Բոլանդի գործի դարունակողը, Անտվերպենում Բոլանդի դրադարանի և թանգարանի ստեղծողը։*

Բոլանդ, Ժան— *բելգիացի ճիզվիտ (1596—1665 թթ.), ճիզվիտական ընկերության (բոլանդականների) հիմնադիրը, որ 1643-ից զբաղվում էր «Վարք սրբոցի» հրատարակությամբ։ Հրատարակությունը (մոտ 67 հատոր) մինչև այժմ չի ավարտվել։*

էջ 43

...Ս. Պետրոսի նկեղեցին, որ կործանել կին արաբները— *IX դ. սկզբին արաբները բազմիցս ավերիչ հարձակումներ են գործել Իտալիայի արևմտյան ափերի վրա։*

էջ 44

**Վավր**— *XIII դ. արծաթե ֆրանսիական դրամ (ֆրանկից որոշ չափով փոքր). քաշի ֆրանսիական չափի միավոր, որը մոտավորապես հավասար է 0,5 կգ։*

**Պապուճի Հովհաննա**— *պապերի պաշտոնական ցանկի մեջ չի մտնում։ Նրա խնդությունը վերջնականապես չի ապացուցված։*

**Հարության օր**— *եկեղեցու գլխավոր տոներից մեկը. նվիրված է Քրիստոսի համբարձմանը։ Տոնվում է զատկից 40 օր հետո։*

էջ 45

**Բարոնիոս Կեսար**— *իտալացի աստվածաբան (1538—1607 թթ.), Վատիկանի կարդինալ՝ գրադարանապետ, «եկեղեցական տարեգրության»՝ եկեղեցու պատմությանը նվիրված 12 հատորյա աշխատության հեղինակը։*

**Ժենեբրար, Գիլբերտ**— *բենեդիկտական, էքսի (Պրովանսում) արքեպիսկոպոս, աստվածաբան (1537—1597 թթ.), գրել է մի շարք աշխատություններ։*

էջ 48

**Լյուդովիկոս Գերմանացի**— *Գերմանիայի թագավոր (840—876 թթ.), Լյուդովիկոս Բարեպաշտի որդին։*

**Կառլոս II Ճաղատ**— *ֆրանկյան թագավոր (840—877 թթ.), Լյուդովիկոս Բարեպաշտի որդին։*

էջ 50

**Լոթարինգիա**— *պատմական մարզ, գտնվում է Հռենոսից արևմուտք։ Կառլոս Մեծի կայսրության բայրայումից հետո գոյացած երկրամասերից մեկը։*

**Մեց**— *քաղաք Լոթարինգիայում, Մուզել գետի ափին։ Միջին դարերում մտնում էր մերթ Ֆրանսիայի, մերթ Սրբազան Հռոմեական կայսրության կազմի մեջ։*

էջ 52

**Բոգորիս** *(Բորիս— Միխայիլ)*— *Բուլղարիայի թագավոր (852—889 թթ.)։*

**Նրանք պետք է պապից ցուցմունքներ ստանային կրոնքին վերաբերող ճարտեի առթիվ։** *865-ին Բոգորիսը քրիստոնեություն ընդունեց Բյուզանդիայից, բայց արդեն 866-ին բյուզանդացիներից գաղտնի դիմեց պապին, խնդրելով, որ նա ցուցումներ տա*

*դավանանքի հարցերի, ինչպես նաև քաղաքացիական կառավարչության հարցերի վերաբերյալ։*

էջ 54

Սպոլետո— *քաղաք (նաև՝ դքսություն) Միջին Իտալիայում (Հռոմից հյուսիս)։*

Կառլոման— *Իտալիայի թագավոր (մահ. 880 թ.), Լյուդովիկոս Գերմանացու որդին։*

էջ 55

Գաղիա, Գալիա— *հնում՝ ժամանակակից Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Շվեյցարիայի և Հյուսիսային Իտալիայի տերիտորիան։ Այստեղ նիստ ունի Ֆրանսիան։*

էջ 56

Լյուդովիկոս II Կակազ— *Ֆրանսիայի թագավոր (877—879 թթ.)։*

էջ 58

**Մոնտե-Կասինո**— *վանք, գտնվում է Նեապոլի մոտ, 529-ին հիմնադրել է Բենեդիկտոս Նուրսիացին (մոտ 480 թ.— մոտ 543 թթ.), որը կանոնականացված եկեղեցական գործիչ է։ Նա վանականների համար սահմանեց հատուկ կանոնադրություն, սկիզբ դրեց բենեդիկտյանների և ընդհանրապես վանական միաբանության ստեղծմանը։*

**Ս. Բենեդիկտոսի միաբանություն**— *կաթոլիկական վանական միաբանություն, հիմնադրվել է VI դ. սկզբին։ Միաբանությունը դարձավ հողի խոշոր սեփականատեր, գործուն կերպով ստուգարում էր պապին։*

էջ 61

Կյուի— *Իտալիայի թագավոր, Արևմուտքի կայսր (889—894 թթ.)։ 891-ին թագադրվել է Հռոմում։*

Առնուլֆ— *Գերմանիայի թագավոր (888—899 թթ.), Լյուդովիկոս Գերմանաց[illegible] թոռ[illegible]։*

էջ 62

Ստեփանոս VI— *պապ (896 թ.)։*

էջ 64

Պլատինոս Բարտոլոմեո դե Սաքի— *իտալացի հումանիստ (1421—1481 թթ.), Սիքստոս IV-ի ժամանակ եղել է Վատիկանի գրադարանապետ, պապերի կենսագրությունների, փիլիսոփայական տրակտատների և պատմական երկերի հեղինակ։*

Կատեդրալ ալ ձևորի երեմ մատեներ— *այ ձևոքի երկք մատենէրով պայն օրհնություն է տալիս։*

էջ 66

**Սիմոնականություն**— *միջին դարերում եկեղեցական տիտղոսների ու պաշտոնների վաճառքը, որը լայն չափեր էր ընդունել (ավետարանական կախարդ Սիմոնի անունից, որն առաքյալներից ուզում էր գնել «սուրբ հոգու երանությունը»)։*

էջ 68

**Բահոս** (հուն. Վակխ. Դիոնիս)— *բուսականության հին հռոմեական աստվածը, խաղողագործության և գինեգործության հովանավորը։ Նրա պատվին կատարվող տոնակատարությունները նշանավորվում էին անզուսպ խրախճանքներով (վակխանալիաներով)։*

**Մնսալինա**— *Հռոմի կայսր Կլավդիոսի (41—54 թթ.) կինը, հռչակվել է իր անա-*

*ռակությամբ։ Նրա անունը դարձել է անամոթության և սանձարձակության խորհրդանիշ։*

*Ս. Հովհաննես Ոսկեբերան— Հովհան Ոսկեբերան (347—407 թթ.), Կոստանդնուպոլսի պատրիարք, եկեղեցու հայր, ականավոր քարոզիչ ու աստվածաբան։ Մերկացնում էր հոգևորականության արատները, դաժանորեն հետապնդում հերետիկոսներին, ճնշվողության ու աշխարհիկ վայելքներից հրաժարվելու կոչ անում։*

*Փարիսեցիներ— հին հրեական կրոնական-քաղաքական աղանդի ներկայացուցիչներ, որոնք մեծ ուշադրություն էին դարձնում բարեպաշտության արտաքին կողմին։*

*Մարկոլֆ— միջնադարյան Գերմանիայում սահմանամերձ մարզի (մարկայի) կառավարիչ, հետագայում որոշ իշխանների տիտղոս։*

էջ 70

*Ալֆրեդ դե Մյուսե— ֆրանսիացի ականավոր պոետ-ռոմանտիկ (1810—1857 թթ.)։*

էջ 72

*Լիուտպրանդ— Կրեմոնի (Լոմբարդիայում) եպիսկոպոս, միջնադարյան խոշոր պատմաբան (մոտ 920—972 թթ.), պատմահուշագրական բնույթի մի շարք աշխատությունների հեղինակ։*

*Բերենգար II— Իտալիայի թագավոր (950—962 թթ.)։*

էջ 75

*Դուզո, Լոմբարդիայի բազավոր— Իտալիայի թագավոր (926—947 թթ.)։*

*Հետերա— Հին Հունաստանում և Հռոմում՝ շամուսնացած կին, որն ազատ ապրելակերպ էր վարում։ Սովորաբար հետերաներն աչքի էին ընկնում իրենց կրթվածությամբ և արտիստական ընդունակություններով։ Համախ հետերաներ էին անվանում թեթևաբարո կանանց։*

*Լեսբոս— կղզի Էգեյան ծովում, արատավորության համբավ ուներ (լեսբոսյան սեր)։*

էջ 76

*Ս. Հրեշտա՛յի ամրոցը— Հին Հռոմում կայսր Ադրիանոսի (117—138 թթ.) դամբարանը, միջին դարերում ծառայել է որպես ամրոց՝ պետական բանտ և Հռոմի պապերի ապաստանավայր։*

էջ 77

*Օթոն— Գերմանիայի կայսր (936—973 թթ.)։*

էջ 82

*Բդրե կնգղավարներ— իտալական թղթախաղի քարտերի վրա զինվորների փոխարեն կնգղավոր կաթոլիկ վանական էր նկարված։*

էջ 87

*Հաննիբալը պարզապես չափազանցրել է այդ քաղաքի բարեմասնությունները— Փյունիկյան երկրորդ պատերազմի ժամանակ (218—201 թթ. մ. թ. ա.), Կաններում հռոմեացիների պարտությունից (216 թ. մ. թ. ա.) հետո Կապուան (Կամպանիում) անցավ կարթագենցի զորավար Հաննիբալի (246—183 թթ. մ.թ.ա.) կողմը և երեք տարի շարունակ նրա հենարանն էր Իտալիայում։*

էջ 88

Մեշկո I— *առաջին լհհական իշխանը (960—992 թթ.)։*

էջ 89

Բախտացույց— *աստղարույլքի մեջ մոլորակների գտնվելու վայրը պատկերող աղյուսակ, որի հիման վրա աստղագուշակները գուշակում էին մարդկանց բախտը և իրադարձությունների ելքը։*

էջ 90

Բրժեոխսլավ I— *Չեխիայի իշխան (1037—1055 թթ.)։*

էջ 94

Կոստանդնուպոլիս— *Բյուզանդական կայսրության մայրաքաղաքը։*

էջ 95

Կլյունի— *բենեդիկտյան վանք (Բուրգունդիայում), հիմնադրվել է 910-ին, X—XI դդ. դարձել է բարեկարգչական շարժման կենտրոն, առաջադրել եկեղեցական վերափոխումների ծրագիր (Կլյունյան ռեֆորմ), նպատակ ունենալով ամրապնդել եկեղեցու և պապական իշխանության հզորությունը։ Ծրագրի հիմնական պահանջներն էին՝ հոգևորականության բարոյական հնղինակության բարձրացում, եկեղեցական խիստ կարգապահության ապահովում, վանական համակեցության խիստ պայմանների սահմանում, ճգնավորություն, կուսակրոնություն, սիմոնականության արդելում, պապի ընտրությունների և եպիսկոպոսների նշանակման ժամանակ աշխարհիկ ֆեոդալների և կայսրերի մեկուսացում։*

էջ 97

Պավիա— *քաղաք Պո գետի ափին (Լոմբարդիայում)։*

էջ 99

Մարկոս Ավրելիոս—*Հռոմի կայսր (161—180 թթ.)։*

Գաղտնագիտական բանաձևեր՝ Կաբբալա— *միջնադարյան կրոնական-միստիկական ուսմունք, հիմնված Հին կտակարանի մեկնաբանության վրա (առաջացել է VIII—IX դդ.)։ Վճռական նշանակություն էր տալիս թվանշաններին, որոնց վրա իբր կանգնած է տիեզերքը։ Գաղտնագիտական հաշվումների հիման վրա գուշակում էին ապագան։*

Ալյուիֆեր— *քրիստոնեական դիցարանության մեջ՝ ամենակարող չար ոգի, սատանա, դև։*

էջ 100

Պարկաներ— *բախտի հռոմեական աստվածուհիներ, որոնք հյուսում էին մարդկային կյանքի թելը։*

Մոնտեսքյո, Շառլ Լուի— *ֆրանսիացի ականավոր լուսավորիչ, պատմաբան, սոցիոլոգ (1689—1755 թթ.)։ «Պարսկական նամակներում» (1721 թ.) պաշտպանում էր պատմական օրինաչափության գաղափարները, հանդես գալիս բացարձակ ֆեոդալական միապետության դեմ։ «Օրենքների ոգու մասին» (1748 թ.) գրվածքում ծաղրել է քրիստոնեական վարդապետությունները։*

Դիդրո. Դենի— *ֆրանսիացի ականավոր փիլիսոփա-մատերիալիստ, գրող, հեղափոխական բուրժուազիայի գաղափարախոս (1713—1784 թթ.)։ Հիմնադրել է և խմբա-*

*գրել «Հանրագիտարանը», որին մասնակցել են շատ լուսավորիչներ՝ պայքարելով ֆեոդալական ու եկեղեցական բռնապետության դեմ։*

*Նշանավոր աշխատությունները, որոնք կանխորոշեցին ֆրանսիական մեծ հեղափոխությունը— առաջավոր ֆրանսիացի գիտնականների՝ Վոլտերի, Ռուսոյի, Դիդրոյի, Մոնտեսքյոյի, Հոլբախի, Հելվեցիուսի և մյուսների աշխատությունները, որոնք քայքայում էին ֆեոդալական կարգերի հիմքերը և գցում եկեղեցու հեղինակությունը։*

*Մուրատորի Լուի Անտոն— իտալացի հայտնի հնէաբան և պատմաբան (1672—1750 թթ.)։ 1723—1751-ին 21 հատորով հրապարակել է իտալական միջնադարի պատմական աղբյուրների մի մեծ շարք։*

էջ 104

*Վերգիլիոս— ականավոր հռոմեացի բանաստեղծ (մ. թ. ա. 70—19 թթ.), «Էնեական» էպիկական պոեմի և շատ բանաստեղծությունների հեղինակ։*

*Հորացիոս— անանավոր հռոմեացի բանաստեղծ (մ. թ. ա. 65—8 թթ.), ներբողների, երգիծական երկերի, ուղերձների հեղինակ։*

*Յուվենալ— հռոմեացի խոշոր բանաստեղծ (60—140 թթ.)։*

էջ 105

*Հենրիխ II Սահմանացի— Գերմանիայի կայսր (1002—1024 թթ.)։*

*Օթոն III— Գերմանիայի կայսր (983—1002 թթ.)։*

*Տոսկանա— մարզ Միջին Իտալիայում։ Այդտեղ են գտնվում Ֆլորենցիա, Լուկա, Պիզա քաղաքները։ Այն ժամանակ եղել է կոմսություն։*

*Սաբաուդ— բիբլիական աստված Յահվեհի (որի անունը հուդայականության մեջ արգելվում էր արտասանել) անվանումներից մեկը։*

էջ 110

*Սիգիբերտ— լեյգիացի վանական (1030—1112 թթ.), հայտնի համաշխարհային ժամանակագրության հեղինակը. նկարագրել է 381—1111 թթ. դեպքերը։*

*Պետրոս Դամիանոս— կարդինալ-եպիսկոպոս, կլունիական շարժման գաղափարախոս (1007—1072 թթ.) քաղաքական տրակտատների հեղինակ, պապության ուժեղացման և աշխարհիկ իշխանությունը նրան ենթարկելու ակտիվ կողմնակից։*

*Վինչենցիոս Բովացի— դոմինիկյան, լյուդվիկոս XI-ի արքունիքում դաստիարակ և պլատարանապետ, հեղինակ «Հայելի» ստվարածավալ հանրագիտարանի (1190—1264), որը պարունակում է պատմական, աստվածաբանական, բնագիտական տեղեկություններ։*

էջ 112

*Էտնա— գործող հրաբուխ Սիցիլիայում։*

*Կոնրադ II— Գերմանիայի կայսր (1024—1039 թթ.)։*

*Կանուտ Մեծ— Դանիայի և Անգլիայի թագավոր (1017—1035 թթ.)։*

էջ 113

*Լիմոժ— քաղաք Կենտրոնական Ֆրանսիայում. Վիեն գետի ափին։*

էջ 114

*Հավաքարցուկներ, հավաքմաներ— Հին Հռոմում՝ քուրմեր, որոնք ըստ թռչունների բոխչքի կամ կոնչոցի գուշակում էին ապագան։*

*«Ինկամերոն»— իտալացի ականավոր գիտնական, բանաստեղծ և հումանիստ գրող*

*Ջովաննի Բոկաչոյի (1313—1375 թթ.) առավել հայտնի երկը, որի մեջ մերկացվում են հոգևորականության երկերեսանությունն ու այլասերվածությունը, ծաղրվում են միջնադարյան սնոտիապաշտությունները, խավարամտությունը, շահալտանությունը, խարազանվում պապական արքունիքի բարքերը։*

էջ 121

Հենրիխ III Սև— *Գերմանիայի կայսր (1039—1056 թթ.)։*

էջ 124

Պիզա— *քաղաք Միջին Իտալիայում, Ապրիատիկ ծովի ափին։*

էջ 125

Գրոստա-Ֆերատա— *աբբայություն, Հռոմի մոտ, հիմնադրել են Հարսեկյան միաբանության վանականները 1002-ին։*

էջ 128

Էպիտիմիա— *պատիժ՝ պահք, երկրպագության և այլ ձևերով. եկեղեցին հավատացյալներին պատժում է մեղքերի, հոգևորականության ցուցումները խախտելու համար։*

էջ 129

Փոտ— *բյուզանդացի խոշոր ասպվածաբան (ծն. մոտ 828-ը, մահ. 891-ի և 897-ի միջև), Կոստանդնուպոլսի պատրիարք (857—867 թթ. և 877—886 թթ.), պապականության ակտիվ հակառակորդ։ Նիկողայոս I պապի հետ նրա բախումը հանդեցրեց փոխադարձ բանադրանքի և նախապատրաստեց եկեղեցիների պառակտումը։*

էջ 131

Երկու դար շարունակ... արևելյան և արևմտյան եկեղեցիները միմյանց հետ պատերազմի մեջ էին— *Հռոմեական կայսրության բաժանումն Արևելյանի և Արևմտյանի վերջիվերջո հանգեցրեց այն բանին, որ եկեղեցիները տրոհվեցին հռոմեական-ուղղափառականի (արևելյանի) և հռոմեական-կաթոլիկականի (արևմտյանի)։ Նրանց կոնֆլիկտի հիմքում ընկած էին ոչ այնքան կրոնական վեճերը, որքան քրիստոնեական աշխարհում հեգեմոնիայի հավակնությունը։ Նիկողայոս I պապի հետ Փոտի բախումից հետո հակասությունները սրվեցին, և երկու տարի անց, 1054-ին, տեղի ունեցավ վիրջնական խզումը, երկու եկեղեցիները հռչակեցին միմյանցից իրենց անկախ լինելը։*

էջ 132

Մեմբուր-Լուի— *ֆրանսիացի հիզվիտ, եկեղեցական պատմաբան (1610—1686 թթ.) Լյուդովիկոս XIV-ի պալատում։*

էջ 133

Լուրդ— *քաղաք Հարավարևմտյան Ֆրանսիայում։ Նրա մոտ գտնվող քարանձավում 1858-ին 14-ամյա Բեռնադետտա Սուբիրին իբր ներկայացել է աստվածամայրը։ Դա կրկնվել է, ըստ նրա ասածի, երկու ամսվա ընթացքում 19 անգամ։ Լուրդը դարձավ մասսայական ուխտագնացության վայր, կաթոլիկական պրոպագանդայի և «սուրբ նվիրեհության» սպեկուլյացիայի կենտրոն։*

էջ 134

Արլ— *քաղաք Ֆրանսիայի հարավում (Ռոնա գետի ափին)։*

Նարբոն— *քաղաք Ֆրանսիայի հարավում։*

էջ 135

Էկյու— *հնագույն ֆրանսիական դրամ։ Ոսկե էկյուն մտցրել է Լյուդովիկոս XI-ը (XIII դ.) և կշռում էր 4 գ., արծաթե էկյուն կտրվել է XVII—XVIII դդ., կշռում էր 27 գ. և հավասար էր տալերի (60 սու)։*

էջ 137

Հենրիխի ննգամյա ուրին— *Հենրիխ IV, Գերմանիայի կայսր (1056—1106 թթ.)։*

էջ 138

Վիլետրի— *քաղաք (և կետ) Հռոմից հարավ։*

էջ 139

Կոնկլավ— *կարդինալների ժողով, որ ընտրում է պապին։*

Սան-Մորից— *քաղաք Շվեյցարիայում, Լոմբարդիայի սահմանի մոտ։*

Հիմարավուն ծեսով ընդօրինակել Քրիստոսին— *ըստ Հովհաննու Ավետարանի (գլ. 13), խորհրդավոր ընթրիքի ժամանակ Քրիստոսը լվացել է իր 12 աշակերտների ոտքերը։*

էջ 140

Ռոմբիա— *մարզ Միջին Իտալիայում, Հռոմից հյուսիս։*

Ճգնավորական շղթաներ— *կրոնական ինքնախարազանման գործիքներ, սովորաբար՝ շղթաներ, օղակներ, կապաններ, որոնք մոլեռանդները կրում էին մերկ մարմնի վրա. դա համարվում էր բարոյական սխրագործություն հանուն աստծո։*

Փոռանի— *համառոտ աղոթք ի պատիվ Հիսուսի, Մարիամի և սրբերի, որը երգում են կամ կարդում հանդիսավոր եկեղեցական թափորի ժամանակ։*

էջ 142

Լուք— *համանուն պրովինցիայի գլխավոր քաղաքը։ Միջին դարերում եղել է ազատ քաղաք, հանրապետություն, իշխանապետություն, հաճախ կախվածության մեջ է եղել իտալական մյուս քաղաքներից։*

էջ 143

Վալոմբրոզե— *աբբայություն Ապենինյան լեռներում։ 1038-ին այստեղ վանական միաբանություն է հիմնադրվել, որի անդամները նվիրվել են աղոթքների և «բարեպաշտ հայեցողության»։*

էջ 144

«Ավելուիա»— *հին հրեերեն, «Փառաբանեք աստծուն»։ Փառաբանական կրկներգ եկեղեցական երգասացության մեջ։*

էջ 151

Բամբերգ— *քաղաք Միջին Գերմանիայում (Ֆրանկոնիայում), եպիսկոպոսյան կենտրոն։*

Լամպրեդ Գերսֆելդցի— *գերմանացի հայտնի ժամանակագիր (մոտ 1025— մոտ 1085 թթ.), Գերսֆելդի վանքի վանական, հեղինակ «Անալներին», որտեղ շարադրված են «աշխարհի արարչությունից» սկսած մինչև XI դ. տեղի ունեցած իրադարձություններըե Հատկապես մանրամասնորեն է լուսաբանված 1040—1077 թթ.։ Աշխատությունն ուղղված է Հենրիխ IV-ի դեմ ի պաշտպանություն պապի։ Տաքսիլը սխալվում է. «Անալները» այնքան էլ անկողմնապահ և օբյեկտիվ չեն։*

էջ 153

Առասպելական աղավնու դերը Գրիգորի մոր ներացում...— *ըստ առասպել. Մարիամը հղիացել է Հիսուսով՝ կենակցելով սուրբ Հոգու հետ, որը նրան ներկայացել էր աղավնու կերպարանքով։*

էջ 154

«Կեղծ Իսիդորյան դեկրետներ»— *կեղծ փաստաթղթերի (պապական 100 ուղերձներ, եկեղեցաժողովների որոշումներ) ժողովածու, կազմված IX դ. կեսերին անհայտ անձնավորության կողմից (Իսիդոր Մերկատոր մականունով)։ Նրանցում ապացուցվում էր, որ բոլոր եպիսկոպոսները պետք է ենթարկվեն հռոմեականին (այսինքն պապին), հիմնավորվում էր պապի անկախությունը աշխարհիկ իշխանությունից, առաջադրվում էր պապի անսխալականության թեզը։*

էջ 155

Ինվեստիտուրա— *եպիսկոպոսի կամ աբբայի աստիճանում հողևոր անձի հաստատման արարողությունը. հանձնվում էր գավազան և մատանի՝ հովվական բարեմասնության նշանը, և դալմոն՝ եպիսկոպոսյան հողերի վրա աշխարհիկ իշխանության խորհրդանշանը։ XI—XII դդ. եղել է պայքարի առարկա միապետների և պապերի միջև։*

էջ 157

Կամբրե— *քաղաք Շելդա գետի ափին։ Մինչև XII դ. մտնում էր Սրբազան Հռոմեական կայսրության կազմի մեջ, հետագայում անցել է Ֆրանսիային։*

էջ 159

Վորմս— *քաղաք Հռենոսի ափին (Ֆրանկոնիայում)։*

էջ 161

Կանոս— *Տոսկանայի մարկկոմսուհի Մաթիլդայի ամրոցը (Պարմից հարավ), որտեղ 1077-ի հունվարին Հենրիխ IV-ը երեք օր, ստորացած վիճակում պապից ներում էր հայցում։*

Շպայեր— *քաղաք Հռենոս գետի ափին (Ֆրանկոնիայում)։*

Բուրգունդիա— *մարզ, որ բնակեցված էր բուրգունդներով, Արևելյան և Հարավարևելյան Ֆրանսիայի մի մասը (եղել է ինքնուրույն թագավորություն, այնուհետև՝ դքսություն)։*

էջ 162

Ռեոնոլդ— *Կոնստանցայի եպիսկոպոս (1054—1100 թթ.), հեղինակ «Ժամանակագրության», որի մեջ հանդես է գալիս որպես պապի ակտիվ պաշտպան։*

էջ 163

Ֆորեայմ— *քաղաք Միջին Գերմանիայում, Մայն գետի ափին (Նյուրնբերգից հյուսիս)։*

Մյուլհաուզեն— *կայսերական ազատ քաղաք Սաքսոնիայում։*

Իլստեր— *գետ Սաքսոնիայում։ Այստեղ, Մերզեբուրգի մոտ, 1080-ին ճակատամարտում ընկավ գերմանական իշխանների կողմից թագավոր ընտրված Ռուդոլֆ Շվաբացին։ Դրանից հետո Հենրիխ IV-ն դիմեց դեպի Հռոմ, գրոհով վերցրեց քաղաքը (1084-ին) և կայսր թագադրվեց։*

էջ 165

Ռոբերտ Գյուիսկար— նորմանների չոկատների առաջնորդ (1015—1085 թթ.)։ Պատից ստացել է Ապուլիայի և Կալաբրիայի դուքսի տիտղոս, պարտավորվելով պաշտպանել նրան և ամենամյա հարկ վճարել։ Պապերը սատարում էին նորմանների զավթողական արշավանքներըւ Նորմաններր նվաճեցին Բյուզանդիայի և Հարավային Իտալիայի մի շարք տիրույթներ, իսկ ավելի ուշ ներխուժեցին Բալկաններ։

Սալերնո— քաղաք Հարավային Իտալիայում (Տիրենյան ծովի մոտ)։ Այստեղ, Ռոբերտ Գյուիսկարի 1084-ին կառուցած տաճարում, գտնվում է Գրիգոր պապի դամբարանը։

էջ 167

Էնցիկլիկ— պապի ուղերձը, որ հղվում է բոլոր կաթոլիկներին և վերաբերում է քաղաքական կամ կրոնական հարցերին։

էջ 168

Ալեքսիոս Կոմնենոս— Բյուզանդիայի կայսր (1081—1118 թթ.)։

Կլերմոնի Եկեղեցաժողով— տեղի է ունեցել 1095-ի նոյեմբերին Կլերմոնում (Հարավային Ֆրանսիա)։ Տաճարը չէր տեղավորում բոլոր հավաքվածներին, և պապը ժողովըրդին դիմեց բաղաքի հրապարակում։ Ճառի պաշտոնական տեքստը չի պահպանվել, և ժամանակագրիները նրանից տարատեսակ մեջբերումներ են կատարում։ Եկեղեցաժողովի 32 որոշումներից միայն մեկն էր վերաբերվում խաչակրաց արշավանքի կազմակերպմանը։

էջ 169

Պետրոս Ածապատակաև (Ամյենացի)— վանական, ժողովրդական քարոզիչ, որը 1095/96 թ. ամռանը կենտրոնական և Հյուսիսային Ֆրանսիայում խաչակրաց արշավանքի կոչ էր անում։ Ճղնավորական ապրելակերպը, խանդավառ քարոզները, աղքատներին յաժանված շռայլ ընծաները (հավատացյալների նվիրատվությունների հաշվին) նրան «աստծո մարդու» հռչակի էին արժանացրել։ Նրա հավաքագրած չոկատը բաղկացած էր 14 հազար դյուղացիներից։ Այդ «աղքատների արշավը» անհաջողության մատնվեց։ Պետրոսը չոկատը թողեց իսախտի քմահաճույքին և փախավ Կոստանդնուպոլիս, որտեղ սպասեց մինչև առյանների դալը։

Ժյուրյե, Պիեր— ֆրանսիացի աստվածաբան, բողոքական (1637—1713 թթ.)։

Քանանի Երկիր— Պաղեստինի հնադույն անվանումը մինչև նրա նվաճումը հրեաների կողմից մ. թ. ա. II հազարամյակում։

էջ 170

Վիլբերտ— Գվիբերտ Նոժանացի, ֆրանսիացի վանահայր (1053—1124 թթ.), մի շարք աշխատություններ.ի, այդ թվում խաչակրաց առաջին արշավանքին վերաբերող՝ «Ֆրանսիացիների օդնությամբ աստծո կատարած գործերը» դրքի հեղինակ։

էջ 172

Գոթշալկ— քահանա, որը ղեկավարում էր հռենոսյան մարդկերից հավաքագրած գյուղացիների վեց հազարանոց չոկատը։ Նրա «զորքը», որ թալանով էր զբաղվում, գլխովին ջախջախվեց Հունգարիայում։

Աննա Կոմնենա— հույն գրող (1083—1148-ից հետո), Բյուզանդիայի կայսր Ալեքս I Կոմնենոսի դուստրը, «Ալեքսիադայի»՝ իր հորը նվիրված նևրբողոկանի հեղինակը։

*Հանգամանորեն նկարագրել է բյուզանդական պատմության իրադարձությունները 1069 թվից մինչև 1118 թիվը, մասնավորապես խաչակիրների և հույների հարաբերությունները, և առաջին խաչակրաց արշավանքի հանգամանքները։*

էջ 174

*Հենրիխ V— Գերմանիայի կայսր (1106—1125 թթ.)։*

էջ 176

*Լյուտիխ— քաղաք Բելգիայում, Մաաս գետի ափին։*

*Սուտրի— քաղաք Միջին Իտալիայում։*

էջ 177

*Ալբանո —վայր Հռոմից հարավ-արևելք։*

էջ 179

*Պոմերանիա— մարզ Օդերի երկու ափերին, Բալթիական ծովափի մոտ։*

*Բոլեսլավ— Բոլեսլավ I Քաջ, Լեհաստանի թագավոր (992—1025 թթ.)։*

*Ֆրանսիական կանցլեր— միջին դարերում թագավորության բարձրաստիճան պաշտոնյա, պետական կնիքի պահապան, թագավորական դիվանապետ, արտաքին գործերի և արգարադատության մինիստր։*

*Լյուդովիկոս VI Հաստիկ— Ֆրանսիայի թագավոր (1108—1137 թթ.)։*

*Ինոկենտիկոս— որոշ տերիտորիայի սահմաններում եկեղեցական ժամասացության և կրոնական ծեսերի արգելումը։ Կիրառվում է (X—XI դդ.) անհնազանդ ֆեոդալների, միապետների, ինչպես նաև հերետիկոսների դեմ պայքարելու համար։*

էջ 181

*Լոթար II— Գերմանիայի կայսր (1125—1137 թթ.)։*

էջ 182

*Ավենտինա— Հռոմի յոթ բլուրներից մեկը։*

*Սբոն Ֆրեյզինգցի— եպիսկոպոս Ֆրեյզինգում (Բավարիա) 1111—1158 թթ., մի շարք պատմական աշխատությունների հեղինակ։*

էջ 183

*Բարրի— քաղաք Հարավարևելյան Իտալիայում, Ադրիատիկ ծովի ափին։*

էջ 184

*Բոգոմիլներ (առասպելական տերտեր Բոգիմիլի անունով)— հերետիկոսական շարժման ներկայացուցիչներ։ Շարժումն առաջացավ X դ. Բուլղարիայում և տարածվեց Բալկաններում և Փոքր Ասիայում։ Քարոզում էին հավասարություն, մերժում եկեղեցական իշխանությունը, ժամերգությունը և կրոնի այլ ատրիբուտներ, պայքարում էին հարստահարման դեմ, կազմակերպում համայնքներ՝ ընտրովի ավագի գլխավորությամբ, ճնշվորության կոչ անում։*

էջ 185

*Մատթեոս Նդեսացի (Ուռհայեցի)— XII դ. հայ ժամանակագիր, «Ժամանակագրություն» հեղինակ, նրա հաղորդած տեղեկությունները վերաբերվում են բյուզանդացիներին, Թուրք-սելջուկների, հայերի հարաբերություններին խաչակիրների հետ։*

էջ 186

Կոնրադ Բաբենպաշտ— *Կոնրադ II Գոգենշտաֆեն, գերմանական կայսր (1138—1153 թթ.)։*

Առնոլդ Բրեշիանացի— *եկեղեցական բարեկործոգիչ (1100—1155 թթ.), ծագումով՝ գրեշիայից (Լոմբարդիա), Աբելյարի հետևորդ։ Բազմիցս պապերը նրան աքսորել են Իտալիայից։ Պահանջում էր եկեղեցական հողերը բաժանել ժողովրդին, մերժում էր պապությունը որպես ինստիտուտ, պայքարում հանրապետական կարգ հաստատելու համար։ 1143-ին Հռոմում գլխավորել է ժողովրդական ապստամբությունը, որի շնորհիվ վտարվել է Ինոկենտիոս II-ը, ստեղծվել է սենատ և Հռոմը դարձել է քաղաքային կոմունա։ Նրան բռնել են Ֆրիդրիխ I-ի գործակալները և հետագայում խեղդամահ արել։*

Աբելյար, Պիեր— *ֆրանսիացի փիլիսոփա, աստվածաբան (1079—1142 թթ.), միջնադարյան ազատամտության ներկայացուցիչ, մեծ համբավ ուներ սովորող երիտասարդության մեջ։ Իր դասախոսություններում փառաբանում էր աշխարհիկ փիլիսոփայությունը, պաշտպանում բանականության իրավունքը կույր հավատի նկատմամբ։ «Այո և ոչ» երկում (1122 թ.) ցույց է տվել եկեղեցու հայրերի գրվածքներում եղած հակասությունները։ «Մանիր գքեղ» աշխատության մեջ որպես քնաբարոյական օրենք ճանաչում էր խիղճը, այլ ոչ թե կրոնական դոգմաները։ Նրա ուսմունքը դատապարտվել է եկեղեցժողովներում, աշխատությունները այրել են, իսկ այն գպրոցները, որտեղ նա դասավանդել է, փակվել են։*

Կապիտոլիում— *Հռոմի յոթ բլուրներից մեկը, որի մերձակայքում հնում գտնվում էին հանրապետական հիմնարկությունները։*

էջ 187

*Հնագույն շենքի դարպասներ, որտեղ ժամանակին գտնվում էին աշխարհը կառավարող սենատորներն ու կոնսուլները— սենատի շենքը (Ֆորումի վրա), կառուցվել էր դեռևս Հռոմի պատմության ավանդական թագավորական ժամանակաշրջանում։ Դրանից 500 տարի հետո, մ. թ. ա. 53-ին, հրդեհվել է, նույն տեղում կեսարը և Օգոստոսը կառուցել են նոր շենք։*

Քարը (հիմարկե, ոչ այն քարը, որի վրա Հիսուս Քրիստոսը պատրաստվում էր կառուցել իր տաճարը)— *«Պետրոս» հունարեն նշանակում է քար։ Ըստ ավետարանական առասպելի, Քրիստոսն առաքյալ Պետրոսին ասաց. «Դո՛ւ, Պետրո՛ս, քար ես, և այդ քարի վրա ես կկառուցեմ իմ եկեղեցին»։*

Մահմեդ— *արաբ տիրակալ և քարոզիչ (մոտ 570—632 թթ.), ծնվել է Մեքքայում. Իսլամի հիմնադիրը, որին մուսուլմանները համարում են մեծագույն մարգարե, Ալլահի առաքյալ։*

էջ 190

Բևնարդոս Կլերվոցի— *ֆրանսիացի աստվածաբան (մոտ 1091—1153 թթ.), 1115-ին իր հիմնադրած Կլերի վանքի (Բուրգունդիայում) վանահայր, տամպլիերյանների միաբանության հիմնադիր, երկրորդ խաչակրաց արշավանքի ոգեշնչող, ալտիվորեն պայքարել է հերետիկոսների, մասնավորապես Աբելյարի և Առնոլդ Բրեշիանացու դեմ։*

Երկրորդ խաչակրաց արշավանք— *1147—1149 թթ.։ Դրան մասնակցել են Ֆրանսիայի Լյուդովիկոս VII-ը և Գերմանիայի կայսր Կոնրադ III-ը։ Ասպետական չոհատները կոստանդնուպոլսով անցնելով դիմել են դեպի Դամասկոս և, առանց որևէ հա-*

*ջողութ յան, պաշարել քաղաքը։ Վատ կազմակերպված արկածախնդրություն լինելով, արշավանքը գործնական ոչ մի արդյունք չի տվել և ավարտվել է ձախողումով։*

էջ 194

**Ֆրիդրիխ Շիկամորուս (Barbarossa)** — *Ֆրիդրիխ I Հոհենշտաուֆեն (1152—1190 թթ.), առավել հայտնի գերմանական կայսրերից մեկը, խոշոր զորավար։*

էջ 196

*Հռոմական կայսրն առաջարկեց պապական իշխանությանը ենթարկել նույն եկեղեցին։— Այդ ժամանակ Բյուզանդիայում իշխող Մանուել Կոմնենոս կայսրը (1143—1180 թթ.) օգնեց գահի վրա ամրապնդելու Աղեքսանդր III-ին և առաջարկեց եկեղեցիները միավորելու ու պատակտմանը վերջ տալու, ինչպես նաև Ֆրիդրիխ Շիկամորուսի դեմ պայքարելու համար ուժերի համախմբման պլան։*

**Լոմբարդյան լիգա** — *Հյուսիսային Իտալիայի (Լոմբարդիայի) քաղաքների միավորումը գերմանական կայսրների ագրեսիայի դեմ պայքարելու համար։ Առաջացել է 1167-ին։*

*Ֆրիդրիխը ստիպված նահանջեց— 1176-ին Լենյանոյի մոտ (Միլանի մերձակայքում) ճակատամարտում Լոմբարդյան լիգայի քաղաքային աշխարհազորի ուժերը չախչախեցին Ֆրիդրիխ Շիկամորուսի զորքերին, և նա ստիպված եղավ հրաժարվել զավթողական պլաններից ու լիգայի հետ պայմանագիր կնքել։*

էջ 197

**Ալբիգոյցիներ** — *Ալբի քաղաքի (Լանգեդոկում) անունով. XII—XIII դդ. աղանդի ներկայացուցիչներ։ Աղանդը տարածված էր Ֆրանսիայի հարավում։ Ալբիգոյցիները մերժում էին եկեղեցական դոգմանները և ծեսերը, հանդես գալիս ևՙ աշխարհիկ ևՙ հոգևոր շահագործման, ֆեոդալական հոզատիրության, տասնորդի ու հարստահարման մյուս ձևերի դեմ։ Նրանց ոչնչացրել է ինկվիզիցիան XIV դ. սկզբին։*

**Լանգեդոկ** — *մարզ Ֆրանսիայի հարավում, Ռոնա և Գարոնա գետերի միջև։*

**Լավոր** — *քաղաք Ֆրանսիայի հարավում, Թուլուզից հարավ։*

էջ 198

**Վալդենսներ, Վալդենսյաններ** — *XII դ. աղանդի ներկայացուցիչներ (լիոնցի վաճառական Պիեռ Վալդի անունով)։ Աղանդը տարածված էր Ֆրանսիայի հարավում, Հյուսիսային Իտալիայում, Գերմանիայում, Չեխիայում։ Վալդենսները շատ բաներում մոտ էին ալբիգոյցիներին։ Պապին սատանայի կուռակալ էին համարում, կոչ էին անում վերականգնել վաղ քրիստոնեական համայնքների բարքերը, հասատաւել հավասարություն, հրաժարվել հարստությունից։*

**Պեռնե, Ժան Պալ** — *ֆրանսիացի բողոքական պատմաբան (ծնվ. 1580-ին)։ 1617—1618-ին լույս են տեսել ալբիգոյցիների և վալդենսների պատմությանը նվիրված նրա աշխատությունները, որոնք մեծ հռչակ են ձեռք բերել։*

էջ 200

**Պալերմո** — *քաղաք Սիցիլիայի հյուսիսում։*

**Ատրիում** — *Հին Հռոմում տան գլխավոր սենյակը (ընդունարանը), հետագայում օգտագործվում էր զուտ պաշտոնական ընդունելությունների համար։*

էջ 202

1179-ի սիեզերական եկեղեցաժողովը— *Լաթերանի III (XI սիեզերական) եկեղեցաժողովը։*

էջ 205

Վերոնա— *քաղաք Հյուսիսային Իտալիայում (Լոմբարդիայում)։*

էջ 207

Սալլահ—աղ— Դին, Սալադին— *նշանավոր զորավար և քաղաքագետ, Եգիպտոսի սուլթան (1174—1193 թթ.)։ Միավորել է Եգիպտոսը, Ասորիքի ու Միջագետքի մի մասը և ստեղծել ուժեղ մահմեդական պետություն։ «Սրբազան պատերազմ» է հայտարարել խաչակիրների դեմ, նրանց չախչախել և 1187-ին Ասորիքում ու Պաղեստինում գրավել մի շարք քաղաքներ, այդ թվում Երուսաղեմը։*

էջ 208

Նոր խաչակրաց արշավանք— *Երրորդ խաչակրաց արշավանքը (1189—1192 թթ.)։*

Նրան հայտնվել եմ ոգեշնչել երեք թագավորների... շարժվել դեպի Պաղեստին— *Երրորդ խաչակրաց արշավանքին մասնակցում էին երեք թագավոր՝ Անգլիայի (Ռիչարդ I Առյուծասիրտ), Ֆրանսիայի (Փիլիպոս II Օգոստոս) և Գերմանիայի (Ֆրիդրիխ I Շիկամորուս)։ Արշավանքը չնչին արդյունքներ տվեց, իսկ Երուսաղեմը առաջվա պես մնաց մուսուլմանների ձեռքում։*

Սելևկիա— *գետ Կիլիկիայում։*

էջ 209

Հևերիխ VI— *գերմանական կայսր (1190—1197 թ.)։*

Օթոն Բրաունշվեյգացի— *Օթոն IV, գերմանական կայսր (1209—1204 թթ.)։*

էջ 210

Ֆրիդրիխ II Հոհենշտաուֆեն— *գերմանական կայսր (1209—1214 թթ.)։*

Փիլիպոս Օգոստոսի և Հովհան Անհողի Երկպառակությունները— *Ֆրանսիայի դեմ մղած պայքարում Անգլիայի թագավոր Հովհան Անհողը (1199—1216 թթ.) մի շարք պարտություններ կրեց, որի հետևանքով Անգլիան մայր ցամաքում կորցրեց շատ տիրույթներ։*

Ազատությունների մեծ խարտիա— *ստորագրել է 1215-ի հունիսի 15-ին Հովհան Անհողը, որը պարտություն էր կրել բարոնների, հոգևորականության և քաղաքների հետ ունեցած պայքարում։ Թագավորը խոստացավ պահպանել եկեղեցական ընտրությունների ազատությունը, սահմանափակել բարոններից գանձվող հարկերը, պաշտպանել նրանց իրավունքները այն չարաշահումներից, որ կատարում էին ատենաժանավորները. արտոնություններ տրվեցին վաճառականներին, ասպետներին։*

էջ 211

Թոմինիկոս Հուսման— *իսպանացի ապնվական (1170—1121 թթ.), դոմինիկյանների (որոնք իրենց ատծո շներ էին հորջորջում) միաբանության հիմնադիր (1216-ին)։ Միաբանությունը ենթարկվում էր անմիջապես պապին։ 1231-ին նրա տեօրինությանը հանձնվեց ինկվիզիցիան։*

Սիմոն դը Մոնֆոր— *ասպետական աշխարհազորի առաջնորդ, որը 1209-ին խաչակրաց արշավանքի է դուրս եկել ալբիգոյցիների դեմ։ Հերետիկոսներին չախչախելուց*

*հետո խոշոր հողային կալվածքների տեր է դարձել։ Սպանվել է 1218-ին Լանգեդոկում, ապստամբության ժամանակ։*

էջ 213

Այն լուսապսակին, որ նրան պարգևեց եկեղեցին— *Դոմինիկոսը սուրբ հռչակվեց։*

Ֆրանցիսկոս Ասիզացի— *ֆրանցիսկյանների (կամ մինորիտների՝ կրտսեր եղբայրների) մուրացկան վանականների միաբանության, վերջինիս կանացի ճյուղավորության հանդիսացող կլարիսինուհիների միաբանության և երրորդ միաբանության՝ տերցիարների հիմնադիր (1182—1226 թթ.)։ Վալդենսների ազդեցությամբ հրաժարվել է ունեցվածքից և աղքատություն ու ապաշխարություն քարոզել, պահանջելով, որ իր հոգևոր եղբայրներն ապրեն սեփական աշխատանքով։ Իննովիկենտիոս III պապը միաբանությանը առավ իր հովանավորության տակ և հաստատեց նրա կանոնադրությունը (1209-ին)։ Արդեն XIII դ. միաբանությունը դարձավ հարուստ կազմակերպություն և դարձավ պապի օգնականը։*

էջ 215

Ազրիպպա դ'Սբինյե— *հումենոտյան կուսակցության նշանավոր գործիչ (1552—1630 թթ.), հայտնի գրող, հուշագրությունների և «Համընդհանուր պատմության» հեղինակ։*

էջ 216

Լյուդովիկոս VIII— *Ֆրանսիայի թագավոր (1223—1226 թթ.)։*

էջ 218

Գիբելլիններ— *քաղաքական կուսակցություն Իտալիայում XII—XV դդ., կազմված էր գլխավորապես ֆեոդալական ազնվականության ներկայացուցիչներից և պաշտպանում էր գերմանական կայսրերին։ Պայքարում էր գվելֆիների պապական կուսակցության դեմ, որը կազմված էր առևտրական-արհեստավորական խավերից, բանկիրներից, արդյունաբերողներից։*

էջ 225

Թյուրինգիա, Հեսեն— *կոմսություններ Կենտրոնական Գերմանիայում։*

էջ 226

Կոնրադ IV— *գերմանական կայսր (1250—1254 թթ.)։*

Դևպի սուրբ երկիր արշավանք կազմակերպելու համար— *յոթերորդ խաչակրաց արշավանքը (1248—1254 թթ.)։ Արշավանքին մասնակցում էին անգլիական և ֆրանսիական ասպետները։ Ղեկավարում էր Լյուդովիկոս IX-ը։ Հիմնական նպատակը Եգիպտոսը նվաճելն էր։ Խաչակիրների զորքերը պարտություն կրեցին, իսկ Լյուդովիկոս IX-ը դերի ընկավ և ազատ արձակվեց մեծ փրկագնով։*

էջ 228

Ֆլագելանտներ— *ինքնախարազանողներ։ Միջին դարերում ինքնախարազանումը համարվում էր ապաշխարանքի նշան, «արյունով կնքվելը» մեղքերի թողություն էր տալիս։ Ֆլանգելանտների շարժումը VIII—XIV դդ. մասսայական նյարդախտի բնույթ ստացավ։ Սակայն նրանց քարոզները հակաեկեղեցական բնույթ ունեին։ 1349-ին պապը նրանց դատապարտեց որպես հերետիկոսների։*

էջ 234

Սեմավոր— *վանական, որը օգնում է կրել, այսինքն ուխտել է ենթարկվել ավելի խիստ կանոնների, քան սովորական վանականները, վարել է ճգնավորական, պարզիակ կյանք։*

էջ 235

Փիլիպոս IV Գեղեցիկ— *Ֆրանսիայի թագավոր (1285—1314 թթ.)։*

էջ 236

Կառլոս Վալուա— *Փիլիպոս IV-ի եղբայր, Ֆրանսիացի խոշոր զորավար (1270—1324 թթ.)։*

Ադոլֆ Նասուացի— *Գերմանական կայսր (1292—1298 թթ.)։*

Էդուարդ I— *Անգլիայի թագավոր (1272—1307 թթ.)։*

Ֆլանդրիա— *մարզ Բելգիայի հյուսիս-արևմուտքում։ XIII—XIV դդ. Ֆրանսիայի ու Անգլիայի միջև կռվախնձոր է դարձել և փաստորեն ինքնուրույն կոմսություն էր։ 1302-ին ֆլանդրիական զորքերը գլխովին ջախջախեցին Փիլիպոս IV-ի բանակը, որ ջանում էր կոմսություններ վերածել թագավորական դոմենի։*

էջ 337

1302-ի ապրիլի 10-ին ես հավաքեց... ազնվականության, հոգևորականության և Լորդ դասի ներկայացուցիչներին— *դա Ֆրանսիայի պատմության մեջ գլխավոր շտատների առաջին նիստն էր, որտեղ ներկայացված էին երեք դասի ներկայացուցիչները։ Հետագայում թագավորները հաճախ դիմում էին գլխավոր շտատներին՝ հույժ կարևոր ու անհապաղ միջոցառումներ կենսագործելու համար։ Գլխավոր շտատները, սակայն, չդարձան թագավորական իշխանությանը վերահսկող օրենսդիր մարմին։*

էջ 240

Դանթե Ալիգերի *(1265—1321 թթ.)*— *իտալացի խոշորագույն բանաստեղծ, «Աստվածային կատակերգության» հեղինակը։*

էջ 241

Թոմաս Ուլսինեմ— *Սենտ-Օլբանիի վանքի (Լոնդոնի մոտ) գրչատան տնօրեն, «Անգլիայի պատմություն» գրքի հեղինակ (մահ. մոտ. 1422-ին)։*

Հոբելյան *(Հոբելյանական տարիներ)*— *պաշտոնապես 1300-ին սահմանված եկեղեցու հարյուրամյակների հոբելյանները։ 1343-ին Կղեմես VI-ը հոբելյանական ժամկետները կրճատեց ու հասցրեց 50 տարու, 1389-ին Ուրբանոս VI-ը 33 տարու (Քրիստոսի երկրային կյանքի տարիների թիվը), իսկ 1470-ին Պողոս II-ը՝ 25 տարու (որը և պահպանվում է ցայսօր)։*

Ջովաննի Վիլանի— *իտալացի ժամանակագիր (1276—1348 թթ.)։ Ֆլորենցիայի պատմությանը նվիրված աշխատության հեղինակ։*

էջ 242

Լաբեատա— *քաղաք Միջին Իտալիայում, Ադրիատիկ ծովի մոտ։*

Դալմատիա— *մարզ Ադրիատիկ ծովի արևելյան ափին, մտնում էր Հունգարական թագավորության կազմի մեջ, հետագայում պատկանում էր Վենետիկին։*

Ոնկանոսի— *քաղաք Միջին Իտալիայում, Անկոնայից հարավ։*

էջ 245

Սկզբում նա իր ճամար նստավայր դարձրեց Լիոնը— *Շուտով պապական արքունիքը փոխադրվեց Ավինյոն (Ֆրանսիայի հարավում), և 70 տարի շարունակ (1309—1377 թթ.) պապերը փաստորեն հանդիսանում էին Ֆրանսիայի թագավորների գերյալները։ Այդ ավինյոնյան գերության շրջանում պապական գահի համար ընտրվում էին միայն ֆրանսիացի եպիսկոպոսները։*

էջ 246

Լաթերանի IV եկեղեցաժողով— *XII տիեզերական եկեղեցաժողովը 1215-ին, միջնադարի եկեղեցաժողովներից ամենախոշորը։ Հաստատեց շուրջ 70 որոշում, այդ ըվում հերետիկոսներին՝ վալդենսյաններին, քաթարներին և մյուսներին անողոքաբար հալածելու որոշումը։*

էջ 247

Լոլարդներ— *գյուղացիական-պլեբեյական հերձվածողության ներկայացուցիչները Անգլիայում XIV դ.։ Պահանջում էին ոչնչացնել վանքերը, վերացնել տասնորդը, բռնագրավել եկեղեցապատկան հողերը և ունեցվածքը, հանդես էին գալիս ֆեոդալների դեմ։*

Փիլիպոս— *Ֆրանսիայի թագավոր (1316—1334 թթ.)։*

էջ 248

Ֆրատիչելլիներ— *իտալերեն՝ եղբայրներ։ Ֆրանցիսկյանների միաբանության ներսում պապությանն ընդդիմացող խմբեր։ Գտնում էին, որ ցուփության ու անառակության մեջ ընկղմված եկեղեցին արմատական բարեռորոգության կարիք ունի։ Դատապարտվեցին որպես հերետիկոսներ և հալածանքի ենթարկվեցին։*

էջ 253

Կոլա դե Ռիենտի— *իտալացի հումանիստ, Հռոմի հանրապետության ղեկավար (1342 թ.)։ Փորձեց միավորել Իտալիան, սանձահարել ֆեոդալներին, հօգուտ քաղաքացիների մի շարք բարեփոխումներ կատարեց։ Սակայն ֆեոդալների դեմ պայքարելու համար ստիպված էր նորից բարձրացնել հարկերը, մի բան, որ զցեց նրա հեղինակությունը և ստիպեց հեռանալ Հռոմից։ Ինոկենտիոս VI-ը նրան ազատեց բանտից, ուր նրան նետել էր Կղեմես VI-ը և փորձեց օգտագործել իր նպատակների համար, 1354-ին նրան Հռոմի սենատորի տիտղոս շնորհվեց։ Ֆեոդալների կաղմակերպած ապստամբության ժամանակ Կոլա դե Ռիենտին սպանվեց (1354 թ.)։*

էջ 254

Լյուդվիկոս Լյուքսեմբուրգցի— *Կառլոս IV, գերմանական կայսր (1346—1378 թթ.)։*

Պետրարկա, Ֆրանչեսկո— *իտալացի խոշորագույն հումանիստ, բանաստեղծ և գրող (1304—1377 թ.)։ Լիրիկական բանաստեղծությունների հետ միասին գրել է թունոտ սոնետներ և պամֆլետներ, որոնց մեջ խարազանել է պապական կուրիայի արատները։*

էջ 255

Տյուլեպեններ— *հերձվածող աղանդ XIV դ., որի անդամները անզուսպ ղեխության էին տրվում։ Եկեղեցուց վտարել է Գրիգոր XI-ը։*

էջ 256

Ուիկլիֆ, Ջոն— *անգլիացի ասպվածաբան (1320—1384 թթ.), Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր։ Հանդես է եկել պապերի անսխալականության սկզբունքի դեմ,*

*քննադատել սրբերի պաշտամունքը, ինդուլգենցիաների առևտուրը, մերժել հաղորդության խորհուրդը, պահանջել, որ եկեղեցին հրաժարվի սեփականությունից։ Դատապարտվել է որպես հերետիկոս։*

**Եկեղեցու «մեծ պառակտումը»**— *Ավինյոնյան գերությունից՝ պապերի Հռոմ վերադառնալուց հետո ընկած ժամանակաշրջանը, որի ընթացքում Անգլիայի, Գերմանիայի և Իտալիայի կարդինալները Հռոմում ընտրում էին իրենց պապերին, իսկ Ֆրանսիայի, Իսպանիայի և Շոտլանդիայի կարդինալները Ավինյոնում՝ այլ պապերի։ Քաստորեն տևել է 1378-ից մինչև 1417-ը։*

էջ 261

**Կառլոս VI**— *Ֆրանսիայի թագավոր (1380—1422)։*

**Պիզայում եկեղեցաժողով բացվեց**— *1409-ի եկեղեցաժողովի նպատակն էր վերացնել պառակտումը։ Որոշվեց գահընկեց անել երկու պապերին և ընտրել երրորդին՝ Ալեքսանդր V-ին։ Դրանով իսկ դրվեց եռապապության սկիզբը։*

էջ 262

**Սիգիզմունդ**— *գերմանական կայսր (1411—1437 թթ.)։*

**Կոկինե... եկեղեցաժողով գումարվեց**— *եկեղեցաժողովը տեղի ունեցավ 1414—1418-ին Կոնստանցայում (ներկայիս Շվեյցարիայի տարածքում)։ Իր առաջ խնդիր էր դրել վերականգնել եկեղեցու միասնությունը և դատապարտել հերետիկոսներին։ Գահընկեց արեց երեք պապերին և ընտրեց Մարտինոս V-ին։ Մահապատժի դատապարտեց Ցան Հուսին և Հիերոնիմուս Պրագացուն։ Ընդունեց նաև եկեղեցու բարեփոխման վերաբերյալ հինգ դեկրետ, որոնց հիման վրա տեղերական եկեղեցաժողովները դառնում էին պապի գործողություններին վերահսկող մշտական ինստիտուտներ։*

էջ 264

**Ցան Հուս**— *չեխ մեծ հումանիստ, ազգային անկախության համար մղված պայքարի առաջամարտիկ, Պրագայի համալսարանի պրոֆեսոր (1369—1415 թթ.)։ Իր քարոզներում խստորեն հանդես էր գալիս հերմանական բռնության և պապական լծի դեմ, եկեղեցուց պահանջում հրաժարվել հարստությունից, դատապարտում ինդուլգենցիաների առևտուրը։ Կանչվեց Կոնստանցայի եկեղեցաժողով և, չնայած Սիգիզմունդի պահպանագրին, 1415-ի հուլիսի 6-ին մահապատժի ենթարկվեց։*

**Հերոնիմուս Պրագացի**— *Չեխական ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Ցան Հուսի ընկերը և գինակիցը (1370—1416 թթ.)։ Ցան Հուսին օգնելու համար գնացել է Կոնստանցա, բայց ճանապարհին բռնվել է և եկեղեցաժողովի վճռով 1416-ի մայիսի 30-ին մահապատժի ենթարկվել։*

էջ 270

**Նեպոտիզմ (խնամիականություն)**— *բարեկամներին ցույց տրվող հովանավորություն, նրանց բարձր կոչումներ, պաշտոններ, եկամտաբեր հոդեր տալը։*

**Կոզիմո Մեդիչի**— *ավագ, Ֆլորենցիան 1434-ից մինչև 1737-ը (ընդհատումներով) կառավարող հայտնի բանկիրական տան ներկայացուցիչ։ 1434-ին զավթեց հանրապետության իշխանությունը և դարձավ դիկտատոր (1434—1464 թթ.)։*

**Լորենցո Մեդիչի Մեծ**— *Ֆլորենտական բռնապետ (1469—1492 թթ.)։ Նրա տիրապետության շրջանը կապված է Ֆլորենցիայի հզորության և արվեստների ծաղկման հետ, որը նա հովանավորում էր։*

էջ 271

Սինիորա՝ *կամ պրիորատ— իշխանների խորհուրդ՝ Ֆլորենցիայի միջնադարյան հանրապետությունում իշխանության բարձրագույն մարմինը։*

էջ 272

Ինկվիզիցիան... ամրապնդվեց— *Իսպանիայում ինկվիզիցիան մտցվեց 1480-ին և վայելում էր թագավորական իշխանության հովանավորությունը։*

Ֆերդինանդ V Կաթոլիկ— *Իսպանիայի թագավոր (1479—1516 թթ.)։*

էջ 273

Թովմաս Տորկվեմադա— *դոմինիկյան, ինկվիզիցիայի պարագլուխն Իսպանիայում, Կաստիլիայի, Արագոնիայի «մեծ ինկվիզիտոր» (1420—1498 թթ.), կատաղի մոլեռանդ, հերետիկոսներին խոշտանգման ենթարկելու խստագույն հրահանգների հեղինակ, երկրում մտցրեց աուտոդաֆեն։ 16 տարվա ընթացքում նրա հաստատած վճիռներով մահապատժի է ենթարկվել 8 հազար մարդ։*

էջ 275

Սուրբ Ամբրոսիոս— *Լիկեցու հայրերից մեկը, Միլանի արքեպիսկոպոս (340—397 թթ.)։*

Ֆերարա— *կոմսություն Իտալիայի հյուսիսում, Ադրիատիկ ծովի ափին (գլխավոր քաղաքը՝ Ֆերարա)։*

էջ 276

Ալֆոնս V— *արագոնյան թագավոր, նույն ինքը Ալֆոնս I՝ Նեապոլի և Սիցիլիայի թագավոր (1416—1458 թթ.)։*

էջ 277

Ֆերդինանդ I— *Նեապոլի թագավոր (1423—1494 թթ.), Ալֆոնս V-ի որդին։*

«Փողից ճոտ չի գալիս»— *թևավոր խոսք, Հռոմի կայսր Վեսպասիանոսի (69—79 թթ.) բառերն են, որ բերված են Սվետոնիոսի «12 կեսարների վարքը» գրքում։ Երբ նրա որդին կշտամբեց հորը, թե նա հասարակաց զուգարանների վրա հարկ է դրել, կայսրը վերցրեց մետաղադրամը և հարցրեց, թե նրանից հո՞տ է գալիս, թե՞ ոչ։ Բացասական պատասխան ստանալով, նա ասաց. «Բայց չէ որ այս գլուխը մեզից է գոյացել»։*

Մահմուդ II Նվաճող— *թուրքական սուլթան (1451—1481 թթ.), Լայն նվաճողական քաղաքականություն էր վարում։ Նրա օրոք ընկավ Բյուզանդական կայսրությունը և Կոստանդնուպոլիսը դարձավ Օսմանյան տերության մայրաքաղաք։ Թուրք զորքերն ընդարձակ տերիտորիաներ զավթեցին նաև Ղրիմում, Բալկաններում, Փոքր Ասիայում, Ներխուժեցին Սերբիա, Այրանիա։*

էջ 277

Վենետիկցիներն այդ ժամանակ աոյալնաեեղ պատերազմ էին մղում Մահմուդ II-ի դեմ— *16-ամյա պատերազմն ընթանում էր փոփոխակի հաջողությամբ։ 1479-ի Կոստանդնուպոլսի հաշտությամբ Վենետիկը Թուրքիային զիջեց Էգեյան ծովի իր կղզիները և պարտավորվեց ամենամյա հարկ վճարել, բայց իր ձեռքում պահեց Կրետոս և Կորֆու կղզիները և իրավունք ստացավ Թուրքիայում առանց մաքսի առևտուր անել։*

էջ 278

Պոջոլիոս Ագրիպա Նետեսհեյմեցի— *գերմանացի հայտնի պատմաբան (1486—1535 ԹԹ.) «Գիտությունների անհուսալիության և օգտազրկության մասին» գրքի հեղինակ։*

Հույն փախստականներ— *Հունաստանի նվաճումը Թուրքերի կողմից ուղեկցվում էր մասսայական կոտորածներով, և բնակչությունն ստիպված էր փրկություն որոնել երկրի սահմաններից դուրս։*

Վատիկան— *բլուր Հռոմի հյուսիսարևմտյան մասում։ Այստեղ V դ. վերջին—VI դ. սկզբին կառուցվեց պալատ, որը դարձավ պապերի նստավայրը (XIV դ. վերջից)։ Հետագայում «Վատիկանը» դարձավ պապական պետության անվանումը։*

Թևդորոս Գիզացի— *իտալացի հումանիստ, պատմաբան և մաթեմատիկոս (1400—1476 ԹԹ.), հայտնի է անտիկ հեղինակների (Հոմերոս, Արիստոտել, Կիկերոն և այլն) բազմաթիվ ծանոթագրություններով և թարգմանություններով։*

էջ 282

Սզիմո— *քաղաք Միջին Իտալիայում։*

Բայազիդ III— *Թուրքական սուլթան (1481—1512 ԹԹ.)։*

Ռոմանիա— *մարզ Իտալիայի արևելքում։ XV դ. մտել է Պապական մարզի կազմի մեջ։*

էջ 284

Բարձր դուռ— *XV դ. սկսած սուլթանական Թուրքիայի պաշտոնական անվանումը։*

էջ 286

Խալիֆ— *մուսուլմանների հոգևոր պետերի տիտղոսը։ Խալիֆան համարվում էր Մահմեդի հաջորդը։ Արաբական առաջին պետություններում (խալիֆայություններում), որ ստեղծվեցին Մահմեդից հետո, խալիֆաներն օժտված էին նաև աշխարհիկ իշխանությամբ։*

էջ 287

Ֆայնելլա— *XVI դ. իտալացի պատմաբան, կեսար Բարոնիուսի հաջորդը։ Եկեղեցու պատմությունը շարունակել է մինչև 1565-ը։*

էջ 290

Սողոմոն— *Իսրայելի և Հուդայի հնագույն միացյալ թագավորության առասպելական արքա։ Ավանդությունը նրան իմաստուն է դարձրել։ Նրան են վերագրվում բիբլիական գրականության մի շարք գրվածքներ։*

Իսիոդա— *բիբլիական արդարակյաց, որը հեզորեն ու անտրտունջ տանում էր ի վերուստ իրեն տրված տանջանքները։*

Ռեֆեսուրա, Ստեֆանո— *Հռոմի մադիստրատի քարտուղար, Կալոնաների երևելի տոհմի կողմնակից, XV դ. վերջերին գահակալած պապերի կատաղի հակառակորդ (մահ. մոտ 1500-ին), «Հռոմեական օրագրի» հեղինակ (օրագիրն ընդգրկում է պապերի պատմությունը 1294—1494 ԹԹ.)։*

էջ 294

Միսիոներ— *եկեղեցու ներկայացուցիչ, որ կրոն էր քարոզում, այլադավանների մեջ։*

էջ 295

Հովհան Բուրխարդ→* *ստրասբուրգցի, 1483-ից պապական արքունիքի, արարողապետ, «Հռոմեական կուրիայի օրագրի» հեղինակ։*

Ջիտա դի Կաստելլո— *քաղաք Միջին Իտալիայում, Տիբրոս գետի աջին (Ֆլորենցիայից հարավ-արևելք)։*

էջ 296

Մոնսինյոր— *եպիսկոպոսի տիտղոս։*

էջ 297

Օսմանյան գահ— *Օսմանյան (Օտոմանյան) կայսրության հիմնադիր սուլթան Օսման I-ի (1288—1326 թթ.) անունով։*

էջ 298

Կուրֆյուրստ— *գերմանական այն իշխանների տիտղոսը, որ իրավունք ունեին մասնակցելու Սրբազան Հռոմեական կայսրության կայսրի ընտրություններին։*

էջ 300

Կոնֆալոներ— *զորապետ, դրոշակակիր, որոշ իտալական քաղաքներում՝ բարձրագույն պաշտոնատար անձ։*

Ռոմազի (Ռոմագա)— *XVII դ. իտալացի գրող, «Կեսար Բորջիայի կյանքը» գրքի (1671 թ.) հեղինակ։*

Օստի— *քաղաք Տիբրոսի գետաբերանում, Հռոմի նավահանգիստ։*

էջ 301

Կոմոդոս— *հռոմեական կայսր (180—192 թթ.)։*

էջ 303

Սավոնարոլա, Ջիրոլամո— *դոմինիկյան վանական, ֆլորենցիական կրոնական-քաղաքական բարեկործիչ (1452—1498 թթ.)։ Պայքարել է պապի և Մեդիչիների բռնապետության դեմ։ 1494-ին Մեդիչիներին արտաքսելուց հետո գարձավ Ֆլորենցիայի լիիշխան տիրակալ։ Հօգուտ բնակչության միջին ու ստորին խավերի կատարել է մի շարք դեմոկրատական բարեփոխումներ, մերկացրել է հոգևորականության անառակությունը և սովորականության սրբապատծությունը, կոչ արել եկեղեցական «բարքերի անաղարտության»։ Հերետիկոս է հայտարարվել, դատի տրվել և այրվել։*

Օռլեանի տոհմ— *Ֆրանսիայում գահակալած Վալուաների և Բուրբոնների հարբուհտությունների ճյուղ։ Այդ տան ներկայացուցիչներ Օռլեանի դուքսերը բազմիցս մասնակցել են պալատական խարդավանքներին, պայքարել իշխանության համար, երբեմն գրավել գահը։*

Լյուդովիկոս XII— *Ֆրանսիացի թագավոր (1498—1515 թթ.)։*

էջ 304

Ֆերդինանդ III Արագոնցի— *Նեապոլի Սիցիլիաների թագավոր (1496—1501 թթ.*

էջ 310

Ռաֆայել Վոլատեռան (Մաֆեի)— *իտալացի գրող (1452—1522 թթ.), Վոլտեր քաղաքից (Տոսկանայում), Սեքստոս IV-ի, Իննովկենտիոս VIII-ի, Ալեքսանդր VI-ի և Պիոս III-ի կենսագրությունների, ինչպես նաև 38 գրքից բաղկացած յուրօրինակ հանրագիտարանի հեղինակ։*

էջ 315

Ցեժ— *պետության ցմա. ընտրվող գլուխ միջնադարյան իտալական հանրապետություններում՝ Վենետիկում և Ճենովայում։*

Տասի խորհուրդ— *Վենետիկի բոլոր քաղաքացիներին և հիմնարկություններին՝ դաշտնի հսկող մարմին։ XIV դ. կեսից դարձավ հանրապետության կարևորագույն քաղաքական մարմինը։*

Փեռուջա— *քաղաք միջին Իտալիայում (Տիբրոս գետի ափին)։*

Թամեռլան— *նշանավոր միջինասիական տիրակալ և նվաճող Թիմուրի (1336—1405 թթ.) մականվան աղավաղված եվրոպական ձևը։ Արաբերեն Թիմուրլանկ նշանակում է Կաղ Թիմուր։*

էջ 316

Ուրբանո— *քաղաք Միջին Իտալիայում։ XIV—XV դ. մտնում էր պապական տիրույթների կազմի մեջ, XVI դ.՝ ինքնուրույն դքսության կենտրոն։*

էջ 318

Միքելանջելո Բուոնառոտի— *իտալացի մեծ նկարիչ, քանդակագործ և ճարտարապետ (1475—1564 թթ.)։ Բոլոնիայում Հուլիոս II-ի հուշարձանի վրա աշխատել է 1506—1508-ին (ավելի ուշ բոլոնիացիները հուշարձանը վաճառեցին Ֆերրարայի դուքսին)։ Հուլիոս II-ի դամբարանը, որը մտահղացված էր որպես վիթխարի հուշարձան, Միքելանջելոն չի ավարտել. նա կերտել է միայն մի քանի արձաններ, այդ թվում և «Մովսեսը»։ Հուլիոս II-ի պատվիրով նկարիչը 1508—1512-ին զարդանկարել է Սիքստինյան կապելլայի առաստաղը։*

էջ 319

Վարիլաս Անտուան— *ֆրանսիացի պատմաբան (1624—1694 թթ.), Ֆրանսիայի պատմության և հերետիկոսական շարժումների վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ. հատկապես զբաղվել է Մեդիչիների տոհմի պատմությամբ։*

էջ 322

*Լուկուլլոսյան խնջույք— Հռոմի կոնսուլ Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոսի (106—56 թթ. մ. թ. ա.) անունից, կոնսուլը հռչակվել է իր ճոխ խնջույքներով։*

էջ 323

Լյութեր, Մարտին— *Ռեֆորմացիայի առաջնորդը Գերմանիայում (1483—1546 թթ.), լյութերականության հիմնադիրը։ Վիտենբերգի համալսարանի դասախոս։ Ձևակերպել է բողոքականության հիմնական սկզբունքները, հռոմեական եկեղեցու դեմ ղեկավարի կոչ արել, դատապարտել ինդուլգենցիաների վաճառքը։ Նրան սատարում էին գերմանական շատ իշխաններ։ 1524—1525 թթ. գյուղացիական պատերազմի տարիներին կոչ էր անում ոչնչացնել ապստամբ գյուղացիներին և ամբողջությամբ անցավ խոշոր ֆեոդալների կողմը։*

Ռաֆայել Սանտի— *իտալացի մեծ նկարիչ (1483—1520 թթ.)։ Նրա շատ գործեր ստեղծվել են պապ Հուլիոս II-ի և պապ Լևոն X-ի պատվերով։*

Կորրեջո— *Անտոնիո Ալեգրի, իտալացի նշանավոր նկարիչ (1448—1534 թթ.)։*

Արիոստո, Լյուդովիկո— *իտալացի ականավոր բանաստեղծ (1473—1533 թթ.), «Մոլեգին Ռոլանդ» պոեմի (1516 թթ.) հեղինակ (պոեմում արտացոլվել են վերածնության շրջանի հումանիստական գաղափարները)։*

էջ 325

Ֆրանցիսկ I— *Ֆրանսիայի թագավոր (1515—1547 թթ.), 1515-ի սեպտեմբերի 14-ին Մարինիանոյի մոտ (Միլանից ոչ շատ հեռու), այսպես կոչված «հսկաների ճակատամարտում» չախչախեց շվեդական զորքերին։ Դրա համար ստացավ շվեյցարացիներին հաղթող կնսար մականունը։*

էջ 326

Սիենա— *քաղաք Տոսկանիայում։ XIV—XV դդ. եղել է ինքնուրույն հանրապետություն։ 1547-ից (Կոզիմո Մեդիչիի օրոք) ենթարկվում էր Ֆլորենցիային։*

էջ 328

Հավիան Տեցել— *գերմանացի վանական (1470—1519 թթ.), Մայնցի արքեպիսկոպոսի գործակալ, բափառում էր Գերմանիայում և ինդուլգենցիաներ վաճառում։*

էջ 331

Օգոստոսյան միաբանություն— *մուրացկան վանականների միաբանություն, հիմնադրվել է 1243-ին և ընդունել մի կանոնադրություն, որն իրր հրել էր ուրբ Օգոստոսը։ Ժողովրդական շարժումների դեմ մղվող պայքարում սատարում էր պապական իշխանությանը։*

էջ 334

Թեզերը... *կախված էին Եկեղեցու մատուռի մոտ— 1517-ի հոկտեմբերի 31-ին Լյութերն իր 95 թեզերը փակցրեց Վիտենբերգի տաճարային եկեղեցու դռներին։ Դրանք գարձան Գերմանիայի ռեֆորմատորական շարժման սկիզբը։*

էջ 335

Կառլոս V— *Իսպանիայի թագավոր (1516—1555 թթ.) և Գերմանիայի կայսր (1519—1555 թթ.)։*

էջ 337

Լյութերականություն— *բողոքականության գլխավոր ուղղություններից մեկը, որին հետևում էր գերմանական բուրժուազիան։ Լյութերականության մեջ ծեսերն ավելի պարզ են, պահպանվում է միայն երկու խորհուրդ (կնունքը և հաղորդությունը), եշմարտության չափանիշ է համարվում միայն «սուրբ գիրքը» (բայց ոչ եկեղեցաժողովների ու սլապերի վճիռները). շեշտը դրվում է ոչ թե ծեսերի, այլ քարոզների վրա, որովհետև «մարդը մեղքերը քավում է սոսկ հավատքով»։ Վամայնքները ղեկավարում են պաստորները և ենթարկվում եպիսկոպոսներին ու կառավարման կոլեգիալ մարմիններին՝ սինոդներին։ Առավել տարածում է գտել Գերմանիայում, սկանդինավյան երկրներում, ԱՄՆ-ում։*

Կալվինականություն— *բողոքականության տարատեսակ (Ժան Կալվինի— 1509—1564 թթ., շարժման հիմնադրի անունով)։ Ծագել է Շվեյցարիայում, հետագայում տա-*

*բաժվել Հոլանդիայում, Անգլիայում, Շոտլանդիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Հունգարիայում, Չեխիայում։*

Բուդդա— *սանսկր., բուդդհա (գիտությամբ լուսավորված, հասկացող). Սիդհարթա, Գաութամա, հին հնդկական կրոնի՝ բուդդիզմի առասպելական հիմնադիրը։ Բուդդայականները նրա ապրելու ժամանակը համարում են մ. թ. ա. 624—544 թթ.։ 36 տարեկան հասակում իբր լուսավորվել է «ճշմարիտ գիտությամբ», որից հետո սկսել է Բուդդա կոչվել։ Մինչև կյանքի վերջը քարոզել է ամբողջ Հնդկաստանում։ Ի պատիվ *ռա տաճարներ կառուցվեցին և հաստատվեց բարդ պաշտամունք։*

Վիշնա— *Հնդկական հիմնական աստվածներից մեկը, արևի աստվածը, մարդկության փրկիչը չարիքից ու վշտից։*

Ինդրա— *կայծակի ու որոտի հնդկական աստվածը, թագավորական իշխանության հովանավորը։*

էջ 339

Նկատերինա Մեդիչի *(1519—1589)— Հայնրիխ II-ի՝ Ֆրանսիայի թագավոր (1547—1559 թթ., կինը։*

էջ 340

Քրիստիան II— *Դանիայի թագավոր (1513—1523 թթ.)։*

Ուփսալա— *քաղաք Շվեդիայում, Ստոկհոլմից ոչ հեռու, Շվեդիայի արքեպիսկոպոսի նստավայրը։*

Ստեն Ստուրե Կրտսեր— *Շվեդիայի կառավարիչը (1512—1520 թթ.), ղեկավարում էր Շվեդիայի անկախության համար մղվող պայքարը։*

էջ 346

Ֆերդինանդ Ավստրիացի— *Ֆերդինանդ I, գերմանական կայսր (1556—1564 թթ.), Չեխիայի, Հունգարիայի թագավոր։*

էջ 347

Հենրիխ VIII— *Անգլիայի թագավոր (1509—1547 թթ.)։*

էջ 349

Անգլիական եկեղեցի— *պետական եկեղեցի Անգլիայում, բողոքականության տարատեսակ։ Պահպանում է եկեղեցական հիերարխիան, շքեղ պաշտացուները։ 1534-ին այդ եկեղեցու գլուխ է հռչակվել թագավորը, և հարաբերությունները Վատիկանի հետ խզվել են։*

էջ 352

Պիմենիչի Միխելանջելոյին— *1527-ին, Մեդիչիներին վռնդելուց հետո, Ֆլորենցիան պաշարեցին պապի և կայսեր զորքերը։ Միքելանջելոն 1529-ի ապրիլին նշանակվեց քաղաքի ամրությունների գլխավոր պետ և որպես ռազմական ինժեներ անմիջականորեն գրաղվում էր պաշտպանական կառույցներով։*

էջ 354

Հենրիխ II— *Ֆրանսիայի թագավոր (1547—1559 թթ.), Ֆրանցիսկ I-ի որդին, Օռելանի դուքսը։ Նրա օրոք հաստատվեց բողոքական-հերետիկոսներին դատելու «հրի պալատը»։*

էջ 355

Բռանտոմ, Պիեր դը Բուրդեյ— *ֆրանսիական պալատական, Եկատերինա Մեդիչիի և Վալուա ընտանիքի անդամների մտերիմը (1540—1614 ԹԹ.), «Մեծ զորավարների կենսագրություն», «Նշանավոր տիկնանց կենսագրություն» և ուրիշ գրական-պատմական երկերի հեղինակ։*

էջ 360

Իգնատիոս Լոյոլա— *Ինիգո Լոպես դե Ռեկալդո, իսպանացի ազնվական (1491—1556 ԹԹ.), «Հիսուսի ընկերության» (Հիզվիտների միաբանության) հիմնադիրը։ 1540-ին Պողոս III-ը այդ «ընկերությունը» հաստատեց որպես վանական միաբանություն, իսկ 1541-ին Լոյոլան դարձավ դրա պարագլուխը՝ գեներալը։ Սահմանեց միաբանության գործունեության հիմնական սկզբունքները, Հիզվիտական դաստիարակության սիստեմը, մշակեց կանոնադրություն։ 1622-ին սրբերի կարգն է դասվել։*

Տրիդենտի եկեղեցաժողով— *XIV տիեզերական եկեղեցաժողովը, 1545—1563 ԹԹ.։ Նպատակն էր Ռեֆորմացիայի դեմ մղվող պայքարում ամրապնդել կաթոլիկությունը։ Բանադրանքի ենթարկեց բողոքականության հիմնական դրույթները, ընդունեց հոգևորականության համար պարտադիր եկեղեցական երդման տեքստը, ընդլայնեց Պապերի իրավունքները հոգևորականությանը հսկելու գործում, ճանաչեց պապական իշխանության գերկայունությունը եկեղեցաժողովների որոշումների նկատմամբ։*

էջ 362

Անաբատիստներ— *վերակնքվածներ, Ռեֆորմացիայի ժամանակաշրջանում գյուղացիական-պլեբեյական հասարակական-կրոնական շարժման հետևորդները։ Հակադրվում էին ինչպես ֆեոդալական, այնպես էլ բյուրգերական լադերին։ Գերմանիայում գործուն կերպով մասնակցում էին գյուղացիական պատերազմին, այնուհետև ներխուժվեցին իրենց համայնքներում, անցնելով ապաքաղաքականության և անդիմադրողականության դիրքերը։ Մերժում էին եկեղեցական հիերարխիան, կրոնական ծեսերը, մոցրին չափահասների կնունքը, գտնելով, որ դավանանքի ընդունումը պետք է լինի գիտակցական։*

էջ 369

Սատուրնատոներ— *տոնակատարություններ Հին Հռոմում ի պատիվ ժամանակի և ցանքսերի աստված Սատուրնի։ Ուղեկցվում էին դիմակահանդեսներով, պարերով, խրնջույքներով և աչքի էին ընկնում սանձարձակ ղվարճանքներով։ Հետագայում այդ տոները ընդունեցին քրիստոնյաները, և դրանք դարձան նրանց նոր տարվա տոնակատարությունների մի մասը։*

էջ 373

Մարիա Ֆյուդոր (Ակյուտոտ)— *Անգլիայի թագուհի (1553—1558 ԹԹ.), Փիլիպոս II Իսպանացու կինը։ Նրա կառավարչությունը նշանավորվեց կաթոլիկական հետադիմության ուժեղացմամբ և Ռեֆորմացիայի ներկայացուցիչների դաժան հալածանքներով։*

էջ 377

Մաքսիմիլիան II— *գերմանական կայսր (1564—1576 ԹԹ.)։*

Ֆերդինանդ I— *գերմանական կայսր (1556—1564 ԹԹ.)։*

Ֆրանսիայում թագավորն ու սենյորները *հրապարակեցին «հանդուրժողականության էդիկտը»— 1562-ի հունվարին հրապարակվեց «հանդուրժողականության էդիկտը», որը պարունակում էր մի շարք զիջումներ կալվինականությանը։ Այդ էդիկտը, սակայն, պայթյ-*

*րեց կաթոլիկներին, լրավարարեց նաև բողոքականներին, և շուտով երկու կողմերի միչև բացահայտ պատերազմ սկսվեց (այսպես կոչված կրոնական պատերազմներ)։*

էջ 378

Ինգոլշտադի համալսարան— *Ինգոլշտադում (Բավարիա), հիմնադրվել է 1472-ին։*

Հազարդությունն Երկու եղանակով— *այսինքն հացով և գինով։ Կաթոլիկ եկեղեցում դա հոգևորականության արտոնությունն է, աշխարհականները հաղորդվում են ամիայն հացիվ»։*

էջ 379

Կառլոս IX— *Ֆրանսիայի թագավոր (1960—1974 թթ.)։*

Հուգենոտներ,— *գերմ.* Eidgenossen *(«երդվյալ միությամբ միավորվածներ»), XVI—XVII դդ. ֆրանսիական կալվինականները, որոնք պայքարում էին բացարձակ միապետության և կաթոլիկական եկեղեցու դեմ։ Արտահայտվում էին երկրի հարավի ու հարավարևմուտքի բուրժուազիայի և արհնատավորների, ինչպես նաև ազնվականության մի մասի շահերը։ Կաթոլիկների հետ նրանց պայքարը երկարատև կրոնական պատերազմների (1562—1594 թթ.) պատճառ դարձավ։*

էջ 380

Կոմա— *քաղաք Լոմբարդիայում, հաճախ եղել է տարբեր թագավորների տիրապետության տակ։*

էջ 381

Սրիրներ— *ոստիկանական գործակալների արհամարհական մականուն Իտալիայում։*

էջ 385

Առիոստո Պալեարիուս— *իտալացի հումանիստ (1500—1570 թթ.), հոգու անմահության, Քրիստոսի մահվանը նվիրված մի շարք երկերի հեղինակ։ Քննադատել է կրոնական որոշ դոգմաներ։ Դասավանդել է Սիենում, Լուկում, Միլանում, 1567-ին նրան մեղադրել է ինկվիզիցյան և հետագայում մահապատժի ենթարկել։*

էջ 389

Նունցիա— *պապի մշտական ներկայացուցիչը այն պետություններում, որոնց հետ Վատիկանը դիվանագիտական հարաբերություններ ունի. համապատասխանում է դեսպանի աստիճանին։*

էջ 391

Ալբա, Ֆերդինանդ Ալվարես— *Նիդեռլանդների կուսակալ (1567—1582 թթ.), հաստատել է տեռորի ռնժիմ, վարել երկրի իսպանացման քաղաքականություն։*

«Մանվան տրիբունալ»— *1567-ին հիմնադրված «Անկարգությունների մասին խորհուրդը», որը ոչնչացնում էր հերետիկոսներին և խռովարարներին։ Ընդամենը վեց տարում մահապատժի է ենթարկվել 6—8 հազ. մարդ։*

էջ 392

Օրանացի թագժառանգ Վիլհելմ— *Նիդեռլանդական հեղափոխության ղեկավար, Հոլանդիա, Ուտրեխտ և Զելանդիա պրովինցիաների կառավարիչ (1533—1584 թթ.)։ Հեղափոխության մեջ պաշտպանել է ազնվականների և բուրժուազիայի շահերը։ Սպանվել է Փիլիպոս II-ի գործակալի ձեռքով։*

էջ 394

Սիգիզմունդ II Ավգուստ— *Լեհաստանի թագավոր (1548—1572 թթ.)։*

էջ 396

Կոլինյի դը Գասպար— *ֆրանսիական ադմիրալ (1517—1572 թթ.), Հուգենոտյան կուսակցության խոշոր գործիչներից մեկը։ Սպանվեց Բարդուղիմեոսյան դիշերը։*

էջ 397

Վազարի, Ջորջո— *իտալացի գեղանկարիչ, ճարտարապետ և արվեստի պատմաբան (1512—1574 թթ.)։ «Առավել նշանավոր գեղանկարիչների, քանդակագործների և ճարտարապետների կենսագրություններ» երկի հեղինակ։*

Պիֆատինյան կապելլա— *պապի անձնական աղոթատունը, կառուցվել է Վատիկանում XV դ.։ Տաճարը զարդարել են վերածննդյան դարաշրջանի խոշորագույն վարպետները՝ Միքելանջելոն, Բոտիչելլին, Պերուջինոն, Գիրլանդայոն և ուրիշներ։*

էջ 399

Հենրիխ III— *Ֆրանսիայի թագավոր (1574—1589 թթ.), Կառլոս IX-ի եղբայրը։*

էջ 400

«Սուրբ լիգա»— *կաթոլիկական լիգա, հիմնադրվել է 1576-ին։*

Հենրիխ I Գիզ— *լոթարինգիայի դուքս (1550—1588 թթ.), կաթոլիկների գլխավորը Ֆրանսիայում, կաթոլիկական լիգայի կազմակերպիչ։*

Ինֆորմատորների հետ համաձայնություն կնքել— *նկատի ունի 1577-ի Բերժերակի էդիկտը, որով վերականգնվեցին Հենրիխ III-ի կողմից խախտված համաձայնագրի պայմանները. ըստ դրա, հուգենոտներին տրվում էին դավանանքի ազատություն և քաղաքական որոշակի իրավունքներ։*

Վալուա— *ֆրանսիական թագավորների դինաստիա, իշխել է 1328—1589 թթ.։*

Լուվր— *ֆրանսիական թագավորների հնագույն պալատը, ստեղծվել է XIII դ.։ 1789—1794 թթ. հեղափոխությունից հետո վերածվել է գեղանկարչության և քանդակագործության աշխարհահռչակ թանգարանի։*

էջ 401

Խուան Ավստրիացի— *Նիդեռլանդների կուսակալ (1577—1578 թթ.)։*

Մարիա Սթյուարտ— *շոտլանդական թագուհի (1542—1587 թթ.), անգլիական գահի հավակնորդ, հենվում էր իսպանական ու անգլիական կաթոլիկների և պապության պաշտպանության վրա։ Բանտարկվել է թագուհի Եղիսաբեթի կողմից և 19 տարի անց մահապատժի ենթարկվել։*

էջ 402

Ներսեսյան— *Պորտուգալիայի թագավոր (1557—1578 թթ.)։*

էջ 410

Բուրբոններ— *ֆրանսիական թագավորների դինաստիա, իշխել է 1589—1599 և 1814—1830 թթ.։*

Հենրիխ Նավարացի— *բուրբոնների (Վալուաների բարեկամների) տոհմի ներկայացուցիչ, Նավարայի թագավոր, Ֆրանսիայի հետագա թագավոր Հենրիխ IV-ը (1589—1610 թթ.)։*

Կանտոն— *Շվեյցարական հանրապետության կազմի մեջ մտնող ինքնուրույն*

առանձին մարզերից յուրաքանչյուրը։ Շվեյցարական կոնֆեդերացիան բաղկացած է 13 կանտոններից, 10 միութենական երկրամասերից և կուսակալների կողմից կառավարվող հպատակ տերիտորիաներից։

էջ 413

Օրեմ Հենրիխների պատերազմ— այսինքն բողոքականների և կաթոլիկների միջև տատանվող Հենրիխ III-ի, հոգենոտներին ոչնչացնելու կոչ անող Հենրիխ Գիզի և բողոքականներին գլխավորող ու գահին հավակնող Հենրիխ Բուրբոնի միջև մղված պատերազմը։ Այդ պատերազմի անցքերը վերաբերվում են 1583-ին։

էջ 414

ԵՒտի, Գրեգորիո— իտալացի պատմաբան և գրող (1630—1701 թթ.), Լյուդովիկոս XIV-ի, Սեքստոս V-ի և այլոց վերաբերող մի շարք գրվածքների հեղինակ։

Իզաբել— Իսրայելի թագուհի, ավետարանում ներկայացված է որպես դաժան և անբարոյական կին։

էջ 415

Էսկուրիալ— Եվրոպայի ամենամեծ սլաշատը (Մադրիդից 52 կմ հեռու)։ Հիմնադրվել է 1563-ին Փիլիպոս II-ը որպես ֆրանսիացիների վրա տարած հաղթանակի հուշարձան։ Համալիրի մեջ են մտնում վանքը, սլաշատը, թանգարանը և բարձրագույն դպրոցը։ Իսպանական թագավորների հանգստարանում գտնվում է 26 թագավորի գերեզման։

էջ 416

Անգլիայի և Իսպանիայի միջև մղվող պատերազմն ավարտվեց Փիլիպոս II-ի պարտությամբ— այդ պատերազմն սկսվեց 1587-ին՝ իսպանական նավերի վրա անդլիական էսկադրայի հարձակմամբ։ Փիլիպոս II-ի ուղարկած «Անհաղթելի armադան» աղետի ենթարկվեց 1588-ին։ Իսպանիան այլևս չկարողացավ ուշքի գալ այդ հարվածից։

էջ 417

Ռուդոլֆ II— Գերմանական կայսր (1576—1612 թթ.)։

Նիդեռլանդների միացյալ նահանգներ— Նիդեռլանդական հեղափոխության հաղթանակի շնորհիվ ստեղծված անկախ բուրժուական պետության պաշտոնական անվանումը։ Առաջացել 1579-ին Ուտրեխտի ունիայի կնքումից հետո։

էջ 423

Մեզերեյ— Ֆրանսիայի հայտնի պատմաբան (1610—1683 թթ.), «Ֆրանսիայի պատմության» հեղինակ։

էջ 425

Հենրիխ IV-ը— պառակտիչ թագավոր։

Մենիպյան երգիծանք— գլխավոր շտաբների դեմ ուղղված Թունոտ սլամֆլետ (լույս է տեսել Ֆրանսիայում 1594-ին)։ Այդպես է կոչվում հին հունական փիլիսոփա Մենիպի (մ. թ. IV դ.) անունով։

էջ 427

Առնո Անտուան— Մեծն Առնո, հայտնի աստվածաբան (1612—1694 թթ.)։ Հանդես է եկել հիզվիտների դեմ և սատարել յանսենականներին։

էջ 430

Բեառնացի— *Հենրիխ IV ծնվել է Պո քաղաքում, Բեառնի մարզի (Ֆրանսիայի հարավում) կենարոնում։ Մարդը XIV դ. մտնում էր նավարական թագավորության կազմի մեջ։*

էջ 431

**«Մեզերեն»**— *«Ներիր ինձ, աստվա՛ծ»։ «Սաղմոսագրքի» 50-րդ սաղմոսի առաջին տողը։*

էջ 432

Նանտյան էդիկտ— *1598 թ. Ֆրանսիայում կրոնական պատերազմներն (1562—1594 թթ.) ավարտելու ակտը, որով որոշվեց բողոքականների վիճակը։ Կաթոլիկությունը ճանաչվեց որպես իշխող կրոն, իսկ հուգենոտներին տրվեց դավանանքի և Ֆրանսիայում (բացի Փարիզից) ժամասացության ազատություն, քաղաքներին տիրելու, պետական պաշտոններ վարելու իրավունք։ Հետագայում այդ իրավունքներն սկսվեցին կրճատվել, իսկ Լյուդովիկոս XIV-ի օրոք, 1685-ին, էդիկտը վերացվեց։*

էջ 434

Մարիա Մեդիչի— *Ֆրանսիայի թագուհի (1573—1642 թթ.) Հենրիխ IV-ի կինը, նրա մահից հետո՝ անչափահաս Լյուդովիկոս XIII-ի խնամակալուհին։*

էջ 437

Փիլիպոս III— *Իսպանիայի թագավոր (1598—1621 թթ.)։*

էջ 441

Սաւրալի, Պաոլո— *վենետիկի պատմաբան (1552—1623 թթ.)։ Տասի խորհրդի անդամ, «Տրիդենտի եկեղեցաժողովի պատմություն» գրքի հեղինակ։*

էջ 442

Հակոբ I Սթյուարտ— *Անգլիայի թագավոր (1603—1625 թթ.), Մարիա Սթյուարտի որդին։ Ճիզվիտները հույս էին դրել նրա պաշտպանության վրա։*

էջ 444

Երկայրի սուր— *պապի գավազանը, որ խորհրդանշում էր քահանայապետի հոգևոր և աշխարհիկ իշխանությունը։*

Մարիանա ժան— *իսպանացի ճիզվիտ (1537—1624 թթ.), «Իսպանիայի պատմություն» գրքի և «Թագավորական իշխանության մասին» տրակտատի հեղինակ։*

էջ 445

Լյուդովիկոս XIII— *Ֆրանսիայի թագավոր (1613—1643 թթ.)։*

էջ 452

Ռիշելյե, Արման ժան դյու Պլեսի— *ականավոր պետական գործիչ, կարդինալ, Ֆրանսիայի փաստական կառավարիչ (1624—1642 թթ.)։*

էջ 453

Ֆերդինանդ II— *գերմանական կայսր (1619—1637 թթ.)։*

էջ 458

Կարմելյականներ— այն վանական միաբանության անդամները, որ հիմնադրվել է 1156-ին Պաղեստինում (Կարմելա լեռան վրա), XIII դ. փոխադրվել են Եվրոպա։ 1245-ին Ինոկենտիոս IV-ը հաստատեց միաբանությունը որպես մուրացկանների միաբանություն, 1452-ին առաջ եկավ նաև կարմելիտուհիների միաբանություն։

էջ 463

Պատերազմի ընթացքում— այդ ժամանակ Եվրոպան ներգրավված էր 30-ամյա պատերազմի մեջ (1618—1648 թթ.)։

Գուստավ-Ադոլֆ II— Շվեդիայի թագավոր (1611—1632 թթ.)։

Վալենշտայն, Ալբրեխտ Վենցեսլավ— 30-ամյա պատերազմի ժամանակաշրջանի նշանավոր զորավար (1583—1634 թթ.)։ Եղել է գերմանական կայսեր զորքերի հրամանատարը և խոշոր հաղթանակներ է տարել դանիացիների ու նրանց դաշնակիցների՝ գերմանական բողոքական իշխանների դեմ։ Մեղադրվել է թշնամիների հետ ունեցած կապերի մեջ, հեռացվել հրամանատարությունից և շուտով սպանվել դավադիր սպաների կողմից։

էջ 465

Հիսուս Նավին— ըստ Աստվածաշնչի, մարգարե Մովսեսի կողմնակիցը և հաջորդը, որը հրեաների անապատական թափառումների ժամանակ մի շարք «հրաշքներ» է գործել, կարողացել է կանգնեցնել արեգակը։ Այդ առասպելը նկղեցականները օգտագործեցին, որպեսզի ապացուցեն, թե երկիրն անշարժ է։

էջ 467

Պրիապ—պտղաբերության, դաշտերի և այգիների հունական աստված, գինեգործության հովանավորը, հեշտասիրության աստվածը։

էջ 471

Բուգենհաուս— գերմանացի ճիզվիտ, աստվածաբան (1600—1668 թթ.), միաբանության բարոյագետ։ «Քանի որ թույլատրված է նպատակը, ապա թույլատրվում են և միջոցները» շատ հայտնի թեզի հեղինակը։

Էսկոբար— իսպանացի ճիզվիտ (1589—1669 թթ.)։

էջ 482

Քրիստինա— Շվեդիայի թագուհի (1632—1654 թթ.)։

էջ 483

Յանսենականներ— կաթոլիկության մեջ օծոզիցիոն հոսանքի ներկայացուցիչներ (հոլանդական աստվածաբան Կոռնելիուս Յանսենի անունով)։ Հոսանքն ուղղված էր պապական բռնապետության, հոգևորականության այլասերվածության, հատկապես ճիզվիտների և նրանց բարոյականության դեմ։ Քարոզում էին համեստ կենցաղավարություն, յարբերի խստություն։ Հանդրանքի ենթարկվեցին և հալածվեցին։

Պասկալ, Բլեզ— ֆրանսիացի ականավոր մաթեմատիկոս, ֆիզիկոս, գրող և փիլիսոփա, յանսենականության հետևորդ (1623—1662 թթ.)։ 1656—1657 թթ. հրատարակել է ճիզվիտների դեմ ուղղված «Նամակներ գավառականին» սպանիչ պամֆլետը, որի մեջ մերկացվում էր նրանց բարոյականության լպիրշությունը և քաղաքականության անսկրուպուլյոզությունը։ Պամֆլետը թարգմանվեց շատ լեզուներով և մեծ հաջո-

*դություն ունեցավ։ Ճիզվիտները կարողացան 1660-ին գիրքը հրապարակայորեն ջայրել տալ։*

*Սեր միմյանց դեմ պատերազմող Ֆրանսիան և Իսպանիան... հաշտություն կնքեցին — XVII դ. այդ տերություններուն երկարատև պայքարն ավարտվեց 1659-ի Պիրենեյան հաշտության պայմանագրով, որը փաստորեն Իսպանիայի աներիտորիալ մեծ կորուստները։*

**Մազարինի**— *Աննա Ավստրիացու՝ Լյուդովիկոս XIII-ի կնոջ սիրեկանը, Ռիշելյեի հաջորդը, Լյուդովիկոս XIV-ի օրոք (1643—1661 թթ.) եղել է առաջին մինիստր։*

էջ 485

**Լեոպոլդ I**— *գերմանական կայսր (1658—1705 թթ.)։*

էջ 494

**Յորկի դուքս**— *հետագայում անգլիական թագավոր (1685—1688 թթ.) Հակոբ I-ը, Կառլոս II-ի եղբայրը։ Ֆահընկեց արվեց հեղաշրջման (այսպես կոչված «փառապանծ հեղափոխության» հետևանքով), և իշխանությունն անցավ նրա աղչկա ամուսնի՝ Հոլանդիայի կառավարիչ Վիլհելմ Օրանացուն, որը թագավոր հռչակվեց Վիլհելմ III (1689—1702 թթ.) անունով։*

էջ 495

**Հայր Լաշեզ**— *Ֆրանսուա Լաշեզ (1624—1709 թթ.), Լյուդովիկոս XIV-ի խոստովանահայրը, Ճիզվիտ, հանդես էր գալիս Նանտյան էդիկտի վերացման օգտին։ Թագավորի կողմից նրան ընծայված այգին (Փարիզում) 1804-ին վերածվեց գերեզմանոցի, որը կրում է նրա անունը (Պեր-Լաշեզ)։*

էջ 505

**Էնցիկլոպեդիստների փառապանծ աստղաբույլը**— *լուսավորության դարաշրջանի գործիչները, մատերիալիստները և աթեիստները, որոնք գործակցում էին «Հանրագիտարան կամ գիտության, արվեստների և արհեստների բացատրական բառարան» բազմահատոր հրատարակությանը (1751—1757 թթ., 1765—1772 թթ.)։ Նրանց մեջ էին Վոլտերը, Մոնտեսքյոն, Դիդրոն, Հոլբախը, Հելվեցիոսը, Կոնդիլյակը, Գալամբերը, Ռուսոն։*

**Ռուսո, Ժան Ժակ**— *ֆրանսիացի ականավոր փիլիսոփա և գրող, լուսավորիչների արմատական մանրբուրժուական թևի ներկայացուցիչ (1712—1778 թթ.)։ Նրա գրվածքներով («Հասարակական դաշինքի մասին», «Դատողություններ անհավասարության ծագման և հիմնավորման մասին», «Էմիլ» և ուրիշներ) դաստիարակվել են ֆրանսիական հեղափոխության խոշորագույն գործիչներ։*

**Գալամբեր, Ժան Լերեն**— *ֆրանսիացի ականավոր մաթեմատիկոս և փիլիսոփա-լուսավորիչ (1717—1783 թթ.)։ Դիդրոյի հետ միասին խմբագրել է «Հանրագիտարանը»։ գրել է նրա ներածությունը, որը պարունակում է գիտության զարգացման մատերիալիստական վերլուծությունը և նրա դասակարգումը։*

էջ 506

**Ֆիլիպեն դը Պոլ**— *ֆրանսիացի քահանա (1576—1660 թթ.), «Կյանքի քույրեր» մարդասիրական հիմնադիրը, հայտնի է հերետիկոսների նկատմամբ ցուցաբերած իր զգուշությամբ։*

էջ 507

Լյուդովիկոս XV— *Ֆրանսիայի թագավոր (1715—1660 ԹԹ.)։*

էջ 509

Տասսո, Տորկվատո— *իտալացի հռչակավոր գրող (1544—1595 ԹԹ.), առաջին խաչակրաց արշավանքին նվիրված «Երուսաղեմի ազատագրումը» էպիկական պոեմի հեղինակ։*

էջ 510

Քրիստոֆ դը Բոմոն— *Փարիզի արքեպիսկոպոս (1703—1781 ԹԹ.)։ Հարձակումներ է գործել Ռուսոյի «Էմիլ» վեպի դեմ։*

էջ 511

Մարկիզուհի Պոմպադուր, ժաննա Անտուանետա Պուասոն— *Լյուդովիկոս XV-ի սիրուհին, մեծ դեր է խաղացել Ֆրանսիայի քաղաքական կյանքում (1721—1764 ԹԹ.)։*

Պեր— *Ֆրանսիայում և Անգլիայում պալատական բարձր աղնվականության ներկայացուցիչների կոչում։*

էջ 514

Դամյենի... մահափորձը— *Ռոբերտ Ֆրանսուա Դամյենը փորձել էր դաշունահարել Լյուդովիկոս XV-ին։ Մահապատժի ենթարկվեց 1757-ին։*

էջ 515

Ջոսե I— *Պորտուգալիայի թագավոր (1750—1777 ԹԹ.)։*

էջ 522

Միաբանությունն արգելվեց— *Պառլամենտը հասավ այն բանին, որ միաբանությունն արգելվեց։ Պառլամենտը այդ մասին որոշում ընդունեց 1761-ին, իսկ 1764-ին միաբանությունն արգելվեց և նրա ունեցվածքը բռնագրավվեց հօգուտ գահի։ 1767-ին միաբանությունն արգելվեց նաև Իսպանիայում։*

էջ 529

Իտալիայի սահմաններին մոտ երևացին հանրապետական գնդերը գեներալ Բոնապարտի գլխավորությամբ— *Նապոլեոնի զորքերը, շրջանցելով Ալպերը, Հյուսիսային Իտալիա ներխուժեցին 1796-ի ապրիլին։*

Դիրեկտորիա— *1795—1799-ի ֆրանսիական կառավարությունը, բաղկացած էր հինգ դիրեկտորից։ Հակահեղափոխական խոշոր բուրժուազիայի դիկտատուրայի օրգանը։*

էջ 530

Ավստրիացիների դեմ Բոնապարտի տարած հաղթանակները— *1796—1797-ին Նապոլեոնը Իտալիայում ավստրիացիների դեմ մի շարք հաղթանակներ տարավ, ապա ներխուժեց իր իսկ Ավստրիայի սահմանները, որն ստիպված էր 1797-ին հաշտություն կնքել Ֆրանսիային ձեռնտու պայմաններով։*

էջ 532

Ժոզեֆ Բոնապարտ— *Նապոլեոնի ավագ եղբայրը (1768—1844 ԹԹ.), Նեապոլի (1806—1808 ԹԹ.) և Իսպանիայի (1808—1813 ԹԹ.) թագավոր։*

էջ 533

Բերտյե, Լուի Ալեքսանդր— *ամերիկյան գաղութների անկախության համար մղված պատերազմի մասնակից, 1789-ին եղել է Վերսալի ազգային գվարդիայի հրամանատար, 1796-ին՝ իտալական բանակի շտաբի պետ։ Մինչև Նապոլեոնի անկումը եղել է գլխավոր շտաբի պետ։ 1804-ին ստացել է մարշալի կոչում։*

Կատոն, Մարկոս Կրտսեր (Ութիացի)— *Հին Հռոմում հանրապետական կուսակցության առաջնորդներից մեկը (95—96 ԹԹ. մ. թ. ա.), պայքարում էր Հուլիոս Կեսարի միահեծան դիկտատուրա ստեղծելու դեմ։*

Պոմպեոս, Գնեուս (Մեծ)— *հռոմեական խոշոր զորավար և քաղաքական գործիչ (106—48 ԹԹ. մ. թ. ա.), որն իշխանության համար պայքարում էր Հուլիոս Կեսարի դեմ։ Հետագայում նրան սկսել են ներկայացնել որպես հանրապետական, որն ընկավ հանուն ազատության մղվող պայքարում։*

Բրուտոս, Մարկոս Յունիոս— *Հուլիոս Կեսարի սպանության մասնակից, դավադիրների առաջնորդներից մեկը։*

Կիկերոն, Մարկոս Տուլիոս— *Նշանավոր հռոմեական հռետոր, գրող և քաղաքական գործիչ (մ. թ. ա. 106—43 ԹԹ.), պայքարել է ռազմական դիկտատուրայի դեմ, պաշտպանել աղնվականական հանրապետության գաղափարները։*

էջ 536

Ֆերդինանդ IV— *Նեապոլի թագավոր (1751—1825 ԹԹ.)։ 1799-ին նապոլեոնյան զորքերը նրան վտարել են Նեապոլից, այնուհետև վերականգնվել է գահի վրա, 1806-ին՝ նորից վտարվել։ 1815-ին Ֆերդինանդ I անունով ընդունել է երկու Սիցիլիաների թագավորի տիտղոսը։*

էջ 537

Վալանս— *քաղաք Ֆրանսիայի հարավում (Ռոնա գետի ափին)։*

Բրյումերի 18-ի հեղաշրջումը— *կատարել է Նապոլեոնը 1799-ի նոյեմբերի 9-ին, հաստատելով ռազմական դիկտատուրա։ Դիրեկտորիան ցրեց, և ամբողջ իշխանությունն անցավ երեք կոնսուլներին (Բոնապարտի գլխավորությամբ)։*

Կոնկորդատ— *կաթոլիկ եկեղեցու հետ որևէ կառավարության կնքած պայմանագիրը։*

էջ 538

Լյուդովիկոս XVIII— *ֆրանսիական թագավոր (1814—1824 ԹԹ.)։*

էջ 539

Պիոս VII-ը վերականգնեց Հիսուսի ընկերությունը— *1814-ի օգոստոսին։ Ծիլվիտնեբը դարձան «Սրբազան միության» հենարանը՝ հեղափոխական շարժման դեմ մղվող պայքարում։*

էջ 541

Ֆերդինանդ VII— *Իսպանիայի թագավոր։ Գահ բարձրացավ 1808-ին և նույն տարում էլ գահընկեց արվեց Նապոլեոնի կողմից։ 1814-ին վերադարձավ և թագավորեց մինչև 1833-ը։*

Աուտոդաֆե— *պորտուգ. «հավատո ակտ»։ Ինկվիզիցիայի դատավճռի համաձայն, խարույկի վրա հրապարակայնորեն այրելը։*

Կառլոս VIII— *Ֆրանսիայի թագավոր (1824—1838 ԹԹ.)։*

էջ 543

**Հուլիսյան օրդոնանսներ**— *Օրդոնանս՝ թագավորական հրամանագիր Ֆրանսիայում։ 1830-ի հուլիսի 25-ին Կառլոս X-ը սահմանադրեց չորս օրդոնանս, որոնցով վերացվում էր մամուլի ազատությունը, վերականգնվում խիստ գրաքննություն, մտցվում նոր, հետադիմական ընտրական օրենք, արձակում պառլամենտը։ Դա դարձավ Փարիզի հուլիսի 27-ի ապստամբության շարժառիթը։ Այդ ապստամբությամբ սկսվեց Հուլիսյան հեղափոխությունը։*

**Լուի Ֆիլիպ Օռլեանցի**— *Ֆրանսիայի թագավոր (1830—1848 թթ.)։*

էջ 547

**Մասոնական ժողովարան. Մասոններ** (տառացիորեն՝ ազատ քարտաշներ)— *բուրժուազնվական շրջաններում փիլիսոփայական-կրոնական հոսանքի ներկայացուցիչներ։ Այդ հոսանքն առաջացել է Անգլիայում XVIII դ. սկզբին։ Մասոնների դաղտնի ընկերություններն եվրոպայի բոլոր երկրներում ունեին բջիջների (ժողովարանների) լայն ցանց։ Կոչ էին անում բարոյապես կատարելագործվել, միավորվել եղբայրական սիրո և հավասարության հիման վրա։ Պայքարում էին մատերիալիզմի և աթեիզմի դեմ, բայց և քննադատում ո՛րոշ եկեղեցական ծեսեր, որի համար բանադրվել են։*

էջ 549

**Հռոմը Ֆրանսիացիների գրոհի տակ ընկավ**— *Հռոմի կառավարությունը անվճռական քաղաքականություն էր վարում, վախենալով Գարիբալդիին վստահել բարձրագույն հրամանատարությունը։ Նրա օգնությանը դիմեցին շատ ուշ, և 1849-ի հուլիսին Հռոմն ընկավ։*

էջ 551

**Մածինի, Ջուզեպպե** (1805—1872 թթ.)— *ազգային-ազատագրական պայքարի դիակավար Իտալիայում, հիմնադիր «Երիտասարդ Իտալիա» գաղտնի ընկերության (1831 թ.), որը նախապատրաստեց մի շարք ապստամբություններ օտարերկրյա հարստահարիչների ճնշման դեմ։ Եղել է 1848—1849 թթ. հեղափոխության գործուն մասնակից, Հռոմի հանրապետության կառավարության գլուխը (1849 թ.)։*

**Թագավորությունը նվիրեց Վիկտոր Էմանուելին**— *1860-ի մայիս-օգոստոս ամիսներին Գարիբալդիի ջոկատները, որոնք ափ իջան Սիցիլիայում, մի քանի ճակատամարտերում չախչախեցին Նեապոլի թագավորի զորքերին, ազատագրեցին Իտալիայի մեծ մասը, և Հարավային Իտալիան միավորեց Սարդինիայի թագավորության (երկրի հյուսիսային մասում) հետ։ Հրաժարվելով իր դիկտատորական լիազորություններից, Գարիբալդին իշխանությունը հանձնեց (1860-ի նոյեմբերին) Սարդինիայի թագավոր Վիկտոր Էմանուելին, որը Իտալիայի թագավոր հռչակվեց (1861—1878 թթ.)։*

էջ 552

**«Սիլաբուս»**— *1864-ի Ենցիկլիկայի հավելված։ Պարունակում է մեր ժամանակի 80 «գլխավոր մոլորություններ» ցանկը և նզովում կարևորագույն գիտական, քաղաքական և հասարակական հոսանքները՝ աթեիզմը, սոցիալիզմը և կոմունիզմը, «եկեղեցու և նրա իրավունքների վերաբերյալ մոլորությունները», որոնք մերժում էին պապի գլխավորությունը կրոնական և աշխարհիկ գործերում, պահանջում էին մամուլի, խոսքի, խղճի ազատություն։*

Նապոլեոն III— *Ֆրանսիայի կայսր (1852—1870 թթ.)։*

Այսպես ավարտվեց պապերի աշխարհիկ իշխանությունը— *1871-ին Հռոմը դարձավ Իտալիայի մայրաքաղաք, իսկ պապական պետության տերիտորիան մտավ իտալական թագավորության կազմի մեջ։ Պիոս IX-ը նզովեց նրանց, ովքեր նրան զրկել էին աշխարհիկ իշխանությունից, և քաշվեց Վատիկանի պալատը, իրեն «կալանավոր» հայտարարելով։ Մուսոլինիի հետ 1929-ին կնքված պայմանագրով Հռոմի տերիտորիայում կազմավորվեց Վատիկանի քաղաք-պետությունը (44 հադ. հկտար, հազար հպատակ), իսկ պապը հռչակվեց այդ պետության միապետ։*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| Սուրբ անառակները | 3 |
| Կղերականության հայրերը | 4 |
| Սուրբ աթոռը և կանայք | 12 |
| Սեքստոս III | 4 |
| Լևոն I | 15 |
| Պապերի երկպառակությունները | 18 |
| Մեծն Գրիգորը | 20 |
| Նողկալի բարքեր | 23 |
| Կռիվներ և ծեծկռտոցներ | 25 |
| Իսկ ո՞ւմն է երեխան | 27 |
| Առաձգական խիղճը | 31 |
| Ինչպիսին տերն է, այնպիսին էլ՝ ծառաները | 33 |
| Պասքալիս I | 34 |
| Մասունքների մեծածախ և մանրածախ արտադրությունը | 35 |
| Խրախճանքներ և սպանություններ | 36 |
| Վերադարձրե՛ք փողերը | 37 |
| Սրբապատկերների աստվածացումը | 38 |
| Մարդասպան, գող, խարդախ և դավաճան | 40 |
| Խոզի դունչը | 42 |
| Միանձնուհիները և սուրբ հայրը | 43 |
| Պապուհի Հովհաննան | 44 |
| Ո՞ւմն է խույրը | 46 |
| Նողկալի մանրամասնություններ | 46 |
| Կանացի խազեր | 47 |
| Արքեպիսկոպոսը դատապարտում է Նիկողայոս I-ին | 50 |
| Աստծո մատը | 52 |
| Քահանայապետի բարոյականությունը | 52 |
| Եպիսկոպոս եղբայրասպանը | 53 |
| Պապ կեղծարարը | 55 |
| Հռոմեացի կնոջ վրնժխնդրությունը | 56 |
| Կենդանի քայքայվելով | 57 |
| Վաճառք աճուրդով | 57 |

Վանականների ազահությունը 58
Մորեխի ոչնչացումը 59
Գողը, մարդասպանը և կույս աղամարդը 61
Երկշաբաթյա թագավորում 62
Ստեփանոս VII 63
Ստեփանոս VII-ի հանցագործությունները և խելառությունները 64
Եկեղեցին IX դարում 65
Օ՞ղ տվեք, օ՞ղ 66
Քրիստոնեության արդյունքները 67
Քրիստափոր-դահիճը 68
Սուրբ հայրերը և կուրտիզանուհիները 69
Մայր ու աղջիկ 70
Թե ինչպես երբեմն վտանգավոր է սիրել կայսրուհուն... 72
Ինտիմ օրհնություն 74
Հովհաննես XI-ը, իր մոր սիրեկանը 75
Հիանալի ընտանյակ 76
Աթոռի կորուստը 78
Նպատակն արդարացնում է միջոցները 80
Դիմակահանդես մայր տաճարում 82
Սրբերի շարքը դասված կուրտիզանուհին 84
Մեծկատոց սուրբ աթոռի վրա 85
Քահանայապետերի վրեժը և ղվարճանքները 86
Մկրտության գինը 88
Բարի նշխարները նույնպես... ամրապնդում են բարեկամությունը 90
Երկու հրաշք 91
Կորի՛ր իմ տեղից 93
Հովանավորը և հովանավորյալը 95
Վոնիփակիոսի նոր սխրանքները 96
Հետահոս վրեժ 98
Սնոտիապաշտություններ 99
Քարնըր յաիս են և... պարում 101
Մեղուները գուշակներ 103
Սրի մի հարվածով 104
Ինչպես դադարեցնել երկրաշարժը 107
Քավարան Սիցիլիայում 109
Հիսուս Քրիստոսի նամակը 112
Կորչի՞ բանակալը 115
Մանուկ պապը 116
Ելմ մի քանի խոսք Բենեդիկտոս IX-ի մասին 117
Պաշտոնաթող պապի ժամանցը 117
Միաժամանակ երեք քահանայապետ սուրբ աթոռի վրա 118
Սուրբ քաոչակը 119
Արյունոտ բաղնիք 120
Կղեմես II 121

Ո՞վ պիտք է նստի աթոռին 122
Հին ծանոթը 124
Բենեդիկտոս IX-ը «առհավետ» 125
Փողը ցնծա՛ 126
Սուրբ հոր խոստովանությունը 127
Թե ինչպես էին երկու կրպակներ իրար հետ մրցում 129
Սատանան պատարագի ժամանակ 132
Դատավորները և դատապարտյալները 134
Ի՞նչ արժե ամենալավ պապը 135
Դժվար ընտրություն 138
Մոլեռանդություն 140
Մարտեր պապական աթոռի համար 141
Այդոբրանդինին կամ Անկիզելի վանականը 143
Ամենաարձրյալի ձեռնածուները 147
«In vino veritas» 149
Գրիգոր VII 152
Գրիգորը հզնավորության ջատագով 156
Դավադրություն Գրիգոր VII-ի դեմ 158
Հենրիխ IV-ը Կանոսում 161
Պապի սատանայական հնարը 163
Հրաշագործ խուրը 166
Երիպատակություններ դահի և սուրբ աթոռի միջև 166
Ճշմարտությունը խաչակրաց արշավանքների մասին 168
Պասքալիս II-ը՝ Գրիգոր VII-ի հավատարիմ հետևորդը 173
Ուսուցիչը և նրան արժանի աշակերտը 176
Երկու մրցակիցների պայքարը 181
Քրիստոնեությունը գթության կրոն 184
Հետաքրքրաշարժ գրքույկը 187
Կաթոլիկ դորականության շտաբակայանը վտանգի մեջ 189
Չկա որ սուրբն է արժանացել այդպիսի ողորմածության 190
Ադրիանոս IV 192
Առնոլդ Բրեշիանացու մահը 194
Ալեքսանդր III 195
Հաշվեհարդար վալդենսների հետ 198
Ղուկիոս III 202
Գրիգոր VIII 208
XIII դարի պապերը 209
Ֆրանցիսկոս Ասիզացին 213
Հոնորիս III 216
Գրիգոր IX 216
Կալեստինոս IV 223
Իննովկենտիոս IV 224
Ադրիանոս IV 227
Վոնիֆակիոս VIII 232

Սուրբ տարին 240
Լորետոյի տնակը 242
Շաւլատաններուն հաղթարշակը 243
Հրոսակախումբը 245
Հովհաննես XXII 246
Մեղքերուն թողութիւն ըստ գնացուցակի 250
Խուրակիր ելուզակները 253
Հերետիկոսներուն մասնայական կոտորածը 255
Դիշատիչներուն ու ավազակներուն ծնծկոտոցը 256
Հովհաննես XXIII 262
Լուսավորյալ խաբեբան և անառակը 266
Տանջարանը 267
Խուրակիր մարդասպանը 269
Թողրեք գլուխները, բայց վճարեք 271
Ոսկե ներկայացում 273
Երեք խիզախ պատանիներուն վշտալի պատմութիւնը 275
Սուրբ Հոր ֆինանսական գործարքները 276
Սքանչի մտքեր 277
Ընտրական շիլափլավ 280
Սպանութիւն լիազորագրով 281
Մարդատորս 282
Իննովկենտիոս VIII-ի վերջին գաղանութիւնները 284
Աղեքսանդր VI 288
Հուլիոս II 313
Նախախնամութեան առաքած հիվանդութիւնը 318
Լևոն X-ը ծակ աթոռի վրա 320
Մեծ երկերեսանին 322
Ողբերգութիւն զավեշտախաղից հետո 325
Ինդուլգենցիաներուն տոնավաճառը 327
Լյութերը և Լևոն X-ը 331
Միլիոնավոր զոհեր 340
Սպանութիւն երեք գործողութեամբ 342
Կղեմես VII, Հենրիխ VIII և Կառլոս V 347
Սպանութիւններ, բանտարկութիւններ և վվարճանքներ 351
Խիղճը աճուրդի է հանված 356
Պողոս III-ը և նրա դերասանները 357
Կրոնական բարոյականութիւնը գործողության մեջ 360
Երկուսին մի սիրուհի 365
Վատիկանի խրախճանքները 367
Պապիկների պահակի ու սիրահարված պապի մասին 368
Եվայի խնձորը և սուրբ Հոր սիրամարգը 371
Պողոս IV-ը, էիլվիտների բարեկամը 372
Պիոս IV-ը 374
Ջափից ավելի երախտադիտութիւնը աղետարեր է 375

Ջարագուշակ նախազգուշացում 377
Պապի չարագործությունները, խոշտանգումներն ու մահապատիժները 380
Մոր մահապատիժը 383
Մի խոսքի համար կախաղան 385
Քրիստոնյա քահանաները և սիրո քրմուհիները 387
Երեք հրեշներ 388
Ո՛չ մի գութ 392
Սրբի վերջին ոճիրները 393
Գրիգոր XIII 395
Բարդուղիմեոսյան գիշերը 396
Կրոնի նոր զոհերը 398
Ճիզվիտները գործի վրա 399
Պապի անհաջողությունները 401
Փիլիպոս II-ը շրջանցում է պապին 402
Դավադրությունների շարք 403
Գրիգոր XIII-ի խեղկատակությունը 404
Գրիգոր XIII-ի հաջորդը 405
Ապագա պապի խորամանկությունները 406
Տխուր դեպյուտ 408
Սիքստոս V-ը փորձում է սպառնալ թագավորներին 410
Պապը և բարեպաշտ հայրերը 412
Երկերեսանի քաղաքականություն 413
Ջազրելի դավաճանություն 416
Պապի ու կայսեր վեճը 417
Իգնատիոս Լոյոլայի որդիների վրեժը 418
Ուրբանոս VII 420
Սուրբ դահի վրա ագնիվ մարդ 421
Բարի հայրերի հետ կատակելը վտանգավոր է 422
Գրիգոր XIV 422
Փորձանք փորձանքի հետից 423
Ինովկենտիոս IX 424
Կղեմես VIII 424
Պիղծ Հենրիխի դարձը 425
Արքայասպանության պահանջ 426
Հառա՞ջ, ճիզվիտների դե՛մ 426
Ժան Շատելը հնազանդվում է բարի հայրերին 428
Սև հրոսակախմբի ձախողումը 429
Վախկոտի դարձը 429
Կղեմեսից պարտված կեսարը 431
Կաթոլիկ բռնակալի պարտությունն ու վախճանը 432
Ճիզվիտների վերադարձը 433
Սուրբ հոր վախճանը 435
Լևոն XI 437
Պողոս V 437

Նորին սրբազնությունը տեղավորում է իր ապզականներին 438
Պողոս V-ը և Վենետիկի հանրապետությունը 439
Ճիզվիտներն Անգլիայում 442
Թագավորի ու պապի բանակռիվը 443
Ճիզվիտները և համալսարանը 445
Փառապանծ հայրերը գլուխ են բարձրացնում 446
Ճիզվիտների կրկնակի ամբարտավանությունը 449
Քաղաքականության ու կրոնի շիլափլավ 452
Բորդեզենների գնրդաստանը և Հռոմի արքունիքը 453
Գրիգոր XV 456
Համընդհանուր ջարդ 457
Պապական ողջույններ 458
Քահանայապետի վերջին պլանը 460
Ուրբանոս VIII 460
Սուրբ հոր քաղաքականությունը 463
Եկեղեցին հալածում է հանճարին 464
Սնոտիապաշտության զոհերը 466
Բարի հայրերի վարդապետություններն ու բարոյականությունը 467
Մեր աքլորը և իր երկու հավերը 472
Յուրաքանչյուրն իր կողմն է քաշում 474
Օլիմպիայի վրեժը 477
Ապշեցուցիչ փոփոխություն 480
Կրոնական անպարկեշտություններ 488
Գուշակուհու արկածները 490
Ի փա՞ռս աստծո 494
Հարբեցողություն, ուխտադրժություն, մեքենայություններ 498
Եկեղեցու փաշաները 500
Եկեղեցական խեղկատակները 501
Անհանգստացված սուրբը 506
Փարաջաների խռովությունը 508
Դոմինիկյանների այրած ճիզվիտը 514
Ճիզվիտների պարտությունը 517
Կղեմես XIV 523
Պիոս VI-ը և նրա ընտանիքը 524
Պիոս VI-ը՝ գողն ու մարդասպանը 526
Պիոս VI-ը և Բոնապարտը 528
Հռոմի հանրապետությունը 531
Սեր և դավաճանություն 535
Բոնապարտը և Պիոս VII-ը 537
Նրբ սատանան ծերանում է 540
Վերադարձ դեպի միջնադար 542
Վերջին պապը որպես անսահմանափակ միապետ 546
Վերջաբան 553
Ցանոթագրություններ 562

Լեո Տարսիլ

ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱԶԱԿՄՈՐՔԸ

Лео Таксиль

СВЯЩЕННЫЙ ВЕРТЕП

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1981

*Խմբագիր՝ Սուրեն Վահունի*
*Հրատ. խմբագիրներ՝ Ի. Ս. Բուտյան,*
*Ռ. Ս. Ումուշատյան*
*Նկարիչ՝ Գ. Ջ. Աֆրիկյան*
*Գեղ. խմբագիր՝ Ս. Վ. Պողոսյան*
*Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան*
*Վերատեսող սրբագրիչ՝ Ռ. Բ. Մարգարյան*

ИБ 3417

*Հանձնված է շարվածքի 22. 07. 1981 թ.։*
*Ստորագրված է տպագրության 7. 12. 1981 թ.։*
*Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ տպ. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 35,34 պայմ. տպագր. մամ., հրատ.՝ 32,62 մամ.։*
*Պատվեր՝ 3108։ Տպաքանակ՝ 30000։ Գինը՝ 2 ռ. 80 կոպ.։*
*«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։*

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

*ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փ. № 65։*

Типография №1 Госкомитета Арм ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул Алавердяна, 65.